

ՃՄ 57

Բ-22

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՕ

ԵՐԿԵՐ

III

ՀԱՅԿԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

АКСЕЛЬ БАКУНЦ

СОЧИНЕНИЯ

В ЧЕТЫРЕХ ТОМАХ

ТОМ

III

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1982

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
Ը. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

## ԵՐԿԵՐ

ՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ

III

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1982

**Խմբագրական կոլեգիա**


**ԱՂԱՔԱՐՑԱՆ Ա., ՉԱՔԱՐՑԱՆ Ա., ԻՇԽԱՆՑԱՆ Բ.,  
ՀԱԿՈՐՑԱՆ Գ., ՋՐԲԱՇՇԱՆ ԻԴ.**

**Հատորի խմբագիր**

**Բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Բ. ԱՂԱՔԱՐՑԱՆ**

**Բնագրերը պատրաստեց և ծանոթագրեց**

**ՌԱՅԱՅՆԻ ԻՇԽԱՆՑԱՆԸ**



Բաղունց, Ա. 163708

Բ 228 Երկեր: 4 հատորով /Խմբ. կոլեգիա՝ Աղաքարայան Ս. և ուրիշ.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982.

Հ. 3 /Բնագրերը պատրաստեց և ծանոթագր. Ռ. Իշխանյանը: Խմբ. Ս. Բ. Աղաքարայան. 714 էջ, 2 թ. նդ.

Ակսել Բակունցի երկերի գիտական հրատարակության երրորդ հատորն ընդգրկում է զրոզի վեպերը (պահպանված հատվածները), վիպակները և կինոսցենարը:

4702080200

ԳՄԴ 84 Հ 7

Ա ————— 60—82

Ար 2

703 (02)—82

⊙ Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1982

Մանրագրությունների համար



Ակհիկ Բախինց (1934 թ.)

ՎԻՊԱԿՆԵՐ ԵՎ ՎԵՊԵՐ



=

## Հ Ո Վ Ն Ա Ք Ա Ն Մ Ա Ր Ձ

### 1

Հուլիսի շոգ օրերից մինն էր: Արևն այնպես էր այրում, ասես մտադիր էր կրակ թափելու արտերի ու այգիների վրա, ծծելու գետերի ջրերը, որպեսզի գոմեշները չկարողանան թաղվել ջրի մեջ և իրենց հաստ կաշին ազատել արևի խանձող շողերից: Ո՞վ գիտե, արևն ուրիշ էլ ի՞նչ մտադրություն ուներ, սակայն կարևորն այն է, որ հուլիսի այդ շոգ օրին, արևի տակ, ժամանակը կորել էր, հալվել, անհնար էր որոշել ժամը, թեկուզ ժամացույցները զարկում էին դողերոցքով տառապողի թույլ երակի պես: 10

Եվ երբ գնացքը փոշոտ ճամփով գլորվող գոմշասայլի պես մոտեցավ կայարանին, հերթապահին թվաց, թե ցեխի մեջ թաթախված գոմեշների մի երամակ ա՛հռելի փնչոցով կանգնեց կայարանի առաջ, փնչոցո՞վ, որ նշանակում էր՝ օ՛Ֆ, շոգ է:

Ինչքա՛ն դանդաղ ու չկամ, գնացքից դուրս եկան ուղեվորները, որը քրտինքը սրբելով, որը բաճկոնի կոճակները մինչև գոտին արձակած, մի խուրջին ուսին, թաշկինակով կրծքին հով անելով: Կայարանի ստվերում թիկն տված երկու մուշա հենց այդտեղից էլ ձայն տվին իջնող ուղևորներին, թե ո՞վ իր ունի տանելու, և երբ պատասխան չեղավ, նորից գլուխները թեքեցին, թառամած արևածաղկի պես: 20

Ոչնչով հիշատակելի չէր դառնա հուլիսյան այդ շոգ օրը, եթե գնացքը, որպես թանկագին բեռ, շատ զգուշությամբ այդ օրը շքերբ և Հովնաթան Մարչին: Եվ երբ նրա ամերիկյան դեղին կոշիկը դիպավ գետնին, կոշիկի տերը ժպտաց: Հավանորեն

այդ ժպիտն ունեցավ և Կոլումբոսը՝ նոր ցամաքի վրա առաջին անգամ ոտք դնելիս:

Եվ ոչ ոք չնկատեց, թե ինչպե՛ս նա դարձավ Արարատի կողմը և, հասկանո՞ւմ եք, ձեռքով սալամ ողարկեց հեռու սարին: Սակայն նրա ողջույնը միայն ձեռքի շարժումով չվերջացավ: Եթե մոտիկ կանգնած մարդ լինեք, նա կլսեք, թե ինչպես Մարչն ասաց. «Օ՛, Արմենիա, երկիր դրախտավայր»... Ասաց ու քրտինքի մի կաթիլ գլորվեց այս երկրի արևից խանձված հողին:

**10** Մովի մի ալիք, նույնիսկ այն ժամանակ, երբ հանդարտ է ծովը, հանկարծ ափ է նետում հեռու երկրից ծովն ընկած պտուղի մի կճեպ, այդ ափին կճեպը մնում է այնքան, մինչև մի ուրիշ ալիք է ելնում, ափը լիզում և կճեպը բաշին առած հետ տանում ուրիշ եզր շարտելու, իսկ ծովը մնում է հանդարտ, անտարբեր:

Արևն էլ հանգարտ մնաց իր հրե քայլքի մեջ, երբ գնացքն արիշ աշխարհից հուլիսյան մի շոգ օր ցամաք նետեց Հովնաթան Մարչին: Սակայն կառապանները նորեկի հանդեպ շունեցան նույն անտարբերությունը: Նրանցից մի քանիսն աղմուկով իրար անցան, և մինչդեռ Հովնաթան Մարչը լսում էր նըրանց մայրենի բարբառը և զմայլվում, ամենից հանդուգնը նախ նրա իրերը դարսեց կառքում, ապա Հովնաթան Մարչին էլ նստեցրեց և մտրակեց ձիերին:

Ճանապարհին, փոշու ամպի մեջ, մեկը հիացմունքով էր նայում շրջապատին և ծաղկանկար թաշկինակով բերանը ծածկած, շնչում հայրենի երկրի բույրը, որ տվյալ դեպքում կառապանի քրտնած մեջքից էր ելնում, ճամփի ճահճուտից, աղբակուտից, իսկ մյուսն իր մտքում հաշվում էր՝ կրկնակի ուզի՞ թե՞ եռակի, Ամերիկայից եկած հարուստ պառամիրից:

**30** Թե ինչո՞վ վերջացավ կառապանի հաշիվը, դժվար է ստույգ-ինչ գրել: Հյուրանոցի դռանը Հովնաթան Մարչն իջավ և երբ պայտսակները գետնին դարսեց, կառապանի բռան մեջ նա այնպիսի մի թղթադրամ դրեց, որ նա ձիերին մտրակեց, բռան մեջ սեղմեց դրամը և հրապարակն արագ անցնելով կորավ կողքի փողոցներում, առանց հետ նայելու: Քիչ էր մնա-

ցել, որ մայթից-մայթ անցնող մի բարեպաշտ ծերունի ընկնի կառքի տակ:

Հյուրանոցի սենյակում Հովնաթան Մարչը ճակատի քրտինքը սրբելուց հետո, գերադաս համարեց միառժամանակ մեկնվել բազմոցի վրա: Այդ դիրքում շատ մտքեր խոնվեցին նրա գլխում, շատ հույզեր, և այդ ամենն այն երկրի շուրջը, որի շուրջը գրաֆինի մեջ էր, սեղանի վրա, Հովնաթան Մարչից մի քայլ միայն հեռու, որի արևը խաղում էր նրա պայուսակներին հետ:

Սկիզբն այնքան էլ պարզ չէ, բայց հայտնի է, որ տարիներ շարունակ ատենաբանություն անելուց, ընկերություններ և մարմիններ կազմելուց ու վերակազմելուց հետո, որոնց բոլորի առանցքը եղել է հեռունեքում ընկած դրախտավայր մի աշխարհ, նրա կարոտը երգելուց, նրա մասին ճառելուց ու նրա անունով հանգանակություններ անելուց վերջ, մի օր Հովնաթան Մարչը գնում է մեծատուն Անդրեաս Բալիքյանի մոտ:

Այդ լինում է օրվա այն պահը, երբ Բալիքյանի հազար ու մի կերակուրներով լեցված ստամոքսը գերիշխող է լինում նյա դատողության վրա և, սիգարի կապույտ ծուխի օղակներին ի տես, ամենից շատ փափկած է լինում նրա սիրտը,— դուռը բացվում է, դռան շեմքին երևում է Հովնաթան Մարչը: Անդրեաս Բալիքյանը բավարար է համարում մի քանի կոճակներ կոճկել, դեպի վեր տնկված ոտքերին հորիզոնական դիրք տալ և աղամանդյա մատանիներով զարդարած փափուկ ձեռքը մեկնել Հովնաթան Մարչին:

Դուք կարծում եք՝ թե նա միայն սեղմում է Բալիքյանի մեկնած ձեռքը և նստում աթոռի՞ն: Ո՛չ, այդ օրն արտասովոր մի դեպք է կատարվում, հենց ձեռքը սեղմած ժամանակ: Հովնաթան Մարչը Բալիքյանի առողջության մասին հարցնելուց հետո սկսում է խոսել հին հայրենիքից, բարեգործությունից և վերջացնում է հետևյալ խոսքերով:

— Ո՛վ մեծատուն, եթե կուզես անունդ հավերժացնել, որ դարեդար հիշվիս, աճապարե՛, քանի դեռ ողջ ես:

Այդ բառերը զարմանալի հեշտությամբ ազդում են Անդրեաս Բալիքյանի սրտին, և այն վայրկյանին, երբ նա ուզում է բերանը բաց անել երկու խոսք ասելու, Մարչն ավելացնում է.

10

20

30

— Մեր հին հայրենիքին մեջ ավան մը շինե ու թող ապրին փղշտացիք ու եթովպացիք...

10 Բալիքյանի ժպիտը բարեհաջող հանգամանք համարելով, Հովնաթան Մարչն աթոռն ավելի է մոտեցրել նրան, սկսել է պատմել այդ տիպի բարեգործության առավել կողմերի մասին: Մոցից հանելով քառածալ թղթի մի կտոր, Մարչն սկսել է կարդալ, թե այդ նոր ավանը կամ քաղաքը, այդ ապագա նոր Եթովպիան քանի՞ տուն պիտի ունենա, ամեն մի տուն պետաբան մը վեց մետր խորությամբ, եկեղեցի մը, ուր պիտի հավաքվեն բնակիչները կիրակի օրերը իրենց ընտանիքներով, լսելու հոգևոր հորդորներ և այլն:

Հովնաթան Մարչը հայտնել է, որ Փղշտացոց Բարեսիրաց Մարմնի որոշումն է այդ, և որ իրեն է հանձնարարված դիմելու մեծանուն հայրենակցի հայրենաբաղձ սրտին:

30 Եվ սիգարի ծուխի մեջ, երբ Բալիքյանի աչքին երազի պես երևացել է մանկութունը, հոր տան կտուրին՝ աղավնատուն, ցորենի կարմիր արտերը և նման բարեմասնություններ, որոնք երանության ժպիտ են հարուցել նրա շաղ և մաքուր սափրած երեսին, ժպիտն արտացոլել փափուկ մատներին հազցրած մատանիների ադամանդների մեջ, Հովնաթան Մարչը աթոռը համարյա Բալիքյանի բազմոցին միացնելով, շարունակել է այնպիսի մանրամասնություններ ասել, ինչպես օրինակ՝ վառժապետին ընտրությունը:

Այս և այս կարգի խոսակցությունից հետո ի՞նչ է իջնում Բալիքյանի սրտին, ամենևին հայտնի չէ, որովհետև այդ սիրտը կակղում է, որպես արևի տակ ընկած մեղրամոմ, նա իր համաձայնությունն է տալիս և առաջարկում Հովնաթան Մարչին ճանսպարհվել հին հայրենիքը, այնտեղ որոշել նոր Եթովպիոտեղը, այդ երկրում եղած փղշտացիներին ու եթովպացիներին հավաքելու, նոր քաղաքում տեղավորելու:

30 Այստեղ հարկավոր է հիշատակել մի շնչին դեպք: Նոր Եթովպիո մասին խոսելիս՝ Հովնաթան Մարչը հայտնում է, որ Փ.Բ.Մ. (Փղշտացոց Բարեսիրաց Մարմին) նիստում առաջարկ անողը եղել է այրիացյալ տիկին Մարինե Քրաչյանը: Այս հանգամանքը կարևոր է հիշատակել, քանի որ մինչ այդ Բալիքյանը բազմոցի վրա պառկած էր լսում Մարչին, իսկ այս խոս-

քերից հետո վեր է կենում, սենյակի գորգապատ հատակի վրա քայլում և մի քիչ խորհում: Հենց այդ բոլորին ներս է մտնում Անդրեաս Բալիքյանի կինը, և Մարչը նկատում է, թե ինչպես գորգավաճառ բարերարի թավ հոնքերը կախվում են: Մի պահ լուռություն է տիրում, և կինը ստիպված է լինում հեռանալ, որից հետո Անդրեաս Բալիքյանը նորից է պառկում և հրահանգներ տալիս Հովնաթան Մարչին, թե ինչպե՞ս պիտի մեկնել, ո՞ւմ պիտի տեսնել այնտեղ, ինչպիսի՞ վայր պիտի ընտրել:

— Տեղը հովոտ չպիտի ըլլա... Խոտը շատ ըլլալու է, որ հայրենակիցները կրնան մաքիներ ալ պահել: Կը կարծեմ, թե աղվոր գորգեր կը գործվի հոն, եթե բուրդը աղեկ ըլլա... 10

Բավական երկար ժամանակ զրուցելուց հետո Հովնաթան Մարչը սեղմում է նրա ձեռքը և սենյակից դուրս թռչում, վազում իր բնակարանը, ուր սպասում էին Մարինե Քրաջյանը, Բարունակ Ճիթեչյանը և մյուսները: Եվ այդ նույն գիշեր, ընկերական փառավոր հավաքույթին, Հովնաթան Մարչը դառնում է հերոս...

Ահա՛, ընթերցող, Անդրեաս Բալիքյանի այդ համաձայնությունից է սկսվում այն երկար ճանապարհհորդությունը, որի վախճանը եղավ հուլիսյան մի շոգ օր:

Երբ նույն օրը Հովնաթան Մարչը պառկել էր բազնիսի քարին, և Բիսաշի Հովակի բոբիկ ոտքերը սահում էին նրա մեջքի վրայով, Բիսաշու գլխում խորհրդածություններ էին ծնում այն մասին, թե ի՞նչ լավ պահած մարմին ունի մուշտաբի՛ն, — Հովնաթան Մարչը քթի տակ մոմոում էր հայրենաբաղձ երգերից և գլխին բամբակի քուլաների պես թափվող սապոնի պղզպրջակների միջից նայում Հովակին, նրա շիւ աչքին, կախ ընկած, բարակ պոչով բեխերին:

— Փղշտացի՞ է, — մտածում էր Մարչը նրա մասին: Ինչքա՛ն կուրախանա, եթե հենց այդտեղ, հայտնի իր միտքը, Հովակին տեղավորել կառուցվելիք նոր Եթովպիայում: 30

— Ուսկի՞ց ես, բարեկամ, — հարցրեց Մարչը, երբ Հովակը նրա մազերի մեջն էր խրել իր մատները և լվանում էր փղշտական գլուխը:

— Հող ունի՞ս, տուն-տեղ...

— Հողն ի՞նչ պիտի անեմ... էսպես յուր ենք գնում: Ու-

նեմ, հա, հող ունեմ: Քարոտ տեղ է մեր տեղը: Էստեղ լավ է, օրական հացի փող ենք աշխատում...

Այս վերջին միտքը Հովակը որոշ նկատառումով ասաց, նորեկ մուշտաբու առատաձեռնության դռները բանալու հուսով: Եվ երբ դուլլով լի սառը ջուր թափեց նրա գլխին, Հովակը շնկատեց, որ իր բառերն արդեն պաղություն էին թափել Մարչի տաք հայրենասիրության վրա:

10 Ինչպե՞ս: Մարդ հող չուզենա՞, չկամենա կապվել հայրենիքի հետ, իր քրտինքը լթափի՞ պապերի կոխած տեղում, չքերի՞ այս լքնաղ երկրի կուրծքը և նրա օդում չհնչեցնի՞ գյուղական հորովել: Ուրեմն փղշտացի չէ ֆրսաչի Հովակը, և լավ է, որ ինքը նրան շհայտնեց նոր Եթովպիո մասին:

Երբ հյուրանոցի մահճակալի վրա պառկած, Հովնաթան Մարչը լիաթոք շնչում էր բաց պատուհանից ներս մտնող իրիկվա հովը և հովի հետ էլ փողոցից եկող ձայները լսում,— նա ապրում էր հոգու խաղաղ մի վիճակ, որպիսին մարդ ունենում է, երբ մեջքի վրա պառկած, կտրան վրա, երկնքի աստղերն է դիտում:

10 Ինչքան հեռո՞ւ էր այն երկիրը, որտեղից նա ճանապարհվեց: Մարչը մտքով մի անգամ էլ եկած ճանապարհը կտրեց և այդ անելուց հետո ինքն իր աչքում բարձրացավ, դարձավ հերոս: Վերադարձին ինչե՞ր պիտի պատմի և ինչ ճառեր ասի, ճառե՞ր, որ արցունքներ հոսեցնելուց բացի, դրվարներ պիտի հավաքեն և ճամփու դնեն այս երկիրը՝ շենացնելու, ցեղին համար օրրան մը կերտելու...

Մի անգամ էլ վերհիշեց Բալիթյանին, սիզարի կապույտ ծովսի մեջ, իր ճառը, ճանապարհվելու վերջին օրերը, ընկերական հավաքույթը, որի հերոսն էր, անհայտ մի երկիր ուսումնասիրելու գնացող խիզախ հետախույզ: Ապա երգեր, պար, տիկիներ, որոնցից ամեն մեկն այդ գիշեր աշխատում էր ավելի շատ խոսել Մարչի հետ, ժպիտներ տալ, ասես ժպիտները ճամփի պաշարի գաթաներ էին:

Ամենից շատ սիրալիր էր տիկին Մարինեն:

10 Այստեղ արդեն, ընթերցող, Մարչը վերհիշեց այնպիսի փեպքեր, որ կապ չունենալով նրա առաքելության հետ, կազմում են հոգու այն թանկագին անկյունը, որի ամեն մի իրի

ինչ լինելը միայն տիրոջն է հայտնի: Այդ վերհիշումի հետե-  
վանքն եղավ այն, որ Հովնաթան Մարչը մի կողքին դարձավ,  
ձեռքերը ծալեց այնպես, ասես ձեռքով գրկել էր մի գլուխ: Բայց  
ես խոստացա չպատմել այդ մասին, քանի որ այդ գլուխն  
ամենից թանկ իրն էր նրա հոգու անկյունում:

Երեկոյան նրա մոտ եկավ կարճլիկ մի մարդ, որին փողո-  
ցում տեսնելիս շատերը կարծում էին, թե քաղաքի ամենից  
դրադված մարդն է, որի վրա է ծանրացած անթիվ հոգս՝ հի-  
վանդներ բժշկել, երկաթուղիներ անցկացնել, ձիաբուժարան  
հիմնել և այլն, և այլն:

— Բժիշկ Երանոս:

— Շատ ուրախ եմ...

Եվ բժիշկը հեհեհ սկսեց պատմել մի ուրիշ տեղ շտապող  
մարդու պես արագ-արագ խոսելով, որ ինքը վաղուց է լսել  
նրա գալուտտի մասին, անհանգստանում էր, թե չլինի՞ ճա-  
նապարհին մի բան է պատահել:

— Կա՞վ եկաք, չնեղացրի՞ն...

— Օ, ո՛չ, փառավոր: Ես հիացած եմ...

— Գիտե՞ք, այստեղ շատ բան կտեսնեք...

— Անշո՛ւշտ, հարկավ:

Մի քիչ հետո Մարչը բժիշկ Երանոսին պատմում էր նոր  
Եթովպիո մասին, թե ի՞նչ սքանչելի քաղաք պիտի լինի, ու՛-  
քեր պիտի ապրեն և թե մեծաքանակ գումար է հատկացված  
այդ գործի համար: Բժիշկ Երանոսը զմայլանքով էր լսում: Ա-  
հա մեծ սեևաացիա: Իսկույն հարկավոր է դուրս թռնել, ասել  
սրան-նրան, լուրը տարածել: Եվ բժիշկը թոթվեց Մարչի ձեռ-  
քը, խոստացավ հաճախ տեսնվել, ուրիշներին էլ բերել:

— Շատ պատվական և ազնիվ մարդիկ կան,— ասաց բը-  
ժիշկը և դուրս գնաց,— ո՛չ, գլորվեց որպես ֆուտբոլի գնդակ,  
որ հարվածից դիպչում է մերթ այս քարին, մերթ այն պատին,  
նորից հետ դառնում ու նորից դիպչում:

Իսկ Հովնաթան Մարչը գոհ առաջին ծանոթութունից մեկ-  
նրվեց մահճակալի վրա, առաջին հանդիպումը խմբագրելով  
այսպես.

— Հոս ալ պատվական ազգայիններ կան...

Այդ գիշեր մի սոսկալի արշավանք սկսվեց Հովնաթան Մարչի դեմ: Ճամփից հոգնել էր, քիսաչի Հովակի բորիկ ոտքերն էլ մածով էին նրա երակները: Եվ քունը շուշացավ ոչ միայն նրա կոպերն իջեցնելու, այլև մարմնի մասերը այս ու այն կողմ ազատ ու հանգիստ փոելու:

Հուլիսյան այդ կեսգիշերին, երբ թվում էր, թե բացել են անթիվ անհամար կրի և գաջի գործարանների դռներ ու թեժ վառարաններից տաք օդ են մղում քաղաքի փողոցները, երբ միլիցիոները մինչև ծնկները վեր քաշած ոտներն առվի ջրի մեջ էր կոխել և ննջում էր, հրացանի կոթից բռնած, երբ շոգից անքուն, ինչ-որ մարդիկ լուսնոտների պես թափառում էին փողոցներում և մի զով տեղ փնտրում նստելու և նստած ննջելու, երբ բաց պատուհանի առաջ քնած ամուսնական զույգը թարմ օդ շնչելու համար գլուխն էր կախել մայթի վրա, խոռացնում էր և շնչում,— տոթ այդ գիշերին Հովնաթան Մարչը կոշիկի երկաթ կրունկով, հին հայրենիքում, հյուրանոցի պաստառների վրա ջարդում էր մլակներին, որոնց անթիվ շարքերը, քաղցած ոհմակի պես, մութից օգտվելով գրոհ էին տվել մահճակալի վրա մուշ-մուշ քնած մաքուր մարմնի բարակ մաշկը ծակելու և ծծելու Հովնաթան Մարչի փղշտական արյունը:

Ամեն անգամ, երբ երկաթ կրունկի տակ ճլփոցով դիտապաստ էր լինում մլակը, գարշահոտ տարածում, Հովնաթան Մարչը ժպտում էր, բարիք կատարող մարդու պես:

— Ահա, կերար,— ու մի հարված էլ:

— Այսպես էլ ճոթե՛լ:— Ու մի զարկ էլ, և գարշահոտ, արյունոտ պաստառ:

Մերթընդմերթ ոտքերն էր բարձրացնում, ձեռքով խփում մարմնի զանազան մասերին, որովհետև այն ժամանակ, երբ Մարչն աչքերը ման էր ածում պաստառի վրա կամ վերմակն էր աչ ու ձախ դարձնում և հարվածում, մի ուրիշը ոտքն ի վեր բարձրանում էր և ուզած տեղը ծակում, ծծում, մինչև նրա ձեռքը հասնելու:

Այդ աշխատանքը սկզբում դուրեկան թվաց: Ահա որսորդը, որ եղեգնուտում կրակում է անընդհատ, և ամեն մի կրակոցից վայրի մի խոզ թավալզոր է լինում: Հետո քունը հաղթեց, զլուխը ծանրացավ... Իսկ մլակները հա գալիս էին:

Յվ այդ պահին նրա բեզարած գլխում ծնվեցին մտքեր, որ դառնահամ էին, մասամբ հուսահատ, մասամբ զղջումի շեշտով:

— Ինչո՞ւ եկար այս երկիրը... Կար փափուկ անկողին, մաքուր սենյակ և ուրիշ պարագաներ: Կար և գլխի մեջ մի կակուղ զանգված, սրտի մեջ կարոտ դեպի հեռու երկիրը: Եվ այդ ամենը որպես կապույտ մշուշ, անհաս, ինչպես ամպն Արարատի գլխին, որպես առասպել, Նոյյան տապանի պատմություն: Իսկ այժմ... Կեղտոտ պաստառներ, մլակներ, տոթ, անքուն գիշեր...

10

Հովնաթան Մարչի աչքն ընկավ պատից կախած հյուրանոցի կանոններին: Մայրենի լեզվով էր գրած, Մեսրոպ Մաշտոցի հնարած տառերով: Այդ կանոններին ի տես նրա սիրտը թունդ առավ, և երբ ձեռքը մոտեցրեց, տախտակը բարձրացրեց, մլակների մի հոծ բազմություն, խրտնած ոչխարի հոտի պես, շաղ եկավ:

— Ինչո՞ւ եկար այս երկիրը...

Նրա սրտին հովություն շտվավ և գրաֆինի պաղ ջուրը, հայրենիքի ջուրը, որի մասին հավաքույթի այն գիշերը ոսկեգույն խոպուպներով տիկինը այնքան շքեղ ժպտում, բարակ շրթունքներն իրարից բաժանելով, ասել էր.

20

— Պարո՞ն Մարչ, ինձի կը հիշեք, երբ առաջին անգամ հայրենիքի ջուրը խմեք...

Եթե մինչև արևի բարձրանալը լուսաբացի գովությունը չլիներ, Հովնաթան Մարչի դեմքին մյուս օրը նայողը պիտի կարժեր, թե նա ուրիշ ծանր հոգսերի հետ ունի և ստամոքսի խանգարում, կերածը չի մարսում:

## 2

Տղա՛, ինչո՞ւ կարգապահ եղար և Հովնաթան Մարչին իսկույն ներս շրոդիր, երբ նա դանդաղ քայլերով և ամենայն վեհոթյամբ մոտեցավ այն դռան, որի վրա գրված էր Պետի առանձնասենյակ, և որի կողքին կանգնել էիր, ձեռքդ դռան պղնձե կոթից բռնած: Եվ թութակի նման կրկնեցիր.

30

— Առանց զեկուցման չի կարելի, ընկե՛ր:

15

Հովնաթան Մարչը ցնցվեց, մի քիչ հետ քաշվեց և երբ այցեատմար մեկնեց, դու գիրկապ անելով կարդացիր.

— Փղշտացոց Բարեսիրաց Մարմնի լիազոր,— նորից ուսերդ թոթվեցիր, կրկնելով նույն անիմաստ բառերը հերթի մասին:

10 Նախասենյակում խոնավել էին գյուղացիք: Ոմանք շոքել էին գետնին, զրուցում էին իրար հետ, ոմանք էլ մուտքից քիչ հեռու կանգնած հերթի էին սպասում: Հայ, թուրք, եզդի ու բուլղոց բարբառները, բոլոր գավառների բուլլոր, տեսակ-տեսակ շորեր և շորերից տարբեր հոտ՝ գոմի, հողի, աղբի, քրտինքի: Հարկավո՞ր էր, որ Հովնաթան Մարչը նախասենյակում շնչի այդ ծանր հոտը և հաճախ մետաքսե թաշկինակով սրբի ճակատի քրտինքը, որի ամեն մի կաթիլը գլորվում էր փղշտական մի քաղաք հիմնելու ցամաք ու աղքատ Արմենիայում:

20 Երբ Հովնաթան Մարչը պատուհանի առաջ կանգնած փողոցի անցուղարձին էր նայում և սլատին սեղմվում, հենց որ նախասենյակում սպասողներից մեկնումեկը անցնում էր կողքով ու քիչ էր մնում ոտքը կոխեր,— նրա դեմքին երևում էր այնպիսի մի արտահայտություն, որի մասին դեռ դարեր առաջ այսպես է գրված Հովհաննու ավետարանում.

— Յուրսն եկն և յուրքն զնա ոչ ընկալան...

— Խնդրե՛մ, ընկեր,— ասաց տղան և դուռը լայն բաց արեց:

Հովնաթան Մարչը կայծակի արագությամբ մտքիլը ժողովեց, դասավորեց որպես խաղաթուղթ և դռնից ներս մտնելիս պատրաստվեց կրկնելու այն, ինչ եղավ Անդրեաս Բալիթեյանի սենյակում, երբ պետը հեռախոսի խողովակն ականջին մոտեցնելով, աչ ձեռքով Հովնաթան Մարչին առաջարկեց նրստել ազատ աթոռին:

30 Մոտ հինգ բոպե, մի ուրիշը, որ չէր սպասել նախասենյակում, հեռախոսով այնպիսի մի նյութի մասին խոսեց, որ պետական խոշոր գաղտնիք թվաց Հովնաթան Մարչին: Որովհետև երեխան էլ կհասկանա, թե ի՛նչ է նշանակում.

— Ասում ես սահմանի մո՞տ են...

— Այո՛, միջոցներ ունենք: Կարող ենք մի խումբ ուղարկել...

— Եղեգնուտները կիսանգարեն: Քող վառեն: Բուրբ մի-  
շոցները կտանք:

— Այո՛, այո՛:

— Ութ հազարի շափ: Իհարկե, վտանգը մեծ է: Գյուղերից  
սալլեր կհավաքենք: Եթե կարիք լինի, կարող ենք բնակիչներին  
դուրս հանել...

— Լավ, լավ: Հենց այս գիշեր մերոնք դուրս կգան...

Դուք կարծում եք, թե այս ամբողջ խոսակցության ժամա-  
նակ Հովնաթան Մարչը եզրիպտական մումիայի քարացած  
դեմք ունենք և չէ՞ր հուզվում, աթոռի վրա տեղը չէ՞ր շտկում, 10  
թուրք սովորականի պե՞ս էր կուլ տալիս:

Քավ վե՞ մի՛ լիցի: Այն ժամանակ, երբ հեռախոսի խողո-  
վակը լսեց սամմանի մոտ են բառերը, Հովնաթան Մարչը մեշ-  
քը ձգեց ճիշտ այնպես, ինչպես զինվորներն են անում, երբ  
զենք ու զրահի մեջ կորած, մարդադաշտում անցնում են հրա-  
մանատարի կողքով: Ինչպես ասում են, Հովնաթան Մարչի լե-  
զին ճաքեց, երբ ամենայն անտարբերությամբ պետք մի ուրիշ  
աներևույթ մարդու հայտարարեց, որ մեռնեմ գիշերս դուրս  
կգան...

Ձորածողո՞վ, սալլերի բռնագրավո՞ւմ, ի զե՛ն, ի սո՛ւր, 20  
հայրենիքը վտանգվա՞ծ է... Եվ այդ՝ հուլիսյան շոգ օրի՞ն, երբ  
օդում ամեն ինչի հոտ կար, բացի վառողի: Այո՛, այո՛, ան-  
պարտելի են Արմենիո տերերը, եթե նրանք պատերազմի հրա-  
մանն արձակում են այդքան անտարբեր, նույնիսկ քնատ աշ-  
քերով:

Այս ամենը կատարվեց հինգ ըոպեում: Վեցերորդ ըոպեին  
պետք աչքերը դարձրեց Հովնաթան Մարչի հարթուկած զգես-  
տին, մաքուր ածիլած երեսին և այդ երեսի քնքուշ, բարակ  
մորթուն:

— Ինչո՞ւմն է բանը, — հարցրեց նա, և երբ պետք աշ- 30  
քերն էր տրորում, Հովնաթան Մարչը մի քիչ մոտեցավ նրա  
սեղանին ու շարեց բավական սահուն մտքեր:

— Հեռուներեն եկած եմ: Կփափագիմ քաղաք մը հիմնել,  
աշխարհիս մեջ ցանուցիր եղած փղշտացիներով բնակեցնելու:  
Հոս տեղ ալ կը փնտրեմ փղշտացիներ, եթովպացիներ: Անոնք  
հայրենակիցներ են...

— Լա՛վ, բարի...

— Լարկավ, առանց Ձերին բարյացակամության այս գործը գլուխ չի գար: Լուսով եմ, որ Դուք ալ տոգորված սիրով դեպի այս երկիրը, մեզի հողամաս մը կը տրամադրեք նոր Ծթովպիո...

— Լա՛վ, լավ... — Եվ այդ լավերը զուգորդում էին կակուղ հորանջոցներին:

10 — Այո՛, այսպես: Մեր ուզած տեղը երկրի սրտին մեջն ըլլալու է: Նախընտրելի է ազգային վայր մը, պատմական և այլն: Մեր հայրենակիցները գորգագործութեամբ պիտի պարապին: Գիտեք, որ աշխարհիս մեջ մերայինք մեկ հատիկ են, մրցակից չունին: Լուսակավոր հնդահաններ են, աֆրոն, ժխախոտ և նման անվանի գործեր ունին ամենքն ալ, դրամ շահելու կողմանէ: Ինքը Բալիբայան ալ այդպես պզտիկ գործ մը նախընտրեց, ետքը դարձավ մեծանուն ազգասեր: Լիմա անոր կողմեն է, որ կը բանակցիմ, նաև Փղշտացոց Բա...

— Լա՛վ: Քանի դեսյատին հող է պետք, չրովի՞, թե՛ անջրդի:

20 — Մեզի առաջին հեղ սանկ հինգ հարյուր հեկտար կը բավէ: Վերջը, երբ մեծնանք, ամեն կողմերե հոս հավաքվին փղշտացիք, եթովպացիք, հոս ծաղկյալ դրախտ մը պիտի շինվի: Ամենքն ալ այդ փափագով կը տառապին, հայրենիքի հողին վրա մեռ...

— Դուք հիմա՞ եք հող ուզում, — ասաց պետը պահարանից քարտեզը հանելով: Տղան դուռը կիսաբաց էր անում, աչքի տակով նայում: Այդ ընդունված պայմանական նշանն էր այն մասին, թե նախասենյակը հուզվում է:

30 — Ահա ձեզ ազատ հող: Արաքս կայարանի մոտ, Դամբըլուի շրջան և Արազդայան: Այս երեք տեղից բացի ազատ հող չունենք:

Լովնաթան Մարչը նայեց քարտեզին: Սա է Արմենիան, տեղտեղ կանաչ օազիսներ, սյգեշատ ավաններ, ապա ցամաք տափարակ, դեմի ապառաժներ և լեռներ՝ անտառներով և առանց անտառի:

Արաքս... Դաշնամուրի մի ակորդ կարող է ձեզ հիշեցնել անցյալի մի պատմություն: Դուք կարող եք փափկանալ, ինչպես

կրակին մոտեցրած մոմ, գուցե և հալվել, այսինքն արտասովել,  
և այդ ամենը դաշնամուրի մի ակորդ լսելուց հետո: Արաքս...  
Հովնաթան Մարչ, ֆայլամուր գնում եմ և ապա հին հին դա-  
րեք, ինձի կնիշեք, պարոն Հովնաթան, գանգուր խոպոպներով  
բարեգործական մի տիկին, որի համար այս հեռավոր երկիրը,  
Փոքր Ասիայի խորքում ընկած Արմենիան, դուրեկան միրած է,  
մանուկ օրերի հրազ:

Պետր քարտեզը կուլուց, և երբ Մարչի աչքերից ծածկվեց  
քաթանի վրա գծած վերջին հորիզոնական գիծը, հայրենասի- 10  
րական սեանսը վերջացավ: Մնաց մինչև փողոց հասնելը մի  
քիչ էլ ապրելու նկարի գեղեցկութամբ, որովհետև փողոցի  
ժխորը պիտի հօդս ցնդեցներ այդ միրածը:

— Գեղեցիկ: Ես կերթամ, կպտտիմ այդ կողմերը,—ասաց  
Մարչը, ընդունելով պետի մեկնած ձեռքը,— վտանգավոր չե՞ն,  
Զեզմե մանդատ առնելու հարկ չկա՞,— հարցրեց նա: Հասկա-  
նալի է, որ նա վերհիշեց մեռոնք այս գիշեր դուրս կգան...

— Ոչ մի թուղթ: Նշանակեցե՛ք անունները, տեղում ծա-  
նոթացեք, մենք համաձայն ենք: Կհատկացնենք հինգ հարյուր  
հեկտար:

Եվ երբ Հովնաթան Մարչը մոտեցել էր այն շեմքին, որից 20  
նախասենյակ մտնել հնարավոր է և առանց զեկուցման,—հան-  
կարծ հետ դարձավ:

— Ինձի մեծ պատիվ ըրած պիտի ըլլաք, եթե հուշատետ-  
րիս մեջ Ձեր անունը ստորագրեք: Հավետ անմոռաց հիշատակ  
մը մեր առաջին հանդիպումի:

Պետի ժպիտը հայերենով գրելու համար հարկավոր է  
գտնել այնպիսի մի բառ, որ նշանակի և՛ զարմանք, և՛ ծիծաղ,  
և՛ արհամարհանք: Բայց և այնպես ստորագրեց: Սանդուղքնե-  
րից իջնելիս Հովնաթան Մարչը այդ հուշատետրի այդ սպիտակ  
թերթը տանում էր որպես մասունք: 30

...Հեռախոսի զանգը այնպես զիլ քրքջաց, երբ Մարչը փա-  
կեց դուռը:

Այդ օրը № 27 փոստարկղն ընդունեց զարմանալի մի նա-  
մակ:

«Սիրելի՛ հայրենակիցներ. կպտտին դժնդակ լուրեր: Սահ-  
մանի մոտ ինչ-որ եռուզեռ կա: Այս գիշեր ութ հազարնոց բա-

նակ մը պիտի անցնի Արաքսը: Չեմ կրնար երկար գրել, ձեռքս կողոզա: Ո՞րն է այս երկրին ներքին իմաստը, հողին ույժը: Ով ալ տիրելու ըլլա շքնաղ Արմենիո, կոնակը Արարատին պիտի կրթնեցնե: Տեղեկութիւնները ստույգ են, բայց գաղտնի կը պահւի: Ի՞նչ պետք կա ավելորդ թմբկահարութեան: Ա՛հ, կսիրեմ, կսիրեմ այս վերին գաղտնիքը: Գործս հաջող կերթա: Վաղը նոր Եթովպիո տեղը տեսնելու պիտի երթամ: Ինծի կըսեն, թե այդ հողին վրա արքայական դամբարաններ կան: Օ՛, ցընծա, երկիր մայրենի: Փղշտացի դեռ չեմ տեսած, լուր ունիմ, որ Ալագյազի կողմերը քանի մը եթովպացի կա: Առայժմ այսչափ: Հոս տաք է, սակայն կառավարութեան դիրքը անսասան կերևա...»:

Եթե ստորագրութիւնը ցույց տային Բուենոս Այրեսում ապրող խոպոպիկներով տիկնոջ, անպատճառ ուրախութիւնից ձեռքերն իրար պիտի զարկեր և կանչեր.

— Հովնաթա՛ն Մարչ...

Հենց այդ նույն օրը, երբ հովը մի քիչ կոտրեց ցերեկվա շոգը, ութ հօգի, նավթի բիդոններով, եղեգնյա երկար ցողեքով, դեղորայքի արկղներով քաղաքից մեկնեցին սահմանամերձ մի վայր, որի եղեգնուտների մեջ մորեխ էր երևացել և սպառնում էր հարևան գյուղերի ութ հազար դեսյատին արտերին ու բամբակին...

### 3

Ավտոմոբիլը սլանում էր առավել արագութեամբ: Շոֆերի աչքը սլաքին էր և ժապավենին, որ դառնում էր և ցույց տալիս՝ 75—80—75: Թվում էր, թե մեքենան անիվներ չունի, սլանում է ոչ թե խճուղով, այլ եթերում է ճախրում: Այո՛, այդպես թրվում էր, և տեսնողը գուցե կարծեր, թե ավտոմոբիլն արագ քշելով կարելի է դարձնել անբուսական կամ վերհիշեր Եղիա մարգարեի քառածի կառքի առասպելը, եթե մեքենան փոշու ամպ չբարձրացնէր և այդ ամպը շնատեր խճուղով անցուղարձ անոթ սալերի, սելվորներրի և գոմեշների վրա:

Զորութիւնը մեքենայի մեջ չէր, այլ այն մարդու հոգում, որ կաշվի բարձի վրա նստած, աչքերը տափարակի անհունու-

թյան մեջ սուզած, մտքով հեռուն էր թռչում, տասնյակ դարեր հետ և պատմության փոշեպատ խորքերից հանում դեմքեր, որոնց ստույգ լինելու մասին միայն ծերունի մատենագիրն է վկայել:

Մեքենայի թափը արագ բռնկվող բենզինից չէր, այլ Հովնաթան Մարչի հրդեհվող հայրենասիրությունից: Սլանում էր մեքենան, քամուց ֆոֆոում էր նրա լայն վերնազգեստը: Կարծես մարդ չէր նստած, այլ թևավոր ոգի, որ հուլիսյան շոգին հայտնվել էր անամպ երկնքի խորքից, փոշի բարձրացրել ու անհետանալու էր փոշու ամպի մեջ:

10

— Ինչ յաման կըշա՞նհիրավը... Տեսնես ո՞վ ա...

— Ամերիկացու կլմաներ:

Այսպես էին խոսում սելվորները, փոշու ամպի մեջ փորձելով որոշել, թե ո՞ւր կորավ մեքենան:

Ուրիշ էլ ինչ կարող էին խոսել մարդիկ, որոնց ուղեղը արևի տակ կակղել էր, և որոնց լեզուն ցեխախառն թուքի մեջ դառնում էր այնքան ծուլորեն, որքան գոմեշը տիղմի մեջ: Հարկ չկա վթրավորելու Հովնաթան Մարչի պայծառ հիշատակը (ընթերցողը հետո կտեսնի, որ հիրավի, խոսքը միայն հիշատակի մասին կարող է լինել) և գրել, որ գյուղացիներից մեկը, որի գոմեշները խրտնեցին և սայլը թեքեցին այնպես, ինչպես նավն է թեքվում ճեղքված ստանալիս, որ գյուղացիներից մեկը ծա՛նր, շատ ծանր հիշոցք շպրտեց, ուղղված և՛ Մարչին, և՛ նրա... Օ՛, ոսկեզանգուր խոպոպիկներով տիկին, եթե Բուենոս Այրեսում դու լսեիր...

20

Հովնաթան Մարչը գնում էր Նոր Եթովպիո տեղը որոշելու, տեսնելու այն տափարակը, քարոտ և անշուր երկիրը, որի մասին բանաստեղծները երգել են որպես չքնաղ դրախտավայր, և ուր Փղշտացոց Բարեսիրաց Մարմնի մոզական ուժով պիտի հարուժյուն առնի մի մեռած քաղաք, մի Նոր Եթովպիա, ո՛չ, ահագին մի աշխարհ:

30

Արարատյան դաշտը ամենևին չքնաղ գեղեցկուհի չէր հուլիսյան այդ շոգ օրին, թեկուզ այդպես էր երևում Հովնաթան Մարչին՝ ակնոցների հաստ ապակու ետևից: Այդ մի պառավ կին էր, ստինքները՝ չորացած տրեխներ, որի ճաքճքած

պոռշները միայն ջուր էին ուզում, խոստանալով այդ դեպքում միայն երևան հանել իր խորքում թաղված ուժը:

20 Հովնաթան Մարչը ուշք չէր դարձնում մեքենայի ցնցումներին: Նա չէր ջոկում բամբակի դաշտերը ցուրնի դեղնած արտերից, մեքենան գյուղերի միջով սլանալիս՝ նրան այնպես էր թվում, թե հասարակ հողարլուրներ են և ոչ բնականվայր, հնուց մնացած թմբեր, որոնց տակ, հասկանո՞ւմ եք, թաղված է այս երկրի արքայական անցյալը, երբ իշխանները Արարատյան շամբուտներում որսի էին դուրս գալիս, վարազներին նիզակահար անում և Արաքսի կղզիների վրա սարքում խրախճանք:

Քշի՛ր, շոֆեր, քշի՛ր... Ինչքան էլ արագ սլանաս, պատածիրիդ մտքի թափին չպիտի հասնես, թեկուզ գյուղերն էլ տորես անիվների տակ: Քշի՛ր, և թող իրականը Հովնաթան Մարչի աչքին մի պահ չերևա, թող Արմենիան դառնա ամպերից կախ ընկած դրախտ, որի բնիկները զտարյուն են, Քորզոմյան ցեղի անաղարտ հոգով, կատարյալ և իսկատիպ փղշտացի, եթովպացի և ոչ մուլլա-բայազետցի միջակ կամ աղֆաու:

20 Հեղափոխություն, սոցիալի՞զմ... Քշի՛ր, շոֆեր: Հովնաթան Մարչը այդ համարում է անցողիկ երևույթ, նո՛ւ, որպես պատմության մի գրիպ, մարմնի ժամանակավոր խանգարում, որից հետո մոխիրների տակից պիտի հարուստուն առնեն բուր մեռած քաղաքները, քանի երկրագնդի անկյուններում Հովնաթան Մարչի պես մարդիկ Արմենիա ասելիս աչքերից արցունքներ են գլորում և գրկում այդ գաղափարը, որպես թունդ հարբեցողը վերջին շիշ օղին:

30 Մեքենան կանգնեց: Շոֆերը քրտինքը սրբելով հետ նայեց ու պահ մի զարմացավ: Հովնաթան Մարչը քնել էր փափուկ բարձերի վրա և բնազդաբար շարունակում էր օրորալ, որպես օվկիանոսի շոգենամվ՝ մարմանդ կոհակների վրա: Միայն մարմինը չէր օրորվում, մտքերը ճոճանակի պես տարուբեր էին լինում, թեկուզ միտքն էլ աշխատում էր, որպես խանգարված ժամացույց:

Շչակը ոռնաց: Հովնաթան Մարչը ցնցվեց, աչքերը տորեսից: Ա՛խ, եթե շամբուտներ լինեին, և իշխանական վարազը մոնչար շչակի պես: Շուրջն ամայի տափարակ էր, տեղ-տեղ քարակույտեր:

Ահա ինքը՝ փղշտացոց լիազորը ոտք է կոխում ապագա քաղաքի սահմանը և քայլում է որպես հաղթանակից վերադարձող զորավար: Ո՞ւր են կամարները, ինչո՞ւ շեփորները չեն ավետում քնած քաղաքին այն մասին, թե...

Շոֆերը մեքենայի գլուխը հետ դարձրեց, և որովհետև Հովանաթան Մարչի պատվերը կար մի հով տեղ սպասելու, քշեց դեպ, դեմը երևացող ծառաստանը: Հովնաթան Մարչը նայեց հեռացող մեքենային, ապա երեսը դարձրեց տափարակի կողմը:

Անշուշտ, երբ Պետրոս Մեծը ճահճուտների մեջ կանգնած, 10  
աչքը ծովախորշին, իր խոսքն էր ասում, սոնշուշտ, ուուսական արքայի դեմքին էլ նույն արտահայտությունը կար, ինչ որ Հովնաթան Մարչի դեմքին, որի քնքուշ մորթը արևից մի քիչ խանձվել էր: Ծիշտ է, տարբերություն կար, ինչպես օրինակ, այն, որ ուուսական արքան երկարավիզ կոշիկներով էր, իսկ Մարչը դեղին բոտերով կամ այն, որ Մարչը երկրորդ անգամ էր պատմությունը կրկնում (իսկ այդ հայտնի ֆարս է), — բայց և այնպես նմանությունն ակներև էր:

Հովնաթան Մարչը շատ քայլեց ամալի տափարակում: 20  
Հին, հայրենիքի փոշին նստեց նրա դեղին կոշիկներին: Մարչը քայլում էր, նայում աչ ու ձախ, մտքում հաշիվներ անում, տների, ագարակների հաշիվներ, պարտեզներ տնկում, փողոցներ անցկացնում և ընդարձակ հրապարակ, կենտրոնում հսկա մի շենք, ամենաքիչը իններորդ դարու ոճով կառուցած, փղշտական հանդեսների ու եթովպական հավաքույթների համար: Նա տեսնում էր այդ քաղաքը և քայլում էր այնպես, ասես առֆալտած են մայթերը:

Մի օձ, մաշկն սպիտակ բծերով մի օձ, քարի վրա տաքանում էր: Ուտնաձայնից գլուխը վեր հանեց և, հավատո՞ւմ եք, գլուխն այնպես տնկեց, ասես օձային իր լեզվով հարց էր տալիս նորեկին՝ ո՞վ ես, ի՞նչ ես ուզում ամալի այս դաշտում: Մարչը շտեմավ օձին: Գուցե դրանից նեղացած օձը բարվոք համարեց շուլավիլ բարի տակ և շարունակել օձային յուր մըտքերը ակնոցավոր նորեկի մասին:

Բայց զայրացածը արևն էր: Ասես ուրիշ երկիրներից իր շոֆերը հետ էր կանչել, որպեսզի այդ ժամին խիտ շարքերով շի-

կացնի քարերը, մինչև կարիճներն էլ արևահար լինեն և քարերը ճաքեն: Սակայն Մարչը շէր զգում ոչ արև, ոչ լուսին: Եվ այդ ավելի էր զայրացնում արևին: Ո՞վ էր նա, գուցե վաղուց մեռած մի արքա, մի Արշակ թագավոր կամ Գագիկ զորավար, որ ամերիկյան անուրիստի տարազ հագած՝ հարուստն էր առել և շոգ ցերեկին անամարդաբնակ դաշտում իր դոլյակի հետքերն էր որոնում և ստուգում, թե ի՞նչպես է հիշում իրեն սերունդների սերունդը...

- 10 Մի հավաքույթ, բաժակահառեր, կենաց խոսքեր, օտարազգի հյուրեր և հայրենական երգեր, որոնցից օտարազգի հյուրերի լսողութունը սակավ էր շոյվում, սակայն ժպտում էին՝ վայելուչ մնալու համար: Հովնաթան Մարչը խոսում էր.— Օտար հորիզոն... Այնտեղ, հայրենի հողի վրա, ուր ջուրը մայրենի բարբառով կկարկաչե... Մարչը խոսում էր ոսկերեքան լեզվով, և Մարչի լեզվով խոսում էին բոլոր մատենագիրները, զորավարները, ժպտում էին ոսկեզանգուր խոպուպիկները: Մեկի կուրծքը հեիհե բարձրանում էր, երբ Մարչը հընչեցնում էր իր ձայնը, որպես բամբիռ՝ բամբ ուրուտան և իշնում, երբ նրա ձայնը դառնում էր առավոտյան զեփյուռ ու շոյում կտավատի կապույտ ծաղիկները:

- 20 Հովնաթան Մարչը ճակատը տրորեց, թեթև գլխապտույտ զգաց: Արևը միամտորեն կարծում էր, թե նրա գլխարկի տակ հաստակլեպ դդում է և ուզում էր խաշել այդ դդումը:

Հովնաթան Մարչը այդ գիշեր հերոս էր... Ա՛խ, եթե տեսնեին նրան այդ դիրքով, հայրենի հողը կոխելիս, ինքն իրեն զբուցելիս, որպես մի կիւ արեա, ո՛չ, որպես աշխարհակալ, որի վայրկենական մտքերը պատգամներ են գալիք սերնդի համար:

- 30 Հովնաթան Մարչը կոացավ, քարերի արանքում բուսած խոտերից մի փունջ պոկեց և մետաքս թաշկինակի մեջ լցրեց մի բուռ հող: Մետաքս թաշկինակ... Այրիացյալ աիկին Մարինե Բրաջյան...

...Երեկոյան Մարչն աչքերը բաց արեց, նայեց շորս կողմ ու նորից փակեց: Երա՞զ էր: Ո՞վ կառուցեց այս խրճիթը տափարակում: Քներակները զարկում էին և ամեն մի զարկի հետ ծակոցներ էր զգում գլխում: Մարչը ձեռքը ճակատին տարավ

և զովություն զգաց ճակատին դրած թաց շորից: Երբ շորը փոխեցին, Մարչը նորից աչքերը բաց արեց, ճրագի լույսի տակ տեսավ շոֆերի դեմքը և մի ուրիշ դեմք: Մի կին ճրագը բարձր բռնել էր, ասես գլխին էր դրել: Նա փորձեց խոսել, բայց հագիվ կարողացավ ջուր ուզել ու աչքերը նորից փակեց:

Հովնաթան Մարչը արևահար էր եղել այն ժամանակ, երբ հուլիսյան արևի տակ, ցամաք տափարակում, որպես միրած, նա տեսնում էր Նոր Եթովպիոն սպիտակ տները: Շոֆերը սպասել էր մի ժամ, երկու, վերջը մոտեցել էր և նրան տեսել արևի տակ ուշաթափ ընկած:

10

Երբ մի անգամ էլ նա աչքերը բաց արեց, մի մարդ ամանի մեջ մածուն էր խառնում ջրին, կինը կանգնել էր կողքին, ինչոր երեխաներ կախվել էին կնոջ փեշերից և զարմանքով նայում էին խսիրի վրա պառկած մարդու շորերին, կոշիկներին, ակնոցների ապակիներին, որոնց մեջ արտացոլում էր ճրագի լույսը: Եվ մանուկներին այնպես էր թվում, թե մարդը կրակե աչքեր ունի:

— Ո՞ւր եմ,— հարցրեց Մարչը, և մինչ շոֆերը պատասխան կտար, նրա սնարի վերև տնկվեց երկարհասակ մեկը և ասաց:

20

— Անհոգ եղբք: Հաջի Խարաբ գյուղն է կամ հին հայոց Բագնարանը:

— Հին հայոց... Հրամանքնիդ ո՞վ եք:

— Անթանոսյան Հմայակ, գյուղի վարժապետը: Ես էլ օտարական եմ, այս հեռու գյուղում եմ աշխատում:

Եվ Անթանոսյանը շատ կցկտոր պատմեց իր կյանքն ու գլխով անցածը, ամեն ինչ համեմելով այնպիսի բառերով, որոնց քաջ ծանոթ են հին գրաբար գիտցողները: Շոֆերին այնպես էր թվում, թե մարդը պոչ ունի և խոսեցիս պոչը գետնովն է տալիս:

Տանտերը առաջարկեց հիվանդին կտուրի վրա տեղավորել:

30

— Վերև քամի կլինի, լավ կքնեք: Համ էլ կարիճից, մժեղից երկյուղ չի լինի:

Մարչին վերև տարան: Սանդուղքով բարձրանալիս նա թեթև գլխապտուկտ զգաց ու հեմվեց Անթանոսյանի թևին:

25

— Վաղը եղեգնուտը պիտի տեսնեմ: Ինչպե՞ս է անունը:

— Տեղացիք Ղամբըշու են ասում,— ասաց Անթանոսյանը:— Պատմական...

Ղամբըշուի պատմական անունը Հովնաթան Մարըր այնպես էլ չլսեց: Կտուրը բարձրանալիս զգաց, որ ոտքերը դողում են, հազվիվ հասավ թախտին ու մեկնվեց:

10 Երկինքն աստեղազարդ էր, իհարկե, որովհետև հուլիսյան գիշերը բոլոր հորիզոնների տակ էլ աստեղազարդ է: Հովնաթան Մարըր աչքերն աստղերին ուղղելուց առաջ հարկ համարեց, անձի ապահովության համար, հարցնել կարիճների մասին և տեղեկանալով, որ այդպիսիք կտուրների վրա հազվագյուտ են, երեսը դարձրեց Անթանոսյանի կողմը:

Այդ այնպես հանկարծ եղավ, ասես մինչ այդ նա չէր զգացել նրա ներկայությունը: Մարըր նրան հարցրեց հողի, ջրի մասին, ոչ վերացական մի ինչ-որ հողի կամ ջրի, այլ որոշ մեր, այս, ճին, հայրենի և այլն: Այդ խոսակցությունը այնքան հաճելի թվաց Մարըրին, որ նա գլուխը վեր հանեց, նստեց տեղում ու ցնծության աղաղակ արձակեց:

— Ահա փղշտացի մը...

20 Շոֆերը կարծեց թե կարիճը խայթեց պասաժիրին: Խրճիթում քնած տանտերը կնոջը հարցրեց:

— Ինչո՞ւ ճվաց:

Երկինքն աստեղազարդ էր: Սարկայն այդ չէր կարևորը, այլ այն, որ Հաջի Խարաբ գյուղի ծայրին, կտուրի տակ Հովնաթան Մարըր զրուցում էր մի մարդու հետ, որ իր նախատիպն էր, սակայն մի քիչ ավելի պակաս աշխարհ տեսած, ավելի բարձրահասակ և գյուղի ուսուցիչ, այն ժամանակ, երբ ինքը... Նո՛ւ, ինքը, իհարկե...

30 Խոսքը դարձավ Նոր Եթովպիո մասին: Հովնաթան Մարըր պատմում էր, ավելի ճիշտ զառանցում, որովհետև քներակների մեջ ծակոցները շարունակվում էին: Իսկ Անթանոսյանին թվում էր, թե այդ ձայնը մոռացված, բայց հարազատ հեռուներից է գալիս:

Նրանք անվերջ կզրուցեին, եթե մի դիպված չլիներ, անմեղ մի քայլ: Երբ Անթանոսյանը պատմում էր հին օրերից, երկուսին հասկանալի լեզվով, Հովնաթան Մարըրին այնպես էր թվում,

թե ինքը ինչ-որ կղզիների վրա է և ոչ հայրենի երկրում: Մի Տախտի, Ֆորմոզա կամ անհայտ այլ կղզի, ուր ապրում են կարմրամորթներ և ջրերի վրա գերաններից տներ կառուցում ճիշտ այնպես, ինչպես տան կտուրը:

Անթանոսյանը պատմում էր: Կարո՞ղ էր անհայտ կղզու բնակիչը պատմել, թե ի՞նչ գեղաքանդակ է Ղամբըշուցից ոչ հեռու ընկած ավերակ եկեղեցին, ուր եզիդի հովիվները ձմեռը ոչխար են պահում: Կարո՞ղ էր Տախտի բնակիչը պատմել...

Միայն փղշտացին կարող էր արտասովել հուլիսյան աստեղազարդ երկնքի տակ, լսելով Հովնաթան Մարշի խոսքը այն մասին, թե ինչպես տափարակի մի քարի տակ, թաշկինակը հողով լեցնելուց հետո, նա մի թուղթ է թաղել, որպես հիմնադրեք Նոր Եթովպիո, որպես նոր ուխտ:

10

Եվ այդպիսի զրույցները վերջ չէին ունենա, եթե շիիներ մի դիպված, որի պատճառը այն էր, որ Հովնաթան Մարշի քներակները ցավում էին, ու կարծում էր, թե Հաջի Խարաբ գյուղը անհայտ կղզու վրա է, տները ցցաշեն են, պատերի տեղ՝ գերաններ են ջրի մեջ: Երբ Անթանոսյան Հմայակը հայրենի երկնքում մի համաստեղութուն էր փնտրում և Հարդագոզի ճանապարհից մտքով գիծ անցկացնում մինչև Յ աստեղաշարը, Հովնաթան Մարշը վեր կացավ, մոտեցավ կտուրի ծայրին ցցած կոտրած կարասին, որով ամեն առավոտ օջախի ծուխն էր բարձրանում:

20

Դիպվածը, ճիշտ է, վերևից սկսվեց, հենց ժխնելույզի կարասից, բայց աղմուկը խրճիթից ելավ, որովհետև վերից ծլարցող հեղուկը հանգցրեց ճրագը և Հովնաթան Մարշին այնպես թվաց, թե պետքաբանում մարդիկ են խեղդվում: Այդպես չէր կարծում, սակայն, տանտերը, որի խոր համոզմամբ, հուլիսյան աստեղազարդ գիշերին, երկինքը երբեք անձրև չի թափում և այն էլ ժխնելույզով:

30

Աղմուկի վրա շոֆերը դուրս թռավ, և մինչդեռ Հովնաթան Մարշը Անթանոսյանին ապացուցում էր, որ պետքաբանում մարդիկ են խեղդվում, իսկ փղշտացի Հմայակը մեջքով կտուրն էր հրում, ուզում էր, որ կտուրը տեղ անի և պարտակի իրեն, շոֆերը բակում շապկանց կանգնած և բռունցքը դեպի կտուրը ճռճող տանտիրոջ հետ՝ մոտավորապես այսպես էր խոսում.

27

— Լա՛վ, հերիք է, գուցե էն շէր, խմելու ջուր էր:

— Ի՞նչ ես ասում, էնպես խմելու ջուր կլինի՞: Էս էլ իմ պատվի տե՞ղն էր: Երեխեքս վեր թռան...

— Դե չիմացա՛վ, մեր տեղին ծանոթ չի, Ամերիկայից է եկել...

— Է լա՛վ, էդ անտեր երկրում քա կտուրով տուն չկա՞...

Խնդրին վերջնական լուծում տվին այն արծաթները, որ Անթանոսյանի բոի մեջ իշան սանդուղքով և զրնգոցով թափվեցին գյուղացու բուռը, որպես երկնքից իջած աստղեր:

10 Ահա այդ դիպվածն էր, որ ընդհատեց նրանց քաղցր զրույցը: Ասվում է ընդհատեց, քանի որ խաղաղություն տիրելուց հետո, Հաջի Խարաբ գյուղում, խղճուկ մի կտուրի վրա, երկու փղշտացիների զրույցը նորից ծայր առավ:

Լուսաբացը այսպիսի պատկեր տեսավ: Անթանոսյանը պառկել էր գետնին, մեջքի վրա, դեմքին՝ երանության ժպիտ: Ընթերցո՞ղ, մանուկ ժամանակ սպանե՞լ եք գորտ ու տեսե՞լ եք, թե ինչպես գորտը դառնում է մեջքին, ոտքերով շանչ անում, ասես գանգատվում է երկնքին: Այդպես պառկել էր Անթանոսյանը, ստկայն ոչ ոքի գանգատ չէր անում: Թախտի վրա Հովնաթան Մարչն էր պառկել, ձեռքը գլխի տակ, երեսը դեպի հեռու՝ մշուշի մեջ երևացող տափարակը:

20 Այդպես քնել էին խաղաղ ու անխռով երկու փղշտացի: Ծվ էին նրանք անձինք նվիրյալի սիրույն Արմենիո...

#### 4

Այդ օրը պատարագիչ Արիստակես եպիսկոպոսը, երբ երեսը դեպի աղոթողները դարձրեց և սկիհը բարձրացնելով ասաց՝

— Առե՛ք կերեք, այս է մարմին իմ,— մյուսների հետ մոտեցավ և Հովնաթան Մարչը, ուտելու այն մարմինը, որ ամփոփված էր եպիսկոպոսի ձեռքին բռնած անոթի մեջ: Ծվ երբ սրբազանի մատները շոյեցին նրա լնդերը, բերանում գինու համ զգաց, Հովնաթան Մարչի երակներում արյունը խաղաց, որպես եռման հասած ջուր: Երջանկության գազաթնակետն էր նրա համար:



Ա. Բակունցը որդու՝ Սևադայի հետ (1929 թ.)



Գարիպի շինը (Կյարսիք)

Ա՛խ, այդ երջանկութիւնը... Կատուն դռան շեմքին, արևի տակ ծուլորեն պառկում է, հորանջում և երբ արևից խաղում է արյունը, թաթերն այնպես նազանքով է մեկնում, ասես երջանկութիւնն արևի շողերի մեջ լողացող դեղին թիթեռնիկ է:

Պատարագը շարունակվում էր: Մերթ բեմից էին երգում, մերթ ներքևից պառաված ու երբ բայնով մեկը պատասխանում էր, գովում լուսավորչական աստծուն, որ մուտքի առաջ շոքած գաղթական բիճայի համար բավական նման էր պատարագիչ Արիստակես եպիսկոպոսին: Նույն ալեհեր միբուքը, փառահեղ մալանչներով մինչև գոտին կախ ընկած, նույն սպիտակ ու կակուղ մատները, որ դեղին մոմի էին նման և բուլբը՝ կնդրուկի, խունկի և զանազան անուշահոտ յուղերի միախառնրված բուլբը, որ օդում բարակ հետք էր թողնում ամեն անգամ, երբ Արիստակես եպիսկոպոսը մայր դռնից ներս էր մտնում, վիզը վեհորեն աջ ու ձախ դարձնում՝ տեսնելու, թե քանի՞ հոգի են շոքել վանքի սառը քարերին: Համարյա ամեն օր նույն տեղում գաղթական բիճային էր տեսնում, մի քիչ մշեցի տեր Հուսիկ քահանային, մոմի արկղի առաջ կանգնած:

10

Այն բառերը, որ ելնում էին պատարագիչ սրբազանի բերանից, որ հնչում էին դպիրներն ու երգասաց տիրացուները,— Հովնաթան Մարչի համար սոսկական գրաբար չէր, այլ աստվածային երթժշտութիւն, մի անտես երգահոն, որի ամեն մի ելևէջի հետ հոգին ոչ միայն բարձրանում էր մինչև վանքի գրմբեթը, այլև աղավնակերպ դուրս թռչում նեղլիկ պատուհանից և ո՞վ գիտե, ի՞նչ հրաշքով խառնվում հուլիսյան կապույտ երկնքին:

20

Խոնավութիւնից պատերի կրածեփը տեղ-տեղ ճաքել էր, թափվել: Հին յուղաներկ նախշերն ավերվել էին, ասես ժամանակը կեղտոտ լաթով սրբել էր պատերը, ցեխոտ ջուր շաղ տվել, մի տեղ սևացրել, մի տեղ էլ գույները առաջվա պայծառութեամբ թողել: Ժամանակը վաղուց էր իր վճիռը կարգացել վանքի համար, մնում էր, որ նույն ժամանակն ուղարկի դատական կատարածուին ըստ ցուցակի եղած գույքը հանձնելու այն անհատակ անդունդին, որ պատժութիւն է կոչվում:

30

Հովնաթան Մարչի աչքերը սահում էին պատերի վրայով, նայում նկարներին, նախշերին: Ահա հրեշտակապետը՝ թրով

20

ու կշեռքով... Հին առասպել մեղքի ու արքայութեան մասին: Քանի՛ դար նա արնոտ աչքերով նայել է միամիտ պառավներին, նրանց հոգում սարսափ ծնել և սնտոի շերմեռանդութիւն, որ վախճան է ստացել կեղտոտ թաշկինակի ծայրին կապած պղնձե դրամը հրեշտակապետի նկարի ներքեւ կախած գանձանակի մեջ գցելով:

Տիրամայրը... Բավական համակրելի դեմքով մի կին և այնքան ճերմակ ուսեր ու կարմիր շրթունքներ, որոնցից մայրութիւնը կաթում է, որպէս հասած նուան ջուր: Տիրամոր  
10 նկարը, որին ի տես շարվեշար կանգնած միաբանները շատ որոշ տեսել են և մարմնի այն մասերը, որ շկան նկարի վրա: Որտեղի՞ց ներս ընկավ մեղրաճանճը և տղզայով պտույտներ գործեց, մոտեցավ, նստեց տիրամոր նկարի վրա, թևերն իրար քսեց, հետո թռավ, կորավ գմբեթի տակ:

Երբ որ հիմնվի Նոր Եթովպիան, ուրիշ նորանոր քաղաքներ, այս երկիրը կդառնա ամենից շքնաղը զլոբուսի վրա, հին քաղաքների ոգին հարութիւն կառնի, փղշտացոց ցեղը նորից կդառնա հզոր ու անպարտելի:

Այսպէս մտածելուց հետո Հովնաթան Մարշը տեղը փոխեց,  
20 որովհետև պատուհանից արևի շողերի մի խուրճ տաքացնում էր այն գլուխը, որ հարբել էր լուսավորչական պատարագից ու հայրենաբաղձ մտքերից: Տեղը փոխելիս Մարշը տեսավ գաղթական երկու բիձայի հետև կանգնած Անթանոսյան Հմայակին: Նրանց հայացքներն իրար հանդիպեցին:

— Ես էլ Ձեզ պես,— ուզում էր ասել Անթանոսյանը:

— Կսքանչա՞նեմ, հավատարիմ զինակից,— այսպէս կարելի էր խմբագրել Մարշի դեմքի արտահայտութիւնը, հիմք ընդունելով նրա աչքերի փայլը, որ և՛ կրոնական էքսուսազ էր, և՛ փղշտական հայրենասիրութիւն, և՛ մեղմ քնքշանք ի տես  
30 Անթանոսյանի նիհար ու բարակ մարմնի, զգզված մազերի և այն խեղճ կեցվածքի, որպիսին ուներ Անթանոսյանը աղոթող բիձաների կողքին:

Այն առավոտ, երբ լուսաբացը Հաջի Խարաբ գլուղում տեսավ նրանց որպէս անձինք նվիրյալք, այն առավոտ արևի շողերի խտրողից զարթնելով, Հովնաթան Մարշը տրորեց աչքերը և նայեց տափարակին: Նրա հոգին թունդ առավ, կոշիկի թե-

լերը կապելուց հետո, վճռականորեն մոտեցավ կտուրի ծայրին որպես լուսնոտ մի մարդ, որ թևերը ձգելու է վեր և իջնելու կտուրից:

Շունը մոռաց: Մարչը հետ նահանջեց, և նահանջելու հետ միասին աչքին շատ պարզ երևաց Հաջի հարաբ գլուղը, հողաշեն տները, անկարգ փողոցները, բամբակի ու ցորենի արտերը և կտուրի կարասե ծխնելույզը:

Անթանոսյանն էլ զարթնեց, վեր թռավ և այնպիսի ժպիտով մոտեցավ նրան, ասես աչքն էլ շէր փակել և ամբողջ գիշեր ժպտացել էր:

10

— Դիտո՞ւմ եք: Հրաշալի՛ է,— ասաց նա:

Մարչը մոմռաց, որից երևաց այն, որ տեսարանը հրաշալի լինելով հանդերձ, նրա հաղթ մարմինը ուտել էր ուզում: Եվ երբ շոֆերը ներքևից ձայն տվավ, որ թեյը պատրաստ է, Մարչը ժպտաց:

Ոչ ոք չսեց, թե ի՞նչ խոսեցին Հովնաթան Մարչն ու Հաջի հարաբ գլուղի ուսուցիչ Հմայակը տան ստվերում, այն ժամանակ, երբ շոֆերը մեքենայի փողին էր սրբում, իսկ տան տերը հողուրագն էր սարքում:

— Ո՛ւր, վարժապետ,— հարցրեց տանտերը, երբ մի քիչ հետո Անթանոսյանը նստեց ավտոմոբիլի մեջ:

20

— Նոր երկիր,— եղավ պատասխանը: Գլուղացին ոչինչ չհասկացավ: Եթե նա լսե՛ր, թե ի՞նչ խոսքեր ասացին իր հողաշեն խրճիթի ստվերում, այնտեղ, ուր հորթերն են պառկում:

Վանքի մայր դռնից ներս մտավ պարարտամարմին մի կին, սև վուալով: Կինը խաչակնքեց այնպես արագ, ասես մատերի ծայրին բամբակ կար, պուլտայի մեջ թաթախած: Այդ արարից հետո վիզը թեքեց այնպիսի խեղճությամբ, կարծես ամենքին ասում էր.

— Ես եմ հոգով աղքատը, որի համար է կահավորած երկնի արքայությունը: Ես եմ կայծակից խանձված ծառ՝ կանաչ պարտիդում:

30

Վեղարավորներից մեկը ետ նայեց պառավ եզի դանդաղ-կոտ շարժումով: Հովնաթան Մարչը չիմացավ վեղարավորը բուրվառող սարկավագի՞ն խոնարհեց, թե՞ կնոջը ողջունեց:

31

Ձանգերը զարկեցին: Սառը քարերի վրա շոքած պառազ կանայք օրորվեցին, արտի մեջ տնկած խրտվիչակների նման, երբ թեթև քամի է հլնում:

— Դձի՛ն-բոմ-բոմ, դձի՛ն-բոմ-բոմ...

— Եվ երկիր և երկին անցցեն, բայց բանք իմ մի անցանիցեն...

Արիստակես եպիսկոպոսի ձայնը բեմի վրայից աղոթողներին ազդարարում էր գալիք կյանքի մասին, և ոչ ոք չէր զգում բորբոսնած այն ձանձրույթը, որ կար պատերի վրա, մոմավաճառ տեր Հուսիկի դեմքին. Գարրիել հրեշտակապետի աչքերում, թեկուզ այդ աչքերը սարսափ էլ ծնեցրել են միամիտ պառավների հոգում:

Հովնաթան Մարչի մտքերը հեռո՛ւ էին, շատ հեռու Ահա մանկության օրերը, ապա վանքի դպրանոցը շատ հեռու մի քաղաքում, ուր բարձր մայրիկներ կան, շնաշխարհիկ պուրակներ: Հայրը՝ բարեպաշտ լուսավորչական, անվանի Սերոբ աղան, գորգագործարանի տեր: Ու միշտ հայրը կասեր.

— Զգե՛ յավրիս, այդ քու գործը չէ:

Այդպես էր ասում հայրը որդուն, երբ վերջինս հարևան տղաներից խումբ կազմած, պարսատիկներով ու կեռ փայտերով գինված. դպրոցից գալիս նստում ու տաճիկ տղաների հետ կույի էր բռնվում: Օ՛, հերոսական մանկություն, որ կնիքդ դրիք Հովնաթան Մարչի հետագա տարիների վրա և նքան դարձրիք սրտաման ուղի:

Մի անգամ էլ թշնամին հարձակվեց և հայրական տան ապակիները փշրեց: Այդ գիշեր, ծեծի ու լացի անմոռաց գիշեր. պահվել էր սնդուկների հետև, մայրը որպես պահապան հրեշտակ պտտվում էր սենյակում, մինչև հայրը տուն գար և իմացներ: Հետո ծեծ, քաշկոտուք, թուք ու մուր և մառանը, շոր մըրգերով լեցրած մառանը, որպես աքսորաձայր:

Ապա Պոլիս, ազգային վարժարան, ճառեր, ցույցեր... Ծրագներ, մոտ, շա՛տ մոտ: Հարկավոր էլ միայն ցանկանալ, ուժեղ ցանկանալ, ոչինչ չանել, նստել սրճարանում, ծխի թանձր քուլաներ արձակել, բերանը ողողել դառնահամ սուրճով, ծամել սուրճը, մինչև նյարդերը սրվեն և ձգված նյարդերը պատկերացնեն երազը:

— Պատարագը վերջացավ,— ձայն տվեց Անթանոսյանը: Հովնաթան Մարշը ցնցվեց: Կաղլիկ լուսարարը, փայտը գետնին դեմ տալով, մեկ-մեկ հանգցնում էր մոմերը, բաց գրքերը ծալում: Տեր Հուսիկը պղնձե դրամն էր հաշվում: Եկեղեցում ուրիշ ոչ ոք չկար:

Մարշը մոտեցավ տեր Հուսիկից դեղին մոմեր գնելու, մայր արձուի մոմեր:

— Հավատացյալ հայրենակից մը ունիմ Բուենոս Այրես: Անոր բաղձանքն է, երբ վախճանը մոտիկնա, սնարի վերև մայր աթոռի մոմ վառել,— ասաց Մարշը մանրիկ արծաթներ գլորելով մոմավաճառի առաջ: 10

— Աստված թողութուն շնորհեսցե,— պատասխանեց մրշեցի քահանան ու կոացավ գետնին ընկած արծաթը վերցնելու:

Եվ հանկարծ մի միտք, որպես կայծակ, փայլատակեց Հովնաթան Մարշի գլխում: Ահա նա, արծվաքիթ, տիպար քահանան, որի միրուքի մագերի արանքում հացի փշրանք ու պանրի կտորներ կային, կատարյալ քահանա, այն երկրից, հասկանո՞ւմ եք այն մեռած երկրից, ուր կար Մշո Սուլբան սուրբ Կարապետս և մեղրագետերս և որի անունը էլեկտրական հոսանք էր նրա նյարդերի համար: Ահա նա, հայրենի երկրի սխտորահոտը կարկատած ֆարաջայի փեշերին, ճակատի կընճիկները որպես անընթեռնելի հիերոգլիֆ: 30

Տեր Հուսիկը միրուքն առավ ոսկրոտ մատների մեջ և ներքին հրճվանքից այնպես տրորեց միրուքը, ասես հիմա պիտի պոկեր, որպես սոսինձով փակցրած գրիմ: Սակայն ոչինչ չեղավ սրտառոց: Հուլիսյան այդ օրը, հենց մայր տաճարի կամարների տակ, բոլոր հրեշտակների ու առաքյալների ներկայութեամբ, մշեցի տեր Հուսիկ քահանան նշանակվեց նոր Եթովպիո ծխատեր: 30

Ինչո՞ւ, ինչու լաց եղավ Գաբրիել հրեշտակապետը, և ձեռքի կշեռքը դողաց թեթև, շա՛տ թեթև...

Մինչև ճաշ բավական ժամանակ կար:

— Հայրենի հուշարձանները տեսնելու երթանք,— ձայնեց Մարշը: Անթանոսյանը հետևեց նրան որպես և՛ թիկնապահ, և՛ զրուցընկեր: Անթանոսյանից քիչ հեռու քայլում էր տեր Հուսիկ քահանան:

Այդպիսի շքախմբով Հովնաթան Մարչը վանքի դռան դե-  
րեզմանաքարերը դիտելուց հետո, տեր Հուսիկի առաջարկու-  
թյամբ, գնաց Գայանեի վանքը:

— Օտարը պարծանք կսեպե մեր վանքի պատի տակ թաղ-  
վի, իսկ մենք շենք հարգեր նախնյաց հիշատակը, — ասաց  
Մարչը, որից հետո տեր Հուսիկն ավելացնելու ոչինչ չունենա-  
լով, ա՛խ քաշեց, հասկացնելու համար, թե Մարչն իր սրտից  
խոսեց:

10 Ամայի էր ճանապարհն էլ, վանքի շրջապատն էլ: Եվ երբ  
դռնով ներս մտավ, վանքի բակում մի շուն հաշեց նրանց վրա,  
այնպես անտարբեր, ասես շնական իր լեզվով ապում էր.

— Միևնույն է, էլ հաշելու չեմ, եթե դուք վանքն եք ուզում  
տեսնել, որովհետև այնտեղ ինձ պահ տված ոչինչ չկա:

20 Բայց այդ չէր կարևորը, և դրանից չէր, որ Մարչը ցնցվեց:  
Մեկը թրի ծայրով եթե նրա սիրտը ծակեր և դրանով էլ շքավա-  
կանանալով, սիրտը տեղահան աներ, Մարչն այդպիսի ցնցում  
չպիտի աներ: Սրբապղծութուն չէ՞ հնադարյան վանքի բակում  
շուն կապել, բուրդը գզգզված քոսոտ շուն, լեզուն շոգից կես  
արշին կախ և այդ այն ժամանակ, երբ նրա մտքի առաջ Գա-  
յանե կույան էր, մազերը թիկունքին կախված, երկար զգես-  
տով և հողե հնձանք. ուր կույսերն ուլունքներ էին պատրաս-  
տում և պահվում Տրդատ թագավորի անսանձ կրքերից:

— Ո՞ւր կիրթաք, — ձայնեց մի կին, որ շան հաշոցին տնից  
դուրս էր եկել ու, ձեռքով երեսն արևից պահելով, նայում էր  
նրանց:

— Վանքի դուռը բա՞ց է, քույրս, — հարցրեց Անթանոս-  
յանը:

— Ապա ի՞նչ, — ասաց կինը և ներս մտնելուց առաջ  
կանչեց.

30 — Հորթը շթղնեք, որ դուրս ելնի:

Սակայն երեքից և ոչ մեկը չլսեց կնոջ կանչը: Այդ ժամա-  
նակ տեր Հուսիկը Հովնաթան Մարչին ինչ-որ պատմութուն էր  
անում, ավելի ճիշտ հնարում, իսկ Հովնաթան Մարչը մերթ  
զուրխն էր օրորում, մերթ ակնոցների արանքից նայում տեր  
Հուսիկին, ասես ուզում էր ստուգել, թե որքան հաջող է նոր  
ծեղված թխատեր քահանայի ընտրությունը:

— Այստեղ թաղված է Հովհաննես Երկրորդ կաթողիկոսը, — ասաց տեր Հուսիկը: Եթե նա մի քիչ նրբազգայ լիներ, կտեսներ Հովնաթան Մարչի այլայլված դեմքը, երբ աչքը գցեց դամբարանին, և աչքն ընկավ մարմարի վրա մատիտով գրածին.

— Այստեղ ես Սիրուշին... Ինչ լազաթ էր...

Ընթերցող, դուք հասկանում եք (դուք, իհարկե, հասկանում եք), թե ի՞նչ է կատարվել վեհապետի շիրմաքարի վրա և ինչպես նրա ոսկորները շուռ են եկել մյուս կողքին, երբ որբանոցի աղջիկ Սիրուշին... Մի՞թե այդքան անհոգի են մաշտոցյան գրերը: Նոքա պատմում են փառապանծ օրերի մասին ու նույն սառնությամբ շարվել են կողք կողքի, մեկի պղծությունը ավետելու այն խաղաղ ու սրբազան անկյունում, ուր ննջել են հոգևոր հայրերը:

10

Մարչը, թուրք հաճախ էր կուլ տալիս, շրթունքները շարժում: Այդ ամենը հուզմունքի և ներքին զայրույթի նշան էր: Սակայն դիմացի՛ր Մարչ, որովհետև հեռու շես զայրույթի նոր պոռթկումից:

Վանքի արևմտյան մասում ուրիշ գերեզմաններ էլ կային, և նրանցից ամենից հասարակի քարին, որի տակ հանգչում էր 18-րդ դարու նշանավոր հայրենասերի աճյունը, այդ քարի վրա որպես ապահով վայր, կինը փռել էր իր կարկատած...

20

Մանրացած սերունդ, որի սրտում նախնի փառքը տեղ էլ չունի՝ սարդի ոստայնի պես գոնե օճորքից կախվելու: Ի՞նչ ուրազան էր, որ սրբեց, տարավ: Եղե՞լ է արդյոք այդ հինը...

Ահա այդպես էր մտածում և ինքն իրեն հարց տալիս Հովնաթան Մարչը այն ժամանակ, երբ տեր Հուսիկը երեսը մի կողմն էր դարձրել քահանայական իր անարատությունը գերծ պահելու, իսկ Անթանոսյանը ոպևորված պատմում էր այն օրերից, երբ հենց այդ վանքի պատերի տակ կամավորների վեցերորդ գունդը բանակ էր զարկել: Ոչխարները մայում էին վառվող խարույկի մոտ, եռանդով ու ավյունով լցված կամավորների թրի հարվածով վանքի թթենիներն էին կտրատում:

30

— Ես էլ էի... Հավետ անմոռաց օրեր:

Վանքի դուռը բաց արին: Աղավնիները թռան, պահվեցին գմբեթի ճեղքերում: Կիսամութի մեջ Հովնաթան Մարչը տեսավ

35

լղարիկ հորթին, որ աղաձնինների աղմուկից վախեցած կանգնել, նայում էր եկողներին:

Մարչը տեղում մեխվեց: Ոսկի ճո՞րք, կուռք... Սակայն հորթը շարժվեց դեպի դուռը և դռան մոտ բառաչեց այնպիսի ուրախությամբ, որ միայն հորթին է հատուկ:

Իզուր էր տեր Հուսիկը այս ու այն խաչքարի կամ քանդակի մասին մի բան պատմում և ամենը շաղկապում Գայանե կույսի անվան հետ:

10 — Այս քարով են անիրավները շարդել խեղճին,— ասաց տեր Հուսիկը, ցանկանալով միանգամից ցույց տալ և՛ ջերմեռանդ, և՛ գիտուն լինելը: Եվ այդ բուն ոգևորությունից այնպիսի մի քար ցույց տվեց տեր Հուսիկը, որ անհնար էր տեղից շարժել, թեկուզ անձն ժամանակ:

Վանքի բակում շունը մի անգամ էլ հաչեց: Կինը թոնթոռաց, երբ տեսավ, որ հորթը բաց դռնով դուրս է եկել և կրճում է բակի կաղամբը: Այդ ամենին անտարբեր Հովնաթան Մարչը անցավ բակի երկայնքով, նրանից պատշաճ հեռավորության վրա՝ Անթանոսյանն ու տեր Հուսիկ քահանան:

20 Երբ Մարչը թաշկինակով ճակատի քրտինքն էր սրբում և քայլում փոշոտ ճամփով, նա իր մտքերի ծովումն էր, որպես սնդեկ, անառագաստ նավ: Լավ չէր զգում իրեն, նեղվում էր հով ու տաքից: Եվ եթե փոշի էր բարձրանում նրա քայլերից, շիկացած մտքերն էլ պաղ գոլորշի էին արձակում, երբ այդ մտքերը թաղվում էին առտնին առօրյալի սառը ջրում:

30 Դուր սիրում եք մի սիրուն աղջիկ, որի մեջ թերի ոչինչ չեք տեսնում և որը ձեզ համար կատարյալ տիպ է, խտացրած գեղեցկություն, բարի սիրտ, մի խոսքով մարդկային բոլոր առաքինի բարեմասնությունների գումար: Եվ հանկարծ հայտնվում է, որ աղջկա ատամները անմաքուր են, գարշահոտ կա այն շրթունքների հետև, որոնց կարմիրը ձեզ համար և՛ վարդ էր, և՛ նուան կլեպ:

Այսպես էր և Հովնաթան Մարչը: Մերթ տաք, մերթ հով: Մերթ հերարձակ Գայանեն՝ ուլունքների շարանը պարունոցից կախ. մերթ լղար հորթ, խոնավ, ճաքճաքած պատեր, որբանոցի աղջիկ Սիրուշ...

Մոսյլ էր և Անթանոսյանը: Եվ երբ ճամփի եզրին կապույտ քարը ցույց տվեց ու ասաց թե՛

— Այստեղ թաղված է Խենթի սիրած աղջիկ Լալան, — Անթանոսյանն իր դերը պահ մի վերջացած համարեց, որովհետև մտքերը մի ուրիշ հողաբլրի շուրջ ցատկոտեցին, կապույտ քարից ոչ հեռու, որի տակ թաղված էին մայրն ու կինը, իր՝ Անթանոսյան Հմայակի, վեցերորդ կամավորական գնդի զինվոր Անթանոսյանի հարազատ մայրն ու կինը:

Խուլերի տարի էր, թեկուզ հույսի բոլոր դռները կրեկահան էին, և ուղտերի քարավանը խոստումներով բարձած վանա երկրի ճանապարհն էր բռնել: Մի բան ճմլտկաց նրա սրտում: Մոխիրների տակ մոռացված մի կայծ էլ պսպղաց: Ունեցե՞լ է կին... Ինչո՞ւ է մոռացվում դեմքը, և ինչ ծա՞նր է, երբ մարդու հիշողության առաջ մեռած մի հարազատ կանգնում է անիմաստ ժպիտն երեսին: Չգիտես հանդիմանե՞մ է, թե՞ շոյում:

10

Թեև շոգ կեսօր էր, պլպլում էր արևը, բայց Անթանոսյանը սառնություն զգաց, կուշ եկավ: Երբ հրդեհում են երիտասարդ օրերը, առատաձեռն ու սրտաբաց ցրիվ տալիս, հանկարծ, մի վայրկյան միայն, երիտասարդ օրերի տերը իրեն հարց է տալիս.

20

— Վաղն էլ, մյուս օրն էլ, և ապա առաջին ճերմակ մազը... Սակայն այդ տևում է միայն մի վայրկյան, որովհետև հաջորդ վայրկյանին երիտասարդը դառնում է նույն հրձիգը: Այդպես մտածեց Անթանոսյանը:

— Անցա՞վ ամեն ինչ... Ո՞ւր են կրակները:

Սակայն նորից սիրտը թունդ առավ... Հովնաթան Մարտի առողջ պարանոցից, լայն թիկունքից, վճռական քայլերից:

— Ահա՛ մարգարեն: Ու ծովը պիտի ճեղքի, պիտի գան փրզըրշտացիք, եթովպացիք, կեսարացիք, ուռհայկցիք, բոլորը, բոլորը, և երկիրը պիտի դառնա մրգաշատ պարտեզ, աղբյուրները պիտի ծորան մեղր ու կաթ:

30

— Ճաշի ժամանակ չե՞, հայրենակից, — դարձավ Մարշն Անթանոսյանին: Տեր Հուսիկն այնպիսի ցատկումով մտոեցավ նրան, որ ուզում էր ասել.

— Ի՛նձ հարցրու...

37

Սակայն իզուր: Հենց այդ վայրկյանին Արիստակես եպիսկոպոսի ծառան, որ հեռվից տեսել էր նրանց, մոտեցավ և Մարշին սրբազանի անունից հրավիրեց ճաշի:

Մարշը հետևեց ծառային: Տեր Հուսիկը տուն գնաց: Մնաց Անթանոսյանը՝ գլուխը կախ, որպես հարցական նշան:

Մտտակա տափարակում ցել անող տրակտորը, ասես, ոչ թե ֆրֆֆրթում էր, այլ քրքջում և թքում բենզին:

## 5

10 Սղրիդները գիշերվա կիսին այնքան միալար ու մեղմ էին ձայնում, որ եթե Հովնաթան Մարշի ծանր մտքերը չլինեին, նրանց երգը քնարեր օրոր պիտի լիներ, և նա մուշ-մուշ պիտի քներ փափուկ անկողնում: Սակայն կային այդ մտքերը, և դրա համար էլ Արիստակես եպիսկոպոսի ննջաբանի ծղրիդներն այդ գիշեր ոչ թե բուն բերին, այլ ջղայնություն:

Հովնաթան Մարշին թվում էր, թե պատի ճեղքերում անթիվ, անհամար մանրիկ ժամացույցներ են, և բոլորն էլ նույն ձայնն են հանում, որպես ծղրիդներ:

— Սղի՛-տակ, ծղի՛-տակ...

20 Դրանից էր, որ նա երբեմն մեջքին էր պառկում, երբեմն աջ ու ձախ դառնում, վերմակը մի կողմ նետում: Երանի թե միայն դրանով վերջանար, և Հովնաթան Մարշը քներ:

Այդ օրն այնքան բան անցավ նրա գլխով: Եվ ահա այդ անցածն էր նրա քունը խանգարում, նստում կրծքին, երբ Մարշը պառկում էր մեջքին: Կողքին դառնալիս մտքերն էլ շրջվում էին: Մյուս ուրիշն էր ցցվում և հարցնում.

— Ինձ մոռացե՞լ ես...

30 Եթե միայն այդ օրվա մտքերը լինեին: Ի՞նչ կապ, օրինակի համար, Բուենոս Այրեսում կատարած հանգանակության մի հաշվեկշռի հետ, երբ պակասում էր միայն երկու հարյուր դոլլար, և Մարշը տքնում էր վաղվա ժողովին արդարանալու պատճառ երկնել, ի՞նչ կապ այդ երկու հարյուր դոլլարի մոռացված պատմության և թղթադրամի այն կապի հետ, որ սրտի ներքին թրթիռով, Արիստակես սրբազանի սեղանին խմած վանքի հին

գինուց գլխի պտույտով, ճաշից հետո նա դրեց ամենից գերազ-  
նիվ և վեհ պատրիարքի պառավ ու համարյա կանացի ձեռքին:

Բարի, շատ բարի ժպտաց ծերունին, շոյեց Հովնաթան  
Մարշի փղշտական ճակատը, հարցրեց օվկիանոսի մյուս ափին  
մակաղած հոտի վարք ու բարքից, իղձերից:

Հավիտյան անշնչելի վայրկյաններ, որ այնքան կարճա-  
տև եղան, որովհետև ծերունին խոսքը՝ շծամած պատառի պես  
կիսատ թողեց ու քնեց փափուկ բազմոցի մեջ ընկղմած:

Պատկերը սրտառուչ էր: Կարճահասակ մի վարդապետ ծե-  
րունու ձեռքից կամացուկ վերցրեց թղթադրամի կապը, համ- 10  
րեց ու պահեց: Մարշի աչքերը գամված էին ծերունու պատ-  
կառելի արտաքինին և նրա մարմնի կանոնավոր մակընթաց  
ու տեղատու լինելուն, որ կուշտ ու փափուկ ապրած մարմին-  
ներին է հատուկ: Երբ նա տեսավ թղթադրամը... Պատկերն,  
այո՛, սրտառուչ էր:

Վեհի ոտքերի առաջ Վանա պառավ կատուն, թավ բրդի  
մեջ թաղված, այնպիսի նազանքով էր լիզում դունչը, ասես  
պարծենում էր, որ պալատական կատու է և ոչ թե մարտ ամսին  
կտուրների տակ սեր երգող թափառական գուսան:

Ահա քեզ հինը, պատկառելին, միակը... Հովնաթան Մարշ, 20  
ապրի՛ր, ծծի՛ր այդ պահը, բա՛ց արա ուղեղիդ ծալքերի մեջ  
այնպիսի մի էջ, ուր ոչինչ չես դրոշմել, ու տպիր այնտեղ ծերու-  
նու և Վանա պառավ կատվի կլիշեն: Դու շտեսար, ափսոս որ  
շտեսար, թե ինչքա՛ն խոշոր էին ու աղամանդի պես փայլուն  
արցունքի այն կաթիլները, որ սափրած այտերիդ վրայով գլոր-  
վեցին և ընկան ընդունարանի պայծառագույն գորգի վրա: Տա-  
ռապած փղշտացիք լալիս էին արցունքներիդ հետ, ցեղիդ հա-  
վատքի տասնաբանյա տախտակների առաջ:

Անասելի տոթ էր: Լուսինը, կարծես, մոռացել էր, որ իր  
դերը արևից խանձված երկրին սառնություն պարգևելն է: Հով- 30  
նաթան Մարշին բաց պատուհանից երևացող լուսինը թվում էր  
նույն արևը, մի քիչ համեստ ջերմությամբ: Իսկ ծղրիդները  
հա՛ կսնչում էին ժանգոտած ձայնով:

Դուրս եկան ընդունարանից: Արիստակես եպիսկոպոսը մի  
ուրիշ սենյակ մտավ, և մինչդեռ ինքը նախասենյակի նկարա-  
զարդ պատերին էր նայում, ժպիտը դեմքին, կարճահասակ

վարդապետը տնկվեց նրա առաջ և Մարչին մեկնեց ամենից վեճ ծերունու թուղթը՝ հայրական օրհնությամբ ու մաղթանքով:

Պատշգամբում կանգնել, նայում էին հրապարակին: Հանկարծ՝ փողերի ձայն, շեփոռները կանչեցին, թմբուկներն այնպես ամուր թնդացին, ասես՝ պատռելու էին հաստ կաշին:

Երևաց մի շոկատ: Զինվորները համաշափ քայլերով հետևում էին դրոշակակրին, միասին էլ փոշի հանում: Եվ փոշու մեջ այնպես էր երևում, թե հազարոտանի մի մարմին է քայլում:

10 Մարչի սիրտը թունդ առավ: Ահա հայրենի զորքը: Կայնաթիկունք երիտասարդներ, որոնք նետվում են կրակի մեջ ոչ թե ուրիշի համար շագանակ հանելու, այլ ցեղի փառքը, փղշտական ու եթովպական հին փառքը հանելու և ցցելու ամենից բարձր սարի գագաթին: Ահա սրանք են ութ հազարը, քսանը, բյուրը՝ կազմ ու պատրաստ:

— Մերոնք այս գիշեր դուրս կգան...

Զոկատ շուկատի հետևից անցան, ու գունդը կանգ առավ հրապարակում: Ուրիշ շարքեր եկան, տղաներ, աղջիկներ, կանայք դրոշակներով, անդրոշ, երգով, շարքերով: Արիստակես սրբազանն ասաց, թե ստացվել է հեռագիր, հեղափոխություն է մի երկրում, որի ժողովուրդն արժանի է զեհների: Ինչ-որ բան ասաց եպիսկոպոսը, սակայն Մարչը չլսեց և արագորեն իջավ սանդուղքով, խառնվեց հրապարակի բազմության:

20 Ինչո՞ւ մարդիկ սկսել են անհասկանալի լեզվով խոսել: Մարչը նորից հին հարցը տվեց: Մի՞թե ուրազան է անցել այս երկրով, մի՞թե խորն է անդունդը, վերադարձ չի լինելու: Զկա՞ կամուրջ, թեկուզ բարակ մի փայտ, որով ցեղը հետ դառնա հին փարախը և հայրենական խոտն ուտի:

— Ազգուրաց, ազգադավ...

30 Այսպես էր ասում Հովնաթան Մարչը այն երիտասարդի հասցեին, որ պատշգամբից, բանակի ու բազմության ցրնժանքի աղաղակների տակ խոսում էր, ասում այնպիսի բառեր, որ ուռմբերի պես էին պայթում:

— Կարմիր բանակը հայրենիք չունի, ընկերներ՝: Այսօր մենք միացած համաշխարհային... Մենք պատրաստ ենք մեր

ընկերներին... Հեղափոխությունը, ընկերներ... Բանվոր դասակարգի զինված բռունցքը... Ալիքը բարձրանում է, ընկերներ...

Երիտասարդ ընկեր, ինչո՞ւ գրպանիդ նազանից մի անգամ շարժվեցիր և չսպանեցիր Հովնաթան Մարչին, որի սիրտը, գիտե՞ս, նախ կուշ եկավ քո բառերից և ապա, ուստի՞նչ գնդակի պես լայնացավ ներքին զայրույթից: Եվ եթե Անթանոսյանը բազմություն մեջ տեսած շիններ Հովնաթան Մարչի արդուկած զգեստը...

Օրը իր վերջում պահել էր Հովնաթան Մարչի համար հրճվանքի մի շտեմնված թռիչք և ապա անկում: Մի ջոկատի կողքով անցնելիս Մարչը հանկարծ տեսավ ծանոթ մի գլուխ, ապա խած աչքեր ու թևերը լայն բաց արած իբրև արծիվ սլացավ դեպի զինվորականը:

— Մենորո՞պ, Մե՛սի...

Քեռորդին էր, Մեսրոպը, մանկության ընկերը: Թևերը լայն բաց արած արծիվը շսլացավ մի սոսկական ջոկատապետի գրկելու, այլ մի ամբողջ անցյալ, մանկություն, Սերոբ աղան և այլն: Տաքությունը հաջորդեց քրտինքը: Մեսրոպը ձեռքը մեկնեց նրան, ճանաչեց, մի քանի հարց տվավ, սակայն ուշքը հոստորի ճառին էր: Եվ հենց Մարչի քթի տակ այնպես լիաթոք «ո՛ռոռա՛» կանչեց, որ Մարչը մի քիչ հետ քաշվեց: Ահա այստեղ, Հովնաթան Մարչը իր քեռորդու աչքերում տեսավ մի այլ բոց, որ հրդեհվում էր որպես հուլիսյան արև, և ոչի՛նչ փղըշտական այդ բոցի մեջ:

Անգո՛ւթ, անխիղճ Մեսրոպ: Դու ջարդեցիր այն անոթը, որի մեջ Հովնաթան Մարչը իր ջերմ զգացումներն էր զեղում: Նա թուով դեպի քեզ, որպես մանկության նետ, դու հետ կանգնեցիր, և նետը խրվեց վանքի մամուռ պատին:

Երբ ժամացույցը երկու անգամ խփեց, ծղրիղները մի պահ տապ արին, հետո մեկը համարձակ եղավ, ձայն տվավ, մյուսներն էլ միացան:

— Սվի՛-տակ, ծղի՛-տակ:

Մի մոկ պահարանում ուշացած ընթրիքն էր անում, երբեմն լռում, երբ Հովնաթան Մարչը ծանր մտքերից անջուր, անկողնում աչ ու ձախ էր դառնում և դառնալիս ճռնշացնում մահճակալի երկաթյա զսպանակները:

10

30

30

Գիշերվա ժամը երկուսին, երբ մանկության հուշերն էլ մի կողմից էին կանչում որպես ծղրիղներ, իր քեռորդի Մեսրոպի արածը վերհիշելուց հետո, Հովնաթան Մարչին ոչինչ չէր մնում անելու, շորերը հագնելուց և բաց պատուհանի առաջ նստելուց բացի:

Բակում խաղաղություն կար և այդ խաղաղությունը կատարյալ կլիներ, եթե հարևան սենյակում քնած Արիստակես սրբազանի կոկորդից չելնեին այնպիսի ձայներ, որպիսին հանում է եզը, երբ մսագործի դանակը խրվում է վզի փափուկ

**10** մսի մեջ:

Այդ ձայնը մի պահ ցրեց նրա մտքերը, սակայն մի պահ միայն: Ինչպե՞ս էր ուզում քնել, ոչինչ չզգալ, երազ էլ չտեսնել՝ որ ուղեղը հանգստանար և ուղեղի հետ էլ ծանրացած կոպերը:

Մի այլ երկրում մարդիկ հիմա աշխատում են, օրը ցերեկ է: Գուցե փղշտացիք ժողովի են, կարողում են իր ուղարկած նամակները, հանձնաժողովները գործի են անցել, փորում են առուներ, որոնցով աշխարհի մեջ ցրված բոլոր փղշտացիք կայք ու գույքով պիտի հոսեն և շունչ առնեն նոր Եթովպիայում:

Ա՛յս երկրում... Եվ դարձյալ պաղություն, ուղեղի ցավ, զինվորի պողպատյա սվինը: Մեսրոպը կանչում է «ուռու՛ճ»: Մարչը աչքերը փակեց: Թ՛վաց, թե սվինը հենց իր աչքին է ուղղած:

**20**

Մեկը շատ հեռվից աշխարհով մի կայծեր է ցանել, կայծերն ընկել են դեզերի վրա, խուրձերի մեջ, կայծերը ցուր են տալիս վառողի պահեստների առաջ, ուռուքիի բուրգերի մոտ: Մի տեղ արդեն հրդեհ կա, մի այլ երկիր պայթում է ինչպես վառողի պահեստը, կայծն ընկնում է ներս: Կայծերը վառվում են, և այս երկրում, ուրիշ փայլ են ստանում մարդիկ, ժամանակն այլ կերպարանք է տալիս ժողովրդին, այլ շահեր են, ալիք-

**30** ներն ուրիշ ափեր են ծեծում:

Բաց պատուհանից Հովնաթան Մարչը տեսավ վանքը, գմբեթները: Երեկոյան Արիստակես եպիսկոպոսի հետ գնացին Թանգարան, տեսան ձեռագրերը և ուրիշ շատ հնություններ:

— Լեոն Վեցերորդ՝ Թագավոր Կիլիկիո... Ահա նրա թուրը: Էլ ի՞նչպես արագ չբարախեր Մարչի սիրտը, արքայական

արծաթապատ թրին ի տես... Արծաթը շողշողում էր: Ձեռքը դողաց, երբ մեկնեց թրի կոթին:

— Մեսրո՛ւյ, Մեսի... Եթե տեսնեիր... Ի՞նչ է քո պողպատայ սվինը կտոն Վեցերորդի հսկա թրի մոտ:

Ահա բեզ ազգային արժեք, դարերից մնացած մասունք, որ հնություն չէ, ընթերցող, թանգարանի մի անկյունում ընկած իր, այլ կենդանի ույժ: Թուրը խոսում է, թուրը պատմում է վերջին թագավորի բաջագործություններից, թուրը ոգևորում է: Էլ ինչո՞ւ զարմանալ, որ Հովնաթան Մարչը կոացավ ու համբուրեց թրի արծաթյա կոթը:

10

Եղե՞լ է հնում Գարեգին անունով հայոց սպարապետ: Չի՞ հղել, — ասում են պատմաբանները: Մակայն սխալ են նրանք, որովհետև այդ երեկո Արիստակես սրբազանը մի առանձին ակնածությունամբ մոտեցավ գունավոր ծոպերով դրոշին, մեկնեց այն Հովնաթան Մարչին և հայտարարեց.

— Հայոց վերջին սպարապետ Գարեգին դրոշը:

Եվ երբ ընդունեց Մարչը վերջին սպարապետի դրոշը և, այն է, պատրաստվում էր մտքերին սպարապետական ընթացք տալու, Արիստակես սրբազանն այնպես կանչեց ու կոացավ, որ եթե լսեիք, պիտի հիշեիք այն կենդանուն, որի վրա մանուկ Հիսուսը, ձիթենու ճյուղը ձեռքին, մտավ Երուսաղեմ՝ գիտական դիսպուտի:

20

Այն ժամանակ, երբ սրբազանը պատմում էր սպարապետի մասին, կարիճը բարձրանում է և խայթում սրբազանին: Մարչն իր շորս կողմը նայեց, բնազդամբ ոտքերի տեղը փոխեց: Չի՞նի՞ թե...

Մղրիդները կանչում էին: Լուսաբացը հեռու չէր:

Քիչ հետո Մարչը բակում քայլում էր: Լուսադեմի հովը շոյում էր նրա կործբը, ասես՝ բարակ ցնցուղից ջուր էին մաղում մարմնի վրա և ջրի հետ էլ անուշ նիրհ: Բակում խաղաղություն կար: Մարչը լսում էր իր ոտնաձայնը և հետ ու առաջ քայլում, մտքերն էլ քայլերի հետ մեկ-մեկ հետ էին դառնում, մինչև Բուենոս Այրես, մեկ առաջ՝ դեպի Նոր Եթովպիա:

30

Այդ անունը նրա համար նյարդային մարմաջ էր: Այն տափարակը, որ փովել էր ուշաթափ ընկած մարդու պես, նրան էր

43

սպասում: Զուր է ցանկելու ուշաթափի վրա, և հարություն է առնելու սպիտակաշեն նոր Եթովպիան, մի աշխարհ, ուր չի լինելու ոչինչ խորթ ու անհարազատ, ոչինչ օտար:

Այս և սրա նման մտքերով տարված, Հովնաթան Մարչը որպես լուսնոտ կամ ուրվական, կես գիշերին քայլում էր վանքի պատերի տակ և շնկատեց, թե ինչպես մոտեցավ վանքի մուտքին:

Օ՛, սուսկում... Մարմարի վրա մի սև գունդ կուշ էր եկել: Ենոած էր, թե՛ քնած: Սպանություն և այն էլ տաճարի մուտքի մոտ: Մարչը մի քանի քայլ հետ արեց, ուզեց տուն դառնալ: Սառը քրտինքը կաթիլներ շարեց նրա ճակատին: Մեկ էլ սիրտ արեց, մոտեցավ, ձեռքը կամացուկ մոտեցրեց սև կիտուկին: Տեսավ կուշ եկած ոտքերը, լսեց շնառությունը: Հանկարծ սև կիտուկը ձգվեց, մի գլուխ տնկվեց ու գլուխը խոսեց.

— Ես եմ, հայրենակից...

Մարչը ճանաչեց իր զինակից Անթանոսյանին:

...Հյուրանոց վերադառնալուց առաջ, մյուս առավոտ, Հովնաթան Մարչը Հաջի Խարաբ գյուղն ուղարկեց Անթանոսյանին և պատվիրեց պատրաստ լինել ամեն վայրկյան, գրությունն ստանալուց անմիջապես ներկայանալու՝ նոր Եթովպիո աշխատանքներն սկսելու համար: Բաժանվելիս Հովնաթան Մարչը նրան ինչ-որ խոստումներ արավ, կրկնեց այն, ինչ ասել էր Հաջի Խարաբ գյուղի տան ստվերում:

Բարեկամներից բաժանվելուց հետո Հովնաթան Մարչը սիրով ընդունեց հյուրընկալ սրբազանի առաջարկը՝ տեսնելու ավերակների մի ուրիշ վայր, ուր թաղված է եղել իրեն՝ Լուսավորչի գանգը, ուր Տրդատ թագավորը դատ ու դատաստան է արել հին կրակատները, վերջապես ուրարտական Ռուզաս թագավորի քարե գրությունը:

Երբ կառքը կանգ առավ այն մուտքի առաջ, որով ջուրմերն էին ներս ու դուրս արել և հերթապահ կանգնել կրակն անշեջ պահելու, — պատերի վրա տաքացող մի քանի խլեզներ բավական դանդաղաշարժ ու ծանրաքարո սողացին ու պահվեցին պատի ճեղքում, հայտարարելով եկվորներին, որ իրենք հող

ուտող խլիզներ շեն, այլ ունեցել են հեթանոս կրակատան մո-  
խիրը լիզող պապեր:

Ներս մտնելուց հետո, երբ սրբազանը աչքը տնկեց պահա-  
կի բոստանի սեխերին, որոնք կախ էին ընկել կրաշաղախի  
կտորների վրա, Հովնաթան Մարչը կանգնեց, աչքերը փոքրաց-  
րեց: Տեսարանն այնքան բարդ էր և տպավորիչ, որ անհրաժեշտ  
էր մի ակնթարթ աչքերը փոքրացնել, քիչ բան տեսնելու համար:

Մի ժամ հետո Արիստակես սրբազանը խոհեմություն հա-  
մարեց նստել ստվերում՝ սրտի տկարությունը պատճառ բըռ-  
նելով, և զրուցել պահապանի փոքրիկ տղայի հետ, որ հենց 10  
մուտքի կողքին ցեխից տնակ էր շինում՝ իր ոճով, իր ճաշակով:

Իսկ Մարչը մերթ այս քարին էր մոտենում, զննում, մի  
քանի քայլ հետ կանգնում, բացականչում բառեր, որով իր  
հիացմունքն էր հայտնում, ոգևորությունն ու զարմանքը:

Մի ժամ էլ սպասելուց հետո, երբ կառապանն անհամբերու-  
թյունից սկսեց բարձրաձայն տրտնջալ, Արիստակես սրբազա-  
նը անհրաժեշտ համարեց տեղից վեր կենալ և ավերակների մեջ  
փնտրել Հովնաթան Մարչին:

Մարչը կանգնել էր սեպագրերով պատած քարի մոտ, աչ-  
քերը տնկել էր քարի գրերին: Ինչքա՛ն անքննելի և խոր խոր- 20  
հուրդներ ունի պատմությունը իր խորքերում պահած: Քսան-  
յոթ դար առաջ ուրարտական Ռուզաս թագավորը կապույտ քարի  
վրա փորագրել է տվել իր կամքը և ասել գալիք սերունդներին  
հետևյալը.

— Ես եկա, Կոյիտի երկրին տիրեցի, քաղաք շինեցի, այ-  
գի տնկեցի, ջրանցքներ անցկացրի և իմ առավածներին զոհ  
մատուցի:

Իրավունք շունե՞ր քսանյոթ դար հետո փղշտացի Հովնա-  
թան Մարչը նույնն ասելու, երբ Նոր Եթովպիան կառուցվեր...

Մի՞թե երկիր չէ Նոր Եթովպիան:

Եվ Արիստակես սրբազանն իզուր խանգարեց նրան: Հայտ-  
նի չէ՞ր, որ սեպագիր քարի մոտ Հովնաթան Մարչը, մի մեռած  
լեզվով, խոսում է ուրարտական Ռուզաս թագավորի ոգու հետ,  
հարցումներ է անում:

Հեթանոս խլիզներն ավելի խոհեմ եղան, քան քրիստոնյա  
կախկոպոսը:

Օրեր անդան, հուշիս իր հերթը զիջեց օգոստոսին, սակայն շուք մնաց անազիւ պես սաստիկ:

Շուք չէր, որ պիտի նեղեր Հովնաթան Մարչին և հետ կասեցներ նրան ծրագրած գործից: Այն սիրտը, որ մտազունը չէր, այլ հայրենիքի սիրով այրվող մտաւ, որ ու գիշեր բարբախտ էր և փշտական արշուն մղում երակներով: Արշան կաթիլներն ուղեղին սնունդ էին տալիս՝ նորանոր ծրագրերն էր հզանալու:

10 Մարչը ստորվում էր անտաններում բնող բոլոր վայրի տանն ու խնամք պատվաստելու կալիֆորնիայից բերած ընտիր տեսակներով և թղթի վրա շարում էր գրոներ, որոնք երկիրը պիտի գործեն խնամքնու ու տանձնու մի անծայր պարտեզ:

Եվ որք նրա անազարկի վրա ծիծաղում էին կամ մեկը, մի ճատարակ պաշտոնեյա, որի երակներում արշան տեղ հոսում է ազնւեման պատր ջուր, կրք այդ մեկն անհնալն անապրիտայանը նշանում էր, որ չից են և անմաստ այն անէնք, ինչ Մարչի ուղեղն է հղանում. — Մարչը այնտեղ մոռնում էր նախնի սպանելու արշունը և խոտորում, որ դիմացից սարսփանալու պատ լինար, նրան պաշտոնեյա չիներ:

20 — Գարնանում սա մարդկանց ուղեղին վրա: Օրերն մը ուներ, որ ճամաչ չկա և չի արանար նրորն ճամն ու հարք:

Այնպէս իր ասում Հովնաթան Մարչը բնող Երանսին (նրան էր զրաման պաշտոնեյա արտար, այն ժամանակ, կրք զրաման էր իր բարձր լին խորքը մաշիլուն աննա ասած մարդ զրաման էր): Բնող Երանսը աստը Էրզնէտ ճամաչ արշունը զրամանը չի գրում, որ լինար ոչ միայն ճամանէր է, այլ արշունը արշուն է լինարար արտող է այդ անհերն ճամն Հովնաթան Մարչը պարք արտող զրամանը: Երանսը աստը ճամաչ արշունը զրամանը այն ճաման, ինչ:

30 — Հովնաթանը Արտողանի քարտանքը իր աստի... Էրանսը արշունը զրամանը:

Երանսը արշունը զրամանը արտող զրամանը, Հովնաթան Մարչը ճամաչ արտող և անապրիտայան արտող էր արտող զրամանը զրամանը արտող անհերն, այն արտող զրամանը:

40

Հովնաթան Մարշից լսած լուր: Եվ դարձյալ վստահելով որպես ընկերական...

Անտառների պատվաստման առաջարկին մերժում ստանալուց հետո, կարծում եք նրա սիրտը հանդարտ էր մնում: Ահա քեզ մի ուրիշ հեռանկար, եկամուտի մի այլ անսպառ աղբյուր: Արմենիո բարակ աղիքները՝ ոչխարի, այծի աղիքները, որոնցով կարելի է ոսկիներ դիզել և անբավ գանձեր, եթե միայն հարկ եղած ուշքը դարձվի: Իսկ աղիքները փտում են, շները լափում են ոսկին, և երկիրը մնում է սակավարյուն ու գունատ:

Հապա որդան կարմիրը... Հիմա էլ մի հիմնարկի պահարանում, ուր խառնիխուռն թափված են թղթի, ծրարների, գոծեր, թանաքի դատարկ շշեր, արաքական շորացած խեծ, հիմա էլ եթե քրքրեք այդ պահարանը, փոշոտված գործերի մեջ կգտնեք կապույտ շապիկով մի գործ, վրան գրած Փրզլըտացոց և Երովպացոց: Քրքրե՛ք այդ թղթերը և դուք կտեսնեք Հովնաթան Մարշի: ձևորով դրած մի երկար առաջարկ, վաղուց անհետացած որդան կարմիրը վերականգնելու: Որպիսի խո՛ր մտքեր կան, հայրենաշունչ ինչ բառեր, որոնց վրա, ավա՛ղ, փոշին նուրնպիսի սառն անտարբերությամբ է նստել, ինչպես և ընդունվեց նրա առաջարկը: Գտնել հին թիթեռների ձվերը, որոնց մասին այնքան գովեստով խոսում է այսինչ մատենագիրը, այդ ձվերը գտնել և բազմացնել կարմիր թրթուրներ, որոնց մարմինը տալիս էր արնագույն ներկ:

Սակայն փղշտական մոտորը բարախում էր ո՛չ միայն որդան կարմիրի, անտառի պատվաստման և աղիքների համար: Հիմնականը. որի շուրջը դառնում էր նրա ուղեղը, ինքը և իրեն հետ էլ Անթանոսյանը, նոր Եթովպիան էր:

Այդ օրը, երբ Անթանոսյանը բարձրացավ սանդուղքով, մի քիչ հետո հյուրանոցի սպասավորը տեսավ, թե ինչպես Մարշը գնդակի արագությամբ իջավ սանդուղքով, միջանցքից թռավ, գուրս եկավ, ճանապարհը կորցրած ծիծեռնակի պես:

— Ի՞նչ պատահեց:

Անշո՛ւշտ, սպասավորի պարտքն էր բարձրանալ վերև, տեղում ստուգել եղածը, սակայն նա թերացավ իր պարտքը կատարելու և մեկնվեց հերթապահի բազմոցի վրա այնպիսի դիրքով, որ կարծես հայտնում էր.

10

20

30

— Միևնույն է, վեր շեմ կենալու:

Այն ժամանակ, երբ Անթանոսյանը սենյակում նստած ճակատն էր շոյում և քրտինքի փոշոտ կաթիլները ճակատից սրբում, հենց այդ ժամանակ Հովնաթան Մարչը կանգնել էր այն դռան առաջ, որի վրա գրված էր առանց զեկուցման... Անհամբերութունից նա քայլում էր նախասենյակում, մեկ էլ հանկարծ կանգնում, ունքերը կիտում և ձեռքը, սպիտակ, փափլիկ ձեռքը մեկնում այնպես, կարծես անտես մի մարդու վշտով ու զայրացած հարցնում էր.

10 — Ի՞նչ արիք...

Երբ Հովնաթան Մարչը նստել էր աթոռին և հարցնում էր պետին նոր Եթովպիո հողերի մասին, հենց այդ նույն ժամանակ հյուրանոցում Անթանոսյանը կատարում էր սկսնակ դերասանի այն վարժությունները, որպիսիք արդեն սերտել էր Հովնաթան Մարչը նախասենյակում:

— Դավաճանություն... Չար նախանձ, որ կրծում է որդի պես... ՄԵ՛ղ խոստանա՛լ և հետո՞...

Այդ հետոն հենց այն էր, որի համար էլ Անթանոսյանը այդ օրը եկել էր, արևի տակ փոշի կուլ տալով: Հաջի Խարաբ գյուղում ծանոթ մի գյուղացի ծիծաղելով հայտնել էր.

20 — Է՛, վարժապետ, հողերդ հրեն շափում են, ջո՛ւր են բերում, ջո՛ւր...

Եվ ի՞նչ տեսավ Անթանոսյանը հենց այն հարթության վրա, ուր պիտի լիներ նոր Եթովպիան: Այստեղ, այնտեղ ձողեր, սեպեր, երկաթյա շղթաներ, մարդիկ, որոնք աշխատում էին, գրում, շափում: Ինչո՞ւ արևը շգարկեց նրանց և դետինը ճեղք շարեց կլանելու այն մարդկանց, որոնք սատնարյուն, առանց ոգևորության կտրատում էին դաշտը, ձևում, ինչպես զինվորական մասերից կապալով պատվեր վերցրած դերձակ:

30 Անթանոսյանը դիմեց նրանցից մեկին, որ քարտեզի վրա ինչ-որ դիժ էր քաշում և հաշիվներ անում:

— Իսկ ո՞ւր մնաց նոր Եթովպիան:

— Մենք դեռ հաշվում ենք, ձևում: Կուզենան, թող շինեն,— ասաց մարդը:

— Պղծվե՛ց, պղծվեց փրկության կղզին...

Իհարկե, Անթանոսյանը խոհեմություն ունեցավ այդ բաները մտքում ասելու և շրթունքները կրծոտելով հետ դարձավ Հաջի Խարաբ և այնտեղից էլ հյուրանոց: Սպասավորի տեսածը կատարվեց նրա գալուց տասը րոպե հետո:

— Այդ հողերը կան ոռոգման մեր ծրագրի մեջ: Հարուստ են, բարեբեր և մեծ ծախս չի պահանջվում:

Այսպես պետն էր խոսում:

— Կխնդրեմ հրամայեք նոր Եթովպիո տեղը պարապ ձգեն: Ես հեռագիր քաշած եմ, այսօր վաղը պատասխանի կսպասեմ: Բայիքյանեն լուր ունիմ, որ կտր գումար մը որոշած է հատկացնել նոր Եթովպիո շինության... Դրամը կտրվի ամենանվազ տոկոսով, գրեթե անվերադարձ: Ես արդեն գրած եմ ուր հարկ է, շուտով հանգանակություն սկսելու: Լուր ունիմ, որ Արգենտինի մեր հայրենակիցները սիրահոծար են այդ ձեռնարկության և կփափագեն օր առաջ հայրենյաց հողի վրա տեղա...

— Գիտեմ, գիտեմ,— ասաց պետը: Էլ ուրիշ ի՞նչ պատասխան կարելի էր տալ:

— Նոր Եթովպիան պիտի ունենա շորս թաղամաս, համեստ եկեղեցի մը, մանչերու և օրիորդաց վարժարան: Բարեկամս ինձի կգրե, որ եթե այս գործը գլուխ բերվի, ինքը հանձն կառնե նոր քաղաքի շինության համար պետք եղած գամերը ձրիաբար տրամադրելու: Երևելի հայրենասեր է բարեկամս, և չեմ կասկածիր, որ...

— Լա՛վ: Ե՞րբ եք մտադիր սկսելու քաղաքի շինությունը:

— Ահապարելու հարկ չկա, կարծեմ: Նամակներ ղրկած եմ թե՛ Բարեսիրաց մարմնին և թե՛ ազգային այլևայլ հիմնարկներու: Ամեն տեղ ալ խանդավառությունը մեծ է և, ես կկարծեմ, որ նյութական խոշոր օժանդակություն մը պիտի ըլլա, եթե... Եվ ատկե զատ (ներեցեք, որ կխելմ Ձեր այնքան թանկագին ժամերը), որոշած ենք ցուցակագրություն սկսիլ: Ամենեն կարևորն այդ է, թե քանի՛ փղշտացի կա երկրեն դուրս և ներս, որովհետև Բայիքյանի բարեհաճ ցանկությունն է քաղաքի մեջ տեղավորել փղշտացոց և...

— Իսկ...

— Այդպես պաղ մի՛ նայեք գործին: Ես մարդիկ ղրկած եմ զանազան կողմեր իմանալու, թե ո՛ւր կմնան փղշտացոց և

Եթովպացոց բեկորները: Եթե դուք անգամ մը տեսած ըլլալիք, թե ի՞նչ պատվական երկիր էր փղշտացոց աշխարհը, Եթովպիա քաղաքը: Մտտե՛նու Ուռհայիցին կվկայե, որ ութերորդ դարին Եթովպիան ունէր...

— Գիտե՞ք ինչ: Այդ ամենը բարի... Մենք մեր խոստումից հետ չենք կենա: Կառուցեք այդ քաղաքը կամ գյուղը և ինչքան շուտ, այնքան լավ:

Պետը ձեռքը գրչին այնպիսի վճռականութեամբ մոտեցրեց, որ Մարչը մտքում ասաց.

10 — Ալ լմնցավ, ելի՛ր ու նորեն խնդրե՛:

— Ուրեմն խոսք կուտաք, որ հողը մեզի պիտի հատկացնեք և այն ժամանակ...

— Այո՛, ձերն է, կսպասենք...

Էլ ուրիշ ի՞նչ էր մնում Մարչին, եթե ոչ ճեպընթացի նման փողոցում ոչ ոքի և ոչինչ չնկատելով հասնել հյուրանոց և հասնելուց անմիջապէս գրկախառնվել հավատարիմ Անթանոսյանի հետ, որը նրա բացակայութեան ժամանակ Արմենիո պատմական անցյալը վերաքննելով, տասնմեկերորդ դարի շեմքին էր, երբ Մարչը բացականչեց.

20 — Փրկվա՛ծ է նոր Եթովպիան...

Այդ օրը Անթանոսյանն ու Մարչը միասին նախաճաշեցին: Ծիշտ է, բժիշկ Երանոսը մոտեցավ նրանց, բայց Անթանոսյանին կասկածանքով դիտելուց հետո հեռացավ այն արտահայտութեամբ, որ ունենում է մարդ, երբ փողոցի թալրին երեացող մեկին իր մտերիմին նմանեցնելով, արագաքայլ վազում է, մոտենում և...

— Ներեցե՛ք, դուք այնքան նման էի՛ք...

Խոսակցութիւնը փղշտացոց մասին էր: Մարչը հանձնարարեց Անթանոսյանին փղշտացիներ և Եթովպացիներ գտնել և հայտնել, որ քաղաքը հիմնվում է ամենաձեռնտու պայմաններով:

30 — Հայրենակիցները դրամ կուտան... Ամուսնացողներուն՝ մրցանակ: Տասը զավակ ունեցող մայրերուն՝ ցմահ կենսաթոշակ: Փոխասաց մանուկներուն՝ ձրի ուտում... Յուցակն աճապարանոք ինծի դրկե, հայտնեմ ուր որ անկ է... Չմոռնամ

ըսելու, որ ծթովսիտ բնակիչներու կրծքին վրա նշան մը պետք է կախել, վրան Քալիբջան Անդրեասի անունը գրված:

Անթանոսյանն ուտում էր: Անթանոսյանը ժպտում էր, և նրա հոգին թուր կտրած և պարտեզն ընկած հորթուկի պես մեկ վեր էր թռչում, մեկ ցատկոտում խոտերի վրա և ուրախությունից բառաչում:

— Տեր Հուսիկին ալ ես կհայտնեմ, որ պատրաստ մնա:

Այդ օրը եթե մեկը քաղաքից հեռացաւ թևեր առած, եթե մեկը մինչև կայարան հասնելը աչքերը երկնքից ցած խոնարհեց և գնացրում օրորվելիս տոմսակի փոխարեն կոնդուկտորին Հովնաթան Մարչի այցետոմսը մեկնեց, — այդ մեկը Անթանոսյան Հմայակն էր, ապագա մեծ քաղաքի հիմնադիրներից, որ նոր քաղաքին էր նվիրել սիրտն ու հոգին:

10

Հյուրանոց գալով Հովնաթան Մարչը սեղանի վրա մի քանի նամակներ գտավ և մի հրավիրատոմս՝ մասնակցելու Գրասիրաց ընկերության հավաքույթին, նվիրված քանքարավոր քնարերգակ Տաղավարյանի՝ ծննդյան հարյուրամյա տարիիցին: Մարչն ազահուստով բաց արեց կապույտ ծրարը:

— «...Կգրեք, որ հաջողակ եք: Հոս Ձեր անունին շուրջը կղանա ամեն ինչ... Սիրտս որքան ուրախ է, եթե գիտնալի՞ք...: Կհիշեմ օրը, երբ մեկնեցաք և կմխիթարեմ զիս այն մեծ գործով, որուն ղեկավարն եք: Նորություններ չկան... Անցյալ օրը Ձեր բնակարանը գացիք: Ամեն ինչ առաջվա պես է: Կուղարկեմ անթիվ ողջույններ...: Բախտավոր սեպեցեք Ձեզ, որ հայրենի հողի վրա կկոխեք: Հանգանակությունն արդեն սկսած ենք: Գումար մը կա: Գրեցեք՝ մեր հայրենակիցները պետք ունին հագուստներու, կոշիկներու... Բավական հավաքած ենք...»:

20

Մարչը մի անգամ էլ նայեց նամակի այն տողերին, ուր ասված էր «Սիրտս որքան ուրախ է... Կհիշեմ օրը...»: Մարինե Քրաջյան, ոսկեգանգուր խոպուպիկներ և շրթունքներ, որոնց նմանը չկան օվկիանոսի երկու ափին էլ: Բնակարանը... Եվ այլն, և այլն: Դեպքեր, որոնց վերհիշելիս Հովնաթան Մարչը իրավունք ուներ մահճակալի վրա պառկելու և աչքը անթաթ հառելու նամակին: Սպիտակ, փոքրիկ ձեռք... Գրում է... Գուցե հենց այստեղ ժպտաց: Բայց ինչո՞ւ չի ասում այդ մասին կա-

30

պույտ ծրարք, որ կտրել է նույն ճանապարհը և հասել Փոքր Ասիայի հեռավոր խորքը:

Երկրորդ նամակն ավելի թե տվա՛վ Մարշին: Գրողը ընկերն էր, Բարունակ Ճիթեշյանը, Եթովպական մամուլ թերթի խմբագիրը: Ինչքան են միասին ճակատամարտել և ի՞նչ օրեր են ապրել: Նամակից ավելի լավ ազդեց նրա վրա իր նկարը և թերթում տպած հոդվածը, որ Բարունակն ուղարկել էր նամակի հետ:

Ահա նա, Հովնաթան Մարշը... Լայն ճակատ, մազերը խընամքով սանրած գլուխ և աչքեր, որոնց մեջ եթե կայծակներ չէին փայլատակում, համենայն դեպս հանգած մոխիր էլ չկար: Իհարկե կլիշեն ավերել էր դեմքի այն արտահայտությունը, որ ուներ Հովնաթան Մարշը և որի մասին դժվար է գրել: Միևնույն է, շես տա միամիտ այն վիշտը կամ վշտոտ միամտությունը, աչքերի կապույտի մեջ քարացած այն արտահայտությունը, որպիսին կա ուղտի աչքերում, երբ բեզարած նստում է և տատակ որոճում:

Ի՞նչ էր ասում Եթովպական մամուլը Հովնաթան Մարշի մասին... «Մնած է Եթովպիա քաղաքի մեջ: Առաջին կանչի հետ անհայրենիքի փրկության մասին է աղաղակած... Եվ ահա վերջին հերոսությունը: Ծամփա ելնել հեռո՛ւ, բայց հարազատ աշխարհ մը, ուր կարիքի մեջ կտառապին... Հսկա ծրագիր մը, որուն ի գլուխ բերելուն անտարակույս ենք, քանի գործին ղեկավարն է ազգանվերն Հովնաթան Մարշ, որուն խիզախ ճանապարհորդությունը, վտանգներով և անակնկալներով լեցուն, մոռնալ կուտա մինչև հիմա եղած նման դեպքերը»:

Հասկանե՞մ ես, Հովնաթան Մարշ...

— Քո անունը պիտի հիշվի դարեդար:

Այս ամենը կարդալուց հետո հանցա՞նք է միթե մազերը շոյել, կանգնել պատուհանի առաջ, մերթ հայելու մեջ սեփական դեմքը դիտել, զանազան դիրք ընդունել և ապա հայելին դեն նետելով աչքերը հառել հեռվի մշուշում երևացող Արարատին և հղանալ այնպիսի մտքեր, որոնցից սիրտը բարբախում է սովորականից արագ:

Եթե մեկը դուռն ճեղքից նայեր, կտեսներ, թե ինչպես Հովնաթան Մարշը ճեմում էր սենյակում, մերթ կանգնում, հոնքերն իրար տալիս և ինքն իր հետ խոսում կամ հանկարծ հետ դառ-

նում և աչքը լվացարանին դարձնելով, շրթունքները շարժում: Ծթե այդ բառերը դուրս թռնեին... Կցնդեր աշխարհը, աշխարհի հետ էլ անթիվ, անհամար բազմություն: Լավ էր, որ դուռը փակ էր:

Սպասավորը զարմացավ, երբ մի քիչ հետո, Հովնաթան Մարչի մաքուր սրբած կոշիկները ձեռքին, ներս մտավ:

— Կնիկը մեռել է, — մտածեց սպասավորը, երբ դուռը դրեց:

Բայց այդպես մտածելը միայն սպասավորի տկարամիտ լինելն էր ցույց տալիս: Ինչո՞ւ պիտի լաց լիներ Հովնաթան Մարչը, ինչո՞ւ նրա խնամքով սանրած մազերը պիտի ցրվեին, խառնվեին իրար, ինչո՞ւ նա գլուխը պիտի առներ ձեռքերի մեջ և շրթունքները կրծոտեր, երբ քիչ առաջ ամբոխներին շանթանման բառեր էր շարտում և Արարատին ի տես շոյում մազերը:

Երբորդ նամակը, կարճ ու շոր, երբորդ նամակը, որի տակ ստորագրել էր Անդրեաս Բալիքյանի գոհարազարդ ձեռքը, — այնպիսի արհամարհանքով էր նայում Հովնաթան Մարչին, ասես ուզում էր ասել.

— Ես թուղթ չեմ, այլ իմ տիրոջ հրամայող ձայնը...

«...Հատակագծեն կերևա, թե Ծթովպիտ տեղը խորդ ու բորդ է: Հովնոտ տեղ է կրսեն այդ երկիրն ճանչցողները: Հող կրտառապին բազմատեսակ հիվանդությամբ և մանավանդ որ գազաններ կան մոտները: Հարմար տեղ մը չկրցա՞ք ընտրել: Հայրենակիցներու ցանկը ղրկեցե՞ք՝ նայիմ: Տեսա՞ք Վեհափառ հայրը, օրհնությունը առի՞ք: Նյութական օգնություն շատ մի հուսաք, գործերնիս հաջող չեն երթար: Քաղաքին տեղը շտակել հետո հայտնեցե՞ք ինձի: Խնդրածս շմոռնաք բերել: Դուք վերցուցեք մայր Արաքսի ջուրեն: Նաև տեղեկացուցեք բուրդի գինները: Լավ գորգերը քանի՞ով կարելի է գնել...»:

Այս էր Բալիքյանի նամակը: Ի՞նչ, մի՞թե ցնորք է նոր Ծթովպիան, և ո՞վ է ասում, թե տեղը հարթ չի: Երբ Հովնաթան Մարչը տեղը նստեց, աչքերը տրորեց, նա ուզում էր ասել, որ եթե ամպը ծածկում է արևին, այդ չի նշանակում, թե արևը գոյություն չունի:

Ճաշից հետո նրա գրած նամակները հենց այդ էին ապացուցում, որ արևը գոյություն ունի, որ երկիրը կարող է կորց-

նել իր ուղին և տիեզերքի անհունության մեջ հոլի պես ֆոռալ, բայց նոր Եթովպիան պիտի լինի:

- «...Մերայնոց երազն է այս, որ մարմին կառնե, սիրելիդ իմ Բարունակ: Ամեն կողմն շնորհավորանք և խնդակցություն կստանամ այս ձեռնարկած գործիս համար: Յուցակագրումը շուտով կլմննա: Ստույգ է, որ հազարե ավելի փղշտացի ու եթովպացի կապրին այս երկրին մեջ: Մարդ զրկած եմ մաքիներու ետևեն: Ժողովրդին պետք է մաքինեք ալ: Մրագրած եմ հոյակապ հանդես մը սարքել հիմնադրումի օրը: Ա՛խ, եթե գիտնայիր, սիրելիդ իմ Բարունակ, սքանչելի երկիր է սա Արմենիան: Մինակ ժողովրդին դաստիարակության գործը սխալ կընթանա: Ամենքն ալ վարակված են տեսակ մը թուլնով. շատ անգամ ըսածնին չես հասկնար, ցեղակիցդ կիսոսի՞, թե՞ օտարական: Հոգ չէ, երկիրը կմնա, հոյակապ վանքերը: Քեզի գրած եմ էջմիածին կատարած ճամփորդությանս մասին: Հոս ալ կան սիրանվեր հայրենակիցներ: Նոր Եթովպիան պիտի ըլլա երկրին սիրտը, և բոլոր երակները պիտի բացվին անոր մեջ: Անդամ մը տես պարոն Բալիբյանին և համոզե, որ գործը զոհ կը պահանջե ամենքես, ըսե՛ թող հոգ չընես: Քաղաքին վայրը շատ աղվոր է: Հոս պակասություն շատ կա: Ուրիշ անգամի հետաձգելով այս մասին գրելս, ազնիվ սրտիդ կապավինեմ և կուղարկեմ նոր Եթովպիո հողեն բոլոր հայրենակիցներու բյուր ողջույն: Ի՞նչ կընես Բարեսիրաց մարմինը: Հանգանակությունը շմոռանաք...»:

Եթե նա կարող էր զեղել իր զգացումները Բարունակ Ճիթեչյանին գրած նամակում, նույնը չէր կարող անել Բալիբյանի հանդեպ: Բրդի և գորգի գները հաղորդելուց հետո, Հովնաթան Մարչը էջմիածնից ստացած օրհնության թղթի մասին հայտնեց:

- «Երջանիկ պիտի ըլլամ անձամբ մատուցելու Ձեր անվամբ ստացած թուղթը և Մայր Աթոռի օրհնությունը»:

Այդ գրելուց հետո՝ Հովնաթան Մարչը հայտնեց, որ Բալիբյանի բոլոր ցանկությունները կկատարի, և ենթադրելով, որ արդեն Բալիբյանի ներսում հայրենասիրությունը փոթորկում է նամակի այդ մասն ընթերցելուց,— Մարչն զգուշությամբ ավելացրեց.

«Նյութականի կարիքն սկզբին պիտի ըլլա, անկէ վերջ  
իրենք կըհատուցանեն Ձեզմն ստացած դրամը: Ամեն օր հար-  
յուրավոր աղերսագիր կստանամ Ձեր անունով գրած: Ամենք ալ  
հայրենակիցներ են, կփափագին բնակիլ Նոր Եթովպիայում:  
Պանքային միջոցով դրամ փոխադրեք... Հիմնադրումը սեւ-  
տեմբերի 4-ին, Ձեր ծննդյան օրը: Այդպես է հայրենակիցներու  
միահամուռ ցանկությունը: Կլսեմ, թե կառավարութիւնը ևս  
որոշած է Ձեզ շնորհակալութեան թուղթ դրկել: Ձեր անունը մե-  
զի վահան դարձուցած ենք և հաջողութեամբ կաշխատինք:  
Նախորդ թվակրիս մեջ հիշած էի, որ ուսուցիչն ու քահանան 10  
պատրաստ են: Երկուքն ալ երեւիլի հոգիներ են, մեր նախնի  
բարբերով: Կհուսամ, որ դրամի առաքումը չեք ուշացնել: Հայ-  
րենակիցներու որոշմամբ ամենքն ալ կրծքին վրա Ձեր անունը  
փորագրած նշաններ պիտի կախեն հիմնադրումի օրը: Հինգ  
արու մանչ ցուցակ ըրած են, որոնց մայրերու անզուսպ ցանկու-  
թիւնն է կնքել զանոնք ավագանի մը մեջ Նոր Եթովպիայի և  
հինգին ալ անվանել Անդրեաս: Կհուսամ, որ Ձեր անունը չեք  
մերժիլ շնորհելու փղշտական մանուկներուն...»:

Այս ամենը գրելուց և ծրարները կնքելուց հետո Հովնա-  
թան Մարշը թեթևութիւն զգաց: Սև ամպն անցավ, և ոգևորու- 20  
թեան արևը նորից շողաց:

— Խելուել է պոլսեցին,— մտածեց սպասավորը, երբ Հով-  
նաթան Մարշը սուղելով իջավ սանդուղքներով և քայլերն ուղ-  
ղեց դեպի այն շենքը, ուր գրասիրաց հավաքույթը պիտի տո-  
ներ Տաղավարյան բանաստեղծի հարյուրամյան:

Հովնաթան Մարշը դռնից ներս մտնելուց ստիպված եղավ  
լուցկի վառելու, մութի մեջ դուռը գտնելու համար: Եվ որքա՛ն  
մեծ եղավ նրա զարմանքը և ուրախութիւնը, երբ մուտքի մտտ  
տեսավ սպիտակամորուս մի մարդու և բժիշկ Երանոսին: Բը- 30  
ժիշկն իսկույն մտտ վազեց, նրա թևից բռնեց:

— Ձեզ էինք սպասում: Մենակ կղձարանայիք սրահը  
գտնել:

Եվ մինչև Մարշը աչքերը բաց ու խուփ անելով կվարժվեր  
միջանցքի մութին, բժիշկ Երանոսը կարկուտի պես վրա տվավ:

— Մոռացա ծանոթացնել, Դրաստամատ Խաչատրյան,  
երևի...

— Ա՛հ, ինչպես չէ, շատ ուրախ եմ...

Սերունին շկարողացավ բառերն իրար կապել: Եվ մյուս միջոսնցրն անցնելով, ուր ճրագի աղոտ լույսը կար, Մարչը ձեռքը մեկնեց և թոթվեց Գրաստամատ հաշատրյանի պատով ձեռքը, որ 19-րդ դարու վերջին գրել էր Պետրոս Գետսողաճ կաթողիկոսի հրաշագործությանց պատմությունը, իսկ 20-րդ դարում՝ այդ նույն պատմության երկրորդ հատորը: Եվ այդ հատորի հրատարակության հոգսն էր, որ բժիշկ Երանոսի զբոսմամբ հաշատրյանին մուտքի մոտ սպասեցնել էր տվել մոտ կես ժամ:

10

Սրահը գետնափոր քարայրի էր նման, և երբ Մարչը ներս մտավ, ներկա եղողների մեջ մի շշուկ անցավ: Բժիշկ Երանոսը սարկավագի պես աչքերը խուփ, ծանոթ շարականը կարդաց.

— Խոյեցյան Սերովբ, մեր վաստակավոր պատմաբանը: Անշո՛ւշտ գիտեր:

— Հարկա՛վ, մի՞թե, շատ ուրախ եմ...

— Ահա Կովկասի Հայոց կուլտուր-կրթական ընկերության նախագահ Շահնազարյանը...

— Ա՛հ...

20

— Ինչպե՛ս եք, ինչպես եք հավանում մեր երկիրը...

— Գրիգոր Լեոնական, վեցերորդ կամավորական գնդի հրամանատար, Բասենի անպարտ հերոսը, այժմ Գրասիրաց ընկերության քարտուղար:

Լեոնականը Հովնաթան Մարչի ձեռքը սեղմեց զինվորականի կտրուկ շարժումով ըստ վաղեմի սովորության զինվորական պատիվ տալով նրան:

— Կհիշե՞ք ձեր բոլոր զինվորներուն:

— Մեկ-մեկ:

— Անթանոսյան Հմայակին կհիշե՞ք:

30

— Վախկո՞տ դեզերտիր: Մի անգամ պիտի գնդակահարեի: Լեոնականը ձեռքը գրպանը տարավ, թեև գրպանում կրակելիքը միայն լուցկու տուփն էր: Սակայն նկատելով Հովնաթան Մարչի հանկարծակիի գալը, ժպտաց ու ավելացրեց.

— Բայց լավ եղավ, որ աչքիս շերեաց: Հետո իմացա, որ հանցավորը ուրիշն էր...

— Տեսնո՞ւմ եք... Ես միշտ էլ ասել եմ, որ դիպվածը մարդու կյանքում վճռական է,— ասաց բժիշկ Երանոսը, թեկուզ երբևէ այդպիսի բան չէր ասել:

— Սա էլ մեր հարգելի հայրիկը: Իր ամբողջ կյանքը նվիրել է հայրենիքին,— ասաց բժիշկը, առաջ հրելով կարճիկ ու նիհար մի ծերունու, որի մի կողմ ծուած վիզը խեղճացնում էր դեմքը ու տալիս նրան այնպիսի արտահայտություն, որ ասում էր.

— Հիմա ես տաշեղի կտոր եմ: Ինձ հանգիստ թողեք:

Քիչ հետո հավաքույթն սկսվեց: Նախագահ Շահնազարյանը (Կովկասի կուլտուր-կրթական) նիստը բաց արեց այնպես թույլ ու բեզարած, կարծես ուզում էր ասել, որ առանց իր խոսելու էլ նիստը իրեն-իրեն կբացվեր:

Տաղավարյանի մասին խոսեց թեմական դպրոցում քսան տարի հայոց գրականության դասատու Տեր-Հովնանյանը, որի միալար ու տրտում նվազի պես հնչող բառերը շատ շուտով քնաբեր եղան պատմաբան Խոյեցյան Սերովբի, Պետրոս Գետադարձի և ուրիշ մի քանիսների համար: Նույնիսկ Հովնաթան Մարչը հորանչեց: Եվ եթե Գրիգոր Լեոնականը ստեպ-ստեպ հազում էր, անշուշտ, այդ արթուն մնալու քողարկված միջոց էր, թշնամուն շմատնելու համար իսկական նպատակը:

Սափահարություն եղավ: Բայց այդ ծափահարությունը կարելի էր բացատրել նաև ճառը վերջանալու ուրախությամբ: Եվ երբ բժիշկ Երանոսը քնած աչքերը բաց ու խուփ անելով, ծանրացած գլխի համար մի հենարան էր փնտրում, հանկարծ Հովնաթան Մարչը մոտեցավ ամբիոնին: Ննջողներն սթափվեցին:

— Հայրենակիցներ, այսօր մեծ մարդու հարյուրամյա տարելիցին իմ խնդակցությունները կհայտնեմ օվկիանոսի մյուս ափը ապրող ցեղակիցներու կողմեն: Ո՛չ, մեռած չէ այն մեծ մարդը, որ քունեն զարթեցուց այս ժողովուրդը և ըսավ. ելի՛ր, ազգ, ժամը հնչեց...

Բժիշկ Երանոսը այնքան փոքրացավ... Եթե հնար լիներ սեղանի տակ պահվելու, ապա կամացուկ դուրս ծլկելու: Ինչե՛ր է խոսում, եթե լսեն...

— Այո՛, հնչեցուց շեփորը և ոտքի ելավ ցեղը, նվաճելու իր հայրենի անդաստանը, ուր խուժադուժ...

Բժիշկ Երանոսը փողոցում այնքան արագ էր վազում, ասես մահամերձ հիվանդ ուներ, որի վայրկյանները հաշված են: Նրա հետևից, բայց փողոցի մյուս մայթով, ոտները քարշ էր տալիս Դրաստամատ Խաչատրյանը, երկրորդ անտիպ հատորի հեղինակը: Իսկ Հովնաթան Մարչը մտնում էր, թափահարում գլուխը, գլխի հետ էլ մազերը:

10 — Դարերը կանցնին որպես տարիներ, տարիները կթվան ժամեր, ժամերը վայրկյանի արագությամբ կալանան, և հավիտենական երջանկությունը իր թևերը կփոխ այս երկրի վրա...

Գրիգոր Լեոնականի հազը սաստկացավ: Դահլիճում խոչեցյան Աերովրը չէր երևում: Եահնազարյանը (Կովկասի կուլտուրկրթական) հայացքն իզուր էր ման ածում նոսրացած շաբրերում, փոխնախազան՝ Ալլահվերդյանին գտնելու և իր տեղը նրան դիջելու համար: Փոխնախազանը տուն էր հասել արիշ փողոցով և հասնելուց դիտին թաց շոք էր դրել:

20 — Ինչ է նոր Եթովպիան, սիրելի հայրենակիցներ, եթե ոչ ցեղի տառապած հազու համար սպեղանի, փրկության կրդզի, գլխովին ուշառնալու վտանգի գեմ: Սրբազան մի ա՛նաթ, ուր պիտի պա՛ն տանք մեր ինքնությունը, թաքստոց և ամուր պատրասարան, եթովպական, փղշտական ցեղերի բնկորները փուլումն զերթ պահելու: Այս պահին...

Գրիգոր Լեոնականը հազաց, սկսեց շրթունքները կրծռակ: Դահլիճի կիսամութում ոչ մի գլուխ չէր երևում. իսկ Հովնաթան Մարչը խոսում էր, բառերի հետ թուշը կաթիլները թալում էին նրա բնյանից և աշխարհին ափնաում էո՛ր, չբոված պատգամներ:

30 Գուրբը ճանապարհով գլուխում էր կզան սպաշ քանդակությամբ, սրով նուս և միայն ճանապարհն էր վատ և կատրթ սեփարենը խախտաւ, մի քանի տեղից երկաթն շարերով կապկրպված, ոչ միայն ձիերն էին լքար, աչքերը ճալուտաւ, արտի մա-

գերը նոսր ու կողքի ճաղերը ցանկապատի փայտերի պես դուրս  
ցցված,— այլ ծանր էր այն բեռը, որ բարձած էր կառքին:

Բեռ է սսվում, որովհետև զանազան պայուսակների, տոպ-  
րակների, թղթի փաթեթների ու կողովների միջից հագլիվ էին  
երևում երկու գլուխ, որոնց տերերին էին տանում լղար ձիերը,  
բոլոր կապոցներով հանդերձ, որոնցից մեկի մեջ տեղաշոր էր,  
մյուսի մեջ ուտելիք, կողովների մեջ սեխ ու ձմերուկ և այն  
բոլոր բարիքները, ինչ օգոստոս ամսում տալիս է Արարատյան  
դաշտը:

Եթե ուշագրությամբ դիտեր մեկն ու մեկը փոշու մեջ 10  
գլորվող կառքն ու կառքի մեջ նստողներին, այդ մեկն անպատ-  
ճառ պիտի տեսներ, որ բարակ ու երկար վզի տեր մարդը ուսին  
որսորդական հրացան ունեւր:

Ընթերցողն արդեն գուշակեց, որ ուղևորներից մեկը Հով-  
նաթան Մարչն էր, մյուսը՝ հրացանակիրը՝ Անթանոսյան Հմա-  
յակը, և որովհետև ձիերի դուռը հարավ էր դարձրած, ուրեմն  
և պարզ էր, որ նրանք նոր Եթովպիա չէին գնում, այլ մի ուրիշ  
վայր:

Ճանապարհին, ինչպես ասում են, կառքը բարև չէր առնում,  
բարև չէր տալիս անցնող ու դարձող քաղաքացիներին, թեկուզ 20  
բոլորն էլ զարմանքով էին նայում իրերի մեջ թաղված ուղե-  
վորներին:

— Շոգից շեն ճաքում,— հարցրեց նազարապատ գյու-  
ղացի մեկը, երբ կառքն անցավ կողքով:

Մարչը լլսեց նրա հարցը, իսկ Անթանոսյանն այնպիսի  
հայացք նետեց կողովների արանքից, ասես ուզում էր նա-  
զարապատցուն տեղն ու տեղը խանձել:

Հովնաթան Մարչը մտածում էր: Էլի նույն հարթութունը,  
որի վրա անպետք մացառներ կային, շորացած փշեր, իսկ ուր  
չուր էր հասնում, հողը կատաղի արգավանդութուն էր ցուցա- 30  
դրում՝ փարթամ այգիներով, բամբակի ու ցորենի արտերով:  
Ինչպե՞ս է, որ նիհար, տգեղ ու կեղտոտ շուրերով կինը ծնում  
է զարմանալի գեղեցկությամբ մի մանուկ, որի կաթնագույն  
շրթունքները ծծում են մոր շորացած, սլարկերի պես կախ ըն-  
կած ստինքները: Մծում է մանուկը, թաթով շոյում այդ պար-  
կերը և ժպտում: Ի՞նչ հզոր հյութ կա սմբած մոր մարմնի մեջ:

Եթէ երկիրը ղոճրաց նիստ լինի, հաճաքվեն նրանք, մաքուր-  
սրյուն կեովպացիք, իրենց վրանները զարկեն տափարակի  
վրա և կաթնակեր մանուկների պես կախ ընկնեն մոր պտուկ-  
ներից, աճեն, բազմանան, երկիրը դարձնեն եթովպանոց...

10 Եւսիրնթաց երեկոյան նկուղի պես մութ թէյարանում, ուր  
Ավետիս ազան նեզվեով սուրճ էր եփում և Պոլսո սուրճ հրամ-  
ցրնում պատվական Նյուրբրին (որոնց համար չէր, իհարկե,  
պատից կախած ազգը՝ ապառիկ ոչ մեկի, շենք դիմանաւ),—  
նախնթաց երեկոյան սրճատանը Գրիգոր Լեոնականը մաշված,  
տեղ-տեղ թղթով կպցրած քարտեզի վրա (վեցերորդ կամալա-  
րական զննի շուսք) ցույց էր տալիս. թե որտեղ ինչե՛ր կարելի  
է անել և ինչե՛ր են արված այն ժամանակ. երբ... (պարզ չէ՞  
միթև), և գեո ինչե՛ր պիտի արվեն, եթե մեկ էլ... Եսօքը բախ-  
տի անվի մասին էր:

20 Իժիշկ Երանոսը համամիտ լինելով Լեոնական Գրիգորին,  
խոսում էր ցած ձայնով: Թեկուզ նրա խոսքերը ըստ մեծի մասի  
այն, ինարկե էին, բայց և այնպէս դավադրութեան ազգանշանի  
բասեր էին թվում իր. բժիշկ Երանոսի և Անթանոսյան Հմայա-  
ֆի համար. որ նախկին Նրամանասարի Նաշեպ սածած աղ-  
նածանկից, նստել էր Նեովում և սուրճը փոքր սովաքով կալ  
սալով մայրն էր քարտեզի վրա խոսարձած գլուխներին այն-  
պսի Նայացքով, որ ստում էր:

— Պանծալի ցառիք. հեռու հայրենիաց...

30 Պարզ արծարծում էր մաքիք, որոնցից Ավետիս ազան էլ  
փարապիք. եթե լիք ու հասկանալու: Ինչո՞ւ տափարակի վրա  
պիտի բռնեն փշեք և ոչ ուրաքուսկան կտրուկ. ինչո՞ւ նրկիցը  
պիտի կախ տան մաքրիկ. որոնց կրակներում փայտական մի  
կաթ արյուն էլ չկա. ինչո՞ւ հայրենի մթնոլորտին ամբաստան  
պիտի խառնեն աչքապի թոպիկը այն վաճառակ, նոր ցեղակից-  
նիքի թոպերը թունավորվում են աստուր նրկիկի թեթեւանով. կոր-  
չում է լիւրան. ցեղ՝ տեղատու. հարկում է ծալվում...

Հանկարծ... Իժիշկ Երանոսի արժանաւ ընկավ. մտադրի ա-  
ռաւ ցպկց միջիցնակիրը. հայրը պրճարանի մաքրիկանց շող-  
նախան Պարզը դիմելը ծովուկը ու նրա դիմելին պարտաքայլ նրկու  
բար:

— Ինչի կրկնու...

Անթանոսյանի բկում սուրճի մի ումպ պնդեց, ձյութի պես  
փակչեց կատիկին: Չկարողացավ կուլ տալ:

Միլիցիոները Ավետիս աղային հիշեցրեց տուրքի ժամկե-  
տի լրացման մասին ու հեռացավ:

— Կայնենք, ձիերին մի քիչ կեր տա՛նք: Մեռանք շոգից,—  
ասաց կառապանը, երբ կառքն անցավ Նազարապատի կա-  
մուրջը և կանգ առավ ուռիների շվաքի տակ:

Կառապանը կողովներն ու կապոցները գետնին դարսեց,  
որից հետո իջան ուղևորները, որոնց ուսերից կախված էին  
ջրամաններ, հեռադիտակ, հաստ շորով փաթաթած շշեր և այլն: 10  
Անթանոսյանն այդ կերպությանքով նման էր քարվանի նառ  
ուղտի՝ գորգերով, գունավոր փնջերով, մեծ ու փոքր զանգու-  
լակներով:

— Բարև՛ ձեզ,— ասաց մեկը, որ կառքի կանգնելը հեռ-  
վից տեսել էր ու մոտեցե՛լ:

— Բարև, աս ի՞նչ գյուղ է:

— Նազարապատն է: Ավերակ գյուղ էր, հիմա վերաշին-  
ված է:

— Բնիկնե՞ր են,— հարցրեց Մարչը:

— Ամեն տեղից կան: Գաղթականներ էլ կան. մշեցի կա, 20  
բուլանդխցի: Մի քանի տուն էլ քուրդ կա:

— Քո՞ւրդ...

— Այո՛, քսանչորս նաֆար են:

— Քո՞ւրդ:— Այդպես ասողը Անթանոսյանն էր: Այդ ասե-  
լուց հետո հայացքը Մարչին հառողն էլ նա էր:

— Հրամանքնիդ ո՞վ եք...

— Ծն խորհրդի քարտուղարն եմ, ինքս էլ կուսակցական...

Մարչը շրթունքները լիզեց: Ինչքան շո՛ւտ էին չորանում:  
Իսկ Անթանոսյանի աչքերը պղտոր ջուր էին:

— Բնի՞կ եք:

30

— Ո՛չ, ես Վանի կողմերից եմ:

— Վանա երկրե՞ն...

— Այո՛, բայց հիմա էստեղացի եմ:

Ահա քեզ խաթարված հոգի, մոլորյալ ոչխար, որ մի  
խուրձ խոտի վաճառել է հայրենի մսուրը: Հովնաթան Մա՛րչ,

61

ինչո՞ւ շփեցիր ճակատդ, ինչո՞ւ ծարավ զգացիր և թիկունքդ քրտնեց:

— Դպրոց կա՞:

— Ինչպես չէ: Դպրոց, խրճիթ, լիկկայան: Անգրագիտությունը վերացված է 60 տոկոսով, նաև կանանց մեջ: Գյուղսունի փոկ, 74 անգամով, որից կին՝ 23 հոգի, շինարար սեկցիա, նորոգված են կամուրջները և հանդամեջ տանող ճանապարհները: Ունենք նաև...

— Կէցիր, այդ ամենը ո՞վ քեզի ըսավ...

10 — Ծս եմ հաշիվը տանում, չէ՞: Ամեն ամիս զեկուցում ենք տալիս շրջանին:

— Հոս շկա՞ն փզշտացոց երկրեն վերաբնիկներ, եթովպացիք շկա՞ն...

— Էդպես ազգ մեր գյուղերում դժվար կճարվի: Ասորի կա:

— Ազգ չէ՞, բարեկամ, ցեղ են ասոնք... Պատմությունը շե՞ս գիտիր: Արշակ թագավորը երբ զորքով անցավ...

Բայց Անթանոսյանը Մարշի թևից ծածուկ քաշեց, նայեց աչքամիջին: Դրանից էր, որ Մարշի խոսքի շարունակությունն այսպես ստացվեց.

20 — Զորքով անցավ և... վերադարձավ:

— Կարեի է, կպատահի: Մեզ հայտնի չի: Այն ժամանակ երեի փակ տնտեսություն էր:

— Ամեն ինչն է կար...

Եղավ պառլամ, որի ընթացքում երկու կողմն էլ լարված ուշադրությամբ զննում էին իրար:

— Էթանք, եդացանք, — ասաց կառապանը:

— Խոր Վիրապի ճանապարհն այս չէ՞. — հարցրեց Մարշը քարտուղարին, կողովների հոս տեղավորվելուց հետո:

— Այդ կողմերում կլինի: Զեմ տեսել, — ասաց նա:

30 Կառքը շարժվեց և գլորվելով անցավ փողոցներով: Գյուղի առօրյան էր՝ փողոցներում, բակերում, այգիներում: Յնիում նստած մի գոմեշ, պռը վրձին շինած, մեջքի սև քաթանի վրա գորշ գույնի նախշեր էր շարում, տկանջները շարժելով թշում ճանճերին: Կոտրած սալի ճաղի: գլխից աքլորը կանչեց՝ բունը փախցնելու համար: Մի պառավ, որ հարդախառն թրիքը գունդ

էր արել և պատերիին էր փակցնում, մի պահ նայեց կառքին՝  
թրիքի գունդը ձեռքին:

Ահա գյուղը, ապրում են քուրդ, բուլանրխցի, մշեցի: Վարում են, ցանում, թրիք են ծեփում, ուտում են, ծնվում, մեռնում: Սակայն ո՞ւր է կայծը, որ պիտի լուսավորի նրանց մտքի առաջ այս երկրի ողջ իմաստը: Զգո՞ւմ են այն թելերը, որոնցով կապված են ցեղի պարծանքի հետ, գիտե՞ն, որ հոյակապ անցյալով ազգ են, թրիք ծեփող պառավը գիտե՞, կարոտո՞ւմ է ցեղի անցյալ փառքին, գիտե՞, որ իր երակներին մեջ թանկագին արյուն է հոսում, որի ամեն մի կաթիլը ազամանդ է:

10

— Կապրեն պատմական երկրում, որի ամեն մի քարը թանձրացյալ պատմութուն է, կաղտոտեն այդ երկիրը և շեն մտածեր, թի ի՞նչ հերոսներ եկել են ու անցել, ինչ մե՞ծ, սըրբազան անուններ...

— Այո՛, այո...

— Այս ճամփով շտարա՞ն Գրիգոր Լուսավորչին խոր վիրապը նետելու...

— Հասանք: էլ դենը ֆայտոն չի գնա,— ասաց կառապանը:

Այդ դենը եղեգնուտն էր, որի միջով, տեղ-տեղ ճումների վրայով, անցնում էր նեղլիկ կածանը: Ուղևորներն իջան: Եվ նոր միայն հասկացան, որ ավելորդ էր կառքին բարձած ճամփի պաշարը, իրեղեններն ու կապոցները: Այդ ամենը հերիք կաներ յոթ օր, յոթ գիշեր անջուր անապատով անցնող քարվանսին:

20

— Ի՞նչ պիտի ըլլա,— հարցրեց Մարչը: Անթանոսյանի ղեմքին էլ նույն հարցը կար:

— Ետ տանեմ: Ի՞նչ կտաս, դնամ նազարապատ սպասեմ, մ/ինչև ձեր գալը:

Աշխարհի բոլոր կառապաններն էլ նույն հայացքով են նայում նեղն ընկած ուղևորին, որի միակ ճարը լոնլլայն համաձայնելն է: Եվ եթե ֆայտոնչի Մուկուչն էլ ետ չէր մնում բոլոր կառապաններից, մեր ուղևորներին էլ մնում էր միակ ելքը՝ ապավինել կառապանի խղճին ու գթասրտության:

30

Կառքը հետ դարձավ նազարապատ: Բեռից թեթևացած ձիերը մի քիչ արագ քայլեցին, իսկ կառապան Մուկուչը դիր-

63

քի բարձրութեան վրա, կառքի հետ օրորվելով, արժան և վա-  
յել համարեց սուլել.

— Միրա՛ն, ծիրա՛ն էր յարս...

— Ուղիղ կգնանք մինչև 3789 բարձրությունը, այնտեղից  
մի մասն աջ, մյուս ձախ կժովի և երեկոյան դեմ կհանդիպենք:  
Միայն զգուշը, որովհետև ամեն մի քայլափոխի կարող եք ա-  
նակնկալ վտանգի հանդիպել,— ասել էր նախկին հրամանա-  
տարը դավադրութեան այն գիշեր, երբ սուրճի մի ումպ ձյուֆի  
պես փակչեց Անթանոսյանի կատիկին:

10 Խորհրդակցութիւնը երկար շտեկեց: Հովնաթան Մարչը  
հարկ համարեց ուղղելու գլխարկը, վղից կախած հեռադիտա-  
կը և այն ամանը, որի մեջ սուրճը տաք է մնում տասը ժամ:  
Իսկ արևն այնպես էր այրում, ասես պատրաստակամ էր սառը  
շուրը մի ժամում եռման աստիճանի հասցնելու:

— Մժեղներ հոս շատ կըլլան: Կերևի թե վագրի ալ հան-  
դիպինք,— ասաց Մարչը այն անտարբերութեամբ, որ ունեն  
փղշտացիք վտանգի մասին ապահով տեղում խոսելու ժա-  
մանակ:

— Կը կրակեմ... փամփուշտակալս լիքն է:— Եթե Անթա-  
նոսյանի խրոխտ կեցվածքը տեսներ այն վագրը, որ հարձակ-  
վելու էր նրանց վրա...

— Օ՛ն, առաջ... Պետք է որ խորը չըլլա...

Ընթերցող, դուք ջունգլի շէք տեսել, և ոչ էլ արևադարձա-  
յին երկրի անտառ, ուր մի թիղ հողի վրա բուսնում է անհաշիվ  
ժառ, թուփ, խոտ ու ծաղիկ: Բոլորն էլ իստնվում են իրար,  
մճճվում՝ անլվա, շանրած մագերի պես, բոլորն էլ ձգտում  
են դեպի արևը, որի ամեն մի շողի համար կռվում են թիերը,  
ծաղիկները, ծառերն ու խոտերը: Եվ այդ ամենի մեջ պես-պես  
թռչուններ, զեռուններ, գունավոր թիթեռներ, կապիկներ և էլ  
20 ի՞նչ գիտեմ ինչպիսի կենդանիներ, որոնցից ամեն մեկը և՛  
պաշտպանվում է ուժեղից, և՛ հարմար ըոպեֆին հարձակվում  
թուլի վրա:

Դուք ջունգլի շէք տեսել և ոչ էլ արևադարձային երկրի ան-  
տառ: Էլ ի՞նչպես կարող եք պատկերացնել այն Լոբեզուտը,  
որով նրանք պիտի անցնեին, անպատճառ պիտի անցնեին,  
թեկուզ մեկին էլ վագրը կամ մարդագայլը հոշոտեր, որովհետև

Գրիգոր Լեոնականի քարտեզի վրա Եշանակած կառմիր կետը գտնվում էր Եղեգնուտից այն կողմը, իսկ այն կարմիր կետի մոտ էլ գտնվում էր նրանց արշավանքի կետ նպատակը:

— Խորո՞ւնկ է:

— Կարևորութուն մի տաք...

— Մծեղները կնեղեն... Աս ի՞նչ գեռուն է, որ կտողա մեզ-  
քիդ վրա: Կեցի՛ր, հայրենակից, թունավոր կըլլա...

Անթանոսյանը հազիվ կարողացավ կանգնել ճումի վրա, մինչև Մարչը ձեռնափայտի ծայրով դեն հրեց սև ճիճուին: Եղեգնը շարժվում էր, նրանց երկար ու սրածայր տերևներն 10  
իրար էին քսվում, սվսվում, թվում էր, թե հովն է շնկշնկում: Սակայն թվում էր միայն, որովհետև հովն այդ ժամանակ արևի կիզիչ ճառագայթներից սինչորը, սուլում էր հեռու սարերի լանջին:

— Թունավոր օձեր կըլլան հոս, հայրենակից...— Չայնեց Մարչը Անթանոսյանին, որ առաջից էր քայլում, եղեգնը դեն հրում, ոտքով ճումերի վրա տեղ շինում և ստեպ-ստեպ կանչում.

— Չախ ծովե՛ք... Այստեղ խորն է... Զգույշ ցատկե՛ք...

— Կենդանու ոտնատեղեր եմ տեսնում,— կանչեց Անթա-  
նոսյանը: Մարչը տեղում կանգնեց: 20

— Կենդանի՞... Ո՞ւր է...

— Ահա հետքերը...

— Ռնգեղջյուրի կնմանի: Գուցե վագր է... Զդառնա՞նք:

— Կճղակավոր է: Համենայն դեպս զգույշ մնանք: Եթե փորձանք պատահի, հրացանս առեք, շթողներ թշնամու ձեռքը  
ընկնի:

— Հայրենակից, կըսես, թե եղեգնուտները շարժվեցան...

— Սո՛ւա... Կոացե՛ք:

Գորտերն ի՞նչ նախանձելի մարմին ունին: Տաքանում են գետափին և ոտնաձայն լսելիս թռնում ծանծաղուտը: Ո՞ւր 30  
գնար Հովնաթան Մարչը, երբ վտանգն արդեն մոտ էր: Սև սարսափի վայրկյաններ, հավետ անմոռաց...

— Սև թիկունքը կերևա... Ռնգեղջյուր չէ՞:

Մարչին պատասխան տվավ Անթանոսյանի հրացանը, որի կրակոցից ինչ-որ ածղահա արարած եղեգնուտները կոխ տա-  
լով ու փնչալով հեռացավ: Եղեգնի սովերում պահված շամ-

բահավերը վախից թևին տվին, կոնշալով թռան և ավելի հզորացրին աղմուկը, որից Հովնաթան Մարչը քիչ մնաց հավասարակշռութունը կորցնեն և ընկնեն ծանծաղուտը:

— Թշնամին փախուստի դիմեց կամ նորից դարան մտավ,— հայտարարեց Անթանոսյանը:

— Հուսահատվելու չէ, շուտով եղեգնուտը կվերջանա...

Եվ իրոք, կես ժամ հետո արևի ճառագայթներն արդեն թափանցում էին եղեգնուտի կիսախավարը, ճահճուտն ավելի էր նոսրանում, արահետը լայնանում էր: Եվ երբ Անթանոսյանը

10 ոտքը դրեց տափարակի վրա ու պատրաստվում էր ուրախութունից բացականշելու, նրա առաջ, անհայտ էր, թե ո՞րտեղից, տնկվեց մի մարդ, երկար մահակը ձեռքին:

— Բա որ հայվանին սպանեիր...

— Ի՞նչ հայվան:

— Գոմեշին, շտեսա՞ր...

— Մի՞թե գոմեշ էր, մի՞թե...

— Դե լա՛վ, անց կացեք... Փորձանք էիք բերելու գլխիս: Երբ նրանք քիչ հեռացան, երկար մահակով մարդը նրանց հետևից ձայն տվավ.

20 — Պապիրոս չունե՞ք, թութունս հատել ա:

Բարի՛, միամիտ ցեղ, պարզասիրտ ու անոխակալ... Հովնաթան Մարչի աչքերը ոչ միայն ժպտացին, այլ ժպտից հավելեցին, ինչպես աստղերը լուսաբացին: Եվ այնքան ափսոսաց, որ ծխող չէ:

— Սուրճ հրամեցեք, պատվելի բարեկամ:

— Չէ՛, էդ բաներում չկանք,— պատասխանեց մարդն ու հեռացավ եղեգնուտի ստվերում նստոտած գոմեշների կողմը:

Կածանը քանի գնում, այնքան բարակում էր, բաժանվում էր մանրիկ ճյուղերի, որոնցից ամեն մեկը տարբեր ուղղությամբ էր գնում: Մեկը ձգվում էր բարակ լարի պես, կորչում ու հալվում տափարակում, մի ուրիշը հասնում էր խորխորատի և կտրվում, երրորդը միանում էր լայն ճանապարհին:

Քիչ հետո նրանք բարձրացան դիմացի բլրակի գլուխը: Հովնաթան Մարչը գլխարկը հանեց և ողջունյն տվավ այն երկրին, որ Արաքսի մյուս ափին է, և որի հողն էլ նույնքան հարթ է, կածաններով ու քարոտ:

— Կը տեսնեմ, կը տեսնեմ բաղձանքը հոգուս... Գիտե՛, սքանչացիր: Մշուշի մեջ կը տեսնե՛ս խոր Վիրապի գմբեթնե-  
րը... Հոն տապակվեցավ վիրապի մը մեջ, օձերու և կարիճնե-  
րու ընկեր եղավ և գաղափարը շուրացավ սուրբն Գրիգոր Լուսա-  
վորիչ: Կը հիշե՛ս, Ագաթանգեղոսի ղգայացունց տողերը: Ա՛խ,  
սրբազան երկիր, աշխարհ դրախտավայր...

Անթանոսյանը մտաբերեց այն, ինչի մասին պատմիչը զար-  
զանդով է գրել: Չագարը, հասկանո՞ւմ եք, խրել են խոր Վիրա-  
պի կալանավորի հետույքի մեջ և հալած արճիճ լցրել: Տրդատ  
Քագավորը խող է դարձել և եղեգնուտում ապրել, մինչև երազը: 10

Եթե Բալիքյանն իմանար, թե ի՞նչ զոհողությամբ և  
ի՞նչ տանջանքով է կատարում նա նրա ցանկությունը՝ Արաք-  
սից ջուր առնել, ոչ թե Արաքսից հոսող առուններից, այլ Մայր  
Արափսից, նրա սառն կոհակներից, որոնք զալիս են Բինգյու-  
լից, հեռուններից, շա՛տ հեռուններից...

— Խնդրածս շոունաք բերել... Ինքներդ վերցրեք Մայր  
Արափսի ջուրեն:

Բլրակից իջան: Հովնաթան Մարչը բլրակի գլխից մի անգամ  
էլ հետ նայեց եղեգնուտին... Եվ երբ Անթանոսյանը ոգևորված  
կանչեց այն մասին, թե՛ 20

— Երկներ երկին և երկիր... — Մարչն ավելացրեց.

— Երկներ և ծով ծիրանի:

Արաքսը բլրակի ներքևով օձապտույտ դառնում էր, հան-  
դարտ հոսում: Միակ բարիքը, որ կտար գետն այդ ժամանակ,  
նրա սառը ջրերում լողանալն էր:

Հովնաթան Մարչը թաղիքի մեջ փաթաթած շշի խցանը  
հանեց և ծովը տեսնող լողորդի ուրախությամբ կոացավ ջրի  
վրա: Անթանոսյանը հետևեց նրան՝ ձեռքին որսորդական հրա-  
ցանը:

— Ստո՛պ...

Տեսարանը, ընթերցո՛ղ, ծա՛նր էր, շատ ծանր: Ստոպ ասո-  
ղը սահմանապահ կարմիր բանակայինն էր, որ հերթական  
պտույտն էր անում ափերով, և որը դեռ հեռվից էր տեսել  
նրանց: Եվ ստոպ այն ժամանակ, երբ Մարչի փափուկ մատ-  
ները Արաքսի ջրի սառնությունն ղգացին... Դուք ծարավ եք,  
ձեք լեզուն յանձնվում է ծարավից, թուրը շորանում է, դուք 30

չուր եք գտնում, սառը շուր, ձեր շրթունքները կախվում են շրի վրա, և հանկարծ...

— Ստո՛ւպ...

Տեսարանն ուներ և իր ծիծաղաշարժ կողմը, սակայն այդ ծիծաղաշարժ կողմը միայն պահակի համար էր, որովհետև Անթանոսյան Հմայակի ուսերեն խոսելն ուրիշ բան չէր հարուցի, ծիծաղից բացի... Պահակը հարցնում էր թույլտվություն սահմանին մոտենալու համար, Անթանոսյանը պատասխանի տեղ գլուխը թեքում էր մերթ աջ, մերթ ձախ և խեղճ ձայնով ասում

10 այնպիսի բառեր, որոնց միայն առաջին վանկերն էին ուսերենի նման: Ինչո՞ւ հրացանը փոքրիկ մատիտ չէ, որ կոշիկիդ տակ առնես, վրան կոխես այնքան ամուր, որ թաղվի հողի մեջ: Իսկ պահակը հրացանին էր նայում և ժպտում:

Բոլոր լեզուներով էլ շատ արագ կարելի է հասկացնել, թե՛

— Դուք բանտարկված եք, խնդրում եմ հետևել ինձ, կամ առաջ ընկնել:

Եվ երբ Հովնաթան Մարչը Անթանոսյանի հետ քայլում էր պահակի հետևից, նրա գլխով այնպիսի մտքեր էին անցնում, սարսափելի մտքեր, որոնցից ամենից թեթևն ու դուրեկանը անկողնում մեռնելու շփոթ գաղցր էր: Այս ո՞ւր ընկավ, ո՞վ է այս պահակը, ո՞ւր է տանում: Որքա՞ն ճշմարիտ էին նրանք, որոնք ասում էին.

20 — Այն երկիրը մի՛ գնա, Հովնաթան Մարչ, այնտեղ մարդագայլեր են ապրում և գեշ բռնակալներ...

Գուցե այլ աշխարհ է, բայց Արաքսը խոսում է և այդ Արաքսը անագին հորձանք չի հանում, զայրույթից չի ոռնում, որ պահակը սրտաճաք լինի և ազատություն տա Հովնաթան Մարչին:

Այսպես քայլում էին երեք հոգի, որոնցից առաջինը սուլում էր, իսկ վերջին երկուսն ապրում էին այն, ինչ ապրեցին Հիսուսի հետ խաչվող երկու հանցավորները, որոնք մինչև վերջին շունչն էլ զսրմացած մնացին և չհասկացան, թե ինչու է ժպտում Հիսուսը և նույնիսկ սուլում խաչափայտի վրա բարձրանալիս, այնպիսի ինքնագոհ հրճվանքով, որպիսին ունի սպորտսմենը մարզափայտերի վրա մագլցելիս:

30 — Երկներ երկին և երկիր...

— Դողայր և Հովնաթան Մարչ:

Արևը խոնարհվեց հունձից դադրած և տուն դարձող մշակի հոգնածությամբ: Եվ այդ խոնարհվող արևը արցունքի կաթիլներ քաղեց Հովնաթան Մարչի աչքերից այն ժամանակ, երբ նա եղեգնից շինած տաղավարի ճեղքից նայում էր արևին: Մեկ էլ պիտի արևը տեսնի՞, թե գիշերվա մութի մեջ սարսափելի և սուսերամերկ մարդիկ պիտի գան, միսը կտոր-կտոր անեն և փղշտական գանգը շարդեն կացնով, ուղեղը շաղ տան, օձերին, կարիճներին տան:

Անթանոսյանը պապանձվել էր: Պահակի առաջին խոսքը 10 նման էր կոունկների երամի մեջ արձակած գնդակի, որից ցրիվ են գալիս շարքերը, վախից խառնվում, կոնշում և իզուր փորձում շարքերը վերականդնելու: Առաջին խոսքը՝ ստո՛ւպ, գրեղակի պես եղավ, և մտքերը շաղ եկան:

— Հայրենակից, աս ո՞ւր ընկանք...

Անթանոսյանը արտասովեց և արցունքից խեղդվող ձայնով իզուր փորձեց Մարչին հիշեցնել այն առասպելներից մեկը, որի հերոսը եղել է հոր Վիրապի կալանավորը: Մի՞թե գոհ չի պահանջում գաղափարը: Սակայն այդ սպեղանի շեղավ և ոչ էլ պաղ ջուր հրդեհվող մտքի համար: Ի՞նչ է բերելու արևածագը: 20

Պահակը տաղավարի առաջ իրիկվա ընթրիքն էր պատրաստում: Շուտով ջոկատի պետը պիտի գար: Բայց ինչ ծիծաղելի դեմք ուներ նա, որ բարձրահասակ էր, բարակ ու երկար վզով: Իսկ մյուսը...

— Բուրժո՛ւյ,— ժպտաց պահակը ու գդալով ընթրիքը խառնեց:

Մուժն ընկավ: Մի քիչ հետո երևաց ջոկատի պետը, ճրագի լուսով նայեց նրանց, լսեց զինվորին և փորձեց հասկացնել մերթ Անթանոսյանին, մերթ Մարչին, որ սահմանի մոտ որս անելու համար հարկավոր է հատուկ իրավունք և որ իրենք 30 ազատ են այժմ, սակայն խորհուրդ չի տալիս գիշերով գնալ, ճանապարհը շեն գտնի:

— Կարճ գիշեր է, շուտով կլուսանա,— ասաց նա: Հովնաթան Մարչը համոզված էր, որ զինվորականը իր մահվան դատավճիռն է կարդում և հայտնում է, թե ինչո՞ւ են սպանում, ինչպես պիտի մորթեն: Իզո՛ւր աշխատանք... Կախաղա-

նի դատապարտված հանցավորի համար հետաքրքիր է իմանալ, թե ինչպես է կանեփը բուսնում, ինչպես են քաղում, ցողունը թրջում, պարան հյուսում և ապա... պարանի օղը հագցրնում վզին:

Մարին այդպես էր թվում: Մյուս փղշտացին լարված լսողութուն էր զինվորականի կցկտուր բառերից ամբողջական միտք հյուսելու համար: Եվ երբ մարդը հեռացավ, պահակը ծիծաղելով խոտի մի քանի խուրձ բերեց և փոեց հատակին: Իսկ Անթանոսյան Հմայակը հայտարարեց, որ վաղն ազատ են:

10 — Միամիտ մարդ... Խոտը կը փոեն, որ այլանդ կաթիլները գետնին լթափվին, հետք չերևա:

Երկու հին ընկերներ, երկու սրտակից բարեկամ այդ գիշեր խոսեցին իրար հետ ոչ թե սրտանց, այլ՝ անհաշտ: Մարչը Անթանոսյանին ծանր խոսքեր ասաց, իսկ Անթանոսյանը եղավ համբերատար, այդ խոսքերը մարսեց:

Կեսգիշերվա լուսթյան մեջ ծղրիղները ձայն տվին, ծղրիղներին ձայնակցեցին մոտակա ճահճուտի գորտերը:

20 Տաղավարի դուսն խոտերի վրա փովել էր պահակը, իսկ ներսում իրար կողքի կուշ էին եկել Մարչն ու Անթանոսյանը: Առաջինն իր կրծքին էր սեղմել Արաքսի շրով կիսով շափ լցրած շիշը և գլուխը շին խոնարհած մտքով հեռուններում էր թափառում, իսկ երկրորդը մութից օգտվելով, ծածուկ բաց էր արել տասը ժամ սուրճը տաք պահող շշի բերանը, ծծում էր, որպես մոր կաթ, ծծում էր և կամաց-կամաց գլուխը խոնարհում չոր խոտի վրա...

## 8

Պայծառ, հիշողության համար անչնչելի օր, երբ արևն էլ կանգ էր առել և հանդիսատես էր: Այդ օրն այդպես էլ մնաց Հովնաթան Մարչի հիշողության մեջ, որպես սիրո գառուն:

30 Ընթերցող, երբ դողես զգում, և քեզ թվում է, թե աշխարհը հում ձու է, ու դու երկաթյա բռունցք: Անցնում են տարիներ, տեսնում ես և աշունը, քո սիրո աշունը և ինքդ քեզ հարցես տալիս՝

— Ո՞ր էի և ո՞ր եկա...

Մակայն սկիզբը մնում է պայծառ, որպես գարնան առա-

վոտ: Եվ այդպես էլ մնաց Հովնաթան Մարշի համար: Գծբախտաբար հնարավորութիւն չկա ստուգարպես ասելու, թե Հովնաթան Մարշն ապրե՞ց իր աշունը և հարցրե՞ց իրեն այնպես, ինչպես ես, դու, նա հարցնում ենք սիրո առավոտը մտաբերելիս:

Հյուրանոցի բաց պատուհանից Արարատի սպիտակահեր գագաթին առավոտյան բարևը տալուց հետո, Հովնաթան Մարշը մաքուր սափովեց, հագավ իր տոնական տարազը և սպիտակ ձեռնոցները, պսպղան քորոց հագցրեց փողկապին,— մի խոսքով՝ զարդարվեց հարսանիքի ուրախութիւն շտապող հյուրի պես: 10

Հարսանիք չէ՞ր նոր Եթովպիո հիմնադրումը...

Անթանոսյանը հայտնել էր նամակով, որ իրեն հաշողվել է գտնել մի զույգ իսկական եթովպացի, որոնք համաձայնվել են ոչ միայն ապրելու ապագա քաղաքում, այլև իրենց ամուսնութիւնը կատարելու սեպտեմբերի 4-ին:

«...Շատ փնտրեցի: Մի քանի գյուղում կան եթովպացիներ և փղշտացիներ, սակայն նրանք ձուլվել են տեղացիների հետ, և նրանց արյունը պղտորվել է կասկածելի խառնուրդով: Ալագյազի կողմերից իմ ծանոթս գրում է, որ հատ ու կենտ ցրված փղշտացիք չեն մոտենում, վախենալով դրամի բարձր տոկոսից: Ի՞նչ ասել կուզի, որ նրանց ապերախտութիւնը եթե մի կաթիլով էլ ավելանա, պիտի թափվի և հեղեղի աշխարհս: Ուրանում են իրենց ծագումը: Ես հիմա հասկանում եմ Ձեր արդար զայրույթը, երբ սուրբ էջմիածնում հանդիպեցինք Ձեր քեռորդուն: Ոչինչ հուսահատութիւն, որ բաժին է փոքրոգիների: Մենք կկառուցենք նոր Եթովպիան, և բնակիչները կբազմանան, ուրիշ երկրներից կհստվաքվեն: Ձեր հանձնարարութիւնը կատարել եմ: Տեր Հուսիկը որոշյալ ժամին տեղում կլինի: Մշակներ եմ վարձել հիմքը փորելու: Կրաշաղախը պատրաստել եմ: Ցնծութիւնը մեծ է, և աշխարհը հավետ պիտի հիշի սեպտեմբերի 4-ի օրը...»: 20

Ցնծութիւնը մեծ է, Հովնաթան Մարշը, և աշխարհը եթե հիշելու է նոր Եթովպիո հիմնադրումը, այդ օրը պիտի փաթաթի անվանդ: 30

Հովնաթան Մարշը պատվիրել էր սպասավորին, որ կառքեր վարձի՝ մեկ, երկու, հինգ, հյուրերին իսկույն ներս ընդունի և 71

մանավանդ բժիշկ Երանոսի քենուն՝ բժֆակի ուսանողուհի Կատարինեին, Կատյային: Իհարկե նա այս մանրամասնությունները շատաց սպասավորին, այլ միայն պատվիրեց.

— Սանկ ճերմակ լաթերով կին մը ինձի հարցնելու ըլլանեմ, վերն է, կըսես, կուղեկցիս...

Այստեղ միջանկյալ մի դեպք: Բժֆակի Կատյային՝ տարիքն անցած օրիորդ Կատարինեին, նա տեսել էր մի անգամ և երկու օր անց նրա հետ գնացել էր Դալմալի այգիները: Այս պատմությունը մինչև վերջն էլ մութ մնաց, իսկ այժմ ոչ մի **10** հնար չկա պարզելու, քանի որ բացակա է հերոսը, Հովնաթան Մարչը չկա՛: Ատում են, որ բժիշկ Երանոսը նայել է նրանց հետևից և ժպտալով ձեռքերն իրար շփել այն մարդու ուրախությամբ, որ շուկայում ճարպկորեն հիվանդ և պառավ ձին միամիտ մեկի վզին է փաթաթում և հետևից նայում, թե ինչպես է նա ձին տանում: Այս չէ՛ կարևորը:

Կառքը հասնում է Դալմալին, նրանք իջնում են, Հովնաթան Մարչը վճարում է կառապանին (այդ մասին այժմ էլ կարելի է հարցնել № 129 կառապանից) և ներս մտնում մի այգու դռնակով: Այստեղ արդեն ծայր է առնում ենթադրությունը, ըստ **20** որի, իբր թե օրիորդ Կատյան այդ այգում հանդիպում է իր վաղուցվա ծանոթին, որին տարիներ առաջ տեսել էր և այդ տարիների ընթացքում վերհիշել ու կարոտել, նրան մեռած համարել կամ անհայտ կորած: Մի այլ կարծիքով, իբր թե այգում եղել է ավելի զորեղ մարդ, քան Հովնաթան Մարչը և այդ մարդը ռազմաշունչ երգեր է երգել, հին գինի տվել Հովնաթան Մարչին ու օրիորդ Կատյային. բարձրացել են հնձանի կտուրը, և երբ Հովնաթան Մարչը ձեռքերն օդում տարածած կանչել է Կատյային, նրան անվանել ոսկեզանգուր խոպոպիկներով տիկին, իբր թե նրա ձեռքն է ընկել միայն բարակ շղարչը, որի տերը **30** հնձանից մի քիչ հեռու, հին գինի տվող զորեղ մարդու կամ թեկուզ վաղուցվա ծանոթի (նա, որ անհայտ կորած էր համարվում) գրկումն է եղել:

Հյուրանոցի սպասավորն այդ պատմության միայն վերջն է տեսել, այսինքն միայն այն, երբ Մարչը, համարյա թե լուսաբացին, օրորվելով բարձրացել է սանդուղքով և բանալիի

փոխարեն դռանը դեմ արել իր ոսկեկոթ մատիտը: Սպասավորը տեսել է և կառքում նստած կատայային ու զորեղ մարդուն:

Եվ եթե սեպտեմբերի 4-ի սուավոտյան Հովնաթան Մարչը սպասավորին պատվիրեց սանկ ճեմակ լաթերով կնոջ մասին, սպասավորը տկարամիտ լինելով հանդերձ (այդ մեզ արդեն հայտնի է) հասկացավ, որ խոսքն ա՛յն կնոջ մասին է, որին կճանաչեր նա, եթե կինը սանկ սև լաթերով էլ լիներ:

Հովնաթան Մարչը մոտեցավ, մեկ-մեկ վերջրեց սեղանի վրայից այն շկնքած ծրարները, որոնց մէջ հիմնադրումն արդեն նկարագրված էր: Մնում էր միայն երեկոյան վերադառնալուց մի քսնի անկարևոր նորույթներ էլ ավելացնել, ծրարները փակել ու փոստին հանձնել:

10

Անդրեաս Բալիթյանն իր այն վերջին նամակից հետո (հիշո՞ւմ եք, երբ Մարչը պառկել էր ու լաց էր լինում, իսկ նամակը ծիծաղում էր), մի ուրիշն էր ուղարկել: Թե ինչո՞ւ էր նա հարմար տեսնում, որ Հովնաթան Մարչը մի քիչ էլ ավելի մնա Փոքր Ասիայի խորքերում, ինչո՞ւ նա հանկարծ, առաջին նամակից հետո, փոխել էր իր որոշումը և անորոշ խոստումներ արել միանվագ նպաստի մասին, — այդ բոլորը մութ էր Հովնաթանի համար: Հայտնի էր միայն, որ Բալիթյանը մի այլ նամակ էր ուղարկել, այս անգամ ուղիղ Վեհափառի անունով, որտեղ նա թույլտվութուն էր խնդրում... ապահարզանի: Ո՞վ էր այդ կինը: Այս միտքը, այս կասկածոտ միտքն անհանգստացնում էր Հովնաթան Մարչին, և նրան այնպես էր թվում, թե մեկը ուտայն է հյուսում:

20

Բայց այդ տևում էր միայն վայրկյաններ: Իսկ ո՞ւմ միտքը մի վայրկյան կասկածոտ չի դառնում ամենից հավատարիմ ընկերոջ հանդեպ: Հերթը էր, որ նա հին նամակների մեջ քրքրեր, գտներ այն կապույտ ծրարով նամակը և կարդար:

— Կը հիշեմ օրը, երբ մեկնեցաք և կը մխիթարեմ զիս... 30

Այս սողերը կարգալուց հետո կասկածն ավերվում էր, ասես թե սպունգով ջնջում էին գրատախտակին գրածը:

— Կարելի՞ է, — Մարչը հետ նայեց, բաց դռան մոտ տեսավ բծիշկ Երանոսին, քենուն՝ սանկ սպիտակ լաթերով կատայային, Գրիգոր Լեոնականին: Մի քիչ հետո ներս մտավ և Պետրոս Գետադարձը:

73

— Ուրախութիւնն աննկարագրելի է... Քաղաքում միայն դրա մասին են խոսում, Նոր Եթովպիո, — ասաց բժիշկ Երանոսը և նայեց Գրիգոր Լեոնականին, ասես հարցնում էր.

— Ճշմարիտ չէ՞...

— Այո, օրը պատմական է: Ես հիշում եմ Բասենի կոիվը: Երեկ ճաշին մերոնք հաղթանակով վերադառնում էին, իսկ թրշնամին ահագին կորուստ տալով սարսափահար փախչում էր:

— Զգացված եմ: Ինչո՞ւ համեստութիւնն կը մեծարեք: Ես ձեզմով է, որ կը ոգևորվիմ: Դո՛ւք եք...

10 Եարունակութիւնն ասելիս Հովնաթան Մարշը աչքը շէր հեռացնում բժֆակի ուսանողուհի Կատյայից (օրիորդ Կատարինեից), որը ոտքերը քսում էր իրար ճիշտ այնպես, ինչպես ճանճը՝ սեղանին ընկած շաքարի կտորը լիզելուց:

— Կառքերը սպասում են, — ասաց սպասավորը:

— Աճապարենք, աճապարենք... Այնտեղ ալ հյուրեր ունենք, պատվական հյուրեր:

Ճանապարհին միայն առաջին կառքում նստողներն էին ծիծաղում: Կատյան ինչ-որ ուրախ պատմութիւն էր անում, Հովնաթան Մարշը քահ-քահ ծիծաղում էր, իսկ բժիշկ Երանոսը կարո՞ղ էր լուռ մնալ, երբ ծիծաղում էր ինքը՝ Հովնաթան Մարշը:

20 Երկրորդ կառքում նստողները՝ Գետադարձն ու Լեոնականը վեճի էին բռնվել: Գետադարձը պնդում էր, որ արամեական ազգը հարավից է հյուսիս շարժվել և վկայութիւններ էր բերում, իսկ Լեոնականը՝ ռազմական տեսակետից անհարմար համարելով այդպիսի առաջխաղացումը, միակ ուղին ընդունում էր հարավից դեպի հյուսիս-արևմուտք գնալը: Եվ կարծում եք, որ եթէ տասը վերստ անցնելուց հետո Պետրոս Գետադարձը լուց, այդ նշանակում էր, թէ նա համաձայնվե՞ց հակառակորդի հետ:

30 Ամենևին ո՞չ: Շուրջն ամայի տարածութիւն էր, առաջին կառքը բավական հեռացել էր, իսկ Գրիգոր Լեոնականը այնպես էր աղմկում, բարձր բղավում, բռունցքը օդում ճոճում... Հանկարծ բռունցքի մի հարված, Լեոնականի ոգևորութեան ժամին, թեկուզ պատահամբ, իջնելի Գետադարձի մագաղաթյա դիմքին... Կարելի՞ է փթանոց քարով խփել պատուհանի ապակուն և կարծել թէ ապակին չի ջարդվի:

Անթանոսյանը մշակներից մեկին պատվիրել էր բարձրա-  
նալ տափարակի ծայրին գտնվող քարակույտի գլուխը և աչքը  
տնկել ճանապարհին: Եթե կառք կամ մեքենա երևար, մշակը  
ձեռքի բահը պիտի բարձրացներ և ազդարարեր հյուրերի գա-  
լուստը:

Մնացած երկու մշակները փորում էին: Անթանոսյանը մեկ  
նրանց մոտ էր վազում, արագացնում, գայրանում, որ ուղիղ  
գծով շեն փորում:

— Մի թիզ աչ կամ ձախ շժռեք... Լարո՛վ փորեք, լարո՛վ...

Մեկ մոտենում էր տեր Հուսիկին և նրան պատմում, թե 10  
ըստ հատակագծի ո՞րտեղ պիտի դպրոցը լինի, որի պատուհան-  
ները պիտի նայեն Արարատի կողմը, մի քիչ հեռու նոր Եթով-  
պիո եկիղեցին, քահանայի բնակարանը, ապա տներ, փողոց-  
ներ, լայն հրապարակ:

— Պարոն Մարշի միտքն այնպես է, որ հարկավոր է քա-  
ղաքը պարիսպներով պատել, ունենալ միայն մի դուռ... Ասում  
են բավական փող են խոստացել: Եվ մինչև հիմա էլ շարունա-  
կում են գանձել: Գուցե թե...

Բայց խոսքը կիսատ էր թողնում, մոտենում բանվորներին,  
ձայն տալիս՝ 20

— Լա՛րով, լա՛րով:

Կամ թե հետ էր նայում, քարակույտի վրա արձանի պես  
կանգնած և բահին հենված մշակին: Տեր Հուսիկը շփում էր մի-  
րուքը, գլխով հավանության նշան տալիս և աչքերը լայն բաց  
անում, երբ Հաջի Խարաբ գյուղի ուսուցիչը պատմում էր գանձ-  
վող փողերի և ամեն կողմից թափվող նվերների մասին:

— Հիմնադիրը Անդրեաս Բալիթյանն է... Ինքը փղշտացի է,  
բայց մոր կողմից եթովպացի: Շատ հարուստ է, անթիվ գան-  
ձեր ունի, մեծ գործարաններ, օրական մինչև հարյուր հազար  
եկամուտ: Ինքն էլ ազնվություն, հայրենասիրություն տիպար: 30  
Բժիշկներն արգիլել են, որ նրա մոտ ազգից կամ հայրենիքից  
խոսեն: Սիրտը շա՛տ, շատ բարակ է...

Տեր Հուսիկը գլուխը օրորեց.

— Վա՛խ, ափսոս մարդ...

Սակայն սպասողները միայն տեր Հուսիկն ու Անթանոս-  
յանը չէին: Նրանցից մի քիչ հեռու, արևի տակ նստոտել էին 75

երկու հոգի, երկու եթովպացի, որոնց պսակադրությունը պիտի ա՛յդ օրը կատարվեր և որոնց միացումից պիտի սերվեր եթովպիկներին և փղշտիկներին սերունդ, լեցնելու Նոր Եթովպիան:

Ավո բիձա և Խազալ խանում:

Եթե Ավո բիձան վեր կենար և քայլեր, հայտնի կաներ նրա կաղ լինելը: Իսկ եթե Խազալ խանումը քայլեր... Ի ու՞ր տեսե՞լ եք ինչպես է տուն վերադառնում պառավ սագը՝ լնգլնգալեն, օրորալեն...

10 Ո՞րտեղից էր գտել Անթանոսյանը թշվառ այդ գույզին, որ մինչ այդ, իր վիճակից գոհ, ապրում էր ուրիշի գոմում ու տանը: Ավո բիձան տավարի տակն էր մաքրում, թրիքը գոմից հանում, գոմեշներին ձեթ քսում, շուր տալիս և գիշերով էլ քնում գոմում՝ անկյունում, ցցերի վրա շինած թառին:

Խազալ խանումն էլ նույն գյուղումն էր ապրում, դարձյալ ուրիշի տան, սակայն գոմ չէր մաքրում և ոչ էլ թառի վրա քնում: Նրա գործը բամբակի քաղհանն էր, բուրդ գզելը, թել մանելը: Եվ այդ ամենը նա կատարում էր լուռ ու անտրտունջ, շատ անգամ մի փոր հացի համար, իրեն վերապահելով իրավունք աշխատանքի ժամանակ քթի տակ դնդնալու մի երգ, եթովպական երկրից բերած երգ:

20 Ավո բիձան վաղուց էր ցանկանում խանում Խազալին: Թառի վրա պառկած ժամանակ, երբ գոմի լուերը ծակոտում էին մեջքը և թրքոտ ձեռքը քսում էր, քորում նույն եռանդով, ինչպես որ քորում էր գոմեշի մեջքը, երդիկից ներս ընկնող շողի պես մի միտք փայլում էր նրա խաղաղ ուղեղում: Վատ չէր լինի, եթե խանում Խազալը իր հետ լիներ: Եվ բավական ժամանակ անցավ, մինչև որ սերը ափերից դուրս եկավ, և սիրո ալիքը հասավ խանում Խազալին:

30 Գարնան վերջն էր: Ավո բիձան գոմեշներն էր լողացնում, իսկ խանում Խազալը գետի մոտ, բամբակի արտն էր սեյրափացնում: Հավատո՞ւմ եք, երկուան էլ կարմրեցին, երբ Ավո բիձան նախահարձակ եղավ և իր ցանկությունը հայտնեց թառի վրա միասին ապրելու: Խանում Խազալը կարմրեց, կոնակը դարձրեց նրան, բիրը խրեց հողի մեջ և հալվեց ամոթից, սիրո երջանկությունից հալվեց, ջրի մեջ ընկած շաքարի նման:

Եվ երբ օգոստոսին այդ ճանապարհով անցավ Անթանոս-

յանը և պատահմամբ լսեց, թե ինչպես էր քթի տակ խանում  
հազալը դնդնում եթովպացոց աշխարհից մի երգ, իսկույն կանգ  
առավ, մի պահ մտածեց, մոտեցավ խանում հազալին:

Ի՞նչ բարիքներ շտստացավ... Տուն, տեղ, անկողին, կթան  
ու պղնձե ամաններ: Ավո բիձան այդ իրիկուն գոմեշները քո-  
րելիս զգաց, որ իրոք, ինքն էլ, խանում հազալն էլ հազվա-  
գյուտ մնացորդներ են հեռավոր մի աշխարհից: Եկել է հարուստ  
հայրենակիցը, փնտրում է նրանց: Չկա՛, աշխարհում էլ եթով-  
պացի չկա: Իրենց ձեռքումն է այդ կորած ցեղին հարություն  
տալու միակ միջոցը: Նույն երեկոյան խանում հազալն ու Ավո  
բիձան համաձայնությունը տվին սեպտեմբերի 4-ին ամուս-  
նանալու գաղթական տեր Հուսիկ քահանայի խաշով: Մանա-  
վանդ, որ Անթանոսյանը արծաթ դրեց Ավո բիձայի բռան մեջ:

10

Ահա այդ զույգն էր, որ վաղ առավորության եկել ու նստել էր  
տափարակում, ամաչկոտ նայում էր, մերթ տեր Հուսիկին, մերթ  
Անթանոսյանին: Ավո բիձան ուզեց աշխատել, բայց նախ ավե-  
լորդ բահ չկար և ապա Անթանոսյանն արգիլեց.

— Կգա, կնեղանա, կասի՝ ինչո՞ւ թողիր...

Եվ Ավո բիձան փոշմանեց, որ հենց առաջին օրն իրեն վա-  
յելուչ և ծանր չպահեց: Իսկ հազալ խանումը կամացուկ և սի-  
րով, պառաված աղջկա սիրով, որի ամեն մի բջիջը հազար ան-  
գամ է թրթռացել մայրությամբ և որը վերջապես ոտքը դնում է  
երազած դարպասի քարին,— նրան հանդիմանեց:

20

Քարակույտի գլխին կանգնած արձանը բահը բարձրաց-  
նելը բավական չհամարելով, բարձր բռաց.

— Եկա՛ն, եկա՛ն...

Անթանոսյանը, որ մինչ այդ տեր Հուսիկին պատմում էր,  
թե ինչպես Ալաշկերտի հովտում, մի գյուղում ինքը գտել է  
եկեղեցու ամբողջ սարք ու կարգը հորի մեջ թաղած, ինչպես է  
հանել իրերը,— հանկարծ բանվորի կանչին ծլունգ ելավ ու  
կանչեց.

30

— Լա՛րով, Լա՛րով...

Տեր Հուսիկն էլ վեր կացավ, փեշերից փոշին թափ տվեց,  
գդակն ուղղեց:

Կառքերը մոտեցան: Առաջին իջնողը Հովնաթան Մարչն  
էր, որ մոտ վազեց, տեսավ փորվածքը, սեղմեց Անթանոսյանի

77

ձեռքը, կռացավ, տեր Հուսիկի աչքը համբուրեց: Բարեկամական այդ քայլն Անթանոսյանի սրտից իսպառ շքացրեց տաղավարում լուսացրած գիշերը, երբ Մարչը ծանր խոսքեր էր ասում...

— Ամեն ինչ պատրաստ կը տեսնեմ, պատվելի հյուրեր,— դարձավ Մարչը իր հետ եկողներին:

— Ամեն ինչ պատրաստ կը տեսնեմ, պատվելի հյուրեր,—

10 — Ահա մի զույգ տատրակի:— Անթանոսյանը ձեռքը մեկնեց Ավո բիճայի և խազալ խանումի կողմը: Տատրակները ոտքի ելան, խոնարհ գլուխ տվին: Ճիշտ է, օրիորդ Կատյան քմծիծաղ տվավ, իսկ Գրիգոր Լեոնականն իսկույն նկատեց, որ Ավո բիճան զինվորական ծառայության համար անպետք է, սակայն Հովնաթան Մարչը անտես առնելով Կատյայի քմծիծաղը, մոտեցավ և սեղմեց երկուսի ձեռքը:

Նախքան հիմնադրման անցնելը Հովնաթան Մարչը մյուսների հետ հեռացավ՝ տափարակը տեսնելու և հյուրերին ցույց տալու, թե որտեղ պիտի լինի նոր Եթովպիո գրոսավայրը, որ կողմն են նայելու քաղաքի մայր դռները, բարձր աշտարակը, որի գլխին ամեն գիշեր մեծ խարույկ պիտի վառվի:

20 Գրիգոր Լեոնականը շատ կարևոր նկատողություններ էր անում քաղաքի պաշտպանության համար:

— Այս թմբերը չպիտի քանդել: Սրանք բնական մարտկոցներ են... Տների հարավ-արևմտյան պատերը մի քիչ ավելի հաստ պիտի անել, ամուր կրաշաղախից:

Թժիշկ Երանոսը կլիման շատ առողջ գտավ:

— Ո՛չ թե քաղաք, այլ կուրորտ պիտի լինի նոր Եթովպիան: Այս օդը, այս...

30 Թժիշկն ուզում էր ասել այս ջուրը, բայց շուրջը ցամաք տեսնելով, բառը թքի հետ կուլ տվավ: Սակայն օրիորդ Կատյան հասկացավ և ջուր ուզեց.

— Երանո՛ս, ծարավ եմ...

Եվ այդ այն ժամանակ, երբ Մարչն ու Լեոնականը խոսում էին քաղաքի բնակիչներին հենց մանկությունից զենքի վարժեցնելու մասին, երբ Մարչը, օգը գրկելով, ուզում էր ցույց տա, թե ապագա պարիսպներն ինչպես պիտի օղակեն նոր Եթով-

պիան: Իսկ Կատյան ծծկեր երեխայի պես իր ասածն էր ուզում:  
Մարչը լսեց այդ:

— Դառնանք, կբավե, մանավանդ, որ օրիորդն ալ շուր կուզե: Տարի մը հետո ձեր կեցած տեղը պիտի կարգադրեմ ջրի ծորակ կախել...

Գարձին Հովնաթան Մարչը բաժանվեց մյուսներից, մոտեցավ ծանոթ քարին, շրջեց քարը և վերցրեց թղթի այն կտորը, որ պահ էր տվել առաջին այցելության ժամանակ, երբ որպես նոր Պետրոս Մեծ մտքում դրեց տափարակի վրա կառուցելու սպիտակ շենքերով նոր Եթովպիան:

10

Ջարմանալի անակնկալ կամ արվելի ճիշտ հրաշք պատահեց, երբ Հովնաթան Մարչը քլունգը վերցրեց մի քիչ փորելու քաղաքի հիմքը, որից հետո մյուսները պիտի նույնը կատարեին և դարսած քարերի վրա արդեն պատրաստ կրաշաղախը լցնեին: Սպիտակ ձեռնոցները հագին, տոնական տարազով Մարչը, երբ մի քանի անգամ քլունգով զարկեց և հող թափեց մաքուր սրբած կոշիկներին, քլունգը զնգաց, դիպավ մի կարծր բանի:

Բանվորներից մեկը մոտեցավ, քլունգն առավ: Եվ ի՞նչ... Հողի միջից դուրս հանեցին ժանգոտած, լայնաբերան մի թուր, առանց պատյանի: Թուրըն էլ միաբերան բացականչեցին, մեկը ա՛հ, մյուսը՝ վա՛հ, օրիորդ Կատյան՝ օ՛յ: Գրիգոր Լեոնականը թռավ փոսի մեջ, մոտ վազեց և մի րոպե զննելուց հետո, հայտարարեց.

20

— Հետևակ զինվորի թուր է, երևի տասներեքերորդ դարուց...

Բանվորներից նա, որ հանել էր թուրը, իր կարծիքը հայտնեց այն մասին, թե երևի եզիդ շոբանների փշացած թուրն է, մոռացել են կամ դիտամաբ ծածկել են հողի տակ: Սակայն Լեոնականն այնպես նայեց նրան, որ մշակը բարվոք համարեց փորելը շարունակել:

30

Գտնված թուրը վերադարձին ոչ միայն նոր վեճի առարկա եղավ Գետադարձի և Լեոնականի մեջ, որից առաջինը պընդում էր, թե տասներեքերորդ դարում թրերը տափակ ծայրով էին, — այլև իմաստ տվավ, մի առանձին խորհրդավորություն սեպտեմբերի 4-ի տոնին: Թե ինչ եղավ այդ թուրը, այնպես էլ

79

չիմացվեց, սակայն այդ օրն ամենքն էլ աշխատում էին գեթ մի պահ բռնել նրա կոթից: Իսկ ամենքից ավելի թուրը Մարշի ձեռքին էր, երբ նա հիմնադրման ճառն էր ասում, նոր Եթովպիո գովքը:

— Եվ երբ ծաղկի, աճի նոր Եթովպիան, ապագա սերունդը ծաղկեփնջերով, դրոշներով, տավիղի ու ծնծղայի նվագներով պիտի գա այս պատին ծունր դնելու և ըսելու, որ այստեղ կանգնեցին մեր պապերը և հիմնեցին նոր Եթովպիան...

Գրիգոր Լեոնականը խոսեց կարճ և ազդու.

10 — նոր Եթովպիան այս թուրն է: Թուրը գտնվեց գետնի տակ, ուր մնացել էր բազում դարեր: Մնվում է, ոտքի է կանգնում մի հին քաղաք: Կեցցե՛ նոր Եթովպիան...

Գետադարձը փղձկաց: Միպմիտ ծերունին ուզում էր այստեղ էլ, երբ արևը սառել էր զարմանքից և հանդիսատես էր, ուզում էր քաղվածքներ վերհիշել, ապացուցելու, որ այս տափարակում եղել է այսինչ իշխանի հիմնած քաղաքը: Մի քանի բառ թոթովեց, փղձկաց:

Անթանոսյանը կրակոտ խոսեց: Նույնիսկ Ավո բիձան մի քանի քայլ արեց, մոտեցավ: Եվ երբ նա աչքն առանց հեռացնելու  
20 Անթանոսյանի բերանից, նայում էր, ասես ուզում էր տեսնել, թե ի՞նչպես են բառերը թռնում նրա բերանից,— երբ Ավո բիձան նայում էր այդպես, օրիորդ Կատյան նրա շորերից եկող կծածահոտից քիթը բռնեց, մի քիչ հեռացավ: Իսկ Անթանոսյանը խոսում էր, Կուլիսը վեր բռնած, շարքի մեջ կանգնած զինվորի պես, պատվի առնելու պատրաստ: Գիտե՞ր նա, որ վերջին անգամն է ճառում, գիտե՞ր նա, որ էլ երբեք արևն ակնապիշ չի լսելու նրա ճառը:

Ամենից սրտառուլը շի թաղելն էր: Մարշը թղթի կտորը (այն, որ հանեց քարի տակից) ձգեց շի մեջ և շիշը վեր բարձրացնելով, որպես սկիհ, մի քանի խոսք ևս ասաց և շիշը թաղեց հողում: Ի՞նչ էր գրած թղթի վրա: Եվ ոչ ոք, ոչ ոք չիմացավ, իրեն՝ Հովնաթան Մարշից բացի: Մի մարդ է մեռնում, շատ մտերիմ մարդ, ուզում է խոսել, վերջին մտքերը հայտնել, լեզուն չի դառնում, մտքերը մնում են գանգի խոռոչում հավիտյան փակված: Այդպես էլ եղավ շի մեջ պահած թուղթը:

Հիմնադրումը վերջացավ: Բանվորները նվեր ստացան մի

քանի արծաթ: նրանցից մեկը փորձեց ասելու (այդ նա էր, որ քարի գլխին արձան էր), որ քիչ է վճարում, բայց Անթանոսյանը վրա պրծավ, մշակը լռեց:

Տեր Հուսիկը կատարեց երկու տատրակի, զույգ եթովպացիների, նոր Եթովպիո անդրանիկ բնակիչների, խանում հաղալի և Ավո բիձայի պսակի հանդեսը: Ինչպե՞ս էին կոացել, իսկ տեր Հուսիկը կարողում էր Ավետարանը, նրանց գլուխներն իրար մոտեցնում, մերթ հեռացնում: Հալվում էր, շաքարի պես հալվում էր խանում հաղալը, երբ ուսը դիպչում էր Ավո բիձայի ուսին:

10

Եվ հենց պսակադրության ժամին, երբ նրանք գլուխները մոտեցրել էին իրար, երբ Ավո բիձան աշխատում էր շարժվել, որ շտեմնեն կաղ ոտքը,— հենց այդ ժամին Հովնաթան Մարչը մի բուռ արծաթ ու պղնձե դրամ թափեց նրանց գլխին: Իսկ Պետրոս Գետադարձը հուզմունքից բացականչեց.

— Տեղ ոսկի տեղայր ի փեսայության Արտաշիսի,

— Տեղայր մարգարիտ ի հարսնության Սաթինկան...

Հովնաթան Մարչը աչքը շէր հեռացնում ամուսնացող զույգից: Նրա՞նց մասին էր մտածում, թե՞ աչքի առաջ ուրիշ զույգ էր, մեկ, երկու, տասը զույգ, որոնք գալիս էին, խոնարհվում, ինչպես այս զույգը և ներս մտնում նոր Եթովպիո մայր դռներին: Ժպտաց, Հովնաթան Մարչը ժպտաց: Ահա մի զույգ էլ, ոսկեգանգուր խոպոպիկներով կինը և ինքը: Հետո ժպիտն անցավ, խեղճացավ դեմքը: Ինչո՞ւ մի ուրիշը եկավ, հրեց իրեն ու տեղը գրավեց:

20

Վերադարձին կառքերն ավելի դանդաղ էին գնում, որովհետև բեռը ծանր էր: Ավելացել էին տեր Հուսիկն ու Անթանոսյանը:

Ամենից ուշ, հեռացան դեպի մոտակա գյուղը, դեպի գոմի թառը, երկու երջանիկ եթովպացի՝ խանում հաղալն ու Ավո բիձան...

30

## 9

Տարվա տասներկու ամիսը հաճախ հիշեցնում են ժամացույց, որի սլաքն անընդհատ մի թվից մյուսն է անցնում, անվերջ պտույտ անում: Հունվար՝ մե՛կ, փետրվար՝ երկու՛ և դեկ-

81

տեմբերին խփում է տասներկուերորդ ժամը: Այդպես անցան ամիսներ, և սլաքը երբեք կանգ չառավ:

Ո՞ր մնացին նրանք, ի՞նչ պատահեց պայծառ այն օրից հետո, երբ Հովնաթան Մարչը հիմք դրեց նոր Եթովպիային, ու հիմքը փորելիս դուրս եկավ լայներախ թուրը: Ծա՛նր, շատ ծանր դեպքեր եղան այն օրից հետո, և այնքան քիչ հիշողություն մնաց, վերջն այնպես ողբերգական եղավ:

10 Ընթերցո՛ղ, հիշո՞ւմ ես այն կածանները, որոնց հասան Մարչն ու Անթանոսյանը եղեգնուտն անցնելուց հետո: Բաժանվում էին իրարից կածանները, ամեն մեկը մի ուղղությամբ էր գնում, մեկն անհետ կորչում էր, հալվելով տափարակում, մյուսը՝ խառնվում էր մի լայն ճանապարհի, երրորդը՝ կախվում խոյիտրատի վրա:

Այդպես էլ նրանց հետ պատահեց, երանելի այն հոգիների հետ, որոնք ոտքի էին ուզում կանգնեցնել մեռած մի քաղաք և քաղաքը լեցնել եթովպական ու փղշտական ազնվարյուն ցեղով:

20 Դժվար է գրել վախճանի մասին: Տեղեկությունները կցկրտուր են, շատերը ստուգման կարոտ: Աշխարհի երեսին չկա՛ նոր Եթովպիան: Այդ առասպել էր, և այն ուղեղը, որը հղացավ այդ ցնորքը, մնաց, որպեսզի զգա ոչ միայն մեռած քաղաքի, այլև... կորցրած սիրո, նոր Եթովպիո հիմնադրման պատճառով կորցրած սիրո կսկիծը:

30 Տեղեկությունները կցկտուր են: Ի՞նչ կարող է ասել հյուրանոցի սպասավորը, թե ինչո՞ւ սեպտեմբեր ամսվա ընթացքում շատ քիչ անգամ էր սենյակից դուրս գալիս Հովնաթան Մարչը, անվերջ հարցնում էր ինչ-որ նամակի մասին, որ պիտի գար ու չէր գալիս: Երբեմն երևում էր Անթանոսյանը, նիհար, դիղնած երեսով, մազերը՝ կեղտոտ, մազերը գլխին բիզ-բիզ, ստվերի նման էր անցնում պատի տակով, երկուսով փակվում էին սենյակում և խոսում, անվերջ խոսում:

Մի օր էլ Հովնաթան Մարչը հաշիվ ուզեց: Երբ իրերը դարսել էին կառքի մեջ, Անթանոսյան Հմայակը տատանվեց մի պահ՝ նստի՞, թե՞ ոչ: Այդ օրը զարմանալի ուրախ էր Հովնաթան Մարչը:

— Նոր տարուն հոս եմ: Հետս կը բերեմ ինժինեորներ,

տեխնիքներ և բոլոր շինափայտը... Աղվոր քաղաք պիտի ըլլա նոր Եթովպիան:

Սրտառուչ եղավ հրաժեշտը: Նույնիսկ բժիշկ Երանոսն արտասովեց, երբ Հովնաթան Մարչը մեկնեց իր ձեռքը: Եվ փոխանակ մեկնած ձեռքն ընդունելու, բժիշկ Երանոսը շրթունքները մոտեցրեց ու նրանք համբուրվեցին: Պեսորոս Գետադարձը դռան մոտ կանգնած հեկեկում էր:

— Վերադարձիդ կսպասենք:

— Անհոգ եղեք: Երեք ամսեն նորեն հոս եմ:

Գրիգոր Լեոնականն ամենայն սառնասրտությամբ վերջին 10 բարևը տվավ և Հովնաթան Մարչից խնդրեց վերադարձին հետը բերելու Ցեյսի ընտիր հեռադիտակ: Բացի այդ, Գրիգոր Լեոնականը նրան ծովափնյա մի քաղաքում ապրող իր ծանոթի հասցեն տվեց:

Իսկ Անթանոսյանը լուռ ու մունջ էր: Եվ այն վայրկյանին, երբ նա տատանվում էր նստի՞ կառքը, թե ոչ, Մարչը նրան գրկեց: Երկու անձնվեր բարեկամներ ջերմ, շատ ջերմ համբուրվեցին: Եվ երբ կառքը շարժվեց դեպի կայարան, բոլորն էլ տեսան, թե ի՞նչպես Անթանոսյանը կառքի հետևից ոտով զնաց: Նրանք նորից հանդիպեցի՞ն կայարանում: Մարչը տեսա՞վ, թե 20 ինչպես փոշի կուլ տալով կառքի հետևից վազում էր Անթանոսյանը, ստույգ խոսք դժվար է ասել:

Կարելի էր և այստեղ վերջացնել պատմությունը, վերջին համբույրը համարելով նրանց գործի վախճանը, եթե դեպքերն ուրիշ ընթացք չստանային:

Ամիսներ անցան: Ձմեռն եկավ, ձյուն բերեց, բուք ու սառնամանիք, և ոչ մի լուր Հովնաթան Մարչից, ոչ մի նամակ: Հաշի Խարաք գյուղից Անթանոսյանը երբեմն քաղաք էր գալիս, փողոցում պատահում բժիշկ Երանոսին կամ Գետադարձին և պատահելիս հարցնում, թե ի՞նչ գիտեն: 30

Մի օր էլ բժիշկ Երանոսը զայրացավ և ծանր, անպատվաբեր խոսք ասաց Անթանոսյանի երեսին: Հմայակը նրան մոտեցել էր այն ժամանակ, երբ բժիշկը մի կնոջ հետ անցնում էր փողոցով: Անթանոսյանը խելագարի տպավորություն էր թողել կնոջ վրա, կինը վախեցել, մի քիչ հետ էր քաշվել:

Գրիգոր Լեոնականից նա տեղեկացավ, որ Մարչը Արխա-  
զիայում թե Աշարիայում գնել է գորգեր, բարձել նավն ու ճա-  
նապարհովել: Եթե այս լուրն ստույգ համարենք (իսկ Լեոնակա-  
նը կարողաց ծովափնյա քաղաքում ապրող իր հին ընկերոջ նա-  
մակն այդ մասին),— ուրեմն կարող ենք ասել, որ Անթանոս-  
յանի համար վախճանը ոչ թե վերջին համրույրն եղավ, այլ  
գորգեր գնելու լուրը: Մնացածը Անթանոսյանը երբեք չի մացավ:

Ի՞նչ էր այդ մնացածը: Մի լուր Փղշտական ծիծեռնակ  
թերթում և մի հայտարարություն, լուրը սպվելուց մի ամիս  
10 հետո, զետեղված Եթովպական մամուլ թերթում:

Լուրը (Փղշտակ. ծիծեռնակ, № 113, 3-րդ ելուստ).—

— Դեկտեմբերի 8-ին Մարինե Քրաշյան և մեծահարգ  
Անդրեաս Բալիբյան ամուսնացյալք: Մեր խնդակցությունները  
հայրենակից զույգին:

Մարինե Քրաշյան, ոսկեզանգուր խոպոպիկներով կին, որի  
նամակը հիշո՞ւմ եք: Մարինե Քրաշյան, որ թև էր տալիս նրան  
և որի մասին ամենից շատ մտածեց Հովնաթան Մարչը սեպտեմ-  
բերի 4-ին: Զույգեր, մեկ, երկու, տասը եթովպական տատ-  
րակներ:

20 Այժմ վարագույրը բաց է, և դեպքերը կարծեք շարակցում  
են իրար: Հասկանալի է դառնում, թե ինչու այն երեկոյան լալիս  
էր Հովնաթան Մարչը, երբ սպասավորը, մաքուր սրբած կո-  
շիկները ձեռքին, ներս մտավ և մտքում ասաց.

— Կնիկը մեռել է...

Իսկ մենք նրան տկարամիտ ոմն էինք համարում:

Բուենոս Այրեսում կա մի ճաշարան, որի ցուցանակի վրա  
խոշոր տառերով գրված է.

ԿՈՌԻՆԿ ՈՒՍՏԻՐ ԿՈՒԳԱՍ...

Գուցե ուրիշ առավելություններ ունի այդ ճաշարանը, օրի-  
30 նակ՝ համեղ խորտիկներ, եթովպական հաբիշտա, խոհաբարը  
հայրենիքեն կանչված է կամ ժամադրավայրն է եթովպացիներ-  
ու և փղշտացիներու, ինչպես ասված է եթովպական մամուլ  
թերթում տպած հայտարարության մեջ, սակայն այդ ճաշարա-  
նի ամենից կարևորը և մեր պատմության հետ անմիջապես

կապ ունեցողը այն բարեկամական հավաքություններն են, որ տեղի են ունենում ամեն կիրակի:

Հավաքվում են մի առանձին սենյակ, խմում են արսեճա, երգում են երգեր ու կես գիշերին հյուրերից մեկը վեր է կենում, երկյուղածությամբ մոտենում փոքրիկ պահարանին, հանում այնտեղից

— Արաքսի ջուրը և Նոր Եթովպիո հողը...

Հաստատապես պնդողներ կան, որ այդ մեկը ոչ այլ ոք է, եթե ոչ Հովնաթան Մարչը, նույն ինքը Նոր Եթովպիո հիմնադիրը: Արսենտից թուլանում է միտքը, պղտորվում են աչքերը, հիշողությունը տարուբեր է լինում և որպես կինոյի կտրված ժապավեն, դեպքերը հաջորդում են իրար, հաճախ անկապ ու անհիմաստ: Թվում է, թե փայլում է ճողը, լույս է ելնում և խոսում եթովպական բարբառով: Մեքենան դառնում է, ժապավենը պտույտ է տալիս, և հիշողության վրա, որպես էկրանի քաթան, անցած տարիները նետում են ցաք ու ցրիվ նկարներ:

Ահա կածանը, որ գնալով բարակեց, անհետացավ տափարակում:

Հյուրերը ցրվում են, մնում է Հովնաթան Մարչը, գլուխը մի կողմի վրա թեքած: Նայում է փողոցին, լուսավոր փողոցում ոչինչ չի տեսնում՝ ո՛չ տներ, ո՛չ լապտերներ, ո՛չ շքեղ ցուցափեղկեր: Դիմացի լապտերը խնդում է, լույս է ցուլում ցուցանակի գրերի վրա, և ցուցանակի գրերն աղմկահույզ այդ քաղաքում ասես իրար հարցնում են.

— Կոունկ, ուստի՞ կուգաս...

Ո՛ւր մնաց Նոր Եթովպիան, այն տափարակը, որ ուշաթափ ընկած մարդու պես ջրի կարիք ուներ՝ ոտքի կանգնելու: Ո՛ւր մնաց Անթանոսյան Հմայակը: Ընթերցող, եթե առաջին հարցին հեշտ է պատասխանել, երկրորդ հարցի մասին մութ են, շատ մութ են իրար հակասող՝ Հաջի խարաբ գյուղի բնակիչների պատմածները և քաղաքային հիվանդանոցի հերթապահ քրոջ հիշողությունները:

Քրեական հետախուզման բաժնի ներկայացուցիչն իզուր էր հարցաքննում Հաջի խարաբ գյուղի բնակիչներին:

— Վարժապետին շորս օր էր չէինք տեսել...

— Հիվանդ էր, տնքում էր, իրան-իրան խոսում...

— Գնացի մոտը, ասացի՝ դարիբ մարդ է, օգնական շու-  
նի: Հարցրի՝ վարժապետ, ո՞րտեղդ է ցավում. ձեռքը սրտին  
տարավ: Աչքերն էլ մի տեսակ շաղված էին, կասես՝ գծված  
լիներ: Բայց խոսելը լավ էր, հասկացնում էր:

— Իսկ վերարկուն ո՞վ է գտել, — հարցրեց քննիչը, արձա-  
նագրելով բոլոր ցուցմունքները:

— Անտոնի տղան: Գոմեշներն ընկել էին շամբուտը, գնում  
է հանի, տեսնում է վարժապետի վերարկուն: Ամենքս էլ իմա-  
ցանք...

10 Երկու ամիս գործը այդպես էլ թերի մնաց: Անթանոսյանը  
չկար, և որովհետև ոչ ոք հարցմունք չէր անում, չէր հետաքրք-  
րվում, հետախուզական բաժնումն էլ թղթերը մնացին մի  
ամիս ընթացքի մեջ, հետո գործավարը կցեց զանազան գործին,  
շարտեց պահարանի մի անկյունը:

Քաղաքային հիվանդանոցի հերթապահ ջուլյրն էլ մինչև  
հիմա դժվար է կարողանում որոշել, թե ինչո՞ւ իր հիվանդը,  
այն հիվանդը, որ երկար ու բարակ վիզ ուներ, և որի մասին  
բժիշկը հայտնել էր, թե արևադարձային շերմախտ ունի, — վեր  
էր կենում անկողնից, և եթե դահլիճում ջուլյր չէր լինում,  
20 տաքությունից այրվող ճակատը հպում էր պատուհանի ապա-  
կուն և նայում հեռուն:

Ու ջուլյրը միշտ զոռով էր նրան հետ բերում, պառկեց-  
նում անկողնում: Հիվանդը զառանցում էր, ինչ-որ մարդկանց  
էր կանչում:

Մի օր էլ, հերթը փոխվելուց հետո, նույն մահճակալի վրա  
հերթապահ ջուլյրը ուրիշ հիվանդի տեսավ:

— Էն մեռա՞վ, — ասաց ջուլյրը, քնատ աչքերը տրորելով,  
հանդերձը հանեց և բանալիները հանձնեց նոր հերթապահին:

Այսպես էլ մոռացվեց, չքացավ: Ու մի կածան էլ հասավ,  
30 կախվեց խորխորատի վրա, որպես անլուծելի հանելուկ:

Կա մի փոքրիկ սենյակ բժֆակի շենքում: Պատերի մոտ  
պահարաններ, որոնց դարակների վրա շարված են մեծ ու  
փոքր անոթներ, բոլորն էլ պինդ փակված: Անոթների մեջ զա-  
նազան մարդկանց, անտերունչ մեռած մարդկանց մարմնի  
մասերն են, սպիտակ հեղուկի մեջ: Ահա մի ուղեղ, ծալվածալ  
ծալքերով: Նստել է անոթի հատակին տարիներ և դեռ շատ տա-

րիններ էլ այդպես կմնա, որովհետև անոթը ամուր է փակած: Ուղեղը մի բանով աչքի է ընկել, մի կարմիր բիծ կա, կամ ծալքերն են ծուռ:

Մոտենում են տղաներ և աղջիկներ, նստոտում են աթոռներին, դասախոսը պատմում է ուղեղի կազմության մասին, ցույց է տալիս, թե ինչո՞ւ այս ուռուցքը կա, ինչո՞ւ ծալքերը ծուռ են: Ունկնդիրները գրում են ու նայում անոթի հատակին ընկած ուղեղին: Ոչ ոք հարց չի տալիս, թե ո՞ւմ գանգի մեջ էր ուղեղը: Եվ եթե մեկն ու մեկը կարդում է անոթին փակցված թուղթը, այդ էլ հենց այնպես, ի միջի այլոց...

10

Ընթերցող, կա այդպիսի մի պահարան, ուր անոթների մեջ սրտեր են, մարդկանց սրտեր, մեծ ու փոքր, կարմիր, ճարպոտ ու անճարպ: Եվ այդ բազմաթիվ անոթների մեջ կա մեկը, որի հատակին ընկած է մի սիրտ: Անոթին փակցրած է այսպիսի մի թուղթ.

ԱԶԳ.—ԱՆԹԱՆՈՍՅԱՆ  
ԱՆ.—ՉՄԱՅԱԿ  
COR CORDIS  
CAUSA. VITIUM CORDIS  
ՔԱՂ. ՉԻՎԱՆԴԱՆՈՅ

20

Բժֆակի Կատյան, իհարկե, տեսավ այդ անոթը, աչքերը մի վայրկյան կկոցեց, միտքը լարեց.

— Անթանոսյան... Մանոթ ազգանունն է...

Եվ չհիշեց, Կատյան էլ մոռացավ նրան, որ սեպտեմբերի 4-ին, երկու քայլի վրա կանգնած, երանության երջանիկ ժամեր էր ապրում:

Իսկ ո՞ւր է նոր Եթովպիան:

Չարմանալի դեպքեր կատարվեցին, երբ տարին, որպես ժամացույցի սլաք, երկու շրջան արեց և նորից հասավ իննեորորդ ամսին:

30

Չիչո՞ւմ եք, մարդիկ կային տափարակում այն առավոտ, երբ Հաջի Խարաբ գյուղից մեկը Անթանոսյանին ասաց, թե

— Վարժապետ, հողերդ...

87

Մինչև ժամանակը երկու շրջան արեց, եկան շափեցին և բարակ առուններով ջուրը հասավ տափարակին: Հետո հավաքվեցին մշեցիք, սուրմալվեցիք, կաղզվանցիք ու խնուցիք, թափվեցին ամեն կողմից, հարյուրավոր ձեռքեր կռացան տափարակի վրա, քարերը ջոկեցին, փոքրիկ հողաշեն խրճիթներ շինեցին, խրճիթների մոտ՝ հավաքներ, այժ ու ոչխար բերեցին և խոպան դաշտի վրա, առվի եզերքին տնկեցին ծառեր: Մըրջուններ էին, փորեցին, սարքեցին և գյուղը կռվեց նորապատ:

10 Ն 9-րդ հողամասի տերը շատ ուրախացավ, երբ իր տան հիմքի մի մասը փորված տեսավ: Բայց որովհետև հիմքը շատ էր երկար, ավելի լավ համարեց փորվածքի մի մասը դարձնել պետքարան: Իջավ քարերը հանելու, և քլունգի տակ ջարդվեց այն շիշը, որի մեջ Հովնաթան Մարշը դրել էր իր սիրտը, գրել՝ սրտի խոսքեր: Հողամասի տերը շփ փշրանքների վրա ուշք էլ չդարձրեց: Միևնույն է, նրանք պիտի մնային պետքարանում:

Ավո բիձա և հազալ խանում... Նորապատի վաթսուն ծխից մեկը, ծուփ երեք շնչից: Ավո բիձան իր այծերի առաջ խոտ էր լցնում և շոյում հորթուկի մեջքը, որ պիտի մեծանար ու կով դառնար: Խազալ խանումի գրկին կարմրաթուշ մանուկն էր, 20 ծխի երրորդ շունչը: Մի կածան էլ միացել էր այն լայն ճանապարհին:

Հիշո՞ւմ ես, Հովնաթան Մարշ... Զարմանում էիր և հարցնում, թե ի՞նչպես է, որ շորացած, տգեղ ու կեղտոտ մոր արգանդում սնունդ է առնում և ծնվում ոսկեգանգուր մի մանուկ...

# Կ Ա Ր Մ Ր Ա Ք Ա Ր

Վ Ե Գ

(Պահպանված հատվածներ)

1

Կարմրաքար գյուղի մասին առաջին անգամ հիշատակում է գրենադիր գնդի պետ Երմոլով 2-րդը իր այն ուպորտում, որ 1823 թ. ապրիլ 17-ին ներկայացրել է Կովկասյան մարզի պետ՝ ինֆանտերիայի գեներալ Ալեքսեյ Երմոլովին: Ըստ այդ ուպորտի այն ժամանակ Կարմրաքարն ունի 19 ծուխ, որոնցից հարկատու չէին միայն 3 ծուխ: Ոչ ռազմական և ոչ էլ տնտեսական նշանակություն չտալով, գնդապետը Կարմրաքարը համարել էր ոչ որպես գյուղ և դիմացը նշանակել՝ «մշտական ձմեռանոց»: Երևի այդ ականարկ էր այն մասին, որ Կարմրաքարը շրջապատված էր անտառով, զուրկ էր հաղորդակցության համար միջոցներից և միայն երկու բարակ կածանով էր կապվում արտաքին աշխարհի հետ:

10

Այդ թվականից մի քանի տարի հետո նույն վայրով անցել է և մի վարդապետ, որի ճանապարհորդական հիշողությունների մեջ կարելի է գտնել Կարմրաքարի անունը: Այդ գյուղի մասին նա գրել է հետևյալը. «Խորաձոր անդունդ և դաշտաձև հովիտ, զարդարյալ ծաղկոք և առատ բուսոք: Գարունն աստանոր բերն զնմանությունն Եղեմի...»: Ապա հիշատակում է գյուղից վերև ընկած լեռների կլոր պարը, որի ամենից բարձր գագաթին կա սպիտակ լիճ՝ որպես հսկա մատանու աղամանդ: Նույն գրքի մի այլ գլխում անդնդախոր ձորերում ընկած գյու-

20

89

ղերի նիստ ու կացը նկարագրելով, հեղինակը մի նախադասու-  
թյուն է ասում Կարմրաքարի կանանց մասին, թե իբր ամոթ-  
խած էին, որպես անտառի պախրա:

10 Թե Երմուղով 2-րդի և թե հոգևոր հոր գրածը հայտնի էր  
Կարմրաքարի ծխատեր քահանա Տեր Գևորգին, որին գյուղում  
կոչում էին Տեր Նորընծա: Քահանան շատ անգամ էր ասել, որ  
ինքն իր աչքով կարդացել է վանքի խորանում պահած մի գիրք,  
գրված ոսկե տառերով, ջեյրանի կաշվի վրա, ուր հիմից ավանդ-  
վում է աշխարհի երեսին եղած և կորած բոլոր ազգերի պատ-  
մությունը, թագավորների գահ բարձրանալը, քաղաքների կոր-  
ծանումը և այլն: Եվ իբր թե այդ գրքի մեջ գրված է, որ Կար-  
մրաքարը «աթոռանիստ և բերդաքաղաք» վայր է եղել, որ գյու-  
ղի այժմյան եկեղեցին կառուցված է մի հին տաճարի ավի-  
րակների վրա: Նա նույնիսկ ասում էր, որ այժմյան եկեղեցու  
ամբիոնի քարերը շատ հնուց են, վրան փորագրություններ կան,  
որ ծածկված են բարակ սվաղով:

20 Տեր Նորընծայի ասելով՝ Կարմրաքարի ներկա բնիկները  
գաղթել են «Հագարացոց աշխարհից» դեռ այն ժամանակ, երբ  
լեզգիների թագավորությունն էր այն կողմերում: Իբր թե լեզ-  
գիների երկրում խառնակություն է սկսվում, այնտեղի «խա-  
շապաշտ ազգաբնակչությունը» զուլա է առնում և ցրիվ գալիս  
չորս կողմի վրա: Նրանց մի մասը գալիս է մի մեծ և վարար  
գետի դեմ առնում: Գետի ափին այնքան են սպասում, մինչև  
ջուրը բարակի: Շատ դառն տանջանք քաշելուց և կորուստ տա-  
լուց հետո, անցնում են գետը և նրա ափով շարունակում ճա-  
նապարհը, հանդիպում զուլալ մի գետակի, որ հանդարտ հո-  
սելով միանում է այն մեծ գետին: Հենց ջրախառնուտի մոտ  
խմում են գետի և գետակի ջրից, տեսնում, որ գետակի ջուրը  
քաղցրահամ է և որոշում՝ գետակի ընթացքը բռնած գնալ մին-  
չև ակունքին հասնելը: Իսկ հայտնի է, որ Մարցա ջրի ակունք-  
ները գտնվում են Կարմրաքարի հանդում:

30 — Ո՞ր կողմն է էդ հագարացու աշխարհը, տերտեր,—  
հարցնում էր Ավան ամին, եթե հանդիպում էր տերտերին  
Կարմրաքարի պատմությունն անելուց: Եվ որտեղ էլ լինե՞ր՝  
կնունքի նստած, թե հարսանքատանը, եկեղեցու գավթում՝  
պատի տակ շար ընկած, թե Բոլոր քարի մոտ, որ գյուղի հրա-

պարակն էր համարվում, և ուր այժմ էլ հավաքվում են գյուղացիք,— որտեղ էլ լինեիր, Տեր Նորընծան աչքերը պիտի խոժոռեր, ունքերն իրար տար և երեսը դարձնեիր Ավան ամուկողմը:

— Սկսվեց,— մտքում ասում էին մի քանիսը և հետաքրքիր լսում այն, ինչ շատ անգամ էին լսել:

— Ա՛, դե հերիք չի՞,— Ավան ամու վրա տրտնջում էր նրան հասակակից մեկը:

— Չէ՛, թող մի ինձ ասի, էդ ո՞ր կողմն է...

— Զաքաթալու թեմումը,— պատասխանում էր տերտերը: 10

Իսկ Ավան ամին ավելի էր տաքանում:

— Էդ ի՞նչ մարդիկ էին... էն լեն ու բոլ երկիրը թողես, գաս էս ապառաժին դեմ առնե՞ս... Չէ՛, տերտեր, իմ գլուխը չի մտնում, էստեղից էստեղ մարդ չի գա: Հենց իմ ասածն է, որ կա:

Իսկ Ավան ամու ասելով՝ Կարմրաքարի տեղը շատ առաջներում անանց անտառ է եղել և անտառի միջով, գետի ափով միայն մի նեղ արահետ: Ո՛չ բերդ է եղել, ո՛չ քաղաք և ոչ էլ տաճար: Հիմնադիրը մի գնչու է եղել, որն իր կնոջ և էշի հետ անցնելիս է լինում արահետով: Հանկարծ կնոջ ցավերը բռնում են, գնչուն խոսք է տալիս, որ եթե կինը տղա բերի, ինքը ձեռք է քաշելու թափառական կյանքից և հենց այդտեղ էլ տուն է շինելու: 20

— Չվանը ետ է տալիս, ծառից կապում... Կնիկն էլ գնում է ծառի շվաքարանում պառկում: Մինչև էշի փալան վեր ունելը, կնիկը մի տղա է բերում... էն օրից էլ էս գյուղն ստեղծվում է: Դե հաշիվդ ա՛ն...

Գյուղացիներից շատերն էին համամիտ Ավան ամու ասածներին:

— Խելքը գլխին մարդը չի գա էս քարի ու քուլի մեջ տունը շինի... էն է ոտքերը ջարդված բոշա պետք է լինի, որ էստեղ վեր ընկնի ու մեռնի... Թե չէ Կարմրաքարն ապրելու տեղ չի: 30

Այս խոսքն ասելուց, գրույցն հին օրերից դառնում էր առօրյայի շուրջը, և ամեն մարդ մի պատճառ էր բերում, թե ինչու Կարմրաքարում ապրելը դառն է:

— Տարին տասներկու ամիս քարի, քոլի հետ կոխ կենաս, մաճը բռնած է՛ս ցաքուտը վարես, է՛ն քարի տակ սերմ քցես, էլի ձմեռվա կիսին տաշտը ցամաք, պարկը դատարկ: Ես իմ Աստված, արանի թուրքերը որ շիհնեին, մեր օրը սև էր,— ասում էր Ունանը, որը ոչ միայն Կարմրաքարում, այլև շրջա- կա գյուղերում հայտնի էր որպես լավ մաճկալ:

10 Ինչքան էլ քարոտ և կոշտ լիներ հողը, ինչքան էլ տափը սարալանջ լիներ, Ունանը և ոչ մի ակոս ծուռ շէր տանի: Ակոսն ակոսի վրա շարում էր ու գետինը նախշում սև ցելի ուղիղ գծերով: Պատահում է, որ խոփը դեմ է առնում հողի տակ ծածկված քարի կամ փշի արմատին: Եզները հանկարծ ձգում են, խոփը թափով քարին է դիպչում, կտրատվում են փո- կերը, մաճկալն ընկնում է մաճի վրա և եթե մի տեղը շվնաս- վի, ատամները թափով իրար պիտի կպչեն, աչքերի առաջ մթնի: Իսկ Ունանի վարը միշտ առանց փորձանքի էր: Մա- ճից կախ ընկած, աչքը խոփի ծայրին, լուռ հետևում էր վարին և ճիշտ ժամանակին զգում, թե քար կա հողի տակ, փորձան- քը մոտենում է. իսկույն մաճը վեր էր հանում, կողքի թեքում, եզները քաշում էին և նորից խոփը խրում հողի մեջ:

20 Այդքան աշխատելուց հետո նրա մեկը երկու շէր դառ- նում: Ամեն ձմեռ Ունանը պարկերը շալակին գնում էր տափա- րակի թուրք գյուղերը, ճանանչ մարդկանցից ցորեն կամ գա- րի փոխ առնելու: Ամեն տարի այդ նույն պատմությունը կրը- կընվում էր: Ունանը խոսք էր տալիս, որ վերջին անգամն է մաճը բռնում, էլ երբեք վար չի անելու:

— Գնամ նոքար մտնեմ, սրանից տասնապատիկ լավ կապրեմ... Չկա՛, չկա՛, Կարմրաքարում ապրուստ չկա,— ասում էր նա, բայց հենց ձյունահալը վերջանում էր թե չէ, խո- նավությունն սկսում էր գոլորշիանալ, հողը փափկանում էր, մեղմանում էր, և Ունանը օրը մի քանի անգամ նայում էր սևին տվող գյուղի հանդերին,— ուր դեռ ձյունի կիտուկները մնում էին ձորերում ու փոսերի մեջ,— հողը տրորում էր կոշտ մատներով և մոտենում՝ ամբողջ ձմեռը ձյունի տակ ընկած արորի սարքը նայելու:

— Ասում ես թուրքերը որ շիհնեն... էլի նրանք են ձեռք բռնում,— վրա էր բերում մի ուրիշը,— ախր քա՛նի մին, քա՛-

նի մին... Մեր գյուղում էլ կա ձեռք բռնող... Սև լինի էն օրք, որ մարդ էդ ձեռքը բռնի: Լավ է երեսեքը տկլոր մնան, քան նրանց դուռը գնաս...

Բոլորն էլ լռելյայն հասկանում էին, թե խոսքն ո՞ւմ մասին է: Հասկանում էին և լռում: Ամեն մարդ իր մտքի հետևից էր ընկնում:

Բայց եթե գյուղի հիմնադրման մասին Ավան ամու և Տեր Նորընծայի վեճը համարյա ամեն տեղ կարող էր ծայր առնել, միայն լսող լիներ, Հիբանի որդիների մասին խոսք լինում էր միայն սակավաթիվ խմբակի մեջ, և այն էլ՝ եթե լսողները 10 յուրային էին: Օրինակ, եթե երևար Գողին՝ լերկ երեսով, դեմքի մաշկը ծալ-ծալ ու մանրիկ աչքերով Գողին, որ շատ քիչ էր խոսում և ինչ էլ ասեին, միայն ժպտում էր, աչքը հեռուն գցում, իբր թե չի լսում,— եթե Գողին երևար, մեկը պիտի զրույցը հաներ ակոսից, Ունանի մաճի պես թեք գցեր, մինչև Գողին հեռանար:

Եթե նա մոտենում էր Ունանի խոսքի վրա (իսկ Գողին այնքան աննկատ էր մոտենում, որ մի պահ չէին տեսնում, և տեսնելուց էլ խոսողը դժվարանում էր որոշել, թե նա որ խոսքի վրա եկավ),— այդ կարճիկ, թիկունքը լայն և ոսկորը պինդ 20 մարդը, որ ծանր արորն ակոսից այնքան հեշտ էր հանում,— Ունանը՝ խեղճանում էր, մի կողմի վրա քաշվում և ասում.

— Նստի՛, Գողի... Չես երևում... Ասում եմ էս տարվա աշունքավարը մի քիչ ետացավ:

Գողին քթի տակ ժպտում էր, հեռուն նայում և կամաց հեռանում: Իսկ Ունանը փշաքաղվում էր, մեջքն ավելի ամուր հենում Բոլոր քարին:

Բայց երբևէն Ավան ամու և Տեր Նորընծայի խոսակցությունը Կարմրաքարի առօրյայի մասին տաքանում էր, մանավանդ, եթե նստածների մեջ երիտասարդներ էին լինում, որոնք ավելի շուտ Ավան ամու հետ էին և պաշտպանում էին նրա խոսքը, թե Կարմրաքարն ապրելու տեղ չի: 30

Նրանք ավելի տաք էին խոսում:

— Տերտեր, հենց թող քո ասածը լինի. էն ժամանակ քանի ծովս կար մեր գյուղում:

Տեր Նորընծան դանդաղ պատասխանում էր.

— Ըստ շնչակրական մատենույս և իմ ասմունք գրի 19 ծուխ արքունի գյուղացի, որպես այհադդա ցուցակ... Նաև գյուղացվոց վայելման տակ գետնաբաժին հարյուրը հիսուն օրավար բարահիր հող... Մեր Յաքուտը, Երկայն տափերը, Քառասնաշուրը... Մի առ մի գրված և Կովկասու փոխարքայից հաստատված...

— Հիմա էլ հարյուրը տաս խարջ տվող տուն ունենք... էլի էն Յաքուտն է, էն Քառասնաշուրը... Դե Հիրանի տղորց արտերը բեր բաժին անենք, տես ո՞նց ենք կառավարվում...

10 — Այ որդի, հողը չի պատճառը... Ազգաբանության մեջ սեր, միաբանութուն չկա: Առաջվա լիութունն էլ չկա. ահա քեզ արմատ շարյաց: Թե չէ ինչ ես տակից և գլխից խոսում,— մի քիչ շարանալով ասում էր Տեր Նորընծան, ավելի արագ գլորում թագբեհի հատիկները:

— Տես ինչեր են խոսում... Մեր ժամանակն ո՛ւր... Հեզ էինք, որպես գառ,— մտածում էր քահանան և ապա թագբեհի հատիկները մեկ-մեկ իրար վրա դարսելով դանդաղ ավիացնում.

20 — Հիրանի հողերը բաժանը անես, ամենայն մի շնչի մին օրավար չի հասանի... Դորանով յարան չի սաղանա, ա՛յ օրհնյալ... Ազգաբանութունը թող հաշտարար ապրի, տես, թե ինչպես առատութուն լինի ամենայն մին բանի:

Իսկ երիտասարդն ավելի էր տաքանում:

— Էս քեզ միաբանությո՞ւն, տերտեր. բա որ մինը ձմեռը սխտորած ավելուկ էլ չի ճարում, որ փորը տաքացնի, մինն էլ գառան փլավ է ուտում, վրան էլ նուսն ջուր խմում, որ մարսի... Սրան ի՞նչ կասես:

Ավան ամին ժպտում էր, տեղը շարժվում և ավելի հարմար նստում:

30 — Այ թե հա՛... տերտեր,— և ժպիտը դառնում էր թեթև ծիծաղ, կապույտ աչքերը փոքրացնում էր, ավելի ալագ թարթում, ասես երիտասարդին աչքով էր անում, որ ավելին ասի:

— Էս էլ քու հագարացու աշխարհը չէ, որ լեզվակոխ անես... Ասի՛, էդ է, արևդ կծեմ... Թե մեր ծուրը դող լինի, էլի ձեզանից մի հույս կա... Մենք հեշ, զուր ենք հաց ուտում: Ի՞նչ ես ասում, Անդրի, իմաստուն մարդ ես:

Վերջին խոսքը Ավան ամին բարձրաձայն էր ասում, որովհետև ուղղում էր ջաղացպան Անդրուն, որի լսողութունը ծանր էր: Զաղացպանը բարձրահասակ էր ու նիհար: Նա ավելի բարձր էր երևում այն նեղ ու հնամաշ քուրքի մեջ, որ ամառ, ձմեռ մրայից չէր հանում: Ալրոտ փափախն այնքան խոր էր կոխում, որ ականջի բլթակներն անգամ չէին երևում: Փափախի տակից թաղիքի կտորների նման կախվել էին անվա, զրրտինքից իրար կպած ու կեղտոտ մազերի փնջերը: Նրա փափախը, դեմքը, քուրքը, տրեխները, ինքն ամբողջովին՝ ալրաթաթախ էր: Փողոցով անցնողը հեռվից էլ կարող էր Քոլոր քարի շուրջը նստածների սև ու դեղնավուն շոխանների մեջ ջոկել Անդրու ալրոտ քուրքը:

10

Նա սակավ էր մասնակցում այդ գրույցներին: Զաղացը Մարցա ջրի մյուս ափին էր, գյուղի դիմաց, և եթե գյուղամեջ էր դուրս գալիս, ապա կամ ջաղացում ազուն շկար և կամ աղունատներն այնպիսի մարդ էր, որ ջաղացում մի բան պատահելուց կարող էր ջրատունը կալնել, մինչև նրա գալը: Պատահում էր, որ գրույցի նստած ժամանակ գետի մյուս ափից կանչում էին: Նստածներից մեկը նայում էր ջաղացի կողմը, տեսնում, որ փափախով են անում, թևով բոթում էր ջաղացպանին: Անդրին խոսքը կիսատ էր թողնում, վեր կենում և դանդաղ քայլերով գլուխը կախ հեռանում, փայտը կույրի նման քարից քար խփելով:

20

Այդ գրույցների ժամանակ ջաղացպանը երիտասարդներին ավելի լավ էր լսում. նրանք տաքանում էին և ձայնը բարձրացնում: Նրանց խոսելուց ջաղացպանը հասկանում էր, թե ինչ պատասխան է տվել Տեր Նորընծան: Եվ երբ գրույցի տաք ժամանակ Ավան ամին նրան էր դիմում, Անդրին մի պահ ձեռքի փայտով ավերում էր գետնի գծած նախշը: Նա շատ դանդաղ էր մտքինն ասում, ասես գետնի նախշը իր մտքերն էին, և զգույշ ջնջում էր այն, ինչ որ չէր ուզում ասել:

30

— Առաջ հողը պտուղ էր տալիս, հիմա հողը խոռվել է: Հին խոսք է, որ հողը կոխվ չի սիրում... Հիմա էլ կոածմունքը շատ է, մարդոց մեջ լիութունը խանգարված է: Կովը, որ կով է, էլի շարացած ժամանակ կաթը քաշում է... Հողն էլ էղպես: Երեսը հազար մեղավոր մարդ է կոխ տալիս, թքում են, ար-

95

յուն են թափում... Արտի մեջ սատկած շուն են քցում... էլ էն հողը պտուղ կտա՞: Մի խոսք, հողը խոռովել է:

Խոսելուց նրա բարակ շրթունքները կլորանում էին, ներքին ծնոտի մի հատիկ դեղնած ատամի հետև, բերանի խոռոչում, խմորի գնդի պես թղլուվում էր լեզուն: Կարծես ոչ թե խոսում էր, այլ ծամծամում մի պատառ, որ հիմա պիտի կուլ տա: Ծվ եթե չլիներ մի հատիկ ատամը, այդ պատառը պիտի սահեր, ընկներ:

10 — Հնում մարդը ուամիկ էր, միամիտք, — շարունակում էր մի քիչ շունչ քաշելուց հետո: — Հիմա մարդու ոսկորն էլ է փոքրացել. չեմ իմանում ինչի՞ցն է, խորամանկությունի՞ց, թե՞ ուամուտքից: Պապս էսքան էր, — և փայտը բարձրացնում էր վեր, — հորս էլ հո տեսել ես, տերտեր... Դե ինձանից արշա եկածն ի՞նչ պիտի լինի...

— Ինչո՞ւ. Անդրեաս, Բարիկոն հասակով է, — պատասխանում էր Տեր Նորընծան: Նա ոչ ոքի չէր կանչում գյուղում ընդհանրացած անունով, այլ ըստ իր շափարեբրական մատյանի:

20 — Է՛հ, ո՞սկորն ասի, ոսկորը... Ամեն ինչը ոսկորի վրա է... Այրումի ջուրը մին-մին որ խփում է գերեզմանատան կողմը, տեսնում եք ինչ ոսկորներ է հանում: Մարդ մնում է զարմացած... Հավատալու չի, թե էն ոսկերքը մարդ արարածինն են... Արմունկը մի տղամարդի գլուխ, էնքան էլ սափ, որ երկաթն էլ չի աղալ: Դե էն ոսկորի տերն էլ, տես ինչ մարդ է եղել, ինչ ուժի տեր: Հիմա ասում ես Բարիկոն... Աղանձած հասկի պես բռանդ մեջ կփշրես: Էդ բոլորն ինչի՞ցն է՞ մարդու շատությունից, տերտեր... Լցվել են՝ էս սարի տակ մի գյուղ, էն քարի տակ մի շհար, էլ տեղ չկա: Առաջ ի՞նչպես էր: Ողորմած հոգի պապս էր պատմում, որ երեք օր, երեք գիշեր մեր գյուղից որ կողմի վրա էլ գնայիր, ճանապարհին մի մարդու շէր ուստ գա, քարի օր ասեիր: Հրեն Զրիկը, էս թումբի հետևը Զեյթան, հրեն հա՞, ծուխը... Դե շհարի մասին խոսք չեմ ասում: Ապականությունը, որ էնտեղից է... Բա՞... հիմի ասի, թե Հիրանի տղերքը: Նրանք չլինեին, մի ուրիշը տեղը պիտի բսներ: Անհնարին բան է: Մարդը որ էս ոսկորի տերն է, նա սոված էլ կմնա, նրա գլխին կքամփեն էլ, նրա արյունն էլ

կիսմեն: Բա ո՞նց... Երկու սոված կատու, որ քցես պարկի մեջ, անհնարին բան է, մինը մեկէլին պետք է ուտի: Մենք երկու շենք, հազար շենք, շատացե՛լ ենք, էս ձորերն ապականել... 10

— Չէ՛, էսօր գիրդ շաղվել է, Անդրի: Մին նալին ես խփում, մին մեխին,— պատասխանում էր Ավան ամին:— Ուրեմն ոնց անենք, քու ասելով մեր հիմիկվա հազար մինին էլ շարժի՞: Բա ուսմունքի օգուտն ի՞նչ է, լուսավորությունի: Ուրեմն քու ասելով էս ջահելները մեզանից վա՞տ օր են ապրելու... Պա հո՞... Վա՛յ ձեզ, վա՛յ ձեր օրին, ա՛յ ջահելներ:

— Անդրի ամի, Հիբանի տղերքն էլ են մեր ոսկորից, չէ՞,— հարցնում էր մեկը:

— Հը՞,— ջաղացպանի դեմքի մկանները կծկվում էին, լսողությունը լարում էր: Հարցը տվողը կրկնում էր և ավելացնում.

— Դե թող նրանք էլ մեզ պես ապրեն... Շալուն Սիմոնի ոսկո՞րն է հաստ, թե՞ Ծփրեմի:

— Այ հա՛յ... Անդրի՛, դե պատասխան տո՛ւր:

Շալուն Սիմոնը Կարմրաքարի այն բնիկներից էր, որոնք ընչազուրկ դառնալով, տնից ու հողից զրկվելով, տեղավորվում էին գյուղից մի քիչ ներքև, գետի ափին ընկած հին և կիսավեր մարագներում: Գյուղի այդ մասում ապրողների ամենից «հարուստը» մի քանի ժանգոտած պղինձ ուներ, կոծկած կարասի և կուժ ու մի քլունգ, որով փորձիրում էին անտեր և անբերրի հողերը ու ձեռքով շաղ տալիս կորեկ: 20

Ջաղացպանը նեղն էր ընկնում և փայտի ծայրով գետնի վրա մի քանի խազ ավելի արագ քաշելուց հետո, շտրացած պատասխանում.

— Նրանց էլ պատիժ է ուղարկել, որ միշտ գլխիդ վայ տաս...

Հենց այդ ասեր թե չէ, Ավան ամին զրույցի նյութը փոխելու համար ասում էր ջաղացպանին. 30

— Քո ի՞նչ բանն է, էս ջահելի հետ ղլուփս ես դնում: Քոնը Ռուստամ Մայիթի պատմությունն է: Մի ասա է՛, շահը ոնց կանչեց նազիր վեզիրներին...

Ավան ամին գիտեր նրա թույլ կողմը: Ջաղացպանի դեմքը ուրախությունից պայծառանում էր, զրույցն էլ հանդար-

տում էր, ինչպես ծանծաղուտում կորչող լեռան սրբնթաց գետակ:

10 Կարմրաքարում ոչ ոք չաղացպանի նման պատմութուններ չգիտեր: Ավան ամին էլ էլ ծանոթ հին կյանքին, Տեր Նորրնծան կարողացել էր «Սրբոց վարքը» և ուրիշ գրքեր, բայց չաղացպանի նման ոչ ոք չէր կարողանում պատմել: Նա հնարում էր, ստեղծում: Ինչքան ավելի էր հնարում, ավելի էր ստեղծում, նրա ոգևորութունն այնքան կրկնապատկվում էր, ձայնը դողում էր, և լսելն ավելի ախորժալի էր դառնում: Նա պատմում էր ամեն տեղ՝ ջաղացում, ձմեռվա երկար գիշերներին, նրանց համար, որոնք աղուն էին բերել, գյուղի պատերի տակ՝ եթե ազատ էր և գյուղամեջ էր դուրս եկել, գետի ափին, ուր նա ժամերով նստած նայում էր Մարցա ջրի պղտոր ալիքներին:

20 Նա գիտեր ինչ աստղ երբ է դուրս գալիս, եթե լուսադեմին մառախուղ է լինում, ապա ցերեկով ի՞նչ եղանակ պիտի լինի, եթե երաշտ է, ու հանկարծ պարզկա երկնքում որոտում է կայծակը, ինչու պիտի դեղնաջուր թափի և ոչ մաքուր անձրև: Մարցա ջրի բնույթը նա ուսումնասիրել էր շատ մանրամասն: 20 Ձմեռվա կեսին, երբ սար ու ձոր ձյունով էին պատած, իսկ գետակը սառույցի տակ դժգոհ մոռում էր, ջաղացպանը գրույցի մեջ հայտնում էր, որ գարունը բացվելուց Մարցա ջուրը շատ շարութուններ է անելու: Այդպես էլ պատահում էր. գարնանը դետը հորդանում էր և, ափերից դուրս գալով, վնասում մարագներին, քանդում գետափի բոստանների պատը և հաստաբուն ծառերը բերանն առած փախչում կամ ծառս տալով իր պղտոր դրկի մեջ առնում սպիտակ գառնուկին, որ խաղալով ու թռչկոտելով մտտեհում էր, ապուշ-ապուշ և զարմացած նայում գետի վեր թռչող ալիքներին, որոնց ցայտունը մի վայրկյան դիպչում էր դնչին ու մեկ էլ ոտքերը կտրվում էին գետնից:

30 Ջաղացպանը լսվ հեքիաթներ գիտեր: Ինչ էլ պատմեր՝ շահի օրերից մի առասպել, Ռուստամ Մայիֆի պատմութունը, թե հին հեքիաթ,— նա վերջացնում էր առակով, ինչպես Տեր Նորրնծան էր ասում՝ «Իմաստության քաղմունք» անելով: Երբ ունկնդիրները ազդվում էին նրա պատմածից, ամեն մեկը հա-

չացքը մի բանի հառած, մտքում կրկնում էր պատմութիւնը կամ ինքն իրեն հարց տալիս, թե ինչու է այդ պատմութիւնը դուրեկան,— ջաղացպանը վիզը թեքում էր, ձեռքով ալուրի փոշին քուրքից կամացուկ թափ տալիս և քթի տակ շքմեղ ժպտում: Նրա նստվածքը, թեք պահած վիզը, ջրակալած աչքերը, որ պարզ չէին երևում ալոտ մաղբրի ու սպիտակ դեմքի վրա, այդ ամենը ասում էին ունկնդիրներին, թե պատմածի մեջ ինքը ոչ մի դեր չունի. նրանցից ամեն մեկն էլ կարող է պատմել իր նման, միայն գիտենա այն, ինչ ինքն է ձեռք բերել տարիների փորձով:

10

Իսկ այդ գիտեցածը այն անտարբեր, կես արհամարհական վերաբերմունքն էր, որ նա ուներ դեպի մարդը, նրա հոգսերն ու շահերը: Զաղացպանի ասելով մարդու պատմության լավ մասն անցել է: Աստված մի անգամ է սփռոցը բաց արել, շուրջը նստել են նրանք՝ հին հսկաները, որոնց ոսկորները հողի խորունկ ծալքերից այժմ լույս աշխարհ է հանում Այրումի բարակ առուն:

Հիմիկվա սերունդը ժեռ է, մանր, նրա պտուղը դառնահամ, և ինչ էլ անեն, ետ չի գա այն ժամանակը, երբ ցորենն ինքն իրեն էր բսնում, մարդ ամեն ծառի տակ կարող էր օթեվան ունենալ, և ինչպես պապն էր պատմել՝ Կարմրաքարից որ կողմն էլ գնայիր, երեք օր, երեք գիշեր մարդու չէիր հանդիպի՝ բարի օր ասելու: Այդ ժամանակներն անցել են, սփռոցը մնացել է... Այժմ մարդիկ կրծում են նրանց թողած ոսկորները, գլուխ են ջարդում նրանց փշուրները հավաքելու: Երբեմն նա Տեր Նորընծայի հետ, ինչպես Ավան ամին էր ասում, «ծնոտ էր ծեծում» ապացուցելու, որ դրախտը եղել է, ու դրոները փակվել են: Եթե մարդուն մի բան է սպասում գալիք կյանքում,— այդ դժոխքի կուպրի կարասն է:

20

— Ինչքան էլ մարդ արդար մնա, միևնույնն է, պրծնում չկա... Շատ-շատ կուպրը մի քիչ պակաս կանի:

30

Զաղացպանը Ավան ամուն ոչ միայն հասակակից էր, այլև մանկութիւն ընկերը: Երիտասարդ ժամանակ քանի՞ ձմեռ են միասին անտառում խոզ պահել, ինչե՞ր չի անցել նրանց գլխով:

— Նա հենց էն ժամանակն էլ էղպես էր,— պատմում էր Ավան ամին, հազվադուտ դեպքում, երբ լսողներն իր մարդիկն

99

էին, և կամ մի առիթով սրտաբաց էր եղել,— մեկ էլ տեսար վրաս կնեղանար, թե խոզն ինչ է, որ մարդ նրա համար ծմակներն ընկնի, արի՛ գլուխ առնենք, կորչենք, տեսնենք աշխարհը որտեղ է վերջանում... Ա՛յ Անդրի, գլխիդ ձի շի քացի տվել, կրակը թեժ արա... էս մթնկա գիշերին ձորերում հազար ահ, հազար փորձանք: Մ՛ամ ես ասում: Ածխակոթը վեր էր առնում, դուրս գալիս: էն անտեր խոզերն էլ հենց իմանում էին, թե գալիի վրա է վազում, ճղրտում էին, իրար տալիս, բղղում: Հա կա՛նչի, հա սպասի: Մեկ էլ լուսաբացին գալիս էր՝ բեզարած, **10** ջարդված, ցեխոտ: Ունքամեջը շէր բացվում... Անդրի, էդ ո՞րտեղից: Պատասխան չէր տալիս: Հենց ուզում էի բռնեմ, տակըս կոխեմ, մի լավ վեր հատեմ, համա ինձանից ուժով էր: էդ օրը բերանը երկու կտոր շէր անի, գլուխը կախ, էս ծառի տակ կնստեր, էն քարը շուռ կտար... Որ հանդարտվեր, էլի էն ընկերն էր, ասող, խոսող: Հարցնում էի՝ Անդրի, ո՞ւր էիր էն գիշեր: Ծիծաղում էր... էն քարերն ինչի՞ էիր շուռ տալիս... Թե տակին ոսկի կա, համա շփտեմ որ քարի տակին է: էն է, վերջին տարին պատկեցին, հանդարտեց:

**20** Ու մի քիչ ինքն իրեն մտածելուց հետո ավելացնում էր, ասես ինքն իր հետ էր խոսում.

— էն փորձանքն էլ թե չէ՛ր եղել, հիմի նա ուրիշ մարդ կրիներ,— վերջացնում էր և մեղմ հառաչում:

Անդրու կինը ամուսնության առաջին տարին մեռել էր դժբախտ պատահարի հետևանքով: Տարին եկահալ էր, մեկ ձյուն էր անում, մեկ արև, ձյունը հալվում էր, կտուրները ցեխ էին, գերանները ճոռում էին, հրք բարձրանում էին ձյունը մաքրելու, երբ կտուրի վրայով մարդ էր անցնում: Ու հենց այդ գարնանը գերանը դուրս է պրծնում, իջնում հարսի գըլխին... Մի ամբողջ տարի Անդրին տանը շէր մոտենում, վատախենում էին, որ կխենթանա: Մի անգամ նրան գտել էին անտառի խորքում՝ Պղնձաքարի մի ճեղքում կուչ եկած: Երկյուղն ավելի էր սաստկացել. կասկածել էին, թե Անդրին ուզում է ճգնի... Տարին անց, հայրն է մեռնում: Հոր մահն ուղքի է բերում նրան: Տուն է դառնում և գլուխը քաշ ապրում, տիրություն անում հորից ժառանգություն մնացած ջրաղացին:

Շատ տարիներ հետո, երբ սպիտակած մազ ուներ, Անդրին համաձայնվում է ամուսնանալ, լսելով Տեր Նորրնծայի հորդորը, բայց ավելի շատ Ավան ամու թախանձանքը և կնության է առնում Զրիկ գյուղից որբեայրի Եղսանին, որից և ծնվում է Բարիկոն:

Զաղացն Անդրու համար կենտրոն էր, ուր ամեն ինչ կարելի էր իմանալ: Բերում էին աղալու ցորեն, գարի, գալիս էին մոտակա գյուղերից հայ, թուրք: Բազմաթիվ ճանանչ ուներ և բոլորի տան ու տեղին, ունեցվածքին, նրանց հետ պատահածին նա տեղյակ էր: Բերած աղունից նա գիտեր, թե բերքն ինչպես է: Երբ նոր ցորենի բեռներն իջեցնում էին, շաղացպանը մոտենում էր, ձեռը կոխում պարկի մեջ, ապա բուռը մոտեցնում աչքերին: Ցորենի ձևը, մաքրությունը, լղարակն ու տուղը, բարակ փոշին, որ նստում էր ձեռքին,— բոլորը մի-մի նշան էին, որից նա հասկանում էր, թե տարին ինչպես է անցել, ինչ հողումն է ցանած և ինչից է, որ ցորենի հատիկը մեծ է, բայց մեջը փուռ: Աղբատին և հարուստին նա գիտեր ջոկել ոչ միայն պարկերից, հագուստից, ձիերի և ջորիների սարքից, այլև ցորենից: Հարյուր միանման պարկե եթե կողք-կողքի շարեին, նա կճանաչեր այն պարկը, որի մեջ էր Դերվիշ Հյուսեյնի ցորենը: Դերվիշը Զեյթա գյուղից էր: Նա ոչինչ չէր ցանում, նրա պարկիները հարյուր կալից մի-մի գուշով էր հավաքված:

Մարդը շատ լինելուց, գրույցն էլ հետաքրքիր էր անցնում: Եթե լուսնկա և զով գիշեր էր, նստում էին շաղացի դռները, ընկուզենու տակ: Երբեմն կրակ էին անում և փոքրիկ թոնրի մեջ ջրաղացի անալի բլիթներ թխում, նոր աղած և դեռ տաք ալյուրից: Զրույցն ավելի հետաքրքիր էր դառնում, երբ եկողների մեջ լինում էին այնպիսի մարդիկ, որոնց հետ դեռ անցյալ տարի ու դեռ ավելի առաջ շաղացպանը վեճի էր բռնվել: Նա հիշում էր ում հետ ինչ խոսակցություն է ունեցել: Զեյթա գյուղի մուլլայի հետ քանի անգամ էր վեճի նստել ու նրան նեղը գցել, համոզելով, որ Աստված ամեն բանի մեջ կա, նույնիսկ ծառի փշակում: Մուլլան երկյուղում էր, երբ շաղացպանը մատը մեկնում էր ծառի փշակին: Եթե Դերվիշ Հյուսեյնը գար, Անդրին նրան կամուրջի մոտ տեսնելուց նույնիսկ առաջ էր վազում, թևից բռնած բերում, նստացնում քեֆ-հալ հարցնում:

10

20

30

101

Դերվիշը շէր տրտնջում, երբ շաղացական իր աղունի հերթն ուշացնում էր: Երկուսի զրույցը երբեմն մինչև լուսաբաց էր տևում: Դերվիշն էլ աշխարհի և մարդկանց մասին շաղացականի նման էր մտածում, նրանցից յուրաքանչյուրը տարբեր ճանապարհներով խլուրդի պես համառորեն փորելով, փորփրելով հասել էին նույն բարձրության, որից շատ հարմար էր դիտել իրերն ու դեպքերի ընթացքը:

- Երիտասարդ օրերի բուռն ցանկությունը՝ իմանալու, թե որտեղ է վերջանում աշխարհը, նրա հետ պատահած դժբախտությունը, շաղացը և այն բազմաթիվ մարդիկ, որոնք գալիս էին, գնում, որպեսզի մի օր էլ նրանցից մեկնումեկը չգա և մյուս եկողները շաղացականին պատմեն, թե ինչից նա մեռավ, ծեր ընկուղենիները, որ ամեն գարնան տերևակալում էին, պտղակալում և ուշ աշնանը դողալով տերևաթափ լինում, Մարցա ջուրը, որ գարնանը ուռչում էր, ափերից դուրս գալի, իսկ ամռանը բարակում այնքան, որ հորթերն էլ էին անցնում, — այս ամենը մի՛ խորհուրդ ունեին, մի՛ ներքին իմաստ, որ ոչ միայն վաղուց ծանոթ էր նրան, այլև ինքը մերվել էր այդ իմաստի հետ: Վարարում է գետը, հետո բարակում, ձմեռը սառչում և սառույցի տակ մոռում... Ինքն էլ ջահել էր, հիմա աշնան գիշերներին ցուրտ է զգում, և դուրեկան է կրակը, ընկուղենիներն էլ են դողում: Ոչինչ չկա սարսափելի, ոչ ծանրը կսկիծ և ոչ անսահման ուրախություն: Շատ կաժաններ կան, բայց մի լայն ճանապարհ կա, և բոլոր կաժաններն էլ ի վերջո գալիս են միախառնվում այդ ճանապարհին, ինչպես Այրումի առուն Մարցա ջրին, Մարցա ջուրն էլ ով գիտե որ մեծ գետին:

• • •

Այսպես էին ապրում Կարմրաքար գյուղում:

- Ունեին մի եկեղեցի և մի Տեր Նորընծա, որ այդ եկեղեցու մասին պատմում էր, թե նա կառուցված է հին տաճարի ավերակների վրա և շնչրանի կաշվից կազմած գրքից վկայություն բերում, որ դարեր առաջ «հագարացոց աշխարհից» իրենց պապերը Մարցա ջրի ընթացքով հասել են մինչև գյուղի տեղը,

անտառը կտրատել, շքել՝ այգի և անդաստան: Խաղաղ այդ պատմութիւնը, երբ հասնում էր Կարմրաքարի առօրյային, դառնում էր խճճված և շատ մութ, համարյա անլուծելի առեղծված, որի մասին ոչինչ չի ասել ոչ այն վարդապետը և ոչ էլ Կարմրաքարը տեսած մի ուրիշ մարդ:

Տեր Նորընծան, երբեմն, մանավանդ այն ժամերին, երբ երեկոյան արարողութիւնն արագ վերջացնելուց հետո Ավան ամուհետ մոտենում էր Բուրքարի շուրջը նստածներին,— հեզ էր և հանդարտ, եթե զրույցը թեթև էր և սահում էր, ինչպես ձյունի գնդակը սառույցի վրա: Բայց այդ խաղաղութիւնը պղտորվում էր, երբ հանկարծ մի հարց էր ընկնում մեղտեղ: Օրինակ՝ մեկը պատմում էր, որ հարեանի տանը նամակ են ստացել իրենց որդուց և ահա ծայրը բացվում էր, կծիկը ետ էին տալիս... Խոսակցութիւնը սկսվում էր այն քաղաքից, որտեղից նամակ է եկել, հետո անցնում նամակ գրողին, և վերջապես Ավան ամին ձևակերպում էր.

— Մի խոսք՝ Կարմրաքարն ապրելու տեղ չի, էստեղ ապրելն էլ հարամեց:

Խոսակցութիւնն այդ կետին հասնելու թե չէ, Տեր Նորընծան կամ շոյում էր ծալ-ծալ մորուքը և թազբեհը խաղացնում ոսկրոտ մատների արանքում և կամ փնտրում էր թամբաբուփ ամանը փարաջայի երկար ու խոր գրպանների մեջ և շտնելով տնեցոց հասցեին թոնթորալով՝ կողքին նստողից խնդրում էր թամբաբու:

Նրան հաճելի չէին այդ խոսակցութիւնները և ոչ էլ այն հարցերը, որ տալիս էին իրեն: Ո՞րտեղից գիտենար Տեր Նորընծան, թե ինչ է լինելու Կարմրաքարի վերջը, մինչև ե՞րբ, ինչպես Ունանն էր ասում, «տարին տասներկու ամիս քարի, բոլի հետ կոփվ տաս, էլի ձմեռվա կեսին տաշտը ցամաք»... Այդ մասին ոչ «Սրբոց վարքի» մեջ կա գրված և ոչ էլ ինքն էր կարողանում պատասխանը գտնել:

Իհարկե, Տեր Նորընծան չէր լուում: Մեկին համոզում էր, թե ամեն տեղ են մարդիկ այդպես ապրում, ջաղացպան Անդրուհետ համաձայնվում էր, որ Կարմրաքարի դառը կյանքը վերուստ ուղարկած պատիժ է, երրորդին մխիթարում էր և հո-

10

20

30

103

գոց քաշելով հայտնում, որ վերջ ի վերջո հողն է մարդուն պարտակելու, «Հող էիր և անդրեն հող դարձար»...

Բայց ինքն իր հետ մնալուց, երբ հաշիվ էր տալիս, թե ինչ փոփոխություններ են կատարվել ծուխի մեջ, տերհայրը սոսկում էր և դողացող մատները մեկնում թամբաքուի տուփին: Իր մանկութունն էր հիշում... Լիութուն կար, աղքատը քիչ էր, ամեն ինչ տանից էր դուրս գալիս: Եվ ինչպե՞ս եղավ, որ գետափի մարագներում մարդիկ բնակություն հաստատեցին... Առաջ այնտեղ խոտ ու դարման էին լցնում: Ու մի օր էլ գյուղում «հայաստանցի» մի գաղթական եկավ իր մոր հետ: Ինքը դեռ ջահել քահանա էր, տերտերակինը՝ առաջնակով ծանր: Մի քանի ամիս գաղթական նազարն ու մայրն ապրեցին իրենց տան ներքևի հարկում, հետո խնդրեցին մի մարագում տեղ տալ: Մարագները դեռ կանգուն էին: Եվ այն օրից մարագների թաղը կոչվեց Ղարիբանոց: Շալուն Սիմոնի հայրը հիվանդ էր, պարտքատերն եկավ հիվանդի տակից կարպետը քաշեց, եղած պղինձները հավաքեց. մի հորթ էլ ունեին, այն էլ տարան: Ինքը գնաց, որ հորդորի, խնդրի... Խոզա Հիբանը պառավ մարդ էր, վրան նեղացավ և սասաց, թե հողերը մարդը աշխարհի գործերին չպիտի խառնվի: Հետո մի քանի հոգի էլ գնացին... Որի տունն էր փլվել, որն էլ հորից բաժանվել և մի կարպետ թևի տակ՝ երեխաների ձեռքից բռնած, գյուղից առանձնանում էր, որ իրեն էլ շտեմենն գյուղամիջում:

Մի անգամ Տեր Նորընծան գնացել էր Ղարիբանոց: Մեկը մեռնում էր, հաղորդության էր սպասում... Աստված իմ, ի՞նչ աղքատություն... Տկլոր երեխաներ, մի քանի պղինձ, մի կապ ցախ և աթարի մոխրով լցված կիսաքանդ մարագ: Ոչ ծալք ունեին, ոչ փալաս ու կարպետ, երեխաները մտնում էին հարդի մեջ, կուշ գալիս... Խնչ աներ Տեր Նորընծան: Այդ օրը դառնացած եկավ: Երեկոյան տիրուհին հիվանդի համար հաց ուղարկեց: Ինքը մյուս օրը քարոզ կարդաց եկեղեցում, և շվերչացավ, աղքատությունը շվերչացավ... Ղարիբանոցի մի քանի մարագներից բացի, գյուղում էլ կային աղքատ մարդիկ: Հարևանի տանը երկու ամիս կորեկ հաց էին կերել, մինչև տղան քաղաքից օգնության էր հասել: Ո՛ւր է վերջը: Ուրեմն ճիշտ է ա-

սում ջաղացականը, որ արքայութիւնը գնաց, և մարդուն միայն Տերը բաժին է պահել կուպրի վառվող կարասներ:

Կարմրաքարի ծխատեք քահանան մտածում էր իր հոտի մասին, սրտանց ուզում էր դարման գտնի, մտածում էր երկար, բայց տիրուհին վրա էր հասնում, մտքերը խանգարում:

— Ճրագում նավթ չկա, վե՛ր կաց հացդ կեր:

Տերտերը մոտենում էր սեղանին և՛ ուրախ, որ ազատվեց հոգսից, և՛ շարացած, որ նավթ չեն լցրել ճրագի մեջ, ու տիրուհին ասեղի ծայրով պիտի պատրույզը բարձրացնի: Երբ հոգնածութիւնը հաղթում էր, կուպերը ծանրանում էին, մոտենում էր անկողնուն, գիշերվա աղոթքը համառոտ ասում և հանգրստանում այն մտքի վրա՝ թե «Հող էիր և անդրեն...»:

10

Կարմրաքարում կար և՛ Ավան ամի, և՛ Ունան, և՛ ջաղացպան Անդրի: Հող ունեցողը վարում էր, ցանում, հնձում: Տարվա շորս եղանակները անիվի պես դառնում էին, և ամեն մեկն իր հետ բերում էր ցավ, ուրախութիւն, աշխատանք: Մնվում էին, մեռնում: Գյուղի գլխի գերեզմանատանը նոր հողաբլուրներ էին ավելանում, մի կողմից էլ Այլումի առուն էր հին գերեզմանատունը քանդում, ոսկորները բերանն առած, ո՛վ գիտե որ քարի տակ պահ տալիս: Անտառը տարեցտարի փնջերը քաշում էր, գյուղից ավելի հեռանում, և սարերի ստորոտները մերկանում էին... Չորերում կամ անմատչելի առապարների վրա սակավաթիվ ծառեր դեռ մնում էին, որպես ցնցոտիներ, սարի մերկ սրունքները ծածկելու: Ումանք հարստանում էին, ումանք աղքատանում: Հարստացողը մի աչք ավել էր տուն շինում կամ մի կտոր հող առնում, ղուլզ եզը դարձնում երկուերեք, ընկնում էին, բարձրանում: Մեկը մյուսին ոտնատակ էր տալիս: Կովում էին, գլուխ ջարդում, պատահում էր, որ մարդ էին սպանում: Ումանք ուրիշ քաղաքներ էին գնում վաստակի և այդ վաստակը, որպես հնչուն արծաթ, քանդում էր, խարխլում այն, ինչ սպասում էր թեթև շնչի՝ փլշելու համար:

20

30

Ավան ամին էլ էր տեսնում, որ Կարմրաքարը փոխվել է: Նա հիշում էր այն, ինչ եղել է և համեմատում էր առօրյայի հետ: Նրա համար պարզ էր այն ճանապարհը, որով Կարմրաքարը եկել էր և հասել այդ առօրյային:

Խնչ էր այդ հինը... Սամավար չկար, մարդիկ չգիտեին,

105

Քե ինչ է թեյը... Եկավ խոլերի տարին, փախան, պահվեցին անտառի խորքերում: Առաջ մարդիկ դադաք էին հագնում, կանայք՝ դարայի... Մարցա ձորը մի անանց անտառ էր, հիմա քարերը երևում են... Հեղեղը սրբել է հողն էլ, արմատներն էլ: Տեր Նորընծայի հայրը երեխաներին սովորեցնում էր «Ուժ կանոն սաղմոս»: Կիտորից թանաք էին շինում և փետուրե գրիչներով հաստ թղթի վրա ընդօրինակում ժամագրքի գլխատառերը... Քաջքուտ մարդ էր Տեր Նորընծայի հայրը. աշակերտի մատներն իրար էր հավաքում, երկաթ օղ հագցնում և մատների ծայրին հոնի ճիպոտով այնքան ծեծում, մինչև արնոտեին: Մի անգամ էլ Ավան ամու եղունգը պոկ եկավ:

10

Այն ժամանակ քաղաքը մեծ չէր, դերձակը դուքան շուներ, ձեռքին մի ասեղ էր, մի մկրատ, տնետուն ման էր գալիս, և՛ աշխատում, և՛ տանն էլ հաց ուտում: Երեք օրում մի արխալուղ էր կարում: Քաղաքում մի քանի դուրյար կային և ներկարար, բայց դուքանդարը շատ էր: Քավրիզից ուղտերի քարվանսով ճոթ ու կտոր էին բերում, շիլեյի, գյուլի աղլուխ, շաքարը փափուկ էր, մի քիչ դեղին... Հիմա Հիբանի որդի Մկրտումի խանութում տասը փութով էլ կարելի է շաքար առնել և այն էլ լավը, կապույտ խալերով, շուտ շհավող... Նրանք հիմա շիլեյ չեն ծախում, ուղտը չկա:

20

Առաջ նեղ կածան էր, բայց քանի՛-քանի մարդ ծեծեցին, ու կածանը մի քիչ լայնացավ, ճանապարհ շինվեց մինչև քաղաք: Ի՞նչ ի՞նչ է դառել այդ քաղաքը, ինչ տնե՛ր, ինչ խանութներ, ո՞ւր է առաջվա դերձակը, որ մկրատը թևի տակ տնետուն էր ման գալի: Ճանապարհը բացվեց, Կարմրաքարից շատ մարդ դուրս գնաց: Եվ Ավան ամին մտքում մեկ-մեկ հաշվում էր նրանց, որոնք հեռացել էին գյուղից: Տասներկու հոգի Բաքու են, Մատուրի թողը Պետրպոլ է լինում:

30

Ավան ամին այդ իրադարձությունների մեջ աշխատում էր կարգ սահմանել, գտնել մի ձող, որի վրա կարելի լիներ դեպքերը քաշել: Նա լավին էր սպասում ու միտք էր անում, թե ինչպես պիտի գա այդ լավը: Երբեմն մտածում էր, որ ուսումով մարդկանց թիվը ավելանում է, և համոզված հայտարարում էր, որ ճանապարհը ուսումով առածները պիտի քաշեն, երբեմն կասկածում էր և ավելի ճշմարիտ համարում այլ ուղի: Իրենց

գյուղից դուրս պիտի գա աստղով մի մարդ, և ամեն գյուղից պիտի հավաքվեն աստղով մարդիկ, խելք խելքի տան:

— Էնպես պլան քաշե՛ն, Անդրի,— ասում էր նա ջաղաց-պանին, երբ սրտենեղում էր մենակությունից և գնում էր նրա հետ գրուցելու,— էնպես ամեն ինչ իր տեղը քցե՛ն, որ մնաս զարմացած... Քե չէ էսպես ո՛ր կհասնենք... Մարդիկ իրար միս կուտեն: Հրեն էսօր վարժապետն էր ասում, թե շնորհ-տանում շեմ իմանում ո՞ր քաղաքում, իրար մեջ ժերբ են քցել, թե ո՞ւմ ուտեն:

Գյուղ վերադարձող երիտասարդին նա գալու մյուս օրը պիտի տեսողեր, ծանր ու թեթև աներ, հարց ու փորձ՝ տեսածից ու լսածից, և հայտներ իր կարծիքը՝ կամ մեջը փուշ է (այդ դեպքում նա պիտի ասեր, թե ո՞ւմ կողմն է քաշել) և կամ տարակուսանքով եզրակացնեք, որ դեռ խակ է, սերմը չի բռնել:

Երբեմն էլ հուսահատվում էր, հուսահատությունից շարանում ու շարությունը, որպես մաղձ, թափում աշխատանքի ընթացքում: Ինչ գործ էլ աներ, արագ էր կատարում, չէր խոտում, գանգատվում էր բոլորից: Նրա բարի դիմագծերն էլ էին փոխվում, կապույտ աչքերը փոքրանում էին, ներս քաշվում, մարդիկ ուրիշ կերպ էին երևում աչքին: Այդ օրերին նրա դեմքին չէր երևում այն ժպիտը, որ լուսավորում էր նրա երեսը, լուսնապակ կազմում սպիտակած գլխի շուրջը:

Նրան թվում էր, թե կյանքը խեղդ է, մի նեղուստ, ճիշտ այնպես, ինչպես ջաղացի կամուրջի տակ... Երկու կողմից բարձր ու կապույտ ժայռեր, ու մի ժայռ այնքան է կռացել ջրի վրա, որ ալիքները գալիս են ու դեմ առնում: Եվ ինչ որ բերում են՝ տերև, ճյուղ, խոտ,— այդ ամենը պղտոր փրփուրի հետ դեմ է առնում ժայռին... Զուրը քարի տակով անցնում է, իսկ փրփուրն ու տերևը, ճյուղը, խոտը մնում են, պտտվում, պրտըտվում, իրար վրա դարսվում, մինչև քամին կամ ջրի թափը նորից շարտի քարի վրա: Գուցե կյանքն էլ այդպես է... Իզուր տեղը պտտվում են, իրար միտ կրծում:

Այդ օրերին նա չիբուխը միշտ թեժ էր պահում, մատը կրակի վրա: Նստում էր տան առաջ, երբ մութն ընկնում էր: Նայում էր խավարին, լսում էր ինչ-որ ձայներ՝ մարդու, կովի,

շան, դիտում էր գյուղը, մինչև թանձր խավարը ծածկեք ամեն ինչ, հանդարտվեին ձայները, կրակները մարեին ու միայն խավարի մեջ վշշաբ Մարցա շուրը:

## 2

Խոշա Հիբանի տունը, կամ, ինչպես Կարմրաքարում ա-  
տում էին, ամարաթը գտնվում էր գյուղի վերի թաղում, մի  
փոքրիկ բլրակի վրա, որ գերեզմանատան թմբից բաժանվում  
էր բարակ ձորով: Տան հետևով անցնում էր Քառասնաչրի ան-  
տառը տանող ճանապարհը, որ հենց տան մոտն էլ ծովում էր  
**10** և կորչում ծառերի արանքում: Եվ ձմռան լուսնկա գիշերներին  
գայլերն առանց վախի ոռնում էին տան բարձր պատերի տակ  
և ոտնաձայն լսելուց մի ոստյուն անում ու կորչում անտա-  
ռում:

Հիբանի ամարաթից վերև տուն չկար, իսկ ներքև՝ դեպի  
գյուղի գլխավոր փողոցը, որ միևնույն ժամանակ և քաղաք  
տանող ճանապարհն էր Կարմրաքարից հյուսիս ընկած գյու-  
ղերի համար,— նրա որդիների խանութն էր: Տնից խանութ  
գնացող կածանը կեռամաններով իջնում էր, անցնում բարակ  
ձորակն ու միանում փողոցին:

**20** Կարմրաքարի շինությունների մեջ Խոշա Հիբանի տունն  
իր մեծությունը և նստվածքով հետ էր մնում միայն եկեղե-  
ցուց: Տան շորս բոլորը բարձր և ամուր պարիսպն էր, որի  
գլխավոր դուռը նայում էր գյուղին, իսկ փոքր դուռը բացվում  
էր անտառը տանող ճանապարհի վրա:

Պարսպի տակ ցածր կտուրով, զանազան կառուցվածքներ  
էին՝ գոմ, մարազ, ախոռներ, փարախ, ամբարներ և այլն:  
Այդ ամենը միանգամից և միակերպ չէր շինված: Գլխավոր  
դռնից մտնողը պիտի անցներ աչ ու ձախ ընկած շինություն-  
ների միջով, հասներ փոքրիկ հրապարակին, որի կենտրոնում,  
**30** ճիշտ դռան դիմաց, նրանց երկհարկանի տունն էր: Երկրորդ  
հարկի քարն սանդուղքը բակի կողմից է, ներքի տան պա-  
տուհանի դիմաց: Դրա համար էլ ներքի տան նստողը կարող  
էր տեսնել, թե ով է իջնում և բարձրանում սանդուղքով:

Թե տունը և թե մնացած շինությունները խոշա Հիբանի օրոք էլ կային:

Իսկ ավելի առաջ նրանք ապրում էին ներքի տանը, որի ծխից սևացած օճորքի հաստ գերանները այն ծառերից էին, որ հենց այդ բլրակի գլխին էլ բուսել էին և կտրված էին այն ժամանակ, երբ «հագարացու աշխարհից» եկել էին Կարմրաքարի նախահայրերը: Հիբանն էր կառուցել երկրորդ հարկը՝ սրբատաշ քարերից, նեղլիկ ու փոքր պատուհաններով երեք սենյակ, որոնցից մեկը՝ ամենափոքրը, պատուհան էլ չուներ, և ցերեկով կիսամութ էր ներսում:

10

Այդ սենյակում էր պահում խոշան իր ունեցածը՝ գորգերի ու խալիների կույտը, արծաթեղենը, կնոջ զարդեր, թանկագին մորթիներ, մի խոսքով այն ամենը, որի մասին գյուղում առասպելներ էին պատմում: Այդ սենյակումն էր և պղնձե մեծ սամավարը, որ Հիբանի օրոք Կարմրաքարում նորություն էր եղել և հարստության նշան: Երբ թեյի գործածությունը շատերին ծանոթ չէր, խոշա Հիբանը տուն եկող հյուրերին ցույց է տվել մեծ ու անճոռնի սամավարը և բացատրել, թե ջուրը որտեղ են լցնում, ծորակն ինչու համար է... Նրա կենդանության ժամանակ սամավարը երբեք չէին գործածել: Ու միայն թաղումս մից հետո, երբ պատվավոր հյուրերի համար վերին հարկում սեղան էին բաց արել, Մկրտումի կինը առաջին անգամ սամավարի գլուխը բաց է անում: Բաց է անում և կանչում ամուսնուն... Սամավարը մինչև ունկները լիքն էր արծաթե փայլուն արասիներով:

20

Խոշա Հիբանը այդ սենյակումն էր պահում փոքրիկ, գունավոր թիթեղներով պատած սնդուկը, որի մեջ էին սանադները: Երբ մեկը ներս էր մտնում և հասկացնում, որ եկել է պարտքը տալու, խոշան սիրալիք ժպտում էր, տեղից վեր կենում ու կանչում Մկրտումին: Սարսափելի էր այդ ձայնը: Եթե փողոցով անցնողը լսում էր Հիբանի ձայնը, բայլերն արագացնում էր և միտք անում, թե ում վրա է շարացել խոշան: Մեկն ու մեկը բարձրանում էր սանդուղքով, Մկրտումը ներքի տան պատուհանից տեսնում էր նրան, հետևից գնում և դռան մոտ սպասում: Երբեմն էլ նա հյուրերի հետ ներս էր մտնում: Հայրը բարձր չէր կանչում, այլ քթի տակ խոսում էր,

30

նախատինք թափում որդու երեսին, գանգատվում, որ ուժից ընկնում է և առաջվա նման չի կարողանում հյուրերին պատվով ընդունել: Երեքով ներս էին մտնում կիսամութ սենյակը: Հյուրն ու Մկրտումը կանգնում էին շեմքի մոտ, Հիբանը մոտենում էր բուխարիկին, ձեռքը մեկնում և ծխնելուչդի միջից հանում փոքրիկ սնդուկը, որից հետո միայն որդին մոտենում էր: — Կարդա՛, — ասում էր Խոշան և մեկնում մի սանադ: Եվ հենց Մրկտումը սկսեւր կարդալը՝ «Վեր առիմ և պարտ եմ...», հայրն ընդհատում էր.

- 10 — էդ չի, — և մի ուրիշն էր տալիս: Երբ գտնում էր սանադը և տալիս որդուն, Հիբանը ծնկներին կոթնած սպասում էր, մինչև Մկրտումը գիրկապ անելով կարդա խոնավութունից դեղնած ու տեղ-տեղ խմորով կպցրած սանադը... «Վկա եմ... վասն անգրագիտության և խնդրանոք նորա սույն արքը հաստատեմ և արքունական կնքովս դրոշմեմ...»: Կարդում էր որդին, իսկ հայրը վիզը թեքած լսում էր, աչքերը ճպճպացնում, սեղմում էր աչքերը, աչես արցունք կա, որ հիմա պիտի քամի, աչքերի շրուտները մեղմի: Վեհ և պատկանելի էր նրա դեմքը այդ վայրկյաններին: Կարծես մահվան վճիռ էին կարդում: Եվ թեկուզ վճիռը թելադրել էր այդ ծերունին, նրա դեմքին նայողը կմտածեր, թե նա զղջում է ու սիրտը ցավում է:

- 20 Պարտաթուղթն կարդալուց հետո Հիբանը փակում էր սրնդուկը, թուղթը մոտեցնում եկողին ու մի խոր հոգոց քաշում: Այդ հոգոցից հետո պատկերը փոխվում էր: Հիբանի աչքերն էլ չէին ճպճպում, այլ բացվում էին, անթարթ սևեռում նորեկի սեղմած բունցքին: Սկսում էր հաշիվը: Ամեն մի կոպեկը տնտղում էր, նայում գրին ու նշանին: Եթե թղթադրամ էր, ծրնկան վրա էր դնում, ծալքերը հարթում, բութով և ցուցամատով տրորում, մի քանի անգամ հարցնում.

- 30 — Հո ղալբ չե՞ն... Մկրտո՛ւմ... Անունդ քարին գրեմ, մի տես, իմ աչքերը լավ չեն ջոկում. տես նշանը տեղն է՞... — ու մինչև Մկրտումը թղթադրամի վրա կգտներ հոր ուզած նշանը, Խոշան սրտնեղած ասում էր. — ափսոս չի ոսկին... մաքուր հաշիվ, ոչ ծալվել ունի, ոչ կեղտոտվել: Է՞... Խեր բարաբայաթը կորա՞վ, հազար ...-ից փող են կտրում, ամոթ չինի ասել:

Իսկ դիմացինը ամեն մի դրամի համար մի պատմություն

էր անում, պատմում, թե սպիտակ արասին ումից է ստացել, ինչքան է խոտ հարել նրա դիմաց, թե հինգանոցն իր մոր հոգեպահուստն է, որ ստացել է հարսանիքի օրը հորից:

— Հա՛, հա՛... Ողորմած հոգին լավ մարդ էր: Ա՛յ փուշ աշխարհ, փուշ էլ կմնաս: Դե նայի՛, նայի՛... էս ոսկին ու հիմիկվանը մին ե՛ն:

Փողերը ստուգելուց հետո Հիրանը սկսում էր հաշվել: Եթե գումարը մեծ էր, գրպանից հանում էր թաղբեհը և հատիկները գլորելով համարում, իսկ եթե փոքր էր, նրա հաշվելու ձևը հասարակ էր:

— Վեց արասի, էս էլ տասը շահի, էս էլ վեց շահի, տասնըվեց շահի: էս երկու մանեթ, էս էլ հնգանոցը, չէ՛, քեզ մատաղ... Գու էլ միտդ պահի, որ շսխալվեմ... Հարամ կոպեկ իմ փողին ես չեմ խառնի,— և հանկարծ դառնում էր որդուն.

— Ի՛նչքան էր գրածը:

— Տասնչորս մանեթ:

— Հիրան աղա, բա խոտի վարձը,— վախվխելով ասում էր գլուղացին և հիշեցնում, որ պարտքի դիմաց անցյալ տարի երկու օր նրա համար խոտ է հարել:

— Խո՛տս որն է,— հոնքերը կիտում էր Հիրանը,— էն թո՛ղ... Խոտը ջոկ, փողը ջոկ, խալխի ձիերը խոտը կերել են, ես պիտի շառման քաշե՛մ... Իմ փողը պետք է թամամ լինի:

— Ախր...

— Է՛հ, դե հաշիվը մի խառնի է՛... էս տասնըմին մանեթ վեց շահի... Մկրտո՛ւմ, միտդ պահի... էս երկու արասի, տասնըչորս կոպեկ. տե՛ս, տե՛ս, էս շահանոցի գլխին ինչ օյին են խաղացել... Ասա, շան որդի, փողը ոսկո՞ր է, որ կրծել ե՛ք...

— Հիրան աղա, երեխեքն են...

— Պա՛, պա՛, պա՛... Երեխու ձեռք փող չղնե՛ս, տունդ կքանդես: Հրես տես, պսակելու եմ էս աշունքը, իրա օրումը չեքը մի քոռ չեթ էլ չի տեսել... Վախտը կա, ամեն բանի ժամանակը կա... Մեռնելուց հետո թող տիրութուն անի... Մկրտո՛ւմ, ինչքան եղավ. գրուցով ընկանք:

— Տասներեք մանեթ, վեց շահի:

— Հիրան աղա, դե մնացածն էլ բաշխի, երեխատեր եմ. տանը հիվանդ ունեմ, ուզում եմ մի գուշ ոսպ առնեմ:

— Զէ՛, չէ՛, թափ տուր, ջերդ թափ տուր: Ծս ո՛վ եմ, որ փողի հետ խաղ անեմ: Ուզում ես ինձ էլ, քեզ էլ խայտառակ անե՞ս:

— Հիբան աղա, մեր հարսը մի քանի օր բուրդ է վաճել ձեր տանը. նրան էլ է խղճացիր... Ծաբաթից ավել է ճրագ չենք վառել:

10 — Դե բավական է, էլի՛,— ձայնը բարձրացնում է Հիբանը,— ես էլ չեմ ճրագ վառում... Լուսով հացդ կեր, տեղերդ մտի... Քեզ վեց շահի, նրան մի մանեթ: Ծս շահի խաղնադարը չեմ: Զերդ թափ տուր... Վեց շահու արժեքն ինչ է, որ դրա համար խոսք ու գրույց ես անում: Ուզո՞ւմ ես էլի հետ տամ, թաղա սանադ սարքենք... Թքած փողի վրա, դու մարդու լավությունն ասա... Փողն ի՞նչ բան է, քեզ պես մի մարդու հետ նստել վերկենալը հաղար մանեթի թայ չեմ անի...

20 Եվ թաշկինակի ծայրին կապած երկու արծաթը գյուղացին հանում էր, լրացնում պարտքն ու տոկոսը, որից հետո Հիբանը սանադը միջից երկու էր անում, կտարները տալիս նրան և ստիպում, որ նա էլ մանր կտորներ անի: Ապա հավաքում էր կտորները, լցնում նրա բոխ մեջ: Երբ վեր էին կենում, Հիբանը սնդուկը բուխարու մեջ տեղավորելուց հետո, դառնում էր գյուղացուն.

— Գնո՞ւմ ես... Մնաջիր, էն թաղա սամավարից մի շայ կխմեիրնք: Հա՛, լավ ես ասում... Գործի ժամանակ է, գնա՛, գնա՛ քանիդ: Զայր թամբալ թուրքի բան է: Է՛, քեզ նման ջան ունենայի, մի տարում երկու տուն կսարքեի... Ի՞նչ ես էդպես խեղճացել: Աստված կոներիդ ուժ տա, էլի կամ, մի վախենա: Էս փողն ո՞ւմ համար է: Թե հարկավոր լինի, արի՛... Հալալ մարդու համար իմ դուռը բաց է,— և ձեռքով մի քանի անգամ փափուկ զարկում էր նրա թիկունքին, ճանապարհ դնում:

30 Հենց հյուրը գնար թե չէ, Խոջա Հիբանն սկսում էր զայրանալ որդու վրա: Մի առիթ միշտ կգտներ. կամ ուշ էր եկել, կամ կարդալուց կմկմացել էր և կամ գումարը պարզ չէր ասել:

— Էսքան թուք ու մուրն ո՞ւմ համար է... Դու որ մեծն ե՛ս, էդպես ես, բա էն փոքրին ի՞նչ օրինակ ես լինելու: Ծան ծիծ ես ծծել, ես քո խրատողի... Կո՛րի, աչքիցս հեռացի...

Խոջա Հիբանն ագահ էր ամեն ինչի հանդեպ: Կես գիշերին

հանկարծ տեղից վեր էր կենում և թեկուզ լուսանալուն շատ կար, զարթնեցնում էր տնեցոց, ծառաներին ստիպում, որ տավարը մթնով տանեն ու մինչև լուսանալը գյուղի մոտակա հանդերում կշտացնեն:

— Արջերն էլ են շատ քնում... Ասենք տեղներս ծմակ է, արեմն պէտք է արջաքուն տա՞ք...

Տնեցիք վեր էին կենում, մեկը քնաթաթախ երեխաներին էր հագցնում, մյուսը ծառաների համար կերակուր պատրաստում: Իսկ ինքը թամբած ու սան սյունից կապած ձին նըստում էր գնում կամ հարևան գյուղը ապառիկն առնելու մեկից, կամ բուրդի կանխավճար տալու, կամ գերաններ պատվիրելու, որպեսզի մի շարաթվա ընթացքում, գյուղական աշխատանքի թեկուզ ետուն ժամանակ, մի քանի հարյուր գերան եզներով քաշել տա և Կարմրաքարի կածաններով տանի քաղաք:

Խստաբարո մարդ էր Հիբանը: Նրա մասին գյուղի պառավներն ասում էին, թե աչքը շար է: Եթե երևար փողոցում, նրանից ավելի տարիքավոր կանայք անգամ տեղից վեր էին կենում և դռան ետևը պահվում՝ մինչև անց կենար: Շատ կանայք երեխաներին էլ էին տանում, իսկ անցնելուց հետո նորից էին դուրս գալիս: Մի տղամայր անպատճառ պիտի կռանար, մի քար շրջեր՝ նրա շար աչքի դեմ:

Խոջա Հիբանի մասին գյուղի կանայք զանազան լուրեր տեղեկանում էին նրա կնոջից, երբ գնում էին նրանց համար բուրդ լվալու, գզելու, կարպետներն ու գորգերը թափ տալու, հաց թխելու: Կինը շէր քաշվում և ընկեր, հարևանին ցույց էր տալիս իր մարմնի կապտած տեղերը: Մեծն ու նախատինքը նա անտրտունջ տանում էր և միայն բավականանում էր իր ցավը ուրիշներին պատմելով: Ամուսինը գիտեր այդ գիտեր և լուռ էր: Նա իր հաշիվն ուներ: Հիբանը գիտեր, որ կինը մեկը տասն է շինում, դեպքը ծաղկեցնում, իսկ այդ նրան ձեռնառնու էր: Որքան շատ դողային իրենից, որքան շատ երկյուղ ներշնչեք հարևաններին, այնքան ավելի ազդեցիկ ու անվանի կլիներ:

Հիսուն տարվա ընթացքում Հիբանի կինը միայն մի անգամ էր ըմբոստացել իր ամուսնու դեմ և նույնիսկ մի օրով էլ տանից հեռացել: Այդ այսպես է պատահել, Հիբանն աշխա-

10

20

30

տանքից տուն գալուց (նա գնացել էր կամրջի մոտ ուղտապաններից բուրդ առնելու)՝ լսել էր զուռնայի ձայն. կամացուկ մոտեցել էր ձայնի վրա և տեսել, որ նվագողը որդին է՝ Մկրտումը, տաս-տասներկու տարեկան տղան: Հայրը զայրացել էր, ձեռքի գրվանքանոցը շարտել որդու վրա: Երկաթը կպել էր ճակատի անկյունին և ոսկորը ճեղքել: Վրա է վազել մայրը և արնակոլու որդուն ազատել գազազած հոր ձեռքից: Այդ գիշեր Հիբանը ծեծել է և կնոջը:

— էս լակոտն ինձանից չի... Ուրիշից ես բերել, շա՛ն աղ-

**10** ջիկ, իմ ցեղում զուռնա ածող չի եղել:

Մայրը գրկում է վիրավոր երեխային և կես գիշերին փնում ծնողների մոտ: Սակայն Հիբանի հահից ծնողները չեն համաձայնվում նրան տեղ տալու, և մյուս առավոտ նորից վերադառնում է ամուսնու հարկի տակ: Ծշմարիտ է, այդ դեպքից հետո Հիբանը քիչ մեղմանում է, նա հիվանդի համար նույնիսկ քաղաքից մրգեղեն է առնում, բայց հենց երեխան առողջանում է թե չէ, ձեռքերն իրար զարկելով կնոջը հայտարարում է, որ Մկրտումի ոսկորն իրենից է և շարունակում է մի անգամ բռնած ճանապարհը:

**20** Հիբանի կինն ավելի կանուխ է մահանում: Վերջին տարիներում պառավը չորացել, մնացել էր կաշին ու ոսկորը: Կնոջ մահն ազդել էր նրա վրա: Ծիշտ է, նա առաջվա պես ազահ էր և խիստ, բայց ավելի էր մոռյլ, հաճախ՝ դաժան: Դարձյալ գիշերները զարթնեցնում էր, գործի ուղարկում: Այս անգամ մի տեղ գնալուց, նա Մկրտումին իր հետ էր ման ածում և ճանապարհին խրատում, թե ինչպես պետք է իրեն պահի այսինչի մոտ, ո՞վ է Զրիկում ամենահարուստը, ինչի՞ց է նա երկյուղ կրում, ո՞վ է իրեն պարտ:

**30** Այդ խոսակցությունը հաճելի էր Մկրտումին: Նրա մեջ զարթնում էր փոքրիկ գազանը, որի ճանկերը դեռ ոսկրացած չէին և որը սակայն ավելի ազահույթյամբ էր հարձակվում հոր կողմից հռչակված որսի վրա: Դրանից էր, որ նա ավելի համարձակ էր կարդում մուրհակը, արագ գումարում, երբեմն փողը ստուգում: Հիբանն աչքի տակով նայում էր, և ինքնագոհ ժպիտը մեղմացնում էր նրա դեմքի խոժոռ արտահայտությունը:

Մի առավոտ էլ, երբ հոր հանձնարարությամբ հսկում էր, թե ինչպես են խուզում տան առաջ նստած ոչխարներին, Ծփրեմն եկավ և կանչեց եղբորը: Երկուսով ներս մտան: Հայրը պառկել էր կարպետին... Սանամ հորքուրը բարձ էր դնում նրա գլխի տակ. ծերունին արխալուզի կոճակներն արձակել էր ու խոր շնչում էր: Գուռն ձայնից գլուխը մի քիչ բարձրացրեց, տեսավ որդիներին: Ծփրեմի ճակատը համբուրելուց հետո ձեռքով նշան արեց, որ դուրս գնան... Սանամ հորաքույրն էլ հետևեց նրան: Մկրտումը հասկացավ հոր հայացքը և թաթերի ծայրով մոտեցավ դռանն ու կապը գցեց: Ծերունին ձեռքով կարպետին խփեց, հասկացրեց, որ Մկրտումը նստի: Ու գլուխը նրա կողմը դարձնելով շշնչաց.

10

— Ուզում էի ոչխարի մոտ գամ... Հը՞, բուրդը հո երեսից չեն խուզում, Գոգին էնտե՞ղ է...— Մկրտումը գլխով արեց: Հոր գունատ դեմքը նրան սարսափեցրեց: Մի՞թե մեռնում է... Ուրեմն մենակ պիտի մնա... Ու նա հիշեց պարսպի և տան կտուրի մասին եղած խոսակցությունը:

Մի անգամ հոր հետ գնացել էր քաղաք: Վերադարձին նա ցանկություն էր հայտնել տան շուրջը պայտիսպ քաշելու, իսկ կտուրն էլ թիթեղով ծածկելու, ինչպես քաղաքումն են անում: Հիբանը բարկացել էր նրա վրա:

20

— Շհարո՞ւմ... Շհարում հազար լրբություններ են անում... Իմ կարողությունը ես էն սեացած տանն եմ հավաքել: Թող մի քիչ էլ կտուրը կաթի, հոգիդ դուրս չի գա, որ ձյունը մաքրես...

Բայց քիչ հետո համաձայնվել էր պարսպի կառուցման մտքի հետ:

— Հազար մարդ է անցկենում, հազար աչք է նայում... Էղպես ավելի ապահով կլինի:

Եվ խոսք էր տվել եկող գարնանը քար ու կիրը հավաքելու: Թեկուզ քար ու կիրը պատրաստ էր, բայց հայրը դարձյալ հետաձգում էր: Մկրտումի առաջին միտքն եղավ պարսպի կառուցումը: Հիբանն ասես որդու միտքը հասկացավ:

30

— Չէ, դեռ ժամանակը չի... Էղբան շուտ չի լինի: Ես ժամանակը գիտեմ...— Մկրտումին թվաց, թե հայրը հասկացավ իր միտքը՝ նրա մահվան մասին: Ու նրա մտքովն անցավ, որ հոր մահը մոտ չի, և նա գիտե, թե երբ է գալու ժամանակը:

— Սանամ հորքուրիդ կպահես, թող տերութիւն անի, մինչև... Հը, բան-ման կա՞, թե չէ...

Այդ մասին հայրը մի անգամ էլ էր հարցրել իրեն, երբ միասին գնացել էին անտառը գերանները շոկելու: Խոսքը Մկրտումի կնոջն էր վերաբերում: Երկրորդ տարին էր, ինչ ամուսնացել էր, բայց երեխա դեռ չունեին: Հիբանն իր քրոջն էր մի քանի անգամ հարցրել այդ մասին, և թեկուզ Սանամը եղբորը հանգստացրել էր, թե դեռ հարսը երեխա է, բայց և այնպես նրա հետ խոսելուց հետո, հարսին այնպիսի հարցեր էր տվել և այնպիսի խորհուրդներ, որ մանկամարդ կինը ամաչելուց կարմրել և արցունքն աչքին հեռացել էր տան անկյունում դառը հեծկլտալու:

Հոր հարցին Մկրտումը չպատասխանեց: Կարմրեց ու սկսեց կարպետի ծայրը մատներով տրորել:

— Կլինի, կլինի... Իմ ցեղն անժառանգ չի... Սանամ հորքուրիդ կպահես: Մի քիչ խելքը պակաս է, համա աշխատավոր է... Եփրեմին բռանդ մեջ կպահես, խելքը խակ է, բայց ո՞վ գիտե ինչ դառնա... Դե գնա՛, գնա՛, բուրդը ցրիվ շտան: Մեծաբուրդը թող շոկ դարսեն. անվա էլ գինը թանկ է... Տե՛ս, նորընծան տա՞նն է, ասա թող գա... էդ հոգսից էլ պրծնենք,— և ասես ինքն էլ սարսափելով իր մտքից, որ մահը մոտ է, դեմքի մկանները կծկելով, ասաց,— չէ՛, ժամանակը ե՛ս գիտեմ... Թող գա... Թող գա,— և պինդ, շատ պինդ սեղմեց որդու ձեռքը: Մկրտումը մեջքը ձգեց ու թեքվեց հոր կողմը: Հայրըն անզոր ժպտաց.

— Տեսնո՞ւմ ես ինչ ուժ ունեմ... Դե գնա՛, գնա՛...

Մկրտումը դուրս գնաց: Ենթի մոտ Սանամ հորքուրը գոգնոցի ծայրով սրբում էր արցունքը: Մկրտումը տեսավ այդ և այն թափը, որով նա դուրս եկավ բուրդ խուզողներին կարգադրելու հոր ասածը, այդ թափը կոտորվեց, ոտքերը թուլացան: Ու շվարած հայտնեց միայն, որ հայրն ուղարկում է քահանային կանչելու:

Լուրն ամբողջ գյուղում արագ տարածվեց: Ծաշի մոտ քահանան նրան հաղորդութիւն էր տվել և երբ դուրս էր եկել, գյուղացիներին հայտնել էր, որ Խոջա Հայրապետը դեռ շատ է ապրելու, գուցնը տեղն է, հիշողութիւնն արաջվա պես: Մի

քանի ծերունիներ քշիչացել էին, որ հոգին ծանր է տալու, շատ պիտի տանջվի:

Բայց և այնպես գալիս էին նստոտում կարպետի վրա, գրուցում: Զրույցն ընդհատվում էր, երբ ներսից լսվում էր հիվանդի ձայնը... Ոմանք աշխատում էին Մկրտումի աշքին երեվալ: Մի քանի կանայք, մանավանդ հարսի ազգականներից, ներս ու դուրս էին անում, ավյում, սրբում, կարպետի վրա նեղլիկ ներքնակ գցում, եթե եկողը գյուղի ազդեցիկ մարդկանցից էր: Ոմանք առաջին անգամ էին տեսնում նրանց տունը և օտարոտի հայացքով դիտում էին պատերը, օճորքը, պատից կախած գորգերը, գետնի լայն կարպետը: Անկյունում նրստած երկու մարդ քսփսում էին, հագիվ լսելի ձայնով մեկը պատմում էր մյուսին, որ դիմացի պատից կախած ծաղկավոր կարպետը Զեյթա գյուղացի Աբասինն է, և Հիբանը վերցրել է այդ տասը ոտքը պարտքի դիմաց:

10

Երեկոյան հիվանդի դրուժյունն ավելի ծանրացավ: Ենչառությունն ընդհատ էր. մերթ կորչում էր շունչը, հիվանդն աչքերը խփում էր, դեմքին և ոչ մի մազ, ոչ մի մկան չէր շարժվում,— մերթ խորանում էր, կրծքի վանդակն ուռչում... Հիվանդը դեն էր գցում վերմակը, փորձում տեղում նստել, ինչ-որ բան էր ուզում ասել, բայց լեզուն կապ էր ընկնում: Կողքին կանգնողներից ամեն մեկը իր կերպ էր հասկանում հիվանդի միտքը. մեկը բարձն էր ուղղում, մյուսը պատուհանն էր բաց անում, իսկ երրորդը պատվիրում էր ջուր տաքացնել: Մկրտումը մեկ հորն էր մոտենում, մեկ դուրս գալիս, Եփրեմին, Գոդուն և ծառաներից հենց առաջին հանդիպողին կարգադրություններ անում, որից և ոչ մեկը հիվանդի առողջությանը չէր վերաբերում: Սակայն բուրն էլ գիտեին, որ ինչ էլ պատահի, կովերը պիտի կթեին, ոչխարը փարախն անեին, ձին թիմարեին, շան տեղը փոխեին:

20

Վերջին հյուրը՝ Տեր Նորընծան, բարի գիշեր ասաց, մի քանի խոսք էլ ավելացրեց այն մասին, թե հիվանդն ամուր է, հարվածը կանցնի և դեռ շատ տարիներ կապրի: Մնացին մոտ ազգականները: Կես գիշերին իրոք որ Հիբանն իրեն լավ զգաց: Հայրը Եփրեմին հարցրեց, թե ձիուն ինչ խոտից ե՞ս տվել: Մկրտումը մեկ-մեկ թվում էր, թե ուքեր էին եկել:

30

— Ասում ես Առուտա՞մն էլ էր,— և հոնքերը կիտեցի՝ Առուտամը Ավան ամուհայրն էր: Հիբանի և նրա մեջ հին և խուլ թշնամութիւն կար, շնայած դրան, Առուտամը մի քանի ծերունիների հորդորանքը լսելով, եկել էր իր թշնամու վերջին տեսութանը, բայց գալուց հայտնել էր, որ հիվանդի հետ չի խոսելու:

— Ո՞վ գիտե, ինչ էր մտածում... Մարդ է, հողեղեն է, չէ՞, Սանամ,— հարցրեց Հիբանը:— Երևի ուզում էր հաշտվի, հը՞... Թե եկել է, որ հետո ծիծաղի: Հը՞, Սանամ, խոսի է՞... Ինչ ես պապանծվել:

— Հայրապետ, շար ես մտածում... էն խեղճը ամենից շատ էր թառանջ քաշում:

— Հա՛, լա՛վ, լա՛վ, ուրեմն մարդ է, խիղճ ունի... Վերջին դատաստանը միտն է բերել:— Ու մի քիչ հետո հարցրեց.

— Տեր նորընծան գնա՞ց...

— Հա, կանչե՞մ,— ասաց Մկրտումը:

— Զէ, էնպես... Ուզում էի մի բան հարցնեմ:— Մի պահ էլ աչքերը ման ածեց, կարծես մեկին փնտրում էր, հետո կողքին դարձավ: Սանամը մոտեցավ, թիկունքը ծածկեց ու Հիբանը խոր քնեց:

Մյուսներն էլ ցրվեցին, ամեն մեկը մի սենյակում քնելու: Միայն Սանամն ու հարսի մայրը կուշ եկան հարևան սենյակի անկյունում, ննջում էին և թերթի թողած գրույցը շարունակում: Սանամը պատմում էր, որ եղբայրը առավոտ կանուխ կանչել էր իրեն և զանգատվել, թե գիշերը լավ չի քնել:

— Էն հարսն, ասում է, երազիս եկավ... Մարտվ էի: Մեր էն մեծ գավաթով ջուր տվեց... Խոռով գնաց, գավաթն էլ շառավ ձեռիցս... Ասում է, քանի՞ տարի է, երազումս նրան իսկի չէի տեսել:

Հարսի մայրը աչքերը լայն չռած իր կասկածն էր հայտնում այն մասին, թե երազը վատ է, նշանը՝ շար:

— Էլի գավաթն առնե՞ր... Փորձանքն առած կլինե՞ր:

Լուսարացին, երբ Սանամ հորբուրը հանկարծ զարթնում է և քունը գլխին վազում հիվանդի սենյակը, նա տարսափած ետ է կենում: Գորգի վրա սպիտակահալավ ճատած է լինում

Հիբանը, արխալուղն ուսերին... Քրոջը տեսնելուց գլուխը վեր է հանում և հազիվ լսելի ասում.

— Մկրտումի՞ն...

Սանամի ձայնից զարթնում է և հարսի մայրը, հետո Մկրտումը: Բայց հենց այն վայրկյանին, երբ Մկրտումը ներս է մտնում, հիվանդը ձեռքով ետ է տանում գորգի ծայրը և ընկնում: Ու միայն Մկրտումն է տեսնում գորգի տակ ծածկված ինչ-որ բարակ կապոցներ:

Երկու օր դիակը մնաց նույն սենյակում: Մարդ էին ուզարկել առաջնորդից թույլտվություն առնելու, Հիբանի մարմինը եկեղեցու բակում թաղելու համար: Մինչ այդ բակում կանայք ու տղամարդիկ եփում էին, թխում, լվանում, մորթում և պատրաստութուն տեսնում խոջա Հիբանին այնպիսի շուքով թաղելու, որի նմանը, ինչպես հայտնել էր Մկրտումը քահանային, Կարմրաքարը իր օրում չէր տեսել:

...Այդ օրից շատ տարիներ էին անցել: Խոջա Հիբանի գերեզմանաքարը մի քիչ թաղվել էր, ոտքերի կողմն ավելի, քան գլխավերևը: Զաղացպանի ասելով, այդ նրանիցն էր, որ մարդու ոտքի ոսկորներն ավելի շուտ են փտում, քան գլխի ոսկորը: Գերեզմանաքարի գրերը տեղ-տեղ հողով ծածկվել էին: Ամառվա շոգին գյուղում մնացած մի կաղ ոչխար կամ հիվանդ հորթ, տապից նեղվելով, մտնում էր եկեղեցու գավիթը և ոտքերը հազիվ փոխելով գնում, հյուսիսային գավիթի հովում, խոջա Հիբանի տափակ գերեզմանի վրա նստում և ննջում. մինչև իրիկվա հովն ընկներ և տերը գար նրան գավիթից տուն քշեր:

Թեկուզ Հիբանի գերեզմանաքարն էլ թեքվել էր, բայց նրա անունը դեռ հիշվում էր թե՛ Կարմրաքարում և թե՛ շրջակա գյուղերում: Հիբանի տեղը Մկրտումն էր բռնել: Ծիշտ է, նրան խոջա չէին ասում, այլ խոջա Հիբանի տղա, բայց շատերն էին խոստովանում, որ Հիբանը խստության հետ ուներ և բարի սիրտ, համենայն դեպս «միամիտք էր և ուամիկ» ինչպես ասում էր շաղացպանը:

Որդիներն ավարտել էին պարիսպը, տան կտուրը թիթեղել: Կարմրաքարում առաջ էլ ամեն օր հիշատակում էին նրանց անունը, երբ ասում էին՝ «Հիբանի տղի եղները», «Հի-

10

20

30

բանի հողերը», «Հիբանի ձին», «Հիբանի ժամանակվա պարտ-  
քը» և այլն,— բայց այդ ամենի վրա որդիներն ավելացրել էին  
խանութն ու աուտուպը:

10 Խոջա Հիբանն էլ էր առևտուր անում, բայց նա խանութ  
չունեւր: Բարդաններով բուրդ էր հավաքում և ուղտերին բար-  
ձած ճանապարհ գցում քաղաք իր ծանոթ վաճառականին  
հանձնելու: Գերան էր ծախում, գարնան սկզբին փող էր բաշ-  
խում և աշնանը փողի դիմաց վերցնում մասցու, բուրդ, ու-  
խար, պանիր: Ու միշտ էլ գյուղամիջում քահ-քահ ծիծաղում  
էր քաղաքի վաճառականների նիստ ու կացի վրա:

— Ամեն մինը մի ծակ են մտել, մի քանի թոփ չիթ ու  
կտորի վրա նստել, արշինը ձեռքին, աշքը քուլովն անցկացո-  
ղին, թե ինչ է, մի քանի շահի փող քցեն դախլը: Դուքանս ո՞րն  
է... Սա որ ձին նստում եմ, փափախս թեք դրած, իմ ոչխարի  
կողքովն անցնում, հազար դուքանի թայ շեմ անի:

10 Բաղաքի առևտրականների մասին նա այն կարծիքին էր,  
թե բոլորն էլ խեղճ ու կրակ մարդիկ են, ըստ մեծ մասին աղ-  
քատ, և միայն իր նման խոջա ապրանքատերերն են (կամ ինչ-  
պես ինքն էր ասում «մյուլքադար և դովլաթով» մարդիկ), որ  
20 մի կտոր հաց են տալիս նրանց:

Ինչպես կփրփրար ծերունի մյուլքադարը, եթե հրաշք պա-  
տահեր, գերեզմանից դուրս գար, անցներ գյուղի փողոցով և,  
իրենց բլրակին շհասած, բարակ առվի մոտ, տեսներ քարաշին  
մի տուն, կապույտ ներկած երկու մեծ դռներով, դռան ճա-  
կատից ցուցանակը՝ վրան գլուխ շաքար, մի քանի կապ թեյ և  
ոուսերեն գրած՝ «Մանրուքի խանութ եղբ. Մանգասարովների»...  
Խանութի մի անկյունում աղաքարի կույտեր, մեծ տակառ-  
ներ, մեջը լի ցորեն, գարի, ապա բարակ միջնորմը՝ վրան շատ  
30 ծանոթ գորգեր, գորգերի վրա պղնձե փայլուն կշեռքը, իսկ դա-  
րակներում՝ ճոթ ու կտոր, գուլնզգուլն չիթ, թոփեր՝ մահուդ,  
ատլաս, ծոպավոր թաշկինակներ, շաքար, պնակներ, լամպի-  
ապակի, բաժակներ, կոճ ու թել, մի խոսքով այն ամենը, ինչ  
վաճառում էին քաղաքում: Եվ այդ խանութում՝ Եփրեմը, բու-  
խարա փափախով, սև մահուդե պինջակով, ինչպես հագնում  
էին քաղաքի վաճառականները, և որի համար էլ նա ծաղրում  
էր նրանց (պինջակը մարմինը մինչև սրունքները չէր ծածկում,

ինչպես Խոջա Հիբանի շալի շուփան և մեջքից վար բաց էր մընում, որի համար էլ քաղաքացիներին Հիբանը մի անգամ ծաղրական ու ծանր խոսք էր ասել): Եփրեմը շփե թոփերն առաջը թափած՝ հաճախորդին գովում էր, Ֆիրմայի անունը տալիս՝ Ցինդեյի սատին, Մարոզովի «ամենապերվի» հալավացուն: Գովում էր և շափում, արշինը հոտավետ չթի մեջ այնպես ֆոռացնում, ասես մանկուց նրա հետ էր խաղացել... Իսկ անկյունում, դախլի մոտ նստած էր Մկրտումը, որը հին ճանանչ Սուլեյման քերվայի որդու երկու հարյուր ուռբլու մուրհակը ծոցի հաստ «կնիշկայի» մեջ պահելուց հետո, այդ նույն տեղից հանում էր և մեկ-մեկ հաշվում 15 հատ տասնոց, նույն կարմիր տասանոցներից, ինչպիսիք կային հոր ժամանակ...

10

Խոջա Հիբանի մահից հետո այդ խանութն էր ավելացել Կարմրաքարում, որի շաքարն ու չիթը գնված էին այն դրամով, որի մասին Խոջա Հիբանը իր վերջին ցանկությունն անգամ չկարողացավ որդուն հայտնել...

• • •

Օրը մթնում էր:

Իրար հետևից վառվում էին ճրագները: Երբեմն ճրագը ձեռին մեկն անցնում էր բակով: Հեռվից այնպես էր երևում, ասես մութի մեջ լույսն ինքն իրեն է շարժվում ու հանկարծ հանգչում: Նախիրից հետ մնացած մի կով բառաշում էր գյուղի ծայրին: Գետի մյուս ափին, գյուղի դիմացն ընկած անտառի բացուտում խարույկը բոցավառվում էր: Կրակը մեկ հանդարտում էր, մեկ վեր սլանում, և միլիոնավոր կայծեր ցրվում էին խավարի մեջ: Ասես հսկա մի աստղ էր թպրտում ծառերի արանքում:

20

Իսկ քիչ հետո, երբ խավարը թանձրացավ, ու ճրագները մեկ-մեկ հանգան, որպես հսկումի կրակ մնաց միայն անտառի խարույկը, որի շուրջ բոլորը նստոտել էին խողարածները, և Հիբանի ամարաթի լուսավոր պատուհանը, որ բլուրի բարձունքից անթարթ աչքի պես դիտում էր գյուղին:

30

Վերին հարկի այն սենյակը, ուր մահացել էր Խոջա Հիբանը, անճանաչելի էր դառել տարիների ընթացքում: Հիբանի ցածրիկ և հաստ տախտակներից սալքսած թախտը Մկրտումը

121

քանդել և ցորենի ամբարում միջնորմ էր շինել: Նրա տեղը դրված էր երկաթե մահճակալը, վրան՝ բարձերի կույտը: Անկյունում կողք կողքի շարված էին բուրդովին նոր աթոռներ: Սեղանի վրա փողը կապույտ ներկած գրամաֆոնն էր, կողքին գիպսե մի հորթ: Խանութից տուն դառնալուց, երբ հարկավոր էր լինում արխալուղը փոխելու, Մկրտումը քրքրում էր գրպանները և կեղտի մեջ մոռացված մի քանի պղնձադրամ հանում, գիպսե հորթի մեջ գցում:

10 Սենյակի պատերը զարդարված էին խալիներով ու կապերտներով: Հատակին, պատերի տակ փոխած էին բարաճ ներքնակներ, ծածկված նեղ ու երկար գորգերով: Թեկուզ մահճակալը, սենյակի մնացած կահկարասիքն առել էին քաղաքի մեծ մագազիններից, իսկ գրամաֆոնը Եփրեմն էր Բաքվից բերել, բայց և այնպես սենյակն անճաշակ էր կահավորված: Գրամաֆոնի և աթոռների վրա մի մատ փոշի կար: Ոչ նվագել էին և՛ ոչ էլ նստել աթոռների վրա: Մկրտումը և նրա մոտ եկողները գերադասում էին ծալապատիկ նստոտել փափուկ գորգերի վրա, թիկնել պատին: Միայն Եփրեմն էր աշխատում «աբրազոնի և քաղաքավարի» լինելու, ինչպես ինքն էր ասում:

20 Առաստաղից կախած ճրագն առատ լույս էր տալիս: Ու թեկուզ գարնանամուտ էր, բայց և այնպես բուխարիկում վառվում էին կաղնու շոր փայտերը և տաքացնում տունը: Բուխարիկի մոտ, մութաքային թիկն էր տվել Մկրտումը, կողքին՝ համրիչը: Նա լուռ նայում էր երկար ու նեղլիկ մատյանին, շրթունքները շարժում և սպա թերթը շրջելուց առաջ համրիչի հատիկները հետ ու առաջ տանում, հաշվում:

30 Լուսնուր խանգարվում էր համրիչի շրխկոցից և այն ձայներից, որ լսվում էին ներքի տնից: Այստեղ էր ապրում Եփրեմի ընտանիքը, օրվա մեծ մասն այնտեղ էր անցկացնում և Մկրտումի կինը՝ Շողերը: Սանամ հորքուրն էլ, եթե ցուպին հենվելով շաքաթը մի անգամ գալիս էր հորանց սուռը, ներքի տունն էր գնում: Նա գանգատվում էր, որ մահը մոռացել է իրեն, ոտքերում այնքան ուժ չկա, որ քարե սանդուղքը բարձրանա և մի անգամ էլ տեսնի այն սենյակը, ուր մահացավ իր եղբայրը:

Մկրտումը ապառիկների մատյանն էր թերթում: Եթե մի օր կորչեր Տեր Նորընծայի շափաբերական մատյանը, և քահանան ձեռքի տակ ոչինչ չունենար որոշելու համար, թե մի քանի տարի առաջ գյուղում ի՞նչ ծնունդ կամ մահ է պատահել,— հեշտ կլիներ պահանջած տեղեկությունը քաղել Մկրտումի «նիսիանների դավթարից», որի նեղ ու երկար երեսների վրա գրանցված էին ոչ միայն Կարմրաքարից, այլև հարևան հայ ու թուրք գյուղերից շատ տնտեսություններ, ըստ նրանց զորության կարգի: Մատյանի առաջին մասում ունեկոր տնտեսություններն էին և շատ «պաշտոնի» (ինչպես ասում էր Եփրեմը) մարդիկ, որոնց ամենօրյա առուտուրը նրանց խանութիցըն էր: Վերջում մի քանի էջ հատկացված էր նրանց, որոնք Եփրեմի ժարգոնով կոչվում էին «Ղարիքանոցի խումբ»: Մատյանը միօրինակ ձևով չէր գրված. կային երեսներ, ուր Մկրտումի բարակ ձեռագրով նշանակված էր. «ձեռաց առավ 15 մնթ. հօգոստոսի 9-ին»: Բայց ավելի հաճախ, մանավանդ եթե ապառիկն ապրանքով էր եղել, մատյանն ավելի մանրամասն էր ասում: Օրինակ՝ «Շալուն Սիմոնին մի գրվ. շաքար կնունքի համար, ևս հիլ զանջաֆիլ 10 կոպ.»... «Քարիվերդի Սուլեյմանին հարսանիքի համար 10 արշ. զոլավոր, Պրոխորովի լաստիկ—8 արշ., գյուլի այլուխ—3 հատ, մի զլուխ շաքար Բրոզսկու, լավը, խոշկյաբար—4 գրվ., նաբաթ 1 գր., ևս լամպի շուշա տասանոց—1 հատ, բոլորի գումարը—22 մանեթ 34 կոպ.»:

10

20

Առանձին էր քոչվորներին բաց թողած ապառիկի ցուցակը: Ամեն գարնան ամպ ու փոշու մեջ կորած հազարավոր բազմություն հեռավոր տափաստաններից ոչխարը, ուղտը, եզն ու ձիու երամակներն առաջ արած բարձրանում էին այն լեռնաշղթան, որի մասին վաղեմի ճանապարհորդ վարդապետն իր հիշողությունների մեջ գրել է, թե մատանը՝ նման օղակում են Կարմրաքարը և աղամանդի պես սպիտակ լիճք բարձր պահում: Քոչն իրար էր խառնվում. հետև մնացողները նեղվում էին տափարակի տոթից, անասունները փնչոցով շտապում էին, օր ու գիշեր ճանապարհ կտրում սարի թարմ կանաչի համար: Հետինները քշում էին առաջիններին, ճամփի նեղ կայերում տավարն իրար էր խառնվում, բարձրանում էր շտես-

30

նրված աղմուկ-աղաղակ: Եվ հենց հասնում էին լեռնաշղթայի փեշերին, ամեն «օյմաղ» ցրվում էր իր պապերի ոտքերով ծեծած կածանով և նորից վրան զարկում սարում թողած նախահայրերի գերեզմանների մոտ:

Այդ քույր Կարմրաքարի միջով շէր անցնում, բայց նրա ծայրը երևար թե չէ, աշխուժանում էին շատերը: Եվ շարժաների մի ամբողջ խումբ ասեղներով, հայելիներով, գունավոր կանֆետներով, թաշկինակներով ու այլ մանրուքով լի տոպրակները շալակած նրանց առաջն էին ելնում, խռնվում բազմության մեջ, ծախում, փոխանակում, ծանոթներին հանդիպում և մի շաբաթ հետո գյուղ վերադառնում՝ պարկերը նորից լցնելու եղբայր Մանգասարովների խանութում:

Եվ թեկուզ բազմությունը Կարմրաքարի վրայով շէր անցնում, բայց և այնպես փոքրաթիվ խմբերով երևում էին գյուղում: Ոմանք աղուն էին բերում ջաղացպան Անդրու մոտ, ոմանք գալիս էին Կարմրաքարի իրենց ճանանչ մարդկանց պատվիրելու, որ անտառում վրտանների համար երկար ձողեր պատրաստեն, ոմանք՝ հենց այնպես, միայն իրենց ծանոթներին այցելած լինելու համար: Սակայն ինչ գործով էլ գային, նրանք սար բարձրանալուց պիտի անցնեին Խոջա Հիբանի որդիների խանութի առաջով, որպեսզի ծովեն աչ ու Քառասնաչրի նեղ կածանով, անտառի միջով հասնեն իրենց «օյմաղին»:

Այդ օրերին մի քանի տասնյակ ձիեր կապված էին խանութի առաջ ընկած գերաններից: Ներսում եռ ու զեռ էր: Հարցնում էին քեֆ-հալ, իրար ձեռք տալիս, որդիների ու հարազատների առողջությունից տեղեկանում, հյուր կանչում իրար: Մկրտումը քուն ու դադար չուներ: Նա ընդունում էր ներս եկողին, ոչ միայն անունը տալիս, այլև տեղեկանում, թե ինչպես է մայրը, լավացած արդյոք այն կապույտ ձին, որ անցյալ աշնանը մի քիչ կաղում էր: Բոլորը զարմանում էին նրա հիշողության վրա: Նրան առանձնապես հաճելի էր, երբ այդ ժխորի մեջ մեկը բարձրաձայն իր գոհունակությունն էր հայտնում, որ հիանալի «քիրվու» է Խոջա Հիբանի որդին և չի մոռանում իր լավ ծանոթներին: Եթե հաճախորդը հարուստ և անվանի աղալար էր, Մկրտումը ճարպիկ շարժումով ինքը պի-

տի դարակներից հաներ բազմատեսակ կտորներ, փռեր նրա առաջ, շլացներ գույնով, փայլով ու հոտով:

Առուտուրն այնքան թեժանում էր, որ նույնիսկ Գողոնն էին կանչում և պատվիրում աչքի տակով հսկելու: Գողոնն հյուրերին էր ընդունում. եթե եկողը «մեծամեծ» էր, վազում էր ձիու սանձը բռնելու, ձիերն իրար հետ կովելուց կատվի ճարպկությամբ նրանց փորերի տակով անցնում էր և բաժանում իրարուց: Նրա աչքերը ծանր ու մինչև բերանը ճոթ ու կտորով լցված խուրջիների վրա էր, որ տերերը կապում էին սարի կանաչից կայտառացած ձիերի գավակին և անտառի կածանով գնում հարսներին ու մանուկներին ուրախացնելու «Հիբան քիրվալի» որդիների պարզևած փոքր թաշկինակներով, մեջը լի մրգեղեն կամ գունավոր ու կլոր սապոններով, որ հատկապես նրանք պահում էին նվերների համար:

10

Երբ գնորդը ձեռքը մեկնում էր Մկրտումին կամ Եփրեմին մնաք բարով ասելու, նրանցից մեկն ու մեկը շտապ կոսում էր և անկյունի նախօրոք պասուրաստած կապոցը, որ համեմատ էր գնորդի անձնական բարեմասնության և հարստության չափի, — մեկնում նրան ու ժպտում, թեկուզ միտքն այդ րուպեին ծայր աստիճան լարված էր, և խնդրում կապոցը հանձնելու «Աթաքիշի կզուն» կամ «Սոնա-Նալային» ու հայտնելու «սալամ դովա» մեծ ու փոքրին:

20

Քոշի բարձրանալու հետ միասին ծայր էր առնում և դժգոհությունը: Ընդ տ է, քոշից ոմանք օգտվում էին. դարբինը նրանց համար հարյուրներով էր պայտեր կտրատում, կոտրած մանգաղները նորոգում: Ոմանք գաղտնի կերպով անտառում նրանց համար ցախ էին կտրատում, մի քանի շարժի մանրուք էին վաճառում, նույնիսկ Շալուն Սիմոնին էին կանչում մոտակա «օյմաղներից», որովհետև նա անասունների բժշկությունից բան էր հասկանում, ու թեկուզ նրա գործիքը մի կոտրած դանակ էր, որով կտրում էր ականջի ծայրը կամ քթածակը ճեղքում, «հիվանդ» արյունը դուրս թափելու համար, — Կարմրաբարում շատերն էին օգտվում քոշվորներից, բայց հենց նրանք սալը բարձրանային թե չէ, սկսվում էր և դժգոհությունը: Գյուղից սար գնացող քոշվորը մի քիչ հեռանար թե չէ, ձիու սանձը թույլ էր թողնում և ձին մոռթթ մեկնում

30

էր ճանապարհի կողքին, անտառի բացուտում ցանած կանաչին: Արտի տերը կանաչից մի փունջ ձեռքին շտապում էր գլուղի հրապարակը, գոռում, բարկանում, անթիվ անգամ կըրկնում: որ գիշերը քսան-երեսուն ձի են բաց թողել գարու մեջ, կերել են, տրորել, ձիերը թավալ են տվել, և եթե փողոցում տեսնում էր տանուտերին կամ նույնիսկ գզիրին, նրա ոտների առաջ էր գցում խուրձը, գովում էր գարին և նորից պատմում այն մասին, թե որքա՞ն են կերել: Գլուղի իշխանավորը նրա բողոքը լուռ լսում էր, խոստանում, որ կարգադրութուն կանի ակտ կազմելու, կհայտնի պրիստավին, միայն հարկավոր է երեք-չորս մարդ տանել, որ նրանք էլ վնասը տեսնեն և վկա լինեն նրա խնդիրքին: Բայց այստեղ էլ ամեն ինչ վերջանում էր, գանգատավորը բարձրաձայն հայտնում էր, թե ամբողջ գյուղն է վկա և որպես վերջին ապացույց գրպանից հանում էր փնջավոր կանֆետի թղթեր, որ հավաքել էր արտից:

10

— Մի դատա հրեն էնտեղ ա թափած... Սրա ուտողին ես ուժ ունե՞մ դատաստան անելու: Իմ իշխանն էլ դու ես, այ քյոխվա, բա իմ երեխեքը ձմեռն ո՞ւմ հույսին ես թողնում:

20

— Կանփետ տվողին ասա, ուտողն ինչ մեղք ունի... Դու էլ որ ուտեիր, հավատա, մի օրավար կորեկ կոխ կտայիր,— վրա էր բերում գանգատին ունկնդիրներից մեկը:

Պատահում էր, որ վնասը մի քանի տնտեսութունների էր հասնում և կամ ամբողջ համայնքին: Սարից մի քանի սուրու ոչխար գիշերով քշում էին և արածացնում Քառասնաչրի մոտերին ընկած այն բացուտները, որ ամեն տարի Կարմրաքարում թողնում էին անասունների աշնան կերի համար: Աղմուկ էր ընկնում գլուղում, դուրս էին թափվում և գոռում-գոչւոնով գնում ոչխարատեր «օյմաղից» վնասը պահանջելու: Երբեմն աղմուկն արյունով էր վերջանում, երիտասարդները տաքանում էին, և մահակները սուսերների նման կայծեր էին հանում, զարկում, իրար դուխ ջարդում: Շատ սակավ դեպքում էր օրենքը միջամտում ու դատաստան անում: Սովորաբար տաք կովից հետո կրքերը հանդարտվում էին, այս ու այն կողմից մարդիկ էին մեջ ընկնում և հաշտեցնում:

30

— Հազար անգամ եմ ասել, թե թուրքերից օգտավետ ազգ աշխարքի երեսին չկա: Նրանց ձին էլ, որ թրքում է, էլի մեր

126

ցորենն է ուժովանում: Նրանք որ կան յոնջա են, մենք էլ քյոհլան ձի... Մի դրազից կե՛ր, մի դրազն էլ պահի: Երբիսի նման ժողովուրդ են, խոսքին ջան ասա, էլի՛ քու ասածն արա: էդ էլ չի փողով: Այ է՛... Մեր հայությունը շատ անհասկ է,— թոնթորում էր Մկրտումը:

— Քու արտը քանի անգամ կերած կլինեն,— հարցնում էր Ավան ամին:— Ինչ որ գալիս է, քյասիքի գլխին է: Յարա ունեցողը կիմանա մրմուռը: Քեզ ի՞նչ կա...

— Իմ ու քունը չկա էստեղ: Ես մարդավարության, նստիլ վեր կենալու մասին եմ ասում: Տեսնո՞ւմ ես ոնց են իրար պատիվ պահում. մեծը ջոկ է, փոքրը ջոկ: Մերոնք հենց շաշ ելան նման քարն են պողահարում: Թուրքը էնպես մի ազգություն է, որ կսիս տաս, մին ծուռ խոսք չի ասի անժամանակ:

10

Երբեմն Մկրտումի երեսին ավելի խիստ խոսքեր էին ասում, հանդիմանում էին, որ նրանց խանութի պատճառով են քոչվորները գյուղ գալիս, որ նա քոչվորների շահին չի ուզում դիպչի: Եվ նրա ականջովն էր հասնում գյուղում տարածված այն լուրերը, թե ինքը կաշառված է, նույնիսկ թե իբր նրա գիտությամբ են գիշերով Կարմրաքարի խոտհարքն արածացնում:

20

... Բուխարիկում բոցն արդեն հանգել էր: Փայտի շիկացած կտորները մեղմ ճաքճքում էին, փշրվում և մոխրի բարակ շերտով պատում: Մկրտումը վերջացրել էր ապառիկների հաշիվը. գորգի վրա դրած համրիչի հինգ շարք սառել էին և ցույց էին տալիս եղբ. Մանգասարովների առևտրական հզորությունը թե Կարմրաքարում, թե հարևան գյուղերում և թե վրանաբնակ այն բազմության համար, որ յուրաքանչյուր գարուն «քոչ ու բարխանով» բարձրանում էր լեռնաշղթայի փեշերը և վրան զարկում լճակի եզրին:

Մկրտումը ձեռքերը մեկնում էր կրակին, իրար շփում: Երբեմն էլ տաքացած ձեռքը երեսին էր տանում և շոյում այտերը: Հավասար ու խոր շնչառությունից զրնգում էին գոտու արծաթ գինգերը:

30

Նրա ականջին էին հասնում ներքի տան աղմուկը, երեսների ձայնը: Հաստ գորգերի արանքից այդ աղմուկը խուլ էր լսվում, կարծես շատ հեռու տեղ էր: Բակում բառաշում էր մի կով: Երբեմն լսում էր շղթայի զրնգոց: Չամբարն էր, պա-

ուով շունը, որի տեղը մուժն ընկնելուց փոխում էին, և բակի լայնքով կապած երկաթե լարին շղթան քսելով, շունը ետ ու առաջ էր գնում, երբեմն հաշում: Չամբարի հանդիսի Մկրտումը կրեսը պատուհանին էր դարձնում և աչքերը լայն բաց արած լսում: Բայց շունը դադարում էր հաշելուց, հատ ու կենտ և անորոշ ձայներ էին լսվում հեռվից: Փակվում էին աչքերը, սակայն միտքն արթուն էր և շարունակում էր հյուսել, ծանր ու թեթև անել հազար ու մի գործ:

Դարպասի երկաթին մտրակի կոթով իրար հետևից հար-  
**10** վածեցին, կարծես զնդացիրի կրակ էր: Մկրտումը մոտեցավ պատուհանին. Գողին ճրագը ձեռին վազեց դարպասի կողմը: Շունը հաշաց ու շղթան քաշելով հասավ մինչև ներքի տան դուռը: Ներքի տնից դուրս եկավ Եփրեմի կինը: Քիչ հետո դարպասը բացվեց, երևաց ձին, որի սանձից բռնել էր Գողին, ձիու հետևից՝ Եփրեմը:

Խոզա Հիրանի մահից հետո երկու եղբայրների մեջ լռել-  
յայն աշխատանքի բաժանում էր սահմանվել: Քաղաքում գը-  
նումներ կատարելը, պետական հիմնարկների և պաշտոնա-  
տար անձանց հետ գործ վարելը, ինչպես և խանութում առու-  
**20** տուր անելը Եփրեմին էր բաժին ընկել: Ընդհատ է, տարին մի կամ երկու անգամ Մկրտումն էլ էր քաղաք գնում, բայց այդ ավելի շուտ բարեկամական այց էր իր հոր բարեկամ վաճառականների որդոց: Մկրտումին էր մնում՝ գյուղի տնտեսության կառավարելը, վար ու ցանքի եկամուտը և բուժվորների ու շրջակա գյուղերի բնակիչների հետ առևտրական գույքաբքներ կատարելը: Մկրտումի գրպանումն էին դախլի բանալիները, միայն նրան էր հայտնի ստացվածքի վերջնական շափն ու կանխիկ դրամի գումարը: Նա մեծ եղբայրն էր, գյուղում ավելի կշիռ ուներ, քան Եփրեմը, իսկ թուրք թարաքամայի հետ Եփրեմը  
**30** չէր կարող վարվել իր եղբոր նման: Տանը, բարձր պարիսպների հետև, ոչ մի բան չէր կարող կատարվել առանց Մկրտումի գիտություն: Եվ այդ ազդեցությունը հազար ու մի ճանապարհով տան սահմաններից դուրս էր գալիս, տարածվում շրջակայքում:

Մկրտումը ձիու վրնջոցը լսեց թե չէ, համբիշը սեղանի վրա դրեց, դավթարը՝ երկաթե սնդուկի մեջ, որ ծածկված էր

նուրբ գործած շալով, ներքի տանը երեխաների աղմուկն ավելի սաստկացավ, լավեց թրմփոցի ձայն, ասէ՛ մի պարկ վերեկից ընկավ՝ ապա բարձր ծիծաղ: Եփրեմն էլ: Ամեն անգամ քաղաքից վերադառնալուց հետո նա նախ երեխաների մոտ էր գնում, մրգով լի գրպանները դատարկում, տնեցոց պատվիրած և քաղաքում գնած իրերը հանձնում կնոջը կամ Շողերին: Նրա խուրջինում տան մեծ ու փոքրի համար միշտ էլ մի բան էր լինում: Նույնիսկ Շողերն էր հետևում և անհամբեր սպասում իր բաժնին: Գողին ձին գոմում կապելուց իսկույն վազել էր ու դռան մոտ կանգնել. նրան էլ մի բան պիտի հասներ: Պառավ Չամբարը կոնձկոնձում էր, ասես ուրախ այդ ժխորի մեջ իմաց էր տալիս, որ իրեն շնորհակալ:

10

Բայց հերիք էր, որ Մկրտումը վերից կանչեր մեկն ու մեկին, որպեսզի աղմուկը դադարեր: Սովորաբար նա Գողուն էր ձայն տալիս, սակավ դեպքում՝ կնոջը: Եթե նրա կանչելը Եփրեմի գալուց հետո էր, ոչ Գողին էր վեր բարձրանում և ոչ էլ Շողերը: Եփրեմը ունքերը կիտում էր և, իբր խուլած երեխա, բարձրանում վերև, մտքում թոնթորալով իր վիճակից:

Մկրտումը մի ներքին հրճվանք էր զգում իր մեծությունը և ուժը ցույց տալուց: Ամեն անգամ, երբ նա տեսնում էր եղբորը երեխաների հետ կամ տնեցոց հետ ուրախ զրույց անելուց, նրա ներսում երկու զգացում իրար հետ պայքարում էին: Մեկ նախանձում էր եղբորը, դառնություն մը զգում, որ ինքը զուրկ է այդ հաճույքից, մտաբերում վաղուց մեռած իր մանկան և ինքն իրեն հարցնում՝ մի՞թե մինչև վերջ պիտի անծառանգ մնա, — մեկ նախանձում էր եղբորը և մեկ էլ ցամաքում էր այդ զգացումը, մի ուրիշն էր ելնում, նրան խեղդում, մի ուրիշ զգացում՝ հանուն գործի, անդուլ աշխատանքի, հարբստություն ու հզորություն: Առաջինը նրան թուլացնում էր, կորցրնում իր հավասարակշռությունը, երկրորդը նրան խրոխտ կերպարանք էր տալիս:

20

30

— Ցեխը շա՛տ էր Վերին կապում. — հարցրեց նա, երբ Եփրեմը մտավ ու մոտեցավ բովսարիկին: Վերին կապը քաղաք տանող ճանապարհի այն մասն էր, որ անցնում էր անտառի խիտ թավուտով և ուր միայն ամառն էր գետինը մի քիչ չորանում:

129

— Չորս նա խարար,— քթի տակ ասաց Եփրեմը։— Երկու տեղ ձին խրվեց... Քիչ մնաց ինձ էլ տակովն աներ։ Մո՛ւթ, ոչ ճանապարհն է երևում, ոչ ցեխը... Ոտդ որտեղ դնում ես, խրվում է...

Եթե Մկրտումը շքնդհատեր, Եփրեմը դեռ կշարունակեր ճանապարհի նկարագրությունը, մեկը տասը շինելով։ Մկրտումը գիտեր նրա սովորությունը։ Ինչքան ավելի էր պատմում, այնքան նա համոզվում էր, որ քաղաքում նա մի «օյին» է արել։

10

— Դու էլ լուսով գայիր...

— Թողնո՞ւմ են... Մինչև էն շան որդուն թուղթը գրել եմ տվել, հոգիս բերանս է հասել։ Ամենապասլեղնի պաղլեցի հետ գործ արա, էդ շինովնիկների դուռը մի գնա։ Քոտոտ, փսխիքը կախ, տանը լակոտները հաց շունեն ուտեն, էնպես փստոնով է խոսում, ծանրացնում, կասես գեներալ գուբերնատոր է իմ գլխին։

— Վե՞րջը... փեշատե՞ց։

— Աչքն էլ շհանցի՞... Փորացավը մի կարմիր տասանոց էր։ Առաջ շեմ ու շում էր անում, ա՛յ ուզալովնի բան է, վերջն էլ թե հացից հետո արի տուն, օրենքին նայեմ... Որ Բեկտարեգովի անունը տվի, ստատյան գտավ։

20

— Բեկտարեգովն ի՞նչ ասեց։

— Մ՞նչ պիտի ասեր։ Չեստ շեստի, գրեց... Թե գասպադին Նիկիտա Մանգասարովին իմ կողմից պերեդայ պակլոն։ Ափոսս չի, էդպես մարդուն պերվի մինիստր դնես, ոչ թե պամոշնիկ։ Դուրս գալուց էլ, թե ասում է ձեզ նման բարեկամ ունենալը մե՞ծ պատիվ է ինձ համար։

— Մաշինեքն ի՞նչ արիր...

— Բեկտարեգովից հետո էլ գնացի նրանց մոտ... Ա՛, մեր հայերը.. էդքան նիզգի, ցիգան ժողովուրդ յարաբ աշխարհի երեսին կա՞, թե չէ։ Ինձ տեսավ թե չէ, ոտը կախ քցեց։

30

— Ո՞րը...

— Էն մեծը, Արշակ Օսպիլը... Թե մի քիչ դարազու մեննի է Էդել, պրեսկուրանտի գինը պրիկաշիկը չի իմացել... Երդում, Աստված, թե էն կանաչ մեռոնը՝ Ռաստովի առքի գինը շուս հազար երկու հարյուր է...

130

— Վե՛րջը:

— Էլ ի՞նչ վերջը... Թե ասում է երկու տրեւտամ կարող եմ վեկսիչով տամ... Թե որ շեք ուզում, խանլար բեյն է ուզում տանի...

— Չտվի՛ր...

— Չէ...

— Չոռ,— ու փրփրաց Մկրտումը:— Գնում ես շհարում քուշեքը շափշփում: Բա քեզ ինչո՞ւ համար էի ուղարկել... Դե մի՛ դժվի,— ու ձեռքը դարկեց ճակատին:— Երկու հարյուր մանեթի համար գործը պիտի քանդե՛ս... Ե՛րբ է խելքդ տուն գալու, հը՛...— ու մտեցա՛վ նրան: Եփրեմը մի քիչ հետ քաշվեց, աչքերը կկոցեց:— խանլար բեյը որ տանի, ուրախ կլինես, հա՛... Նա ո՞ւմ շունն է, որ իմ ուզածն առնի: Թքած նրա քեյության վրա... Սոված տովածի մինը:

— Դե մի թող է՛... Ինչ ես կարկուտ թափում,— ընդհատեց Եփրեմը:

— Հը՛:

— Թուղթ եմ առել, որ մինչև մի շաբաթ իրավունք չունի ուրիշին ծախի, մինչև ինձանից պատասխան չստանա...

— Հա՛...— ու մի վայրկյան հետո հանդարտ ձայնով ասաց.

— Կա՛մ է, էդքան էլ խելքդ կտրել է...

— Իմ խելքս էդքանը հասկանում է... Ասա վերջը էք մաշինները մեր տունը չքանդի,— պատասխանեց Եփրեմը:

— Ինչ էլի...— այս անգամ ձայնը բարձրացնելով վրա բերեց Եփրեմը: Մեծ եղբայրը կանգնել էր անկյունում, գլուխը կռացրել և ունքերի տակից աչքը գցել Եփրեմին.— ամենահայտնի մանուֆակտուրիստ մարդուց մինչև էն պյան գարազավոյը մեզ վրա ծիծաղում են... Ասում են կարմրաբարն ինչ մաշինի տեղ է... Փող ունեք, բերեք քաղաք, թե ումներդ չի պատում, խոզ առեք, ձեր ծմակի կաղինն ուտի: Չգրտ նա խարար... Մարդ աչքերը բաց չորս հազար երկու հարյուր մանեթ տա, ինչ է զավոդ եմ բաց անում էս վայրենի աշխարհ-հո՞ւմ... Ինչ մարիֆաթ, ինչ մարդավարութուն ես տեսել էստեղ:

— Էլի՛ բռնեց... Քորի, լեզուդ քորի մի քիչ:

10

20

30

— Վերջը իմ ասածին կգաս: Գյուղն ի՞նչ է, որ մարդ էնտեղ բնակարվի: Փող ունես, տար քեզ բարեբար մարդոց հետ գործ արա: Երեկվա սողան ծախողն էսօր վտարոյ գիւղի կուպեց է դառել, իսկ մենք էս վայրենի ծմակից դուրս շենք գալիս: Չե՞ս տեսնում... Եատը սոված է, մի թիքա պանիր էլ չի ճարում, որ ցամաք հացը կուլ տա... Օզգյա լազա՞թ կա քաղաքում... Եիկ, լուսավորություն, նստել, վերկենալ, հանգիստ: Փողդ ապրանքի տուր, մի բոյկի ուզլավոյում մագաղինիդ դռները բաց արա, թող պրիկաշիկների հոգին դուրս գա... Դու հենց աչքիդ տակով նայիր: Թե չէ էս ինչ կյանք է... Ես ինձ նման ընկերների հետ մի անգամ նստել վերկենալը շեմ փոխիք ճանաչած մարդոց հետ... էստեղ մնացողը մարդու կերպարանքից էլ կընկնի: Մի օր էլ տեսար՝ ըհը, աղբյուրը ցամաքե՛ց:

— էդ օրը մեզ համար չի,— կտրուկ պատասխանեց Մկրտումը:

Տիրեց լուռութուն: Եփրեմը վանդակի մեջ ընկածի նման քայլում էր սենյակում, երբեմն կանգնում գետնին նայում և ապա ձեռքերը մեջքին նորից շարունակում քայլել: Մկրտումն աչքի տակով նայում էր եղբոր բարկացկոտ շարժումներին:

Ոչ ոք չէր ասի, թե երկու եղբայրն էլ մի մորից ու հորից էին սերվել: Մկրտումը կարճահասակ էր, ոսկրոտ: Նրա շարժումները կոպիտ էին. երկար և մազոտ ձեռքերը վայրենի տեսք էին տալիս նրան և հակապատկերն էին Եփրեմի ավելի նուրբ կազմվածքի: Մեծ եղբոր գլուխը պատած էր կուպրի նման սև և կոշտ մազով, այնինչ Եփրեմի մետաքսի նման կակուղ մազերը տեղ-տեղ սպիտակել էին: Առաջինը զուսպ էր, խորամանկ, ծանր ու բարակ կշռող և պողպատ կամքի տեր, երկրորդը՝ շուտ հուզվում էր, մտքինն ասում մինչև վերջ, կրակի պես լափում մինչև վերջին շյուղը և հանգչում, հանդարտվում, դառնում խոնարհ գառ:

— Չեմ իմանում... Մի պաշտոնի մարդ շտեսա, որ մեր ասածին հավանի,— խանգարեց լուռութունը Եփրեմը:

— Խալխի հացը շես ուտում, որ խալխի խելքով էլ գործ բռնես,— ասաց Մկրտումը և մի քանի քայլ արեց դեպի եղբայրը:

— Պրծա՛ր... Դե հիմա իմը լսի: էգուց ծեգը ծեգին, եկած ճանապարհով ետ կդառնաս, մի տրետը կտաս, պայմանը կկապես, և էն սհաթին էլ ետ կդառնաս... Իմացա՞ր:

— Որ էգուց չլինի, երկու օր հետո լինի, չի լինի՞... Լավ մտածի, արի՛ ձեռք քաշի էդ բոլորից... Քաղաքում տարա՛ն կերան, ով աչքը բաց է անում, վազում է մարդի շարք ընկնում... Մեզ կարողութ՛յուն է պակաս... էգուց երեխաներին ուսում տալ կա՛, կյանք ու աշխարհ տեսնել կա:

— Կարմրաքարից լավ տեղ աշխարհումս ինձ համար չկա, թող ում գլուխը ցավում է, գնա քաղաքում դուքան դնի... 10  
Քաղա՛ք... Մի հարցնող լինի, թե ինչ կա էդ պրիշակում... էնքան բան կա՛ էս ձորերում, իմ պիլնին խող քցեմ, երկու տարուց հետո էնպես զավող բաց անեմ, որ թամաշա... Քառասնաշուրը թող իմը լինի, Մանթաշովի բուրողներին էլ թամահ չեմ անի... Սա երկիր չէ, ոսկի է տեղովը մին. ասենք անհասկացողը մենք ենք:

— Ոսկի է, հավաքի,— հեգնեց Եփրեմը:

— Կհավաքեմ, սպասի՛,— այնպես վճռական հայտարարեց Մկրտումը, որ եղբայրը մի պահ տատանվեց ու սկսեց կասկածել, թե միգուցե Քառասնաշուրը իրոք ոսկեհանք ունի և ինքը տեղյակ չէ: Նա ձեռքը տարավ ծոցին, շոշափեց նոտարի կողմից հաստատած այն թուղթը, ըստ որի Քառասնաշրի երկու ասփին ընկած մոտ 60 դեսյատին պետական անտառը պատկանում է նրանց:

— Դու ողջութ՛յուն ասա... Աշխատող մարդը քարից էլ նավթ կհանի: Կարմրաքարի ի՞նչն է պակաս... Ո՞վ ունես քո դիմաց... Զէ՛, գնամ քաղաք հազար լոթու ընկեր դառնամ... Ապերը լավ էր ասում, թե նրանք մեզանով են ապրում: Մանթաշովը մի ջուխտ տրեխ էլ շուներ, որ գնաց Բաբու... 20  
Հրես ոսկին դռանդ թափած, սարքի, ստեղծի՛, թող քո անունն էլ բարձրանա, մի քսան-երեսուն աղքատներ էլ էն փշրանքովդ ապրեն, հորդ ողորմի տան...

— Է՛հ, չեմ իմանում,— ասաց Եփրեմը.— նա արդեն տատանվում էր և զգում, որ եղբոր ձեռքից չի ազատվելու մինչև թղթերը շտա ու տարած փողի հաշիվը շներկայացնի:

— Զես իմանում, իմացի՛ր... էս ո՞ւմ համար ենք աշխա-

տում. Ես ի՞նչ ունեմ մեջը: Մի դատարկ անուն: Քող թո ժա-  
ռանգները մեծանան, տիրութիւն անեն:

Այս ասելուց Եփրեմը զինաթափ եղավ: Նա շատ էր սի-  
րում իր երեխաներին: Այդ գիտեր և Մկրտումը և երբ ուզում  
էր նրան կակղեցնել և իր ասածին բերել, նա տրտմութեամբ  
հիշեցնում էր այն տարբերութիւնը, որ կար երկու եղբոր մեջ  
և հուսադրում, որ իր մահից հետո ամեն ինչ մնալու է նրան:  
Եփրեմը ծոցի գրպանից հանեց թուղթը, ցույց տվավ, թէ ում  
ստորագրութիւնները կան, ինչ ասաց Բեկտարեգովը, երբ  
10 կնքեց:

— Էդ փեշատն, ասում է, որ դնում եմ, ինքը պրակուրորն  
էլ չի կարող քանդի: Նա զդարովյե, ասում է, ձեզ հալալ լի-  
նի... Զորտ եվո, էդպես ազնիվ մարդուն գուբերնատի լինը  
թիչ է:

— Վեկսիլը տվի՞ր,— հարցրեց Մկրտումը:

— Տալը թիչ էր... Կտոր-կտոր արի, ճակատամիջին շպըր-  
տեցի: Նա ում շունն է, որ մեզ վրա հաշի... Երեկվա ձեթ ծա-  
խողը: Ասում է սուդի կտամ, որ ինձ խայտառակ ես անում:

— Հետո՞:

30 — Իսկյանդարովների պրիկաշիկն եկավ, էնպես նրան  
անպատվեց, ո՞ր: Ասում է ամբողջ գուբերնիում Մանգասաշով-  
ների նման ակուրատնի սովետով գործ անող չկա. դու ո՞նց  
էիր ուզում նրանց վեկսիլը պրոտեստ անես: Լավ խայտառա-  
կեց: Ծս էլ շաքարը նրանց սկլադից առա: Խաղեինն ասում է,  
մինչի հարյուր հազարը դավերյա կանեմ, ինչ ուզում ես տար,  
կորած տեղ չի: Տարավ, մարդը, շնորհակալ եմ, լավ պատվեց:

— Դու էլ կակղեցիր, հը՞,— հեզնանքով ասաց Մկրտումը  
և համրիչը վերցնելով սեղանից, մոտեցավ նրան:— Ինչքա՞ն  
փող ունես մտդ:— Եփրեմը սկսեց գրպանները դատարկիւ-  
30 դրամը մեկ-մեկ դնում էր սեղանի վրա, իսկ Մկրտումը հաշ-  
վում էր:

— Զորս մանեթ էլ քցի գերբովի մարկա, մնաց 11, նրա-  
նից 5 մանեթ քանի կոպեկի պակաս պռատ եմ առել տանը  
համար:

— Ի՞նչ պակաս... չեն կարող դուքանից տանե՞ն:

— Գողու համար մի լակիրովնի պոյես եմ առել:

- Գորո՞ւ... նա ի՞նչ է անում:
- Ասում է, ուզում եմ տնավորվեմ:
- Ո՞ւմ աղջիկն է:
- Շալուն Սիմոնի...

— Հա՛, լավ, մնացա՞՞ծր:

— Մնացածն էլ Իսկյանդարովի պրիկաշիկի հետ գնացինք ռեստորան, զակուակի արինք: Շաքարի սկլադը նրա ձեռքին է:

- Լավ, հո ավել շե՞ս ծախսել, պարտք շե՞ս արել:
- Ձէ, շխտի եմ. կոպեկը կոպեկին բռնում է. ուզում ես **10** մեկ էլ քցի:

— Ձէ, էս անգամը լավ ես, խելոքանում ես... Դե գնա, բեզարած կլինես. էգուց ուզում եմ հիմերը քանդել տամ: Դու էլ, ոնց որ ասի, առավոտ կանոպս կգնաս, մի տրետը կտաս, ճանապարհը շորանալուց կուղարկեն, մնացածն էլ կստանան:

Ծփրեմը դուրս եկավ: Նա ուրախ էր, որ հաշիվները շխտի» հանձնեց: Ճիշտ է, քաղաքում նա ավելի էր ծախսել, ռեստորանում նրա հետ եղել էին Իսկյանդարովի գործակատարից բացի և մի քանի ծանոթներ, խմել էին ու գնացել բիլիարդ խաղալու և մութն ընկած հազիվ էր կամպանիայի ձեռքիցն ազատվել,— բայց և այնպես հաշիվը տեղը բերեց և դուրս եկավ «կրուգում շեստնադցատ», ինչպես ասում էր Իսկյանդարովի գործակատարը: Նոտարի մատենավարին, որին Ծփրեմն անվանեց փսլնքոտ ու քոսոտ, նա ամենևին չէր էլ կաշառել:

Նըբոր դուրս գնալուց հետո Մկրտումը մի անգամ էլ նայեց թղթին, ստորագրութուններին ու կնիքին, զգուշութամբ թուղթը պահեց սնդուկում: Շոշափելու շափ պարզ նա զգաց այն հզորութունը, որ ձեռք է բերելու այսուհետև: Նրա վաղուցվա միտքն էր Կարմրաքարում հիմնելու սղոցարան և պատրաստելու գերան ու տախտակ: Քառասնաչրի երկու ասփին, մինչև ձյունոտ գագաթները ձգվում էր խիտ անտառը և միանում այն մեծ անտառամասին, որի փեշերին ընկած էին մյուս գյուղերը, և որից դեն հյուսիսից հարավ ընկնող լեռնաշղթան դարձյալ պատած էր անտառով: Դեռ անցյալ աշնանը նա քաղաք էր գնացել հատկապես իմանալու գները, շուկայի պահանջը և մտքում հաշվել էր օգուտը ու որոշել գնելու ոչ մի-

**20**

**30**

այն անհրաժեշտ ստանունկն ու երկաթե մասերը, այլև այն անտառամասը, որ ընկնում էր Քառասնաչրի մոտ, և որտեղ մտադիր էր կառուցելու սղոցարանը:

Եփրեմի բերած թուղթը իր ծրագրի մի մասն էր: Ստանուկը դեռ չկար, սղոցարանի տեղը դեռ կանաչ էր, ձորակում, դեղնած տերևների տակ՝ գորշ սառույց: Շուտով կզրնգան սղոցները, անիվը կդառնա, փոկերն ետ ու առաջ կվազեն և հաստաբուն կաղնիները կսղոցվեն, կդառնան բարակ ու լայն տախտակներ... Բազմաթիվ սայլեր կճռռան, կտեղափոխեն

**10** տախտակները, գոմեշները քարշ կտան ծանր գերանները, և ամեն տեղ կտանեն նրա ապրանքը:

Մկրտումը կանգնել էր սանդուղքի գլխին ու նայում էր գյուղին: Գիշերվա սառը քամին ծեծում էր նրա կուրծքն ու դեմքը: Նա ազահ շնչում էր անտառից եկող թարմութունը: Լուռ էր գյուղը. ոչ մի ճրագ չկար և ոչ մի ձայն: Թույլ կաղկանձոց էր գալիս ներքևի թաղից, կարծես մրսում էր մի շուն: Մոտակա խրճիթից լսվում էր մանկան ճիշ: Զաղացի առաջ մի փոքրիկ կրակ պեծին էր տալիս:

— Երանի նրան,— մտածեց Մկրտումը,— մինչի՛ լուս էլ

**20** մասլահաթ կանի...

Դիմացի սարի ետևից լուսինը պոռնկը հանել էր: Սարից խավարը կախվել էր, ծածկել ձորը, շաղացը, գյուղի մեծ մասը: Եվ ինչքան բարձրանում էր լուսինը հորիզոնի վրա, այնքան խավարը հետ էր քաշվում: Հեռվից խուլ վշշոց էր գալիս. քամին անտառում ծառերի դեռ լերկ ճյուղերը իրար էր տալիս և բացվող բողբոջների բույրը թևերին առած տանում հեռունները:

Մկրտումն իշավ սանդուղքով: Չամբարը շղթան երկաթե լարին քսելով մոտեցավ նրան, ոտներին փաթաթվեց:

**30** — Չամբա՛ր, Չամբա՛ր... Անիրա՛վ,— փաղաքշական ձայնով ասաց նա: Շունը հասկացավ նրա փաղաքշանքը, ավելի արագ սկսեց հոտոտել ու իր հավատարմութունը ցույց տալու համար վազեց դարպասի կողմը, մի քանի անգամ հաչեց, էլի հետ վազեց:

Վերևից Շողերը կանչեց.

— Գլխաբաց ե՛ս... Քամի է...

Նա հետ նայեց ու աստիճանների գլխին տեսավ կնոջը, սպիտակաշոր, շալի մեջ փաթաթված: Ինչքան նման էր նա առաջվա Շողերին, այն գիշեր, երբ մայրն իրեն մոտիկ գյուղն ուղարկեց մշակներ վարձելու: Շողերը կանգնել էր սանդուղքի գլխին, ճրագը բռնել էր ու լույս էր անում: Լույսի տակ՝ բարակ ու սպիտակ ձեռքը կարմիր շալի տակից:

Մկրտումը կայտառ մանկան պես վեր բարձրացավ... Ներքի տնից նա լսեց Եփրեմի ծիծաղն ու մանկան լացը... Հայրը փոքրիկին անկողնուց հանել էր, գլոբում էր ու փափուկ տեղերից ցավեցնելու շափ համբուրում:

10

Խոշա Հիրանի ամարաթի վերի հարկի ճրագն էլ հանգավ: Մնաց միայն ջաղացի խարույկը, որի շուրջ նստած մարդկանց ջաղացպանը պատմում էր իր ամենից սիրած հեքիաթն այն մասին, թե ինչպես մի հովիվ ոչխարը լճի մոտ տանելուց՝ տեսնում է սպիտակ աղավնիների, որոնք անհայտ է, թե որտեղից իջնում են, փետուրները թողնում լճի սփին, դառնում փերի աղջիկներ, ջրի մեջ լողանում, ինչպես հովիվը գողանում է մեկի թևերը, և աղջիկն էլ շի կարողանում սպիտակ աղավնի դառնալ...

Գարունը բացվել էր:

20

## 3

Արբեցնող բույր էր բարձրանում այգիներից ու գետափին ընկած ծառաստաններից: Սարերը մուգ կանաչ էին հագել, և միայն բարձրերում, ամպերի տակ, ձյունի մանրիկ շերտերը դեռ սպիտակին էին տալիս: Քարաքոսն ու մամուռը գարնան խոնափությունից ուռճացել ու պես-պես գույներով ներկել էին ժայռերն ու քարերը: Անտառի թանձր կանաչի միջից երևում էին հատ ու կենտ ցցաշոր ծառերը: Օդում աղմուկ կար, որ գոյանում էր անթիվ-անհամար բզեզների ու մեղունների բզգոցից, թռչունների կանչից ու վար անողների երկար ու ձիգ հորովելից:

30

Կարմրաքարն էլ էր կերպարանափոխվել: Տերևակալել էին տների առաջ եղած հատ ու կենտ ծառերը, փտած գերանների վրա սունկերը շար էին ընկել, կաուրներին կանաչ էր բուսել

137

ու կախվել: Եկեղեցու գավթում խոտն այնքան շատ էր, որ Ավան ամին ըստ վաղեմի սովորության, Տեր Նորընծային խորհուրդ էր տալիս կանաչը խոտհարք պահելու և արգելելու, որ կաղ ոչխարներն ու գոլզամիշի էշերը կոխ տան ու թավալեն:

Բացվել էր գարունը, աշնան ցանած արտերը ծփում էին ծովի նման, մոխրագույն կոհակներ տալիս: Ունանը քուն ու դադար չունեիր. վարում էր, հա վարում, հորովել տալիս... Մտերն ու ագռավները երամներով հետևում էին նրա վարին և թաց հողի միջից, խոփի հենց բերանից թոցնում ճիճու և որդ: Գարնան փարթամ բնությունը ավելի էր խտացնում այն կոտորաստը, որ գոյություն ունեիր Կարմրաքարի ու նրա հանդերի միջև: Գեղեցիկ էին արտերը, մարդու ձեռքով տնկած ծառաստանները, նրա կապած մարգերը, ուր արդեն կանաչել էր լորին, սարյակները ճովողում էին կտուրների տակ կամ տանձենու ճյուղերի վրա, և միայն մարդու բնակարանն ու ինքը մարդն էր, որ գարնան պայծառ արևի տակ փռելու ուրիշ բան չունեիր, մաշված կարպետից ու միթիլը պատռած վերմակից բացի:

Գյուղի ամենավատ ժամանակն էր: Տաշտը դատարկ էր, օրը մի քանի անգամ աչք էին գցում գարու արտերին, որ շուտով պիտի գորշանար ու հասկ գցեր: Մաքուր էին փողոցներն ու բակերը, որովհետև աղբը կրել էին բանջարանոցները, գարնան արևը ծծել էր աղբակույտերի կծծահոտն ու խոնավությունը: Մաքուր էր և տների ներսը. ձմեռվա հաստ շորերն արեվին էին տվել ու հագել հնամաշ արխալուղները: Ոմանք ծանրը փափախները դեն էին գցել, կապույտ թաշկինակ կապել գլուխներին:

Ավան ամին կացինը գոտկատեղում խրած, մեծ դանակը ձեռքին՝ այդուց այդի էր շտապում, պատվաստները ստուգում: Ամբողջ գյուղին էր հայտնի, որ Ավան ամու նման ոչ ոք ոչ պատվաստը գիտեր, ոչ էլ ծառի «խասիաթը»: Անտառը նա գիտեր հինգ մատի նման: Տեր Նորընծայի հետ երբեմն վեճի էր բռնվում և գրաղ գալիս, թե ինքը կարող էր ասել այսինչ անտառամասում քանի ծառ կա, և ինչ ծառեր են, իսկ տերտերը չի կարող ասել, թե ժամագրքի այսինչ երեսին ինչ աղոթք է գրված:

Ամեն այգում էլ նա պատվաստած ծառեր ուներ. յուրաքանչյուր գարնան այցի էր գնում իր պատվաստած ծառերին, ճյուղերը կտրում, խորհուրդներ տալիս և զայրանում, երբ տեսնում էր, որ շեն արել իր ասածը:

— Տանձն ուտելուց ճյուղերն էլ հետն ես մաշկում... էս ձեռքդ կկտորի՞, որ տակը փեխես...

Գյուղի ամենալավ այգին նրանն էր: Փոքր էր, բայց խնամքով մշակած: Գարունը բացվելուն պես ծառերի շոր կեղևը մաշկում էր, քերում, կոխ տալիս մաշկի տակ ձմեռած միջատներին և շոր տերևները վառում: Ծվ էրը մեղվի քթոցները սհարից այգի էր տեղափոխում, այդ նշան էր, որ մինչև խոր աշունը օրվա մեծ մասն այգումն է անցկացնելու:

10

— Ավան ամին քոչը բարձեց հա՛... Գարեքը հրես կհասնեն...

Արևը շինջ երկնքի վրա հուրհրին տալով լողում էր և դանդաղ բարձրանում դեպի գագաթը: Գյուղի փողոցներում մարդ չէր երևում: Բոլոր քարի ստվերում մուշ-մուշ քնել էր հարյուրամյա մի ծերունի, որ աշխատանքի այդ եռ ու գեռին եկել էր և, գլուցընկեր շփոնելով, քնով անցել: Խանութի առաջ մի քանի ձի արևից նեղվում էին և գլխով ու պոչի շարժումով քշում ճանձերին: Քոչն արդեն բարձրացել էր. ձիավորները սարից էին իջել տնեցոց համար թեյ, շաքար ու կտոր գնելու:

20

Արդեն սկսվել էր քաղհանը: Հարս ու աղջիկ առավոտ կանուխ քաղհանի էին գնացել. նրանք տարել էին և փոքրերին ու տան դուներից կախել ժանգոտած կողպեքներ, բանալին պահելով հավաքնի մեջ: Ոմանք էլ դուռը միայն վրա էին դրել և բարակ թելով կապել, որ շունն ու հավը ներս չմտնեն: Այգիների կողմից լսվում էր բայաթու ծործոր ձայն, գետի մոտ՝ մեկը հա կանչում էր էշին՝ «թոշ-թոշ...»: Զաղացի դռանը մարդ չէր երևում:

30

Փառասնաչրի կողմը, Խոջա Հիբանի մեծ արտում քաղհանավորի երկար շարքն էր ձգվել: Այնքան դանդաղ էին շարժվում, որ նայողին թվում էր, թե գույնզգույն շորերի շարքը կանայք շեն, այլ գունավոր քարեր արտի կանաչի մեջ: Շարքի ձախ ծայրին, ձորակի մոտ սպիտակ շորով մի կին ավելի հաճախ էր բարձրանում, երբեմն ձեռքը ճակատին տանում՝

130

արևից պաշտպանվելու համար և նայում ձորակի կողմը, որ-տեղից լսելի էր տխուր երգի ձայն, ուրախ ծիծաղ ու մուրճի միադար զրնգոց: Աղչիկը ձայներից շոկում էր, որ տխուր երգողը ուստա Նազարն է, «հայաստանցի գաղթականը», որի տունը գտնվում է Ղարիբանոցում, իրենց տան կից: Ուստան ազատ օրերին էլ էր նստում տան պատի տակ և քթի տակ մոռում նույն երգը: Ուրախ ծիծաղը, որ ձիու վրնջոցի էր նման, Արզումանին էր, իսկ զրնգացողն իրենց ծանր մուրճն էր:

10 Երրորդ օրն էր, որ ուստա Նազարը Մկրտումի պատվերով ու նրա տված շահով աշխատանքի էր անցել Քառասնաչրի ձորակում, այնտեղ, ուր անտառի և նրանց հողի սահմանն էր: Տեղը նա էր որոշել և ուստա Նազարի հետ միասին քողով շահել պատի երկայնքը, ցույց էր տվել, թե որտեղ պիտի շինեն ջրի ամբարտակն ու երկարավուն ծածկը: Նրա ցույց տված տեղով հիմքը փորել էին, անտառի միջից մի նոր առու հանել, որպեսզի մինչև ամբարտակի կառուցումը Քառասնաչուրը նոր առվակով հոսի:

20 Աշխատանքը ետում էր: Արզումանը, որ այդ գարնանն էր գինվորութունից վերադարձել, ուժով հենվում էր ծանր լինզին և մեծ քարերը տեղահան անում: Նա ձորակի մյուս ափին էր, մի քիչ բարձր: Ամեն անգամ քարը գլորելուց քահ-քահ ծիծաղում էր և կանչում ուստա Նազարին, երբեմն էլ հայհոյում էր քարին, լինզին՝ հենց այնպես, ըստ սովորության:

— Ուստա Նազար, ես քեզ համար բող ստարատցա... Պրիկազը տուր՝ ուզում ես քերժերը թափեմ ձորի մեջ... Յա սալլաթ 117 պենզենսկի պոլկ տրեսի բասալիոն ավտարո բոտա պալուչիտ Արզումանու Եղիգարովու սելեննի Կարմիրկար

30 Ելիսավետպոլսկի գուբերնի... Այ, ես քու իմանը... Սիմոն ապեր, մեղ մին ֆելդֆեբել ունեինք, գլուխն էս քարի շափ կար... Որ նո՛ւ էր ասում, սաղ զվոդը դողում էր... Իսկական վրասնյսկի խոզ... է՛յ Իվան Իվանիչ, էս էլ քո հոր գլոռին...

Եվ քարը դողդալով գլորվում էր ցած: Կիտված քարերը մեջքով կրում էր մի դեռատի պատանի: Նրա պատառոտած շորերը փռոտավել ու ցեխոտվել էին, քարերը քերժել էին թևերը: Պատանու մեջքին շուլի կտոր էր, որի վրա շարում էր քարերը և տնքալով բարձրանում: Երբ Արզումանը վերից ձայն էր

տալիս, թե քարն եկավ, պատանին վեր էր բարձրանում և դիտում, թե ինչպես է քարը քարին դիպչում, ցլանքներ ցրում ու կայծ տալիս:

— Եզոր, հեռո՛ւ... Քսան փութանոցն եկավ,— կանչում էր Արզումանը, և պատանին ետ էր կենում:

Եզորն ինքն էր քարը բարձրացնում, դնում մի ուրիշ քարի վրա, ապա մեջքը դեմ անում ու ձեռքերը ետ տանելով քարը գրկում: Արզումանը վերևից դիտում էր նրան: Մեծ քարին մոտենալուց, կանչում էր.

— Էդ քո ճաշը չի, մալխոլնի... Թեթևը տա՛ր... Ուզում ես գրիժա ստանա՞ս... Ախ տի սիմուլյանտ... Իուսի թագավորն անունդ հրեն ծոցի դավթարում պահում է: Եզոր Մուրադով, մի պատառ էլ պանիր հաց ուտես, մեծանաս, կասի, իդի գալուր-չիկ, կավալերիստ խարոշի... Մի ձի կտան, շաշկեդ էնքան տանես, բերես, որ կոներդ թուլանա... Փախի, քարն եկավ...

Ու նորից քահ-քահ ծիծաղում էր:

— Սմիրնո, գասպադա ափիցերի,— այնպես բարձր գոռաց Արզումանը, որ ձայնը հասավ քաղհանավորներին: Ու Սալբին հանկարծ մեջքն ուղղեց, նայեց ձորի կողմը: Արզումանը լինգը ուսին կանգնել էր քարերի մեջ: Նրան նկատելուց նա լինգն իջեցրեց ու ձեռքը տարավ զինվորական բարևի. Սալբին ժրպտաց, նորից կռացավ, երեսը թաղեց կանաչի մեջ: Կողքին կռացած կինը նկատեց այդ և ասաց.

— Էդքան մի ծալվի արտի վրա... Աչքդ փուշ կմտնի...

Արզումանի հրամանը Ավան ամու համար էր, որն այդ րոպեին վայրի տանձենիներից մի կապ ձեռին դուրս եկավ անտառից ու իջավ ձորակը:

— Այ գլափդ լինի, հա՛,— ասաց նա Արզումանին և, մոտենալով ուստա Նաղարին, հարցրեց.

— Բարի աջողում, ուստա Նաղար... Էս ի՞նչ ես շինում... Մարագ է՛, կալատեղը գեղումն է, թե ասեմ ամբար է, էս ճամփի բերանն ամբարի տեղ չի...

Ուստան ուսերը թոթվեց.

— Ես իմ... Շքենք... Խաղեյնի քեֆ: Մեզ ի՞նչ... Կուզես ուսումարան շինեմ, կուզես դուսաղխանա: Պատը պատ է...

— Մարդ մաշկելու զավոդ է, Ավան ամի,— ասաց Արզումանը, վերից իջնելով:— Գեղումը մարդուց էժան ինչ կա՛... էնքան իզուր հաց ուտող կա՛... Մկրտումը բերելու է, քցի մաշինի ունի, կլպի կարտոշկու նման, ոսկորից ձեթ հանի... Վիդալ մենդալ, ախ տի զեմլյակ... Օշերեդով կանգնելու են, բոտա ստորյա... Ում ժերըն ընկավ, վիզը գնելու է տակը: Բա՛ս... Հիմա էսպես է թագա պրիկազը: Հենց գիտես տանձի տնկելով աշխարհքի թագավորն ե՞ս... Այ ըստեղ տրուբան տրնկելու է, ծովսը մինչև երկինք հանի, Աստծու միտքն էլ խանձի... էյի բող... Ըստեղ մաշին պիտի գալ, դու հլա որտեղ ե՞ս...

10

— Ադա, օյին բաներ մի՛ ասի: Կարմրաքարը մաշինի երես իրա օրում տեսած չի... էնա ասա արադի զավոդ եք շինում, էլի՛...— Եվ փորած հիմքերին ուշադրությամբ նայելուց հետո ասաց.— էսքան մե՛ծ...

— Բա էստեղ ինչ պիտի շինեք,— ու ձեռքը մեկնեց ձորակում թափած քարերին:— Միմո՞ն... Միմոն, էլի դու մի բան գլխի քցես, էս Արզումանը հո էն գլխից էր շաշ, ասենք թե թագավորին շորս տարի սաղաթություն է արել...

20

— Շա՛շ... Հիմա հմ տեսնում, որ հալիվորել ես, Ավան ամի... Պիշի պրապալ... էս ինջիներ Մանգասարովի զավոդն ա, իմացա՞ր... էն քարերը որ տեսնում ես, ըսենց պիտի ձորի առաջը կտրե՛նք, շորս արշին պատ քաշենք, որ ջուրը գյուլ տա...

— Այ տղա, ճամփու բերան է, հարևան բան կրնկնի մեջը,— ասաց Ավան ամին, ուշադիր նայելով ձորի քարերին և նոր առվի հետքին:

— Միմոն, բա լսում չե՞ս... Քեզ եմ ասում... Գլխի չե՛ս...

— Ծս իմ... Հրեն ասում է, էլի՛... Ծս ո՞վ եմ, որ նրանց խորհուրդն իմանամ:

30

— էստեղ մի բան կա՛, գլխի չեմ... Իմ լսելովս արադի զավոդ պետք է շինի... Համա զավոդի նման չի: Տերտերն էլ ասում էր, թե մեծ ավազան է շինում, որ ամառը ջուրը լցամաքի բոստանների համար...

— Հա, քո ասածն է, Ավան ամի: Նրանց բունը չի տանում, գիշեր-ցերեկ դամիտ են անում, որ Ղարիբանոցի սովածները մեծ պատին լորով շորվա ուտեն: Դու էդ ասա, էդ

տանձիքը ո՞ւմ համար ես տանում... Կարմրաքարի ստարշիքն էլ որ քեզ նման լինեն, ասա ժողովուրդը գնա Մարցա ջուրն ընկնի: Տակիրդ կարպետը քաշում են, հանում, դու հլա երազ ես պատմում...

— Դե որ ուսումնագետ լինենք, հայլաթ մենք էլ յարի դարմանը կիմանայինք: Յա ես, յա էն շոլում բառանշողը, հը՞, ի՞նչ կասես, Եգոր...

Եգորը հոգնել էր: Նա ուրախ էր, որ խոսակցությունով են բռնվել ու հանգստանում են: Նստել էր քարին ու մեկ-մեկ պոկոտում էր թարթանջուկի թևերը, ծամում: Սովել էր և անհամբեր սպասում էր, որ ուստան հացի նստի:

10

— Հիմա ինչ ժամանակներ ե՞ն... Առաջ որ քու տանդ պատին էլ մի քար դնեիր, առանց ջամհաթի խոսքի իրավունք չկար: Մառն ինչ է, էլի տնկելուց հարևանիդ խաթրը պետք է առնեիր, թե հաշտություն չլիներ, գյուղի իշխան մարդկանց մեջ էիր քցում, համոզն առնում... Բա ո՞նց... Մառը շվաք կաներ բոստանի վրա: էն ժամանակն ո՞ւր... Եքքա թոփխանն են շինում, իսկի մի իրավունք, մի հարցմունք: Ամեն մարդ իր գլխի տերը, ուսողն ուսողի: էգուց էլ շափարը կապելու է, թե իմ հողից դուշն իր թևով պետք է շանցնի, էս իմ հայրենիքն է:

20

— է՞, Ավան ամի, էշը կորցրել, շվան կհարցնես... Ասա Քառասնաշուր մերը լինեիր... Թե չէ ձորի մեջ պատ շարելով գեղին ինչ վնաս: Քսան տարի օրն աշխատի, օրը կերա, մի հավարուն շքի... — ասաց ուստան, ծխի քուլաները պնչերից առատորեն հանելով:

— Մալը չետ սիրտդ ուզում է... էս սհաթիս մի տաք բորշ լինեիր, եյ բող, կաշկարին էլ հետը կուտեի: Տվողն ո՞վ է... Հրեն Եգորը տավարի նման սաղ թարթանջուկը կերավ:

Եգորը կարմրատակեց:

— Խարշին խազեյսկի է... Հրես հա՞, — և նա ոտքը մեկնեց սփռոցին: — Մենակ ինձ չի հերիք, — Եգորն աչքը քցեց սփռոցին: — Հը՞, բերանիդ ջրերը գնա՞ց... Սովամահի տղա. պինդ քաշի, փորդ էնպես քաշի, որ ֆելդֆերելի մատներն արանքով չմտնեն: Ավան ամի, թագավորին ծառայելը սրանից լավ է... էլի մի կուշտ փորով հաց ուտում էիր: էնքան բորշ

30

էին տալի՜ս... Չէ, միտքս ծովել է: Աշունքն ուզում եմ Բաքու գնամ, ինչքան շինի հացափոր կաշխատե՛մ, զատոք քեփ էլ կանեմ. հը՞, ի՞նչ ես ասում:

— Ի՞նչ եմ իմանում, որ ի՞նչ ասեմ... Ոչ առաջինն ես, ոչ էլ վերջինը: Վակզալի ճանապարհը շաղացի ճանապարհից էլ հեշտացել է: Հենց ում տեղը մի քիչ նեղանում է, հացը մեջքն է կապում, յալլա՜... էստեղ էլ կոնդ ու շոլխան են մնում, ինձ նման հալից ընկածը: Էնքան գնացին, որ տակին մնացողը հերիք չի նրանց փակ դռներին մտիկ տալու:

**10** Թմբի գլխին ձիու ոտնաձայն լսվեց ու մի վայրկյան հետո երևաց Մկրտումը:

— Լավ ե՛ր... Ուզած վախտը ճաշթող եք արել,— ասաց նա և ցած իջնելով, ձիու սանձը ձգեց Եգորի կողմը, քթի տակ «բարի օր» ասելով: Նրան դուր չեկալ Ավան ամու ներկայությունը, բայց, ծածկելով այդ, դարձավ նրան.

— Էլի փեշակիդ ե՞ս...— ու մտրակի կոթը մեկնեց քարի մոտ դրած տանձենու տունկերին:— Երանի քեզ... Անմահական հիշատակ ես թողնում հուր հավիտյան... Տանձն ուտելու են, քեզ էլ օրհնանք տան: Մենք հե՛շ, Ավետարանի թևում գրրված չի մեր անունը: Ի՞նչ կասես, ուստա:

**20** — Ճշմարիտ է, արդար գործը միշտ կմնա...

— Անարդա՞րը,— կտրուկ հարցրեց Մկրտումը:

— Ո՛վ գիտե աշխարհի բանը...

Նա աչքի տակով նայեց թափած քարերին, փորած հիմքը տեսավ, մտավ մեջը, կոացավ և աչքի շափով ստուգեց պատի ուղղությունը:

— Խելքդ ի՞նչ է կտրում,— դարձավ նա Ավան ամուն,— էլի ինչքան շինի ինձանից փորձված ես... էս իմ պլանից ի՞նչ դուրս կգա:

**30** — Ի՞նչ ես շինում,— հարցրեց Ավան ամին դժկամությամբ:

— Ուզում եմ Կարմրաբարը լուսավորեմ,— ու ծիծաղեց,— մի թեթև զավոդ ամալլու բան եմ սարքելու... Գերան կպատահի, տախտակ կքաշենք, ճանճի, բանի համար յաշիկ կշինենք: Չի պատահի, կրահոր կշինենք, ուզողին կտանք: էս ձորը լիքը կրաքար է... Ուժներս տա, անելու շատ բան կա... Ով գիտի,

բախտի բան է, մեկ էլ տեսար մի ինչիներ եկավ, ասեց թե էս հողի տակին մաղան կա:

— Դե հո սուտ չի: Հրեն ասում են Զեյթալի վերի հանդում քարի քոմուրի մաղան են գտել,— ասաց Արզումանը:

— Որ վնաս էլ անեմ, մի քանի աղքատ էլ է հաց կուտեն: Էդ էլ թող իմ վարձը լինի: Աշխարհը հո հետս գերեզման չեմ տանելու, ասենք մարդու թամահն է շատ... էս է, Արզումանին զավեղուշի եմ դնելու:

— Եգորն էլ ստարշի մաստեր,— վրա բերեց Արզումանը ու ծիծաղեց: Նրա ծիծաղը հաճելի չեղավ Մկրտումին: Փշաքաղվեց, աչքերը խորն ընկան, ճակատի ճեղքվածքի շուրջ արյուն հավաքվեց: 10

— Բա ջուրը ո՞նց ես անում,— հարցրեց Ավան ամին, ժածկելու համար Արզումանի ծիծաղի տպավորությունը:

— Ջուրը ձորով էլի թող գնա... էս պատը քաշում եմ, որ ամառը ջուրը բարակելուց զավողը պարապ չմնա:

— էս ջուրը զավող չի բանեցնի, Մկրտում:

— Զի բանեցնի՞... Վերի առուն էլ շուռ կտամ:— Վերի առուն սարից էք գալիս և անցնում Խոջա Հիբանի մեծ արտով, իջնում գյուղի վրա: 20

— Վերի առո՞ւն,— ու բոլորը դարմացան: Նույնիսկ Եգորը տեղից վեր կացավ ու մոտեցավ նրանց, հետևից քաշելով ձին: Վերին առվակն անցնում էր նրանց բակով, և բակի երկու պատավ տանձենիները ամառվա տապին լիուլի ջուր էին արբում:

— Ոնց կլինի է՞դ...

Միմոնը դադարեցրել էր մուրճի զրնգոցն ու երեսը դարձրել խոսողների կողմը:

— Բա ժողովու՞րդը...

— Ուրեմն կժերով պիտի ջուր բերեն, կալերը ցեխապատե՞ն... 30

— Տանձիքը կշորանա՞ն...

Համարյա միաժամանակ հարցրին Ավան ամին, Արզումանն ու Եգորը: Մկրտումն ունքերն իրար տվավ ու զուլիք թեքելով Եգորի կողմը, կանչեց.

— Չին հեռու տար... Սրան տե՛ս... Կաթը պոռչին շորացիլ չի, խոսքի է խառնվում... Չահրումար տանձիքը: Մմակը լիքը տանձ է, էնքան կե՛ր, որ զխկրտի:

— Ո՞նց ես ուզում: Էն էլ իրենց տան փափախավորն է, ոնց թե ծմակից տանձ բեր,— ձայնը բարձրացնելով ասաց Ավան ամին: Արզումանը մի քայլ էլ մոտեցավ:

— Է՛հ, ասենք նրա խելքը էղբան չի հասնում, դու էլ նրա թայը հո շես,— դարձավ նա Ավան ամուն ժպիտն երեսին:— Ուրեմն հավատացիր, էլի՛... Կաշշ, դե էնա ասի Կարմրաքարի դուշմանն եմ, էլի: Էդ իսկի ես կանե՞մ, ուրեմն ես պետք է քոշեմ էս գեղից: Է՛հ, էդպես է՛... լավություն էլ անես, վատն ես, վատություն էլ անես, աչքից ընկած ես...— սրտենեղած վերջացրեց նա ու շատ խոր նայեց Ավան ամուն, ապա հանկարծ շրջվեց Արզումանի կողմը, ասես ուզում էր իր խոսքի ազդեցությունը ստուգել:

— Կարմրաքարում թե մի բարեկամ ունեմ, հրեն է՛,— ու մտրակի կոթը մեկնեց Սիմոնի կողմը,— չէ՛, Սիմոն...

Սիմոնը չպատասխանեց:

— Մտքումս կա, որ քաշած տախտակից ուսումնարանի համար նստարան շինեմ... Թե չէ էն ինչ է: Ոչ բարով ես էլ եմ հոգաբարձու: Հերու ամառը Բեկտաբեգովն էլ տեսավ... Ասում է հայոց ուսումնարանը մշտական աղքատ է, լավ կանեք միրսկի պրիզովոր տաք, թագավորական շկոլ բաց անեք: Ասի չէ, էդ լինելու բան չի, մեր երեխեքը թող մայրենի լեզվով ուսում առնեն...

— Մին չի՞,— ուսերը թոթվելով ասաց Արզումանը,— դու հաց ասի... Փորին ի՞նչ լեզու...

— Խելառ ես, ինչ է,— հարեց ուստա Նազարը,— մարդ յուր օրենք մոռանա, ոսի լեզվով ուսում առնե՞ն... Մեր երկիր բոլոր հայի լեզու կխոսի:

— Հա, Մկրտում, գերանը ո՞ր ծմակից ես բերելու,— խոսակցությունը փոխելով հարցրեց Ավան ամին:

— Փողի բան չի՞... Թագավորական ծմակը շեն մնա: Փող տուր էգուց կուպչի կրեպոստը հանեմ, ինչքան քեփոդ ուզի հա կտրի...

— Հարկի, փողի բան է, երեխան էլ է իմանում, որ աշխարհս փողի վրա է շուռ գալիս: Իմ ասմունքս դա չի: Օրինակ, զակոնը թույլատրիլ չի, որ Քառասնաչրի ծմակը ծախվի... Շատ էլ թագավորական է: Մեր եզինքը, մեր տավարը, կալից որ դուրս ենք հանում, այբհալ ծմակն են մտնում: Հավերն էլ են գալիս... Աշունքը տավարի յաթաղն է էս ծմակը: Հերու էր թե մեկէլ տարին, մեր Օհանի հավը երկու ամիս ձու չէր ածում: Վերջը քառասուն թե հիսուն ձու ճարեցին ծմակում: Անիրավը մտել էր մոշուտի մեջ... Հա, էն եմ ասում, որ Քառասնաչուրը ժողովրդի հուսատեղն է, օջախի շփը էստեղից են հավաքում: Ուրեմն զակոնի կողմանից թույլատրելի չի... 10

— Ի՞նչը:

— Օրինակ, որ տուկի դենն, Քառասնաչուրը ծախեն:

— Խազենն ինչ ուզի կանի... Մմակը թագավորական է, ում ուզի կտա... Փողի բան չի... 20

— Հա է՛, թող էլի փողի լինի: Ժողովրդի մեջքն էլ հո կտորած չի... Փարթ կանենք, կհավաքենք: Եթե տուկումը դրենն, մենք կանենք...

— Կարելի է՛...

— Դե ես էլ էդ եմ ասում, է՛...

— Որ կորպուզի կամանդիրն էլ գա, մի շյուղ էլ չեմ թողնի կտրի... Սաղ ժողովրդին թոփ կանեմ, բոտա ստորոյսա... պլի,— ու լինզը մեկնեց, նշան բռնեց:

Մկրտումը բարձր ծիծաղեց.

— Ա, հերիք է... Ուրիշն էլ կլսի, կասի խառնակիչ խոսքեր են ասում տերության մասին, հանաքը կդառնա դագանակ: Քառասնաչուրն ում ուզում են տան, տերության հոգան ինձ չեն տվել հո՞,— ու ձայն տվավ Եգորին,— ձին քաշի: Ուստա, դե մի բիշ շահտ արա, էս շաբաթ գլուխը ծածկի: Հայ արևդ կծեմ, գործին տաք կպի,— ասաց Եգուլին, ձին նստելուց, —ողորմած հոգի հերդ գործի մեջ ասլան էր: Հինգ փթանոց ջվալը մի ձեռքով էր ուսին դնում: 30

Ձին փնջոցով վեր բարձրացավ, սմբակները մագիլներով պես խրելով հողի մեջ:

— Խելքդ ի՞նչ է կտրում, Արզուման, ես էնքան էլ գլխի չեմ... — հարցրեց Ավան ամին ու գրպանից հանեց արծաթա-

գլուխ շիբուխը:— Էնպես ասիտունել գիտի ո՞ր, օձը ծակից կհանի: Հը՞...

— Այ, նո՛ւ եվո... Ի՞նչս է կորչում: Մի գլուխ ունեմ, կառնեմ, որտեղ քեփս տա, էնտեղ էլ կապրեմ: Վերջը կերածնիս մի փոր հաց չի՞... Քանի ուժ ունենք, սոված շենք մնա... Վեր կաց, Եզոր... էն քարերն էլ տանենք, հետո տեսնենք ուստա Նազարի փորը երբ է սովածանում: Չէ՛, էգուց ես հետս հաց եմ բերելու... Ուստան ուղտի ջինս է, մի շաբաթ էլ շուտի, կդիմանա...

— Ես էլ գնամ,— ասաց Ավան ամին, ձեռքը մեկնելով  
30 տունկերին:

— Գնա, ծառերդ տնկի... Աշխարհի դարդը քեզ շեն տվել, աշխարհի հերն անիծած... Մինը քոհլան ձին նստած կանաչ տախտերում ման գա, էն մինի մեջքն էլ էնքան քար շալակի, որ փալանը հարի, ջիղավ դառնա:

Եվ բարկացած իջավ ձորակը: Եզորը ոտքերը քարշ տալով հետևեց նրան:

Արզումանը զարմանալի փոփոխական բնավորութուն ուներ: Նա հանկարծ հուսահատվում էր, թքում ամեն ինչի վրա և կատաղած աշխատում, եթե աշխատանք կար ձեռքին: Զինվորության մեջ, երբ նրա վրա իջնում էր այդ տրամադրությունը, նույնիսկ ֆելդֆեբել Իվան Իվանիչը վախենում էր նրան մոտենալու: Մայրահեղ հուսահատությանը հանկարծ հաջորդում էր այնպիսի ուրախություն, ասես աշխարհն իրենն էր: Հորթի նման թռչկոտում էր: Մերթ սուր հանաքներ էր անում և երբ լսողները սրտանց ծիծաղում էին նրա ասածի վրա, հանկարծ զայրանում էր և գոռում.

— Շան որդիք... Ի՞նչ է, ես ձեր մասխարան ե՞մ:

Անարդարության ինչ դեպք էլ լիներ, նա մի կերպ իր վերաբերմունքը պիտի ցույց տար, ներսի մաղձը թափեր: Նրան  
30 գիծ էին ասում, բայց ասողներից և ոչ մեկը չէր կարող համարձակ աչքերով նրա երեսին նայել այն ժամանակ, երբ նա զայրացած էր: Երբ նրան զինվոր էին տանում, տանուտերի երեսին գլուղի հրապարակում այնպիսի խոսքեր ասաց, որ նույնիսկ ամենահամարձակ մարդիկ վախեցան և կարծիք հայտնեցին, թե նա զինվորությունից այլևս չի վերադառնա:

Արզումանը գլուղում տուն ու տեղ ունի, բայց այդ տանն ապրող շորս շնչից և ոչ մեկն էլ նրան հարազատ չէր: Մոր մահից հետո հայրը երկրորդ անգամ էր կին առել, և այդ կնոջից էլ սերել էին այն փոքրերը, որոնք նրան եղբայր էին ասում, բայց ինքը ոչինչ ազգակցական շուներ նրանց հանդեպ: Զինվորության առաջին տարին մահացել էր և հայրը: Առաջ էլ նա խորթ մոր հետ չէր հաշտվում, և երբ ծնվեց առաջին մանուկը, խորթության վիճը դարձավ անդունդ, և նա մեծացավ բարեկամների տանն ու դռանը: Ու երբ լուր ստացվեց, որ Արզումանը զինվորությունից վերադառնում է, և լուրն իրար հաղորդեցին աղբյուրը գնացած կանայք, ոմանք հառաչանքով կարծիք հայտնեցին, որ կգա, հոր ավերակները կտեսնի, գլուխը կառնի ու կանհայտանա: Պառավ կանայք ուրիշ բան էին ասում:

10

— Ուրը կկապի, էլ չի կարա հեռանալ...

Վերադարձի երկրորդ օրն ևեթ նրան խորհուրդ տվողներ եղան ամուսնանալու: Նա Ավստն ամուսնու գնաց, վերջինս տնտղեց նորեկին, հարցուփորձ արեց «Ռուսաստանու կողմերից, էժանից ու թանգից, ժողովրդի ավհալաթից» և երբ զինվորության մեջ սովորած կիսատ-պոատ ուսերենը խոսքին խառնելով Արզումանն ավարտեց իր պատմությունը, և որպես աշխարհի հրաշալիքներից մեկը նկարագրեց «Աղես քաղաքը, թոփով պարախոդն ու ուսաց հողի հարստությունը, որտեղ ցորենն այնքան բարձր է բուսում, որ ձին ձիավորով միջին կորչում է» — երբ ավարտեց իր պատմությունը, Ավան ամին տխրությունք ասաց.

20

— Բաղդադ էլ խուրմա շատ կա, մե՞զ ինչ... Շատ էլ Ռուսեթը մեծ երկիր է, որ էլի հայրենիք չի դառնա՞: Գլուխը կախարա, քո աղոսդ ծրի... Հրեդ եքա մարդ ես դառել, տնավորվի, մի կերպ կառավարվի, հալբաթ մի լույս էլ մեզ կհասնի: Էսպես նեղում չենք մնա՞...

30

Արզումանը հայտնել էր իր միտքը Բաքու գնալու մասին: Ավան ամին առարկել էր, խորհուրդ էր տվել հայրական այգին նորոգել:

— Չեր էն բաղի կողքով որ անց եմ կենում, քիթս մխում է: Զափարը շարդած, մեջը քար... Մտոերը՝ էն ցաքի փուշը

քեզ օրինակ, իրար գլխով են դառել... Կռներումդ ուժ կա, գնա սովադ արա, էլի հուսատեղ է նեղ օրվա համար:

— Է՛, բաղս որն է... Երկու լափոի կա, մի տանձի: Խուրձ կրողներն էլ էնքան քարով են տվել, որ կեսը շորացել է: Նու եվո, սավսեմ: Մեր պերզի կորպուսը տարել էին մանևրի Վարշավու կողմերը... Ա՛յ բաղեր: Օխտն օր, օխտը գիշեր ձիավորն անց կացավ, բաղի շափարը պրծավ... Պակրայնի մերե մարդ էրպես բաղ պահի:

10 — Դու գիտես... Իմ խելքս էլ էդքան է կտրում: Ամենայն մի երկիր մին պլան ունի... Էս էլ մեր երկրի պլանն է...

Արզումանը հեռացել էր Ավան ամուց այն հաստատ որոշմամբ, որ գյուղում կմնա մի քանի օր էլ, կտեսնի բարեկամներին, հյուր կգնա նրանց տները, կպատմի «Ադես քաղաքի և թոփով պարախոդի մասին», մի քիչ էլ կզարմացնի իր ռուսերենով, կոշտ սապոգներով և այն նշանով, որ ստացել էր լավ հրածիգ լինելու համար ու կհեռանա գյուղից, ամեն ինչ թողնելով խորթ մորն ու նրա ժառանգներին:

20 Այդ քանի օրը նա ուշ էր վեր կենում, փալասի կտորով սրբում էր կոշիկները և բարձի տակից հանում զինվորական շավարը, որ քնելուց ծալում էր խնամքով, գլխատակին դնում՝ ծալը շկտրելու համար: Փոքրիկ երկաթե սանրով մագերի փնջերը ոլորում էր թեք ու միահավասար, կարտուզը ծուռ դրած փողոց ելնում: Գյուղում լուրեր էին տարածվում, որ Արզումանը աղջիկ է ջոկում: Ոմանք հավատում էին, մայրեր կային, որոնք սրտատրոփ սպասում էին, թե անհ կանցնի նա իրենց տան առաջով, կմտնի և գուցե թե մի բան լինի:

30 Իսկ Արզումանն իրեն հասակակից ընկերներին պատմում էր այն մասին, թե ինչպես իրենց վաշտը մանյովրի ժամանակ լեհական մի գյուղ տարան: Պատմում էր և աչքերը փայլատակում էին հիշողության հրճվանքից:

— Ա՛յ աղջիկներ, թամամ հրեշտակ... Սավսեմ սլաքողնի գալիս են, հետո խոսում, ասում... Թե մի քիչ արսըզ ես, կուռ ճտովը քցի... Իսկի չի խոսում: Հորը, մորը առաջ քեզ պողրուժկա է անում: Սպիտակ, սպիտակ... Երեսհատին որ նայում ես, պատկերդ միջին շողշողում է: Աբմունդիրավաննին էլ թազա էինք ստացել, կոճակները պսպղում էին ոսկու

նման... էլ ինչ կեր ու խում, ինչ արգան, մուզիկ, դուխալոյ արկեստր...

Եվ պատմում էր, թե ինչպես է մի տուն ընկել, ուր երեք քույր են եղել, մի պառավ մայր:

— Կավկազի մարդի համար խելագարված են... — որպես իրական ապացույց իր ասածների, հանում էր ծոցի գրպանից նրանցից ստացած մի նկար: Ծիշտ է, դարձյալ երեք քույրեր էին, բայց այդ նրանց լուսանկարը չէր, այլ սովորական բացիկ, որ նվիրել էին նրան երեք լեհուհիները:

Այդ օրերումն էլ պատահեց այն հանկարծակի հանդիպումը, որ և վճռեց նրա գյուղում մնալու հարցը: Զաղացպանին տեսության գնալուց, նա անցավ Ղարիբանոցի այգիների միջով ու հանկարծ դեմ դուրս եկավ բարձրահասակ, լիքը մի աղջիկ, որ ձեռքերը վեր էր բարձրացրել ու բռնել կուժի ունկից: Աղջիկը նրան տեսավ թե չէ, կարմրեց, գլուխը խոնարհեց... Արզումանը տեսավ նրա երկար արտևանունքները, լիքը կուրծքը, որ ավելի էր ուռել, որովհետև աղջիկը ձեռքերը վեր էր բարձրացրել և բռնել կժից: Տեսավ ու տեղը մեխվեց: Աղջիկն անցավ. կժի մեջ շուրը խուլ արձագանք էր տալիս՝ կըլթկըլթ, տարուբեր լինում աղջկա ոտնափոխից: Արզումանը ետ նայեց. շորորալով գնում էր աղջիկը, կուժն ուսին ու ոտաբոբիկ: «Նա է՞ր... չէ՞, նման էր», մտածեց Արզումանն ու հետ դարձավ: Նա տեսավ, թե ինչպես աղջիկը մտավ Շալուն Սիմոնի դռնից: Նա էր՝ Սալբին:

Արզումանը գիտեր, որ Սիմոնն աղջիկ ունի: Զինվորության ժամանակ, երբ երեկոները հերթապահը փոստը բաժանում էր, և հավաքվում էին նամակ ստացողների շուրջը, նամակի ընթերցումից հետո կաղարմայում խոսակցություն էր բացվում կանանց մասին: Ամեն մարդ իրենց գյուղերիցն էր պատմում, տեսած կանանց գովքն անում: Զինվորներից մեկը աշխարհի ամենից երևելի գեղեցկուհուն համարում էր իր խորթ քրոջը և նրա մասին այնպես էր պատմում, այնպիսի շարժ ու ձևով, շրթունքները շմպացնելով, որ լսողներն իրենց կասկածն էին հայտնում, թե նրանց մեջ ինչ-որ բան է պատահել: Արզումանն էլ էր պատմում ու պատմելուց հետո, երբ քնելու փողը փչում էին, պառկում էր ու ժամերով վերհիշում գյուղը: Այդ

10

20

30

ժամերին նա մտաբերում էր և Սալբուն, հիշում էր փոքրիկ այն աղջկան, որի հետ մի ամառ խուրձ էին կրել:

Ջաղաց հասնելուց հետո էլ ինքն իրեն հարց էր տալիս, թե ինչքան շատ է մեծացել: Այդ օրից նա խոր պահեց «հրեշտակներին» նկարը: Ճիշտ է, նրա ուրախությունը խորացավ, նա լուռությամբ էր անցնում այն դեպքերի վրայով, որ պատահել էին Վարշավայի մանյուրի ժամանակ:

Նրա գնալն ուշանում էր: Գյուղի կանայք ասում էին.

10 — Շուտ է տալի գյուղի վրա, տեսնենք որ թխսամոր ճուտը կփախցնի...

...Արզումանը քարի գլխից բարկացած իջավ ու այնպիսի մի մեծ քար գրկեց, որ Եզորը մնաց զարմացած: Վերև տանելուց գոտու կապերը կտրվեցին, և գոտին ընկավ:

Քարի գլխից նա աչք էր ածել քաղհանավորներին ու տեսել էր նույն շարքը, մի քիչ ավելի խոր գնացած: Ոչ ոք չէր բարձրանում: Մկրտումը ձիու վրա նստած խոսում էր Շողերի հետ: Արզումանը երկար նայեց. նա ուզում էր, որ Սալբին վեր բարձրանա ու մի անգամ էլ նայի ձորակի կողմը: Սպասեց...

20 Ու հանկարծ Մկրտումը տեսավ: Արզումանը ձևացրեց, թե քար է գլորում ու զայրացած իջավ: Մեծ քարը հիմի փոսի մեջ շարտելուց հետո, թևով ճակատի քրտինքը սրբեց:

— Խիղճ չունե՞ս դու... Մեռանք է՛ սովից: Եզոր, արի՛, Միմոն ապե՛ր, վեր կաց... Դու էլ ուստա դառար մեր գլխին էլի՛... Պարավոզի տրուբան դրել ես բերանդ, էս ձորերը մուխով լցրել, էլ հացն ինչ ես անում...

— Կերե՛ք, բան չեմ ասի... էս քարն էլ դնեմ... Ես էլ անոթեցա, — ասաց ուստան ու քթի տակ շարունակեց մոմռալ մեղամաղձոտ երգը՝ «դանդանա վեր ա՛յ նանա»:

30 Մկրտումը դժգոհ հեռացավ: Ավան ամուն ի՞նչ, թե ինչ է մտադիր անելու: Ինչո՞ւ էր եկել... Ժպտաց: Հիշեց նրա խոսքը՝ փարթ կանենք, Քառասնաչորը տերությունից կառնենք... Ձին խաչտալով գնում էր, աչ ու ձախ դուռը մեկնում, փրցնում ծաղիկ ու խոտ: Հարկավոր չէր խիստ լինել... Լավ էր: Հիմա նա իր մտքում թող մտածի գյուղի համար: Ժամանակը կգա: Ի՞նչ պիտի անեն, ինչ կարող են անել, որ ուզենան էլ: Միայն արյուն են պղտորում: Ձիու ոտքը քարին դիպավ, քիչ մնաց ընկ-

ներ: Մկրտումը սանձը պինդ ձգեց և փորի տակով մտրակեց, մտրակը վզզաց գնդակի պես, ձին թռավ: Այդպես... Ու մի քիչ հանգստացավ: Ասես մտրակը ձիու տեղ այն աներևույթ թըշնամին ստացավ, որ խուլ դժգոհում էր, փնթփնթում, խեթ նաշում, բայց ճակատ առ ճակատ դուրս շէր գալիս:

Մփացող արտի տեսքը նրան հանգստացրեց: Գարունը խոստանում էր առատ բերք: Նա ձին պահեց արտի ծայրին, մասրենու ծաղկած թփի մոտ: Կռացավ զարու ցողունը պոկելու: Չին ետ-ետ քաշվեց, ականջները խլշեց: Թփի մյուս երեսին մի բան շարժվեց, ոստերն իրար դիպան, և սպիտակ վարդի թերթերը օրորալով վայր ընկան: Մկրտումը ձիուց իջավ: Մյուս երեսին, թփի ստվերում, քաղհանավորներից մեկի մանուկն էր, փոքրիկ ճոճքի մեջ: Մանուկը զարթնել էր, տրորում էր աչքերը, ու ճոճքը շարժում էր, ոստերն իրար էին դիպում և թերթերը թափվում էին: Մկրտումն ու մանուկը մի վայրկյան իրար նայեցին. մանուկը ժպտաց, Մկրտումն ուղեց կռանալ ու մատը կարմրած թշին դնել, բայց մանկան դեմքից ժպիտն հանկարծ անհայտացավ, երևաց վախի արտահայտություն: Փոքրիկը տեսել էր ձիու գլուխը՝ Մկրտումի թիկունքի ետև:

10

20

Չին հետքից քաշելով, Մկրտումը մոտեցավ քաղհանավորներին: Շողերը նրանցից բաժանվեց ու մի բանի քայլ արեց դեպի նա: Թելունց պառավը, որ մինչ այդ պատմում էր ընկերներին իր ամուսնական կյանքից, պատմում էր ու ծիծաղում, ու երբ ծիծաղում էին և աղջիկները, նրանց վրա բարկանում էր ու դեմքին կեղծ լրջություն տալով սաստում, որ չլսեն,— Թելունց պառավն ամենից առաջ տեսավ Մկրտումին:

— Այ դո՛ւ բարով ես եկել... էս արտը քեզ փեշքե՛շ... — ասաց նա: Մկրտումը ժպտաց: Պառավի խոսքին քաղհանավորներից ոմանք ետ նայեցին ու նրան տեսնելով, նորից գլուխները կախեցին: Մկրտումի աչքին ընկավ և Սալբին, որ արևից ու տաքացած հողից կալմբած, քրտնած երեսը մի վայրկյան միայն շրջեց նրա կողմն ու նորից շարունակեց աշխատանքը: Գարու կանաչ ցողունները փնջերով դուրս էին գալիս նրա դեյրայի կախ ընկած փեշի տակից, երբ նա մի քայլ

30

153

առաջ էր անում ու փեշը քաշում: Կանաչ ցողունների արանքից  
երևում էր նրա բորբիկ ոտքն ու սպիտակ սրունքը:

— Էն կռացածը Սիմոնի աղջիկը չի՞,— հարցրեց նա կնո-  
ջը, այնպես որ Սալբին էլ լսեց:— Ինչ բո՞յ է քշել մեռածը...

— Մկրտում, ա՞յ Մկրտում... Էսօր-էգուց մեռնելու եմ,  
է՛... Մի երկու արշին քաթան տուր օմբեքս ծածկեմ: Տես,  
հա՛, սաղ բաց է,— կանչեց Թելունց պառավը և առանց քաշ-  
վելու փեշը վեր բարձրացրեց, ցույց տվեց իր ոսկրացած ու  
մերկ ազդրերը: Ոմանք փռթկացին, ոմանք էլ ամոթից մինչև  
10 ազանջի բլթակները կարմրեցին:

— Ինչ եք հոհոում,— դարձավ պառավը կանանց,— ես  
պետք է Մկրտումից ամաչե՞մ... Նրա պորտը ե՛ս եմ կտրել...

— Էս քանի օրս Եփրեմը ապրանքի է գնալու. որ բերի,  
կգաս, կտանես, նա՛նի...— պատասխանեց Մկրտումը:

Ու մտաբերեց դավթարի այն էջը, ուր դեռ անցյալ տար-  
վանից Թելունց պառավի ազգանվան դիմաց գրել էր՝ «շաքար  
—1 գրվ. և շաչ կապովի—12 մսխալ, գումարով 36 կոպեկ»:

20 Ձին նստեց ու մի անգամ էլ աչքով չափեց ծփացող ար-  
տը, նայեց Քառասնաչրի անտառին, որի առաջնապահ ծառերը  
ստվեր էին գցել արտի վրա, մի թևով էլ իջել մինչև տան պա-  
րիսպը: Ձիու վրայից նա տեսավ և Արզումանին՝ քարի գլխին:  
Ասես մի սև ամպ երևաց նրա մտքի հորիզոնի վրա: Նա ձգեց  
ձիու սանձը, և ձին գլուխը թեքեց գյուղի կողմը:

#### 4

Այդ երեկոն ավելի շուտ մթնեց: Սևացած ամպերը ծանր  
վարագույրի պես ծածկեցին երկինքը, սարերը, ձորերը լցվեց սև  
ծխով: Նախիրը կանուխ իջավ սարից, կիթը մթնով կատարե-  
ցին: Հանկարծ սպիտակ ալավ ընկավ երկնքից, եկեղեցու խա-  
չըն ու զանգակները փայլփլեցին, որոտը զղրդաց այնպես, որ  
30 դարակներում դարսած պղնձե ամանները զրնգացին: Ծվ սկսեց  
անձրևը, նախ դանդաղ, ծանր կաթիլներով, ապա որպես վա-  
րար հեղեղ:

Գվվում էր անտառը, ձորը: Անձրևի աղմուկի մեջ շէր լրս-  
վում Մարցա ջրի վշտոցը: Երբեմն բացվում էր մի դռնակ և  
ինչպես բռնկված լուցկի, խավարի մեջ տան ազոտ լույսը

փայլում էր ու հանգչում: Մութի մեջ մարդիկ նստեցան ներս  
ամրացնում, ջրածակերը կաշնում, հավաքունի առաջն աթար  
դնում,— մի խոսքով, կատարում կանխող այն բոլոր գործո-  
ղությունները, որ տարբեր էին յուրաքանչյուր տան ու բակի  
համար:

Տեր Նորընծան երկար շալն ուսերին ետ ու առաջ էր քայ-  
լում նեղլիկ պատշգամբի վրա, երբեմն գլուխը վեր բարձրաց-  
նում և սևացած երկնքի վրա փնտրում աստղեր կամ մոտե-  
նում պատշգամբի ճաղերին, ձեռք մեկնում և տեղացող կա-  
թիլներից որոշում անձրևի թափը:

10

Պատուհանի ճրագը լուսավորում էր պատշգամբը, որի  
սյունների երկար ստվերներն ընկել էին ծառերի սև սաղարթի  
վրա: Հեղեղի ընթացքում փայլատակում էր փայլակը, լսվում  
էր խուլ որոտ, մի վայրկյան շքանում էր խավարը, և սպիտակ  
լույսի տակ Տեր Նորընծան տեսնում էր քամուց խշշացող ծառե-  
րը, դիմացի տան կտուրն ու երդիկին դրած կաբմիր կարասը:  
Ապա թանձրանում էր խավարը, և ճրագը քահանայի երկար ու  
թրթռացող, մի քիչ այլանդակ ու սապատավոր ստվերը սյունների  
արանքից նետում էր մինչև այնտեղ, ուր հալվում էր ճրագի  
լույսը:

20

Ներս ու դուրս անող տղամարդ ու կին իրենց բակերից  
նկատում էին քահանայի վիթխարի ու սև ստվերը: Ոմանց այդ  
ստվերը հանգստացնում էր և մեղմում արհամիրքի սարսափը:  
Թելունց պառավը, որ մինչև ծնկները վեր քաշած, ծլացող  
անձրևի տակ բակում դարսած աթարն էր ծածկի տակ տա-  
նում, մի պահ կանգնեց տեղում և երկյուղածությամբ նայեց  
պատշգամբի ստվերին, թեկուզ սառն անձրևը ծծում էր բաց  
կուրծքը: Ոմանք էլ նույնիսկ դժգոհում էին, որ ծանր ժամին,  
երբ մեղուններն էլ էին փեթակում անհանգիստ բզզում, մի մարդ  
ապահով անկյունում ետ ու առաջ էր քայլում և դիտում:

30

Նրանցից յուրաքանչյուրն իր գործն ուներ, իր ստացվածքի  
փրկության մասին էր մտածում: Մեկը՝ բակում նստոտած կո-  
վերն էր գամը քշում, կովերը փնշացնում էին, շէին ուզում ներս  
մտնել, տերը մութի մեջ, ձեռն ընկած բահի կոթով կամ թիա-  
կով խփում էր նրանց կողերին, եղջյուրներին, ոտքերին: Տներ  
կային, ուր շփոթմունքից հորթերին ներս էին քշել, և քնա-

155

հարամ երեխաները զարմանքով դիտում էին, թե ինչպես հորթերը ցեխոտ ոտքով կոխ էին տալիս քեշա ու կարպետ: Մի քանի մայրեր կուրծք էին ծեծում և շտապ-շտապ, մանավանդ երբ փայլատակում էր կայծակը, իրենց որդիներին անունը տալիս, որոնցից մեկն այգիներումն էր մնացել, մեկ էլը հարևան գյուղից պիտի գար և, ո՛վ գիտե, որ ծառի տակ կուշ եկած, սպասում էր, որ անձրևը դադարի:

- 10 Եզորը շեմքի առաջ կանգնած՝ լսում էր այն խուլ վշշոցը, որ նրանց բակում ավելի սաստիկ էր: Պառավ տանձենիները ճղներն իրար էին տալիս, քամու թափից կռանում, անձրևի կաթիլները շարտում դռնից ներս: Երբեմն նա ճրագը մոտեցնում էր, վազում և նայում գետնին թափված տերևներին ու դեռ նոր ծաղկաթափ եղած պտուղներին: Բակով անցնող առուն պղղտոր էր: Փողոցով անցնող հեղեղը լափին էր տալիս պատին ու վշշոցով գլորվում դեպի ցած:

- 20 Մայրը կայծակի փայլատակման հետ դուրս էր վազում և որդու թևից բռնած տուն քաշում: Խեղճ կինը երկյուղից մի բառ էլ չէր ասում. միայն փաթաթվում էր, կուշ գալիս և այդպես ներս տանում: Նրբ Եզորը շորս-հինգ տարեկան էր, այդ խարխուլ տունը տեսել էր սոսկալի պատահար. այդպիսի մի մութ գիշեր հարևանները ներս էին բերել Եզորի հոր կայծակնահար դիակը՝ խանձված, կուշ եկած և այլանդակ մի կոճղ:

Եզորը շատ աղոտ էր հիշում թե հորը և թե այդ գիշերը, երբ ինքը մոր կանչից դարթնեց և տունը մարդկանցով լցված տեսավ: Նրա հիշողության մեջ պայծառ էր մնացել այն խոսքը, որ Թելունց պառավն ասաց մորը. «Երեխուն առ, զնա հացատունը...»: Հետո մի անգամ էլ պառավն եկավ ու մութի մեջ լաց լինող մորն ասաց.

- 30 — Այսուհետև էլ նոր տուն-տեղի մասին հոգս քաշելիզ զուր է... Հլա ջահել ես, շատ մարդ շատ խոսք կասի, բալքամ արյունդ էլ կպղտորվի... Զէ՛, քեզ հավաք արա, թխսամոր պես նստի բնիդ մեջ, թևերդ փռի սրա վրա... Դառ մի շվաքարան էս երեխի համար...

Եզորը հիշում էր մոր փղձկալը: Նա կարծեց, թե պառավը ծանր խոսք պսեց մորը: Ի՞նչպես հասկանար շորս-հինգ տարեկան տղան, որ մայրը լալիս էր աղետի համար և այն դառն

վիճակի, որ իր հետ բերում էր այդ գետը: Անցած տասներկու տարվա ընթացքում և ոչ մի անգամ մայրը որդուն չէր պատմել, թե ով էր հայրը, ինչպես մահացավ: Եզորը լսել էր ուրիշներից, որ նա ուժով է եղել, որ մի անգամ գրազ են գալիս, եզուն մեկն արձակում, ու նա լծվում է մյուսի հետ և հաստ գերանը Քառասնաչրից մինչև եկեղեցու գավիթը քարը տալիս: Շատերից էր լսել, որ նա, շաղացականը և Ավան ամին, անբաժան ու սրտակից ընկերներ են եղել, շատ անգամ են միասին որս արել և սպանած կիտարը անտառում մաշկել, կաղնու ճյուղից կախել և երեքով միասին մի օրում կիտարի միսը խորովել ու կերել: Եվ որպես մութ պատմություն, մի անգամ նրա ականջովն էր ընկել այն, որ իբր թե իր հայրը խոշա Հիբանի մեծ որդուն՝ Մկրտումին կապել է ծառից, նրա աչքի առաջ չոր ցախ հավաքել, ոտների տակ դարսել, որ նրան կենդանի վառի: Ավան ամին այդ պատմությունը չէր հաստատում, նրա ասելով հայրը միայն բահի կոթով մի անգամ խփել է Մկրտումին, նրա անպատկառ ակնարկի համար, թե իբր հայրը ղազախի տղա է և սերվել է մովրովի ղազախներից, որոնք անցյալում հարկահավաքման ժամանակ մի քանի օրով գյուղում գիշերել են:

10

Ամեն անգամ, երբ կայծակի փայլատակումից վախեցած մայրը խնդրում էր նրան տուն մտնել, նա հնազանդությունք էր կատարում մոր խնդիրը, սակայն քիչ հետո նորից էր դուրս ելնում: Նրան դուր են գալիս և վարար անձրևը, և կայծակի լախտը: Հաճույքի հետ կար և ներքին ահ, երբ մտաբերում էր իր մանկության առաջին շարաղետ գիշերը:

20

— Հեյ, հեյ... Բանդը տրաքե՛ց, ժողովո՛ւրդ,— հեղեղի տարափի մեջ որոտի նման լավեց դարբին Վանեսի ձայնը: Ու սարսափը տարածվեց, տներում մարդիկ մի վայրկյան սառած մնացին: Տեր նորընծան տեղում մեխվեց, կտրվեց մտքի թելը: Այդ բուպեին մի անգամ էլ կայծակը փայլեց և ճեղքելով իջավ այգիների վրա... Երեցկիներ ներքի տնից դուրս վազեց:

30

— Բահը տուր, ա՛յ կնիկ... Մեր այգեստա՛նը... Կայծակն էն կողմին ընկավ,— քահանայի ոտքերը դողացին ու նստեց ծանր թախտին:

— Տունը մի բահավո՛ւր, է՛... Զեզ չեն ասո՛ւմ... Շուտ... — կանչում էր գզիրը, վառվող կերոնը ձեռքին պտտացնե-

157

լով: Մթնում կերոնը կտուրից կտուր էր ուստոստում, ասես քամու բերանն ընկած հրդեհվող թուփ էր, Տեր Նորրնծայի տան առաջ երևաց մի ուրիշ շահակիր, ձիու վրա նստած: Քահանան վերեից ձայն տվավ.

— Անտոն... Օրհնյալ, էս ի՞նչ փորձանք հասավ ժողովրդի գլխին...

— Բան չկա, տերտեր... Դու ապահով կաց: Կես սհաթ չի քաշիլ բանդը կշինեն... էնտեղից եմ գալիս,— ասաց յափնջու մեջ կոլոված պամոշնիկ Անտոնը, որ պտտվում էր գյուղի փողոցներում, օգնության հասնողներին շտապեցնում և մտրակի կոթով փակ դարպասները ծեծում:

Եվ շտապում էին՝ որը բահով, որը քլունգով, շուխայի մի թևը փողոցում հագնելով, մեծ մասը ոտաբորիկ, ումանք յափրնչիներով: Դուրս եկողներից մեկը լապտեր էր առել, մյուսը, շտապելուց՝ սև նավթով լիքը թաղարը: Վազում էին ինչպես խտնած նախիր, նույնիսկ հասակավոր մարդիկ էին ցատկում, ճղփոցով ընկնում փողոցով հոսող պղտոր ջրի մեջ, հենվում բահի կոթին: Ոչ մի ձայն, ոչ մի խոսակցություն: Զահերի լույսի տակ փայլում էին բահերն ու քլունգները: Պամոշնիկ Անտոնը կանգնել էր եկեղեցու մոտ և ջահը բռնած լույս էր անում նրանց, որոնք խավարի միջից, զանազան մութ ու նեղիկ փողոցներից, բահերը զրնգացնելով դուրս էին ելնում, մի վայրկյան երևում ջահի լույսով և ապա շտապում դեպի վեր: Կարծես կալանատնից փսոխող բանտարկյալների բազմություն էր, որ գնում էր անխոս, զրնգացնելով ծանր շղթաները:

Դարբնի առաջին կանչին Եզոբը դեպի բահը վազեց, բայց մայրը կախ ընկավ թևից: Ու կայծակը լուսավորեց: Եզոբը կայծակի լույսի տակ տեսավ մոր սպիտակ դեմքը, ձեռքը թուլացավ: Դարպասի դուռը ծեծեցին:

— Եզոբ,— լսվեց շաղացալանի ձայնը: Եզոբը վազեց դարպասի մոտ:— Զեր էն կոթը կարճ բահը տուր... Մերը շաղացումն եմ թողել...— Եզոբի փոխարեն մայրը մեկնեց բահը:— Աչքդ մեր հայաթին էլ պահի... հրես ետ եմ գալու, գնամ շաղացը...

Գզիրն էլ չէր կանգնում: Կես ժամում համարյա ամբողջ գյուղն էր հավաքվել, և այդ բազմությունը մրջյունի պես աշ-

խատում էր ծոնելու հեղեղի հոսանքը բլուրի փեշերով դեպի գե-  
րեզմանատան ձորն, ուր Այրումի առուն տրաքված գնում էր,  
ձորը բերնեբերան լցրած պղտոր ջրով: Հեղեղը վիշապի նման  
կլանում էր ճումների այն բարակ պատերը, որ առաջին եկող-  
ները փորձում էին դարսել:

Տեսարանը վիթխարի էր: Վերի առուն փլվել էր, հունը  
խորացրել և դարձել մի հեղեղ, որի ակունքները շատ բարձրե-  
րում էին, այնտեղ, ուր ձյունի շերտերը աղի պես հալվում էին  
վարար անձրևի տարափից: Պղտոր ջուրը հանկարծ էր դուրս  
գալիս անտառից և բերանն առած շոր տերև, կոճղ ու ճյուղ, 10  
սրընթաց արշավում գյուղի վրա: Հին ամբարտակը դիմացել  
էր մի պահ, ապա դեմ առած կոճղերը հրել էին հողաբլուրը,  
ձեղքել և ջուրը մանր աովակներով թափել գյուղի վրա:

— Մառը կտրե՛ք,— բղավեց շաղացպանը, երբ աչքով  
չափեց ամբարտակի ձեղքը: Ամբոխից տասը հոգի վազեցին  
դեպի անտառի եզրը: Ճարպիկ շարժումով Արզումանը, որի  
սապոգները լցվել էին ջրով ու տիղմով, պարանը նետեց ցցա-  
շոր կաղնու բնին ու ձգեց: Պարանին մոտեցան և մյուսները,  
հետ ու հետ քաշվեցին, և երբ Արզումանը «նո՛ւ» արեց, տասնյակ  
բազուկներ ձգեցին, ծառը ճաքեց և շառաչով վայր ընկավ: 20  
Ջաղացպանի խորհուրդն օգնեց, մի քանի ծառեր էլ կտրեցին:  
Մոտիկ տներից բերին և խոտի խորձեր, խորձերի մեջ քա-  
րեր դրին և զցեցին ջրի մեջ: Հեղեղը վիշապի նման մուտաց,  
գլուխը աչ ու ձախ դարձրեց, փորձեց ճակատով հրել բարձր  
ամբարտակը, ուժը չհաղթեց և դժգոհությամբ գլուխը թեքեց  
գերեզմանատան ձորը, վայր հոսեց իր հին ճանապարհով:

Այնինչ գյուղից դեռ գալիս էին: Վերջին եկողներից մե-  
կը պատմեց, որ Քառասնաչրից եկող առուն բոստանների  
շատ է վնասել... Լավեց կանացի բարձր «վայ»:

— Հը՞... ի՞նչ էր...

— Տեսնես որ լաշառն էր...

— Փորձանք պատահած չլինի՞...

Տեր Նորընծան նկատեց, որ արագ քայլերով մեկը ան-  
ցավ իրենց փողոցով, լույսի տակ երևաց վազող ստվերը, և  
մինչև ինքը կվերկենար ու ձայն կտար, ստվերը կորավ մութի  
մեջ, լավում էր միայն ոտքի ուժեղ դոփշունը:

30

159

— Տիրուհի՛... Ղարալրուն ով էր... Դու էլ տեսա՞ր:

— Էն ո՞վ կանչեց... Ձենը ներքևից էր,— պատասխանեց կինը: Բայց հենց այդ ժամանակ Ավան ամին ձայն տվավ:

— Տերտե՛ր, քնած չե՞ս...

— Արի՛, արի՛ վերև, Հովհաննես... էս փորձության ժամին, այ օրհնյալ, մարդ արարածը կքնի՛...— Ավան ամին վեր բարձրացավ:

— Լավ թրջվեցինք,— ասաց նա՝ փափախը թափ տալով:

— Տիրուհի... արադ բեր Հովհաննեսին...

**10** — Տերտեր, բա մի շես նայե՛լ գրքիդ... Խ՞նչ է ասում: Հո մեր վերջը չի... էնա մի գլուխ կազատվենք, մեր հոգին էլ կդինջանա, մեր ջանն էլ...

— Նայել եմ... Միայն թե լուսնի հաշվով չի բռնում,— և ակնոցները քթին դնելով, վերցրեց պատուհանին դրած գիրքը, որ միակ օրինակն էր թե Կարմրաքարում և թե ձորի գյուղերում:

Մի հին ձեռագիր էր այդ, որի մի մասը կոչվում էր «Քանգարան խրատուց», մյուսը՝ «Սրազագիրք»: Կային և անթիվ «մաշուններ» զանազան ցավերի և հիվանդությունների դեմ: Վերջապես լուսանցքներում և «հիշատակարանի» համար թողնված էջերի վրա Տեր Նորընծայի դիտողություններն էին գյուղի գլխով անցած և իր կյանքում կատարված դեպքերի մասին: Արդեն խունացած էջերի վրա կարելի էր կարդալ. «1906 ամի եղավ մեծ խռովություն և անասելի տանջմունք: Մեր քիրվա Սավալանին սպանեցին անիրավությամբ յուրյանց սեփական օթախումն»... Իսկ նրանից անմիջապես հետո «Նարգիզն բուղով եկավ օգոստոսի 15-ին: Կալամուտն պակաս էր, 37 փութ խառն ցորեն, նաև զարի»: Այդ օրվա հեղեղն էլ արդեն նշանակել էր. «Մայիս ամսվա 3, օյն շաբաթ, լույս կիրակի, քարեկարկուտ մեծ, ազգաբնակչության անասելի վնաս: Պտուղքն վնասվեն և մասուլն պակաս լինի»:

Տեր Նորընծան կարդաց գրածը:

— Հա, բո ասածն է... էնքան էլ անիրավը ծաղկել էր: Թե սալամաթ պրծնեինք, հարյուր բեռը խնձոր հավաքող կլիներ... Դու ասա քամին շկոտրատի թագա տնկած շիվերս... ու երկըն-

քին նայելուց հետո ասաց.— կասես պարզում է, հը... Զրիկի գլխին հրեն ասող է երևում:

Տեր Նորընծան ձեռքը մեկնեց տեղացող կաթիլներին:

— Բարակում է...— ասաց: Փողոցով բարձրաձայն խոսալով անցան մի քանի հոգի:

— Ունա՛ն,— կանչեց Ավան ամին, ձայնից ճանաչելով,— ինչ արի՛ք... Պրծա՛ք...

— Աչքն էլ չհանեցի՞նք,— պատասխանեց մի երիտասարդ:

— Պրծանք, համա մերն էլ մեզ հասաւ... Երկար տախտում մի երկու օրավար գարի ունեմ, հիմա սրբել է տարել,— տխուր ասաց Ունանը: 10

— էհ, ես էլ գնամ, տերտեր...

Փողոցում երբեմն երևում էին առվի բանդից վերադարձող խմբեր: Կերոններում բոցը ծուլ էր լինում, լուսավորում թըրջված ու ցիխտոված մարդկանց, բահերը փայլում էին և ապա հանգչում:

Տեր Նորընծան թիկնել էր պատշգամբի սյունին և դիտում էր գյուղի զանազան ծայրերում դողդողալով շարժվող կրակները: Նա հանգստացած շունչ քաշեց. նույնիսկ ժպտաց, ինչպես կժպտար գերդաստանի պապը, հարյուրամյա ծերունին, մահից առաջ թոռների բազմությանը նայելուց: 20

— Ա հե՛, մեր տերը հրեն զարթուն է հլա,— լսեց մի ձայն:

— Հմի հալւորը սրտաճաք է եղել: Վախեցել է որ...— և շարունակությունը շլավեց: Քամու հակառակ հոսանքը հետ շարտեց գյուղացու խոսքերը, և քահանան շիմացավ, թե ինչ ասացին: Մի բուպե հետո մթնում մեկը քա՛հ-քա՛հ ծիծաղեց: Տեր Նորընծան փշաքաղվեց, սեղմվեց սյունին: Այդ ծիծաղն էլ, ինչպես և այն բառերը, որ քամին հետ շարտեց, պղտորեցին նրա մտքերի խաղաղությունը, և հին հարցը անբաժան ստվերի պես նորից եկավ: 30

Երբ Տեր Նորընծան միտք էր անում գյուղի ստօրյայի մասին, մտքով կտրում էր անցած ճանապարհը և տքնում իմանալու, թե ուր պիտի հասնի իր ծուխը այն ժամանակ, երբ ինքը թաղված կլինի եկեղեցու պատի տակ, սառը քրտինքը պատում էր նրան, սիրտն ասես պոկվում էր, ընկնում ու տեղը

մնում էր դատարկ: Այն, որ պիտի գար, մուժն էր, սեւացած երկնքի պես:

Սրբ ինքը դեռ երիտասարդ էր, փողոցով անցնելը հաղթական երթի էր նման... Մարդիկ կանգնում էին խոնարհ ու գլուխ տալիս, իսկ կանայք, նույնիսկ պառավ կանայք, մոտենում էին և համբուրում երիտասարդ քահանայի աջը: Իսկ հիմա... Մարդիկ քահ-քահ ծիծաղում են, ո՞վ գիտե ինչեր են ասում նրա մասին: Նա փորձում էր «չարյաց արմատը» գրտնելու և միշտ գալիս էր նույն տեղը հասնում, որոշում, որ հավատը թուլացել է, և խճճվում այն բազմաթիվ պատճառների մեջ, որ նրա համար սատանի կծիկ էին, անլուծելի հանգույց:

— Արի քնի, է՛... Բա շքեզարեցի՞ր... — ձայն տվավ կինը ներսից: Տեր նորընծան զարմացած նայեց: Այո՞, կինն է, որ օրն ի բուն աշխատում է, լվանում, եփում, թխում և այդքան աշխատանքի ընթացքում ժամանակ գտնում հարեանի տուն գնալու կամ գլուղի մյուս ծայրին ծննդկանի համար «ծնունդ գավաթ» տանելու, իմանալու հազար ու մի լուր, հարյուրավոր մարդկանց մտքերին ու հույսերին տեղյակ լինելու, մեկին սովորեցնելու, թե ինչպես են «սինեմաքի» եփում, մյուսի հետ

պայմանավորվելու, որ միասին գնան սարը շուշանի, երրորդի սղջկա գեղեցկութունը գովելու այն տանը, որտեղից լուրը հարեան գլուղից եկած կնոջ միջոցով պիտի գնար: Նրանց մոտ և, ո՞վ գիտե աշխարհի բանը, մեկ էլ տեսար, եկան և բանը գլուխ եկավ: Ահա տունը. իր տունը, որ սարքել է քանի՞ տարի... Թախտը, այն լայն թախտը, որի վրա ամառվա գիշերներին հիանալի է քնելը և լույսը շրացված զարթնելը, այն ժամանակ, երբ ծտերը խոսում են, իրար կանչում և պաղ օդի մեջ լսվում է ժամի զանդերի ծլինգ-ծլոնգը: Տունը, — որ տարիների ընթացքում լցվել է բարիքներով: Ու պիտի մնա այդ ամենը՝ իր այգին, արքայական խնձորենին, որի մասին նա թաքուն այն կարծիքին էր, թե եղեմական խնձորենու տեսակն է իր այգում եղած «շահ-այմասին», գոմը, մառանը:

Նա՞ որդին, երբեք գլուղ չի գալ, Բուղդանը, երբ դեռ երիտասարդ էր, ամառները տուն էր գալիս... Բայց հենց այն ժամանակ էլ տեր հայրը նկատում էր, որ քիչ էլ մնա, թեևրն ամբողջանան, պիտի թույլ ուրիշ աշխարհ և էլ չպիտի գա: Նկատում

էր և սարսափով նայում Բուղդանի գրքերին: Մի՞թե նրանք էլ գրքեր էին... Ո՛ւր մնաց «Վարք սրբոցը»... Ո՛ւմ պիտի մնա տունը... Հեղնարին՝ իր աղջկանը, իր օրինավոր ծառանգին, անդրանիկ դստերը: Եվ հայրը հիշեց իր անդամալուծ պառավ աղջկանը, ձեռքը ծուռ, ինչպես շորացած ճյուղը, ոտքերը թույլ աղջկանը, որ ներքի տանն էր ապրում, ցերեկը նստում էր նեղլիկ պատուհանի առաջ, և երբ բակում մարդ չէր լինում, դուրս էր գալիս, փայտի վրա հենած, ոտքերը քարշ տալով: Տեր Նորընծան հիշեց իր աղջկանը, որին իր մտքում ընդունում էր վերուստ ուղարկած պատիժ, ու դեմքը կծկվեց: Մի՞թե 10 միայն Հեղնարը պիտի մնա...

— Էդուց էս գուպեքը կհագնես, — ասաց կինը, երբ Տեր Նորընծան մոտեցավ անկողնին: Քահանան նայեց սպիտակ բրդե գուպաներին, որ աղավնու թևերի պես ծալած էին իրար վրա: Նայեց, և նրա սրտին իջավ նույն մեղմութունը, որ ուներ առաջ, ջուրը նորից պարզվեց, և հաշտ ու խաղաղ գլուխն իջեցրեց փափուկ բարձին: Նրա աչքերի առաջ իր այգու արքայական խնձորենին էր, ծաղկած, ինչպես նորահարսը:

Գիշերվա մթնում Շալուն Սիմոնի տանը տեղի էր ունենում մարդու և պղտոր հեղեղի կոխը: Ասես զայրացած, որ մարդիկ իր ընթացքը փոխել ու թեքել են գերեզմանատան ձորը, — վերի առվի վտակները գյուղի փողոցներում իրար միանալով, գրոհով իջան Ղարիբանոցի կողմը, գետը թափվելու... Ալիքները ծառացան, դիզվեցին իրար վրա, հրեցին և տան կտուրը շոքեց, որովհետև փլվեց փողոցին նայող քարաշար պատի անկյունը: Արզումանը բանդի մոտ լսեց ծկլթոցը, լսեց ու ճանաչեց Սալբու ձայնը: Նա վազեց սուսանց նայելու քար ու փոսի, առանց ուշք դարձնելու գազազած շների հաշոցին: Այգիների ճանապարհը գետի հուն էր դառել. մի վայրկյան նա կանգնեց, ասես ուզում էր որոշել, թե Մարցա ջուրն իր ընթացքը չի՞ փոխել... Այդտեղ նա մի անգամ էլ լսեց ծանոթ ձայնը... Նրան թվաց, թե կանչում են գետի մեջ խեղդվողները: 30

Սիմոնը ջրի արագ հորդանալուց հասկացել էր, ոյ բանդը քանդվել է: Երեխաները քնած էին: Արթուն էր կինը և աղջիկը... Գրոհն այնպե՛ս հանկարծ եղավ: Զրի բերանն ընկած մի ծանր քար թափով խփեց պատին, սյունները դողացին, ճրագը

հանգամ: Եվ մութի մեջ հեղեղի վշտոցն ավելի պարզ լսվեց... Սալբին կանչեց, բուրբը վազեցին դեպի երեխաները, և պատի ճեղքով ջուրը ներս վազեց:

Երբ Արզումանը մոտեցավ նրանց տանը, նա մութի մեջ ջրկեց երկու կանանց ստվերը, որոնք բարձրանում էին դեպի մարազը:

— Արզուման,— կանչեց Սիմոնը,— Արզուման... տունս քանդվեց:

— Երեխեքը...

**10** — Տարա՛ն... Երեխոցը տարան... Տունս քանդվեց, Արզուման...

Եվ երկուսով ներս վազեցին: Պատի ճեղքվածքից ջուրը հորդ աղբյուրի նման ներս էր թափվում: Թոնիրն արդեն լրջվել էր: Զրի ալիքները կույր օձերի նման դես ու դեն էին վազում և լիզում հատակին ընկած իրերը, ասես փնտրում էին լափակու ամենից թանկագինը: Սիմոնը կռացավ, գետնից վերցրեց ալյուրի պարկը: Քիչ էր թացացել. այդ վայրկյանին նա հիշեց այն սալաքարը, որ շորս օր առաջ դրել էր տանը, պարկի տակ: Մեկը ներս մտավ:

**20** — Ճրագը վառե՛ք,— կանչեց Արզումանը: Նա կռացել էր և մութի մեջ փորձում էր ճեղքի հաստոցը որոշել: Մթնում լուցկին փայլատակեց ու հանգամ:

— Նավթը թափվել է...— Սալբին էր: Արզումանը լույսի տակ տեսավ նրան:

Կարծես բոյը մինչև օձորքն էր... Երեսն այնպես լուսավոր էր: Գերանների ծայրերը կռացել էին և կախվել: Մյուս պատն էլ երերաց, կտուրը պիտի նստեր... Քամին էր, թե ծանրությունից էր, գերանները ճռճում էին, վերից ճլուփ-ճլուփ հող էր թափվում ջրի մեջ: Սալբին հավաքում էր գետնի թափած իրերը... Ահա պղնձի մեծ գավաթը: Կուժը չկա...

**30** Արզումանը դուրս վազեց: Մութի մեջ նա դիպավ Սալբուն: Աղջիկը կռացել էր: Ու բռնեց նրան, բռնեց, որ չընկնի ու չզցի: Հետո վազեց դեպի մոտիկ մարազը... Տկր՞ր էր Սալբին, շո՞ր չկար հագին, թե այնքան թրջվել էր, որ շորը շեր շոշափվում: Խոտի երկու խորձ թևի տակ նա ներս մտավ: Ու խուրձը հրեց ճեղքի մեջ: Մի հոգի ներս եկավ, հետո երկրորդը:

— Նանի, նավթ չկա՞:

— Հը՞... հատել է՞... էս ո՞վ է... Հը՞... Արզուման...— Մեկը դուրս եկավ, երևի գնաց նավթի... Կինն էլ սկսեց փրնտրել ջրի երեսին լողացող իրերը... Նրա բոի մեջ լոբու հատիկներ ընկան...

— Աղջի... լոբու պարկը կապած չէ՞ր...

— Հրես պարկը... էս չի՞...— ասաց Սիմոնը:— Կինը ժրնկներին խփեց: Եվ հետո հարցրեց:

— Ձավա՞րը, ձավա՞րը...

— Օջախի քարին է...

— էս ինչ գուլո՞ւմ էր...— Ով էր ասաց, Սիմոնը, թե կինը: Մեկը խոր հառաչեց, ասես շատ ճանապարհ գնալուց բեզարել էր:

— էս եղանը դիմհար տու,— կանչեց Արզումանը: Սալբին մոտեցավ ու բռնեց եղանի կոթից: Նրա մատները դիպան Արզումանի ձեռքերին:

— էսպես բռնի,— ու թևից քաշելով ձեռքը մոտեցրեց պատի մեջ խրած խուրձին... Կռացավ ու շեմքի սալաքարը պոկեց:

— Հեռու, ոտիդ կրնկնի,— Սալբին զգաց, որ կարմրատակում է: Ի՞նչ լավ էր, որ մութն էր տանը: Դող անցավ մարմնով... Երևի շատ է թրջվել... Շապիկը ծեծում է մեջքն ու կուրծքը, ծեծում է սառնությամբ, իսկ ինքը տաք է, ոտքերն այրվում են:

— Ա խիզան, կաշու ձողը ձեռներդ շրնկա՞վ,— հարցրեց Սիմոնը, որ ձեռն ընկածը կախում էր պատի ցցերից, տեղավորում դարակներում և շուտ-շուտ ալյուրի պարկին նայում:

— Դուան վրա եմ քցել...— պատասխանեց Արզումանը:

Այս էլ դուր եկավ Սալբուն. ամոթխած մի զգացում էր այդ մութի մեջ, երբ պատի աջն կողմը թշշում էր հեղեղը և տանը լսելի էր, թե ինչպես քարերը գոռալով իրար են զարկում... Ուրեմն Արզումանն էլ խիզան է, մեր խիզանը,— մտածեց Սալբին: Ժպտաց. ի՞նչ կա որ... Վաղն արև կանի ու կշորանա ամեն ինչ... Նանու լոբիները շեն լինի: Իսկ այս մարդը, որի տաք շնչառությունն այդքան մոտ է զգում, քրտնած ու թրջված մարմնի հոտը, սապոզների հոտը... Եվ քանի գնում, ավելի

10

20

30

165

շատ է գալիս: Գալիս է, հոր հետ խոսում, աչքի տակով իրեն նայում: Ահա... ծունկն է՝ նրա ծունկը:

— Զուրը բարակում է, հա... Միմոն ամի... բանդը պըր-ծել են, հրեա կհանդարտի,— ասաց Արզումանը:

Ու քիպ մոտեցավ: Մի ծանր բան իշավ Սալբու ուսին. հաստ մատները սեղմեցին ուսը, թուլացավ ու ձգվեց դեպի քրտնած ու թրշված մարմինը: Ինքը մոտեցավ, թե՛ իրեն քաշեցին... Խավարն ավելի թանձրացավ. սենյակը գլխին շուռ էր գալիս, ասես հեղեղի բերանն ընկած գնում է... Տանում են: 10 Հետո տաք շունչը կռացավ այտերի վրա, ականջին մի բառ ասաց և շրթունքները դողացրին:

— Էդ ինչ էր,— ասաց մայրը:

— Ոտս սլկաց, քիչ մնաց ընկնեի...— պատասխանեց աղ-շիկը:

— Դե հիմա էլ փրփրա,— ասաց Արզումանը, հեռանա-լով պատից,— մի կաթիլ էլ չի կաթում:

Հարևանը ճրագով ներս մտավ:

• • •

10 Լուսաբացին գլուղն արդեն ոտքի էր: Անձրևը դադարել էր, միայն ծառերի ճյուղերից ու կտուրների գերաններից էր կաթ-կըթում շուրջը: Փողոցներով հոսում էին բարակ, գուլալ առ-վակներ, որոնց հատակի խիճերը մեկ-մեկ կարելի էր համրել: Հեղեղը վերի թաղում Շուղանց Իսոյի կալատեղն էր քանդել, քարերը գլորել մինչև եկեղեցու գավթի պատը: Փողոցներում, մի քանի տեղ խորխորատ էր փորել: Այս ու այնտեղ կիտած էր շոր ճյուղերի ու տերևների կույտ: Թելուց պառավի երկու հավը չկար, պառավը ծնկներին հարայ տալով բոլորին հավա-տացնում էր, թե գողացել են, թե ինքը ոտնաձայնին վեր է կա-ցել ու վախից դուռը բաց չի արել: Լսողները ծիծաղում էին:

20 — Ա՛յ պառավ... էն սև գիշերը ում դարձն էր քո լղար ճտերդ:

— Ինչ ճուտ... Մինը թխսամբ էր, էն մինն էլ տարին եր-կու խախալ ձու էր ածում,— ասում էր պառավը, և մարդիկ, որոնք հավաքվել էին կտուրների վրա, և որոնց մեծ մասը գի-

շերվանից դեռ ոտարորիկ էր, փողքերը մինչև ծնկները վեր քաշած, մարդիկ ծիծաղում էին և ավելի շարացնում Քելունց պառավին, որ սպառնում էր տանուտերով, պրիստավով ու գատարանով:

Լույսը չբացված մի քանի հոգի գնացել էին իրենց արտերի ու այգիների տեսութայան և վերադարձել էին: Կտուրներին հավաքված մարդկանց խոսակցութայան նյութը այդ մասին էր: Ասում էին, որ երկար տախտակների գարիքը թազնել են, և էլ հույս չկա, թե վեր կենան, որ Սուլթանա ծովում ձվի մեծությամբ կարկուտ է եկել, մի նեղ շերտով խփել մինչև սարի սեռը, որ Եզնարածի առուն քանդվել է ու քշել Չանեն ծուռ Օհանի դորուղը, այնտեղից թափվել Ունանի խամը և փոսերը քարով լցրել: Այգիներից եկողներն էլ պատմում էին, որ շատ ծառ է ճղակտոր եղել, և իբր նուանձորում կայծակ է խփել ծառերին: Բայց ականատեսներից և ոչ մեկը կտուրի վրա չէր նրանք պատմել էին մեկին, այդ մեկը մյուսին, և ամենքն էլ հավատում էին՝ որ այդպես է, մանավանդ նրանք, որոնց արտըն ու դորուղը իբրև թե ամենից շատ էին վնասվել:

— Էդ լինելու բան չի, — ասաց դարբինը, — մենք հո սըխտորաշենցի չենք, որ մեր հանդը չիմանանք... Ա խալխը, իսկի կլինի, որ Եզնարածի առուն տրաքի, Չանեն ծուռ Ուհանի դորուղը քանդի, էնտեղից էլ տա Ունանի խամին... Առո՞ւն ուր, դորուղն ուր...

— Է՛հ... սարսաղ-սարսաղ դուրս է տալիս, — վրա տրծաղ մի ալևոր, — բա չի՞ լինի...

— Այ ալևոր, բա էդ լինելու բան է՞... Զուրը թե՞ ունի, թե երկնքի դուռ է, որ էն եքքա սարը բարձրանա:

— Բա հասնիլ չի՞... Զոռեց, կհասնի, էլի... Զրին ի՞նչ կա...

— Իմ խելքն էլ չի կտրում, որ հասնի, — ասաց մի ուրիշը, — գնացողը մեր Սողոմոնը չի՞... Մերը շմեռածի սուտը շատ է, քան դորթը...

Եվ վեճը շարունակվում էր... Նոր լուրեր էին բերում, որ նուանձորում կայծակ չի խփել: Ոմանք նույնիսկ ասում էին, որ այնտեղ անձրև էլ չի եկել: Հեղեղի վնասներն ավելի ճիշտ ու մանրամասն էր պարզում յուրաքանչյուրն իրեն տան, բակի, այգու և բոստանի համար, երբեմն հետաքրքրվելով հարևանի

վնասով: Կային, որ շար նախանձով էին նայում կողքի արտին, որ պատահմամբ ավելի քիչ էր վնասովել: Սակայն եթե քիչ էին նրանք, որոնք շար նախանձով էին նայում հարևանի պակաս վնասին և կամ ընդհակառակը ներքուստ հրճվում, երբ տեսնում էին, որ հեղեղն իր արտի կողքով անցել է և հարևանի արտը թաղել ավազի ու տիղմի հաստ շերտի տակ,— եթե քիչ էին այդպիսիները,— մեծամասնությունը, ավելի ճիշտ բոլորը, իրենց վնասի մասին պատմելուց ավելացնում էին, մեկը տասը շինում և հայտնում, որ գյուղում նրա շահի ոչ ոք չի տուծել:

10

Ավան ամին այգիներումն էր: Շաղաթաթախ, տրեխներն ու գուպաները թրջված, շուխայի ծայրերը գոտկում խրած, այդ մարդը այգիների ծանոթ կածաններով գնում էր, վեր նայում՝ ծաղիկների փնջերին ու կեռասի կանաչ գնդիկներին, գետնին նայում, որ տեղ-տեղ ծածկված էր կանաչ տերևներով, ձեռքով տնտղում, շտկում նոր ընկած շիվը, ստուգում՝ չի՞ ջարդվել պատվաստը: Կարմրաքարում միայն նա ճիշտ հաշիվ կարող էր տալ, թե ինչքան են վնասվել գյուղի այգիները: Եվ քանի հեռանում էր, այնքան վնասվածն ավելի քիչ էր. կարծես հեղեղը թափվել էր միայն գյուղի գլխին:

20

Լուսարացին Քառասնաչրի ուղղութամբ գնացողները ջրամբարտակի մոտ տեսան Մկրտումին. կանգնել էր քարի գլխին ծիլավոր յափնջու մեջ կոլոված և ինչպես ցինն է նայում վերից վար ու հետևում որսին, այնպես էլ նա նայում էր Քառասնաչրի պղտոր ալիքներին, որ թափով գալիս էին, ամբարտակին շհասած հանդարտվում, լճանում և սպա դեղնավուն փրփուրով թափվում ցած: Գիշերով մի քանի անգամ էր եկել: Մի անգամ, անձրևի վարար ժամանակ, նա Գողուն իջեցրել էր ներքև՝ ստուգելու հո չի՞ քանդվել ամբարտակը: Ամեն անգամ վերադարձել էր ուրախ, սակայն հենց սանդուղքի գլխին մի կասկած փշի պես ծակել էլ միտքը. չլինի՞ մի բան պատահի, հազար շառ ու գուշման, գան... Հը... Եվ նորից էր վերադարձել:

30

Մկրտումը քարի գլխից նայում էր ցած և անհամբեր սպասում, թե երբ պիտի երևա ամբարտակի պատը... Զուրը ամբարտակի մեջտեղից, շլուզի համար թողած բացվածքից ահ-

ոսկի շառաշով ցած էր թափվում: Զուրն այնքան շատ էր, որ այդ բացվածքը հերիք չէր անում ու թափվում էր պատերի վրայով: Մկրտումը նայում էր համար ու շեշտակի, նայում էր ջրի ընթացքին, ասես ուզում էր հանդարտեր նրա թափը: Ծվ ինչքան բարակում էր, ջրի տակից դուրս էին ցցվում ամբարտակի սպիտակ քարերը, այնքան էլ նրա դեմքի լարվածությունը մեղմանում էր, մկանները թուլանում էին: Դիմացի քարափի կրաքարը ապակու պես շողշողաց... Նրա փայլն ընկավ ջրի մեջ, պղտոր ջրի մթությունը կորավ, շուրջ դարձավ դեղին: Մկրտումը ծպտաց: Մանր վտակները չբացան, և շուրջ խոնարհ գառան պես ընկավ շլուզի բացվածքը:

10

Ամբարտակը դիմացել էր. այդ էր ասում նրա հաստ և բարձր պատը, որ բազկի պես այս ափից մյուսն էր մեկնրված: Զրի տակից դուրս եկած քարերն ու կրածեփ պատերը պսպղում էին ճարպոտ փայլով: Մկրտումը վայր իջավ, կանգնեց պատի գլխին ու նայեց ջրվեժի ցնցուղներին: Ու նոր միայն զգաց, որ արևի սպիտակ սկավառակը արդեն բարձրացել է: Գուլորշի էր ելնում յափնջուց... Մկրտումը նայեց ջրին, մեկ էլ վեր բարձրացավ... Ներքևում գյուղն էր: Գուլորշին խառնվել էր կապույտ ծխի հետ: Ծվ այդ քողի հետևից երևում էին կանայք, որոնք արևի տակ փռում էին կարպետ ու վերմակ, երեխաները կտուրների վրա վազվզում էին... Տղամարդիկ չէին երևում: Մի կին վազում էր պուշր ցցած ու կետ անող հորթի հետևից:

20

Մկրտումի նինջն եկավ... Հոգնել էր Ու թիկնեց քարին. յափնջու մեջ կոլովելով: Ինչ լավ է՝ աշխարհը... Կարմրաքարը: Ծվ ինչքան բան կա դեռ անելու այնտեղ... Մկրտումը հիշեց այն, որ գյուղում իրեն ու իրենց տունը շեն սիրում, թեկուզ երեսին շեն ասում... Վախենում են, հը՞,— մտածեց նա ու ձեռքը յափնջու տակից հանեց... Արևի շողերը խաղացին նրա կարճ ու մազոտ մատներին հետ:— Փողը, հը՞,— հարցրեց ու բուռը սեղմեց, ասես արևի շողերը ոսկի էին թափել բռան մեջ:

30

— Անհասկ մարդիկ... Ծս ձեզ ի՞նչ եմ արել... Սպասեք մի քիչ էլ... կտեսնեք, թե ես ինչ կանեմ, ես՝ Մկրտում ետջա Հիբանի տղան... Ինչ կանե՞մ...

Քեկուզ հեղեղը վնասել էր գյուղին, և մարդիկ դառնացած էին այդ առավոտ, — բայց և այնպես արևի ելքը, նրա առատ ջերմությունն ու փայլը մոռացնել տվավ գիշերվա սարսափը: Փայլում էր ամեն ինչ. եկեղեցու պղնձյա խաչին նայել շէր լինում, և երբ սարյակները թռչում էին, որ նստեն նրա թևերին, թվում էր, թե ընկնում էին կրակի մեջ:

Տեր Նորընծան սովորականից կանուխ էր զարթնել: Բաց արել երազահանը և կարդացել. «Երազն շար է և օրն կատարի»... Դողացող ձեռներով շալն ուսն էր գցել և Նոանձորի ճանապարհը բռնել: Վա՛տ, շատ վատ երազ էր տեսել... Իբր թե պատարագի ծանր ժամին, սկիհը ձեռին, շրջվում է, որ խաչակնքի բազմությանը, տեսնում է, որ բազմություն չկա, մարդ չկա եկեղեցում ու միայն իր աղջիկը՝ Հեղնարը, փայտին հենած, ոտները քարշ տալով մոտենում է հազորդություն առնելու... Եվ իբրև թե դրսում աղմուկ է, ներս են վազում մարդիկ: Խոջա Հիբանի տղան պար է գալիս ու կանչում՝ որ կայծակը վառել է նրա խնձորենին, Նոանձորի արքայական խնձորենին: Մինչև այստեղ սրտի դողով կարողանում էր հիշել Տեր Նորընծան: Բայց շարունակությունը մտաբերելիս քիչ էր մնում դատողությունը խանգարվի... Իբրև թե սկիհից կաթ-կաթ արյուն էր թափվում ոսկենկար և ասեղնագործ շուրջառի փեշերին:

Այգիների ճանապարհով անցնելիս՝ նա տեսավ շաղպապանին... Ուստա Նազարե էր, կանայք, որոնք նրան տեսնելուց գլխաշորով երեսի մի մասը ծածկեցին. շաղպապանը տեղից վեր կացավ, «օրհնյա ի տեր» ասաց, բայց Տեր Նորընծան չլսեց:

— Տեր հայրը հիվանդի պես էր, — ասաց ուստա Նազարը շաղպապանին: Նա չլսեց: Արդումանը պատասխանեց.

— Բաղի դարդն ընկել է ջահը, ուստա... Դու մեր դարդը քաշի...

Եվ մոտեցավ քարերին: Ուստան գոգնոցը կապեց, մալան առավ:

— Ուստա, մի պատ կշարես, որ Պորտ-Արտուրի կրեպոստիցն էլ պինդ լինի... Դե երգդ ասի...

Տան առաջ Սիմոնի կինը և Սալբին արևի տակ փռում էին թաց ձավարը, շորաթանը և բարակ միթելները:

...Կեսօրի մոտ գյուղում իբրբանցում ընկավ: Լուրը կայ-  
ծակի արագությամբ կտուրից կտուր թռավ, հասավ մինչև այգի-  
ները: Ավան ամին մեղրաճանճի քթոցներն էր տեղափոխում,  
երբ Բարիկոյին տեսավ այգիների ճանապարհով վազելիս...

— Բարիկո, ախլի, էդ ո՞ւր...

— Զաղացը... Ավան ամի, դազախները գալիս են...

— Ի՞նչ դազախ... Կաց տեսնեմ,— սակայն Բարիկոն ար-  
դեն կամբջի գլխին էր: Ավան ամին գոտու տակ խրած արխա-  
լուղի փեշերն արձակելով, ճանապարհ ընկավ, շուխայի մի  
թևը կախ:

10

— Արզուման...

— Հե՛յ...

— Տերության մարդ է գալիս:

— Հե՛... Գալիս եմ հրե՛...

Տներից, բակերից դուրս էին գալիս տղամարդիկ, կանայք:  
Երեխաները նրանցից առաջ էին վազում: Գյուղը մրջնոցի  
նման իրար էր խառնվել, բոլորը շտապում էին դեպի գլխավոր  
փողոցը, ոմանք բարձրանում էին կտուրը և ձեռքները ճակա-  
տին դրած նայում հեռուն, ուր մի բան սևին էր տալիս: Երե-  
վում էին երկու ձիավոր, որոնցից մեկը առաջ էր ընկնում, եր-  
բեմն էլ ձիու գլուխը ետ դարձնում: ...Մեկն ասում էր, թե վերի  
գյուղի համար են գալիս, մյուսը՝ թե երևի ձիավոր գորքը պի-  
տի սարը բարձրանա, որովհետև նրա լսածով քաղաքում խոտ  
չի ճարվում: Արզումանը, խոր նայելուց հետո, բարձր ծիծա-  
ղեց...

20

— Այ խամ հեյվան... էն հո մեր խազեյինանց ստրումենտն  
են բերում... Պիլնու համար...

— Ա հե՛... Սրա ասածը կլինի, հը՞,— ասաց մեկը:

— Ղազախն էստեղ ինչո՞ւ պիտի, ի՞նչ բան ունի...

— Կարելի է՞... Սպասի տեսնենք... Հրեն գլուխը հասավ  
լուս Խաչերին...

30

— էն առաջինն էլ Եփրեմն է... Ես ձի քշելուցն եմ իմա-  
նում,— ասաց Արզումանը... Ու մյուսն ավելացրեց,— հրեն  
հա՛, կարմիր մադյանն է, էլի... Ես շեմ ճանաչո՞ւմ նրանց  
մադյանը...

171

Ծվ սկսեցին ծիծաղել դազախնների գալու լուրը տարածող-  
ների վրա:

— Ա դե ես իմ, է՛... Բռիցս հոտ չեմ արել, որ իմանամ...  
Ինձ էլ Մուքելի տղան ասաց...

— Ծս էլ կտրանը կանգնած էի, տկանջովս ընկալ՛...

— Առաջինը Թելունց պառավն ասեց...

— Էնենց է ասել, որ հավերը ճարի...

Ու ծիծաղն ավելի թնդաց: Թեկուզ արդեն համոզվում էին,  
որ եկողները կազակներ չեն, դարձյալ չէին ուզում ցրվել: Հա-  
Վաքվել էին խումբ-խումբ, տղամարդիկ ջոկ, կին ու աղջիկ՝  
ջոկ: Շատերը գրկել էին մանուկներին: Ու միայն երեխաներն  
էին, որ այս խմբից այն խումբն էին անցնում, վազում շար-  
քերի արանքով:

— Ա թուլա, դե դադար կաց, է՛,— ասաց մի ալեւոր, որին  
մի երեխա հրեց ու ձեռքի թուփունից մի քիչ թափեց: Երեխան  
վազեց ու բազմության մեջ գտավ մորը:

— Ինչ խաչը ջուրը քցելու ժողովուրդ կա,— ասաց մեկը:

— Հավատաս, որ ջրօրհնեքին էլ էսքան մարդ չի հավաք-  
վի... Հրեն հա՛... Քաշալ Սային էլ է եկել...

Քաշալ Սային մի կույր ծերունի էր, որ կամ իր բոստանի  
շվաքում էր պառկում կամ տանը՝ քուրսու տակ: Ոչ գյուղա-  
մեջ էր դուրս գալիս և ոչ էլ երևում էր գյուղական տոներին:  
Կողքի գյուղերն էլ էին նրան ճանաչում, մի կարմրաքարցու  
հանդիպելիս, եթե հարցնեին գյուղի անց ու դարձից, կարմրա-  
քարցին ծիծաղելով պատասխանում էր, թե Քաշալ Սային հյա  
բոստանումն է՝, այսինքն գյուղում նորութուն չկա...

— Տեր նորընծան չկա՛...

— Գնացել է ստրումենտ սարքի, որ գա ժողովրդին օրհ-  
նի...

— Տնաչեն, խաչը ջուրը քցելիս օրհնում է... Բա մենք  
սաղ գեղով էս գիշեր ջրի մեջ ընկանք, ուրեմն շօ՞րհնի,— ասաց  
Արզումանը:

Այդ խոսքի վրա փողոցի ծայրում երևաց Եփրեմը: Նա  
ձիու գլուխը ձգեց, ձին հետևի տոների վրա բարձրացավ ու պը-  
տուլտ արեց:

— Շան որդու փորսին տես...

— Մարդ է զարմացնում, կա՛կ բուռտո՞ւն ձի շենք նստել,—  
ասաց Արզումանը:

— Էն մադյանը որ քու տակին լիներ, հավատա, ուրախու-  
թյունից երկինք կթռչեր...

— Իմ տակին մին՝ ուսակ կար, որ քեզ պոչից կապած  
կտաննի Սուտիկ պապիդ մոտ,— պատասխանեց Արզումանը  
և խեթ նայեց Սուտիկ Ոսկանի թոռ Գրզըլ-Պուղուն, կարճլիկ ու  
հաստ մի երիտասարդի, որին գյուղում չէին սիրում: Նրան  
անվանում էին «պրիստավի թագի»: Երկուսն էլ իրար աչքով  
չափեցին. այդ ընկերն մեկը կանչեց.

10

— Ֆուրգունները... — և Եփրեմը ձին արագ քշելով անցավ  
փողոցով, ցեխի շիթեր շարտելով այս ու այն կողմ:

— Զիդ թրքեց... խազեին,— բազմության միջից կանչեց  
մեկը. ոմանք ծիծաղեցին: Եփրեմը ետ նայեց ու գոռաց պա-  
տերի տակ շար ընկած երեխաների վրա.

— Դենը փախեք, շան լակոտներ... Ընկնելու եք տակը,  
սատկեք...

Եփրեմի բարկությունը մեղմելու նպատակով, թե բազ-  
մության մեջ աչքի ընկնելու համար Գրզըլ-Պուղին հարցրեց.

20

— Եփրեմ, վերի կապովն եկա՞ք, թե ներքի ճամփով...

— Վերի կապն էլ քանդվի, ներքինն էլ... Սա երկիր է՞...  
Շան օր քաշեցինք... — և ձին քշեց:

— Պո-պոպո... էս ինչ քոսակ է՞...

— Կրիբալդի՞... Կրիբալդի...

Փողոցի ծայրին երևաց մի ձիավոր, երկար պլաշըը հա-  
գին: Գլխին դրել էր գյուղի համար արտասովոր գլխարկ, որի  
ծայրերը երկու կողմից լոշ-լոշ ականջների նման կախվել  
էին: Մարդն անբեղ, անմոռու էր: Նա նստել էր ձիուն այն-  
պես, ասես պարաններով կապկպած էր: Գլուխը մազաշափ  
անգամ աչ ու ձախ շէր դարձնում: Կարծես գյուղի փողոցը  
նույն ձանձրալի ճանապարհի շարունակությունն էր, որով եկել  
էր նա մի օր շարունակ: Այդ ձիավորը գերմանացի էր, ներ-  
կայացուցիչն այն ֆիրմայի, որ փայտամշակման գործիքներ  
ու ստանոկներ էր մատակարարում ռուսական առևտրական  
տներին ու ստանոկների հետ միասին էլ առևտրական տների  
տրամադրության տակ ուղարկում իր վարպետներին, որոնք

30

173

պիտի սարքեին սղոցարանները և սարքած հանձնեին տերերին: Իր կյանքում նա շատ տեղեր էր ման եկել և ամեն տեղ էլ տեսել նույն հետամնաց ու կիսավայրենի վիճակով մարդիկ և եկել այն համոզման, որ աշխարհի աշքը՝ իր հայրենիքն է, որ մյուս երկրներին մատակարարում է բազմաթիվ մեքենաներ և իրեն նման մարդիկ, որոնք մեքենայի մի մասն էին: Նա գլուխը շփեքեց նայելու ոչ Կարմրաքարի եկեղեցուն, ոչ այն քարաշեն տներին, որ խմբված էին հին եկեղեցու շուրջը: Նա տեսել էր այդ մի անգամ և համոզվել, որ ինչքան էլ գնար այդ երկրում, պիտի տեսնի նույնը՝ սարեր, ձոր ու անտառ, ջրեր, — որոնց ուժով քանի՜ սղոցարան կբանեին և մարդկանց՝ խեղճ, ումիկ, մի քիչ էլ խորամանկ մարդկանց:

10

Այ ու ձախ կանգնած ամբոխը զանազան նկատողություններ էր անում «Կարիբալդու» մասին, բայց հենց նա մոտենում էր թե չէ, խոսողները լռում էին և պլշած աչքերով նայում նրա տարօրինակ կոշիկներին, գլխարկին և կաշվե պայուսակին, որ մեջքին էր կապել և ոչ ձիու թամբին: Այս էլ սրախոսության նյութ դարձավ կտուրի վրա կանգնած տղամարդկանց համար: Բայց հենց այն ժամանակ, երբ մեկն ակնարկ էր անում Խոչանասարեղիների և էշի փալանի պատմությանը, «Կրիբալդին» հանկարծ ձիու գլուխը բռնեց և վեր հանեց իր գլխարկը, ճոճելով Արզումանի կողմը:

20

Կտուրի վրայից Արզումանը նրան ասել էր «գոտտեն մորգն»... Գերմանացին անշափ ուրախությունից գլխարկը հանել էր:

Նա գերմաներեն մի քանի խոսք ասաց, սակայն համոզվելով, որ կտուրի վրայի մարդն ավելին չգիտե, գլխարկն նորից հագավ ու սանձը բաց թողեց: Բայց և այնպես այդ խոսքն էլ նրան դուր եկավ:

30

— Մալադեց Արզուման...

— Արզումանը լեմսի լեզու է խոսում...

Եվ շուտով տարածվեց, հասավ մինչև կանանց բազմությանը, ու գունավոր շորերի, թաշկինակների ծովի մեջ մի դեմք վարդագույն դարձավ, գլուխը խոնարհեց: Քանի՜ անգամ նրա անունը տվին ու մատով ցույց տվին կտուրը, որի ծայրին նա

վանգնած էր, զինվորական բաճկոնն ուսին: Սալբին հիշեց գիշերվա հեղեղը...

Իրար հետևից երևացին ֆուրգոնները: Հոգնած ձիերը կապույտ փրփուրի մեջ վերջին ճիգերն էին անում ծանր բեռը քաշելու: Գուրդի էր բարձրանում նրանց քրտնած մարմիններից: Ֆուրգոնի անիվները, ճաղերը, ձիերի ոտները, նույնիսկ կուրծքը ցեխոտ էին, ասես ճղփայլով անցել էին ցեխի հեղեղի միջով: Առաջին ֆուրգոնի մեջ մի հսկա արկղ էր, երկաթե ձողերով կապկպած: Երկրորդ ֆուրգոնի հատակին ընկած էին երկաթե երկար ու զանազան հաստության ձողեր, որոնց ծայրերը ցեխի մեջ քարշ էին գալիս, ակոսներ քաշում: Երրորդ ֆուրգոնը երկրորդից բավական հեռավորության վրա էր: Չուղունի պետուտակներ էին, տարբեր մեծությամբ, կտրատված երկաթներ, փոկերի ծալ-ծալ կապեր, փայտի արկղներ և ուրիշ մանրուք: Վերջին ֆուրգոնը բերնե բերան լցված էր թիթեղներով, և դրա համար էլ ամենից շատ նա էր աղմկում, զրնգացնում:

Կարմրաքարն առաջին անգամ էր տեսնում այդքան ֆուրգոն և այդպիսի ապրանք: Ճիշտ է, մի քանի անգամ Խոջա Հիբանի որդիների խանութի ապրանքը դարձյալ ֆուրգոնով էին բերել, բայց նրանք երկձի էին, սովորական սալից մի քիչ մեծ: Մի անգամ էլ սրիստավ Բեկտարեգովն էր եկել այնպիսի փոքրիկ կառքով, որին գյուղում անվանել էին ծոխ բուն: Բայց այս անգամ շորս ֆուրգոն, շորսն էլ քառաձի և ի՞նչ ձիեր, ի՞նչ սարք ու կարգ: Կային այնպիսիները, մանավանդ կանանց մեջ, որոնք շէին տեսել նույնիսկ այն երկձի ֆուրգոնը, որ խանութի համար ապրանք էր բերում: Եվ զարմանքով, զմայլանքով էին նայում ֆուրգոնի ներկած ճաղերին, որ վրանի նման օրորվում էր:

— Այ, ինչ ուխտ կզնամ դրանով... Մեջը քնի, ոչ ալ: են այրի, ոչ կարկուտը տա...

— Լավ աշաշուփս կլինի դրա գլուխը...

«Աշխարհ տեսած» կանայք ծիծաղում էին նրանց վրա: Տեր Նորընծայի կինը մի անգամ որդուն ուղեկցել էր քաղաք և տեսել կառքը:

— Անտերը դուշի նման է գնում... Անսա՛ս... անսաո՛ւր... էնքան էլ կախուղ...

— Բա որ Բաքվա վազոնը տեսնես,— վրա բերեց մի ուրիշը,— ոտդ տափից կտրում ես թե չէ, պոկ է գալիս... Մին Գյանջա ես տեսնում, աչքդ խփում ես թե ննչաս, ըհը Բաքուն...

Իսկ նրանք, որոնք ոչ կտոքն էին տեսել, ոչ Բաքվա վազոնը, ուշադրութեամբ լսում էին թե՛ նրանց պատմածը և թե աչք չէին հեռացնում օրորվող ֆուրգոններից:

— Չէ՛... Կարմրաքարն էլ լուսավորվեց... Զավոդ բերին Հիբանի տղերքը...

10 — Բալադ մեռնի, փո՛ղ... Տես ինչը որտեղ դուրս բերեց... Զորս ձիանի փրզոնը Կարմրաքար հասնի՛... Որ աչքովս էլ տեսնալի, էլի կասեի սա մեր գեղը չի,— վրա բերեց Ունանը, որ ցաքանը ձեռին այգուց եկել էր մի կապ ցախ թևի տակ:

— Հմի կհավատա՞ս:

— Էլ չհավատա՞մ... — տխուր ասաց Ունանը: Ասաց և հառաչեց, կարծես խոստովանեց մի դառն ճշմարտութիւն, որ ակնհայտ էր գարնան արևի նման, որի շողերն անտարբեր խաղում էին և պղնձե խաչի, և փայլուն թիթեղների հետ:

Հաղթական երթի նման էր ֆուրգոնների անցնելը: Գեր

20 ձիերը, նրանց նոր սարքը, արծաթե կոճակները, որ շարված էին սարքի կաշիների վրա, ձիերի վզից կախած գունավոր փնջերն ու զանգուկակները, որ ավելի զորեղ էին հնչում, երբ ձիերը ուժ էին անում ֆուրգոնը քաշելու, վերջապես ֆուրգոնների տեսքը, նրանց վրա դարսած իրերը, որոնք ֆուրգոնի նման նոր էին, առաջից գնացող ձիավորները,— այս ամենը մայիսյան արևի տակ փայլվում էին, շլացնում և հաղթական երթի նմանութիւն տալիս: Արզումանը նայում էր ֆուրգոնների շարքին. նա մտքում ասաց. «Հիբանի տղորց արողը»: Մանյովրի ժամանակ այդպես էին նրանք մտնում անժանոթ ավաններն ու քաղաքները: Եվ ժողովուրդը շարք կազմած թամաշա էր անում: Իսկ զինվորները, մանավանդ ձիավորներն, ավելի զիլ էին երգում գյուղը մտնելիս: Ինչ «հրեշտակներ» կային...

— Օհո՛... Խրվեց... Նո՛ւ... — լավեց մի խուլ աղաղակ: Ոմանք կտուրներից թռան և առաջ վազեցին: Առաջին ֆուրգոնի շուրջը խմբվել էր բազմութիւն: Խանութից քիչ ներքև, ճանապարհի այն տեղը, ուր տարին բոլոր ցեխը չէր շորանում,

որովհետեւ գետինը ջուր էր դուրս գցում, ինչպես հիվանդ ու միշտ ճպոտ աչքը,— Ֆուրզոնի առաջին անիվը մինչև սունակը խրվել էր:

— Նո՛ւ... Ծ...— կանչում էր Ֆուրզոնչին, մտրակն օձի նման պտտացնում և շրափ իջեցնում միջի ձիերի զավակին: Ձիերն ուժ էին տալիս այնքան, որ պաստրոմկաների հետ միասին ասես իրենց ջլերը պիտի կտրատեին, ուժ էին անում, դեռ ու դեն ծովում և շէին կարողանում մի քիչ էլ առաջ անել:

— Սրան փոսի ցեխ կասեն, է՛... Շատ նու մի անի... Ձիերը մեղք են,— ասաց մեկը:

— Միմո՛ն, Արտե՛մ... Մոտեցեք, է՛...— կանչեց Ունանը, — բա էս զարիբ մարդիկ ինչ կասեն: Արզուման, առաջ ընկի...

Երիտասարդները կարծես այդ խոսքին էին սպասում: Մինչ այդ նրանք վարանած կանգնել էին ու շփտեին մոտենա՞լ, թե ոչ: Արզումանն առաջ քաշեց:

— Ձիերի գլուխը պահի,— ասաց նա Ֆուրզոնչուն և ուարդ դեմ տվեց:

— Հը՛...— և բազմաթիվ ձեռքեր հրեցին Ֆուրզոնն ու անիվները: Կաս-կարմիր էին կտրել նրանց դեմքերը: Սալբին գաղտագողի դիտում էր: Նրա սիրտը թրթռում էր: Հանկարծ Ֆուրզոնը շարժվի՛, հետի անիվը վրան գլորվի...— Շուռ չգա՞,— ասաց մի կին: Աղչկա սիրտն ավելի արագ բարախեց: Այդ ըոպեին երիտասարդների խմբի մեջ նա տեսնում էր միայն Արզումանի՞ն, նրա թիկունքը և աղեղի պես ձգված ոտքը:

— Նո՛ւ,— և ձիերը դուրս քաշեցին Ֆուրզոնը: Օգնողները ետ փախան: Միայն մեկի ղլխարկը ընկավ անիվի տակ ու խոր թաղվեց ցեխի մեջ:

Ֆուրզոններն անցան:

\*\*\*

Խանութի դիմաց, փոքրիկ հրապարակում շարժվելու տեղ չկար: Շարեշար կապած ձիերը փոնչացնելով ուտում էին հարգախառն գարին, երբեմն էլ մոռութով փորփրում լայն տոպրակները և հարդը թափում ոտների տակ: Ֆուրզոնների վրա մուշտակների մեջ կոլուլված պառկել էին հոգնած տերերը,

10

20

30

177

արոնցից մեկը երբեմն գլուխը վեր էր հանում, «նո՛ւ» ասում ուտելիս իրար հետ կոճող ձիերին և նորից գլուխը դնում հարգի տոպրակին:

Ֆուրգոններից քիչ հեռու դարսված էր ապրանքը: Ինչեր չկա՞ր... Արկղներ, երկաթալարի կապեր, հաստ մեխերի կիտուկներ, թիթեղ, բարակ ուլտեր, վագոնետների երկաթե մասեր: Մեծ ստանոկը հինգ-վեց մարդու օգնությամբ իջեցրել էին և դրել խանութի դռանը: Ձողերը հենել էին խանութի պատին:

10 Տղամարդկանց մի բազմություն նայում էր յուրաքանչյուր իրը, տեղեկանում, թե ինչու համար է, ինչ գործ պիտի անի: Եվ հակասական բաներ էին ասում: Ոմանց ասելով վագոնետները պիտի փայտը սղոցեն, երկար ձողերը կամուրջի համար են, որի վրայով գերանները պիտի քարշ տան: Իսկ երեխաների խումբը շէր հեռանում վագոնետների մոտից. «Ի՞նչ կգլորվի գերեզմանատան բլուրից...», «Ի՞նչ արաբա է», ասում էին նրանք: Կանայք հեռվից էին նայում կամ փողոցով անցկենալիս քայլերը դանդաղեցնում, որ մի քիչ ավելին տեսնեն: Հարս ու աղջիկ իրենց տների առաջ փոքրիկ խմբերով կանգնած սպասում էին, որ երեխաներից մեկն ու մեկը գա, և նրանից տեղեկանան, թե ինչ «մաշիններ» կան արկղների մեջ, 20 ճի՛շտ է, որ երկար ձողերով հոր են քանդելու, ինչպես ասում էր Շուղանց հարսը: Եվ երեխաներն ինչպիսի՞ առասպելներ էին պատմում...

Թոռան ուսից բռնած, մահակը գետնին տափտափելով, երեկոյան դեմ եկավ և կույր Սային: Ոմանք ծիծաղեցին նրա վրա, ինչ պիտի տեսներ նա. մյուսները սաստեցին ծիծաղողներին և հետ-հետ քաշվելով ճանապարհ բաց արին: Կույրը մոտեցավ, փայտն առչեւն օրորալով, դիպավ ծանր պտուտակներին, կուցավ, սկսեց շոշափել: Ապա մոտեցավ վագոնետներին: 30

— Սայի դայի... Մեծ մաշինը հրեն դուքանի առաջր... — ասաց մեկը: Մերունին ու թոռը շրջվեցին այն կողմը: Ստանոկն արդեն բաց էին արել: Արևամուտի լույսի տակ պողպատի գորշ փայլով շողշողում էին նրա ողորկ լանջն ու ծանր ոտքերը: Մերունին գրկեց, ականջը կախեց, ասես լսում էր, և բոլոր մասերը շոշափելուց հետո, տեղում ձգվեց:

— Մկրտում...

— Ի՞նչ է, Սայի ամի, — պատասխանեց Մկրտումը խանութից:

— Էլ հունար ունե՞ս, թե էս է... Բե՛ր էն էլ տեսնեմ: Հոգի ունեմ տալու: Գնալու եմ, Հիբանը հարցմունք է անելու, թե ի՞նչ տեսար ինձանից հետո:— Ու քիչ անց հարցրեց. — սաս շունի՞ սրան...

— Ունի, Սայի ամի, որ սարքենք, կլսես...

— Էդ էլ լսե՛մ...,— ու դարձավ թոռանը, — գնանք, բալաս... Տավարի գալու վախտն է:

10

Եվ փայտը գետնին խփելով ծերունին հեռացավ: Կանգնածները լուռ նայեցին նրա հետևից:

Մինչև մութն ընկնելը մարդիկ չէին հեռանում խանութի մոտից: Երեխաները, անսալով ծնողների կանչին, ֆուրգոնի ձիերի սանձից բռնած ութ-տասը հոգով, ձիերը տանում էին շրելու: Ինչ հպարտությամբ էր քայլում սանձ բռնողը, իսկ մյուսները հետ ու առաջ էին վազում, զմայլանքով ձիերի փընջերն ու զանգուկները նայում: Նրանք երբեք այդպիսի գեղեցիկ ձիեր չէին տեսել:

Գիշերով նրանց տանը հավաքվել էին տասը-տասնհինգ հոգի: Ֆուրգոնչիներն էին, գերմանացին, պամոշնիկ Անտոնը, ուստան, Գրդըլ-Պուղին, Շալուն Սիմոնը և մի քանի մոտ ազգական ու բարեկամ: Երկու անգամ մարդ էին ուղարկել քահանայի հետևից:

20

Բակում, խարույկի առաջ մի մարդ կտրատում էր սյունից կախած ոչխարը: Սիմոնի կինը մեծ շերեփով խառնում էր կաթսան, շուտ-շուտ ածխակոթերը կաթսայի տակ հրում: Շողերը, Եփրեմի կինը, նրա մայրը շտապ-շտապ սանդուղքով վեր ու վար էին անում, տանում հաց, գինի, միս, պանիր, կանաչեղեն... Ընթրիքը գնալով թեժանում էր: Լայն պատնոցների վրա դարսած խաշլաման ու խորովածն իրար հետևից էին տանում: Եփրեմը գինու մի փոքրիկ կարաս էլ էր բաց արել: Ֆուրգոնչիները ձիու նման էին խմում քաղցր գինին և ճաքճքած մատներով, կեղտոտ եղունգներով բռնում մսի մեծ կտորները: Նրանց ձեռքերից ձիու քրտինքի և կաշվի հոտ էր գալիս, սակայն նրանք այդ չէին զգում: Գերմանացին էլ էր

30

տաքացել: Նա դեն էր գցել պլաշչն ու պայուսակը և ազահու-  
թյամբ դատարկում էր գինու գավաթները, ուշադրութուն  
չդարձնելով այն կենացներին, որ ասվում էին, և ոչ էլ խմե-  
լու կարգին: Ուստա Նազարը փորձեց երգ ասելու, բայց ֆուր-  
գունչիներից մեկը քթի տակ ծիծաղեց: Սիմոնը գլուխը կախ  
ուսում էր, ինչպես կուտի առատ սեղանի մոտ նստած աղքա-  
տը: Եփրեմը բացվել էր. շատ հազվագյուտ էր լինում նրանց  
տանը այդպիսի ճոխ ընթրիք: Եվ խմում էր առանց քաշվե-  
լու եղբորից, խմում էր ու պարապ գավաթը գլխիվայր շըր-  
շում: Իսկ գերմանացին հռհռում էր...

10 — Ես տեսնում եմ, որ հայերը գործունյա մարդիկ են,—  
ասաց նա:

— Ասա՛ հայի մեռել գետնի տակ էլ կբանի,— վրա բերեց  
ուստա Նազարը: Սակայն նրա ասածը Եփրեմը չթարգմանեց:

— Հենրիխ ջան,— ասավ Եփրեմը,— խմի, գործի ժամա-  
նակ էլ քրտնի... հարաշո, էյ բող:

— Ես մի այդպիսի սղոցարան էլ սարքել եմ լոռի... Ըմ...  
էլի հայ էր, հարուստ հայ... Թիֆլիս էլ տներ ունի...

20 — Եփրեմ, մի հարցրու տես նրանց մաշինն ինչ թավուք  
էր,— ասաց Մկրտումը:

— Սաղ մի ֆիրմայի է, բրատ ջան, արխեին կաց,— ասաց  
Եփրեմը գլուխն օրորելով:

Քեֆի տաք ժամանակ Մկրտումը վեր կացավ և աննկա-  
տելի դուրս եկավ:

— Էն տղայի համար մի քիչ հաց-մաց շինի,— ասաց նա  
կնոջը: «Էն տղան» Գողին էր, որ այդ գիշեր պահակ էր մնա-  
ցել ֆուրգոնների և խանութի առաջ շարած ապրանքի մոտ:

Գողին յոթ-ութ տարի էր, որ նրանց տան մշտական ծա-  
ռան էր: Նրա շեշտ, անմազ երեսին նայողը դժվար կորոշեր  
30 տարիքը: Վանող մի արտահայտութուն կար նրա աչքերում:  
«Լորդուն ինչքան էլ վնասատու չի, բայց էլի կերպարանքն օձի  
է», ասել էր նրա մասին Ավան ամին: Եթե գյուղում մեկի շու-  
նը օր ցերեկով գետնին զարկեր իրեն, գետինը շանգոներ, փըս-  
խեր և շնչահեղձ լիներ, պիտի ասեին, որ Գողին է ասեղ տվել:  
Բայց մի քանիսն էլ ուրիշ կարծիքի էին՝ որ նա խեղճ է, վախ-  
կոտ է, աստծու թակածը: Համենայն դեպս նա Կարմրաքա-

բի առեղծվածներից մինն էր: Եվ ինչեր չէին ասում... Իբր թե, ինչպես ասում էին պառավներից մի քանիսը, Գողու աշքերը հետևն էլ են տեսնում, և դրա համար էլ վախենում էին ափաշկարա նրա հետևից շանչ անել: Նա կարմրաքարցի շեր և այդ շրջանից էլ շեր: Տեր նորրնժան հաստատում էր, որ նրա «գրոց անունը» Գեդեոն է: Մի քանի անգամ հարցրել էին նրան այդ մասին, Գողին ուսերը թոթվել էր և ծիծաղել սառն ու շար ծիծաղով: Նրա մասին հաստատը հետևյալն էր՝ նա օձ էր որսում, կարողանում էր առանց վախի ձեռք տալ նույնիսկ թունավոր օձին և ապա՝ սուլում էր այնքան հիանալի, որ ոչ մի հովիվ սրնգով նրան չէր հասնի: Եվ երբ գիշերները նրա սուլոցըն էին լսում՝ խեղճ, սիրտ կտրատող երգը, ասում էին, որ Գողին «աստծու թակածն է»:

10

Գյուղը քնել էր, ու միայն Հիրանի տանն էր աղմուկ, ծափ, հոհոց: Խանութի մոտ, կրակի առաջ Գողին նստել էր ու նընջում էր: Մկրտումի ոտնաձայնից վեր թռավ:

— Հը՞... հո սովել չես,— ասաց Մկրտումը,— առ:

— Մարդ-մուրդ հո չի երևացել,— հարցրեց:

— Չէ... Համա խոսում էին Բոլոր քարի մոտ,— ասաց

Գողին:

20

— Ո՞վ էր...

— Ավան ամին էր, Զետանց Ուհանը, Արզումանը...

— Հը՞:

— Ավան ամին ասում էր, թե սրա վերջը լավ չի լինելու: Ժողովրդական հողում բերես զավոդ սարքես, առանց մի թույլատրության, մի թղթի—չի կարելի... Ասում է ջամահաթի որոշը պիտի լինի, թե չէ, զակոնին անուն—դանակ է...

— Հետո՞...— անհամբեր հարցրեց Մկրտումը:

— Ասում է ժողովուրդով պետք է միրսկի տանք, թող Քառասնաչուրը խազնեն մեզ ծախի...

30

Մկրտումը քահ-քահ ծիծաղեց. գարու տոպրակի վրա կռացած ձիերը ականչները խլչեցին և մի պահ շժամեցին:

— Քառասնաչուրը...— Ու կամաց հարցրեց.— Հո քեզ չտեսան...

— Չէ...

— Լավ: Դե մղայիթ կաց: Տուրգոնչիները մի քիչ քեֆով

181

են: Ուշքդ վրադ պահի, քնով շանցնես,— ասաց Մկրտումը և շրջվեց տան կողմը: Նա մի քանի քայլ էր արել, երբ Գողին հետևեց կամացուկ ասաց:

— Մկրտում ափի...— Մկրտումը հետ նայեց:— Բա մեր բանը ե՞րբ պիտի գլուխ բերես... Ախր վախտ է անց կենում... Վախենում եմ, որ...

— Ինչը՞:

— Էն էլի, որ քեզ գոմումն ասի...

Մկրտումը ծիծաղեց:

10 — Չես դիմանում, հը՞... Լավ, իրիկունս անպատճառ կասեմ: Սիմոնին էլ, մորն էլ: Իմ հոգուս պարտքը: Էս անտերը մի խոդ քցենք: Հարսանիքդ ալբհալը գլուխ բերեմ: Մի հարսանիք անեմ ո՞ր...

Եվ զնաց: Գողին ժպիտն երեսին դեռ երկար ժամանակ նայում էր մութին և լսում հետզհետե հանգչող ոտնաձայնը:

## 5

Փոշին հաստ շերտով նստել էր ճանապարհի եզրին բուսած արևածաղկի թերթերի ու կարտոֆիլի թփերի վրա, առուն բարակել էր և օձանման պտույտներով բակերն էր մտնում, շտապ կտրում փողոցի լայնքը և արևի տապից փախչելով, իջնում բանջարանոցները, ուր արևածաղիկն ու եգիպտացորենը բարդիների պես ստվեր էին գցում առվակի վրա:

Գյուղի փողոցներում անց ու դարձը դադարել էր, բակերում մարդ չէր երևում: Միայն Բոլոր քարի մոտ աշխատանքի անընդունակ երկու ծերունի, որպես լուծից բեզարած եզներ, նստել էին, ջրակալած աչքերը հառել առվակին: Ով դիտե ինչ էին մտաբերում ծերերը վազող ջրին նայելիս: Ծրիտասարդ օրերի կարո՞տն էին քաշում, երբ ամառվա տապին հանդից տուն չէին գալիս և քնում էին թարմ խոտի վրա՝ երեսն աստղկա երկնքին, թե՞ հաշտ էին և դատապարտվածի նման սպասում էին անողոքին, որ պիտի գար և ուշանում էր: Գուցե և ոչ մի միտք պտույտ չէր անում նրանց ուղեղում, ինչպես կամեր կալում և հենց այնպես նստել էին՝ քարացած, իրրե արձան, իրրե Բոլոր քարի մի մասը:

Նրանց դիմաց, կիսաքանդ մարագի ստվերում, երկու հորթ ականջներն էին շարժում և որոճում: Եկեղեցու զավթում հոտից հետ մնացած ոչխարը, որի դմակը փաթաթված էր թաղիքի մեջ, պոկոտում էր պատերի տակ բուսած չոր խոտը: Գայլը ցրիվ էր տվել դմակը, տերը փաթաթել էր վերքը, որ շոգից ու կեղտից որդնտով էր: Քաղցած ոչխարը և՛ պոկոտում էր խոտը, և՛ ցավից դմակը պատերին ու քարերին քսում: Գավթի ստվերում, փալանը փորի տակ կախ, շմած կանգնել էր մի էշ և նայում էր ոչխարի շարժումներին: Արթուն և առույգ էին միայն աքլորները, որ քրքրում էին փողոցի աղբն ու արուի հպարտությամբ կանչում հավերին: 10

Ծառի տերևն էլ շէր դողում: Եվ տոթին, երբ մեղուններն էլ էին խմբերով իջնում առվակի խոնավ ափերին,— Բոլոր քարի մոտ նստած երկու ծերունի լսում էին Քառասնաչրում թափվող ջրի ձայնը և բարակ զրնգոցը: Նրանց համար նորություն էր այդ. կարծես երկաթյա թևերով մի թռչուն իջել էր ձորը և նվում էր՝ թևն արնոտ բուխ նման:

— Էլ էն Քառասնաչուրը չի, հե՛յ...— ասաց ծերունիներից մեկը ննջացող ընկերոջը:

— Ասում է ձորի մասրիքը շորացել են,— պատասխանեց նա և աչքերը՝ շոգից, հոգնածությունից, ծերությունից փակվեցին: 20

Ծերունին ճիշտ էր ասում: Քառասնաչուրն էլ առաջվա փոքրիկ ձորակը շէր, ուր այնքան առատ էր լինում մասուրը, իսկ քարերի արանքում՝ մանուշակի ու մորենու թփեր: Թիթեղյա ծածկոցը թուխպի պես թևերը փռել էր, հենվել սյուների վրա, որոնց արանքում վագոնետները բարակ ուլսերի վրա հետ ու առաջ էին գլորվում: Ծիշտ մեջտեղը, գերանների վրա ամրացված էր ստանոկը:

Պողպատյա սղոցը պտտվում էր, գերանը դժկամությամբ էր իր սպիտակ բունը մոտեցնում, սակայն վագոնետը գլորվում էր և սղոցի սրածայր ատամները քրքրում էին փափուկ միջուկը, ավագի նման շպրտում: Սղոցը զիլ էր զրնգում, երբ դեմ էր առնում կարծր կոշտի, ավելի արագ էր պտտվում, տաքանում և կոշտը ճեղքում: Գերանը երկու կտոր անելուց սղոցն ավելի հանդարտ էր զրնգում, նեղ ձորից դուրս եկող գետակի 30

պես, և սպասում, որ մի այլ գերան, սպանդանոց քշվող եզան նման, վիզը մեկնի սուր դանակի տակ:

Ամբարտակից շուրը բաց խողովակով թափվում էր հըսկա անիվի վրա, որ հագցրված էր երկաթյա երկար ձողին: Քառասնաչրի երկու ափին գտնվող փայտի սյուններն իրենց վրա էին կրում ոչ միայն գլխավոր անիվի և ձողի ծանրութունը, այլև նույն ձողին հագցրած փայտյա մի ուրիշ անիվի, որի՝ բոխի փայտից շինած ատամները խրվում էին շուգունն պտուտակի ատամների մեջ: Տասը փութ ծանրութուն ունեցող այդ պտուտակը, որ ավելի կարճ ձողի էր հագցրած և հենվում էր ցածր սյունների վրա, — իր հերթին դարձնում էր մի այլ պտուտակ, որի ձողին ամրացրած երկաթյա անիվը հաստ փոկերով միացված էր ստանոկին: Այդ ամենը շարժվում էր, վզզում, զրնգում այն ջրով, որ ամբարտակի բարձրութունից թափվում էր մեծ անիվի վրա: Ինչքան մոտենում էին ստանոկին, այնքան պտուտակներն ավելի արագ էին դառնում, և մեծ անիվի ծանր պտույտը փոկերը հարյուրապատիկ արագ էին հաղորդում վերջին պտուտակին: Հերիք էր շլյուզի փականն իջեցնելու, որ նույն վայրկյանում դադար առնեին փոկերը, պտուտակներն ու անիվները, և սղոցները մնային գերանի մեջ խրված, ինչպես թափով նետած սկավառակ:

Գերմանացին գնացել էր, պատմութունների և հիշողութունների մի շարան թողնելով գյուղում: Նրա մասին պատմելուց և՛ ծիծաղում էին, և՛ զարմանք արտահայտում: Եթե սղոցները չզրնգային, գուցե կասկածող լիներ, որ նա ամենևին կարմրաքար չի եկել: Եվ այն, ինչ ասում էին, թե թութուն էր ծամում, շարանալուց թքոտում, ոտը գետնով տալիս, թե նա մշակների ներկայությամբ նույնիսկ Մկրտումի վրա էր շարացել, «տուռակ» անվանել, որովհետև քանդել էր տվել ստանոկը, մաս-մաս Քառասնաչուր տեղափոխելու համար: Ըմբովի Թյունու բեղը կտրելու պահանջը, — ահա այսպիսի պատմութունները հավատալի էին դառնում, երբ մարդիկ տեսնում էին նրա «ձեռացագործը», ինչպես ասում էր Տեր Նորրնծան:

Բայց ինչ կարծիք էլ հայտնեին, ինչքան էլ զարմանային նրա հնարագիտության վրա, այնուամենայնիվ «Լեմսը» պար-

զամիտ և համարձակ մարդու համբավ էր թողել: «Զհինով մարդ էր, համա հալալ կաթնակեր էր»,— այս էր գյուղի ընդհանուր կարծիքը: Ամենից շատ պատմում էին Մկրտումի վրա շարանալու մասին, պատմում էին թուփը կուլ տալով, և քահանա ծիծաղում, երբ պատմողը կրկնում էր Մկրտումի պատասխանը. «Շաշի միսն է, կտա՛ կկտորատի...»:

Սղոցարանը նա սարքել էր քառասուն օրում: Այս էլ զարմանք էր պատճառում, որովհետև գալու երկրորդ օրն իսկ նա այդպիսի ժամկետ էր սահմանել, որ կասկածի տակ էին առել գյուղացիք: «Քառասուն օրում թե նա գլուխ բերե՛ց, ըհը, ես բեղս կկտրեմ»,— ասել էր Ըմբովի Քյունին, որի ավել անունը «Քարսի ձի» էր, միշտ հակառակ և շատախոս լինելու համար: Այս մարդուն էր պահանջել գերմանացին, երբ ճիշտ ժամանակին առաջին գերանը սղոցել էր՝ Արզումանի և Գրգըլ-Պուղու հետ:

Գյուղում եղած ժամանակ նա մտերմացել էր միայն Արզումանի հետ: Բացի քահանայից, որին տեսնելուց գերմանացին պատկառանքով էր բարձրացնում լայնեզր գլխարկը, բերանից ծխամորճը հանում,— մնացածը մի հավասարի մարդիկ էին նրա աչքին, գորշ պատ, որի աղյուսներն իրարից ոչնչով չեն տարբերվում:

Նրա շինած «զավոդը» խոսակցության նյութ էր ոչ միայն կարմրաքարում, այլև սարերի վրա, ուր վրանների տակ Սալյանից, Մուղանից և Արաքսի տափարակներից հազարավոր մարդիկ էին ապրում: Ոմանք հատկապես, ոմանք էլ ճանապարհով անցնելիս, հետաքրքրությունից դրդված ձիու գլուխը դարձնում էին Քառասնաչուր, տեսնելու Մկրտում քիրվայի հարստության աղբյուրներից մեկը: Եվ նրանց աչքում Մկրտումը դառնում էր խանի չափ զորություն ունեցող մարդ. «Շատ առաջ կգնա էն հայը»,— ասում էին նրա մասին:

Բայց մարդիկ կային, որոնք ոչ միայն ոտ չէին դրել Քառասնաչուր, այլև սղոցարանի մասին խոսք բացվելուց իրենց դժգոհությունն էին հայտնում: Ունանը հավատացնում էր, որ «զավոդի» պատճառով ձորի ջուրը համն ու գույնը փոխել է: Նրա ասելով բոստաններում լոբու գեղնելը ջրի «նագինը լի-

նելուցն» էր, ջուրը «հարաքանթ» շուներ, որովհետև ամբողջ ուժն անիվի վրան էր թափում:

Ավան ամին, երբ լսում էր կտրած ծառերի մասին, չէր կարողանում զայրույթը զսպել: Ավելի հաճախ նա Քառասնաչրի անտառի մասին էր խոսում և կարծիք հայտնում, որ սղոցարանի պատճառով մոտակա անտառը պիտի ոչնչանա, հոգերը պիտի ընկնեն Հիբանի տղաների ձեռքը:

— Է՛հ, Ավան ամի, դու էլ դաղած կաշի ունես նրանց հետ, հա՛րշտում ես,— ասում էր մեկը:

10 — Չես թողալու քյասիբը հաց ուտի... Չավոդը որ չբաներ, Շալուն Սիմոնը Կաղնուտի ձորը կգնա՞ր,— վրա էր բերում մյուսը:

— Թե Քառասնաչուրն իրենցն է, գերանն ինչի՞ են Կաղնուտից բերում:

— Էն եղոտ պատառ է, որ կերան, հետո էլ Քառասնաչրի ջանին են ընկնելու,— պատասխանում էր մեկը, որի սրտում Ավան ամու ասածը կասկած էր հարուցում:

— Չորս օր է բոստանս ջրի համար բառաչում է: Որ մըթնում է, ջուրն էլ ցամաքում է:

20 — Այ քո բոստանը... Կատուն միջին թավալ չի տա:

— Նրանց ինչ կա՞... Օրենքից են վախենո՞ւմ, թե Կարմրաքարի տկուրներին: Միտդ չի՞ Եփրեմը Բեկտաբեզովի հետ, Հիբանի մեծ արտի տակին, ոնց էին խտիտ-խտիտ արջապար տալի՞...

Խոսքը անցյալ տարվա կերուխումի մասին էր, որ սարքել էին Հիբանի որդիները պրիստավ Բեկտաբեզովի Կարմրաքար գալու առթիվ: Արտի ծայրին մնում էր այն կաղնին, որին հարբաց պրիստավը թրով զարկել էր: Հաստ շրթունքի նման հարվածի տեղում կեղևը սպի էր կապել:

30 Տարօրինակ էր շաղացպանի վերաբերմունքը: Ով էլ շաղաց գար, նա հարցնում էր.

— Հիբանի փարբիկը ծուխ շունի, հը՞, այ կարմրաքարցի: Չեր գլուղումն էլ ինչ մասխարություն կա...— հարցնում էր և ծիծաղում՝ սուր, սարկաստիկ ծիծաղով, կարծես ներսում մաղձը կաթ-կաթ թափվում էր, ինչպես դառը դեղ: Նրա վերաբերմունքի մեջ տարօրինակն այն էր, որ նա սղոցարանը

հիմնելուց հետո Կարմրաքարը համարում էր ուրիշ գյուղ, այդ հակադրում էր մի այլ Կարմրաքարի, որի բնակիչներից միայն ինքն էր մնացել:

Տեր Նորընծան խուսափում էր իր կարծիքը հայտնելուց: Սղոցարանը նրա համար ոչ միայն անհասկանալի «երևույթք» էր, ինչպես երկնքից ընկած մետեորը, այլև կապված էր հեղեղի գիշերվա, իր ծանր մտքերի, արքայական խնձորենու կայծակահարման և իր սարսափելի երազի հետ: Երբ խոսք էր բացվում Քառասնաչրի շուրջը, մի ծանր նախապաշարում ծխի նման բարձրանում էր նրա ուղեղում: Եվ նա սպասում էր 10  
փորձանքի, դաժան բոթի, որ կայծակնահար պիտի աներ իրեն՝ ցցաչոր կաղնու նման:

Իսկ սղոցները զրնգում էին, միանգամայն անտարբեր, թե Կարմրաքարում ով ինչ է ասում: Գիշերը շլուզը փակում էին, Քառասնաչուրը մեռնում էր՝ ոչ ձայն, ոչ ծպտուն: Զուրը մըռուալով հավաքվում էր, բարձրանում և ապակյա հալոցքի նման ամբարտակից թափվում: Զորի բարակ քամին թաց տախտակների բույրը տանում էր հեռու, մինչև լեռան լանջը, ուր խուլ խշշում էին ծեր կաղնիները...

...Արևը թեժացրել էր թիթեղյա կտուրը՝ ինչպես թոնրի պատ: Արզումանը շապկանց ու ոտաբոբիկ հրում էր վագոնետուր: Եզորը սեպերը գերանի բացվածքի մեջ էր խրում և մուրճով խփում: Մյուս սղոցի մոտ Պուղին և Վրիկեցի մի երիտասարդ նույն աշխատանքն էին կատարում: Միայն երբ հարկավոր էր գերանը վագոնետի վրա դնելու՝ շորսն էլ միասին էին բարձրացնում: 20

Զրիկեցին առաջին օրվանից զգացել էր այն խուլ հակամարտությունը, որ կար Պուղու և Արզումանի միջև: Նա տեսել էր և այն, որ սղոցարան գալուց Մկրտումը Պուղուց է հարցնում տախտակների հաշիվը, գերանների շորն ու թացը: Իսկ 30  
Արզումանն առիթ չէր փախցնում խոցելու նրան: Նրանց միջև տեղի ունեցած սուր խոսակցությունը երբեմն պատճառ էր դառնում, որ իրարից խոռով մնան: Բայց նույնիսկ այդպիսի օրերին Արզումանը հանաք անելուց չէր դադարում: Լավ տախտակին «մատուշկա» էր ասում, վատին՝ «ղարաչի», ծոված և ճաքճաքած տախտակին՝ «Թելունց պառավ»:

— Եզոր ջան, էս երկու վերշոկանոցն էլ Սայի դայու համար քաշենք: Թող երկար լինի, որ հալիվորը ոտները սլարոնների մեկնի... էնքան քոռ-քոռ քարերին է տվե՛լ...

Հանաք անելուց զրիկեցին շէր կարողանում փոթկոցը պահել: Իսկ Պուլին զայրանում էր, աչքով սաստում: Արզումանը շարունակում էր.

— Ի՛նչ ես ծիծաղում, ա՛յ զրիկա զկեռ... Ձեր գյուղացի էն մի նստելում ութ լավաշ ուտողի համար դարաշուց մին դութի շինեմ, որ կողքաճաղերը կտրտի: Թե չէ Ձրիկը կերել է նա, մարսել...

10

Սղոցարանի մասին նա էլ իր կարծիքն ուներ:

— Պիլինին զբորնի պունկտ է... Գյուղացու տղորց նման գերանները տաշում ենք, կլպում, փեշատը դնում: Դե ջոկի, թե որ ծառիցն էր...

Կացինը գոտու արանքը խրած մի մարդ ներս մտավ:

— Բո՛... Շինական, ա՛յ դու բարով... Մենակ դու չէիր եկել էս թազա ուխտատեղը: Հը՞, ինչ կա...

Շինականը մոտեցավ ստանոկին: Մի պահ զարմացած նայեց ու մոռացավ այն, ինչի մասին մտածելով գալիս էր:

20

— Հերսոտ ես երևում,— հարեց Արզումանը:

— Բա ոնց շհերսոտեմ... Վեց ամիս է ինձ անկրակ խորովում է...

— Ո՞վ:

— Հիբանի տղան, ով: Հերու դուքանից ոչ բարով տասը մանեթի կտոր առա տան տկլորության մասին... Քո ազիզ արևը, մի տարի է, շաբաթն երկու անգամ իմ իշով փետ եմ բերել, դուանը կիտել: Որ տեսնես, կասես քսան արաբա չի կրի: Հիմի ուրանում է, ասում է փետի փողն էն զլխիցն եմ տվել, դու իմ փողը բեր, թե չէ տունդ գրել կտամ: Ոտներն ընկա,

30

աղաչեցի, ասի բանի ժամանակ է, մի քիչ խոտ ունեմ, խանձվում է, վերև Աստված, ներքև դու, ինձ ազատի: Ո՞ւմ ես ասում, լսողն ո՞վ է: Վերջը թե կացինն առ գնա Կաղնուտի ձորը:

— Պամոշնիկին գանգատ ես արե՞լ,— հարցրեց Արզումանը:

— Է՛հ,— և Շինականը հուսահատությամբ ձեռքն օդում ճռճեց:

— Փետն ուրիշին ծախի,— ասաց Եզորը:

— Ա՛յ որդի, որ անփող էլ տաս, ով սիրտ կանի նրա դըռ-  
նից փետ տանի:

— Մարդ քցի մեշտեղ, թող մի բան պակասեցնի,—  
առաջարկեց Պուղին:

— Ինչ ասեմ, է՛... իմ հաշվով հիսուն մանեթի փետ եմ  
բերել, բա զուր կորչի՛...

— Ոչ էն ես անում, ոչ էս: Դե գնա Կաղնուտը,— բար-  
կացած ասաց Պուղին և մոտեցավ վագոնին:

— Լա՛վ ես ասում,— ու մի քիչ մնալուց հետո դանդաղ 10  
քայլերով ճանապարհ ընկավ:

Եզորի մտքերը խռնվել էին: Ե՛վ նեղսրտում էր, որ չօգնեց  
Շինականին, և՛ շարանում ինքն իր վրա, թե ինչու շասեց  
մտքինը: Հիշեց Բագրատին՝ Շինականի որդուն, որ «աղբե-  
րացու էր»: Նրան ճանապարհ գցեց մինչև Լուս Խաչերը... Բա-  
ժանվելուց ասաց. «Հորս վիզը ծուռ շթողաս»... Գուցե հայրը  
հենց իրենից էր եկել օգնություն խնդրելու: Իսկ ինքը չհաս-  
կացավ: Ինչ կասի, երբ Բագրատն իմանա... Ո՞վ գիտե ինչ  
նեղումն է:

Եզորը հետ նայեց. կածանով Շինականը բարձրանում էր: 20  
Եվ հանկարծ կանչեց.

— Ամի, հե՛յ,— կանչեց ու վազեց: Արզումանը ձայն  
տվավ, սակայն նա չլսեց:

— Տես ինչ կատաղած լակոտ է՛...— ասաց Պուղին, երբ  
լուռթյուն տիրեց.— փորը մի քիչ տաքացել է:

— Դու էստեղ ստարշի ե՛ս: Քո փորն ինչո՞ւ է ծակում,—  
գոռաց Արզումանը, մի քայլ անելով նրա կողմը:

— Բա դո՞ւ ինչ ես...

— Ես քեզ նմանի ազրայելն եմ. շպիո՞ն:

— Բերանդ հավաք պահի՛:

— Դե սո՛ւս, թե չէ սեպը բողազդ կկոխեմ:

— Ո՞ւմ:— Եվ երկու ախոյանները մոտեցան իրար: Զրի-  
կեցին գլուխը կորցրել էր:

— Քո,— և ծանր ապտակը լախտի նման տրաքեց Պու-  
ղու երեսին, աչքերի առաջ մթնեց, օրորվելով ընկավ գետնի  
վրա:

30

Արզումանը կանգնել էր հեացող կուրծքը դուրս ցցած: Ջեռքի թաթը տտում էր: Զրիկեցին վազեց Պուղուն բարձրաց-  
նելու, բայց նա ճարպիկ ոստյունով թռավ և ամբողջ թափով  
հրեց Արզումանին: Իրար բռնեցին՝ պինդ, ինչքան ուժ ունեին  
հաղթ բազուկներում: Ու մեկ էլ Պուղու քթից արյունը շատըր-  
վանի պես դուրս պոռթկաց: Նա ձգվեց գեանին ընկած երկաթե  
սեպը վերցնելու, բայց Արզումանը ամբողջ ծանրությամբ ըն-  
կավ նրա վրա, ոտքով մեկնած ձեռքը սեղմելով:

Հանկարծ մեկը ձգեց Արզումանին: Զրիկեցին մոտ վազեց:  
**10** Երկաթե ձողերի նման մատները սեղմեցին Արզումանի կոկոր-  
դը, նա թուլացավ ու հեռ-հեռ քաշվեց: Պուղին տեղը կանգնեց:

— Ի՞նչ եք իրար մսի էլել, — գոռաց Մկրտումը, Արզումա-  
նին բաց թողնելով, — էս ի՞նչ է... Ծս էլ ասեմ դործ են անում:  
էս սհաթին ոհելդ քաշի, — դարձավ նա Արզումանին: — Մշա՞կ  
ես, թե մարդասպան: Քեզ էտապով քշել կտամ...

— Ծս քո իմացած կարմրաքարցին շեմ, — պատասխանեց  
Արզումանը: Նրա աչքերը բոցկլտում էին, ունգները փնչաց-  
նում՝ ասես օդ չկար:

— Բա ո՞վ ես... Գեներալ Կուտուզովի տղան ե՞ս:

**20** — Արինը գլխիս է, հա՛, Մկրտում... Մարդդ ճանաչի:—  
Արզումանի աչքերը այնպիսի կատաղությամբ ոլորվեցին, որ  
Մկրտումն էլ ահ զգաց նրա արնակալած սպիտակուցներից:

— Եզորն ո՞ւր է, — դարձավ նա զրիկեցուն: Պատասխա-  
նի փոխարեն նա կմկմաց:

— էս սաղ նրա գլխին չէ՞ր... Ծինականն էր եկել էստեղ...  
Գնաց նրա հետ: Ծս ասի առանցի հարցմունքի չի կարելի,  
ասում է՝ դու ի՞նչ է, զավոդի ստարշին ե՞ս, — պատասխանեց  
Պուղին, արյունը արխալուղի փեշերից սրբելով:

Հենց այդ րոպեին Եզորն իջավ կածսնով: Նա ժպտում էր:

**30** Ծինականը շատ էր ուրախացել, երբ նա առաջարկել էր իր  
մի ամսվա վաստակը՝ վեց ռուբլին:— Պա՛, պա՛... Ծս հաց  
կհավաքեմ, քո արյուն-քրտինքդ շեմ տա էն արնախումին, —  
պատասխանել էր, — մի քանի օր էլ կբանեմ, հալքաթ Բագրա-  
տիս քյոմակը կհասնի:

Նրա դեմքին ժպիտը սառավ, երբ տեսավ Արզումանի

պատուած շապիկը, Պուշու արնոտ երեսը: Մկրտումն ունքի տակից նայեց նրան:

— Մոտ արի,— ձեռքով նշան արեց: Եզորի ծնկները դողացին, աչքը գցեց Արզումանին:

— Մոտ արի, ասում եմ,— բղավեց Մկրտումը, մի քայլ անելով նրա կողմը:

— Ի՞նչ ես ուզում էն երեխից,— մեջ մտավ Արզումանը,— ես եմ ասել, որ գնա...

Լսվեց ոտնաձայն: Արզումանը հետ նայեց. արագ քայլերով գալիս էր պամոշնիկ Անտոնը: Թփի մոտ կանգնել էր Գողին: 10

— էս ի՞նչ շամաթա է... ի՞նչ բունթ է, — կանչեց նա, մոտենալով Արզումանին: Մկրտումն առաջ ընկավ: Ապտակի ձայն լսվեց, ասես ապակի շարդեցին: Արզումանը փորձեց վրա վազել, բայց Անտոնն առաջը կտրեց:

— էն օրե՞նք է, որ դու երեխուն թակում ե՛ս... Ուժդ նրան պատեց հա՛... — բղավեց Արզումանը, Եզորը կանգնել էր տեղում, ականջը վառվում էր: Այտի վրա մատների կարմիր հետքը պարզ նշմարելի էր: Նա զայրույթից պոռչն էր կրծոտում, հագիվ էր զսպում արցունքը, որ մեկ լցվում էր, մեկ հալվում: 20

— Գնանք,— ասաց Արզումանը Եզորին,— համա էսօրը չմոռանաս հա՛, խազեին ջան...

Մկրտումը շար աչքերով նայում էր հեռացողներին:

\*\*\*

Արևը հասուն մրգի նման թեքվել էր: Ստվերները երկարում էին, ձգվում դեպի արևելք:

Ավան ամուսնու աչքում կանաչի վրա նստոտել էին մի քանի հոգի: Դարբին Վանեսը մեկնվել էր մեջքի վրա, աչքը գցել գառան շափ սպիտակ ամպին, որ ասես արածում էր՝ մեկ հանդարտ, մեկ էլ սուրում ջինջ երկնքի վրա: Դարբինն ականջը կախել էր զրույցին: Եվ միտք էր անում, որ իզուր են խոսում 30  
Ավան ամին էլ, Շուղանց հալւորն էլ... Միայն ինքը գիտե ուղիղ ճանապարհը: Իսկ նրանց ասածը՝ ինչպես անտառի արահետը

Քուխայ օրին: Կգնա՛ս, կգնաս, և մեկ էր տեսար էլի նույն տեղն ես...

Խոսակցությունն սկսվել էր Արզումանի և Եզորի հետ պատահած դեպքից: Արզումանը ինքն էր եկել Ավան ամուսնու մոտ և եղելությունը պատմել:

— Ես իմ հոր տղան շեմ լինի, եթե պիլնումը նրա գլուխը շմաշառեմ,— ասել էր Արզումանը. մի քիչ զայրացել, հետո դառնացած վերջացրել:

— Գուռակը ես եմ... Ասա ինչ ունես Կարմրաքարո՛ւմ: 10 24', ինչ պլան ուզում ես գյուղի համար քաշի, ես մնացողը շեմ: Կալը պրծնի թե չէ, հայդա, պիշի պրապա՛լ,— հայտարարել էր և գնացել Եզնարածի առուի տակ ընկած շիմանները, ուր խոտ էին հարում:

— Քո ասելով ուրեմն անբան կոմի պես սուս անենք էլի,— դարձավ դարբինը Շուղանց ալևորին:

— Ա՛յ որդի, որ սուս շանես, ի՞նչ պիտի շինես: Բզի գըլ-խին յումրուղով կտա՛ս, թե շաքճով: Էսպես եկել է, էսպես էլ գնալու է, մինչև պատանդ էլ մաշի, ոսկորդ էլ... Անբան կո՞վ: Բա ինչ ենք: Կթում էլ են, կուրծդ էլ են կտրում,— թեկուզ խոսելուց խզզացնում էր, շունչը երբեմն կտրվում էր, բայց ուշք չէր դարձնում:— Աստծու ճանապարհից դուրս ես գալի, սատանի ճանապարհը մտնում...

20 Մերունու վերջին խոսքը դարբնի ցույց տված ճանապարհին էր վերաբերում: «Մեկի փորը ծխով լցրու, տես ոնց են խելքի գալիս»,— հայտարարել էր դարբինը:

— Գե մի առակ ասեմ, լսի,— շիբուխի կրակը թեժացնելով ասաց Ավան ամին:— Տես վերջում ինչ եմ ասելու... Հա՛, հորթարածի առաջից հորթն ագին ցցում է, կեստ անում: Էս նաչարը շատ է շարչարվում, վերջը մի կերպ բռնում է: Հիմի բռնել է, էնպես է՛ լաց լինում: Մի դարիք մարդ ճանապարհով անց կենալիս տեսնում է հորթարածին. Ա՛յ տղա, ասում է, ագին ձեռիդ է, էլ ինչու ես լաց լինում... Ասում է սրա համար շեմ լաց լինում, հրեն մնացածների ագին էլ է ցից:

Ունկնդիրներից մի քանիսը ծիծաղեցին, բայց Ավան ամին շարունակեց.

— Հիմա մեր գյուղի բանը: Մի երեխու սիլլա տալով աշխարհը չի քանդվի: Ես էդ օրը չեմ լաց լինում: Հրեն Քառասնաչուրը մեր ձեռքից խլելու է... էն որ մարմնուկներ է բերել, բա ինչի համար է: Վերի լավ հողերն իրանը, առուտունն իրանը, օրենքի մարդն իրանը... Բա մենք էլ ժողովուրդ ենք, չէ՛... Գեղովի խելք-խելքի տանք, մին էլ տեսար ըհը՛, լույսը բացվեց... Թե չէ ես էլ գիտեմ, որ օձի ագին կտրելով, օձն էլի կենդան է մնում:

— Ավան, ասում է, անողը պրծավ, ասողն ընկավ կրակը... էդ խոսքն էլ մի ասի: Գյուղացին երբ է մի բան շինել, որ հիմա շինի... Քանի մարդ թակած կլինեն հեր ու տղա, ի՞նչ արինք: է՛հ, էլի լուծը կմաշի, մեր վիզը չի մաշի: Նրանք էլ Կարմրաքարի ցավն են, էլի՛... Բա առանց ցավի գյուղը կլի-նի՛... — և հազը բռնեց: Խոսակցությունը մի պահ դադարեց: Մերունին հաղում էր, խշշում էր կրծքի վանդակը, կարծես թոքերի փոխարեն սակորներով լի շոր պարկեր էին:

— է՛հ, մեր սիրտը մսից չէ. մենք մղկտալ չգիտենք,— դանդաղ ասաց Ավան ամին, տխուր շեշտով, կարծես ծանր ու դառն խոստովանություն էր ասում:— Զուրն ինչպես որ եփում է, եփում, հովանում, անպետքանում, էնպես էլ մենք: Մեր միսը կերել, ոսկորն են թողել, էլի համբերում ենք... Մեր ապրուստն էլ ապրուստ է՛... Շան թեփով ենք ապրում: Մի քանի տարի էլ ապրենք, մի պարկ թեփ էլ ավելի կուտենք...

— Զուրն արդեն հասել է կամուրջին: էսօր-էգուց կամուրջը տանելու է,— լուռթյան մեջ, իբրև վճիռ, հայտնեց դարբին Վանեսը: Զրույցն աննկատորեն մանր առվակների բաժանվեց, կորավ շատ հասարակ առօրյայի ծանծաղուտում...

...Թավշյա թաթերի վրա՝ անշուկ մոտենում էր ամառվա լուսնյակ գիշերը: Մղրիդները զարթնել էին: Կամուրջի տակ գորտերը մեկ-մեկ կռռում էին, ջրից գլուխները հանում և պլշած սպասում, թե երբ պիտի լուսինն արծաթ շաղ տա ջրի երեսին: Հանդարտ ու խուլ աղմուկը, որ ելնում էր ճահճուտներից, թփերից՝ ուր ծտերն էին ճկում, այգիներից,— մի աղմուկ, որ ով գիտե բյուրավոր ինչպիսի՛ ձայներից էր գոյանում,— նինջի նման իջնում էր գյուղի վրա:

Գաշտում տեղ-տեղ կրակներ էին վառել: Մի քանի գե-

րանդավոր իրիկվա կիսամթնում դեռ հարում էին: Արևից տաքացած գերանդին հովանում էր լուսնի զով շողերի տակ:

— Հրե՛ հա, կասես գյուղը ձիավոր եկավ,— ասաց Արզումանը Սալբուն: Ծների հաշոց լսվեց: Սալբին նայեց ու թիկըն տվավ խոտի դեզին:

— Պամոռչնիկ Անտոնի դռանը վեր եկավ,— ասաց նա: Քիչ հետո շները նորից կլանչեցին: Սև սովեյրի նման ձիավորը սլացավ գետն ի վեր, դեպի վերի գյուղերը: Փոշու ամպը վազում էր ձիավորի հետևից, վազում էր ու շէր հասնում:

10 — է հե՛-հե՛յ... Վա՛սի՛լ... Վա-սի՛լ...— ալիքաձև տառածվեց գզիրի ձայնը: Կանչում էին գրագիր Վասիլին, որ ուզ գիտե որ շիմանում էր քնած:

Կանչում էին, որ կարդար ուրյադնիկ Երթշի բերած շտապ և գաղտնի գրությունը պատերազմի և զորահավաքի մասին:

Գյուղում այդ մասին ոչ ոք չգիտեր: Մրարը դեռ փակ էր:

\*\*\*

Պատերազմի լուրը պայթեց, ինչպես որոտը պարզկա երկընքում: Կարծես հրթիռ էր, որ պայթյունով վեր սլացավ. ճեղքեց խավարը, գյուղի վրա կրակե անձրև մաղեց և հալվեց: Անօրյայի մանր հոգսերը հանկարծ խառնվեցին, ինչպես կրոտնկի երամն ամպ գիշերին:

20 Ծուղանց Իսոն դարպասի քարին նստած տրեխների հողն էր թափ տալիս, երբ տեսավ Չանեն ծուռ Ուհանին՝ մի խուրձ կանաչ խոտ մանգաղին հագցրած:

— Հը՞,— հարցրեց Ուհանը, խուրձն ուսից իջեցնելով:

— Ի՞նչը:

— Բաս լսել չե՞ս...

— Ա՛յ է՛, սուտ կլինի... Տեսես Վասիլն էսօր քանի փարչ է խմել, պրիստավի հրամանին գլխու չի... Մեր Սղոմունն ասում է թուղթը իսկի փեշատած էլ չի... Կարելի է, որ ուրյադնիկը փոխս քցած լինի: Խելքդ ի՞նչ է կտրում,— դարձավ Ուհանին, ասես ուզում էր իր երկամտանքը վերացնել:

30 — Ի՞նչ ասեմ... Բանի էս փիս վախտը կոխվ քցոյի տղան եթիմ՝ մնա: Հունձ ունենք, կալ ունենք: Բա մեր սրտից

չուր խմած մի մարդ չկա՞, որ մեծամեծաց հասկացնի ժողովրդի ավհալաթը...— Ու մի քիչ մտածելուց հետո հարցրեց,— Իսո՞, Ղարսա կռիվը ձմեռնամուտին չէ՞ր...

— Բա ինչ: Էն էր, յապոնացունն էր: Չէ՞, էստեղ մի հնարք կա, ասենք գլխու շենք: Թե բեղարած շես, գեղամեջ գնանք, տեսնենք ինչ են խոսում...

Բոլոր քարի մոտ այդ ժամանակ մարդիկ լսում էին քաղաքից նոր վերադարձած Հասրաթենց Սիմոնին, որին պրիստավը կանչել էր երկու տարի առաջ պատահած սպանության գործով, իբրև առաջնակարգ և շատ «խորհրդավոր» վկայի, որն ըստ նախնական քննության տվյալների, կապ պիտի ունենար դեպքի հետ, այնինչ Սիմոնը կտրականապես հրաժարվում էր ճանաչելու սպանվածին էլ, սպանողին էլ:

— Էստեղ են ասել, անողն պրծավ, ասողն ընկավ,— դառնացած ասաց Սիմոնը, թեկուզ ունկնդիրներից և ոչ մեկն էլ չէր կասկածում նրա անմեղություն: Սպանությունը կատարվել էր գլուղից շատ հեռու, վերի կապում, հենց ճանապարհի վրա: Սիմոնը քաղաքից վերադառնալուց տեսել էր և շտապել տեղեկացնելու պամոշնիկ Անտոնին: Այդ օրից էլ նրա անունը կապվել էր խորհրդավոր սպանության հետ: Սակայն այդ նույն օրից էլ Սիմոնը հանդիպած յուրաքանչյուր մարդու պատմում էր իր գլխով անցածը, մինչև վերջին մանրամասնությունը, և երբ լսողը իր վերաբերմունքն էր արտահայտում, ասելով հին խոսքը, թե «Ցավ չունես, գնա վկա գրվիր»,— Սիմոնը նորից էր կրկնում իր պատմությունը, որպես ապացույց այդ հին ասացվածքի ճշմարտություն:

Բոլոր քարի մոտ հավաքված մարդկանց հետաքրքիր չէր Սիմոնի վերջին հանդիպումը պրիստավի հետ: Բայց Հասրաթենց Սիմոնը երբեք այդքան ունկնդիր չէր ունեցել, և նա պատմում էր ի՞րը,— մինչև մեկն ու մեկը կանչեր:

— Դե՞ սպանեցիր, էլի՞... Բան ասա, բան լսենք,— և Սիմոնը դառնում էր պատերազմի լուրին:

— Մին էլ նաչալնիկը փոշտից դուրս եկավ, թե՛ ժողովուրդ, ուռռա՞...— Հուռռա տվին, պատերից կարմիր, կապույտ թղթեր կպցրին... Պրիստավն ինձ հետ էդ ժամանակ խոսում էր... Նա դեռ գլխու չէր...

— Սիմոն, թղթերը դու տեսա՞ր...

— Բա ո՞նց...

— Ի՞նչ էին խոսում քաղաքի մարդիկ:

— Ի՞նչ պիտի խոսեին, ամեն մարդ իր դուքանում, իր առևտուրի հետևից: Ինձ ճանաչ մի դուքանչի ասում էր՝ շաքարը շատ կթանկի, նմանապես կտորը:

— Ո՞ր թիվն են կանչում,— հարցրեց Շինականը:

— Էդքանը շտեղեկացա... Համա ասում էին, որ մեր մհալի ժողովուրդը հազար մարդ կտա:

10 — Հազա՞ր: Էլ տակին ի՞նչ կմնա:

— Ղալմաղալը որ չլիներ, շատ բան կտեղեկանայի պրիտավից, համա եկան, թե նաշալնիկը վռազ կանչում է:

— Ի՞նչ ղալմաղալ, Սիմոն:

— Ա ես իմ է՛... Մեկ էլ դուքանները կսպեցին, զորքը ժողովուրդը մեյդան թափվեցին... Ուռաա՛... հա ուռաա: Հենց ուզում էի իմանամ, թե իմ գործը ոնց կլինի, ձեռքով արեց, թե գնա... Ես ասեմ մանեֆեստի տակով անեն:

— Սիմոն, տեղեկացա՞ր, լավ գերանդին քանի է,— հարցրեց մեկը:

20 — Անդարդի մինը, գերանդուի վախտ ես գտե՞լ,— վրաբերեց Իսոն: Մերունու հազը նորից բռնեց, ու գլուխը տրամբարմբացնելով ձեռքը կրծքին սեղմեց, որ ներսում մի բան պոկվեր ու հանդստանար:

— Տերտերն էն օրը զուր չէր ասում, թե երկիրս պիտի խառնվի,— ասաց Ավան ամին, որ մինչ այդ լուռ լսում էր խոսակցությունը: Բոլորը լռեցին, ու միայն ձեռունի Իսոյի կուրծքն էր խզզում, ինչպես սղոցը: Ավան ամին շարունակեց:

30 — Էդ մեզ նման խավար ժողովուրդն է, որ բանից խաբարություն չունի... Թե չէ ուսումնագետ մարդիկ կանուխ էին իմանում... Տերտերն ասում է՝ սերքիացին որ թագավորի տղին սպանեց, էն օրը հայտնի էր, որ կռիվ պիտի լինի:

— Բա մեր ցանքը, մեր կալը,— հարցրեց Շուղանց Իսոն:

— Քարը որ գլորվում է, մամուրը չի պահում, ա՛յ Իսո... Տերության ինչ հոգն է, թե ձեռք նեղումն է: Հրաման հանեց՝ տո՛ւր, տուր: Ի՞նչ պիտի անես,— պատասխանեց Ավան ամին:

— Լա՛վ, տանք... Թագավորի հողից ո՞ւր պիտի փախ-  
չենք: Ախր դե տակին մնացածը չի կառավարում: Էն խաշած  
հողին ոչ արժանանամ, թե սուտ ասեմ, հրես հանդից կոտ-  
րատված եկել եմ, տանը մի քցելու շայ չկա: Բա որ մեր երե-  
խուն տանեն, էն է քցեմ ինձ գետը... Սեղավն եկավ, կալատեղո՞  
քանդեց, մինչի հիմա էլ խանգարված է մնացել:

— Ա՛յ Իսո, հազար ասի, ո՞վ է լսողը:

— Բա վերջը, մի լուս չի՞ հասնելու մե՞զ: Էսպես խավար  
պիտի մնա՞նք...

— Զաղացդ էս է, թեփն ալյուրի հետ կես է. կաղաս էլ **10**  
էս է, շաղաս էլ էս է... Բա՛, Իսո:

— Զրին ասին թե ինչի՞ ես խշշում, ասաց՝ տեղս քարոտ  
է... Հիմա մեր օրն է:

— Լա՛վ, դարդ մի անի է՛,— ասաց դարբինը:— Սրան  
ուսի թագավոր կասեն... Երկու ամիս չի քաշի՞ փափախներով  
խոփկ կտա գերմանացուն, տանի ծով կածի: Շա՛տ-շատ երկու  
ամիս դիմանան: Հերու վարժապետն ասում էր, թե նրանց հացն  
առնովի է: Հաց որ շունենա, ինչ պիտի անի: Գու ասա հացի  
բանը լավ գնա:

— Հազարատեղո՞ Աստված, քո խեղճն ենք... Մեծ գե- **20**  
տի ճանապարհը մեծ է լինում... Գու ասա, որ մեր աղբյուրը  
չցամաքի,— ասաց Շուղանց ալեորը:

— Իսո ամի, հարուստի տունը ղոնաղ եկավ, աղքատի ուլը  
մորթեցին: Տրաքոցը որ ընկավ, մենք հո էս գլխից ենք ոտան  
տակի կորչելու,— տխրությամբ հարեց Ունանը:

Նա նստել էր անկյունում ու մտածում էր իր կրտսեր եղ-  
բոր մասին, որ երկու տարի առաջ վերագարձել էր գինվորու-  
թյունից: Ինքը Միրանի տափն էր վարում, երբ տեսավ իր փոքր  
աղջկանը բլուրն ի վեր բարձրանալիս: Մաճը բաց թողեց ձեռ-  
քից. «չիինի՞ մի փորձանք է պատահել տանը»... Եվ մոտեցավ **30**  
աղջկանը. «Խաշանը ե՛կել է՛...» կանչեց աղջիկը: Քիչ հետո  
երևաց և Խաշանը: Ինչ ուրախությո՞ւն էր: Մոտեցավ ու փա-  
թաթվեցին իրար: Այս հիշելուց Ունանը ժպտաց, նրա աչքերում  
արցունք երևաց: Ի՞նչ լավ էր վարում Խաշանը հենց առաջին օրը,  
կարծես չորս տարի գինվորության մեջ չէր եղել: Ունանը միտք  
ունեի մաճկալությունը թողնելու: Ահա քեզ... Խաշանը գնալու

է... կինը, երեխան: Ինչպե՞ս պատահեց: Գուցե սո՞ւտ է. բայց մարդիկ խոսում են: Ու ոչ մի օր չի հիշում իր կյանքում, երբ աշխատանքի ելուն ժամանակ այսքան բազմութիւն հավաքվեր Բոլոր քարի շուրջը: «Տրաքոցը որ ընկա՛վ»... Եվ Ունանը հիշեց իր խոսքը: Էդ ո՞վ գցեց տրաքոցը... Հանդարտ վար էին անում... Երեկոյան դեմ եզներն արձակեցին: Փեշի հողը թափ տալով մոտեցավ առվին, որ ձեռքերը լվանա: Հանկարծ Խաչանը մոտեցավ, թե հրաման է եկել... Եվ ձեռքերը մնացին անլվա. նստեց առվի եզին:

**70** Փողոցում երևաց քահանայի կոացած սիւտետը: Նա դանդաղությամբ էր քայլերը փոխում, կարծես կորցրել էր մի բան, որ ուր որ է, պիտի աչքին ընկնի իրիկվա կիսամթում:

— Հրես տերտերը գալիս է: Նա խարար կունենա,—ասաց Չետանց Ուհանը:

— Ո՞րտեղից պիտի ունենա: Սաղ օրը Նոանձորի բաղից դուրս չի գալիս: Էսօր ասում էր, թե հեղեղի գիշերը փիս երազ եմ տեսել: Քառասունըը թամամելուց վախենում է գլուղի գրելին փորձանք գա,— ասաց Ավան ամին:

— Սրանից էլ պինդ փորձա՞նք,— վրա բերեց ծերունի Իսոն:

**20** — Տերտեր, էսօր շատ ես միտքարար,— ասաց Ավան ամին, երբ քահանան մոտեցավ քարին: Մի քանի հոգի իրար սեղմվեցին, նրան տեղ տալու համար: Տեր Նորընծան, քթի տակ ողջունելուց հետո, կանգնեց մի պահ, ասես միտք էր անում, թե ում մոտ է իրեն վայել նստելու, և ապա ծխատուփը հանելով, նստեց Շուղանց Իսոյի և Ավան ամու մեջտեղը:

— Ա՛յ Իսրայել, մտքիս հետ ներհակ ընկած գալիս էի...

— Տերտեր, էդ գազեթներում ի՞նչ են ասում կռվի մասին...— հարցրեց մեկը: Բոլորը շունչը պահած սպասում էին նրա պատասխանին:

**30** — Օրհնյալ, ճրագդ միշտ վարզար մնա... Մեղքը պտույտքի պես մի փորձանք է, և ոչ եթե մարդ արարածը հոգին ծախի,— ասաց նա: Տերտերը քթումն էր խոսում, ձայնը զրնգում էր, ասես պարապ կարասի մեջ էր հնչում, և որովհետև միալար էր խոսում ու մի քիչ էլ ծոր տալով, դրա համար էլ բառերն իրար էին խառնվում, լսվում էր այնպես, ինչպես գետի խոսք

վշտոցը մութ գիշերին: Քահանան կարծես ինքն իր հետ էր խոսում, և ոչ ոքի չբավարարեց նրա պատասխանը: Ինքն էլ զգաց այդ և ավելացրեց.

— Առաջաքայլ և գիտակից անձնավորութունքը հողագրնդիս երեսին պակասել են, էլ ո՞ւմ մեղապարտես էս խառնակչության համար: Եփեմեղդին ասում է, թե եղիցի արյունահեղ պատերազմ, թագավոր հյուսիսական ընդ արևելս, կոտորած ժողովրդյան, քարեկարկուտ և սև անձրև, և սով մեծ...

— Եվ սով մեծ... — կրկնեց Շուղանց Իսոն: Ամենից շատ Ունանը սարսափեց այդ խոսքից: Ու դարձյալ հիշեց եղբորը, իրենց մեծ տունը, երեխաներին, որոնք ճտերի նման թխսամոր հետևից վազում են, հացն ուտում այնքան ազահ, ինչքան շերամի որդը թթենու տերևները... Շաքաթը մի տաշտ հերիք չի անում: Եվ ի՞նչ ցորեններ կան այս տարի, — մտածեց Ունանը: — Զաղացպանն իզուր շէր ասում, թե տարին գլխակեր է... Իմաստուն մարդ է շաղացպանը... Միայն նա կարող է ասել, թե ինչ պիտի սնել, որ հաշանին զինվոր շտանեն:

— Ցարաբ տեսնես մեր եզինքը ջրե՞լ են, — ասաց նա բարձրաձայն, և փեշերը թափ տալով վեր կացավ տեղից, իջավ ներքև: Նրա կականջին ընկավ Զետանց Ուհանի հարցը...

— Տերտե՛ր, գերմանացին խաշապաշտ չի՞... — Ունանը քայլում էր ու մտածում. գերմանացին խաշապաշտ չի՞... Հա՛, հաշանն էլ է ավազանում մկրտված... Ի՞նչ պարզ միտն է այն օրը: Կնունքին մի ոչխար մորթեցին... Ի՞նչ խաշապաշտ: Ունանն անցավ եկեղեցու մոտով, մի վայրկյան կանգնեց ու գլուխը թեքեց վեր: Արդեն տարիքն առած մարդ էր, բայց շէր հիշում, թե երբևիցե գիշերով նայած լիներ եկեղեցու խաչին: Նրան տարօրինակ թվաց, որ գմբեթի գլխի խաչը փայլում է զոդած խոփի նման: Խաշապաշտ են հաշանը, գերմանացին, ռուսը... Այն մարդը, որ Քառասնաշրում զավոդ սարքեց: Նա շատ հարգանքով բարևում էր տերտերին: Իսկ հիմա... Հը՞, իսկ խաչը... Հենց այնպես է դրված, որ Թելունց պառավն աղոթք անի, երեխաներին բերեն և ավազանում մկրտեն, պսակի ժամանակ Տեր Նորընժան օրհնի: Ու մի բան Ունանի ներսում պոկվեց, սուզվեց ինչպես քարը խոր լճի մեջ: Տեղը մնաց դա-

10

20

30

տարկ, ծառի փշակի պես և թե՛թև, ինչպես քամու բերանն ընկած տերևը...

Իսկ քահանան պատմում էր, որ գերմանացիք ուրիշ տեսակի խաշապաշտ են, «Ֆրանսացոց ազգաբնակությունը» ուրիշ, ասնգլիացու հավատքն այլակերպ է», յապոնացին կրակապաշտ է, ռուսաց ժողովուրդը պրավասլավնի խաշապաշտ է, որովհետև խաշը ծուռ են կնքում: Չետանց Ուհանի գլխում մի հարց պտույտք էր անում, ինչպես կամը կալում: Երբ տերտերը լռեց, նա անհամբեր հարցրեց.

**10** — Տերտեր, բա էդ խաշապաշտ ազգերը ո՞նց են իրար մսի ելել... էնա թող զնան յապոնացու երկիրն առնեն, էլի...

Քահանան հանկարծակրի եկավ: Ու նորից հիշեց այն, ինչ ամենից սոսկալին էր նրա համար: Չետանց Ուհանն էլ...— մտածեց նա: Եկեղեցու աջ կամարի տակ նրա մշտական տեղն է... Չմեռը մի կիրակի չի բաց թողնում, գալիս է, ծունր դնում, փափախը դետնին ու գլուխը կախում: Բեմի վրայից քանի՛ անգամ է խաչակնքել նրա կողմը... Տեր Նորընծան զգաց այն, ինչ ծանոթ է խրոնիկ հիվանդություն ունեցողին. ահա նշանը, առաջին ծանոթ նշանը, որից հետո երկրորդը պիտի երևա, սիրտը բարբախելու է, հետո սրարշավ վրա է տալու ծանոթ և սարսափելի ցավը:

**20**

— Հավատն էս բանի մեջ խառնվում չի,— վճռական հայտարարեց դարբին Վանեսը և օգտվելով այն ազդեցությունից, որ ունեցավ իր ասածը, մի քիչ առաջ եկավ և շարունակեց,— ամեն տերությունն իր հաշիվն ունի... Ռուսը տաճիկի հետ է կռիվ անելու, գերմանացին ֆրանցուսի հետ: Թե չէ ինչ խաշապաշտ, ինչ կրակապաշտ... էս էն Շահ Իսմայիլի վախտերը չեն...

**30** — Հա՛, դե դու Հնդստանու կոնսուլն ես, դու ամեն ինչ գիտես...— հեզնական տոնով ասաց Ամբոլի Քյունին, որի մշտական սովորությունն էր հակառակ խոսելու: Իզուր չէին նրա անունը դրել «Թարսի ձի»:

— Դե Վանեսի ասածն է, էլի՛... ինչ ես հակառակում,— մեջ մտավ Շինականը,— Լեմսը որ եկել էր զավոդ շինելու, քիչ էր մնում բեղդ պոկեր: Բա նա խաշապաշտ չէ՞ր...— Մոռացված այս դեպքը հիշեցնելը շատերին ծիծաղացրեց: Նույ-

նիսկ քահանան ժպտաց և մոռացավ այն, ինչի մասին համառ  
մտածում էր:

— Որտեղ սպաս տեսնես, գղալդ մեջ ես կոխում,— զայ-  
րացած դարձավ Քյունին Շինականին: Բայց նրա խոսքը չլըս-  
վեց ծիծաղի աղմուկում:

— Է՛, մեր օրը լաց եղեք... Խ՛նչ եք մասխարի քցել,—  
ձայնը բարձրացնելով ասաց Ավան ամին: Նրա հանդիմա-  
նական խոսքը ծանր ազդեց լսողների վրա. նույնիսկ քահա-  
նան փշաքաղվեց: Նրան թվաց, թե հանդիմանության մի մասն  
էլ իր ասածի առթիվ է:— Սրան յոթը տերության կոխվ կասեն: 10  
Չորանի կոխվ չի, որ մահակներով իրար շափեն:

— Լավ, է՛, Ավան ամի, էդքանը հասկանում ենք, բա մեզ  
ի՛նչ ճանապարհ ես ցույց տալիս,— հարցրեց Չանեն ծուռ  
Ուհանը,— վեր կենանք ուսի թագավորի դեմ բունթ անե՛նք...

— Չէ՛,— ընդհատեց Ավան ամին,— էզուց էս գնացող-  
ների կալն ո՛վ պիտի կալսի, նրանց կարտուն ո՛վ պիտի հա-  
վաքի... Իսկի մին խորը մտածում ե՞ս: Սաղ գյուղն տակովն է  
լինում, մի քանի մարդկանց սիրտն է դինջանում: Լա՛վ սայրք-  
վեցին Քառասնաչրում... էս շահելներն էլ որ գնան, Սային ու  
ես պիտի նրանց առաջն առնե՛նք:

— Դրա ժամանակը չի, Ավան ամի,— պատասխանեց  
դարբինը: Ավան ամին դարմացած նայեց նրա կողմը: Ու չի-  
բուխը դողաց: Մթնում ոչ ոք չնկատեց այդ և ոչ էլ Չետանց  
Ուհանի դառն ժպիտը:

— Էն ո՞ր օրվանից,— հարցրեց Ավան ամին:

— Էսօրվանից,— կտրուկ պատասխանեց դարբինը: Նրանք  
հասկացան իրար: Խ՛նչ պատահեց դարբնի հետ այդքան կարճ  
ժամանակում... Նա այգում հայտարարեց, որ կարճ ճանա-  
պարհը «մեկի փորը ծխով լցնելն է»:

— Ես ասում եմ, որ բոլորս պետք է սեր միաբան լինենք: 30  
Կովի ժամանակ հայերի մեջ խառնակչություն չպիտի լինի,—  
ասաց դարբինը՝ կոահելով Ավան ամու երկմտանքը:

— Դե փիս չի ասում հո՞,— վրա բերեց Շինականը: Դար-  
բինը նրա ասածից խրախուսված՝ շարունակեց.

— Մենք էլ մին ժողովուրդ ենք, չէ՛... Մեր մեծամեծերը

մեզ համար պլան քաշած կլինեն: էսօր-էգուց Տաճկաստանն էլ է կռվին հասնելու... բա մենք սուս պիտի նստե՞նք:

— Ա՛յ հիմա «շաշ ուստա» ես,— վրա բերեց Ըմբովի Թյունին, նրանից վրեժ առնելու համար: Այս անգամ նրան հաջողվեց, որովհետև ծիծաղեցին այնպես, ինչպես «Քարսի ձի» ասելուց: «Շաշ ուստան» դարբին Վանեսի մականունն էր: Այդպես էին կոչում անկանոն և շփերթ աշխատելու համար: Նա շատ լավ գիտեր իր արհեստը, բայց քմահաճույքով էր աշխատում: Երբեմն մաշված, ճաքճքված խոփն այնպես էր սարքում, որ տերն անգամ չէր ճանաչում. իսկ երբեմն էլ մուրճով այնքան էր ծեծում, որ խոփը կորցնում էր ձևը: Թոնրից նոր հանած լավաշի համար տասը ուտելու աշխատանք կաներ և ընդհակառակը՝ գերանդուին կցան տալու համար հանկարծ ավելի էր պահանջում, քան գերանդուն արժեր: Ինքնուս արհեստավոր էր. նա և՛ հյուսն էր, և՛ ատաղձագործ, և՛ դարբին: Նրա շինած կողպեքները նմանը քաղաքում էլ չէին կարողանում գտնել: Բայց ամենից լավ «ձեռացագործը», ինչպես ասում էր Տեր Նորընծան, հրացանն էր. նա այնպես շնորհքով էր հրացանի փողը փոխում, կտրում մանր, նորոգում, որ տեսնողը չէր հավատա, թե Կարմրաքարի դարբնի գործն է:

Երկու կիրք ուներ դարբինը, մեկը՝ որսորդությունն էր, մյուսը՝ զանազան արկածների պատմություններ լսելը: Նա ոչ միայն լավ նշան էր խփում, այլև գիտեր, թե որ գազանը ինչ տեղով է անցնում ամառը, ձմեռը, գիշեր թե ցերեկ: Ամբողջ ձմեռը որս էր անում, երբեմն ձյուն ձմռանը երկու-երեք օրով տուն չի գալիս: Այդ օրերում գյուղում գիտեին, որ նա մեծ որսի է հանդիպել՝ արջի, քարայծի, կիստարի... Եվ տուն էր դալիս մռայլ, երեսն ու ձեռքերը վառողի ծխից սևացած: Նա հագվել էր ստորագրում իր անունը, բայց երկաթե կտորտանքի, ժանգոտած մեխերի և մանգաղների կողքին, դարբնոցի մուրից առացած դարակի վրա շորս-հինգ գրքեր կային: Նրա սիրած գիրքը «Կայծերն» էր, բայց ամենալավը՝ «Բուլղար ավազակապետի պատմությունը»: Աշխատանքի ընթացքում, փողոցով անցնող աշակերտին կամ հենց նրան, ում երկաթն էր շփացնում, ստիպում էր, որ մի քիչ կարդա: Շատ անգամ էր նա Եգորին կանչում իր արհեստանոցը: Նրա ասելով Կարմրաքարում ոչ

մեկը Շինականի տղայի՝ Բագրատի նման «սրտանց» չէր կարգում: Դարբինը խոփը կրակի մեջ էր դնում և նստում կարգացողի մոտ:— Ուստա սիպտակում է...— ասում էր խոփի տերը: «Հանի թող հովանա... Հրեա էն տեղին ենք հասնում»: «էն տեղը» արկածների հանգույցներն էին, երբ, օրինակ, բուզար ավազակապետը շղթան սղոցում է, ու պիտի իրեն բանտի պատուհանից գցի... Եվ հանկարծ ծառս է լինում, կաս-կարմիր խոփը հանում ու զայրույթից թե հրճվանքից մուրճն այնպես զարկում, որ հնար չէր զարկերը հաշվելու: Իսկ խոփի տերը, սրտի դողով, մեկ խոփին էր նայում, մեկ կայծերին, 10 որ թռնում էին ծանր մուրճի տակից:

Բոլոր քարի մոտ նստածների զրույցին նոր նյութ տվավ Մուքեյի տղայի գալը: Նա քաղաքից էր վերադառնում: Երբ նկատեց հավաքվածներին, նա գլխի ընկավ, որ պատերազմի լուրն արդեն գյուղն է հասել: Եվ քայլերը փոխեց նրանց կողմը: — Ո՞ր թիվն են տանելու, շիմացա՞ր,— հարցրեց Շուղանց Իսոն:

— Ութ տարվա դապասն են հավաքում, Իսո դայի... Խոսք կա, որ աշունքն էլի կանչեն:

— Ուրեմն մինչև աշունքը կոնիվ պիտի տա՞նք,— հուսահատ ասաց ծերունին: Եվ ապա ինքն իր ձեռքն օդում տարուքեր արեց, մրմնջալով՝ «տարա՞ն... գնա՞ց»:

— Էլ ուրիշ ի՞նչ էին ասում... ճոթ ու կտորի կողմանից, թանգից, էժանից,— հարցրեց Ավան ամին:

— Խոսք չկա: Դուքանները տրաքվում են ապրանքից: Հա՛, դադախները գնացին: Մի թամաշա էր, որ...

— Ես էլ տեսա,— վրա բերեց Հասրաթի Սիմոնը:

— Դե սուա, է, թող տեսնենք, ինչ է ասում,— սաստեցին նրան:

— Վարդապետը, քահանեքը, քաղաքի պաշտոնի առուտուրականները խաշով, խաշվառով տարան նրանց ճանապարհ բցեցին... Ղազախների գեներալը կուացավ, վարդապետի աջն առավ:

— Հայր Սիմոնը շատ հարգևոր է մեծամեծաց ասպարեզներումը, ուսլալ մարդ է,— ասաց քահանան: Նրան հաճելի էր այն, որ գեներալը համբուրել է հայր Սիմոնի աջը,

և քահանան պատրաստվեց հիշեցնելու այդ դեպքը, երբ Մուքեյի տղան շարունակեց իր պատմութիւնը:

— Իսկանդարովը, Աբգարովները, Գևորգ բէյի տղերքը, դաստա կապած, ոսկին մեծ պատնոցի վրա դարսած եկան նաշալնիկի դռանը կանգնեցին... Նաշալնիկը դուրս եկավ, ուսերին խոսեց, էնքան շհասկացա: Համա ամեն խոսքին ուռա էին կանչում: Հետո պատնոցը ներս տարան...

10 — Ուրեմն նվիրատվութիւն ենք անում զորքի հարկավորութեան մասին,— մեկնաբանեց Տեր Նորընծան, որը մեծ հիացմունքով էր լսում «Միքայելի որդու» պատմածը քաղաքի ոգևորութեան և եռ ու զեռի մասին:

— Այ հայութիւն,— ոգևորված բացականչեց դարբինը:

— Մի պատնոց կտան, փողրաթից տասը դուրս կբերեն,— կծու շեշտով հարեց Ավան ամին:

— Մինչի դուրս գալուս սհաթն էլ քաղաքն ուրախութիւնից դրնգում էր,— եղբրափակեց Մուքեյի տղան:

— Շաշվել են, ինչ է... Մարդ էլ կովի համար ուրախանա՞... Խելքս բան չի կտրում:

20 Ավան ամին դեռ խոսքը չէր ավարտել, երբ մի ձիավոր ձին թափին քշած, անցավ փողոցն ու ծովեց դեպի «պամոշնիկի օթախը»:

— Զրիկա գզիրն էր,— հայտարարեց Շինականը:

— Վեր եկ գնանք Անտոնի մոտ,— ասաց Շուղանց Իսոն,— բալքի թաղա հրաման կա...— և համարյա բոլորը տեղներից վեր կացան:

— Տեսնես մեր մադչանի առաջը խոտ քցող եղա՞վ, թե չէ,— ասաց Չանեն ծուռ Ուհանը, մթնումը մահակը տափտափելով:

— է, ինչի վրա ես միտք անում,— պատասխանեց Շինականը:

30 — Քուռակամեր է ախր...

...Խարույկի վրա կախած կաթսայի մեջ քլթքլթում էր ջուրը, թշտալով ընկնում կրակի վրա: Ընթրիքի համար վաղահաս կարտոֆիլ էին եփում: Խարույկի մոտ, գետնին խրած փոքրիկ զնդանի վրա ջաղացպանը մուրճով ծեծում էր գերանդու ծուած բերանը: Սիմոնը, որ նոր էր վերադարձել Կաղնուտի ձորից, դանակով քերում էր կացնի կոթին հենած կաշվի ձողը:

Նրա կողքին պառկել էր Արզումանը և ձեռքի ճիպտով մերթ  
թեժացնում էր խարույկը, մերթ հեռու թռչող կրակները հավա-  
քում: Երկու հնձվոր, երեկոյան սառնությունից պաշտպանվելու  
համար շուխաներն ուսերին գցած՝ թիկնել էին խոտի խուրձերին:  
Նրանցից մեկը ծխում էր, մյուսը՝ աչքերը բաց անում, նայում  
քլթացող կաթսային ու նորից փակում: Խարույկից քիչ հեռու  
ջաղացպանի կիներն ու Սալբին ավելուկից շարանուկ էին կապում:  
Սալբին երբեմն մասրենու ձողով խառնում էր կաթսան, մի կար-  
տոֆիլ հանում, մատներով սեղմում ու կիսակփր մեջը գցում:  
Երբ աղջիկը ձեռքը մեկնում էր կաթսային, ննջողը գլուխը  
վեր էր բարձրացնում, իսկ երբ Սալբին նստում էր իր տեղը,  
հնձվորը հոգնած գլուխը թեքում էր խրձանը:

10

Արզումանը Սիմոնին պատմել էր սղոցարանի դեպքը:  
Պատմել էր ներքին հպարտությունը, մի քիչ ավելին, քան իրա-  
կանում էր եղել, պատմել էր այն անխուսափելի ձևով, որ հա-  
տուկ է երիտասարդ մարդկանց, երբ այդ պատմությանն ուն-  
կընդիր է և նրանց սիրելին: Սիմոնն անորոշ պատասխանել  
էր, ինչ շար մարդու վերջը լավ չի լինում: Անհայտ էր, թե ո՞վ  
էր այդ շարը՝ Մկրտո՞ւմը, թե Արզումանը:

Հանդարտ էր խարույկի մոտ... Զուրը թշշում էր, մուր-  
ճի հարվածներից գերանդին այնպես մեղմ էր դրնգում, կար-  
ծես խոր սափորի մեջ ջրի կաթիլներ էին ընկնում... Արզումա-  
նը գլուխը վեր էր բարձրացնում, նայում Սալբուն, որի ստվերն  
ընկել էր խոտերի վրա: Աղջկա երկայն արտևանունքներն ավելի  
էին թանձրացնում աչքի խոռոչի սևությունը: Երեսը վառվում  
էր՝ հոգնածությունից ու կրակին հաճախ մոտենալուց:

20

Շուտով ընթրիքի կնստեն... Ապա գերանդիները, զնդանը,  
մուրճը, ջրի կուլան կպահեն խուրձերի տակ և կցրվեն տները:  
Ջաղացպանն իր կնոջ հետ կգնա ներքին կամրջով, իսկ մայր  
ու աղջիկ կիջնեն գետի վրա և քարերի վրայով կանցնեն գետը,  
կբարձրանան այգիների կողմը, կծովեն փուլ եկած պատի  
կողքով, և տան դռնակը կձռնու: Դաշտում կմնան Արզումանը,  
երկու հնձվորները, որոնք ընթրիքից հետո պիտի թաղվեն շոր  
խոտերի մեջ և քնեն մեռածի քնով: Ու լուսինը մայր պիտի  
մտնի, խավարը պիտի թանձրանա... Արզումանն անցնելու է  
քարերի վրայով, ջրի միջով, նրանց հետքով և փուլ եկած պա-

30

տի մոտ կուշ գալու այնքան, մինչև դոնակը նորից ճոռա, և շալի մեջ փաթաթված մի սուվեր անձայն, անշշուկ մոտենա իրեն... Մոտենա ինչպես երկու օր առաջ, երբ ճյուղքին քնած մի թրուշուն թևին արեց, աղջիկը դուրս պրծավ նրա գրկից և Արզումանին թվաց, թե պատի վրայից մարդ իջավ: Սպասեց, շատ սպասեց, և դուռը չբացվեց:

10 Սղոցաբանից վերադառնալուց Արզումանը կոացավ, որ աղջկա ոտքերի մոտ ընկած կիտուկը կապի,— կամացուկ նրան ասաց. «էսօր կգաս»: «Հերս տանն է»... «Կգաս, բան եմ ասելու»... Եվ Սալբին կարմրեց, եղանով շուռ տվավ արդեն շրջած կիտուկը:

Ներքևում շոր խոտերը խշշացին: Արզումանը տեղից վեր ելավ, Սալբին էլ նայեց... Մի սուվեր վազում էր մութի կողմը:

— Եզորն է,— կամացուկ ասաց Սալբին, սակայն բոլորը լսեցին, բացի հնձվորից: Ու Եզորը հեհեհ պատմեց, թե ինչ հրաման էր բերել ուրյաղնիկ Երոշը:

— Օ՛հ... Զթողին էլ էս խոտը տեղաց անենք... Ասի անձրև չգա, լթոջի,— ասաց Արզումանն այնպիսի հանգստությամբ, կարծես ոչ թե պատերազմի լուրն էր լսել, այլ անախտո՞՞ բեգյառի, ու հարկավոր էր երկու օր գնալ «թագավորական» ճանապարհում խիճ ջարդել: Միմոնը խոսք չգտավ ասելու. ջաղացպանը դադարեց գերանդին ծեծելուց: Նա մեկ Արզումանին էր նայում, մեկ՝ Եզորին:

— Կարմրաքարի գլխին հլա շատ փորձանք է գալու,— ասաց նա: Արզումանը նայեց Սալբուն: Երկուսի հայացքն իրար դիպան: Ասես ծիսածանի պես կամուրջ կապվեց, և շասված խոսքեր կամքի վրայով սրտից սիրտ անցան:

— էսպես թագավորին ես... վախտը գտա՛վ,— ասաց Արզումանը:— Բե՛ր, կարտուր բեր ուտենք:

30 Լուռ ընթրեցին: Մոռացան հնձվորին էլ զարթեցնելու: Նա խոր քնի մեջ մշշացնում էր, ինչպես հոգնած եզր ուռնու սավերում:

Աստղազարդ երկինքը շինջ էր, ինչպես լեռնային լճակը: Հնձած խոտերի մեջ ծղրիղները կանչում էին: Շատ մոտիկ մի լոր բռռալով թռավ խոտի միջից: Սալբին կլպում էր կարտոֆիլը, հոր առաջ դնում: Բւ մի սպիտակն էլ զգուշությամբ գլորեց

Արզումանի կողմը: Արզումանը նայեց նրան. աղջկա արցունքոտ աչքերում խարույկի կրակն արտացոլում էր:

— Եզո՛ր, վեր կաց... Տեսնենք ինչ թուղթ է ստացել պարոն Վասիլը:— Ու երկուսով իշան գյուղի վրա:

Պամոշնիկ Անտոնի «կանցելարը», որ Կարմրաքարում աճելի շատ հայտնի էր որպես «պամոշնիկի օթախ», որովհետև այն միաժամանակ և բնակարան էր, — գյուղական մնացած սենյակներից տարբերվում էր միայն ոտքը կոտրած սեղանով, որի վրա, ինչպես և պատուհանին, դարսված էին մի քանի մատյաններ, որոնց մոտ, պատուհանի հովին, — ուր կոտրած ապակու անցքը տրեխի քողով կապկպած էր, որ կատուն ու հավերը ներս շմտնեն, երբ տանը մարդ չէր լինում, — պատուհանին դրված էր մածնի մերուցքը:

10

«Օթախ»-ում կանգնելու էլ տեղ չկա: Անտոնը, որ նոր էր վերադարձել Հիբանի ամարաթից, գրագրին թելադրում էր տանտերի ուղարկած գրության պատասխանը, որ պիտի ուղարկեր Զրիկից եկած գզիրի ձեռքով: Տանտերը գրել էր այն, ինչ հայտնի էր ուրյադնիկի հանձնած ծրարից: Բացի այդ, նա կարգադրել էր լուսաբացին կազմ ու պատրաստ ունենալ զորակոշի ենթարկվածներին:

20

Վասիլը դառնացած գրում էր պատասխանը, և թեկուզ զլխավերևը կանգնած Անտոնը թելադրում էր նրան, բայց նա գրում էր այնպես, ինչպես ինքը գիտեր: Նա դառնացած էր և նրա համար, որ «օթախ»-ում եղած մարդկանց մոտ թելադրում է Անտոնը, բայց աճելի շատ՝ իր հանգիստն այդպես անակնկալ կերպով վրդովելու համար: Պամոշնիկը նկատում էր այդ, սակայն շարունակում էր թելադրելը:

Այդ երեկոյան Վասիլը, որ գյուղում թունդ հարբեցողի հրուշակ ուներ և, ինչպես քահանան էր ասում, «այդ տկարության կողմանից իրյան պապին էր քաշել», — Վասիլը հարբած քնել էր գետափի ուռիների տակ, երբ թափահարելով նրան զարթեցրեց գզիրը: Գաղտնի գրության անունը նրան սթափեցրեց: Ու թոնթորալով վեր կացավ, բարձրացավ «օթախ»-ի կողմը: Գրության բովանդակությանը տեղեկանալուց հետո, խորիմաստ «հը՛մմ» արեց: Անտոնը դուռը փակել էր: — Հը՞, — անհամբեր հարցրեց նա: — Հե՛շ, պրիստապն է գրել... — Ժույլ-ծույլ

30

207

ասաց Վասիլը, հաստատ իմանալով, որ իր պատասխանը չարացնելու է պամոռնիկին, նա սպառնալու է տանուտերին ուսպորտ գրելով և վերջում՝ աղաչանքով խոստանալու է «էն զահ-րումարից» մի շիշ: Երբ Վասիլը գրութիւնը կարդաց ու թարգմանեց, պամոռնիկ Անտոնի գլխին ասես տունը փուլ եկավ...— Ոնց թե կոխի,— ասաց ու նստեց սկամուն: Ապա մեկից ծլնեց եղավ, դուրս եկավ ու դուռը փակելուց գրագրին պատվիրեց, որ ոչ ոքի չհայտնի գրութեան մասին՝ մինչև իր վերադարձը:

10 Իսկ լուրը տարածվեց կայծակի արագութեամբ: Վասիլն ինքն էր հայտնում ներս եկողին՝ կարծես նրան ուրախութիւն էր պատճառում այն արտահայտութիւնը, որ ունենում էր յուրաքանչյուր լսող: Վերադարձին Անտոնը զայրացավ, երբ տեսավ օթախում հավաքված մարդկանց:

— Այ խալիսը, շամիչ շեն բաժանո՞ւմ... Թողեք մի տեսնենք ինչ պատասխան ենք տալիս... Մի աշիրկա լինի, նոմերը սխալմունք պատահի, դե եկ էդ դարագումեննու պատասխանք տուր... Սա թագավորական գործ է, հանաք մասխարա չի՞...

20 Վասիլը շտամպը մոտեցնում էր բերանին, փշում, ունգերը լայն բաց արած ներս ծծում օդու հոտը, որ ելնում էր իր շնչի հետ: Փշում էր, ծուլլ-ծուլլ շարադրում և քմծիծաղ տալիս պամոռնիկի խոսքերի վրա:

Արզումանը դռան մոտ կանգնածներին հրելով ներս մտավ:

— Զեստ իմելու յավիցա, վաշ բլաղարողի,— բղավեց նա, գինավորական պատիվ տալով Անտոնին:

— Կանցիլարը շուտկի տեղը չի՞,— զայրացած պատասխանեց Անտոնը և դարձյալ կոացավ սեղանին:

— Հա՛, լավ... Ռապորտը գրի, թե չէ գիտե՛ս՝ պալեսոյ սուղ, կաշիդ մեջքիցդ կհանեն... վա՛յ, Վասիլ Պետրովիչ, դու էլ էստե՞ղ... Ուրեմն հանաք չի էլի՞, կանտորա պիշետ: Հե՛յ,

30 մերը շմեռնի թագավորի: Զեռաց գլխի ընկավ, որ Կարմրաքարում գուր հաց ուտող շատ կա: Միմոն ապեր,— դարձավ նա մի կարճահասակ ալեորի, որին սեղմել էին անկյունը,— դու էստեղ ի՞նչ գործ ունես: Քո թայերը թանուլը կերել են, երազ են տեսնում:

— Երախեն էլ է,— լացակումած ասաց ծերունին:

— Ստեփա՛նը: Նա ո՞ր թվի սալգաթն է որ...

— Ես ի՞մ... Վասիլի մոտ է թղթերը:

— Վասիլ Պետրովիչ, բա քեզ հետ ե՞րբ ենք մի կատիլուկից բորշ ուտելու: Թե մնում ես, վիզդ հաստանա, կուղի նման ընկնես խալխի կնանոց ջանին:

— Ասում եմ բերանդ շատ ցրիվ մի տա,— կանչեց պամոշնիկը: Իսկ Վասիլը գլուխը կախել էր թղթի վրա, իբր թե չի լսում:

— Դե լավ հա՛... Խանչալիդ քարը վեր շքնկավ: Էնպես չի՞, Վասիլ Պետրովիչ... Դավթարում աղբեսս գրի. 117 պենզենսկի պողկ, տրետի բատալիոն, ավտարո ռոտա պալուչիտ Արզումանու Եղիզարովու... Աղբես գրելիս հավից, ճուտից շատ շհավաքես, թե չէ մին էլ տեսար եկա դիվանիդ:

Մի քանի հոգի ծիծաղեցին, մեկը կամացուկ ասաց.

— Երանի Արզումանին: Գայլի սիրտ կերած է,— Արզումանը լսեց:

— Բա սուգ անե՞մ: Ինչ եք կարասն ընկած մկան նման թոսխել... Մին էլ տեսաք ցեպ կապած ետ եկանք, դավայ դավայը քցեցինք...

— Ուր է, լեզվիդ մատաղ, քո ասածը լինի,— մրմնջաց Սիմոն ապերը,— սաղ սալամաթ ետ գաք... Մենք էլ նաչար ենք:

— Դե, ժողովուրդ, լսեցի՞ք,— դարձավ պամոշնիկը ներկա եղողներին: Դրսում հավաքվածները մոտեցան դռանը:— Սպիտակը սա է...— ու նորից կարդաց անունները:— Լուսը շքրացված գյուղամեջին հավաքված լինեն, երեք օրվա պաշարով... Դե հիմա շաղ եկեք, տեսնենք ինչ ենք անում...

— Հա՛, արևիդ մեռնեմ,— աղաչանքով ասաց Սիմոն ապերը, որի որդու անունը ցուցակում չկարդաց, բայց մի մատյան էս պիտի քրքրեին,— մեր հոգատար իշխանը դու ես... Բոլորը քո ձեռքիդ են նայում...

Բազմությունն սկսեց ցրվել:

— Եզո՛ր, գնա տուն, ես մեր բաղովն անցնեմ,— ասաց Արզումանը և կորավ մթության մեջ:

10

20

30

Գյուղի վրա բացվեց մի պղտոր առավոտ: Մոխրագույն ամպերը ծխի նման բարդ-բարդ վեր էին ելնում, կարծես վիթխարի կրահորի բերան էին բացել:

Առավոտյան մուժի մեջ ժնգացին եկեղեցու զանգերը: Ժամհար Բարսեղը սովորականից կանուխ էր զարթնել և կաղ ոտը քարշ տալով բարձրացել զանգակատունը: Հեռվից նայողին այնպես էր թվում, որ ոչ թե ժամհարն է քաշում զանգի պարանները, այլ զանգերն են ձգում նրա թևերը, նախ՝ աջը, ապա՝ ձախը: Կաղ ոտը ձգած, գլուխը գետնին խոնարհած, Բարսեղը կարծես արձանացել էր, մոռացության տվել ծանոթ գավիթը, պարանների կշկուռը, որ սեղմում էր բուն մեջ, զանգակատանը բուն դրած աղավնիներին, որոնք ամենօրյա ձևով թռան, երբ ինքը սանդուղքով վեր բարձրացավ, և շար ընկան գմբեթի ծայրին:

10

Ժամհարը կանուխ էր զարթնել: Գիշերն էլ անկողնում կողքից կողք էր շրջվել, կարծես ներքնակի մեջ փշեր էին լցված: Նա երբեմն գլուխը վեր էր հանում, նայում պատուհանին: Ինչ երկար էր ամառվա այս գիշերը...

30

— Սամսո՞ն, քնել չե՞ս... — ձայն էր տալիս որդուն:  
— Չէ՛... —

— Քնի, բալաս: Երկար ճանապարհ ես կտրելու: — Իսկ ժամհարի կինը մթնում ման էր գալիս, պղինձները զրնգացնում, սանդուղը բաց անում, ինչ-որ բան հանում, կապում: Լսելի էր զսպված հեկեկոցի ձայն, որ դադարում էր, երբ Սամսոնն ու հայրը լուռ էին: Մայրը հեկեկաց բարձրաձայն, երբ խոսքի միջին ժամհարն ասաց.

— Հրես մեր տանն եմ ասում... նամակդ մշտական թող անպակաս լինի: Դու էլ քեզ մղալիթ կաց... Հազար շառ, հազար փորձանք:

30

Մոր հեծկտոցի ձայնից երեխաներն էլ զարթնեցին: Ամենափոքրը տեղերում նստեց ու կանչեց մեծ եղբորը: Երեխան կարծում էր, թե նա զնացել է, ու իրան քնած են թողել:

— Բարսե՛ղ, օրհնյալ... բավական է,— ասաց Տեր Նոր-ընժան՝ եկեղեցու բանալին գրպանից հանելով:

210

— Էսօր շատ դարդոտ է զանգերը քաշում,— ասաց մի պառավ:

— Նաշարն ինչ ունի: Մի տուն քուլփաթի պահողը Սամսոնն է,— ու ներս մտան կիսամութ, խոնավ ու քարակոփ եկեղեցին:

Շատ երգիկներից էր ծուխ բարձրանում: Կապույտ ծուխը վախժխելով ձգվում էր վեր, ու սառը քամին նրա բաշից բռնած, թոցնում էր, կտուրներից պոկում: Եփում էին, թխում: Կանուխ էին վեր կացել և նրանք, որոնք զինվորացու շունհին, զնացողը մեկի փեսան էր, մյուսի հորաքրոջ տղան... Պառավ կանայք, շալերի Գեջ փաթաթված, դողացող ստվերների նման մեկ-մեկ անցնում էին գյուղի դատարկ փողոցներով ու կորչում եկեղեցու ներսի մթության մեջ: Բոլորն էլ համարյա նույն ձևով էին ծնկադրում, փղձկում, ճակատը կռացնում եկեղեցու սառը հատակին: Ոչ ոք չէր լսում Տեր Նորրնժաշի ձայնը, որ արձագանք էր տալիս ծանր կամարների տակ, ինչպես հարվածը դատարկ կարասում: Կանայք ու ծերերը երկար շէին մնում: Հենց արջուեքը ցամաքեր թե չէ, դուրս էին գալիս և շտապում տուն՝ մի քան էլ պատվիրելու զնացողին, մի քիչ էլ նայելու նրանց:

— Հիրանի տղերքք ինչ են լսել, որ առավոտ կանուխ դուքանք բաց են արել,— հարցրեց Թելունց պառավը ժամհարի կնոջը:

— Է՛հ, նրանց սրտի խորհուրդն ով կիմանա,— պատասխանեց կինը:

Այդ առավոտ Կարմրաքարում ամենից վաղ զարթնողը Մկրտումն էր: Լույսը չբացված Եփրեմը քաղաք էր գնացել տեղեկանալու ապրանքի գներից ու կատարվող իրադարձություններից: Մկրտումը նրան շատ հանձնարարություններ էր տվել, մի քանի անգամ էր կրկնել իր ասածը, կրկնել էր տվել եղբորը, ինչպես ուսուցիչն՝ աշակերտին: Գիշերով Մկրտումն ինքն էր վեր կացել, իջել ներքև, Եփրեմին զարթնացրել, Գոդուն պատվիրել ձին թամբելու և եղբորը ճանապարհ գցելուց մի անգամ էլ ապսպրել քաղաքում անելիքը և գնացել խանութ:

Մկրտումը խանութի հատակին փռել էր գուլնզգուլն և էժանանոց թաշկինակներ, որոնց մեջ բուռ-բուռ լցնում էր շամիչ, պնպուկ, նոխուղ, ապա թուղկինեղենքը կտալոց էր տեսում, գար-

սում: Խանութում ոչ որ չկար: Ամեն մի թաշկինակ կապելուց նա հրճվում էր, ինչպես մայրը, որ քնած երեխայի գլխավերևն ընծա է դնում: Մկրտումը մի վայրկյան մտածեց, ապա ետ դրեց կապած թաշկինակները, սկսեց բաց անել: Մրգեղենն իրար էր խառնվել: Ու նա ձեռքը մեկնեց, դարակից վերցրեց մի կապ ծխախոտ, սկսեց մեկ-մեկ դարսել կտպոցների մեջ: Մեկ էլ հավաքեց ծխախոտը, բարձրացավ վերևից ավելի աժանը և հասարակը վերցնելու:

10 Պատերազմի լուրը նրա վրա ևս շշմեցուցիչ տպավորություն էր արել: Բայց այդ տևել էր միայն մի վայրկյան, ինչպես թեթև գլխապտույտ: Ու շատ հասարակ դասավորել էր այն բոլորը, որ բերելու էր պատերազմը գյուղի և իրենց տան համար: Պամոշնիկ Անտոնին նա սառնասրտությամբ պատասխանել էր.

— Սա պետք է լիներ... Անկարելի էր... էս տրաքոցին վաղուց էին սպասում... — Զորակոչի ենթարկվածների ցուցակում միայն Գրգըր Պուղու անունն էր, որ դժգոհությամբ ատաղացրեց նրա դեմքի վրա:

20 — Բա պիչնի՞ն, — մտածեց նա: — Ու մինչև Անտոնը մյուսների անունները կթվարկեր, Մկրտումն իր անելիքը որոշեց:

Փողոցներում անցուդարձն սկսվեց: Գրաստներին ուտելիք ու գործիքներ բարձած մի քանի հոգի գնացին աշխատանքի: Ինչքան էլ դաժան ու հանկարծակի էր պատերազմը, բայց և այնպես հարկավոր էր խոտը հարել, հարածը կիտուկներ անել, այգին ջրել, դեղնած գարիններին նայել, որ հունձը շուշանա: Երբեմն տներից երեխաները վազում էին Բոլոր քարի մոտ՝ նայելու հո շեն հավաքվել. կամ թե բարձրանում են կտուրը և նայում պամոշնիկի «օթախի» կողմը, որի առաջ տկլոր ձին դեռ կանաչ էր ուտում:

30 Իրենց դարպասի անկյունում Ունանը եղբորը համոզում էր այն, ինչի մասին երեկոյան խոսել էր, ու Խաչանը գլուխն օրորելով ասել էր. «վախենե՞մ եմ...»: Ունանը եղել էր ջաղացպանի մոտ. ճիշտ է, նա հայտնել էր միջոցը, սակայն ավելացրել էր. «համա անտերն իսկական զահրումար է... Զանով տղամարդ պիտի լինի, որ դիմանա... էն առաջ էր. հիմա կարմրաքարում ո՞ւր է էդպես սակոր...»: Խաչանից Ունանը պահել

էր շաղացականի խոսքը, թե տղամարդը միայն կարող է դիմանալ այդ «զահրումարին...»:

Մի ներքին ձայն հաշանին ասում էր, որ միջոցը վտանգավոր է: Բայց սիրտը մղկտում էր... Ինչպես պիտի ապրեն տունը, կինը, երեխան: Ամբողջ գիշերը կինը արցունք էր թափել բարձին, օրորոցի վրա, երբ կուացել էր երեխային ծիծ տալու: Ու հենց ուզում էր բերանը բանա, բարակ աղբյուրի նման արցունքը ծլում էր: Այդ երկընտրանքը հաշանին ծանր մտատանջության մեջ էր գցել: Իսկ եթե խմի մի գավաթ ծխախոտի ջուր, ինչպես Ունանն էր ասում, կազատվի՞ ու տանը կմնա՞... 10  
հաշանը կրկնում էլ մոլորվածի նման. «տեսնենք, կամիսիա ընկնենք... Բալքի բրակ են դուրս բերում»:

Հանդում մենակ մնացած եզան բառաշի նման հանկարծ լսվեց գոլիրի հուժկու ձայնը.

— Հե՛յ, հե՛... գնացողը գա մեյդանը, հե՛յ...

— Բայդո՛ւշ,— ասաց Թելունց պառավն ու ձեռը շանչարեց ձայնի ուղղությամբ:

հաշանը տեղում ձգվեց: Այդ կանչը նրան ազատեց երկընտրանքից, պիտի գնալ: Ու շրջվեց դարպասով ներս:

— Կա՛ց,— ասաց Ունանը, ձեռքը գրպանը տանելով:— 20  
Ձեռքի խաշուղ կանես, մինչև տեսնենք: Երեկ ելկու բեռ խոտ եմ ծախել զրիկեցի Բախշուն...— Ու նրա ձեռքին դրեց խոտի վարձը:

— Գալիս ե՞ն,— ասաց մեկն ու վազելով իջավ ներքին թաղը: Մի երեխա կտուրից կանչեց.

— Անտոնը ձին թամբում է...

Եվ իրարանցումն ընկավ: Սկսեցին կապել, կապկպել, տնետուն վազել՝ թելի, պարանի, հաց փոխ առնելու, գրաստներ սարքելու: Մի մայր ծնկներին խփեց, նա մոռացել էր պաշարի մեջ աղ դնելու ու ձիգ էր անում հիշելու, թե ո՞րտեղ է աղի 30  
պարկը:

Կարմրաքարից գնում էին Շուղանց Իսոյի տղան, հաշանը, Սիմոն ամու որդին, որի անունը գտնվել էր վերջին ցուցակում, և հայրը լացակամաժ վերադարձել էր տուն, մարդ ուղարկել, որ ոչխարատեղից նրան կանչեն: Գնում էր և Գիլբարի Թևանը, որ Արզումանի հետ էր գինվորությունից վե-

րադարձել, իրեն հետ բերել նախշուն մի ցուցանակ, վրան գրած՝ «Ռաստովակի պարիկմախեր»։ Քեանի միտքը, որպես կետ նպատակ, Կարմրաքարում վարսավիրանոց բաց անելն էր։ Պատերազմի լուրը լսելուց, նա անմիջապես կապուտել էր ցուցանակը, գործիքների մի մասը, պինդ մեխել և տնեցոց պատվիրել մինչև իր վերադարձը չբացել։ Իսկ մնացածը՝ ածելիները, մկրատը, գլուխ խուզելու մեքենան հետը տանում էր։ Կանչում էին Գրգըլ Պուղուն, ներքի թաղից երեք հոգու, ժամհար Բարսեղի որդուն։

10 Գյուղի ծայրին, Զրիկից եկող ճանապարհի վրա, երևացին մի քանի ձիավորներ, որոնք ջշելով եկան հրապարակը։

— Գալիս ե՛ն,— ձայն տվին հավաքվածները։ Լսվեց դժբոլորոց, ապա զուռնի բարակ ձայնը։ Երևաց տանուտերի սպիտակ ձին, ապա ուրյադնիկ Նրոշը, որից հետո ձիավորների ու հետիոտն մարդկանց խուռն բազմութունը։

— Սարի արչերն եկա՛ն,— ձայն տվեց մի երիտասարդ ու վազեց դեպի փողոց։ Կարմրաքարեցիք վերի գյուղացիներին այդ անունով էին կոչում անտատապատ լեռան տակ բնակվելու համար։

20 — Խալխի սրտին դանակ տաս, արյուն չի կաթի, սրանք էլ հարսանիք են գնում,— ասաց Ունանը։

Վերի գյուղից եկողները հասան Բուլու քարի հրապարակին ու կանգ առան։ Այնտեղ արդեն հավաքվել էր մի ուրիշ խումբ, որ ստվարացել էր զուռնա-դհուլի աղմուկից։ Մի քանի հոգի մոտեցան տանուտերի ձիու սանձը բռնելու։ Խոնաված բազմութունը ճեղքելով, նրան մոտեցավ պամոշնիկը։ Նրանց մոտ կանգնած մարդիկ լսեցին տանուտերի հարցը և Անտոնի պատասխանը՝ «Սավսեմ հազիր ենք»։

Ինչպես երկու հոտ խառնվում են իրար, երբ մակաղելու են ջրում, այնպես էլ վերի գյուղից եկած բազմութունն ու Կարմրաքարի փողոցներում սպասողները իրար անցան։ Մեկը փնտրում էր իր բարեկամի որդուն, մյուսը Կարմրաքար գալու առիթից օգտվելով խոստում էր խոտի գնի մասին, պատվեր տալիս Կարմրաքարի բարեկամին, երրորդն իր հեռավոր ազգականի տեսությանն էր վազել և շտապ պատմում էր, թե ովքեր են գնում իրենց գյուղից, ինչ են խոսում Զրիկում։ Անսո-

վոր եռուզեռ էր, և հրապարակն ու նրան միացած փողոցները սևացել էին ձիավորից ու հետիոտն մարդկանցից, որոնց մի մասը ուղեկցելու էր մինչև քաղաք, մյուս մասը վերադառնալու էր Կարմրաքարից:

Պամոշնիկը մեկ տանուտերի հարցին էր պատասխանում, մեկ՝ գզիրին կամ առաջին հանդիպած կարմրաքարցուն ուղարկում ուշացողներին շտապեցնելու: Տանուտերը, որի տեսքին առանձին փառահեղութուն էր տալիս երիտասարդ ու կայտառ ձին, մանավանդ երբ անհամբերութունից փոնչացնում, ոտով գետնին դոփում և կարմրած ունգերով օդը ծրծում, սանձը կրծոտում,— տանուտերը դիտում էր հավաքված բազմությանը, և ավելի հեռուն՝ կտուրների վրա խումբ-խումբ կանգնած հարս ու աղջիկներին: Նրա վզից կախած պղնձե երկար շղթան ու կլոր նշանը լրացնում էին տեսքի հանդիսավորութունը: Գլխի թեթև շարժումով նա ընդունեց իր գլուղացիների բարևը, որոնցից մի մասը իրենց պարտքն էին համարում մոտենալ և լուռ սեղմել նրա ձեռքը:

— Բա ինչո՞ւ չես իջնում,— հարցրեց Մկրտումը,— զակուակի կանեիր, մինչի հավաքվեին...

— Ծնորհակալ եմ, Մկրտում... Տեսնում ես էլի՞, գլուխս ինչքան է խառնված: Ետ դառնալիս զոնադդ եմ:

Տեր Նորընծան հենվել էր եկեղեցու պատին: Նա առավոտյան արարողությունը նոր էր ավարտել, ավելի ճիշտ համառոտել, որովհետև զուռնա-դհոլի ձայնին եկեղեցում եղած ծերերն ու պառավները դուրս էին եկել, շտապել տները: Քահանան նայում էր ապակյա աչքերով, նայում էր խոնված բազմությանը, ձիավորներին,— ինչպես գետափի չոր կոճղը գետի սրընթաց հոսանքին: Նրա կողքով շտապ անցնում էին մարդիկ, որոնցից ոմանք չէին նկատում նրան, ոմանք գլխով բարև էին տալիս: Նա գիտեր, որ սպիտակ ձիուն նստածը տանուտերն է... Ահա նրա հետ խոսում է Մկրտումը. նրա կողքին «Գեղեթուն» է՝ Գողին, մի պարկ շալակած:

— Տերտեր, ճանապարհից հեռու կաց... Մարդը շատ է, կվնասեն,— քահանան շիմացավ, թե ով ասաց: Եվ մեքենայաբար քայլերը փոխեց դեպի դիմացի կտուրը: Ամբողջ գլուղն էր հավաքվել: Եկել էր նույնիսկ կույր Սային, որ մեջքը

Քոլոր քարին հենած լսում էր խոսակցությունները, կանչը, ձիերի վրնչոցը, մանուկների լացի ձայները, մեկի զիլ ծիծաղը... Ավան ամու կողքին կանգնել էր ուստա Նազարը և փափախով սրբում էր ճակատի քրտինքը: Ավան ամու այգուց նա երկու կողով խնձոր էր բերել և սպասում էր, որ բաժանի: Ուստան երեխայի նման ուրախացել էր և՛ նրա համար, որ գնացողներին Ավան ամին խնձոր է բաժանելու, և՛ նրա, որ ինքն է բերել կողովները:

10 — Ավան ամի, հենց հաղրվել ես, ասես դու էլ ես գնալու,— ասաց Արզումանը, աչքը գցելով նրա կոկիկ ու պինդ կապած տրեխներին:

— Կոտորվելուն մենք ենք, որ շեն տանում,— ասաց ու բաց արեց կողովը:— Առաջինը քեզ,— ու բռով լիքը լցրեց նրա գլխարկի մեջ: Խնձորների բաժանելն իրարանցում առաջացրեց: Շատերը մոտեցան: Գզիրն էլ մեկնեց իր գլխարկը, իսկ Քելունց պառավը կտուրից կանչեց.

— Հրեն ծառերը կոտրատվում են էլի՛... Հասնելուց կուտես, երեխոց փայր մի կտրի:— Գզիրը փոշմանած ձեռքը ետ քաշեց, կորավ բազմության մեջ:

20 — Պա՛ւպա՛... Կարմրաքարը զարգացել է՛... էս վախճ կարմիր խնձո՛ր,— ասաց Արզումանը և խնձորները ձեռքին մոտեցավ կտրանը, որի վրա կանգնած էին ջաղացպանի կինը, Բարիկոն, Սալբին, իր խորթ մայրը, ու թվաց, թե պարտեզից խնձոր է քաղել, ինչպես մանկության օրերին և ծոցերը լցրած շտապում էր յուրայինների մոտ: Քեկուզ Սալբին գլխաշորը երեսի վրա էր քաշել, բայց և այնպես նրա կարմրելն Արզումանը նկատեց:

— Տեսեք, է՛... Ավան ամին ինչ հոգեպահուստ է ունեցել,— ասաց և խնձորով լի գլխարկը մեկնեց:

30 — Պահի՛, ճանապարհին կծարավես,— ասաց խորթ մայրը:  
— Չէ՛, վեր կալեք,— և դարձավ Բարիկոյին,— ախշի, Եզորին շես տեսե՞լ...

— Հրեն է՛, Խաչանի կողքին...— ջաղացպանի կինը խնձորներից մեկը վերցրեց և մեկնեց Սալբուն: Աղջիկը աժաշելով խնձորը պահեց գոգնոցի տակը:

Գզիրը տեղեկացրեց, որ բոլորը ներկա են: Վասիլը պատ-  
բաստ ծրարը հանձնեց: Մկրտումը Գողուն նշան արեց պարկը  
մոտեցնելու:

— Էդ ի՞նչ է, Մկրտում,— ժպտալով հարցրեց գզիրը:

— Հե՛շ, ասում եմ տղերքը ուրախ գնան,— ասաց և մի  
կապոց, որ վերև էր դրված, մեկնեց տանուտերին, երկրորդը՝  
ուրյադնիկ Երոշին, որ ձիու վրայից կուսցել էր պարկի վրա,  
վիզը ձգել, ասես ուզում էր մինչև տակը տեսնել:

— Իմ հոգուս պարտքը՝ տեղ հասնելուց նաշալնիկին էս  
մասին ռապորտով հայտնեմ,— ասաց տանուտերը, մատնե- 10  
րով կապոցը տնտղելով:

— Էհ, սա ի՞նչ է որ,— կեղծ համեատությամբ պատաս-  
խանեց Մկրտումը:

Գնացողները մեկ-մեկ մոտենում են, կապոցներն ստա-  
նում: Խաչանը ստացած կապոցը դրեց փոքրիկի գրկին: Դիլ-  
բարի Թևանը հենց տեղն ու տեղը բաց արեց մրգեղենը, զգու-  
շությամբ լցրեց գրպանը ու թաշկինակը տնտղեց:

— Փեշքեշ ձիու ատամին շեն նայի, է՛յ,— ձայն տվավ  
մեկը: Թևանը թաշկինակը ծալեց ու տեղավորեց պայուսակում:

— Ես էլ ասեմ առավոտ կանուխ դուքանը ինչի էր բաց,— 20  
ասաց Թելունց պառավը կողքին կանգնած մի կնոջ,— նա էլ  
ջան է, չէ՛, ասենք մի քիչ շար նախանձ է...

— Հալբաթ նրա սիրտն էլ է մղկտում,— պատասխանեց  
կինը: Եվ Մկրտումի ընծաների լուրը բերնբերան տարած-  
վեց:

— Արզումա՛ն, է՛յ, մոտեցի՛,— կանչեց պամոշնիկը: Մը-  
կըրտումը վերջին կապոցը ձեռքին նայում էր նրան:

— Խաղեինս կոտր կընկնի, լավ չի՛,— բարձրաձայն ասաց  
Արզումանը: Տանուտերն ու Մկրտումն իրար երեսի նայեցին:  
Պամոշնիկը նրան ինչ-որ բան ասաց: 30

— Դե լա՛վ, բարիշեցե՛ք... Բա էսօր էլ մարդ իրարից  
խոռով մնա՛,— կանչեց տանուտերը: Մկրտումը մի քայլ արեց:

— Վաշ բլաղարոդի, իմ առուն դրա աղբյուրից ջուր չի  
խմի՛...— ասաց Արզումանը և շրջվեց, բազմության մեջ Եզո-  
րին գտնելու:

Տանուտերը Անտոնին մի բան ասաց ու ձին շարժեց: Ուր-  
յադնիկն ու մնացած ձիավորները հետևեցին նրան: Գզիրը  
սանձից բռնած բերեց Անտոնի ձին:

— Խոտա ստրոյա՛ւ,— բղավեց Արզումանը,— դե լաց  
եղեք, նանի, գիզի, հոքիր... Սար ու քոլերը ձեզ: էլ տեսնելու  
չենք... Պա, պա՛, պոռշտին ջրի գին է,— ու վազեց կտուրի վրա  
հավաքված կանանց կողմը, շտապ-շտապ սեղմեց նրանց ձեռ-  
քը: Սալբին երեսը շրջեց, արցունքները պահելու համար: Եզորը  
մոտեցավ Արզումանին:

10 — Արի հետս, բան եմ ասելու...

Իրարանցումը գազաթնակետին հասավ: Կտուրներից ի-  
ջան ու խումբ-խումբ հավաքվեցին սրա-նրա մոտ: Զիավոր-  
ներն զգուշությամբ առաջ անցան: Շուղանց Իսոյի հիվանդ կի-  
նը, որ անկողնուց վեր էր կացել, ճշաց ու կախվեց որդու վզից:  
Իսոն, արցունքը սրբելով, կնոջ թևից բռնեց.

— Ախշի, երեխի սիրտը խարաբ մի՛ անի, թող պարզա-  
միտ գնա...

— Տերտեր, շեղավ էլի՛ մեր գլխին Ավետարանդ պահես,   
ասես համո՞ղ ես,— ծիծաղելով ասաց Արզումանը և սեղմեց  
20 տերտերի ոսկրոտ մատները:

Արզումանը կտուրից նայեց սևացած փողոցին: Մեկը հե-  
կեկում էր, գլուխը պատին հենած, մի ուրիշը արցունքը սրբե-  
լով հուսադրում էր գնացողին: Խաչանը երեխային դրել էր  
ուսերին և զրուցում էր Ունանի հետ, իսկ կինը նրանից քիչ  
հեռու կանգնել էր կապոցը ձեռին: Փողոցում երևաց ջաղաց-  
պանը: Նա աչք էր ածում մեկին. Արզումանը տեսավ նրան ու  
մոտ վազեց.

— Անդրի ամի՛... — ու ջաղացպանը գրկեց նրան:

— Ես մեռած, դու սաղ... Արզուման, սալամաթ վերադառ-  
30 նաս, դու էլ խեղճ ես...

— Գալու եմ, Անդրի ամի: Հալա ի՛նչ օրեր ենք տես-  
նելո՛ւ...

Կտուրի վրա խորթ մայրն էր, ջաղացպանի կինը, Սալ-  
բին: Տերտերի կինը մի խմբից մյուսն էր վազում: Թևերը լայն  
բաց արած, իրրև ծեր սագ, լնգլնգալով մոտեցավ Թելունց պա-  
ռավն ու փաթաթվեց Արզումանին.

— Մի մոր տղա էլ դու ես, բաշա ջան, ինչ ես եթիմի պես կանգնել...— Արզումանը զգացվեց, աչքերը տաքացան:

— Չորտ ետ, խայտառակ են անելու հա՛,— ասաց նա թե-վով աչքերը սրբելով:

Պամոշնիկ Անտոնը ձգեց ձիու սանձը: Նրա առաջից գնում էին դճուղ-գուռնան ու հետիոտն մարդկանց խումբը: Եվ թափորը շարժվեց դանդաղ, անկանոն, — շարժվեց, ասես այդ զանգ-վածն իբր կենդանի միս պոկում էին գյուղի մարմնից, կտրատ-վում էին հազարավոր թելեր, անասելի ցավ պատճառով թե՛ նրանց, որոնք պաշարը շալակած գնում էին ու կարոտով նա-յում ծանոթ տներին, կտուրի վրա հավաքված աղջիկներին, կա-նանց, և թե՛ նրանց, որոնք դատապարտված էին մնալու և սպասելու:

10

— Ավան ամի, էհ մնաս բարով, — ասաց Արզումանը:

— Չէ, գնանք... մինչի լուս խաչերը հետդ կգամ:

— Արզումա՛ն, Արզումա՛ն... — ուստա Նազարն էր վա-զում:

— Ուստա ջա՛ն... — ու փաթաթվեցին իրար:

— Բարով վերադառնաս, — մրմնջաց ուստան:

— Արխային կաց, մնացողը չեմ:

20

— Ավան ամի, նամակս քեզ վրա է գալու, — ու քիչ անց ավելացրեց, — աչքդ էս երեխու վրա պահիր, մինչև տես-նենք, — ասաց Արզումանը, ցույց տալով Ծգորին: Ավան ամին լուռ էր, մտքերի հետ:

Արզումանը Ծգորին մի կողմի վրա քաշելով, կամաց ասաց.

— Գլխի ես չէ՞ մեր բանը... Սիմոնի աղջկա հետ, — ու նա-յեց նրա աչքերին: Ծգորը շիկնեց: — Հա, լավ, հո երեխա չես... Գե վերջը, կարճ ասեմ: Ականջովս է ընկել, որ խաղեիրը Գո-դու համար է ուզում առնի... էդպես խոսք բացվել է: Հա՛, աղջիկը չի ուզում: Հիմա մեր բանն էլ էսպես գնաց: Չորտ ետ, կարող է գամ, կարող է չէ... էդ մեր ֆելդֆերել Իվան Իվա-նովիչը կասի... Աղջիկ է էլի, մի քիչ լաց կլինի. վերջը գուժը կտի կգնա: Ի՞նչ պիտի ասի: Թե որ չեկա, ուրիշի մեղքի տակ ինչի ընկնեմ: Ծա էլ սովեստ ունեմ, չէ՞... Հա, ինձ հանգամանք-ները մանրամասն կգրես: Ղուշի թևով էլ է կհասնեմ: Թե չէ, հո չէ...

30

Եզորի աչքերն արցունքոտեց:

— Տղամարդ կաց: Արզումանի գլուխը քարի տակին չի մնա...

Լուս խաչերում կանգ առան: Իրենց արտի կողքին կանգնել էր խաչանը: Արտը ծովի նման ծփում էր. ծանր հասկերը քավում էին իրար, հնչեցնում տխուր լարի նման:

— Ունանը կհնձի, արի՛,— ասաց Արզումանը:

Եվ անխոս բաժանվեցին: Մնացին միայն նրանք, որոնք մինչև քաղաք պիտի ուղեկցեին:

10 Ծանապարհը շարունակեցին: Արզումանը ետ նայեց: Կողք-կողքի գնում էին Ավան ամին ու Եզորը... Հեռվո՛ւմ, արտի եզրին կանգնել էր Սալբին, կանգնել էր ու նայում էր: Հանկարծ արտերի միջից դուրս եկավ իրենց պառավ Բողարը ու փաթաթվեց ոտներին:

— Բողա՛ր... Բողա՛ր, ետ դառ...

Շունը նստեց հետևի ոտների վրա, լեզուն հանեց շոգից: Արզումանը մի անգամ էլ սաստեց շանը վերադառնալու... Երեվում էին գյուղի ծայրի տները, եկեղեցին ասես փոսի մեջ էր: Արզումանը ձեռքով արեց աղջկանը և վազեց ընկերներին հաս-

20 նելու...

Բողարը մի քիչ էլ սպասեց, մինչև Արզումանը փոքրացավ և կատվի շափ: Ու շունը վերադարձավ:

## ՉԵՑՔԱՅԻ ԱՎԵՐՈՒՄԸ

(Մի գլուխ «Կարմրաբար» վեպից)

### 1

Կես գիշերին Զեյթալի դիրքերը լռեցին:

Քյուրդ Մուրոն շվարել էր: Նրա հաշվով թշնամին պետք է ուժեղացնե՞ր դիմադրությունը, սպասվում էր և հարձակում: Այնինչ թշնամին պատասխանեց լուռությամբ: Նրա «ատրյաղը» 30 երկու վիրավոր էր տվել, որից մեկը՝ բառաչում էր ինչպես մորթվող անասունը, հայհոյում «մեռել, կենդան», հայհոյում ֆելդշեր Եղիշեին, խմբապետին, թշնամուն, աստծուն, անհայտ մարդկանց, հայհոյում էր կատաղած,— կարծես հայհոյանքը

մեղմացնում էր ջարդված ազգրի վերքի մրմուռը: Մյուսը Զրիկի ձիավորներից էր: Նա ավելի ծանր էր վիրավորվել, և բարեկամները նրան կիսամեռ վիճակում գիշերը տարել էին գյուղը: Գնդակը ջարդել էր մեջքի ողնաշարը: Իսկ Մուրոն հայհոյել էր նրան.

— Հարի՛Ֆ, կոնակդ դարձրիր, հա՛... Հախն է քեզ, իմանսըզ...

Այն կողմի դիրքերը լուել էին, բայց այս կողմից՝ սարսափից և անքնությունից ջղայնացած զինվորները անկարգ կրթարկում էին: Նրանք սողալով, ումանք թփերի և քարերի հետևը **10** թաքնվելով, կամաց-կամաց բարձրանում էին լեռը: Կիսամթնում երևաց Բեղլու Վարդազարի սպիտակ ձին: Երեք ձիավորի հետ նա սլացավ լեռան գագաթը: Սլացավ գոռալով, աղմկելով:

Քյուրդ Մուրոն խուլ մոնչաց, երբ կիսամթնում տեսավ ձին ու ձիավորը: Եվ մոնչալով երեսը շրջեց: Նա հիշեց խնջույքը, Բեղլու Վարդազարի ծանր խոսքը: Հիմա էլ նա է գրավում դիրքերը: Այդ միտքը ծանր մտրակի նման շառաչեց: Եվ նա ցանկացավ, որ թշնամու դիրքերից կրակեն, ձին ու ձիավորը գլորվեն: Բայց դիրքերը լուռ էին, ինչպես քարերը: Սպիտակ ձիավորը **20** լեռան գագաթին կանգնել էր ու հեռագիտակով նայում էր դեպի ներքև:

Բացվում էր գարնանամուտի առավոտը...

Չյունը դիմացի սարալանջին սպիտակին էր տալիս, բայց ձորերն ու գետահովիտները սև էին: Չյունի շրերը քլքլալով գնում էին, ցող շարում կանաչի վրա: Անտառը սևին էր տալիս: Լուսաբացի խաղաղ օդը ճեղքեց ճնճղուկների երամը, որ քարերի վրա պտույտ արեց, պապ թռավ դեպի անտառը: Շատ հեռվում սպիտակ ծուխ էր բարձրանում: Կաղնուտի ձորում խոզարածները զարթնել էին:

Քյուրդ Մուրոյի «ատրյաղը» հեհհե բարձրանում էր լեռը... Կարճ արահետներով գնում էին հետփոտն զինվորները: Այստեղ, այնտեղ թփերի հետևը գլուխները հանում էին գյուղացիները: Նրանցից մի քանիսը ղենքով էին, իսկ մեծ մասն ուներ շամփուրներ, երկաթե լինգեր, ջուալներ, պարկեր: Ամբողջ գիշերը նրանց խումբը ցրտից զողալով սպասել էր կովի **30** ելքին:

Սրբ ձիավորները հետ էին նահանջել, այդ խումբը, որ մեծ մասամբ Զրիկից էր, ավելի շուտ էր վերադարձել գյուղ և լեռապատառ պատմել, որ թուրքերը լուսադեմին կմտնեն գյուղը: Աղմուկ-իրարանցում անելուց հետո, նրանք նորից էին վերադարձել դիրքերը, տաքացել խարույկների մոտ, ոմանք հսկել էին ձիերը, ձիերի տուպրակից ծածուկ գողացել էին գարի. լցրել գրպանները:

Քաղցածների այդ խումբը, ագոսավների երամի նման, սպասում էր, որ հաղթողը մաշկի որսը, որպեսզի իրենք ուտեն լեշը: Նրանք կրնկակոխ հետևում էին զինվորներին. նրանցից յուրաքանչյուրն իր մտքում վաղուց որոշել էր, թե ո՞ւմ տունը պիտի գնա, ի՞նչ կա այն տանը, որտեղ թաքցրած կզինեն տնամեջը:

Սրբ լեռան գագաթից Քյուրդ Մուրոն քղավեց. «Հառա՛շ, տղերք» և կեռ թուրք շողշողաց լուսադեմին, ձիավորները սուսերամերկ սլացան դեպի գյուղը, թուսն իրրե բազեններ, — սակայն ոչ մի տան, ոչ մի պատուհանի և ոչ մի թփի հետևից գնդակ չարձակվեց: Գյուղը լուռ էր, և միայն ներս խուժողների ձիերի սմբակներն էին դուրսում սառած գետնին:

Դեռ մութը չընկած, Զեյթան քոչել էր:

Նրանք վաղուց էին սպասում այդ հարձակմանը: Չսլախ Պուղանի բերած տեղեկությունը միայն հաստատել էր նրանց սպասելիքը: Նույն գիշեր առանց աղմուկի, քոչ ու քարվանով գյուղը ճանապարհ էր ընկել դեպի լեռնաշղթայի ձյունոտ գագաթը, այնտեղից իջնելու տաք հարթավայրը:

Գյուղում մնացել էին 20—30 ձիավորներ, որոնց անակրնկալ դիմադրությունը շփոթեցրել էր Քյուրդ Մուրոյին և հնարավորություն տվել, որ ժողովուրդը բավական հեռանա: Կես գիշերին ձիավորները մեկ-մեկ իջել էին դիրքերից, վերջին անգամ նայել իրենց տուն ու տեղին և ինչպես գիշերահավը, անաղմուկ ասպանդակել ձիերը, առաջ անցած քոչին հասնելու:

Լուսադեմին «ատրյաղը» մտավ Զեյթա:

Նրանից առաջ հասել էին շամփուրավորները, լինգավորները, պարկավորները: Հետնապահ ձիավորները դեռ գյուղը չէին մտել, երբ նրանցից առաջ անցավ կանանց մի խումբ: Կարծես քարերի տակից էին բուսել, այնպես անակնկալ էր նը-

րանց երևալը: Նրանք էլ էին շտապում դեպի Զեյթա, դեպի թա-  
լան:

Առաջին մտնողները սկսեցին բաց անել տների փակ դռ-  
ները... Մի տեղ օջախը դեռ տաք էր ու մխում էր վերջին ա-  
թարը: Օջախի մոտ ընկած էր մեծ կաթսան, որ չէին կարողա-  
ցել տանել: Ինչքա՛ն խոսք ու զրույց էր եղել այդ կաթսայի  
շուրջը: Ով գիտի, տան պառավ «կաճեն» ի՞նչ արտասուքով է  
բաժանվել սևացած պղնձից:

Մի ուրիշ տան դուռը պատել էին քարով: Նոր ծեփը մատ-  
նում էր գիշերով աշխատանքը: Մեկի մարագը կրնկահան **10**  
բաց էր, կարծես տերը դիտմամբ էր բաց թողել, որ թալանողը  
միջի հարդն ու խոտը տանի և նրա աչքը շտեմնի ընկուզե  
փայտից քանդակած դուռը, որի նախշերը հին էին, շա՛տ հին:

Կար մի գոմ, որ մաքուր ափյած էր, ճրագն իր տեղը, ցա-  
խավելն ու թիակը կողք-կողքի. նույնիսկ հորթանոցում ամանի  
մեջ ջուր կար: Կարծես հիմա հորթերը սարից պիտի գային:  
Մի ուրիշ տան ոչինչ չկար, սրբել, տարել էին, բացի երեխայի  
պատառոտված տրեխները, որ շարտել էին տան մեջտեղը:

Կես ժամ շանցած սկավեց թալանը: Ինչքան բացվում էր  
օրը, այնքան Զեյթայի փողոցներում ավելի շատ էին երևում **20**  
մարդ ու կին, ձի, ձիավոր: Հարյուրավոր բազմության մեջ,  
եթե գոնե մի երեխա լիներ, կարելի էր կարծել, որ քոչողը հենց  
նրանք են, որոնք փողոցում, տան բակերում կիտում էին այն  
ամենը, ինչ մոռացել էին, կամ շտապելուց թողել տան տերերը՝  
պղինձ, կարասի, արոր, ուրագ, մորթի, պանիր, մաշված կար-  
պետ, ալյուր, ցորեն: Ավարառուները բաժանվել էին փոքրաթիվ  
խմբերի. խմբի մի անդամը հսկում էր, մյուսները հավաքում և  
դարսում էին ինչ ձեռք էր ընկնում:

Արդեն սրբել էին տնամեջը: Վերջին եկողները վերցնում  
էին այն, ինչ առաջինները չէին վերցրել՝ անարժեք լինելու **30**  
պատճառով: Սկավել էք գետնի փորփրելը: Գործի էին լինգե-  
րը, շամփուրները, սրածայր փայտերը: Մակժկում, խփում էին  
գետնին, պատերին: Գետնի դրմբոցից գտնում էին թաքցրած  
իրերի տեղը, հորի բերանները և ազահությամբ փորում գե-  
տինը, ոմանք մատնեղով, ինչպես մարդազայլը գերեզմանը:

Շրջում էին հորի բերանի քարերը և դուրս հանում փախածների պահուստը:

Երիտասարդ արևը ամպերի հետևից երեսը հանել և կամաց լողում էր սառը ոլորտում: Նրա շողերը խաղում էին սվիխների հետ. շողշողում էին շամփուրները, պղինձները, սամավարները, սակայն այդ օրը բազմությունից ոչ մեկը գլուխը վեր չհանեց և արևին չնայեց: Կարծես ամաչում էին և վախենում, որ արևը կծակծկեր նրանց աչքերը և աչքերի ագահությունը:

**10** Անցել էին վերջին արարին: Հանում էին դռները, երկաթի փեղզարանները, տան գերաններն ու սյունները: Փոշի էր բարձրանում փլվող տներից, աղմուկով նստում էին կտուրները, պատերը ճեղք էին տալիս, ինչպես երկրաշարժի ժամանակ: Ահա մի տեղից պատից քար ընկավ, ջարդեց մեկի գլուխը, որ գարու ծանր պարկը շալակին անցնում էր պատի ստեղծված հետևից նրա կինը՝ բեռնավորված շուկ ու փալատով:

Կինը ճշաց, սակայն ոչ ոք չվազեց նրա ճիշին: Արյունը խառնվեց հողին: Կինը հետ քաշեց մարդու դիակը, ուղղեց գարու պարկը: Մի քիչ գարի է թափվել: Ե՛վ լալիս է, սգում մարդու համար, և՛ գարին բռնով լցնում պարկը: Նա մղկտում է աղիողորմ, անիծում իր դառը վիճակը, աղքատությունը, տանը թողած երեխաների անտունները մեկ-մեկ հիշում, սակայն աչքը գարու պարկին է, որ ծածկել է փալասներով, որպեսզի ոչ ոք չտեսնի: Կինը արցունքն աչքերին նայում էր փողոցով արագ անցնող բեռնված ու դատարկ մարդկանց. խնդրում, աղաչում է, բայց մարդիկ զբաղված են: Մեկը միայն մոտեցավ և շտապ խոստացավ իր ձին բերելու, դիակը գյուղ տանելու:

Մի տեղ մոռացել էին շունը: Հավատարիմ պահապանը հաշել էր առաջին ոտնաձայնից: Շղթան արդեն սեղմում էր կողորդը, բայց կենդանին դեռ խզացնում էր և ջղաձգությամբ առաջ նետում իրեն, բերանը բաց ու խուփ անում նրանց վրա, որոնք շան հաշտցին ոչ մի ուշադրություն չդարձնելով, երկաթյա լինգերով սեղմում էին գերանը՝ դուռը պոկելու համար:

**30** Զեյթալի հրապարակում «ատրյադի» ձիերն ախորժակով խժռում էին թալանած խոտը: Ինքը՝ Քյուրդ Մուրոն, մուշտակի մեջ փաթաթված մեկնվել էր խալու վրա և ննջում էր՝ գլուխը

խորհրդին: Զինվորներից մի քանիսը հսկում էին ձիերը, մյուսները խառնվել էին շամփուրավորներին և հաղթողի իրավունքով պահանջում ու խլում էին ավարի թանկագինը: Գյուղի շրջակայքն ուղարկած հետախույզները տեղեկություն էին բերել, որ թշնամու հետքը չի երևում: Նրանք ձյունի վրա տեսել էին նախիրի ոտնատեղ, բայց որովհետև ոտնատեղերի շատը ձյունով ծածկված էր, նրանք հավաստիացնում էին, որ Զեյթան գաղթել է երեք օր առաջ:

2

Քյուրդ Մուրոն նոր էր աչքը փակել, երբ Անդրսակից եկած ձիավորը նրան զարթնեցրեց և հայտնեց, որ պարուշիկ Կրասիլնիկովը շուտով պիտի գա, և որ նա կարգադրել է գյուղի շրջա կողմը պոստեր դնելու, որպեսզի առանց «մեր գիտության» ոչինչ դուրս չտարվի:

— Հարիֆ, պոստը մարդ կա՞,— բղավեց խմբապետը:

— Սերոբը հոն է,— պատասխանեց մի ձայն:

— Է լավ,— և մուշտակը նորից քաշեց գլուխը:

Իսկ նոր եկած ձիավորը իր քրտնած ձիու սանձը մեկնեց պահակին ու շտապեց դեպի տները:

Օրը կեսօր չէր եղել, իսկ Զեյթան մրջնոցի նման սևացել էր մարդկանց ու կանանց բազմությունից: Ամեն կողմից թափվել էին: Կարմրաքարից եկել էին Չոլախ Պուղանը, Մուքեյի տղան՝ Սիմոնը... Պուղանը Ավան ամու հանձնարարություններով եկել էր տեսնելու, թե ի՞նչ է կատարվում:

Նա աչքին չէր հավատում: Երեկ առավոտ նա այս գյուղումն էր: Այս պատին մի «կաճե» թրիք էր ծեփում: Ահա դեռ մատների հետքը մնում է: Այս ցախի մոտ ինքը խոսեց Քեմուրի հետ: Ահա տաշեղների կտորները. Քեմուրը տաշում էր արորի սեպը: Օրերը տաքանում են, վաղը, մյուս օրը պիտի վարը սկսվի:

Եվ նա զարմացած զոնեղուտ էր ընկնում, խառնվում բանավորությանը և դժվարանում էր ճանաչել ծանոթ տները: Նա մեկին հանդիմանեց, բայց մի ուրիշը հրեց նրան և մինչև ոտքի կկանգնեք, երկու զինվոր հոհալով անցան նրա կողքով:

— Քախ թոփալն էլ թալնի եկած է...

10

20

30

225

Չուլախը բղավեց, որ ինքը թալանի շի եկել, բայց փլվող տան աղմուկը խլացրեց նրա ձայնը: Նա կաղեկաղ իջավ դեպի Թեմուրի այգին: Նոր տունկերի բողբոջները սևացել, ուռել էին: Մի տեղ բացվել էին առաջին մուգ-կանաչ տերևները: Պատից քար էր ընկել. երևի անցել էին պատի վրայով: Չուլախը պատի քարերը բարձրացրեց, դրեց տեղը:

10 Ու հոգնած նստեց պատի տակ: Արևը շերմացնում էր քարերը: Բանջարի ծիլերը աղվամազի նման սպիտակին էին տալիս: Կարմիր բողբոջները խոնավել էին քարերի տակ: Նրանք զուգավորվում էին. ծանրած էգերը տաք ավազի մեջ թաղվում էին և շարում սպիտակ ձվերը: Քարի արանքից մի խլեզ գլուխը հանեց, շարժեց լեզուն և համոզվելով, որ վտանգ չկա, պառկեց քարե անկողնու վրա:

20 Զեյթալի իրարանցման աղմուկը հասնում էր նրան: Պարուշիկ Կրասիլնիկովը մի քանի սպաների հետ եկել էր: Նրանց միացել էին Անդրսակի Կոլյան, կամիսար Տիգրանը և մի քանիսները, որոնք սեփական ձիեր ունեին, ձիեր, որոնք միշտ կերել էին ուրիշի քրտինքի գարին, ինչպես տերերն՝ ուրիշի վաստակը: Պորտաբույծ այդ մարդիկ թղթի վրա հիշատակվում էին զանազան պաշտոններում, սակայն մեծ մասը թրև էր գալիս սպաների հետ և կազմում էր, ինչպես Կոլյան էր անվանել, «ոսկե կամպանիա», որի թագուհին Իվան բեյի աղջիկն էր:

30 Այդ «ոսկե կամպանիային» մի քանի հոգի միացել էին «իստերեսի» համար: Նրանք կոփվ չէին տեսել, եկել էին տեսնելու «ահեղ պատերազմ»: Սակայն գյուղ մտնելու առաջին ժամից հիասթափվեցին և շտեսան թշնամուց դերված քանակներ, թնդանոթներ, դիակի կույտեր: Սպանվել էր միայն մեկը և այն էլ ավարի ժամանակ: Սպանել էր ոչ թե թշնամու գնդակը, այլ պատից ընկած քարը: Մի քանիսն էլ նույն եղանակով շարդել էին թևերը: Մեկի ոտքն էր վնասվել. հորի բերանի սալ քարը ճեղքել էր թաթը: Իսկ թշնամին չէր թողել ոչ մի դիակ, ոչ մի վիրավոր: Եթե ունեցել էին սպանվածներ, կամ տարել էին դիակը, կամ հողին հանձնել:

Եկել էր պարուշիկը, և բերնեբերան տարածվել էր նրա հրամանը՝ ոչ ոքի առանց խուզարկության գյուղից բաց չթողնելու: Գյուղի զանազան ճանապարհներին արդեն հսկում էին

ձիավորները: Գյուղացիներից նրանք, որոնք ճողոպրել էին մինչ այդ, մնացորդների նախանձի առարկան էին:

Նրանք իրար ականջի փսփսոմ էին այն կածանները, որոնցով կարելի էր ավարն անցկացնել ձիավորների օղակից: Սակայն ժամ առ ժամ շղթան պինդ էր սեղմվում: Մի քանիսը հետ էին վերադարձել: Պատվում էին լուրեր, որ պարուշիկը ձիավորներ է ուղարկել Ջրիկ և մյուս գյուղերը՝ տները խուզարկելու:

Իսկ հրապարակում մի սպա և «ոսկե կամպանիա» Կոլյան ցուցակագրում էին գորգերը, նախիրը, ցորենը, գարին, որ ամբոխը հանել էր գոմերից, հորերից, տներից: Այդ ամենը պետք է գնար «բանակի պետքերին», ինչպես հայտարարել էր պարուշիկը: Մուրոյի ձիավորներից մի քանիսն առաջ էին անում հավաքված տավարը դեպի Անդրսակ:

Գյուղի հրապարակը նմանվում էր արևելյան խառնիխուռն շուկայի: Մի տեղ պղինձն էր դարաված, մեծ ու փոքր կաթսաները, կծերը, դորակները, մյուս տեղը՝ զանազան ձևի հին ու նոր սամավարներ, երրորդ տեղը՝ մթերքը: Կարպանների և գորգերի փոշին երկինք էր բարձրանում և խառնվում փլված տների փոշուն, ձիավորների խարույկների ծխին ու կրակին, որի շուրջը մորթած անասունների արնոտ կաշի էր, փորոտիք, քաց ու սառած աչքերով եզան գլուխներ, որոնց երակներից դեռ կաթկթում էր արյունը:

Ջինվորները մտրակի կոթով, գոռալով, հայհոյելով ավերակ դարձած տների թաքստոցներից և փողոցներից դեպի հրապարակ էին քշում մարդկանց ու կանանց: Ոմանք շտապում էին թաքցնելու այն, ինչ քիչ առաջ ահագին դժվարությամբ հանել էին թաքստոցից, ոմանք թողնում էին շալակը և մտածում գլուխն ազատելու:

Կանայք կախվում էին ձիերի վզից, մտրակներից, ասպանդակների երկաթից, և նրանցից յուրաքանչյուրը աղիողորմ ձայնով, լալով աղաչում էր «մի կոտ գարի», «մի բուռ աղ», «էս պարկ այլուր տանը մնացած եթիմների համար...»: Իսկ ձիավորները քշում էին մտրակով, ձիու գլխով, քշում էին ինչպես տեղին անվարժ նախիրը: Ոմանց հաջողվում էր ճողոպրել և՛ ծոր-ծոր քարերով, և՛ քարափներով. երես ու ձեռքերը ար-

10

20

30

յունըվա մայրը, ազատվելով թակարդից, վիրավոր գազանի նման շտապում էր որջը, քաղցից բերանը բաց արած ձագուկների մոտ:

Փողոցների աղմուկը հրապարակում ավելի էր սաստկանում: Մեկը գոռում էր, որ պարանը տնից է բերել, մյուսը հարեանին վկայութեան էր կանչում, թե գարու տերը՝ Իմրանը իրեն տալացուկ է երկու սոմար, և նա միայն մի սոմար է վերցրել, երրորդը խնդրում էր ամեն ինչ առնել, միայն կոճ աղը թողնել նոր ծնած կովի համար:

10 Սակայն ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում ո՛չ նրանց բողոքին, ո՛չ աղերսին: Ամբոխի մեջ արդեն լսվում էին ինքնանախատինքի և անեծքի կանչեր.

— Հարեանի մայր հարամ է, ա՛յ խալխը...

— Սրա տերը հրեն սարումը սառչում է...— Եվ կանչողը ձեռքը մեկնում էր կարպետին, որի մի ծայրից քաշում էր զինվորը, մյուսից՝ նոր տերը:

Ճշմարիտ էր կանչում մարդը:

Այդ բուպեին, երբ գյուղի հրապարակում խլխլում էին տղերից հավաքած գույքը, տերերի առաջապահ մասը մեծ տանջանքով, բուք ու բորանը ճեղքելով արդեն անցել էր լեռնա-

20 շղթան, նրա ձյունոտ լանջերին թողնելով բուքից խոնված և մոլորված անասուններին: Ինչ գնդակը չէր արել, կատարում էր դառնաշունչ բորանը: Երբ հալչեր ձյունը, լեռնաշղթայի կատարին բացվեր կանաչը, պիտի երեւային ձյունում խեղդված և գայլերից հոշոտված անասունների մարմարի նման սառն ու մաքուր ոսկորները:

Չուլան աղմուկի վրա գնաց դեպի հրապարակը:

— Օխա՛յ, ձեզ տեղն է,— ասաց նա: Երբ ձիավորը բրնձնեքով խփեց Մուքելի տղային, Պուլանը ուրախացած վերվեր թռավ:

30 — Հրեդ հա՛, մե՛կ էլ, մե՛կ էլ...— Չուլանը բազմութեան մեջ տեսավ Շինականին:

— Դու է՞լ,— ու հանդիմանքով նայեց նրան:

— Պուլան, էս մեր Փահրատի եթիմների պղինձեղենն է...

Հավաքել եմ, շան փայ շիւնի: Հիմի ճանապերքը պատտաւոյ են դրել:

Պուղանը նրան գլխով արեց: Շինականը կապոցը շալակից իջեցրեց: Տների հետևով նրանք հասան Թեմուրի պարտեզը:

— Դի՛ր տափին...— Ու թռավ ցանկապատից, ցախերը հանեց, ծածկեց բեռը:

— Պուղան, ախր մեշոկը ի՛մն էր,— տրտնչաց Շինականը:

— Հետով,— խեղդված ասաց Չուխը,— թող հանդարտվի հետով:

Շինականը շոր ցախերի մի կույտ ավելացրեց վրան, ապա 10 քար շարեց, որ քամին չցրեր ցախերի կույտը: Ու բաժանվեցին. Շինականը դեպի գյուղը, Պուղանը՝ Կաղնուտի ձորը:

### 3

Մարցա ջուրը Ջեյթաչի տակովն է անցնում: Բարակ առուններ են, որոնք ջրում են գյուղի բոստաններն ու շիմանները, ապա աստիճանաբար միախառնվում, միանում Ջեյթաչի ձորով եկող ջրին և Կարմրաքարին չհասած՝ անունն ու գույնը փոխում, մտնում Կարմրաքարի հանդերը, իբրև Մարցա ջուր:

Չուխը ջրի ափով իջնում էր ինքն իր մտքի հետ: Ինչպես 20 ալիքն ալիքին հրում էր ու չէր հասնում, այնպես էլ նրա մըտքերը վազում էին, մեկը չլրացած, մյուսն էր ծնվում: Այդ խեղճ մարդը մտածում էր լսածի և տեսածի մասին: Կարծես այդ օրը Ջեյթաչում մնացել էր մի ուրիշ Չուխ և նրա փոխարեն վերադառնում էր ծանր խոհերով մարդը, որ ելք է փնտրում, հազար դուռ է բախում ու ելքը չի գտնում:

Նա հիշում էր գյուղի խաղաղ առօրյան, ապա պղտորվելը: Առաջ փլվեց մի պատնեշ, մի վարար ջուր մտավ պարզ ծովը: Պղտորվեց ջուրը, հետո ուրիշը, երրորդը: Չտեսնված մարդիկ երևացին: Ո՛ւր գնաց Թեմուրը: Նա ծանր էր լսում. երևի կրակոցները չի լսել: Եվ ավելի լավ. խաղաղ, անվրդով կմեռնի: Իսկ ինչո՞ւ նա պիտի մեռնի տաք հարթավայրում և ոչ թե 30 հայրենի տանը:

Նրա ուշադրությունը գրավեցին վերևից լսվող մի քանի ձայներ: Վերևի ճանապարհն էր: Երևում էին ձիերի և ձիա-

վորների գլուխները: Մի սպա կոացել էր ձիու դիմացը կանգնած կնոջ կողմը: Կինը մի պարկ էր շալակել: Չուխը պատի տակով բարձրացավ դեպի վեր: Ճանապարհից քարեր էին թափվել, տեղը զառիվայր մարգագետին էր, որի վրա բուսել էին մասրենու թփեր: Տերը կիտել էր քարերը, այդ անմշակ սարալանջը դարձրել խոտատեղ:

— Էս Ֆահրատի եթիմների դորուղն է,— հիշեց նա:

Վերևից ձայներն ավելի պարզ լսվեցին: Չուխը տապարեց պատի տակ: Նրա ականջին էր հասնում խոմակցութունը: **10** Ձիավորը բղավեց.

— Քավթա՛ն, քեզնից ի՞նչ է գնում...

Չուխը գլուխն զգուշությամբ վեր հանեց: Շալակով կինը ուսի պարկը մեկնեց պառավին: Պառավը երեսին խփելով դռնաց: Սպան իջավ ձիուց... Ձին գլուխը կախեց ճանապարհի վրա: Մարդը քաշեց կնոջ թևից և կինը ներքև իջավ: Ապա ներանք ծածկվեցին մասրենու թփի հետևը:

Չուխն աչքերին շնավատաց: Ինչ տեսել էր այդ օրը, չբացավ այս տեսարանի առաջ: Նա զայրութից գունատվել, դողում էր:

**20** — Պառավի հարսն էր... Մի պարկ ալյուրի համար...

Այդ ամենախոր վիճն էր, որ ճեղքվեց նրա առաջ... Ավելի հեռուն էլ ոչինչ չկար նրա գիտակցության համար: Սարսափելին էլ ուրիշ բարձունք չուներ: Չուխը գլուխը կախել էր գետին: Նրա երեսը տաքացել էր, ուզում էր գլուխը վեր հանի, բայց չէր կարողանում: Ամո՞թն էր, վախը, թե՞ մի ուրիշ զգացում, որ նրան մեխել էր այդ դրությամբ: Նրա աչքն ընկավ քարերին: Այստեղ էլ տաքանում էին նույն կարմիր բողոճները: Ամեն տեղ նույնն է, նույն գարունը, ջրերը... Ահ հողի վրա մարդուն դժվար է ապրելը:

**30** — Հայ է՞...— հարցրեց Չուխը և գլուխը վեր հանեց: Սպան բարձրանում էր դեպի ճանապարհը, իսկ կինը գնում էր ճանապարհի տակով: Գնում էր և օրորվում, կարծես հիմա պիտի ընկներ:

— Հայ է՞,— նորից կրկնեց իր հարցը և աչքերը փակեց,— էս բողոճը հա՛յ է, էս ջրերը հա՛յ են, Թեմուրը հա՛յ է,

ես հայ եմ,— նա հայ չի՛, չի՛, ասում եմ:— Կարծես խոսում էր մի աներևույթ մարդու հետ: Եվ քար շարտեց դեպի ներքև:

Պատի գլխին մի այլ ձիավոր խոսեցնում էր մի ուրիշ կնոջ: Չուխը վեր նայեց. կինը շրջվել էր դեպի շուրը և աչքերը լայն բաց արած, նայում էր անտառին: Չուխը ճանաչեց Վարսենիկին

— Էս լիրբն է՛լ է էստեղ,— զարմացավ նա և աչքը շարողացավ պոկել նրանից:

Ի՞նչ էր մտածում Վարսենիկը: Փոքրիկ բեղերով մի սպա նրա շորս կողմը շուռ էր գալիս, բարձրանում ոտների վրա, որ նրա ականջին խոսք ասի: Իսկ Վարսենիկը արձանի նման կանգնել էր: Ոտների առաջ, քարի վրա մորթե պարկն էր:

— Համոզում է,— մտածեց Չուխը:

Հանկարծ շառաչեց ասպտակը, փոքրիկ բեղերով մարդու գլխարկը թռավ մի կողմ: Մի ձիավոր շտապեց: Կինն իրեն գցեց դեպի չիմանը. ձիավորը կրակեց երկու անգամ: Չուխը տեսավ Վարսենիկին թփերի հետևը ու աչքից շքացավ: Ձիավորը ձին քշեց, բայց ձին վախեցավ լանջից, ետ քաշվեց ու ծառս եղավ հետևի ոտների վրա: Փոքրիկ բեղերով մարդը գըլխաբաց վազեց նրա հետևից: Ներքևից լավեց ատրճանակի կըրակոց: Քիչ հետո, մարդը հայհոյելով, իբրև հարբած բարձրացավ դեպի ճանապարհը: Թփի վրա ծվեն-ծվեն դրոշակի պես օրորվում էր Վարսենիկի շալը: Մարդը մոտեցավ, նայեց ու մի անգամ էլ կրակեց: Գնդակը տրաքեց քարին ու քարից կտորտանք թռավ: Վերից մեկը ծիծաղեց, իսկ մարդը թուսերեն խոսք ասաց: Երևի հայհոյում էր:

Չուխը սողալով իջավ ձորը, թռավ բարակ ջուրը: Երբ մտավ անտառը, մի քիչ հանգստացավ: Ապա գնաց ջրի ափով... Ոչ մի տեղ ոչ մի հետք: Փախել է կամ պահվել է անտառում:

Եվ կաղ ոտի կողմը ծովելով, արագ անհետացավ մթին թավուտներում, ինչպես գազանը: Նա գնում էր, կարծես իր կյանքում միայն մի անգամ էր մարդուն տեսել, նրա գործը, նրա կյանքը և սարսափահար շտապում էր տեսածը պատմելու Կաղնուտի ձորի միամիտ մարդկանց:

Երեկոն իջավ խաղաղ, ինչպես իջնում է գարնանամուտի մաքուր և անփոշի երեկոն:

Խաղաղվեց Զեյթան, ձորը, անտառը: Ոչ տուն էր երևում, ոչ ճրագ, ոչ շան հաչոց էր լսվում: Միայն հրապարակի խարույկն էր, որի կարմիր լույսերի տակ, ծխի քողի արանքով երևում էին ձիու հաստ գավակներ, գլուխներ: Խուրձների վրա նստոտել էին Քյուրդ Մուրոյի գիշերապահ ձիավորները: Կրակը կարմիր շողք էր գցում արծաթ թրերի ու պողպատի վրա:

10 Խարույկը հաստ գերաններից էր, որ հավաքել էին մոտակա տներից: Նրանց ծայրերը վառվելուց հրում էին: Երեք վիթխարի գերան եռոտանու ձևով դեմ էին արել իրար: Ու գագաթից, ճիշտ խարույկի վրա, կախել էին գոմեջի շափ խոշոր տավարի մարմինը, որ թեժ կրակից կարմրել ու ճարպ էր կաթկթում: Դրանից բոցն ավելի էր բռնկվում:

Երեկոյան դեմ, երբ Զեյթան դատարկվել էր, հանկարծ ձիավորները նկատել էին ամեհի ցուլը, որ սարից պոկված ժայռի նման, գլորվում էր դեպի գյուղը: Նա մոնչում էր կատաղությամբ, փորփրում ձյունը, ամուր ճակատը խփում քրին, սառած գետնին, կարծես ուզում էր գլուխը ջարդել:

20 Զիավորներից մեկն ասել էր, որ ցուլը կատաղած է: Մի քանիսն իրոք հավատացել էին և մոտեցել ձիերին: Նթե ցուլը հարձակվիր, նրանք պատրաստվում էին ձիերը հեծնելու: Իսկ ցուլը դյուղի վերևը մոնչացել էր, թաց ունգով հոտոտել գարնանամուտի գետինը: Նախիրի՞ց էր ետ ընկել, ճանապարհն էր մոլորել, թե՛ երեջի հոտ էր ընկել քթովն ու վերադարձել էր գյուղը:

Աղբյուրից ցուլը կուշտ ջուր խմեց, հանգստացավ: Զինվորներից մի քանիսը մոտեցան, ցուլն արնոտ աչքերով նայեց նրանց: Նրա ճակատից արյուն էր կաթում, կաշին քերծել էր: 30 Ցուլը նայեց, ապա հաղթ վիզը կեռացրեց, գլուխը խոնարհեց, որպեսզի ոստյուն գործի: Այդ վայրկյանին երկու հրացան միասին պայթեցին ու նա ոստյունի փոխարեն գլորվեց մահվան ցնցումներով: Մեկի լայն թուրը վերջ տվեց նրա ցնցումներին ու խոցին:

Այդ ցուլն էին կախել գերանների եռոտանուց: Նրա մարմինը կարմրել էր, և կրակի ցուլքը խաղում էր մկանների ողորկ

խորհրդի վրա: Եթե գինվորների շողշողուն գնաքերը չլինեին, հեռվից դիտողը կկարծեր, թե քարե դարի մարդիկ են հավաքվել խարույկի շուրջը և կրակի վրա կախել մի կենդանի, որից այժմ մնում են բրածո ոսկորներ:

Գիշերը թանձրանում էր: Խարույկի լույսը հասնում էր մինչև դիմացի անտառը: Լուռ տները չէին նմանվում ավերակների, որովհետև ոչ նրանց պատերն էին մամոտոտ, ոչ սևացած գերաններ էին երևում: Կարծես համր տների տակ քնել էր հողի մշակների հոգնած բազմությունը, քնել էր վարուցանքից հետո ու գիշերապահների կրակն հսկում էր նրանց անվրդով քունը:

10

Սարից քամի իջավ: Քամին խաղում էր կրակի ալիքների հետ, մերթ կրակը պառկում էր գետնի վրա, մերթ ծուլ լինում մինչև եռոտանու գազաթը: Ցուլը ոսկեգույն էր դառնում: Կրակի շուրջը հավաքվածների ստվերը ձգվում էր մինչև անտառը:

---

# Ո Ր Գ Ի Ո Ր Ո Տ Մ Ա Ն

(Պահպանված հատված)

## 1. ՄԵՐ ԾԱՆՈԹԸ

Գիշերվա այն ժամն էր, երբ պոստի միլիցիոնները չի կարողանում հաղթահարել հոգնութունը և նիրհում է ամալի փողոցում: Քամուց դժժում են հեռագրալարերը և լապտերներն օրորվում են, կարծես փողոցը թեքվում է մեկ մի կողքի, մեկ մյուս, ինչպես լուսերը հանգցրած նավը: Այդ ժամին ձիերը պառկում են և վիզերը երկարում գետնի վրա:

- 10 Քաղաքի վրա սառը լուսինն էր, նրա ցուրտ լույսն աննշմար էր էլեկտրական լապտերների լուսեղեն լճում: Միայն բարձր տների տանիքների թիթեղն էր անպտուղ շողշողում լուսնի լուսով: Այդ ժամին նիրհում էին և կատունները, նրանց ոչ մի գույգ չէր մլավում գազանային կրքից: Լուսնին մնում էին քաղաքամերձ բանջարանոցները, որտեղ սպիտակին էին տալիս կաղամբի հասուն գլուխները, որովհետև արդեն աշնան դեմ էր, — և ջրերը, որոնք տխուր խոխոշում էին հնձած արտերի ամալի դաշտերում: Կարող էր պատահել, որ հեովից մթնում մի սալլ ճոնչար ու սելվորն ուրախ լիներ, որ լուսնյակ գիշեր է և ուրախութունից տխուր երգեր. — գուցե սառը լուսինը ողողում էր գետափնյա ելեգնուտը, որտեղ բազերը մրսում էին հովից և խոր թաղվում տաք ճկուտներում, — բայց այդ ամենը քաղաքամերձ էր, քաղաքից դուրս և ոչ քաղաքի ներսը, որտեղ, ինչպես ասացինք, լուսադեմի խաղաղու-

Յլուան էր, օրորվող փողոցներ և փողոցի ծայրին նիրհող պահակը, ինչպես արագիլը քամուց շարժվող բարդու գլխին:

Մարդը, որի անունը և ով լինելը մենք հաջորդ գլխում կասենք, ահա այդ ժամին նայեց ժամացույցին, ուսն առավ պայուսակը, լույսը մարեց և դուռն բանալին գլորեց գրպանը: Հետո նա իջավ մաշված սանդուղքով, անցավ բակը, որ անձև էր, որովհետև երկու կողմից բաց էր, և գնաց դեպի անորոշ յոթնյակ, այսինքն աղիքի նման ծավեթալ նեղ փողոցով, որ սկիզբ էր առնում հենց այդպիսի անորոշ բակերից և կայարան տանող փողոցին մոտենալով մի քիչ շտկվում, մի քիչ լայնանում, դառնալով ճանապարհանման մի փողոց, որտեղ տները համազգեստով են, այսինքն՝ նոմեր ունեն և պատշաճ լապտեր, ոմանք նույնիսկ ցուցանակներ և ամենևին նման չեն այն խառնիխուռն հողակույտերին, որտեղից ելավ մարդը և որտեղ մի փոքրիկ լապտեր լույս է տալիս շորս-հինգ բակի, որտեղ խսիրով ծածկած արտաքնոցի կողքին հավաքուհին է և անխուսափելի մոխրակույտը, ուր ցերեկը խաղում են երեխաները, իսկ գիշերը թաղնում են մրսկան շները:

10

Մինչև կայարան նա համարյա ոչ ոքի չհանդիպեց: Մի տնից երեխայի լացի ձայն լսեց և օրորոցի թրխկոց: Կավաշի փոխից մխի և հասած խմորի հոտ առավ: Նա նույնիսկ գլուխը բարձրացրեց և տեսավ ծանոթ թիթեղյա լավաշը, որ կախված էր ձողից՝ ցուցանակի փոխարեն և վրան կապույտ ներկով գրած՝ «Հաց կա», «Հաց չկա»: Փողոցին նայում էր «Հաց կա» երեսը: Դիմացը գալիս էր մի կառք: Զիերը քայլում էին դեպի գոմը. նա տեսավ կառապանին, որ գլուխը կախել էր կրծքի վրա, փաթաթվել մուշտակի մեջ: Կարծես անգլուխ էր կառապանը, ձիերը քաշում էին մի խորհրդավոր մարմին:

20

Կայարանի հրապարակում նա շարժում տեսավ: Գիշերային կառապանները հավաքվել էին իրար մոտ: Նրանք թեթև կրակ էին արել և շուրջը նստել: Զիերը խժոռում էին հարդը: Մի քանի հոգի դուրս եկան կայարանից, գնացին քաղաքի կողմը: Մեկը նրանցից բաժանվեց և բաժանվելիս կանչեց՝ «Ալլոռ, էքվան թեղմ արի»:

30

Քթին խփեց վակզալի հոտը: Նա անցավ հանդարտ դահլիճով, որտեղ նստարանների վրա փովել էին ուղևորները,

արոնք ստիպված էին գիշերել: Նա անտարբեր նայեց շուրջը, ահա մեկը խուրչինը գլխի տակ, ոտքերը փռել է և քնի մեջ քորում է մարմինը: Մի ուրիշը կռթնել է շեմողանի վրա և դիրքն այնպես է, կարծես խոր միտք է անում. երբորդը գլուխը դրել է պատուհանին, շորորդը ոչ գետնին է փռվել, ոչ գլուխն է դրել պատուհանին և ո՛չ էլ խոր միտք է անում, այլ պարապությունից, թե ձանձրույթից հագեցնում է քաղցը և ուղտի նման շքած, բացել է պաշարը, ուտում է ձու, պանիր, հաց, խաշած միս և ով գիտե ինչ բարիքներ, որ հոգատար մի ձեռք եփել է, թխել, փաթաթել, կապել: Հինգերորդի քունը չի տանում և նստել չի ուզում, տասն անգամ կարդացել է չվացուցակը, քսանվեց անգամ մոտեցել ժամացույցին և հիմա հետաքրքիր նայում է, թե ինչպես է շքած ուղտը լավաշները կլանում:

10 Մեր ծանոթը, որի հետ դեռ մենք պիտի գնանք և ակա- նատես լինենք նրա գլխով անցած դեպքերին մինչև եղերա- կան վախճանը և նրա շնորհիվ ժանոթանանք շատ մարդկանց և մի պառավ ձիու հետ,— մեր ծանոթը բոլորովին անվրդով անցավ այդ տեսարանների կողքով և դուրս եկավ պերրոնը, ստուգելու ժամացույցը:

20 Այստեղ էլ խաղաղութուն էր: Ռեյսերի զույգերը շողշողում էին, և երբ լապտերները օրորվում էին, թվում էր, թե ռեյսերը շարժվում են, օձաձև գալարվում, ուռչում և փոս ընկնում, ինչպես ջրի մակերեսը: Մի շոգեմեքենա մանյովր էր անում, կարծես պարապությունից ման էր գալիս գծի վրա, աննպատակ հետ ու առաջ գնում: Հեռվում մի քանի շոգեմեքենա հանգցրել էին ճրագները և շար ընկել: Կանաչ լապտերով մի մարդ նրանց անիվների արանքում ինչ-որ բան էր սարքում:

30 Մեր ծանոթը գոհունակությամբ նկատեց, որ իր ժամացույցը ճիշտ է աշխատում և վերադարձավ մյուս դահլիճը, որտեղից լավում էին աղմուկի խուլ ձայներ: Տոմսերի կասսի առջև խոնվել էին 40—50-ի շափ գյուղացիներ, որոնք իրար հրում էին, սեղմում երկաթե ոլոր-մոլոր այն միջնորմների արանքում, որ, ինչպես հայտնի է, կառուցված է հերթ սպասե- լը դուրացնելու համար: Գյուղացիները բոլորն էլ սղամարդիկ էին, կապին երիտասարդներ: Տիրապետողը գորշ գույնի

էր, որ իշխում էր նրանց պատառոտած զգեստների և հողագույն դեմքերի վրա: Հերթում սպասելը դժվարանում էր և նրանով, որ յուրաքանչյուրն իր ձեռքին ուներ իր կապոցը՝ մեշոկ, ջուալ, փայտե սնդուկ և կամ նույնպիսի հողագույն քաթանի վերմակի մեջ պարանով կապված պաշար: Նրանցից յուրաքանչյուրն աշխատում էր ազատվել հարևանի բռնանախորժ ծանրութիւնից, որ իջնում էր ուսերի վրա, կամ հրում էր մեջքը, ծակում էր, եթե հարևանը վերմակի մեջ փաթաթած ուներ «սալդաթի վախտը» բերած պղնձե թեյամանը (մեկի տոպրակի միջից երևում էր կացնի կոթը),— միաժամանակ յուրաքանչյուրն աշխատում էր կապոցը հարմար տեղ դնել: Բայց գլխավորը հերթն էր, և այն սպասումը, թե երբ պիտի բաց անեն կասսը, որի համար ոմանք բռունցքի մեջ պինդ բռնել էին տոմսակի մի քանի անգամ հաշված գինը:

10

Աղմուկը բարձրանում էր ոչ միայն նրանից, որ վերջինները հրում էին առաջիններին, և լսվում էին ահեղագոչ աղաղակներ, թե մեկի ոտքը տրորվեց կամ մյուսի թևը մի բանի տակ մնաց,— աղմուկն ավելի անսովոր վիճակից էր. անասնական երկյուղից, թե կարող է մի բան պատահել, ինքը կըմնա, իսկ Օննիկը կերթա պովեզով: Կային և անհանգիստ երիտասարդներ, որոնք աննպատակ հրում էին և բռռում, ինչպես ջահել բուղան, երբ քթովն է ընկնում հողի առաջին խոնավութիւնը: Նրանք բռռում էին և ծիծաղում, իսկ նրանք, որոնք սեղմվում էին մարդկանց և իրերի միջև, սեղմվում էին երկաթե միջնորմի արանքում, հուսահատութիւնից թափում էին հայհոյանքների քարե կարկուտ և կատաղության սև ջուր:

20

Եվ ահա բացվեց այս տեսարանը մեր ծանոթի աչքերի առաջ, երբ նա պերրոնից ներս մտավ: Նայեց նա, ինչպես նկարիչը կնայի փրփրած ծովին: Սակայն նկարիչ չէր մեր ծանոթը, այլ կարգի և միօրինակության մոլեգին երկրպագու: Եվ շատ վրդովվեց նրա սիրտը, երբ տեսավ, որ գորշ բազմութիւնը երկաթե միջնորմի մեջ, ինչպես անտառի գաղանները վանդակների մեջ, աննպատակ հրմշտում են, բոթում, բոթբոթում, աղմկում, այնինչ դեռ մի ժամ և քառորդ կար մինչև կասսը բացվեր և մի ժամ էլ՝ մինչև առաջին զանգը:

30

Եվ որոշեց սանձահարել հողմը:

237

- Այն խոսքը, որով նա դարձավ հերթի կանգնածներին, կարճ եղավ, և մի պահ հանդարտվեց աղմկահույզ ժողովը: Նա առաջարկեց իրենից նոմերներ ստանալ այն կարգով, ինչպես կանգնել են, ապահովել հեռանալ ու հանգստանալ մինչև տոմսերի վաճառելը: Նրա խոսքից հետո նախ տիրեց լուռություն, որի ընթացքում հերթի կանգնածները կասկածախառն զննեցին նրան, ապա վերջինները աղմկելով համաձայնություն հայտնեցին. միջինները տատանվեցին, իսկ կասսային մոտ կանգնածները համառոտեցին: Մարդը հաստատ և հավասար քայլերով, ինչպես զինվորական, մոտեցավ նրանց և հարցրեց ամենաառաջինին, որը երկու ձեռքով ամուր գրկել էր կասսի դուռը.— հարցրեց նրա ազգանունը, հանելով բլոկնոտը: Միջինները միացան վերջիններին. այնտեղից մի քանիսը պոկվեցին և եկան հանդիմանելու առաջիններին: Բուպեն վճռական էր: Մեր ծանոթը համառությամբ կրկնեց իր պահանջը և մարդը վերջապես ասաց ազգանունը՝ հողագույն և հասարակ, ինչպես ինքը՝ Գրիգոր Կարապետյան, ինչպես պատի աղյուսներից մեկը: Նա տարիքով էր, աշխարհ տեսած չէր և այն հաստատ համոզմանն էր, թե ով հարցնի իր անունը և ազգանունը, նա «օրենքի մարդ է», այսինքն բարձր է իրենից:

- Նա ասաց իր ազգանունը և ստացավ «պերվի նոմերը»: Մեր ծանոթը մտադիր չէր ազգանունները գրելու, նա միայն ուզում էր նոմերներ բաժանել, բայց առաջինի համառությունը պատճառ եղավ, որ բլոկնոտի շատ թերթեր սևանան: Երբ գրեց վերջին 47-րդ ազգանունը (43-րդը ավելացրել էր «կոմսոմոլ», իսկ 19-րդը՝ «հինգ նաֆարից բաղկացած շքավոր եմ») և հանձնեց 47-րդ նոմերը, ոչ ոք դեռ տեղից չէր շարժվել, միայն աղմուկը և հրմշտելը հանդարտել էր: Նա առաջարկեց ցրվել և հանգստանալ: 43-րդը, որ իր ազգանվան դիմաց ավելացրել էր «կոմսոմոլ», առաջինը դուրս եկավ: 5-րդ նոմերի տերը առարկեց:

— Զի՞ եղնի, որ համ մեր տեղեն չհեռանանք, համ էլ նոմերը պահենք...

Այս առաջարկը կասկածներ ծնեց, և որովհետև կարող էր գործը քանդվել, մեր ծանոթը երկրորդ անգամ խոսեց. այս անգամ դառնությամբ, դեմքը խոժոռելով միայն 5-րդ նոմերի

կողմը: Ազդեցութիւնը փայլուն եղաւ: 5-րդ նոմերի տերն էլ նոմեր առաջինի պես մտածեց, թե ո՞վ գիտե, ինչ կարող է լինի, ինչո՞ւ վատամարդի լինել ուրիշների համար, գուցե այն մարդը, որ գրեց իր ազգանունը, «մենձավոր» էր: Նրան հանդիմանեցին հարևանները, որոնք դեռ շարունակում էին պինդ բռնել միջնորմի երկաթներից: Մեկը նույնիսկ 5-րդ նոմերի հասցեին բղավեց, թե նա «քյալարեցի» է, իսկ քյալարեցիք իբրև թե «իշու ախպեր են»: Իհարկե իզուր ասաց, որովհետև 6-րդ, 9-րդ և 10-րդ նոմեր ունեցողները ևս քյալարեցի էին, որոնց սաստիկ վիրավորեց «կախ շալվար» հոռոմեցին: Միջնորդութեամբ մյուսների, որոնք ոչ քյալարեցի էին և ոչ հոռոմեցի, այլ դանաղուանցի, քավթաբոսեցի, քուլլուբուլաղցի և Մեծ Օթուլյաթաղ գյուղում բնակված գաղթականներ՝ ջուրը պարզվեց, որը պղտորելու նպատակով էր հոռոմեցին «շոշափել» քյալարեցու «պատիվը»: «5 նաֆարից բաղկացած չքավորը» աղմուկի մեջ մի խոսք շարտեց բոլոր «եռլականների» հասցեին և ապա ձայնակցեց նրանց, որոնք շեզոք մարդու լըրջութեամբ հանդիմանում էին կովող կողմերին:

10

Սակայն այս միջադեպը մեր ծանոթի առաջարկի օգտին եղաւ: Դիմադրութեան բոլոր միջոցները սպառված էին, չէր կարելի ոչ նոմերը ձեռքին տեղը կանգնել և ոչ էլ դիմանալ այն հանդիմանութիւններին, որ անում էին հետինները և միջինները: Եվ 5-րդ նոմերի տեր քյալարեցին կատաղի վճռականութեամբ իրեն գցեց հերթից դուրս, կարծես ամենի ցավով պոկվեց մի արլունոտ ող հերթի երկար ողնաշարից: Ապա նա հետ եկավ և սկսեց մյուսներին հանել հերթից: Նրան միացան ուրիշները, որոնք հռհոցով քաշքշեցին մարդկանց և նրանց իրերը, միջնորմի երկաթների արանքում մի անգամ էլ ճխլելով (մեկի ձեռքից փողերը զրնգալով լափովեցին, գլորվեցին արծաթները և պղինձները և բազմաթիվ գլուխները կռացան, սրա-նրա ոտքերի արանքով անցան, գտնելու փողը, որի տերը լեղապատառ բղավում էր): Բայց և այնպես կասսի առաջն ամայացավ, և նոմերները պինդ բռնած մարդիկ օրհնութեան և շնորհակալութեան անձրև թափեցին մեր ծանոթի գլխին: Իսկ նա այդ աղմկահույզ իրադարձութիւնների ժամա-

20

30

նակ անշարժ նույն տեղն էր, որպես մի քարե սյուն, որի ստորոտին զարնվում են պղտոր ալիքները և ամոթով հետ փշրվում:

10 Ի՞նչ էր մտածում նա, երբ հերթից դուրս եկածներից մեկը բարձրաձայն հայտնում էր իր գովքը մեր ծանոթի հնարագիտության կամ ինչպես ինքն էր ասում, «Ֆահմի» հանդիպ, մյուսը իղձ էր հայտնում ուտելու նրա ուսումի այն մասը, որ, ինչպես հայտնի է, ուսումը շունի և միայն ոչխարի այդ մասն է համեղ, երրորդը խորհրդածություններ էր անում այն մասին, թե «էշ ապրած, էշ մեծացած» են իրենք և դեռ չգիտեն «գակոնի պոպվիլը»: Այս կարգի միտք զարգացնում էին և մյուսները, որոնք քիսաներից, «կուֆիներից» և ո՞վ գիտե որպիսի տուփերից հանում էին թուփուն ու խորը ծխում, որովհետև հերթի հրմշտկոցը նրանց չէր թողել այդ պահանջին հագուրդ տալու: Սակայն ի՞նչ էր մտածում մեր ծանոթը, երբ նրա շուրջը քյալարեցիների, դանաղաճեցիների, քուլլուրուլղցիների, քյավթառքոսեցիների և Մեծ Օքուզյաթաղ գյուղում բնակված գաղթականների բերանից ծխի հետ դուրս էին ելնում օրհնության, գովեստի և երախտագիտության քուլաներ...

10 Որքան էլ խուզարկու աչքով դիտում ենք նրա երեսը, չենք նկատում մի նոր կնճիռ կամ մկանի որևէ շարժում: Աչքերը նույնպես սառն են, հայացքը խոժոռ, այնպես, որ մենք ինքներս երկար չենք կարողանում նայել նրան, առանց խոնարհելու մեր սեփական աչքերը: Եվ մի կասկած է ծնվում մեր մեջ, թե չլինի՞ նրա աչքերից ելնում են ահռելի հզորության քիմիական ճառագայթներ, որոնք չեզոքացնում են մեր տեսողությունը և ենթարկում իրենց, ինչպես օձի աչքերը երկշոտ գորտին: Ուրիշը նրա փոխարեն կապրեր հաղթանակի հաճույքը. գոնե անբարբառ կշոյեր և կմեծարեր ինքն իրեն շրջապատված բարեբարված բազմությունք, որոնցից ամեն մեկը իր ձեռքին բռնել էր նրա նշանը, նրա դրոշմը, ինչպես հպատակները թագավորական պասպորտը: Գուցե մի ուրիշը առիթից օգտվելով նոր քարոզ կարդար կամ թե մի քննադատ բարձրանար միջնորմի մեջքին և հմայված բազմությանը գերեր «ընդհանուր ակնարկներով» կամ «ներածական երկու խոսքով» — բայց այդպես կաներ քննադատը կամ մի ուրիշը, մի երկրորդ ուրիշը, և ոչ թե մեր ծանոթ քարե սյունը:

Սակայն չի կարելի ասել, որ նրա գլխում այդ բոպեին մտքերը անշարժ և հանդարտ էին, ինչպես գլխի՝ խնամքով սանրած դեղին մազերը: Նրա սառը հայացքը միջնորմի կողմն էր, կասսի ուղղությամբ: Նա նկատել էր, որ ոմանք շատ են մոտենում միջնորմներին, իսկ երկու հոգի փողերը որոնելու պատրվակի տակ շեն հեռանում կասսի առաջից, կարծես դրամները գլորվել են աջ կողմը՝ տոմսակի համար:

— Հեռացե՛ք,— և մեր ծանոթի ձեռքը թրի նման օդը ճեղքեց, կարծես յաթաղանով գլուխ կտրեց: Այս կանչի վրա վազեցին նրանք, որոնք կապոցները թողած դուրս էին եկել պերրոն, դահլիճ, փողոց: Եվ բոլորը հարձակվեցին դրամ որոնող երկուսի վրա և նրանց, որոնք շատ էլ չէին հեռանում միջնորմից: Այս լուրջ ընդհարում էր: Ծ-րդ նոմերի տերը իբրև տրիբուն մի կրքոտ ճառ ասաց նրանց «մուխաննաթ» և ծուռ միտք լինելու մասին: Նույնիսկ կասկածներ հայտնեցին, որ ոչ մի փող չի ընկել, գրպանումն է զրնգացել: Իսկ փող կորցնողը կրկնակի վիրավորված բղավեց, որ «բլեթի» փողն է կորսվել և դեռ չի գտել երկու «արբասի» և մի թաք շահանոց: Բայց և այնպես նրանց հեռացրին այդտեղից, և էլ ոչ ոք չկար կասսին մոտիկ:

Մեր ծանոթը հանեց ժամացույցը: Գնացքը պիտի դուրս գար մոտակա կայարանից: Հանկարծ հնչեց դրսի զանգը և նրա ղողանջը խլացավ մի զարհուրելի աղմուկի մեջ: Պերրոնից, դահլիճներից, փողոցից հետ եկավ բազմությունը, որպես պղտոր հեղեղ: Թռան նստարանների վրայով, թռան բազաժի կշեռքի վրայով, թռան նույնիսկ իրենց շալակի կապոցների վրայով: Իբրև թե հրդեհվում է պերրոնը, դահլիճները, փողոցը, բոլոր պատուհաններն ու դռները, և մխի ու ծխի ալիքների մեջ իբրև փրկության փարոս կանչում էր միայն կասսի փոքրիկ դոնակը, որտեղով միայն պիտի դուրս գնար այդ բազմությունը: Եվ ով արագ թռավ, եղավ առաջինը, ով ճխլեց մեկի ոտքը, մյուսի փորը, եղավ երկրորդը, ով խուրջինը բռնեց ատամներով, որ թևերը ազատ լինեն, եղավ երրորդը, ով իբրև սառցահատ կտրեց թևեր ու թիկունք, եղավ չորրորդը, և իրար հետևից մյուսները իբրև բարժ, բարկաս, առագաստանավ,

Նապակ և հասարակ տախտակ, որպիսին եղաւ 5-րդ նոմերի տերը:

10 Ծթն ութնյակով գրած պոեմ լիներ այս գործը և ոչ արձակ պատմութիւն, հեղինակը այստեղ ութ տող կամ ավելի բազմակետ կշարեր և ընթերցողին կթողներ հերթն էլ, աղմուկն էլ, մեր ծանոթին էլ, և ինքը մի կողմ կքաշվեր: Թող ընթերցողը պատկերացներ, թե ինչպես խառնվեց սահմանված կարգը, ինչպես հետինները եղան առաջին և առաջինները վերջին, ինչպես հարեան սենյակներից վրա հասան ուղևորներ, որոնք մինչև այդ ուղտի պես չոքել էին լավաշի առաջ և կամ քնել էին շնորհանքների վրա, եկան և գրավեցին տեղերը և իբրև նվաճողներ շճանաչեցին ոչ մի կարգ, ոչ մի կանոն, որ սահմանել էին նրանից առաջ, հերոսական ջանքերով սահմանել էր մեր ծանոթը և նրանով հմայված բազմութիւնը: Նվաճող բարբարոսների միացան և դանաղանցի, քավթառքոսեցի և քյալարեցի դավաճաններ, որոնք ոտնակոխ արին հայրենի կարգը, այսինքն մեր ծանոթի բաժանած նոմերները և պշում թողեցին միամիտներին, որոնք ուշացան, ինչպես հիմար կույսներ:

20 Ընթերցողը նաև թող պատկերացնի այն ժխուրը, որ բարձրացավ, երբ հնչեց շարաբաստիկ զանգը: Կանչում էին, որովհետև նոմերները խառնվել էր, կանչում էին, որովհետև կատաղութիւնից ավելի անգութ էին իրար սեղմում (մեկի կացինի կոթը արդեն մտել էր դիմացինի շեքի մեջ): Վերջապես կանչում էին իրար, որովհետև անակնկալի հետևանքով մեկի փողը մնացել էր մյուսի ձեռքին, կապոցներն էին խառնվել, և թվում էր թե թիփի բորան էր և թանձր մառախուղ, ու կոնչում են իրար կորցրած կռունկները:

30 Ու կանգնել էր իբրև քարե սյուն մեր ծանոթը: Քունքերի մոտ միայն դեղին մազերի երկու փունջ շարժվում էին, կարծես այդտեղից պիտի դուրս գային եղջյուրներ կամ ու վիտի ինչպիսի շտեմնված բան և նորից պիտի սանձահարեր հողմը: Նա ուզեց մի քայլ անի դեպի առաջինը և հանեց բլուկնոտը, որ կարդար ազգանունները, երբ հանկարծ անեծքի, հայհոյանքի, ատելութիւնի և նախատինքի մի ամբողջ ծով տրաքեց նրա կողմը: Կարծես ժխորի առաջին պահին նրան շէին տեսել, և բլուկ-

նտոր եղաւ կարմիր փալաս, և ծառս եղան գազազության ցու-  
լերը:

Անհնար է մի առ մի գրել նրանց ասածները, որովհետև բո-  
լորը միանգամից էին գոռում, և լսվում էին միայն առանձին  
բառեր, ինչպես օրինակ՝ «Դժոխքի շուն, Կայնի կոտորչ», և զա-  
նազան թիկունքներից ցցվում էին բռունցքներ: Մեկը պինդ  
թքեց և ասաց, որ իբր թե նրա ուսումի վրա է թքում: Այդ նա է,  
որ կես ժամ առաջ իղձ ուներ ուտելու նրա ուսումի «որոշ մա-  
սը»: Հայհոյում էին և նրանք, որոնք հուսախաբվել էին նրա  
«մեննձրվոր» լինելու մեջ, սակայն դեռ պինդ բռնել էին նրա բա-  
ժանած նոմերները, իբրև թալիսման:

10

— Քո կուշտ կերած օր զատկի իրիկուն էղնի,— ասաց  
«հինգ նաֆարից բաղկացած չքավոր գաղթականը», որը բավա-  
կան հետ էր ընկել:

— Իշալլահ հետ շղառնա...

— Խաբարըդ քոռ ակուսվը բերի...

— Դաստեմ քուքուրդ դնեմ հոգուդ, դժոխքի կոճ, ա՛յ օ-  
դու... էսման էլ բողոթեն,— խանձված հոգով մղկտաց 5-րդը,  
որը այժմ այդ հսկա ողնաշարի ամենավերջին ողն էր, մի  
չնչին կճիպ:

20

Եվ ո՛վ հրաշք... Մեր ծանոթը հաստատ քայլեց դեպի ա-  
ռաջինը, որ տիզի նման փակչել էր կասսի դռանը: Ամբոխը գա-  
զազեց, ոռնաց՝ «հեռո՛ւ, հեռո՛ւ...»: Ներս մտավ միլիցիոները,  
որ մինչ այդ դուրսը ֆայտոնչի Հաջի Գևոյի հետ «ուսուլ խո-  
րաթա» էր անում:

Միլիցիոները մոտեցավ մեր ծանոթին, որովհետև միայն  
նա էր հերթից դուրս:

— Քաղաքացի,— և թևը բռնեց,— օչերեդ կայնի...

Նրանք նայեցին իրար՝ կարգի և միօրինակության ուխտյալ  
զինվորը և կարգապահության զինվորը: Նախկին 5-րդ նոմերի  
տերը շարախինդ քրքջաց, երբ մեր ծանոթը դարձավ վերջին  
ողը:

30

— Էլի քեզնեն առաջ եմ...

Կասսը աղմուկով բացվեց:

## 2. ՎԱԳՈՆ ՄԻ ԺԱԺ ԳԱՐ

Սլուժքի պոռովի է, հանաք մասխարութեն լի...

Կոնգրուկտուր Արաաշ

Չորրորդ ուայո՞ն, «հայոց ուայո՞ն...»:

10 Ընթերցող, եկե՛՛լ եք դուք հեռու վայրերից արագընթաց գնացքով՝ կապույտ շոգեշարժը գլուխը, և շքնաղ, ապակեպատ վագոններով, որտեղ ամեն մի նստարան խնդրում է, որ մի քիչ նստեք և մաքուր պատուհանից դիտեք սլացող դաշտերը, ստանիցները և սարաֆանով աղջիկներին, որոնք արծաթահնչյուն ծիծաղով ճանապարհ են գցում ձեզ: Տեսե՛՛լ եք այն գուսպ ու կիրթ ձևերը, որով խոսում է ձեզ հետ վագոնավտորը, և ապա հետո մտե՛՛լ եք այն մյուս գնացքը, որ ձեզ տանում է չորրորդ ուայոնի սահմաններով դեպի Երևան, դեպի Զսլֆա...

Չորրորդ ուայո՞ն, «հայոց ուայո՞ն...»:

20 Որքան էլ պախարակեն քեզ վագոններիդ համար, որքան էլ ասեն, թե երբեմն ապակիները ջարդված են, և կպատահի, որ էլեկտրական լամպի փոխարեն ճրագուի մոմ վառեն, որքան էլ խիստ կոշտությամբ հրեն կոնդուկտորները մթնում վագոնները փնտրող պասսաժիրներին և խոսեն նրանց հետ անըմբռնելի ժարգոնով— այնուամենայնիվ, քո երաժրշտությունը շունի ոչ մի էքսպրես: Հողի՞ցն է, օդի՞ց, թե՞ այն ջրից, որ խմում է շոգեշարժը,— չգիտեմ, միայն թե քո վագոնները հագեցված են մի բույրով, որ հիշեցնում է քամուց և արեվից խանձված կավահողը:

30 Գուցե այդ բույրը ոչ հողիցն է, ոչ ջրից և ոչ էլ շոգեշարժի խմած ջրից, այլ այն յուղից, որով օծում են անիվները, սոնիները, որոնք այնպես, «ազգային հանգով», ներդաշնակ ճվատում են, ճոճում, սիրտ մաշելու շափ տնքում և մղկտում: — Տա՛նում են, աղե ջան, տա՛նում են...

Ահա խոր մրափի մեջ է անպլացկարտ մի վագոն: Ալագազը ամպերի մեջ է, և դուրսը անձրև է մաղում, և անձրևը թմբկահարում է վագոնի թիթեղյա կտուրը, և ջուրը նովդաններից թափվում է, ինչպես գյուղի աղբյուրի ծորակից: Լուսա-

գեմ է, լուսադեմի քաղցր քուն, այն էլ չորորդդ ուսյունի սահմաններում: Քնել են այնպես, կարծես մայրենի օդան է գլորվում ամալի դուրանում: Մեկը խուրջինը դրել է գլխատակը, պարաններով կապկպել և պարանի ծայրը սեղմել բռունցքում: Կուպենների կիսամթնում երևում են գլուխներ, առանց իրանի, որովհետև իրանը թաղված է կապոցների, սնդուկների, բալուկների, մաֆրաշների, բարձերի, տաշտերի և էլ ինչպիսի ամանների և բեռների կույտի տակ, ազդրեր՝ ոտքերով և առանց ոտքի, իրաններ առանց գլխի, որովհետև գլուխը կապոցների արանքում մի տեղ է կոխել և խոռացնում է՝ թևերը 10 փռած իրերի վրա: Ահա մայրը կերակրում է երեխային, օրորում է ճոճքը և մի տխուր երգ է դնդնում, մի ուրիշը փռել է լվացքը, իսկ մի խաթուն մարե, որ անքուն է մնացել ամբողջ գիշերը, միտքը դրել է սամավարը գցի:

Սակայն դեռ լուսվում է և խոր մրափ: Եթե կան արթուն պահակներ, որոնք հսկում են իրերը, նրանք ճակատները հենել են պատուհանի սառն ապակուն և նայում են դուրսը, ամպի մեջ կորած լեռներին, ամալի դաշտերին, ուր անձրևը մաղում է ցուրտ տխրությամբ: Միայն մի քանի հոգի, որոնց սիրտը մորմոքել է ինչ-որ հիշատակ, թախիծ և անձկություն, 20 կանգնել են տամբուրների վրա և փակ դռների ետևը, անիվների միալար շափով բարձր-բարձր երգում են խեղճ երգեր...

Եվ ահա ներս է մտնում ինքը, կոնդուկտորը, ներս է մտնում և բղավում.

— Վաշ բլեթ...

Վերջացավ լուսվումը, քունը, նիրհը, անիվների օրորը: Ծրեխան բերանը պոկեց մոր կրծքից, խաթուն մարեի լյարդը ցամաքեց, քնաթաթախ վեր թռան նրանք, որոնք քնել էին կտուրի տակ և հանկարծ արթնանալուց գլուխները թրխկացրին կտուրին: 30

Սակայն ցավ չզգացին, որովհետև ներքևը կանգնել է ինքը, ֆանառով մարդը և կանչում է՝ «վաշ բլեթ...»:

Ահա շարժվեցին կապոցների կույտերը, գլուխները նրստեցին իրանների վրա, և իրաններին միացան ոտքեր և ձեռքեր, որոնք հուզված սկսել էին փնտրել տոմսերը, որ մի

հատ չէ, երկու հատ չէ: Ահա մեկը ներկայացրեց, և կոնդուկտորը քննում է տոմսը ֆանառի լույսով, նայում է ասեղով ծակծկված քվեքին և տոմսի տիրոջը, կարծես ստուգում է, թե արդյոք նա՞ չի ծակծկել: Իսկ տոմսի տերը հլու-հնազանդ նայում է, կարծես գլխին կախվել է մի փորձանք, որ եթե անցնի, նա հանգիստ շունչ պիտի առնի և բաց անի ճանապարհի պաշարը: Մի ուրիշը փնտրում է բոլոր գրպանները, ստիպում է, որ կինը, մայրը ևս փնտրեն. շարժում են ծանր կապոցները, կիսամթնում ձեռքերը քսում են գետնին, և բոլորի հուզմունքը բարդանում է, կոնդուկտորն անհանգստության նշաններ է ցույց տալիս, և հանկարծ երեխան հիշեցնում է, որ հայրը բլեթները շափղալի մեջն է կոխել:

10

Կոնդուկտորն անցնում է մյուս կուպեն և այնտեղ մի կին ուրախությունից բարձր կանչում է, որ կոնդուկտորն իր եղբոր հարսի եղբայրն է և թոթվում է ձեռքը:

— Քա կեցի՛, հաց կե՛, Արտաշ... — Թախանձում է կինը:

Այդ լուրը տարածվում է ամբողջ վագոնում, և հանգստություն է իջնում մարդկանց հուզված հոգիների վրա, և իրար հաղորդում են, թե Արտաշը մեր եզանի հորեղբայրն է, Արտաշը օրթաքիլիսեցի սև Յագորի միջնակ տղան է, մայրը մաստարեցի: Իսկ Արտաշը կարծես դժգոհ է, որ միամիտ կինը պատուհն նրա խորհրդավորության վարագույրը, և նույն լրջությամբ շարունակում է ստուգել տոմսերը: Ահա նա անցնում է մյուս կուպեն և կինը, որ շտապ բաց է արել սուփրեն, նորից է կանչում:

20

— Չի եղնի, խնամի... Պռավիլը պազվուլիտ չի էնի... Սլուծբա է, հանաք մասխարութեն չի:

— Քա մի թիքամ...

Չորրորդ ուայոն, «հայոց ուայոն...»:

30

Որբան էլ սիրենք քո գնացքները, քո պասաժիրներին և «պռավիլը» պաշտպանող կոնդուկտորներին, այնուամենայնիվ, այստեղ մենք հրաժեշտ պիտի տանք բոլորին և մոտենանք միայն մի պասաժիրի, որ վաղուց է անշարժ նստել անկյունում, և չի իմացվում, քնա՞ծ է, թե արթուն, որովհետև, ինչպես սասաց Արտաշը, մերն էլ «սլուծբա է, հանաք մաս-

խարութեան չի», և չի կարելի այսպիսի լիրիկական զեղումներ ունենալով հեռանալ մեր ծանոթից, որին մենք վերջին անգամ տեսանք կասսի առաջ, իսկ այժմ ահա նստած է մի մութ անկյունում և չի իմացվում քեան՞ծ է, թե արթուն, լսո՞ւմ է, որ դուրսը մազում է անձրև:

Վակզայի պատահարը նրա հիշողութիւնից ցնդել էր: Մեր ծանոթը, որին վերջին անգամ ենք այդպես կոչում, որովհետև մեկի հետ ծանոթանալու և նրա ով լինելը իմանալու ամենահարմար վայրն առհասարակ ճանապարհն է, մանավանդ շորրորդ ռայոնի երկաթուղին, որտեղ սրտակից բարեկամութեան շատ դաշինքներ են կնքվել,— մեր ծանոթը վերլուծել էր ամբողջ պատահարը և որակել իբրև «կազմակերպչական թերութիւն», գտնելով նաև «սկզբունքային տարածայնութեան որոշ տարրեր» (5-րդ նոմբրի դիրքը): Բանն այն է, որ նրա համար այդ երկու բաժանումների վրա էին կոթնում աշխարհի, նրա շրջապատի և նրա գլխով անցած բոլոր իրադարձութիւնները: Նա ոչ միայն երկրպագու էր կարգի ու միօրինակութեան, մոլեգին սիրահար պատրաստի սխեմայի, այլև ուներ մտածողութեան մի առանձին ընթացք, իրերը և երևույթներն ըմբռնելու մի յուրահատուկ ձև: Նա չէր մտածում, այլ առաջարկում էր և կամ առաջարկը կատարում: Նա մեծ երկրպագու էր վերջակետների, պարագրաֆների, թվերի և դիագրամների և մանավանդ ստորագրութիւնների: Եվ եթե պատահեր, որ ինքը ստորագրեր, մանավանդ այնպիսի թուղթ, որ սկսում է սուլյնն ստանալուց առաջարկվում է ձեզ անհապաղ» և վերջանում «ժամկետ 3 օր» բառերով,— միայն այդ դեպքում նրա դեմքը պայծառանում էր և երկար ժամանակ ցցված էին մնում երկու քունքերի դեղին մազերը:

Բայց ո՞վ է նա, անունը, ազգանունը, սոցիալական դիրքը, հասարակական ծագումը և ո՞ւր է գնում: Ինչո՞ւ համար,— կհարցնի ընկ. Քիթիպիոսը և լուսանցքում նշան կդնի, որպեսզի հանի այստեղից մի մեղադրական ցիտատ ի պետս իմաստավորման և արժեքավորման: Մի բոպե, և մեր պատմութեան նախը կանցնի աշուտութեան Խարիբդայի և անտաղանդութեան Սցիլլայի արանքով:

10

20

30

Ահա բարձրացավ նա և հանեց ժամացույցը, հաշվեց հեռագրասյունները և որոշեց գնացքի արագութիւնը, հետո նայեց անկարգ նստած պասաժիրներին, իրերի խառնափնթոր կոշտերին և հանեց բլոկնոտը: Ինչո՞ւ այս մեկը պետք է փոփի, իսկ մյուսը նստի կրունկների վրա, ինչո՞ւ մեկը բաճկոնը հանած հանգիստ գրուցի, իսկ մյուսը կուշ գա շինելի մեջ: Եվ նա որոշեց կարգ սահմանել: Սակայն հազիվ էր մի քայլ արել, երբ կտուրի տակ պառկած մեկը գոռաց.

— էլի շխրատվեցի՞ր...

10 5-րդ նոմերն էր: Մյուս կուպեից մեկը ձայն տվեց.

— Մացո, վե՞՞վ է...

— էս գիշերվա փեղեղվանգը:

Երկու քյալարեցի իջան թախտերից:

— Կճանչե՞ս,— գոռաց նրանցից մեկը և նոմերը հանեց:— էսիկ էլ աշե,— և մեկնեց պատուված թևը: Քյալարեցին սուզում էր ասել, որ բլուզի թևը պատռել էր հերթի մեջ:

— Ընչի՞ հանեցիր դավթարը,— հարցրեց մյուսը:

Մարդը հետ քաշվեց և նստեց տեղը: Այստեղ կար և՛ «սկզբունքային տարածայնութիւն», և՛ «կազմակերպչական թերութիւն»: Իսկ նրանք սկսեցին կուպեում պատմել, որ նա խաբեբա է, կարող է և շիբկիր է, առհասարակ մութ մարդ է: Խաթուն մարեն այս խոսքի վրա վեր կացավ և համրեց բոլոր կապոցները:

— Պզտի մաֆրաշը շեմ տեսնի, մանչս,— և մարեն ձեռքերը ծնկներին խփեց: Իսկույն լուրը տարածվեց, որ վագոնից երեք մաֆրաշ և երկու սնդուկ գողերը տարել են: Բոլորն սկսեցին իրերն ստուգել, ոմանք նույնիսկ սնդուկները բաց արին:

— Քա տակդ է, մարե,— կանչեց մանչը: Պառավն ուրախութիւնից օրհնեց «Յոթ վերքի» զորութիւնը: Մի ուղևոր, որ պատահաբար անցնում էր այդ վագոնով, լուրը տարավ մյուս վագոնները և ավելացրեց, որ իբրև թե շորերի մեջ քնած է եղել մի երէխա և նրան էլ տարել են իրերի հետ, որ իբրև գողերից մեկին արդեն բռնել են: Եվ պասաժիրները պահանջում էին սոցիալական պաշտպանութիւն գերագույն պատիժը:

Վերջապես եկավ ինքը, Արտաշը, որ վերջացրել էր «արխողը», եկավ և նստեց Խաթուն մարեի՝ իր խնամու սուփրի մոտ:

խորհրդավոր պասսաժիրի մասին նրան տեղեկացրին: Խաթուն մարեն Արտաշի ականջին կամաց փսփոսաց, թե չի՞ լինի նրան մի հանգով մյուս վազոնը կորցնի, որովհետև գիշերը վատ երազ է տեսել ինքը, և սիրտը կասկածավոր է: Արտաշն ասաց.

— Ձի էդնի, խնամի շան... Սարիտ չի էնե, բլիթը թամամ, ուրիշ նարուշեննի պռավիլ շունի, պրիշինմ չկա, որ էնեմ...

Ինչպես ցեխը չի կեղտոտում մարմարը, այնպես էլ այս խոսակցություններին անուշադիր էր ընկեր Իգնատիոս Պեդեյանը, մետրիքական անվամբ Իգնատիոս Մատթևոսյանը կամ «Ինքնահոս Մաթոսը», ինչպես կոչում էին նրան դասընկերները 10 այն վաղնջական ժամանակներում, երբ վտիտ երեսը միշտ պեպենոտ և պզուկապատ մի տղա էր ինքը, առանձնությունների, խորհումների և պատանեկան մեղքերի երկրպագու: Նաև հայտնի է, որ նրա հայրը եղել է դագաղագործ, թե մեռելաթաղ, «արհեստավոր», ինչպես գրում է իր անկետաներում Իգնատ Պեդեյանը: Բերանացի ավանդվում է, թե իբրև նա եղել է հանդուգն աշակերտ և իր ուսուցչի կողմից անվանվել է «Որդի-որոտման», դասերը շտվորելու և դասադուլ քարոզելու համար:

Բայց այդ բոլոր տեղեկությունները մութ անցյալին են պատկանում: Ստույգ է, որ դեռ պատանի հասակում նա քայլում էր գլուխն ամպերի մեջ, չէր ծիծաղում, չէր ժպտում, լաց չէր լինում և չէր սիրահարվում, չէր կարդում, աշխատանք չէր սիրում և միայն քամի էր կուլ տալիս: Ստույգ է նաև այն, որ դեռ շատ փոքրուց նա վարժվում էր մարդկանց հպատակեցնելու և հպատակվելու նրանց առաջ, որոնք կարող են օգնել իրեն մտքում դրած նպատակների համար: Նրա առաջին հպատակը եղել է պառավ շունը, որ օր ծերության նրա հրամանով անցնում էր հատուկ ձողի վրայով, կանգնում էր ետևի թաթերի վրա և առաջին թաթով դինվորական պատիվ տալիս: Հետո եղան աղավնիները, ապա թաղի մարդիկ, և մի օր էլ տեսավ, որ շորս-շորս շարքերով մի բազմություն ինչ-որ տեղ է գնում, որ վերջի շարքում մեկի տեղը պարսպ է, և ինքը՝ «Ինքնահոս Մաթոսը», Որոտման որդին, անխոս գրավեց այդ տեղը, և այդ օրից փշրվեցին նրա բոլոր հին անունները, և նա դարձավ Իգնատ Պեդեյան:

Երկար կլինեն պատմել նրա ամբողջ կյանքը, թե ինչպես աղվամազը կոշտացավ, գլխի մազերն ավելի դեղնեցին, ինչպես նեղ ճակատի վրա շարվեցին բազմաթիվ կնճիռներ, որոնք նույնիսկ իջան քթի ուղղութեամբ, և ինչպես այդ բոլոր արտաքին ավերածութունների և փոփոխութունների հետ անփոփոխ մնաց նրա ներքինը, ավելի ճիշտ, ամրացավ նրա մեջ այն համոզումը, թե մարդիկ նույն թվերն են. 9-րդն ունի 8 հպատակ և խոնարհվում է 10-րդի առաջ, որ ավելի հեշտ է հրամայել, քան մտածել, «միջոցառումներ կիրառել», քան համառ աշխատել:

10 Ահա մոտենում է այն կիսակայանը, որտեղ նրան սպասում է մի պառավ ձի, և նրա տերը՝ Եթիմ Մանգասարը, որին այդ մասին կարգադրել էր «Ստավրապոլի» լիազորը: Ինչո՞ւ է գնում Որոտման որդին այն գյուղը, որ ընկած է շատ հեռու և որին հասնելու համար պետք է մի ձմեռվա օր ճանապարհ գնալ: Հողաշա՞փ է նա, բժիշկ, ագրոնոմ, ագիտատոր, ուսուցիչ,— ամենևին ոչ: Նա «կցված է սույն գյուղին աշխատանքները աշխուժացնելու», ինչպես ասված է նրա վկայականի մեջ:

20 Եվ գնում էր նա հեռվի գյուղը, գլխի մեջ պլաններ, թվեր, առաջադրանքներ և կազմակերպչական եզրակացութուններ, տախտակներ տոկոսներով և առանց տոկոսի: Նրա գլխի մեջ պտտվում էր «միջոցառումների» մի շարի, որ կառուցել էր ինքը մասերի դաժան միօրինակութեամբ: Եվ այդ զարմանալի մի շարի էր: Նրա յուրաքանչյուր ձողիկը կարթ ուներ, որ կարող էր միայն մի երևույթ կամ մի խնդիր դուրս հանել կյանքի աղմկոտ ծովից: Ձայն էր հանում ձողիկը, ինչպես բառաչում է ձուկը, և այդ ձայնից նա հասկանում էր անելիքը: Միայն երկու դեպքում ժխորաձայն աղմկում էին Իգնատ Պեդեյանի շարխի բոլոր ձողիկները. երբ կարթը հանդիպում էր «կազմակերպչական թերութեան» կամ «սկզբունքային տարաձայնության»:

30 Նրա հռչակավոր բլոկնոտի մեջ, եթե կարելի է ասել, Պեդեյան համակարգութեամբ դասավորված էին բոլոր խնդիրները և նրանց լուծումը, ինչպես սրվակները դեղատան դարակներում: Եվ չի կարելի ասել, թե անօդուտ էր այդ սրվակների պարունակութունը. նրանց մեջ կաին և բուժիչ միջոցներ: Սակայն փորձված ճշմարտութուն է, որ ամենաթույլ հարը մահաբեր է, եթե ընդունվի ձիու դողայով:

Իշավ գնացքից, սառը նայեց ձիատիրոջը և, երբ գնացքը կիսակայանի վրա թողեց ծխի բարակ շերտ և հեռացող անիվներին խուլ դղրդոց, Որոտման որդին ձիու գլուխը դարձրեց դեպի հեռվի լեռը և ասպանդակեց ձին:

### 3. ՄՏԱՎՐԱՊՈՒԸ ԵՎ ՆՐԱ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

*Տե՛ս՛ ևս գյուղը հովտի մեջ մենակ  
Ու շուրջը փակած հին աղբակույտեր...*

#### Հովճ. Քումանյան

Մովի մակերեսից 2337 մետր բարձրության վրա ընկած է այն գյուղը, որի տեղը Շոպենի ժամանակվա քարտեզի վրա նշանակված է Քյառա-Հեյդար-Ուշաղի անունով: Այդ մասին կա և մի ավանդություն, թե իբրև առաջին բնակիչը եղել է Հեյդար անունով մեկը, որի ականջը կտրել է խանը և թաղել կուրգանի տակ, իբրև հողերի սահման: Եվ որպես թե այդ «Քյառա», այսինքն ականջը կտրած Հեյդարի սերունդն են գյուղի բնակիչները: Այս պատմությունը ստույգ կլինի, եթե ընդունենք, որ Հեյդարը հայ է եղել, որովհետև դեռ Շոպենի ժամանակ այդտեղ հայեր էին ապրում: Սակայն մոտակա գյուղացիք այդ բնակավայրին անվանում են Զկոուտ, իսկ բնիկները՝ Բովեր: Սակայն մեզ հաճելի է նրա մյուս անունը, որ տրվում է 1917 թ. հետո՝ «Ստավրապոլ», որի դրդապատճառը եղել են տեղացիներից մի զինվորի անվախճան կրկնվող պատմությունները Ստավրապոլ քաղաքի մասին, որ նա պատմել է մյուս գյուղերում ևս իսկ հայտնի է, որ գյուղերում իրար հանդես մնացած սովորություն կար՝ ավելացնելու ծաղրական «փակ անուն» կամ «մականուն», որի մի օրինակին մենք պատահամա՞ք հանդիպեցինք առաջին գլխում, երբ ականատես էինք «իշու ախպեր» քյալարեցու և «կախ շալվար» հոռոմցու բանակովին: Ինչևէ, կարելի է այս բոլորը մոռանալ, միայն հարկավոր է հիշել, որ «Ստավրապոլ» անվան տակ թաքնված է Բովեր գյուղակը, ծովի մակերեսից 2337 մետր բարձր:

Բովերը՝ գյուղ, գյուղակ... Մենք գրեցինք այս տողերը և գգացինք մի ներքին խայթ, որ ճիշտ շենք կատարում մեր

«սլուծբի պռավիլը», ինչպես կտսեր օրթաքիլիսեցի Արտաշը, և թաքցնում ենք այն ճշմարտութունը, թե այժմ չկա այլևս «Ստավրապոլը», այսինքն՝ Բովերը, բոլորովին չկա աշխարհի երեսին: Բայց մեզ հանգստացնում է այն, որ այն երեկոյան, երբ ընկեր Իգնատ Պեդեյանը, նույն ինքը Որոտման որդին, մտավ այս գյուղը՝ հեծած Եթիմ Մանգասարի ձին, դեռ շեն էր «Ստավրապոլը», և նրա 21 երգիկից ծխի հորդ քուլաները ողջունեցին նրա մուտքը՝ ձգտելով դեպի երկինք:

- Այդ մի սքանչելի ժամ էր, երբ ներքևի խոր հովիտների վրա
- 10 նստել էր աշնան ամպը, իսկ լեռների գագաթները ոսկով ողողել էր արևը: Հովիտի բնակիչները ամպերի միջից շէին տեսնում արևը, իսկ լեռան մարդիկ տեսնում էին, թե ինչպես է ծրխում և ծփում ամպերի ծովը և շարժվում, իբրև հրդեհվող անտառ: Այս և նման հրաշալի տեսարաններ այժմ էլ կրկնվում են և հավիտյան կլինեն, քանի մնա արևը, լինեն բարձրագագաթ լեռներ և անդերպախոր հովիտներ: Այժմ էլ կարելի է բարձրանալ Բովերի սարը և այնտեղից դիտել արևածագը, տեսնել, թե ինչպես դաշտն ընկղմված է լուսաբացի խավարի մեջ, և եղգնուտների արանքում լույս է տալիս Արաքսի արծաթ գոտին, այնինչ
- 20 Արարատի սառույցներն արդեն հրդեհվում են արևից, գագաթը որպես պղնձածուլ վահան արտացոլում է արևի կրակը հալվող աստղերի վրա, ինչպես հնոցի բոցը մութ երկնքում: Այդ ժամին գուցե հանդիպեք մի լեռնային նապաստակի, սակայն էլ չեք տեսնի այն բարակ իրան և բարձր հասակ ծերունիներին, որոնք լվացվում էին առվի ջրերում և փառք տալիս ծագող արեվին, ինչպես հին արևորդիներ:

- Հեռու տարավ մեզ քմահաճ գրիչը, և եթե նրա շնորհիվ գլխապտույտ արեց մեր միտքը, թող ներվի մեզ ի սեր արևի և
- 30 2337 մետր բարձրության, որի գագաթին անվարժ մարդը միշտ զգում է հաճելի գլխապտույտ:

Ահա մայր մտնող արևից հուզվել են «Ստավրապոլի» քաղաղները և «հին աղբակույտի» գագաթից փչում են հավաքի ժամը: Գերեզմանատանը մի կաղ ոչխար շճած կազնել է և շգիտե վերադառնա փարախը, թե՞ մի քիչ էլ արածի: Արդեն լվանում են կովկիթները երեկոյան կիթի համար, և վերջապես

մանր աղջիկները ավլում են տները,— սակայն երկու ծերունի պառկել են արևադարձ պատի տակ, պառկել են իբրև հին գերաններ: Նրանցից մեկը նայում է ներքև, դեպի ձորը, իսկ մյուսի մարմինը ցնցվում է ծիծաղից և աչքերը ջուր են լցվում:

Այն մեկը, որ նայում է ձորին՝ Ղուրդի Իսոն է, նրա կողքինը Առշանց Սիմոնը, որ «ավել» անունով հայտնի է նաև Շալվարի Սիմոն: Իբրև թե Սիմոնի հայրը ասել է, թե երբ ինքը խնձոր ուզի, ուրեմն մահն է: Ու մի օր հայրը գալիս է վարատեղից, եզների առաջ խոտ գցում և որդուն ասում.

— Սիմոն, հե՛յ... էգուց մի շելակ խնձոր բեր...

10

Տնեցիները լաց ու կոծ են անում, մազերը քանդում, երեսներն արյունվա անում, իսկ նա անվրդով հանում է տրեխները և պառկում: Լուսաբացին Սիմոնը գնում է խնձորի: Սարի դագաթ և խնձորի կարոտ... Գնում է Սիմոնը դաշտի գյուղերը, մի ծանոթի բազ: Խնձորն առնում է, բայց որովհետև պարկը մոռացել էր հետը տանելու, հանում է բրդի շալվարը, փոխքերը կապում, լցնում խնձորով և բարձրանում սարը: Գյուղի մոտ նրան հանդիպում է հոր թաղման թափորը: Լացախառն գոռում է Սիմոնը:

— Ապի հե՛յ... Բա շվարինս ս՛վ կոտի,— և անունը այդ օրից մնում է Շալվարի Սիմոն:

20

Այդ երկու ծերունիները՝ Ղուրդի Իսոն և Շալվարի Սիմոնը, Բովերի հին բնիկներից էին: Արդեն վաղուց նրանք անաշխատունակ էին, մահը մոռացել էր նրանց, ինչպես ասում էր Ղուրդի Իսոն, և իրենց օրը անձանձրույթ մթնեցնում էին հին պատերի տակ՝ քանի արև կար և թոնրի կողքին՝ երբ սարերում ոռնում էր բուբը: Նրանք երկրորդ մանկութունն էին ապրում, և հին օրերի միամիտ պատմութունները լցնում էին նրանց խաղաղ առօրյան:

Քիչ առաջ այդպիսի մի դեպք էր պատմել Ղուրդի Իսոն իր ընկերոջը և ծիծաղից Սիմոնը թուլացել, ցնցվում էր, թեև երևի հազար անգամ լսել էր այդ դեպքը հենց իր՝ Ղուրդի Իսոնի բերանից:

30

Դեպքը եղել էր առաջ, Իսոնի շոբան ժամանակ: Իսոնի շունը խեղդում է հարևանի կյոճուն՝ խոզի ձագին: Գործը հասնում է պրիստավին: Իսոնին կանչում են, հարցնում դեպքը:

253

— Աղա,— ասում է Իսոն,— դու որ մեր Բողարը լինես, ես էլ մի փափուկ կյոճի, առաջովդ անց կենամ, համփ չէ՞ս անի...

Այս է դեպքի եղելութունը, որից այնպես թուլացել էր Սիմոնը: Երբ ծիծաղը բարակեց, Սիմոնը կոթնեց արմունկի վրա և ծոր տալով հարցրեց.

— Իսո, յանի ղորթ ասեցի՞ր...

— Բա շասեցի...— և լռելուց հետո երանության հառաչով հիշեց իր շունը:

10 — Լա՛վ հեյվան էր մեր Բողարը,— և աչքերը, որ ձորի կողմն էին նայում, փորրացան, նա լարեց իր տեսողութունը նշմարելու ձորի այն կողմը երևացող ձիավորին:

— Սիմոն, հե՛յ...

— Հե՛յ...

— Գեղը հրե ձիավոր ա գալի...

— Աղբրի փոսի է՞ն կողմն ա, թե էս:

— Հրեն կախ ընկավ Աղբրի փոսի վրա:

— Ճանապարհը շիլ ընկած չլինի՞:

— Քանի՞ շիլ գցեն, է՛... Մենք ժողովուրդ չենք, օրենքի դավթարում չկա՞նք:

20 Դուրդի Իսոյի այս դառնութունն ուղղված էր Օրթոցի դեմ, որտեղ «նստում էր» նրանց գյուղխորհուրդը, որովհետև Բովերը միայն լիազոր ուներ, որ հենց Իսոյի թոռն էր, Ավագը: Օրթոցը մեծ գյուղ էր և գտնվում էր Բովերից ձախ, 11 վերստի վրա: Եվ ի՞նչ 11 վերստ, անվախճան ձոր ու ձորակ, քար ու քարափ. Օրթոցի բնակիչները նեղում էին Բովերին: Գոնե այդ համոզմանն էր Դուրդի Իսոն, որը թոռանը միշտ հորդորում էր «բաժանվել» նրանցից: Երբ Սիմոնը առարկեց, թե ձիավորը կարող է «շիլ» ընկած լինի, նա ականարկում էր այն մասին, թե ձիավորը պիտի գնար Օրթոց և սխալմամբ է Բովերի ճանապարհը բռնել: «Աղբրուրի փոսը» վճռական տեղ էր, այստեղ էր ճանապարհը բաժանվում: Սակայն փոսի այս կողմը ձորից դուրս եկան ձին ու ձիավորը:

30 — Արա Սիմոն, էս հո մեր Եթիմի ձին ա, էն էլ հրեն Եթիմը,— և հանկարծ ձեռքը գլխին խփեց այնպես պինդ, որ Սիմոնը տեղից վեր թռավ, կարծելով թե փորձանք պատահեց ձիավորի հետ: Նրանք այնքան մտոցեցել էին, որ Սիմոնն էլ ճանա-

չեց Ծթիմ Մանգասարի ձին: Բայց Ղուրդի Իսոն շտեց նրա վկայութիւնը և գլխին նորից իփեկով ասաց.

— Այ հուշ եմ ասել հա՛... Մեր ընխան երեկ իրա բերանով ասաց՝ պապի, գեղը մարդ ա գալու: Էս ա որ կա... Հմի, որ գլխի եմ,— ասաց և փայտին հենվելով վեր կացավ:

— Էդ ա, քո ասածն ա լինելու...

— Իմ ասածը ո՞րն ա, որ հենց էդ ա...— և Ղուրդի Իսոն պատի հետևն անցավ, կարճ ճանապարհով, այսինքն կտուրների վրայով հասնելու տունը, որպեսզի կտրի գլխից կանչի մոտակա բոստանում կարտոֆիլը փորոզ Ավագին:

10

Մինչև Սիմոնն էլ վեր կենար, ձիավորը հավասարվեց նրան: Եվ սանձը պահելով հարցրեց.

— Ո՞վ եք:

— Բարի օր, գալուստդ բարի,— և Սիմոնը ձեռքը մեկնեց:

— Ձեռք սեղմելը արգելվում է,— պատասխանեց ձիավորը,— որովհետև շարխի մի ձողիկը զրնգաց այն ազդը, որը փակցված էր առբաժնի գրասենյակում: Սիմոն ապերը լավ շտեց, ավելի ճիշտ շհասկացավ, և նրա մեկնած ձեռքը իջավ ձիու քրտնած բաշին:

— Ա՞յս գլուղից եք...

20

— Հրամաներ ես. էս գլուղից ենք, էս էլ մեր բինազարանը:— Լեզուն փոխեց Սիմոնը, փայտը մեկնելով մոտակա խրքճի կողմը, որի կտուրին ինչ-որ կարմիր բան էր փռած:

— Այն ի՞նչ է,— և ձիավորը զարմանքով տեսավ, որ մյուս կտուրներին էլ կան փռված:

— Էն վյուլուկ ենք ասում, էն էլ հուն ա:

— Արդյունաբերական նշանակութիւնը...

— Դե էսպես ա դրա նշանակութիւնը, որ ձեռքը շորվա ենք եփում, վյուլուկը սխտորում ենք, ապրում է ժողովուրդը, թե չէ դա ինքը մի ոչնչութիւն է, ոչ թե մի նշանակութիւն:

30

Սակայն այդ ժամանակ մի ուրիշ ձողիկ ազդարարեց, թե գլուղացիների հազորդած տեղեկութիւնները ճշտութիւնը կախված է նրանց որ խափին պատկանելուց: Եվ ձիավորը հարցրեց:

— Ո՞ր կատեգորիայից եք...

— Կատեգորիայից...— և Սիմոնը ժպտաց,— դե քո ամուսնը հողը մեր կողմերը չկա... Հողը Օրթոցի հողն է, էստեղ

255

քար երկիր է, բայց շնորհակալ ենք, էլի ամեն կատեգորիոց տվել են, բայց դե էլի քարը...

Եթիմ Մանգասարի ձիու քթովն ու վ գիտե ինչ հոտ ընկավ, գուցե լսեց գոմի դռան ձայնը և հանկարծ պոկվեց դեպի փողոցը: Սիմոնը նրա հետևից կանչեց, որ ձին աղբյուրը շտանի, որովհետև ձին քրտնած է, բայց ձիավորը չսեց, ավելի ճիշտ չկարողացավ լսել, իսկ ծարավից նեղված ձին գլուխն առավ դեպի աղբյուրը:

10 Աղբյուրի մոտ հարս ու աղջիկ մի կողմի վրա քաշվեցին: Նրանք աչքի տակով դիտեցին օտարականի բոլորովին օտարոտի կերպարանքը, պայուսակը, որ մեջքին կապած էր այն բուսից, երբ տնից դուրս եկավ, և նրանցից ոմանց ամոթխածութունը զգացվեց, երբ տեսան արադ և անվարժ քշելուց մինչև ծնկները վեր քաշած շավարը, վարտիքի տուտը և բրդոտ սրունքները: Հանկարծ այն կողմից մի տղա վազեց և ձիու գլխին խփեց այն բուսին, երբ ձին ծարավից տոշորված մոտի՞ր կոխել էր սառը ջրի մեջ: Ձին հետ-հետ քաշվեց, ձիավորը, որ թույլ էր նստած մեջքի վրա, ծովեց, ապա ամբողջ մարմնով կախվեց մի կողմի վրա: Եվ բղավեց.

20 — Ի՞նչ ես անում,— բայց տղան շրջվեց և նրան բարձրացրեց: Կանայք ակնհայտ կերպով իրենց համակրանքը ցույց տվին ճարպիկ տղային: Ձիավորը ձեռքը տարավ բլրկնոտին՝ նշանակելու ներկաների թիվը, գուցե և ազգանունը, բայց տղան սանձից բռնեց և ձիու առաջն ընկավ:

— Սատկած, հրես ապին գա կողերդ շարդի...

Իսկ ապին, այսինքն Եթիմ Մանգասարը իր հորեղբայր Սիմոնին այդ բուսին գանգատվում էր, թե ինչպես վազեցավ է եկել, ինչպես «էն ընկերը» ձին քշում էր և չէր թողնում, որ ինքը ձորը բարձրանալուց ձիու պոչից կախվի:

30 — Ձէ, զորբով մարդ է երևում, Մանգասար... Լավն էդ ա, թող մի քիչ շար լինի, դրանից վնաս չկա:

Ձիավորը, նույն ինքը Իգնատ Պեղեյանը, այնքան էր հոգնել ճանապարհից, բարձրաթիվ տալավորութուններ այնպես էին խոնկել նրա գլխում, որ խոսել անգամ դժվարացավ: Տղան ձին պահեց մի դարպասի առաջ, իջեցրեց նրան և ձին քաշեց: Հետո հեղձն մոտեցավ մեկը և նրա ձեռքը թոթվեց:

— Ո՞վ եք...

— Ես գյուղխորհրդի լիազորն եմ...

— Ավագն ա, մեր թոռը, — կտուրից կանչեց Ղուրդի Իսոն:

— Վերջապես, — մտքում ասաց Որոտման որդին: Ահա նա, այն օղակը, այն պաշտոնական օղակը, որից բռնած կարող է վեր բարձրացնել, շտկել, ուղղել, լրացնել կազմակերպչական ձեռնարկումների և միջոցառումների գլխավոր շղթան: Եվ նա մեկնեց իր վկայականը: Ավագը սրտնեղեց.

— Ներս մտեք, հանգստացեք... Մենք ձեզ վաղուց էինք սպասում:

10

Վկայականը ձեռքին ներս մտավ Իգնատը մի մութ օդա, և ներս մտնելուց թվաց, թե գլխին իջավ մի ծանր հարված: Նա հազիվ բռնեց գլուխը և հենվեց պատին: Գող անցավ մարմնով, և մթնած գիտակցության մեջ մի կասկած հանկարծ զարթնեց, թե չլինի՞ իրեն ուրիշի տեղ են ընդունում կամ ինքն է կայարանում սխալմամբ նստել այն պառավ ձին և ոչ թե մի ուրիշը, որ, ով գիտե, նրան բուրբուխն ուրիշ ուղղությամբ պիտի տաներ: Ապա կասկածն այլ ձև առավ, և թվաց, թե բուրբ սարքովի է, նախօրոք կանխամտածված սխեմայով, և կայստեղ դավադրական պլան. որ այն ծերունին պարզապես լրտես էր և հետևից կանչեց, որ դուրս գա այն սղան, որ գուցե նրան աղբյուրի մոտ ուղեց սպանել, բայց երկյուղելով բերեց այս մութ որջը և շեմքի վրա փայտի բուխ հարված իջավ գլխին:

20

— Ճրագ վառեք, — լսվեց մի ձայն...

— Էն անտերը մի քիչ տաշեիր... Տասն անգամ ասեցի, — հանդիմանեց Ղուրդի Իսոն, թեև առաջին անգամն էր հյուրի գլուխը տրաբում իր դասն սեմին:

— Դուք լիազորն եք, — հարցրեց հյուրը:

— Է՛հ, ինչ լիազոր, փոքր գյուղ է, էլի, կառավարում ենք...

— Ախլի, շոր քցեք...

30

Մութ անկյունից դուրս եկան երկու կին, մեկը փռշոտ ավելում սրբեց ցածլիկ և լայն թախտը, մյուսը փռշոտ թաղիքը այնպիսի թափով փոնց, որ ճրագի լույսը նվաղեց: Հետո բերին հաստ և պողպատի ծանրության ներքնակը: Հյուրը թիկնեց:

— Ախլի, բարձ ողբեք, — կարգադրեց ծերունին:

— Կնեռեք, է, ընկեր... — և Ավագը կմկմաց.

257

— Ինձ անվանում են Իգնատ Պեղեյան:

— Ընկեր Պետոյան:

— Պեղեյան:

— Հա, ասում եմ տեղներս մի քիչ անհարմար է... Հեռու տեղ է, ամեն բան չի ճարվում,— արդարացավ Ավագը:

— Ուրեմն օբյեկտիվ պատճառ,— և տեղը շտկվեց: Չարխը ֆոռաց, և մի ձողիկ զրնգաց. «անհուսալի հիմար է նա, ով ընդունում է օբյեկտիվ պատճառ»:

— Պատճառը նա է, որ սարի գլուխ է,—բացատրեց Ավագը:

10 Տիրեց լուսթյուն: Ղուրդի Իսոն, որ միամիտ խորամանկությամբ ամեն կերպ աշխատում էր սիրաշահել հյուրին, համոզված էր, որ դրանից օգուտ կստանա իր թոռը՝ Ավագը, իր մոտիկ բարեկամները, որոնցից մի քանիսը արդեն ներս էին եկել և ողջունելուց հետո պատի տակ նստոտել: Ղուրդի Իսոն խոսքը դարձրեց Օրթոցի կողմը, գանգատվեց, որ Օրթոցի կոոպերատիվն ամեն ինչ ստանում է, իսկ իրենց բաժին չի հանում, որ այնտեղ «հակահոգի» մարդ շատ կա, իսկ իրենց գյուղում ամենքը «ասու գառներ» են՝ անհովիվ, անլեզու, և որ իրենք շատ ուրախ են, որ կառավարությունը Բովերը չի մոռացել և ուղարկել է «քեզ պես» մարդու:

20 — Նեղություն էլ կտեսնես, աղքատություն էլ... Արդար աչքով նայի մեր ապրուստին, ևս գյուղի բոլոր հանգամանքներին և եղիր դու մեզ բարի դատավոր:

Սիրտ առնելով իր բարեկամների խրախուսանքի խոսքերից, Ղուրդի Իսոն իր ողջունը վերջացրեց առակով:

— Չորան կա, որ ոչխարը հետևից գնում է, թեկուզ ծովն էլ թափի: Չորան էլ կա, որ աղ էլ տա, ոչխարը չի մոտենում, որովհետև իժի պոզին խփել է... Ավագ, քեզ էլ եմ ասում...

— Է, պապի, ասել եմ էդ հին խոսքերը թող,— և Ավագը զայրացած նայեց պապի երեսին: Վերջինս, որ արդեն ոգևորվել էր և ուզում էր «երկու վագրի և Շահ Հյուսեյնի» առակն էլ սսի, սրտնեղեց և գնաց մութ անկյունը, որտեղ կանայք ընթրիքի պատրաստություն էին տեսնում:

30 Ամբողջ այս միջադեպի ընթացքում Իգնատ Պեղեյանը ոչ մի ձայն չարձակեց: Նա պայուսակից հանել էր ընդարձակ հարցացուցակը, ինչ-որ անկետաներ, մի գրքույկ, որի վերնա-

գիրն էր «Հրահանգներ գյուղաշխատավորի», վերջապես՝ բլուկնոտ և ուշադիր ընթերցում էր այն բոլոր հարցերը, խնդիրները, որ պիտի իրագործեն դաժան համառությամբ, պիտի քննէր, աշխուժացնէր, թարմացնէր, շեշտ դնէր, իմաստավորեր և այլն, և այլն:

Հոգնութունի՞ց էր, թե այն հարվածից, որ ստացավ գլուխը սեմի փայտից, գուցե և տան գաղջ օդից, որ ավելի էր ծանրանում պատի տակ շարված գյուղացիների կծու ծխախոտից, — գուցե մի ուրիշ պատճառ կար, — համենայն դեպս Իդնատ Պեղեյանի աչքերը փակվում էին, զգում էր մի անսովոր վիճակ, ինչ-որ խորհրդավորութուն էր տեսնում մարդկանց շարժումների և խոսքերի մեջ, և թվում էր, թե տեսնում է անիրական երազ կամ երազախառն իրականութուն:

Այլևս չէր դառնում շարխը:

Ահա այստեղից էլ սկիզբ են առնում այն դեպքերը, որ նկարագրված են հաջորդ գլխում և որտեղ որպես իսկական հերոս հանդես են գալիս Որոտման որդին ու տանտիրոջ հորթը:

# ԽԱԶԱՏՈՒՐ ԱՐՈՎՑԱՆ

ԳԱՏՄԱԿԱՆ ՎԵՂ

(Պահպանված հատվածներ)

«ԼԻՔԵՐ ԱՐՄԵՆԻԵՐ»

1

10 Ոչ Սուրբ Իոհաննի տաճարը, ոչ գրանիտե դղյակը, որտեղ ըստ ավանդության ապրել է շվեդների Գուստավ Ադոլֆ թագավորը և ոչ էլ Քարե կամուրջը, որ կապել էին Ստեֆան Բատորիի ժամանակ,— չէին ստեղծել այն հռչակը, որ ուներ Գորպատը մի դար առաջ: Օստգեեի երկրներում կային այլ ուրիշ քաղաքներ, որոնք ավելի հնամյա հնություններ ունեին, քաղաքներն ավելի բազմամարդ էին և բնակիչները կարող էին ցույց տալ դաշտեր, որտեղ տեղի էին ունեցել այնպիսի ահեղ պատերազմներ, որոնց հետևանքով ոչնչացել էին ամբողջ թագավորություններ,— բայց այնուամենայնիվ հռչակն, ինչպես անակնկալ փառք, բաժին էր ընկել այդ խուլ քաղաքին, որ ընկած էր էմբախի երկու ափերի վրա:

20 Գորպատի այդ հռչակը ստեղծել էր արքայական համալսարանը՝ կառուցված Ալեքսանդր I-ի կայսրության օրոք: Այլևս չկային սուրբ Գիոնիսիոսի տաճարի ավերակները, որ երկու դար կանգուն էին Դոմբերգի գագաթին և դեռևս հեռվից երևում էին նրա կիսավեր պարիսպները: Տաճարի ավերակների վրա կառուցել էին համալսարանի մատենադարանը, իսկ ավելի ներքև,

որտեղ եղել էր Գուստավ Ադոլֆի Academia Gustaviana-ն, բարձրանում էր Մայր Ճեմարանի սյունադարձ շենքը, սպիտակ կրաքարերից, շրջապատված լորինների և կաղնիների անտառով, որտեղ գուցե դեռևս մնում էր մի նահապետ կաղնի, որի սաղարթն աղմկել էր դեռ այն ժամանակ, երբ էմբախի ափերին չկար ո՛չ Իոհաննի տաճարը, ո՛չ գրանիտե դղյակը և Քարե կամուրջի փոխարեն գետի ափերն իրար էին միանում կաղնու գերաններով:

Երբ փորում էին նոր շենքերի հիմքը, փորողների բրիչները և բահերը գետնի տակից հանում էին դեղնած ոսկորներ, հողով լցված գանդեր, որոնց աչքերի փոսերից քուրս էին սողում անձրևային կարմիր ճիճուներ: Նրանք կծկվում էին արևի տակ, ապա ներս մտնում գանգի խոռոչը: Փորողները գտնում էին տեգեր, նիզակների կտորներ և կավե կարասի: Եվ որովհետև ավելորդ էր նոր գերեզմաններ փորել նրանց համար, որոնք, ո՞վ գիտե, ինչ մարդիկ էին և ինչ ազգի էին և մեռել էին որպիսի մահով,— որովհետև ոչ մահարձան ունեին նրանք և ո՛չ տապանագիր, ուստի բոլորի ոսկորները լցրին մի փոսի մեջ, ծածկեցին փոսը և հուշարձանի մարմարի վրա քանդակեցին հետևյալը:

«Այստեղ հանգչում են ոսկորները զանազան ժողովուրդների XIII դարից մինչև XVIII դարը: Գորպատը նրանց հողին հանձնեց սուրբ Մարիամի մատուռի մոտ: Նրանց գանգերի վրա Ալեքսանդրը կառուցեց մուսանների նոր օթևան: Նրանց է հատկացվում այս վայրն ի հանգիստ և ի խաղաղություն: Anno domini MDCCC VI»:

Գորպատն ուսանողների քաղաք էր («Burschenburg»): Վեց հազար բնակիչներից երեք հարյուրը ուսանողներ էին՝ «ձեռունահարկի բնակիչները», ինչպես նրանց մասին արտահայտվում էր պոլիցեյմեյստեր գնդապետ Կրուչինսկին: Համալսարանի պրոֆեսորների, սպասավորների և պեդեգոգների հետ միասին (այդպես էին կոչվում այն կես ուստիկան կատարածուները, որոնք ենթարկվում էին կուրատորին և որոնց պարտականությունն էր հսկել համալսարանի ներքին կարգապահությունը),— ուսանողները կազմում էին պետություն պետության մեջ, որոնցից զուրկ էին Ռուսական կայսրության մյուս համալսարանները:

10

20

30

Գուստավ Ադոլֆ թագավորի սահմանած կանոններից մի քանիսը դեռ ուժի մեջ էին Դորպատի «ակադեմիական քաղաքացիների» համար: «Իմ կրած վիրավորանքների համար,— այսպես էր երգվում նոր ընդունվող ուսանողը,— ես վրիժառու չպիտի լինեմ ըստ անձնական քմահաճույքի ո՛չ հայտնի կերպով և ո՛չ զաղտնի. այլ թե այսպիսի, ինչպես և ինձ համար ուրիշ այլ դժվար դեպքերում ես պիտի ենթարկվեմ ռեկտորի կամ համալսարանի սենատի որոշման: Համալսարանից ես կարող եմ հեռանալ միայն ռեկտորի բարեհաճ համաձայնությամբ և, եթե ենթարկվեմ կալանքի, չպիտի խույս տամ այդ պատժից: Տնային կահ-կարասին և իմ բոլոր իրերը ես քաղաքից պիտի հանեմ միայն իմ պարտատերերին ինչպես հարկն է բավարարելուց հետո»:

10

Բայց և այնպես «ձեղունահարկի բնակիչները», եթե առիթ լիներ, գերադասում էին իրենց կրած վիրավորանքների համար տեղն ու տեղը դատաստան անել, ըստ «անձնական քմահաճույքի»— բռունցքներով, թրադաշույններով և սուսերներով, քան ըստ տառի օրինաց դիմել համալսարանի ռեկտորին: Նրանց համար «Պատվո դատարանի» բանավոր վճիռն ավելի զուրավոր էր, քան համալսարանի տրիբունալի սահմանած պատիժները, որոնց հանդեպ կար լեւլյայն ընդունած այսպիսի վերաբերմունք. նա, ով կարցեր չի նստել, ում շին դատապարտել concilium abiundi-ի («պայմանական վտարման») և, վերջապես, ում անունը թեկուզ մի անգամ չի արձանագրվել ավագ պեղելի մատյանում,— նա ոչ թե ուսանող է, այլ նպարավաճառի որդի, մի խեղճ հրեա, որին բոլորը կարող են արհամարհել— նրա հետ մեղրագինի չխմել, չզնալ նրա տունը և առհասարակ նրան ճանաչել հետնյալ մարդ:

20

30

«Այն պրոֆեսորները, որոնք որևէ արարքի հետևանքով այլևս հաճելի չեն ստուգենտներին, լավ կանեն, եթե իրենց տան պատուհանները բացեն ոչ թե փողոցի, այլ բակի վրա»,— գրել է պոլիցեյմեյստեր Կրուչինսկին Օստոգեբի գեներալ-նահանգապետ մարկիզ Լուչինիին.— «Այստեղի ստուգենտն իրենից բարձր ճանաչում է Աստծուն, ապա թաղավոր կայսեր և ապա իրեն և այլևս ուրիշ ոչ ոքի («Der Herr Goott, dann der Kaiser von Russland, dann der dörrtsche Bursch...»): Պարտք

եմ համարում նաև հայտնել, որ նրանց վրա դաստիարակիչ ազդեցութիւն չեն թողնում այն պատիժները, որ երբեմն սահմանում է կուրատորներէ կոլեգիան և կամ թե համալսարանի սենատը: Նրանց համար կարցերը ոչ թե պատժարան է, այլ զվարճութիւն վայր և հազվադեպ չէ, երբ գիշերը կալանավորին այցելում են նրա ընկերները՝ խմիչքով, նվագով և նույնիսկ մարկիտանտ աղջիկներով, որոնց, աննկատ ներս տանելու համար, հագցնում են ուսանողական մունդիր: Հնարավորութիւն չկա մի առ մի թվել այն մանր հանցագործութիւնները, որ կատարում են «ձեղունահարկի բնակիչները», մանավանդ, որ այդ հանցագործութիւնների մեծ մասը մնում է անհայտութեան մեջ, որովհետև տուժող կողմը, վախենալով նրանց վրեժխնդրութիւնից («Verschiss»), հաճախ իսպառ չի դիմում օրենքի պաշտպանութեան:

19

Այսպես օրինակ, երբ անցյալ տարի մեզ տեղեկութիւն հասավ, որ աստվածաբանական բաժանմունքի ուսանող Կարլ Ֆոն Զիվերինգն իր երեք ընկերներով, նոյեմբերի 14-ի երեկոյան, երբ փողոցում երթեկեկութիւնը դադարել էր, հարբած վիճակում մտնում է պաշտոնաթող կապիտան Կուրոչկինի բնակարանը և, օգտվելով պարոն կապիտանի ժամանակավոր բացակայութիւնից, վերջինիս երիտասարդ աղջկանը զրկում է կուսութիւնից, — տեղեկանալով այդ մասին հենց հոր, պաշտոնաթող կապիտան Կուրոչկինի բանավոր գանգատից, ես կամեցա գործին ընթացք տալ, ինչպես պահանջում է օրենքը: Բայց ի զարմանս մեր, մյուս օրը մեզ ներկայանալով, պարոն կապիտանը հայտնեց, որ այդպիսի պատահար չի եղել և որ ինքն առհասարակ չունի երիտասարդ աղջիկ, և այն աղջիկը, որ ապրում է նրա տանը, ոչ թե նրա աղջիկն է, այլ նրա օրինավոր կինը: Սակայն մենք ստուգելով իմացանք, որ պարոն կապիտանը հուզված վիճակում ընկել է դժբախտ թշուրիմացութեան մեջ, շփոթելով իր կնոջը, որը նույնպես երիտասարդ է, իր հարազատ աղջկա հետ, որ ծնվել է պաշտոնաթող կապիտան Կուրոչկինի այժմ հանգուցյալ առաջին կնոջից: Իսկ որ աստվածաբանական բաժանմունքի ուսանող Կարլ Ֆոն Զիվերինգը, 27 տարեկան, չամուսնացած, Լիֆլյանդիայի ազնւականի որդի, — ունեցել է այդպիսի բռնադատ կենակցու-

20

30

թյուն, հաստատվում է նաև նրանով, որ վերոհիշյալ Կարլ Ֆոն Արվերինգը Ֆրաու Ֆոգելզանգի պանդոկում ընկերներին պատմել է եղելությունը, խոստանալով ամուսնանալ թշվառ աղքատ հետ:

«Փողոցներում նրանք երբեմն երևում են անվայել և տարօրինակ զգեստներով, մազերը խճճված, գլուխներին ոչ թե գլխարկ ըստ սահմանված տարազի, այլ այնպիսի այլաձև և գույնզգույն գլխանոցներ, որ վայել է միայն թափառական գնչուններին, և ոչ թե արքայական համալսարանի ուսանողներին: Նրանք քայլում են սեղմ շարքերով, առանց կոճկելու մունդիրը, ոմանք նույնիսկ առանց ծիլետի և փողկապի. մայթերից հրում են նրանց, որոնց շին սիրում և պատահում է, որ ծեծի են ենթարկում մի հանդուգնի, մանավանդ ռուս աստիճանավորի, որ ինքնասիրությունից և պաշտոնի պատվազգացությունից դրդված չի կամեցել ենթարկվել հարբած ուսանողների քմահաճույքին: Այսպիսով նրանք խանգարում են ոչ միայն կարգը մեր հսկողության հանձնված քաղաքում, այլ և անպատվում են կայսերական համալսարանի բարձրագույն անունը: Թեև նրանց արգելված է գիշերները վառած լապտերներով երևալ փողոցներում և կամ մի տնից մյուսը գնալ, բայց նրանք մինչև անգամ լապտերներից վառում են սիգարները, ինչպես և ծխամորճերը և օրենքի դեմ անպատկառ խոսքեր ասելով շարունակում են անպատիժ զբոսնել: Իսկ թե նրանք ինչեր են անում հասարակաց զվարճության վայրերում, դրա մի աննշան վկայությունը կարող է լինել հետևյալը, որին և մենք ականատես եղանք:

«Ազնվականների «Աֆրոդիտա» ժողովարանում, որտեղ ներկա էին բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաներ և զինվորականներ, նաև ժանդարմական գեդապետ Դոնցովը,—  
30  
երբ սկսվեց դիմակահանդեսը և վերոհիշյալ բարձրաստիճան պաշտոնյաների մեծ մասը առանձնացավ հարևան սենյակը վիստ խաղալու, թողնելով, որ մյուսները զվարճանան,— ներս է մտնում անհայտ ոմն, փաթաթված սև դոմինոյի մեջ: Այն ժամանակ, երբ դահլիճում յուրաքանչյուր ոք շրջում էր իր դիմակով և յուր ընտրած տարազով, սև դոմինոյի մեջ փաթաթված անհայտ ոմն մոտենում է մի խումբ

կանանց, որոնց մեջ լինում են ուսուցիչներ Ռոզենցվեյգի կինը՝ ջայլամի նման հագնված, լանդգերիհտի ավագ դատավորի երկու աղջիկները՝ կապուցին վանականների զգեստով, կուրատոր ֆոն Յանաուի կինը և դուստրը՝ առաջինն իբրև բեռնային արջ, իսկ երկրորդը սուլթանի հարճի զգեստով,— անհայտ ոմն հանկարծ դեն է շարտում սև դոմինոն և հարգելի տիկիներին, նաև նրանց դեռատի աղջիկներին ցույց է տալիս Ադամի զգեստը: Կանանց աղմուկի վրա մենք դուրս թափվեցինք սենյակներից, բայց անհայտ ոմն արդեն շքացել էր, կուրատորի աղջկան, որ սուլթանի հարճի զգեստով էր, 10  
թողնելով ուշագնա վիճակում, որպիսին,— ինչպես հավաստիացրեց նրա մայրը, նաև օգնութան հասած զինվորական բժիշկ Վերետեննիկովը,— առաջացել էր սարսափից և ամոթխածութան հարվածից: Արդեն ուշ էր, որպիսզի կալանավորին շարադրածին, որի ով լինելը մինչև օրս չի պարզված և միայն կուրատորի վերոհիշյալ դուստրը պատմել է, որ անհայտ ոմն է համալսարանի ուսանող Ֆրիդրիխ անունով, բայց ինչպես է ազգանունը՝ չի հիշում: Մեր մտադրությունը՝ հարցաքննել համալսարանի 23 Ֆրիդրիխ անունով ուսանողներին, նաև 24-րդին, որի անունը Ֆրիդրիխ չէր, այլ Ֆրեդերիքս,— չի բաժանում ժանդարմական գնդապետ Դոնցովը, որը, հակառակ բոլոր իրական ապացույցների, այդ պատմությունը համարում է հետևանք կանանց ջղերի արտակարգ գրգռվածության և զգայականության, իսկ անհայտ ոմնին՝ աննյութեղեն տեսիլք, որը երևացել է կուրատորի դատեր աչքին:

«Լինելով անհանգիստ բարձր տեր և ունենալով ազատ ժամանակ,— նրանք դյուրաբորոք են պարապությունից: Բավական է մեկը մյուսին անվանի «dummer Junge» և ահա պատրաստ են էսպաղոնով մենամարտելու: Իսկ եթե անվանեց 30  
«Hundsott», այն ժամանակ էսպաղոնին փոխարինում է պիստոլետը, որ շատերն ունեն և մինչև անգամ կան այնպիսիները, որոնց բնակարանը բոլոր տեսակ զենքերի արսենալ է: Շատերի դեմքը պատած է սպիներով, նաև ծեփոնով, որ հետևանք է սուսերի կամ հրազենի հարվածի: Դժբախտաբար տնտեսները, վախենալով ուսանողների բանադրանքից,

չեն հայտնում թե զենքերի և թե տեղի ունեցող մենամարտերի մասին:

«Վերոգրյալն առաջանում է նախ այն պատճառով, որ պարոն պրոֆեսորները փոխանակ նրանց առաջնորդելու գիտություն ճշմարիտ ճանապարհով, ոչ միայն թերանում են իրենց պարտականությունների մեջ և չեն ներշնչում բարոյական դաստիարակության ոգի, այլ և նույնիսկ ոմանք հրահրում են իրենց սաների բնավորության հոռի կողմերը, և իրենք են հանդիսանում վատ օրինակ, ինչպես հանդուցյալ

**10** ռեկտոր էվերսը, որը չնայած զառամյալ հասակին, սուսերամարտի դահլիճում մասնակցում էր վարժություններին, երիտասարդներին անընդհատ խրախուսելով սուսերը պատյան շղնել, մինչև այն շներկվի ախոյանի արյունով:

«Երկրորդ պատճառը մեր հրամանատարության ներքո եղող ոստիկանական մասի խիստ սակավաթիվ լինելն է և վատ սպառազինումը, որի մասին անցյալ տարվա հուլիս 7-ի № 2206 ռապորտով պատիվ ենք ունեցել զեկուցելու ձեզ: Ձիերը չեն ստանում հարկավոր ապուր, նրանց արտաքին տեսքն այնքան խղճալի է, որ երբ ձիավարժության ենք գնում մանեժի դաշտը, մեզ վրա ծիծաղում են ոչ միայն ուսանողները, այլ և մնացած ամբոխը: Նույնը կարելի է ասել ձիասարքի, նաև ձիավորների մասին, որոնց մեծ մասին վաղուց պետք էր քշել տները, որպեսզի նրանք հնդկացորենի դաշտում վախեցնեին ազոավներին և արևի տակ տաքացնեին իրենց կողերը:

«Ահա սրանք են երկու գլխավոր պատճառները, որ ես համարձակվում եմ ներկայացնելու Ձեզ ի բարեհաճ տնօրինություն»:

Մարկիդ Լուչինին ծածկաբար պատասխանել է. «Ձեր ռապորտը կարդացի հաճույքով: Երևում է, որ Գորպատի ուսանողները հասարակ շարաճիներ են, և նրանց մեջ չկան քաղաքական ցնորամիտներ, որոնք զբաղվեին ժամանակակից քաղաքականությամբ և լրագիր կարդային, ինչպես գերմանակտն համալսարաններում: Ինչ վերաբերում է նրանց հանցագործություններին, ապա դրանց մեծ մասն առաջանում

է անփորձ և տաքարյուն երիտասարդութիւնից, որի հանդեպ միշտ պետք է ներողամիտ լինել»:

2

Ուսանողներն ապրում էին առանձին թաղերում: Նրանք շատ հաճախ տներն զբաղեցնում էին ամբողջ կորպորացիաներով. այսպես Ռիդաշե փողոցում ապրում էին լեհերը, Պետերբուրգերշտրասսեի վրա՝ գերմանացիները, էմբախի գետեզրյա տնակներում՝ էստերը: Ավարտողներին փոխարինում էին նորեկները, որոնց հանդիսավոր ծեսով էին ընդունում կորպորացիայի մեջ: Նորեկը՝ մինչև ձմեռային սեմեստրի վերջը «Ֆուքս» էր, այսինքն ավագ ընկերների փոքրավորը. նրան էին ուղարկում գարեջրի, նրա վրա էին կրկնում այն կատակները, որոնց ժամանակին ենթարկվել էին նաև մեծերը: Գարնանային սեմեստրներին «Ֆուքսը» դառնում էր «բրենդեր» և արդեն կարող էր ավագների հետ սեղան նստել, նա արդեն երգում էր տրագիցիոն երգերը, ուներ սուսեր և հիթ ժրաջան էր, գուցե նույնիսկ մենամարտել էր «մինչև առաջին արյունը»: Այդպես մինչև «տարեդարձի կոմերջը», այն խնջույքը, որ լինում էր ապրիլի 21-ին: «Տարեդարձի կոմերջից» հետո բրենդերն իսկական ուսանող էր: Իսկ թե քանի տարի պիտի ուսաներ՝ հայտնի չէր ոչ իրեն, ոչ ռեկտորին և ոչ այլ ոքի...

Կային ուսանողներ, որոնք գալիս էին իբրև երիտասարդ և տուն էին վերադառնում երեխաներով, կնոջով, զոքանչով և այնքան սնդուկներով, որ հազիվ էին տեղավորվում երեք դորմեզի վրա. կային, որոնք այլևս չէին վերադառնում, այլ մնում էին Գորպատում իբրև «մամոռապատ գլուխներ» («bemooste Häupter»), իբրև մշտնջենավոր ուսանող, և նրանք ծերանում էին այն թաղերում, որտեղ հոսել էր նրանց ոսկյա երիտասարդութիւնը: Սակայն և՛ նրանք, որոնք վերադառնում էին ընտանիքով, և՛ նրանք, որոնք երբեք չէին վերադառնում, նաև նրանք, որոնք Գորպատից հեռանում էին ոչ դեպի հայրենիք, այլ ով գիտե ուր, նրանք բոլորը Գորպատ-

տում, կազմելով ազատ եղբայրութիւն, ապրում էին ինչպես կազակներն անծայրածիր ստեպաներում:

- Պատիվ, հայրենիք և ազատութիւն,— այս էր նրանց նշանաբանը: Կային ուսանողներ, որոնց համար գերագույնը միայն պատիվն էր, հայրենիքը՝ ծննդավայրը, ուր տոհմական ղղակում ապրում էր իշխանուհի մայրը և հայրը, որը շների ահագին բազմութիւնը գնում էր որսի, ուներ անտառներ, հողեր, ջրաղացներ և ճորտ գյուղացիներ, որոնք մշակում էին նրա կալվածքը և ահա նրանց քրտինքի վաստակից հայրը տարին մի անգամ, մեծ մասամբ աշնանը, հնամենի դորմեզը բեռնում էր զանազան բարիքներով, կառապանի կողքին նստեցնելով ծերունի սպասավորին, որի ձեռքի տակ էր մեծացել տիրոջ որդին՝ Դոռպատի ուսանողը, որին ծերունի սպասավորը համարում էր դեռևս անփորձ մանուկ,— ահա այդ սպասավորին էր պատվիրում խոտաբարո կալվածատերը. «կասես քո երիտասարդ պարոնին, որ մինչև հաջորդ բերքը մեզանից ոչինչ չըսպասի. ձմեռնամուտին կուղարկենք նաև վառելիքի փողը: Եվ թող ողջութեամբ ապրի մինչև մյուս աշուն»: Եվ հին ղղակի դռներից ձիերը դղրդոցով հանում էին ահագին դորմեզը՝ բարձած ալյուրի պարկերով, ապուխտած մսով, աղած և շոքացրած սունկերի բոլորներով, եփած և դեռ կենդանի սագերով, որոնք վանդակների մեջ թափահարում էին թևերը, կոնչալով վերջին հրաժեշտը հայրենի ջրերին: Հին ղղակի պատըշգամբից պառավ իշխանուհին դեռ երկար էր նայում դորմեզին, որ երբեմն հայտնվում էր անտառի եզրին, երբեմն կորչում էր, ինչպես միայնակ ուղևորը դեռ չհնձած արտերի արանքում,— և լաց էր լինում պառավ մայրը, որ ամուսնուց ծածուկ հավատարիմ սպասավորին հանձնել էր նաև մի փոքրիկ քսակ ոսկի և մի տաք շալ, որ գործել էին նրա պառավ նաժիշտները
- ձմեռվա ցուրտ գիշերներին՝ բուխարու առաջ իշխանուհուն պատմելով միամիտ պատմութիւններ նրա հարսնութեան տարիներից: Դեռ լաց է լինում պառավ մայրը, այնինչ դորմեզը վաղուց չի երևում և հոգնութիւնից ննջում է ծերունի սպասավորը, մտքի մեջ ամուր պահելով իշխանուհու ծածուկ հրահանգը՝ իմանալ, թե այն հեռու քաղաքում «տղան» արդյոք չի՞ գտել հարսնացու և չի՞ սպասում ծնողների օրհնութեան:

Քայց «տղան», որ երեսունի մոտ տղամարդ է և արդեն համարվում է կանդիդատ «հավերժական շտուդենտի», չի սպասում ծնողների օրհնության, այլ անհամբեր է դորմեզին և հին սպասավորին, որպեսզի օձիքն ազատի նպարավաճառներից, որոնք երկյուղելով, քայց այնուամենայնիվ «պարոն ուսանողին» հիշեցնում են նրա պարտքը. ուր որ է պիտի հայտնվի սպասավորը և երկու շաբաթ «տղան» պիտի լսի այն դողող ձայնը, որ նրան հիշեցնում է հայրենիքը և մանկութունը: Այդ ձայնը նրան պիտի պատմի այն ամենը, ինչ որ տանը պատահել է և որի մասին նրան չէին գրել, որովհետև իշխանը, ավելի ճիշտ սենեկապետը՝ իշխանի անունից տարին երեք նամակ էր ուղարկում, նրեք շնորհավորումն՝ Քրիստոսի ծննդյան, որդու անվանակոչության և դարձյալ Քրիստոսի հարության տոնի:

10

Աստվածաբանության ապագա բակալավրը երկու շաբաթ լսում էր այն մասին, որ Տուրք շունը իսպառ կուրացել է, և այլևս որսի չեն տանում, որ անցյալ ձմեռ իշխանուհու տաղավարում գայլերը հոշոտել են Մենտորի քուռակը, և դրա համար էլ իշխանուհին այլևս չի գնում տաղավար, որ այժմ հայրը ապրում է այն փոքրիկ սենյակում, ուր մի ժամանակ ապրում էր m-lle Annette-ն, որ...

20

Քայց մի՞թե հնարավոր է կրկնել այն բոլորը, ինչ պատմում էր ծերունի և շատախոս սպասավորը երբեմնի տղային, որին նա հանձնել էր հոր ուղարկած տարեկան ոռճիկը և մոր ծածուկ նվերը, և երիտասարդն արդեն վճարել էր իր բոլոր պարտքերը և նույնիսկ ֆրաու Ֆոգելզանգն էր ստացել իր բաժինը, պարոն աստվածաբանից հարցնելով նրա ծնողների առողջութունը, նաև թե չե՞ն ուղարկել լորենու մեղր, որ այնքան սիրում է ֆրաու Ֆոգելզանգը, — արդեն ամբողջ քաղաքում հայտնի էր դորմեզի գալուստը, և ծերունի սպասավորը հրեա կոշկակարի մոտ էր տարել «տղայի» մաշված կոշիկները և նրանից ծածուկ հարցրել էր իր պարոնի մասին, թե արդյոք նա շունի՞ մի հարսնացու, արդյոք դեպք չի՞ եղել, որ կոշկակարը նրա պարոնի պատվերով պատրաստի նաև կանացի կոշիկներ: Եվ ստացել էր նույն պատասխանը, ինչ որ անցյալ տարի. «Պարոն ուսանողը բարբո՛վ առաքինի է, խոհեմ և չի պատահել այդպիսի դեպք, այլ պատահել է, որ ինքը կարկատել է նրա

30

այնպէս մաշված կոշիկը, որ նույնիսկ ամոթ է ասել, թե ինչպէս մաշված կոշիկ... Իսկ կանացի կոշիկ կամ այդ սեռի համար կոշիկ ինքը չի կարելի և աստված մի արասցե, որ դեպք պատահի, որովհետև...: Սպասավորն ու հրեա կոշկակարը հին ամուրիներ էին և իրար երեսի նայելով, հասկանում էին, թե ինչ ասել է «որովհետև»...

Արդեն «հալիտեանական շտուղենտ»-ին ձանձրացնում էր ներկայութիւնն իր հին բարեկամի, որը ծերունու նվազած հիշողութեամբ երկրորդ անգամ էր պատմել Տուրոյի կուրանալը և արդեն մաքրել էր «տղայի» կոշիկներն այնպիսի յուղով, որի գաղտնիքը միայն նրան էր հայտնի, և որի փայլը կամար մինչև մյուս աշուն,— ծերունին արդեն մորթել էր սագերը և նրանց բմբուլով փափկացրել էր երիտասարդ պարոնի ներքնակը, անհայտ է, թե որտեղ լվացել էր նրա բոլոր շապիկները և կարելի կոճակները (նույնիսկ «տղան» էր հետաքրքրւում, թե արդյոք հենց ինքը՝ ծերունին չի՞ լվացել և չի՞ կարելի կոճակները գոմում, երբ քնած էր լինում հարած կառապանը, ձիերը խժռում էին գարին, իսկ ինքը...), կոճակները, որոնցից մի քանիսը, ինչպէս նկատում էր ծերունին, պոկվել էին վաղաժամ և անբնական եղանակով, իրենց հետ տանելով նաև զգեստի կտորից մի քանի թել:

Այդ բոլորն արդեն կատարվել էր, և ահա աշնան մի անձրևոտ օր ձիերը գլուխը դարձնում էին դեպի հայրենի գոմը, կայտառութեամբ քաշելով թեթևացած դորմեզը, որի մեջ դատարկ վանդակներ էին, պարկեր, սնդուկներ և կողովներ, նաև «տղայի» մաշված շորերի կապոցը, որ ծերունի սպասավորը, իբրև թանկ նվեր, տանում էր պառավ իշխանուհուն: Դղրդում էր դորմեզը, իսկ ծերունին ննջում էր, փաթաթվելով խարխլված բուրբի մեջ և աշնան տխուր անձրևի հետ միտք էր անում, թե այլևս քանի վերադարձ մնաց, և ի՞նչ պիտի ասի իր տիրուհուն հարանայուի մասին, որ պիտի գար ու չէր գալիս:

Նաև կային ուսանողներ, որոնց համար հայրենիքը միայն տոհմական դղյակը չէր և ոչ էլ ազատութիւնը՝ սանձարձակութիւն վատնելու այն բարիքները, որ անաշխատ կուտակում էին նրանց ծնողները և նույնքան հեշտ վատնում էին որդիները: Այդ ուսանողներից ոմանք ամենեկին շունեին հայ-

բենի կալված. նրանք աստիճանավորների զավակներ էին, որոնց ծնողները կամ դժվարութեամբ բարձրացել էին շինով-նիկութեան սանդուղքով և կամ կորցնելով երբեմնի կալված-քը, ապրում էին, վաճառելով վաղեմի հարստութեան փշրանք-ները. մի թուր, Դամասկոսի հազվագյուտ գործ, որ իբրև թե նրանց էր մնացել նշանավոր նախահորից, որը կովի էր սա-րակիտոսների դեմ, մի յուղաներկ նկար, որի վրայից նայում էր ադամանդե խուլորով մի շքնաղ կին, կրակե գուլնի գան-գուրներով մի զարմանալի գեղեցկուհի, որի կիսաբաց կուրծ-քը դեռ այժմ էլ պղտորում է նայողի արյունը, և չի կարելի առանց նախանձի դիտել այն քորոցը, որի վրայի ոսկե արծի-վը մագիլներով պահում է զգեստի եզրը և կնոջ ամոթխածու-թյունը: Ժառանգները չնչին գնով վաճառում էին Դամասկո-սի թուրը, նաև նկարը այն գեղեցիկ դշխուհու, որի արյունից քանի կաթիլ դեռ կար հետնորդների երակներում: Նրանք վա-ճառում էին հին մահճակալները, որոնց սնարի վրա նկարել էին երջանիկ Արկադիա, և Պանը սրինգ էր նվագում մի գույգի համար, որ ծաղկած նշենու տակ վայելում էր սիրո գարունը: Երևում էին փոքրիկ փոսեր, որոնք վկայում էին, որ այդ ըն-տանեկան երջանկութեան նկարը երբեմն եղել է սադափներով

10

եզերված, բայց մի անարժան ձեռք սադափը հանել է և վա-ճառել ալեիլի կանուխ, քան կվաճառեին վերջին ժառանգները: Սակայն ամենից խեղճ ապրում էին թոշակառու ուսա-նողները: Առաջինները գիտեին, որ այնուամենայնիվ պիտի ժառանգեն հայրական կալվածքը և այդ հույսով զբաղեց-նում էին ոչ թե ձեղունահարկ, այլ ապրում էին հարուստ բնակարանում և նույնիսկ նրանցից ոմանք սպասավորներ ունեին: Երկրորդների համար հին հարստութեան մնացորդե-րըն, այնուհանդերձ, ալեիլի լավ էին, քան ոչինչ շունենալը: Միայն թոշակառուներն էին, որ ծվարում էին ցուրտ ձեղու-նահարկում և իրենց գահի բարձրությունից արհամարհան-քով էին նայում և՛ աշխարհին, և՛ նրա գանձերին: Բայց նը-րանք մյուսներից ալեիլի մոլեգին էին զվարճանում, որով-հետև ըստ այն ժամանակի սովորութեան, երբ սեղան էին նստում բոլորը, բոլորն էլ դատարկում էին գրպանները. ով հանում էր թղթի ասիգնացիաների կույտը, ով կաշվի դրամ՝

20

30

271

«Կլուբեն-մարկտ», ու՛մ պղինձ գրողներ և ու՛մ դրամների այդ կուլտի վրա միայն դարձնում էր իր ունայն գրպանը:

- Այդ ուսանողները կատաղի սուսերամարտիկներ էին: Պս-լիցեյմեյստեր Կրուչինսկու հաղորդած «բոլոր տեսակի հրա-զենների արսենալը» գտնվում էր կղմինդրյա այն կտուրնե-րի տակ, որի բնակիչը, երբ տխուր անձրևը թմրկահարում էր կտուրը, կարոտով էր նայում թրադաշույնին, ապա առ-նում էր ՚ին գերմանական երկար սուսերը և ձանձրույթից մենամարտում էր սյունի հետ: Նրանք ջերմ պաշտպաններն էին տրադիցիաների և երբ հանկարծ լսեին ընկերոջ օգնության աղաղակը, թռչում էին կատաղած վագրերի նման և վա՛յ թըշ-նամուն, էթե նա վաղորոք չէր ազատի իրեն, ապավինելով արագավազ ոտքերին: Նրանք ունեին մի շոր գլուխ, որ ամեն բուպե կարող էին փորձանքի տալ: Գուցե թե մի հեռավոր նա-հանգի խուլ գյուղում նրանք մայր ունեին կամ հայր և կամ այլ ազգական, բայց ոչ նրանք գիտեին որդու մասին և ոչ որդին էր ՚իշում հեռավոր գյուղը: Նրանք ժառանգներն էին այն ըմբոստների, որոնք Վարաբուրգում խարույկի բոցերի մեջ վա-ռեցին խավարամիտ գրքերը և սուսերները մերկացրին՝ երդ-վելով պայթարել հանուն պատվի, ազատության և հայրենի-քի: Նրանց ականջների տակ դեռ հնչում էր որոտն այն գնդակի, որով Մանհեյմում ուսանող Զանդը սպանեց Ավգուստ Կոցերուին: Ու թեև նրանց օձիքների վրա ոսկեթելով գործ-ված էր «Humanitas» բառը, բայց նրանք ավելի նման էին ծովահենների, և հազիվ թե առանց պատժի նրանց ձեռքից ազատվեր մեկը, որ կհանդգներ անարգել նրանց հայրենիքը, Մայր Ճեմարանը և ուսանողների կորպորացիան:

- Ընկերները նրանց ավանում էին «սև եղբայրներ», որով-հետև նրանք հագնում էին սև «կրագեն»՝ երկար թիկնոցներ, որ իջնում էր մինչև կրունկը: Նրանց կարելի էր տեսնել տար-րինակ զգեստներով և գույնզգույն գլխարկներով, որոնց ծո-պերը կախվում էին ականջի վրա, մազերը մինչև ուսերը, — նրանք անցնում էին փողոցներով, հավաքվում էին հառապտ-վախտի առաջ և, ծխելով հաստ ծխամորձեերը, բարձրաձայն հրո-հրոտում էին, երբ նրանց կողքով անցնում էր մի հաստլիկ ուս եկին: Նրանք խառնվում էին հրապարակների բազմության, եր-

բեմն տեղն ու տեղը դատաստան էին անում մի հրեա նպարավաճառի, որը կամ կշեռքի մեջ խաբել էր, կամ ապրանքը մի գրողի թանկ էր ծախել: Հենց որ փողոցի անկյունում նրանք երևային, նպարավաճառներն իսկույն դադարեցնում էին աղմուկը, որպեսզի որևէ կերպ չգրավեն նրանց ուշադրությունը: Վերջապես նրանց խմբերը վերադառնում էին իրենց թաղերը՝ երգով և ծնօղաների նվագով և եթե խումբը նույնիսկ տասը հոգի էր, այնուամենայնիվ, նրանք փողոցը լցնում էին այնպիսի ազմուկով, որ կարծես անապատից շարժվել և ահավոր զորությամբ անցնում է վաչկատուն թափառականների մի ամբողջ բազմություն, և փողոցում լսվում է զենքերի շաշյուն, ձիերի դոփյուն, նախիրի բառաչ և ինչ-որ անծանոթ ռնգային հնչյուններ:

Փողոցի բնակիչները հետաքրքրությունից բարձրացնում էին պատուհանի վարագույրը կամ դուրս էին գալիս պատըզգամբ և գաղտագողի նայում էին տարօրինակ արտաբինով այդ երիտասարդներին, որոնց կրունկների պղնձե խթանները այնքան ախորժալուր էին զրնգում, և զրնգոցն արձագանքում էր կանանց սրտերում: Պատուհաններից և պատըզամբից դիտողների մեջ կային, որոնք դժգոհում էին այդ աղմուկից, կային, որոնք միայն դիտում էին, բայց և կային, որոնք հիանում էին: Եվ երբ նրանք վաղուց արդեն անցել էին, պատահում էր, որ մի մանուկ աղջիկ դեռ չէր իջեցնում վարագույրը, երկար ժամանակ դեմքը չէր հեռացնում պատուհանից և տխուր աչքերով նայում էր փողոցին, որտեղով անցավ այդ զարմանալի թափոքը...

### 3

Տրաու Տոգելզանգի պանդոկը, որի մասին հիշատակում է պոլիցեյմեյստեր Կրուչինսկին, գտնվում էր Ռեկլարասսեի վրա: Պանդոկն զբաղեցնում էր ներքնահարկը մի խաբխուլ տան, որի վերին հարկում ապրում էին նախկին ծովագնացներ, որոնք իրենց կյանքի արևմտեան անց էին կացնում ձկնորսությամբ և նավարկությամբ էմբախ գետի վրա: Գետը հոսում էր պանդոկի կողքով և այն ժամանակ, երբ նավավարները

կամ տանն էին, կամ պանդոկի ներքնահարկում, նրանց նա-  
վակներն օրորվում էին՝ կախված այդ հին տան պատերից:

Տունը թեև հին էր, և նշմարվում էին այն ճեղքերը, որ-  
տեղից արդեն սկսվել էր շենքի մահը, բայց գեղեցիկ էր,  
մանավանդ վերջալույսին, երբ Շլոսբերգի բլրակների վրայից  
արևը ոսկեզօծում էր գետը: Արևի տակ մուգ կարմիր փայլում  
էին մաշված աղյուսները, իսկ պատուհանների պղտոր ապա-  
կիների մեջ արևն այնպես էր ցուլանում, որ կարծես ներսը վա-  
ռել էին պղնձյա կանթեղներ: Այդ ժամերին Ֆրաու Ֆոգել-  
10 զանգը սիրում էր ասել, որ տունը երբեմն եղել է Ստեֆան  
Բատորիի դղյակը, որի զինանոցը իբրև թե գտնվում էր ներք-  
նահարկում, ուր տեղավորված էր նրա նշանավոր պանդոկը:

Հաղիվ թե ճշմարիտ էր պանդոկի տիրուհին. դրսից դեռևս  
երևում էր մի անհայտ նկարչի գործ, որով զարդարված էր  
պանդոկի դռան ճակատը. մի թռչուն՝ նման անտառաբնակ  
բուռի, քաշում էր զանգակի պարանը, մագիլների մեջ պահե-  
լով մի երիզ, որի վրա գրված էր էպիկուրյանների վաղեմի  
խոսքը՝ Dum vivimus, vivamus: Հաղիվ թե ճշմարիտ էր Ֆրաու  
Ֆոգելզանգը, հավանորեն տունը կառուցված էր իբրև օթևան  
20 այն վաղեմի առևտրականների, որոնք արևելքից ուղևորվում  
էին դեպի Ռևել:

Դորպատում այդ պանդոկից ավելի նշանավոր էր ինքը՝  
Ֆրաու Ֆոգելզանգը: Նույնիսկ դժվար է ասել, թե արդյո՞ք  
այդքան անվանի կլինե՞ր պանդոկը, եթե նրա տիրուհին չի-  
ներ Ֆրաու Ֆոգելզանգը, որը ոչ միայն գարեջուր և մեղրագի-  
նի էր վաճառում Մայր Ճեմարանի սաներին, այլ հենց ինքն  
էր մի գթառատ մայր, մի մեծ մայր, որի գրկի մեջ սնվում  
և զվարճանում էր անհոգ երիտասարդությունը: Նա գիտեր բո-  
լոր ուսանողներին՝ նրանց բնակարանը, քանի որ Ֆրաու Ֆո-  
30 գելզանգն էր նրանց համար բնակարան վարձում, և նրա միջ-  
նորդությունն էին հայցում տնատերերը, երբ կենվորն ուշաց-  
նում էր բնակարանի վարձը, և կամ այնպիսի խռովահույզ  
կյանք էր վարում, որ տնատերերը սկսում էին երկյուղել  
իրենց դեռահաս աղջիկների համար, որոնք հասունանում էին,  
ինչպես կաքավի ձագերն արծվի հարևանութամբ:

Ֆրաու Ֆոգելզանգը երկար տարիների ընթացքում լսելով ուսանողներին և նրանց խոսակցութունները, այնքան էր լավատեղյակ համալսարանի կյանքին, որ երբեմն, կտրտելով ապուխտած միսը կամ բաց անելով մեղրագինու նոր տակառ, խառնվում էր իր սաների վեճին. «Իսկ ես կասեմ, որ այս կուրատորը կարող է միայն թուղթ խաղալ... Ափսոս չէ՞ր ծերունի Դիտրիխը: Եվ քննութուններն էին մեղմ, և ուսանողները ոչ մի էկզեզետիկա չէին սովորում, և չկային այսքան խստութուններ, այլ միայն կար հոմելետիկա, աստվածաբանութուն և զվարճութուն: Ահա թե ինչ կար, երբ կուրատորը բարի Դիտրիխն էր...»: Իսկ թե ի՞նչ է «էկզեզետիկան» և ի՞նչ «հոմելետիկա», — միայն այդ չգիտեր Ֆրաու Ֆոգելզանգը, բայց գիտեր, որ ուսանողները մի ժամանակ ավելի շատ էին զվարճանում, քան այժմ: Եվ երբ այդպես էր ասում, ուսանողները հռհռում էին Ֆրաու Ֆոգելզանգի անկեղծ վրդովանքի համար նաև այն պատճառով, որ պանդոկի տիրուհին գիտութուններն իրար էր խառնում, — և դադարեցնելով վեճը, երկու կողմերն էլ համաձայնում էին, որ զվարճութունն առաջ ավելի կատաղի էր և, նորից լցնելով գավաթները. խմում էին առասպելական կուրատոր Դիտրիխ լույս հիշատակին...

10

20

Ահա թե ինչպիսի նշանավոր կին էր Ֆրաու Ֆոգելզանգը, և ծերունի Կրուչինսկին ամեն առիթով կարող էր ուտասհեր Ռոզենցվեյգին ասել, որ պետք է փակել այդ «անբարոյակա-նության որջը, որտեղ պատանի մարդկանց մարմինը ծանրաբեռնում են ոգելից խմիչքներով և ապա, ինչպես կատաղած ցուլերի, բաց են թողնում անմեղ քաղաքացիների վրա...»:

Ֆրաու Ֆոգելզանգի պանդոկն ուներ այնպիսի հարմարութուններ, որից ղուրկ էին քաղաքի մյուս գինետները: Երբ պատահում էր, որ ուսանողների խրախճանքը երկարում էր և գինուց հաղթվելով նրանք գլորվում էին գետին կամ սեղանից այլևս չէին կարողանում բարձրացնել ծանրացած զրլուխները, ինչպես թրադաշույնով զարկված զինվորներ, որոնք կովի դաշտում փովել են և մահվան քնի մեջ անշարժ են և միայն մեկը խոռացնում է, — ահա այդ ժամանակ ծխի գուրլոշիների մառախուղի մեջ երևում էր Ֆրաու Ֆոգելզանգը՝

30

275

սպիտակ գոգնոցով և անարատ գլխաշորով, նրա հետևից ծերունի նավավարներ, որոնք կերակրվում էին ուսանողների խնջույքի մնացորդներով,— և ետևի դռնով դեպի նավակներն էին տանում նրանց անզգա մարմինները, որ ծանր բեռ էին ծերունիների համար: Ծվ գիշերային խավարի մեջ դեպի վեր լողում էին նավակները, որոնց մեջ, ինչպես մեռած կոճղ, ընկած էին հարբած ուսանողները: Ձէր լսվում ոչ մի աղմուկ, միայն ճղփում էին նավակները, ցուռների վրա օրորվում էին լապտերները, և թվում էր, թե Աքերոնի գետով այդ նավակները լողում են դեպի մահվան թագավորությունը:

Իսկ այդ պանդոկից որքան հիշողություններ էր տանում «ակադեմիական քաղաքացին», երբ ընդմիշտ հեռանում էր Դորպատից: Ինչպե՞ս նկարագրել հրաժեշտի ժամը, երբ ընկերները հավաքվել են վերջին խնջույքին, երբ այնքան են երգել, որ այլևս ձայն չի մնացել, որպեսզի երգեն վերջին երգը՝ «Ծրբեմն ես ունեի մի աննման հայրենիք», այն երգը, որ տարիներ հետո, ցուրտ մենակության մեջ պիտի երգեր Դորպատի նախկին սանը և նրա աչքերի առաջ, իբրև ծուխ, պիտի հառներ հրաժեշտի խնջույքը... Բայց ահա եզու վերջին արիությանը երգում են նաև այդ երգը, և ճանապարհվողը մոտենում է ֆրաու Ֆոգելզանգին... Ինչպե՞ս է լաց լինում այդ կինը, ինչպե՞ս են ցնցվում նրա ծանր ուսերը, ի՞նչ խոշոր արցունքներ են գլորվում նրա թորշոմած այտերով, ինչպե՞ս է գրկում իր սանիկին, սեղմում է կրծքին, և դողում են նրա մսոտ շրթունքները, ոչինչ չի կարողանում ասել և միայն լալիս է, ինչպես մայրը, որի գրկից բարբարոսները խլում են նրա զավակին, և մորը մնում է միայն արցունքի միջից նայել հեռացող որդուն:

4

30 Այդպես էր այդ պանդոկը և նրա նշանավոր տիրուհին, որի ներքնահարկը Մայր Ճեմարանի անհրաժեշտ մասն էր, մի ասպարեզ, որտեղ երիտասարդը ձեռք էր բերում գիտելիքներ, որ կյանքում նրան հաճախ էին պետք լինում, քան տեսական բանասիրությունը, ճարտասանությունը, աստվածաբանական բարոյախոսությունը, ուսումն սուրբ գրոցը և եկեղեցա-

կան պատմութիւնը և նույնիսկ էսթետիկան, որի դասախոսն անվանի ձիաձար էր և ուսանողներին դասավանդում էր սուսերամարտի և ձիարշավի կանոններ, նաև լողանալու արվեստ: Եվ դարմանալի չէր, երբ «ձեղունահարկի բնակիչը» մանավանդ կիրակի օրերը, առնելով «հերբ» պրոֆեսորի թելադրած դասախոսութեան տեսքը և կամ այն գիրքը, որից ընթերցում էր պրոֆեսորը, գնում էր բարի Տոգելզանգի պանդոկը, նախ ողջունում էր տիրուհուն, որը դեռ նոր էր լվացվում, կատակում էր սպասավորուհու հետ, նավավարներից լսում էր զանազան նորութիւններ և, պահանջելով մի գավաթ գարեջուր, քաշվում էր անկյունը, և բարոյախոսութեան գրքի իմաստութիւնները համեմտում էր Մյունխենի գարեջրով: Հետո ներս էր մտնում մի ուրիշ աստվածաբան, որը միայն ողջունում էր Ֆրաու Տոգելզանգին և այլևս չէր լսում նավավարներին և ոչ էլ կատակում էր սպասավորուհու հետ, որովհետև պանդոկի խորքում նա նկատել էր միայնակ նստած ընկերոջը: Նրանք երամի առաջիններն էին, որոնց հաջորդում էին ուրիշները՝ փոքրիկ խմբերով, և կարճ ժամանակից հետո պանդոկը լցվում էր երիտասարդ մարդկանցով, որոնցից անհամբերները արդեն հանում էին գրատները, ոմանք կանաչ մահուդի սյուրտուկները, ոմանք շլացնում էին գուլնգուլն ժիլետով, և մշուշի մեջ ցուլանում էին կարճ սուսերները, — և բոլորը զվարճանում էին, ինչպես այն դարում գիտեին զվարճանալ երիտասարդ մարդիկ, որոնք ինքնագլուխ էին, հոգսը դեռ չէր ծանրացել նրանց ուսերի վրա և որոնց առաջին դասը եղել էր այն, ինչ որ անհայտ նկարիչը գրել էր պանդոկի ճակատին՝ «Քանի ողջ ենք, պիտի ապրենք»:

10

20

Այդպիսի մի կիրակի, երբ խրախճանքը նոր էր բորբոքվել, և դեռ մի սեղանի շուրջ վիճում էին այն մասին, թե ուսներին կհաջողվի՞ գրավել Վիսլայի կամուրջը, և գտնում էին, որ երբ լեհացիները շրիմադրեն, ֆելդմարշալ Դիրիշը կարող է գրավել և՛ Վիսլայի կամուրջը, և՛ Վարշավան. մյուս սեղանի շուրջ խոսում էին ասիական խուլերի մասին և կարծիք էին հայտնում, որ այդ ժանտամահը իցիվ թե հասնի մինչև Դորպատ, քանի որ, ինչպես ասել էր պրոֆեսոր Ծիմանը, Յուլանդիայի հողից բարձրանում է այնպիսի շունչ, որի մեջ կըխեղդվի հնդախոտը. երրորդ սեղանի շուրջ ոչ վիճում էին Վիս-

30

լայի կամուրջի և ոչ ասիական խուլերի մասին, այլ պատրաստվում էին «գինեմարտելու»։ սեղանի երկու ծայրում կապույտ բոցով արդեն վառվում էր մեղրագինու փունջը, սեկունդանտները ստուգել էին այրվող փունջի համը. մեկ, երկու և երրորդ նշանին կողմերը պիտի մինչև վերջ խմեին գավաթները, — երբ հանկարծ դռներն աղմկեցին և դռների մեջ երևաց սև թիկնոցով մի մարդ։

Պանդոկը թնդաց աղաղակներից։ Ուսանողներից մեկը, որ արդեն օրորվում էր և առաջին թեկնածուն էր լողալու մոռացութեան գետով, գավաթը ձեռքին կանչեց.

10 «Մահվան դատապարտվածները ողջունում են արքային»։  
«Արքան» թոմաս Բրյուլլն էր՝ «սև եղբայրների» ավագը։ Նա մի պահ ետ նայեց և իջավ սանդուղքով։ Նրա ետևից ներս մտան շորս հոգի, որոնք առաջինի նման ունեին սև թիկնոց, գլուխներին՝ գերմանական բերետներ և ցածր ճտքով սապոգներ, որ պարուրում էին նեղ տաբատի եզրը։

Թոմաս Բրյուլլը ողջունեց, բարձրացնելով աչքերը։ Մի քանի «Ֆուքս» մի անգամից ոտքի կանգնեցին, նրան առաջարկելով իրենց աթոռները։ «Սև եղբայրների» ավագը մոտեցավ մի բազմամարդ սեղանի, մյուսներն էլ միացրին սեղանները, և ստացվեց այնպիսի մի սեղան, որի ծայրը շերտ երևում ծխի մեջ։

Թոմասն իրար հետևից դատարկեց երկու գավաթ մեղրագինի։

— Աղբյուրներն անգամ ծարավ են, Թոմաս, — կանչեց նա, որ առաջինն էր նրան ողջունել։ Մյուսները ծիծաղեցին, որովհետև այդ ուսանողը Թոմասին հիշեցրեց հենց նրա խոսքը, որ խրախճանքի բորբոքված ժամին կրկնում էր Թոմաս Բրյուլլը, և այդ խոսքերից հետո բերում էին նոր շշեր։

30 Թոմասն այս անգամ նոր նայեց երիտասարդին, որի երեսը վառվում էր բաց կարմիրով և որի աչքերի մեջ կար երեսխայական ժպիտ, և դեմքն ուներ մանկական մի գրավչություն։  
Թոմաս Բրյուլլը գլուխը խոնարհեց։

— Մեր Թոմասն ինչ-որ ուրիշ է այսօր...

— Չլինի՞ բան է պատահել և մեզ չի ասում։

— Նրա հետ վերջերս լինում է մի ինչ-որ դանակ սրող...

— Ծս նրան տեսել եմ: Նա ապրում է հին զորանոցների մոտ:

— Իսկ ես Թոմասին երեկ տեսա հենց այն կողմերում:

Սեղանի շուրջ այդպես էին խոսում նրանք, որոնք դեռ գինով չէին: Իսկ որոնք գինով էին, ուրախանալով «սև եղբայրների» ներկայութունից, արդեն բաց էին թողել սանձերը և խմում էին, շփոթելով զավաթները, գինին և զարեջուրը: Սեղանի մի կողմը, ինչպես առաջին որոտ, հնչեց երգը՝ «Gaudeamus igitur» և հետզհետե ծավալվելով մեջ առավ բոլորին և վերջին բառերը՝ «Nos habebit humus», այնպես ուժգին **10** գողողացին, որ ֆրաու Ֆոգելզանգին թվաց, թե զավաթներ փշրեցին:

— Հրմմ... ամեն ինչ հող կդառնա,— լռության մեջ ասաց Թոմասը, թարգմանելով երգի վերջը:

Նա ոտքի կանգնեց:

— Burschen,— և բոլորը լռեցին: Թոմասը գլուխը թափահարեց և մազերը ծփացին ուսերի վրա:— Ծս ձեզ հիմա այնպիսի խոսք կասեմ, որ երբեք չեմ ասել: Ծս ձեր եղբայրն եմ և, եթե սեղանի շուրջը նստած են հայրենակիցներ, որոնց նոր ենք մկրտել, բայց և նստած են ընկերներ, որոնց հետ **20** շատ տարիներ զվարճացել ենք և դժվար փորձություններից ենք անցել: Մենք բոլորս եղբայրներ ենք, մի մոր հարազատ սաներ... Բայց ահա լսեցեք, թե ես ի՞նչ եմ մտածել, և ասեք, ճշմարիտ եմ, թե՞ սուտ են իմ խոսքերը: Իսկ ես այն եմ ասում, որ մենք բոլորս սխալ ճանապարհի վրա ենք...

Եվ շունչը պահեց մի րոպե, սուր աչքերով նայեց բոլորի աչքերին և այնտեղ կարդաց և՛ տարակուսանք, և՛ հետաքրքրություն, և՛ զարմանք, նաև ոչինչ չկարդաց, որովհետև կային գինու ոգուց թմրած աչքեր, որոնք արդեն ննջում էին:

— Իսկ ինչո՞վ ենք սխալ ճանապարհի վրա: Որովհետև **30** մենք մեր օրերն անց ենք կացնում գինարբուլքով, երբեմն սուսերամարտում ենք, երբեմն արշավում ենք ձիերով, երբեմն աստվածաբանություն ենք սովորում, և այսպես կորչում է մեր երիտասարդությունը, մեր ժամանակը և կորչում ենք մենք: Մեզ հարկավոր չի այդպիսի կյանք:

— Ինչպե՞ս: Ուրեմն այլևս չզվարճանա՞նք, գինի չը-  
խմե՞նք:

— Ուրեմն դառնանք ճգնավորնե՞ր և շունենա՞նք սիրելի  
կին:

— Իսկ աստվածաբանության մասին լավ ասեցիր: Շատ  
լավ ասեցիր: Բուրբուրովին ավելորդ տեղը կորցնում ենք մեր  
ժամանակը: Իսկ զվարճության մասին՝ սխալ ես, — և Օտտոկար  
Գրիշը, որ ամենահին ուսանողն էր, և որի մազերը ճերմակել  
էին անքուն գիշերներին, որ նա անց էր կացրել գինի խմելով,  
10 այդ խոսքն ասաց ու մոտ քաշեց գավաթը, երկյուղելով, որ  
Թոմաս Բրյուլլի խոսքերից ոգևորված հանկարծ կջարդեն գա-  
վաթները և շշերը կջարդեն, կջարդեն նաև պնակները և ամեն  
ինչ կջարդեն և կերդվեն այլևս չխմել ոչ զարեջուր, ոչ մեղրա-  
գինի և ոչ այլ տեսակ գինի:

— Լսեք իմ խոսքը: Դեռևս բուրբուր չեմ ասել: Ես չեմ  
ասում, որ այլևս չխմենք և շմենամարտենք էսպաղոնով կամ  
պիստոլետով և կամ այլ զենքով, եթե լինի թշնամի, որ անար-  
գել է մեզ, մեր կորպորացիային և կամ որևէ ծանր խոսք է  
ասել մեր հոգևոր մոր մասին: Նաև չեմ ասում, թե այլևս մի  
20 գրկեք ձեր սիրուհիներին, նրանց համար կիթառ մի նվագեք և  
մի պարեք պարահանդեսներում:

— Հիմա որ միանգամայն ճշմարիտ ես, Թոմաս, — և  
Օտտոկարը բարձրացրեց գավաթը, — ողջ լինես:

Մյուսները ևս բարձրացրին գավաթները:

— Դեռ սպասեք, սիրելի բարեկամներ: Թողեք, որ խոսքս  
վերջացնեմ և այն ժամանակ դատեք, որ դատաստանով կու-  
զեք:

— Թողե՛ք վերջացնի, թողե՛ք...

— Շարունակիր, Թոմաս, — կանչեց «սև եղբայրներից»  
30 մեկը:

— Հիմա կասեմ բուրբուր, — Թոմասը ոտքը դրեց նստա-  
րանի վրա, ամբողջ մարմնով հենվեց ծնկանր և ասաց, — Ին-  
չի՞ նման է, երբ մենք այստեղ զվարճանում ենք, իսկ այնտեղ  
մեր ընկերներին, մեզ նման ուսանողներին ծեծում են, ինչ-  
պես օրդոնան-հաուզում ծեծում են անպաշտպան սուլդատ-  
ներին...

— Ո՞րտեղ, ո՞վ,— և բոլորը վեր թռան, ոմանք ձեռքերը  
տարած դեպի սուսերնեքը, իսկ Օտտոկար Դրիշը, որ չէր  
համբերել և դատարկել էր գավաթը, բղավեց.

— Ասա, ո՞ւմ են ծեծել...

— Կասեմ ում են ծեծել... Մեծել են Խարկովի համալ-  
սարանի ուսանողներին: Նրանց շեն ծեծել իրենց ընկերները,  
և ոչ էլ ծեծվել են հարբած վիճակում որևէ շարաճճի արարքի  
համար: Նրանք ըմբոստացել են ռեկտորի դեմ, որովհետև  
նրանց հետ վարվում էին ինչպես ճորտերի հետ: Թքում էին  
նրանց երեսին և օրը ցերեկով ուսանողին պատժում էին, **10**  
մերկացնելով մարմնի այն մասերը, ուր ամոթ էր ասել: Մեր-  
կացնում էին և ստիպում, որ ընկերները ճիպտուներով ծեծեն:

Ահա թե ինչպես են ապրում մեր եղբայրներն այնտեղ:  
Այդ կարգերից դժգոհ, նրանք ըմբոստացել են և փշրել ռեկ-  
տորի տան ապակիները...

— Այդ բանում նրանք մեզ նման են,— լսվեց մի ոգևոր-  
ված ձայն:

— Նրանք շարդել և փողոց են թափել ամբիոններն այն-  
պրոֆեսորների, որոնք ոչ թե դասախոս են եղել, այլ հարբած  
կազակ: Նրանք դուրս են եկել փողոց և խարույկի վրա հրդե- **20**  
հել առհլի գրքերը: Բայց այդ ժամանակ ռեկտորի հրամանով  
վրա են թափվել վայրենի կազակները, կրակ են բացել և գիրի  
բռնել ուսանողներին, պատժել են սոսկալի պատիժներով:  
Իսկ ամենից համարձակներին հազցրել են սուղատի շինել և  
կնուտի տակ քշել են այնպիսի հեռավոր տեղեր, որտեղից ոչ  
ոք չի վերադարձել և չի վերադառնա... Ահա թե ինչի մասին  
է խոսքը: Իսկ մենք այստեղ միայն զվարճանում ենք և շենք  
հիշում մեր ընկերներին և ոչինչ շենք անում, կարծես մենք  
ստեղծված ենք միայն զվարճության և աստվածաբանության  
համար...

— Իսկ ի՞նչ անենք մենք:

— Մենք այդ մասին չէինք լսել:

Եվ այդ երկու ձայնից բացի, չլսվեց ուրիշ ձայն, տիրեց  
այնպիսի լուռություն, որ լսելի էր ջրի կաթկթոցը մի ինչ-որ  
պղնձի մեջ: Բայց շուտով այդ էլ չլսվեց, որովհետև ֆրաու **39**

• Տոգելզանգը, որ սովորութիւն ուներ խրախճանքի աղմուկի մեջ ննջելու, զարթնեց ահաւոր լութիւնից, ինչպես ջրաղաց-պանը, որ վախեցած վեր է թռչում, երբ այլևս չի լսվում ո՛չ ջրի շառաչը, ո՛չ քարի աղմուկը: Տրաու Տոգելզանգը զարթնեց և ամրացրեց տակառի ծորակը, որից մեղրագինին կաթ-կաթ ընկնում էր պղնձե փարչի մեջ: Ապա զարմացած նայեց ուսանողներին և նույնիսկ վեր կացավ, որ մոտենա նրանց, մոտենա և հարցնի, թե ինչո՞ւ են խոնարհել գլուխնե-րը և ինչո՞ւ են լուռ ծխում ծխամորճերը, և այլևս չեն հնչում

10 այն զվարթ երգերը, որոնց շառաչի տակ ննջում էր ֆրաու Տոգելզանգը:

— Իսկ մենք ի՞նչ անենք, թո՞մաս...

Բայց ոչինչ չկարողացավ ասել թո՞մասը, իսկ մյուսները լուռ մտածմունքի մեջ էին, ո՞մանք իրենց մտքում արդեն մի բան էին վճռել և մոայլ նայում էին սառչող մեղրագինուն, երբ դռների մոտ լսվեց մի աղաղակ:

— Burschen, heraus— և ներս ընկավ մեկը, որ ո՛չ գգակ ուներ, ո՛չ թիկնոց, և որի ձեռքից արյուն էր կաթում, և արյունոտ էր ճակատը, և շէր իմացվում ճակատին և՞ս վերք

20 կար, թե նա արյունոտ ձեռքով սրբել է ճակատը:

— Արշինավորները մերոնց ջարդում են Քարե կամրջի մոտ...

Ինչպես վագրը, որ ոստյունից առաջ պահում է շունը և փակչում գետնին, ապա ամենհի թափով թռչում է որսի վրա, և ահից որսը դռչում է այնպես, որ սարսափում են մյուս գազանները հեռու հեռուներում, այնպես էլ «ձեղունահար-կի բնակիչները» նախ ահաբեկվեցին այդ գուլժից և գունատ-վեցին, ապա կատաղութիւնից այնպես մոնչացին, որ դղր-դացրին հին կամարները, և հաջորդ վայրկյանին այլևս ոչ ոք

30 չմնաց պանդուկում, և միայն վայր ընկած աթոռները և մի քա-նի լիքը դավաթներ վկա էին, որ այստեղ խրախճանք կար, և անակնկալ պատահարից դուրս են թռել զվարճացողները, որոնք ուր որ է պիտի ետ վերադառնան և այն միայնակ թիկնոցը, որ դեռ պահում է տիրոջ մարմնի ջերմութիւնը, նո-րից պիտ հանգչի նրա երիտասարդ ուսերին:

Իսկ Քարե կամուրջի մոտ կանոնավոր ճակատամարտ էր:

Օրը կիրակի էր, և զբոսնելու էին դուրս եկել ոչ միայն «ակադեմիական քաղաքացիները», այլև մյուս քաղաքացիները, որոնց մի խումբ, մեծ մասամբ ուսւ վաճառականներ, հարբած վիճակում, կամուրջից ոչ հեռու, հանդիպել էին շորս ուսանողի և ոչ միայն կտրել էին ամբողջ մայթը, փակելով երթևեկութունը, այլև նրանցից մեկն ուսանող Ստեֆան Գյունտերին մայթից հրել էր և անվանել «լեհական մուկ»: Եվ այդ կայծից բռնկվել էր հրդեհը, և արդեն վաղուց Ատեֆան Գյունտերին, որ առաջինը քաշեց սուսերը, ընկերները տարել էին տուն արյունլվա վիճակում, արդեն հարբած բառաշում էր այն ուսւ վաճառականը, որի աչքերի առաջ երբեմն մթնում էր, երբեմն լուսանում, և նա տեսնում էր անկապ պատկերներ և զգում էր, որ իրենը չէին ո՛չ ոտքերը, ո՛չ ձեռքերը: Հարբած բառաշում էր այդ վաճառականը, որի ընկերները ծանր բռունցքներով դիմավորել էին առաջին ուսանողներին, որոնք օգնության էին հասել զբոսավայրերից՝ թողնելով կիթառները և աղջիկներին:

Վաճառականներն ևս օգնություն ստացան. գետի մյուս ափից մի ահագին բազմութուն՝ կոշկակարների, ներկարարների, կաշեգործների, օղետան սպասավորների և ինվալիդ զինվորների, որոնք օղետներումն էին, — մի ահագին բազմութուն՝ «ուղղափառներ, մերոնց ծեծում են» բղավելով, վազեցին դեպի կամուրջը՝ ցախավելներով, երկար ցուպերով և նույնիսկ մի պայտար վերցրեց այն պարանը, որով նա կապում էր անհանգիստ ձիու մուկը, — սակայն, տեսնելով ուսանողների խմբերը, որ հենց այդ բուպին զանազան փողոցներով վազում էին դեպի Քարե կամուրջը, — տեսնելով այդ, պայտարը պարանով կապեց մի ուսւ մահուդավաճառի, որին ընկերները դրել էին դրոգի վրա, նրան մի կերպ ազատելով ոտնակոխ լինելուց: Այնինչ մահուդավաճառը զազազած ուզում էր դուրս պրծնել ընկերների ձեռքից և նորից նետվել այն բազմության մեջ, որտեղից լսվում էին խուլ տնջոցներ, գոռոց, հայհոյանք: «Բաց թողեք ինձ, բաց թողեք, անխիղճ-

ներ», հետզհետե թուլացող ձայնով կանչում էր մահուդավա-  
ճառը, բայց այդ ձայնից արդեն հայտնի էր, որ եթե նրան  
բաց թողնեին, նա հազիվ մի քանի քայլ կաներ և կզլորվեր  
գետին, որովհետև շատ անխիղճ էին ծեծել նրան:

«Չթողնեք աղյուսներին մոտենան», — բղավեց Քոմաս  
Բրյուլլը, որ հենց առաջին վայրկյանին նկատել էր թշնամու  
մի փոքր խմբի: Այդ խումբն ուզում էր գերանների վրայով  
բարձրանալ և գործի դնել աղյուսների այն կույտը, որ ինչ-  
որ շինութեան համար գերանների հետ թափել էին հրապարա-  
կի մոտ: Եվ ինքն իսկույն թռավ այն կողմը, նրա հետևից  
10 «սև եղբայրները»: Օտտոկար Դրիշը, ինչպես գագաթից զլոր-  
վող ապառաժ, ահագին թափով նետվեց բազմութեան մեջ և  
այնքան հեռու գնաց, որ հասավ կամուրջի կեսին, որտեղ  
աղմկում էին հակառակորդի պահեստի ուժերը, որոնք վայրենի  
աղաղակներով խրախուսում էին առաջիններին: Նրանք մի  
վայրկյան ետ քաշվեցին, Օտտոկարը գրատը փաթաթեց իբրև  
վահան և հարձակվեց այն ժամանակ, երբ շրջապատողները  
վրա վազեցին: Այդ տեսարանը նման էր հողմի պտույտին,  
երբ երկնասլաց սյունի մեջ իրար են խառնվել տերևներ, շյու-  
ղեր, փետուրներ, և ամեն ինչ պտտվում է մի ահավոր արա-  
20 գութեամբ, ոչինչ չի երևում թանձր փոշու մեջ, և միայն հեռվից  
մի հոգնած ուղևոր նայում է այդ սևակնած պտույտին և արա-  
գացնում է քայլերը, որպեսզի փրկվի վերահաս փոթորկից:  
Արդեն շատերն են զլորվել գետին, արդեն երևում են արյու-  
նոտ երեսներ, ծվեն-ծվեն քրքրել են Օտտոկարի սյուրտու-  
կը, փշրել են նրա սուսերը և ահա մի վլթխարի մարդ մեջ-  
քից գրկել է Օտտոկարին և գետնից կտրելով, նրան տանում  
է դեպի կամուրջի եզրը: Վայրենի հոհում են մյուսները, իսկ  
մեկը ծվծվում է. «ջուրը, ջուրը քցիր շան ձագին», բայց Օտ-  
30 տոկարն արնամխած աչքերով տեսավ կամրջի երկաթյա  
վանդակները, ոտքերով հենվեց երկաթին և թիկունքով այն-  
պես հրեց մարդուն, որ տրաք-տրաքեցին նրա ձեռքերի մկան-  
ները, և մարդն անզոր ընկավ: Օտտոկարը գուրս պրծավ նրա  
գրկից և նորից բորբոքվեց բուռնցքակոխվր:

Մի այլ տեղ ուսանողները շրջապատել են մսավաճառ  
Կոլեսնիկովին: Գեր մսավաճառը գործի է դրել կարճ բազուկ-

ները, ոտքերը, մինչև անգամ հաստ գլուխը, որով նա պողահարում է այնքան գազազած, որ եթե հակառակորդը շփեզվի, այդ հարվածը պիտի փշրի նրա կրծոսկրը: «Կատաղեցրե՛ք, ավելի կատաղեցրեք», բղավեց Թոմասը և բազմութունը ճեղքելով, մոտեցավ մասվաճառին: Ապա ընտրելով հարմար վայրկյան, հետևից այնպես զարկեց նրա ոտքերին, որ մասվաճառի ծնկները ծալվեցին և նա փլվեց, ինչպես խարխուղ պատը, որի տակից քաշել են հիմնաքարը:

«Ոստիկանները, տղերք», — կանչեց մի ուսանող, որ բարձրացել էր գերանների վրա: Իրար հետևից լավեցին սուլոցները: 10  
Կամուրջի գլխին երեացին ձիավոր ոստիկանները: Նրանք զալիս էին մյուս ափից և, որպեսզի հասնեին հրապարակը, պիտի ճեղքեին վաճառականների և արհեստավորների պատները: «Մերոնց ծեծում են», լալահառաչ ասաց երկար մորուսով մի մարդ, բռնելով առաջին ձիու սանձը: Նա կռվին շէր մասնակցել, այլ միայն արձակել էր այնպիսի ձայներ, որոնցով որսորդը «քիս» է տալիս շներին: «Հեռու քաշվիր, քավթառ», — և ձիավոր ոստիկանը բարձրացրեց մտրակը: Երկար մորուսով մարդը վազեց դեպի վախմիստրը, բայց այդ վայրկյանին դեպի ձիավոր ոստիկանները թռան աղյուսի կտորները: 20  
— Perea\*, — որոտաց մի ձայն գերանների ետևից:

Մի ձի ծառս եղավ, և նրա ոտքին դիպավ այն աղյուսը, որ նետողը նշան էր բռնել ձիավորի կրծքին: Ձին հանկարծ ընկավ, ձիավորին թամբից գլորելով: «Թրեյը պատրա՛ստ», — գոռաց վախմիստրը և ձին խթանեց: Բայց այդ ժամանակ ուսանողները առաջ հրեցին հակառակորդներին, որոնք մնացին ձիավորների և ուսանողների արանքում: Ոմանք անցան ցանկապատի մյուս կողմը և կախվեցին վանդակներից: Գերանների հետևից սաստկացավ աղյուսների տարափը: Ձիերը ետ քաշվեցին: Ուսանողները նոր թափով սեղմեցին հակառակորդին, և բազմութունն ալիք-ալիք ետ նահանջեց կամուրջով, իրեն հետ տանելով նաև ձիավորներին: Վախմիստրը շրջեց ձիու գլուխը և անհայտացավ:

\* Անկցի:

«Յրվեք տները»,— գերանների հետևից կանչեց թոմաս Բրյուլլը և ետ դարձրեց նրանց, որոնք հակառակորդին զնել էին մինչև կամուրջի ծայրը: Կամուրջը դատարկվեց: Գերանների հետևից դուրս եկավ «սև եղբայրների» խումբը: Այդ վայրկյանին լավեց թմբուկների աղմուկ... «Յրվեք տները»,— բղավեց Բրյուլլը, «մուշկետյորները գալիս են»: Երևաց պատրուզավոր հրազեններով զինվորների շոկատը, որի առաջից գնում էր մի երիտասարդ սպա: Նրա դեմքին շողում էր ինքնագոհ ժպիտ: Նա նայում էր պատշգամբներին և պատուհանների կողմը, որտեղից նրան էին նայում աղջիկներ և կանայք, որոնց այդ երիտասարդ սպան կարծես ասում էր. «Տեսեք, ինչ չքնաղ են իմ ուսադիրները, իմ սաղավարտը և իմ ձին և ես»: Իսկ վերևից պատասխանում էին. «Ի՛նչ երիտասարդն է այն սպան... Հազիվ քսան տարեկան լինի, բայց արդեն փոխազնդապետն է Ռեելյան մուշկետյորների գնդի...»:

10

Իսկ մտավաճառ Կոլեսնիկովը ոչինչ չասաց: Նա սթափվեց թմբուկների որոտից և մի կերպ ոտքի կանգնելով, քայլեց դեպի գերանների կույտը, որտեղից դուրս թռավ թոմաս Բրյուլլը: «Թոնե՛ք նրան, բոնե՛ք»,— աղաղակեց ուսուցիչը: Մուշկետյորները շարքի մեջ ժպտացին. նրանցից մեկն ընկերոջն ասաց. «Քաջերը նրան լավ են փհտրահանել...»: Իրավ որ Կոլեսնիկովը նման էր սագի, որին ժլատ տանտիկինն այլանդակել էր, շափից ավելի պոկելով բմբուլը: Նրա կաֆտանը քրքրված էր, և երբ նա օրորվելով անցավ կամուրջը, գետի քամին աստառի բուրդը տարավ հեռո՛ւ-հեռո՛ւ...

20

Հրապարակն ամայացավ: Կամուրջի վրա երևում էին հատ ու կենտ անցորդներ, որոնք տուն էին շտապում: Արդեն երեկո էր: Հեռվից լսվում էր թմբուկների խուլ աղմուկ: Երիտասարդ սպան հիացած իր գեղեցկությամբ և իրենով, դեռ շարունակում էր հեռավոր փողոցների բնակիչներին ցույց տալ իրեն և իր ուսադիրները և սաղավարտը, որ փայլում էր իրիկնային մթնշաղում:

30

6

— Դուք նորից ձեր հայրենակցի մո՞տ էիք,— հարցրեց տիկինն էլոիզ Աուսլենդերը մի երիտասարդի, որը ներս մտնե-

լով, արձանացավ դռան մոտ, որովհետև նրան անսպասելի էր և՛ այդ հանդիպումը, և՛ տիկնոջ անհամբեր հարցը:

Բայց տիկինն ավելի արագ զգաց իր անզգուշությունը՝ որով մատնեց իր անհանգստությունը երիտասարդի բացակայման առթիվ, քան կպատասխաներ երիտասարդը: Եվ կարծես այդ անզգուշության հետքերը ծածկելու համար, նա դարձավ իր խոսակցին՝ պրոֆեսոր Պարրոտի կնոջը, որն այդ բուպեին մոմի վրա կոացած թելում էր ասելը:

— Ես այդպես էլ գիտեի, որ նրան ոչինչ չի պատահել... Բայց տեսնեիք Գերմանին... Աստված իմ, ինչքան էր նա հուզվել, քանի անգամ հարցրեց...

10

Եվ կանացի հոտառությամբ տիկին էլոիզն զգաց, որ իզուր էր իր կասկածը և, որ բարեկամուհին չէր նկատել նրա անհանգստությունը և ակնապիշ դեռ նայում էր ասեղի ականջին:

— Գե հիմա պատմեք,— և տիկին էլոիզն անսեթևեթ նազանքով բարձրացրեց ձեռքը, խշշաց զգեստը, և լայն թևքի միջից ձգվեց նրա մերկ բազուկը, ինչպես քամին օրորում է եղեգնուտը, և հանկարծ մերկանում է մի դալար եղեգ, որ շգիտի, որ կողմը թերվի և միայն խոնարհում է տերևները՝ ծածկելու իր բաց կարմիր մարմինը: Նա սկսեց հարդարել կրակի գույնի խոպոպները, որ կախվել էին ճակատի կամարի վրա:

20

— Բայց ի սեր Աստուծո, ասացեք, ի՞նչ է պատահել... Ես ոչինչ չգիտեմ,— և երիտասարդն իր խելոք աչքերը, որ ավելի էին խոշորացել և՛ ուրախությունից՝ տիկին Աուսլենդերին տեսնելու համար, և՛ անհանգիստ կասկածից, որ հետևանք էր տիկնոջ հանկարծակի հարցին,— երիտասարդն աչքերը հանոց նախ՝ տիկին Պարրոտին, ողջունեց նրան, և ապա սեղմեց տիկին էլոիզի ողորկ ձեռքը:

— Ինչ- որ բան է պատահել... Նախասնեյակում օտարուտի վերնազգեստ է կախված, դրսում ինչ-որ կառք է սպասում... Չեմ հասկանում:

30

Տիկին Պարրոտը ժպտաց: Նրան ևս հաճելի էր երիտասարդի հետզհետե աճող հետաքրքրությունը, նաև այն, որ նա միամիտ երեխայի նման իր աչքերն ուղղում էր մերթ տիկին էլոիզին և մերթ իրեն, կարծես նրանց դեմքերի վրա գուշակում էր պատասխանն իր կասկածի: Իսկ տիկին Աուսլենդերն

առանց թաքցնելու իր հիացմունքը, նայում էր երիտասարդի մաքուր սափրած երեսին, որ վարդագույն էր երեկոյի սառնից, և նրա խելոք աչքերին, որոնց տիկին էլտիզն առաջին հանդիպումից հետո անվանել էր «մութ ծովեր»:

— Ո՞վ կա ներսը,— և երիտասարդը գլխով նշան արեց դիմացի սենյակի կողմը, որտեղից լսվում էին ինչ-որ խառն ձայներ:

— Տղամարդուն չի վայելում այդպիսի հարցասիրություն,— կեղծ լրջությամբ հանդիմանեց տիկին Աուլենդերը և նրա վրա նայեց այնպես, ինչպես կնայի ամուսնացած կիներն իրեննից ավելի երիտասարդ տղամարդու, որի առնական միամտությունն ամեն ինչ ճաշակած կնոջը հիշեցնում է և այն, որ նրա համար անդարձ կորել է, և այն, որ դեռևս մնում է, ինչպես ծառի վերջին պտուղը՝ ցուրտ աշունքին:

— Ուրեմն դուք ոչինչ չե՞ք լսել այսօրվա դեպքերի մասին,— հարցրեց տիկին Պարրոտը:

— Ո՛չ, տիկին,— և նա ուզեց երդվել, բայց հիշեց, որ պրոֆեսորն արգելել է երդվելը, իբրև «անվայել բան», որ հատուկ է միայն ռուս աստիճանավորներին և վաճառականներին», ինչպես ասել էր պրոֆեսորը:

— Ծն ճաշից հետո գնացել էի իմ հիվանդ բարեկամի մոտ...

— Ինչպե՞ս է հիմա այդ խեղճ մարդը,— և տիկին Պարրոտը թեթև հառաչեց:

— Նա երևի երբեք այլևս չտեսնի իր հայրենիքը,— տխուր ասաց երիտասարդը: Մի պահ լռեցին, կարծես երեքով էլ միտք էին անում, թե ինչքան ծանր է երբեք չտեսնել հայրենիքը:

— Իսկ հետո ո՞ւր գնացիք,— լուռությամբ խախտեց տիկին Աուլենդերը:

— Այնտեղից ես գնացի Դոմբերգ, որովհետև այդ գրույցըն ինձ ևս հիշեցրեց իմ հեռավոր հայրենիքը,— նրա ձայնը դողաց, դողդողաց նաև ներքին շրթունքը: Տիկին էլտիզը խղճահարվեց և նրա սիրտը շահելու համար ասաց.

— Իմ երիտասարդ բարեկամը թող չտխրի... Դուք մի օր պիտի տեսնեք ձեր հեռավոր հայրենիքը... Այ, մենք երբեք

չենք տեսնի ձեր հայրենիքը: Այդ անկասկած է... Իսկ դո՞ւք: Երբ դուք վերադառնաք, ով գիտե, մենք այլևս կհանդիպե՞նք իրար, թե՞... Եվ այն ժամանակ դուք մեզ իսպառ կմոռանաք... Եվ ո՞վ գիտի, թե ի՞նչ կլինի վաղը... — տիկին էլոփզը լռեց, աչքերը հռուխուխու էր բարեկամուհուն, որն զբաղված էր կարելով: Ապա նա ավելի խոր ընկղմվեց բաղմոցի մեջ և, գլուխը թիկնոցին հենած, ձգեց սպիտակ պարանոցը և նուրբ կզակը, որ թվում էր պարանոցի շարունակութունը. երիտասարդը չէր տեսնում նրա գլուխը, այլ միայն տեսնում էր պարանոցը և սպիտակ կզակը, որ նրան հիշեցնում էր մարմարե վաղեմի անդրի, որի կանաչի գլուխը շարդել են բարբարոսները, և մնացել է միայն պարանոցը, որն այնուամենայնիվ վկայում է, թե ինչքան գեղեցիկ էր այն գլուխը:

10

— Իսկ այժմ մեր սիրելի Արմենիերին պատմենք այն, ինչ որ պատահեց այսօր... — և նա սթափվեց, ինչպես մի կայտառ աղչիկ, որ խռովում է մի վայրկյան, որպեսզի հաջորդ վայրկյանից սկսի պատմել զրնգան ձայնով:

Տիկին էլոփզը պատմում էր, ինչպես այդ պատահարի մասին կարող էր պատմել մի գերմանացի պրոֆեսորի կին, որը, ինչպես և նրա ամուսինը, չէր սիրում ուսաներին, մանավանդ ուս վաճառականներին, որոնց մասին նա իր էստուհի աղախնից և հրեա նպարավաճառից լսում էր միայն արտասովոր պատմութուններ:

20

Պատմում էր տիկին էլոփզը, պատմում էր այն, ինչ որ նրան հաղորդել էր աղախինը, որն, իբր թե ականատես էր եղել դեպքերին մինչև այն վայրկյանը, երբ ռոբերտը դուրս եկավ թնդանոցներից, որից հետո նա փախել էր, որովհետև «մի կազակ ձին ըշում էր ուղղակի նրա վրա»: Երիտասարդն ազահուստյամբ լսում էր տիկնոջը և աչքը չէր հեռացնում սև ուլունքների շարանից, որ գրկել էր նրա պարանոցը և ճոճվում էր, երբ տիկին էլոփզը շարժում էր իրանը:

30

Տիկին Պարրոտը, որ ձեռագործի վրա գլուխը կախ լսում էր այն, ինչին արդեն տեղյակ էր, — երբեմն գլուխը բարձրացնում էր և նայում երիտասարդին: Ինչքան շուտ փոխվեց նա... Եվ ինչքան վարժ է խոսում գերմաներեն: Նա մի կա-

տարյալ Edelmann է, և ոչ ոք չի մերժի նրան իր աղջկա ձեռքը... Իսկ Արմենիերն առաջին օրերը չգիտեր, ինչպես գործածի պատառաքաղը և չգիտեր կարտոֆիլն ուտելու կերպը:

10 Արմենիերն Աբովյանն էր: Դորպատում նրան այդպես անվանեցին այն օրից, երբ բնակիչները քաղաքի փողոցներում տեսան նրա օտարոտի դեմքը, հարավի մարդու վառվռուն և մեծ աչքերը և մանավանդ հայ դպիրի կապան և ջիբրուն, որ նա առաջին օրերը հագնում էր Պարրոտի տուն գնալիս: Նրա վրա նայում էին, ինչպես զարմանալի հրաշքի վրա, և ծանրամիտ բյուրգերները, որոնք երեկոները նստում էին դարպասների առաջ, երկար նայում էին նրա ետևից, և նրանցից մեկը, որ դիպվածով եղել է թաթարների երկրում կամ հասել էր մինչև Հաշտարխան, պատմում էր առասպելախառն պատմություններ հեռավոր հարավի մասին:

20 Կանայք և աղջիկները գաղտագողի հայացքով ուղեկցում էին նրան, իսկ ավելի համարձակները ժպտում էին, և երբ նրանց կողմն էր նայում Արմենիերը, հանկարծ զվարթ քրքրիչով պատուհանը փակում էին նրա վրա: Ոչ մի կասկած, որ այդ սենյակում, ուր հավաքվել էին տանտիրուհու աղջիկները և նրանց ընկերուհիները, դեռ շատ պիտի խոսեին նրա մասին. աղջիկների մեջ պիտի հայտնվեր մի Գրետխեն, որը պիտի հանդիմաներ ընկերուհիներին, երբ նրանց շարահանի շաղակրատությունն անցներ ամոթխածության սահմանից: Ընկերուհիները պիտի հարձակվեին Գրետխենի վրա, նրան պիտի բամբասեին, այդ աղջիկը հուզմունքից պիտի կարմրեր և ապա առանձնության մեջ զգար մի քաղցր տառապանք:

30 Այդպես էին ճանաչել նրան և, ինչպես հաճախ է լինում, առաջին տպավորությունը մնացել էր անջնջելի: Այդ բանին օգնել էր նաև Մարյա Աֆանասևնան, ուստի սարկավագի կինը, որի տանը մի քանի ժամանակ Արմենիերն ապրել էր: Անհանգիստ կաշաղակի նման մի բակից մյուսն էր մտնում այդ գնդիկ կինը, և երբ հարցնեին նրա տան կենվորի մասին, նա երգելով ասում էր. «Ի՞նչ կենվոր, աստված իմ... Իսկական սուրբ: Մոմ է պահում, գիշեր-ցերեկ կարդում է, և իրենց լեզվով աղոթում է... Եվ ինչպե՞ս է աղոթում, այդ ինչ ձայն է, ինչ լեզու է: Թեև չեմ հասկանում, բայց հավատում եմ, որ

սրբազան լեզու է... Իմ ամուսինն ասում է, որ նրանց լեզուն աշխարհի առաջին լեզուն է. նրանց լեզվով է խոսել Նոյը, հենց որ սարից իջել է: Ահա թե ինչ լեզվով է խոսում...»:— «Իսկ գինի խմո՞ւմ է, խոսո՞ւմ է կանանց հետ. պետք է, որ նրանց օրենքն արգելի այդ բանը»,— հարցնում էին հետաքրքրված հարևանուհիները: «Սուտ խոսքեր են. նա կանանց հետ խոսում է, բայց խմել չի սիրում. ամբողջ օրն իմ աղջիկը նրա հետ է... Թեև փոքր է, բայց ես իմ աղջիկը նրան կին կուսալի»,— և Մարյա Աֆանասևնան խորամանկ ժպտում էր. «Նըրանց մոտ սովորություն է փոքր աղջիկ առնելը... Բայց իմ 10 Օլգան շատ փոքր է, դեռ երեխա է և ոչինչ չի հասկանում այդ բաներից»: Եվ Մարյա Աֆանասևնան այնպես անկեղծ էր կսկծում, որ աղջիկը փոքր է և այնպես էր գովում իր տան կենվորին, որ հարևանուհիներն ակամա նայում էին իրենց հասած աղջիկներին:

Բայց ոչ մի Մարյա Աֆանասևնա չէր կարող Արմենիերի համբավը Դորպատում այդքան տարածել, եթե այդ բանին հակառակ լինեին բարեհոգի տնատերերը և ուսանողները, այսինքն՝ ֆրաու Ֆոգելզանգի բարեկամները: Պատահում էր, որ ֆրաու Ֆոգելզանգի պանդոկում ուսանողներից մեկը, որ քաջ 20 գիտեր Արևելքի հին պատմությունը, նաև աշխարհագրություն, պատմում էր այն հեռավոր երկրի մասին, որտեղ զբոսնում էր բիբլիական լյառը՝ Աբարատը: Եվ ծայր էր առնում վեճը՝ կրարձրանա՞ «հերք» պրոֆեսորն այդ լեռան կատարը, թե՞ չի բարձրանա, արդյոք իրենց հայրենակցին կհաջողվի՞ Նոյյան տապանի տեղը խրել այն խաչը, որ պատրաստել է իրենց քաղաքի դարբինը... Ֆրաու Ֆոգելզանգի պանդոկում նրանք նստում էին մինչև ուշ գիշեր, և հանկարծ ոտքի էր կանգնում մի ծերուկ ձկնորս, որը զրույցի ընթացքում առել էր առաջին բունը, և բարձրացնում էր գավաթը. «Հաջողություն 30 մաղթենք մեր հայրենակիցներին, որոնք այժմ, ով գիտե, ինչ փոթորիկների մեջ են, որովհետև ինչպես ծովում, այնպես էլ հավիտենական սառույցների վրա...»: Եվ նույնիսկ հուզվում էր ֆրաու Ֆոգելզանգը, երբ լցնում էր մաղթության գավաթները, որովհետև նրա համար ևս սարսափելի էր փոթորիկը հավիտենական սառույցների վրա:

Պրոֆեսոր Պարրոտին նրանք դիմավորեցին, ինչպես հաղթանակից վերադարձող զորավարի: Եվ շատ գարեջուր խըմեցին այդ և հաջորդ օրերը, իրար հաղորդելով դժվար վերելքի այնպիսի մանրամասնություններ, ասես բոլորը, և մինչև անգամ ֆրաու Ֆոգելզանգը և նույնիսկ այն ձկնորս ծերուկը,— բոլորը բարձրացել էին Արարատի գագաթը և այժմ իրենց տանը, հարազատների շրջանում վերհիշում էին այդ վտանգավոր ուղևորությունը:

10 Դեռևս կենդանի էին գրույցները Արարատի վերելքի մասին, և առանձին ակնածանքով էին գլուխ տալիս «հերր պրոֆեսորին», երբ հայտնվեց հայր՝ իսկական բնակիչը Արարատյան աշխարհի, որ երկրորդն էր բարձրացել և գերմանացու կապարե խաչի կողքին Արարատի գագաթին խրել էր իր ձեռագործ փայտե խաչը:

Ահա ինչը նրա համար Դորպատում ստեղծեց համբավ զարմանալի արագությամբ, և հենց հաջորդ օրից նա դարձավ մեկը, որին շատ տներում գրկաբաց կընդունեին, որի անցնելուն սպասում էին փողոցի բնակիչները, և որի մասին պատմում էին, թե մինչև Դորպատ գալը նա չգիտեր գարեջուրը, և ինչպես փոքր տղա նա հրձվանքով դիտել էր գույնզդույն թղթերից սարքած այն օդապարիկները, որ ըստ այն ժամանակի սովորության տոն օրերին բաց էին թողնում օդի մեջ:

20 Բայց արդեն անցել էր այդ ժամանակը, և փոշի էր նստել սև կապայի վրա: Նա հագնում էր մահուդե վերարկու և բարձրավիզ սյուրտուկ, որից ավելի էր երկարում հասակը: Նա կապում էր ծաղկանկար կրծկալ և թավշյա փողկապ: Հյուսիսի սառն օդը փոխել էր նրա դեմքի ցորնագույնը, բայց աչքերը մնացել էին նույնը, հարավի մարդի խելոք և խորունկ աչքերը՝ «մութ ծովեր», ինչպես անվանել էր տիկին էլտիզ Աուսլենդերը, որն այլևս չէր հագնում նրանց հմայող գեղեցկությամբ:

## 7

Տիկին էլտիզը դեռ չէր ավարտել դեպքերի նկարագրությունը (ուսանողներին նա անվանում էր «խեղճ երիտասարդներ») և հաճախ պատմելն ընդհատում էր միջանկյալ դիտողու-

թյուններով ուսաների մասին, օրինակ, երբ հիշատակեց Քարե կամուրջը, նա, դառնալով տիկին Պարրոտին, ասաց. «Ես ձեզ չեմ պատմել, թե ինչպես իմ Գերմանը հենց երեկ Քարե կամուրջի վրա կովել է ուս կառապանի հետ... Ճշմարիտ որ կովել է, միայն, իհարկե, ոչ ինչպես խեղճ երիտասարդները... իսկ մեղավորը՝ ուս կառապանն է: Նրա ձին կամուրջի վրա ընկնում է, և փոխանակ օգնելու խեղճ կենդանուն, հիմար ուսն սկսում է ծեծել նրան և ինչպե՞ս՝ սապոգներով... Այդ ժամանակ իմ Գերմանը չի համբերում և սկսում է կառապանին հանդիմանել...», — տիկինը դեռ չէր ավարտել պատմելը, երբ դիմացի սենյակի դուռը բացվեց, և դուրս եկավ մի ալեհեր մարդ՝ կապույտ մունդիրով և կարճ թրով, որի կոթից կախված էին կարմիր ժապավեն և ոսկեկար ծոպեր: Նա արդեն ալեհեր էր, և ծերությունից նրա մեջքը կռացել էր: Նրա հետևից դուրս եկավ ռեկտորը՝ «հերր պրոֆեսոր» Ֆրիդրիխ Պարրոտը, նիհար և ցամաք երեսով մի կարճահասակ մարդ:

10

— Էվստարխ Իվանիչ, գուցե շմերժեիք մի փոքր հանգրստանալու մեր համեստ սեղանի շուրջը՝ ի վարձատրություն մեր հոգնության, — ծերունուն դիմեց Պարրոտը:

— Որքան էլ հաճելի է ներկայությունը տիկինների և քաղցր է ձեր հրավերը, բայց ես ստիպված եմ պատժել ինձ, զրկելով այդ հաճույթից, — և ծերունին, փափուկ սապոգներն իրար զարկեց ինչպես հին ասպետ, և մեղմ զրնգացին նրա սապոգների խթանները: — Նաև ձեզ հայտնի է, Ֆրիդրիխ Գեորգեվիչ, իմ պաշտոնի խստապահանջությունը, եթե ոչ՝ մեծավ ուրախությամբ, — և նա ծիծաղեց շոր ու կեղծ ծիծաղով, որ փոխվեց հագի՝ անախորժ և նույնքան շոր:

20

— Միայն մի գավաթ՝ իսկական ռեյնվեյն, Էվստարխ Իվանիչ: Խնդրում եմ շմերժել, — և տիկին Պարրոտը մոտեցավ պահարանին:

30

— Մերժել հարգելի տիկնոջ հրավերը՝ այդ արդեն չեմ կարող: Սակայն eine Minute, շատ եմ խնդրում, — և ծերունին թեթև հազաց, կոկորդը մաքրելով հռենոսյան գինու համար:

— Թույլ տվեք ներկայացնել Ձեզ իմ Liebling-ին... Հերր գիակոնուս Արովյան, որի մասին անշուշտ լսել եք:

293

— Օ, և այն էլ ինչպիսի պատմութիւններ... Ուրախ եմ սեղմելու Ձեր ձեռքը: Շատ ուրախ եմ,— Արովյանը մի քանի քայլ արեց և թեթևակի խոնարհելով գլուխը, սեղմեց ծերունու ձեռքը:

— Կարծեմ, որ նա չի մասնակցել այսօրվա անկարգութիւններին...— Եւ ծերունին դեմքը կեղծ գայրույթով խրատացրեց, ուռցրեց այտերը, և բեղերը ցցվեցին՝ մեկը դեպի վեր, մյուսը՝ ներքև:

10 — Օ, ոչ, էվստարխ Իվանիչ... Նա գրադված է միայն իր դասերով,— և պրոֆեսորը ծերունուն մոտեցրեց զավաթը:

— Սիրում եմ, շատ եմ սիրում գիտութիւնը և կարգապահութիւնը: Դուք շատ առաջ կգնաք այդ ճանապարհով, երիտասարդ,— և ծերունին բարձրացրեց զավաթը, գլուխը թեթև խոնարհեց տիկին էլոիզ Աուսլենդերին, ապա տիկին Պարրոտին և ետ գցեց գլուխը: Տիկին էլոիզին անհաճելի էր տեսնել ծերունու կոկորդի ձգված երակները և մկանները և շոր կոկորդը, որ կծկվում էր գինու յուրաքանչյուր ումպի հետ:

Այդ ծերունին պոլիցեյմեյստեր Կրուչինսկին էր, որը եկել էր համալսարանի ռեկտորին հաղորդելու օրվա պատահարի, 20 կամ ինչպես նա էր ասում, «ձեռունահարկի բնակիչների անկարգութեան» մասին և պատժել տալու նրանց, որոնք «հակաօրինական բունտ էին սարքել» («учинили противузаконный бунт»), աղյուսներ շարտելով հեծյալ ոստիկանների վրա: Նա եկել էր մեծ պահանջներով և դեպքն այնպես էր նկարագրել, որ նրա ասելով, եթե վախճիստը խոհեմ չլիներ, ապա անխուսափելի էին արյունահեղութիւնները երիտասարդ մարդկանց և ոստիկանների միջև, մանավանդ, որ վերջիններս պաշտպանում էին իրենց ազգակիցներին: Պոլիցեյմեյստերը հաղորդել էր նաև, որ գրգռված երիտասարդների 30 խմբից լսվել են անթույլատրելի բացականչութիւններ, որոնց մասին եթե տեղեկանա գեներալ-նահանգապետը և մանավանդ քաղաքի ժանդարմական գնդապետ Դոնցովը, ապա կարող են առաջանալ մեծամեծ անախորժութիւններ, և կրտուժի համալսարանի համբավը, և կարող են այդ բանից օգտուրդել համալսարանի թշնամիները (իսկ թե ովքեր էին այդ

թշնամիները՝ ծերունին շասաց) և առհասարակ քաղաքի այն բնակիչները, որոնք իրեն՝ պոլիցեյմեյստեր Կրուչինսկուն հաճախ են գանգատվում ուսանողներից:

Իր խոսքին կշիռ տալու համար ուստիկանապետն ակնարկել էր մի ինչ-որ գաղտնի շրջաբերականի մասին, որ նա ստացել էր Սանկտ-Պետերբուրգից պրոֆեսոր Պարրոտին հայտնի անձնավորութան ստորագրութամբ, և որով առաջարկվում էր հատուկ հսկողութուն սահմանել ուսանողների վրա, ի նկատի ունենալով այն, որ մի քանի զորագնդեր պետք է ձմեռոտին Գորպատում և ապա շուտով այդտեղով պիտի մայրաքաղաք վերադառնար Պավլովյան գունդը, և երկու հետևակ գունդ, որոնք հետ էին գալիս Լեհաստանից և հնարավոր էր, որ երկար ժամանակով հանգստանային Գորպատում, որպեսզի վայելուչ տեսքով ներկայանան Նորին կայսերական մեծութան:

10

Ռեկտորը զգուշավորութամբ առարկել էր, որ երկուստեք են հղել անվայել բացականչություններ, և հարկավոր չէ կարևորություն տալ գրգռված վիճակում արտասանած խոսքերին: Ինչ վերաբերում է ուստիկանների վրա աղյուս շարտելու փաստին, ապա ինքը համոզված է, որ ուսանողները մի քանի աղյուս են նետել ոչ թե ուստիկանների, այլ իրենց հակառակորդների վրա և այն էլ ոչ թե որևէ մեկի մարմինն ծանր վնաս հասցնելու, այլ վախեցնելու դիտավորութամբ: Ռեկտորը հայտնել էր նաև, որ նախահարձակ են հղել հարբած վաճառականները և ուսանողները միայն ստիպմամբ պաշտպանել են իրենց և ընկերների պատիվը: «Այդ միանգամայն ճշմարիտ է, հարգելի Ֆրիդրիխ Գեորգևիչ»,— համաձայնել էր պոլիցեյմեյստերը,— «այսպես են վկայում նաև չեղոք քաղաքացիները»: «Շատ ուրախ եմ, որ այդպես է, սիրելի էվստարիս Իվանովիչ... Այն ժամանակ ներեցեք ինձ, եթե համարձակվեմ այսպիսի հարց տալու Ձեզ. ի՞նչ կասի պարոն գեներալ-նահանգապետը, եթե տեղեկանա, որ Ձեր հսկողութան հանձնված քաղաքում ինչ-որ հարբած մարդիկ օրը ցերեկով հարձակվում են անմեղ ուսանողների վրա և... կարո՞ղ է այդպես հարցնել: Կարող է: Եվ այն ժամանակ պարոն գեներալ-նահանգապետը կասի. իսկ որտե՞ղ էին ուստիկանները և հարգելի պոլիցեյմեյստերը, այդ ինչպիսի՞ բարքեր են այդ քա-

20

30

զաքում: Հավատացնում եմ, կասի և կավելացնի այնպիսի բաներ, որ կատարյալ անախորժություն կլինի Ձեզ համար, նաև համալսարանի համար, որն այսպիսով կարող է զրկվել Ձեր այնքան օգտակար բարեկամությունից»:

- «Հերբ պրոֆեսորը» միանգամից էր խառնել ծերունու բուրբ հաշիվները: Ռեկտորի ասածն այնքան ճշմարտանման էր, որ Կրուչինսկուն մի վայրկյան թվաց, թե այդ բոլորն արդեն կատարվել է, թե գեներալ-նահանգապետից արդեն ստացվել է այդ գրությունը, և օր ծերության պաշտոնանկ լինելով, նա թողնում է Դորպատը: Սառը քրտինք երևաց նրա ճակատին, և թաշկինակը ճակատին սեղմելով՝ նա շշնջաց. «Դուք իրավացի եք, Ֆրիդրիխ Գեորգևիչ, միանգամայն իրավացի եք... Սատանան ինչի հետ ասես, որ չի խաղա... Եվ ինչ լավ է, որ չեմ գրել ռապորտը: Հավատացնում եմ, որ մի քանի անգամ կանչեցի քարտուղարին, որպեսզի թելադրեմ: Բայց ինչ-որ ձայն ինձ ասում էր, թե գնա Ֆրիդրիխ Գեորգևիչի մոտ, նրա հետ խոսիր և ապա նոր... Ինչպե՞ս ասեմ: Նու, կարծեք թե ես ուզում էի նստել աթոռի վրա և, կարծեք, ամեն անգամ աթոռի միջից, համարձակվում եմ ասել, ցցվում էր մի սուր բան և չէր թողնում նստեմ... Ծնորհակալ եմ, մեծապես շնորհակալ եմ... Ախր ես (և այդ խոսքի վրա նա ճակատին ձեռքով այնպես էր խփել, որ հարևան սենյակում լսել էին այդ ձայնը, և տիկին Պարրոտը մոտեցել էր դռանը), ախր ես կարող եմ ասել, հիմար եմ: Եվ որտեղի՞ց ինձ խելք... Եվ առհասարակ ո՞վ է խելք տվել ռուսներին: Մեր բանն է աջ-ձախ կրակել, շարդել, թափել: Աստված մեզ խելք չի տվել, և այդպես էր ասում նաև իմ հանգուցյալ հայրը, թե Աստված խելք է տվել միայն գերմանացիներին...»: Այդպես նա երկար պիտի խոսեր, եթե նրան չընդհատեր պրոֆեսորը և շառաչարկեր, թե այնուամենայնիվ հարկավոր է «մի բան ւանել»: Եվ համաձայնեցին, որ պոլիցեյմեյստերն այդ օրվա պատահարի մասին տեղեկացնում է միայն իբրև պարզ տնկարգություն և պատժում է առևտրականներից հանցավորներին («Ես նրանց եղջյուրի նման կծռեմ», — կանչել էր Կրուչինսկին), — իսկ համալսարանի տրիբունալը կպատժի հանցավոր ուսանողներին և այդպիսով կվերջանա պատմությունը:

— Դե արդեն ժամանակն է ճանաչելու պատիվը... — և ծերունի Կրուչինսկին դատարկեց շորրորդ գավաթը: Նրա ցամաք երեսը գինուց առույգացավ, և կայտառացան աչքերը, որոնց մեջ մինչ այդ կար մեռելային սառնութիւն: — Իսկ գինու մասին, կարող եմ ասել, որ արքայական գինի է: Հոն-նոսյան վարդաշուր, տիկին, կատարյալ և սուաքինի գինի: Այնպես չի՞, տիկին, — դարձավ նա տիկին էլոիզին, որը ոչ գինու համն էր ճաշակել և ոչ լսում էր պոլիցէյմեյաստերին, այլ ասեղնագործում էր, մատներն արագ շարժելով, կարծես խաղում էր կլավիրի վրա:

10

— Այո, գինին անարատ է, — պատասխանեց Արմենիերը, նկատելով, որ տիկին էլոիզը հանկարծակիի եկավ և կարմրեց:

— Եվ այլևս ոչ մի կարծիք: Այս կարծիքից հետո մենք լռում ենք, Ֆրիդրիխ Գեորգեիչ: Մենք լռում ենք, երբ խոսում է Արարատի որդին և, կարող եմ ասել, Նոյի երկրից: Շատ ուրախ եմ, որ այսօր ես բախտ ունեցա սեղմելու Ձեր ձեռքը, պարոն Օրովյանով, և կարող եմ ասել, որ երիտասարդը ուղիղ ճանապարհի վրա է շնորհիվ Ձեզ, ամենահարգելի Ֆրիդրիխ Գեորգեիչ, և նաև ես, որ իմ բարեբարն եք, — ուրեմն թույլ տըվեք խոնարհվել և auf Wiedersehen, տիկին, որին ես պատիվ ունեցա ծանոթանալու ի շնորհիվ Ձեզ, թանկագին Ֆրիդրիխ Գեորգեիչ, և ներողութիւն, մեծ ներողութիւն... Ես արդեն ծեր եմ, իսկ այս գինին կատարյալ է, իսկական սուրլիմենցիա...

20

Կրուչինսկին երկրորդ անգամ թոթվեց տիկին Պարուտի ձեռքը, սեղմեց նաև տիկին էլոիզի բարակ մատները և համբուրեց՝ մի քանի անգամ կրկնելով՝ «Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ», որ կարելի էր հասկանալ և իբրև ուրախութիւն անցկացրած երեկոյի համար, և ուրախութիւն, որ նրա դողացող մատները հպել են տիկին էլոիզի փափուկ ձեռքին:

— Այժմ հնութիւն, դեպի գործ, դեպի գործ... Կարող եմ ասել, — բայց այս անգամ այլևս ոչինչ չասաց, այլ միայն աղմկելով թրով և սապոգների խթաններով՝ քայլեց դեպի դուռ: Կանայք լսեցին նրա ձայնը նախասենյակից:

30

— Ոչ մի դեպքում... ոչ մի դեպքում այդպիսի գոեհկութիւն: Դուք իմ հովանավորն եք, Ֆրիդրիխ Գեորգեիչ, իսկ այս

297

երիտասարդը Արարատի որդին է և, կարող եմ ասել, հերր դիակոնուս... Ոչ մի դեպքում:

Կանայք հասկացան, որ պոլիցեյմեյստերի առարկությունը նրա գրատի մասին է: Մերունին չէր թողնում, որ նրան հագցնեն ո՛չ պարոն ռեկտորը և ո՛չ Արմենիերը: Նա ուրիշ ինչ-որ բան ասաց, որից հետո բարձր ծիծաղեց, և շուտով սանդուղքների վրա լսվեց նրա հեռացող ոտնաձայնը:

8

10 — Զարմանալի մարդիկ են ռուս աստիճանավորները,— ասաց պրոֆեսորը ծերունուն ճանապարհելուց հետո,— իմ սիրելի բարեկամն ի՞նչ կասի նրա վարմունքի մասին՝ դրսում...

Արմենիերը, որին զայրացրել էր և ծերունի պոլիցեյմեյստերի գինարուբը, և նրա խոսակցությունը և այն, որ նա երկու անգամ սեղմեց տիկին էլոիզի ձեռքը և համբուրեց, որից ցնցվեց տիկինը, և Արմենիերը նրա աչքերում զզվանք տեսավ, որովհետև ծերունին առանց շրթունքները սրբելու էր համբուրել այդ ձյունափայլ ձեռքը,— Արմենիերի զայրույթը սաստկացավ, երբ պրոֆեսորը հիշեցրեց պոլիցեյմեյստերի գոհհիկ վարմունքը դրսում, երբ մոտեցան կառքին:

20 Կառապան զինվորը՝ երկար սպասելուց հոգնած քնել էր ոչ թե իր տեղը, այլ այնտեղ, ուր պիտի նստեր Կրուչինսկին: Այդ բանից սաստիկ բարկացավ ծերունին և այնպես բոթեց քնած մարդուն, որ խեղճը քունը գլխին թռավ մի քանի քայլ, բայց սանձերը ձեռքից չթողեց:

«Քշիր... և ես ցույց կտամ»,— բղավեց ծերունին այնպիսի ձայնով, որով չէր խոսել ոչ Ֆրիդրիխ Գեորգելիչի առանձնասենյակում, ոչ տիկինների ներկայութամբ, և նույնիսկ անհավատալի է, թե այդ զառամ մարմնից կարող է դուրս ելնել այդպիսի ահավոր մոնչոց:

30 — Ծա հիշեցի այն աղալարին, որ մեզ հրավիրեց իր վրանը, երբ մենք գնում էինք դեպի սուրբ Հակոբի վանքը: Հիշո՞ւմ եք, չկարողացանք վրանի տակ նստել, երբ լսեցինք այն թշվառ մարդու աղիողորմ ձայները...

— Այն արդեն գազանային դատաստան էր, — և ապա ավելացրեց, — դուք ճշմարիտ եք. երկուսի մեջ նմանութուն կա, և երկուսն էլ ասիացի թունակալներ են, որոնք ստորադաս մարդու հետ բորենի են, իսկ մեծավորի առաջ՝ ազվես: Հիմար մարդիկ են... Այո՛:

— Իսկ ի՞նչ դատաստան էր, — հետաքրքրվեց տիկին էլտիզը:

— Ձեր ջղերը թույլ են լսելու այդ պատմությունը, որ իմ հայրենիքի բիրտ բարքերն է վկայում:

— Բայց ավելի սոսկալի չէ, քան այն, երբ խանձել են **10**  
ձեր մազերը:

— Ավելի սոսկալի է:

Եվ որովհետև տիկին էլտիզը խնդրեց, նաև խնդրեց տիկին Պարրոտը, Արմենիերը պատմեց, թե ինչպես ուղևորութեան ժամանակ, Արարատի ստորոտում նրանք հանդիպում են վաշկատուն քրդերի վրանների, որոնց գլխավորը (աղալարը) ճանապարհորդներին հրավիրում է լուր վրանը: Երբ նրանք ներս են մտնում, վրանի հետևից լսում են ինչ-որ աղբխարշ բացականչություններ: Մոտենալով, նրանք տեսնում են մի կիսամերկ մարդու, ձեռքը և ոտքը ամուր կապած և մեջքի վրա պառկած, այնպես, որ մարդը շէր կարող որևէ շարժում անել: Նրա վրա թափել էին մածուն և լոռի ջուր: Որովհետև շոգ էր, ուստի բազմաթիվ ճանձեր թափվել էին նրա վրա և ծծում էին մածունը և լոռի ջուրը: Երբ նրանք մոտեցան, ճանձերը մի կողմ թռան և պատժվածի մերկ մարմնի վրա նրանք տեսան արյան կաթիլներ: Ապա հետ եկան ճանձերը՝ մեծ և կանաչ թևերով, նաև փոքր ճանձեր և ուրիշ այլ ճանձեր, որոնք գազազել էին շոգից և առատ սնդից ու ծածկել էին մարդու մարմինը և վխտում էին կրծքի վրա, կզակի վրա, ականջների մեջ և ուունգերի մոտ ու աչքերի խոռոչում, — և անօգնական մարդն արդեն նվազած միայն աղիոզորմ տնքում էր: Պրոֆեսորը պայրացավ և ուղեկից կազակներին կարգադրեց, որ անմիջապես արձակեն կապերը: Արմենիերը նկատեց, որ աղալարը դժգոհում է, և նրան մի կողմ քաշելով հասկացրեց, որ գերմանացին ավելի հզոր է, քան ռուսների «սարու փաշան» և հորդորեց, որպեսզի աղալարն ինքն արձակի

**20**

**30**

**200**

խեղճ մարդու կապերը: Քուրդը քրթմնչաց, բայց հանեց  
ահագին խանչալը և կտրտելով կապերը, կանչեց. «Այս աղանե-  
րի ղուլն ես, մունդառ...»: Ամբողջ ճանապարհին նրանք խոսում  
էին այն մասին, թե քուրդը նորից չի՞ կապկպի այն մարդուն:  
Նրանք որոշել էին վերադառնալ նույն ճանապարհով և ստու-  
գել, բայց երբ վերադարձան, ոչ վրանները կային և ոչ ոչ-  
խարի հոտերը, այլ մնում էին միայն օջախի քարերը, մոխ-  
րակույտը և հողի մեջ խրված այն սեպը, որից կապկպել էին  
մարդուն:

- 10 — Իսկ ինչի՞ համար էին պատժել նրան:  
— Նրանց գլխավորն ասաց, որ իբրև թե նա վրանից  
յուզ է գողացել:  
— Ինչ խիստ են պատժում ձեր հայրենիքում,— ասաց  
տիկին Պարրոտը:

— Ասիան ավելի խիստ պատիժներ գիտե: Այնտեղ գողու-  
թյան համար ձեռք են կտրում, բողոքելու համար լեզու են  
կտրում, իսկ սուտ լուրի համար կտրում են ականջը: Այդպես է  
Ասիան...

- Բայց ես լսել եմ, որ այդպես պատժում են նաև ռուս-  
ներն իրենց ճորտերին,— առարկեց Արմենիբըրը:

— Իսկ ռուսների երկիրը ինչով Ասիա չի,— տխուր պա-  
տասխանեց Պարրոտը,— և մենք դեռ ինչքան պետք է աշխա-  
տենք, որպեսզի այդ երկիրը դառնա մեր հայրենիքի նման:  
Լուսավորություն, ահա թե ինչն է պակասում ռուսներին: Լու-  
սավորություն, և այն ժամանակ այս վայրենի ժողովուրդը  
հրաշքներ կգործի:

— Իսկ մինչ այդ նրանք պիտի ծեծեն խեղճ երիտասարդ-  
ներին,— կծու ասաց տիկին էլոիզը:

- Պետք է ասեմ, որ մերոնք էլ պակաս հանցավոր չեն:  
20 — Նրանք միայն պաշտպանվել են:

— Ծրանի այդպես լինել... Ես միշտ ասել եմ, որ Ֆրանս  
Ֆոգելզանգի պանդոկը բարի վախճանի չի հասցնի,— և պրո-  
ֆեսորը նայեց յուր սանին այնպես, կարծես այդ խոսքերով  
նրան խրատում էր զգուշանալ այդ պանդոկից:— Գինին և  
ճշմարիտ գիտությունն իրար թշնամի են:

— Բայց նրանք երիտասարդ են, և նրանց զվարճանալ է պետք:

— Այո, տիկին, սակայն ոչ այնպես, ինչպես այսօր զբժարճացան: Այդ զվարճության համար երևի մի քանիսը պատրժվեն, և որքան էլ ես սիրում եմ նրանց, այնուամենայնիվ պետք է պատժել, որովհետև երիտասարդների համար ոչինչ այնքան կործանարար չէ, որքան վատ օրինակը:

— Ես գիտեմ, որ պարոն պրոֆեսորը ողորմած է:

— Եվ յուր պաշտոնի մեջ խիստ,— ժպտալով վրա բերեց պրոֆեսորը,— իսկ ի՞նչ կասի այդ մասին մեր սիրելի Արմենիերը: 10

— Այդ պատահարի մասին ինձ քիչ առաջ պատմեցին և ինձ շատ վրդովեցրեց հարբած վաճառականների անիրավությունը:

— Ուրեմն, եթե դուք այնտեղ լինեիք, անշուշտ կմասնակցեիք կովին և արևելցու ձեր տաքարյունությամբ գուցե ավելի հեռու գնայիք, քան ուսանող Քոմաս Բրյուվը:

— Ես չգիտեմ, բայց ես գութ ունեմ:

— Դրա համար այնքան դառնացաք ժերունի Կրուչինսկուց: 20

— Նա մի ասիացի բռնակալ է, ավելի բիրտ, քան այն քուրդը, որ յուր լեռներից բացի ուրիշ ոչինչ չի տեսել...— Նրա աչքերը բոցկլտացին ատելությամբ, և ազնիվ զայրույթից գեղեցկացավ դեմքը: «Այս հայի հոգին գանձեր ունի, ինչպես նրա խավար երկիրը, և արդյոք նա չափից ավելի չի բորբոքում յուր ատելությունը»,— մտածեց պրոֆեսորը, որ նրան խնամում էր, ինչպես անդրծովյան երկրից բերած մի գազանի, որ ձեռնասուն էր դարձել և սիրում էր նրա խնամող ձեռքը, բայց ուներ նաև ճանկեր, և մի անհայտ ուժ նրա մեջ երբեմն արթնացնում էր այլ բնազդներ: 30

Տիկին էլոիզը վեր կացավ, գանգատվելով, որ երկար է նստել, և երևի արդեն անհանգստանում է նրա ամուսինը: Բալորը ոտքի կանգնեցին:

— Արմենիերը կուղեկցի ձեզ, և ապա կվերադառնա յուր բնակարանը և կպատրաստի դասերը,— ասաց պրոֆեսորը:

— Ես նրան միայն ցույց կտամ Գերմանին՝ իրրև կենդանի ապացույց, որ նրան ոչինչ չի պատահել,— և տիկին էլ լռիզբ ծիծաղեց, ձգեց իրանը, նրա թավշե զգեստը ծալ-ծալ ծփաց, ինչպես կատվի մորթին, երբ տաք անկողնում զարթնում է կատուն:

Նրանք բարի գիշեր ասացին և հեռացան: Պրոֆեսորը սանդուղքի գլխին պահեց լապտերը, մինչև նրանք դուրս եկան փողոց:

Դուրսը մութ էր, և մարդաձայն չէր լսվում:

10 — Երկար նստեցինք,— և տիկինը դանդաղեցրեց քայլերը: Նրանք լուռ գնում էին կողք-կողքի:

— Դուք շե՞ք մրսում... Սառն է օդը:

— Ես ցուրտ չեմ զգում:

— Երիտասարդ եք և եռում է ձեր արյունը, իսկ ե՞ս,— և նրա ձայնը դողաց: Տիկին էլ լռիզբ յոթ տարով մեծ էր Արմենիերից, սակայն նա խնամքով էր պահել իրեն և տարիքից ավելի երիտասարդ էր:

— Դուք դարձյա՞լ զայրացած եք:

— Այն ծերունու վրա՝ այո՛:

20 — Իսկ ի՞նչ էր պատահել դուրսը:

Արմենիերը պատմեց և ավելացրեց.

— Ինչպե՞ս կարելի է... չէ՞ որ նա էլ մարդ է: Եվ ես գիտեմ, որ այն թշվառին երևի ավելի սաստիկ է պատժել, երբ հասել են պոլիցեյհանուզ: Նա ինքն արդեն սպառնաց:

— Բարի է ձեր սիրտը, իմ բարեկամ, և թող միշտ այդպես մնա,— և մթնում տիկինը սեղմեց նրա ձեռքը, ապա թուլացրեց և զգաց, որ ուղեկիցն այլևս չի թողնում այդ տաք և քնքուշ ձեռքը:

Նրանք այդպես լուռ գնացին՝ ջերմ անըջանքի մեջ, և տիկինը միայն մտածում էր, որ շանցնեն իրենց տնակը, որովհետև երբեմն նրան թվում էր, թե ոչ թե քայլում են մութ փողոցով, ուր խավարի մեջ ուրվագծվում էին տները՝ սրածայր կտուրներով, փակ դարպասները և ծառերը, որ դեռ մերկ էին, և նոր էին ուռչում բողբոջները,— տիկին էլ լռիզին թվում էր, թե քայլում են մի անսահման դաշտով, որտեղ ոչ

մարդ կա, ոչ մարդաձայն է լավում, այլ միայն խշշում են խոտերը, և եղեգնուտի մեջ քնել են երկու թռչուն՝ կտուցկտցի:

Մանոթ դարպասին շուտ հասան:

Պրոֆեսոր Գերման Աուսլենդերը դուան մոտ գրկեց իր բարեկամին, կարծես նրան վաղուց չէր տեսել և երիտասարդը վերադառնում էր գերությունից: Նա ծալեց գիրքը և ուրախ քացականչեց.

— էլ ի՞նչը մեզ հյուրասիրում է սուրճով... Առանց առարկության:

10

Մագիստրատի աշտարակից ժամացույցը խփում էր կես գիշերը, երբ նա տուն վերադարձավ: Չէր հիշում, թե ինչքան էր շրջել դուրսը: Ինչ-որ մութ բան դառնում էր նրա հոգու մեջ, խլրտում էր, ինչպես աճում է բողբոջը գարնան գիշերին: Նա մերթ հիշում էր Դոմբերգը, ուր եղել էր ցերեկը և առանձնության մեջ արտասվել էր մի անառիթ տխրությամբ, որ երբեմն պատում էր նրան և նրան մղում էր դեպի բլուրները և անտառը և էմբախի լուռ գետեզրը, մերթ ականջին հընշում էր ձայնը այն հիվանդ լեռնցու, որին ցերեկով այցելել էր, մերթ զգում էր մի քաղցր շերմություն և ուռչում էր կուրծքը, թվում էր իրենն է ամբողջ աշխարհը և ինքն աշխարհի ամենաերջանիկ մարդն է, բայց մի ուրիշ հույզ, ինչպես մշուշ, ծածկում էր գարնան պարզկա երկինքը, և ոչինչ չէր երևում և միայն ծնոտի վրա զգում էր նույն ձեռքի շերմությունը:

20

— Հիմա արդեն սառն է և դուք կմրսեք,— տիկին էլ ի՞նչը նախասենյակում բարձրացրել էր նրա օձիքը, ինչպես մայր, որ տաք փաթաթում է երեխային և այնպես դուրս թողնում:

9

— Մի դժբախտ մարդ ողջունում է քեռի Մարտինին և խնդրում է իրեն հյուրընկալել...

30

Այդ խոսքերով մոտեցավ Թոմաս Բրյուլլը ծերունի Մարտինին, որը դեռ նոր էր տեղավորվել նստարանի վրա և քթախոտի տուփը ձեռքին ուզում էր ներս քաշել մի պտղունց,

363

որից հետո պիտի ընթերցեք երեկոյան աղոթքը: Բայց ամեն ինչ խանգարվեց: Նա նստարանի վրա թողեց ոսկրե տուփը, աղոթագիրքը, նաև ահագին թաշկինակը, որ ծերուհին արևի տակ փռել էր, որպեսզի փռշտալուց հետո տաք թաշկինակով քիթը սրբեր:

Նա գոտուց արձակեց բանալիների կապը:

— Բայց լավ չի, պարոն Բրյուլլ, լավ չի, որ այդքան հաճախ եք այցելում ինձ... Դեռ ձմեռ էր, որ ես ստորագրեցի ձեզ համար և հիմա նորից... Աստված վկա, լավ չի:

10 — Ավազից պարան ես հյուսում, քեռի Մարտին:

Նրանք ներս մտան մի նկուղ, որ ուներ միայն մի լուսամուտ այնքան բարձր, որ երկարահասակ մարդու ձեռքը չէր հասնի և այնքան փոքր, որ այդ նույն մարդը հազիվ կարող էր ձեռքը դուրս հանել, եթե բարձրանար աթոռակի վրա: Բակում մնաց միայն ավագ պեղելը՝ վիթխարի հասակով մի մարդ, որ թեև հագել էր կարճ կաֆտան և մինչև ծնկները բրդի գուլպաներ, բայց շարժ ու ձևերով հայտնի էր դարձնում, որ ժամանակին եղել է խստաբարո զինվոր և այդպիսին էլ մնացել է:

20 Պեղելը, որ ուղեկցում էր Թոմաս Բրյուլլին, թեև տակից հանեց մատյանը և քեռի Մարտինին ցույց տվեց ստորագրելու տեղը:

— Ընդունում եմ մի զուլխ, որ իրեն մեղավոր չի ճանաչում, մի սիրտ, որ ատելությամբ է լցված իր թշնամիների հանդեպ, մի զույգ ձեռքեր, որոնք մի օր պիտի շոշափեն նրանց կողերը և մի մարմին, որին յոթ օր, յոթ գիշեր պարտավոր եմ պահպանել հացով ու ջրով... Ստորագրի՛ր, քեռի Մարտին,— նկուղի դռան մոտ արտասանեց Բրյուլլը և միևնույն ժամանակ ձեռքով նշան արեց «սև եղբայրներին», որոնք հեռվից հեռու նրան հետևել էին և այժմ փողոցից նայում էին դեպի բակը: «Սև եղբայրները» հասկացան, որ ավագ պեղելը հիմա պետք է վերադառնա և որպեսզի նրան չհանդիպեն, ցրվեցին՝ ինչ որ նշան անելով իրենց ընկերոջը:

Ավագ պեղելը լուռ հեռացավ, մատյանը թեև տակ, զուլխը բարձր բռնած և այնպիսի քայլերով, երբ ծնկները չեն ծալվում և թվում է, թե ոտքերը ձուլված են թուշից:

— Եվ ինչի համար հանգիստ չեք մնում, պարոն ստուգենտ... — Եվ քեռի Մարտինը տնքալով ներս բերեց ջրամանը, ապա մի հաստ ներքնակ, որ երբեմն փռում էր արևին... — Հիմա ձեր ընկերների հետ կլինեիք, կարող էիք նավակով գրոսնել, մինչև անգամ կմտնեիք Ֆրաու Տոգելզանգի պանդոկը և ուրիշ էլ ինչեր չէիք անի... Տեսեք, ինչ հիանալի երեկո է, ինչ գարուն է բացվում: Մինչև անգամ իմ արշունս է եռում... Չէ, երիտասարդ պարոն, ափսոս եք, շատ ափսոս... Եվ ինչպես պիտի յոթ օր, յոթ գիշեր մնաք այս վանդակում:

Մերունին սրբում էր նկուղը և քրթմնջում քթի տակ: Այդ 10 քեռի Մարտինի սովորութիւնն էր՝ խրատել սկզբում, ապա բարեկամանալ կալանավոր ուսանողի հետ, մինչև անգամ գաղտնի կերպով նրա համար հարմարութիւններ ստեղծել, պատճառաբանելով, որ ինքը քրիստոնյա է և չի կարող մերձավորի ծանր վիճակը շփեթեացնել: Բայց միշտ սկսում էր հանդիմանութիւնքով և նախատինքով:

Քոմասը կանգնել էր նկուղի մեջտեղը և անտարբեր լսում էր ծերունուն, բաց դռնից նայելով երկնքին, որտեղ արևն արդեն մանիշակագույն էր ներկում վիրջուլույսի ամպիրը:

Համալսարանի տրիբունալը այդ օրն էր սահմանել վճիռը 20 և, ինչպես կարգն է, վճռի ընթերցումից հետո ավագ պեղելը մոտեցել էր նրան, հասկացնելով, որ այժմ հարկավոր է գնալ ոչ թե գետափ կամ այգի և կամ էլ զվարճութիւն, այլ պետք է յոթ օրով մնաս բարով ասել այդ բոլորին՝ և քայլել դեպի քեռի Մարտինի տնակը»:

Գործի քննութիւնը տեւել էր մի շաբաթ: Կուրատորը հարցաքննել էր նաև այն ուսանողներին, որոնք Քարե կամուրջի կովին չէին մասնակցել: Շատերն էին երդմամբ վկայել, որ նախահարձակ եղել են ուսանորը, իսկ Ստեֆան Գյունտերը, ցույց տալով իր մարմնի վերքերը, կուրատորի երեսին բղավել էր, որ եթե ուսանորին չպատժեն, ապա ինքը կբողոքի լուսավորութիւն մինիստրին և կգրի, որ Գորպատի արքայական համալսարանը չի պաշտպանում ուսանողի կյանքը հարբած ամբոխից: Քոմաս Բրյուլլի հանցանքը թեթևացրել էին նաև այն մի քանի հարվածները, որ ստացել էին ուսանողներից ոմանք բռնցքամարտի ժամանակ, հարվածներ, որոնց հետքե-

րը դեռևս երևում էին նրանց դեմքի վրա, իբրև կապտած ուռուցքներ: Այդ ակներև փաստերը անառարկելի էին դարձրել այն, որ հարձակվել էին ռուս վաճառականները, իսկ ուսանողները միայն պաշտպանել են իրենց և եղբայրության պատիվը: Բայց որովհետև Թոմաս Բրյուլլին առաջինն էր բռնցքակովից անցել աղյուս նետելուն, և աղյուսներ նետել էին ամբողջ կողմը (այդպես էին վկայել բոլոր ուսանողները), որից կարող էին վնասվել պատահական մարդիկ, ուստի տրիբունալը որոշեց Թոմաս Բրյուլլին, իբրև ղեկավարի, յոթ օրով նստեցնել կարոցեր:

10

— Հապա, այդպիսի բաներ, պարոն երիտասարդ... Չեք լսում ծերոնուս, չեք լսում, և ահա թե ինչ է լինում վերջը:

— Քեռի Մարտին... Այդ բոլորը բարի... Բայց չե՞ս կարծում, որ այսպես մի քիչ կոշտ կլինի պառկել, մանավանդ, որ հիանալի երեկո է, հա՞, քեռի Մարտին:

— Տեսնեմ, գուցե մի բան ճարվի... Միայն թողեք, որ մթնի, թե չէ այն դժոխքի պահապանը երբեմն գալիս է հոտ քաշելու, թե չլինի քեռի Մարտինը մոռացել է կանոնները և մեղմ է վարվում կալանավորի հետ... Իսկ այժմ՝ վառեմ ճրագը, և տանք կեսարինը կեսարին:

20

Քեռի Մարտինը ճրագը վառեց և կողպեց դուռը:

— Իսկ մենք նորից թերթենք այս հին «ալյումը», — տխուր սասց Բրյուլլը, երեսը դարձնելով պատին:

«Ալյումը» հենց այդ նկուղն էր, որ տրիբունալի վճիռների մեջ կոչվում էր criminal carcer, իսկ ուսանողներն անվանում էին «ալյում», ոյովհետև տարիների ընթացքում կալանավոր ուսանողները նկուղի պատերի վրա գրել և փորագրել էին իրենց ազգանունները, կալանքի թվականը, ամբողջ ոտանավորներ, «հիշատակներ», նկարներ և մինչև անգամ հայհոյանքներ:

30

Ահա հենց դուան մոտ մի քաջ լատինագետ գրել է կամաքոս զորավարի խոսքը՝ Non licet in bellis bis peccare, իսկ մի ուրիշը, իրեն մեղավոր ճանաչելով, ավելացրել է. «Հայր, մեղանշեցի»: Մի ուրիշ տեղ, մի կալանավոր երևի տրիբունալի ժամին գրել է՝ «Վայ մենակյաց մարդուն... Ահա մի ամբողջ արձանագրություն գոթական սրածայր տառերով, «Հիշեցեք Թեոդոր Հերմանին Վյուրտեմբերգից, որ 1823 թվի հոկ-

տեմբեր 12-ին ենթարկվեց կայանքի ութ օր, որովհետև նա քաջ սուսերամարտիկ էր»... «Այստեղ ապրել է Կազիմիր Կոստոջը, կուրատոր ֆոն Յանաուի մահացու թշնամին»: Այս արձանագրութունների արանքում բազմաթիվ էին միայն ինիցիալները՝ երկու կամ երեք տառ: Ահա միայն մի անուն՝ «Կարոլինա», և մի սիրտ, որի մեջ խրված է սուսերը: Ո՞ւմ սիրտն է այդ, ո՞վ էր Կարոլինան, ի՞նչ էր մտածել կալանավորը այն աղջկա մասին. արդյոք նա՞ է խոցել երիտասարդի սիրտը սուր սուսերով, թե մի ուրիշը, որ խլել է աղջկա սիրտը, և կալանավորը երկար մտածել է տիրո և դավաճանության մասին և ապա որոշել է ազատվելու հենց առաջին օրը մենամարտի կանչել փոսոյանին: Ոչինչ չի ասում ո՛չ այդ անունը և ո՛չ խոցված սիրտը...

10

Բայց պատերի վրա ավելի շատ էին ծաղրանկարները և այնպիսի նկարներ, որոնց մասին չի կարելի գրել: Ահա մեկը գրավել է պատի կեսը, նկարելով զանազան դեմքեր և արկածներ Գորպատի ուսանողների կյանքից. մի խումբ ուսանողներ կանգնել են մի տան դիմաց, իսկ նրանցից մեկը պարանոսանդուղքով բարձրացել է երկրորդ հարկը և պատուհանից ներս է նայում:

Նրևում է, որ գիշեր է, որովհետև ներսը, սեղանի վրա վառվում է մոմը: Սենյակում քնած են ըստ երևույթին մուսուխներ... Հանդուգն ուսանողը բաց պատուհանից զմայլանքով է նայում անկողնում պառկած գեղեցկուհուն, որ քնի մեջ դեն է շարտել մետաքսի ծածկոցը, և մոմի լույսով ցուլանում են դեռահաս մարմնի բոլոր սքանչելիքները և մանավանդ նուրբ ոտքը, որով ծունկ է արել կինը, ինչպես նժույզը՝ որ բարձրացնում է ոտքը՝ կաքավաքայլ սուրալու: Նրա կողքին քնած է մի ահագին մսագունդ, որ բարձի վրա երկարել է բրդոտ ձեռքը, և նրա հաստ մատները հազիվ են հասնում կնոջ մերկ թիկունքին, որի վրա, ինչպես ողկույզներ, կախվել են գեղեցկուհու գանգուրները: Մի ուրիշ նկարի վրա նույն սենյակն է, բայց արդեն ցերեկ է. ուսանողներից մի քանիսը սպասում են միջանցքում, իսկ այն երիտասարդը, որ պատուհանից էր նայում, ներս էր մտել և խոնարհ գլուխ տալով տանտիրոջը, ինչոր բան է հարցնում: Բրդոտ մսագունդը ձեռքերը խաշել է կրծքին և վախեցած նայում է. իսկ մարմաշե վարագույրի ետե-

20

30

վից կիսով շափ դուրս է եկել այն երիտասարդ կինը և ամոթ-խած ծածկում է հոլանի պարանոցը և կուրծքը: «Կարլ Բրայտը փնտրում է ազատ ձեզունահարկ»,— նկարի տակ ածուխով գրել է անհայտ կալանավորը:

Մի այլ տեղ նկարել են հրեա նպարավաճառին, որ երկի գնացել է ուսանողներից հավաքելու ստանալիքը... Նա սարսափած հետ է փախչում. փոփոում են կաֆտանի երկար փեշերը, նա արդեն ցեխի մեջ է թողել մի կալոշը, բայց վազում է, որովհետև նրա հետևից են ընկել գազազած ուսանողները՝ թրադաշույններով և երկար փայտերով, պատուհաններից դուրս են թափվել ուսանողները և խեղճ նպարավաճառի վրա շարժվելով են դատարկ շշեր, ձվեր, կաղամարներ, իսկ մեկը պիստուկետը նշան է բռնել և ահա ուր որ է պիտի բռնկվի հրազենը:

Ահա սեղանի շուրջը բոլորել են չորս հոգի: Նրանցից երկուսը կեղծ ծամով են, երրորդի գլխին փոշուպիական թասակ է, իսկ չորրորդը դրել է խեղկատակի գլխարկ երկու բռնոժներով: Սանդուղքի գլխին երևում է մի ուրիշը, որ ուղղվել է դեպի այն սենյակը, ուր սեղանի շուրջ բոլորել են չորս հոգի: Այդ մարդը շալակել է գինու տակառը, որի վրա նստել է մի գերխոճկոր. նրան հետևում է մի երիտասարդ տղա, որ գրկել է կողովը՝ բաժակներով, ափսեններով, դանակ-պատառաքաղով. նրանից հետո բարձրանում է մի ավելի փոքր տղա, որ ձեռքերի վրա տանում է մի կարկանդակ, ապա բարձրանում է նրանից ավելի փոքր տղա, որ տանում է միայն աղամանը և նրա հետևից, առանց աղամանի, չորեքթաթ բարձրանում է մի երեխա և վերջապես՝ այդ բոլոր երեխաների մայրը և կիսն այն մարդու, որ կթել է տակառի ծանրության տակ: «Per aspera ad astra»\*,— նկարի տակ գրել է անհայտ նկարիչը, հավանորեն կամենալով պատկերել այն անցած ժամանակները, երբ Դորպատի բուրջը քննություն տալու համար գնում էր պրոֆեսորի տոնը, նախօրոք այնտեղ ուղարկելով գինի և երշիկ և թեյ և շաքար, և ենթարկվելով խստագույն քննության, տուն էր վերադառնում հարբած, սակայն որպես մագիստրոս աստվածաբանության:

\* Դժվար է ճանապարհը դեպի աստղերը:

Եվ գեռ ուրիշ շատ նկարներ կային այդ գետնահարկ զըն-  
գանի պատերի վրա, որտեղ, ինչպես գերեզմանատանը, կողք-  
կողքի շար էին ընկել իրար անհարիր գրություններ, որոնց  
հեղինակները հաջորդաբար քնել էին նույն սառն անկողնում:  
Եթե մեկը կամենար գրել Գորպատի համալսարանի պատ-  
մությունը, ապա ամենահետաքրքիր էջերի նյութը կարող էին  
կազմել այդ հիշատագրերը՝ ածուխով, երկաթի կտորով, մա-  
տիտով և նույնիսկ եղունգներով, որոնց տերերը՝ բոլորը  
երիտասարդ մարդիկ, թողել էին իրենց թաքուն մտքերն այն-  
պես սեղմ, ինչպես տապանագիրը: Ոչ ոք չէր ավերել և ոչ մի 10  
նշան, կուրատորների կոլեգիայի և ոչ մի անդամ ներս չէր  
մտնում այդ խավար կալանատունը, պեղելները կալանավոր-  
ներին դռան մոտ էին հանձնում քեռի Մարտինին, որի աշ-  
քերը չէին նշմարում գրությունները պատերի վրա, իսկ կա-  
լանավորները և՛ հեղինակներն էին, և՛ ընթերցողները այդ  
զարմանալի գրքի, որով նրանք մեղմում էին մենակության  
ձանձրույթը:

Թոմաս Բրյուլլը դանակով մի ազատ խորշում փորագ-  
րեց. «Ես գիտեմ, որ իմ սիրտը մի օր ինձ պիտի տանի դե-  
պի հունական Ուտաոը», — բայց և այնպես կեցցե հաջորդը»: 20  
Ապա գրատը փոեց և պառկեց մեջքի վրա:

## 10

Պատի վրա խաղում է ինչ-որ ստվեր. կարծես թարթում է մի  
վիթխարի աչք, որի բիբն է լուսամուտը, հագիվ նշմարվող  
լույսով... Ոչ. այդ ճրագն է պատրույգի ուրախ աղմուկով:  
Ուրեմն մայր է մտել արևը... «Արևը մայր է մտել, ինչպես  
մեռնում է դուցազնը»: Երևի քնել է մի ժամ, երկու ժամ,  
գուցե ավելի: Նա չի հիշում... Ինչ լավ էր Բոհեմիայի ան-  
տառներում. թռչնորս Վալտերը ցույց էր տալիս այն ավերակ  
գոյակը, որտեղ ապաստանել է Կարլ Մորրը: Ինչ խավար գի- 30  
շեր էր. անտառի վրա կարկտախառն անձրև էր, և դղրդում  
էր որտուր, կարծես տրաքվել էր հեղեղը և գալիս էր զարհուրե-

\* Դեպի կախազան, որին նման է Ուտաոի պատկերը:

քի զորությամբ... Այն ինչ աղմուկ է դրսում. լսվում են ոտնաձայներ, ապա մի վայրկյան լռում են: Պատուհանից ոչինչ չի երևում: Լսվում է մետաղի ձայն. քեռի Մարտինը բանալին դարձնում է կողպեքի մեջ, և հանկարծ ներս են խուժում շորս հոգի՝ փաթաթված սև թիկնոցների մեջ: Նրանք լապտերներով են:

— Տիդելին... Գու է՞լ, Մորից... Նաև ինքը՝ Մունչ Արքան:

10 Եվ Թոմասը գրկեց իր ընկերներին, որոնք դեն նետեցին օտարոտի թիկնոցները և գլխարկները, որ հագել էին կալանավորին հանկարծակիի բերելու:

— Տես, թե ո՞վ է եկել մեզ հետ,— ուրախ կանչեց Տիդելինը, ցույց տալով մի երիտասարդի, որը դռան մոտ կանգնած նայում էր ընկերների գրկախառնվելուն և միաժամանակ զարմացած դիտում էր համալսարանի հուշակավոր criminal career-ը:

Թոմասը մի քայլ մոտեցավ.

— Արմենիե՛ր, իմ սիրելի եղբայր...— Երիտասարդը ձեռքի կապոցը վայր դրեց, և նրանք իրար գրկեցին:

20 Արմենիերի աչքերը լցվեցին: Նա ոչինչ չասաց և աչքերը խոնարհեց գետին:

— Մենք դեռ հեռվից լսեցինք ինչ-որ աղմկալի խոսակցություն, — արագ-արագ ասաց Տիդելինը, որ մի ընդհանրապես անգամ արդեն շփոթվել էր կարցերն անկյունից անկյուն:

— Մի քիչ հանդարտ, պարոնայք ուսանողներ... Գրսից կարող են լսել, — բայց քեռի Մարտինի աղերսին ոչ ոք ուշադրություն չդարձրեց, և ծերունին բարվոք համարեց դուռը ծածկել և հեռացավ՝ շարունակելու քունը, որովհետև նրանց կապոցներից և կողովներից, որ ուսանողները ներս էին բերել լայն թիկնոցների տակ, քեռի Մարտինը եղրակացրեց, որ նրանք 30 դեռ երկար պիտի նստեն...

— Ես մերոնց պատվիրեցի սպասել փողոցի անկյունում: Մոտենում եմ և ինչ եմ տեսնում... Արմենիերը կովի է բռնվել քեռի Մարտինի հետ: Նա նրան ներս չի թողնում՝ պահանջելով ցույց տալ մատրիկուլի թերթը: Այդ ժամանակ ես քեռի Մարտինին մի կողմ քաշեցի. «Գիտե՞ս սա ով է, քեռի Մար-

տին... Սա Արմենիերն է, ռեկտորի սիրելին և Արարատ քարձրացողը. բացի այդ, նա հոգևոր կոչումից է...»:

— Դու կարող ես առյուծին դիմակով վախեցնել, բայց քեռի Մարտինն առյուծ չէ, այլ մի հեզ գառ,— ծիծաղեց Քոմասը:— Իսկ ինչ նորություններ կասի իմ բարեկամը,— և նա Արմենիերին թեանցով մոտեցավ մահճակալին,— այլ պայմաններում ես բոլորիդ կմեծարեի, ինչպես վայել է, բայց այժմ երևակայեցեք, որ սա մի դղյակ է...

— Եվ մենք ավազակներ,— ասաց Տիդեիները, որ արդեն կապոցից հանել էր երշիկ, եփած միս, ձու և փնտրում էր դանակը,— ամբողջ օրը բան չեմ կերել և քաղցած եմ ինչպես ժլատ մարդու շունը:

10

— Բայց մենք մեզ հետ մի ամբողջ կրպակ ենք բերել,— և Մորիցը կապոցի կողքին դրեց մի խորունկ կողով, որի մեջ խառնիխուռն դարսված էին բազմատեսակ ուտելիքներ, կարճես նրանք իրոք կողոպտել էին մի նպարավաճառի կրպակ:

— Իսկ ես բերել եմ տիկին էլոիդ Աուլենդերի նվերը և նրա ողջույնն անարդար պատժվածին,— և Արմենիերը բաց արեց իր կապոցը, մեջը՝ մեղրահաց, կարկանդակներ և շաքարով պատրաստված մրգեր:

20

— Երևում է, որ պրոֆեսորի տնից է այս հարուստ նախաճաշը: Մեր ամբողջ թաղում չես գտնի այսպիսի ասեղնագործ սփռոց,— և Տիդեիները բաց արեց սփռոցը,— այս վկայում է նաև տիկին Աուլենդերի ձիբը...

— Նաև նրա վեհանձնությունը: Ես երբեք չեմ մոռանա այս շնորհը,— և Քոմասը ձեռքերը կրծքին խաշելով, խոնարհեց գլուխը,— կհայտնեք տիկին Աուլենդերին, որ երախտապարտ եմ ողջույնի և նվերի համար:

— Տիկինը նաև շանք թափեց թիթեակցեղու ձեռ պատիժը... Նա մի բարի հրեշտակ է...

30

Արմենիերի մարմնով մի ջերմ գրգիռ անցավ, երբ այդ խուլ նկուղում, որ նման էր Ճգնավորի խուցին, հնչեց տիկին էլոիզի անունը: Նրան հաճելի էր նաև, որ Քոմասը,— նրա համար մի մեծագործ հերոս,— տիկնոջ մասին խոսեց այդպես գորովալի:

— Իսկ քաղաքում ի՞նչ են ասում այսօրվա մասին...

311

— Ծս երեկվանից եմ Քիաս հույն փիլիսոփան\*... Հույս ունեի, որ Թոմասը կազատվի, և մենք սանդուղքի վրա նրան կողողունեինք: Բայց ֆորտունան այլ կերպ դարձրեց անիվը:

— Այժմ ի դորժ, magister bibendi...\*\*: Բախտավորի համար ամեն տեղ երջանկություն է, նույնիսկ քեռի Մարտինի տնակում:

Տիդեյենը, որ հայտնի էր նաև իբրև նկարիչ, մահճակալի վրա ըստ իր ճաշակի սարքել էր սեղան, մեջտեղը տապակած խոճկորը, շրջապատված եփած ձվերի օղակով: Ծրագրի լույսի տակ խոճկորն այնպես էր փայլում, կարծես դեղին մարմարե քանդակ էր փղոսկրյա շրջանակի մեջ: Նրա կողքին ձկների վտառն էր, որի մեջ երկու տափակածուկ՝ բերանները բաց ահա պիտի կծեին խոճկորի յուղոտ ոտիկը: Իսկ կարմիր խավիարի հատիկները այնպես էին փայլում, ասես մարջան հուլունքներ էին: Ապա երշիկները... Լիվոռնոյի երշիկ, ծխահար երշիկ և երշիկ, որ հորթի մսի համ ունի, նաև երշիկ, որը ոչ ծխահամ ունի և ոչ հորթի մսի համ, այլ հիշեցնում է ֆլամանուհու մերկ բազուկը: Եվ այդ ամենի մեջ իրարից պատշաճ հեռավորությամբ Տիդեյենը շարել էր գինու շշերը, որոնցից մեկը նման էր կաթոլիկ աբբահոր, մյուսը՝ կապույտ պիտակով և ոսկե զմուռով հիշեցնում էր մուշկետյորների գնդի այն երիտասարդ սպային, որի ոսկե սաղավարտը ցոլանում էր մթնշաղոմ:

Նրանք մի կերպ տեղավորվեցին, որովհետև հինգ հոգու համար կար միայն մի աթոռակ: Արմենիերը նստեց պարսկական ձևի՝ ծալապատիկ, մեծ զվարճություն պատճառելով ընկերներին: Մունչ Արքան կամեցավ նմանվել նրան, բայց տաբատի կարերը քանզվեցին և քիչ էր մնում նրա մարմնի ծանրությունից մահճակալը շոքեր: Միակ աթոռակը նրան տվին:

Առաջին գավաթները դատարկեցին հանուն եղբայրության: Արմենիերը դժվարությամբ խմեց. գինին ծառի համ էր տալիս, ավելի ճիշտ՝ կուպրի համ: Քներակներում արյունն արագ դո-

\* Մի անգամ հույն փիլիսոփա Քիասը բարեկամների այն հարցին, թե ինչու հրդեհից չազատեց իր գույքը, պատասխանեց. «Եմ ունեցածը ես հետս եմ ման ածում»:

\*\* Խմելու վարպետ:

փեց: Եվ հաճելի, և դառն մի բան ներսը ճմլվում էր, նա զգում էր մի տարտամ երկվություն, մի տարակուսանք:

— Իմ սիրելի եղբայր, բաժանիր մեր խորհրդավոր ընթրիքը,— ասաց Քոմասը:

— Նրան դուր չեկավ մեր գինին... Իհարկե, Նոյի երկրից հետո...

— Ամենևին ոչ,— և Արմենիբըրը դժգոհեց, որ մատնեց իր տարակուսանքը,— ես դատարկել եմ իմ գավաթը:

— Մենք երկրորդն ենք դատարկել: Իսկ Մունչ Արքան արդեն մի շիշ լցրել է իր ներսի գրպանը:

— Քողեք, որ մեր բարեկամն իրեն ազատ զգա մեր ընկերության մեջ:

— Այս ամենն ինձ համար այնքան նոր է, որ ես... ես նույնիսկ չգիտեմ, թե այն ինչ է,— և մասով ցույց տվեց խավիարը: Նա այդ ասաց միամիտ պարզությամբ և այնպես ժպտաց, որ անհնար էր չվարակվել:

Մունչ Արքան զարմացած նայեց, և սառեցին նրա շեղ աչքերը, և ծանր ծնոտը շարժվեց:

Քոմասը մոտ քաշեց պնակը:

— Ձկնկիթ է, կեր և տես...

— Ինձ չի կարելի,— և Արմենիբըրը զգաց, որ երեսն ամսօրից այրվում է: Ապա իսկույն բարձրացրեց գլուխը և արագ ասաց.— ես ձուկ և ձկնկիթ չեմ սիրում:

— Այն ժամանակ խոզի միս կեր:

— Կուշտ եմ:

— Ա՛...— ծոր տվեց Մունչ Արքան, ինչպես հորանջում է քաղցած գազանը,— չէ՞ որ նա հայ է, և նրանց կրոնը արգելում է ուտել օտարի ձեռքով պատրաստած կերակուրը և հացը:

Արմենիբըրը վրդովվեց.

— Այդ մենք չենք, այդ պարսիկներն են... Իսկ մենք քրիստոնյա ենք և չունենք այդպիսի օրենք:

— Դու կշտացա՞ր, իմ սիրելի եղբայր... Գուցե քեզ վիրավորեց մեզնից մեկի ավելորդ խոսքը: Ինդունիս,— դարձավ նա Մունչ Արքային,— այսօր դու խոսեցիր այնքան, որքան չէիր խոսել մի ամսում, այնինչ, եթե լռեիր, փիլիսոփա կլինեիր:

10

20

30

315

— Ինձ ոչ ոք չվիրավորեց, եղբայր Թոմաս... Ես հանկարծ մի բան հիշեցի... Եվ... ես անշափ ուրախ եմ, որ ձեզ հետ եմ:

— Այն ժամանակ կեր և խմիր,— ասաց Մորիցը:

— Մորից, երբ խոսում է չոռմը, լուռ է աշխարհը,— սաստեց Թոմասը, և բոլորը հասկացան, թե ներկաներից ով էր չոռմը և ով աշխարհը,— Տիդելին, լցրու գավաթները...

Տիդելինը գավաթները լցրեց:

— Եղբայրներ,— և Թոմասը բարձրացրեց գավաթը,— այս գավաթը դատարկենք մեր սիրելի Արմենիերի երջանկության: 10 Նա ոչ ֆուքս է, ոչ բրենդեր և ոչ մեզ նման աստվածաբան կամ փիլիսոփա: Բայց նա բարձր է մեզանից: Որքան ես գիտեմ, նրա ժողովուրդն է misera contribuens plebs\*, ինչպես Սպիտակ արջի բոլոր հպատակները... Եվ նա գավակն է այդ ժողովուրդի, առաջին արժիվը, որ Աբարատի երկրից թռել է այսբան հեռու: Նրա համար իր հայրենիքի ծուխը պայծառ է օտար երկրի կրակից... Սիրելի Արմենիեր,— և Թոմասը նրա կողմը թեքեց իր գեղեցիկ գլուխը,— իմացիր, որ մենք դժբախտներին սովորեցնում ենք արյունով և քրտինքով հասնել ազատության և թող շատերից վախենա նա, ումնից շատերն են վախենում: Բո 20 հայրենիքում ևս կատարվում են բռնություններ, ինչպես ամեն տեղ Ռուսիայում... Ահա մենք այստեղ խնջուլքի ենք, բայց Պոլոնիայում հոսում է ապստամբների արյունը, իսկ ցուրտ Սիբիրիայում սառչում են առաջին ըմբոստները: Արիասիրտ եղիր. ամեն սկիզբ դժվար է, բայց հավատա, որ սաստիկ ձգված ազեղը մի օր կտրաքվի, և այն ժամանակ սուրբ է նա, ով կովել է իր հայրենիքի համար՝ քրտինքով և արյունով: Mensch, bezahle deine Schulden\*\*,— ասել է Վեյմարի իմաստունը: Այժմ հասել են այդ ժամանակները... Արիասիրտ եղիր, Արմենիեր:

30 Եվ Թոմասը մի ումպով դատարկեց գավաթը:

— Pro patria\*\*\*,— և Տիդելինը դատարկեց գավաթը:

\* Թշվառ և հարկատու ռամիկներ:

\*\* Գյոթեի խոսքը՝ «Ով մարդ, կատարիր քո պարտականությունները:

\*\*\* Հանուն հայրենիքի:

— Pro patria cemper\*, — և Մորիցը դատարկեց գավաթը:

— Միրելի եղբայր... — և ուրիշ ոչինչ չկարողացավ արտասանել Մունչ Արքան, որ Քոմասի խոսքի վրա երեք անգամ դատարկել էր գավաթը, որովհետև այդ հսկա տղամարդը բարակ սիրտ ուներ և երբ սաստիկ հուզվում էր, ներքին բոցը հանգցնում էր մեղրագինու ջրվեժով:

Արմենիերը գունատ էր: Նրա թավ արտեանունքները շրգարշի նման ծածկել էին աչքերը: Կարծես ննջում էր: Ապա նա գլուխը ցնցեց և նայեց պարզ աչքերով:

— Լցրու գավաթները, եղբայր Տիդելեն: Ըստ իմ հայրենիքի սովորության ես պատասխանի խոսք ունեմ: 10

Տիդելենը գավաթները լցրեց:

— Իմ հոգու եղբայրներ: Ինչ որ ասաց Քոմասը, ես չեմ մոռանա հավիտյանս հավիտենից: Ես որդի եմ մի հին ժողովրդի, որ խավար է ապրել, և եկել եմ այստեղից լույս տանեմ այդ հեռու երկիրը: Այստեղ գտա իմ երկրորդ հայրենիքը: Բայց ես մի օր պիտի վերադառնամ իմ հին հայրենիքը, որ սպասում է ինձ, ինչպես մայրը որդու վերադարձին: Ես չպիտի մոռանամ իմ լեզուն, իմ սովորությունները, որպեսզի վերադարձին ինձ օտար չհամարեն: Ա՛խ, եթե դուք իմանալիք այն ամենը, ինչ որ եկել է իմ գլխին, իմանալիք իմ կյանքը և տեսած լինեիք իմ հայրենիքը և նրա մարդկանց, — դուք կներեիք և իմ տխրությունը և իմ մեծ կարոտը: Բայց ես երբեք չեմ ների իմ թշնամիներին, որոնք միայն իմը չեն, այլ ժողովրդի թշնամին են: Տեսնո՞ւմ եք այս սպին, — նա հետ քաշեց մաղերը և ցույց տվեց ճակատի սպին՝ արասու մեծություն, — ես է՛ի տասը տարեկան, երբ ինձ տարան վանք, գուցե լսել եք անունը՝ էջմիածին: Այնտեղ ես, — չգիտեմ ինչպես թարգմանեմ այդ բառը, — այնտեղ ես մոնթ էի, հասկանո՞ւմ եք, մոնթ, որ հոգևորականի ծառան է, ջուր է բերում նրա համար, ավլում է նրա խուցը, կերակրվում է ինչ որ կտա Տերը, քնում է խորի վրա, և այդ ամենի դիմաց հոգևորականը մոնթին սովորեցնում է գրել, կարդալ, Հիմա էլ իմ հայրենիքում դեռ այդպես են սովորեցնում: Ես էի՞ 20

\* Միշտ հայրենիքի համար:

տասը տարեկան և այդպիսի մոնթ էի, ծնողներից հետու, ինչպես գերի տարած երեխա: Գիշերները ծածուկ լաց էի լինում և կարոտում էի մեր հողե տնակը, իմ սուրբ մորը: Մի գիշեր ես պետք է կարդայի Դավթի սաղմոսները: Իմ ուսուցիչը քննչուց առաջ սիրում էր սաղմոս լսել: Այդ օրը ես փայտ էի կրել և հոգնել էի: Սկսեցի կարդալ, կապելով վանկերը և երգելով, ինչպես մեզ սովորեցրել էին կարդալ: Հետզհետե քունը հաղթում էր իմ ուսուցչին, իսկ ես կովի մեջ էի քնի հետ, բայց քունը գերեց ինձ, և ես միայն հիշում եմ այն մեծ մոմերը, որ վառվում էին գրքակալի երկու կողմը: Հանկարծ ահագին ցավից վեր թռա. ինձ թվաց, թե գլխիս հալած երկաթ թափեցին: Գլուխս այրվում էր... Ես մի ծանր հարված զգացի մեջքիս և ընկա խորի վրա: Խավար էր և խավարի մեջ, ինչպես Երիքովյան փող, որտոտում էր իմ ուսուցչի ձայնը: Նա ինձ անիծում էր, գլուխս այրվում էր. զգում էի խանձված մազերի և այրած մսի հոտ: Ամբողջ գիշերը լաց եղա, և երկու շաբաթ ցավը տանջում էր ինձ: Հասկանո՞ւմ եք ինչ էր եղել. քնել էի, և իմ ուսուցիչը հանկարծ զարթնելով, քնիս մեջ ճակատիս էր խփել վառվող մոմը, և մազերս բռնկվել էին: Տեսնո՞ւմ եք այս սպին:

Արմենիերը խոսում էր՝ երբեմն դժվարանալով գտնել համապատասխան բառ, երբեմն սխալ արտասանելով: Նա պատմում էր իր կյանքը գունեղ և զարմանալի հետաքրքիր՝ ինչպես արևելյան հեքիաթ: Եվ խոսքի վերջում՝ բոլորովին անկեղծ և դողացող ձայնով նա իր եղբայրներին ասաց, որ ինքը հոգևոր կոշումի լինելով, պահում է հայ եկեղեցու ծեսը, ըստ որի այժմ ծոմ է, որովհետև մեծ պասն է, և շուտով կլինի Զատիկը: Ահա թե ինչու նա բերանը չի առնում ոչ ձուկ, ոչ յուղահաց և ոչ երշիկ, այլ խմում է միայն մեղրազինի: Նա ասաց նաև, որ առանց այդ էլ իր հայրենիքում նրան արդեն համարում են հերետիկոս, ուստի ինքը պետք է անարատ պահի իրեն, ինչպես պատվիրել է նաև պարոն ռեկտորը և արդար հոգով վերադառնա հայրենիք:

— Իսկ դու հիմա կեր և խմիր... Այստեղ քեզ ոչ ոք չի լրտեսի,— ասաց Տիդեկենը խղճահարված, որ ինքն արդեն

կերել է խոճկորի կեսը և հարթել է երշիկների բլուրը, այնինչ նույն սեղանի մոտ ընկերը կիսաքաղց նստած է:

— Հապա իմ խի՞ղճը, — մեղմ առարկեց Արմենիերը:

— Արիասիրտ եղիր, Արմենիեր, և պահիր քո հայրենի ծեսերը, եթե նրանք հարկավոր են քո գործի հաջողութեան... Բայց և մի մոռանա, որ դու ընտրյալ ես:

Նրանք դեռ երկար պիտի նստեին և դեռ լիքն էր այն շիշը, որ նման էր կաթոլիկ արբահոր և այն շիշը, որի ոսկե զմուռը սաղավարտ էր հիշեցնում, — երբ հանկարծ դուռը բացվեց և ներս մտավ քեռի Մարտինը՝ գիշերային զգեստով. 10  
դրսից լավեց մեկի գոռգոռոցը՝ կիթառի հնչյունների հետ:

— Խնայեցեք քեռի Մարտինին, սիրելի երիտասարդներ, — բայց քեռի Մարտինը խոսքը չվերջացրեց, որովհետև նրա հետևից ներս մտավ Օտտոկարը հարբած և աչքերն արյուն կոխած:

— Գնանք Բոհեմիայի անտառները... Ավազակներ դառնանք, — և կիթառով զարկեց ու վայր գլորեց ճրագը և քիչ մնաց, որ ինքը գետին փուկեր:

— Խնայեցեք քեռի Մարտինին, — աղետարչ կանչեց ծերունին, — սրա գոռգոռոցը հասնում է մինչև Ռեկել, և վաղը 20  
կուրատոր ֆոն Յանաուն ինձ պիտի պատժի:

Օտտոկարին մի կերպ դուրս տարան: «Աև եղբայրները» հրածեշտ տվին իրենց առաջնորդին, և բոլորը դուրս եկան դռան մոտ. Թոմաս Բրյուլլը նայեց խավարի մեջ օրորվող նրանց լապտերներին:

Իսկ Օտտոկարը քնած փողոցներում մոնչում էր ինչպես կրկեսի ցուլը, որին խմացրել էին մի տակառ մեղրագինի և բաց էին թողել քաղաքում:

— Կարթագենը պետք է կործանվի, — գոռում էր Օտտոկարը: 30

## 11

Նրան տանջում էր հայրենիքի կարոտը:

Գարուն էր բացվում, և առաջին գարունն ավելի էր դորացնում այդ կարոտը: Իսկ ոչ ոք չկար այն հեռու երկրից, որ նրա հիշողության մեջ պայծառ էր, ինչպես մութ գիշերին հո-

վիվների խարույկը լեռան վրա: Այդ մի անմարմին կարոտ էր՝ նման այն գոլորշուն, որ գարնանը բարձրանում էր ճահճուտներից, անտառներից և էմբախի ջրերից: Այդ մի ձայն էր, որ նրա ականջի տակ հնչում էր երբեմն մանուկ օրերի երգը, երբեմն պարզ լսում էր մոր ձայնը՝ «Խաչե՛ր, Խաչե՛ր...»: Եվ հանկարծ ետ էր նայում, բայց նանին չէր երևում, այլ երևում էր պարտիզպանը, սանդուղքը շալակին կամ փողոցով անցնում էր մի ֆրաու, որ կոժի ճապաղ հայացքով նայում էր Արմենիերին:

- 10 Երբեմն ձայնը չէր լսվում, այլ նայում էր դիմացի պատին և չէր տեսնում պատը, այլ տեսնում էր սպիտակ բարդիներ, նրանց խորքում Ծսիր Ծսայու ջրաղացը՝ դռնակը բաց և մուտքի մոտ ջրաղացպանի ծխացող օջախը: Կամ բացվում էր մի բարակ ճանապարհ, որ բաղերի արանքով իջնում էր ձորը՝ դեպի Գոչգոչան... Ահա այն ընկուզենին, որից հետո կդա նովավոր աղբյուրը, որի ջուրն այնպես տխուր խոխոջում է աշնանը, երբ այլևս մարդ չկա բաղերում, հնձանները դատարկ են, և ժտերը կտցահարում են կարմրած մասուրը, նաև մի դեղին դդում, որ մոռացել են քաղել: Չորով իջնում է քամին, և խշշում են ընկուզենիները՝ թափելով խնկաբույր տերև, և ամբողջ ձորում կոնչում է միայն մի ագռավ, մի ծերացած ագռավ, որ տեսել է բուք և բորան և ցուրտ ձմեռ, երբ սառչում է նովավոր աղբյուրը և այլևս չի երգում Չանգուն:

- Երբ միտն էր գալիս նովավոր աղբյուրը, ծարավում էր. ականջի տակ աղբյուրի ձայնն էր, նրա դով վշշոցը, աչքերի առաջ թափվում էր կապույտ ջուրը, որ գըլգըլ գալիս էր ոսկեկանաչ մամուռների միջով: Ա՛խ, եթե միայն մի անգամ ձեռքերը բուռ աներ և կռանար այդ հստակ ջրի վրա, խմե՛ր, խմե՛ր կում-կում՝ ականջի տակ ջրի ձայնը, ընկուզենիների խշշոցը, Գոչգոչանի շառաչը...

Չարթնում էր այդ կարոտը, և նա փորձում էր ետ վանել, դասը սերտում էր բարձրաձայն կամ գնում էր Պարրոտի տունը կամ դուրս էր գալիս աննպատակ շրջելու փողոցներում, գնում էր շուկայի հրապարակը, որտեղ առավոտից մինչև երեկո նպարավաճառների և արհեստավորների մի ահագին բազմություն կրպակների առաջ կամ բացօթյա առնում կամ ծա-

խում էր, գովելով ապրանքը և որտեղ դարբիններ, անիվագործ-  
ներ, կոշկակարներ և այլ արհեստավորներ այնպիսի աղմուկ  
էին հանում, որ այդ աղմուկը և այլազգի ժխորը նրան մոռաց-  
նել էին տալիս Նովավոր աղբյուրի ձայնը և ընկուզենիների  
խշշոցը:

Բայց երբեմն այդ կարոտն այնքան էր նեղում նրան, որ  
չէր հանգստանում, լսելով հրապարակի աղմուկը կամ քրք-  
քրբելով այն իրերը, որ հետն էր բերել: Նաև չէր հանգստա-  
նում, երբ Պարոտի տանը տեսնում էր Խորասանի այն խալին  
և զալյանը, որ նրանք միասին գնել էին Երևանի Չարսու բա-  
զարում: Ինչպես մայրը, երբ հանկարծ մտաբերում է մեռած  
որդուն, միայնակ լաց է լինում և թել մանում, ողբ է ասում՝  
մաքրելով ցորենը, այնպես էլ նա գլուխը տետրակի վրա կա-  
խած արտագրում էր օրինակներ Երից կանոնի և ինքն իրեն  
դնդնում էր.

Շորորա, Շուշան, շորորա,

Շորորա, ծաղիկ, շորորա...

Երգում էր մեղմ ինչպես սայլապանը, որ լուսնյակ գիշե-  
րով ճանապարհ է ընկել, երկար գնացել է սարերով, ձորերով,  
և ահա սայլը խուլ աղմկում է գյուղի փափուկ դաշտում, հոգ-  
նած օրորվում են եզները, արդեն մի կաքավ կանաչ սաղմոս է  
կարդում քարերի մեջ, և լուսաբացի հովը բերում է իրենց դեզի  
բույրը... Երգ է երգում սայլապանը, այնքան մեղմ, որ հազիվ  
են լսում եզները և այնպես հստակ, ինչպես լուսաբացին կար-  
դում է կաքավը:

Նա մեղմ երգում էր և աշխատում: Եվ երգի միջից ինչպես  
ծուխ այդ կարոտը հետզհետե բարձրանում էր, պատում նրան,  
աչքերի առաջ շաղկում էին գրերը, հնչում էին այն հին ձայ-  
ները, նրանին կանչում էր՝ «Խաշատուր, հե՛յ...», ինչպես տղա  
ժամանակ, երբ փախչում էր բաղը, իսկ նանին զլքբաշ հարա-  
միններից վախեցած՝ քարափի գլխից ձայն էր տալիս:

Այլ ի՞նչ դիրք, ի՞նչ Երից կանոն...

Այդ ձայները նրան կանչում էին քաղաքից դուրս, դեպի  
էմբախի գետափը, որտեղ ուռիները ստվեր էին արել ջրերի  
վրա և կամ դեպի Դոմբերգ, ուր աղմկում էին ծեր կաղնիներ:

10

20

30

321

բը: Նա թաքնվում էր մի խորշում, և արահետներով պատահաբար անցնող մարդիկ լսում էին անծանոթ նվագի հնչյուններ, որ ելնում էին Արմենիերի հայկական սրինգից:

Հայրենաբաղձությունը նրան մղում էր պատմել հայրենիքի մասին: Եվ նա պատմում էր Պարրոտին, ավելի հաճախ նրա կնոջը, պատմում էր տիկին էլոիզ Աուսլենդերին, նույնիսկ երեխաներին էր պատմում: Երբեմն պատմում էր իր տանտիրուհուն և նրա հարևանուհիներին, որոնք մի գործով գալիս էին նրանց տուն և, լսելով այդ անծանոթ պատմությունները

10 հրաշալի Արևելքի մասին, մոռանում էին, որ սուրճը թողել են կրակի վրա:

Իսկ Արմենիերը զարմանալի պատմող էր: Ժամանակը և հեռավորությունը նրան մոռացնել էին տվել այդ եղելությունների սովորականը և ամեն ինչ դարձրել էին արտասովոր և առասպելական: Հենց իրեն Արմենիերին այդ պատմությունները երբեմն թվում էին առասպել, որ կարդացել է հին գրքերում: Մի՞թե գրքից չէր պատմությունն այն գերի աղջկա, որ սարդարի հարեմից իրեն նետում է կամուրջի վրա, երբ հարեմի պատուհանից տեսնում է իր սիրած տղային, որ հուսահատ ետ էր վերադառնում: Եվ կամ մի՞թե առասպելանման չի այն, որ իր հայրենիքում կանայք շարսավով են, աղջիկներին հարս են տանում, երբ նրանք դեռ ամեղ երեխա են, և շխոսկան հարսը սկեսուրի հետ խոսում է մատներով, աչքերով: Ապա այն պատիժները, որ կային նրա հայրենիքում, ապա Մոսին, որին դաշտից փախցրել էին՝ լեզգիները, ֆառաշները, թե՛ վաշկատուն թարաքյամաները, երբ գյուղի երեխաները գնացել էին Մուրադ Քափայի բլուրը՝ սինձի:

20

Հաճախ նա համեմատում էր այն հին երկիրը և նրա բարքերն իր նոր հայրենիքի հետ: Ահա լալիս է մի փոքրիկ երեխա, բայց մայրը նրան չի ծեծում, այլ ուրախացնելով լացը կտրում է. «յայս հայեցեալ, իսկոյն թռեան միտք իմ առ վիճակ մերոց երեխայից, թէ զիա՞րդ ծնողք աշխարհին մերոյ անհոգ կան վասն զաւակաց իրեանց և զիա՞րդ երեխայք աշխարհին մերոյ առանց ինչ մխիթարութեան զարգանան, որով վասն արտասուալից աշօք, պղտորեալ սրտիւ սկսայ հոգ հանել...»:

30

Ահա ձեռք է բերել Ռոբերտ Քեր Պորտերի ուղեգրությունը և շտապում է իր բարեկամին ցույց տալու գիրքը և դրժի նկարները՝ Երևանի բերդը և Արարատը, պարսիկ սարբազներին և հարեմի մանկամարդ պարսկուհուն, որ զուգված կանգնել է՝ ձեռքին Գյուլիստանի վարդը. ասես հարցնում է, ո՞վ է գեղեցիկ՝ ինքը, թե վարդը: Եվ նորից խոսք է բացվում հեռավոր Իրանի և Արմենիայի մասին, և նրա բարեկամը, նաև նրա դուստրերը հավանում են Փաթալի շահի նկարը, նրա հանդերձը և նույնիսկ շահի հուշակավոր միրուքն են հավանում, բայց չեն հավանում պարսիկ կնոջ հանդերձները և ձածկելն նոցա զերեսս ամենքին անհաճոյ երեվին. և յիրաւի անհաճոյս:

10

Նրա հիշողության մեջ հետզհետե պայծառանում էր այն, որ քաղցր էր և սիրելի. մայրը, Միրզամը և քույրերը, փոքրիկ եղբայրը, նույնիսկ իրենց Բողարը, որի հետ խաղացել էր մանկության տարիներին: Ինչքա՛ն մանր և աննշան հիշողություններ էին զարթնում. պռունկը կոտորած պղնձե ջամբ նայում էր նրան երկար, շատ երկա՛ր և ինչպես հին ծանոթ նրան ասում էր. «գու ինձ շես մոռանա, Խաչեր, ինձ երբեք չես մոռանա...»: Այն կողմից դրնգում էր կարասը, որ ընկած էր էյվանի տակ. «ապա ի՞նձ... հիշո՞ւմ ես՝ գլուխդ կռացնում էիր ներս և կանչում՝ դոն-դոն, իսկ ես միշտ արձագանքում էի քո ձայնին՝ դո՛ն... դո՛ն... դո՛ն...»: Այսպես խոսում էին բակի քարերը, աղաքարը՝ որի վրա հայրը աղ էր ցանում, և տավարը լիզում էր աղը, հետո եզները քարն էին լիզում իրենց փշոտ լեզուներով՝ խը22-խը22, կարծես գերանդիով հնձում են շորացած խոտը: Երգում էին դռներն ու դռնակները, ամենքն իրենց հանգով. հացատան դռնակը՝ բարակ ու մեղմ, տան դուռը՝ ինչպես պառավ շուն՝ խռպոտ ու բամբ, իսկ ձմեռը, երբ դռան հետևից կախում էին թաղիք, տան դուռը խլանում էր: Բայց ամենից զիլ երգում էին դրսի դռները, որոնց սունին որձաքարի մեջ էր. դռներն իրար էին գալիս, աջը միայն դամ էր պահում, իսկ ձախը զլում էր պարկապկուն, մինչև դռներն իրար գային և այն ժամանակ երկուսը միասին՝ դոմբ հա դոմբ խփում էին Աթա Թեանի թմբուկը:

20

30

Նրա հիշողության մեջ հետզհետե պայծառանում էր այն, և զառնը մոռացվում էր և մնում, որ քաղցր էր և սիրելի՝ քարի-

րը, հին կարասը, պղնձե ջամբը, հայրենի խեղճ խրճիթը, պանակ շունը, Գոշգոշանի ջրվեժը, ընկուզենիների խշշոցը, նովավոր աղբյուրի ոսկեկանաչ մամուռը և Զանգուն, սիրտ մաշող Զանգուն:

12

10 Ընտո երկար ժամանակ վառ մնաց ձմռան այն օրը, երբ անհանգիստ կարոտով թափառել էր փողոցներում, ապա անկատելի ընկել էր այն փողոցը, որով առաջին անգամ մտել էր Դորպատ: Նա հասել էր քաղաքի դռներին, որից այն կողմ անսահման դաշտն էր, ձյունով պատած, դեպի արևմուտք՝ եղևինների սև երիզը, այս և այն կողմ կաղնիներ, որոնք հիշեցնում էին ձյունի մեջ մոլորված գրենադեղնեներին. ահա այս մեկը փռել է սառած թևերը, որոնցից մամուռը կախվել է ձորձերի նման, մի քիչ հեռու երկուսն այնպես են փաթաթվել իրար, որ մահն անգամ նրանց չի բաժանել, իսկ երրորդը համարյա թաղվել է ձյունի տակ, և ձյունի մեջ ցցվել է նիզակի նման մի շոր ձող: Հորիզոնի խորքում ժմուղների գյուղն էր, և ծուխը վախժխելով կծկվում էր խրճիթների վրա:

20 Նա կարոտով նայում էր ճանապարհին: Ոչ հեռու երևում էր առաջին շազբատումը, որի մոտ խարույկ էր վառել պահապանը՝ ալեբարդով մի զինվոր: Եվ ուրիշ ոչինչ չէր երևում այդ անեղր տափաստանում, բացի խարույկը և միայնակ պահապանը, ծառերը և հեռվի գյուղը, որտեղից շէր լսվում ոչ շան հաշոց և ոչ աքաղաղի կանչ:

Արևը խոնարհվում էր եղևինների ետևը, և այն կողմում հրդեհվել էին բաց կարմիր ամպերը. եղևինների պարխալը հետզհետե ավելի էր մթնում, և միայն մի շող թափանցել էր անտառի սևի մեջ և դողողողում էր այդ ոսկի շողը, կարծես վախենում էր բեկվել սառը ձյունի վրա: Նա զմայլած նայում էր անտառին և մայր մտնող արևին, երբ լսեց զանգակների ձայնն այնքան հստակ և մաքուր, ինչպես քարավանի դողանջը, երբ ուղտերն անցնում են արշալույսին:

Քիչ հետո նրա աչքերը ճանապարհի խորքում նշմարեցին մի սև կետ, որ հետզհետե մեծանում էր: Բացատի միջով արևը ճեղքել էր անտառի ստվերը: Երբ սև կետը հասավ արե-

վում ողողված ճանապարհին, նա տեսավ երեք ձի, որոնք սլանում էին բարձրացնելով ձյունի փոշի, որ արևից փայլփլում էր արծաթի գույնով: Զանգակների ձայնը հետզհետե հզորացավ: Արդեն պարզ երևում էր կողքի ձին, որ պարանոցը կեռ պահած թռչում էր՝ խաղացնելով ոտքերը և ծածանելով երկար բաշը: Ահա նրանք մոտեցան շլագբաումին. ծերունի պահապանն արդեն բարձրացրել է ուղեկալ գերանը, զգալով, որ միևնույն է, այդ ձիերը կանգ չեն առնելու և նույնիսկ կարող են թռչել գերանի վրայով... Ձիերը սլացան նրա մոտով՝ ձյուն թափելով նրա վրա: Ձյունի փոշու մեջ հնչեց մի ծիծաղ՝ զվարթ, 10  
ինչպես զանգակների ձայնը: Սահնակի մեջ նա նշմարեց կանացի մի դեմք՝ կապույտ աչքերով և այտերը բաց վարդագույն: Հանկարծ այդ կինը ձեռքը օդում թափահարեց: Կարծես քուրքի միջից կինը հանեց մի սպիտակ աղավնի, որ ձյունի փոշու մեջ թլպտաց և նորից մտավ տաք բունը: Արմենիերը բարձրացրեց գլխարկը, վազեց սահնակի ետևից, բայց սահնակը քաղաք մտնելով, աներևույթացավ:

Նա գնում էր. գլխաբաց, գլխարկը ձեռքին... Այդ փողոցները նրան օտար էին... Քաղաքի այդ մասում նա չէր եղել: Նա լսեց ուրիշ զանգակների ձայն և նայեց երկրորդ սահնակին: Անցավ նաև երրորդը... Սակայն ոչ ոք չնայեց նրան, և այլևս չերևաց այն ցնորական տեսիլքը:

Նա ուշքի եկավ, գլխարկը ծածկեց և սկսեց հետաքրքրությամբ դիտել սահնակներին: Իր կյանքում նա առաջին անգամ այդ օրն էր տեսնում սահնակը և նրա հիշողության մեջ առաջին սահնակը մնաց ինչպես զարմանալի հրաշք:

Հասավ զինվորական հիվանդանոցին: Այդտեղից երևում էր գերմանական եկեղեցին, որից այն կողմ փողոցները նրան ծանոթ էին: Հիվանդանոցի դարպասը բաց էր: Բակում երկվում էին գլխաբաց զինվորներ, որոնցից մի քանիսը հենակներով էին: Մեկի գլուխը փաթաթված էր դեղին շորով: 20

Մի ոռու կին դարպասի մոտ վաճառում էր արևածաղիկի բոված սերմեր: Մի քանի զինվորներ նրան շրջապատել էին, և երևում էր, որ նրանք տատանվում էին՝ գնե՞լ, թե ոչ: Գուցե թե նրանք կատակում էին կնոջ հետ, փարատելով իրենց ակամա ձանձրույթը:

Արմենիերը դիմացի մայթով տեսավ նրանց, տնտղեց զբր-  
պանները և անցավ մյուս մայթը: Հիվանդ զինվորները նրան  
տեսնելով լռեցին և ետ քաշվեցին, իսկ կինն սկսեց գովել իր  
ապրանքը: Արմենիերը նայեց զինվորներին և խղճահարվեց...

Նրանք դեղնած և նիհար երեսով մարդիկ էին: Բուրբը  
մեծ միտուքով էին, մեկը ալեհեր էր, իսկ մյուսը երիտասարդ  
էր: Սակայն բուրբի դեմքին դրոշմված էր ստրկության կնիքը:

— Որտեղացի՞ եք, հայրենակիցներ,— հարցրեց Արմե-  
նիերը:

10 — Հեռվից ենք, ձերդ բարեծննդություն,— պատասխանեց  
ալեհեր զինվորը, դժկամելով, որ ընդհատվեց իրենց զրույցը,  
նաև այն սառնությամբ, որ նշանակում է. «շարունակիր ճա-  
նապարհդ, բարին, ոչ մենք ենք քո հայրենակիցը և ոչ էլ քեզ  
է հետաքրքրում, թե մենք որտեղացի ենք»:

— Արևածաղիկ ուզո՞ւմ եք...

— Ինչո՞ւ չէ, կարելի է... Կարելի է ձերդ մեծություն,—  
և առաջինը մոտեցավ ալեհեր զինվորը, ապա մյուսների դեմ-  
քին ևս երևաց կես միամիտ, կես քծնող ժպիտ:

— Լազարեթում շա՞տ զինվոր կա:

20 — Ո՞վ գիտե... Մենք չգիտենք...

— Իսկ ձեր զինվորների մեջ հայ չկա՞...

— Հա՞յ,— և նրանք իրար երեսի նայեցին:— Կարելի է,  
որ լինի, ձերդ մեծություն. այստեղ ամեն ցեղից էլ կան, ով  
Դոնից է, ով Կալուզայից, մինչև անգամ Օրենբուրգից կա, և  
կարող է հայ էլ լինել... Ո՞վ գիտե:

Արմենիերի աչքերը փայլեցին:

— Ես ձեզ համար էլի արևածաղիկ կառնեմ... Տեսեք, եթե  
հայ կա, կանչեցեք դուրս:

— Կարելի է նաև առանց արևածաղիկի,— ասաց ալեհեր

30 զինվորը:

— Դու քեզ համար պատասխանի, պառավ, ուրիշների հետ  
ի՞նչ գործ ունես,— զայրացավ ոռու կինը,— կարող է, որ նո-  
րին բարեծննդությունն ուզում է այսօր բարեգործություն անել:

— Իսկ խիղճ կա՞... թե՞ ոչ: Քոնը միայն փողն է, լիրբ...—  
և դարձավ Արմենիերին,— կարելի է... Բայց հայն ինչպիսին է:  
Մեզ մոտ ամեն ցեղից էլ կան, ով Դոնից է, ով...

— Կա՞ սև մարդ, սև աչքերով, քիթը՝ մեծ:

Ալեհեր զինվորը միտք արեց՝ նայելով իր ընկերներին: Նրանք էլ էին միտք անում, կրծելով բոված արևածաղիկը:

Մի զինվոր ասաց.

— Իսկ որ վերջին ֆլիգելում է ապրում, նա հայ չի՞...

— Ո՞րը, — հարցրեց ալեհեր զինվորը:

— Նա, ոք հաց էր գողացել... որին ծեծեցին:

— Սատանի ավել, մի՞թե նա սև է, աչքերը սև՞ են, քիթը մե՞ծ է... Աղբով էլ ցված գլուխդ: Չհասկացար ի՞նչ պատվիրեց նորին բարեծննդութունը՝ որ գլուխը սև լինի, աչքերը սև լինեն, ամեն ինչ սև լինի և քիթը սև լինի... 10

— Ա՛ա, — երկար ծոր տվեց այն զինվորը, և դժվար էր հասկանալ, թե ի՞նչ էր նշանակում այդ բացականշութունը:

— Քեոի Միտրիչ, — կանչեց երիտասարդ զինվորը, — իսկ եթե մազերը սև են և քիթը մեծ է, բայց աչքերը սև չեն, այլ... — և երիտասարդը դժվարացավ ասել, թե ինչ գույնի են աչքերը և հանկարծ բռնեց կնոջ գլխաշորից և ուրախացած բզավեց. — այ այս գույնի, աստված վկա, ճիշտ այս գույնի են աչքերը... 2ի՞ լինի:

Կինը զայրացավ և խփեց զինվորի թևին:

— Թաթը քեզ պահիր... Ես ամուսնացած կին եմ և ոչ թե ֆրաու... 20

Բոլորը նայեցին Արմենիերին: Եվ նույնիսկ ալեհեր զինվորը նայեց, կարծես ուզում էր ասել, որ այդ հարցին պատասխանել կարող է միայն «նորին բարեծննդութունը»:

— Բայց նա քրիստոնյա՞ է... Հայերը քրիստոնյա են:

— Աստված վկա, չգիտեմ: Միայն գիտեմ, որ ոռուսերեն չի խոսում, միշտ մենակ է շրջում, հոշպիտալում իր երկրացի մարդ չունի: Եվ անունն ինչ-որ ուրիշ տեսակ է, մերիններից չէ... կամ էանզայ է, կամ էամզայ է, այդպես մի բան է: Եթե կլինի, գնամ կանչեմ: Նա միշտ պատի տակ մենակ ման է գալիս... Իսկ մազերը՝ սև, ինչպես, հիշո՞ւմ ես, Միտրիչ, մեր գրնդապետի ձին: 30

Երիտասարդ զինվորը մտավ բակը և քիչ անց վերադարձավ: Նրա ետևից գալիս էր միջահասակ մի մարդ, փաթաթված պատառտտուն գրատի մեջ: Երևում էր, որ նա մրսում է: Նա

զալիս էր զգույշ քայլերով: Դեմքի մկանները լարված էին. կարծես նա խուլ և մուկ էր և լսում էր լայն բացած աչքերով: Նրա դեմքն արտահայտում էր դժկամություն. զալիս էր, բայց և կասկածում էր, թե չլինի՞ իրեն խաբում են:

— Ահա՛,— և երիտասարդ գինվորը հեռու կանգնեց: Մյուսներն էլ լուռ ետ քաշվեցին:

Նրանք նայեցին իրար: Ինչ-որ հարազատ ցուք կար այդ մարդու բաց կապույտ աչքերում: Արևը նույն արևն էր, հարավի տաք արևը, բայց այդ արևը շողում էր բաց կապույտ մըշուշի միջից:

Զինվորը հայ չէր:

— Թաթա՞ր,— նա գլուխը տարուբերեց:

— Լեկզի՞,— գինվորի աչքերը փայլատակեցին:

— Չերթյազ,— ասաց նա:

Արմենիերը փաթաթվեց նրան:

— Ղարդաշ էրմենի՞:

— էրմենի ղարդաշ...

— Փառք քեզ, Տեր,— մելամաղձոտ ասաց այնհեր գինվորը,— ինչպես հանկարծ բախտ ես տալիս մարդուն և բախտ ես խլում... Տես ինչպես լուսավորվեց երեսը... Իսկ շրջում էր մենակ, ինչպես անտառի բու... Տես ինչպես բացվեց լեզուն... Նրանցն էլ լեզու է, նրանք էլ ցեղ են և Աստված ունեն, և հող են վարում, և մանր երեխաներ ունեն:

Զինվորները տխրեցին: Գուցե նրանք հիշեցին իրենց տնակները և մանր երեխաներին և իրենց կանանց, որոնք, ով գիտե, քաղցած են, ցուրտ է տնակում, և գուցե նրանք այլևս կենդանի չեն: Մեկը մոռալ նայեց հիվանդանոցի բակին: Նա ձեռքը զայրույթով թափ տվեց և ներս մտավ: Իսկ մյուսները, թեև տխուր, բայց լսում էին նրանց զրույցը:

Նրա անունը Համզայ էր: Նա գիտեր մի քանի բառ թուրքերեն, մի քանի բառ ռուսերեն և գիտեր միայն իր մայրենի լեզուն, որին Արմենիերը անձանոթ էր: Եվ այդ խառն լեզվով Համզայը պատմեց, որ ինքը մասնակցել է պատերազմին, բայց այլևս «սիրտը չի ուզել» (նա ցույց տվեց սիրտը), վիրավորվել է և ահա երրորդ ամիսն է հիվանդանոցում: Ուրիշ այլ բաներ ևս պատմեց Համզայը իր մայրենի լեզվով և Արմենիերը

մի կերպ հասկացավ, որ Համզայր կարոտում է իր հայրենիքը, բայց այլևս այնտեղ չի վերադառնա, որովհետև «Թուրուխանը» նրա թշնամին է:

Հնչեց զանգը և եկան դարպասը կողպելու: Արմենիերը նրան մի անգամ էլ տեսավ բակի մեջ, շերքեզը ձեռքով արեց, և դարպասը փակեցին:

Այդ օրից նրանք մտերմացան: Յուրաքանչյուր կիրակի Արմենիերը գնում էր հիվանդանոց, իր բարեկամի համար նա տանում էր քաղցրավենիք, միրգ: Երբեմն բաժին էր հանում իր աղքատիկ գրպանից: Հետզհետե ավելի էր հասկանում նը- 10  
րան: Այսպես, օրինակ, նա առաջին օրերը կարծում էր, որ «Թուրուխանը» Համզայի թշնամին է այնտեղ, նրա հայրենիքում: Բայց հետո հասկացավ, որ Թուրուխանը մայրը Տերյոխինն էր՝ կայազորի պետը: Նա իմացավ նաև, որ Համզային դեռևս պիտի պատժեին, որովհետև իբրև թե նա ինքն էր վիրավորել իրեն, այլևս պատերազմ չգնալու համար: Եվ սպասում էին, որ նա կազդուրվեր: Այդպես էր սպառնացել մայրը Տերյոխինը մի այցելության ժամանակ:

Արմենիերի համար շերքեզն ուներ մի անպատմելի հը- 20  
մայք: Այդ լեռնականի դեմքի վրա, նրա լեզվի մեջ մի բան կար, որ չէր հագեցնում Արմենիերի ծարավը, բայց հնչում էր ինչպես նովավոր աղբյուրի ձայնը: Նրա աչքերի մեջ կար մի հարազատ ցուք: Այդ մի ծաղիկ էր, որ չէր բուրում, բայց հիշեցնում էր այն դրախտային ծաղիկը, որին օրորում էր Զանգուն:

Համզայր մի անգամ երգեց: Այնքան քաղցր էր այդ երգը հեռու հյուսիսում: Կարծես լեռան ետևից բարձրանում էր արևը, և ձև էին առնում թփերը, ձորում շողում էր սպիտակ ջուրը: Նրա երգը օտար առարկաներին դույն էր տալիս, և դարպասը փոխում էր տեսքը և նմանվում իրենց տան դար- 30  
պասին, որի դռները երգում էին. ահա դիմացի գորշ պատը պայծառանում է ինչպես Զվարանցի քարաժայռը, երբ նրա լանջին բացվում է մայր մանուշակը:

Համզայր նաև պատմում էր հիվանդանոցի կյանքից... «Շունը մեզնից լավ է ապրում, զարդաշ... Ա՛խ, եթե շուն լի- նեի, գնայի այս երկրից, գյուղերով գնայի, արտերի միջով

գնայի, ցերեկը քնեի խոտերի մեջ, գիշերը մինչև լույս գնայի և հասնեի մեր սարերին, մեր գյուղը, ոչխարը սարը տանեի... Հիմա արդեն սարերը կանաչում են, դարդաշ...»:

Արմենիերը Համզայի վիճակը թեթևացնելու համար դիմել էր Պարրոտի միջնորդութան: Պրոֆեսորը սառը պատասխանել էր.

— Ավելորդ է դիմել մայրը Տերյոխինին: Նա գազան է, և հետևանքը կարող է լինել այն, որ ձեր երկրացու վիճակն ավելի կժանրանա...

10

13

Սենյակում մոմերը վառվում էին, դեղնավուն լույսի հետ սփռելով խաղաղություն: Իրերն ընկղմվել էին կիսաստվերների մեջ. միայն պատից կախված նկարի ապակին էր իր մեջ հավաքել շողերը և արտացոլում էր, հիշեցնելով մի նեղ պատուհան, որից ներս է ընկել աստղալույսը: Խաղաղ էր նաև փողոցը, որտեղից երբեմն միայն լսվում էր մի անհայտ անցորդի ոտնաձայն:

20

Տիկին էլոիզը նայում էր պատուհանի կողմը: Երբ դըրսում հետզհետե հանգչում էին ոտնաձայները, սենյակում լուսթյունն ավելի էր թանձրանում, և լսվում էր մոմերի ճարճատյունը, կարծես մեկը գիրք էր թերթում: Իսկ երբ անցնում էր քամին, մոմերի բոցերը մեկ ձգվում էին, մեկ ծավիլով նրստում: Պատուհանի վարագույրները խաղում էին, և տիկին էլեթիզին թվում էր, թե մեկը դրսից իրեն է նայում:

30

Նա մոտեցավ կլավիրին: Ստեղների ուրախ հնչյուններից սենյակը զվարթացավ: Նա աննպատակ նվագեց մի ինչ-որ կոնտրադանս, կարծես շեր լսում նվագը, այլ ավելի հիանում էր իր մատների գեղեցկութամբ, ինչպես մի երիտասարդ աղջիկ, որ սրսփալով մտել է ջուրը և չի հիանում ոչ շարաճճի ալիքներով և ոչ ափի ծաղիկներով, այլ հիանում է միայն իր պատկերով, որ ճոճվում է ջրի մեջ:

Ապա հնչեց հնամենի վալսը՝ հիշատակն այն օրերի, երբ դեռահաս աղջիկ էր, այն տարիքում՝ երբ ոչ անմեղ երեխա էր և թշ կյանք ճաշակած կին, մի տարիք, երբ առաջին տպավորություններն անշնչելի դրոշմ են դնում հոգու վրա:

330

Այդ տպավորութիւնները նման են դեղնած տերեւների, բայց ոչ խոր աշնան, երբ մերկանում է ամբողջ այգին, չկան թիթեռները, և տխուր խոխոջում է առուն,— այլ նման են այն առաջին տերեւներին, որ դեղնում են աղմկոտ ամռանը և վայր են ընկնում կանաչ խոտերի վրա, որտեղ երգում են ճպուռները, բզեզները հարսանիք են սարքել և ամբողջ այգին, ինչպես մի երգեհոն հնչեցնում է պտղաբերութեան հավերժական երգը: Եվ ավելի զվարթ է հնչում այդ կանաչ երգը, երբ ընկնում են մահվան առաջին տերեւները:

Տիկին էլոիզն այլևս չէր լսում ոչ դրսի ոտնաձայները և ոչ էլ նայում էր պատուհանի վարազույրներին, որ քամուց բարձրացնում էին եզրերը և իսկույն իջեցնում, կարծես մեկին ցույց էին տալիս այդ գեղեցիկ պատկերը՝ տիկին էլոիզին, մոմերի լույսով, բատիխտե սև զգեստով և վառ կարմիր ժապավենի փնջերով, որ վարդերի նման բացվել էին նրա թևերի վրա և իրենց կարմրավուն ցոլքով երևացնում էին նրա ականջները՝ մոխրագույն գանգուրների մեջ: 10

Իսկ մաշված ստեղծները լալիս էին: Նրանք անձրևում էին կարոտի հնչույններ. երբեմն մեկը և երկուսը թավ դողանջում էին հեռվից, կարծես նավը գնում էր ծովի հեռուն, և այնտեղից այդ ձայները հրաժեշտ էին տալիս ամիս: 20

Երբ նվազը վերջացավ և օդի մեջ դեռևս չէին հալվել վերջին ելևէջները, տիկին էլոիզը լսեց խուլ խշշոց: Հեռվում աղմկում էր անտառը: Նա մոտեցաւ պատուհանին: Երկինքը խավար էր: Նա լսեց ավելի խուլ աղմուկ, քան անտառի խշշոցը: Կարծես շատ հեռվում դղրդում էր փոթորկած ծովը:

Տիկին էլոիզը ցուրտ զգաց: Նա կծկվեց բազմոցի վրա և ձեռքն առավ սեկե կազմով գիրքը:

Երբեմն այդ գիրքը նրա բարեկամն էր: Ընթերցելով այդ գիրքը՝ նա արտասովել էր, ինչպես այն ոռոմանտիկ դարում գիտեին արտասովել երիտասարդ աղջիկները և երիտասարդ պատանիները, որոնք զգում էին անգո մի վիշտ տերեւների սոսափի և իրենց հոգու մեջ: Այն կախարդական գիշերը, երբ լիալուսնի տակ ցցվել էր աշտարակը մի լուռ դղյակի, որտեղ կոնչում էր բուն: Ինչպես այն դարի դուստր՝ էլոիզը ևս 30

առանձնութեան մեջ լաց էր եղել մի անանուն գերեզմանի վրա, միտ դնելով, որ այդպես է նաև Վերթերի գերեզմանը կաղնի-  
ների պուրակով, որտեղ նա սպասել էր Շարլոտային: Այդ զբո-  
քի ծալքերում դեռ մնում էին շոր ծաղիկներ և տերևներ, մոռաց-  
ված տարեթվերով, մի ծվեն այն մետաքսից, որից կարել էին  
նրա հարսնութեան զգեստը և թելի նման բարակ ծամ, որ ինքն  
էր հյուսել, որպես սուվենիր:

«Օ՛, ինչքան երեխա ենք մենք... ինչպես թանկ է մեզ  
համար սիրածի մի հայացքը... Օ՛, ինչքան միամիտ երեխաներ  
ենք մենք...»:

Տիկին էլտիզը շրջեց մի այլ էջ:

— Ինչո՞ւ է այս կարոտը, այս սիրտ մաշող սպասումը...  
Մայր է մտնում արևը և ուզում է վերջին անգամ իր շողերով  
ողողել դաշտերը և անտառը և ջրերը, ցոլք տալ և այնպես կոր-  
չել... Ուրեմն ծերացե՞լ է արդեն և վերջին հրածեշտն է տալիս:  
Սվ այլևս չի լինի այլ սեր...

Տիկին էլտիզը նայում էր քայ եջին և չէր կարդում:

Նա տխուր նախազգում էր, որ այլևս կյանքը վերջանում  
է, և այն, որ նրան գարուն է թվում, չէ այն երիտասարդ գա-  
րունը, որ խլրտում է դրսում, այլ խարուսիկ գարունն է ձմեռ-  
նամուտին, երբ դեռ չի մաղել ձյունը և աշնան արևից խաբ-  
ված երկրորդ անգամ խոտը կանաչում է: Բայց հենց այդ  
զգացումն ավելի էր բորբոքում նրա կիրքը, նրա կանացի ծա-  
րավը՝ այս վերջին գավաթը ըմպելու կաթիլ առ կաթիլ և մինչև  
վերջ:

Չմուռն սկզբին էլտիզը վերադարձել էր Ռեկլից: Առաջին  
հանդիպումին ամուսինը՝ պրոֆեսոր Գերման Աուլենդերը,  
ի շարս այլ նորութունների, նրան հաղորդել էր նաև Արմե-  
նիերի մուտքը Դորպատ: Տիկին էլտիզը նրան հանդիպել էր  
Պարրոտի տանը այն երեկո, երբ գնացել էր առաջին այցե-  
լութեան: Երիտասարդը, ծանոթանալով, մի քիչ դժկամությամբ  
էր խոնարհել գլուխը և մի քանի րոպե լուռ մնալուց հետո հե-  
ռացել էր:

— Նա դեռևս բիրտ է և իրեն խորթ է զգում,— ասել էր  
պրոֆեսորը, տիկնոջը հարց ու փորձ անելով Ռեկլի ծանոթ-  
ներից:

Իսկ մի շաբաթ հետո պրոֆեսոր Աուսլենդերը կնոջն ասել էր, որ ինքը Արմենիերին երկրաշափություն է դասավանդելու: Նրանք պիտի պարապեն տանը, ինչպես խնդրել էր պրոֆեսոր Պարրոտը:

— Որովհետև նա մեծ է տարիքով և թույլ է գիտությամբ, քրպեսզի հաճախի սեմինարիա և կամ համալսարան: Նա պետք է արագ սովորի այն պարզ գիտելիքները, որ շեն սովորեցնում նրա հայրենիքում, ինչպես ասաց հերր ռեկտորը:

Այդ օրից շաբաթը երկու անգամ Արմենիերը գալիս էր նրանց տուն, տետրակները և քարե տախտակը թևի տակ, ինչպես դպրոցական տղա: 10

Պարրոտի կինը տիկին էլոիզին պատմել էր, որ երիտասարդը դյուրագորբոք է, երբ խոսում են նրա հայրենիքի մասին: Նա պատմել էր Արմենիերի ընդհարումը մեկի հետ, որը գոհհիկ էր արտահայտվել հայ աղջիկների մասին: Տիկինն ասել էր նաև այն, որ նա բարձրաձայն է խոսում, ինչպես լեռնցի, որ հոգևոր կոշումի լինելով, նա խիստ բժախնդիր է իր հավատի և ծեսերի անաղարտության: Տիկին Պարրոտը հատկապես խնդրել էր ուշադիր լինել նրա արտասանության, շարժ ու ձևերի և նրա բնավորության դաստիարակության, կանացի բնազդով զգալով, որ ոչինչ այնքան գեղեցիկ չի հրդեհում երիտասարդին, որքան միջավայրը կիրթ և ազնվամիտ կանանց: 20

Սակայն այլ էր տիկին էլոիզը: Այն ամենը, ինչ բիրտ էր Արմենիերի բարքի մեջ, նրա համար առնականի կատարելատիպն էր: Նա սիրում էր նրա կոշտ լեզուն, հնչեղ ծիծաղը, որի համար տիկին Պարրոտը նրան խրատում էր, թե վայելուչ չէ այդպես աղմկալի ծիծաղելը տիկինների ներկայությամբ,— նրա պարզ միամտությունը, զգացմունքների անմիջականությունը, նույնիսկ հայ դպրի տարազը, որով Արմենիերը առաջին օրերը գնում էր նրանց տուն,— սիրում էր նրա կախարդական պատմությունները Արևելքի մասին, որտեղ խիստ են սիրում և խիստ են խանդում,— սիրում էր Արմենիերի ոճավոր խոսքերը և նրա զարմանալի երգերը, որոնց մեջ կար և վիշտ, և վախ: 30

Տիկին էլտիզը սիրում էր նրան: Սիրում էր ինչպես մայր, որ կրթով գուրգուրում է որդուն, սիրում էր և ինչպես կին, որ զգում է, թե այդ է վերջին գավաթը կենաց խնջույքի, որից հետո այլևս ոչինչ չկա և չի լինելու: Նա և ուրախ էր, որ կյանքի ցուրտ միզում անակնկալ բոցավառով էր այդ խարուկը, և տխրում էր, նախազգալով, որ կփշեն զորեղ հողմեր, կհանգչի կրակը և այլևս չի լինի ոչ սպասումի կարոտ, ոչ շերմացնող մտերմություն և նույնիսկ մոխիրը կսառչի:

- 10 Նրան թվում էր, թե որ շատ վաղուց աղջկային երազների մեջ երևացել էր այդպիսի մի երիտասարդ: Երբ թերթում էր «Վերթերը», գրքի ծալքերում մոռացված ծաղիկները և ծամը նրան հիշեցնում էին այն թեթև սերերը և հանդիպումները, որ կանուխ շորացան, ինչպես առապարի ծաղիկները, որոնք միայն վաղ գարնան և շատ կարճատև շքեղացնում են առապարը... Ապա հանդիպեց Գերմանին, որի զվարթությունը ցամաքել էր նույն օրը, երբ նա հրաժեշտ էր տվել ուսանողական կյանքին Ննայի համալսարանում: Այդ օրից սկսվել էր նրանց կյանքը՝ տաղտկալի և միօրինակ, ինչպես օրերը այն համեստ բյուրգերների, որոնք ծնվում և մեռնում են միևնույն փողոցում և որոնք կյանքում՝ ծննդից մինչև մահ միակ նշանավոր դեպքը ամուսնությունն էր դրացուհու հետ:

20 Փողոցում ոտնաձայն լսվեց: Նա է... Գալիս է: Տիկին էլտիզը ոտքի ելավ: Մի տաք դող անցավ նրա մարմնով: Ահա նա բախում է դուռը: Միայն նա է այդպես բախում՝ ամուր և երեք անգամ:

— Մի՞թե անձրևում է:

— Անձրևում է:

- 30 Արմենիերը զարմացած նայեց տիկին էլտիզին, թվաց թե ուրիշ դուռ էր ծեծել և ներս էր մտել ուրիշ տուն, որտեղ ապրում էր ամենաչքնաղն այն գեղեցկուհիներից, որոնք բարձրացնելով վարագույրի եզրը, հետաքրքիր նայում էին արևելցուն:

Նա աչքերը հառել էր ժապավենի կարմիր փնջերին:

— Ինչո՞ւ այսօր այդպես եք հագնվել:

— Իսկ ձեզ դուր չի՞ գալիս:

— Յուրտ է... կարող եք մրսել,— ասաց նա կոշտ և առնական գորովով, ապա նայեց մյուս սենյակի դռներին, որտեղից սովորաբար ներս էր մտնում պրոֆեսոր Աուսլենդերը, լսելով նրա ձայնը:

— Գերմանն այսօր ուշ կվերադառնա...

— Ինչ մութ գիշեր է... Իսկ ո՞րտեղ է Մատիլդան:

— Նրա եղբայրը եկել է գյուղից: Խնդրեց այցելության գնալ:

Արմենիերը լռեց: Արտասովոր և քաղցր մի բան կար էլոիզի ձայնի մեջ: Եվ պրոֆեսորը տանը չէր, տանը չէր նաև աղախինը՝ Մատիլդան, և տանը ուրիշ ոչ ոք չկար: 10

Իսկ տիկին էլոիզն այնքան գեղեցիկ էր, այնպես էին այրվում այն փնջերը նրա սև զգեստի վրա:

— Ինչպես չեք երկյուղում մութին տանը մենակ մնալ:

— Մեր տունը մութ չէ... Տեսեք քանի մոմ է վառվում,— հնչեց նրա ջղային ծիծաղը:

— Իմ հայրենիքում կիներ կվախենա մութ գիշերով տանը մենակ մնալ:

— Բայց ես մենակ չեմ: Դուք այստեղ եք,— և նորից հնչեց նրա հեզնոտ ծիծաղը, որով տիկին էլոիզը ուզում էր խայթել նրան:— Այնպես չէ՞, դուք ինձ կպաշտպանեք, եթե շարագործները հարձակվեն մեր տան վրա, ինչպես հարձակվում են ձեր երկրում: 20

Արմենիերը ոչինչ չասաց. նա կանգնել էր կլավիրի մոտ և փորձում էր վերհիշել այն գամման, որ հնչում էր ինչպես վանքի զանգերի ղողանջ:

— Ուզո՞ւմ եք ձեզ սովորեցնեմ կլավիրի վրա նվագել: Արմենիերը տխուր պատասխանեց.

— Ինձ համար ուշ է արդեն... Մեղանում ասում են քառասունի մեջ սովորողը գերեզմանում կնվագի: 30

— Բայց դուք շատ հեռու եք քառասունից:

— Համբերություն չունեմ, տիկին էլոիզ:

— Հենց դրա համար էլ պիտի սովորեք նվագել:

— Կիթաոի վրա գուցե, թե չէ իմ հայրենիքում ո՞րտեղից է այս գործիքը, և ո՞վ գիտի, ես պիտի ունենա՞մ տուն և ընտանիք:

— Այստեղ այնքան լավ աղջիկներ կան... Ընտրեցեք մեկ-նումեկին և տարեք ձեզ հետ:

Արմենիերը շագաց տիկին էլտիզի ոչ դողացող ձայնը և ոչ տխուր շեշտը:

— Նրանցից ոչ ոք ինձ հետ չի վերադառնա իմ երկիրը:

— Այն ժամանակ դուք մնացեք այստեղ:

— Զեմ կարող, ես պետք է վերադառնամ:

Ստեղները միալար դողանջում էին այն գամման, որ հիշեցնում էր վանքի զանգերը:

10

— Իսկ ձեր եկեղեցիներում շե՞ն նվագում...

— Ոչ, տիկին: Մեզանում միայն երգում են:

— Եվ երևի սքանչելի է խումբը երգիչ աղջիկների և տղաների:

— Աղջիկներին և կանանց արգելված է երգել մեր եկեղեցիներում: Նրանք կարող են միայն աղոթել և այն էլ պետք է առանձին կանգնեն:

— Խեղճ աղջիկներ:

— Այո, տիկին, նրանք խեղճ են: Նրանք ոչ միայն շեն կարող եկեղեցում երգել, այլև շեն կարող սիրել և գուցե թե իրենց սրտում գաղտնի սիրեն մեկին, բայց շեն կարող այդ մասին հայտնի ասել: Նրանց շատ կանուխ են ամուսնացնում: Մեզանում ասում են՝ գղակդ զարկիր աղջկա մեջքին, եթե աղջիկը վայր չընկավ, ուրեմն ժամանակն է ամուսնացնելու...

20

— Եվ ամուսնացնում են:

— Եվ ամուսնացնում են: Իմ ազգականուհին, որ հիմա հագիվ լինի տասներկու տարեկան, արդեն երկրորդ տարին է, որ կինն է մի վայրենի մարդու, որը նրան հայր կսազեր: Իսկ ինչքան կայտառ աղջիկ էր Մայրանը: Ամուսնության հենց առաջին գիշերը նա վախից մուռն դարձավ, մուռն և անդամալույծ... Եվ այդպես էլ ես թողի նրան:

30

— Աստված իմ...

— Ահա թե ինչպես են նրանք խեղճ:

Արմենիերը լուռ մոտեցավ պատուհանին: Մութ էր. դրսից լավում էր միայն անձրևի ազմուկը. մի ջրորդանից թափվում էր անձրևաջուրը... Ինչո՞ւ հիշեց Մայրանին... Այն երկրում էլ խավար գիշե՞ր է և ա՞յս անձրևն է գալիս, թե պարզկա

գիշեր է, գարնան սպիտակ աստղերով... Տեսնես հիմա ի՞նչ է անում նանին: Երեկ քուրսու վրա ոսպ է փռել և հոգնած աչքերով շոկում է քարերը: Հանկարծ դռան ետևից կամաց կանչեր. «Ես եմ, նանի... Խաչերն եմ... Դուռը բաց»:

Տիկին էլոիզն աչքերը շեր հեռացնում նրանից: Արմենիերը ձեռքերը կրծքին խաչել և նայում էր մութ խավարին: Տիկինն զգաց, որ նա մտքով հեռու էր: Եվ ինքն իրեն հանդիմանեց, որ ավելորդ հարցասիրությամբ պատճառ եղավ վերհիշումների:

Այդ րոպեին եթե Արմենիերը գլուխը շրջեր և նայեր տիկին էլոիզին, նա կտեսներ այնպիսի հայացք, այնպիսի աչքեր՝ սիրով և քնքշանքով լի, որ կմոռանար ցնորքը: Բայց նա անշարժ նայում էր խավարին: Թվաց թե լսեց շան խուլ հաշոց շատ հեռվից, զուցե ժմուղների այն գլուղից կամ ավելի հեռվից:

— Ինչքան միանման են հաշում շները... Կարծես թե մեր Բողարի հաշն էր:

— Ուզո՞ւմ եք ձեզ համար մի բան նվագեմ... Գերմանն ուշանում է:

Արմենիերը շրջվեց: Նա կարծես մոռացել էր, որ օտարի տանն է, և այդ տանը մարդ կա...

— Նվագեցեք:

Երբ տիկին էլոիզը վեր կացավ և քայլեց, այնպես քաղցր խշշաց նրա զգեստը:

Հնչեց նույն վայսը... Երբեմն թվում էր. թե մութ գիշերին ստեպի վրայով անցնում է եռաձի կառքը և զրնգում են բոժոժները, երբեմն մեկը և երկուսը թավ դողանջում են հեռվից, կարծես նավը գնում էր ծովի հեռուն և այնտեղից այդ հրնշյունները հրածեշտ էին տալիս սիրելի ափին:

Պատի վրա այն նկարն էր, որի ապակին իր մեջ էր հավաքել լույսի շողեր և արտացոլում էր ինչպես պատուհանից ներս ընկնող աստղալույս: Արմենիերը նայեց նկարին և իսկույն աչքերը դարձրեց դեպի տիկին էլոիզը, որ ինքնամոռացության մեջ ետ էր թեքել գլուխը, և մոմերի լույսով ցլանում էր նրա նուրբ պարանոցը: Նկարը պատճենն էր այդ պատկերի... Նույն մոխրագույն գանգութները, նույն փոքրիկ քիթը,

շքեղ ունգերով, որ փքվում էին կրթով, լույսի տակ երե-  
վացնելով վարդագույն արյունը,— նույն հրեական շրթունք-  
ները՝ հազիվ նշմարելի աղվամազով: Նույնաձև էր նաև զգես-  
տը, այն տարբերությամբ, որ երկնագույն էր և ոչ սև, բայց  
փնջերը նույնն էին, նույն վառ կարմիր վարդերը: Նկարի էլոի-  
զըն ավելի երիտասարդ էր: Նա նստել էր բազմոցին և ծընկ-  
ների վրա պահում էր բացված գիրքը:

Արմենիերը նորից համեմատեց նկարը... Տիկին էլոիզը  
չուներ այն կանաչ ուլունքը, որի ծայրից կախված էր ընկույ-  
զի մեծության սև և տափակ մի քար: Իսկ այդ քարը և ուլուն-  
քի կանաչ շարանն ստվերագծում էին նկարի կնոջ երիտա-  
սարդ և գեղեցիկ դեմքը:

Երբ տիկին էլոիզը նվազը վերջացրեց, Արմենիերը մտա-  
ցավ նրան.

— Իսկ որտե՞ղ են այն ուլունքները,— և մատը մեկնեց  
նկարին:

— Ուզո՞ւմ եք ցույց տամ,— նրանք կողք-կողքի գնացին  
դեպի փոքրիկ պահարանը՝ կարմիր փայտից և սաղաֆներով  
զարդարած:

Այդ բոպեին անձրևախառն քամին հանկարծ խփեց պա-  
տուհանին, և կաթիլներն աղմուկով թմրկահարեցին: Նրանք  
լուռ նայեցին իրար:

— Մեծո՞ւմ են պատուհանը:

— Ոչ, անձրևն էր...

Տիկին էլոիզը դարակից հանեց ուլունքների շարանը:

— Մայրս է նվիրել իմ հարսնության օրը,— մեղմ և  
թախծոտ ասաց տիկին էլոիզը, կարծես կարոտեց և՛ մորը,  
և՛ հարսնության երջանիկ առավոտը:

Ինչ-որ բան է փորագրված քարի վրա,— և Արմենիերը  
քարը պահեց լույսի դեմ:

— Այո... գրված է amor vincit omnia, որ նշանակում է  
գերը հաղթում է ամեն ինչի... շոտլանդական քար է:

Քարի վրա քանդակված էր նաև մի աղջիկ, որի ոտքերի  
առաջ ննջում էր պարտված առյուծը:

Արմենիերը ձեռքերը մեկնեց: Նա կամեցավ ուլունքները  
կախել տիկնոջ պարանոցով, ինչպես նկարի վրա էր: Նրա

մատնեբը շոշափեցին էլտիզի շերմ պարանոցը: Տիկինը խոնարհեց գլուխը, և նրա գանգուրները շոյեցին Արմենիերի այտերը: Նրանք իրար շէին տեսնում, այնքան մոտ էին աչքերը:

Պատուհանի տակ նորից աղմկեց քամին և ծառերը խշշացին:

— Իմ սիրելի երեխա...

Տիկին էլտիզը գրկեց նրան, համբուրեց և ամուր սեղմեց կրծքին, կարծես վախենում էր, որ գարնան քամին նրան կխլի իր գրկից:

14

10

Առավոտյան Մատիլդան, աղախինը տիկին էլտիզի, եկավ այրի կին Աշինգերի տունը Գրունշտրասսեի վրա, որտեղ բնակվում էր Արմենիերը: Մատիլդան տանտիրուհուն հարցրեց. «Վե՞ր է կացել պարոնը...»: Տանտիրուհին բախեց նրա սենյակի դուռը և ներսից պատասխան շռնելով՝ դուռը կամաց հրեց: Ներսը ոչ ոք չկար. սեղանի վրա բաց էր այն գիրքը, որին հավատո գիրք էր անվանում Արմենիերը, տանտիրուհուն արգելելով ձեռք տալ գրքին, երբ նա հավաքում էր սենյակը: Սեղանի վրա մոմը մինչև վերջը վառված էր. հատակին թափված էր ծխախոտի մոխիր: Աթոռի թիկնոցի վրա փռված էր նրա սյուրտուկը, որից ջուր էր կաթում:

20

— Չկա մեր երիտասարդը,— և տանտիրուհին դուռը դրեց:— Երևում է, որ նա շատ ուշ է վերադարձել, որովհետև ես քոն շունեմ և շատ ուշ եմ քնում... Իսկ երեկ գիշեր այնպիսի անձրև էր, ծառերն այնպես էին աղմկում, որ ես անկողնում երկար ժամանակ արթուն էի և ինչեր շէին երևում իմ աչքերին: Իսկ նա չեկավ, որովհետև եթե գար, ես նրա ոտնաձայնը կլսեի: Մինչև անգամ անկողին չի մտել, այլ պառկել է շորերով: Այ կտեսնեք, որ այդպես է եղել... Փառք Աստծո, տասը տարի է այրի եմ և շատ կենվորներ եմ տեսել և նրանց այնպես եմ ճանաչել, որ նույնիսկ ոտնաձայնից եմ ճանաչել, ինչպես իմ հանգուցյալ ամուսինը ճանաչում էր նամակները, թե ով է գրել և ում են գրել և ինչ է գրված նամակի մեջ...

30

339

Մատիլդան զարմանքից բերանը բաց էր արել, կարծես պոստմեյստեր Աշինգերի այրին նրան հրաշք էր պատմում, ինչպես երեկոյան իր եղբայրը, որ գյուղից էր եկել, պատմում էր, թե հարևան գյուղում մի կով ծնել է ոչ թե իսկական հորթ, այլ հորթի գլուխ, միայն մի գլուխ, առանց իրանի և ոտքերի, և որ հորթի գլխին կպած է եղել պոչը, նույնպես իսկական պոչ, և հորթի գլուխը ծնվելուց հետո երեք անգամ բառաչել է ու մեռել:

Իսկ տիկին Աշինգերը պատմում էր.

- 10 — Պատահում էր, որ հոգնած տուն էր գալիս հանգուցյալը: Հանում էր մի նամակ և ասում. «Մարթա, այս նամակն ուղարկել են կառապան Հանս Տրաուբենին, որի տունը ռուսների նոր աղոթատան դիմացն է... Եվ նրանք գրում են, որ հայրը մահացել է գյուղում»: Եվ իսկապես այդպես էր, ճշմարիտ աստված: Նա հագնում էր ու ֆրակը, հագնում էր նաև սև ձեռնոցներ, որովհետև գիտեր, որ կառապան Հանս Տրաուբեն կարդալ չգիտե և իրեն պիտի խնդրի կարդալ այդ նամակը, որից հետո բոլորը պիտի ողբային ծերունու մահը: Եվ իմ հանգուցյալ ամուսինն առաջինն էր ասում մխիթարանքի խոսքը, նույնիսկ պաստորից առաջ: Եվ կառապան Հանս Տրաուբեն այդ օրից դառնում էր իմ ամուսնու բարեկամը և եթե նրան փողոցում հանդիպեր, նա հեռվից կանչում էր. «Բարև ձեզ, պարոն պոստմեյստեր»,— և մինչև անգամ առաջարկում էր կառք նստել, որովհետև հոր մահվամբ Հանս Տրաուբեն ժառանգութուն ստացավ... Այդպիսի մարդ էր իմ հանգուցյալ ամուսինը: Կամ բերում էր մի փոքր ծրար, այնքան փոքրիկ, որ կարելի էր ասել, թե տասը խոսքից ավելի չէր տեղավորի, բայց նա ցույց էր տալիս ծրարը և ժպտում. «Մարթա, վաղը կարող ես շնորհավորել դատավորի կնոջը... Ինչպե՞ս է նրա կրտսեր աղջկա անունը»: «Ամալյա է անունը, տեր իմ...»: «Այս ծրարի մեջ Ամալյայի երջանկության բանալին է... Հիշո՞ւմ ես այն թնդանոթածիզ կապիտանին, որ այս ամառ գնդի տունին ողջողջ կուլ տվեց տասներեք ձուկ»: Եվ իսկապես, նա կուլ էր տվել տասներեք կենդանի ձուկ, և ամբողջ քաղաքում խոսում էին այդ մասին: «Ահա այս նամակով պարոն կապիտանը խնդրում է դատավորի դուստր Ամալյայի ձեռքը»: Եվ ինչ. մի շաբաթ

հետո դարձյալ իմ ամուսնու ձեռքով ուղարկում էին պատասխանը և ամիսը շրոլորած, մեզ ևս կանչում էին հարսանիքի: Ահա թե ինչպիսի պոստմեյստեր էր իմ հանգուցյալ ամուսինը. նստում էինք երկուսով, քանի որ աստված մեզ արժան չհամարեց զավակ ունենալ, — նստում էինք, նա խմում էր երեկոյան թեյը (նա սիրում էր ծաղկով թեյ, և հիմա էլ դեռ այդ ծաղկից պահում եմ), և միասին զրուցում էինք: Ամբողջ քաղաքում դեռ ոչ ոք չգիտեր, թե ով է դժբախտացել և կամ ով է, որ պիտի երջանկանա, և միայն մենք գիտեինք... Այդպիսի մարդ էր իմ ամուսինը:

10

Արդեն Մատիլդան զգացվել էր այրի Աշինգերի զրույցից, և խեղճ աղջկա աչքերի մեջ արցունք էր երևում, այնինչ տանտիրուհին դեռ պատմում էր, մեծ եռանդով սրբելով ափսեները, որ ամենևին յուզոտ չէին, այլ միայն փոշոտ էին, և այդ փոշին վկայում էր, որ պոստմեյստեր Աշինգերի մահից հետո ափսեներն այլևս չեն փայլել սեղանի վրա:

— Իսկ ինչ երիտասարդ է Արմենիերը, Աստված իմ... Կարող եմ ասել, որ ահա տասը տարի է այրի եմ և այդպիսի երիտասարդ չեմ տեսել: Ինչքան եմ երախտապարտ տիկին Պարրոտին, նաև երախտապարտ եմ տիկին էլրիզին: Ենորհակալ եմ, որ չեն մոռացել երախտիքն իմ հանգուցյալ ամուսնու... Իսկ իմ ամուսինը պատահում էր, որ բուփին, երբ փողոցներում կրակ էին վառել, որպեսզի մարդիկ կարողանան շարժվել, իմ հանգուցյալ ամուսինը, որի նման պոստմեյստեր մինչև անգամ Պետերբուրգում չկար...

20

Այդ զարմանալի Աշինգերը ձյունամրրիկին ծրարներն անձամբ էր տանում ռեկտոր Գևորգ Ֆրիդրիխ Պարրոտին (աայն ժամանակ որդին՝ Ֆրիդրիխը, որ ռեկտոր է այժմ, դեռ երիտասարդ էր...): Այդ հեռավոր ժամանակներից Աշինգերի այրին ինչպե՞ս պիտի հասներ եկեղեցի, որտեղ նա հանդիպել էր երկու տիկիններին և ապա տիկին Պարրոտը նրան հարցրել էր.

30

— Զգիտե՞ք մի հարմար սենյակ առաքինի տան մեջ մեր բարեկամ Արմենիերի համար... Եվ որ տանտիրուհին հոգա նրան, դաստիարակի, որովհետև նա խնամքի կարոտ է...

Մի ժամից հետո տիկին Աշինգերի խոսքը նորից դարձավ Արմենիերին:

341

— Ահա շուտով կըրանա վեց ամիս, ինչ նա ապրում է իմ տանը և ես միշտ փառք եմ տալիս Աստծուն, որ հանդիպել եմ այդպիսի մարդու: Ո՛չ աղմկում է, ո՛չ նրան հարբած եմ տեսել, ո՛չ ուրիշ անիրավություններ է անում, ինչպես օրինակ՝ նա՛,— և տանտիրուհին այս խոսքի վրա ձայնը ցածրացրեց, մատը մեկնելով դեպի ձեղունահարկը,— նույնիսկ ամոթ է նրան պարոն ուսանող ասել... Նա լավ կաներ շրջեր տոնավաճառներում և բնցքակովով փող աշխատեր: Ա՛յ, եթե ողջ լիներ իմ հանգուցյալ ամուսինը, նա նրան ցույց կտար: Բայց ես, այրիս, ի՞նչ կարող եմ անել: Իսկ Արմենիերը՝ անմեղ աղավնի է... Դեռ ամիսը չըրացած ծեծում է դուռս և ասում. «Կարելի՞ է, տիկին Աշինգեր... Ահա այս ամսվա վարձը՝ յոթ ուրբլին»: Եվ վճարում է: Ես գիտեմ, որ նրա թոշակը քսանհինգ ուրբլի է և յոթ ուրբլին ինձ է վճարում, բայց դրա փոխարեն ես նրան հատկացրել եմ ամենալավ սենյակը՝ երկու պատուհանով և ծաղիկներով,— տիկին Աշինգերը բացեց սենյակի դուռը,— նաև ինքս եմ հավաքում սենյակը, լվանում եմ նրա ներքնաշորը և խնամում եմ, ինչպես մայրը որդուն: Հենց մի շաբաթ առաջ նա ինձ՝ թե «Տկար եմ, տիկին Աշինգեր»: Եվ ես նրան այնպիսի մուգ թեյ տվի և իմ տղրուկներով արյուն առա նրանից, և նա մյուս օրը ոտքի կանգնեց... Իմ տղրուկները մինչև անգամ բուրգմեյստերի կնոջն են առողջացրել... Նաև պատահում է, որ մի տեղ կարը քանդվում է, և թել ասեղ է հարկավոր: Տղամարդ լինելով նա անհոգ է և մինչև անգամ չի նկատի, եթե կարը քանդվելով հասնի Ռիգա, և կամ մի կոճակ այնպես է կախվում, որ խղճահարվում ես, թե ինչո՞ւ է նա այդպես կախվել, ինչպես իմ ամուսնու ֆրակի կոճակները, և ամոթ է ասել տաբատի կոճակները, որոնցից մեկն ու մեկը միշտ օրորվում էր թելի վրա, ինչպես հարբած գլուխ, և ես դեռևս միտք եմ անում, թե արդյոք նրա բոլոր կոճակները վայելուչ տեսքով էին, երբ հանգուցյալին դրին դագաղի մեջ...

Մատիլդան հառաչեց, որովհետև զգայուն էր և շէր կարող առանց հառաչելու լսել մահվան մասին:

— Եվ առանց խոսքի առնում եմ նրա տաբատը կամ ժիլետը, կարում եմ քանդված կարը, ամրացնում եմ կոճակը, որովհետև մտածում եմ, մեր քաղաքում նա հարազատ մայր

չունի և քույր չունի և կին չունի և մինչև անգամ խղճի ընդդեմ է, որ այդպիսի մարդը շրջի առանց կոճակի... Իսկ սենյակը ոչ մի պակասութուն չունի: Եթե Դոմբերգի գազաթին արև կա, արևն այս սենյակի մեջն է: Իսկ այն բազմոցը, որ տեսաք, իմ ամուսնու սիրած բազմոցն էր: Ես այս սենյակը տեղափոխեցի, թեև կոնտրակտի մեջ չի հիշատակված,— տեղափոխեցի, որպեսզի Արմենիերի օթևանը բոլորովին շքեղ լինի, ինչպես բարոնի որդու բնակարանը: Եվ ամենևին չեմ փոշմանել, քանի որ նա արժանի է... Իսկ այն մեկը,— տանտիրուհին մատը նորից վեր բարձրացրեց,— չեմ կարող ասել, թե ինչպիսին է... Ամբողջ ձեղունահարկն զբաղեցնում է տարին տասնութ ութլով և ինն ամիս է ոչինչ չի վճարել: Եվ մինչև անգամ վախենում եմ նրան խոսեցնել... Իսկ Արմենիերը, չեմ կարող ասել, ինչքան բարեհոգի է: Երբեմն այնպես է երգում, այնպիսի քաղցր ձայնով է երգում, որ պատի ետևից ես լսում եմ, լաց եմ լինում, հիշելով իմ հանգուցյալ ամուսնուն: Իսկ թե ինչքան խելոքն է, այդ մասին էլ խոսք չկա: Իզուր չէ, որ պարոն պրոֆեսորը բոլոր հայերից միայն նրան է ընտրել:

10

— Այո, իմ պարոնն ևս ասում էր, որ նա խելոք է,— ընդհատեց Մատիլդան,— ես ինքս եմ լսել նրա զրույցը տիկնոջ հետ... Նա ասում է, որ եթե այսպես գնա, հերր Արմենիերը կարող է մինչև անգամ պրոֆեսոր դառնալ:

20

— Եվ կդառնա... Անպատճառ կդառնա: Նա գիշերները համարյա չի քնում և շարունակ կարդում է: Տեսա՞ք մոմը, մինչև վերջ վառված էր: Իսկ երեկոյան դեռ բոլորովին նոր էր մոմը:

— Իսկ իմ տիրուհին ևս նրան շատ է սիրում:

— Օ՛, տիկին էլիզբեթ հրեշտակ է... Ամեն անգամ նրան ուզում եմ այցելության գնալ և շնորհակալ լինել նրա բարեխոսութայն համար, բայց դեռ չեմ գնացել:

30

— Երբ տանը քաղցրավենիք է լինում կամ կարկանդակ, իմ տիրուհին ինձ հարցնում է. «Մատիլդա, պահե՛՛ր ևս Արմենիերի բաժինը...»:

— Հապա Արմենիերն ինչպիսի գովեստով է խոսում տիկնոջ և պարոն Աուսլենդերի մասին: Նա ասում է, որ հավիտյան չի մոռանա այդ տունը:

343

— Տիկին Աշինգեր, միայն ձեզ եմ ասում,— և Մատիլդան շշնջաց նրա աղանջին,— իմ տիրուհին ասեղնագործում է տղամարդու այնպիսի կրծկալ, որ ամբողջ քաղաքում ոչ ոք չունի։ Սև թավիչ է, վրան ոսկեթելերով և մարգարիտներով այնպիսի շուշաններ, որ կարծես նոր են քաղել։ Իսկ վզի վրա՝ վարդերի ժանյակը և երկու թիթեռ. մեկն սպիտակ, մյուսը՝ դեռ չի սկսել, այլ միայն նշան է արել...

10 — Ա՛յ-ա՛յ-ա՛յ,— և այրի Աշինգերը հիացմունքից փափուկ ձեռքը խփեց իր այտին և այդպես էլ պահեց ձեռքը։— Եվ ո՞ւմ համար է գործում:

— Ես այնպես եմ միտք անում, որ պարոն պրոֆեսորի համար չի գործում, քանի որ գույները և նախշերը երիտասարդի են:

— Ուրեմն... Ա՛յ-ա՛յ-ա՛յ...

— Միայն խնդրում եմ, տիկին Աշինգեր, ոչ ոքի... Որովհետև դեռ չի վերջացրել և կարելի է, որ ուզում է անսպասելի նվիրել...

20 Տիկին Աշինգերը ոչինչ չպատասխանեց, այլ ճապաղած աչքերով նայեց Մատիլդային, ձեռքն այտի վրա... Նա խոր միտք էր անում, թե առաջ որի՞ն պատմի՝ կողովագործի կնոջը, որ ապրում էր նրա տան ներքնահարկում, թե՞ հարևան վարսավիրի կնոջը: Եվ որոշեց, որ ավելի լավ է սկսել մահուղավաճառի կնոջից, քանի որ նա տիկին Աշինգերի տղրուկներն ավելի զորավոր է համարում վարսավիրի տղրուկներից:

— Իսկ շուտո՞վ պետք է նվիրի,— սթափվեց պոստմեյստերի այրին:

30 — Չեմ կարող ասել: Այս առավոտ իմ տանտիրուհին թեև գունատ էր, բայց երբ պարոն պրոֆեսորը գնաց, վերցրեց թավիչը և սկսեց ասեղնագործել: Առաջ նա ճաշից հետո էր գործում, երբ քնում էր պարոն Գերմանը, իսկ այսօր առավոտյան կանուխ սկսեց...

— Ուրեմն շտապում է:

— Եվ ինձ ասաց, որ ծնկները փաթաթեմ, դրովհետև իրեն վատ է զգում: Երեկ նա թեթև էր հագնվել և երևի մրսել է:

— Երեկոները դեռ ցուրտ է... Իսկ ես ինչպես եմ մրսում:

— Երբ նրան փաթաթեցի, իմ տիրուհին հարցրեց, թե Մատիլդա, դու գիտե՞ս տիկին Աշինգերի տունը Գրունշտրասսեի վրա: Ես պատասխանեցի՝ այն տունը չէ՞, որտեղ հերր Արմենիերն է ապրում... Հիշո՞ւմ եք, տիկին Աշինգեր, ձմեռը ծննդյան տոնին մի անգամ եկա և պարոնի համար կարկանդակ բերի:

— Հիշում եմ, սիրելիս, և հիշում եմ, որ համեղ կարկանդակ էր...

— Ես այդպես էլ ասացի իմ տիրուհուն: Իսկ նա այնպես մանրամասն նկարագրեց տունը, թե երկու պատուհան ունի, որ նայում են փողոցին, կարմիր աղյուսե տուն է, դարպասը կանաչ գույնի և դարպասի առաջ երկու լորենի... 10

— Եվ ի՞նչ լորենիներ...

— Իմ տիկինն այնպես նկարագրեց, որ առանց մոլորվելու գտա ձեր տունը և դեռ հեռվից տեսա երկու լորենիներ...

— Որ տնկել է իմ հանգուցյալ ամուսինը, Մատիլդա, իմ և նրա լորենիները, երբ մենք նորապսակներ էինք և...

Բայց արցունքը նրան խանգարեց և պոստմեյստերի այրին գոգնոցով սրբեց արցունքը:

— Իմ տիրուհին ասաց. «Մատիլդա, գնա Արմենիերի առողջութունը հարցրու, նաև ողջունիր տիկին Աշինգերին և իսկույն վերադարձիր»: Ես ասաց, որ վատ երազ է տեսել և սիրտն անհանգիստ է: 20

— Բայց ո՞ւր է Արմենիերը, — զարմացած հարցրեց տանտիրուհին և կարծես միայն այդ վայրկյանին նա հասկացավ, որ տիկին էլտիզն աղախնին ուղարկել էր Արմենիերի մասին տեղեկանալու:

— Ո՞ւր կարող է լինել, — և նորից բացեց դուռը, երկուսով ներս մտան, կարծես ենթադրում էին, որ Արմենիերը կարող էր սենյակում լինել և կամ աննկատ ներս մտնել այն ժամանակ, երբ պատշգամբի վրա այրի Աշինգերը Մատիլդային պատմում էր հանգուցյալ պոստմեյստերի մասին: 30

— Ուրեմն նա հագել է կապույտ սյուրտուկը... նաև զգրատը չկա: Իսկ այդ սյուրտուկը դեռ թաց է...

Մատիլդան հետաքրքրությամբ նայում էր պատից կախված նկարին:

— Այդ նրանց գլխավոր տաճարն է... Ինքը Հիսուսը գիշերով իջել է երկնքից, մուրճով խփել է գետնին և ասել է. «Այստեղ կառուցել մի տաճար...»: Եվ այդտեղ էլ կառուցել են: Իսկ այն սարը, որ հեռվում երևում է, Մատիլդա, սուրբ սար է... Դա Արարատն է... Որտեղ Նոյի տապանն է իջել, իսկ այժմ այնտեղ հերթ պրոֆեսորը ցցել է մի խաչ, որ ինքս տեսել եմ, որովհետև այդ խաչը պատրաստել է Իոհանն Յիգլերը, իսկ նրա կիսն իմ հանգուցյալ ամուսնու հորեղբոր աղջիկն է...

10 Մատիլդան նայում էր այնպիսի սնահավատ երկյուղով, կարծես այդ նկարն էլ սուրբ էր, և նա տատանվում էր՝ խաչակնքե՞լ, թե՞ համբուրել:

Բայց այդ ժամանակ ձեղունահարկից լսվեցին ինչ-որ ձայներ: Տիկին Աշինգերը ձեռքը զարկեց ազդրին:

— Ա՛յ... Արմենիերը այնտեղ է: Այդպես էլ է, Մատիլդա... երևի ես մառանումն եմ եղել, որ նա բարձրացել է վերև: Մատիլդա, — և նա ձայնը մեղմեց, կարծես վախենում էր վերևից լսեին, — ինձ դուր չի գալիս նրանց բարեկամութունը... Իհարկե, ինձ անհարմար է Արմենիերին զգուշացնել,

20 բայց դու ասա տիկին էլտիզին, ասա իմ անունից, և թող Արմենիերն այլևս նրա հետ, — տանտիրուհին ցույց տվեց ձեռունահարկի կողմը, — բարեկամ չլինի... Այ, տեսնո՞ւմ ես, — և ձեռքը մեկնեց դեպի տրորված անկողինը, — վերևի կենվորի շնորհքն է: Իսկ մինչև այդ, Արմենիերն այսպիսի բան չէր անում... Բոլորը նա է սովորեցնում: Ինն ամիս է վարձը չի վճարել և դեռ ճանապարհից հանում է ազնիվ երիտասարդին:

Տիկին Աշինգերն սկսեց հարդարել անկողինը: Նա Մատիլդային խնդրեց բարձրանալ ձեղունահարկը, ուր հավանորեն պետք է լիներ Արմենիերը:

30 — Ես այնտեղ ոտք չեմ դնի, մինչև հարգելի պարոնը չվճարի իր պարտքը... Կտուրն էլ կաթի, ես դարձյալ չեմ բարձրանա:

Մատիլդան փայտե սանդուղքով վեր ելավ:

Դեռ սանդուղքի վրա լսեց, որ մեկը կարծես գոռոռում էր: Երբ մոտեցավ դռնակին, Մատիլդային թվաց, թե ներսը խոսում են անծանոթ լեզվով: Նա դուռը բխեց:

— Դուռը բաց է,— նորից դղրդաց մի ձայն:

Աղջիկը ներս մտավ: Մխի մեջ նա տեսավ մի վիթխարի մարդ, որի գլուխը հասնում էր առաստաղին: Նա առանց շապիկի էր, և նրա մերկ կրծքի վրա ինչ-որ սև գծեր կային: Մարդը ձեռքին բռնել էր երկար սուսեր: Նկատելով աղջկան, նա թիկնոցով իսկույն ծածկեց մարմինը և երկու քայլ արեց դեպի աղջիկը: Բայց այդ վայրկյանին Մատիլդան անկյունում նըշմարեց ուրվականի պես զարհուրելի մի բան, որ գլխին ուսանողի գրակ ունեւր և ատամներով բռնել էր այրվող ծխամորճը:

10

Մատիլդան սարսափից ճշաց, փակեց դուռը և իրեն նետեց պատշգամբ:

Տիկին Աշինգերը դուրս վազեց սենյակից: Պատշգամբ բարձրացավ նաև կողովագործը, որ բակում կիտել էր կողովները և այդ բոպեին ուզում էր դարպասը բաց անել կողովները շալակով տանելու համար: Նա առաջինը նկատեց աղջկա վայր իջնելը, բայց մինչև բարձրանար, տիկին Աշինգերն արդեն գրկել էր ուշագնաց Մատիլդային:

— Ջուր, մի գավաթ ջուր,— կանչեց տանտիրուհին:

Կողովագործը ջուր բերեց:

20

Տանտիրուհու կանչին դուրս վազեց նաև կողովագործի կինը, նրա հետևից երկու երեխան: Նրանք բոլորը բարձրացան պատշգամբ:

Մատիլդան ուշքի եկավ:

— Այնտեղ... Կտուրի տակ սատանա կա... Նա ծխում էր ծխամորճը, իսկ մի ուրիշը թուրը ձեռքին պահապան էր կանգնել:

— Հիսուս Քրիստոս,— և տիկին Աշինգերն ահից այլևս ուշինչ չասաց: Կողովագործի կինը գիրկն առավ փոքրին: Բոլոր կանայք լուռ նայեցին միակ սղամարդուն՝ կողովագործին, որը նույնպես լուռ էր:

30

Չեղունահարկի բնակիչը, որից այնքան գանգատվում էր տանտիրուհին, Օտտոկար Դրիշն էր, մեկը այն առաքինի ուսանողներից, որոնք մեղրագինին խմում էին ձիու պես, բոնցքակովի մեջ առյուծ էին, զվարճանում էին ինչպես ազատ թռչուն, բայց և գիտեին եզի նման շարքաշ աշխատել:

347

Մտտենում էին քննությունները և մի շարքով էր, որ Դրի-  
շը ձեղունահարկում, ուր լույսն ընկնում էր կտուրի մեջ բաց-  
ված կտոր պատուհանից,— սերտում էր *anatomia regionum...*

...Այն, ինչ որ Մատիլդայի աչքին երևաց, որպես զար-  
հուրելի ուրվական, մարդու կմախք էր՝ ոչ բոլոր ոսկորներով,  
որ հավաքել էր Օտտոկար Դրիշը սուրբ Մարիամի մատուռի  
մոտ, այնտեղ, ուր Ալեքսանդր I-ը հողին էր հանձնել ռու-  
կորները զանազան ժողովուրդների: Եվ որքովհետև պակասում  
էին մի քանի կողոսկրներ, ուստի Դրիշն իր մարմնի վրա  
10 ածուխով նկարել էր այդ ոսկորները:

Իսկ մնացածը՝ ինչ տեսել էր Մատիլդան, իրական էր:  
Օտտոկարը իր բերետը հագցրել էր գանգին և ծխամորճը կո-  
խել էր նրա բերանի խոռոչը և ոչ միայն գոց արտասանում էր  
հարյուրավոր ոսկորների անունները և սուսերով ցույց էր տա-  
լիս ոսկորը, այլև կմախքի հետ բարձրաձայն խոսում էր.

— Օ, *maxilla superior* (և սուսերի ծայրով դիպչում էր  
վերի կզակին), որը տիկին Աշինգերին նմանեցնում է զա-  
ռամյալ կապիկի, նաև դուք *vertebrae collus*, որ թաղվել եք  
նրա ճարպի մեջ... Ապա այդ նիհար *costae*-ները (և սուսերի  
20 ծայրը ցատկաբար էր կրծքի վանդակի ոսկորների վրայով և ոս-  
կորները ստեղծների նման ձայն էին հանում), այս ոսկորն  
վանդակի մեջ, ով անհայտ *homo sapiens*, թո սիրտը արդյոք  
ըմբոստացե՞լ է երբևիցե, բարախե՞լ է մի վսեմ նպատակի հա-  
մար, թե եղել է հում մսագունդ:

Օտտոկար Դրիշը այդպես էր ուսանում ոսկրաբանությու-  
նը և *pelvis*-ի ոսկորների հետ խոսում էր այնպիսի քնքշու-  
թյամբ, որպիսին ոչ ոք չի խոսել սիրած կնոջ հետ:

Նկատելով անծանոթ աղջկա հանկարծակի աներևութանա-  
լը և լսելով նրա ճիշդ, նաև աղմուկը պատշգամբի վրա,— Օտ-  
տոկարը շտապ հագնվեց և իջավ ներքև այն ժամանակ, երբ  
30 բոլորը լուռ նայում էին կողովագործին, իսկ նա նայում էր  
կողովների կուլտին, մտածելով, որ իզուր կորչում է ժամա-  
նակը, և այսօր հագիվ թե վաճառի երկու կողով:

Սանդուղքի վրա տեսնելով Օտտոկարին, կողովագործը  
բարևեց նրան և հանդարտ ասաց.

— Լավ կատակ չեք անում, պարոն ուսանող...

Եվ իջավ բակը՝ դարպասը բաց անելու:

— Ի՞նչ է պատահել,— Օտտոկարը սիրալիբ նայեց Մատիլդային, զգալով, որ դուռն այդ աղջիկը բացեց: Մատիլդան հարդարեց մազերը և գոգնոցը, նույնիսկ թեթև շիկնեց: Նա աչքերը գետին խոնարհեց: Այնքան անմեղութուն կար նրա դեմքին, որ Օտտոկարը խղճահարմեց:

— Ձեզ երևի վախեցրեց կմախքը և իմ անհամեստ տեսքը: Ներեցեք. ինձ...

Մատիլդան թաքցրեց ժպիտը: Տիկին Աշինգերը ակնհայտ դժգոհ էր այդպիսի վախճանից: Նա սպասում էր, որ Մատիլդան նախահարձակ լինի, ապա կխառնվի կողովագործի կինը և ապա ինքը մի անգամից կթափի կուտակված մաղձը: 10

Բայց այդպես չեղավ: Մատիլդան ամոթխած ասաց.

— Ես բարձրացա տեղեկանալու Արմենիերի մասին և հանկարծ... Աստված իմ:

Այդ ժամանակ դարպասով ներս մտավ մահուդավաճառի կինը, նրա ետևից վարսավիրի կինը, ապա մի կին, որի ամուսինը ոչ մահուդավաճառ էր և ոչ վարսավիր, այլ վաղուց խեղդվել էր ջրում, նաև շորրորդը, որ կին չէր, այլ ձկնորս էր և ապա հինգերորդը՝ ընկնավոր Վասիլիսան, և երբ վեցերորդը երևաց, որը հայտնի չէ, թե ինչու ներս մտավ ճիւղալը գլխին գցած, կողովագործի կինը իսկույն նկատեց բացակայումը իր երկրորդ տղայի և հասկացավ, որ նա էր փողոցում հրդեհ գցել: Կինը դուրս գնաց, գնաց և Մատիլդան, պատշգամբի վրա թողնելով տիկին Աշինգերին, որը հետզհետե բորբոքվելով հանկարծ ժայթքեց: 20

Օտտոկարը մի պահ նայեց բազմության, ապա վեր բարձրացավ և քիչ հետո վերևից կախվեց կմախքը, գանգի վրա կանաչ բերետը, ծնոտների մեջ՝ ծխամորճը և ձեռքին պիստոլետ: Կանաչը վախից ճշացին և դարձրին երեսները, իսկ որոնք երիտասարդ էին, գոգնոցները քաշեցին դեմքներին և այդպես փախան: Միայն ձկնորսը, որ կին չէր, այլ պառավ տղամարդ, ծխամորճը բերանից հանեց և թքեց: 30

Ֆրաու Ֆոգելզանգի պանդոկում այդ ձկնորսը հետո պատմում էր, որ իբր թե կմախքից կախված է եղել նաև հողայն-

դական երշիկ և այնպես է կախված եղել, որ ձկնորսը ամաշել է պատմել:

15

Գիշերը չէր քնել և արդեն լուսադեմն էր, երբ փակեց գիրքը: Անձրեք դադարել էր: Պատուհանից երևում էր լուսաբացի պարզկա երկինքը:

Նա տնից դուրս եկավ: Փողոցը լուռ էր: Տների վրա ծրփում էր գաղջ մշուշը: Աղլուս բարձած մի դրոզ երևաց փողոցի ծայրին և անհետացավ: Թեև դրոզը հեռու էր, բայց նրա աղմուկը դեռ լսվում էր, ինչպես խուլ որոտ: Նա ծովեց դեպի գետը: «Ռուսական ծայրամասում» (այդպես էր կոչվում ուսնների արվարձանը) նա հանդիպեց մի մարդու, որ միայն շապիկով կանգնել էր դռան առաջ և ծխում էր: Երբ անցավ նրա կողքով, զգաց թարմ հացի հոտ... Իրենց թոնիրը հիշեց: Այնքան քաղցր էր այդ ծխահամ հոտը լուսաբացին:

Մարդը զարմացած նայեց նրա ետևից և մտածեց. ո՞վ գիտե ով է... Տեսից՝ պարոն է, բայց ինչու առավոտ կանուխ թրև է գալիս այս կողմերը: Երևի լուսացրել է մի վաճառականի կնոջ հետ:

20 «Ռուսական ծայրամասից» այն կողմ քաղաքը վերջանում էր: էստ ձկնորսների ցաք ու ցրիվ խրճիթները, որ նման էին անտառի մրջնաբներին, նաև քանդված հողմաղացը ավելի էին հաստատում, որ այն կողմը ոչ միայն քաղաք չկա, այլև չկան այդպիսի խղճուկ տնակներ, և կան միայն ծառեր, բլուրներ և տխուր դաշտեր, որոնց միջով սահում է էմբախը:

Նա բռնեց գետակի արահետը և գնաց, մինչև արահետը կորավ շոր խոտերի մեջ: Արևը խփեց դիմացի բլուրին: Նահասավ մի փոքրիկ բարձրության, որտեղ ծառերը շրջապատել էին ինչ-որ ավերակի: Ճգնարան էր, թե հին եկեղեցի, գուցե և մնացորդ մի բերդի, որ ով գիտե, երբ էր ավերվել: Դեռ մնում էր դռան հետքը. մի կաղնի բուսել էր ավերակի ներսը և հետզհետե խարխլել էր պատերը:

30 Չորս կողմը խաղաղ լուսթյուն էր: Ներքև՝ հանդարտ ծրփում էր էմբախը, երբեմն միայն մի ալիք խշշալով լիզում էր գետափի ավազը: Այդ խաղաղ լուսթյունը պատեց նաև նը-

րան: Բնության այդ խորշը նրան հարազատ թվաց. կարծես այդտեղ եղել էր նաև ուրիշ անգամ, շատ վաղուց, այն տարիները, երբ հորթարածի հետ հանդ էր գնում, հորթերը հանգրստանում էին գետի հովում, մտնում էին գով քարայրները և կամ ջրի մեջ կանգնած ննջում էին: Իսկ հորթարածները հավաքվում էին ուռիների տակ կամ Ծղնախաչի ստվերում, և հասակավոր հորթարածը պատմում էր, թե իբրև շատ առաջ եղել է մի որսորդ, և ամբողջ ձորերը և բլուրները խիտ անտառ են եղել... Իբրև թե որսորդը հալածում է եղնիկներին, որոնք երբ հասնում էին այդ տեղը, իսկույն աներևութանում էին: Այն ժամանակ որսորդը գլխի է ընկնում, որ այդ հողը սուրբ է, այլևս որս չի անում, այլ դառնում է ճգնավոր և կառուցում է Ծղնախաչի մատուռը... Այնտեղ էլ ավերակի մեջ բուսել էր մի սալորենի, որ արդեն ցցաչար էր, և ճյուղերին կապել էին գունավոր թիւեր՝ շար աչքի դեմ... Նրան նույնիսկ թվաց, որ այս ավերակի ներսը բեմ կա, բեմի վրա՝ կարմիր խաչքար: Պատերի ճեղքերում պետք է լինեին հողե ճրագներ՝ առանց ձեթի, և պատերը պետք է սևացած լինեին վառած մոմերից:

Արևը հետզհետե բարձրացավ: Գիշերվա անձրևից թաց ավազահողը տաքանալով գույնը փոխեց: Միայն երբեմն ծառերից վայր էին ընկնում անձրևաջրի կաթիլները: Հեռու երեվում էր Գորպատը... Ահա համալսարանի սպիտակ սյուները, սուրբ Իոհանի տաճարը, աշտարակը Սիգիզմունդ վազայի և Քարե կամուրջի աղեղը: Նավակներն իբրև սև կետեր անկարգ լողում էին գետի վրա: Քամին քաղաքի կողմից երբեմն բերում էր այնպիսի խուլ աղմուկ, որ չէր լինում ջրկել ոչ մի ձայն: Նա գտավ նաև Գրունշտրասսեն...

Տիկին Աշինգերի լորենիները միացել և երևում էին, ինչպես մի սև թուփ: Գուցե հենց այդ վայրկյանին տիկին Աշինգերը Մատիլդային պատմում էր լորենիների և իր հանգուցյալ ամուսնու մասին:

Նա նստեց քարի վրա: Մի գորշ խլեզ քարի վրայով բարձրացավ վեր՝ արևի տակ տաքանալու: Դուրս սողաց նաև մի ուրիշը և կանգ առավ առաջինի կողքին: Ավերակի մեռած քարերը կարծես կենդանացան: Նա մի քանի բույս նայեց խլեզներին, որոնց փորի տակը բարբախում էր:

Քամուց ծառերն օրորվեցին, և անձրևաշրի կաթիլները վայր ընկան... Նա ետ նայեց. կարծես ծառերի մեջ մեկը ման էր գալիս, խշշացնելով խոտերը: Այդպես էր նաև գիշերը, երբ դուրսը վարար անձրև էր, իսկ տիկին էլոիզը փոքրիկ աղջկա նման գլուխը դրել էր նրա ծնկներին և ննջում էր: «Մի գնա, դեռ մի գնա», — կարծես երազի մեջ աղերսում էր նա: Իսկ ինքը հարթում էր նրա ժապավենի կարմիր փնջերը, որ այլևս նման չէին բացված վարդերի, այլ հիշեցնում էին անձրևածեծ և հողմից քրքրված կակաչներ: «Դու նորի՞ց կգաս... Դու ինձ չե՞ս անիծի, իմ սիրելի երեխա», — և գրկում էր նրա պարանոցը, նորից էր համբուրում, ապա սեղմվում էր նրան, կարծես սենյակում ցուրտ էր, տիկին էլոիզը մրսում էր: Իսկ ինքը լուռ էր... Թվում էր թե հաշմ է, ընդարմացել է և ոչինչ, ոչինչ չի հիշում:

Այդ ամենն այնպես անակնկալ եղավ... Մոմերը վառվում էին. սեղանի վրա իր տետրակներն էին և քարե տախտակը: Նկարն արտացոլում էր կապույտ աստղալույս... Ահա կգա պրոֆեսոր Գերմանը, ուրախ ձայնով կողջունի Արմենիերին, կհամբուրի տիկին էլոիզի ճակատը, բաց կանի նրա տետրը և կբացականչի. «Ինքը էվկլիդեսը այսպես չէր նկարի: Բայց և այնպես այս եռանկյունին մի քիչ ծուռ է, այնպես չէ, իսկ այս գիծը ավելորդ է, հավաստացնում եմ, որ առանց այս գծի էլ կարելի էր ապացուցել, որ ճշմարիտ էր ժերուսի Պյութագորոսը...»: Սակայն պրոֆեսորն ուշանում էր, և Մատիլդան չկար: «Լա՞վ է ինձ հետ», — և տիկին էլոիզը այնպես էր նայում, որ Արմենիերը պատասխանում էր այնպիսի հայացքով, որ երկուսն էլ հասկանում էին, թե այդպես շատ լավ է, և այդպես կարելի է ապրել նույնիսկ եղեգնյա վրանի տակ, մի հեռավոր լճակի ափին, որտեղ ուրիշ ոչ ոք չկա և աշխարհում ոչ ոք չկա, այլ միայն ծառեր կան, որ աղմկում են, որպեսզի քաղցր լինի շնչալը և քամին շաշում է, որ ցուրտ լինի, և ջերմությունը մնա միայն նրանց գրկի մեջ և իրար գրկած լսեն, թե ինչպես ջրորդանի մեջ երգում է անձրևը:

Պատուհանը ծեծեցին: Տիկին էլոիզը վեր թռավ: Արմենիերը դուռը բացեց: Նախասենյակի կիսամութի մեջ նա եշմարեց Մատիլդային, որ հեկհե ներս մտավ:

— Ինչ անձրև է, Աստված իմ,— Մատիլդան սենյակի շեմ-  
քում կանգնեց:

Նրա դեմքը կարմրել էր: Անձրևը քրքրել էր աղջկա մա-  
զերը և զգեստն այնպես էր փակցրել մարմնին, որ գծագրը-  
վում էին մարմնի բոլոր մասերը: Կարծես մարմարե արձան  
էր, որին հագցրել էին մարմաշե զգեստ, և անձրևն ավելի էր  
գեղեցկացրել աղջկա մարմինը: Տիկին էլոիզը նախանձով նա-  
յեց այդ պարզ և երիտասարդ գեղեցկության:

Արմենիերին նկատելով՝ Մատիլդան շփոթվեց.

— Իսկ ես կարծեցի, թե դուռը պարոն պրոֆեսորը բաց 10  
արեց... Բարի երեկո: Ինչպիսի՞ անձրև է...

— Մատիլդա, գնա և շորերդ փոխի...:

Աղջկա մուտքի հետ կարծես ընկավ մի ինչ-որ շղարշ, և  
ամեն ինչ մերձացավ: Արմենիերը նայեց տիկին էլոիզին: Նրա  
աչքին նիհար և զունատ երևաց տիկին էլոիզը: Առաջին անգամ  
նա նկատեց նրա երկար մատները: Նրանք չոր էին և ոսկրոտ:  
Ինչո՞ւ է նա այդպես զլուխը թեքել և ձեռները հուսահատ դրել  
է ծնկների վրա:

— Իսկ ինչպե՞ս պիտի գա պարոն պրոֆեսորը,— խո-  
հանոցից ասաց Մատիլդան և երևաց քաթանե զգեստով, որի 20  
մեջ նա նման էր գյուղական աղջկա:

Արմենիերը ամոթ զգաց: Նրա արևելցու գիտակցության  
մեջ պատահածը հանկարծ թվաց նամարդ գործ: Դիմացը  
կանգնեց բարի պրոֆեսորը, որ ահա ով գիտե ինչ դժվարու-  
թյամբ խավար փողոցներով տուն է գալիս և թրջվում է շտա-  
պելով, որ հարցնի նրա դասը: Իսկ ինքը... Արմենիերը նայեց  
Մատիլդային, և կարծես աղջիկը ևս հանդիմանում էր նրան.

— Լավ չէ, պարոն Արմենիեր... Ձեզ այնքան է սիրում պա-  
րոն պրոֆեսորը, նաև իմ տիրուհին է սիրում, բայց դուք... Ահա 30  
վշտացրել եք իմ տիրուհուն, և նա լուռ է. կգա պարոն պրո-  
ֆեսորը և նա էլ շատ կվշտանա, որովհետև նա շատ է սիրում  
տիկին էլոիզին, շատ է սիրում, բայց դուք...

Հետզհետե այդ գիտակցությունը սաստկացավ: Նա նույ-  
նիսկ վախ զգաց, ինչպես միամիտ տղան, որ խաղ է արել  
և խաղի ժամանակ փշրել է մի թանկագին սկահ և խաղով

տարված դեռևս չի գտում, թե ինչ է փշրել, և թե որքան նվիրական էր այդ անոթը մոր համար: Բայց ահա զգաց, նկատելով բեկորները... Ջգաց և խազը վերջացնելով՝ ուզում է իրար միացնել բեկորները, բայց մատները դողդողում են, և շեն միանում բեկորները...

— Մատիլդա, կրակ արա... Ցուրտ է,— տիկին էլտիզը շալը փաթաթեց ուսերին: Շալը ծածկեց ժապավենի կարմիր փնջերը և ուլունքի շարը:

Արմենիերը հավաքեց տետրերը և քարե տախտակը:

**10** — Դուք արդեն գնո՞ւմ եք,— և տիկինը նրան նայեց համբարդերսանքով:

— Ուշ է:

— Սպասեիք մինչև անձրևը դադարելու:

— Տաք անձրև է,— և նա տրորեց գլխարկի եզրը,— կարո՞ղ եմ խնդրել այս գիրքը...

Երբ Մատիլդան մոմը բռնած բաց արեց դուռը, քամու ալիքը ներս խուժեց, և անձրևի կաթիլները թրջեցին տիկին էլտիզի դեմքը: Մոմի լույսով նա խավարի մեջ միայն մի աղբյուրի տեսավ Արմենիերի սիլուետը, և այլևս ոչինչ շերկաց:

**20** ...Գիշերը չէր քնել և ընթերցեց էր «Վերթերը»... Նրա գրգռված երևակայության մեջ իրականը և այդ գիրքը, և հիշողությունները խառնվել էին: Երբեմն աչքին երևում էր տիկին էլտիզը, երբեմն այդ գրքի կինը՝ Շարլոտան, նրան պատկերանում էր տեսիլքի նման, ինչպես այն կինը, որ ձյունափոշու մեջ ձեռքով արեց և սահնակով սլացավ:

Երբ ծառերն աղմկում էին, նրանց կատարներն իրարից հեռանալով բաց էին անում երկնքի կապույտ շերտը: Արտեվանունքների միջից նա վեր էր նայում, և թվում էր, թե ծառերի բարձր ճյուղերը ճոճվում են ջինջ կապույտի մեջ: Խոտերը սվավում էին: Խշխշան շորերով մի կին ման էր գալիս ծառերի արանքում, և երբ հանդարտվում էր քամին, այդ կինը թաքնվում էր մթին ավերակում: Երբեմն պատահածը նրբան հրազ էր թվում, մեկը այն շողշողուն երազներից, որոնցով նա գարդարել էր իր աղքատ պատանեկությունը: Եվ միտն էր գալիս Հաղպատի վանքը, ժամերգությունն ուխտի օրերին...

**30**

Նիհար, դեղնած երեսով մի պատանի դպիր, որի ուրարը փաթաթվում է ոտքերին, նիհար դպիրը խնկարկում է ուխտավորներին: Բուրվառից թոնում են ածուխի կայծեր, և խունկի ծուխի հետ բարձրանում է բորբոսնահոտ, որից գլուխը պլտրտվում է: Մոմ է, և ոտքերը քաղցից դողում են... Արդեն երեք անգամ խնկարկել է սրբոց պատկերներին և խորանին և քարե ավազանին, խոնարհելով խնկարկել է նաև եկեղեցական դասում՝ Անտոն եպիսկոպոսին, որ փափուկ բարձերի վրա շոքած ննջում էր, խուլ Հովհաննես վարդապետին, որ խոժոռ է նայում երիտասարդ դպրին և փնթփնթում է, որ դպիրը չի թեժացրել կրակը, և կայծերը ճայթում են, գրավելով ուխտավորների և ժամասացների ուշադրությունը՝ ահա արդեն խընկարկել է նաև աշխարհական դասում լոռվա մելիք Փարսադանին, որ շուխալի թևերը վեր քշտած ձեռքերը կոխել է արծաթակուռ գոտու մեջ, գոտի, որ ահագին ծանրություն ունի և որի մեջտեղից բարակ շղթաներով կախված են ոսկեզօծ գնդեր: Նա արդեն խնկարկել է մյուս տղամարդկանց, որոնց բրդոտ փափախները և բռի արտաքինը կիսախավարի մեջ հիշեցնում են քարափի ցից քարերը, նաև ինչ-որ կոճղեր և ցցաշորի, երբ անտառում աղչամուղչ է: Նա քաղց է զգում, գլուխը պլտրտվում է: Վերջին բուրվառն է բարձրացնում դեպի վերնատան տախտակամածը, որտեղ շար են ընկել կանաչք: Վանքի նեղ լուսամուտից հանկարծ ներս է ընկնում արևի շողը: Խունկի ծուխը ոլորվում է շողի վրայով: Արևի շողով ցուլանում է այն լոռեցի աղջկա երեսը: Նա գլուխը փաթաթել է ծաղկավոր աղլուխով և վերնատան մահաչառի մոտ կանգնած նայում է երիտասարդ դպրին: Բուրվառի ծուխը շղարշում է նրա դալար մարմինը. աղջիկը կարմրում և ցած է խոնարհում աչքերը, զգալով, որ իրեն երկար է նայում դպիրը:

10

20

Այդ աղջիկը երկու անգամ էլ ուխտ եկավ Հաղպատ և ալլևս շերևաց: Հետո, Համբարձման տոնին, երբ ուխտավորներն աղբյուրի մոտ քեֆ էին անում, իսկ հարս ու աղջիկ ընկուզենու ճյուղից կախել էին ճոճքը և զվարթ կանչերով ճոճվում էին անդունդի վրա, նա տեսավ մի նորահարսի, որի լաջվարդ զգեստը փոփոկում էր քամուց, ընկուզենու ճյուղը ճոռում էր, երբ հարսը թափով բարձրանում էր ընկուզենուց էլ վեր և

30

բարձրերում կանչում էր արտույտի նման: Երիտասարդ դպիրը ճանաչեց այն աչքերը, որ մի անգամ ամոթխած խոնարհվել էին:

Երբեմն միտն էր գալիս այդ լուռեցի աղջիկը, ինչպես մանկության ցնորք: Նրա հետ զարթնում էին լուովա սարերը՝ գագաթներն ամպերի մեջ, լանջերին մթին ծմակներ... Ապա ծանրորդ խշշում էին, և գալիս էր այն կինը, որի մարմինը թալարտաց նրա գրկի մեջ, գալարվեց ինչպես կրակը, որ վաղուց է բռնկվել տան ներսը, հետզհետե լափել է մերձակա իրերը, ապա շարագուշակ բոցերով լուսավառել է խավար պատուհանները, մոլեգնած խփել է առաստաղին և ինչպես հրեղեն սյուն ահա այրվում է խավարի մեջ...

10

Փարնան արևը բորբոքել էր նրա արյունը, և արյունն անզուսպ եռում էր, ինչպես կյանքը տաքացած հողի մեջ: Ժրջան մրջյունները դես ու դեն վազվզելով կրում էին ծղոտներ և սերմեր, որ մնացել էին հողի երեսին: Կարմիր գատիկները շղթայվել էին ձու դնելու մոլուցքով: Ոսկեփորիկ իշամեղուն երբեմն կնճիթը թաթախում էր քաղցր խեժի մեջ և խեժի բուրով արբած թռչում էր՝ լողանալու արևի շողերով: Ծառերի մթին խորքում սուր ձայնով կտկտացնում էր կտցարը:

20

Այնտեղ հիմա վար են անում, հարաքաշ են իրենք, Միրզամը, Ղլիճ Ղազարի խալիսը: Ամբողին լծել են իրենց Զեյրան եզը և Ղլիճ Ղազարենց Միրանը: Մալաղոնդի Ղևոնդը շուխան մեջքին քլավանդ արած բռնվել է վեսկու պոզերից, իսկ հայրը հորովել է ասում, և նրա ձայնից թնդում են Քանաքեռի քարափները: Ագռավները ծանր-ծանր գնում են ակոսների հետ և կտցում են արևերես ընկնող ճիճուներին: Նոր ակոսներից տաք գոլորշի է բարձրանում: Նանին աղլուխի մեջ հաց է կապել և ասում է. «Խաչեր, սիրտս հանդի հաց ուզեց... Ղաղեղ առնի նանին, մի էս հացը տար հանդին նշանց տուր,

30

բեր: Հրեն զագարակի արտերը վարում են... Տար, բալա ջան»: Հացն առնում էր և շէր գնում զագարակի արտերը, այլ գնում էր Ապրանքսփոսի բաղը՝ պարսատիկով քար գցելու կաշաղակի բներին կամ քչքչան առվի վրա ջաղաց շինելու...

Իսկ ինչ կասեն վանքում, եթե իմանան այդ պատմությունը, եթե խաշատուր դպիրին տեսնեն տիկին էլոիդի հետ... Նա հեգնոտ ժպտաց: Եվ աչքին պատկերացան խցերը, վան-

քի գաւլիթը, ձիթհանքի քարերը, որտեղ հիմա արեկող են արել վանականները... Ահա կարծես գետնի տակից դաշտամուկի նման դուրս եկավ Կուզ Բաղդասար վարդապետը՝ երբ օղլին նա հոտոտեց մուկի նման և մանր քայլերով արագ-արագ գընաց և իսկույն մտավ Շիրաճի Բարսեղ սարկավագի խուցը. «Խաբա՛ր ես, խաբա՛ր ես, քանաքեռցի խաչատուր չիք-դպիր լյուտերականաց հետ... միանգամայն է...»։ Իսկ Շիրաճին դեռ նոր է զարթնել քնից և կեղտոտ եղունգներով քաղցր քորում է մարմինը և միայն մնչում է... Մուկը դուրս է վազում մի ուրիշ խուց, որտեղ ամբարապետ Կյուրեղ հայր-սուրբը վիթխարի քրեղանի մեջ մածնաբրդոջ է արել և թոնրի կրակով խորոված ուլի մսերը բրդոջի հետ մատնելով մղանում է բերանի քարանձավը։ «Ընթյա՛ր օլանըն իմանը՞...» և ամբարապետն ավելացնում է այնպիսի բառ, որ խցի մոնթը, որը շրամանը ձեռքին կանգնել է,— ամոթից շրջում է երեսը։ Եվ ի վերջո երբ օղլին լուրը տանում է ձիթհանքի քարերի վրա արեկող արած վանականներին՝ Ջրպուն Բարսեղ եպիսկոպոսին, Մարտիրոս վարդապետին, որ կոչվում է «կենդանի նահատակ», տիրացու Իգնատիոսին, որ ճան է խաղում դուքանչի Դանել վարդապետի հետ, ապա գալիս են Շիրաճի Բարսեղը, ամբարապետ Կյուրեղ հայր-սուրբը և ահագին աղմուկով բոլորը ղողոթում են, բամբասում, քրքրում են նրա անունը, ինչպես ազոսավները լեշի միսը...  
Հետզհետե մտքի թելը բարակեց։ Քնի և երագի սահմանում նորից երևաց տիկին էլոիզը... Ինչքան շքնաղ էր նրա դեմքը կիսաստովերում... Աչքերի մեջ պղտոր փայլ կար, շրթթունքները լցվել էին մուգ կարմիր արյունով։ Երբեմն նա աչքերը փակում էր և կույրի նման շոշափում նրա գլուխը, դեմքը, կարծես ուզում էր հոգու մեջ հավիտյան դրոշմել նրա պատկերը։ Երբեմն մոտ էր պահում նրա գլուխը և նայում էր առանց աչքերը թարթելու, կարծես ասում էր. «Ի՞նչ կա քո աչքերի մեջ, սիրելի երեխա, որ գրավել է ինձ... Ասա, ի՞նչ կա...»։ Բայց նա բառ չէր արտասանում, այլ երբ այդպես մոտ նայում էր նրան, ամուր գրկում էր և երկար-երկար համբուրում...  
10  
20  
30

\* Ուրացողի հավատը...

Շոգ էր... Վանքի հարավային դարպասը փակ էր: Ինքն իջնում էր դիվանատան նարդիվաններով: Ատենադպիր Քաղե վարդապետը նրան ուղարկել էր ձեթի: Վանքի գավթով արագ անցավ թվանքի թումասը... Նրա հետևից հանգիվ էր հասնում կոնդեցի Սահակ եպիսկոպոսը: Նա գնում էր, և վեղարը փոփոտում էր: Նրանք մոտեցան դարպասին: Թվանքի թումասը դարպասի փոքր դուռը բաց արեց, իսկ կոնդեցին ամբողջ մարմնով դուռը կալնեց: Կարծես ուզում էր դուրս գալ, և դուռը նեղ էր: Նա հետ քաշվեց... Իրար հետևից ներս մտան վեցյոթ օտարականներ, տարօրինակ զգեստներով: Ապա թվանքչին բացեց մեծ դարպասը և ձիերը քաշելով՝ ներս մտան հրացանավոր մարդիկ: Նրանք ձիերը տարան ախոռատան կողմը, իսկ օտարականները՝ կոնդեցուն շրջապատած եկան դեպի վանք... Ինքը ձեթի ամանը ձեռքին կանգնել էր: «է՛յ, տանձի գող քանաքեռցի,—բղավեց կոնդեցին,—ի՞նչ ես ճանառի նման ռեխո բաց արել... Մեռա նիզնայք ասելով: Արի շուղաբը տուր է, ուսյալ անզգամ»: Մոտեցավ նրանց: Այդպիսի դիմագծեր նա իր կյանքում չէր տեսել... Ռուսներ չէին... Մի նիհար մարդ խմբից անջատվեց և նրան ուսերեն հարցրեց. «Դո՞ւք եք հերը դիակոնուս Աբովյանը...»: «Այո, ես խաշատուր դպիրն եմ, գրագիր դիվանատան և թարգման»: «Ձեր ուսուցիչը՝ հայր Ալեմդարը, Թիֆլիսում մեզ ասաց, որ վանքում միայն դուք կարող եք թարգման և ուղեկից լինել մեզ: Ծա պրոֆեսոր Պարրոտն եմ...»: «էս դարիբականներին տար աթոռակալ սրբազանի կուշտը, տես ինչ կասի... կարող են գիանլու մարդիկ լինեն, մղայիթ կաց»: Պարրոտը նայում էր մեկ դպիրին, մեկ եպիսկոպոսին և ոչինչ չէր հասկանում: Ձեթի ամանը դրեց նարդիվանի վրա և նրանց առջնորդեց Մաղկավոր էյվանի հայաթը:

Շոգ էր: Արևն այրում էր: Նա գրատը քաշեց քարի ստվերը և կողքի վրա դարձավ: Շորի մեջ փաթաթած գիրքը դրեց գլխատակին... Քունը հաղթում էր: Մտքի մեջ հարավային դարպասն էր: Ամառվա շոգ ցերեկը, երբ վանքի բակում օքմին չէր երևում, թվանքի թումասը մեկնվում էր դարպասի ստվերում: Նա ասում էր, թե դարպասի տակով զլզլան հով է փչում... էլոհզը երեկոյան ինչքան նման էր իր պատկերին: Երիտասարդ, բոլորովին երիտասարդ աղջիկ էր, երբ պռոշները կարմրել էին.

ուսը շահաղ էր տալիս, սպիտակ ուսը... Գնում են՝ ինքը և աղ-  
ջիկը... Թվանքչի Թումասը դուռը բաց կանի, թե՞ ոչ: Դուռն  
ինքն իրեն բացվում է և փակվում: Բոլորովին մենակ կանգնել է  
վանքի բակում: Աղջիկը չկա... Բայց ո՛չ վանքն է երևում, ո՛չ  
խցերը, ո՛չ Ղազարապատը: Մացառներ են, վայրի խոտ և ուղ-  
տափուշ... Այնպես են խճճվել, կարծես երբեք արորի խոփը չի  
առել այդ հողը: Մի բարակ ճանապարհ է նշմարում խոտերի  
մեջ... Գնում է ճանապարհով, օձ է երևում՝ կանգնում է: Մի ձայն  
ասում է. «Նաչատուր, վանքի քանքանի օձերն են, մի վախի...»:  
Գնում է նեղ արահետով: Լափռի փշեր են՝ վրան սև թրթուրներ... 10  
Թրթուրն բարակ ոստայնի թելով կախվում է մի կարմիր կա-  
րիճ: Վախեցած առաջ է վազում և ինքն իրեն հարցնում. «Կա-  
րիճը մի՞թե կրարձրանա ծառը...»: Ծտ է նայում՝ կարիճը  
գալիս է, ոնց է գալիս, պոչը մեջքի վրա պահած վազում է,  
ինչպես բրդոտ շուն... Բողարն է... Բողար, անիրավ, էս ո՞ր-  
տեղից... Այլևս արահետը չկա, այլ կանաչ բլուր է, գագաթին  
մի քար: Բարձրանում է քարի վրա, ուզում է տեսնի, թե ո՞ւր է  
վերջը մացառուտի. շորս կողմը մարդու հետք չկա, ո՞ւր է ըն-  
կել ինքը... Կանգնել է ոչ թե քարի վրա, այլ մի ավերակ եկե-  
ղեցու բեմի վրա: Ո՛չ զբորդ կա, ո՛չ ջահ, ո՛չ վարագույր... 20  
Եկեղեցին սյուներ չունի և զմբեթ չունի: Բաց դռնից նայում է  
դուրս: Հանկարծ թփերը շարժվում են, խոտերն օրորվում են:  
Եվ մեկ-մեկ թփերի արանքից, խոտերի միջից դուրս են գալիս  
երեխաներ և մտնում են դռնով: Նրանք երկար ճանապարհ  
են անցել և շարշարվել են: Ահա մեկի ճակատը փուշն արյու-  
նոտել է, այն մյուսի թշերն է շանգոել, երրորդը քրտնած  
հետ է... Բոլորը նայում են խելոք աչքերով: Նրանք դեռ գա-  
լիս են, գալիս են և վերջը չի երևում... Ինչքան գալիս են, այն-  
քան եկեղեցու պատերը հեռանում են: Ներս մտնողները նըս-  
տում են քարերի վրա և լուռ նայում են իրեն: Ինքը թևի տակ 30  
ունի մի գիրք... Բաց է անում այդ գիրքը: Բոլոր բառերը կար-  
միր են, միայն իր անունն է սև թանաքով: Կարդում է, և կար-  
դացած բառերն իսկույն չքանում են, կարծես իր շնչով  
այրվում են կարմիր բառերը և կայծերի նման թռնում են...  
Հանկարծ երեխաների միջից ոտքի է կանգնում պրոֆեսոր  
Պարրոտը և ձայն է տալիս. «Բարձր կարդա...»: Եվ նա ձայնը

բարձրացնում է... Բայց ինչո՞ւ թե՛ր ծանրացավ և այլևս չի կարողանում շրջել էջը: Գիրքն էլ ծանրացավ: Մատեներն այրվում են, գիրքը կարծես պղնձից է ձուլած և տաքացել է... Նա ուզում է գիրքը վայր դնել, բայց մատեները ձուլվել են գրքին: Ու մեկ էլ բռնկվեց գիրքը: Շորերի վրա կաթկթում է կարմիր պղինձը... Կաթում է և այրում: Մուխ է... էլ ոչ ոք չի երևում: Ուզում է կանչել, բայց ձայնը կոկորդից չի ելնում... Նա բարձր է պահում վառվող գիրքը, որ կրակը հեռվից տեսնեն... Կապույտ ծուխի մեջ երևում է նանին... Գալիս է դանդա՞ղ, պառավ կնոջ քայլերով: Գալիս է և հաճախ կռանում. կարծես «ծտի պաշար» է քաղում: Նրա հետ գալիս է մի աղջիկ, զառ մանդիլը գլխին... Ինչո՞ւ է այդպես հագել էլոիզը: Եվ ո՞րտեղ է հանդիպել մորը: Կանչում է, բայց ձայնը նրանց չի հասնում, կանչում է ոչ յուր ձայնով, այլ բարա՛կ ու քաղցր ձայնով: էլ չի կանչում, բայց այդ ձայները գալիս են, այդ ձայները դեռ հնչում են:

10

Նա աչքերը բաց արեց: Խ՛նչ ձայներ են... Երազի մե՞ջ է, թե արթուն է... Աչքերը տրորեց և նստեց: Իսկ այն ձայներն ահա պարզ լսվում են և հնչում են ինչպես երազի մեջ: Նա շուրջը աչք ածեց, ապա նայեց վերև:

20

— Կռունկները, կռունկները...

Եվ ձեռքերը վերև պարզեց:

Կռունկների երամբ գնում էր բարձրերով: Նրանց կանչերը զրնգում էին ջինջ օդի մեջ, և երկնքի յոթ կամարն արձագանքում էր այդ ձայներին:

## 16

էմբախի վրա լողում էր մի նավակ:

Արմենիերը վերևից ձայն տվեց, և նավավարը, որ կարծես նիրհել էր, գլուխը բարձրացրեց վեր: Այդ ամառի ափերին նրա համար անակնկալ էր որևէ մեկին հանդիպել: Նավակը նա մոտեցրեց ափին:

30

Արմենիերն արագ իջավ, ցատկեց նավակը և միայն այդ ժամանակ նկատեց մի փոքրիկ աղջկա, որ անշարժ նստել էր նավավարի դիմաց: Արևը ողողել էր նրա մուգ դեղին մա-

գերից մինչև բորիկ ոտքերը: Առաջին հայացքից փոքրիկ աղ-  
ջիկը թվաց դեղնամոմից սարքած տիկնիկ, որ չի թարթում  
աչքերը, չի խոսում, այլ միայն նստում է՝ ձեռքերն անշարժ:  
Սակայն աղջիկն աչքերը թարթեց և միամիտ անմեղովյամբ  
նայեց պղտոր ջրին, որի երեսին լողում էին տերևներ և շոր  
ճյուղեր, որ ո՛վ գիտե ինչ դաշտերից հավաքել էր գիշերվա հե-  
զեղը:

— Աղջիկս է,— ասաց նավավարը, որսալով նրա ուշադիր  
հայացքը.— հիվանդ է, պարոն... Ասում են արևը և գետի զովը  
նրան օգտակար է:

10

— Իսկ ինչո՞ւ է հիվանդ:

— Չգիտեմ... Այսպես մոմի նման հալվում է, հալվում է  
և մի օր էլ... Ի՞նչ ասեմ: Չորրորդ երեխաս է, պարոն...

— Եվ շորսն էլ այսպե՞ս են:

— Չորսից երեքն այսպես էին և հիմա շիան: Սա շորորդն  
է:— Հայրական այնպիսի քնքշանք կար նրա դեմքին,— ասում  
են, որ պետք է լավ սնել, կաթ և յուղ և ձու տալ: Իսկ ո՞վ է  
մեզ տվել կաթ և յուղ և ձու... Ահա իմ ամբողջ օրվա աշխա-  
տանքը,— և նա ոտքով հրեց ուռկանի կույտը, որի տակ, նա-  
վակի հատակին, թարմ ձկներ էին,— այս էլ դժվար է... Հիմա  
ձուկը սիրում է ծանծաղ ափ, որտեղ և աքն կա և խոտ: Իսկ  
ծանծաղ ափերը մերը չեն...

20

— Հապա ո՞ւմն են:

— Պարոններին են... Այ, տեսնո՞ւմ ես այն կաղնին:  
Նրանից այն կողմ բարոն Կելենբախի հողերն են: Եվ գետն է  
նրանը, և ձուկը, և հողը, և անտառը, և մարդիկ էլ նրանն են...  
Իսկ ի՞նչ ձուկ կա, ի՞նչ ձուկ կա,— նա լռեց, հասկաց-  
նելով, որ այնտեղ շատ լավ ձուկ կա,— ձուկն էլ գիտի, թե  
որտեղ է ապահով: Այս կողմերում այնքան սոված մարդիկ են  
շրջում... Եվ ձուկը մեր կողմերով խորքով է գնում և այնպես  
զգույշ է, որ չես բռնի: Իսկ այնտեղ՝ այնտեղ ուրիշ բան է:  
Կարող ես ձեռքով էլ հանել, ինչպես թե տակառից հանես:  
Այդպես է: Ասոված այդպես է բաժանել. լավ հողերը և դաշ-  
տերը տվել է պարոններին, անտառներն արջերին է տվել,  
իսկ մեզ... Այ թե ինչ է տվել,— և նա թիակը թողնելով օդի  
մեջ, ձեռքով կիսաշրջան գծեց: Նա պղտոր գե՞տն էր ցույց

30

361

տալիս, գետի աղքատ ափե՞րը, դիմացը նստած հիվանդ աղջը-  
կա՞ն, թե՞ այդ ամենի հետ միասին նաև իր ցնցոտիները:

— Իսկ մեզ մոտ այդպես չէ... Այնտեղ ամեն մարդ կա-  
րող է ուզած ջրում ձուկ բռնել:

— Ո՞րտեղ ձեզ մոտ:

— Հայերի երկրում:

Նավավարն այդպիսի երկրի անուն չէր լսել: Եվ այդ նրան  
ճնշեց այնպես, ինչպես հասարակ մարդկանց ճնշում է խրթին  
բառը:

20 — Չեմ լսել և չեմ կարող ասել,— մոռաց մարդը,—  
բայց կարող եմ ասել, որ ես էլ օտարական եմ, և այս կող-  
մերի մասին էլ ասում էին, թե ազատ երկիր է և ապրելը հեշտ  
է... Բայց այդպես չէ: Աշխարհում որտեղ մի կուշտ կա, այն-  
տեղ հարյուր քաղցած կա: Ահա ես հիսուն տարեկան եմ և  
շատ աշխարհներ եմ տեսել, Մոսկվայի հրդեհն եմ տեսել,  
եղել եմ Բերեզինայի կովում և նույնիսկ մինչև Պրուսիա քշել  
եմ ֆրանսիացիներին և երկու ձմեռ ձմեռել եմ Ստոնեկում...  
Կա այդպիսի տեղ կհաստանում: Այնտեղ է, որտեղ, ասում են,  
պան Տվերնիցկին մերոնց լավ շարդել է... Տոնավաճառի մի  
20 զինվոր պատմեց ինձ: Նա էլ մեր կողմերից է և վիրավորվել  
է, բայց ոչ Ստոնեկում, այլ Կավրենիշկի մոտ... Եվ ահա,—  
բայց այդ խոսքին մի ուժեղ ալիք խփեց նավակին, ջուր ցայ-  
տեց, և փոքրիկ աղջիկը վախից աչքերն արագ թարթեց.— վա-  
խեցա՞ր, Մարֆուշա,— աղջիկը թույլ ժպտաց:

Նավավարը լոնց, մոռանալով ասելիքը: Նրա հայացքը  
պղտոր և մութ էր, ինչպես էմբախը, որ անաղմուկ հոսում էր,  
լոռիթյան մեջ թաքցնելով մի ահավոր ուժ: Նավակն էլ հնա-  
դարյան էր, նավավարն էլ քրքրված և թրջված զգեստով,  
նույնիսկ ուղկանի շատ հանգույցներ կապկպված էին զանա-  
20 զան թելերով,— բայց և այնպես թե՛ նավակը և թե՛ նավավա-  
րը դեռևս այնքան դիմացկուն էին, որ այդպես կարող էին լո-  
ղալ թեկուզ մի դար:

Արմենիերը նայում էր աղջկան. «...Մոմի նման հալվում  
է, հալվում է և մեկ օր էլ...»: Նրա մանկական ուսերն այնքան  
նիհար էին: Աղջիկը բոքիկ ոտքերը մեկնել էր արևի տակ և չէր  
հագնում ջրին նայելուց: Երբ երկու ալիք իրար էին զարնվում,

նա ժպտում էր, ինչպես հիվանդ երեխան, որին մայրը մոտեցրել է պատուհանին, և պատուհանից նա նայում է իր ընկերներին, որոնք բակի մեջ խաղում են շան լակոտի հետ: «...Ճըշմարիտ որ հավում է... Եվ շուտով կհանգչի նրա ճրագը...»:

Նա մի ինչ-որ նմանութուն տեսավ այդ աղջկա և Եղսան հոքրի Մայրանի միջև. երկուսն էլ վտիտ էին, համարյա հասակակից, երկուսն էլ պատառոտված շորերով և ոտաբորիկ: Մայրանի հյուսերը սև էին, իսկ Մարֆուշան ուներ մուգ դեղին մազեր: Բայց երկուսի աչքերը նույնն էին արտահայտում: Կարծես այդ մանուկներն իրենց կյանքում տեսել էին մի ահավոր սարսափ, որ նրանց մինչև մահ պիտի հալածեր:

Արմենիերը երեսը շրջեց: Գետը հետզհետե հանգստացրեց նրան... Այլևս չէին լսվում կուռնկների կանչերը: Միայն երբեմն մանր կոհակները գետի միջից երամ-երամ վազում էին դեպի ափերը և երբ ընկնում էին ավազի վրա, ավազը խուզվնգում էր:

— Իսկ նա ուզում էր մեզ ազատութուն տալ,— ինքն իրեն խոսելով մտածում էր նավավարը.— և կտար, բայց մեր թագավորը չթողեց, և պրուսացին չթողեց, և անգլիացին չթողեց... Այսպես էլ մնացինք, պարոն...

— Ինձ ինչո՞ւ պարոն ես ասում,— սրտնեղեց Արմենիերը:

— Ինչո՞ւ,— նավավարը դառն ժպտաց,— որովհետև այդպես է... Ամեն բանից երևում է, որ պարոնը ես չեմ:

— Ծա գյուղացու որդի եմ:

— Կարող է... Այժմ ասում են այնպիսի պարոններ են դուրս եկել, որոնք ժողովրդի հետ են: Այ հենց նրանք, որոնք Պետերբուրգում կրակեցին թագավորի վրա: Իսկ Վարչավայում նույնը չի... Դպրոցի աշակերտները և պարոն ուսանողներն առաջինն են հարձակվել բերդի վրա: Իսկ Վարչավայի բերդը, կարող եմ ասել, որ բերդ է, և ոչ թե հողե ֆորտեցիա... Իսկ ժողովուրդը տեսել է, որ պարոններն իրենց հետ են, ուրեմն՝ տվե՛ք գններալներին... Դեռ երկար կքաշի այս պատերազմը... Եվ ո՞վ է իմանում, գուցե մի բան լինի:

— Ի՞նչ ես սպասում, որ լինի:

Նավավարը շեշտակի նայեց Արմենիերին:

— Պարոն... Եվ կամ եթե այդ ձեզ հաճելի չէ՝ եղբայր, սիրելի եղբայր, այստեղ ես եմ և դու ես, վերև Աստված է լսում, ներքև միայն այս խեղճ երեխան: Եվ ուրիշ ոչ ոք չի լսում մեզ,— նա կոացավ դեպի Արմենիերը,— ինչի՞ է սպասում աղքատ գյուղացին: Աղքատ գյուղացին սպասում է մի կտոր հողի և ազատութիւն: Եվ ուրիշ ոչինչ չի սպասում: Եթե նա հաղթեր, մեզ կտար և՛ հող, և՛ ազատութիւն:

— Ո՞վ կտար:

— Կատակ եք անում, պարոն եղբայր... Դուք ինձնից լավ  
10 գիտեք, թե ով կտար:

— Պատվովս եմ երդվում, որ չգիտեմ: Եվ որտեղի՞ց պետք է իմանայի: Ութերորդ ամիսն է այս երկրումն եմ և ուսանում եմ միայն գիտութիւններ: Իսկ այդպիսի բանի տեղյակ չեմ...

— Եվ տեղյակ չեք լինի, ձեր գրքերում չեք գտնի իմ ասածը: Իսկ ով գիրք չի կարդում, այլ ժողովրդի մեջ է, նա գիտի, թե ով կտար հող և ազատութիւն,— և կարճատև լռութիւնից հետո շարունակեց.— Ֆրանսիացին կտար, ինքը նապոլեոնը կտար... Ստոշկոմ, որտեղ մեր գունդը ձմեռել էր, կար մի գերի ֆրանսիացի: Նրա մի ոտքը ցուրտը տարել էր, և նա մեր գնդի խոհանոցում սպասավոր էր: Իսկ անունը Միշել էր, Միշկա, եթե մեր լեզվով ասենք... Մի գիշեր ես պահակատեղից վերադարձա խոհանոց, որ տաքանամ: Տեսնեմ Միշկան կրակի առաջ նստել ծխում է: Մխում է և միտք է անում: Իսկ թե ի՞նչ է միտք անում, հայտնի բան է, թե ինչ միտք կանի գերի գինվորը, որը չգիտե, թե ինչպես են տունը, երեխաները, արդյոք մեռե՞լ են, թե՞ դեռ հիշում են... Վերջապես: Իրար ողջունեցինք, և ես էլ սկսեցի ծխել: Խոհանոցում մեզնից բացի ոչ ոք չկար, այ ինչպես հիմա... Եվ այսպես էլ դիմաց-դիմաց նստած էինք: Ի՞նչ ասաց Միշկան: Նա հռուչեց և ասաց. «է, Վասիլիյ (այդպես են կոչում ինձ), հիմարացաք, դուք շատ հիմարացաք: Ախր արդեն գրված պատրաստ էր մանիֆեստը: Եվ նա պետք է ինքը կարդար Կրեմլի հրապարակում: Իսկ դուք լսեցիք Կուտուզովին և թագավորին լսեցիք: Գոնե սպասեիք մի տարի, ազատութիւն ստանայիք և հող ստանայիք և ապա մեզ խոսեցիք»... Միշելն էլ այսպես ասաց, և այս իսկական ճշմարտութիւն է, որ ոչ մի գրքում չի գրված:

Նա պատմում էր հմայիչ ձայնով: Նրա խոսքերից ճառագում էր մի ջերմութուն, որ հետզհետե գրավել էր Արմենիերին: Նրա պարզ բառերի մեջ ինքը՝ իմաստուն ճշմարտութունն էր՝ արևի նման հստակ... Նա քաղցր էր պատմում, ինչպես Միրզանը ձմռան գիշերին պատմում էր Շարմազ աղջկա և յոթ հղոր հեքիաթը:

— Ճշմարիտ է և այն, որ հասել է անհղ դատաստանի օրը: Ամեն տեղ կոիվ է, պատերազմ: Ժանտախտը, որ ուղղակի հնձում է... Ասում են, Տուլայի նահանգում գյուղացիները հըրգեհնել են իրենց տերերի ագարակները, որովհետև հայտնվել է մի սուրբ, որ քաղաքի հրապարակում երեք անգամ ասել է. «Հրդեհեցեք հարուստ տները և վաճառատները, որովհետև նեռը այնտեղ է բնակվում»: Ինքը նահանգապետը հրամայել է սպանել խոռվարարին, բայց ժողովուրդն սկսել է կրակի տալ խանութները և հարուստ տները... Իսկ խերսոնի նահանգում, ասում են, ժողովուրդը փախել է ստեպները, փախել է թաթարների երկիրը, և ամբողջ քաղաքում մնացել է միայն քաղաքապետը, և նա էլ հրամանի է սպասում, թե ում հանձնի պաշտոնը: Գոնի կազակները իրենց ատամանին գաղտնի ուղարկել են անգլիական թագավորի մոտ՝ «չենք ուզում այլևս հպատակ լինել ռուսաց թագավորին, այլ կամենում ենք քեզ ենթարկվել...»: Իսկ Վոլգայի կողմերում սով է. ժողովուրդն, ասում է, ամեն ինչ կերել է, ծառերի կեղևն է կերել և կավ է կերել, և հիմա բոլորը ճանապարհ են ընկել դեպի Մոսկվա, ամբողջ ժողովուրդը՝ ծերեր, երեխաներ, կանայք, աղջիկներ, ռուսներ, թաթարներ, ղալմիսներ, բաշկիրներ, բոլորը, բոլորը... Եվ գալիս են ասելու՝ կամ հող տվեք, հաց տվեք, կամ մենք մորեխի պես կոչնչացնենք ձեր քաղաքները: Հապա, այսպես է... Թեև մենք գիրք չենք կարդում, բայց տեղյակ ենք աշխարհի բաներին: Պատահում է, որ տոնավաճառում ենք լսում, պատահում է, որ գինվորներից ենք լսում, իսկ անցած օրը, երբ ես Քարե կամուրջի տակ պարապ կանգնած էի, մոտեցան երկու լեհ ուսանող և կանչեցին ինձ: Ծս ասացի, որ իմ նավակը նրանց վայել չէ, որովհետև ես ալյուր էի տեղափոխել: Նրանք զայրացան և համառոցին: Այն ժամանակ ես նրանց տարա մինչև հին գորանոցները... Իսկ նրանք, տեսնելով, որ ռուս եմ, սկսեցին

10

20

30

խոսել իրենց մայրենի լեզվով: Ծս թիավարում էի և լսում... Ծս մինչև անգամ դանդաղ էի թիավարում, որովհետև շատ էի ուզում լսել նրանց խոսակցությունը: Իսկ նրանք պատմում էին, որ պրուսացիք միացել են ուսաներին և ուրեմն լեհացիների բանը վատ կլինի, և որ իբրև թե պան խուպիցկին վիրավորվել է, բայց և մարշալ Դիբիչն է լավ կերել... Եվ ասում էին, թե մի ուրիշ գեներալ է գալիս և որ Դիբիչին կանչել են Պետերբուրգ, գլուխը կտրելու, որովհետև նրա պատճառով շատ ժողովուրդ է փչացել:

- 10 Արդեն երևացին ձկնորսների հյուղակները և այն ավերակ հողմաղացը, որ այդպես էլ պիտի մնար մինչև ինքն իրեն փտեր: Նրանք հանդիպեցին մի քանի նավակների, որոնք վերադառնում էին քաղաքից:

— Վասյա, Վասիլի... — և մեկը ձեռքով արեց:

— Սատանա, դե... Առանց լակելու չի կարող, — մոռաց նավավարը:

Շուտով երևաց «ուսական ծայրամասը»:

— Այ, մայրիկը... Տես, — և աղջիկը ձեռքը մեկնեց, — մա՛... — թույլ ձայնով կանչեց նա:

- 20 Մոտեցան ափին:

— Գուցե ձեզ տաննի մինչև Քարե կամուրջը, — առաջարկեց նավավարը:

Մի կին գրկեց աղջկան և նավակից հանեց: Արմենիերը ոտքը դրեց ցամաքին: Մայրն աղջկա հետ գնաց դեպի գետնափոր տնակը:

Նավավարը նավակը քաշում էր ցամաքի վրա:

Արմենիերը դատարկեց բոլոր գրպանները և ամաչելով մոտեցավ նրան:

— Շատ եք վճարում, պարոն...

- 30 — Ավելին լունեմ, որ վճարեմ, — ապա արագ հեռացավ:

Արվարձանի ցեխոտ փողոցներով նա գնում էր գլուխը կախ: Նույն ճանապարհով նա տուն էր վերադառնում: Այլևս չկար լուսաբացի մշուշը: Փողոցներում գորշ առօրյան էր... Ահա այստեղ նա զգաց թարմ հացի հոտը: Բաց դռնակի մոտով նա անտարբեր անցավ: Նրա գլխում ուրիշ մտքեր էին...

Խռիչան շորերով այն կինը մնաց ծառերի մթին խորքում։  
Նույնիսկ արևը այն չէր, այն ոսկի արևը, որի տակ կողք-կող-  
քի պառկել էր խեղճների զույգը և կարմիր գատիկները շղթայ-  
վել էին ձու դնելու մոլուցքով։

Քաղաքում ուրիշ արև էր, գնդիկ և սպիտակ երեսով մի  
տանտիրուհի, որ շորացնում էր գուբերի ջուրը, եղաններով  
ցանցում էր խոնավ խոտը։ Լվացքը փռել էր ցանկապատի  
վրա, նայում էր լվացքաջրի գոլորշու միջից և չէր թափանցում  
գետնափոր տնակները։

## ԴԵՊԻ ԼՅԱՌՆ ՄԱՍԻՍ

Դեմը դաշան էր անծայր, իսկ հեռվում—Մասիսը,  
Լյառն այն վսեմ, որի ճանապարհով մի օր  
Բարձրացել էր ինքը և ստույգանիստ  
Գեղեցկութամբ գերվել:

Ե. Ջարեկ

### 1

Հնթրիֆից հետո պրոֆեսորը երիտասարդին դիմելով,  
ասաց.

— Այժմ անցնենք մեր գործին, սիրելի դիակոնուս... 10

Նրանք քաշվեցին պրոֆեսորի առանձնարանը: «Գործը»  
— ծխելն էր և այն զվարճալի զրույցը, որ ծխելու հետ սկսում  
էր պրոֆեսոր Պարրոտը: Բայց այս անգամ նա սենյակի  
դուռը ամուր փակեց և երբ ընկղմվեց վոլտերյան բազկաթոռի  
մեջ, շասաց, ինչպես միշտ. «Մուխ է և ունայնություն աշ-  
խարհը, Սաադի,— եթե քեզ ճիշտ է թարգմանել իմ Liebling-ը»:  
Նա վառեց պարսկական կեռասյա կոթով ծխամորճը: Մոմը  
լուսավորում էր նրա դեմքի կեսը, և երբ կապույտ ծուխը  
բարձրանում էր այդ լուսավոր կողմով, թվում էր, թե շարժ-  
վում էին նրա գանգուրները՝ ծխագուլն և ծխի նման ոլորուն: 20

Երիտասարդը նստել էր մոմակալի մոտ, ձեռքին՝ ունե-  
լին, որ այն ժամանակ անբաժան էր մոմի ճրագից, որով-  
հետև նրանով էին սարքում ճրագի պատրույգը: Երբեմն ծխի  
միջից երիտասարդին էր նայում մի զննող աչք: Դիակոնուսը  
հիշեց, որ այդ երեկո պրոֆեսորը տուն եկավ մտազբաղ և  
մռայլ: Նա ամբողջ օրը եղել էր Դոմբրոզի գագաթին՝ նոր

աստղադիտարանում... Երբ տուն եկավ, նույնիսկ շագվեց երեխաներին: Երիտասարդը ծովի մեջ որոնեց նրա աչքը: Բայց աչքը փակ էր... Պրոֆեսորը ննջում էր... Գուցե ցավում է մի տեղը: Երիտասարդը կարեկցանքով նայեց այդ փոքրիկ և թեթև մարդուն, որի նիհար և ոսկրոտ դեմքի վրա շատ պարզ երեւում էր մոմի լույսը և ստվերը: Նա այլևս չէր ծխում:

Պարոտը խուլ ձայնով ասաց.

— Ես ձեզ, սիրելի Արուսյան, այժմ կհայտնեմ մի տեղեկութուն, բայց պետք է խնդրեմ, որ ոչ ոքի շատեք, նույնիսկ տիկին Առալենդերին:

10

Այդ ամենը հանկարծակիի բերեց երիտասարդին: Կար մի սառնութուն պրոֆեսորի խոսքի մեջ: Նա ուրիշների ներկայութեամբ էր նրան ազգանունով կանչում: Իսկ ինչո՞ւ հիշատակեց տիկին էլոիզին: Կարծես թե ներս մտավ այդ կինը, և խշշաց զգեստը, ինչպես թե քամի անցավ շոր խոտերի վրայով... Ոչ, այդ պատրուզն էր, ճարճատեց մի վայրկյան, թրթռացին ստվերները, և նորից լույսը խաղաղվեց:

— Իմ սիրելի Արմենիեր, այսօր ես նամակ ստացա իմ մի բարեկամից, որը վերջերս եղել էր ձեր երկրում և այժմ Սանկտ-Պետերբուրգումն է: Նա ինձ միանգամայն ծածկաբար տեղեկացնում է, որ ձեր հայրենակիցները հետ են առել իրենց երդումը և նոր վկայութուն են տվել, որ մենք Արարատի գագաթը չենք բարձրացել...

20

— Ինչպե՞ս, — ճշաց երիտասարդը և թռավ ոտքի: Նա նման էր դատապարտյալի, որին հայտնում են, թե վեր կաց, ահա գալիս են քեզ տանեն այնտեղ, ուր պատրաստ է գերեզմանի փոսը: Նա լսում է դահիճի քայլերի ձայնը և մի վայրկյան սառած կանգնում է, բռունցքները սեղմած, աչքերի մեջ և՛ ահ, և՛ ցասում:

— Ինչպե՞ս թե չենք բարձրացել, — բոլորովին մեղմ հարցրեց երիտասարդը, սակայն այդ մեղմութունն ավելի զարհուրելի էր, քան առաջին ճիւղը:

30

— Ես խնդրեցի, որ չվրդովվեք, իմ ազնիվ բարեկամ, — կարեկցանքով ասաց պրոֆեսորը:

— Գուցե լուրը սխալ է:

300

— Դժբախտաբար ճիշտ է:— Նրանք լռեցին: Մոմն ուրախ վառվում էր: Պահարանի ետևը մի մուկ սղոցում էր տախտակը: Նա ևս լռեց, իր համար մի շարագուշակ բան զգալով ընդհատված ձայների մեջ:

— Այնուամենայնիվ, հարկավոր չէ հուսահատվել,— և պրոֆեսորն սկսեց քայլել մանր և համաշափ քայլերով, ձեռքերը մեջքին բռունցք արած: Նա մոտեցավ պահարանին և դառնալով երիտասարդին՝ հանդարտ և ինքնավստահ ասաց,— ճշմարտությունը մի օր կհաղթի... Մեզնից հետո ուրիշները կբարձրանան, և նրանք կտեսնեն մեր հետքերը: Իսկ մինչ այդ ես կարագացնեմ իմ գրքի լույս տեսնելը, և թող այն ժամանակ խոսեն, որքան կամենան:

Դիակոնուսը լուռ մտածում էր: Ինչքան մտածում, այնքան նենգ և ստոր էր երևում այդ դավադրությունը: Ո՞վ կազմակերպեց. Հովհաննես վարդապետը, լուսարար Սիմեոնը, թե՞ այն կիսախելագար եպիսկոպոսը, որ կատաղի հայհոյանքով հարձակվեց նրա վրա, երբ ներս մտան վանքի բակը: Հայհոյեց, բայց երբ վանքի դպիրը ծոցից հանեց այն սրվակը, որի մեջ արդեն հալվել էր Արարատի գագաթից վերցրած սառույցը, այդ կիսախելագար վանականն առաջինը հարձակվեց նրա վրա և սրվակը խլելով, սկսեց ճակատին և ձեռքերին քսել այն ջուրը, որ բերել էին Նոյյան տապանի սառցադաշտից: Հետո հարձակվեցին ուրիշ վանականներ՝ ճպոտտ և թարախոտ աչքերով, ինչոր անդամալույծ մուրացիկներ, այլանդակ մարմնով խենթեր, որոնք անտիրական շների նման թափառում էին վանքի բակում և շուտով բորբոսնած կիսամերկ և զարհուրելի մարմինների մի գունդ խլրտում էր ահռելի գոռում-գոչյունով, կարծես թպրտում էր մի վիթխարի մորմ, որի մարմնի վրա վխտում էին նրա անթիվ ձագերը:

Վանքի երբեմնի դպիրը մոռացել էր այդ և այդպիսի դառնություններ: Նրա հիշողության մեջ պարզվել էր պղտոր դիրտը, և ինչպես քարից ընկնող կաթիլներ, մաքրվել էր հինը ժամանակի ընթացքում, և նա հիշում էր վանքի շինարիները, որից այն կողմ աննզր դաշտն էր՝ Բարդուղյան լեռները, դեպի արևմուտք՝ մի այնպիսի հարթավայր, որ նման էր ծովի, և որի մեջ ընկղմում էր արևը: Նրա աչքերի առաջ հառնում

էր վանքը՝ դարմանի և ցորենի շեղչակույտերով, նախիրնե-  
րով, որոնց բառաչը խլացնում էր երեկոյան զանգահարու-  
թյունը, և այդ ժամանակ վարժատան սաներն ու խցի մոնթերը  
վազում էին դեպի գոմերը, որպեսզի մածնատան պառավ-  
ներից խնդրեն մի-մի քրեղան թարմ կաթ: Նա հիշում էր  
զրույցներն այն թափառական գզրարների, որոնք ձմեռներն  
ապրում էին ճգնաժողովի անմարդարնակ խուցերում, գզում  
էին բուրդ և բամբակ, և միալար աղմուկի մեջ գզարը պատ-  
մում էր երգելով և երգի հետ ալիք-ալիք դիզվում էր բամ-  
բակը...

10

Նրա աչքերն արցունքով լցվեցին. նա սեղմեց շրթունք-  
ները և ջանաց, որ արցունքները սառչեն և շթափվեն: Չախ  
այտի մկանները խաղացին:

Մի քիչ հեռու կանգնել էր պրոֆեսորը և ինչ-որ բան էր  
մտածում. գուցե և աննպատակ նայում էր դարակի գրքերին:

Հանկարծ երիտասարդը գրկեց նրա երկու ձեռքը, և նրա  
ձայնը դողաց.

— Ես խնդրում եմ ներեք իմ հայրենակիցներին... Այս  
գործի մեջ խառն է մեկի շար ձեռքը, և իմ հայրենակիցները  
իրենք էլ չեն իմացել թե ինչ են արել: Իսկ ես գիտեմ, **թե** 30  
ինչքան են ծեծել այն խեղճ գյուղացիներին, մինչև նրանց  
ստիպել են հետ առնել առաջին երդումը... Բայց ե՛ս եմ վկան,  
ե՛ս,— և նա ուժգին զարկեց կրծքին: Նրա ջինջ աչքերի մեջ ար-  
ցունքի շղարշի միջից ցուլանում էր անխարդախ կիրքը,— պատ-  
վո խոսք եմ տալիս և երդվում եմ իմ կյանքով...

— Ես քանի անգամ խնդրել եմ, որ այդպիսի բառեր չա-  
սեք,— ընդհատեց պրոֆեսորն այն տոնով, որով նրան սովո-  
րեցնում էր պարզ հնչել բառերը, բարձրաձայն ընթերցել, ար-  
տահայտությունների մեջ զուսպ լինել, շերդվել ո՛չ Աստուծո ան-  
վամբ և ո՛չ ազնիվ խոսքով, այլ ասել միայն ճշմարիտը,— մի 30  
խոսքով դաստիարակի այն սառն եղանակով, որով գերմա-  
նացի պրոֆեսորն անխնա մկրատում էր արևելցու հախուռն  
քնավորությունը, համարելով այն հետևանք ասիական խավար  
միջավայրի: Դիակոնուսն ուրիշ ժամանակ դպրոցականի նման  
կուղղորդ իր սխալը, բայց այս անգամ նա ազատ արձակեց սան-  
ձերը.

371

— Ես կապացուցեմ, որ մենք բարձրացել ենք գագաթը, որ նրանք անազնիվ ստախոսներ են... Եվ ես կիմանամ, թե ո՞վ է ստիպել գյուղացիներին ուրանալ իրենց երգումը... Միայն խնդրում եմ ներքե նրանց, իմ խեղճ, իմ անբան հայրենակիցներին...

Եվ զսպված արցունքները ցայտեցին: Նա հեկեկաց, ինչպես երեխան, որ լսում է մոր հանդիմանությունը, բայց հանկարծ բաց է ընկնում մի ջիղ, մի մկան, ամեն ինչ խառնվում է և այլևս չի կարողանում արցունքները պահել...

10

2

Նա վերադարձավ յուր սենյակը... Փորձեց դասերը պատրաստել և չկարողացավ: Ապա վերցրեց մատիտը, որպեսզի շարունակի գծագրել այն քարտեզը, որի վրա նա աշխատում էր մեծ եռանդով, միտ ղնելով իր գծած հայերեն առաջին քարտեզը («աշխարհացույցը» — ինչպես ծաղկանկարել էր արդեն), որ նվիրել էր բարերարին՝ Ֆրիդրիխ Պարրոտին, — բայց աչքն ընկավ այն վանդակին, որտեղ պիտի գծագրեր Մասիսները, և մատիտը մի կողմ դրեց: Նա ընդոստ թռավ տեղից և գնաց դեպի անկյունը:

20

Այնտեղ «մյուշրին» էր, գույնզգույն թիթեղներով զարդարված սնդուկը, որ Միրզամի հետ միասին գնել էին Երեվանի Չարուս բազարում: Կողպեքի լեզվակը մի քանի անգամ զրնգաց տխուր և երկար ելևէջով, ինչպես թառի սիմը: Մյուշրին բացվեց և բարձրացավ մի հնամենի բույր: Այդ սնդուկի մեջ էր այն ամենը, ինչ նրան մնացել էր իբրև հիշատակ հեռու հայրենիքից. քաթանն մի շապիկ, որ ուներ մոխրաջրի և աթարի ծխահոտ, մի գույգ ջորաք, որ պաշարի հետ դրել էր հորաքույրը՝ Օսան խաթունը, մի քանի գրքեր, որոնցից խոնավության և խունկի հոտ էր գալիս, ճրագուի մոմեր, խունկ, որ հետն առել էր օտար աշխարհում ծխելու, երբ բուլոբին հայրենի տոները: Կարմիր աղլուխի մեջ փաթաթված էր ուրարը, սարկավազի ջիբրուն և սաղրի քոշերը, որոնցով տնից ճանապարհ էր ընկել:

30

372

Նա մի կողմ հրեց այդ բոլորը և սնդուկից հանեց սև դեյթանով կապած թղթերը: Քանդեց դեյթանը, և աշքին ընկան զմուռսով կնքած ծրարները, մի դեղնած թուղթ, որի վրա հագիվ ընթերցվում էին կիստորի թանաքով գրած առաջին ընդօրինակումը Մաշտոցից: Կար և սպիտակ թերթ, որի եզերքը ծաղկազրել էր վանքի դիվանատան ծաղկարարը: Թղթերի այդ կապոցից նա վերցրեց մի տետր և մոտեցավ սեղանին:

Այդ տետրի մեջ էին նրա ճանապարհորդական տպավորությունները, գրված թարմ հետքերով... Նա ազահուժյամբ սկսեց կարդալ... Յուրաքանչյուր տողը, նույնիսկ ջնջված բառերը նրա հիշողության մեջ արթնացնում էին ամբողջ ուղևորությունը՝ Մսրա դռներից մինչև լեռան գագաթը...

«Մխայր, խաղայր հորձանուտն Արաքս... Որդն կարմիր, ըստ տաճկաց հնչմանն՝ զըրմըզ»: Դիտում էին Արաքսի կոհակները, երբ Շիմանը նրանց կանչեց: Նրանք տեսան նախիրը, որ գալիս էր, և բոլորի կճղակները, մուռթները, նույնիսկ մի քանիսի կործը, և փորի տակ ներկված էին կարմիր, ալ կարմիր. կարծես կովերն անցել էին արյան լճերով: Թուրք նախրապանը հասկացրեց օտարականներին, որ նախիրն անցել է սեզ խոտերի միջով, որոնց վրա վխտում են կարմիր որդերը: Նրանք գնացին նախրապանի ցույց տված կողմը և տեսան որդերով ներկված դաշտը, կարծես իրարից հեռու մորթել էին մատաղացու եզներ և արյունը շաղ տվել խոտերի վրա: Բեհագել ֆոն Ադլերսբրոնը, որ հավաքում է զանազան տեսակի խոտեր, գեռուններ և քարեր, մի փոքրիկ սրվակ լցրեց այդ որդերով, իսկ Արմենիերն ասաց, որ երբ վերադառնան, նա վանքում ցույց կտա մի ծերունու, որն այդ որդերից պատրաստում էր ոսկեգույն կարմիր:

— Այս երիտասարդը մեզ շատ օգտակար պիտի լինի, — գերմաներեն ասաց պրոֆեսորը: Իսկ ինքն ամաչեց, ենթադրելով, որ նրանց ձանձրացնում է իր անտիղի զրույցով. «հեծեծմունք և ահ. սիրտ իմ ահէ մաշեր...»:

Արևն արշավում էր դեպի մուտքը, երբ նրանք մոտեցան Սուրբ Հակոբի վանքին:

Եվ նրա մտքի առաջ հառնեց խոժոռ վանահայրը՝ բիրտ, ինչպես շրջապատի ապառաժները, քրձազգեստ և բոկոտն,

10

20

30

կողտ մազերով, որ դուրս էին ցցվել մինչև իսկ ականջներից: Միրուքի սև մազերի միջից երևում էր ահագին բերանը: Վանահայրը մի կիսավայրենի մարդ էր, որին աքսորել էին այդ հեռավոր մենաստանը, և էջմիածնում վաղուց էին մոռացել նրա գոյության մասին: Այդ մենակյաց մարդը զարհուրեց, երբ այդքան բազմութուն տեսավ և նրանց մեջ՝ օտարոտի արտաքինով գերմանացիներին: Նա իսկույն փակեց վանքի դարբասը և ներսից ինչ-որ բան գոռաց: Շները, որոնք իրենց կյանքում ավելի հաճախ գազանների էին տեսել, քան մարդկանց, վանահոր մոռնոցի վրա այնպես գազազեցին, որ քիչ էր մնում վանքի պարիսպներից թոնեին ցած և նրանց բզկտեին: Այն ժամանակ դարպասին մոտեցավ հայ դպիրը. նա խնդրեց, սպառնաց, ապա նորից խնդրեց, մինչև վանահայրը բաց արեց դարպասը, շներին նախօրոք փակելով գոմի մեջ: Բայց և այնպես այդ մենակյաց վանականը հրաժարվեց օրհնել այն խաչը, որ «անհավատներն» իրենց հետ տանում էին դեպի գազաթ:

«Սեպտ. 27—Հայելի լեռան շողա ի թևս մարմանդարեք Ջեփյուտոսի...»:

20 Նրանք ծվարել էին Քիփոյուից բարձր, ժայռերի խորշում: Երրորդ վերելքն էր: Ստ էին դարձել նրանք, որոնք սարսափել էին՝ շնչելով Արարատի ցուրտ մառախուղը և տեսնելով խորանդունդ վիհերը, քարանձավները, որտեղ երեք չէր թափանցել արևի շողը: Սահակը՝ Ակուտի գյուղացիներից մեկը, չէր վախենում ոչ ցրտից, ոչ սառցակույտից: Նա սարսափում էր լեռան կատարից: Նրան թվում էր, որ մարդ արարածը շի կարող ոտք դնել այնտեղ. կամ կայծակը կզարկի, կամ գետինը մի ահավոր զորությամբ կշորացնի այդ ոտքը, կամ հանկարծ քարափը կճեղքվի և մեղավոր մարդը կընկնի դեհեն:

30 Քիփոյուից բարձր, ժայռերի խորշում վառվում էր նրանց խարույկը, առաջին կրակը, որ լեռան լանջին այդքան բարձր վառել էր մարդը: Փայտը քիչ էր. շալակով էին բարձրացրել, և դրա համար նրանք աշխատում էին կլանել ողջ ջերմութունը: Լուռ էին. կրակի լույսով պրոֆեսորն ինչ-որ նշումներ էր անում: Նա նույնիսկ դուրս սողաց խորշից և սկսեց դիտել աստղերը:

— Զանազարի սիրտ կլինի կերած,— ասաց ակուռեցին, սեղմվելով Արովյանին, որի հոգևոր կոշումը նրան հավատ էր ներշնչում, թե զուցե Աստծուն ընդունելի է այդ վերելքը, և ուրեմն այն կյանքում նրան կարմրած շամփուրներով շին խարանի, ինչպես սպառնում էր վանահայրը:

Լուռ էին: Խարույկը հանգչում էր: Ինքը ձեռքերը պահել էր տաք մոխրակուլյտի վրա... Այն ի՞նչ էր փշրվեց և զարհուրելի դղրդոցով գլորվեց անդունդը, սառցակո՞ւլյտ էր, քարածա՞յռ, թե՞ լեռան կատարը ցնցվեց: Լուռ են. կարծես ծղրտում են ձորում. հավար են կանչում՝ ահե՛... հե... և արձագանքը դղորդ դրնգում է ձորի քարանձավներում, քրքշում են, ծիծաղում են, ծափ են տալիս, և նույնիսկ պարզ լսվում է սուրմանների զրնգոց, դազմայի արծաթների ձայն: Իսկ հիմա վշշում է, միայն վշշում է. ինչ-որ մոտիկ տեղ սառցաջուր է կաթում՝ զրընգ, զրընգ, կարծես կաթիլներն ընկնում են պղնձե կուժի մեջ: Սահակի ականջները վշշում են. նա գետին է խոնարհում ականջը: Պրոֆեսորը դիակոնուսին հարցնում է, թե ինչո՞ւ է այդպես անում «Իսահակը...»:

10

— Նրան թվում է, թե ժայռերի տակով ջուր է գնում...  
Հանկարծ դարձյալ ահագին աղմուկ: Էլի փվվեց մի բան: Քամին բերում է ձյունավազի հատիկներ:

20

— Բարձրանանք, պարոններ, արդեն լուսաբացը մոտ է,— ասում է պրոֆեսորը: Նա նորից է շփում: Սահակը զարմացած նայում է ծանրաշփին: «Ի՞նչ տեսակ մարդիկ են էս նեմեցները... Նրանք էլ խաչապաշտ են... փառք քեզ Աստված, փառք քեզ»: Ապա Սահակը գոտիկից հանում է կացինը և սկսում է սառույցի վրա ոտնատեղ փորել, առնում են ձեռնափայտերը և սկսվում է վերջին վերելքը:

Քամին վրա է հասնում և ի սփյուռս աշխարհի ցրում մոխիրն առաջին կրակի, որ վառել էին նրանք մարդու ձայն չլսած բարձունքում:

30

Բարձրանում են: Լուսադեմի խավարն է՝ Ադամա մութը, այն ժամը, երբ թանձր խավարից ճառագում է լույսը: Աստղերը գունատվում են: Խորունկ երկնքում դեռ վառ են մի քանի սպիտակ աստղեր: Նրանք ավելի մեծ են, ավելի ջինջ... Ահա Լուսաստղը... Կապույտ սառույցների մեջ ցուլանում է աստ-

ղերի սպիտակ դեղնավուն լույսը: Թվում է, թե ոտքերի տակ ոչինչ կարծր բան չկա և բարձրանում են՝ կոխելով սառած ամպերը, բարձրանում են դեպի անհունը, ուր կան միայն աստղեր:

Նա սկսեց տրորել քունքերը: Հոգնել է. քնելու ժամը վաղուց է անցել, բայց այս գիշեր քունը հեռացել է: Սառնություն է զգում: Կարծես հոգու մեջ է ցուրտ լուռթյունը, լուռթյունը՝ անեզր, անպարփակ, ինչպես այն լուսադեմին:

**10** Մի ինչ-որ թերթ է ընկած տետրի արանքում... Ինքն է գրել. ահա պահել է ճրագի վրա, և նույնիսկ մի տեղ թուղթը դեղնել է...

«Ի հանդարտասույզ մարմնեզ հազմաբի մեղմիկ զեփյուռի:  
«Իմեցի երբեմն զբսնուկ ի ծոց Մասուց սուրբ լիբին...  
«Ո՛ւր ես առավոտ, քաղցր արշալույս, արև գերարփին...»:

Արևելքում ամպերը շարժվում են: Ահա մեկը ձգվում է ինչպես հազարամյա կաղնի. երկու սև ամպ կանգնել են դիմաց-դիմաց, գոյացնելով ամպեղեն կիրճ: Ավելի խորունկ՝ գանգուրների նման ամպեր են, կարծես սպիտակ ոչխարներ են մակաղել: Բայց ահա մոխրագույն են դառնում ամպերը, **20** կապտում են. նրանք նման են միսկարների պղնձին: Ահա ամպերի սև կիրճի մեջ շողաց առաջին ճառագայթը, և, ինչպես կաս-կարմիր անիվ գլորվելով, գալիս է արևը, շողում է կատարը, ինչպես պղնձյա վահան, և ցուլքերի մեջ անէանում են աստղերը:

Ի՞նչ ահավոր վայրկյան է, ի՞նչ խորհրդավոր ժամ... Ամբողջ դաշտը խավարի մեջ է. ինչպես կապույտ վրան երևում է Արազածի գագաթը, և ուրիշ ոչինչ չի երևում՝ բացի արևի գունդը և Արարատի սկավառակը:

— Ահա կատարը, — բղավեց Պարրոտը:

**30** Արև է, անդորր. սառույցներ, լուռթյուն, սպիտակ լուռթյուն: Նա փակել է աչքերը և դեռ չի նայում, չի ուզում նայել. դեռ դողում է սիրտը հուզմունքից, և հոգնությունից դողում են ոտքերը: Ապա հանկարծ ետ է քաշում ձեռքը, տեսնում է արևով ողողված սառցադաշտը, վազում է խելագարի նման թևերը պարզած, վազում է դեպի արևի կարմիր գունդը, դեպի սառցածայուները: Ապա փռվում է գետնին, համբուրում է գե-

տինը, ինչպես ուխտավորը համբուրում է հայոց լեռան նախաստեղծ կատարը...

Նա ժպտաց: Վերհիշեց այն վայրկյանը, երբ ինքնամոռացութեան մեջ գրկեց ակուտեցուն, ապա փաթաթեց Պարրոտի վզով:

Գերմանացին ասաց.

— Զգուշ, ծանրաշափը կշարդեք:

Իսկ ակուտեցին, որ բերանը բաց նայում էր սառցադաշտին, ահ ու զողով հարցրեց.

— Հայր սարկավագ, բա ո՞ւր ա տապանը...

Նրանք իրար նայեցին խոր, շատ խոր:

— Տապանը չի՞ եղել,— պատասխանեց վանքի դպիրը:

Ակուտեցի Սահակը ցնցվեց այդ պատասխանից: Նա մոտեցավ իր հարևանին, որ սառույցների մեջ ամրացնում էր պրոֆեսոր Պարրոտի կապարե խաչը: Նրանք իրար հետ խոսեցին, ապա աներկյուղ նայեցին արևից լուսավոր սառցադաշտին: Նրանց աչքերից ընկավ խավարի վարագույրը և պարզ աչքերով էին նայում այդ երկու ուսմիկ նախավկաները:

— Մենք չե՞նք բարձրացել լեռան գագաթը,— հանկարծ մոնչաց նա և լռեց: Սարսափելի էր այդ ձայնի արձագանքը գիշերային լռութեան մեջ:— Դուք չեք հաղթի, խավարի որդիք...

Նա դեմ դրեց տետրը և առավ փետուրե գրիչը:

Նա գրում էր զայրույթի սրբազան կրակով, և աչքերի մեջ վառվում էր ատելությունը: Երբեմն կծկվում էր դեմքը, երբեմն ժպտում էր արհամարհանքով, և մաղձ էր կաթում դեմքից: Այդպիսի բոպենները սովորեցնում են ցմահ ատել, և այդպես է սկիզբ առնում ճամփաբաժանը:

«Որպես գրեմ, որ սիրելիդ իմ հասկանա ալեկոծումը հոգավույս: Օ՛, խստապարանոց և սոնքացյալ ջլրուրակերքն առաքելաշավիղ, աթոռո, որ զանազանեն միայն օգուտ որկորի և ի մեջ թանձրացյալ խավարամտութեան մնան իբրև անմաքուր խոզ ի տիղմն: Անարգեցին, ձողկեցին և դարձրին ինձ իբրև խսիր արտաքո դրանն, երբ ես էի և մնայի խոնարհ դպիր: Անհաց, անշոր և անպաշար տարագրեցին ինձ, երբ ի կատարումն ցանկութեան իմ բարեբարի, որ և իմ կամքն էր,

10

20

30

ուղի ընկա առ ի սովորել դուզն ինչ գիտություն ի պետս հայ մանկանց: Որպես բորենի մի կամ լավ է սսել շնագայլ Սահակ վարդապետի նարդիվանի մոտ հարձակվեցին ինձ վրա չիք վարդապետն Հովհաննես, Ղազար վարդապետն խոզ կոչեցյալ, Ենոք տիրացու Քյորոզլուն և այլք, որք առավել եպերելի են, քան որ գրեցի: Չամաչեցին հոգևոր կոչումից և թուք տեղացին իմ երեսին, ստորացնելով ինձ, որպես անարժան զավակի, նզովյալ լուտերականի և այլ այսպիսի անարգանաց խոսքեր, որ շեմ մոռացել և շեմ մոռանա, որքան շունչ իմ կա և կմնա: Եվ, այժմ փոխարեն մխիթարության և սփոփանքի առ ի մեղմել մենակյաց գոյություն իմ ի մեջ օտարաց, որք, ճշմարիտ է, սիրեն ինձ առավել, քան կոչեցյալքն եղբայր ի Քրիստոս,— այժմ լուր հասավ ինձ, որ սևասիրտ և սևագլուխ էջմիածնեցիք երդմամբ ուրանան վերելք մեր, որ է մեծագործություն և պարծանք միանգամայն ոչ միայն իմ, որ կամ և կը մնամ նվաստ որդի Հայաստանի, այլև համայն ազգին: Այստեղ անվանի գիտնականք ոչ դադարեն փառաբանել սխրագործություն մեր, իսկ այդտեղ հայրենիքն իմ իբրև վեհերոտ և խարդախ ոմն ուրանա երդումն առաջին: Օ՛հ, մեղանշին, մեղանշին շարաշար. քանզի անպարտ է հայրենիքն իմ հայսմ ամենայնի, և ինքն ևս տառապի ի բարբարոս ձեռաց այնոցիկ, որք իբրև վարձկան հովիվ, միաբանելով զայլերին, հոշոտեն և լլկեն զանմեղ հոտն: Աղոթիր առ Աստված, որ սիրելին քո՝ Խաչիկն անհայրենացյալ մնա ցայն օր մինչև իսպառ չքացին հաստապարանոցք...»:

Թեթևություն իջավ սրտին: Տեսրը դրեց սնդուկի մեջ: Երբ ետ եկավ, սեղանի վրա նա տեսավ սուսամբարի մի շոր տերև, որ ընկել էր թղթերի արանքից: Նա վաղուց չէր տեսել այդ տերևը, որ մի օր ինքն էր դրել «Գիրք Պիտոյից»-ի մեջ

30 իբրև անավարտ ընթերցման նշան: Ապա տերևը կորել էր թերթերի մեջ: Նա կոացավ տերևի վրա, ձեռքերը բոլորեց շորացած տերևի շուրջը: Նա շնչում էր հաղիվ զգացվող բույրը նույն ագահությամբ, ինչպես լեռան լանջին կլանում էր սառչող մոխրի ջերմությունը:

Վեր կացավ: Հոգնած էր: Այլևս չէր բուրում տերևը: Նա ձեռքերը գրպանում՝ սկսեց քայլել: Նայեց պատից կախված

մի նկարի, որի վրա էջմիածինն էր, զույգ Մասիսները և ուղտերի հեռացող քարավանը: Նա երկար նայեց այդ նկարին, ապա աչքերը փակեց: Նրա առաջ պատկերացավ այն, որ իսկականն էր, այն առանձինը և ուրույնը, որ շէր նկատել օտարական նկարիչը: Այն, որ և՛ սիրելի էր, և՛ դառն:

Ապա ջուր խմեց, մոտեցավ, որ բաց անի պատուհանը: Հանկարծ նկատեց դպիրի իր սև կապան, որի վրա արդեն փոշի էր նստել: Նա նայեց զարմանքով. կարծես սենյակ էր մտել մի օտարական, որ նման էր իր հին ծանոթին, որի դեմքն ինչ-որ վաղուցվա բան էր հիշեցնում: Նա կապան առավ, շուտ ու մոտ տվեց, ինչպես հնավաճառը, որ ուզում է որոշել գինը մի հնացած զգեստի, որ վաղուց է վայր ընկել տիրոջ ուսերից:

Սև կապան նա գցեց պահարանը: Սենյակը կարծես զվարթացավ:

Ապա հանգցրեց մամը:

## ԳՈՐԾ ՄԱՅՐԱՆԱ, ԴՍՏԵՐ ՄԿՐՏՈՒՄԻ

### 1

Այդ օրը Երևանի հայոց վիճակային կոնսիստորիան, որի ատենապետը թեմական առաջնորդի փոխանորդ Ստեփանոս արհին էր, Մսաբուր մականունով, քննել էր շորս գործ:

Առաջինը խոյեցի ոմն շորս աստիճան ջահընկալ տիրացու Քաղեոսի «ապօրինի շաղաշարության» գործն էր «մեղավոր աղախին» այրի Աննայի հետ: Երկրորդը վերաբերում էր Քրդեանի քահանա տեր Ղազարին, որը բինայում մի նորածին մանուկ մկրտել էր ոչ թե սրբալույս մյուռոնով, այլ կովի արդար յուղով: Ավելի հետաքրքիր էր երրորդ գործը՝ «հաղագս ոչ հոժարելու ժողովրդականաց Երևանա քաղաքի տալ զտերունի կողոպուտս ննջեցելոց յուրյանց»:

Գործը հարուցել էին քաղաքի ծխատեր քահանաները, որոնք Երևանի բնակիչներից պահանջում էին չխախտել «կողոպուտի» վաղեմի սովորութունը, ըստ որի մեռած մարդ-

կանց զգեստը պատկանում էր թաղող քահանային: Երևան-  
ցիներին այդ նոր սովորությունը քահանաները համարում էին  
նաև սրբապղծություն, հիշեցնելով, որ ինքը՝ Քրիստոս թաղ-  
վել է բուրդովին մերկ: Այդ «գործի» մեջ մինչև այժմ մնում են  
բնակիչների խնդրագրերը, նաև քաղաքի ավագների բանավոր  
գանգատները: Ավագներից մեկը՝ մյուլքադար Սահակ Տեր-  
Նղիազարովը հայտնել է, որ իրենք ամառում են ցույց տալ  
նշեցյալների մերկությունը, մանավանդ, երբ մեռածը իգա-  
կան սեռի է: Հոգևոր ատյանի անդամներին նա հիշեցրել է,  
10 որ «այլազգիները» լկտիաբար ծիծաղում են, երբ քամին  
շարտում է դիակի մահվան սավանը: Մյուսը՝ ուստաբաշի  
(«պարագլուխ արհեստավորաց») Սաղաթել Իսկանդարովը  
հայտնել է, որ իրենք մեռելներին թաղում են նոր զգեստով,  
իսկ հները նվիրում են աղքատներին և կամ մահացածի մեր-  
ձավորներին: Վիճակային կոնսիստորիան դժվարանալով կամ  
չկամենալով վճիռ արձակել, գործը մատուցանում է ի վերջ-  
նական տնօրինության «առ ոտս նորին ամենաբարձր վեհա-  
փառության առաքելաշավիղ եպիսկոպոսապետ և պատվական  
հայրապետ ամենայն հայոց Տեառն Ներսեսի ամենախմաստ  
20 կաթողիկոսի»:

Չորրորդ գործը ժամանակին նշանավոր գործերից է և  
հայտնի է «Գործ Մայրանա, դստեր Մկրտումի» անունով:  
Ստույգ է, որ դեռ 1838 թվի օրագրությունների մեջ հիշատակ-  
վում է այդ պատմությունը, որի բուն սկիզբը պիտի ընդունել  
1829 թվի ձմեռը, Մայրանի ամուսնության գիշերը:

Գործի բովանդակությունը հետևյալն է:

1829 թվի ձմեռը, քանաքեռցի այրի Եղսանը իր դուստր  
Մայրանին տասը տարեկան հասակում («ի 10-րդ հասակի»)   
բռնությամբ ամուսնացնում է երևանաբնակ ոմն Նիկողայոս  
30 Սուքիասովի մոտ: Պսակի գիշերը՝ եկեղեցում, ինչպես հայտնի  
է առաջին քննությունից, Մայրանը պսակող քահանային չի  
տալիս իր համաձայնությունը: Ըստ Մայրանի ցուցմունքի,  
քահանան բռնադատում է նրան համաձայնության և մինչև  
իսկ փայտով ծեծում է Մայրանին («գանյաց զնա փայտիվ»):  
Վկաներից մեկը պատմում է, որ Մայրանը եկեղեցում աղաղակ  
չի բարձրացրել, իսկ եթե նա գլխի նշանով է հայտնել իբ

անհամաձայնությունը, ապա ինքը չի տեսել, քանի որ հարսի  
երեսը ծածկված էր քողով, և նա կանգնած էր երեսը դեպի  
պսակող քահանան: Ինքը փեսան՝ Նիկողայոս Սուփրասովը,  
հայտնել է, որ Մայրանը սուրբ սեղանի առաջ անհամաձայ-  
նություն չի հայտնել, այլ թե պսակող քահանան տեսնելով, որ  
աղջիկը չի կամենում խոնարհել գլուխը, բռնություն մը խոնար-  
հեցրել է:

Պսակից հետո, երբ նրանք մտնում են ամուսնության  
առագաստը, Մայրանը փախչում է և մի քանի օր թաքնվում  
ձյունի տակ (ստարիքի անկատարելության պատճառով չկա-  
րողանալով դիմադրել յուր ամուսնու՝ Սուփրասովի արական  
գորություն, — երբ նրանք մտել էին ամուսնության առագաս-  
տը, — Մայրանը փախչում է և թաքնվում է ձյունի տակ):  
Վկաներից երեքը՝ Քանաքեռի տանուտեր Վիրապը, Հարու-  
թյուն Աբովը և մի ուրիշը, որոնք կանչված են եղել հարսանի-  
քի «վասն հացակերության», առանձին խնդրագրով վկայել են,  
որ Մայրանն այն ժամանակ չէր հասկանում, թե ինչ է ամուս-  
նական կյանքը, և այդ գիշեր «աղջիկը դարձավ լալ և անդա-  
մալույժ երկար ժամանակ և հետ առողջանալույն ոչ գնաց  
առ այրն»: Եվ այդպես նրանք բնակվում են «անսեր և ան-  
ջատ ի միմիանս»: Մայրանի երկարատև հիվանդության փաս-  
տը չի հերքել և ինքը՝ Նիկողայոս Սուփրասովը, որը երեք  
տարուց հետո Ձեյվա գյուղում գտնում է մի այրի կին՝ դարձյալ  
Մայրան անունով և «մտանելով ընդ նմա յամուսնութիւն»,  
այդ անպսակ և ապօրինի հաղորդակցությունից ունենում է  
երկու զավակ: Այդ ժամանակ մահանում է Մայրանի մայրը՝  
Ծղասանը, և աղջիկն այդ օրվանից դառնում է կատարյալ որբ:

Հոգևոր ատյանը աներկբա է համարում, որ Մայրանին  
անկատար հասակում ամուսնացրել են բռնի և հակառակ սե-  
փական ցանկություն: Ինչ վերաբերում է պսակող քահանայի  
գանահարության փաստին, անհավատարի շհամարելով աղջկա  
ցուցմունքը, ատյանը կարծում է, որ Մայրանը ամոթխած  
եղանակով է հայտնել իր անհամաձայնությունը, և պսակող  
քահանան, շնջմարելով այդ, բռնություն մը առ իրար է խոնար-  
հեցրել նրանց գլուխները: Ատյանը հաստատում է նաև Մայ-  
րանի երկարատև հիվանդության փաստը, և այն, որ Նիկո-

10

20

30

զայոս Սուբիասովը տեսնելով, որ իր օրինավոր կին Մայրանը քաղմադիմի հնարներից հետո չի համաձայնվում կենակցութեան, Ձեյվա գյուղում ամուսնանալու մտադրությամբ «բնակություն» է սկսում նրա վրա սիրահարված այրի Մայրանի հետ, առանց պսակի և առանց հոգևոր կառավարության թույլտրվության:

- Կոնսիստորիայի վճիռը, ինչպես ընդունված էր այն ժամանակ, գրված է շափազանց ընդարձակ և մանրամասն: Ցուրաքանչյուր կետ հաստատված է եկեղեցական և արքունի օրենքների ճշգրիտ հիշատակությամբ: Օրինակ. սուրբ Սահակ հայրապետի սահմանած 27-րդ հոդվածը պատվիրում է ամուսնություն շանել՝ մինչև միմյանց հաճությամբ տեսնելը, սուրբ Բարսեղի 219-րդ հոդվածն արգելում է պսակադրելը՝ մինչև տղան հասնի յուր շափին և ճանաչի յուր հաճույքը: Այդ բոլոր հոդվածները բերված են համոզելու, որ Մայրանը իրոք մանուկ էր և պատրաստ չէր ամուսնության: Հոգևոր ատյանի օրագրության մեջ հիշատակված են Լևոն և Կոստանդիանոս բարեպաշտ թագավորները, Եզեկիել մարգարեն, Մխիթար Գոշի Դատաստանագիրքը և Նիկիայի ժողովի վճիռները, կարծես ատենադպիրը կամեցել է փայլել եկեղեցական և արքունի օրենքների զարմանալի գիտություններով:

- Արդար ճանաչելով Մայրանին, հոգևոր ատյանը որոշում է թույլատրել նրանց նոր պսակադրությամբ կենակցելու միմյանց հետ, եթե կամենան, իսկ եթե ոչ՝ ազատ արձակել ամուսնանալու, որոնց հետ կամենան. Նիկողայոս Սուբիասովին ենթարկել եկեղեցական ապաշխարության երկու տարով՝ մյուս Մայրանի հետ ապօրինի կենակցելու և այդ շաղկապից երկու զավակ ունենալու համար. երկամյա ապաշխարության ենթարկել նաև մյուս Մայրանին, որ համարձակվել է ունենալ ամուսնական կապ Սուբիասովի հետ, գիտենալով առաջին Մայրանի կենդանությունը, իսկ պսակող քահանա տեր Մարգարին կարգալուծ անել, որովհետև նա տեղյակ էր Մայրանի անկատար հասակին: Սակայն տեր Մարգարի մահվան պատճառով սույն վճիռը թողնվում է «Աստույ կամքին»: Նաև ապացուցված համարել Մայրանի մոր այրի Եղսանի մեղավոր բռնադատությունը և նրա մահվան պատճառով պատիժը թողնել

ոչ թե Աստծո կամքին, այլ նրա ահեղ վրեժխնդրության: Եւ որովհետեւ, համաձայն տերունական Կոճղ Օրինացի հոդված 43-ի (հատ. 10) պսակի լուծման գործերը ենթակա են Սյունհոդոսի անբեկանելի վճռահատության, ուստի Երեւանի հայոց վիճակային ատյանը սույն վճիռը առանց ի կատար ածելու, մատուցանում է ի հաստատություն Սյունհոդոսին էջմիաժնի:

Ուրեմն Մայրանը դեռ պիտի մնար «օրինավոր կին» Սուքիասովի, որի արական զորությունից նա սարսափահար փախել էր մի ձմռան գիշեր, փախել էր ինչպես եղջերուն ահավոր վտանգից: Նա պետք է դարձյալ լսեր անարգ նախատինքը, որ այն խավար դարում թափում էին ամուսնաթող և անպաշտպան կնոջ վրա: Նա պիտի լուր, եթե մի շար կին բամբասեր նրան և անվաներ անառակ լիրբ: Կանայք դարձյալ պիտի խուսափեին նրանից, որովհետեւ այդ կապը կարատավորեր նրանց անունը: Տղամարդիկ երես պիտի դարձնեին՝ բամբասանքի ահից: Եվ, մինչև չէր լինի Սյունհոդոսի վճիռը՝ նա պիտի շղթայված մնար առաջին հարսնության առաջատի կայմին:

Այդպես էր այն դառն ժամանակ, որի մասին հայ ոմն Շամախի քաղաքից անստորագիր նամակով գանգատվել է իրեն՝ «երիցս երանեալ» Ներսես կաթողիկոսին. «դու գիտում ես ժամանակիս շարությունը, որ զուր տեղից մարդոց վնասում են... Ես մին օրեր անցրած շատ բան տեսած մարդ եմ, ահա հիմիկ իմ մխիթարությունս սուրբ եկեղեցին է, որ իմ հոգուս փրկությունը խնդրեմ, բայց որ տեսնում եմ էդ սուրբ տեղերն էլ պիղծ մարդերով ապականված, էն ժամանակ հուսահատվում եմ և վայ ինձ, չեմ իմանում որտեղ գնամ...»:

Ապականված էր եկեղեցին և նրա մարդիկ: Ուտքից մինչև գլուխ ախտավոր էր և մարմնավոր իշխանությունը: Արքունի և հոգևոր օրենքները գոյություն ունեին այդ ապականությունն անխախտ պահելու: Անլեզու մշակների բազմությունը հեծում էր ահռելի ծանրության տակ, և հազարները սուզվում էին դեպի չքավորության հատակը: Երկրի և մարդկանց վրա հետզհետե թանձրանում էր ասիական խավարը, որի մեջ, ինչպես վկայել է մի տաղանդավոր ժամանակակից, հագիվ խլրտում էին առաքինության կրակները:

Քանաքեռցիներն Արու Հայաթի մոտով բարձրանում էին գեպի գյուղը: Նրանց հետևում էր մի մանկամարդ կին, փաթաթված սպիտակ շարսավի մեջ: Ամայի էին այգիները և բարակ ճանապարհը, որով գնում էին: Այդ ամայության մեջ շարսավով կինը նման էր սրածայր գերեզմանաքարի, որ պոկվել էր մահամեղականների հանգստարանից և գնում էր գյուղի վրա: Ավելի մոտ թվում էր, թե սպիտակ գերեզմանաքար չի շարժվում, այլ գերեզմանից դուրս է եկել մի թարմ դիակ, որին հենց նոր փաթաթել էին սպիտակ քաթանի մեջ և իջեցրել մոռացության խորքը:

Վերադառնում էին բոլոր քանաքեռցիները, բացի Հարություն Աբովը, որը նույն ժամին Չորագյուղի կողմից իջնում էր Զարսուի վրա: Նա քայլում էր նեղ փողոցներով, որոնց երկու կողմը կավե ցածր և կիսախարխուլ պատեր էին, կիսով չափ գետնի մեջ ցածր դռնակներով, որ համարյա միշտ փակ էին: Պատերի ետևից մարդաձայն չէր լսվում, կարծես ամայի էին տները, որոնց բնակիչները հեռացել էին, ով գիտե, որտեղ: Տասնհինգ տարի էր ուսաները գրավել էին Երևանը և միայն 20 Եհարի մահալյում էին կառուցել քարաշեն երկու տուն և մի գորանոց՝ ոչ հեռու սարդարի ջավահիր ամարաթից: Չարսուն և մանավանդ խուլ թաղերը ավելի էին խարխուլ, որովհետև բնակիչները դժվար էին բարձրացնում այն աղյուսը, որ հին կամարներից ընկնում էր ժամանակի հետ: Շատ տներ ավերվել էին ուս-պարսկական պատերազմին, մի մասն անմարդաբնակ էր, որովհետև նրանց տերերը ուսների ահից փախել էին և օտարության մեջ հիշում էին իրենց հին բակի ուռիները: Մնացողները ևս չէին նորոգում իրենց տները. կյանքի թանկության հետ միասին ժամանակն առհասարակ անհանգիստ էր: Ոմանք ակնկալում էին սարդարների վերադարձը, իսկ ոմանց համար կյանքը դառնության հին լուծն էր, որ պիտի մաշվեր այդ լուծը քաշողի պարանոցի հետ:

Փողոցների կեղտոտ լճակներից բարձրանում էր զարշահոտութուն: Շատ թաղերում կիսավեր էին առուները, և այլևս չէին ծաղկում բախշաները: Չկային և պարսիկ միրաբները,

որոնք ջուրը, իրև կենարար դեղ, բաշխում էին մինչև վերջին կաթիլը: Կանաչ էին միայն հին բարդինները և շինարները, որոնք անտերությունից ավելի փարթամացել և վայրենացել էին, երբեմնի մշակված պարտեզները դարձնելով մութ անտառ:

Անմարդաձայն փողոցներով իջնում էր Հարություն Աբովը՝ լեզգիների աշխարհից եկած առասպելական Արով պապի ժառանգը, որին ազգականներն անհայտ է ինչու անվանում էին «Միրզա ամի» կամ «Միրզամ»: Նա ավագն էր Արովների հին տոհմի:

Քաղաք գալու առթիվ նա հագել էր տոնական իր միակ զգեստը՝ Քիրմանի շալե շուխան: Բուխարա սրածայր գլխարկըն ավելի էր բարձրացնում նրա հասակը, իսկ մեջքի արծաթ գոտին երևացնում էր ճկուն մարմինը: Նրա հուշիկ քայլերից զրնգում էին գոտուց կախ հրահանը և հովվական մեծ դանակը:

«Միրզամի» ողջ արտաքինի վրա ևս երևում էին խանության հետքերը: Կարծես ամեն ինչ, նույնիսկ գոտու զրնգոցը, վկայում էր, որ երբեմնի թարխանը այլևս չի հագնելու նոր զգեստ: Այն, ինչ վրան էր, պիտի մաշվեր տիրոջ հետ և այդ մաշված շորերի մեջ տերը պիտի գերեզման իջներ: Այդ էին ասում գրակի մաշված մորթին, դալամքյար արխալուղի կտրտված թելերը և մանավանդ շուխայի խունացած կուրծքը, որ ծերունին ծածկել էր նույն շուխայի փեշով: Ամենից նոր նրա ծաղկանկար գուլպաներն էին՝ զարմանալի նախշերով: Մանր քառակուսիների մեջ գունավոր թելերով սպիտակի վրա վարպետուհին գործել էր վարդեր ու գույնզգույն նարգիղներ: Կային և հեքիաթային կենդանիներ, թռչուններ և զանազան նշաններ, որոնցից յուրաքանչյուրը երբեմն ունեցել է իր իմաստը: Գուլպաների եզերքին սև թելերով ծուռ ու մուռ ձգվում էր մի բարակ գիծ, որ կտրատվում էր և մանր կետերի հետ միասին նմանվում արաբական գրերի: Կարծես «Միրզամը» մեծ մանուկ էր, որին մայրը հագցրել էր այդ «նորափեսայի» գուլպաները և ահա նա մոլորված գնում էր խուլ փողոցներով, և այդ փողոցներում փնտրում էր մի սիրելի դուռ:

Հետզհետե մեղմանում էին նրա խղճի խայթերը, Մայրանի հետ կապված այն ներքին վրդովանքը, որ ինչպես ամոթ այրում էր նրա դեմքը: Այն ձմեռ Եղսանը՝ Մայրանի մայրը,

ի թիվս ուրիշ բարեկամների, խնդրել էր նաև Միրզամի խորհուրդը՝ Մայրանի ամուսնություն մասին: Եվ Միրզամը չէր հակառակել: Նա նույնիսկ վկայել էր, որ փեսացուն՝ Նիկողայոսը կայքով մարդ է: Իսկ հարսանիքին, ինչպես հայտնի է գործից, «վասն հացակերություն» ներկա էր եղել նաև Հարություն Արովը: Սակայն Միրզամը դիտակցում էր և մի ուրիշ հանցանք, որ նրան խարաղանում էր առաջինից ավելի անխընա: Նա գնում էր իր մտերիմ մարդու մոտ, մի մարդու, որին ծերունի Միրզամը սիրում էր ավելի, քան հարազատ որդուն: Միրզամը պարծենում էր նրանով, այդ երթեմնի շարտղայով, որին քանի անգամ ուսերի վրա Ապրանքափոսի բաղից տարել է տուն: Այդ սիրելի մարդը դեռ երիտասարդ ժամանակ ամբողջ հոգով հակառակ էր Մայրանի ամուսնության: Նա Միրզամին սպառնացել էր զլուխն առնել և այլևս չվերադառնալ Քանաքեռ, եթե մանկահաս աղջկանը («բյորփա ըխտուն») ստիպելին հարս գնալ: Միրզամը չէր լսել նրա աղերսը և սպառնալիքը, նրան ևս համարելով դեռահաս տղա, որ դեռ չի ճաշակել դառն կարիքը: Եվ ահա կյանքը հաստատեց, որ ճշմարիտ էր ոչ թե ինքը՝ հազար շար ու բարի տեսած արևհեր մարդը, այլ այն սիրելի տղան, որի անփորձությունն ինքը ծաղրում էր:

Առաջին հանցանքի գիտակցությունը Միրզամը մեղմացնում էր շվաք անելով անպաշտպան որբի վրա: Անարգանքի թունավոր ծովում Մայրանի համար նրա տունը միակ կղզին էր: Միրզամը համառությամբ հետամուտ էր Մայրանի «գործին», կարծես իր խղճի վրայից սեփական մատներով քերում էր արյունոտ կեղտը: Նա այդպիսով զգում էր հոգու թեթևություն, սակայն ոչ մի կերպ չէր դիմանում իր հարազատ մարդու հանդիմանող հայացքին:

Միրզամն ահա գնում էր այդ մարդուն պատմելու հոգևոր ատյանի վճիռը: Նրան մերթ թվում էր, որ այն մարդը գոհ է լինելու վճռից, մերթ կասկածում էր՝ հիշելով վճռի վերջին բառերը.

— Ի վճռահատ զննություն Սյունհոդոսին էջմիածնի...

Կարծես այդ բառերը գալիս էին գետնի մթին խորքերից, որտեղ հավերժական խավարն է և մեռելների երկիրը:

Գնում էր Միրզամը ծանոթ փողոցներով և ինչքան ավելի էր մտնում փողոցների լաբիրինթի խորքը, այնքան խաղաղ-վում էր նրա անհանգիստ միտքը: Տների, պատերի և փողոցների դանդաղ մահը, որին ականատես էր, նրան կարծես հաշտեցնում էր մի այլ մահվան՝ մոռացության հետ: Երբ մտածում էր Մայրանի և այն հին ժամանակների մասին, նրա հիշողության մեջ բացվում էին հենց այդ փողոցները, միայն շատ-շատ տարիներ առաջ: Նրա միտքն ընդհատվում էր, երբ տեսնում էր հնամյա փառահեղ մի դարպաս, սակայն առանց պատերի, առանց ներսի տան և ծաղկած բախշայի: Անցնում էր 10 քարե կամրջակի վրայով և շարդված քարերը վկայում էին, որ շատ վաղուց շուր չի հոսել այդ առավակով: Եթե այդ խուլ փողոցում նա շտեսներ մի իշապանի, որ անիծելով հրում էր իշին, պառավ թրքուհիները, որոնք պզտոր լճակում ողողում էին հին կարպետներ, կիսամերկ մանուկների, որոնք խաղում էին մոխրակուլտի վրա, վերջապես եթե մի բախշայից չսվեր թառի լացող նվազը, մի փակ դռան ետևից աղչկային մի ձայն զվարթ շքրջար, ենթադրելով, որ մարդ չի անցնում փողոցով,— եթե այդ ամենը չլիներ, Միրզամը կմտածեր, որ հրաշքով ընկել է մի այլ քաղաք, որտեղ նույն խանձված մահրապատերն են, նույն նայիզ քարերը, դռնակների նույն թաղբանդ կամարը, բայց շքացել է արևելյան քաղաքի շքեղությունը, և այն մարդիկ, որոնք ծաղկած պարտեզներում վայելում էին այդ շքեղությունը:

Մի փողոցում դիմաց-դիմաց երկու շինարի սաղարթը խառնել էին իրար: Նրանք փողոցի վրա կապել էին կանաչ կամար և սարյակների միր երամը ճովողում էր սաղարթի թանձրության մեջ: Պատի տակ սալ քար էր: Նրանի՞ց էր, որ հազար-հազար մարդ նստել էր այդ քարի վրա, թե անձրևն ու քամին էին լվացել,— ստվերի մեջ քարը կապույտ ցուր էր տալիս, ինչպես ջնարակած կավե անոթը:

Միրզամը նստեց քարի վրա: Նա շատ լավ գիտեր այդ տեղը: Պատի ետևը սեյիդ էհսանի տունն էր, այն նշանավոր սեյիդի, որի անվան հետ կապված պատմությունները աշուղական երգերի նյութ դարձան: Սեյիդ էհսանը Միրզամի հոր քերվան էր: Աշնանը, երբ նրանք վերադառնում էին ուխ-

20

30

տից, մի գիշեր հյուր էին մնում այդ տանը: Ամեն տարի նույնն էր ու թեև ուղղափառ մուսուլմանները նզովում էին այդ բարեկամութունը, սեյիդ էհսանը շարունակում էր այն, յուրաքանչյուր տարի Միրզամի հորը պարզեցնելով նոր խալաթներ և նրանից ստանալով նույնքան և ավելի արժեքավոր ընծաներ: Սեյիդն ուներ մի աղջիկ, անունը Ֆաթմա: Աշուղի երգը նրան անվանում է «գրախտային հավ և դաշտի շուշան»: Միրզամն աղոտ հիշում էր աղջկա նշածև աչքերը և սպիտակ ատամները, որոնք լույս էին տալիս թուխ երեսին: Եվ ահա տեղի է ունե-

- 10 նում մի սովորական դեպք, որով այնքան հարուստ էր սարդարների Արևելքը: Քոռ-Հուսեյն խանը փախցնում է Ֆաթմային: Սեյիդ էհսանը հնար չի գտնում հարեմից ազատելու Ֆաթմային: Գալիս է մի դերվիշ և սեյիդին սովորեցնում հմայելու գաղտնիքը: Նրանք երկուսով դուրս են գալիս դաշտը, ուր կանայք խմբերով շանաքում էին բամբակը: Կախարդութամբ և, ով գիտե, ինչ կերպ դերվիշը կանանց աչքերի առաջ («առ աչոք տեսիլ», ինչպես նույն մարդու մասին գրել է ժամանակակից մի գրիչ) երևացնում է պղտոր գետ... Կանայք բարձրացնում են փեշերը և սրունքները մերկ քայլում, իբրև թե անցնում են պղտոր ջրով: Քաղաքում իրար են խառնելում, և ամբոխը վազում է տեսնելու հրաշքը:

- 20 Մյուս օրը այդ անմեկնելի և խորհրդավոր ուժը դուրս է հանում սարդարի կանանց Զավահիր ամարաթի ներսից ելնում են չքնաղ վրացուհիներ, խափշիկ կանայք, հայուհիներ՝ ցորնագույն մորթով, լազստանից գերի առած աղջիկներ, շերքեզ կանայք և պարսիկ գեղեցկուհիներ,—մի խոսքով Քոռ-Հուսեյն սարդարի ամբողջ հարեմը: Սեյիդ էհսանը սրունքները մերկ կանանց մեջ ճանաչում է իր աղջկանը և վազում է դեպի ամարաթի դուռը: Բերդի պահակները հագիվ են փակում դարպասները, որպեսզի անդիմադրելի այդ զորութունը չխայտառակի սարդարին:

- 30 Դերվիշը նույն դիշերը փախչում է քաղաքից: Սեյիդ էհսանին կուրացնում և քշում են Ղազվին: Ասում են, որ դեռ շատ տարիներ ապրել է կույր սեյիդը: Նա դուրս է գալիս Ղազվինից և նստում հյուսիսից եկող ճանապարհի եզրին: Երբ գալիս էր քարավանը, նա ողջոճում էր քարավանի պե-

տին և հարցնում «իրավան շհարից»։ Եվ այդպես շատ տարիներ նա ողբացել է իր գերութունը։

Այդ պատի հետևն էր սեյիդ էհսանի տունը, և երբեմն հենց այդ քարի վրա նստում էին Միրզամի հայրը և նրա քերվան։

... Փողոցով անցան երեք թուրքեր, որոնցից մեկը թաքաղի մեջ գլխի վրա տանում էր խոնշան։ Միրզամը լսեց, թե ինչպես նրանք ասացին իրար.

— Մեր քուշաներում ինչ գործ ունի էս հայը...

Ապա նրանցից մեկը հետ նայեց։ Նա տեսավ Միրզամի դեմքի այնպիսի խաղաղութունը և գլուխը կրծքին կախեց։

Մերունին վեր կացավ։

10

### 3

Դեպի Կոնղը Գյուրջի քարվանսարան էր, գդակ կարողների և մաշակարների փոքր ու միանման կրպակներով։ Դեպի հարավ՝ բերդի կողմը, խուրդավաթ վաճառողների մրջնոցն էր։ Այդտեղ էին նաև պղնձագործները, դարբիններն ու պայտարները, որոնց մուրճերի աղմուկը, քուրանների բոցը, պողպատի ու պղնձի սուր զրինգը խլացնում էր Չարսուի բազմաձայն ժխորը։ Առանձին թաղ էին կազմում ներկարարները, համեստ կարողները, բրուտները և կաշեգործները։ Երբ իջնում էր մառախուղը, դարբինների և պղնձագործների կրակները մառախուղների մեջ առանձին խորհրդավորութուն էին տալիս մրից սևացած մարդկանց, որոնք ծանր մուրճերով կարծես գետնին էին զարկում, և գվվում էր գետինը, կայծերի շատրվանով լուսավորում մառախուղը։ Արհեստանոցների մյուս թաղերն ընկղմում էին մառախուղի մեջ։

20

Եվ ընդհակառակը, արև օրերին առաջինները նման էին հրդեհից խանձված գետնափոր տների, այնինչ ներկարարների թաղում ծփում էին լաջվարդ, ալաջա «գյուլդաղ» և այլ գուլնի կտավե զուլերը։ Անխտիր բոլոր թաղերն էլ կեղտոտ էին, պայտարների առաջ աղբի և սմբակների քերվածքի դեզեր էին, կաշեգործների դիմաց մազեղեն, հում և բորբոսնած կաշվի կտորներ։ Ներկարարները քացախած ներկերը թափում էին հենց արհեստանոցի առաջ, և այդ գունավոր ջրերի գուրբից բարձ-

30

բանում էր կծու զարշահոտ: Նույնիսկ անտիրական շները, որոնք հարյուրներով էին վխտում, մանավանդ դասաբխանայում, չէին մոտենում այդ աղտոտությանը և բաղնիսների տաք մոխրակույտը գերադասում էին բորբոսնած կաշվի դեզերին:

20 20  
Հազարավոր արհեստավորների մեջ չէր կարելի տեսնել առողջակազմ և վարդերես մեկին: Նրանք վտիտ էին, մեռելագույն և անկրակ աչքերով: Միայն դարբիններն էին հաղթամարմին, բայց նրանք էլ կուզ էին. կայծերից այրված նրանց աչքերը ուռել էին ցամազար կարմրությամբ և ավելի ահարկու էին մրից սևացած երեսի վրա: Ոմանք, ինչպես ներկարարները, համարյա ամբողջ օրը արևի երես չէին տեսնում, նրանք գետնի տակն էին, որտեղ թաղված էին ներկի խոր կարասները: Մշտական խոնավության մեջ ներկերի թույնը հյուծել էր նրանց: Նրանք ավելի նման էին վհուկների, որոնք գետնի խավարից հրկար ձողերով դուրս էին քաշում վառ գույներով ներկած կերպասներ, կտավ և բրդե գործվածքներ: Առավոտից մինչև մութը աշխատում էին, ոմանք՝ ինչպես կաշեգործները՝ մինչև ծնկները ջրի մեջ, ոմանք՝ գլուխը վեր չհանելով, ոմանք՝ թանձր ցեխի մեջ, ինչպես բրուտները: Նրանք նման էին թիպարտների, որոնց անողոք կարիքը ցմահ շղթայել էր անուրախ և անհուսաշող կյանքին: Շատ հազվադեպ էր հնչում երգը, և եթե այնուամենայնիվ երգում էին, ապա կսկծում էին իրենց օրերի դառնությունը, երգում էին լացի և անել կյանքի երգը, սիրտ մաշող արևելյան մի երգ այն մասին, որ կյանքը փակ դուռ է, ուզում ես լաց հղիք, ուզում ես ծիծաղիք, միևնույն է, նա երբեք չի բացվի: Եվ պատահում էր, որ մի ծեր դարբին ծանր մուրճին կռթնած լսում էր այդ երգը և կաշվե գոգնոցով սրբում կարմրած աչքերը:

30  
Բայց միայն այդ չէր Երևանի հռչակավոր Չարսու բազարը: Ավելի ճիշտ՝ խլուրդի այդ բները ամենևին էլ բազար չէին համարում նրանք, որոնց կրպակները ծածկված շուկայումն էին: Նրանք ծաղրում էին այդ խեղճ արհեստավորներին և նրանց շուկան անվանում «Քյուլխանե», այսինքն մոխրանոց և կամ «Բիթ-բազար», այսինքն ողլի բազար, որովհետև այդ արհեստավորները գործ ունեին շունևոր մուշտարիների հետ, և բացի այդ, նրանց թաղումն էին գտնվում այն մանր սա-

րաֆները, որոնք շնչին գնով գնում էին պարտքի տակ խեղդ-  
վող գյուղացիների վերջին թաղիքը, միթե՞ վերմակը, շուխան,  
Սակայն տարբերությունը միայն այն չէր, որ ծածկված Չարսուփ  
սովորաբարները արհեստավորների շուկային անվանում էին  
«Բիթ-բազար», իսկ իրենցը՝ «հան-բազար»: Տարբերությունն  
ավելի խորն էր. մաշակարի համար մուրազ էր խմել Չարսուփ  
չայխաննի թեյը՝ ծաղկավոր և ոսկեակար ֆինջաններից, այն  
նշանավոր թեյը, որ ուներ վարդաչորի բուրմունքը: Նա խմում  
էր առվի պղտոր ջուրը և կամ այն հասարակ թեյը, որ ինքը  
չայչին էր պտտացնում արհեստանոցից արհեստանոց: Այնտեղ 10  
նստում էին հորասանի խալիների վրա, այստեղ՝ մաշված  
փոստի կամ խսրի վրա: Այնտեղ օդը հագեցած էր շորացած  
մրգերի, հնդկական հիլի, պարսկական դումաշ կտորների, հո-  
տավետ թուփունի, Հալեպի սապոնի, քեհհրաբահի, ռահաթ  
լոխումի, Ջուղայի ջավզի, քաղզի բաղամի և այլ տեսակ  
քաղցրավենիների, օժանելիքների և թանկարժեք կերպասների  
բույրով... Նույնիսկ անօթեան շները, որոնք ցնկնում էին  
տաք աղբակույտերի մեջ, — նույնիսկ շներն էին երկյուղում  
նշանավոր Չարսու բազարից: Նրանք մթնով մոտենում էին  
նրա բարձր կամարներին, և հարբեցած այն եղեմական բույ- 20  
րով, որ ելնում էր կողպած դարպասների ճեղքերից, — շները  
ոռնում էին և հուսահատությունից հաշում լուսնի վրա:

Անհայտ ճանապարհորդ Անտոնիո Զիովանելին, կապու-  
ցին վանական, որ ճանապարհորդել է Տրապիզոնից մինչև  
Պարսից ծոցը, այսպես է նկարագրում Երևանի նշանավոր շու-  
կան. «Գլխավոր դարպասից կարող են ներս մտնել ղուլզ ուղ-  
տեր կողք-կողքի, եթե նույնիսկ նրանք բարձրած են բեռնե-  
րով: Մի հույն ոսկերիչ, որ բազմաթիվ անգամ ճանապարհոր-  
դել է Թավրիզից Տրապիզոն և հակառակը, ինձ վկայեց, որ 30  
իբր թե դարպասի ճակատին զարդերով քանդակված է Շիր-  
հոսրով շահի ֆերմանը, որով շահը սահմանել է առևտրի կա-  
նոնները: Իսկ մի տեղացի վաճառական, որի խանութում ես  
եղիլ եմ շորս անգամ և տեսել եմ այնպիսի գորգեր, որոնք  
արժանի են իմ հայրենի Ֆլորենցիայի Santa Maria Novella  
տաճարի հատակը զարդարելու, — ինձ ասում էր, որ հույնը  
խաբել է և որ ճակատի զարդերը ոչինչ չեն վկայում, բացի

կառուցող վարպետի շնորհքը: Ես ավելի եմ հավատում այդ տեղացի վաճառականին, որ հայ էր ազգով, քան հուլյնին, որովհետև, ինչպես հիշատակեցի իմ ուղեգրության սկզբում, հուլյները ինձ նենգությամբ խաբեցին, ինչպես նենգ և խարզախ է նրանց հավատը\*:

«Ես ականատես եմ եղել, թե ինչպես քարավաններն անվերջ մտնում էին դարպասներից ներս, և նրանց բռնները գոյացնում էին բլուրներ: Մի անգամ նույնիսկ հաշվեցի, թե քանի ուղտ եկավ մի քարավանի հետ: Ես հաշվեցի մինչև չորս հարյուր տասը, բայց իմ բարեկամը խանգարեց ինձ, հայտնելով, որ իրենց երկրի սովորությունն արգելում է օտարին հաշվել ուրիշ վաճառականի քարավանի ուղտերի թիվը:

«Շուկայի ընդհանուր ձևը նման է քառակուսու, բայց ունի երեք գլխավոր դուռ, որոնք գիշեր-ցերեկ բաց են: Մեջտեղն ընդարձակ տարածություն է, որտեղ կարող են նստել մինչև տասը հազար ուղտ և դեռ ավելի: Կան անհամար շատերովաններ և ավազաններ. բացի այդ, կան անասունների ջրի ամբարներ՝ զանազան բարձրության, նայած անասունի վզի երկարության: Ես չեմ կարող պատմել բոլոր հրաշալիքները, որին ականատես եմ եղել այս քաղաքում: Այսպես, օրինակ, մի անվանի պարսիկի խանութ, որի տերը հսկում էր նաև արքունի զանձարանին,— նման էր գոհարի: Խանութի առաստաղը գունավոր ապակի էր, իրար շատ սեղմ հազցրած: Ապակու վրայով հոսում էր ջուրը. վերևից արևն ընկնում էր ջրի վրա, և ջրի ու գունավոր ապակիների միջով հատակի գորգերի վրա նկարում էր այնպիսի տեսարաններ, որ միանգամայն կախարդական էին: Յուրաքանչյուր ականթարթ նրանք փոփոխվում էին, և երկար նայելուց շէր զգացվում հատակը, կարծես գտնվում եք երկնքի խորքում, և ձեր ոտքերը կախված են տիեզերքի վրա:

«Շատ վաճառականներ այնքան ոսկի և ակնեղեն ունեն, որ կարող են դնել ամբողջ քաղաքներ: Սակայն նրանք-գուրկ են

---

\* Տրպիզոնում մի հուլյն, որի տանն էր իշել Անտոնիո Ջիովաննելլին, փոխում է խալապու մատանիի թանկարժեք բարը, և տերը միայն էրզրում հասնելուց է նկատում այդ: Ակնարկը դրա և նման պատահարների մասին է: Ա. Բ.:

նախաձեռնութեան ոգուց: Այդ առաքինութիւնից մասամբ  
օժտված են հայ վաճառականները, բայց բնութիւնը միաժա-  
մանակ նրանց այնքան թերութիւններ է ընծայել, որ ընդհանուր  
առմամբ նրանք ավելի վատթար են, քան պարսիկները: Հա-  
յերը ծածկամիտ են, ձևանում են թշվառ, որպեսզի իրենց գան-  
ձերը փրկեն իշխանութեան արթուն աչքից: Նրանք ինձ հիշեց-  
նում են այն միայնակ ծառը, որ բուսել է անտառի եզրին, և  
որին առավել զայրութեամբ խփում է հողմը և շար կայծակը,  
որին կրծում են որդերը և բզեզները, և որը ենթակա է անտառի  
եզրով անցնող անասունների հարձակման: Բայց և այնպես նա **10**  
մնում է, թեև անպտուղ և առանց նոր ընձյուղների»:

Անտոնիո Ջիովանելլին պատմում է սիրամարգների և  
դրախտային թռչունների մասին, որոնք ազատ շրջում էին  
Չարսու բազարի բակում: Նա գրում է, թե շուկայում այնքան  
ուտելիք կար, որ կբավարարեր քաղաքին հինգ տարի, եթե  
այդքան ժամանակ քաղաքը պաշարված մնար: Նա գրում է և  
շատ միամիտ բաներ. նկատելով գորգերով պատած մի ընդար-  
ձակ տարածութիւն, որտեղով անցնում էին ուղտերը, ձիերը  
և մարդիկ, Ջիովանելլին աննկարագրելի վրդովվում է, որ  
ասիացիները շոռայութիւնը հասցրել են խելագարութեան: Նա **20**  
այդպես էլ չի համոզվում, որ գորգերը հնացնելու ընդունված  
ձևն էր այդ՝ փոել արևի և անձրևի տակ, որպեսզի ավելի պայ-  
ծառանան գույները: Հետաքրքիր է այս անհայտ ճանապար-  
հորդի դիտողութիւնն այն մասին, որ Չարսու բազարում գողու-  
թիւն չկար, և սինիների մեջ ոսկին թողնում էին խանութում  
և միայն մի գույնզգույն թել, որ կապում էին որմից որմ, ցույց  
էր տալիս խանութի տիրոջ բացակայութիւնը:

Իտալացի վանականի նկարագրութիւնը վերաբերում է  
18-րդ դարի առաջին կեսի Երևանին: Ու թեև անցել էր մի  
դար, այնուամենայնիվ, մնում էին այդ անհուն հարստութիւնը **30**  
վկայող բազմաթիվ կիսախարխուլ կրպակներ, որոնց մի մասն  
խսպառ քանդել էին ոռուները և աղլուսներն օգտագործել բերդի  
նոր գորանոցի համար: Քառասնական թվականներին դեռ շատ  
բան էր մնում այդ երբեմնի շահաստանից: Ճշմարիտ է, այլևս  
չէին դարկում շատրվանները, բայց Չարսու բազարի ներսը դեռ  
երևում էր այն բաղը, որտեղ իջևանում էին քարավանները

և օտարերկրյա վաճառականները: Այդ բակի ներսն էին նաև առևտրական տների պահեստները, որոնց արտաքինը բոլորովին չէր մատնում գետնահարկ նկուղներում դարսած ահագին հարստությունը: Անփոփոխ էին առևտրի կարգը և առևտրականների սովորությունները: Շարք-շարք կրպակները կազմում էին միջանցքների լաբիրինթոս, ծածկված աղյուսների բարձր թաղբանդով, որի կլոր լուսամուտներից արևը կախում էր ոսկե սյուներ:

10 Միջանցքներում լուսավորությունն ավելի չէր, քան ասիական բաղնիսում: Եվ այդ անրջական լույսի մեջ օրորվում էին բարակիրան և դանդաղաքայլ պարսիկները. նրանք քայլում էին օրորալով, գլորում էին ոսկեհատ թաղքեհները, կարծես զբոսնում էին մզկիթի բակում: Խանութները ցուցանակ չունեին. ապրանքը կիսով չափ դուրսն էր, և նրանց շողշողուն գույները զվարթացնում էին հին կամարների մոայլությունը: Պատերից կախված էին զառ լաշակներ, վարդագույն աղլուխներ, դալամքյար և եզերքը հաշյա կերպասներ. դանավուզի և պարսկական թավիշի թոփերը կազմում էին բարձր սյուներ: Կրպակների մի շարքում ոսկերիչներ էին, մյուսում վաճառում էին արծաթե կոճակներ, արմավե թասեր, ուլունքե քսակներ, պարանոցի մարջան, էքենոսյա սանրեր, յահուդ մատանիներ, սուրմա-դուզմա, կրծքի քորոցներ և օղեր, նաև այն յալդուզ ոսկիները, որով այն ժամանակ գեղեցկուհիները զարդարում էին իրենց լույս ճակատները: Կային խանութներ, որտեղ կարելի էր տեսնել բոլոր տեսակի թրերը և դաշույնները. Դամասկոսի պողպատյա թրից, որի փղոսկրե կոթի վրա փորագրված էին տիրոջ բազուկը զորացնող աղոթքներ,— մինչև զարափափախ թարաքյամանների ահարկու խանչալը:

20 Ինչպիսի գորգեր չկային Չարսու բազարում՝ Բայբուրթի խորանավոր խալիչայից մինչև Քաքյանահամադի թաղիքները: Կային խալիներ, որոնց լայնքը ավելի էր քսան խան արշինից. կային և մետաքսե թելերով հյուսած մանր գորգեր, որ կարելի էր թաշկինակի նման դնել գրպանը: Շատ գորգերի վրա կարելի էր տեսնել մի ամբողջ դիցաբանություն, բոլոր մանրամասնություններով. կարծես շնաշխարհիկ նկար էր, որ հարկավոր էր շրջանակել և դնել ապակու տակ: Ինչպիսի՞ ծա-

զիկներ, ի՞նչ մրգեր, ի՞նչ անդրծովյան թռչուններ, որոնք ասես կենդանի էին և թաքնվել էին կախարդական պարտեզներում: Մի քանի գորգերի վրա հյուսել էին որսի տեսարաններ, անպատ՝ ուղտերի հեռացող քարավանով, բաշը կրակե զույն առյուծ, որ զուրս է գալիս որջից ավելի ահավոր, քան ինքը կենդանի առյուծը: Բայց ամենից ավելի բազմություն հավաքվում էր այն գորգերի առաջ, որոնց այրում էր կանացի մերկ մարմինների նկարը: Նույնիսկ մորուքները հինաչափ և պատկառելի ախունդները շէին կարողանում անխռով անցնել առանց մի ակնթարթ նայելու: Երիտասարդները երազում էին նրանց, ինչպես այն փերիներին, որոնք ապրում են ջեննաթի մշտադալար պարտեզներում: Հաշիշից դեղնած մի դերվիշ ժամերով նայում էր այն գորգին, որի վրա հյուսել էին մերկ տղայի վարդագույն մարմինը, ձեռքին ոսկեթև բազե:

10

Կրպակների առաջ ծփում էր բազմազգի և բազմալեզու մարդկանց ծովը: Հայեր, թուրքեր, պարսիկներ, սեյիդլի թաթարներ, թարաքյամա՝ որոնք աչքի էին ընկնում գլխի սև ապարոշներով, եգիդի քրդեր, վերջապես լեռնական հրեաներ, որոնք տարբերվում էին իրենց քաղղեական ծալ-ծալ միւրուքներով և երկար ջլուրքաներով: Արևելյան խայտաբղետ տարազներին չէր մերվում «կվարտալնի դեսյատնիկներին» գորշ մունդիրը: Բոլորը նրանց անվանում էին «սալդաթ» կամ «ղազախ»: Այդ ոստիկանները մեծ մասամբ նախկին զինվորներ էին, որոնք մասնակցել էին ռուս-պարսկական պատերազմներին: Նրանք արդեն հասակավոր մարդիկ էին, և ոմանց կուրծքը զարդարված էր արծաթյա մեդալներով: Նրանք ունեին մինչև ականջները հասնող փարթամ բեղեր և ճյուղավոր մորուք, որ ծփում էր կրծքի վրա: Մանր թուրը և ալեբարդն ավելի էին խստացնում նրանց անհրապույր արտաքինը: Նրանցից մի քանիսը հանդարտ ննջում էին գլխավոր մուտքի պահականոցում, իսկ մյուսներն իրրև օրենքի պահապաններ, շրջում էին միջանցքների լաբիրինթոսում, իսկ ավելի շատ այն կրպակների առաջ, որտեղ վաճառում էին չոր մրգեր: Նրանք կերակրվում և ապրում էին Զարսու բազարում: Հաղթողի գերագույն իրավունքով նրանք մտնում էին շախմանե և իսկույն տեղը խնքն էր մատուցում մի բաժակ:

20

30

Նրանք անցնում էին մրգավաճառի խանութի մոտով, և մի անհաղթահարելի ուժ նրանց մղում էր հաճելի նախունայի: Եվ վերջապես պարապ ձանձրույթից նրանց բռունցքն իջնում էր մի համշարու վզակոթի, և պարսիկ մշակն առանց բողոքի գետնից բարձրացնում էր գդակը, իսկ նրա շուրջը հնչում էր ստրկական քծնող քրքիչը:

Նրանք չէին մոտենում ո՛չ գորգավաճառի, ո՛չ ոսկերիչի և ո՛չ էլ ճոթեղենի խանութներին: Այդ շարքերում ավելի հաճախ, մանավանդ ճաշից հետո, թափառում էին մանր շինով-  
**10** նիկները՝ շերմախտից դեղնած ուռաներ, որոնց, ով գիտի, որ հանցանքի համար ներքին նահանգներից քշել էին «աշխարհի ծայրը»: Վաճառականները նրանցից չէին վախենում, այնինչ «ուտուս սալգաթները» քաշվում էին շինովնիկներից, որոնց ներկայությունը ոստիկաններին ստիպում էր ավելի հարգել օրենքի տառը: Այդ շինովնիկներից ոմանք ունեին իրենց սիրած իրը՝ մի թանկարժեք գորգ կամ արծաթյա գավաթ և կամ պարսկական թուր: Նրանք երազում էին գնել այդ իրը, որպես հիշատակ ասիական աշխարհից: Սակայն չէր գալիս այդ երջանիկ օրը, որովհետև թղթախաղն ու գինին կլա-  
**20** նում էին նրանց ուժիկը: Այնուամենայնիվ, նրանք հույս ունեին, իսկ մինչև այդ երբեմն դիտելով բավականություն էին ստանում և կամ սև պղնձադրամով գնում էին պարսկական պարզ մի շիբուխ, դարձյալ որպես հիշատակ: Չարսուի սովորյալները նրանցից այլ օգուտ էին ստանում: Այդ կորած մարդիկ շնչին վարձով վաճառականներին ցույց էին տալիս օրենքը ոտնահարելու ամենադյուրին ձևը, երբեմն նրանց համար խնդրազրեք էին գրում և առհասարակ իրենք ևս աշխատում էին բարեկամություն պահել որևէ խանութպանի հետ՝ ավելի հեշտ ապրելու համար:

**30** Վերջապես, նրանցից ոմանք Չարսու էին մտնում իրենց կանանց հետ: Նրանց հետ գալիս էին և այն կանայք, որոնք ըստ հին սովորության կրնկակոխ գնում էին զորամասերի հետևից, կազմելով բանակի անխուսափելի մասը, ինչպես այն մարկիտանտները, որոնք անհայտ է, թե ինչ կերպ երեվում էին դեռ ծխացող ուղմադաշտում՝ ասեղներով, հայելիներով և հազար մանրուքով: Ահա այդ կանայք, ինչպես և

իրենց ամուսինների հետ եկող կանայք էին, որոնք, կարելի է ասել, կենդանացնում էին Չարսու բազարը, որի կամարները հազիվ թե մինչև ռուսների մուտքը տեսած լինեին որևէ կնոջ: Նրանց բոլորին անվանում էին «մաթուշկա», երբեմն «հանրմ», ինչպես բոլոր ոստիկաններին՝ «սալդաթ»: Հին Չարսու բազարում օտարոտի և զարմանալի էին այդ կանանց զգեստները, բաց երեսները և այն, որ ուրիշները տեսնում էին շարժվող մարմնի ձևերը: Նրանց մեջ կային շեկ ու կապուտաշյա կանայք, որոնք բարձր ծիծաղում էին առողջ կրծքով: Այդ ծիծաղը հնչում էր սանձարձակ կրքով. կարծես կանաչ 10 մարգագետնի վրա վրնջում էր էգ ձին: Եվ այդ ժամանակ երիտասարդ վաճառականներին թվում էր, թե գորգի միջից դուրս է եկել այն կինը, որի մարմինը հրդեհվում էր գորգի գույների հետ...

• • •

Չարսու բազարում կար և մի խորշ, որտեղ չէին մտնում ոչ միայն ոստիկանները և ռուս շինովնիկները, այլ նույնիսկ տեղացի վաճառականներից ոմանք: Այդ մասում ևս նույն ձևի կրպակներ էին, ինչպես մյուս միջանցքներում: Սակայն կրպակների առաջ ապրանք չկար, և չէր աղմկում մարդկային ժխորը: Սովորաբար շքեղ շէր և այդ կրպակների ներսը: Գորգերի վրա նստած մարդիկ կամ քաշում էին դայլանը և կամ դանդաղ զրուցում թեյի բաժակները դատարկելով նույն դանդաղկոտությամբ: Երբ մտնում էր հաճախորդը, նրանք առաջարկում էին թեյ կամ մոտակա սրճարանից բերել էին տալիս մի գավաթ սուրճ:

Այդ անշուք արտաքինով կրպակները ողջ շուկայի կենտրոնն էին, այն ժամանակվա բորսան: Այդտեղ սարաֆներն էին, որոնք իրար էին փոխանակում բազմատեսակ դրամները՝ պաճախ ոսկի, մինալթուն, աբասի, դան, արծաթ մանեթներ, ռուսական թղթադրամ՝ «ասեղնացի»: Նրանց մոտ կարելի էր գտնել անգլիական, հոլանդական և այլ երկրների դրամներ: Սարաֆները և փոխանակում էին, և մանրում, և դրամ փոխադրում Տրապիզոնից մինչև Բուշիր և արվելի հեռու: Միաժամանակ և այդ խանութները քաղաքական լուրերի կենտրոն 30

էին, և նույն ճանապարհներով, որոնցով նրանք ստանում էին այդ լուրերը, Երևան էին մտնում և դուրս գալիս մաքսանենգները:

Թավրիզ—Տրապիզոն առևտրական ճանապարհի Բայազետի վրայով ընկնելը,— որով օտարերկրյա վաճառականներն ազատվել էին ռուսներից սահմանված տրանզիտային բարձր մաքսից,— սաստիկ հարվածել էր Չարսու բազարի առևտրականներին: Եվ միայն սարաֆներն էին, որոնք ոչ միայն տեր էին մաքսանենգների խոտոր ուղիներին, այլև ճարպկությամբ օգտվում էին բազմաթիվ դրամների անընդհատ փոփոխվող արժեքից: Նրանցից շատերն իրոք ունեին այնքան հարստութուն, որ կարող էին գնել ամբողջ քաղաքներ, ինչպես նկատել է Անտոնիո Զիովանելին:

• • •

— Ի՞նչ եկար, սաֆա եկար, Արթին քիրվա...

Այդպես ասաց Միր Բաղիր Իսֆահանլին, Երևանի հայտնի սարաֆներից մեկը, երբ Միրզամը կռանալով ներս մտա՞վ նրա կրպակը:

— Ղայֆ բերիք Արթին քիրվայիս... Ինչպե՞ս ես, հալդ, ավհալդ...

Միրզամը հրածարվեց սուրճից: Նա հարցրեց սարաֆի ողջութունը:

— Ի՞նչ հալ, Արթին քիրվա... Մերը գնա՛ց. գնդակ էլ գցես չի հասնի անցածին: Գնաց խեր բարաքյաթը...

Միրզամը բարի և միամիտ նայեց սարաֆին: Մի՞թե նրա համար ևս ցամաքել է երբեմնի լիութունը: Միրզամը կսկիծով հառաչեց: Կարծես սարաֆը նրան հիշեցրեց մեռած հարազատի սիրելի անունը: Ապա նա գրպանից հանեց մի մեծ ոսկեդրամ, որ հայտնի էր «պողո՛ւմպեթյալ» անունով: Սարաֆը ձեռքի փոքրիկ կշեռքով կշռեց դրամը և պահեց ծնկի տակը: Նա փոխարենը համրեց արծաթե և պղնձե դրամների մի բուռ և ռուսական մի քանի ասիգնացիաներ:

— Սա՛ կոտրեց մեր մեջքը, Արթին քիրվա,— և սարաֆը խշշացրեց թղթադրամը.— Ի՞նչ կա սրա մեջը, ախր...

— Հե՛լ գատ, Միր Բաղիր, հե՛լ գատ...

Եվ Միրզամը հրածեշտ տվեց հին ծանոթին:

Թելումով Սիմոնի «մաղազայում» նա գնեց սաղրի քոշեր, մի կապ քթախոտ և երեխաների համար խոշկյաբար: Երբ նա հագնում էր նոր քոշերը, Թելումով Սիմոնը նկատեց նրա զարմանալի գեղեցիկ գուլպաները:

— Թազա փեսայի շորաք ես հագել, Միրզա ամի...

Միրզամը թափ տվեց գուլպաների փոշին և ինքն էլ հիացավ, կարծես գուլպաները նոր էր տեսնում: Եվ նորից հիշեց Մայրանին: Առավոտյան, երբ նրանք պատրաստվում էին քաղաք գալու, երևաց Մայրանը՝ մաշված շարսավի մեջ: Կինը շարսավի տակից մեկնեց այդ գուլպաները և ձեռքերով հասկացրեց, որ գործել է Միրզամի համար: 10

Մերունին գնեց նաև մի գյուլի աղյուխ և դուրս եկավ Չարսու բազարից: Կարծես մի ծանրություն ընկավ այդ ալեհեր երեխայի սրտից, երբ մտածեց, որ երեկոյան, երբ խոշկյաբարը կբաժանի մանուկներին, քթախոտը կտա պառավին, ծաղկավոր աղյուխն էլ կտա Մայրանին, որ ինչպես ամաշկոտ օտարական, նրանց էլվանում սպասելու է մինչև Միրզամի վերադարձը:

...Միրզամը գնում էր ճահճուտների միջով՝ այն բարակ ճանապարհով, որ Չարսու բազարից անցնում էր դեպի Շիլաչի մահլան: Շուրջը՝ կիսավերակ այգիներում փոքրիկ տնակներ էին՝ հնձանների նման: Բարդիների արանքից նշմարվում էր Պողոս Պետրոս եկեղեցին: Ճահճուտի մեջ նստել էին գոմեշները: Մխում էր այն բաղնիսը, որի ջրերը գալիս էին ճահճուտներից: 20

Միրզամն արդեն մոռացել էր Չարսուն, սեյիդ էհսանի տան կապույտ քարը, իր սրտի մորմոքը՝ հին քաղաքի և նրա լիության հանդեպ, որ թռել էր ինչպես Չարսուի սիրամարզը: Նորից զարթնել էր Մայրանի հոգսը, այն, որ ճնշում էր նրան, սրտի արյունոտ այն խոցը: Մի անբացատրելի վախ կաշկանգում էր նրան. թվում էր, գնում է մի մութ անտառով, որտեղ հազար հարամի նրան սպասում են ծառերի ետևը: 30

Գնում էր վախից ու կասկածից խեղճացած, կարծես քաշում էին ահեղ դատաստանի:

- Երևանի արքունի դպրոցի («նահանգային վարժարան») արտաքինը դաժան և անհրապույր էր, ինչպես Նիկոլայ կայսեր կազարման: Մի հարկանի քարե տան երկու թևերին ոռուների օրոք կառուցել էին ֆլիգելներ, որոնք դպրոցի շենքից անջատված էին ներսի բակով: Թե՛ ֆլիգելները և թե՛ դպրոցի շենքը շրջապատված էին հաստ պարսպով, որի վրա, ինչպես փայտե զինվորների տողան՝ երևում էին սուր ցցերը: Այդ պարիսպը և ցցերի շարքը դպրոցը նմանեցնում էին նաև բանտի:
- 10 Դարի ոճն էր այդ, դպրոցը բանտ էր, երկուսը միասին՝ արքունի զորանոց՝ ծանր, մռայլ և ամենը unheimlich, ինչպես ասել էր էմիլիա Լոռզեն՝ նահանգային վարժարանի տեսչի գերմանացի կինը, երբ ամուսինը նրան ցույց էր տվել իրենց բնակարանը՝ ներքևի ֆլիգելում:

- Բոլոր պատերը դրսից ծեփած էին դեղնակարմիր կրաքարով, որ արևից կորցրել էր կարմիրը և նման էր վառած կավի: Բայց ամենամռայլը ծանր դարպասներն էին և պողպատե զինանիշները, որոնք ամրացված էին դարպասների ճակատին: Երբ արևը խփում էր դարպասներին՝ զինանիշի երկզվաանի արծիվների ստվերը բաց պատուհանից ընկնում էր դասարանի ներսը: Արծիվներն անցնում էին պատերի վրայով, և երկյուղած աշակերտները չէին համարձակվում նրանց ձեռք տալ: Իսկ Իվան Բոնդարչուկը՝ առաջին կլասսի վայելչագրության դասատուն, ձգվում էր ճակատի, կարծես պատի վրայով անցնում էր իմպերատորի ստվերը:
- 20

- Սովորաբար երկաթե դարպասները կողպ էին: Անցուդարձը լինում էր այն փոքրիկ դռնակներով, որ բացվում էին հենց դարպասների մեջ: Աշակերտներից շատերը դպրոցի բակն էին մտնում կողքից, որտեղ պարիսպն ավելի ցածր էր և մի քանի տեղ փշրվել էին փայտե ցցերը:
- 30

Դպրոցի երեք կողմն անմարդաբնակ տարածություն էր: Հետևի մասում պարիսպը սահմանակից էր մի կիսավեր այգու: Շրջապատի ամայությունն ավելի էր խստացնում շենքի մռայլությունը, մանավանդ ամառը, երբ աշակերտները ո՛վ գիտե որտեղ էին, իսկ դիմացի հաստ ու կենտ մացառաները և արևից

խանձված խոտը ծածկվում էին փոշու ծանր շերտով: Միայն կանաչ էր մի հին շինարի, որի կլոր սովերում հանգստանում էին հիվանդ հորթերը և էշերը, որոնք խանձված խոտի համար ամառվա շոգին գալիս էին նույնիսկ Զորավորի թաղից:

Այդ ամառի տարածությունը, որ քաղաքի կամերալ մատ-  
յանում արձանագրված էր իբրև «ոչ ոքի չպատկանող անապատ  
առանց սահմանի»,— կենդանացնում էին ուղտերի քարա-  
վանները, որոնք նախիջևանից բերում էին աղ և բրինձ, Օր-  
դուբադից՝ չոր միրգ: Ուղտապանները այդտեղ էին գիշերում  
և նրանց խարույկը բարձրանում էր մինչև շինարու ճյուղերը: 10  
Ընթերցելով Անտոնիո Զիովանելլու ուղեգրությունը, կարելի  
է կասկածել, թե արդյոք նրա նկարագրած ծառը այն շինարին  
չէ՞ր, որին խանձում էր խարույկի բոցը, մաշկում էին ուղտերը՝  
իրենց կեռ պարանոցները քսելով նրան և բազմաթիվ կեղև-  
կեր բզեզներ ձմեռում էին նրա կեղևի տակ: Երևանի արքունի  
դպրոցի գործերի մեջ դեռ մնում են գրություններ՝ ուղղված  
այդ շինարու դեմ: Տեսուչ Լազարիչ Հաջի-Ֆոտիկը գրում է, որ  
այդ մենավոր ծառը աշակերտների մեջ առաջացնում է «թա-  
խիծ և հանցավոր ցրվածություն» («наводит уныние, а так-  
же преступную рассеянность»), իսկ առաջին կլասի վերա- 20  
կացուն տեղեկացնում է տեսչին, որ աշակերտները գերադա-  
սում են դուրս փախչել դեպի շինարին, քան թե խաղալ  
դպրոցի բակում՝ ըստ դպրոցական կանոնադրության: Կա և  
գրագրությունների մի ամբողջ կապ, որ կոչվում է «գործ  
անտիրական ուղտի, որ հայտնվել է դպրոցի բակում անհայտ  
կերպով»:

• • •

Հետկեսօրյա ժամն էր: Դասարանները դատարկ էին. դա-  
տարկ էր և դպրոցի բակը: Վերի Ֆլիգելից լսվում էր աղմկալի  
խոմփոց: Իվան Բոնդարչուկը՝ առաջին կլասի դասատուն,  
խմել էր կես փարջ պղտոր գինի և ընկել մեջքի վրա: Զերմախ- 30  
տի «չար ոգուն» նա հալածում էր այդ ձևով, միաժամանակ և  
կարճելով երկար օրը: Նրա ծառան՝ յասաուլ Ֆեդրոն, լիգել էր  
պնակները, խմել գինու մնացորդը և գլուխը կախ ձայնակցում  
էր տիրոջը՝ խոռացնելով նրանից ավելի սաստիկ: Նրանց եր-

կուսի դիրքը, ինչպես և սենյակի խառնիխուռն իրերը հիշեցնում էին ռազմադաշտը, որտեղ Իվան Բոնդարչուկը կարծես խփվել էր մեջքից և միանգամից սառել, իսկ նրա թիկնապահը զբրկել էր փշրված ոտքը և արդեն ավանդում էր վերջին շունչը:

Դպրոցի բակում արթուն էր միայն մի մարդ՝ ոմն Հովհաննես, որ յուրաքանչյուր ամիս «մի մանեթ արծաթը ստացա» նախադասության դիմաց դրոշմում էր բուժ մատը: Նա լվացել էր դասարանների հատակը, հուանդական վառարանները և հորի մեջ դատարկում էր արտաքնոցի աղբի սայլակները, որոնք Երևանում նշանավոր նորամուծություն էին և իբրև այդպիսին՝ ծաղրի առարկա:

Հանդարտ էր նաև ներքևի Ֆլիգելում: Սենյակներից մեկում, որի պատուհանները նայում էին դեպի շինարին,— այդ ժամին մի մարդ գորգի վրա շորեքթաթ գնում էր: Մարդը հանել էր սյուրտուկը և շտիբլետները: Նրա մեջքին, ինչպես ձիու վրա, նստած էր կապուտաշյա մի երեխա՝ սպիտակ և կլոր երեսով: Երեխան քաշում էր մետաքսե դեյթանը, որ սանձի նման հագցրել էր հոր գլխին և միաժամանակ հոր երկար ծխամորճով խփում էր «ձիուն», որ պտույտ էր անում, երբեմն մեջքը ցնցում, որից երեխան զվարթ ծիծաղում էր: Ներսի սենյակից լսվում էր կանացի ձայն և օրորոցի թրխկոց: Մայրը կռացել էր օրորոցի վրա, օրորում էր և երգում:

Այգ մարդը արքունի դպրոցի տեսչի պաշտոնակատար երիստաֆոր Արտեմիչ Աբովյանովն էր, հաշատուր Աբովյանը, իսկ երգող մայրը՝ նրա կինը՝ էմիլիա Լոռզե-Աբովյան:

«Զին» գլուխը դարձրեց դեպի լոյդ քարտեզները, որ ծածկում էին սենյակի մի պատը, երբ զգաց, որ հեծվորն այլևս չի քաշում սանձը: Երեխան նույնիսկ փորձեց իջնել: Հայրը գլուխը բարձրացրեց: Դուռն մոտ կանգնել էր Միրզամը. կանգնել էր և բարի ժպիտով նայում էր այդ անմեղ տեսարանին:

— Միրզա ամի,— և նա վազեց դեպի դուռը: Ներսի սենյակից կինը գլուխը դուրս հանեց, աչքերով բարևեց, ապա փակեց դուռը, որպեսզի աղմուկ չլսվի:

Տիկին էմիլիան արևելցիներին չէր սիրում: Նրանք բոլորը բարձրախոս էին և շունչին հանդարտ ու խուլ ձայն, ինչպես

ինքը և յուր ազգակիցները: Գերմանուհին չէր սիրում ժանա-  
վանդ ամուսնու գյուղացի բարեկամներին, որոնք նրա սեն-  
յակների մաքուր հատակին թողնում էին տրեխների փոշոտ  
հետքը, ծղնոտի փշրանք, իսկ ներսը՝ կծու և անախորժ հոտ,  
որ բարձրանում էր նրանց շուփաններից, կեղտոտ փափախնե-  
րից և տրեխների հում կաշվից: Նրանց հեռանալուց հետո նա  
քթին էր մոտեցնում վարդաջրի մեջ թաթախած թաշկինակը,  
իսկ սպահանցի Ասատուրը՝ նրանց տան սպասավորը, բաց էր  
անում պատուհանները, հատակը սրբում, մինչև «այլազգի  
կինարմատը» հանգստանար և այլևս քթի տակ շասեր անհաս-  
կանալի բառեր, որ մոզական զորություն ունեին Ասատուրի  
համար: Բայց նույնիսկ խստապահանջ գերմանուհու համար  
Միրզամը բացառություն էր: Նրան նույնիսկ հաճելի էր Edel-  
mann Mirsaam-ի ներկայությունը:

Դռան մոտ Միրզամը քոշերը հանեց և մաքուր գուլպա-  
ներով մոտեցավ ցածր թախտին: Նա հանեց և մեծ թաշկինա-  
կը, որ կապած էր գոտուց, և սրբեց երեսի քրտինքը: Փոք-  
րիկ երեխան նստեց նրա ծնկանը: Մերունին զգուշությամբ  
գրկեց երեխային. կարծես փխրուն իր էր, որ ամուր սեղմե-  
լուց կփշրվեր: Տարվա այդ ժամանակ հազվագյուտ էր թարմ  
միրգը, բայց Միրզամը գրպանից հանեց երկու կարմիր խըն-  
ձոր: Մաքուր և շողշողուն էին խնձորները, որոնց կարմրու-  
թյունը ավելի նկատելի էր՝ սպիտակ և փափուկ ձեռքերի մեջ:  
Նույնիսկ հայրը, որ արագ հագավ շտիբլետները և կոճկեց ժի-  
լետը, — նույնիսկ հայրը հիացած նայեց այն բարիքներին, որ  
դեռ ընծայում էր Արով պապի այգին, այն հին այգին, որի ծա-  
ռերի տակ խաղալով անցել էր նրա կանաչ մանկությունը:

— Միրզամ, էս մեր ճաքած ծառի խնձորը չի՞:

— Չէ, որդի, սրանք շահալմասի են: Սամթով պահես, մին-  
չի աշուն կմնա...

— Դե, պոպոշ ջան, գնա, բալիկս, — և ձայն տվավ կնոջը:  
Սենյակի դուռը բացվեց, տղան գնաց՝ քարշ տալով մետաքսե  
զեյթանը:

— Ո՞նց եղավ, — անհամբեր հարցրեց նա, մատները խը-  
րելով մազերի մեջ: Միրզամը շփոթվեց և նորից հանեց թաշկի-  
նակը... Ինչքան խաղաղ էր այդ մի քանի րոպեն, երբ դռնից

նայում էր, երբ խնձորները հանեց, «արքայական» խնձորները: Կարծես սկսվում էր սովորական զրույց: Միրզամն ափսոսաց, որ երեխան գնաց: Մենակ՝ երես առ երես, ավելի դժվար էր: Ապա նայեց նրա կապտավուն աչքերին, նրա պարզ աչքերին, որ մարմանդ ցոլում էին, ինչպես աստղերը ջրհորի սև ջրի մեջ՝ խորը, խորը: Ու թեև այդ աչքերը նայում էին անհամբեր հետաքրքրությանմբ, բայց նրանց խորքում Միրզամը տեսավ հին, շատ հին, իրեն շատ ծանոթ և սիրելի պատանու պատկերը: Եվ ծերունու հիշողության մեջ զարթնեց այդ պատանու վաղեմի անունը, որ այլևս չէր արտասանվում: Այդ մարդը՝ շրջապատված գրքերով, օտար և նրան անծանոթ իրերով և նույնքան օտար զգեստով, այդ մարդը իր հաշերն էր, շար հաշերը, հաշոն, հաշատուրը, ծիծեռնակի բուն քանդողը, այն շար տղան, որ ուներ մի ծեր շուն, շանը կապում էր ձիերի ախոռում և ստիպում, որ շունը խոտ ծամի:

10

Միրզամի ձայնը դողաց.

— հաշեր, բալա ջան, էսպես եղավ եղելությունը...

20

Երբ նա լսեց իր կորած անունը, մի ինչ-որ բան պղտորվեց ներսը, կարծես մի ձայն կանչեց նրան հեռու արտերից, և նա զգաց իրենց հողերի հոտը, իրենց տան հացի համը, լսեց իրենց նարգիզի բառաչը և Ջանգուի վշտոցը Քանաքեռի ձորում:

Ինչ-որ մկաններ դողում էին Միրզամի հոգնած դեմքին: Դողդողում էին նաև ձեռքերը, որ ծերունին դրել էր գրասեղանի ծայրին: Նրան թվաց, թե փոքրացել է այդ սուրբ ծերունին, փոքրացել է ինչպես շորացող ծառը: Ինչքան փոքր էր նրա դեղնած ձեռքը, որ դողում էր մրսող թռչունի նման: Ապա անարատ ակնածությունմբ նայեց նրա այեհեր մազերին:

30

Իսկ Միրզամը հանդարտ ձայնով պատմում էր «գործի» քննությունը, նրա ընթացքը: Մեծ պատմող էր ծերունին: Շատ օտարականներ են վկայել նրա պատմելու արվեստը: Քարոն Ավգուստ Ֆոն Հաքստհաուզենը Միրզամի հեթաթնները հիշում էր նույնիսկ Պետերհոֆում. «Քարևեցեք նաև Հարություն բեյին,— գրում էր նա իր նամակի մեջ,— որի հեթաթնները մեծ զվարճություն պատճառեցին պալատական դքսուհիներին, որոնց հաղորդեցի ես մի անձրևոտ գիշեր, որքան իմ

հիշողութիւնն ընդունակ էր դեպքերը շարադրելու այնպես հմուտ, ինչպես Ձեր Միրզամը»:

Նրա գլխով շատ դեպքեր էին անցել, որոնց նկարագրութիւնը նա, հետզհետե գարդարելով, դարձրել էր կիսաիրական առասպել: Մայրանի «գործի» քննութիւնը ևս նա պատմում էր իբրև հին զրույց: Պատմում էր, և ինչպես վարպետ պատմող, ընդհատում էր հետաքրքիր տեղում, սրբում էր ճակատը, երբեմն խառնում էր մանրամասնութիւնները և հանկարծ ինքն իրեն հարցնում.

— Ո՞րտեղ մնացի... Հա՛, էն էի ասում, որ էդ խոսքի վրա աղբաթը խեր Վիրապը թե՛ սրբազան հայր սուրբ, ամբողջ Քանաքեռի ջամահաթը աղաչանոք պաղատում է ազատութիւն անլեզու երեսի համար. վերև Աստված, ներքև՝ դուք,— և Միրզամը պատմելու ժամանակ ևս երեսը դեպի վեր բարձրացրեց, ձեռքերը տարածելով:— էն կողմից «Կոնսիստորի ղալամդանը» (այդպես էր հոգևոր ատյանի տտենադպրի ավելորդ անունը) մի խոսք ասաց տեր Մաթևոս վարդապետին, նա էլ նրան գլխով արեց: Հա, էն էի ասում...

Միամիտ պարզութեամբ Միրզամը կարծում էր, որ վճիռը փշացրել է «Կոնսիստորի ղալամդանի» գաղտնի խոսքը: Ատենադպրը երևանցի էր և հակառակ կողմի՝ Նիկողայոս Սուքիասովի հետու ազգականը: Այդ էր նրա կասկածի աղբյուրը: Եթե չլիներ «ղալամդանի» ապօրինի միջամտութիւնը, այն ժամանակ հոգևոր ատյանը վճիռը կսահմաններ ավելի կտրուկ, և Մայրանը գերութիւնից կազատվեր:

— Վերջը, քեզ գլխացավանք չլինի, այ որդի, շատ շալիշ եկանք ես էլ, մեր օրհնած Վիրապն էլ. էն եթիմն էլ արտասուքը աչքերին արգա արեց,— վերջաբանը եղավ էսպես, որպես քեզ պատմեցի: Հիմա ինչ բանի գլուխ ես դնում, ինչ ճանապարհ ես շանց տալի, էդ էլ դու ասա:

«Որդին» նրա պատմութիւնից հետզհետե հուզվելով՝ սենյակում անհանգիստ քայլում էր: Նա երբեմն մոտենում էր պատուհանին և պարսպի ցցերի արանքից նայում դուրս:

Նրանք գնացել էին այն բլուրով, որի վրա սպիտակին էր տալիս ճանապարհը: Վաղուց, շատ վաղուց նա շէր տեսել Մայրանին: Վերջին անգամ նա իրենց բակով անցավ իբրև

10

20

30

405

ստվեր: Ինքը կանգնել էր էյվանում, բարեկամները դիլիջան-  
սի վրայից վերցնում էին նրա իրերը: Էյվանից նա էմիլիային  
ցույց էր տալիս իր հայրենի աշխարհը՝ մինչև կապույտ մշուշի  
մեջ երևացող Արարատի գագաթը, որի մասին նա նրան  
այնքան էր պատմել: Երկու անգամ բակով անցավ մի բա-  
րակ կին՝ շարսավի մեջ: Այդ կինը մոտեցավ նրանց, շարսավի  
տակից երևաց կնոջ մաշված ձեռքը, և կինը համբուրեց բարե-  
կամի ձեռքը, որպես խոնարհ հարգանքի նշան: Ապա անցավ  
բակով որպես ստվեր: Իսկ նա շճանաչեց իր քեռու աղջկան,  
10 պատանեկության օրերի Մայրանին:

— Ճանապարհը, Միրզամ... — և գլուխը տարուբերեց. —  
էլ ճանապարհ չկա՛: Չկա՛, Միրզամ...

Երունին տեղը ձգվեց: Ինչպե՞ս թե ճանապարհ չկա.  
հապա խաչերի անունը, նրան ճանաչող բազմաթիվ մեծամեծ-  
ները, Հովհաննես եպիսկոպոս Սահառունին, որ երդվում է  
նրա անունով, Սինոդի պրոկուրորը, վերջապես ինքը՝ Աշտա-  
րակեցին, Հայոց կաթողիկոսը, որ ճանաչում էր Աբով պապի  
ուսումնական ժառանգին, վանքի նախկին դպիր և այժմ «ազա  
սմատրիտել» խաչատուրին, որի անունը հայտնի էր մինչև ան-  
գամ Պետերբուրգի շհարում:  
20

Միրզամը պարծենում էր այդ կապերով: Նաև շոյում էր եղ-  
բորորդու ինքնասիրությունը:

— Դու որ շանես, էլ ո՞ւմ ոտն ընկնենք: Քո արինդ ա,  
Խաչեր... Դու որ դարիք ղուրբանի համար, եղբդի յադի հա-  
մար էդքան շալիչ ես գալի, բա մեր ջանին յարա կուղե՞ս:  
Ախր ջանի յարայից էլ բեթար է էս ցավը: Մի թուղթ գրի  
Բարսեղ արքեպիսկոպոսին, ես իմ ձեռք տանեմ, աջը առ-  
նեմ, առեմ՝ սրբազան, էսքան լավություն եմ արել էս սուրբ  
օջախին, օր ծերության մուրազս անկատար մի անի: Ի՞նչ  
30 պիտի ասի որ... Կանի, Խաչեր, կանի... Դու թուղթը գրի: Չէ՞  
ախր մեղք է էն բառաչող եթիմը:

Միրզամը լռեց: Նա վախեցավ, որ Խաչերը կզառնա և իր  
երեսով կտա հանդիմանության և նախատիքի մուրը: Եվ տե-  
ղը կուչ եկավ: Իսկ եղբորորդին Միրզամին շէր լսում: Նա կըշ-  
ռադատում էր այն միակ ելքը, որ ցույց էր տալիս ծերունին:  
Նրա համար իրոք որ դժվար էր այդ ճանապարհը: Նա այդ

աղին բռնել էր շատ անգամ, և միշտ նրա առաջ ցցվել էր հաստ պարիսպը և փակ դուռը: Նա բախել էր այդ դուռը, և աղերսել, և արտասվել, և հուսահատությունից զայրացել էր: «Աբովյանն ասաց ինձ,— գրում է գերմանացի բանաստեղծը,— երբ նա ինձ ուղեկցում էր դեպի էջմիածին, թե կարծեք նրա գլխին սառը ջուր էին մաղում, երբ նա ոտք էր դնում հին պարիսպներից ներս: Այսպես մեծացավ նա լացի, աղոթքի և պահքի մեջ, մի վայրենի, ամեն ազնիվ բանի համար բթացած և անբնական հեշտությանց մեջ ապականված շրջապատում»:

10

— Միրզա ամի, քանի անգամ գրեմ, քանի ասեմ... Աբիլը որ գնում էր Ամարաթ, դեռ էն ժամանակ խնդրեցի: Դրանից առաջ վեհափառը Ջանիբեգովի միջոցով ինձ իմաց էր արել, որ Մայրանի արձակման թուղթը կտա: Ո՞ւր է, տվե՞ց: Խեղճիմով Սոլոմոնի ոսկիները պիտի լինեին, որ Մինոզը շհասը հաս աներ: Շամախեցի Բարխուդարը Թոմա Ղորղանովի ջեբերը լցրեց և էն քյորփա աղջկանը առավ: էս էլ քանի անգամ է, որ կոնսիստորը քննում է Աստոծ լույսի պես պարզ էս գործը: Ասում ես գրի. ախր ո՞ւմ գրեմ, ի՞նչ գրեմ...

— Այ որդի, դե խնդրելով կլինի, բա ո՞նց: Մին էլ գրիր: Բա պտի գրես, որ ռահմի գան,— և նրան համոզելու որպես վերջին միջոց՝ Միրզամը ձայնին տխուր շեշտ տալով ասաց:— Նանիդ էլ թամբահ արեց, թե կմտնես Խաչատուրի մոտ, կասես, որ մի ճար անի:

20

— Նանի՛ն... Մաջալ շեմ գտնում, որ վերևանամ տուն:

Եվ նրա աչքի առաջ պատկերացավ կուշ եկած մայրը, միշտ ինչ-որ աշխատանքի՝ օջախի առաջ, տանը, գոմում, ցախատանը,— ոտքերին հին քոշեր, միշտ ինքն իրեն խոսելիս: Ամեն ինչից դժգոհ այդ կինը կարծես դառնացել էր, որ մահը նրան մոռացել է: Ահա պառավ նանին՝ սև խորշոմներով, մի քիչ անփուլթ հագնված, ինչպես պառավները,— ավլում է բակը և անիծում հավերին, հորթերին, շանը, որ հետևում է պառավին, ինչպես սովեր և սպասում է, որ պառավը լցնի լոռաջուրը:

30

— էն էլ խեղճ է, Խաչեր... Ոտքերի սանջուն էլի բռնել է: Առաջներս կիրակի է, ուզում ես ձին ուղարկեմ, արի՛:

407

— Հազար հոգս, հազար ցավ: Կիրակի են թողնում: Ինսպեկտորից հրաման կա, որ վեղոմոստները վերջացնեն, ուղարկեն: Վերջացնեն, կվերևանամ:

Մյուս սենյակից ներս մտավ էմիլիան: Նա ձեռքը մեկնեց Միրզամին: Մերունին բարևեց, ինչպես բարևում էին այդ ժամանակ՝ մատները հազիվ հպելով:

— Լա՞վ ես, — հարցրեց էմիլիան: Այդ նրա իմացած հայերեն խոսքերից մեկն էր, որ գերմանուհին արտասանում էր ճիշտ:

10 Միրզամը ժպտաց:

— Ինչի շնազալի դեպի մեզ: Նանին քեզ համար փոխինձ ա մաղել...

Միրզամը և Խաչերը ծիծաղեցին: Փոխինձի հետ կապված էր մի զվարճալի դեպք, որ այն օրից Քանաքեռում հիշում էին: Երբ առաջին անգամ նրանք մտան Քանաքեռ, նանին հյուրերի համար խաշիլ եփեց: Զիմանալով ուտելու կերպը՝ էմիլիան վառել էր շրթունքները և վեր կացել:

Գերմանուհին բնազդով զգաց, որ ծիծաղը իրեն է վերաբերում: Նա ներս քաշվեց, ինչպես խխունջը և նորից անցավ ննջարանը: Միայն ամուսինը նկատեց նրա զուսպ դժգոհությունը:

Խոսակցությունը դարձավ ուրիշ նյութերի: Միրզամը հաղորդեց, որ եղանակը շորային է, գիշերները կանաչը մրսում է: Գյուղացիները երկյուղ էին կրում երաշտից: Այնինչ շատերը դեռ չէին վճարել «օդունփուպին» և ոչ էլ ցորենի տասանորդը:

— Էսպես որ գնա, շատերի ծուխը կհանգչի: Հիմա որտեղի՞ց տան մի խալվար զագարակ, տասնութ խալվար ցորեն: Էնպես տուն կա, որ կրակը տաս խանձահոտ չի լինի: Ընկել են հետին չքավորության դուռը: Մի շաբաթ առաջ քյոխվան ստացավ թագա խարջի պուրիկացիան. էս սհաթին ասում է, ստիպմամբ խարջը հավաքի, տուր խազնեն: Թագավորական ճանապարհի բեգյառն էլ մի կողմից: Տասը թուման վեց մինալթուն էլ պիտի աթոռահաս տանք: Մի խոսք, ամեն կողմից նեղությունը ժողովրդին խեղդում է, շենք իմանում ոնց կլինի:

Նրա սիրտը ճմլվում էր, երբ նրան գանգատվում էին կոռու բեգյաուի ծանրութիւնն: Բայց դրանով էլ վերջանում էր նրա վերաբերմունքը: Նման խոսակցութիւններ նա չէր սիրում, որովհետեւ ներքնապես զգում էր, որ անօգնական է նույնիսկ խորհուրդ տալու: Սակայն նա ինքնասեր էր և չէր սիրում ուրիշներին ցույց տալ, որ ինքը չի կարող նույնիսկ խորհուրդ տալ: Նա նրանցից չէր, որոնք շոր սառնութեամբ անդամահատում են միջավայրը իբրև կենդանի մարմին, մերկացնում են մաշկը, մկանները և փնտրում ախտի բունը, որպեսզի մաքառեն այդ ախտի դեմ: Միրզամի առասպելախառն պատմութիւններն ավելի գեղեցիկ էին, քան նրա շոր զրուցը խարջի և բեգյաուի մասին: Բռնկվող խարուկի նման նրա կրակները խավարի մեջ շքեղ լույս էին տալիս և հանկարծ իջնում: Թվում էր, թե խավարը նրան կլանեց:

10

Այդ օրը նա Միրզամին ոգևորութեամբ պատմեց Վաշինգտոնից բերած բամբակ մաքրող առաջին մեքենայի մասին, որ տեղավորել էին բերդի պարսպի տակ, և որի մոտ կանգնած էր «զրուգինսկի 4-րդ բատալիոնի» պահակը: Ոչ մի գյուղացի չէր մոտեցել այդ «հրաշքին», ոմանք բերդի և պահակի ահից, մեծ մասը՝ անգիտութիւնից և անհետաքրքրութիւնից:

20

Միրզամը ևս անտարբեր լսեց: «Վաշինգտոն շահրի մաշինը» ոչ նրան էր վերաբերում և ոչ էլ Քանաքեռին: Ուստի նա ոչ մի բան չհարցրեց, այլ խորհրդավորութեամբ, որպես գաղտնիք, նրան հայտնեց գյուղի նշանավոր նորութիւնը:

— Սև Ղահրամանի տղան էս մի շաբաթ է չի երևում: Գլուխն առել ա փախել Բայազետի կողմերը:

Սև Ղահրամանի տղան առաջինն էր, որ փախել էր Քանաքեռից, երբ քոխվան ստացել էր խարջի «պուրիկացիան»: Նրան սպառնում էր կամ բերդի զնդանը կամ սովորաբարի շրջթան, որ նրան ցմահ պիտի շղթայի պարտքի մուրհակին, և այդ օղակը հետզհետեւ պիտի սեղմեր նրա և նրա երեխաների վիզը, քանի որ ամեն տարի նույն ձևով «ստիպմամբ խարջը պիտի տար խազնային», ինչպես պատմեց Միրզամը:

30

— Բա տունը, երեխեքը...

— Դուռը վրաները փակել է, գնացել...

Նա ուսերն իրար քաշեց, կարծես ցուրտ էր, և մրսում էր։ Ապա դանդաղ մոտեցավ պատին։ Նրա աչքերն աննպատակ սահեցին ծովային քարտեզի վրայով։ Նույն անտարբերությամբ թերթեց դարակի վրա ընկած գիրքը։ Մի պատահական էջի վրա կարդաց.

«Օ՛, նպատակ, բարձր նպատակ... Առ իմ բոլոր ուժերը և ցանկությունները։ Ես մոլորված շրջում եմ աշխարհում, ինչ փուլթ, եթե ես չպիտի արմահանամ...»։ Նա զարմացած դարձրեց առաջին էջը՝ Հերդեր, «Lebensbild», երկրորդ հատոր...

10 Հետո շրջվեց և լուռ նայեց Միրզամին։ Ինչքա՞ն հեռու էր այն, որ կարդաց. հեռու, ինչքան Օստգեեի երկիրը, որտեղ ապրել է Հերդերը, հեռու էր Երևանից։ Այն երկիրը, որտեղ եղել է և ինքը...

— Արևը թռավ, հաշեր... Ես գնամ։ Գնամ։ Մինչև հասնեմ, մութը կկոխի։

Միրզամը քոշերը հագավ։

Նրան ուղեկցեց մինչև դարպասի դուռը։ Հրաժեշտ տալուց Միրզամը նորից հիշեցրեց նամակի մասին։

— Կգրեմ, Միրզամ, էս գիշեր կգրեմ։

\*\*\*

20 Նույն գիշեր նա կատարեց իր խոստումը։ Նա գրեց մի նամակ ամենայն հայոց կաթողիկոսին։ Բայց անհայտ է, թե ինչու, այդ նամակում նա գործածեց կոշտ ոճ և սպառնական խոսքեր։ Արդյոք նրան հուզե՞լ էր Միրզամի պատմածը, զայրացե՞լ էր էմիլիայի դժգոհության համար, Հերդերի գի՞րքն էր պղտորել նրա մտքերը, թե՞ աչքի առաջն էր Սև Ղահրամանի տղան, որ սարսափից իրեն գցել էր Արաքսի մյուս ափը և իր անունը դարձրել ավելի ահավոր սարսափ։

«Ձերդ Բարձր Սրբազանություն,

Ողորմած Տեր,

30 «Ահա երեք անգամ գրով և մի անգամ բերանացի խնդրամատույց եղա Ձերդ Բարձր Սրբազանության քանաքեռցի ողորմելի կին Մայրանի մասին, բայց, ինչպես նկատում եմ, քանի որ այսքան ամիսների ընթացքում ոչ մի կերպ չվճռվեց այս

գործը, ուրեմն և տարիները կլրանան և նույնպես կմնա անկատար: Քողնում եմ և այն, որ իմ ամբողջ կյանքում հարկից և կարեկցութիւնից ստիպված միայն մի անգամ սուլնօրինակ խնդրով դիմեցի Ձերդ Բարձր Սրբազանութեան և Ձեր միջնորդութեամբ Սլունհոդոսին. բայց որովհետև շեմ գտնում ոչինչ բավարարութիւն այս արդար և աստվածահաճո գործի, օտարի և ոչ անձնական, ուրեմն թող ների ինձ Ձերդ Բարձր Սրբազանութեանը վարվել տերութեան օրենքների համեմատ, ոչ իբրև Խաչատուր Ձեր որդի, այլ իբրև աստիճանավոր արքունական: Այն ժամանակ, կարծում եմ, ինչպես և հայտնի է Ձեզ, կուսակալը և տերութեանը, որոնք ինձ քաջ ճանաչում են, կըհարգեն իմ արդար բողոքը և կբարեհաճեն ինձ տալ բավարարութիւն: Եվ սուլնօրինակ գանգատներից միայն կառաջանան անպատեհօթիւններ սուրբ Աթոռիդ համար, որ ես շեմ կամենում և լինելով հայազգի, մի անգամ ևս պահպանելով իմ հարգութիւնն առ սուրբ Աթոռը, այս վերջին անգամ խնդրում եմ ժամանակ նշանակել՝ թե երբ կվերջանա գործը և կամ միանգամայն մերժել, որպեսզի արդար իրավունքով և տերութեան միջոցով ազատեմ այս ողորմելի որբ և այրի կնոջը:

«Սպասելով պատասխանի՝ մնամ ամենայն հարգութեամբ 20  
և շերմեռանդութեամբ որդի՝

Ձերդ Բարձր Սրբազանութեան՝

Խոնարհ ծառա

Խաչատուր Աբովյան:

Նամակի լուսանցքի վրա մեկը մակագրել է՝ «Ընկալայ  
17-ին մայիսի»:

Եվ ուրիշ ոչինչ:

Այս նամակի հետ վերջանում է Մայրանի պատմութիւնը: Միայն շատ տարիներ հետո մի անգամ ևս հիշատակում են Մայրանին: Բայց այդ ժամանակ արդեն կենդանի չէին ո՛չ Միրզամը և ո՛չ նրա եղբորորդին:

## Կ Յ Ո Ր Ե Ս

O tempora, o mores...  
Օ Զանգեզուր. օ Կյորես...

### 1

Քաղաքն ուներ երկու անուն՝ Գորիս և Կյորես: Երրորդ անունը՝ Կ ո Ր Ի ս, — տալիս էր միայն մի մարդ՝ դեղավաճառ Քյալլա Մատուրը, որը քաղաքում հռչակված էր որպես փիլիսոփա և հին գրքերի սիրահար: Գուցե այդ գրքերից էր նա հանել քաղաքի Կորիս անունը, որ իզուր ճգնում էր տարածել: Նրան համամիտ էր միայն ժամհար Պարսեղը, որը և միակ ունկնդիրն էր Քյալլա Մատուրի ձեռագիր խորհրդածությունների՝ ճշմարիտ հավատի, ամուսնալուծության և «Սրից տարրի փոխակերպման մասին»:

Քաղաքն ուներ երկու անուն, և այդ երկու անվան մեջ, ինչպես ընկույզի երկու կճեպի մեջ, պարփակվում էր մի քաղաք երկու իմաստով, մի բնակավայր՝ երկու տարբեր ժողովրդով, որոնք ունեին իրենց առանձին սովորությունները, առանձին շահերը, և մինչև անգամ նրանց անունները տարբեր էին, և պատահում էր, որ այդ երկու ազգերը իրար լեզու չէին հասկանում: Մի կողմը «օտարականներն» էին, կամ ինչպես կյորեսացիք էին ասում՝ դ ա Ր Ի բ ա կ ան ն եր ն էին, — մյուս կողմը բուն Կյորեսն էր և նրա միջնաբերդը՝ Շենը, և նրա նշանավոր պարագլուխները՝ Ղաթրինի Աղալոն, որ բռնած էլը գետնից բարձրացնում էր, Պարան-Պարան Ավանեսը, որի ձայնը հասնում էր մինչև Դրնգանի ձորը, Գյուրջի Օբին, որի լեզ-

վից վախենում էր մինչև անգամ քաղաքագլուխ Մաթևոս բեյը:

Ղաթրինի Աղալուն, Պարան-Պարան Ավանեսը, Գյուրջի Օբին և շատ ուրիշ կյորեսեցիներ, լինելով բուն Կյորեսի պա-  
րագլուխները, ժամանակակից շեն եղել: Այդ մի դինաստիա  
էր հողագործների, բրուտների, ներկարարների, դարբինների  
և տավարածների, ցեղային դինաստիա, որ ի դեպ գլխավորում  
էր բուն Կյորեսի և նրա միջնաբերդ Շենի կռիվը Գորիս քաղա-  
քի և նրա «օտարականների» դեմ: Ղաթրինի Աղալոյի ժամա-  
նակ Գորիսը դեռ քաղաքագլուխ չուներ, և քաղաքը դեռ չէր տա-  
րածվել մինչև Մեծ կամուրջը: Ղաթրինի Աղալուն դեռևս կարող  
էր Գորիսի վաճառականներից երեքին խուրձի թոկով շալակել  
և սպառնալ նրանց թափել ձորը, եթե վաճառականները Քավ-  
րիզի կտավը չծախեն յուզի հետ բարաբար: Նրա ժամանակը  
հեշտ էր. ինքը՝ Շենն ուներ իր կտավագործները, իր դերձակ-  
ները, իր իջևանատները, որտեղ գիշերում էին ուրիշ երկրներից  
քարավաններ: Վերջապես, Ղաթրինի Աղալոյի ժամանակ վա-  
ճառականների մեծ մասը դեռ «ղարիբական» չէր, այլ կյորե-  
սեցի էր, այսինքն վար ու ցանք ուներ և մինչև անգամ ապրում  
էր Շենում, առևտուրն անելով Գորիսի շուկայում:

10

20

Այլ էր Գյուրջի Օբին և նրա ժամանակը... Գորիս քաղաքն  
ուներ երեք հարկանի բանտ, այնքան ընդարձակ, որ կարող էր  
Շենի կեսը մեջն առնել, ուներ ուրիշ կալանատուն՝ ս ու բ ա-  
հ ա ն ո ց, միայնակ կալանավորների համար,— այնտեղ էր  
նստում գավառապետը, այնտեղ էր ձիավոր պահակների զորա-  
մասը և Պենզայի 686-րդ դրուժինան: Գյուրջի Օբին զգզված  
շորերով, ինչպես հետին մուրացկան, հարբած դուրս էր գալիս  
Շենի միջնաբերդից և ծածանելով զգեստի ծվենները, քաղաքի  
հրապարակում հայհոյում էր քաղաք հիմնողին, նրա գլխավո-  
րին, Կյորեսը կոչը դանակով մորթողներին  
...Այն ժամանակ իրենց մաղազաններից դուրս էին գալիս Գո-  
րիսի առևտրականներ Եփրատ Երեմը, Մալակրովնի Նիկո-  
լայը, Բաղիրին Չանթա-Ռեխ Գալուստը, եղբայր Բաղիրովները  
և զվարթ ծիծաղում էին, ինչպես եթե հրապարակում կապիկ  
պար ածեին: Բայց երբ Գյուրջի Օբին սկսում էր խաղ ասելով  
տեսնել Գորիսի անվանի քաղաքացիներին, այն ժամանակ

30

նրա շուրջն էին հավաքվում հացթուխները, խմոր հունցողները, կոշկակարի աշակերտը, որին վարպետը ջրի էր ուղարկել, մշակները, որոնք անկյուններում սպասում էին, թե նրանց ով հացափոր աշխատանք կտա և մինչև անգամ քաղաքազուխ Մատվեյ Մատվեյիչը, նույն ինքը՝ Մաթևոս բեյը չէր կարող կտրել Գյուրջի Օբու այդ լեզուն:

Կար Գորիս և կար Կյորես: Երկու տարբեր ժողովուրդ էին, և տարբեր էին նրանց լեզուն, սովորութունները, անունները, և մշտաբորբոք կրակի նման նրանց միջև վառվում էր հին կռիվը: Թե ինչ ազգի մարդիկ էին և ինչ լեզվով էին խոսում նրանք, այնքան էլ հեշտ չի պատմել: Շենում ասում էին, որ գորիսեցիք խոսում են շա՛ն լեզվով:

— Խոչա Բաղիրի թոռները մեր Բողարի նման են հաշում... Նրանք ի՛նչ մարդիկ են: Մեր կծոտողի ճակատը նրանց ճակատից արդար է,— այդպես էր ասում Աթա. ապերը, երբ Գորիս քաղաքից վերադառնում էր:

— Կյորեսի լեզուն շենավարի է... Ափսոս չի մեր բլազարոզնի լեզուն,— այդպես էր ասում տիկին Օլինկան՝ Մատվեյ Մատվեյիչի կինը, Անիկա տյոտյային, երբ նրանք նստում էին ֆրապ խաղալու:

— Հայ Գրիշա, Միշա, Մաշո, շեմ իմանում էլ ինչ շաշո... Ափսոս չի մեր Մանգասարը, մեր Մանուշարը, մեր Սոնան... Հերս որ հարսին կանչում էր Մանիշա՛կ, Մանիշա՛կ, տասը մանիշակ էր բացվում,— այդպես էին խոսում ամենամոլեռանդ կյորեսեցիք, որոնք ծաղրում էին Գորիսի օտարականների ոմանց շլյապան, անվանելով կլիբո և ծղաման, ոմանց կանանց՝ անվանելով շինոփի տիկնիկ, ոմանց միրուքն էին ծաղրում, անվանելով կոլտառուզ և այլ այնպիսի խոսքերով, որ գրքի մեջ ընդունված չեն: Կյորեսեցիք ծաղրում էին քաղաքացիներին, հորինելով մականուններ՝ Պրիստավի Թազի, Թեփոած Եփրեմ, Ամբարի կատու Սողոմոն՝ ավագ եղբայրը Ավագիմովների, որոնք վաճառում էին ալյուր և բրինձ:

Եթե մի այդպիսի հին կյորեսեցու հարցնեիր, թե ինչ ազգից էս, նա կասեր տոհմի անունը՝ Ավետանց, Շալունց, Բահունց և ո՛վ գիտի ինչպիսի ազգանուններ,— որովհետև նրանց

լեզվով ազգ նշանակում էր տոհմ, գերդաստան, տուն, որի բոլոր անդամներն իրար հետ կապված են արյան կապով: Իսկ եթե նրան բացատրեիր, որ ազգութունն ես հարցնում, այլ ոչ թե տոհմը, նա կպատասխաներ.

— Կյորեսեցի եմ... Ձանգեզուրի մարդ եմ,— կարծես «Ձանգեզուրի մարդ» այդ նույնպիսի ազգ է, ինչպիսին ոուսը, անգլիացին, թուրքը:

— Աթա ապեր, բա դու հա՞յ չես:

— Ա քեզ մատաղ, դե ես ի՞նչ իմանամ ինչ եմ, է՞... Թողնում են գլխիս մեջ հուշ մնա, որ իմանամ, թե ես ինչ եմ... 10՝  
էսպես որ զնա չեմ իմանա, թե ես Աթան ե՞մ, թե՞ էն աղբանոցում հաշողը...

— Վերջը, Աթա ապեր, բա դու հայ չե՞ս...

— Դե հայ եմ մի տակով մի գլխով: Որ ավազանում մկրտված եմ, ուրեմն հայ քրիստոնյա եմ, էլի՞: Հո անհավատ նասրանի չեմ... Հիմա որ հայ եմ, ի՞նչ եմ արել: Գլուխս հո մեղորոտ չեմ արել: Ոչ ու փուշ լինի խոջա Բաղիրի թողը, երկու բեռ ցորեն տարա...— Բայց ընդհատենք Աթա ապոր գրույցը, որովհետև բնիկ կյորեսեցի լինելով, նա խոսում է ծոր տալով և ծանր-ծանր, կարծես քառերը ձուլելով թափում է և դեռ երկար կպատմի, թե ինչպես խոջա Բաղիրի թողը նրան խաբեց և երկու բեռ ցորենի դիմաց տվեց մի ոչ ինչ բան՝ մի քանի արշին չիթ, պառավի համար հալավացու, երկու գրվանքա շաքար, մի քիչ բոնոթի, այն էլ կեսը հող: Ընդհատենք Աթա ապորը և հարցնենք, թե խոջա Բաղիրի թողներն ի՞նչ ազգից են: 20՝

— Շան ազգից են խոջա Բաղիրի ճետերը... Նրանք էն ազգիցն են, որ խիղճ ասածդ շունի: Նրանք նասրանի են, նրանք մուլթանի են, նրանք մարդ պոկող ազգից են...

— Աթա ապեր, նրանք էլ հայ են, տեղացիներ են, հայ վաճառականներ են Գորիս քաղաքից, մինչև անգամ կարող է, որ խոջա Բաղիրը քո Օհան պապի խաչեղբայրը եղած լինի: 30՝

— Որ նրանք հայ լինեն, ես հայութունից դուրս կգամ,— Աթա ապերը սկսում է զայրանալ,— հայը ես եմ, Ղուրդանց Իսոն է, որ ցամաք հացին Աստված է կանչում,— չկա՛: Հայը վար կանի, ծառ կտնկի, շալակով փայտ կբերի, քերծ կբանդի,

հայր խեղճ ու կրակ ռահաթ է էս ձորերում բառաչող: Խոջա Բաղիրի ժառանգներն ի՞նչ հայ են, կամ Ավագիմովներն ի՞նչ հայ են, ասենք նրանց պապի անունը հայ է: Իսկ եթե ասում ես, որ խոջա Բաղիրն իմ Օհան պապի խաչեղբայրն եղած լինի, ուրիշն էլ ասի, չհավատաս: Իմ Օհան պապի խաչեղբայրը եղել է Բակունց Վիշապը, որ մի նստելում յոթ հաց կուտեր... Ա՛յ, թե ով է եղել իմ Օհան պապի խաչեղբայրը... Իսկ խոջա Բաղիրը ուրիշ ազգից է, և կարող է, որ զիւանի եղած լինի:

10 Կյորեսն ուներ իր սուրբերը՝ Կանաչ եկեղեցի, սուրբ Մարտիրոս («իմ երեսս նրա ոտի տակ» — կասեր Անա զիզին, երբ սուրբի անունը տար), Եզան Սուրբ, Ճգնավոր և այլ այսպիսի ուխտատեղեր հին և հնավանդ, ինչպես այն ընկուզենիները, որ ով գիտե, քանի հարյուր տարի աղմկում էին Մատուռի ձորում: Ոչինչ եկեղեցական չկար այդ ուխտավայրերում՝ ոչ գիր, ոչ խաչ: Քարափոր այրեր էին բարձր քերժերի լանջին և կամ խուլ ձորում խոխոջող մի աղբյուր և մի քարակույտ: Միայն Կանաչ եկեղեցին ուներ ժայռի մեջ փորած սանդուղքներ, որ իբր թե յոթը տարի փորել էր մի մենակյաց, թեև Սալու Մադին, Կյորեսի նշանավոր քերժ քանդողն ասում էր.

20 — Զորս փուժ կորեկ տվեք, թե յոթ շաբաթում էդքան չքանդեմ, իմ հոր տղան չեմ:

Կյորեսն ուներ այդպիսի ուխտատեղեր, մրտած պատերով, հողե սև ճրագներով, օջախի քարերով, որ երբեմն տաքանում էին մետաղների կրակից, և երբ ծուխը բարձրանար, մի ծերունի նայում էր, թե քամին որ կողմն է քշում ծուխը: Այդ միամիտ ծերունին հավատում էր, թե ծուխը որ կողմը գնար, այն կողմի արտերն այդ տարին շատ բերք կտային...

20 Եվ պատահում էր, որ ծուխը գնում էր դեպի Մլանգի տախտը, որտեղ խոջա Բաղիրի քսան օրավար արտերն էին: Մերունին բարկանում էր.

— Ես պիտի իմ ոչխարը քեզ մատաղ անեմ, որ դու հացը խոջա Բաղիրի որդիներին տա՛ս:

Եվ ասում են, որ մի անգամ, երբ մատաղի ծուխը փարթամ քուլաներով գնացել է քաղաքի վրա և մինչև անգամ փրկվել է քաղաքի շուկայի վրա, Զդին Հաբուղ անունով մի բնիկ

կյորեսեցի սուրբ Մարտիրոսի մատուռի առաջից կիսանկի կաթանան գրկած տարել է Ծղան Սուրբի ձորը, ասելով.

— Ծղան Սուրբ, եթե դու էլ սուրբ Մարտիրոսի նման լիբբես, մատաղը կածեմ շների առաջ...

Երբեմն պալտոնավորը, այսինք Գորիս քաղաքացիք Եփրատ Երեմը, Անիկա տյոտյան, տիկին Օլինկան, Կիզակով Իսակը հանդերձ ընտանյոք, Սահակ Սերգեյիչը՝ թագավորական ուսումնարանի տեսուչը, Ավագիմով եղբայրները, Ճաղարին Մուղղովը՝ արծաթյա մեղալներով, Կարճիկ Կևեր բեյի աղջիկները, նավթավաճառ Գեորգին, Լալազարանց տունն 10 իրենց նշանավոր աղջիկներով, որոնցից մեկը՝ Հերսելյան ամենաչքնաղն էր քաղաքում և կոչվում էր «թեք կոտրած հրեշտակ», որովհետև Հերսելյան քայլում էր ձախ ուսը մի քիչ բարձր, — երբեմն այդ ահագին բազմությունը լիբբը զամբյուղներով ուխտ էր գնում սուրբ Մարտիրոս, գնում էր զուգված-զարդարված, զույնզույն հովանոցներով, որոնցից ամենագեղեցիկը՝ երկնագույն մետաքսե, — հով էր անում օրիորդ Հերսելյային, և երիտասարդ շինովնիկների ու գործակատարների մի խումբ, որ հետևում էր Լալազարանց աղջիկներին և մանավանդ թեք կոտրած հրեշտակին, — հիանում էր Հերսելյայի խշխշան շորերով, բարակ մարմնով և նրա երկնագույն հովանոցով:

Երբ պալտոնավորն ուխտ էր գնում, Շենը դժգոհում էր, կարծես եկողներն այլադավան էին: Գորիսեցիք էլ էին մատաղ անում. մինչև անգամ Լալազարանց Հերսելյան, բարձրացնելով զգեստի փեշերը, ծնկաչոք մտնում էր Կանաչ եկեղեցին և այդ ժամանակ երիտասարդ շինովնիկներից մեկը փռում էր մի թերթ, որ ավազը շժակծկի նրա մարմար ծունկը: Նրանք էլ էին մոմ վառում, ոչ այն դեղին մոմը, որը ճրագուից թափում էր սապոն եփող Սավաղը, այլ սպիտակ և զառ նշանով մոմեր: 30

Պատահում էր, որ օրիորդ Հերսելյան և կամ Սահակ Սերգեյիչի զուստր Սուսաննան, համբուրում էին մատուռի քարը և մինչև անգամ խաչակնքում էին:

— Հողս գլխիդ, — նրանց հետևից ասում էր մի կյորեսեցի պառավ, — տեսնես բուլվարում քանիսին ես պաշպելի: էլ սուրբը քեզ հի՞նչ անի...

Եվ դուրս էին գալիս եկեղեցուց, գորիսեցիք ընկուզենի-  
ների տակ մատաղը մորթում էին, իսկ նրանք, որոնք կյորեսե-  
ցի էին, քաշվում էին վեր իրենց զուռնա նաղարայով, հին պա-  
րերով և հարս ու աղջիկ ծառերից կախելով պարանները, ճոճ-  
վում էին խոր անդունդի վրա, փոփոացնելով զգեստները: Քա-  
ղաքացիները նայում էին նրանց, և օրիորդ Հերսելյան ստու-  
ղենտ Ռուբենին ուսերեն ասում էր.

— Երանի նրանց...

Երբեմն Կյորեսն ու Գորիսն ընդհարվում էին հենց ուխ-  
տավայրում: Եվ նույնիսկ քահանաները չէին կարողանում  
հաշտեցնել նրանց: Ծաղրով, ծիծաղով կյորեսեցիք քշում էին  
բ ու լ կ ի ու տ ո ղ ն եր ի ն: Այդ ժամանակ մի հարբած բրուտ  
մտնում էր Կանաչ եկեղեցու քարանձավը և այսպես էր գոռ-  
գոռում.

— Ապա դու սո՛ւրբ ես... էն որ նավթ ծախող Գևորգը քո  
պատին մոմ կպցրեց, ինչի՞ նրա մատները շրոնեցիր չկպցրե-  
ցիր քո պատին: Ապա շե՛մ ասել քեզ, որ քսան մանեթի դի-  
մաց երկու եզս տարավ, ինձ սոված թողեց: Ի՛նչ է, նրա մոմը  
ոսկի զառով էր, հա՛... է՛, Կանաչ եկեղեցի, դու էլ ես ղալբա-  
ցել,— և հարբած բրուտն սկսում էր հանգցնել քաղաքացի-  
ների մոմերը, գետնովն էր զարկում մոմերը և շարունակում  
էր նախատել սուրբին,— ա՛յ, ասում եմ, դրա վերջը որ շտաս,  
դուող կպատեմ... Դու սո՛ւրբ ես, թե յոթը դուռն հաչող շուն...

20

Այդպես ամեն ինչով տարբեր էին Գորիսն ու Կյորեսը և  
մանավանդ Շենը՝ Կյորեսի միջնաբերդը: Տարբեր էին նրանց  
լեզուն, սովորությունները, տարբեր ազգ էին, և նույնիսկ նրանց  
հավատն ուրիշ էր: Նրանք կողք-կողքի ապրում էին, և նրանց  
միջև կոխվն անպակաս էր, հին կոխվը, ինչպես հին էր ձորը և  
ձորի գետը:

30

2

Ինչպես ձորը և ձորի գետը...

Բայց նույնիսկ ձորի գետը քանդում էր Կյորեսի կողմը,  
որովհետև Գորիսը փռվել էր բարձրադիր տափարակի վրա  
միանման տներով, որոնք բաժանվում էին հավասար քառա-  
կուսիների և ամբողջ քաղաքը նման էր զինվորական ճամբա-

418

րի: Այնտեղ ամեն ինչ այնպես էր, ինչպես քաղաքի Սպիտակ բանտում: Փողոցներն ուղիղ միջանցքներ էին՝ հավասար լայնությամբ, տները միանման կամերներ՝ մեծ ու փոքր, երկուերեք կամ չորս պատուհանով, որոնք պատած էին երկաթե խիտ վանդակով, ինչպես բանտի պատուհանները: Փողոցներում մայթերը նույն շափի էին՝ նույն քարով սալած: Տների առաջ միանման ծառեր էին՝ ուռենի, բալ, ընկուզենի և երբեմն դեղին ակացիա: Յուրաքանչյուր տուն զբաղեցնում էր չորս հարյուր քառակուսի սաժեն, որի անկյունում, փողոցի վրա, տունն էր, մի կամ երկու միանման հարկ,— իսկ մնացածը՝ 10 պարտեզն էր նույն ծառերով, ինչ որ փողոցում՝ ուռենի, բալ, ընկուզենի, խնձոր և երբեմն դեղին ակացիա:

Գորիսն ուներ մի թագավորական ուսումնարան՝ ու ու ս ա ց շ կ ո լ և մի հայոց դպրոց: Ուներ մի բանտ, մի ուսաց ժամ, մի հայոց եկեղեցի, մի բիլիարդանոց, որի պատուհանները փակ էին, որովհետև անտիրական կատունները սիրում էին օթեանել այդ ապահով ներքնահարկում,— մի հյուլանոց երեք սենյակից, մի բաղնիս, որի դուռը ժանգոտել էր իբր թե ներսի գոլորշուց, բայց դռան առաջի խոտերը վկայում էին, որ այլ էր պատճառը. գուցե ճշմարիտ էին նրանք, որոնք իբր թե բաղնիսի ավազանների մեջ տեսել էին կանաչ գորտեր: Քաղաքն ուներ մի ժամագործ՝ Սահաթսազ Սանդրոն, որը նաև ոսկերիչ էր և սրում էր թարաքյամա քոշվորների դաշույնները: Կար մի կանդիտեր, որ սրճատան հետևի մասը դարձրել էր գինետուն, որովհետև Գորիսի բնակիչները սուրճը համարում էին տիկի ն Օ լ ի ն կ ա յ ի խ մ ի շ ք, իսկ տիկին Օլինկան միայն կիրակի օրերն էր սուրճ խմում: Քաղաքն ուներ լիմոնադի մի գործարան, որ հիմնել էին Շոր աղբյուրի կողքին: Երեք տարուց հետո տեղը գործարանը ծախել էր ուրիշին և գնացել Բաքու՝ պատրաստի հագուստեղեն վաճառելու: Քաղաքում պատմում էին, 30 որ նա իր հետ փափուկ փող էր տարել և իբր թե հեռանալուց առաջ նա համբուրել էր Շոր աղբյուրի քարը և ասել էր. «Շեն մնաս, Շոր աղբյուր, իմ հարստությունը դու տվիր»... Քաղաքն ուներ միայն մի գործարան և այն էլ լիմոնադի գործարան՝ առանց ծխնելուլզի, և երջանիկ այդ քաղաքում ուրիշ ոչ մի ծըխնելուլզ չէր մրոտում փիրուլե երկինքը:

Բայց ոչ այդ գործարանը, ոչ հյուրանոցը և ոչ նույնիսկ «Սասուն» տպարանը, որտեղ տպում էին հարսանյաց հրավերներ, գավառային վարչութիւնի բլանկներ և զանազան պուրլիկացիաներ տուրքի, քոշի և զինվորակոչութեան մասին, — ոչ այդ ամենը և նույնիսկ տիկին Օլինկայի Հայ կանանց միութիւնը քաղաք չէին կազմում, Գորիսը չէին, որի միջուկը, այսպես ասած պարունակութիւնն էին վաճառականները և շինուները, դ յ ու բ յ ա ն դ ա Ր Ն Ե Ր Ը և մ Ե Ծ ա մ Ե Ծ Ե Ր Ը, ինչպես կասեր Աթա ապերը: Նրանք էին բուն օտարականները, որոնց դեմ կռուում էր իսկական Կյորեսը և նրա միջնաբերդը՝ հին Շենը:

Ինչքան էլ ձորի գետը քանդեր բուն Կյորեսի կողմը, և Գորիսը բարձրադիր լինելով զերծ մնար, այնուամենայնիվ գետը չէր քանդում կյորեսեցիներին, այլ «պալտոնավոր օտարականները», որոնք հետզհետե դուրս էին մղում Շենը իր հին հողերից և ջրովի խոտհարքներից, փակում էին ճանապարհները և այլևս ոչ Ղաթրինի Աղալու կար, ոչ Պարան-Պարան Ավանես, որ դիմադրեր նրանց, այլ մնացել էր մի խեղճ Գյուրջի Օբի՝ շորերը գզգզված, աղքատ, արքա՝ օրավարձ մշակների, ջրկիրների, այրիների և որբերի, որոնք դեռ մնում էին Կյորեսի միջնաբերդում, իբրև պաշարված զորք, որ սպառել է հացը և վերջին կաթիլ ջուրը և դեռևս մի քանի զինվորներ շարունակում են կրակել՝ իրենց աղաղակներով խլացնելով բերդի մեջ մեռնողների կանչերը:

Գորիսը հաղթել էր: Ու թեև հին կռիվը շարունակվում էր, բայց այդ պաշարվածների հուսահատ դիմադրութիւն էր և ոչ թե հավասարների պատերազմ: Պատահում էր, որ Կյորեսի տղաները գետում լողանալու ժամանակ ընդհարվում էին «բուլկի ուտողների» հետ, մինչև անգամ նրանց ձեռնում էին, քարերով քշում էին դեպի քաղաքը, — բայց այդ մանկական խաղ էր, ինչպես արդեն խաղ էր և այն, երբ Կյորեսի հարբած ուխտավորները ծաղրով և անհագին գոռում-գոչլունով Կանաչ եկեղեցու ուխտից քշում էին Կիզիկով Իսակին՝ հանդերձ ընտանյոք, նավթավաճառ Գեորգուն, Սփրատ Սրեմին, Ավագիմով եղբայրներին, և մինչև անգամ քշում էին Ճաղար Մուրովին, որի կուրծքը զարդարված էր մեղալներով:

Կյորեսը մեռնում էր, ինչպես մեռնում էր Խուռուփի ձորի վերջին կաղնին... Ամեն տարի մի ճյուղ շորանում էր, անձրևները մերկացնում էին անտառի հողը, և հողի խորքից հետքճհտե ցցվում էին տձև ժայռեր՝ սապատավոր և ահռելի:

Տեսնելով վերջին կաղնին, ոչ ոք չէր ասի, որ երբեմն Շհարի Տախտը, որտեղ քաղաքն էր, և նաև Տախտի հարևան ձորերը պատած են եղել խիտ անտառով, որից մնացել է միայն մի կաղնի Խուռուփի ձորում: Այդպես էլ ոչ ոք չէր ասի, թե երբեմն Կյորեսը, նրա միջնաբերդը՝ Շենը իր թաղերով եղել է աղմկոտ փեթակ, և այնտեղ, ուր միայնակ խոխոջում է Ղաթրիների աղբյուրը, մի ահագին գյուղ կար քարանձավների մեջ, քերծերի գլխին... Որ Սալ կամուրջը, որից մնացել է միայն մի կամար,— եղել է ժողովուրդների կամուրջ, քարավանների կամուրջ, և անհամար բազմություններ են անցել այդ կամուրջով, ինչպես հետո անցնում էին թագավորական ճանապարհով:

Հետզհետե ամայանում էր Կյորեսը: Անդունդն էր սուզվում հողագործների ազգը: Ով մեռնում էր, առանց բարձրացնելու այն քարը, որ ընկնում էր հին տան պատից, ով ծախում էր վերջին հորթը պարտքի դիմաց և կամ գերի էր գրվում մի վաճառականի կամ գլուխը փեշի տակ գնում էր օտարություն՝ Բաքու և Անդրկասպյան երկիր, մինչև Քերքի, մինչև Բուխար և ավելի հեռուններն էր գնում քարանձավում ծնված կյորեսեցիներ: Այսպես «օտարականները» բնիկներին մղում էին օտար երկրներ, և իզուր էր Գյուրջի Օբին սպառնում, թե մի օր նրանք գերությունից ետ կգան և բուլվարի ծառերից մեկ-մեկ կկախեն «պալտոնավորներին»:

Այդ սպառնալիքը վաճառականներին միայն զվարճություն էր պատճառում, և երբեմն Բաղիրին Չանթա-Ռեխ Գալուստը՝ ճոթի մաղազայի տեր, մի շիշ օղի էր խոստանում Գյուրջի Օբուն, եթե նա խանութի առաջ կանգներ և երգեր «Գորիսի գովքը»,— մի երգ, որ կապել էր Նիազանց Անդրին և որով ծաղրում էին Գորիսի վաճառականներին և շինովնիկներին՝ ո՛րի ազահությունը, ո՛րի պարտք ուրանալը, ո՛րի կաշառակերությունը և ո՛րի ընտանեկան կեղտը...

Հատ ու կենտ կյորեսեցիներ էին մնացել, որոնք հավատում էին, թե Գորիսի վերջն էլ կգա. բայց թե ի՞նչ վերջ կլի-

ներ այդ,— նրանք չգիտեին: Միայն Աթա ապերը, մի հարգե-  
վոր ծերունի, իբրև տեսիլք նկարագրում էր այն ժամանակը,  
երբ բազարի տեղն ինքը կամ մի ուրիշ կյորեսեցի վար կանի,  
պրիստավ վասիլի տներից վեր նորից խոտհարքներ կդառնան,  
և Կանաչ աղբյուրը, որի ակը խցկել են Սպիտակ բանտի  
տակ,— նորից կհորդա: Այդպես էր ասում Աթա ապերը՝ ծոր  
տալով և երգելով, ինչպես երգելով խոսում էին հին կյորեսեցիք:  
Բայց ո՞վ պիտի բացեր Կանաչ աղբյուրի ակը և ինչպես պիտի  
բացեին,— Աթա ապերը չէր ասում, այլ միայն պատմում էր  
10 այն օրերի մասին, երբ ինքը հոտաղ սողա էր և եզները պա-  
հում էր այնտեղ, ուր հիմա Սպիտակ բանտն է... Պատմում էր  
Սալ կամուրջի և կորած ճանապարհների մասին և պատահում  
էր, որ նրան լսելով մեկը մոռանում էր առօրյայի հոգսը:

Իսկ Կյորեսն այնուամենայնիվ մեռնում էր: Մի կողմից  
գետն էր քանդում գետափի պարտեզները, երբեմն փլվում էին  
քերձերը՝ ծածկելով լանջերի փոքրիկ արտերը. հողը հողագոր-  
ծի ձեռքից գնում էր, և այդ անխուսափելի էր, ինչպես մահը,  
ինչպես արևի մայրամուտը... Բայց նրան ամենից ավելի մա-  
շում էր Գորիսը՝ վաճառականների և մեծամեծների քաղաքը,  
20 որի մոտ Կյորեսը՝ ինչպես մի բուռ ձյուն խարույկի մոտ:

Մի անգամ Կյորեսում եղավ մի գեպաք, որից հետո նույն-  
իսկ Գյուրջի Օբին այլևս չերևաց քաղաքի հրապարակում, և  
այնպիսի ահ պատեց Կյորեսին, ինչպես՝ եթե հանկարծ պայ-  
թեր կաստի խուժը:

Խաչի անունով մի մարդ՝ բուն Կյորեսից,— որին անվա-  
նում էին Մմակի Խաչի, որովհետև տարին բոլոր նա շրջում էր  
անտառներում և վալրի ձորերում և այնքան էր մեծակ շրջել,  
որ ասում էին, թե Մմակի Խաչին խոսել չգիտե, այլ մոռնում է  
գազանի նման,— Մմակի Խաչին աղվեսի, կզաքիսի և լիսեմ-  
30 նի մորթիների մի շալակ տանում է Միրումովների մաղազան:  
Շատ վաղ ժամանակ Մմակի Խաչին նրանցից պարտք էր առել  
տասնմեկ մանիթ: Եվ այդ ժամանակից տարին երկու անգամ՝  
գարնանը և խոր աշունքին, Մմակի Խաչին երկու շալակ մորթի  
էր բերում:

— Նրա՛ վիզը կմաշի, բայց Միրումովների դրած լուծը չի մաշի,— ափսոսում էին կյորեսացիք, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր լուծը և իր մաշվող վիզը:

Մմակի խաչին մտածում է, որ այս անգամ կազատվի պարտքից, որովհետև մորթիների մեջ կային երկու աղվեսի արծաթափայլ մորթի, որ հազվագյուտ է: Միրումովների մաղազայում նրան ասում են, որ պարտքից դեռևս մնում է քառասունչորս մանեթ և երեք աբասի:

— Երեք աբասին էլ քո գլխին մատաղ,— և Միրումով Կյուբին, որին անվանում էին Կույր գայլ, համրիչը դնում է տեղը: 10

Ասում են Մմակի խաչին գոռացել է, ինչպես՝ եթե վրան կրակ թափեին: Եվ փախել է առանց ետ նայելու...

Երեք օր փնտրել են նրան: Փնտրել են որսորդ ընկերները, փնտրել են եզնարածները, մինչև անգամ տանուտերին են հայտնում, երբ մի օր մի հորթարած լուր է բերում, թե կաչին քերծի տակ երևում է մի դիակ: Գնում և քերծի գլխից ճանաչում են Մմակի խաչու դիակը: Չորն այնքան խորն է և անառիկ, որ հնար չի վիճում իջնել՝ ոչ պարանով և ոչ այլ կերպ: Եվ վերևից հող են թափում դիակի վրա: 20

Այդ օրերին ջրաղացպանը պատմել է, որ ինքը գիշերով կաչին քերծի կողմից լսել է մի ամեհհի գոռոց:

— Քանդվե՛ս դու, Գորիս,— լսել է ջրաղացպանը:

Այդ դեպքից հետո Գյուրջի Օբին այլևս չերևաց քաղաքի հրապարակում, և այնպիսի ահ պատեց Կյորեսին, ինչպես՝ եթե հանկարծ պայթեր Լաստի խուժը:

### 3

Գորիս քաղաքի միջուկը, այսպես ասած պարունակությունը կազմում էին վաճառականները և պետական պաշտոնյաները՝ դյուբյանդարները և մեծամեծները,— ինչպես նրանց անվանում էր Աթա ապերը: Այդ մի ամբողջ բանակ էր, որ իր քարաշեն զորանոցները կառուցել էր գետահովտում և Շհարի Տախտից ոմբակոծում էր մինչև խուլ գյուղերը՝ անտառների խորքում, բարձր լեռների լանջին և այնպիսի խոր ձորերում, 423

որի բնակիչներն իրենց գյուղի ճանապարհի մասին այսպես էին ասում.

— Մեր շենի ճանապարհը կարգին ճանապարհ է... մինչև անգամ բեռնած էշն էլ կանցնի:

Գորիսը կենտրոն էր՝ վարչական, ռազմական և տնտեսական կենտրոն մի լայնածավալ գավառի, որ ամենաընդարձակըն էր Անդրկովկասում և տարածվում էր Սևանա լճի հարավային լեռներից մինչև Արաքս: Լեռնաշղթաներով և խոր ձորերով կտրտված այդ աշխարհում ապրում էին այլացեղ և այլադավան ժողովուրդներ՝ նստակյաց և վաչկատուն, խաշնարած և հողագործ և այնպիսի ժողովուրդ, որ ոչ հողագործ էր և ոչ խաշնարած, այլ անտառաբնակ էր, և ոչ ոք նրանց մասին ստույգ բան չգիտեր, և նույնիսկ ասում էին, որ նրանք առանձին ազգ են՝ ա յ ր ու մ են և երկրպագում են բարձր ծառերի և իրր թե մութ ծմակներում նրանք շրջում են առանց զգեստի:

Այդ ընդարձակ գավառը՝ Զանգեզուրը լեռնաշղթաներով և խոր ձորերով բաժանված էր բազմաթիվ մահալների: Իրենք՝ մահալները բաժանվում էին իրարից անշատ մանր գյուղախմբերի և հաճախ կարելի էր լսել այսպիսի խոսք.

— Մինչ սարի սեռը մեր երկիրն է, էն երեսը Աղվանու երկիրն է:— Նույն գյուղացիներն իրենց գյուղին «հայրենիք» կամ «երկիր» էին ասում, հարևան գյուղին՝ «օտար երկիր» կամ «ղարիք տեղ»:

Շհարի Տախտի բնակիչները գրավել էին այդ ամեն «երկիրները»,— ինչպես մի իրական պետություն զենքի ուժով գրավում է իսկական երկրներ: Մահալները և գյուղերը՝ մինչև վերջին բնակավայրը, որ նույնիսկ գյուղ չէր հաշվում, այլ ձմեռանոց, — այդ ամբողջ երկրներն իրար մեջ բաժանել էին

30 Գորիսի վաճառականները և շինովնիկ մեծամեծերը: Բաժանել էին կովով, և ուժեղին բաժին էր ընկել ամենից հարուստ մահալը: Այսպես՝ Միրումովները հնուց անտի տիրում էին Մինքենդի բոլոր գյուղերին, — այն լեռնային մահալները, որոնք այժմ կազմում են Քյուրդիստանի հյուսիսային մասը: Բայանդուրից մինչև Շոթանան սեփական ժառանգությունն էր

Բաղիրովների առևտրական տան: Միսիանի մի մասը՝ Որոտան գետից ձախ, տիրում էին Տրանգուլովները: Զորերը՝ Ավագիմովների միահեծան թագավորութունն էր, Կյորեսը և քաղաքամերձ շորս գյուղ բաժանված էին առևտրական երկու տների միջև: Յուրաքանչյուր առևտրական տուն իր մահալի գյուղերում ուներ մանր ու մեծ խանութներ և ահագին թվով մանր վաճառականներ, որոնք խանութ չունեին, այլ ձիերի վրա, երբեմն սեփական մեջքի վրա այդ խանութների ապրանքը բարձրացնում էին մինչև լեռան ծերպը, եթե այնտեղ ծխում էր մի օջախ

10

Նրանք ոչ միայն վաճառում էին շիլեյ, մահուղվարի, Իրանի դադաք, փոնձա, շալ, շաքար, նալ ու մեխ, սաղսի, նավթ, սաղրի քոշ և այլ այսպիսի ապրանքներ, որ քարավաններով ստանում էին Թավրիզից, Շուշուց (ռուսական մանուֆակտուրան՝ Պրոխորովի, Կրատնիկովի, Վիտովի, Յինդելի և ուրիշ ֆիրմաների մեծաքանակ պահեստները Անդրկովկասի հարավի և Հյուսիսային Իրանի համար կենտրոնացված էին Շուշի շահաստան քաղաքում), — ստանում էին Բաքվից և մինչև անգամ Տրապիզոնից էին ստանում, — նրանք ոչ միայն վաճառում էին, այլ յուրաքանչյուր առևտրական տուն իր մահալում մենաշնորհ իրավունքով գնում էր բուրդ, ցորեն, անասուն, յուղ, պանիր, հավաքում էր գորգեր՝ թիրմահի, եան, խորասան, մարդաշենք, պատնոց, — կարպետներ՝ դարախլու, շղթաշղթա և առանց զարդի, — նրանք հավաքում էին պղնձե ամաններ՝ կուժ, կուլա, ջամ, մարթաք, սինի, բադիա, կաթսա, — ինչ որ ձեռք ընկներ և հալելով՝ իբրև կարմիր պղինձ, ուղտերի նույն քարավանով ուղարկում էին Թավրիզ, Խորասան և Ծղզան շահար:

20

Այդ առևտրական տները նաև յուրատեսակ բանկեր էին: Նրանց ձեռքում էր դրամը. նրանք վաշխ էին առնում՝ մանեթին երեսուն, քառասուն և ավելի: Միրումով Կյուբին, որին անվանում էին Կուլր գայլ, իր որդիներին սիրում էր ասել պապից լսած խոսքը.

30

— Որտեղից լացի ձայն լսես, ներս մտիր. կամ մարդ է մեռել, կամ սոված են, կամ տան տիրոջ ձեռքը նեղ տեղն է:

Տո՛ւր, պարտք տուր, շա՛րմեխիր, էնպես մեխիր, որ հուր հա-  
վիտյան դռանդ կլանչի:

Եվ մեխում էին, շղթայում էին ծանր շղթաներով, և որոնք  
սարերում ազատ վրնջացել էին, նրանք դառնում էին բեռան  
ձի: Հետզհետե ուռչում էին ս ա ն ա դ ի դ ա վ թ ա Ր ն երը և  
դ ա բ զ ի մ յ ու շ Ր ի ն երը, այն փոքրիկ սնդուկները, որոնց  
մեջ հազար մուրհակ և հազար անուն կար:

Պատմում են, որ Ֆրանգուլով Բադալ ապերը մի անգամ  
նստած, բաց ու խուփ էր անում աջ բուռը:

10

— Ապեր, էդ ի՞նչ ես անում,— հարցնում է որդին:

— Ա՛յ որդի, նայում եմ բոխ և փառք եմ տալիս աստ-  
ծուն, թե էս ահագին մահալը ո՞նց եմ պահում բոխ մեջ...

Զամբա Սատուրը՝ հուշակավոր վաշխառուն, երբ բաց էր  
անում մյուշրին, մուրհակների դարսը զսպանակի նման վեր  
էր թռչում:

— Կարդա՛, — ասում էր որդուն: Եվ որդին առնում էր  
առաջին մուրհակը.

— Վեր առիմ և պարտ եմ քառասունվեց մանեթ... էյվազ  
եղըր օղլի...

20

— Էդ չի,— ընդհատում էր հայրը:

— Վեր առիմ... Հիսուն մին մանեթ... Գիշունց Տանիել...

— Է՛դ չի...

— Վեր առիմ... Մեհտի Ղուլի Իմամվերդի:

— Թիվը քանի՞ է,— հարցնում էր Զամբա Սատուրը:

— Հուլիսի 25-ը:

— Էսօր 16-ը չի՞:

— 15-ն է:

— Էդ մեկը հանի... ասում են Մեհտի Ղուլի Իմամվեր-  
դին երկու լավ մատակ ունի,— և այդ մուրհակը հանում էին:

30

— Կարդա՛, — և շարունակում էր ընթերցումն, ինչպես  
միալար ժամերգություն:

Կային այնպիսի առևտրականներ, որոնք իրենց մահալում  
միահեծան տեր էին, բառիս լրիվ իմաստով: Նրանք դատ էին  
անում, եղբայրը եղբորից բաժանում էին, խառնվում էին ա-  
մուսնության գործերի, կալանավորում էին, ծեծում և արյան

գին էին որոշում,— մի խոսքով մասնալուծում խան ու սուլթան էին: Նրանց ձեռքի տակ էին գյուղական գրագիրները, տանուտերերը, և մինչև անգամ պրիստավը լսում էր նրանց,— որովհետև նրանք բոլորը կերակրվում էին խոջայի հարուստ սեղանից:

Առևտրականների շափ, գուցե և ավելի, Գորիսն ուներ բեյեր և պաշտոնյաներ: Կային երեք Ներսես բեյ՝ Հաստ Ներսես բեյ, Խուրդա կամ Կարճիկ Ներսես բեյ և Պրիստավի Ներսես բեյ: Կային Կեվեր բեյ՝ Ճաղար, այսինքն կապուտաշյա և Բալասան Կեվեր բեյ: Կային երկու Զիլֆուղար բեյ՝ հայ և թուրք, որոնց միջև կար միայն մի տարբերություն. տարին երկու անգամ հայ Զիլֆուղար բեյի տունն օրհնում էր տեղի Զավեն քահանան (Տեղ գի բազումը՝ ինչպես նրան անվանում էին), իսկ թուրք Զիլֆուղար բեյի տունն օրհնում էր մուլլա Մուսին: Ուրիշ և ոչ մի տարբերություն չկար երկու Զիլֆուղար բեյերի միջև: Վերջապես կային բեյեր, որոնք մի հատ էին, ինչպես Գորիսում մի հատ էր տիկին Սլինկան, Փոշտի Անտոնը, Եփրատ Երեմը, նավթավաճառ Գեորգին և ուրիշները... Կար մի Ասատուր բեյ, որ ասունաս շէր խաղում, այլ սիրում էր որձ այծի միս, կար Պավլի բեյ որ «Մշակ» թերթի անխափան բաժանորդն էր, կար Վաղարշակ բեյ՝ զար գցող, կար Խանլար բեյ՝ շուն պահող, կար... և այլ ինչպիսի բեյեր չկային երանելի Գորիս քաղաքում:

Այդ բեյերից ոմանք շառավիղն էին ազնվական հին տոհմերի և ունեին կալվածքներ, որոնց հասույթով անկարոտ ապրում էին: Այդպիսին էր, օրինակ, Պավլի բեյ Օրբելյանը, «Մշակ» թերթի հավատարիմ բաժանորդը, որ առանձնացած ապրում էր իր տանը, ինչպես իշխանը դոյակում, հագնվում էր հին տարազով, և ասում էին, թե իբր գավառապետը նրան չի սիրում, որովհետև Պավլի բեյը իր այգում վեճի էր բռնվել ուսա քահանայի հետ և հաստատել էր, թե հայոց կրոնն ավելի հին և ավելի ճշմարիտ է: Այդպիսին էր նաև Համբարձում բեյը, որ երբեմն գյուղ էր գնում՝ տաքացրած թան ուտելու իր ազգի տանը: Այդ ժամանակ նրա շուրջն էին հավաքվում ազգական ծերունիները, և մունդիրը հանելով Համբարձում բեյը ննջում էր բարձերի վրա, իսկ ծերունիները շարունակում էին պատմել վաղի ժամանակներից:

Կային այդպիսի բեյեր՝ հին տոհմերից, բայց բեյերի մեծ ժառը կեղծ ազնվականներ էին, որոնց հայրերը 1851 թվի բեկական հանձնաժողովին (бекская комиссия) ներկայացրել էին ինչ-որ թղթեր իրենց ծագման մասին՝ Տաթևի վանքից, խանի ժամանակներից, և նույնիսկ գնդապետ Սարովինի ձիապան հուղին հաշողացրել էր բեյի կոչում ստանալ և վերադարձել էր իբրև հուղաբախշի բեյ: Բեյերի մի մասն այդպես էր ձեռք բերել կոչումը, իսկ մյուսները նախկին տանուտերերի, գրագիրների և հարուստ հողատերերի որդիներ էին, որոնք պետական ծառայության մտնելով, կոչվել էին բեյ. մի սովորություն, որ մնացել էր պարսկական տիրապետության ժամանակից:

Առևտրականների նման բեյերը ևս ունեին իրենց ազդեցության մահալները և գյուղերը: Ոմանք այդ ազդեցությունն ունեին ի ծնե, որովհետև այդ գյուղերի ջրարբի հողերը նրանց հայրական սեփականությունն էր: Ոմանք այդ ազդեցությունը ձեռք էին բերել «քրտինքով», և մի անգամ ձեռք բերածն արդեն անքակտելի էր:

Բեյերի բույլը բոռերի նման վխտում էր գավառային վարչության դիվանում (դ ա վ թ ա ռ խ ա ն ա), գինվորական և հաշտարար ատյաններում (ս ու դ ա ռ ա ն), հարկային տեսչության մեջ,— վխտում էին՝ աղմկելով սապոզների պղնձե խթաններով, ոմանք թրերով, ոմանք ճռոպցնելով սապոզները: Ընդարձակ սենյակներում գործավար, սեղանապետ և քարտուղար բեյերի խմբերը մինչև ճաշ հնչեցնում էին իրենց ձայները՝ թավ, երբ Համզա բեյ Մահմուդբեկովը պատմում էր մի «անառակ» անեկզոտ, խապոտ, երբ Հաստ Ներսես բեյը վերջացնում էր ռապորտի պատճենը և մեջքը հենելով աթոռին, ասում էր. «Դա՛-աս...», երեկ լավ ժամանակ անցկացրինք... и не скучала душа моя...»: Իսկ մի հեռու սենյակից լսվում էր աղվեսահաշարագ-արագ և սուր ձայնով, ինչպես հաշում է տնային շնիկը կատվի վրա, որ նայում է պատի գլխից և բեղը չի շարժում: Ծվ բոլորն էլ ճանաչում էին ավագ գրագիր Նազար բեյի ձայնը և առանց տեսնելու գիտեին, որ նա բարկացել է շինականի վրա...

Գորիսը կենտրոնն էր Զանգեզուրի ընդարձակ գավառի, որտեղ ապրում էին այլացեղ և այլադավան բազմաթիվ ժողովուրդներ: Բայց այդ կենտրոնն ուներ իր կենտրոնը, այսպես սասած քաղաքի միջուկը և այդ՝ Գորիսի շուկան էր:

Գորիսի շուկան...

Ո՞ր ծայրից սկսել և ո՞ր ճանապարհով մտնել շուկա, որովհետև յոթ ճանապարհ էր մտնում՝ շուկան՝ յոթ միանման և լայն փողոցներ, որոնցով մտնում և դուրս էին գնում ահագին քարավաններ, բեռներ, մալաղանի ֆուրգոններ, **10** խաշենի սայլեր և մարդիկ՝ հազար, տասը հազար մարդ, — մանավանդ ամառը, երբ Սալյանից, Մուղանից, Լենքորանից հազար-հազար քոչվոր բարձրանում էր Զանգեզուրի ամառային արոտները, — և ամբողջ ամառը նրանք առնում և ծախում էին Գորիսի շուկայում:

Ո՞ր ճանապարհով մտնել շուկա և ո՞ր ծայրից սկսել... Մտնել լեռա՞ն ճանապարհով, որտեղ բերում էին պանրի և յուղի բեռներ, բուրդ, հազարավոր ձիեր, ոչխարներ, — և այդ ամենն այնպիսի աղմուկով, որ մինչև անգամ շներն իրար էին խառնվում, և հենց քաղաքային ինքնավարութայան առաջ բարձր գոտոցով թեմիր-միակյանլու մի շոբան ժխորի մեջ կանչում էր իր շանը՝ «Ալաբաշ հե՛յ, Ալաբաշ, Ալաբաշ...», կանչում էր այնքան բարձր, որ քաղաքագլուխ Մաթևոս բեյը դուրս էր գալիս քաղաքային դռում այի պատշգամբը, որպեսզի հանցավորին պատժի, բայց հանցավոր չէր գտնում, այլ զըտնում էր անասունների հեղեղ, որ սարերից տրաքված մտնում էր քաղաք:

Արդյոք սկսե՞լ հարավից, որտեղից շուկա էին բերում ձր-մերուկի և սեխի սարեր, Բարկուշատի բրինձ, Օրդուբադի չիր, **30** թուզ և ուրիշ ինչ մրգեր չէին բերում, ուղտերի մեջքին, զրընգ-հա-զրընգ՝ զանգեղով, բոժոժներով և փնջերով զարդարված ուղտերի մեջքին: Բայց առաջին քարավաններն արդեն վայր են դրել բեռները, ուղտերը նստել են և փակել են ճանապարհը: Ուղտերը տ ո ռ ն գ ու մ են, և մի ուղտապան կեռզլուխ մահակով խփում է նստած ուղտին, կատաղած խփում է, և ուղտը կեռ ու

մեռ ուրում է վիզը և, հեռվից այնպես է երևում, թե մի վիթ-  
խարի օձ գալարվում է բեռների արանքում... Արդեն այնտեղ է  
քաղաքային ոստիկան գա ր ա դ ա բ ու լ դ ի Մուխանը՝ որին  
հրամայված է կարգ պահել հրապարակի այդ մասում և բաց  
պահել ճանապարհը: Բայց Մուխանը տեսել է Օրդուբադի շիրի  
և թուզի բեռները, լցնում է գրպանները և նույնիսկ գլխարկի  
մեջ է լցնում:

Ո՞ր ճանապարհով մտնել այդ հարուստ շուկան...

10 Լավ է շուկա մտնենք ոչ լեռներից իջնող ճանապարհով, ոչ  
հարավի և ոչ թագավորական ճանապարհով, որով Շուշի  
քաղաքից բերում էին շաքար, մանուֆակտուրա և երկաթեղեն:  
Մենք շուկա մտնենք Կյորեսի ճանապարհով, — այն հին ճանա-  
պարհով, որով Գորիս էին մտնում ձորերի մեջ կորած գյուղե-  
րից՝ ցաքուտեցիք, մեզարցիները, նորուեցիք, ձորկեցիները և  
ուրիշները:

Գետից այն կողմ ճանապարհը բարձրանում է ջրաղաց-  
ների կողքով: Այստեղ դեռևս հին Կյորեսի հետքերն են... Ահա  
կանաչ ընկուզենու տակ ննջում է ալրոտ ջրաղացպանը: Ծառից  
կապած երկու էջ գլուխ-գլխի կանգնել են, կարծես խոր մտքի  
20 են և այնքան են խորասուզված, որ շեն զգում ճանճերի խայ-  
թոցը: Այստեղ դեռևս հին Կյորեսն է... Ծանապարհին ընկած է  
մի կոտրած նալ, այստեղ-այնտեղ թափված են խուրձերից  
վայր ընկած հասկեր: Շենից մի աղքատ կին ջրաղացի առաջ  
փռել է վերջին պարկ ցորենը, այն ցորենը, որին ջրաղացպանն  
անվանում է հավի կուտ...

Արդեն հետ մնաց վերջին ջրաղացը այն իմաստուն ջրա-  
ղացպանով, որ հազար հեքիաթ գիտեր: Նա իր կյանքը անց էր  
կացրել այդ ձորում և ձորի ջրաղացում: Գիշեր մինչև լույս  
ջրաղացը բանում էր, իսկ ջրաղացպանը եթե չէր ննջում, — ջրա-  
ղացի դռանը նստած կամ օջախի մոտ՝ պատմում էր իր հե-  
քիաթներից մեկը, — պատմում էր հայերեն և թուրքերեն, որով-  
30 հետև նրա ջրաղացն աղուն էին բերում և՛ հայերը, և՛ թուրքե-  
րը: Նա հնագույն կյորեսեցի էր և նրա ասելով Ղաթրինի Աղա-  
լոյի մահից հետո Կյորեսում ապրելը հարամ էր: Նրա կար-  
ծիքով առհասարակ մարդ-օլանը քանի գնում ժեռա-  
նում էր, այսինքն փոքրանում և վայրենանում էր... Մարդ՝ ա-

ուղղակ մարդն էր, ոսկորը հաստ և գորեղ: Մարդ էր Ղաթրինի Աղալուն, մարդ էր Յուլ Օհանը, որի ձայնից Դրնգանի ձորում գազանները թաքնվում էին: Եվ նա պատմում էր Յուլաքարի և Յուլ Օհանի մասին, որ և մենք կպատմենք, լսած լինելով ջրաղացպանից, — որովհետև՝ այդ վերջին ջրաղացից մինչև քաղաք ուրիշ նշանավոր բան չկա և երկրորդ՝ մի անգամ լսած լինելով այդ պատմությունը, չի կարելի չվերհիշել, — երբ դեպք է լինում անցնել Կյորեսի վերջին ջրաղացի կողքով:

Վաղ ժամանակ Շենում՝ հին Կյորեսում ապրել է մի մարդ, անունն Օհան: Այն ժամանակ Շենն այժմվա ձորերում չէր, այլ 10  
ավելի հյուսիս, այնտեղ, ուր ձորի մեջ երևում է մի կտորած վանք, որի ճակատաքարին դեռևս կարդացվում է. «Թիւ ՌԺԴ ...ես Մելիք էգան կառուցի]...»: Այդ ձորի գյուղում ապրել է Օհանը, որ կոչվել է Յուլ, նախ որ նրա ձայնից Դրնգանի ձորում գազանները թաքնվում էին և ապա նույնիսկ երեցկիներ նրանից հանգիստ չունեի: Եվ մի պատարագի երեցին հայտնում են, որ Յուլ Օհանը քշել է վերի թաղի կողմը: Քահանան շուրջառն ուսին, ինչպես պատարագում էր, թռչում է դեպի տուն և ձեռքն աղնելով բահի կոթը՝ վազում է: Նրա ետևից վազում են վերի թաղի մարդիկ, որոնց կանանց նույնպես շար- 20  
շարել էր Յուլ Օհանը: Քահանայի տնից նրանց դեմ է դուրս գալիս Յուլ Օհանը, գրկի մեջ երեցկիներ, որի կիսամերկ մեջքը դեպի քահանան էր: Այդ տեսնելով, երեցը բացականչում է. «Յուլ Օհանի բահի կոթն իմից գորեղ է, ժողովուրդ, և քանի այդպես լինի, աշխարհում շատ մարդու կին իմ կնոջ նման կնստի...»: Երեցը շուրջառը գետնին է գցում, հեռանում է գյուղից: Այլևս նրան չեն տեսնում: Իսկ Յուլ Օհանն ապրում է շատ տարիներ, և այդ տարիներում, երբ դղրդար նրա ձայնը, կանայք անհանգստանում էին՝ նույնիսկ իրենց ամուսինների գրկում:

Նրան միայն ծերությունը հաղթեց: Բայց նույնիսկ օր ծերության, երբ աչքերը պարզ չէին տեսնում և քայլելու ուժ չուներ, Յուլ Օհանը չէր մոռանում կանանց: Իրենց տան առաջ նա ցցել էր մի քար, աղբյուրի ճիշտ դեմը: Երբ կանայք աղբյուրն էին գալիս կամ աղբյուրի ջրում լվանում էին ցորեն, բուրդ, Յուլ Օհանը պառավ գայլի նման քարանձավից դուրս էր գա-

լիս և քարի գլխից նայում էր աղբյուրի կանանց, որոնք բարձրացնում էին կուժը և օրորվելով գնում, ոտքերը մերկ մտնում էին ջուրը և թևերը քաշած ցորեն էին լվանում: Ասում են քարի գլխից Ցուլ Օհանը տեսնելով աղբյուրի կանանց, հիշում էր նրանց մայրերին և ոմանց անունը շնչում էր\*:

Ահա ետ մնաց և վերջին ջրաղացը, նրա հետ և այն ամենը, ինչ մնացել է Ղաթրինի Աղալոյի և ավելի վաղ ժամանակներից: Այստեղից սկսվում է քաղաքը: Առաջինը՝ հենց քարափի գլխին, նավթի պահեստն է: Չորս-հինգ գյուղացի երեխաներ, շները մատններից կախած կանգնել են: Նրանք մի քանի անգամ համրել են իրենց սև փողը, ստուգել են խցանը՝ կարտոֆիլից կամ մասուրի փայտից, — բայց դարձյալ սպասում են, որովհետև նավթավաճառ Գեորգին նարդի է խաղում Բալասան Կեներ բեյի հետ.

— Սե-բիր Սիրիրստան, Գեորգի Մինայիչ... Ջա՛ն, դուբարա, քարերը թուփ արա:

Իսկ նավթավաճառը միայն կրկնում է.

— Ջառ, քեզ տեսնեմ, գառ,— և զառերը «դուշեշ» շեն բերում: Երեխաներն սպասում են և դեռ կսպասեն այնքան, մինչև խաղից կշտանա Բալասան Կեներ բեյը, և կամ երևա մի հաճախորդ, որ նավթ է գնելու բեղոնով...

Նավթի պահեստից մինչև Նազար բեյի տունը հին շուկան է, շուկայի այն մասը, որ վաղ ժամանակ միակ շուկան էր, բայց արդեն դարձել էր իսկական շուկայի արհամարհված ծայրը, որտեղ առևտուր անելը հավասար էր կտոր ընկնելուն: Հին շուկայում մեծ մասամբ բնիկ կյորեսեցիներ էին, որոնց Գորիս քաղաքի իսկական շուկան քշում էր դեպի Շենը և վաղ թե ուշ նրանք պետք է կամ օտարութուն գնային, կամ ետ վերադառնային հայրենի տունը ձորերի մեջ: Ներկարարներ, համետ կարողներ, սաղրի շմուշկի վարպետներ, հնակարկատներ, դարբիններ, որոնք զոդում էին խոփը, բայց անիվ չէին կապում, ո-

\* Ղաթրինի ձորից հյուսիս, երրորդ ձորում, որտեղ մնում են անհայտ գյուղի քարայրները և կոտրած վանքը, դեռ մնում է Ցուլ Օհանի ցից քարը, որին անվանում են Ցուլաքար: Մի ժամանակ շրիքը կանայք ուխտ էին գնում, և ինչպես ոմանք վկայել են, Ցուլաքարը գեռ զորավոր էր, ինչպես ինքը՝ առատպետեղան Ցուլ Օհանը:

րովհետեւ շինականները՝ ցաքուտեցիք, մեղարցիները, նորուեցիք  
և ձորկեցիները սալ շունեին,— փափախ կարողներ, որոնք  
փափախ էին կարում աչ թե բուխարայի, այլ գառան հասա-  
րակ մորթուց («մոթալ փափախ»), եզան, էշի, ձիու և շորու  
պայտարներ, որոնք գիտեին ձիու մաշված նալը հարմարեցնել  
էշի մանր ոտքին,— երկու վարսավիր՝ Գալլաք Բոզին և Քթեան  
Ասրին, որոնք մանգաղի նման ածելիներով թրաշում էին շի-  
նականներին, տզրուկ էին պահում և աշնանը՝ կալի ժամանակ  
իբրև մուրացկաններ շրջում էին տնե-տուն, հավաքելով ամբողջ  
տարվա վարձը,— և այլ այսպիսի վարպետներ զարդարում էին 10  
հին շուկան: Միակ ճոթավաճառը Մանգասար դային էր...  
Նրա խանութի նման երկրորդը չկար ամբողջ Գորիսում, և կար-  
ծես Մանգասար դային խանութն այդպես պահել էր, որպեսզի  
ցույց տա, թե ինչպես էին ճոթի խանութները Աղա Մամմադ  
խանի ժամանակ: Կամարակապ թ ա ղ բ ա ն ղ ի հատակը ծած-  
կըված էր գորգերով: Գունագեղ կտորները դարսված էին իրար  
վրա՝ մինչև առաստաղը: Ենքը՝ Մանգասար դային, նստում էր  
գորգի վրա՝ մի ծուկնը ցցած... Գալիս էր մի մ ու շ տ ա ր ի,  
նստում էր նրա կողքին, և նրանք զրուցում էին: Ապա մուշ-  
տարին հարցնում էր զ ա ն ա վ ու զ արխալուղացուի գինը: 20  
Մանգասար դային չէր շտապում.

— Կտամ է՛, կտամ տանես... Վերջին թոփն է, տար հագի:  
Մանգասար դային որ մեռնի, էլ պրծավ զանավուղը, թռա՛վ  
թիրմահին,— և զրույցը շարունակում էին:

Այդ հին շուկայում կային և մի քանի խանութներ, որոնք  
ցուցանակ ունեին, ինչպես իսկական շուկայի խանութները,  
բայց ներսը դարակները դատարկ էին, եթե չհաշվենք ճրագի  
յ ո թ ա ն ո ց ապակիները՝ ծղոտների մեջ, զ ա զ ա ն ի ս ա -  
պ ո ն, մի ձրկու կապ պարան և այդ ամենը թանձր փոշու մեջ,  
որ նշան էր, թե այդ ապրանքներին վաղուց ձեռք չէին տվել: 30  
Բայց խանութները ցուցանակ ունեին. նրանցից մեկի վրա ու-  
սերեն գրված էր՝ «Մ ա ն ր ու զ ի խ ա ն ու թ թ ե յ շ ա ք ար  
Ա կ ո բ Ա պ ի ն ց ե» և ինքը՝ Ափունց Ակու ամին առավոտ  
կանուխ խանութը բաց էր անում, ինչպես մյուսները, բարի  
լույս էր տալիս հարևաններին և անցնում դ ա խ լ ի գլուխը,  
ինչպես մյուս խանութպանները:

Ափունց Ակու ամին վաղուց էր մոռացել ղազանի սապոնի և ճրագի յոթանոց ապակիների առքի գինը: Նա ապրում էր այն նամակներով և ծանրոցներով, որ օտարութեան տեղից հայրենիք էին ուղարկում ձորկեցիները: Յուրաքանչյուր փոստի Ակու ամին իր դրացուն խնդրում էր «աչքը խանութի վրա պահել», ինչպես առաջ, երբ Ակու ամին գնում էր խոշա Բաղիրի մաղազայում մազանդա իմանալու... Ակու ամին գնում էր փոստը և ստանում նամակների և դրամական ծանուցազրերի մի կապ, ապա վերադառնում էր խանութը և աչքի էր անցկացնում հասցեները.— «Գորիս քաղաք մանրուքի խանութ Ակոր Ապինցակին» ուսերեն և տակը՝ ծրարի վրա, հայերեն՝ «Ակու դայի նամակս շուտ հասացնես մեր գյուղը իմ հայր Առաքել Գիշունցին» («Երևի խեղճի ականջով դիպել է Առաքելի մեռնելը»,— ասում էր Ակու ամին, վերցնելով մի ուրիշ ծրար): «Նամակս հասնի ի ձեռն Վարդազարի Տերակուփին ի գյուղն Զորեկ» («Երեկ հենց Վարդազարն էստեղ էր...»): «Շատ բարևս կհիշեմ քեզ Ակու ամի» և ուրիշ ոչինչ,— բայց Ակու ամին ձեռագրից ճանաչում էր, որ գրողը որբեակյրի Հերիքնազի փոքր տղան է:

**20** Ակու ամին ստանում էր նամակները, դրամը, ծանրոցները: Զորկեցիները գալիս էին և առնում իրենց նամակները, դրամը և ծանրոցները: Ակու ամին գիտեր, թե որ ձորկեցին է գրագետ: Եվ նամակների մեծ մասն հենց այդտեղ էլ կարդում էր Ակու ամին միալար ձայնով և միայն, երբ դժբախտ լուր էր, նա ցամաք հազում էր և ականոցների վրայից նայելով նամակատիրոջ գունաթափ երեսին, կարդում էր. «որ իմանաս ապեր մեր Անդրեասի աջ կուռը մնաց շարխի տակ, և նա լազարեթում պառկած է...»:

— էս լավ է, որ լազարեթում պառկած է,— ընդհատում էր Ակու ամին,— ուրեմն փորձանքն անցել է, որ լազարեթում պառկած է,— և շարունակում էր ընթերցել. «Շատ բարև մեծ քեռականոջ, Ավանին և երեխաներին և շատ բարևս նմանապես Ավետիսին, Ոսկանին և Ասար բիբուն ասա Կաքավ աղբյուրը դեռ միտս է և նաև բարի կամեցողաց...»:

— Զա՛ն որդի,— ասում էր նամակատերը, անհայտ է նրա՞ համար, որ տղան դեռևս կարոտում է գյուղի Կաքավ աղ-

բյուրը, թե՛ նրա՝ որ Վճեր Անդրեասի աչ կուռը մնաց շարխի տակ...»:

Ափունց Ակու ամին ստանում էր ձորկեցիների նամակները, հարևանը՝ ցաքուտեցիների, նրա հարևանը՝ Բաղամ Բախշին, ստանում էր նորուեցիների նամակները... Այդ խանութներում նամակները կարդում էին, ուրախանում էին, եթե լուրը բարի էր, դժբախտության դեպքում մխիթարում էին, և բոլոր դեպքերում նամակների պատասխանն ինքը՝ Ակու ամին գրում էր ձորկեցիների համար, հարևանը՝ ցաքուտեցիների և Բաղամ Բախշին՝ նորուեցիների համար:

10

Ի՞նչ վարձ էին ստանում նրանք,— հայտնի չէր: Միայն հայտնի էր, որ Ակու ամին, նրա հարևանը և Բաղամ Բախշին երբեմն տասը-տասնհինգ օր, նույնիսկ մի ամիս ժամանակով ինչ-որ գումարներ շահով տալիս էին մյուս մանրավաճառներին, և նրանք ձիշտ ժամանակին վերադարձնում էին ձեռաց փոխ առած գումարը: Երբեմն էլ, երբ գյուղից Բաքու կամ Անդրկասպյան երկիր ուղարկում էին մի ծանրոց, մեջը շորաթան, ձավար, փոխինձ, բրդե գուլպա,— ուղարկողը մի թաշկինակ ձավար կամ մի տասնյակ ձու բերում էր Ակու Ամուն, ասելով.

20

— էս էլ քո բաժինը, Ակու ամի... Քույրդ խնդրեց երեխայի հասցեն լավ գրես...

Այսպես էր այն հին շուկան՝ նավթի ամբարներից մինչև Նազար բեյի տունը, որ արդեն դարձել էր Գորիսի իսկական շուկայի արհամարհված ծայրը, որտեղ դեռ բուրում էր հին Կյորեսը և Շենը՝ նրա մեռնող միջնաբերդը...

## 5

Այլ էր իսկական շուկան՝ Գորիսի սիրտը:

Նազար բեյի տնից մինչև դավթարխանան, այնտեղից ուղիղ գծով մինչև Մաթևոս բեյի տունը, ապա մինչև դրուժինայի զորանոցը և հայոց եկեղեցին,— մի կատարյալ քաղաք էր, փոքր Մոսկվա, ինչպես ասել էր քաղաքագուլիսը մի խնջուլքի,— Այսրկովկասի Հայդելբերգը,— ըստ բժիշկ Տիկրան Պետտիչի (բժիշկ Տիկուշ),— որը նույն-

30

պես քաղաքի զարդն էր, ինչպես «Սասուն» տպարանը, լիմոնադի գործարանը, ինչպես Սպիտակ բանտը և ուսաց եկեղեցին:

Այդպես էին քաղաքի հուշակավոր վաճառատները, ինչպես, օրինակ՝ Կիզիրիների մագազինը («Նաղեծղա»), Ֆրանսիական ապրանքների մագազինը, «Գրուծբա» ընկերությունը, Ավագիմովների վաճառատունը և Պասաժը՝ նորագույն շուկան, ակեեղենի և գոհարեղենի խանութներով: Իրար ետևից ձգվում էին հարյուրավոր խանութներ միայն ուսական մանուֆակտուրայի, ապա գալիս էին մանրուքի խանութներ, այնպես ճոխ զարդարված, որ մինչև անգամ խանութի դռներից կախված էին ժանյակներ, մետաքս թել, գույներզզույն երիզներ և ուլունքներ՝ այնքան առատ, որ խանութի դուռը չէր երևում: Շատ խանութների առաջ, հենց հրապարակում դարսված էին ապրանքի հակերը, որովհետև խանութները լիքն էին, և լիքն էին պահեստները... Շուկայի բազմությունը խոնավում էր հարուստ խանութների առաջ, մոլորվում էին անցքերի լաբիրինթի մեջ, գնում էին հակերի կամարների տակով և հանկարծ դեմ էին առնում ավելի շքեղ խանութի:

Մի խանութի առաջ ուսական ալյուրի բուրգեր են՝ այնքան բարձր, որ խանութից երևում է միայն գավառապետի դիվանի վերին հարկը: Բուրգերի շուրջը խոնաված մարգիկ մրջյունի մեծություն և մրջյունի պես կրում են ալյուրը, որ թեև մի քիչ կծված է, բայց Ամբարի կատու Սողոմոնը, Ավագիմովների ավագ եղբայրը, երդվում է, որ ֆուրգոնները ջուրն են ընկել, և ալյուրը մի քիչ խոնավացել է, «թե չէ ալյուրն իսկական Կուբան է և սամեռնի, եթե վնասով չեմ ծախում»... Ամբարի կատուն ասում է «սամեռնի» և ձեռքը խփում է մտտ ալտին: Նա երդվում է, ըստ սովորության,

ինչպես բոլոր վաճառականները, թեև կարող է շերդվել, որովհետև գիտի, որ Միսիանի, Տաթևի և Գորիսի մահալներում արտերը խանձվել են, և հաց չկա: Ամբարի կատուն այդ շատ լավ գիտե, ինչպես և լավ գիտե, որ յուրաքանչյուր փութի մեջ ունի երեսուն կոպեկ մաքուր շահ: Նրա գործակատարները կշռում են, վաճառում են, իսկ ինքը դախլի գլխին՝ առավոտից մինչև երեկո մատները խաղացնում է փողի մեջ:

— Քեզ թաղեմ, խնամի, եթե մի քոս կոպեկ օգուտ ունեմ էս գործում... իմ օգուտս այ էն առաջին տեսակ ալյուրի մեջ է, որ շեն առնում,— խոսք է ասում մի մարդու, որն ուզում է խնամի Սողոմոնին առանձին տեսակ ալյուրը ապահով խնդրել: Ամբարի կատուն վաղուց է նկատել այդ, բայց ուշացնում է առանձին խոսելը և խոսում է նրանց հետ, որոնք դժակով են: Նա և՛ դրամ է ընդունում, և՛ հաշվում է, և՛ խոսում է հաճախորդի հետ:

— Չե՞ս երևում դայօղլի... վեց արասի, վեց արասի երկու մանեթ, վեց արասի, էս էլ մի վեց արասի: Կնունքն էլ մենակ կերար... վեց արասի... Ա՛յ բարով, հազար բարի...— և Ամբարի կատուն ձեռքը մեկնում է զեյվեցի Իսաջանին.— որ սա էլ է եկել՝ ուրեմն Ղափանի մահալում էլ հաց չկա,— և գործակատարին կարգադրում է.— Տաբուրետ տուր Իսաջանին... Ո՞նց ես, քեֆ, հալ... Վեց արասի, վեց արասի... 10

Իսաջանը դեռ անտարբեր նայում է դախլի առաջ հավաքված մարդկանց, որոնք վճարում են ով երկու փուլթի, ով երեք, ով նույնիսկ մի փուլթի գին:

— Դու ես պահում էս հացապակաս ժողովրդին... Օրհնյալ լինես, Սողոմոն...— Ամբարի կատուն ժպտում է: 20

— Կարո՞ղ եմ չպահեմ, Իսաջան... Շան շարշարանք եմ քաշել, մինչի Արմավիրից ալյուրը բերել եմ... Տալի՞ս են որ: Չեն տալիս, ասում են չկա: Էնտեղ էլ պինդ սով է: Բայց ի՞նչ արած. որին խնդրելով, որին տեսնելով, մի կերպ հասցրել եմ էստեղ, թե ինչ է բանեկամներս կուշտ մնան: Էն կանաչ մեռուներ վկա, որ վնասով եմ ծախում:

Ավագ գործակատարը քթի տակ ժպտում է: Միայն նա գիտե, որ Ավագիմովները ալյուրը Կուբանից շեն բերել, այլ Շուշի քաղաքից և ջրի գնով գնել են կայազորի համբարակից, որը զորքի համար ստացել է նոր ալյուր... Միայն գործակատարը գիտե և քթի տակ ժպտում է: 30

Մանուֆակտուրայի խանութներից ելնում է լպստիկի, սատինի և գունավոր շիթերի բույր: Ներսում հատակը, դիմացի պատը և երկար զաստոյկան պատած են հաստ գորգերով: Դրանից է, որ այդ խանութներում ձայները խլանում են և նույնիսկ լեռնցի մարդիկ շշնջում են, ինչպես մեռելա-

տանը: Գորգերի վրա փափուկ աղմուկով փռում են կտորների հակերը, ապա մի թոփի ծայրից բռնելով ծաղկավոր շալը ծալ-ծալ նստում է, և գուլները ծփում են: Կսվում է մկրատի, զնգոց. «Շնորհավոր լինի, բարով մաշես...»: և ուրիշ անկյունից է լսվում խուլ աղմուկը, չթի կտորի ծաղիկները մարմանդ փայլում են, և նորից է ծփում գուլների ծովը:

- Ներսը կիսամութ է: Արևի լույսը մինչև խորքը չի հասնում. խորքում կապույտ ցուլքով վառվում է մի ճրագ, որից ավելի խորունկ է թվում ճոթի մաղազան: Այնտեղ ինչ-որ դրոնակ բացվում ու փակվում է: Չայներն իջնում են գետնի տակ, ձայները կորչում են և ապա նորից բարձրանում են խորքից: Մաղազանների տակ խորունկ պահեստներ են, որտեղ գիշերօցներեկ մութ է: Ի՞նչ գանձեր կան այնտեղ... Ահա հեռու անկյունից, որտեղ կապույտ ցուլքով վառվում է ճրագը, դեպի դուռն է գալիս գործակատարը, ուսին կտորների հակեր: Հաճախորդներին այնպես է թվում, թե գետնի տակ մաղազայի շափ տասը մաղազա կա՝ խորունկ, շատ խորունկ, որտեղ գառ-ատլասները մթնում լույս են տալիս, ինչպես ոսկու շեղջեր: Զրընգ-զրընգ ոսկին և արծաթը և պղինձը կաթկթում են
- 20 դրամարկղի մեջ, թղթադրամը խշխշում է, ինչպես ծաղկավոր չիթը:

- Դրեի շորս շարեք... իսկական Յինդելի՝ արջանշան: Սրանից լավ վերմակի երես կլինի: Ուզո՞ւմ ես բութա-մախմուր տամ,— և բաց է անում թավիշը՝ կանաչ-ոսկեգույն, նշաձև պուտերով: Մի այլ գործակատար ձեռքին խաղացնում է պարսկական թաշկինակների փունջը: Ինչպե՞ս են խշխշում, ի՞նչ նախշ, ի՞նչ բույր: Մի հաճախորդ, որ հարսանիք ունի, գնել է ինչ որ տանը պատվիրել են և դեռևս նայում է դարակներին՝ չի՞ մոռացել ոչինչ, իր պառավ մոր համար արդյոք չգնի՞ այն սև շալը, թե մայրը հին շալը մինչև մահ հագիվ մաշի...
- 30

Գործակատարի աչքից վրիպում է նրա տարակուսանքը: Ծվ ահա փափուկ քայլերով մոտենում է ինքը, մաղազայի տերը, անվանի խոշա Մակիշը: Նա բրդի նախշուն գուլպաներով է, ինչպես տանը,— քայլում է՝ ասես ման է գալիս իր պարտեզում:

— Անխիղճ, էսքան ապրանք որ ծախել ես, ինչո՞ւ մի վարդ թաշկինակ շես նվիրել,— գործակատարին հանդիմանում է խոջան: Հաճախորդները հետ են քաշվում: Խոջա Մակիչը գործակատարի ձեռքից խլում է թաշկինակների փունջը:

— Էս էլ իմ խալաթը... Ուրախ ժամի լինի,— և նա, որ հարսանիքի համար ամեն ինչ գնել էր, ընդունում է նվերը, խոջա Մակիչին և նրա ձեռքով մարդկանց հրավիրում է հարսանիքի,— պառավ մոր համար գնում է սև շալը, նաև ուրիշ ապրանք, խոջա Մակիչի նիսիայի դավթարում իր անվան դիմաց թողնելով մի թեթև պարտք:

10

— Հազար անգամ ասել եմ, մի թողնեք մուշտարին դատարկ ձեռքով խանութից դնա,— խոջա Մակիչն ինքն է անցնում զաստոյկայի ետևը, իսկ մուշտարին, որ արդեն մոտեցել էր դռանը, ետ է վերադառնում:

— Առքի գնից էլ պակաս տուր, միայն դատարկ ձեռքով մի թողնի գնա... Մեզ համար է ամոթ: Գինը քանի՞ ես առել...

— Գյազը վեց շայի,— վախեցած պատասխանում է գործակատարը:

— Բա սրա գինը վեց շայի է՞, որ ասել ես,— խոջա Մակիչը գայրանում է, որ գործակատարը գյազն ութ շայանոց մահուդվարի ու բենակը առաջարկել է վեց շայի:

20

— Սխալմունք է, կպատահի, Մակիչ ապեր,— այն կողմից միջնորդում է ավագ գործակատարը:

Իսկ նա, որ այդ գնից դժգոհ գնում էր ուրիշ խանութ, արդեն տնտղում է կտորը:

— Սա խալիս մահուդվարի է, քո իմացած թանձիֆը չի: Գե որ բերանից դուրս է թռել վեց շայի, թող վեց շայի լինի: Էդ էլ քո բախտը: Ծա կհամարեմ, թե ջեբիցս փող եմ կորցրել. քանի՞ գյազ կտրեմ:

— Կտրի ինը գյազ...

30

Խոջա Մակիչը գյազը շուլալում է կտորի մեջ, ծալ-ծալ թափվում է կարմիր հալավացուն: Ապա խոջան վերադառնում է մաղազայի խորքը, որտեղ մարմանդ ցուլ է տալիս կապույտ ճրագը:

Իսկ ի՞նչ է կատարվում արհեստավորների խանութների առաջ և խանութների մեջ... Կարծես լեռներից մի ամբողջ գո-

439

րարանակ է իջել՝ բոբիկ, մերկ և առանց գլխարկի, և մի օրում հարկավոր է այդ բանակը հագցնել:

Ահա թափվել են դերձակների խանութների վրա: Քսան-  
երեսուն կարծած արխալուղ է դուրս հանել Դարգի Հանեսը.  
«Պահ-պահ-պահ... Եղար խանի տղա»,— կանչում է դեր-  
ձակը, արխալուղը հագցնելով մի լեռնցու: Իսկ նա զմայլված  
կանգնել է, և շողում են նրա առողջ ատամները:— «Իսկը բեզ  
վրա է կարած...»: Լեռնցին թևերը չի շարժում ու թեև թևերի  
տակ սեղմում է, բայց արխալուղն այլևս ուսերից չի հանում,  
10 այլ ուզում է այդպես, իբրև խանի որդի երևալ հայրենի լեռնե-  
րում:

Մի ուրիշ տեղ Չաքմաչի Վեսկանը նստեցրել է մի թուրք  
սարվորի, և երկու հոգով նրա ոտքին են քաշում սապոզը.  
«Հը...»,— և երկուսով տնքում են, տնքալով քաշում են:  
«Մտավ հա՛, մտավ... Մատներդ մեջը խաղացրո՛ւ, խաղաց-  
րո՛ւ...»— և նորից են քաշում, զոռով հագցնում են, և ահա  
սարվորը զարմացած նայում է, թե ո՞ր կորան ոտները:

«Մի քիչ ման գաս կբացվի»,— քրտինքը սրբելով ասում  
է Չաքմաչի Վեսկանը, մի ուրիշին նստեցնելով:

20 — Վեսկան քիրվա, ա՛յ Վեսկան քիրվա,— ներս է մտնում  
մի վիթխարի հովիվ, ետևից շունը.— կոշիկ կկարե՞ս...

— Կարեմ, կարեմ... Մատներդ մեջը խաղացրո՛ւ, խա-  
ղացրո՛ւ— և Չաքմաչի Վեսկանը քաշում է ութերորդ զույգը.—  
կարե՛մ, կարե՛մ...

— Համա մի քիչ ճրճըռ կդնես տակը:

Ճոճոռան կոշիկն առանձնապես հարգի էր սարվորների  
մոտ: Նրանք սիրում էին, երբ կոշիկը ձայն էր հանում, և հո-  
վիվը, որ շունն ետևից մտել է խանութ, այդ է խնդրում:

— էդ մի քիչ դժվար է:

30 — Ինչի՞ է դժվար, շաքմաչի քիրվա:

— Դրա համար հարկավոր է քսան ձու, մի գրվանքա  
յուղ...— և հովիվը բերում է քսան ձու և մի գրվանքա յուղ:

— Հիմա կլինի՞:

— Հիմա որ կլինի... Երեք օրից կոշիկներդ պատրաստ են:  
էնպես ճրճըռ դնեմ մեջը, որ մինչի Ղարաբաղ ձայնը լսվի,—

և հովիվը, ոտքի շափը թողած, գնում է: Իսկ Չաքմաչի Վեսկանը աշակերտներից մեկին պատվիրում է «մի լավ ձվածեղ քսան ձվից»: Հովվի բերած ձվերը և յուղն ուտում են, ապա կոշկակար վարպետը դանակով կտրատում է մի բարակ կաշի, թաթախում կեղտոտ նավթի մեջ և շարտում աշակերտին.

— Էս կդնես էն հայվանի կոշիկի տակ: Էնպես ճոճոս որ...

Մայր հրապարակում ուրիշ առևտուր է: Սարերից և գյուղերից քշած բերել են հազարավոր ոչխար, կով, ձի, եզ: Չոքառն երբ գործի են: Նրանք մոտենում են ոչխարի հոտին, ձեռքով տրորում են ոչխարի մեջքը և կողքը, մի ակնթարթում հաշվում են հոտը և հարցնում են. «Հիսուն ոչխարին ի՞նչ տամ»... Միջնորդները, որոնց ձեռքով են առնում և վաճառում անասունները, իսկույն մոտենում են:

10

— Աստված բարի տա,— և իրար են միացնում շոգառի և ոչխարատիրոջ ձեռքը:

— Հատին շորս մանեթ, որը հավանեմ:

— Հատին հինգ մանեթ:

— Կավ գին է, ես իմ աստված: Առավոտյան Հաջի Բաղիրը ծախեց շորս մանեթով:

— Չորս մանեթ մի աբասի:

20

— Աստված բարի տա,— և միջնորդը համարյա զոռով փրար է միացնում նրանց ձեռքերը և բղավում է.

— Չորս մանեթ երկու աբասով հիսունը ջոկիր:

Կանչ, աղմուկ, շների կլանչոց: Հովվական շները, որոնք ոչխարի հետ սարից իջել են, անհանգիստ են, երբ օտար մարդիկ քշում են ոչխարը, և տերը նրանց չի կանչում՝ «Չամբար քո՛ւս, Ալաբաշ հասի»,— այլ բարկանում է շների վրա և նույնիսկ նրանց վրա մահակ է բարձրացնում: Շները լուռ են և գլուխը կախ միտք են անում, թե ի՞նչ կատարվեց, որ տերը իրենց վրա մահակ բարձրացրեց, այնինչ ուրիշները ոչխարը քշեցին:

30

Մի այլ անկյունում ձիերը վրնջում են, և նրանց հետ զիլ և արծաթահնչյուն վրնջում են քուռակները... Շո՞ք է, ծարավ են, նրանց ճնշում է բազմության աղմուկը, անհանգիստ են այն խորթ ձեռքերից, որ ահա քանի անգամ բաց արին ձիու բերանը,— թե՛ նրանք կարոտել են լեռնային արոտները, որտեղ փոփռում է խոտը, և ոչ սանձ կար, ոչ այսքան մարդ:

Հրապարակում կլանշում է մի շուն, կով է բառաշում, մարդիկ բարձրագույն աղաղակում են հայերեն, թուրքերեն, ժխորը հետզհետե սաստկանում է, ժխորը հասնում է մինչև Մեղրաքերձ, և ժխորին խառնվում է զինվորական փողը, որ հնչում է զորանոցի կողմից... Երբեմն հանկարծ լուռ է, ինչպես ճնճղուկների երամը, երբ գետնի երեսով անցնում է անգղի սավերը: Զիավոր ոստիկանների գլուխն անցած, հրապարակը ճեղքելով սլանում է գավառային պահակախմբի պետ Ավթանդիլ Խուրշուդ բեյը... Ավազակները սարից նախի՞ր են քշել, մա՞րդ են սպանել, հարձակվել են փոստի վրա՞, թե՞ ուրիշ դեպք է եղել,— դեռ ոչ ոք չգիտե, և ժողովուրդը ճանապարհ է տալիս. «Խուրշուդ բեյը Բարկուշատ գնաց»,— ասում են իրար և բոլորը հասկանում են, որ այն կողմերում «բան կա»...

Երբեմն շուկայի հրապարակով անցնում էր Պենզայի 686-րդ դրուժինայի ջոկատը՝ թմբուկի սուր կտկտոցով, բահերի ու զենքերի զրնգոցով... Առջևից գնում էր երիտասարդ սպան, որ դիտմամբ ծռել էր ճանապարհը, որովհետև ձանձորալի էր անցնել Գորիս քաղաքի խուլ փողոցներով:

Ջոկատը վերադառնում էր զինվորական վարժությունից, կամ երևում էր բանտարկյալների խումբը գորշ խալաթներով, ոտներին շղթա (նրանց տանում էին հող փորելու) կամ սլանում էր Ավթանդիլ Խուրշուդ բեյը՝ ետևից ձիավորները,— հրապարակում աղմուկը դադարում էր, ինչպես ճնճղուկների ծվծվոցը, երբ գետնի երեսով անցնում է անգղի ահարկու սավերը:

Այդ ժխորից՝ մարդկանց և անասունների կանչերից ազատ էր Պասաժը: Այնտեղ ազնիվ լուսթյուն էր: Այնտեղ ամեն ինչ ազնվացեղ էր և առաջին պրորի: Ակնեղենի և գոհարեղենի խանութների կողքին կային խմիչքի և նպարեղենի մեծ խանութներ, որտեղ չէին վաճառում ոչ տեղական գինի և ոչ տեղական ձուկ, այլ վաճառում էին Ֆրանսիական լիկյորներ, Հավանայի սիգար, Հոենոսի գինի և այսպիսի կոլոնիալ ապրանքներ, որոնց գնորդները բեյերն էին և չինովնիկ մեծամեծերը, նաև ուսա քահանան, որի մասին ժամհար Պարսեղը լուր էր տարածել, թե նա եփած խխունջ է ուտում:

Երբեմն մի լեռնցի կամ քոչվոր մի թուրք մուրոված մտնում էր այդ խանութներից մեկնումեկը, օրինակ, Կուրդը բեժա, որ Պասաժի հարուստ խանութներից էր.— «Բաշլըղ ունի՞ս, քրիվա»,— և հովիվը շմած նայում էր շողշողուն դարակներին:— «Ա՛յ, էնտեղ կա...» Կուրդը բեժայից ցույց էին տալիս ժամագործ Սանդրոյի խանութը.— «էնտեղ լավ բաշլըղ կա, լավ ծամոն կա, էշի փալան էլ կա...»:

Պասաժի վաճառականները բուխարա փափախ չէին ծածկում, ինչպես բուն շուկայի առևտրականները, որոնց ժողովուրդը վաղեմի սովորությամբ անվանում էր խոջա: Պասաժում մահուդ շուխա չէին հագնում, այլ կոստյում և ծածկում էին շլյապա, իսկ Եփրատ Երեմը խանութ էր մտնում սպիտակ ձեռնոցներով և այնպես անթերի հագնված, որ կյուրմիլլա կվովնան, գավառային նոտարի կինը, ամուսնուն հանդիմանում էր, օրինակ բերելով Եփրատ Երեմին: Պասաժում ամեն ինչ ազնիվ էր և ազնվացեղ. այնտեղ ուսերեն էին խոսում, և նույնիսկ Հայոց կոնսիստորիայի քարտուղարը, որ ուսերեն չգիտեր, Պասաժի կողքով անցնելիս խոսում էր այդ լեզվով:

Երբեմն խոջաններից մեկն այցելում էր Պասաժի խանութը, որի տերը նրա որդին էր՝ նոր վաճառականը, հին վաճառատան ոսկե ճյուղը: Խոջան նստում էր... վենսկի աթոռի վրա, որ նրան մատուցում էր որդին.— «Ապեր, լիկյոր բաց անե՞մ...»: Ապերը լուռ նայում էր դարակներին՝ անհայտ, անծանոթ իրերին:

— Ա՛յ տղա, էն գիզի-բիզի բաներն ի՞նչ են,— և խոջան մահակը մեկնում էր դեպի ժորժ Բորմանի շոկոլադները:

— Ապեր, շոկոլադ են... էս էլ Դեզի կանֆետ է, էս էլ Դվարժօղլու հալվա է Ադեսից,— և որդին արծաթե պատառաքաղով մեկնում էր մի կտոր Դվարժօղլու հալվա:

— Հալվան ի՞նչ է, նրա տված օգուտն ի՞նչ լինի,— ապերը վերադարձնում էր հալվայի կտորը.— դանավուզ կտոր լինեք, Իրանի գաղաք լինեք հա՛... Կանփետ ծախելով մարդ չես դառնա, ա՛յ որդի...

Բայց այդ խոսքին ներս էին մտնում կյուրմիլլա կվովնան և բժիշկ Տիկրան Պետոխչի կինը՝ Սառա Կասպարովնան, նաև

մի փոքրիկ շնիկ՝ կապույտ ժապավենով: Ապերը զարմացած նայում էր շնիկին:

— Փառքդ շատ, աստված... Սա էլ կասի, որ շուն է և շան ազգից է...— Շնիկն սկսում էր հոտոտել կանֆետի թղթերը՝ վազվզելով խանութում, ապա հաշում էր մի տղայի վրա, որ դրսից պատուհանով ո՞վ գիտի ինչու նայում էր խանութին:

— Պուշոկ, նե սմե՛յ, Պուշոկ... Երեմ Նիկիտիչ, խավիարը հիանալի էր...

10 Խոջան զարմացած նայում էր տիկիններին. նրանք բուրում էին ինչպես խանութը, և նրանցից յուրաքանչյուրը մի ոսկեզառ կանֆետ էր:— «Երեմ Նիկիտիչ...» և խոջան ինքն իրեն մի քանի անգամ կրկնում էր. «Ուրեմն խոջա Մակիչը, Մուգումին Մկրտիչը դառավ Նիկիտ... Քեզ փա՛ռք աստված...»: Եվ աթոռի վրա խոջան ննջում էր, ու նրան օրորում էին կանանց և յուր որդու կշկշան ձայները:

Այդպես էր Պասաժը, Գորիսի բուն շուկայի ոսկե զարդը:

20 Բայց և այնպես նա բուն շուկայի ճյուղն էր, ինչպես հին շուկան՝ ներկարարների, համետ կարողների և պայտարների գետնահարկ խանութներով հին շուկան արմատն էր, արդեն զառամյալ արմատը, որ այնուամենայնիվ կապված էր բունի հետ: Եվ այսպիսով, նավթի պահեստներից մինչև Մաթևոս բեյի տունը, այնտեղից դուրսինայի զորանոցը և հայոց եկեղեցին՝ մի ամբողջութուն էր, մի ամբողջական շուկա, որ կենտրոնն էր Գորիս քաղաքի և կենտրոնն էր Զանգեզուր ընդարձակ գավառի՝ Սևանա լճից հարավ, մինչև Արաքս:

## 6

Բացվում է առավոտը:

20 Զորերի մթնում հագիվ է նշմարվում Շենը: Բարակ ծուխը խառնվել է գիշերվա մշուշին, և շեն երևում ոչ քարափոր տները, ոչ Կյորեսի հին եկեղեցին, այլ միայն նշմարվում են ժայռերի կատարները մշուշի մեջ: Իսկ քաղաքում. արև է... Տների թիթեղյա կտուրները ցուցուում են, գոյացնելով կաթնագույն լույսի ծով, որի մեջ, ինչպես դեղին յուղագունդ, լողում է ուսաց եկեղեցու ոսկե գմբեթը:

Հետզհետե ղարթնում է Գորիսը:

Մսավաճառներն առաջինն են բացում խանութները: Ահագին կեռերից գլխիվայր կախված են եզներ և ոչխարներ, որոնք դեռ երեկ մայում էին: Արևն ընկնում է նրանց կարմիր մսերին, և ահագին դմակները, ինչպես պղնձե վահաններ, արե-վի ցուրը նետում են դեռ քնած տների վրա: Խանութի հատա-կին ընկած են եզների գլուխներ՝ վիթխարի եղջյուրներով: Մե-կի շնչափողից կաթկթել է արյունը: Մի՛ ոչխարի գլուխ՝ սառած աչքերով զարմացած նայում է արևին: Ծզան կճղակի մեջ դեռ կանաչ է խնձորախոտի տերևը:

10

Ահա գալիս են առաջին գնորդները, որոնք միս շեն առ-նում, այլ փորոտիք, աղիքներ, ոտքեր և գլուխ: Շուկայի պա-հակ Կետանը խսիրի մեջ փաթաթում է մի գլուխ և ութ ոտք: Մսավաճառ Պետրուսը նրանից դրամ չի վերցնում, այլ միայն Կետանին պատվիրում է ցերեկով իրենց այգին ջրել: Գալիս է հարչևն ի պահող Թևատորոսը, որի ճաշարանում երկու կոպեկի «կես պորցի» բաղբաշ են ուտում Ամիր Աստանը, սալդաթ Երանոսը, Ճուլուն Կեին, Քյաթառան, քարահուն-ջեցի Ճաղար Պետին և այս կարգի մարդիկ, որոնք գիշերում էին կիսավերակ քարանձավներում, խոտի դեզերի մեջ և բուլ-վարի ցանկապատի տակ: Գալիս է Թևատորոսը և յուր ճա-շարանի համար շալակած տանում է ճարպի կտորներ, աղիք և եզան գլուխ:

20

Մսավաճառների խանութների առաջ գլխահակ շրջում են շները, որոնք դեռ գիշերն են զգացել թարմ մսի հոտ և անհան-գիստ խլրտացել են մսի խանութների շուրջը: Շները գլուխը կախ ման են գալիս, կարծես նրանք ինչ-որ լուրջ բանի են, ինչպես Սպիտակ բանտի պահապանները, որոնք գիշեր-ցերեկ պարիսպների վրա գնում գալիս են: Շներից ոչ մեկը չի հան-դրգնում մոտենալ մսի խանութներին: Շները հին են, ինչպես Գորիսում հին է Շղավթարխանան: Նրանք սեփական կողերի վրա փորձել են, որ եթե մոտենան մսավաճառների խանութնե-րին, ղա սա բ Պետրուսը կարող է նրանց գլխով զարկել տասը գրվանքանոց կշաքսուրը, քիթը մեծ իվանը՝ կշարտի մեծ դանակը, իսկ Դանգա-Բուռուն Ասրին իր երկար ոտքով շանն այնպես կխփի, որ շունը երեք անգամ օդի մեջ կպտըտ-

30

վի և այլևս երբեք չի պտտվի: Շնորհն այդ լավ գիտեն և դրա համար հեռու են շրջում և կամ շեն շրջում, այլ սովից լիզում են իրենց ոտքը կամ կլափելով բերանը՝ ճանճ են որսում, այն ուռած ճանճերը, որ մինչև անգամ դավթարխանայից առավտոները հավաքվում են մսի խանութների վրա... Միայն երկու շուն հեռվից հեռու, ինչպես հուղարկավոր, հետևում են խարչենի Թևատորոսին, որ տանում է եզան մորթած գլուխը:

- Արևը հետզհետե բարձրանում է, և արդեն երևում են առաջին միս առնողները:— Պետրուս ամի, մի լավ կ ո լ ո լ ա կ ա ց ու կ տրի,— ասում է բ ա խ կ ա լ Այազը: Ահա եկավ Փոշտի Անտոնը, որից հետո մեկ-մեկ երևում են մանր աստիճանավորները: Շուկայում խանութներն իրար հետևից բացվում են: Առավտոի շինչ օդում լսվում են մետաղի սուր և անդուրեկան ձայներ: Այստեղ մի դուռ ծալեցին և կայցրին պատին, այնտեղ աղմուկով հետ քաշեցին երկաթե կապը (և բոլորը գիտեն, որ խանութն աղմուկով բացողը մ ե լ ո շ ն ի Բախշին է), մի այլ տեղ զնգաց ցուցանակի թիթեղը, վերջապես ահա Պասաթի խանութների դռներն էլ բացվեցին, բայց ոչ կողքի, այլ դեպի վեր, որովհետև նրանք հ ն ա ր ո վ են շինած և հնարով էլ զնգում են:

- Արդեն միս, հաց և կանաչի է առել ոուս քահանայի աղախինը՝ բոժ Մառուսյան, որի և ոուս քահանայի մասին անառակ լուրեր էր տարածում տիրացու Պարսեղը՝ Տեր զի բազումի հավատարիմ օգնականը, մոլեռանդ հավատացյալ և խիստ ոռուստյաց: Արդեն միս, հաց և կանաչի են առել Մառուսյան, ս տ ր ա ժ ն ի կ Վասիլի կինը, Պաշխտի Ավանեսը, կոնսիստորիայի դ ա լ ա մ դ ա ն ը, Վաղարշակ բեյի ծառան, ֆայտոնչի Իբիշը, Չաքմաչի Վեսկանը կե: ոչխար է տարել, որովհետև երեկոյան նշանդրեք կա: Ահա հայոց ուսումնարանի վարժապետ պ ա ր ու ն Արշակը ևս երկու գրվանքա միս առավ և ոսկորից բռնած սուն է տանում՝ հետևից մի պառավ շուն, որը ճանաչում է մսավաճառ Պետրուսի բոլոր հաճախորդներին, որոնց մեջ ամենաբարին պարուն Արշակն է:

Հայոց ուսումնարանի վարժապետ Արշակն էլ միս առավ, և հանկարծ մսավաճառի խանութի առաջ ծանր-ծանր քայլերով երևաց ինքը՝ Ներսես բեյը, ոչ այն Ներսես բեյը, որ կոչվում

է Խուրդա կամ Կարճիկ Ներսես բեյ և ծառայում է դատարանում և ոչ էլ այն Պրիստավի կոչված Ներսես բեյը, այլ Հաստ Ներսես բեյը՝ գավառային վարչութիւնի սյունը:

— Պետրոս,— կանչում է Ներսես բեյը և կես բոլակ ալլա ունիչ չի ասում:

Սվ կարիք չկար, որ ասեր: Նրա փոխարեն ասում էին նրա ուռած և արյունով լցված աչքերը, հաստ շրթունքը, որ կարծես շորորոդ կզակն էր, ձյունափայլ բրդուկը և նույնպես ձյունափայլ տյուժուրկան՝ խնամքով արդուկած և կոճկած մինչև վերջին կոճակը: Հանդարտ ծփում էր նրա մարմինը, ինչպես 10  
ահագին ժայռ, որ ցցվել է ծովի մեջ և շողշողում է արևից: Ներսես բեյը ունիչ չէր ասում և չէր նկատում այն մանր շինովնիկներին, որոնք նրա կողքից ահով են անցնում: Գարադաբուզի Մուխանը, նա, որ գրպանները սիրում էր լցնել Օրդուբադի շիրով, արձանացել է և այդպես մի շաբաթ արձանացած կմնա, եթե Ներսես բեյը հրամայի: Բայց Ներսես բեյը ոչ մանր շինովնիկներին է նկատում, ոչ տեսնում է Մուխանի արձանը, այլ խոր հագում է՝ խոռալով և շատ խոր,— Ներսես բեյը դեռ հագում է «հարուստի հագուով», իսկ մասվաճառ Պետրուսը բարձրացրել է սպիտակ քաթանը, որի ետև, մյուս գնորդներին աչքից հեռու, կախված էին երկու ուլխար՝ ոսկեգույն դրամակներով:

— Դումացու ուղարկի,— և Ներսես բեյը երեսը շրջում է դեպի դավթարխանայի շենքը՝ շուկայի դիմաց: Ներսես բեյը գնաց, և գավառային վարչութիւնի առաջ խոնկած ժողովուրդը պատկառանքով դեռ նոր է նրան ճանապարհ տվել, այնինչ դումացուն արդեն նրա տանն է և գարադաբուզի Մուխանը քրտինքը սրբելով խառնում ի՛ տիկին Վարսենիկի, առաջ գովում է միսը:

Մասվաճառ Պետրուսը Հաստ Ներսես բեյից ևս դրամ չէր առնում, ինչպես շուկայի պահակ Կետանից, որը ուլխարի մի դիխի և ութ ոտքի դիմաց ցերեկը պիտի ջրեր Պետրուսի այգին: Իսկ դումայի, կոլուակի, բողբաշի, յախնիի մասցուի դիմաց Հաստ Ներսես բեյը տարվա սկզբին, երբ բոլոր առևտրականները պատենտ էին առնում, հարկային տեսչին ի միջի այլոց ասում էր. 30

— Ի՞նչ առևտրական է այդ Պետրոսը որ... խեղճ աղքատի մեկն է, սիրելի Նիկիֆոր Վասիլիչ, և դուք ինքներդ եք իմանում...

Ահա երևաց ինքը՝ քաղաքի հայրը, քաղաքագլուխ Մաթևոս բեյը, նրա ետևից կիսահամր-կիսախուլ Կիրին, որ քաղաքային այգու պահակն է, քաղաքային ինքնավարութեան (դ ու մ ա) ծառան և միաժամանակ տիկին Օլինկայի սպասավորը՝ ծանրութուններ տեղափոխելու, գորգերը լվալու, Շոր աղքյուրից կծերով ջուր բերելու շարաթ օրերը, երբ տիկին Օլինկան իբրև երեք լվացարարուհու կարգադրիչ, սկսում էր լվացքը... Այն ի՞նչ էր կատարվում քեզ հետ, իմ հայրենի քաղաք: Այդ օրերին չէր կարելի անցնել ոչ միայն նրանց տան առաջով, այլ նույնիսկ հարևան փողոցով չէր կարելի անցնել... Անհամար բարձներից միլիոն բմբուլ թռչում էր քաղաքի և տների վրա, ինչպես ուռննու սերմերը մայիսին: Բմբուլը թռչելով հասնում էր մինչև դատարանի շենքը և նստում էր խեղճ գրագրի ունքերի վրա: Եվ ամբողջ քաղաքը գիտեր, որ նրանց տանը լվացք կա: Իսկ երբ բմբուլի ամպերն անցնում էին, բակը, ցանկապատը, նույնիսկ փողոցի պատերը սպիտակում էին փոած լվացքից:

Մինչդեռ մենք զբաղվեցինք տիկին Օլինկայի լվացքով, արդեն շուկա մտավ քաղաքագլուխը և նրա անբաժան թիկնապահ Կիրին: Մաթևոս բեյը, մոտենալով մսավաճառների խանութին, միայն վերահասու է նրանց մաքրութեան: Նա գերադասում է մրգավաճառների խանութները, որոնց տերերը, նրա անձնական թույլտվությամբ, գրավել են նաև հրապարակի և մայթի մասը՝ ձմերուկի և սեխի դեզերով և խաղողի կողովներով: Խանութի ճակատից մինչև հրապարակը, որտեղ ձմերուկներն են,— փուլած է հաստ կտավ, մրգերն արևից պաշտպանելու համար: Այդ անուշահոտ բուրգերի և մրգավաճառի խանութների միջև ընկնում է մի նեղ անցք, այնքան նեղ, որ երկու մարդ կողք-կողքի դժվար են անցնում: Բայց հենց այդ նեղ անցքն էլ քաղաքագլխի սիրած վայրն է ամբողջ քաղաքում:

Մաթևոս բեյը, նրա հետևից Կիրին շտապում էին ոչ թե մսավաճառների մոտ, այլ անմահութեան այդ դրախտը: Առանց զմայլանքի չի կարելի նկարագրել այն տեսարանը, երբ

Քիժո Ակյալը, նշանավոր մրգավաճառը, Մաթևոս բեյի քթին էր մոտեցնում դեղին կանաչ սեխը, որի վրա դեռ մնում էր ցողի մի քանի կաթիլ: Եվ Մաթևոս բեյը, որ ալեհեր էր, երեխայի նման հիանում էր, Քիժո Ակյալի ձեռքից սեխն առնում և հոտոտում էր: Ապա այդ սեխը խանութպանն առանձնացնում ու բերում էր ձմերուկ, ի՛նչ ձմերուկ... Իսկ Մաթևոս բեյն արդեն մտել է հարևան խանութը, որովհետև նրա աչքին են ընկել մուգ մանիշակագույն սալորները: Եվ նա մանրամասն հարցնում է, թե ո՛ւմ այգուցն է, արդյոք սառը մառանում կդիմանա՞ մինչև նոյեմբերի 4-ը (տիկին Օլինկայի ծննդյան օրը), կարելի՞ է մուրաբա եփել այդ սալորից, այդ ֆեհնոմենալ շլորից, ինչպես ասում էր Մաթևոս բեյը:

Օրվա այն ժամն էր, որին ժողովուրդն կոչում էր դատավորի թեյի վախտ, այսինքն ժամը 11-ը անց էր և դատավորները դեռ նոր էին գնում դատարան, որի առաջ խոնված սպասում էր հազար մարդ: Գատավորի թեյի վախտըն էր, բայց Մաթևոս բեյը դեռ չէր հասել մրգավաճառի վերջին խանութին: Հակառակի նման այդ խանութները շատ էին, բոլորը մի շարքի էին և կարծես դիտմամբ հավաքվել էին, հենց դումայի շենքի տակ, քաղաքագլխի ճանապարհի վրա: Քաղաքում՝ դումայի մի քանի անդամներ, որոնք պրոգրեսիստ էին, բամբասում էին Մաթևոս բեյի այդ պակաս կողմը և պատրաստվում էին նոր ընտրություններին նրան սև քվե տալ: Բայց այդ միայն բամբասանք էր, իսկ Գորիսում ո՛ւմ չէին բամբասում, մինչև անգամ նավթավաճառ Գեորգուն էին բամբասում, թե իբրև նավթի պահեստը նա կառուցել է ջրաղացների առվի մոտ, որպեսզի... Զարմանալի քաղաք էր Գորիսը:

## 7

Առավոտից լսվող առանձին ձայները՝ մի անհանգիստ շան հաչոց, քաղաք՝ մտնող նախիրի բառաչ, քարավանների դողանքը, ներսես բեյի հազը, խանութների բացվող դռների աղմուկը, վերջապես այն ձայները, որ հետզհետե բարձրանում են դարբնոցներից և թիթեղագործների արհեստանոցներից, — այդ ամենը, դեռևս անախորժ աղմուկ են, նման այն աղմուկին,

որ արձակում է նվազախումբը վարագույրից առաջ: Բայց ահա դիրիժորը բարձրացնում է ձողիկը, և նվազախումբը ներդաշնակ հնչեցնում է բարդ սիմֆոնիան:

- Այդպես էլ ժամը 11-ից անց, երբ քաղաքագլուխն ստորագրում էր առաջին թուղթը, քաղաքի անկարգ ձայներն իրար հարմարելով սկսում էին ներդաշնակ հնչել, գոյացնելով մի քաղցրալուր նվազ: Պատահում էր, որ մի ձայն դուրս էր թրոշում այդ աղմուկից, ինչպես կեղծ հնչյուն նվազախմբում: Պատահում էր, որ մի հովիվ սարերից իջնող մարդկանց և անասունների հեղեղի մեջ կորցնում էր իր շանը և հենց փողոցում կանչում էր. «Ալաբաշ, հե՛յ, Ալաբաշ...»: Այդ ձայնին իսկույն պատշգամբ էր դուրս գալիս քաղաքագլուխը, որպեսզի խլացնի այդ աններդաշնակ ձայնը և մինչև անգամ զայրանում էր, ինչպես զգայուն դիրիժորը, բայց նույն մարդկային ժխորըն ինչպես հեղեղ խլացնում էր այդ անպատեհ և անհարիր կանչը: Եվ նույնիսկ եթե այդ ժամանակ բոլորովին մոտիկ մի արևոտ շոգից կատաղած կանչեր, եթե երկու շարաճճի գիմնազիստներ, անցնելով դալլաք Բոզու վարսավիրանոցի կողքով, կանչեին՝ «դալլաք Բոզի, գլուխդ խոզի» և ինքը՝ հին շուկայի պատվելի վարսավիրն ընկներ նրանց հետևից և բարձրաձայն ասեր. «Այ, ես ձեր խրատողի...», — միևնույն է, ոչինչ այլևս չէր խանգարի այն ութմը, որով ընթանում էր քաղաքի աղմուկը:

- Նա շուկա էր մտել յոթ ճանապարհով, նա հոսում էր դավթարխանայի, քաղաքային ինքնավարության, դատարանի, ոստիկանական վարչության, հարկային տեսչի, պետական գանձարանի և սուբահանոցի՝ նախնական կալանատան յոթ դարպասներից, որոնք բացվում էին շուկայի վրա: Ինչպես բարակ առու, այդ աղմուկը գալիս էր ճոթի մաղաղանների խորունկ խորքերից, որտեղ լեռնցիների խրոխտ ձայները խլանում էին... Եվ ինչքան արևը բարձրանար, այնքան զորեղանում էր նվազը և արևի թեքվելու հետ, երբ դեպի լեռներն էին վերադառնում գյուղացիները և քոչվորները, — այդ սիմֆոնիան մոտենում էր իր վախճանին:

Այդ պահին քաղաքի ամենահետաքրքիր անկյունները ոչ մանուֆակտուրայի խանութներն էին, ոչ պետական հիմնարկ-

ները և ոչ էլ նույնիսկ Պասաժը: Դատարանում դատավորներն առանձնացել էին խորհրդակցության, և մի ամբողջ ժամ նրանք չէին կարողանում քրեական դատավարության Կոճղ օրինացի մեջ գտնել այն հոդվածը, որով կարելի է հարևանի գոմշի պուշը թրով կտրող հանցագործին պատժել, և արդեն երդվյալ հավատարմատար Ֆեոկտիստ Իվանիչն առաջարկում էր գործն ուղարկել նոր քննության, որովհետև շատ մ ու թ էին հանցագործության հանգամանքները... Գավառային ինքնավարության մեջ այն ժամն էր, երբ Համզա բեյ Մահմուդբեկովը թավ ձայնով «անառակ» անեկղոտներ էր պատմում, իսկ Նազար բեյը աղվեսահաչ էր տալիս... Այդպիսի ժամ էր քաղաքային ինքնավարության մեջ և հայոց վիճակային կոնսիստորիայում, այդպիսի խաղաղ ժամ էր, որովհետև Տեր զի բազումը վաղուց էր կնքել ծննդյան երկու վկայականները:

Նույնիսկ փողոցները խաղաղ էին: Ծառի շվաքում կարելի էր հանդիպել մի քանի գյուղացիներին, որոնք կամ սեխ էին ուտում, կամ փռել էին գնած ապրանքը և նորից նոր հաշվում էին՝ անընդհատ կրկնելով. «Հո չխաբե՞ց մեզ էն շան որդին...»: Բայց հետաքրքիր չեն սեխ ուտող գյուղացիները և կամ նրանք, որոնք իրար երեսի նայելով դժվարանում են զրտնել, թե գյազը 27 կոպեկով մահուղավարին ինչքա՞ն կանի, եթե իրենք գնել են 5 գյազ և մի շարեք:

Քաղաքում այդ պահին ամենահետաքրքիր տեսարանը խոհանոցներումն էր և ոչ թե սենյակներում, որտեղ նույնիսկ Հերսելյան՝ «Թևը կտորած հրեշտակը» շրջում էր տնային զգեստով և շուներ այն հմայքը, որ ունեն, երբ հագնում էր խշխշան շորերը և պահում էր երկնագույն մետաքս հովանոցը:

Ամենահետաքրքիրը խոհանոցներում էր...

Ներս մտնենք Հաստ Ներսես բեյի տան դարպասով: Արդեն դարպասի մոտ զգացվում է այն բույրը, որով անսխալ կարելի է որոշել, թե ի՞նչ վիճակումն է դուրման: Արդյոք ա՞յն, երբ փակ կոկոնի նման հազիվ է երևում մի կտոր վարդագույն միս, երբ հետզհետե փքվելով իր մեջ է կլանում շոգին և չոր մրգերի հյութը, և խաղողի տերևների արանքներում բրինձի հատիկները խաղում են... Կաթսան փրփրում է, շոգին երբեմն բարձրացնում է կափարիչը պ ու Ֆ անելով, և կափա-

րիչը զնգալով նստում է: Կաթսայի այդ շնչառութունը հիշեցնում է Ներսես բեյի հետկեսօրյա քունը, եյր հաստ շրթունքները ուռցնելով քնի մեջ նա պուֆ էր անում, արձակելով հոտավետ շունչ:

Մեծ կաթսայի կողքին շար են ընկել բազմաթիվ ջամեր, բադյաններ, կոթավորներ, պղնձե պնակներ, որոնց պարունակութունը և կետ նպատակը նույն դրաման է: Մեկի մեջ տաքանում է սերկևիլի և նռան ջուր, որ պիտի եռա միայն միանգամ, ապա ծաղկավոր կոթամանի մեջ աղախինը պիտի իջեցնի մառանը, սառեցնելու: Նա պիտի երևա այն բոպեին, երբ մեծ ափսեի մեջ խոհանոցից դուրս կգա դրաման, և Ներսես բեյը նրա գոլորշին կհանգցնի նռան և սերկևիլի սառած ջրով: Նրա կողքին տաքանում է հիլի և դարչինի լուծույթը, ավելի հեռու շորանում է այն կարմիր հացը, որ Ներսես բեյը մատնելով պիտի փշրի դրամայի ջրալի հյութի մեջ: Խոհանոցում այլ պընակների մեջ կանաչի է՝ քաղցր սոխ, կինձ, կոտեմ, առանձին դարսված են սպիտակ բողկի պահուսակները,— ոչ այն բողկի, որ հասնում է մի ամսում, այլ այն, որ մի տարում հագիվ է հասնում, բայց երեք տարի համը պահում է:

Խոհանոցում Ներսես բեյի կինը ձեռքի աղացով սուրճ է մանրում և գանգատվում է, որ Ֆրանսիական ապրանքների մագազինից այլևս հարկավոր չէ սուրճ առնել, այլ հարկավոր է առնել Եփրատ Երեմից, որի սուրճը Լյուդմիլա կլովնան շատ է հավանել: Նա գանգատվում է, բայց ականջը կաթսայի կողմն է. յուրաքանչյուր քլթոց, կափարիչի յուրաքանչյուր զրնգոց նրա համար նշաններ են դրամայի ձևավորման: Տանտիկինը ձեռքի փոքրիկ շերեփով շափ է տալիս այդ բարդ շարժման: Ինչպես նավավար նա վարում է ճաշի նավը մինչև վերջին նավահանգիստը, մինչև...

Բայց այդպես էր բախտը Գորիսի շատ առաքինի և անվանի տիկիներին, նրանց այդ էր վիճակված՝ բմբուլի բարձերը փքված պահել, անկողինը փափուկ, ճաշն անթերի և առատ, տունը հարուստ,— իմանալ սուրճ եփել և հյուրերին զբաղեցնել մինչև սուրճը և ապա լոտո կամ թուղթ խաղալ: Այդ էր նրանց վիճակը, և նրանցից շատերը նույնիսկ ամուսնու պաշտոնը չգիտեին, այլ միայն գիտեին, որ նա դավթարիսա-

ն ա յ ի մ ե ծ ե ր ի ց է և նրանից բարձր միայն երկու բնյ կա՝  
այսինչը և այնինչը, իսկ մնացած բոլոր բնյերը նրանից քաշ են,  
նրանց կանայք՝ իրենից քաշ են, նրանց երեխաներն ի՞նչ են,  
որ խաղան իր երեխաների հետ: Նրանք կարող են ունենալ գի-  
լան առի մուրաբա, իսկ իրենք՝ սերկևիլի, նրանց սերվիզն  
արծաթից է, իրենցը՝ արծաթ ոսկեջրած,— մի խոսքով, մի աս-  
տիճան պիտի բարձր լինեին այն բնյերից, որոնցից աստիճա-  
նով բարձր էր տան տերը:

Այդպես էին այդ կանայք՝ բազմաթիվ երեխաների մայր,  
խոհանոցի տնօրեն, հյուրընկալուհի և դեռևս ինչքան պարտա-  
կանություններ ունեին նրանք... Ահա դիմաց-դիմաց պատու-  
հանից խոսում են երկու այդպիսի տանտիրուհի.

10

— Վարսենիկ, էդ ինչո՞ւ ձեր լույսերը ամբողջ գիշեր  
վառվում էին... Հյուրերդ ուշ գնացին, հա՞...  
— Ի՞նչ ուշ, սհաթի տասներկուսին շարեք էր պակաս, որ  
գնացին... Աղչի, տաք էր, տաք... Սիրտս ուզում էր ճաքի:

— Է, տաք ասում ես պրծնում... Գիշերը աչքերս շեմ փա-  
կել: Գու դեռ լավ ես: Ուզում եմ գնամ Շուշի. ասում են պրո-  
ֆեսոր Բահաթուրովը եկել է... Ժ ե ն ս կ ի յ հիվանդությունից  
նա լավ է...

20

— Բախտավոր ես... Ես էլ կգայի, եթե երեխան չլիներ...  
Պատուհանները փակում են, և երկու սիրելի հարևանուհի-  
ները իրար հասցեի շնչում են.

— Հողեմ գլուխդ, թե քո մարդը քեզ Շուշի կուղարկի...  
Գու երեխան մահանա բռնի:  
— Էդ դեղնած կերպարանքիդ Բահաթուրովն էր պակաս...

Եվ միայն կարելի է զարմանալ, թե որքան խելոք էին այդ  
կանայք և ինչ եռանդի տեր էին, որ այդքան զբաղմունքից հե-  
տո դեռևս ժամանակ էին գտնում կտրելու փողոցը, որպեսզի  
փորձեն հարևանի մուրաբայի համը, այն մուրաբայի, որի եփե-  
լու կերպը քաղաքն երից բերել է Վարվառա Մինաևան,

30

տիկին Վառփնկան, Վ ա ո ի -բ ա ջ ի ն, ինչպես նրան կանչում  
էր լվացարարուհի Մինան: Նրանք ժամանակ էին գտնում վեր-  
ջին մողայի պ ե ի եր ի ն ա յ ի ձ և ս ն ընդօրինակելու, նույնիսկ  
մտնում էին կանացի դերձակ Մացակի տունը, իբրև թե պա-

տահմամբ, բայց նպատակ ունենալով տեսնել այն կոֆտան, որ պատվիրել է տիկին Օլինկան և որի մասին այնքան շատ էին խոսում լալազարանց տանը: Եվ ինչի՞ մասին կարծիք չէին հայտնում և ինչ կարծիքներ չէին հայտնում նրանք...

— Ստուգենա Ռուբենը շատ կսխալվի, եթե Հերսելյային առնի: Նրա մեջն առողջ չի...

— Ամբրումովի տղան չի բարիչում խորթ մոր հետ: Ասում են տեր Զավենը գնացել է հաշտեցնի...

10 — Սահակ Սերգեիչի մեծ աղջիկը լկստված է... Երեկ գիշեր նրան բուլվարում տեսել են ուս օֆիցերի հետ...

— Է՛, ժամանակս փոխվել է, զարգացել են, լուսավորվել են... Մեզնից ծնվածն էլ մեզ չի հավանում...

— Տեղն է, Սահակ Սերգեիչի կնոջ տեղն է... Ասում էին աղջկադ հեռու մի ուղարկի, կլկստվի, թե թող ուսումը տեղ տա, բժիշկ պիտի դառնա: Դե հիմա թող բժիշկ դառնա... Կդառնա՞, ինչպես չէ:

Այդպիսի կարծիքներ հայտնում էր նաև տիկին Վարսենիկը, ոչ միայն պատուհանից զրուցելով հարևանուհու հետ կամ այդ նպատակով հյուր գնալով մի տուն, որտեղ իրար էին փոխանակում լուրերը, լուր էին փոխ առնում, ինչպես փոխ էին առնում մի աման նավթ, որովհետև ցերեկով մոռացել էին գնել, — առժամանակով առնում էին լուրը, ինչպես մի անգամի համար հարևանից վերցնում էին փլավ քամելու պղնձե մաղը: Տիկին Վարսենիկն այդ բանով զբաղվում էր նույնիսկ խոհանոցում, գոլմայի ձևավորման ամենապատասխանատու ընկերին, երբ կրակի հզորացումը կամ մի ավելորդ համտես կարող էր փչացնել ամեն ինչ, ինչպես եթե նավալարը՝ աչքը դեպի ծովային ճայերը, նավը հանկարծ զարկեր ստորջրյա քարի...

30 Բայց տիկին Վարսենիկի ձիրքն էլ հենց այն էր, որ նա կարող էր ֆրանսիական ապրանքների մագազինի սուրճը վատաբանել և նույն ժամին կրակից հանել մի փայտ, որի ջերմութունից նոսն և սերկևիլի ջուրը կսևանար: Տիկին Վարսենիկն իր աղախինին պատմում էր.

— Ասում են երեք օր առաջ Շենում մի կին գնացել է բանջարի, հասել է մինչև Մատուտի ձորը... Քանի միտս է, գի-

նու փարչը դիր առվի մեջ, մի քանի էլ դամբուլ քաղի էն ծայրի ծառից, — իսկ ինքը բաց է անում կաթսայի կափարիչը և գոլորշուց, բուլբից, ավելի ճիշտ, եռացող ջրից հասկանում է, թե ինչ է կատարվում կաթսայի խորքում:

— Գալիս է, պապան գալիս է, հետն էլ մի մարդ կա, — ճշարտվ ներս է վազում տիկին Վարսենիկի փոքրիկ աղջիկը, որին մայրը պահակ է դրել փողոցի անկյունում:

— Գալիս է, պապան գալիս է և հետն էլ Նազար դյադյան է, — ճշարտվ ներս է վազում տիկին Վարսենիկի փոքր տղան, որ ավելի հեռվում էր դիրք պահել:

— Գալի՛ս են, — ճշում են երեխաները, ինչպես նավաստիները կկանչեն.

— Ցամաքը երևաց, ցամաքը...

Այստեղ տիկին Վարսենիկի ձիրքը հասնում է կատարելության, մինչև տանտիկնության արվեստի բարձրունքները:

— Կաթսան մի կողմ դիր, — և հյուրի համար ավելացնում է ճիշտ այնպիսի գավաթ, ինչպիսին դրել է ամուսնու համար:

— Բողկը ջրից հանի, — և շտապում է հինգ րոպեում զգեստը փոխել, հարդարել իրեն, փոքր տղայի գոտին շտկել, աղջկանը հիշեցնել, որ Նազար դյադյային հարկավոր է բարեվել և այդ տագնապի մեջ մոռանում է բուժ մատի մուրը, որ կնկատի երեկոյան, երբ շարունակի պատմել այն կնոջ մասին, որ երեք օր առաջ գնացել էր Մատուռի ձորը...

Ներսես բեյի և նրա հյուրի՝ Նազար բեյի, ներս մտնելուց հետո ճաշն իսկույն շի սկսվում, թեև Ներսես բեյը դեռևս ուպորտ գրելուց էր քաղց զգացել, ավելի ճիշտ նրա քթովն էր ընկել դումայի հոտը, ինչպես տիկին Օլինկայի բարձերից մի բմբուլ հասել էր մինչև դատարան և նստել խեղճ գրագիրի ունքին: Ներսես բեյը քաղցած էր, բայց կային անխուսափելի ծեսեր, ինչպես բողկը անխուսափելի էր դումայից: Այդ ծեսերից վեհագույնը կատարվում էր այգում, երբ Ներսես բեյն իր սեփական ձեռքով, վարունգի թփերի մեջ փնտրում էր երկու երեք փոքր վարունգ, ծաղիկը դեռ պուշին, փոքրիկ փշիկներով, ինչպես երեխայի աղվամազը, այն նուրբ վարունգը, որ բերանի մեջ հալվում է և որին Ներսես բեյը մեծարում էր տասնյակ

10

20

30

փաղաքշական բառերով՝ պիկուլիա, կուլուլիա, պի-  
ծի-միծի Բաղդասար, Կլապիդոն Իվանիչ, բի-  
բուլի և այլ այսպիսի բառերով, որոնցից մի քանիսը յուր  
ժամանակ ուղղված էին տիկին Վարսենիկին: Բայց ահա նա  
գտավ այն վարունգները, որոնց, Ներսես բեյի ասելով, աստ-  
ված Քարահունջի օղու հետ միաժամանակ աշխարհ է ուղար-  
կել, որպեսզի մարդկային հոգին չձանձրանա...

Եվ ճաշը սկսվում էր...

- 10 Սկսվում էր այն ճաշը, որից հետո տիկին Վարսենիկի  
աղախինը կանչում էր լվացարարուհի Մինային, և երկուսով  
միասին առվի ջրում մոխրով լվանում էին պնակները, կաթ-  
սանները, մեծ ու փոքր ափսենները... Եվ մինչև արևը մայր մըտ-  
ներ, նրանք լվանում էին: Իսկ ներսը, հով սենյակում, դի-  
վանների մեջ ընկզմած քնել էին Ներսես բեյը և Նազար բեյը,—  
տիկին Վարսենիկը գնացել էր իմանա, թե արդյոք շե՞ն այրվել  
տիկին Վառինկայի գաթանները, մեծտղան պապայից ծածուկ  
ընկուզենու տակ ծխում էր, փոքրը փետում էր թիթեռի թևերը,  
մեծ աղջիկը պատուհանից ո՞վ գիտի ինչու նայում էր դուրս,  
իսկ փոքրն սպառնում էր պապային ասել, որ ժորժիկը ծխել է  
20 և մամային ասել, որ մեծ քույրը դարձյալ պատուհանից շեր  
հեռանում:

Փողոցում լուսթյուն էր: Լսվում էր միայն մամանների  
զնգզնգոցը և Ներսես բեյի միալար պուֆերը, կարծես  
դեռևս կաթսայի մեջ դոլման եռում էր:

## 8

- Ամբողջ քաղաքում բեյերը քնել են հետկեսօրյա քնով, և  
քանի նրանք քնած են, հարկավոր է պտույտ անել քաղաքի փո-  
ղոցներում, որովհետև շներն էլ քնած են: Իսկ Գորիս քաղաքի  
շները կատվի ձագեր չէին, ինչպես Լյուդմիլա կովնայի շնիկը,  
30 որի մասին խոջա Մակիլը մի անգամ ասել էր.

— Փառքը շատ, աստված... Սա էլ կասի, որ շուն է և շան  
ազգից է:

Գորիսում հայտնի շներ կային, ինչպես օրինակ՝ Սիմոն  
բեյի Թորուշը, որից ամբողջ թաղը դողում էր, և նույնիսկ մու-

րացիականները սիրտ չէին անում նրանց բակը մտնել: Նրանք շներ չէին, այլ շղթայած առյուծներ և վագրեր, ինչպես խանլար բեյի Զինդառ շունը, որ տիրոջ հետևից գնում էր գյուղերը հավ հավաքելու, այսինքն աչքին ընկած հավը կուլ էր տալիս և մնում էր անպատիժ, կարծես թ ա գ ա վ ո Ր ա կ ա ն խ ա ր ջ հավաքող էր: Հապա պրիստավ Աղալոյի Զանգե-Զրանգին. նրանց փողոցով անց ու դարձը դադարում էր, երբ լուր էր տարածվում, որ պրիստավ Աղալոն էլի մեղք է եկել շներին և նրանց արձակել է: Վերջապես փաստ է, որ 1913 թվի դեկտեմբերի 4-ին Գորիսի քաղաքային դուման քննության առավ շների հարցը, որովհետև Սիմոն բեյի Քոբուշը կծել էր Փոշտի Անտոնի քիթը՝ պարտականության կատարման, այսինքն նամակատարության ժամին: Այդ առթիվ դումայում մեծ կռիվ ծագեց պրոգրեսիստների և հետադիմականների միջև, և միայն արհեստավորության դեպուտատ Չաքմաչի Վեսկանը, որ ոչ առաջադիմական էր և ոչ հետադիմական, այլ պ ա դ վ ա լ ա կ ա ն էր (նա այդպես էր ասել Բարի աջողումի գինու նկուղում),— և միայն Չաքմաչի Վեսկանի առաջարկով դուման որոշեց դեղամահ անել քաղաքի անտիրական շներին (պարոն Արշակի ասելով՝ այդ էլ ունեք իր բ ու լ ն ար մ ա տ ը. շներից մեկը ցերեկով գողացել էր դուրսը տակառի մեջ թրշոց դրած պ ա դ ո շ ը):

10

20

Այդպիսի անվանի շներ կային Գորիսում, որոնք որդոց որդի ապրելով միևնույն տանը, վարժվել էին իրենց տերերի բնավորության, իսկ մի քանիսն այնքան էին երես առել, որ իրենց վարքն ու բնավորությունը նմանեցնում էին տերերին: Օրինակ, Նազար բեյի շունը, երբ գյուղացին փափախով մըտնեք նրանց բակը, աղվեսահաշ էր տալիս՝ արագ-արագ և սուր ձայնով և ձայնը կտրում էր, երբ գյուղացին փափախը հանում էր: Տեր զի բազումի Չամբարը ոռնում էր, երբ լսում էր ոռսաց եկեղեցու զանգերի ձայնը: Զիլֆուզար բեյը (հայ) մի շուն ունեք, որ երբեք չէր հաչի, եթե նույնիսկ կես գիշերին գյուղացիները թափվեին նրանց բակը: Բայց եթե նրանք գային առանց ոչխարի, առանց պանրի և յուղի, շունը քիչ էր մնում շղթան կտրեր, կարծես նա էր կաշառք հավաքում:

30

Գորիսում այնպիսի շներ կային, որոնք լափում էին դու-  
մայի մնացորդը և տիրոջ նման հետկեսօրյա քնով քնում էին  
և նույնիսկ քնի մեջ պ ու ֆ էին անում, ինչպես Ներսես բեյի  
շունը: Շները զարթնում էին, երբ հնչեր տիրոջ ձայնը: Այնու-  
հետև նրանք արթուն պահակ էին մինչև լուսաբաց: Տերը կա-  
րող էր կ ա ն ա շ ս ե ղ ա ն ի շուրջը նստել մինչև վերջին ուր-  
լին, կարող էր բիլիարդ խաղալ, կարող էր հարբած տուն  
գալ,— ամեն ինչ ապահով կարող էր անել, քանի շունը կար...  
**10** Մի խոսքով, եթե դատական հին գործերում ձեզ պատահի  
հանդիպել այսպիսի արտահայտության՝ «Նա ինձ համար շուն  
չէր, այլ բերդ էր»,— իմացեք, որ այդպես ասողը գորիսեցի էր:

Քանի շները քնած են, հարկավոր է պտույտ անել քաղաքի  
փողոցներում և մի քանի տուն մտնել: Բայց հարկավոր չի  
մտնել Հաստ Ներսես բեյի հարևան տունը, որտեղ ապրում է  
Խուրդա կամ Կարճիկ Ներսես բեյը, որովհետև այստեղ էլ ա-  
մեն ինչ նույնն է՝ աննշան տարբերությամբ: Կարճիկ Ներսես  
բեյը դուժա չի կերել, այլ կոլոլակ, նա մեջքի վրա չի քնած,  
այլ կողքի, և նրա շան երկու աչքերը կապույտ են, իսկ Հաստ  
Ներսես բեյի շան մի աչքը երկնագույն է, մյուսը՝ կապույտ:  
**20** Մնացածը նույնն է, նույն այգին, նույն շորս երեխան, որից  
մեծ աղջիկը պատուհանի առաջ սպասում է, թե երբ կանցնի  
հարևանի գիմնազիստ տղան,— այն բակից էլ մի աղջիկ տես-  
նում է Ժորժիկի ծխախոտի ծուխը:

Հարկավոր չի ներս մտնել այս տունը նաև այն պատճա-  
ռով, որ երկու հարևաններ իրար թշնամի են, և դառն է պատմել  
նրանց թշնամությունը, որովհետև կարող են կարծել, թե եր-  
կու Ներսես բեյերը չնչին մարդիկ էին, եթե նրանց երկարամ-  
յա գժտության առիթը եղել էին նրանց շները, ավելի ճիշտ՝  
Հաստ Ներսես բեյի շունը, որ մի գիշեր կապը կտրել և թռել էր  
**30** հարևանի այգին և այնտեղ հարևանի շան հետ շնություն էր  
արել և այդ ոչ թե այգու մութ խորքում, այլ նոր մարգերի մեջ,  
այնտեղ, ուր Կարճիկ Ներսես բեյի կինը ցանել էր Ծրուսաղեմի  
լոբի, ռեհան, կինձ և գլխավորն է՝ կ ա տ ա ղ ա ծ վ ա ր ու ն գ,  
այն վարունգը, որի սերմերը Քութախից ուղարկել էր հար-  
կային տեսչության ավագ ուկղոր իշխան Այլախիարին, երբ

պաշտոնական գործով եկել էր Գորիս և յոթ օր հյուր էր եղել Կարճիկ Ներսես բեյին: Իշխանը դեռևս Գորիսումն էր, երբ ամբողջ քաղաքը խոսում էր Քուլթախի կատաղած վարունգի մասին, որը բերանում չի հալվում, ինչպես Հաստ Ներսես բեյի սիրած պիծի-միծի Բաղդասարը, այլ հասնելու մոտ պայթում է ահագին աղմուկով, ինչպես նկարագրել էր իշխանը, — պայթում է ինչպես ումբը, և ամբողջ քաղաքն անհամբեր սպասում էր այն օրվան, երբ ինչպես ումբ պիտի պայթեր առաջին կատաղած վարունգը, որի սերմից Կարճիկ Ներսես բեյի կինը հինգ հատիկ էլ չէր տվել իր հարևանուհուն և մինչև անգամ Լալազարանց տանը այդ առթիվ ասել էր.

10

— Անցյալ տարի կոֆեն կրակի վրա մի քցելու ցիկ որի ա ուզեցի, թե՛ ես էլ հյուր ունեմ, ինձ հերիք չի... Հապա ես էդ կմոռանամ...

Բայց գծտության առիթն այդ չէր, այլ շների մոլությունը, որի ընթացքում կատաղած վարունգի ծիլերը արմատախիլ տրորվել էին: Կարճիկ Ներսես բեյի կինն այդ համարել էր նախանձից տրաքված հարևանուհու գործը, և յոթ օր երկու հարևան պարպիզներից լսվում էին մերթ հանդարտվող և մերթ բորբոքվող կովի աղմուկ, անեծք և անվայել խոսքեր... Յոթ օր, յոթ գիշեր երկու տունը նման էին երկու բերդի, որտեղից լքսվում էին ումբակոծության ձայներ: Հաստ Ներսես բեյը նիհարեց, որովհետև նրա կինն այդ օրերին ոչ դուժա էր եփում, ոչ կոլուլակ, այլ եփում էր այնպիսի խառնափնթոր կերակուր, որ կվայելեր խարչ և նի պահող Թևատորոսին: Ներսես բեյը միայն սովից խեղճացավ և խեղճանալով հանձնառու եղավ, որ Կարճիկ Ներսես բեյը մի ոչինչ մարդ է, գնչու է և նույնիսկ ասաց, որ հարկային տեսուչ Նիկիֆոր Վասիլիչը նրանից շատ է անգոհ...

20

Իսկ հարևան բերդում ումբակոծությունը դադարեց միայն այն ժամանակ, երբ Կարճիկ Ներսես բեյը խոստովանեց, թե անցյալ տարի իշխան Այլախարին գիշերվա կեսին գնաց պարտեզ և որովհետև շատ ուշացավ, ինքը ևս գնաց պարտեզ և ջրածակի մոտ, ասինքն այնտեղ, ուր առուն պատի միջով մտնում է հարևանի պարտեզը, — այդտեղ ինքը ասեավ իշխա-

30

նին և տիկին Վարսենիկը նմանապես իրենց պարտեզումն էր...  
Կարճիկ Ներսես բեյն ուրիշ ոչինչ շխոստովանեց իր կնոջը,  
որովհետև նախ այդ նկատելուց հետո նա անմիջապես տուն  
էր վերադարձել և ապա նա շկամեցավ անառակ պատմու-  
թյունով վարակել իր կնոջը: Նա միայն այդ խոստովանեց,  
որովհետև կինն իսկույն դեմքը ձեռքերով ծածկեց, ինչպես  
ամոթխած կին, որ այդ ձևով պաշտպանում է իր կուսական լսո-  
զությունը:

10 Գրանից հետո երկու բերդերի միջև սկսվեց խրամատային  
խուլ կռիվ, և երբ տիկին Վարսենիկը մի աղջիկ ծնեց, թվաց  
թե նրա կողմը հաղթեց, և հույս կար, որ կնոնքի առթիվ կա-  
րող էր վերջանալ նրանց կռիվը, բայց երկու շաբաթ հետո  
Կարճիկ Ներսես բեյի կինը ևս մի աղջիկ ունեցավ, և նրանք  
այդպես էլ շաշտվեցին:

Ի պատիվ երկու Ներսես բեյերի պետք է ասել, որ անձնա-  
տուր լինելով իրենց կանանց, նրանք այնքան հեռու չգնացին  
և իրար ոչ մի անվայել խոսք չասացին: Նրանք նույնիսկ իրար  
հետ խոսում էին, երբ հարկային տեսչության տեղեկագրերը  
Կարճիկ Ներսես բեյը ռապորտով ուղարկում էր իր հարևանին:  
20 Մինչև անգամ շինովնիկների կլուբում, երբ բարակա էին խա-  
ղացել, Հաստ Ներսես բեյը հարևանին շատ ազնիվ և քաղա-  
քավարի ասել էր.

— Թուղթը ձերն է, հավաքեցեք...

Ահա այդ շնչին թշնամության պատճառով հարկավոր չի  
մտնել Կարճիկ Ներսես բեյի տունը: Նաև կարող ենք խան-  
գարել Լուսիկին՝ Կարճիկ Ներսես բեյի մեծ աղջկան, որը օգ-  
տրվելով հետկեսօրյա խաղաղությունից, Ժորժիկի նամակի  
պատասխանն ահա տանում է դեպի պատը՝ ջրածակի գլխին:  
Իսկ Ժորժիկն ընկուզենու տակ անհամբեր ծխում է և սպասում  
է ազդանշանին:

30 Կարճիկ Ներսես բեյի տնից վերև դարձյալ բեյի տուն է՝  
Խուրշուդ բեյի տունն է: Այդպես էր Գորիս քաղաքում. երբե-  
մըն մի շարքի ընկնում էին քսան-քսանհինգ բեյի տներ, ինչ-  
պես ճոթի մաղազաները: Երբեմն այդ շարքն ընդհատվում էր  
վաճառականների տներով և նաև մի այնպիսի տնով, որի տե-

ըր ոչ բեյ էր, ոչ վաճառական, այլ օրինակ՝ Ափունց Ակու  
ամին էր, ձորկեցիների նամակառուն:

Չորրորդ տունը, որ երկու միանման ճակատ ուներ, որով-  
հետև նայում է երկու միանման փողոցների,— նշանավոր էր  
և՛ տան տերով, և՛ տնկեցով, ինչպես Գորիսում անվանում  
էին ուրիշի տանը վարձով ապրողին: Այդ տան ներքնահար-  
կում, ճիշտ այնպիսի գերզամբայում, որտեղ տիկին  
Վարսենիկը ձմեռվա համար պահում էր կարտոֆիլ, թթու կա-  
ղամբ, սոխ, ձմռան բողկ, նաև այնպիսի իրեր, որ ամառ-ձը-  
մեռ այդ կիսամութ ներքնահարկում էին՝ հնաձև թամբ, կոտ- 10  
րած տակառ, թիթեղի կտորներ, որ մնացել են տան կտուրից,  
պարսկական լազան և այլն,— ճիշտ այդպիսի գերզամբայում  
ապրում էր Հայաստանցի Ավետիսի ընտանիքը:

Ինչպե՞ս էր նա ընկել այդտեղ և ո՞ր գավառից էր,—  
հայտնի չէր. միայն եթե նրա մասին հարցնող էր լինում, պա-  
տասխանում էին, որ Ավետիսը փախստական է Հայքստու-  
նի կողմերից, և նրա խոսած լեզուն այն կողմի լեզուն է:  
Այդքան էին պատասխանում, որովհետև Գորիսում խեղճ մարդ-  
կանց մասին երկար չէին խոսում: Միայն պարուն Արշակը  
հայոց պատմության դասին պատմելով Մշո երկրից՝ ծխա- 20  
կան դպրոցի սաներին հարցնում էր.

— Կարդացել եք չէ՞ Ահարոնյանի «Արցունքի հովիտը»...:

— Կարդացել ենք, բոլորս միաբերան կարդացել ենք,—  
գոռում էր մի շարահմի:

— Ահա Հայաստանցի Ավետիսն այդ երկրից է: Այդ ար-  
ցունքի հովիտից, որ կոչվում է Հայաստան, իսկ հնում՝ Նախ-  
րի երկիր.— և պարուն Արշակը շարունակում էր դասը:

Հայաստանցի Ավետիսը Մուշից էր, թե Վանից, թե Ա-  
լաշկերտից էր,— ո՞վ գիտեր, որովհետև Գորիսում միայն պա-  
րուն Արշակը և Սասունն գրախանութի մարդիկ գիտեին Մու- 30  
շը և Վանը և Ալաշկերտը, իսկ մնացածների համար այդ ամե-  
նը յոթը սարից այն կողմ մի մութ երկիր էր, մի անհայտ Հա-  
յքստուն, որտեղից երբեմն գալիս էին մաղ ծախող զըն-  
շուններ, լարախաղներ, որոնք խաղից առաջ խաշակնքում էին  
հանուն Մշո Սուլթան սուրբ Կարապետի, գալիս էին օտարոտի

տեսքով մարդիկ, որոնք ոչ ուս էին, ոչ զիլանի քուրդ, ոչ կլայնկ անող լեզգի, ոչ խոյեցի կլլան էին, այլ Հայր սուրբի էին:

Ինքը՝ Հայաստանցի Ավետիսը, ոչինչ չէր պատմում: Նրանից այդ մասին չէին հարցնում: Նրան միայն ասում էին.

— Ավետիս, մի սաժեն քար է պետք... Հի՛նչ ես ասում,— իսկ Ավետիսը ոչինչ չէր ասում, այլ տաս օր իր էշով գետից մի սաժեն քար էր կրում:

10 — Ավետիս, անտառապահին ես ասել եմ փայտի համար... Քանի եղանակները լավ են... — և ասողն ուրիշ ոչինչ չէր ասում, որովհետև գիտեր, որ Խուրշուդ բնյի փայտը կրելուց հետո Ավետիսը պիտի կրի նրա փայտը. էշի և յուր սեփական մեջքով թագավորական անտառից պիտի կրի նրա փայտը:

Իսկ մոտիկ հարևանները միայն այն գիտեին, որ Ավետիսի ապրած գերզամբան լիքն է գեշ, սև և պեպենոտ աղջիկներով, որոնք երբեմն արևի տակ նստում էին, և ով նրանց տեսներ՝ միտք էր անում, թե Հայրստունցին ինչպես պիտի տեղաց անի այդքան աղջիկների, և նրանց ո՞վ կառնի:

20 Բայց առնում էին: Երկու տարին մի անգամ Ավետիսը տուն գալով, հետը բերում էր կոշկակարի մի աշակերտի, որ մանկուց քել էր, մի կաղ երիտասարդի, որ բրուտի արհեստանոցում կավ էր շաղախում, — վերջապես մի նախրապանի, որը, լսելով, ուներ իր սեփական կովը և նույնիսկ Խուռոփի ձորում ուներ սեփական այգետեղ: Միայն մի անգամ կոշկակարի քել աշակերտը, բրուտի մշակը և նախրապանն աչքի տակով նայում էին Ավետիսի մարդու գնացող աղջկան, և մի շտաբ հետո ներքնահարկում հարսանիք էր... Վերի հարկից մի գիշերով տալիս էին մեծ կարպետը, մի քանի ափսե, պղինձը, հարևանները ով մի քիչ յուղ, ով բրինձ, ով մի հնամաշ զգեստ, որ եթե հարսնացուին փոքր էր, Ավետիսի կինը պահում էր նրանից կրտսեր աղջկա համար:

Մախքի մեծ մասը հոգում էր տիկին Օլինկան, Հայ Կանանց Միության երկարամյա նախագահուհին: Եթե քրքրենք այդ Միության ժապավինյալ հաշվեմատյանը, գրանցված

կգտնենք հետևյալը. «Հայաստանցի Ավետիսի դատեր կնուն-  
քին հինգ ռուբլի դրամով» և կամ «Հայաստանցի Ավետիսի  
դատեր ամուսնության տասը ռուբլի»: Անարդարացի կլինե՞ր  
կասկածել այդ գրանցումների ճշտության,— նախ որ բոլորի  
դիմաց կա Ավետիսի ահռելի բուժի դրոշմը և ապա դեռ մինչև  
այժմ էլ ոմանք գորիսեցիներից հիշում են, թե երբ Հայաստան-  
ցի Ավետիսին աղջիկ էր ծնվում, հարևաններն ասում էին.

— Ավետիսն էլ մի հինգանոց աշխատեց...

Եվ վերջապես Կյորիսից մինչև Նորու, այնտեղից Ձորեկ  
և Ցաքուտ այժմ ինչքան գեշ, սև և պեպենոտ աղջիկ ու կին կա, 10  
ամենքը սերվել են Հայաստանցի Ավետիսից:

Կարելի է նաև այլ վկայություն բերել. այդ գյուղերում,  
ինչպես և Կյորեսում, կա հայրստուենցու հարսանիք  
արտահայտությունը, որ նշանակում է անաղմուկ հարսանիք՝  
առանց կերոնների, առանց մակարնեբրի, այսինքն հրա-  
վիրված հարսանքավորների, որոնք ունեին իրենց նշանը՝  
վառած մոմը և ունեին մակարապետը, որի նպատակն էր խմել  
և խմեցնել մակարներին, ջարդել և փշրել գավաթները, երբ  
հարկ լինե՞ր, պարել տալ ամենամոթխած աղջիկներին, հար- 20  
սանիքը ձգձգել, եթե հարսանքատանը գինին սպառելու վրա էր,  
իսկ աղջկա հայրը ժխտ էր, կովեցնել երկու տո՛մի և հաշ-  
տեցնել հին թշնամիներին,— մի խոսքով մակարները հրոսա-  
խումք էին, որ տիրում էին հարսանքատանը և տնեցիներին  
այնքան, մինչև գինու զորությունից պարտվեին: Եվ երբ պա-  
տահում էր, որ գինին քիչ էր, մակարապետը կանչում էր.

— Մենք հո հայրստուենցու հարսանիք չենք անում...

Եվ գինին գալիս էր, ով գիտե, որտեղից և ինչպես, աղջկա  
հոր բարեկամներն էին օգնում, թե՛ հենց ինքը՝ մակարապետը  
ուղարկում էր մի նշան, որով Շոր աղբյուրից էլ կարելի էր  
գինի հանել,— բայց գինին գալիս էր, և հարսանիքը շարունա- 30  
կում էր բորբոքվել:

Այդպես էր այն տունը ներքնահարկում, որի տերը թեև  
Գորիսի բնակիչ չէր հաշվվում և ոչ էլ կյորեսեցի էր, այլ միայն  
Հայաստանցի,— սակայն 1897 թվից ապրում էր միևնույն  
գերզամբայում: Ու թեպետ Ավետիսը մի էշով քսան տան քար

էր կրել, բայց ինքը ոչ տուն ունեւր, ոչ տնատեղ, այլ ունեւր յոթ աղջիկ, միշտ յոթը, որովհետեւ մեկին մարդու տալուց հետո, դեռ տարին չըլորած, ծնվում էր նրա նման մի աղջիկ, և նույնիսկ պատահում էր, որ հարսնամայրն աղջկա հարսանիքին պարում էր երկու հոգով:

— Հերիք է, մեղք ես, աղջի,— ասում էին հարևանուհիները Ավետիսի կնոջ, երբ Ավետիսը նորից մի հինգանոց էր աշխատում, իսկ կինն սկսում էր անիծել ամուսնուն: Կինն այնպես դառն էր դժգոհում և այնպես էր նկարագրում ամուսնու զորութունը, որ հարևանուհիները՝ տիկին Վարսենիկը, Խուրշուդ բեյի կինը, Անիկա տյոտյան երբ լսում էին քար կրող Ավետիսի ոտնաձայնը, բարձրանում էին պատշգամբը՝ լսող խաղալու:

Հայաստանցու բնական զերգամբայի գլխին պարում էր ինքը տանտերը՝ Պավլի բեյ Օրբելյանը: Ամեն կողմից նշանավոր այդ բեյը ոչ միայն «Մշակի» անխափան ընթերցողն էր և չէր ծառայում պետական հիմնարկում, այլ առանձնացած պարում էր տանը, ինչպես իշխանը դոյաւկում,— Պավլի բեյը ոչ միայն հայտնի էր ուսա քահանայի հետ ունեցած ընդհարումով, այլև ունեւր իր անձնական նպատակը: Ինչպես Հաստ Ներսես բեյը, նա միայն ուսպորտ չէր գրում, չէր ուտում և չէր քնում և քնելուց հետո բարակա չէր խաղում, այլ ուտելուց և քնելուց հետո Պավլի բեյն առանձնանում էր այգու խորքը և այնտեղ մտածում էր... Սյունյաց նախարարութեան հին և գալիք ժամանակների մասին:

Գորխի բեյերի մեջ նա միակն էր, որ պատրաստի ծխախոտ չէր ծխում, այլ Եփրատ Երեմի խանութից գնում էր դատարկ գլանակներ, որոնց Պավլի բեյն իր ձեռքով լցնում էր մեղրաջրով թրջած ծխախոտ: Այդ գլանակների տուփի մեջ լինում էր մի անակնկալ՝ թղթի թիթեռ, գունավոր դրոշակ և այլն... և ահա ամբողջ փողոցի երեխաները հավաքվում էին Պավլի բեյի բակը, երբ նրանք լսում էին, թե Պավլի բեյը բաց է անում նոր տուփ: Եվ այդ օրերին վա՛յ էր Հայաստանցի Ավետիսի աղջիկներին, որովհետեւ մինչև անգամ վեց տարեկան տղան կծեծեր հարսնացու աղջկան, եթե նրանք չըլտնեին ներքնահարկը: Իսկ Պավլի բեյը սպասում էր այնքան,

մինչև բակը լցվեր տղա երեխաներով և տուփը բաց էր անում: Տուփի միջի գունավոր դրոշակը կամ թղթի թիթեռը Պավլի բեյը պատշգամբից գցում էր ներքև, երեխաներն իրար վրա էին թափվում, իսկ տան տերը զվարճանում էր: Ամեն կողմից նշանավոր Պավլի բեյը եթե երեխաների մեջ նկատում էր 12—14 տարեկան տղաների, նրանց մեկ-մեկ կանչում էր պատըշգամբ և նրանց ականջը թեթև ոլորելով. պատվիրում էր.

— Ականջդ կկտրեմ, եթե լսեմ, որ ուրիշ ազգից ես աղջիկ առել... Հայ աղջիկ կառնես, իմացա՞ր...

Իսկ տղաները՝ ականջները քորելով իշնում էին և միտք էին անում, թե ի՞նչ պիտի անեն Հայրստունցի Ավետիսի գեշ, սև և պեպենոտ աղջիկը:

9

Այն փողոցը, որտեղ մեծ մասամբ բեյերի տներն էին և նրանցից մեկի՝ Պավլի բեյի ներքնահարկում ապրում էր Հայաստանցու ընտանիքը, — այդ փողոցը կոչվում էր Մանուչար Բեյի փողոց: Որքան էլ քաղաքը փոքր էր և շուներ ոչ մի ծխնելույզ և գործարանի շշակ շուներ, այլ ուներ հարուստ շուկա, զորք, բանտ, եկեղեցի և ներկայացուցչական վայրեր, այսինքն պետական հիմնարկներ, — այնուամենայնիվ քաղաքը քաղաք էր, ուներ քաղաքագլուխ, քաղաքային դոմա, փողոցներն անուններ ունեին՝ հաստատված քաղաքային դոմայի և նորին գերազանցության՝ գնե՞րալ նահանգապետի կողմից: Այսպես՝ մի փողոցը կոչվում էր Մանուչար բեյի փողոց, մյուսը՝ թագավորական, երրորդը՝ նահանգապետ Կավալյովի անվան, չորրորդն այն առաջին գավառապետի, որ ռազմա-աչքաչափով նկարահանել էր գետահովիտը, ապա քանոնով բաժանել հավասար վանդակների, յուրաքանչյուրը շորս հարյուր քառակուսի սաժեն: Բայց թեև գնե՞րալ նահանգապետը հաստատել էր, և փողոցների անունները փակցրած էին պատերին, տները համարակալած էին (և դեռևս պրոգրեսիստները դժգոհ էին քաղաքագլուխ Մաթևոս բեյի պակաս կողմից): — այնուամենայնիվ ժողովուրդը, այսինքն Կյորեքը՝ Շենը իր բոլոր թաղերով և հարե-

10

20

30

վան գյուղերը ոչ փողոցի անուն էին տալիս և ոչ տան համար-  
ներանք ասում էին՝ Կալիսն պա, և բոլորը պատկերացնում  
էին հին կալերը քարափնների գլխին, որ դարձել էր քաղաքի  
գրոսսավայրը, ավելի ճիշտ, այն վայրը, որտեղ գիմնագիստ-  
ները մեջքի վրա պառկում էին և կամ նվազում էին կիթառ,  
ձանձրույթից թքելով դեպի ձորը, դեպի ձորի հին մարադները:

Կյորեսեցիք, եթե ցույց էին տալիս մեկի տան տեղը, ասում  
էին՝ Սիմոն բեյի տան գլուխը, և բոլորը գիտեին,  
որ խոսքը այն Սիմոն բեյի տան մասին է, որի շան ասից  
10 մինչև անգամ մուրացկանները մուտք չունեին, Միրաքին  
թումբը, — և նույնիսկ նրանք, որոնք երբեք չէին տեսել այդ  
երբեմնի բուրը, գտնում էին քաղաքի այն մասը, որտեղ Ավա-  
գիմովների տներն էին, ռուսաց դպրոցը և փոստը, Գոմշի  
փոստը՝ շուկայի նոր մասն էր, Պասաժը՝ մինչև քաղաքային  
գումայի շենքը: Այդ տեղն այդպես էին կոչել շատ հնում, այն  
ժամանակ, երբ այնտեղ աղբյուրներ կային, որոնց ջրերում  
նստում էին Կյորեսի գոմեշները: Այժմ ոչ գոմեշներ կային, ոչ  
նրանց աղբյուրները, բայց հին անունը մնացել էր և դեռ հնչում  
էր այդ անունը, ինչպես Պասաժի հիմքերի տակ խոխոջալով  
20 գնում էին հին աղբյուրները...

Այն փողոցում, որ կոչվում էր Հին ճանապարհ,  
✓ ապրում էին արհեստավորներ, մեծ մասամբ բնիկ կյորեսեցի  
Նրանք ընտրել էին այդ գետափը գուցե նրա համար, որ  
հեղեղման վտանգի պատճառով այդ փողոցի տնատեղերն  
աժան են եղել, — գուցե և այն պատճառով, որ գետից այն  
կողմ նրանց հայրական բոստաններն էին՝ բակլայի, կարտո-  
ֆիլի և դրումի անսպառ բերքով, որ այնուամենայնիվ գար-  
նանամուտին սպառվում էր, որովհետև արհեստավորների մեջ  
այնպիսի ուտողներ կային, ինչպես օրինակ, Չաքմալի Վես-  
30 կանը, հյուսն Ասանը և թամբագործ Թևին, որոնք եթե երբեք  
միասին մակար գնային, հարսանքատիրոջ շունը սոված  
կմնար:

Այդ փողոցում ապրում էին հյուսներ, քարտաշներ, կոշկա-  
կարներ, թիթեղագործ, ներկարար, նաև մի քանի բեյեր, որոնք  
մյուս բեյերի շրջանից դուրս էին, ինչպես օրինակ՝ երրորդ  
Ներսես բեյը, որ կոչվում էր Պրիստավի Ներսես բեյ, որով-

հետև մի ժամանակ նա եղել էր պրիստավի գրադիրը: Բայց այժմ մնացել էր միայն անունը, և ոչ ոք նրան բանի տեղ չէր դնում՝ ոչ իրենք բեյերը, ոչ կիներ և ոչ հարևանները: Մի ոտբլուց ավելի նրան կաշառք չէին տալիս, ավելի հաճախ տալիս էին մի արծաթ արասի և երբեմն ոչինչ չէին տալիս, այլ միայն ասում էին.

— Ներսես բեյ, էս անգամ կներես...

Հին ճանապարհի տները մի հարկանի էին՝ առանց բացառություն: Թեև այնտեղ էլ տնատեղերը գնել էին հավասար մեծության՝ յուրաքանչյուրը շորս հարյուր քառակուսի սաժեն, բայց որովհետև եղբայրներն իրար մեջ բաժանել էին միասին գնած տնատեղը, ուստի տների թիվն ավելի էր: Եվ երբ ժայր էր առնում երեխաների մահլա կոփը՝ կոփը տարբեր փողոցների երեխաների միջև, ձմեռը՝ ձյունագնդերով, աշնան դեմ՝ արևածաղկի գլուխներով, եգիպտացորենի կոթերով, նետ-աղեղով, երբեմն քարերով և նույնիսկ շներով՝ երբ յուրաքանչյուրն իր շան շղթան թևին փաթաթած գնում էր կովի, — Հին ճանապարհի տղաները միշտ հաղթում էին և պատահում էր, որ հաղթողները հակառակորդին քշում էին մինչև շուկա և մանկական մի նետ դիպչում էր գարադարուղի Մուխանին, կամ դդումի կլեպը թռչում էր քաղաքային դումայի պատշգամբը:

Նրանք կովում էին «ոռուսներին» դեմ, այսինքն բեյերի և վաճառականների տղաների դեմ, որոնք սովորում էին թագավորական դպրոցներում՝ Գորիսում և այլ քաղաքներում, իսկ Հին ճանապարհի տղաները՝ Կյորեսի հայոց ուսումնարանում: Վերջիններս շունեին ոչ համազգեստ և ոչ էլ դպրոցի նշան՝ գլխարկի և գոտու վրա: Հայոց դպրոցի երեխաները տրեխներով էին, տարվա մեծ մասը գլխաբաց: Դպրոցից հետո նրանք աշխատում էին տանը և բանջարանոցներում, օգնում էին ծնողներին՝ արհեստանոցներում, և պատահում էր, որ դպրոցից վերադառնալով, ներկարար Նեսու տղան հագնում էր հոր մեծ կոշիկները և ներկի դուլերը ձեռքին հոր հեռ գնում էր աշխատանքի:

Եվ դեպք էր լինում, որ տուն գալուց Մանուշար բեյի փողոցում «ոռուսները» կտրում էին Նեսու տղայի առաջը...

Այն կողմից մեկը լուր էր բերում, և ահա Հին ճանապարհից թռչում էին նրա ընկերները շներով, քարերով, նետ-աղեղով, մահակներով, և նույնիսկ մեծերը դժվար էին դադարեցնում նրանց քարե կարկուտը:

Ամառը կռվի վայրը գետն էր, Հին ճանապարհի տակով անցնող գետը: «Ռոսսները», այսինքն գիմնազիստները, որոնք ամառային արձակուրդին տուն էին եկել,— խմբերով գալիս էին լողանալու, որքան էլ շատ լինեին նրանք և նույնիսկ իրենց հետ բերեին մեծահասակ մեկին, այնուամենայնիվ այդ էլ նրանց չէր փրկում կռվից, երբ նրանք մտնում էին Հին ճանապարհի տղաների կառուցած լողարանները:

— Մեր ջրերից դուրս եկե՛ք,— գետի մյուս ափից բղավում էր այդ տղաներից մեկը, երբ վաճառականների և բեյերի տղաներն արգեն հանվում էին, ավազի վրա շարելով իրենց փայլուն գոտիները, սպիտակ գլխարկները, որոնց պղնձե նշաններն արևից փայլվում էին:

— Կորի, ու՛ր իլ,— բղավում էր մի գնդիկ գիմնազիստ՝ ձյունաթույր մարմնով, ինչպես ձյունաթույր էր նրա սպիտակեղևներ, որ տաժանելի աշխատանքով լվացել էր լվացարարուհի Մինան:

— Ասում եմ դուրս եկե՛ք մեր գյուղից,— զայրացած բղավում էր Հին ճանապարհի տղան, որ առավոտ կանուխ տնից փախել էր, որովհետև գետափի ազատ պարտեզները նրան կանչել էին կեռաս ուտելու, փրցնելու մի քանի պատիճ բակլա, մի բանջարանոցից գողանալու կարտոֆիլ և գետափին՝ քարակույտերի հետևը խորովելու բակլան և կարտոֆիլը, որ նրա կ՛ճաշն էր, կ՛ընթրի՞քը:

— Չե՛ք գնում,— և զայրույթից նրա դեմքը կարմրում էր, ինչպես եթե տղան երեսին քսեր գողացած բալը: Ապա առաջին քարն այն կողմից վզզալով ընկնում էր գետի մեջ, լողացողներից մեկ-երկուսը, որոնք սրտով էին, դուրս էին թռչում և նրան ջշում էին դեպի պարտեզների խորքը: Եվ հաղթանակով վերադառնում էին...

Բայց նրանք դեռ նոր էին մտել ջուրը, երբ պարտեզներից Հին ճանապարհի տղաների խումբը, որ մինչ այդ, ո՛վ գետի,

որի պարտեզն էր ասպատակում,— նրանց խումբը, ինչպես վայրենիների ցեղ, շրթունքները բալի հյութից կարմրած, բութիկ և ցնցոտիների մեջ, իսկ ոմանք առանց ցնցոտիների, այլ մի շապիկով,— և արևից սևացած մարմիններով այդ սևամորթներն, ինչպես վայրենիների ցեղ, դուրս էին թռչում պարտեզներից, մոշի թփերից, թրմփալով վայր էին ընկնում ծառերից և վազում էին դեպի գետը՝ ով ձեռքին արևածաղկի կոթ, ով բանջարանոցից պոկում էր մի ձող, որի վրա փաթաթվել էր լորին, ով կտրում էր ուռննու ճյուղը, ով վազում և գոգը լցնում էր մանր քարերով, և նրանք թռնում էին՝ պատերի վրայով, շամբուտների միջով, բութիկ ոտքերով կոխելով և՛ ավազ, և՛ խոտ, և՛ փուշ: «Ուտոա՛»... հնչում էր նրանցից մեկի ձայնը, և սևամորթները սլանում էին: Սպիտակներն ահաբեկված իրենց պցում էին մյուս ամբը, ոմանք շորերն առած փախչում էին հեռու, ոմանք քարերի ետև դիրք մտած՝ փորձում էին ընդդիմանալ հեղեղին, որ գալիս էր աղմուկ-աղաղակով...

10

Նրանց բաժանում էր գետը, բայց հաճախ Հին ճանապարհի տղաները գետին շէին նայում, և շոր շէին հանում, այլ շորով իրենց պցում էին շուրը և լողում էին՝ ջրի մեջ բարձր բռնած ուռննու ճյուղը և արևածաղկի ցողունը, որով մյուս ամբին նրանք պիտի ծեծեին:

20

Երբեմն կոփվը թորթոքվում էր, անցնում էին ձեռնամարտի կամ խումբ էին նրանցից մեկի դոտին, մյուսի գլխարկը կամ գերի էին վերցնում մի սպիտակ գիմնազիստի, որ վախից թարս էր հագել շապիկը և շգիտեր ո՞ր է կոշիկի մեկը: Սպիտակը լալիս էր, կանչում էր մամա... Իսկ Հին ճանապարհի տղաները խոսում էին, թե ինչով ծեծեն նրա բաց մսերը՝ եղինջի թփով, թե՞ եգիպտացորենով: Սակայն պատահում էր, որ նրանցից մեկը մեղքանում էր, թե՞ հիշում էր իր մորը, որ այդ գիմնազիստի հոր տան լվացարարուհին էր կամ նրանց վաղեմի հացթուխն էր: Եվ նա երեսը շրջելով ասում էր.

30

— Թողեք կորչի գնա...— և նրանք թողնում էին, որ գեթին արցունքը սրբելով շորերը հագնի:

Նրանցից ոմանք զարմացած նայում էին նրա սպիտակ շապիկին՝ եզերքը կարմիր կար, նայում էին մաքուր կոշիկներին, գուլպաներին և նախանձում էին: Նրանց մեջ տղաներ կային, որոնք միայն մի շապիկ ունեին, քաթանե հաստ շապիկ, որ հագնում էին միայն ձմեռը: Ծվ այդ փոքրիկ վայրենիներն այնպես էին նայում, ինչպես նախամարդը կնայեր Տեր զի բազում ավագ քահանային:

«Ռ ու ս ն երը» հեռանում էին, սպառնալով հեռվից, երբեմն ապահով հեռվից քար էին շարտում, և այն ժամանակ 10 Հին ճանապարհի տղաները նրանց թշում էին մինչև թագավորական փողոցը, մինչև Մանուշար բեյի փողոցը և վերադառնում էին գետափ, որտեղ նրանք թագավոր էին:

Հին ճանապարհը թեև խուլ փողոց էր, բայց նշանավոր էր իր ալամ եսիր տղաներով: Նրանց հայրերը՝ արհեստավորներ, ապա խարչների թևատորոսը, որի ճաշարանում երկու կոպեկով «կես պորցի» քոզքաշ էին ուտում Ամիր Աստանը, սալդատ Երանոսը, Ճոլուն Կևին, Քյաթառան, նաև Բազարնիկ Խաչին, որ սեփական տուն ուներ Հին ճանապարհի վրա,— այդ մարդիկ կազմում էին մի առանձին խավ, 20 մի քարացած շերտ, որ գալիս էր հին Կյորեսից, ինչպես Հին ճանապարհը Կյորեսի հին ճանապարհն էր դեպի Միջնահանդ, դեպի Սպիտակ քարերը՝ այն խոտհարքներն ու արտերը, որ վաղ ժամանակ եղել էին Կյորեսի հողագործների կալվածքը:

Այդ փողոցը տանում էր դեպի Շենը հին շուկայի հրապարակով, այնտեղ, ուր ներկարարի կարասներն էին, Մանգասար դայու հնաձև խանութը, համետ կարողներ և դարբիններ և որտեղ Ափունց Ակու ամին աշխարհի շորս ծայրից ստանում էր ձորկեցիների տխուր նամակները...

Հին ճանապարհով էր անցնում Շենի նախիրը, երբ տավարածը նախիրը թշել էր Սանդ աղբյուրի ձորը: Կյորեսեցիներից նրանք, որոնց կալերը ջրաղացների մոտ էին, այդ փողոցով էին խառնվում, որովհետև քաղաքի մյուս փողոցներում արգելված էր երթևեկությունը խոտ և հունձ կրողների, նախրի և նախրապանի: Հին ճանապարհը Կյորեսն էր Գորիս քաղաքի մեջ, Կյորեսն էր երկարածոր լեզվով, դժվար անուններով և խրթին բարբառով, իր գեթի երեխաներով, որոնք Շենի

տղաների հետ միացած կովում էին բուլկի ու տողների գեմ, շարունակելով հին կռիվը, որ գալիս էր Ղաթրինի Աղալոյի առասպելական ժամանակներից:

Այդ հին փողոցում հին էին այն մի քանի տները, որոնց մասին դժվար է ասել, թե ինչպես էին ապրում, բայց խոսք պիտի ասել, որովհետեւ նրանք ըստ ամենայնի հետաքրքիր մարդիկ էին, նրանք հին կյորեսեցիներ էին և իրենց գործերով անուն էին հանել, ինչպես Զիլֆուղար բեյը՝ կաշառակերությամբ, Պավլի բեյը՝ «Մշակ» կարգալով, Քյալլա Մատուրը՝ ձեռագիր շարադրություններով, լիմոնադի գործարանի տերը՝ 10  
Շոր աղբյուրի ջրով և այլն:

Հին ճանապարհի այդ բնակիչները ո՛չ արհեստավոր էին, ո՛չ վաճառական և ո՛չ բեյ: Նրանք երբեք մաճ չէին բռնել և ոչ էլ գիտեին իրենց պապեկան կալի տեղը: Նրանք միայն լավ գիտեին Բարի Աջողումի գինետունը, որի առաջ մեծ ընկուզենին նրանց համար միշտ ստվեր ուներ, ինչպես Բարի Աջողումը՝ գինի: Նրանք լավ գիտեին գետը և գետափի պարտեզները, կյորեսի բոլոր ձորերը՝ հեռու և ահավոր, գիտեին անտառը, որ ինչպես մութ ճանապարհ սկսվում էր քաղաքի կողքից և անընդմեջ գնում էր մի օր, երկու օր, տասն օր գնում էր և անցնում 20 էր Արաքսը՝ ոռու-պարսկական սահմանը և այնտեղից էլ ով գիտե ուր էր գնում անտառն իր գաղտնի ճանապարհներով: ✓

Նրանք գինի խմողներ էին, նրանք անվանի մակարապետ էին, գլխավորն այն հրոսախմբի, որը երբ հարսանիքի գինին պակասում էր, քղավում էր՝ «մենք հո հայրստունցու հարսանիք չենք անում...»:

Նրանց սննդատու մայրը գետն էր և անտառը: Փարնանամուտին, երբ գետը պղտոր գալիս էր, հունը մինչև փիերը լի և պատահում էր, որ փիերից դուրս գալով գետը հեղեղում էր եզերքը, քանդում էր թույլ կամուրջները, արմատահան պուկում էր ծառերը և խորքում քարեր գլորում այնպիսի դրդոցով, որ թվում էր թե փլվում են լեռները, — այդ ահարկու ժամին, երբ Հին ճանապարհի բնակիչներն ահ ու դողով էին լսում գետի որոտը, — նրանք՝ աղ ու հացի եղբայրները, ջրերի մեջ որսում էին այն ձուկը, որ հարավից քարձրանում էր գեպի լեռնային աղբյուրները:

Գարնանամուտին Սալյանից, Ղարաբաղի տափաստաններից, մինչև անգամ շոգ լենքորանից հազար-հազար մարդ, ոչխար, ուղտ, ձի քոշով և քարավաններով բարձրանում էին Զանգեզուրի լեռնային արոտները: Այդ ահագին բազմությունն անցնում էր Դոլուն Կարիի, Խանձատ Խուղու և աղ ու հացի մյուս եղբայրների կառուցած փայտե հասարակ կամուրջով: Նրանք կամուրջի վարձ էին հավաքում, բուրդ, ոչխար, դրամ և այդ ամենը գնում էր գինու և զվարճության:

10 Նրանք փորձված ձիավարներ էին, և պատահում էր, որ Հաստ Ներսես բեյը կամ մի ուրիշ բեյ Բարկուշատի խաներից ընծա էր ստանում այնպիսի հրեղեն նժույգ, որին բեյը վախենում էր մոտենալ: Եվ ահա կանչում էին Հին ճանապարհի վարժ ձիավորներին, բազմությունը հավաքվում էր հրապարակում և Դոլուն Կարին, մահն աչքի առաջ, խեղճացնում էր կատաղի նժույգին: Վերջապես նրանք որսորդներ էին խուլ ծմակներում և ձորերում, որտեղ ոչխարի մոռացված աղաքարի վրա գիշերով իջնում էին պախրաները:

20 Ձմեռը գետը սառչում էր, ձուկն իջնում էր հարավ, որսը թաքնվում էր, ով գիտե, ինչ որջերում, և պակասում էր նրանց գինեղրամը: Այն ժամանակ լուրեր էին պտտվում, թե Չորեկից կորել է մի երինջ, կորել է խոշա Բաղիրենց կովը, գիշերով մարդ է մտել Տեր զի բազումի մեղվանոցը, և ձմեռն ինչպիսի լուրեր չէին տարածում Գորիս քաղաքում: Եվ նաև շշնջում էին, թե Խուռուփի ձորում գտել են կորած երինջի գլուխը, կովի հետքերը գնացել են մինչև գետափ և իբր թե Տեր զի բազումի մեղվանոցից մի արկղ մեղու թափել են ջուրը և ջրի ափին թողել են դատարկ արկղը: Եվ ով շշնջում էր, ավելացնում էր նաև Դոլուն Կարիի, Խանձատ Խուղու և մյուս եղբայրների անունը և լուում էր:

30 Ծի՞շտ էր այդ, թե շար բամբասանք էր,— դժվար է ասել... Բայց ստույգ է, որ ամառ-ձմեռ, ամեն երեկո Հին ճանապարհով հարբած տուն էին վերադառնում եղբայրներից երկուսը, երեքը, երբեմն մի ամբողջ խումբ: Նրանք քայլում էին, շուխանների փեշը կրճբով պատած մինչև ուսը, գդակները ծուռ, գանդաղ օրորվում էին, օրորալով երգում էին հանկարծ փողոցի

մեջ տեղը կանգնելով, անհայտ է ինչու, հայհոյում էին, ինչպես մի ժամանակ Գյուրջի Օբին հրապարակում հայհոյում էր:

Երբ որոտում էին նրանց ձայները, Ներսես բեյը,— այն, որ կոչվում էր Պրիստավի Ներսես բեյ,— նա էլ թաքնվում էր դարպասի անկյունում կամ շտապում էր տուն մտնել: Նրանք բեյերին չէին սիրում, նաև չէին սիրում, երբ իրենց փողոցում հանդիպում էին մի վաճառականի, որին մի մուժ քամի բերել էր այդ խուլ փողոցը:

— Թող կորչի գնա՛... — ասում էր ընկերն ընկերոջը, իսկ վաճառականն արագացնում էր քայլերը, ինչպես սպիտակ գիմնագիստը, որ ահից կանչում էր մորը... 10

## 10

Մենք սկսեցինք հին ջրաղացներից, որոնք գետի աջ ափին են, ընկուզենիների տակ, և որտեղ ծերունի ջրաղացպանը, երբ չէր ննջում, պատմում էր Յուլ Օհանի ժամանակներից, երբ ցորենն իբր թե հրնի կորիզների շափ էր, և չկար այն հավի կուտը, որ շալակով ջաղաց էր բերել մի աղքատ կին: Ապա անցանք նավթի պահեստի մոտով, որտեղից սկսվում էր քաղաքը և նկարագրեցինք հին շուկան՝ Գորիսի շուկայի արհամարհված ծայրը, որտեղ առևտուր անելը հավասար էր կոտոր ընկնելուն: 20

Այնտեղ կային ներկարարներ, որոնք ներկում էին կարասի կապույտ և թուխ մրուր և տորոնի կարմիր և ապա ներկած կտավները զուլ-զուլ փռում էին քարափների վրա և գույների խաղով զվարթացնում էին հին շուկան: Այնտեղ կային կանացի շմուշկ կարող վարպետներ, որոնք կարմիր քոշ էին կարում նորահարսի համար, կանաչ՝ միջահասակ կնոջ և նուան կլեպի գույն՝ այն սպառավ այսաների համար, որոնք գուցե հագնում էին վերջին գույգը: Այդ շուկայում էր այն ղանավուզը և թիրմահին, որ ամբողջ քաղաքում այլևս չկար, և միայն Մանգասար դային ուներ: 30

Այնտեղ էին հին դարբինները, որոնք անիվ կապել չգիտեին, բայց խոփը զոգում էին ինչպես պողպատե թուր և այնպիսի շղթաներ էին կռում, որ յոթ գույգ եզ քառասուն օր ծանր

գուժանը քաշում էին քար հողերում, — և շղթան շէր կտրվում: Այդ շուկայում էին դալլաք Բոգին և նույնպես դալլաք Ասրին, որոնց երբեմն կանչում էին հիվանդից արյուն առնելու, նաև կանչում էին զարդարելու նորափեսայի մազերը:

- Վ Շատ հին մանրավաճառներ կային այդ հին շուկայում՝ ընտիր ծամոնի, մեղրամոմի, մախաթ ասեղների, ոսկրե կոճակների, ծիլավոր կանֆետի և քթախոտի այնպիսի մանրավաճառներ, որոնք մի ծամելու ծամոնը փոխում էին երկու ձվի, կես գրվանքա մեղրամոմը՝ մի ծաղկավոր գուլպայի հետ:
- 10 Նրանք գիտեին, որ ձորկեցի Ադի դային քաշում է դարաբունոթի, իսկ նորուեցի Բադի դային՝ կապովի բունոթի:

Վ Այստեղ նաև կային երբեմնի մանրավաճառներ Ափունց Ակու ամին և Բադամ Բախշին և նրա հարեանը, որոնք ոչ լամպի ապակի էին ծախում և ոչ Ղադանի սապոն, այլ նամակը հեռու բռնած կարդում էին խանգարված ձայնով, կարծես ճոռում էր խանութի ժանգոտ դուռը.

«Եվ կհարցնեմ ձեր որպեսությունը, նաև ինձ բարի հիշողաց...»:

- 20 Այդպես էր Կյորեսի հին շուկան՝ խեղճ և խարխուլ ու թեև այնտեղ շաքարի գրվանքան մի կոպեկ թանկ էր բուն շուկայից, այնուամենայնիվ, Ցաքուտ, Նորու, Մեզար և Ձորեկ գյուղերում, ինչպես և Շենում՝ Կյորեսի մեռնող միջնաբերդում գյուղացիներ կային, որոնց ասելով նոր շուկայի շաքարը երեխաների բերանում շուտ է հալվում, և նրանց ատամների տակ կապույտ կայծ չի տալիս, ինչպես հին շուկայի շաքարը: Իսկ ձորկեցի Ադի դային ասում էր.

— Կյորեսի զարա բունոթին որ շիներ, հիմա Ադի դայի շկար...:

- 30 Այդ գյուղերովն էր ապրում Կյորեսի հին շուկան: Նրան պահում էր Շենը, որ ամենքից մոտիկն էր: Պատահում էր, որ երեկոյան Շենից մի երեխա վազելով բարձրանում էր հին շուկան:

- Վարդան դայի, նանին ասաց մի չերթ շաքար տա:
- Դու ո՞ւմ տղան ես:
- Ցամաք Ավանի տղան եմ:

— Հիվանդ ունե՞ք...

— Չէ՛, վարդան դայի, տունը մարդ է գալու...

— Չլինի՞ մեծ քրոջդ ուզող կա:

— Եսի՛մ... — և երեխան նիհար ուսերն իրար էր անում, և նրա տխուր աչքերի մեջ վարդան դային տեսնում էր իր հարցի պատասխանը:

— Նանուդ ասա՛ թե ձու կա, ձու ուղարկի... Ուզող կա: Հա, էն սապոնի պարտքն էլ թող ուղարկի:

— Էզուց նանին գնալու է Սիմոն բեյի տանը խմոր հունցի...

Այդպես էր առուտուր անում հին շուկան, որի մանրավաճառները երբ ձանձրանում էին, բերանն էին գցում ծամոնի մի կտոր կամ սկսում էին լույսի դեմ պահել ձվերը, որոնց անարատթյունը նրանք ստուգել էին քսան անգամ... Եվ կամ վերցնում էին եզան պոչից ճանձաքշին, և ճանձերի հետ բարձրանում էր փոշու ամպը: Երբեմն Բադամ Բախշին քոշերը քստացնելով մոտենում էր պայտարին, որը ծառի ստվերում ննջում էր.

— Հերիք քնես, հարևան...

— Է՛... — և պայտարը ճմլթկալով հորանջում էր, հորանջում էր կոտորելով մեջքի և բազուկների մկանները, և չէր վերջանում նրա հորանջյունը, ինչպես արձագանքը, որ գալիս է բարձր սարից՝ նախրապանի կանչից և դեռ յոթ ձորում յոթ անգամ պիտի դրնգա:

— Տաքը զոռում է, հա՛...

— Մի բադյա նոր քաղած թուֆ լինե՞ր, ի՛նչ կուտե՞ի...

Մոտենում էր երրորդ հարևանը՝ ասիական դերձակ Դարզի վաները, որ շալե շալվարի աղվեսիքի վրա նեղվել էր քաղցր նիջից և ջրակալած աչքերով այլևս չէր ջոկում ասեղը:

— Վաներ, ասում եմ մի բադյա թուֆ լինե՞ր...

Իսկ վաները դեռ ննջում էր: Եվ հանկարծ քնից զարթնելով, Դարզի վաներն ասում էր.

— Ա՛յ թե մի բադյա նոր քաղած թուֆ էր եղել...

Բայց պատահում էր նաև, որ Բադամ Բախշին, Դարզի վաները և այն պայտարը վճռում և գնում էին Մեղրաքերծի տակ թուֆ ուտելու և հետո, մի քանի ամառ, նրանք պատմում

էին, թե ինչպես մի անգամ երեքով գնացին Մեղրաքերծի այգիները...

- Մենք սկսեցինք դետափի շրաղացներից և Կյորեսի հին շուկայի միջով մտանք իսկական շուկան, որ Գորիսի թագն էր, նաև տեսանք այդ թագի դոճարը՝ Պասաժը, գոհարեղենի և ակնեղենի խանութներով, Եփրատ Երեմի կողոնի ալ մագագիներով՝ Կուր դը բեժա, Դրուժբա, Նադեժդա և նույնիսկ Սասուն անունով, որ մյուս անունների մեջ օտարոտի էր, ինչպես Հայաստանցի Ավետիսը բեյբերի և վաճառականների փողոցում: Որքան մեր ուժն էր, աշխատեցինք ճշմարիտ նկարագրել Ավադիմովների ավագ եղբայր Սողոմոնին, որին մենք շենք անվանել Ամբարի կատու, այլ գործ ենք ածել ժողովրդական անունը, — Ամբարի կատու Սողոմոնի ծանր զբաղմունքը և անկաշառ մտահոգութունը՝ սոված գյուղացիներին ապահովելու ալյուրով և այն վաճառել առքի գնից պակաս, ինչպես երդվում էր նա, ձեռքը խփելով մեռնաչրած երեսին: Ոչինչ շենք ավելացրել խոջա Մակիչի բնածին բարության վրա և նորից վալյում ենք, որ նրա սահմանած հաստատուն կանոնն էր հաճախորդին դատարկածեռն ետ չվերադարձնել, որովհետև այդ նրա համար անպատվություն էր, ինչպես եթե հյուրը նրա սեղանից վեր կենար առանց մի կտոր հաց կտրելու: Իսկ ինչ վերաբերում է նորահարսին նվիրած վարդ թաշկինակին, այդ կարող է հաստատել հենց, օրինակ, նորուցի Սիմոն Նարինյանը («Նարինի թոռ Սիմին»), որն ի տրիտուր երեք արշին պատանքի կտավի, երեք տարի հետո խոջա Մակիչին նվիրել էր իր միակ կովը, նաև ասել էր.

— Ասոված թող գլխիդ խռով շանի իմ կովը, խոջա Մակիչ...

- Նույն արդարամտությամբ նկարագրեցինք Եփրատ Երեմի առևտրական կշիռը Գորիս քաղաքում, նրա խոսակցությունը կյուրմիլլա կվովնայի հետ, հոր՝ խոջա Մակիչի ներկայությամբ: Ասում ենք առևտրական կշիռը, որովհետև Եփրատ Երեմը քաղաքում այլ կշիռ ևս ուներ, ավելի ճիշտ՝ կշիռներ ուներ: Նա պարագլուխն էր երիտասարդ վաճառականների, քաղաքային դումայի դեպուտատն էր, և պրոգրեսիստները,

որոնք դժգոհ էին քաղաքագլուխ Մաթևոս բեյից և սպառնում էին նոր ընտրություններին նրան սև քվե տալ, իրար մեջ գաղտնի խոսում էին, որ նոր քաղաքագլուխ պիտի լինի Եփրատ Երեմը՝ Լյուդմիլլա Լվովնայի բարեկամը և գավառապետի հետ բակարա խաղացողը:

Նրա խանութը հավաքատեղի և կենտրոն էր քաղաքի բարձր մտավորականության՝ բժիշկ Տիկրան Պետտիչի, անտառապետ Արամ Արկադիչի, թագավորական դպրոցի տեսուչ Սահակ Սերգեյիչի և հաշտարար միջնորդ Սուդակիինի, որը լի բերալ էր, հիանալի գիտեր լատիներեն և իբրև թե ոտանավորներ էր գրում... Այդ ընտիր հասարակության ժամադրավայրն էր Եփրատ Երեմի խանութը: Իսկ ինչ վերաբերում է Լյուդմիլլա Լվովնային, նա այդտեղ միշտ գալիս էր իր շնիկի հետ, տիկին Սարրա Կասպարովնայի ընկերակցությամբ և սուտ է, թե իբր Եփրատ Երեմը այգիներում շոշափել է Լյուդմիլլա Լվովնայի պատիվը:

Գավառային պահակախմբի պետ Ավթանդիլ Խուրշուդ բեյի և Պենզայի 686-րդ դրուժինայի երիտասարդ սպայի մասին հարեանցի ակնարկեցինք, ինչպես հարեանցի հիշեցինք այն հովվին, որ հրապարակի ժխտրի մեջ կանչում էր իր կորած շանը՝ անհանգստացնելով քաղաքագլուխ Մաթևոս բեյին: Այդ այն պատճառով, որ նրանք՝ Ավթանդիլ Խուրշուդ բեյը, երիտասարդ սպան և շուն որոնող հովիվը, պատահական էին շուկայում, ինչպես գետնի երեսով անցնող անգղի ստվերը: Այդ սակայն չի նշանակում, թե Ավթանդիլ Խուրշուդ բեյը աննշմարելի անձնավորություն էր Զանգեզուրում... Նա այնքան ահարկու էր, երբ, օրինակ, անտառից գութանի փայտ կտրած գլուղացիներին կանչում էր հարցաքննության: Նա ծառ շատ էր սիրում և մինչև անգամ ափսոսում էր դալար ճյուղին, ուստի և գլուղացիներին ծեծում էր եզան ջիլերից հյուսած մտրակով... 30

Գորիսում առավոտն էլ այդպես էր բացվում՝ մսագործների խանութների հետ միաժամանակ: Արևն ընկնում էր դեղին դմակների վրա և առաջինը մոտենում էր շուկայի պահակ Կետանը, ապա մյուսները միևնույն կարգով ու ծեսով, ինչպես նույն ծեսով ճաշում էր Հաստ Ներսես բեյը: Գուցե միայն կի-

բակի՝ օրերն այդ կարգը խանգարվեր, որովհետև երբեմն կիրակի օրերը միս էին առնում ներկարար նեսին, լվացարարուհի Մինան, և պատահում էր, որ Հայաստանցի Ավետիսն էլ մի գրվանքս միս էր առնում: Այդ ժամանակ խոշաներից մեկն ասում էր.

— Շեն քաղաք ես, Գորիս, որ մինչև անգամ զարիբ Հայրաստունցին էլ է միս առնում...

Գարադա-բուլդի Մուխանի ձեռքով միսն ուղարկեցինք Հաստ Ներսես բեյի տունը ոչ այն դիտումով, որ ցույց տայինք, թե ինչքան սերտ բարեկամութուն կար Ներսես բեյի՝ գավառային վարչության դիվանապետի՝ Զանգեզուրի կեսագավառապետի և մի խեղճ պաշտոնյայի միջև, որը թեև աստիկան էր և թուր ուներ նարնջե ծոպերով, բայց լինելով բուն կյորեսեցի, երբեմն տրեխ էր հագնում և գնում էր խոտհնձի: Մեր դիտումը շէր ցույց տալ նրանելի համերաշխութունը սանդուղքի երկու ծայրերի, որովհետև այդ նպատակով կարող էինք ասել, որ Ներսես բեյը, հետկեսօրյա քնից առաջ, երբ արձակում էր տուժուրկայի կոճակները, հարցնում էր կնոջը.

20 — Վարսեն, Մուխանին բան-ման տվի՞ր...

— Տվի, Ներսես բեյ, մի հին շալվար ունեիր, տվի...

Միսը Մուխանի ձեռքով ուղարկելով՝ մեր բուն նպատակն էր խոհանոցի խորքից լույս աշխարհ հանել տիկին Վարսենիկին, որը թեև Հաստ Ներսես բեյի կինն էր և ուներ շորս երեխա, բայց միևնույն ժամանակ Գորիսի Հայ կանանց միության փոխ-նախագահուհին էր, և շնորհիվ նրա եռանդուն ջանքերի, Զանգեզուրի գավառապետը մուծել էր տասը ուրբլի՝ հօգուտ որբերի և այրիների... Պատահում էր, որ տիկին Վարսենիկը ճաշից հետո շտապում էր իմանա, թե արդյոք չե՞ն այրվել տիկին Վառինկայի գաթաները, բայց միաժամանակ տիկին Վառինկայից նա տեղեկանում էր Միության առկա գումարի մասին, որովհետև տիկին Վառինկան կանանց միության գանձապահուհին էր և դրամը պահում էր իր սեփական դրամների հետ, հնաձև սնդուկի մեջ, որի բանալին ոսկե շղթայով կախված էր տիկին Վառինկայի կրծքից, իսկ նրա կրծքը՝ ամենաապահով վայրն էր Գորիս քաղաքում:

Ներկայացնելով Պավլի բեյ Օրբելյանին, նպատակ ունեինք ցրելու այն կարծիքը, թե Գործարի բեյերը միայն ուտում և քնում էին, որպեսզի երեկոյան բակարա խաղան, մի քիչ բամբասեն, ապա կուշտ ուտեն և քնեն խոր քնով: Այդ կարծիքը կարող էր ստվեր գցել Օրբելյանների տոհմի վերջին շառավղի՝ Պավլի բեյի անվան և մոռացութեան տալ այն, ինչ նրա պատմական արժանիքն էր: Պավլի բեյը «Մշակ» էր ընթերցում և ոչ «Նլիզավետպոլի նահանգային տեղեկատու» ռուսերեն լրագիրը. փողոցի տղաներին նա քարոզում էր հայ աղջիկ առնել և վերջապես նա էր հայաստանցու ընտանիքին օթեանել, որովհետև այն ամենի ժամանակ, երբ Զանգեզուրն ռուսանում էր, Պավլի բեյ Օրբելյանն օր ու գիշեր մտածում էր հայոց-թագավորության, ավելի ճիշտ, Սյունյաց նախարարության վերականգնման մասին:

Նրա մահից հետո մնացած գրությունները և մանավանդ անձնական օրագրերը վկայում են, որ երբ Հաստ Ներսես բեյը փոխ-նահանգապետին ռապորտով զեկուցում էր, թե Միծեռնավանքի ուխտագնացութեան օրն անհայտ ավազակներ հարձակվել են ուխտավորների մատաղացու անասունների վրա, և երկու կողմից հրացանաձգություն է եղել,— նույն այդ դեպքի մասին Պավլի բեյ Օրբելյանը, գուցե հենց նույն օրը, այսպես է գրել.

«Արյունարբու և զազանաբարո ավազակներ, ազգով թուրք և դարա-մամադ ցեղից զինված հարձակվեցան ուխտավորաց վերա, և քաջն Ավան Ղուրդանց ի գեղջեն Մխրթարա սպարապետի, Թորոս Թելունց նույն գեղջեն, Աբեթնակ Տաթևացի և երեկի Զոհրաբ, մականվանյալ Զննչիլ-Ղոան՝ Աղվանից գեղջ, միահամուռ արշավելով դարբադադ արին ավազակներաց, հետ խլելով գերի վարչալ ոչխարն և ուխտն կատարեցին Սյունյաց Սահակ իշխանի գերեզմանի վերա: Նաև այս իմանալի է, որ Հաջի Սամլուի գավառամասի պրիստավն Վոսկրեսենսկի, ազգով ռուս, հովանավոր է վերագրչալ դարա-մամադ ավազակաբարո ցեղին և ինքն է մեծ կաշառու և հայատյաց: Ուրիշ փաստեր նմանապես կհիշատակենք ժամանակին»:

Այդպես է գրել Պավլի բեյն այդ սովորական դեպքի մասին, իսկ շատ բեյերն՝ նա այնպես է պախարակել, որ նրա

գրածը, ինչպես Գորիսում էին ասում, գ ա զ ե թ ք ց ե լ ու  
բ ա ն ե ր Կ ն ։

«Մեկիք-Հյուսիսիւսանց Խանշալ բեյի պապն եղած է մա-  
տուռից մոմ գողացող և Մուհամմեդի կրօնն ընդունելով եկած է  
հայրենիքն մեծ անիրավությամբ։ Ռուսաց տիրապետության  
օրոքն նա կրկին հավատափոխ է լինում. բայց ժողովուրդն  
նրան միշտ անվանում է հաջի Հյուսեին... Խուրշուդ բեյի հայր  
Աթա բեյը յուր կոչումն ձեռք է բերած յուր կնոջ շանքերովն,  
արն եղած է գեղեցկադեմ և թեթևաբարո...»։

10 Պավլի բեյի օրագրերից հայտնի է անում և այն, որ նա  
մասամբ ծանոթ էր հին Սյունիքի պատմության։ Վարարակնի  
կառուցումը նա մանրամասն է գրել, ըստ երևույթին նյութեր  
քաղելով տոհմական ինչ-որ ձեռագրերից։ Պավլի բեյը հե-  
տաքրքիր բացատրություններ է տալիս Զանգեզուրի հարավում  
ապրող ա յ Ր ու մ ն ե ր ի մասին, նրանց համարելով վաղեմի  
արևորդիների մնացորդներ։ Տաթևի շարժական սյունի մասին  
նա մի մեկնություն ունի, որ վերջանում է այսպես.

12 «Փիլիպպե Տեր Սյունյաց, դու որ քո սուրն խրեցիր հայրենի  
հողն և քարն սյուն դարձավ քո սուրն, այժմ մինչի երբ պիտի  
ճոճես այն և երբ պիտի հասանի այն օրն, երբ Սյունյաց ազա-  
տանին նորից տիրե Գողթան երկրին, Երնշակին, Վայոց ձորին,  
Կապանին և Հարանդին մինչև Փայտակարան...»։

## 11

Բայց մենք վերջին անգամ դարձյալ դառնանք Գորիս քա-  
ղաքի երկսեռ հասարակության։

Առաջին հարցը, որ ինչպես ասում են ծ ա ո ա ն ու մ է  
մեր առաջ՝ այն է, թե ի՞նչ մարդիկ էին Գորիսի բնակիչները,  
և այդ ոչ այն իմաստով, թե ինչպես էր նրանց արտաքինը,—  
որովհետև աշխարհի բոլոր անկյուններում էլ կան հաստ ու նի-  
30 հար մարդիկ, մարդիկ, որոնք հոգնում են քնելուց և որոնք  
իրենց կյանքում մի անգամ կուշտ քնելու կարոտ են։

Գորիսում էլ կային տեսակետ ունեցող տիկիներ,  
ինչպես օրինակ, տիկին Օլինկան և տիկին Վառինկան, որից

առաջինը գերադասում էր մ ա ղ ա շ ա ր թթուն, իսկ երկրորդը՝  
չոր թթուն: Եվ նույնիսկ նրանք կարող էին վիճաբանել և մինչև  
անգամ կարող էին իրար ծանր խոսք ասել:

Սակայն մեզ ոչ այդ է հետաքրքրում և ոչ էլ այն, որ  
Հաստ Ներսես բեյը մի քանի գավաթ խմելուց հետո երբեմն  
յուր կնոջն անվանում էր բ ի բ ու լ ի և պ ի կ ու լ ի ա, — ան-  
վանում էր նույնիսկ հյուրի ներկայութեամբ, որից շառագու-  
նում էր տիկին Վարսենիկի երեսը: Մեզ հետաքրքրում է Գո-  
րիս քաղաքի բնակիչների հ ո գ և ո ր շ ա հ ե ր ր և թ Ե հանուն  
ինչի նրանցից շատերը պուֆ անելով մրտտում էին այն փի- 10  
րուզե երկինքը, որ քաղաքի վրա կախվում էր արծաթ և ոսկի  
աստղերով, և որին մի անգամ անարգել էր նույն Հաստ Ներ-  
սես բեյը, ճաշար Մուղրովի մեղալններով զարդարված կուրծքը  
նմանեցնելով Գորիսի երկնքին:

Ի՞նչ հոգևոր շահեր ունեին Գորիսի բնակիչները և ի՞նչ  
ազգի մարդիկ էին և ի՞նչ լեզվով էին խոսում... Ոչ մի հոգևոր  
շահ չունեին Գորիսի բնակիչները, ընթերցող, և նույնիսկ քա-  
ղաքի ավագ քահանա Տեր գի բազում տեր Զավենը՝ լուսավոր-  
չական հավատի գավազանը, երկու Զիլֆուղար բեյերի տները 20  
կօրհներ, եթե թուրք Զիլֆուղար բեյը նրան աչահամբույր  
տար: Իսկ ինչ վերաբերում է բեյերի հոգևոր շահերին, ապա  
նրանք հոգի չունեին, որ հոգևոր շահ ունենային: Միայն Պավ-  
լի բեյն էր, Օրբելյանների վերջին շառավիղը, որ առանձնու-  
թյան մեջ ակնկալում էր Սյունյաց նախարարութեան վերա-  
դարձը: Իսկ Հաստ Ներսես բեյը և մյուս բեյերը գիտեին,  
որ աշխարհում կա պ ե տ և ս տ ո ր ա դ ր յ ա լ և արանքում  
հարկավոր է թուղթ խաղալ, ուտել և ձանձրանալ. ձանձրույ-  
թից հորանջել, հորանջելով բամբասել, աղջիկներին տ ե ղ ա ց  
անել, տղաներին դարձնել ավելի բարձր պաշտոնյա, այսինքն  
դարձյալ տեղաց անել նահանգային դեպարտամենտներում: 30

Նույնն էին նաև խոջաները, և միայն նրանց որդիները,  
որոնք պրոգրեսիստ էին և Պասաժում խանութ ունեին, — պա-  
տահում էր, որ Եփրատ Երեմի խանութում զրուցում էին Պե-  
տական դումայի օրինագծերի մասին և հաշտարար միջնորդ  
Սուղակինը՝ ս ա ր ս ա փ ե լ ի լ ի բ ե ր ա լ, ինչպես նրան ան-

վանում էր Լյուդմիլլա Լվովնան,— կարծիք էր հայտնում, թե Մարկով Զ-րդի ճառից հետո գեմատվոյի իրավունքները կսահմանափակվեն, այնինչ Տիկրան Պետտիշը, որ ոչ պրոգրեսիստ էր և ոչ լիբերալ, այլ անկախ մտածող էր, հակառակ կարծիքի էր:

Պատահում էր, որ Եփրատ Երեմի խանութում ծայր էր առնում այդպիսի վեճ համապետական խնդիրների և ոչ, օրինակ, մազաշարի և շոր թթուի շուրջը, բայց այդ վեճն էլ վերջանում էր հորանջյունով և եթե նույնիսկ հորանջյունով չվերջանար, այլ վերջանար մի շիշ խերեսով, որ Եփրատ Երեմը բաց էր անում ի նշան հաշտության,— դարձյալ հոգեվոր շահից չէր այդ վեճը, այլ այն ահռելի ձանձրոյթից, որ քաղցր ծորում էր ամբողջ Գորիսում:

Նույնիսկ եթե ասենք, թե տարին մի անգամ Հաստ Ներսես բեյն ունենում էր հոգևոր շահ, երբ, օրինակ, պարոն Արշակը նրան մատուցում էր մի պատվավոր տոմս, որի վրա գեղեցիկ գրչագրով նույն պարոն Արշակը գրել էր. «Մեծպատիվ պարոն Ներսես բեյ, Գորիսի հայոց ծխական դպրոցի սիրող-սիրողուհիների խումբը խնդրում է Ձեզ Ձեր ներկայութամբ պատվել թատերական հանդեսը հօգուտ...»— երբ Ներսես բեյը հետ կեսօրյա քնից հետո ընդունում էր պատվավոր տոմսը, հարցնում էր, թե ուրիշ ո՞ւմ են հրավիրել, համեմատում էր իր աճուռը և կարգը մյուս բեյերի աթոռների ու կարգերի հետ և ապա մի արծաթ ուռլի էր տալիս,— տարին մի անգամ հոգևորը սովերի նման երևում էր, և այդ կարելի է մանրամասն պատմել, որովհետև այդ պատահում էր տարին մի անգամ,— բայց դարձյալ չի կարելի ասել, թե ի՞նչ ազգի էր Ներսես բեյ Ջումշուղովը և ի՞նչ լեզվով էր խոսում և առհասարակ ի՞նչ լեզվով էին խոսում Գորիսի բեյերը, որոնց տները տարին երկու անգամ օրհնում էր քաղաքի ավագ քահանան, և տնեցիները՝ մեծից մինչև փոքրը կուսնում և համբուրում էին հայ լուսավորչական խաչը:

Այդ ամենադժվարն է ասել, թե ի՞նչ ազգի էր Զիլֆուղաբ բեյը, որ վարժ խոսում էր թուրքերեն և ռուսերեն, իսկ հայերեն թեմական հաջորդին ասում էր աճուրդ, հայ

դպրոցի աշակերտին՝ մ ո ն թ, հայ գյուղացուն՝ էշ հ ա յ վ ա ն, հայ ուսուցչին՝ վ ա ր ժ ա պ ե տ, Գորիսի Հայ կանանց միությանը՝ Տ հ կ Կ ի ն Օ լ ի ն կ ա յ ի կ լ ու բ, հայերեն թերթին՝ վ ա ր ժ ա պ ե տ ի գ ա զ ե թ, որի տան դահլիճի պատերը զարդարված էին էջմիածնի, Լոռիս-Մելիքովի, Մադաթովի և այլ գեներալների նկարներով, որոնցից մեկին՝ Ֆլիդել-ադյուտանտ Բեժանբեգովին զարմանալի նման էր Զիլֆուղար բեյը. նույն նեղ ճակատը, ունքերը՝ ոգնու փշերի նման ցից, քիթը բարձր, բայց ոչ մտտ, այլ շոր և կաշին պիրկ, այնպես որ, երբ Զիլֆուղար բեյն ասում էր՝ «իմ հորս պապը Խաչենի Մելիք-Քունյանն էր»,—ձայնը քթի մեջ դմբդմբում էր, ինչպես կարասի մեջ:

10

Իսկ Ասատուր բեյը ոչ մի լեզվով չէր խոսում, այլ արձակում էր հնչյուններ և ձայներ՝ բը՛ռռ... որ նշանակում էր, թե նա ճաշից դժգոհ է, որովհետև Ասատուր բեյը ոչ ասունաս էր խաղում և ոչ նարդի, այլ սիրում էր որձ այծի միս. դա՛աս, որ նշան էր հավանություն, նաև վկայում էր աշխարհի ունայնությունը, որովհետև այդ ասելով Ասատուր բեյը հառաչում էր: Քառասուն տարի նա եղել էր գավառային արխիվարիուս, և ումանք դրանով էին բացատրում նրա լեզու չիմանալը, որովհետև քաղասուն տարի նա մեռած թղթերի հետ էր խոսել, այսինքն ասել էր բրոռ, երբ գտել էր, որ ժամանակին նոտարը սխալ էր վավերացրել հողի վկայագիրը. ասել էր դա՛աս, երբ ձեռքն էր ընկել քսանհինգ տարի առաջ գավառապետի ռապորտը Գորիս գետի վրա կամուրջ կապելու անհրաժեշտության մասին և վերջապես՝ հը՛մմ էր ասել, որ նշանակում էր, թե կասկածում է հաշտարար միջնորդի հաշվետվության՝ աղետյալներին հատկացրած նպաստի մասին:

20

Այդպիսի լեզվով էր խոսում Ասատուր բեյը, և ումանք այդ բացատրում էին գավառային արխիվի միջավայրով, բայց Ասատուր բեյի կնոջ ասելով նա հենց սկզբից այդպես էր: Այդ կարծիքը ճշմարտության մոտ է, որովհետև երբ վրա հասավ Ասատուր բեյի վախճանը, այսինքն երբ ուրիշ մարդիկ նրան կանչեցին հարցաքննության, Ասատուր բեյը ոչ մի բառ չկարողացավ արտասանել և միայն ասաց՝ հ ու լ-հ ու լ-ա բ ի-հ ու լ: Այնքան ասաց, որ նրան ազատ թողեցին, և նա յոթ օր

30

էլ իր տնեցիներին ասաց այդ մութ հնչյունները և մեռավ, իր հետեից հավիտյան անմեկնելի թողնելով շորս հնչյունը՝ հ ո լ - հ ո լ - ա բ ի - հ ո լ :

Ավագ գրագիր Նազար բեյը ոչ մի լեզվով չէր խոսում, այլ աղվեսահաչ էր տալիս: Բալասան Կեք բեյն ասում էր՝ «Սե-բիր-Սիբիրբաստան... Զառ, դու բարա, քարերը թուփ արա...»: Եվ միայն Պավլի բեյ Օրբելյանն էր խոսում և գրում գրոց լեզվով, որից մի նմուշ արտագրեցինք: Բայց այդ լեզուն մեռած լեզու էր՝ ինչպես Տեր զի բազումի լեզուն, երբ նա թագի և շուրջառի ծանրությունից քրտնած սկսում էր իր քարոզը.

— Ժողովուրդ հավատացյալ, որպես տեր մեր Հիսուս Քրիստոս ասացյալ է օղտն ոչ անցանի ասղի ծակովն, նմանապես և...

Իսկ ինչ վերաբերում է վաճառականներին, ապա նրանց երիտասարդ սերունդը, որ պրոգրեսիստ էր, խոսում էր շ ա լ հ ա յ ե բ են, ա յ ս ի ն ք ն ու ս ա խ ա ո ն հ ա յ ե բ են, ի ն չ պ ե ս, օր ի ն ա կ, Եփրատ Երեմը, որ այսպես էր խոսում, երբ ի նշան հաշտության բաց էր անում խերքսի շիշը.

— Պա մոնմու դրուժբա լուշշե դալմադալ... Տիկրան Պե-տոիշ, համարի թե մի ոչինչ դարազումեննի էր էդ Մարկով վտարոյի ասածը... Խմենք, գասպադա...

Մենք արդեն տեսանք, թե ի՞նչ լեզվով էր խոսում Ավագիմովների ավագ եղբայրը՝ Ամբարի Կատու Սողոմոնը. յուրաքանչյուր խոսքից հետո նա ասում էր՝ վ ե ց ա բ ա ս ի, վ ե ց ա բ ա ս ի, — և ինչպես պատմում էին, առավոտյան, երբ բացում էր խանութը, նա հարևանին ասում էր.

— Բարի լույս... վեց աբասի, վեց աբասի:

Իսկ Քյալլա Մատուրը՝ դեղագործ և փիլիսոփա, խոսում էր մի հազվագյուտ լեզվով և միայն նա էր այսպես խոսում.

— Բարոնայք, Զանկագորու կավառի Կորիս քաղաքն լուսավորյալ է...

Իսկ խոջաները՝ խոջա Մակիշը, Միրումով Կյուբին, Ֆրանգուլով Բադալ ապերը, մինչև անգամ Զամբա Մատուրը, որ խոջա չէր, այլ վաշխառու էր, — նրանք բոլորը խոսում էին թուրքա և պարսկախառն մի լեզվով, որ պրոգրեսիստ վաճառական-

ների լեզվից տարբերվում էր այնքան, որքան Իրանի և Մոսկովի կտավը. մեկն ասում էր ս ան ա դ, մյուսը՝ վ ե կ ս ե լ, մեկը դրամը թումանով էր հաշվում, մյուսը՝ ռուբլիներով, հայրը կտավը չափում էր գյազով, որին ասում էր խ ան ա ր- շ ի ն, իսկ որդին ռուսական կտավը չափում էր ռուսական ար- շինով: Այդքան էր զանազան նրանց լեզուները, որոնց Աթա ապերն անվանում էր շան լեզու: --

Ուրիշ էր Կյորեսի լեզուն, որով խոսում էին Հին ճանա- պարհի բնակիչները, հին շուկայի արհեստավորները, և խոսում էին կամուրջից այն կողմը՝ Շենի բոլոր թաղերում, Ցաքուտ, 10 նորու և Չորեկ գյուղերում, — այն լեզուն, որին տիկին Օլինկան անվանում էր շ ե ն ա վ ա ր ի լ ե զ ու, ստորադասելով իրենց ք ա ղ ա ք ա վ ա ր ի և բ լ ա ղ ա ր ո ղ ն ի լ ե զ վ ի ն:

Ինչ չքնաղ լեզու էր կյորեսերենը... Չուտեիր և շխմեիր, այլ միայն այդ լեզվով խոսեիր կամ լսեիր, թե ինչպես քաղցր և նուրբ հնչյուններով խոսում էր լվացարարուհի Մինան, ինչպես էր ծոր փալիս, ասես ոչ թե խոսում, այլ ճախարակի առաջ բարակ երգ էր ասում, և բառերը նստում էին, ինչպես փա- փուկ մալանչները: Հապա Գոլուն Կարին... Կռանում էր սառն աղբյուրի վրա, կուշտ խմում և, ջուրը բեղերից կաթկթելով, 20 ասում էր խ ու վ ա յ... և այնպես էր ասում, այդ բառն այնպես էր զրնգում, որ եթե աղբյուրը նորահարս լիներ, ամոթից քողը կքաշեր երեսին... Իսկ Աթա ապերը, երբ բարկանար, այնպես մի ր մ բ ո կասեր, որ Մեղրաքերծը կզրնգար:

Գորիսի ոչ մի փողոցում լեզուն այնքան վճիտ չէր, ինչպես Հին ճանապարհի վրա: Այդ լեզու չէր, այլ կարոտ, տխրու- թյուն, զայրույթ. այդպես Ղաթրինի ձորում երգում էր կաքավը և մթնում կարկաշում էր Ցուրտ աղբյուրը:

— Տիեյերի հացերը մրսել են, — կասեր Աթա ապերը, շուխայի փեշից պոկելով փուշը, որ կպել էր արտի մեջ, — բայց 30 այնպես կասեր, կարծես խնդրում էր մի կարպետ, որ ծածկի արտերը:

— Հորա՛ է, հո՛րա, — և էլ ուրիշ ոչինչ չէր ասի Աթա ապե- րը, բայց այդ մի բառը կասեր դանդաղ, ծանր և արքայավայել, կասեր ինչպես հանդերի պատրիարք, և ով կյորեսեցի էր, նա


Հասկանում էր, թե ո՞ր կորան վաղեմի պարարտ հողերը և շար-  
մաղ ալյուրը:


Իբրև Քուրտնում չկար ջեզ բարաբար,  
Դառն ես գտաւի, հե՛յ Զանգեզուր...

Աթա ապերը կարտասասներ երկու տող «Գորիսի գովքից»,  
բայց այնպես կասեր, որ իբրև իջնում է խոր ձորերը և բարձ-  
րանում է բարձր լեռները, և լեռնային քամու նման լեզուն  
պտույտք է անում դեպի երկինք:

Այդքան գեղեցիկ և հնչեղ էր Կյորեսի լեզուն: Նա մի շքնաղ  
գորգ էր՝ նախշերով և վարդ ծաղիկներով մի հին գորգ, ինչպես  
Մինայի աղջիկ ժամանակ գործած գորգը, որ փոված էր Հաստ  
Ներսես բեյի դահլիճում: Ինչքան հնանում և մաշվում էր, այն-  
քան շքեղանում էին գորգի գույները, և պատահում էր, որ Մի-  
նան, երբ այդ հին գորգը տանում էր գետը և լվանում էր,—Մի-  
նան լաց էր լինում, և նրա հետ լաց էր լինում Կյորեսի լեզուն...

ԿԻՆՈՐԵՄԱԳԻՐ





## Զ Ա Ն Գ Ե Զ Ո Ւ Ր

(Նախերգանք և 7 մաս)

### Մ ա ս ն ա կ ց ու մ ե ն

Աթա ապերը

Մակիչը՝ նրա որդին

Մակիչի մայրը՝ Մինա զիզին և կիներ՝ Սոնան

Մակիչի ընկերը՝ Պուղանը

Կոմունարները՝ Լեոնը, Բախշին, Կարազինը, Հայկը, «Ար-  
ջը», «Ջաղացատերը» և Բադին

Քրիստը և Գարեգինը

10

151-րդ գնդի հրամանատար Բունչուժնին

«Սպարապետը» և Գեղեճն վարժապետը

Գնդապետ Կուտոն

Պարույիկ Ամիրջանովը և կապիտան Տեր-Պետրոսովը

Սմբատ Խոջարազունցը՝ «կամենդատ զանգեզուրսի» և  
բանտի պետ

Բրիտանական մայր նիբբոներ

Պաշտոնավորը և Քյոխվան

Գիլա բիբին

Չետանց վանեսը

20

Զիլֆի՝ գառնարած աղա

Մինասը

Գզիրը

Խմբապետ և ձիավորներ

Քահանա և վանանայր

Ժողովուրդ

489

1920 թ. հունվար ամիսը Ձանգեզուրում:

Խավարի մեջ էկրանի կտակից լսվում է ձյունամրրիկի ուռնոց, ձիերի դոփյուն՝ սառույցի վրա, զենքերի աղմուկ, ինչոր բացականչություններ, վրնչոց, ապա մի բամբ ձայն որոտում է:

— Ողջույն Սյունյաց քաշերին...

Դարձյալ խավարի մեջ՝ խուլ և երեք անգամ հնչում է արձագանքը՝ ուռոտա, ապա հնչում է զինվորական նվագախումբը, որը չի երևում: Նվագախումբը մղկտալով նվագում է «Բայբուրտի մարշը»:

— Քար քարի վրա չի մնա, Բայբուրտ...

Բացվում է էկրանը:

Տողաշար՝ երկու կարգի կանգնել են Սյունիքի «հետևակ վաշտերը». առաջինները ռեզուլյար բանակի տեսք ունեն, իսկ նրանց ետև կանգնել են «ինքնապաշտպանության խմբերը», գյուղացի երիտասարդներ, ոմանք տրեխներով, ոմանք մորթե փափախներով: Նրանց ետև՝ երրորդ շարքի վրա կանգնել են ձիավոր խմբերը՝ Կուռոյի, Ներսեսի, սիսիանցիների, — այն խումբերը, որոնք մեծ մասամբ գումարված էին դաշնակցական տղերքից:

Խորքից, զինվորների շարքերի միջով, գալիս են՝

«Սպարապետը» և բրիտանական միսիայի մայոր Նիբբոնը, գնդապետ Կուռոն և մայորի աղյուտանտը, Գեղեոն վարժապետը և մայորի հայ թարգմանը, ապա «Լեոնահայաստանի» հրամանատարության շտաբի 2—3 սպաներ, ամենից վերջը՝ Բոշկա-Ջախարը, Ջախար Յուլյանը, որը թեև «մինիստր» է, բայց հաստամարմին լինելու պատճառով հետ է մնում շտաբի սպաներից:

Նրանք ընդունում են զորահանդեսը:

Ձինվորները լուռ են: Նրանց դեմքերը մռայլ են, սառը և նույնիսկ դաժան: Կարծես շարքերը քարացել են:

— Ողջույն Սյունյաց սպարապետին, — բղավում է Բոշկա Ջախարը կանացի ձայնով, որ անբնական է նրա հաստ մարմնի համար:

Հետևակը չի արձագանքում, միայն ձիավոր խմբերից անկարգ լսվում են ուռայի աղաղակներ: Մայրը Նիրբունի աչքից չի վրիպում այդ, ինչպես և այն, որ հետևակի կրտսեր հրամանատարներից մեկը՝ բղավելով ուռռա, բռթում է կողքի զինվորին, որպեսզի նա ևս բղավի, բայց այդ զինվորը լուռ է, մռայլ է, կարծես քարացել է:

Ջորահանդես ընդունողները հասնում են փոքրիկ հրապարակը, որտեղ դրված է մի սեղան: Երևում է եկեղեցու զանգակատան կեսը: Ջորահանդեսը տեղի է ունենում ինչ-որ հրապարակում, որի մի կողմը վանքն է, ապա կողպ խանութներ: 10 Պատշաճ հեռավորության վրա կանգնած է «ղաշնակցական ամբոխը», այսինքն նախկին շինովնիկներ, որոնք այժմ ծառայում են «Լեռնահայաստանի դիվանում», — երկու օրիորդ և մի տիկին, մի ազգասեր և բարեգործականի տիկին:

Ձյուն է, ցուրտ, ձյունամրրիկ է, բայց նրանք եկել են տեսնելու «Քանկազին հյուրին»՝ բրիտանական միսիայի մայրը Նիրբունին և զորահանդեսը:

Ջորահանդես ընդունողները, երեսով դեպի զորքը, կանգնում են սեղանի կողքին: Սեղանի վրա խաչ և Ավետարան: Մորճահասակ և ծերունի քահանան, գլուխը բաց և շուրջառն ուսին, 20 դուրս է գալիս զանգակատան կամարների խորքից: Մայրը Նիրբունը կուսնում, սեղմում է նրա ձեռքը, և ծերունի քահանան նրան խաչակնքում է:

Սկեղեցու զանգերի ղողանջով, ձիավորների առաջին խումբը, որ ձիերից վայր է իջնում, երբ հրամանատարությունը հասնում է երզման սեղանին, — առաջին ձիավորները մոտենում են երզման սեղանին: Նրանք համբուրում են խաչը և ավետարանը: Քահանան միալար ձայնով ինչ-որ աղոթք է կարդում:

Ձիավորները մոտենում են շորս-շորս: Նրանցից մեկը պահում է ձիերը, երեքը մոտենում են սեղանին, ապա նրանցից առաջինը վերադառնում է ձիերի մոտ և գալիս է նա, ով պահում է ձիերը: 30

Այդպես գալիս են առաջին շորսը: Այդ ժամանակ մայրն ինչ-որ բան է ասում անզլերեն. լսվում է միայն «Վերդեն»

բառը: Թարգմանը թարգմանում է գնդապետ Կուռոյին և սպարապետին՝

— Չանգեզուրը բնական Վերդենն է...

— Եվ այս Վերդենը մենք ոչ ոքի չենք զիջի,—ասում է գնդապետը:

Գալիս են ձիավորների երկրորդ շորսը՝ նույն կարգով: Այդ նույն ժամանակ ձիավորների թիկունքում՝ նրանց մեջ, որոնք սպասում են հերթի, տեղի է ունենում հետևյալը.

Մի ձիավոր խնդրում է մի երիտասարդ ձիավորի՝

20

— Լավ... պաշի, հետո արի թքի...

— Չէ, չեմ անի:

— Դե լավ, մի պաշի, մենակ կոացի վրան... խանչափող քարը վեր չի ընկնի հո...

— Ասեցի՛ չեմ անի:

— Ուզում ես մեզ կրա՞կը քցես...

Գալիս են ձիավորների երրորդ շորսը:

Այդ րուպեին ամբոխը ճեղքելով հրապարակ է մտնում Սմբատ Խոջաբաղունցը՝ բանտապետ և պարետ կամ, ինչպես ինքն էր իրեն անվանում՝ «Սմբատ, կամենդանտ զանգեզուրսկի»... Ինչո՞ւ է ուշացել՝ խմո՞ւմ էր, թե՞ անհետաձգելի գործ ուներ,— բայց նրա դիրքը, քայլվածքը, նրա երկու թիկնապահները՝ յափունջիների մեջ, որոնք բազմությունը ճեղքում են, բայց չեն հանդգնում առաջ գալ, այլ միայն ճանապարհ են բացում Սմբատի համար,— այդ ամենը ցույց է տալիս, որ Սմբատն ինչ-որ ուժ է, իրական ուժ, ավելի հզոր, քան «թանաք լիզող» Գեղեոն վարժապետը և «մինիստր» Բոչկա-Չախարը: Սմբատը ազդեցիկ ֆիզուր է, ու թեև արտաքինով տարբերվում է զինվորական տարազ հագած սպաներից, բայց «գործերով», թալանով, մարդասպանություններ և վայրագություններով անուն հանած ֆիզուր է:

30

Մայր նիբբոնի աչքից չի վրիպում, որ Սմբատը հարբած է: Բոչկա-Չախարը ինչ-որ բան է շնչում Գեղեոն վարժապետի ականջին (շնչում է, թե ամեզ համար մեծ խայտառակություն է Սմբատի այդպես երևալը): Մայրը որևէ անհանգստություն չի ցույց տալիս, այլ միայն հետաքրքրություն դի-

տում է Սմբատի էկզոտիկ ֆիգուրը: Սմբատը լուռ և լուրջ կանգնել է, իբրև Լեոնահայաստանի երևելի դեմքերից մեկը:

Երգման սեղանին են մոտենում այն շորսը, որտեղ մի ձիավոր մյուս երիտասարդ ձիավորին համոզում էր, թե հարկավոր է խաչը և ավետարանը համբուրել գոնե առերես: Ձիավորը՝ բուկը բռնելով՝ վերջին ըոպեին ևս խնդրում է երիտասարդին իրենց «կրակի մեջ շքցել...»: Երեքով այդ երիտասարդին են հանձնում ձիերի սանձերը, իրենք մոտենում են երգման սեղանին: Խաչի վրա առաջինը խոնարհվում է նա, ով համոզում էր: Այդ դիրքով նա հետևյալն է նկատում:

10

Երիտասարդը շորս ձիերի սանձից բռնած՝ ձիերի մոուֆներն իրար է մոտեցնում: Նա ձիերի արանքումն է: Ձիերն իրար հոտոտում են, ձիերից երկուսը վրնջում են, երիտասարդը բղավում է նրանց վրա, և այն ըոպեին, երբ առաջին ձիավորը՝ խաչ և ավետարանը համբուրելուց հետո, մոտենում է ձիերին և ահա երիտասարդը ստիպված պիտի գնա դեպի սեղանը (իսկ ձիերի վրնջոցի վրա բոլորի ուշադրությունն այն կողմն է),— այդ ըոպեին երիտասարդը նորից ձիերի մոուֆներն իրար է մոտեցնում, նրանք ավելի կատաղի են վրնջում, ծառս են լինում, երիտասարդը երկու ձիու սանձը բաց է թողնում, ձիերը փախչում են, մնացած երկու ձիու սանձը նա կոխում է առաջին զինվորի ձեռքի մեջ, որը շմել է այդ անակնկալից,— իսկ երիտասարդը վազում է դեպի փախչող ձիերը, նրա ետևից փախչում է նաև մի ուրիշ զինվոր՝ երկրորդ ձիու տերը:

20

— Ասածն արեց, էլի...,— ասում է առաջին զինվորը երիտասարդի ետևից:

Հետզհետե խավարում է:

Խավարման մեջ դեռ լսվում են զանգերի մեռնող ղողանջը և ռազմական քայլերը՝

— Քար քարի վրա չի մնա, Քայրուրտ...

30

## 2

Սենյակ՝ կահավորված ոչ հարուստ, բայց թանկ արդուզարդով: Այդպիսի սենյակներ կային Գորիսի խոջա-վաճառականների տներում և կոչվում էին «զալ»: Կահկարասին՝ եվրոպա-

կանի և ասիականի անճաշակ խառնուրդ, բայց ամեն ինչ թանկագին է, որովհետև իրերը ինքը խոշան է գնել «վաղ ժամանակ»:

Նստել են մայրը Նիրբոնը, նրա աղյուտանտը, նրա թարգմանը, «սպարապետը» և Գեդեոն վարժապետը: Գնդապետ Կուռոն քարտեզի վրա ցույց է տալիս ճանապարհը և ասում է.

— Բաքվից Թուրքիա ամենակարճ ճանապարհն անցնում է Զանգեզուրի վրայով: Այդ միակ շոսեն է...

10 Թարգմանը թարգմանում է և առհասարակ հետագա ամբողջ խոսակցության ժամանակ այսպես է. հաճախ թարգմանն ու խոսողը միաժամանակ են խոսում և զուգընթաց հընչում են բառեր՝ անգլիերեն և հայերեն, անգլիերեն և ռուսերեն:

Անգլիերեն բառերը խոսում է մայրը. թարգմանը՝

— Բրիտանական միսիան հավաստիացնում է, որ Զանգեզուրը կազմում է Հայաստանի հանրապետության անբաժանելի մասը և...

Նույն միսիսի մի այլ մայր Բաքվում նույն բառերով հավաստիացնում էր, որ Զանգեզուրը կազմում է Ադրբեյջանի հանրապետության անբաժանելի մասը:

20 «Սպարապետը».—

— Մեր հույսը մեր մեծ դաշնակիցներն են և մեր զենքը:

— Ինչո՞վ կարող է օգտակար լինել բրիտանական միսիան:

— Թող Ադրբեյջանը դադարեցնի արշավանքը Զանգեզուրի դեմ:

Գնդապետ Կուռոն.—

— Եթե նրանք կարողանան պաշտպանել Բաքուն հյուսիսից...

30 Մայրն ակնհայտ զգաստանում է, կորչում է նրա «գիվանագիտական լրջությունը»: Բանն այն է, որ, ինչպես ասում են, գնդապետը խիսեց մեխի գլխին: Միսիսի բուն նպատակն է հեշտացնել Ադրբեյջանի վիճակը «Հյուսիսի վտանգի», այսինքն Կարմիր բանակի արշավանքի դեմ: Գնդապետ Կուռոն այդ լավ է հասկանում: Եվ շարունակում է.

— Եթե ընկավ Բաքուն, այն ժամանակ միակ ամբողջ Զանգեզուրն է... Հակառակ դեպքում կարմիրներն այս ճանա-

պարհով կարող են միանալ Թուրքիային, և դաշնակից հրամանատարութիւնը կհանդիպի մեծ անխորժութիւններին...

— Գնդապետ, կարմիրները մեզ համար վտանգ չեն... Թող նրանք շուտ գան և շատ գան...— ընդհատում է «սպարապետը»:

Դուրսը ձյունամորիկ է: Քամին ձյունի բյուրեղները զարկում է լուսամուտին: Ապակիները զրնգում են,— «սպարապետը» և մայրը այն կողմն են նայում: Նրանց թվաց, թե բախեցին պատուհանը:

Գնդապետը մոտենում է սեղանին: Լռութիւն է:

Մայրն ինչ-որ բան է ասում. հատկանալի է միայն «բուշկիկ» բառը, որ հնչում է երկու անգամ:

Քարգմանը՝

— Ձեր հանրապետութիւնը դեռ երիտասարդ է, որպեսզի բոլշևիկները նրա համար վտանգավոր չլինեն... Ուստի մայրը զգուշացնում է ձեր ներքին թշնամուց, ձեր բոլշևիկներից...

— Օ՛, ոչ,— և «սպարապետը» արհամարհանքով ժպտում է:

— Նրանք անվտանգ վայրում են, և, բացի այդ, գնդապետը (ցույց է տալիս Կուռոյին) նրանց լավ է ճանաչում՝ դեռևս Դենիկիների ֆրոնտից:

Մայրը նիբբոնն և ուրախ է, և գոհ է: Նա բազմիմաստ ժպիտով ոտքի է կանգնում և սեղմում գնդապետ Կուռոյի ձեռքը:

Բոլորը ոտքի են: Թվում է թե հրաժեշտ են տալիս, և ամեն ինչ ասում է լուռ տեսարանը՝ միասնական ճակատ Կարմիր բանակի դեմ:

Հետզհետե խավարում է:

### 3

Նույն սենյակն է կամ նման մի սենյակ:

Գնդապետ Կուռոն զայրացած գնում գալիս է սենյակում: Արձանի նման կանգնել են պարուշիկ Ամիրջանովը՝ կոնտր-ռազվեդկայի պետը և Սմբատ Խոջաբաղունցը՝ «կամենդանտ զանգեզուրսկի» և բանտապետ:

Գնդապետը սեղանի վրայից վերցնում է մի թուղթ և ծամածռելով բերանը, կատաղած կարդում է:

— էռ-կա-պե... Զանգեզուրի կոմիտե: Զահրումար... Եվ նորից է քայլում:

Նրանց դիրքը և ամբողջ պատկերը վկայում են, որ մի ժամ, գուցե երկու ժամ է տեւել այդ ամենը, և գնդապետը երկար է խոսել, պարուչիկ Ամիրջանովը փորձել է պաշտպանել իրեն, Սմբատը՝ հարբած աշխատում է ոտքի վրա մնալ և ոչ մի խոսք չի ասում:

— Դուք հասկանո՞ւմ եք, պարուչիկ, ինչ ասել է էռ-կա-պե... (Եվ կարծես վերհիշում է, կարծես հանդարտվում է, կարծես երազի մեջ է): Դա մի զարմանալի նուրբ և փափուկ **10** թել է, մետաքսե թել է, հասկանո՞ւմ եք, որ փաթաթվում է ձեր վզին, պարուչիկ, սեղմում է (մատնեբրով սեղմում է պարուչիկի կոկորդը) և հետո շկա պարուչիկ, շկա գնդապետ, շկա ազատութուն, շկա հայրենիք, կարգ,— այլ կա միայն ոչլոտ սվոլոչ...

Մտտենում է պատուհանին: Չլունամբրիկ է: Պատուհանից երևում է բանտի դարպասը, պարսպի գլխին պահակ զինվորը կուշ է եկել:

Գնդապետը դառնում է Սմբատին.

— Եվ դարպասները կողպ են, պատերը հաստ են, գիշերցերեկ հսկում են պահակները, բայց ահա ձեզ... (և ձեռքով **20** ցույց է տալիս այն թուղթը, որ Զանգեզուրի ընդհատակյա կոմիտեի թռուցիկն է բանտարկված կոմունիստների մասին)... էռ-կա-պե... Դրան ասում են էռ-կա-պե... Ի՞նչ կասի պարոն բանտապետը:

Սմբատը խոնարհած գլուխը թարձրացնում է վեր. նրա դեմքն ավելի ահարկու է, քան գնդապետի դեմքը: Եվ այդ դեմքն ասել չգիտե, այլ միայն գիտե փշրել, ջարդել, կոտորել: Գնդապետը կարծես դիտմամբ գրգռում է նրան:

— Ազգը ձեզ է վստահել իր թշնամիներին, որոնք թուրքից վատ են.

**30** — Ես դրանց...,— Սմբատն ուզում է խոսք ասել, բայց և հարբած է, և գազազած է, և առհասարակ խոսել չգիտե, այլ գիտե միայն փշրել, ջարդել, կոտորել...

Եվ կատաղութլունից վայր է նետում յափունջին, ընկնում է գլխարկը, ցցվում է մի աժդահա մարդ՝ հաղթ, ցուլի նման և զինված, ինչպես վայրենի զինված էին դաշնակ խմբապետները:

Սմբատն իրեն դուրս է նետում:

Փողոցում ձյունամրրիկի պտույտք: Կիսամութ է:

Խոշարաղունց Սմբատը՝ բանտապետը, կուրծքը դեմ է տալիս հողմին, հազիվ է կանգնում, բայց կանգնում է: Նրա արնախառն աչքերը, գզգզված՝ մազերը: Սմբատը ճոճվում է և քայլում:

Մի մարդ նրան տեսնելով թաքնվում է փողոցի անկյունում: Մարդը վերարկուի օձիքը բարձրացնում և սեղմվում է պատին:

Նրան թվում է, թե Սմբատը իրեն նկատել է, գուցե և հե- 10 տապնդում է: Բայց Սմբատը քայլում է ամայի փողոցով:

— Դահլձ, — նրա ետևից ասում է մարդը և հեռանում:

Սմբատը քայլում է, ճեղքելով ձյունամրրիկը:

## 5

Բանտի կամերան:

Ճրագի աղոտ լույսով երևում են դեմքեր՝ 5—6, գունատ, նիհար դեմքեր: Մի գեղեցկադեմ երիտասարդ: Նա, ինչպես մյուսները, լսում են Գարեգինին՝ Զանգեզուրի ընդհատակյա կոմիտեի անդամին: Կամերայում երևում են նաև ուրիշները, որոնք ստվերի նման քայլում են պատի տակ: Երբեմն լսվում է շղթաների զրնգոց: Վերին հարկում՝ քայլերի դոփյուն: Այդ ձայները լսում են, և այն ժամանակ միայն լուռթյուն է, բանտի ահավոր լուռթյուն: 30

Գարեգինը՝

— Մեզ նորից են կանչելու հարցաքննության... էլի եմ կրկնում՝ ամեն ինչ քցեք ինձ վրա: Ասեք ոչ մի բանից խաբար չեք, ասեք՝ Գարեգինն էր...

Ունկնդիրներից մեկը, ըստ երևույթին գոհ՝ հեռանում է: Այն գեղեցկադեմ երիտասարդը մտածում է, մտածում է և նայում Գարեգինին: Նա դժգոհ հարցնում է. 30

— Հապա դո՞ւ...

— Ծս, — և Գարեգինը դառը ժպտում է, — ձեզնից շատերը տուն ունեն, երեխա ունեն, իսկ ես...

Երիտասարդը գլուխը տարուրեր է անում: Նա համաձայն չի: Գարեգինը շարունակում է.

— Դուք դեռ անփորձ եք... Գուցե շղիմանաք և ավելին ասեք... Հետո, միևնույն է, նրանք ինձ կենդանի բաց չեն թողնելու: Գրա համար էլ ինձ վրա քցեք ամեն ինչ: Բայց...

Մյուսները ևս հավաքվում են նրա շուրջը: Գարեգինը սրտի խորքից, ինչպես վերջին կտակ, ասում է.

— Բոլորդ պիտի երդվեք, որ եթե ձեզ բանտից ազատեն, մինչև վերջ պիտի կռվեք հեղափոխության համար...

10 — Մենք միասին կկռվենք,— բացականչում է երիտասարդը:

Այդ վայրկյանին բանտի դարպասը խփում են: Լսվում է նաև մատուցների կրակոց: Կալանավորներն իրար են նայում՝ ի՞նչ կարող է լինել:

Բանտի դարպասն է՝ փողոցի վրա: Սմբատը ճակատը հենել է դարպասին, որպեսզի վայր չընկնի: Նրա ձեռքին՝ բաց մատուցերը: Այդ նա էր դարպասը խփում, նա էր կրակեց մատուցերից:

30 Բանտի փոքր դռնակից հսկիչի աչքը դուրս է նայում, ճանաչում է բանտապետին, ապա բաց է անում փոքր դուռը, և բանտի բակն է մտնում Սմբատը:

— Ուրեմն ի՞նչ...,— հարցնում է բանտապետը արյունոտ տրանսի մեջ,— հարցնում է անիմաստ, և հերթապահ հսկիչը ահից շփտե ինչ պատասխանի:

— Հը, ուրեմն ինչ,— և հարբած օրորվում է: Երևում են երկու ուրիշ հսկիչներ, որոնք վախենում են մոտենալ: Նրանցից մեկը ներս է վազում:

— Ես ո՞վ եմ...

— Դու... Դուք... պարոն բանտապետն եք:

30 — Զէ, չէ, ես ո՞վ եմ...

— Դուք...— վախեցած կմկմաց հսկիչը և շփտե ինչ պատասխանի:

— Ես ո՞վ եմ,— նորից է հանում մատուցերը: Հսկիչը դողում է:

— Ես խոշարաղունց Սմբատն եմ, չէ՞...— և ձեռքը խփում է կրծքին:

— Այո, հրաման ձեզ...

— Դե բաց արա բոլշևիկներին կամերը...

Մմբատը մաուզերից կրակում է, դուրս են վազում հսկիչներ, պահակներ: Վերին հարկի վանդակներից ներքև են նայում կալանավորները:

Մմբատն օրորվելով նետվում է ներս:

Բանտի ներքնահարկ և կիսախավար միջանցքը: Կսվում է ոտնաձայներ և բանալիների զրնգոց:

Պահակը, որ զինվորի զգեստով է, դուռն անցքով շշնջում է.

— Հարբած է,— և կանգնում է դուռն մոտ:

10

Նույն կամերն է, ներսում՝ կալանավորները դեպի դուռն են կրում մատրասներ, բարձեր, տաբուրետներ: Մեկը տաբուրետը ձեռքին՝ կանգնել է: Ճրագը տանում են դեպի անկյունը: Գարեգինը բղավում է.

— Ցած նստեք...

Երեքը նստում են՝ մեջքները հենած դուռն առաջ դարսած իրերին: Մեկը կանգնել է կամերայի անկյունում:

— Բաց արա դուռը... Ծա դրանց,— միջանցքում բղավում է Մմբատը:

Հսկիչներից մեկը փորձում է բանալին: Հրում է: Ներսից 20  
ռեզմում են: Գարեգինը դուռն անցքից կանչում է.

— Վերջ տվեք ձեր անիրավություններին...

Այն գեղեցկագիմ երիտասարդը, որ նստել է ներքև և դուռը պահողներից է, նրան մի կողմ է քաշում, շշնջալով.

— Կկրակի շունը...

Դրսից Մմբատը գազազած հրում է: Հրում են նաև հսկիչները, որոնցից երկուսը ձևացնում են, թե հրում են:

— Բաց արեք...— բղավում է Մմբատը: Նորից են հրում: Դուռը կիսաբաց է լինում, բայց ներսից ուժ են անում (մոտենում են նաև հեռու կանգնածները) և դուռը նորից փակում են: 30  
Մմբատը մի կողմ է հրում հսկիչներին, որոնցից մեկին ընկնում է, ապա մի քանի քայլ ետ գալով, առաջ է վազում և ոտքով դուռն այնպես է խփում, որ դուռն ավելի է բացվում և այդ հարվածից ներսը, հրողներից մեկը գլորվում է:

Ներսում՝ շփոթ, իրարանցում: Բայց այդ տևում է մի վայրկյան: Գարեգինն առաջ է նետվում, բղավելով՝

— Պինդ կացեք...

Դուռը նորից են փակում: Այդ գեղեցկադեմ երիտասարդը վեր է բարձրանում և դռան անցքից (глазок) կանչում է՝

— Նամարդ, ուժդ կալանավորի վրա ես փորձում...

Նրա կանչը որոտալով արծագանքում է միջանցքում: Սըմբատը վայրկենաբար մատուցերը կոխում է դռան անցքի մեջ և կրակում ներս:

Երիտասարդն ընկավ: Կամերայում ճրագը հանգավ:

10 Կրակոցի ձայնին ի պատասխան, աղմկում են մյուս կամերաները: Հետզհետե հզորանում է աղմուկը: Գոններ են ծեծում, կանչում են, զրնգում են շղթաները:

Գազազած բանտապետը մատուցերով դեռ խառնում է դռան անցքը: Թվում է, թե ուզում է մատուցերը հանել՝ չի կարողանում. կամ իրոք ուզում է անցքը լայնացնել: Կատաղությունից նա իրեն կորցրել է և արդեն խելագարի է նման: Իսկ աղմուկը սաստկանում է:

Այս անգամ մեջքով է հրում: Ներսը լուռ է, խավար է:

Նրա ձեռքից մատուցերն ընկնում է: Դռան մոտ կանգնած պահակ զինվորը ոտքով մի կողմ է հրում մատուցերը:

20 Սմբատը խելագարի նման է: Նա ձեռքերը բարձրացրած երկու քայլ է անում, բայց գլխով հենվում է պատին, ինչպես հենվել էր բանտի դարպասին: Ուժաթափ է, հարբած է, ցնորվածի նման է:

— Կացին բերեք... — բայց ոչ ոք նրան չի լսում: Հսկիչները նայում են, ինչպես խելագարի: Իսկ դռան մոտ պահակ կանգնած զինվորը նայում է ակնհայտ ատելությամբ և զայրույթից հրացանը ավելի է սեղմել՝ բարձրացնելով գետնից:

— Ուրեմն, ես... Սմբատ Խոջաբաղունց, կամենդանտ զանգեղուրսկի, — և ցնորվածի նման գլուխը խփում է պատին:

30 Այդպես հետզհետե քարանում է համր պատկերը և միայն շղթաներ են զրնգում՝ հատ-հատ, խուլ և ատելությամբ Սըմբատ Խոջաբաղունցին է նայում պահակ զինվորը:

«Սյունիքի դիվանի» շենքը:

Փողոցից ներս են մտնում երկու հոգի: Մեկը մեզ ծանոթ պահակ զինվորն է, մյուսը մի պարթև ծերունի է, հագին շալ չուխա: Նա ձեռքին մահակ ունի: Ոտքերը ձյունոտ են, և երեւում է, որ հեռվից է գալիս:

Սանդուղքներով իջնում, բարձրանում են ինչ-որ մարդիկ: Զինվորը ծերունուն ճանապարհ է բաց անում: Նրանք երևում են նախասենյակում: Զինվորը նրա ականջին ինչ-որ բան է ասում և անհայտանում է:

10

Կիսախավար միջանցք: Գրասենյակի դռներ: Սուսաննան՝ մեքենագրուհի, դուրս է գալիս միջանցք: Անցնում է պարուչիկ Ամիրջանովը: Նայում են իրար: Պարուչիկը ներս է մտնում մի դռնով: Միջանցքում երևում են պաշտոնյաներ, որոնք ցարական շինովնիկի տարազով են, որովհետև նրանց մեծ մասը ծառայել է հենց այդ շենքում, Զանգեզուրի գավառապետի դիվանում: Այդ նույն բազմությունն է, որ հրապարակի վրա դիտում էր զորահանդեսը և «թանկագին անզլիացիներին»:

Միջանցքում երևում է այն պարթև ծերունին՝ Աթա ապերը: Նա շվարել է, բայց աշխատում է իրեն չկորցնել: Զինվորներից մեկին հարցնում է՝

20

— Մեծավորը ո՞ր օթախումն ա...

— Էստեղ բոլորը մեծավոր են, որի՞ն ես ուզում,— հեգնում է շինովնիկը:

— Ամենամեծին,— և շինովնիկը գլխով նշան է անում գեպի ծայրի դուռը, որ չի երևում վարագույրի ետև:

Դռան առաջ մի զինվոր պահակ է:

Աթա ապերը գնում է դեպի այդ դուռը:

Ներսը՝ գնդապետ Կուռոն, Գեղեոն վարժապետը և պարուչիկ Ամիրջանովը:

30

Գեղեոն վարժապետը՝

— Այո, բայց ինչո՞ւ առանց դատի... Զէ՞ որ մենք դեմոկրատիկ հանրապետություն ենք...

Գնդապետ Կուռոն Գեղեոն վարժապետի հետ չի կարող խոսել, ինչպես պարուչիկ Ամիրջանովի հետ: Ավելին. նրա հան-

501

դեպ գնդապետը տածում է որոշ հարգանք, որովհետև Գեղեոն վարժապետը Զանգեզուրում «պերսոն» է և նույնիսկ «Ազատ Սյունիքի» խորհրդի նախագահն է: Ուստի կեղծ մեղմությամբ գնդապետը պատասխանում է.

— Կամերը դեռ լիքն է... Պարուլիկը կարող է նաև ուրիշներին բերել: Դատեցեք: Միկնույն է դատարանը պետք է արձակի նույն վճիռը՝ բոլշևիկներին և թուրքերին...— գնդապետը ձեռքով ցույց է տալիս, թե պիտի մորթել նրանց:

10 Ներսը՝ դռան մոտ, վարագույրի ետև, ինչ-որ խլրտում: Հստ երևույթին, դռան պահակը չի թողնում, որ Աթա ապերը ներս մտնի, բայց նա ներս է մտնում այն վայրկյանին, երբ գնդապետը ձեռքով ցույց է տալիս, թե ինչ պիտի անել թուրքին և բոլշևիկին:

Բոլորը զարմացած նայում են: Նրանց է նայում ժերունին՝ վեհ և հանդարտ:

— Ձեր մեջ մեծը հո՞ւ ա...

Նրա միամիտ հարցին գնդապետ Կուռոն ժպտում է:

— Ի՞նչ է, ապեր:

— Տյու ե՞ս,— մատը մեկնելով մի քայլ է անում:

20 — Ասա:

Ծերունին լուռ է, ասես հավաքում է իրեն, որովհետև այն, ինչ պիտի ասի և ծանր է, և ահավոր:

Ապա լուռության մեջ մի քիչ դողդոջ ասում է.

— Որդուս... դիակը տուր:

Լուռությունը սաստկանում է այնքան, որ նույնիսկ հարեվան սենյակից լսվում է «Կողմ»-ի աղմուկը: Գեղեոն վարժապետը հայացքը թաքցնում է: Նրանք հասկացան, որ ներս մտնողը հայրն է գիշերով բանտում սպանված բոլշևիկի:

— Նրան թաղել են,— մոռյլ ասում է Կուռոն:

30 — Չեն թաղել,— հանդարտ պատասխանում է Աթա ապերը, հասկացնելով, թե՛ «չես խաբի, ես լավ գիտեմ...»:

Պարուլիկ Ամիրջանավը դժգոհ է: Նա մոտենում է, որ ժերունուն դուրս տանի, բայց գնդապետ Կուռոն նրան աչքով հեռ է պահում: Ծերունին կանգնել է ժայռի նման:

— Ապեր, գնա... Մենք նրան կթաղենք,— ասում է Կուռոն:

— Պարուն վարժապետ, բա ինչո՞ւ ես լռել: Ուրեմն, հայրը որդուն մեռած էլ շտեմնի՞...

Գեղեոն վարժապետը գլուխը բարձրացնում է, ուզում է քան ասել, բայց նկատելով գնդապետի դեմքը, հայացքը դարձնում է դեպի պատուհանը:

Գնդապետը տեղից վեր է կենում:

— Կարճ կապի: Մեր օրենքը չի տալիս թշնամու դիակը:

— Էդ հո՞ւնց օրենք ա, որ դիակից էլ ա վախենում...

— Շատ պիտի խոսե՞ս, — և ծերունուն է մոտենում պաշուչիկ Ամիրջանովը, բռնում է նրա թևից, բայց Աթա ապերը 10 տեղից չի շարժվում:

Գնդապետը վառում է ծխախոտը:

— Բա պիտի խոսեմ, բա հո՞ւնց... ախր ծնող եմ: Բա հինչ պատասխան տանեմ մորը...

Մերունին անհողորդ կանգնել է: Պարուչիկը կատաղած ապտակում է Աթա ապորը:

— Առ քեզ պատասխան...

Գնդապետը նետում է լուցկին:

Մերունու բերանից արյունը կաթկթում է արխալուղի վրա: Բայց հանդարտ ու վեճ ասում է, բառերը հնչեցնելով մեկ-մեկ: 20

— Նա իմ փոքր տղան էր... ես է՛լ տղա ունեմ: Էս իմ պատասխանը, բա նրա՞ն հինչ պատասխան կտաք: Նրան էլ սպանեցիք՝ բա ժողովրդին հինչ պատասխան կտաք...

Գնդապետը ծխում է: Մխի քուլան ծածկում է ամեն ինչ:

## 7

Մուխ չէ, այլ ձյունամրրիկ է:

Անցավ ձյունամրրիկի ալիքը: Բանտի ամալի բակը, քարե քարձր պատեր:

Սրկու հսկիչ և այն պահակ զինվորը թաղել են դիակը: Վերջին բուռ ձյունախառը հողը լցրին և հավաքելով բրիչն ու 30 բահը, հեռացան:

Քամին ձյուն մաղեց, ձյունը ծածկեց և աննշան հողաբլուրը, և այժմ միայն բանտի ամալի բակն է, մոայլ պատերը, պատի գլխին՝ դրսի պահակը տխուր զնդնում է՝

— Քար քարի վրա չի մնա, Բայբուրտ...

Քարատակ տուն:

Չմեռվա գիշերը կես է: Քուրսու վրա վառվում է այն փոքրիկ լամպը, որ կոչվում է աուզուրիկ նրագ: Լամպը հագիվ է լուսավորում քուրսու շուրջը:

Քուրսու մոտ թիկնած ննջում է Աթա ապերը: Նրա դիմաց նստած է Մինա գիզին: Քուրսու վրա, սինու մեջ ձավար է: Մինա գիզին մատնեքով մաքրում է ձավարի քարերը: Նինջը հաղթում է, մատնեքը քնում են,— ինքը գլուխը կախում է սինու վրա, ապա ցնցվում է, նորից է քարերը մաքրում և նորից քունը տանում է:

Քուրսու վրա մոռում է կատուն:

Այդ խեղճ խաղաղությունն օրորում է Սոնան՝ նրանց հարսը: Սոնան չոքել է օրորոցի առաջ: Օրորում է, և քնաբեր ուրիշ մով թխկթխկում է օրորոցը: Սոնան՝ երեսի քողը կիսաբաց, կռացել է օրորոցի վրա և առանց բառերի օրոր է ասում:

Դրսում լսվում է ոտնաձայն: Մակիչը ներս է մտնում, մի վայրկյան նայում է: Սոնան այլևս չի երգում, համր հայացքով նայում է ամուսնուն: Մայրը զարթնում է և ասում.

20 — Այ որդի, դե, եկ, էլի...— Սոնան ծածկում է հարսնության քողը:

Մակիչը նայում է ճրագին, ապա մորը հարցնում է.

— Տանը նավթ կա՞:

— Ճրագի միջինն է,— ասում է մայրը:

Մակիչը տատանվում է, ապա ասում է Սոնային:

— Դատարկիր մի ամանի մեջ, տուր...,— ապա դառնում է մորը.

— Նանի, ձավարը առավոտը կմաքրես:

Մայրը զարմացած նայում է: Քունն աչքերին: Եվ երբ Սոնան գավաթը ձեռքին մոտենում է, որ ճրագի նավթը դատարկի, պառավն ասում է.

— Վրիա՞... էդ շտե՞ղ ես տանում...

— Քյոխվի կանցելարում կառավարության ժողով ա, նավթը կլխել ա...

— Բա, էդ հո՞ւնց կառավարություն ա, որ ինքը ժողով անի, նավթը ես տամ...

Սոնան դատարկում է նավթը: Ճրագը հանգչում է: Լսվում է Մինա գիզու զարմանքի բացականչությունը՝ «վրիա՛», ապա դուռը փակվում է, և դրսից՝ Մակիչի հեռացող ոտնաձայնը:

Աստղալուպս շկա: Միայն ձյունի շափաղն է և ժայռերի սև ստվերները: Քնած տների արանքով անցնում է Մակիչի սիլուետը: Երբեմն չի երևում, այլ միայն լսվում է ոտնաձայնը՝ ձյունի վրա: Մի շուն հաշում է: Նրա հաշոցը հետզհետե ուժեղանում է, ապա նվազում, որից հասկացվում է, որ Մակիչն անցավ այդ տան կողքով: Հեռվից մի շուն արձագանքում է, և արձագանքը դղրդում է ձորի գյուղում:

10

Բացվում և իսկույն փակվում է մի դուռ:

Ներսը՝ ճիշտ առաջին ճրագի նման մի տուզուրիկ ճրագ հանգչելու մոտ է: Մարդ կա, բայց դեմք չի երևում, այլ ինչ-որ ձեռք, ինչ-որ գիրք: Մթնում մի ձայն՝

— Ա՛, ոտս կոխեցիր, է...

Մակիչը նավթը լցնում է ճրագի մեջ, պատրույզը բարձրացնում է: Խոր և ամալի քարանձավ է: Ընդհատակյա բջիջի ժողով:

Ճրագի լույսով առաջինը երևում է այն դեմքը, որ ձյունամրրիկի մեջ թաքնվեց փողոցի անկյունում և բանտապետ 20 Սմբատի ետևից ասաց. «դահիճ»:

Այդ Քրիստն է, Զանգեզուրի ընդհատակյա կոմիտեի անդամը:

Նրա կողքին Լևոնն է, այն երիտասարդ ձիավորը, որ ձիերը կովացնելով, խուսափեց երդվել խաշով և ավետարանով: Նա զինվորի նույն տարազով է, ինչպես զորահանդեսին:

Երբ Մակիչը ճրագի պատրույզը բարձրացնում է և լուսավորվում են Քրիստի և Լևոնի դեմքերը, — կիսամութ անկյունից փափախով մեկը բողոքոթ թաթը մեկնում է ճրագին, որպեսզի կպցնի ծխախոտը: Քիչ է մնում ճրագը հանգչի: Պուղանը, սրախոս մի երիտասարդ, բամփում է նրա գլխին և հեռացնում ճրագը:

30

— Արջ, հերիք է ծուխ տաս:

Նվ ծխի քուլան թանձր բարձրանում է: Պուղանը շարունակում է.

505

— Հնկերներ, սրա ծուխը կտրեք... մի օր սա իրա ծուխով մեզ բռնել ա տալու:

Ժպտում են: Մեկը ծխողին հրում է քարանձավի խավար անկյունը:

Պուղանը՝

— Թա մենք մտնենք էս աղվեսի բունը, սա էստեղ թոնիր վառի՞...

Մակիչը ճրագը բարձրացնում է, և ճրագի լույսով երևում են քարատակի խավար խորքերը: Նստած են 10—12 հոգի: Լուսմ 10 են: Մակիչը ճրագը դնում է Քրիստի առաջ:

Քրիստը շարունակում է ընդհատված խոսքը.

— Ուրեմն, մենք պիտի սպասենք մինչև Կարմիր բանակը մտնի Բաքու... Եվ երբ մոտենան մեր սարերին...

— Տեսնես աչք կլինի...

Լևոնը լույսի տակ թերթում է «Կոմունիզմի այբուբենը»:

Պուղանի աչքն ընկնում է մի նկարի:

— էս ո՞վ է:

Լենինն է:

20 — Լենինը սա՞ է,— Պուղանը խոր, շատ խոր նայում է նկարին:

Քրիստը, Լևոնը և Մակիչը նայում են Պուղանին: Խորքից մի քանի գլուխներ ձգվում են, որ տեսնեն նկարը:

Հետզհետե խավարում է, և դեռ շխավարած՝ լսվում է Պուղանի ձայնը.

— Ա՛խ, թեևր ունենայի, թոնեի մի անգամ Լենինին տեսնեի...

Հետզհետե լուսանում է:

Ամայի ձոր: Մի ժայռ, որի ստորոտում քարանձավի դուռը քամուց փակվում և բացվում է:

30 Դուռը երեբում է:

Լեռներում բուք է, ձյունամրրիկի ոռնոց:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

1

Փարսան երեկո:

Դյուղի հրապարակներից մեկը՝ մի ամայի կալ, որտեղ գերանների և քարերի վրա նստոտել են գյուղացիները: Աթա

ապերն է, Չետանց Վանեսը, մի պաշտոնավոր, այսինքն՝ գյուղական վաշխառու և առևտրական: Երևում է Պուղանը՝ գինվորի տարազով երկու երիտասարդի հետ, որոնք հրացանով են: Մերունինների շարքում նստած է Բախշին՝ բանվորի արտաքինով մեկը:

Չետանց Վանեսը «կովի» է բռնվել Աթա ապոր հետ: «Կովիվն» այն մասին է, թե մուսավաթի բանակը կարո՞ղ է մտնել Զանգեզուր, թե՞ ոչ:

— Բա հունց, է՛, չունց,— ծոր տալով ասում է Աթա ապերը,— ապա երկու քարից շինում է կիրճի նման մի բան. բրոնոթամանը՝ մուսավաթի բանակն է, տերողորմյան՝ դաշնակցական զորքը: 10

— Դե անց կաց, տեսնեմ...

Չետանց Վանեսը մատներով, իբրև մուսավաթի զորք, ուզում է անցնել կիրճով: Աթա ապերը կիրճը սեղմում է և ասում է.

— Հրեդ, է...— ընդհանուր ծիծաղ:

Պուղանն այն կողմից ձայն է տալիս.

— Եկողն ուրիշ է, ուրիշ...

Չետանց Վանեսը հարցնում է. 20

— Հո՞վ ա կյամ, է՛...

— Հրեն կյամ ա Իվան ախպերը...

— Բերնիդ մատաղ, Պուղան:

— Ռուսը մեզ օգուտ է,— խոսակցությանը խառնվում է Պաշտոնավորը,— գան, ճանապարհը բաց անեն, գնանք Բաքու առուտորի...

— Էն բու տեսած Բաքուն չկա,— հեզնում է Բախշին: Պաշտոնավորը խոժոռում է: Նրա փոխարեն հարցնում է Աթա ապերը.

— Բա խի՞:

— Էս ա կտեսնի,— և Բախշին աչքով է անում Պուղանին, 20  
Այն ժամանակ Չետանց Վանեսը դեռ շարունակելով մտածել «Իվան ախպոր» մասին, ասում է.

— Բոլշևիկը կյամ ա, կյա, վնաս չունի, թաք կյամուսնիստը կյա վեշ...

— Ի՞նչի...

— Այ որդի, նրանից փիս են պատմում: Ասում են օրենք, հավատ,— և ձեռքի շարժումով շարունակում է միտքը՝ թե կոմունիստները «օրենք, հավատ» չեն ճանաչում:

— Նրանց ես եմ տեսել,— ասում է Բախշին,— երկուսն էլ լենինի ծրագրին են:

— Լավ, էդ որ ասում են լենին, հի՞նչ մարդ աս...

10 Այդ խոսքի վրա հրապարակով անցնում է գյուղի դաշնակցական խմբապետներից մեկը: Նա ուզում է մոտենալ հրապարակում նստածներին, մինչև անգամ Պաշտոնավորը նրան տեղ է անում՝ նստի, բայց որովհետև մյուսները լուռ են և ճնշվում են նրա ներկայութունից,— խմբապետը հեռանում է, ցույց տալով, որ իբր թե մի տեղ էր գնում և պատահաբար մտավ հրապարակը:

— Մաուզերը տես, մաուզերը...

— Կոթն էլ արծաթ...

— Չէ, ոսկի...

— Բա էլ ի՞նչ խմբապետ, որ կոթն էլ ոսկի չլինի:

20 Այդպես ծաղրում են նրան Պուղանը, Բախշին և զինվորներից մեկը: Պաշտոնավորը դժգոհ, գուցե նաև երկյուղից, հեռանում է:

Բախշին նրա ետևից ասում է.

— Բաքու գնացողին տես... կարծես պիտի գնա մասլոնչի դառնա...

— Է՛հ...— խոր հառաչում է Աթա ապերը,— ե՞րբ պիտի մեզ մի լույս բացվի...

Տխուր են: Մտածում են:

Այդ ժամանակ Պուղանը շրջվում է ետ: Նրա թիկունքում նստած ննջում է աշուղը: Պուղանը նրան արթնացնում է.

— Խաղ ասա, է՛... ի՞նչ ես քնել:

30 Նրան տեղ են տալիս, և աշուղը նվագում է, երբեմն երգում է.

«Չծաղկած վարդը պուկում են,

«Խոսեք, Ջանգեզուրի լեռներ...»

«Ջահեկներին կոտորում են,

«Ասեք, Ջանգեզուրի լեռներ...»

Պուղանը աշուղին՝

«Հեն ա կյամ են, է՛, կյամ են...»

Աշուղը խլում է նրա խոսքը և երգում է նոր կրկնակ.

«Հեն ա կյամ են, հեն ա կյամ են...»

Ունկնդիրները ժպտում են՝ նրա համար, որ «կյամ են», նաև նրա, որ իրենց աշուղը հնարամիտ է, իսկ Պուղանը բուռն ուրախությունից գլխարկը գետնովն է տալիս.

— Ախր, ե՞րբ պիտի լինի... (խավարում)

## 2

Անձրև է:

10

Կիսամութ այգի:

Մի տակառ պտոկեցրել են. տակառի խորքում մոմ է վառվում: Մեկը կիսով շափ մտել է տակառի մեջ և գրում է: Մարմնի կեսը դուրսն է. անձրև է կաթկթում, բայց տակառի խորքում և լույս է, և լույսը դրսից չի երևում, և անձրևը չի կաթում:

Հազիվ երևում է Քրիստի դեմքը: 5—6 ստվերներ: Զանգեզուրի ընդհատակյա կոմիտեն քննում է ապստամբության հարցը: Կարմիր Քանական արդեն մտել է Ղարաբաղ:

— Էհ, իմ ճանապարհը երկար է,— ասում է Մակիչը:

20

Տակառի մեջ գրողը ինչ-որ թուղթ է տալիս Քրիստին:

Վերջինս մոմի լույսով կարդում է՝ կնքում է, տալիս է Մակիչին.

— Մի լավ ընկերոջ ձեռքով...— Մակիչը թուղթը պահում է:

— Անց կացրու սահմանը...— Քրիստը ձեռքը մեկնում է:

— Մակիչ... ուրեմն, սկսում ենք,— ասում է Քրիստը և սեղմում է Մակիչի ձեռքը: Հազիվ նշմարվող ժպիտ: Մակիչը քայլում է դեպի դուռը:

Դուրսը սարսափելի անձրև է: Այգու մեջ տնակը, որտեղ ժողով էր, ներսը ոչ թե անձրև էր, այլ կտուրը կաթկթում էր:

30

Հանկարծ որոտում է, կայծակը լուսավորում է այգին, տընակը: Մակիչի սիլուետը: Ծվ երբ խավարը թանձրացավ, թվաց, թե խավարը կլանեց Մակիչին:

լուսանում է:

Շաղոտ արտերի մեջ կաքավի ձայնը: Լորը թռավ կանաչ-  
ներից: Մագոմ է արևը. մայիսի առավոտը Ջանգեզուրում:

Մակիչը արահետով բարձրանում է: Ամբողջ գիշերը ճա-  
նապարհ է կտրել: Նա շինելի փեշերը խրել է գոտու մեջ և  
գնում է ամայի լեռնալանջով, կանաչների միջով:

Ոչ մարդ կա, ոչ մարդաձայն:

20 Զախ՝ խոր ձորն է՝ ժայռեր, ձորի խորքում՝ շուրք, մյուս  
ափը՝ կանաչ անտառ:

Մակիչը քայլում է հիացած առավոտի գեղեցկությամբ:  
Մի արտում մոռացել են բահը: Մակիչը քարափի գլխից նայում  
է ներքև:

Հեռվից լսվում է հովվի սրինգը:

Մակիչը նայում է: Ներքև՝ ձորում հովիվը ոչխարն արոտ է  
հանել:

Մակիչը հանգստանում է, սրբում է քրտինքը: Նա եկել է  
դժվար արահետներով, եկել է գաղտագողի և զգույշ նայում է  
չորս կողմը:

20 Լեռան գլխին լսվում է ձիերի դոփյուն, մարդկանց ձայներ:  
Թնդանոթները ձիերի վրա բեռնած՝ ցեխի մեջ թրջված, շարդ-  
ված, ով գիտե որտեղից ուր են տանում զինվորները՝ կես գյու-  
ղացու կես զինվորի զգեստով՝ ցեխոտ, հոգնած:

Մակիչը թաքնվում է: Նրանք անցնում են:

— Հենց ասում եմ՝ քցեմ էս ձորը, կորչի գնա...

— Կտրվի մեր օրը...

Մակիչը նայում է նրանց ետևից: Երբ նրանք հեռանում են,  
Մակիչը կորչում է:

Նա մի անգամ ևս երևում է թփուտների մեջ, երբ իջնում է  
30 գյուղի վրա:

Թփուտների մեջ կանգնել նայում է հայրենի գյուղին՝ Ջան-  
գեզուրի գյուղին՝ ժայռերի մեջ և խոր ձորերում:

կիսամութ:

Լեոնը հանում է շինելը: Մակիչը գավկոմի տված թուղթը կարում է նրա փափախի ներսը: Լեոնը հագնում է ուրիշ զգեստ: Մակիչը նրան՝

— Լեոն, քեզ տեսնեմ... Մեր հույսը դու ես:

Քացվում է նույն քարանձավի դուռը, և դուրս է գալիս մի հովիվ՝ մահակով և մեծ փափախով մի հովիվ:

Մակիչը նայում է նրա ետևից:

Կես գիշեր է:

Տանը միայն օջախի լույսն է: Բուխարու ուրվագիծը: Կաթսան օջախի քարերի վրա:

Մակիչը կրակը մի կողմի է քաշում: Ապա սրբում է մոխիրը: Ձեռքը կոխում է և բարձրացնում է մի սալ քար, որի վրա էր օջախի կրակը և կաթսան: Ապա թևն ավելի խորն է կոխում և թաքստոցից հանում է երկու ատրճանակ: Քարը դնում է տեղը: Սոնան մոխիրը փռում է քարի վրա, և օջախը նույն օջախն է, նույն կրակը, նույն կաթսան...

Ծրդիկից ներս է ընկել լուսնի արծաթ սյունը: Մակիչը 20 ատրճանակները տեղավորելով, կամաց ասում է.

— Սոնա...

Սոնան կանգնել է նրա կողքին, երեսի քողը կիսաբաց: Մակիչը ձեռքը մեկնում է, թվում է թե պիտի գրկի նրան: Սոնան քողն իջեցնում է, բայց Մակիչը հանում է նրա երեսի կարմիր քողը, արագ համբուրում է քնած երեխային, դեմքի վրա լուսնի լույսը:

— Լավ է,— ասում է Մակիչը. լա՞վ է, որ Սոնան անքող է (և իրոք, լավն է Սոնան բաց երեսով), թե՞ այլ մտքով է ասում Մակիչը: 30

Նրանք դուրս եկան:

Սոնան կանգնել է դռան մոտ: Ժայռերի սովերները լուսնի լույսով: Քնած գլուղը: Մակիչն ահա հեռացավ, բայց հանկարծ ետ նայեց և մոտացավ Սոնային:

Կնոջ երեսին արցունք:

— Սոնա, ամոթ է... — գրկում համբուրում է: — Գնա տուն, ցուրտ է...

Ծվ հեռանում է:

Սոնան արձանի նման կանգնել է: Կանգնում է այնքան, մինչև հեռվում հավիում է Մակիչի վերջին ոտնաձայնը, և այլևս ոչինչ չի լսվում, այլ միայն լսվում է գետի վշտոցը:

6

10 Մակիչն անցավ փողոցով: Մի ստվեր թաքնվեց: Մակիչն այդ զգաց, ետ նայեց, բայց փողոցում ոչ ոք չկա:

Կարծես գետնի ընդերքից լսվում է խուլ աղմուկ: Աղմուկում են ապստամբների «շտարում»՝ խոր քարանձավում, որի դռնից, երբ Մակիչը դուռը բաց է անում, երևում է լույսի շերտ, լսվում է հզոր աղմուկ, ապա, երբ Մակիչը ներս է մտնում, ամեն ինչ լուռ է:

— Տես էն ո՞վ էր ման գալիս... — ասում է Մակիչը, և երկու հոգի հրացանով դուրս են գնում:

— Էս էլ քեզ կարմիր կտոր, — և Մակիչը հանում է Սոնայի քողը: Մեկը առնում է քողը, պահում է ճրագի դեմ:

20 — Դու լավ ես գրում, — ասում է Մակիչը ընկերներից մեկին՝ Հայկին: Նա առնում է քողը:

— Ի՞նչ գրեմ:

Մակիչը մտածում է. այդ ժամանակ «Արջը» ասում է.

— Կիրի՛ շեն կենա թագա օրենքը...

— Գրիր՝ Կեցցե Խորհրդային Իշխանությունը...

Հայկը դուրս է գնում, քողը թևի տակ:

Քարանձավի խորքում Կարագինը կռացել է գնդացիների վրա: Հավաքում է: Մեկը լցնում է գնդացիների ժապավենը. մի քանի գնդակ բռի մեջ, ասում է.

30 — Թե ազատես, դու ես մեզ ազատելու... — և մեկ-մեկ գնդակները մտցնելով բները, խոսում է. — Էս մեկը պարուչիկ Ամիրջանովին, էս մեկը մինիստր Չախարին...

— Նրան երկուսը դիր, — բղավում է «Արջը», — փորը հաստ է, չի անցնի:

Քարանձավի անկյունում Բախշին, յուզոտ տուժուրկան ուսերին  
երգում է՝ «Смело мы в бой пойдём...» — երգում է առանց բա-  
ռերի, նմանեցնելով բայաթու: Նա երգի եղանակը սովորեցնում  
է զուռնաչուն: Վերջինս «որսում է» եղանակը: Երգի հետ լքս-  
վում է զուռնայի կտրտվող, երբեմն սխալ, երբեմն ճիշտ նը-  
վազը: Երբեմն սովորեցնողի ձայնը և սովորողի նվազը կոր-  
չում են ընդհանուր աղմուկի մեջ, իսկ երբեմն պարզ լսելի է,  
որ զուռնաչին այնուամենայնիվ սովորեց եղանակը, և նույ-  
նիսկ մի ուրիշը մատներով թմբկահարում է:

— Կարագին,— ասում է Մակիչը,— ազդանշանը երեք 10  
անգամ... — և Մակիչը ցույց է տալիս իր ատրճանակը:

Կարագինը գնդացիիը հանում է: Մեկը շալակում է անիվ-  
ները, մյուսը՝ փողը... գնում են:

Խավարում:

## 7

Գոմի ճրագի լույսով մեկը ձին քաշում է դուրս: Մեզ ծա-  
նոթ խմբապետն էր, որին հրապարակում Պուղանը և Բախշին  
ծաղրեցին:

Նա յափունջին ուսեց, նստեց ձին: Գոմի ճրագը հանգամ:  
Խավարի մեջ լավում է ձիու հեռացող դոփյունը: 20

Մակիչը նայում է ցուցակին:

— 67..., — ցուցակը ծալում է: Ապա նվատում է ապս-  
տամբներից մեկին՝ անունը՝ Բագի: Մակիչն զգում է, որ Բա-  
գին ինչ-որ բան է ուզում ասել:

— Հը՞, ինչ կա...

— Ոտքերս բոբիկ են...

— Ան իմը,— և ապստամբներից մեկը նստում է, որ  
տրեխները քանդի:

Մարդը տատանվում է, նորից ինչ-որ բան է ուզում ասել,  
բայց այդ թուպին դրսից լավում է կրակոց: 30

Զգաստանում են:

Ապա դուռն աղմուկով բացվում է, և ներս են մտնում այն  
երկու հոգին, որոնք դուրս էին գնացել իմանալու, թե ինչ  
ստվեր էր պտտվում նրանց շուրջը: Հրելով ներս են բերում  
քյոխվի գզիրին:

— Ընկեր պետ, այ, սա էր...

Մակիչը նայում է նրան: Գզիրը՝ նիհար, ահից խելքը կորցրած, դողդողում է և միևնույն ժամանակ աղերսում է թողութուն:

— Թող կորչի գնա,— ասում է Մակիչը: Կոմունարներից մեկը նրան բռնելով հրում է, բայց այդ բռնակցին ներս է մտնում Պուղանը և երկու հոգի: Նրանք թևերին փաթաթել են հեռախոսալարերը: Լարերը շարտում են մեջտեղ, և Պուղանը քրտինքը սրբելով ասում է.

10 — Դե, թող հիմա խոսեն:

— Ուռա,— թնդում է քարանձավը:

### 8

Խավարի մեջ խուլ զանգահարություն: «Հավարի» զանգեր են: Հետզհետե ուժեղանում է և հանկարծ կտրվում:

Երեք գլուխ՝ «սպարապետը», գնդապետ Կուռոն և Գեղեոն վարժապետը:

Ներս է մտնում պարուշիկ Ամիրջանովը՝ ետևից գյուղից փախած խմբապետը:

20 — Լարերը կտրված են... 2-րդ ճակատը չի պատասխանում...

Գեղեոն վարժապետը շտկում է ականոցները: Նա՝

— Ապստամբություն... Հայ գյուղը ապստամբի՞ իր կառավարության դեմ...

— Ոչինչ չկա սարսափելի...,— ասում է «սպարապետը»,— վաղը ժամը 12-ին վերջացրեք այդ անկարգությունը...

Գնդապետը նայում է պարուշիկ Ամիրջանովին: Վերջինս պատվի է առնում՝ ճշան համաձայնության, և նրա հետ հեռանում է խմբապետը, որ բերել է ապստամբության լուրը:

Խավարի մեջ պարզ լսելի զանգահարություն:

30 Մակիչը նայում է ժամացույցին:

— Լուսանում է, Պուղան...,— Մակիչն ականարկում է, որ գնալու ժամանակն է:

Պուղանը դուրս է գնում, նրա հետ՝ մի տասնյակ...

Սկեզեցու զանգերը «հավար» են կանչում: Զանգահարում է Բախշին:

Լույսը նոր ճառագում է:

Աթա ապերն աչքերը քաց է անում, լսում է զանգերի ձայնը, նստում է տեղը, դարմացած նայում է: Թախտի վրա Մակիչի շտրորված անկողինը:

— Էն հի՞նչ հավար է...

Նայում է Սոնային: Սոնան չի քնել: Կոացել է օրորոցի վրա:

10

— Աղչի, շե՞ս քնել...

Սոնան գլուխը թաքցնում է, սրբում է արցունքը:

— Մակիչն ո՞ւր է:

Սոնան գլխով է անում դեպի դուրս: Աթա ապերը «շտապ» հագնվում է:

— Այ պառավ, վեր է՛, է... Երեխտն...— և բռնում է քնած Մինա զիզուն:

Զանգահարություն:

Մեկը սարսափած վեր է թռչում:

— Խուրքերը եկան...

20

Մի բակում կինը՝ կովկիթը ձեռքին մոտեցել է, որ կովը կթի, բայց լսում է, և հորթն օգտվելով նրա շվարումից, ծծում է մորը: Կինը նկատում է այդ և դեն է հրում հորթին:

— Բախտդ բանեց, հա՞ սատկած...

Զանգահարություն:

Պուլանը գլուղից դուրս եկավ: Վերջին տունը ետ մնաց: Սարահարթ: Գիշերային ճրագ: Երեք սպա քնել են: Կապիտան Տեր-Պետրոսովը ստնաձայն լսեց, գլուխը բարձրացրեց, նայեց ժամացույցին: Ժամը հինգն է: Պուլանի ընկերները շրջապատել են տունը: Երկու ընկերով՝ Պուլանը կանգնել է պատշգամբում՝ դռան առաջ: Սանդուղքի վրա հրացանը գրկած քնել է պահակ զինվորը: Նրա գլխավերև կանգնել է Պուլանի ընկերներից մեկը:

30

Զանգահարություն:

516

Պաշտոնավորը դարպասը կողպում է՝ նայում է դռան արանքից: Փողոցով անցան շորս զինվորներ:

Կարագինը գնդացիի տեղավորում է թփերի արանքում: Նրանք ձորի պռունկին են: Զինվորներից մեկը ներքև է նայում՝ խոր ձորին: Թփերի արանքից երևում է ճանապարհը, որ իջնում է դեպի գյուղը: Կարագինը գնդացիին ամրացնում է՝ փողը դեպի ճանապարհը:

Սպաների սենյակն է: Պուղանը և մի զինվոր ներսն են: Վայրկյանի լուսթյուն: Կապիտանը բարձրացնում է գլուխը: 10 Պուղանի աչքն ընկնում է սեղանին, որի վրա դարաված են նրանց ատրճանակները, թրերը. պատից կախված է մի կարաբին:

— Դուք բանտարկված եք,— ասում է Պուղանը: Ներս են մտնում նաև երկու ապստամբ:

— Ի՞նչ,— և կապիտանը վեր է կենում, կամենալով մոտենալ զենքերին: Պուղանը հանում է ատրճանակը: Զարթնում է երկրորդ սպան:

— Ո՞վ է մեզ բանտարկել,— հարցնում է Կապիտան Տեր-Պետրոսովը:

20 — Հեղափոխական կոմիտեն...

Կապիտանը դարձնում է հեռախոսը: Պատում է: Պուղանը բարձրացնում է ձեռքը:

— Նեղություն մի քաշի...

Զանգահարություն մոտիկ և հզոր:

Մակիչը բարձրացնում է ձեռքը և զանգահարն այլևս չի զարկում:

Սկեղեցու բակում հավաքվել են մոտ 50 զինված մարդիկ: Բակն են մտնում ուրիշ գյուղացիներ:

Մակիչը բարձրացել է մի քարի վրա...

30 — Ընկերներ, ահա բացվում է լույսը, և զալիս է մեր կարմիր օրը...

Աթա ապերը զարմացած նայում է: Նրա կողքին Չետանց Վանեսն է, հրապարակի նրա «հակառակորդը»: Աթա ապերն ասում է Չետանց Վանեսին.

— Ուրեմն, կյամ ե՞ն...

Հայկը, որ Սոնայի քողը տուն էր տարել գրելու, ճեղքում է բազմութունը և Մակիչի մոտ բաց է անում կարմիր դրոշը: Հազիվ նշմարվում են առաջին տառերը: Թնդում է ուռան...

Դրոշը ծածանվում է:

Մակիչի ֆիգուրը քարի վրա՝ որպես ամեհի արձան:

Կիսամութ: Կիսալույս:

## 10

Դհուլը դմբոջմբում է: Զուռնան նվագում է, «СМЕЛО МЫ В БОИ ПОЙДЕМ»: Եվ հետու է, և ջինջ է նվագը՝ մարդկանց խուլ ձայների և դոփյունի հետ: Տեսնելու շափ պարզ դողդողում են **10** ելևէջները:

Նրանք բարձրանում են: Գլուխներ են. նրանց վրա ծըփում է դրոշը: Երբեմն երևում են առանձին ֆիգուրներ՝ անցնում են կածանով, կամուրջով, վիմափոր տների մոտով: Բարձրանում են և ինչքան բարձրանում, այնքան խլանում է նվագը, բայց և երբեմն հզորանում է, երբ ապարատը մոտենում է ցույց տալու՝ թե ինչպես մի տեղ նրանց միացան երեք հոգի, մի այլ տեղ՝ մեկն ինչ-որ դարպաս է ծեծում, շուն է հաշում, մի կին՝ միամիտ հարցնում է.

— Առավոտ կանուխ էս հինչ կա՞...

**20**

Գիլա բիբին պատասխանում է.

— Ախչի, թագա օրենք են դուրս բերել...

Պաշտոնավորը դժգոհ նայում է դարպասից:

Երկու հոգի հրացաններով մոտենում են՝ միանման շարքերին: Բայց Պաշտոնավորը նրանց կանչում է, ինչ-որ շշնջում է: Հրացանավորներից մեկն ասում է.

— Մենք հենց իմացանք գնում են թուրքերի վրա, — և հրացանները պահում են:

Քյոխվան, ինչպես գյուղում անվանում էին դաշնակցության կոմիսարին, հին տանուտերի տիպն է և նույնիսկ վզով **30** կախում է տանուտերության նշանը: Բայց ներս է վազում գզիրը, որը տանուտերի դռնից գաղտագողի նայում էր: Ասում է, որ ապստամբները գալիս են, և քյոխվան իսկույն հանում է տա-

**517**

նուտերութեան նշանը և այդպես քարացած և քունը դեռ գլխին,  
նայում է:

Սպաների սենյակն է: Սպաները չկան: Պուղանն «օյին» է  
արել. ապստամբներից շորս հոգի ծիծաղում են: Պուղանը փո-  
զը դրել է ականջին, «խոսում է»...

— Ցենտրալնի, ցենտրալնի... Բաքու, դա Բաքու... Բա-  
րիշնա ջան, իգդե կրանի արմի... Ախր ժողովուրդը կոտոր-  
վեց... Հը... կյամ են, հենա կյամ են... մենք շրմփացրինք  
մերոնց... Հա՛, հա՛, գասպաղին աֆիցերներին տարան Թալիշ,

10 եզան գոմը...

Նորից է պատում փողը:

— Օրիորդ... Հայրստունի կողմերը ի՞նչ կա... Մարդ-մուրթ  
մնա՞ց, թե՞ բոլորն իրար կերան...

Պուղանը նկատում է, որ ապստամբներից մեկը սեղանի վրա  
ինչ-որ բաժակ է տնտղում, գրպանեկու մտադրությամբ: Փողն  
խսկույն կախում է և խստությամբ նայում է նրան: Չեռքով նը-  
շան է անում, որ հերիք է: Հարկավոր է դուրս գալ:

Նորից մարշը:

Մի մայր գուրս է գալիս տնից և կախվում է որդու՝ Բազու  
20 թևից:

— Ո՞ւր ես գնում,— Բադին ազատում է թևը, ավելի  
ճիշտ ետևից եկող մորը մի կողմի է քաշում: Մայրը զարմա-  
ցել է:

Երբ հեռանում է որդին՝ մայրն ինքն իրեն ասում է.

— Սև լինի Բաքուն, է... էս սաղ Բաքուն արեց...

Ձիերի դոփյուն:

Սարահարթի վրա արշավում են պարուլչիկի ձիավորները:  
Նրանք շատ են, և նրանց վերջը չի երևում:

Ետ մնաց վերջին տունը:

30 Նրանց դիմաց բերում են բանտարկած սպաներին: Ապս-  
տամբներից մեկն ուզում է վրա քշել կապիտան Տեր-Պետրո-  
սովին ապտակելու նպատակով:

— Շարքի,— բղավում է Մակիշը, բռնելով նրա թևը:—  
Խմբապետ հա՛ չե՞ս...

Կում են Սպաներին իջեցրին:

Այնտեղ, որտեղ նրանք հանդիպեցին սպաներին, փոքրիկ կիրճ է, որի միջով ճանապարհը բացվում է սարահարթի վրա: Այդ միակ ճանապարհն է: Մակիչը այդտեղ շորս հոգու պահակ է նշանակում, նպատակ ունենալով գյուղից ավելորդ մարդկանց երթևեկութունը կտրել:

Պուղանը Մակիչին է հանձնում մի հեռադիտակ:

Պարուչիկ Ամիրջանովն արշավում է՝ հուսից ձիավորների խումբը:

Հինգ հոգի ճեղքում են կիրճը և գնում են դեպի դիրքերը: Նրանք ուշացած ապստամբներն են:

10

Մակիչը Պուղանին ինչ-որ դիրքեր է ցույց տալիս: Այդ մի բլրակ է՝ ճանապարհի աջ կողմը:

Արտերի մեջ թաքնված պահակը, որ բավական առաջ է, մի անգամ կրակեց:

Պարուչիկ Ամիրջանովը կանգ առավ:

Ապստամբները դիրքերումն են:

Իր տան պատուհանից քյոխվան նայում է սարահարթին: Նա սպասում է, տատանվում է:

Ձիավորներն արշավում են:

Մի խումբ ապստամբներ պառկել են թփերի հոտը: Նրանք նկատեցին արշավող ձիավորներին, որոնք ճեղքվեցին երկու մասի:

20

Բլրի գլխին ծփում է դրոշակը:

Մակիչը նայում է հեռադիտակով:

## ԵՐԿՐՈՐԿ ՄԱՍ

### 1

Փոքրիկ բլրակ: Միայնակ ծառ:

Մակիչը նայում է հեռադիտակով: Ձիավորների մի խումբ արշավում է դեպի այն թփերը՝ ձորի գլխին, որոնց հոտ թաքնված է Կարագինի գնդացիքը:

30

Մակիչն ատրճանակից կրակում է ազդանշանք:

Ձիավորները՝ թրերը հանած արշավում են՝ ինչպես հեծելազորը շեղ դժով, իրարից հեռու:

519

Գնդացիքը բացվեց:

Գլորվեց մի ձի: Ձիավորն ընկավ: Մի ձի ծառս եղավ: Ձիավորների աջ թևը դարձրեց ձիերի գլուխը: Գնդացիքը «որոնում է» նրանց: Ձիավորները նահանջում են դեպի ձորակը:

Մի ձիավոր մտնում է ձորակը: Ձիերը արածում են ձորի արտերի մեջ: Պարուչիկ Ամիրջանովը մեկին ինչ-որ հրամայում է: Այդ ձիավորը վազում է, նստում է ձին, ձիերը նստում են՝ 15—20 գինվոր:

10 Պարուչիկ Ամիրջանովը նրանց առաջարկում է աջ կողմով մոտենալ գյուղին և կտրել նահանջի ճանապարհը:

Պուղանի տղաները սողում են կանաչի միջով: Նրանցից մեկը ետ է մնում, գլորվում է փոքրիկ փոսը և տապ է անում, հրացանը թաքցնելով խտաի մեջ...

Պուղանը նկատեց ձիավորներին, որոնք ձիերը դեպի աջ էին թշում...

Կրակեցին...

Ձիավորները հեռացան, թաքնվելով բլրի ետևը:

Մակիչը՝ միջին զորամասով սողում է առաջ՝ դեպի քարափները...

20 Պարուչիկ Ամիրջանովը գինվորների գլուխն անցած սողում է դեպի նույն քարափները:

Գնդացիքը կտկտում է:

Ձորում ձիերն անհանգիստ են: Մի ձի վրնջում է:

## 2

Մակիչը մոտենում է քարափներին:

Պարուչիկը քարափներից հարյուր քայլի վրա է...

Կարագինը նկատում է սողացող դաշնակցականներին:

Մակիչը մոտեցավ քարափներին:

Գնդացիքը բացվեց դեպի կանաչ արտերը:

30 Քարափի գլխից կրակում են Մակիչի հետ եղած ապստամբները:

Պարուչիկ Ամիրջանովը նահանջում է: Նրա տղաներից մեկը կողքը բռնեց, երկու քայլ գնաց, օրորվեց և ընկավ:

Պարուշիկը մտավ թփուտը:

Կարագինը գնդացիրն ուղղեց դեպի թփուտը:

Գնդացիրը կտկտում է:

### 3

Գնդացիրի կրակոցի ձայները հասնում են գյուղը:

Պաշտոնավորը և քյոխվան. ապա շրջանը հետզհետե բացվում է, և երևում է մի կտուր, կտուրի վրա հավաքված կանայք և տղամարդիկ:

Լեղապատառ վազում է գզիրը: Նա բղավում է:

— Վայ ամա՛ն, հայերն իրար կոտորեցին:

10

Քյոխվան քաշվում է տուն, ճակատին շոր է կապում, մըտնում է անկողին:

Պաշտոնավորը՝

— Ժողովուրդ, բա հի՞նչ եք ասում... Ախր, «մեր տղորցը» կոտորեցին:

Բաղու մայրը՝ (նա, որ ասաց. «Սև լինի Բաբուն...» և ուղեց որդուն դուրս հանել շարքից) լսելով այդ, ծնկներին է խփում, կրծքին է խփում և ճշալով վազում է.

— Ամա՛ն, երեխայիս սպանեցին...

Ժողովուրդն իրար է անցնում:

20

### 4

Մակիչը վայր դրեց հեռադիտակը, և շորս հոգով շտապում է դեպի Պուղանը:

Զիավորները աչ թևից քաշում են դեպի գյուղը: Նրանց մտադրութունն է գյուղը մտնել թիկունքից, շրջապատել ապստամբներին:

Պուղանը կովի է բռնվել:

Զիավորները դանդաղ, բայց քայլ առ քայլ իջնում են գյուղի վրա...

Թփուտների միջից մեկ-մեկ դուրս են սողում դաշնակները: Նրանք կուզեկուզ գալիս են: Նրանք գալիս են դեպի քարափը, որ սարահարթի գլխավոր դիրքն է:

30

Մակիլը Պուղանի դիրքից կրակում է:  
Գրոհում են... Զիավորները նահանջեցին:  
Դեպի միջին դիրքն են մոտենում դաշնակները...

Այնտեղից Հայկը բարձրանում է և բղավում է.  
— Մակիլ, հե՛յ,— և ձեռքով անում՝ թե վերադարձիր,  
թշնամին երևաց:

Հենց այդ ըոպեին նրան խփում են:

Մակիլը նկատեց և վազում է դեպի միջին դիրքը, դեպի քա-  
րափը:

10 Մեռնող կոմունարը կանչում է.

— Զո՛ւր...

## 5

Այն կիրճը, որտեղ Մակիլը շորս հոգու պահակ է թողել...

30—40 կին, տղամարդ խոնվել են, աղմկում են: Նրանք  
ուզում են անցնել սարահարթը:

Հեռու կանգնել է Պաշտոնավորը և մի գյուղական կիսաին-  
տելիգենտ տիպ: Նրանք իբրև թե բանից տեղյակ չեն և մի դար-  
պասի առաջ նստել են: Նստել են, բայց ականջը դեպի ժողո-  
վուրդն է: Անցնում է գզիրը, որ լեղապատառ վազել էր, բղա-  
վելով, թե հայերն իրար կոտորեցին: Պաշտոնավորը նրա ա-  
կանջին ինչ-որ բան է ասում: Նա գնում է դեպի ժողովուրդը:

20 Խոնված ժողովուրդի մեջ երևում է Աթա ապերը:

Բադու մայրը հարձակվում է նրա վրա.

— Բա հայը հային կսպանի՞...

Աթա ապերը հանդարտ պատասխանում է.

— Բա իմ տղան հայ չէ՞ր...

Ժողովրդի միջից գզիրը բղավում է.

— Թողեք հաց տանենք, ջուր տանենք...

30 Պահակ զինվորներն իրար են նայում: Նրանք բաց են թող-  
նում ժողովրդին:

Պաշտոնավորը և «կիսաինտելիգենտ» տիպը դարպասով  
ներս մտան: Բակում նրանց դիմավորեց քահանան:

Քարափի գլխին Մակիչը նկատում է ինչ-որ գլուխներ, որոնք խոտերի մեջ կռանում-բարձրանում են: Նրանք բավական մոտեցել են գնդացրին:

Նկատելով նրանց, Մակիչը կրակ է բաց անում և գրոհում է...

Դաշնակները գրոհում են միջին դիրքի վրա:

Սարահարթով վազում է մի կին:

— Մակի՛չ, ժողովուրդը...

Մակիչը տեսավ ժողովուրդին:

10

Ժողովուրդը սարահարթի վրա: Մեծ մասը գնում է դեպի

Պուղանի դիրքերը:

Բլուրի վրա, որտեղ միայնակ ծառն էր, ծածանվում է դրոշակը:

Դաշնակները գրոհում են:

— Ետ քշեք ժողովուրդին,— բղավում է Մակիչը:

Երեք զինվոր վազում են դեպի ժողովուրդը: Նրանք ինչ-որ բղավում են դեպի կիրճը, որտեղ պահակ զինվորներն արդեն իզուր, աշխատում են պահել ժողովուրդի նոր ալիքը:

Գյուղացիներից մի քանիսը հրացանով են:

20

Նրանք վազում են դեպի միջին դիրքը:

— Պինդ կացեք, տղերք,— բղավում է մեկը և դիրք է մտնում:

Ժողովուրդի ներկայութունը բարոյալքում է զինվորներին, ոմանց ոգևորում է: Կանոնավոր ճակատը դարձավ խռնված ամբոխ, որտեղ մի կին քաշում է ամուսնու թևից, մի մայր համարյա դիրքերի մոտից բղավում է.

— Արյուն մի՛ արեք, հե՛յ, ձեզ մատաղ...

Պուղանը շփտի ինչ անել... Ետ է նայում: Մի քանի հոգի չկան: Իսկ թշնամին ահա աչ կողմից շրջապատում է, և առաջին ձիավորներն արդեն մարագներն են հասել:

30

Խոտերի մեջ ընկած է Հայկը:

Աթա ապերը գրկում է նրան...

— Զո՛ւր,— ասում է վիրավորը, Աթա ապերը մոտեցնում է ջրի կուժը:

Բախշին, որ միշին դիրքումն է, տեսնելով մոտեցող թըշնամուն, դուրս է թռչում դիրքից և բավական մոտենալով, պառկում է քարի տակ:

Նա կրակում է:

Դաշնակներից երեքը մտել են արտի «միջնակը» և քարափից 50 քայլի վրա են: Նույնիսկ Բախշին չի նկատում, որ կողքով սողում են դաշնակները:

Դաշնակները, թվում է, թե հեռացան գնդացիներից:

Մակիչը միշին դիրքերումն է...

10 Կիրճի կողմից մեկը բղավեց.

— Փախեք, հե՛յ... ձիավորները մտան գյուղը...

Պուղանի դիրքերը դողացին... Մեկը հրացանը գցեց: Վազում է դեպի ժողովուրդը: Երկու հոգի հրացանով են փախչում: Պուղանը բղավում է.

— Ո՛ւր եք փախչում...

Հանկարծ բլուրի ետևից, թրերը հանած, դեպի Պուղանի դիրքերն են արշավում քսան ձիավոր: Կանայք ճշալով ետ են գնում: Պուղանը վազում է դեպի միայնակ ծառը, դեպի դրոշակը:

Քարափի վրա ձեռնառումը գցեցին: Փռչի:

20 — Կարա՛գին, գնդացի՛րը,— որոտում է Մակիչի ձայնը:

Աթա ապերը, Գիլա բիբին, մի ուրիշ գյուղացի վազում են դեպի քարափի դիրքերը: Այնտեղից էլ հետ են փախչում մի քանի հոգի, որոնք նկատեցին Պուղանի թևի նահանջը:

Կիրճը պահող ապստամբները վազում են դեպի դիրքերը, մեկը տատանվեց, հետ մնաց: Փախչում է դեպի գյուղը:

Գնդացիքը կտկտաց և կտրվեց:

Մի կոմունարի խփեցին թիկունքից:

Ձեռնառումբի ծխի մեջ կրակում է Մակիչը:

30 Կարագինը գնդացիքը զլորեց ձորը:

Խճաքար լանջով զլորվում է գնդացիքը: Մի բակ: Մի կին՝ ձեռքը ճակատին պահած նայում է վերև: Շղթայած շունը հա-

շում է: Գնդացիքը գլորվելով մտավ այդ բակը: Շունը հետ փախավ: Կինը և վախեցած, և զարմացած ասում է՝

— Վրիա՛... էս աղքատի գուժանն ումն ա՛:

Գնդացորդները նահանջում են կրակելով:

Կարագինը երեք հոգով վազում է դեպի քարափի դիրքերը:

Պուղանը, խլելով դրոշը, վազում է դեպի քարափի դիրքերը, ետևից մի քանի զինվոր:

Փախչում են կիրճով: Փախչողների մեջ կան՝ ապստամբներ, կանայք, տղամարդիկ: Ոմանք շվարել են: Չետանց Վանեսը, նաև երկու ծերունի առաջ են գնում:

10

Պարուչիկ Ամիրջանովը նստեց ձին, նստեցին նաև նրանք, որոնք ձիերը պահել էին ձորում:

Քարափի դիրքերը դաշնակների ձեռքին են:

Աթա ապերը վազում է: Վազում են Չետանց Վանեսը, երեք-չորս գյուղացի:

Կիրճի մոտ՝ ուշագնաց լալիս է Մինա զիզին:

Կարագինը կրակելով քարափից թռավ ներքև:

Գիլա բիրին ծնկները խփելով՝ վազում է գյուղի փողոցներով:

Դռան շեմքին՝ Սոնան...

20

Գնդակը դիպավ Մակիչի ձեռքին: Ատրճանակն ընկավ: Երկու ձիավոր թրերը հանած տասը քայլի վրա են:

Քարափը դաշնակների ձեռքին է:

Բախշին իրեն գցեց մի պատից: Պաշտոնավորը վեր թռավ, բռնեց նրա փեշից՝

— Ո՛ւր ես փախչում, ինկեր...— Բախշին դարձավ դեպի նա, որ խփի, Պաշտոնավորը սարսափած, բաց թողեց փեշը: Բախշին թռավ ներքև:

— էդ ո՛ւմ եք սպանում,— որոտաց Աթա ապոր ձայնը: Գյուղացիները՝ Աթա ապերը, Չետանց Վանեսը և մյուսները ձիավորների արանքում են: Ձիերը կանգ առան:

30

— Մակիչ, քեզ ազատիր,— բղավում է Պուղանը:

Թիկունքից երկու հոգի բռնում են Մակիչին՝ հենց ժողովը դի մեջ,— Քյոխվան դեն նստեց գլխաշորը, դուրս եկավ վերմակի տակից և հարդարելով իրեն, կախեց տանուտերու-թյան նշանը:

525

Պուղանը փախչում է, ետևից ձիավորը: Պուղանը թռավ  
պատի վրայով:

9

Գյուղի փողոցներով արշավում են ձիավորները:  
Անկարգ կրակոցներ: Գյուղացիների սարսափած դեմքերը:  
Երկու հոգի թաքնվեցին մարագի մեջ:  
Անկյունից մեկը կրակում է:

Կարագինը գլխաբաց փախչում է:  
20 Ձիավորները նրա ետևից, կորցրին նրան: Մի ուրիշը՝  
10 ձիուց իջնելով, վազում է կտուրով:

Կարագինն ընկնելով ծուղակը, ներս է մտնում մի պատա-  
հական բակ: Այդ Գիլա բիրու բակն է, որտեղ առավոտյան Գիլա  
բիրին կով էր կթում:

Կարագինը մտնում է տուն, դուռը դնում:  
Ամալի բակ: Քարափոր տուն՝ ժայռի մեջ, մի բարձր և վան-  
դակապատ լուսամուտ, դարձյալ ժայռի մեջ: Կտուրով վազող  
ձիավորն իրեն զցում է այդ բակը: Դռնով ներս են մտնում եր-  
կու ձիավոր:

Նրանք մոտենում են: Կարագինը ներսից կրակում է: Ձիա-  
20 վորներից մեկը բռնում է թևը. նա վիրավորվեց: Գալիս են ուրիշ  
երկու հոգի: Նրանցից մեկը ձեռնառումը բարձրացնում է, որ  
խփի: Այդ վայրկյանին Գիլա բիրին ճշալով ներս է վազում,  
ընկնում է ձեռնառումով ձիավորի ոտքերը:

— Ամա՛ն, հարսս, հիվանդ հարսս...

Ձիավորը տատանվում է:

Գիլա բիրին մոտենում է դռանը: Կամաց ասում է Կարա-  
գինին, որ դռան ետևից լսում է.

— Ես եմ, բաց արա...

Դուռը բացվում է և իսկույն փակվում: Գիլա բիրին վա-  
30 զում է սան անկյունը:

Քիչ հետո դուրս են գալիս Գիլա բիրին և «հարսը», նրա  
թևին կոթնած: Դուռը դնում են: Նրանք անցան բակի կողմով:

— Դե, հիմա ի՞նչ կասես,— ձեռնառումը պայթում է:  
Փոշի:

Ամայի մարագի մեջ. Գիլա բիբին և «հարսը»: Կարագինը հանում է «հարսի» շորերը: Գիլա բիբին ասում է.

— Մակիչին բռնեցին:

10

Խոր ձոր է:

Հինգ ձիավոր դեռ շարունակում են հետապնդել:

Պուղանը երեք հոգով հետ է նահանջում: Ձիավորներից մեկը կանգնում է: Նեղ կապ է, ձիերը դժվար պիտի անցնեն:

Պուղանը և ընկերները կրակում են:

Ձիերից առաջինը խրտնում է: Վերջին ձիավորը հետ է 10  
փախչում:

Ձիավորները շրջում են ձիերի գլուխը: Այլևս չեն հետապնդում:

Պուղանն ընկերների հետ կորչում է ձորում:

Խավարում:

11

Գնդապետ Կուռոյի դեմքը: Խոսում է հեռախոսով:

— Բռնե՛լ եք: Շնորհավորում եմ, պարուլիկ... Այո՛, այո՛, խիստ հսկողությամբ...

Հետզհետե բացվում է պատկերը:

20

Նստած է Գեղեոն վարժապետը, Կուռոն նայելով Գեղեոն վարժապետին, ասում է հեռախոսով.

— Ո՛չ, պարուլիկ... Չէ որ մենք դեմոկրատիկ հանրապետություն ենք, — և հեռախոսի փողի միջով քրքշում է:

Խավարում:

ԵՐՐՐԻԿ ՄԱՍ

1

Պարուլիկ Ամիրջանովը կախում է հեռախոսը: Նրա կողքին կալանքից ազատված սպան է՝ կապիտան Տեր-Պետրոսովը: Դիմացը՝ երբեմն ահով, երբեմն շողոքորթ սիրալիկ կանգնել է 30  
քյոխվան, տանուտերության նշանը կրճբին:

527

Պարուշիկը՝

— Գյուղից կհավաքես ութ հարյուր փութ ցորեն... Եթե փախածներին չբռնեն բերեն...

Քյոխվան ցնցվում է: Հեռվից զուռնա-դհուլը նվագում է մարշը՝

— Քար քարի վրա չի մնա, Բայբուրտ...

Քյոխվան հանդգնում է ասել՝

— Ութ հարյուր փո՞ւթ... պարուն պարուշիկ...

— Ոչ մի խոսք... Մարշ...

10 Քյոխվան նայում է վախեցած՝ նաև սիրալիր շողոթորթու-թյամբ հետ է գնում:

Հետզհետե խավարում է:

## 2

Հրապարակն է, գյուղական կանցելարի առաջ, իսկ վերևը՝ «շտաբի օթախներն» են, որտեղ է Ամիրջանովը և կապիտանը:

Դհուլ-զուռնան «Բայբուրտի» մարշով կանչում է ժողովի: Հրապարակում երևում են գյուղացիներ: Նրանք հավաքվում են: Դրնգում է գղիթի՝ մեզ ծանոթ այն գյուղացու ձայնը, որը լեզապատառ վազեց, բղավելով, թե՛ «հայերն իրար կոտորեցին»:

20 Մի քարափից նա կանչում է՝

— էհե-հե՛յ ժողովուրդ... մեյդանում ժողով է, հե՛յ...

Ձայնը արձագանքում է:

Մի կին «չանչ» է անում, ասելով՝

— Չոռը քեզ, բայդուշ...

Հրապարակ են մտնում երկու գյուղացիներ: Նրանցից մեկը՝ անունը Մինաս, մոտենում է զուռնաչուն: Երբ վերջինս շունչ է առնում, Մինասն ասում է նրան.

— էս ոնց է քո բանը... Երեկ «ուռա», էսօր «տարանի-նա»...,— այսինքն՝ երեկ ապստամբների երգն էիր նվագում,

30 այսօր դաշնակցականների մարշը:

Չուռնաչին նվագում է և զուռնայի ծայրը դարձնելով դեպի քյոխվան, որը սանդուղքի գլխից նայում է հրապարակի ժողովուրդին,— ուսերով հասկացնում է, թե՛ «ի՞նչ անեմ, ահը մեծ

է, քան մահը»: Քրիստիան իջնում է սանդուղքով: Մի գլուղացի Մինասին ասում է.

— Կամ աղն է պակաս, կամ՝ մաղը...

— Ժողովուրդ, լսողութիւն,— կանչում է քրիստիանը:  
Խավարում:

### 3

Այն ձորը, որտեղ Պուղանը հետ քշեց հետապնդող ձիավորներին:

Քերծի տակ կանգնել են Պուղանը, Կարագինը, «Արջը» և Բախշին:

10

— Ո՞նց անենք,— հարցնում է Պուղանը:

Իրար երեսի են նայում:

Գառների մայուն:

Քերծի գլխից, ձորի խորքում նկատում են մակաղած գառների: Մի տղա թաքնվել է թփի տակ:

Իջնում են ձորը: Մյուսները պահվում են, որպեսզի տղային չվախեցնեն, և մոտենում է միայն Պուղանը:

— Զիլֆի՛,— տղան ոտքի է կանգնում:

Զիլֆին Պաշտոնավորի գառնարածն է, գզգզված, մեծի հին շոր և փափախ դրած մի գեղեցիկ տղա:

20

— Զիլֆի, վազի մի խաբար բեր...

Տղան մի բոպե տատանվում է, ապա գնում է:

### 4

Քրիստիան ժողովուրդին արդեն հայտնել է պարուշիկի հրամանը: Ժողովուրդը գրգռվել է: Մինասը մեկին հրելով, առաջ է տանում մինչև կենտրոնը, որտեղ կանգնած են Պաշտոնավորը, քահանան, այն «կիսաինտելիգենտ տիպը» և այս կարգի մարդիկ, նաև քրիստիանը:

Մինասը բոլորի առաջ «մաշկում է» մարդու քրքրված շուխան: Մեջտեղ կանգնել է մերկ, կմախքի նման մի մարդ, որ ամաշելուց շուխան իսկույն ծածկում է: Լուսթյան մեջ Մինասը գոռում է.

30

— Բա սրան ո՞վ հաց կտա...

529

լոռամ են, ապա խուլ գոռում են.

— Բւ՛մ ցորեն ունի, շուն լինի...

— Կես փութ էլ չեմ տա...

— Բւ՛մ տնից փախած կա, թող նա տա,— ասում է Պաշտոնավորը: Մեկը կանչում է՝

— Բու՛ան քցել էին գյուղը... Ժողովուրդն ի՞նչ մեղ ունի...

Գառնարած տղան գյուղի մոտ անցավ ձիավորների կողքով, որոնք ճանապարհը կտրել են:

«Պաշտոնավորը» բազմութեան մեջ նկատում է գզիլին,  
10 նրա ահանջին ինչ-որ ասում է, գզիբը գնում է:

— Ժողովուրդ...

Բայց քյոխվի կանչը ոչ ոք չի լսում: Գոռում են:

Մի ծերունի հարցնում է քահանային:

— Տեր հայր, բա ո՞նց կլինի...

— Մարդ, ասված է՝ տուր զկայսերն կայսեր և զաստուծույն աստուծո...

Մերունու և քահանայի խոսակցութիւնը տեղի է ունենում անակնկալ լուծիւթյան մեջ, որովհետև ժողովուրդի ազմուկի վրա պատշգամբն է դուրս եկել Ամիրջանովը, նայում է վերևից, և  
20 ներքևում իսկույն լոռւմ են:

Պարուշիկը կապիտանին ձեռքով նշան է անում, որ իջնի ներքև:

Ահաբեկված նրան է նայում ծերունին, ասես վերև հենց ինքը «կայսրն» է, որի մասին ասաց քահանան, իսկ նրանից բարձր նույնպես ահարկու աստվածը:

Պաշտոնավորը հիացած նայում է պարուշիկին:

— Վլաստն էնպես կլինի, է... մեռնեմ նրա թրին...

Ժողովուրդը լուռ է:

Ջուռնաշին ի պատիվ «վլաստի» նվագում է կոխի վայրենի

30 եղանակ:

Կապիտանը իջնում է ներքև, երևում են 4 հոգի հեծելազորից, որոնք ձիերը հանում են հենց հրապարակին կից գոմից:

Տեր-Պետրոսովը գնում է դեպի նույն շենքի ներքին հարկը, որի վերև պատշգամբն է: Պատշգամբի ստվերի մեջ ներքնահարկը չի երևում:

Ժողովուրդն այն կողմն է նայում, իսկ զուռնաչին, զուռնայի բերանը դեպի պատշգամբը ցցած, դեռ փշում է «վլաստի» պատվին: Նվագի գիլ ընկնի Մինասը խփում է զուռնային, զուռնան ճշալով լռում է:

Քար լռութուն:

Ներքնահարկից դուրս հանեցին Մակիչին:

Ժողովուրդը սիրտ չի անում նայել, մեծ մասը շրջում է դեմքը, ոմանք հեռանում են, հեռանում է նաև Մինասը և նույնիսկ Պաշտոնավորը շրջում է երեսը:

Զիերը նստում են. ձի է նստում ուղեկցող սպան:

10

Պաշտոնավորը, երբ երեսը շրջում է, նկատում է Զիլֆուն, որը հրապարակ է հասել այն ընկնի, երբ հանեցին Մակիչին: Տղան ահից քարացած նայում է և չի զգում, թե ինչպես «աղան»՝ Պաշտոնավորը, կամաց-կամաց մոտենում է նրան: Պաշտոնավորին զբաղեցնում է այն, թե իր գառներն ուր է թողել Զիլֆին:

Այդ նույն ժամանակ Մակիչն ասում է՝

— Ժողովուրդ, մենք նորից կգանք...

Խուլ աղմուկ է:

Պաշտոնավորը գոռում է Զիլֆու վրա՝

20

— Գառներն ո՞ւր են...

Տղան հանկարծակիի եկավ: Եվ մինչև կարողանում է ասել՝

— Սոված էի... Եկա հացի,— Պաշտոնավորը նրան ապտակում է: Տղան գլորվում է և՛ հարվածից, և՛ անակնկալից, և՛ նրանից, որ զգեստի փեշերը ոտքերին փաթաթվեց, բայց իսկույն ոտքի է կանգնում՝ փախչելու, հիշելով, որ իրեն լուրի են ուղարկել:

5

Մակիչին տանում են փողոցով:

30

Դեմքի կեսն արյունլվա է, թաշկինակով կապած:

Նրա ձեռքերը կապկապել են մեջքին, և երկու ձիավոր բռնել են պարանի ծայրերից: Առջևից գնում է կապիտան Տեր-Պետրոսովը:

531

Մակիչը գնում է՝ գլուխը բարձր պահած: Հարևան կտուր-  
ներից նայում են կանայք: Մի կտուրից կանչում են:

— Շներ, — այնտեղ կանայք թաքցնում են կանչողին:

Ուղեկցող սպան նույն կողմն է նայում:

Խավար բանտ է: Նեղ երդից ընկել է արևը: Գետնի վրա  
պառկել են Աթա ապերը, Չետանց Վանեսը և այն երեք գյու-  
ղացիները, որոնք վերջին բոպեին, ընկնելով ձիավորների ա-  
րանքը, Մակիչին փրկեցին թրի մահացու հարվածից:

10 Աթա ապերը նախազգում է: Վեր է կենում և դուռն ձեռքից  
միայն տեսնում է ձիավորների և սպայի գլուխները: Բայց նա  
լսում է մի ձայն...

— Մակիչ...

Սպան ձիու գլուխը պահում է, նայում է շորս կողմը, ոչինչ  
չի տեսնում: Մակիչը նկատում է մի կնոջ, որը ծեծում է  
կուրծքը:

Աթա ապերը լսում է այդ կանչը և հռուհուհու է:

— Ո՛ւր ես, Մակիչ...

Նույն կինը երեսը շրջել և մրմնջում է՝

— Քոռանա քեզ բերող մայրը...

20

6

Գզիրը երեք ձիավորների կանգնեցրել է խոտի «թառի»  
առաջ: Նա ասում է, ցույց տալով խոտը.

— էս էլ նրանցն է...

Զիլֆին վազում է նրանց կողքով: Զիավորներից մեկը  
նրան բռնելով ասում է.

— Բարձրացիր, խոտը վերևից թափիր...

— Հորդ նոքյա՞րն եմ, — պատասխանում է տղան, դուրս  
է պրծնում նրա ձեռքից, փախչում է:

30 Գզիրը պարանի ծայրից քար է կապում, գցում «թառի»  
գերանով:

Զիավորները գնում են փողոցով: Նրանց դիմաց գալիս է  
մի կին՝ ուսին կուժը: Կինը սեղմվում է պատին, որպեսզի ճա-  
նապարհ տա: Մակիչը ջուր է ուզում: Կինը մոտեցնում է կուժի

532

բերանը: Զուր է ուզում և ձիավորներից մեկը: Կինը մեջքը նը-  
րան դարձնելով, ասում է.

— Աղբյուրն առաջներիդ է...

Եվ շարունակում է ճանապարհը:

Զիլֆին ետ է նայում: Գզիրը պարանից բռնած բարձրա-  
նում է դեպի «թառը»: Զիլֆին առնում է մի քար, պտտում է  
պարսատիկը, քարը բաց է թողնում:

Գզիրի ահաբեկված դեմքը: Քարը դիպավ նրա գլխա-  
վերևը:

Հեռվում՝ Մակիչը և ձիավորները: Այլևս տներ չկան, այլ 10  
միայն երևում է կիրճը, որտեղ պահակ են շորս ձիավոր:

## 7

Աթա ապոր տան բակը:

Զիավորները ձիերը կապել են գութանից, սյուներից...  
Ներսը խուզարկում են: Սոնան, երեխան գրկած, արձանացել է:  
Խուզարկողներից մեկը ինչ-որ նկար է նայում: Բանտում  
սպանված բուլճեիկի նկարն է: Փշրում է: Մեկը՝ հացը տաշտից  
հա թափում է, մյուսը հրացանի կոթով փշրում է «ուրագը»,  
գարին լցնում են հացի տաշտի մեջ և դուրս են տանում՝ դնում  
են ձիերի առաջ: Մինա զիզին օգտվելով առիթից, վերցնում է 20  
որդու նկարը, սրբում և պահում է թևի տակ:

Նկատելով հացի թափելը և տաշտը դուրս տանելը, Մինա  
զիզին միայն ասում է.

— Սրանք հայե՞ր են...

Հետզհետե խավարում է:

## 8

Նույն ձորն է:

Պուզանը դուրս է թռնում թաքստոցից:

Համարյա գլորվելով, իրեն ներքև է գցում Զիլֆին:

— Մակիչին տարան,— և տղան քրտնաթոր հևում է, 30  
ձեռքով ցույց է տալիս, թե որ ուղղությամբ տարան: Պուզանը,  
Կարագինը, նաև երկու կոմունարները մի ակնթարթ իրար են  
նայում և թռնում են, իսկույն շքանում են, այնպես, որ Զիլ-

Ֆին զարմացած նայում է, և նրան թվում է, թե այդ ամենը մի տեսիլք էր խոր ձորում:

9

Արև է:

Լեռնալանջի արտերն են, թփերը, — այն լանջերը, որտեղով գյուղ մտավ Մակիչը:

Մի մարդ թփերի մեջ «ցաքի փուշ» է կտրում: Թփերի մեջ նրա էջը: Մարդը գլուխը բարձրացնում և զարմացած նայում է: Ապա հետզհետե անցնում է թփի ետևը, բայց շարունակում է նայել նույն ուղղությամբ:

Չորի գլխին, այնտեղ, ուր Մակիչը հանդիպել էր թնդանոթ տանող զինվորներին, միայնակ կանգնել է կապիտանը: Նա սպասում է, որ մյուսները ետևից հասնեն: Ապա հետզհետե երևում է մի ձիավոր, վերջապես Մակիչը, որի ետևից՝ պարանի ծայրերը բռնած, գալիս են երկու ձիավոր:

Մակիչը նայում է խոր ձորին:

Հենց այս թփի տակ նստել էր:

Մակիչը մի րոպե կանգնում է, շունչ է քաշում, ապա դառնում է ձիավորներից մեկին (մյուսը ծխախոտ է փաթաթում)։

— Էս կոճակները քանդես... խեղդում են:

Եվ վիզը մեկնում է մյուս ձիավորին, որպեսզի նա արձակի կոճակները: Երբ ձիավորը կռանում է, որ արձակի, Մակիչը ուստյուն է անում դեպի ձորը, խրվում է լանջի ավազահողի մեջ, քարերը գոռալով գլորվում են, ձիերը խրտնում են, մինչև ձիավորները զենքերը հանեն և կրակեն, Մակիչը՝ երբեմն գլորվելով, երբեմն թռնելով, քարի ետևն է անցնում այն րոպեին, երբ վերևից կրակում են:

Սպան ձիու գլուխը շրջում է հետ, մյուսները ձիերից իջնում են և հարմար տեղ են փնտրում, որ քարափից իջնեն...

Մակիչը վազում է, ետևից քարշ տալով պարանները:

Չիավորներից մեկը իրեն գցում է լանջով:

Կրակոցի ձայնին՝ Պուղանը, Կարագինը և նրանց երկու ընկերը գլուխները բարձրացնում են: Նրանք վազում են: Նրանք նկատեցին իրար անցած կապիտանին և ձիավորներին:

Կրակեցին: Ձիավորները հետ են փախչում:  
Հետապնդողը ձորում լսեց կրակոցի ձայները և շվարած  
կանգնել է...

10

Անտառի մեջ արագ վազում է Մակիչը:

Պարանի ծայրերը փաթաթվում են թփով, Մակիչը վայր է  
ընկնում... Շրջվում է, շարշարվում է, ուզում է ազատել ոտքե-  
րով, չի կարողանում, բարկացած քաշում է, կապն ավելի է ամ-  
րանում, կռանում է ատամներով պոկի, փշերը երեսը ծակ-

10 ժքկում են...

Հուսահատությունը հետզհետե հաղթում է:

Մակիչի վայր ընկնելուն և հուսահատության զուգահեռ,  
կատարվում է հետևյալը:

Մացառուտում թաքնված գյուղացին Պուլանին ցույց է  
տալիս քարափը, որտեղից Մակիչն իրեն գցեց: Նրանք իջնում  
են:

Յվազների մեջ խրվելով, դժվար բարձրանում է հետա-  
պնդողը:

20 Նրա կողքով անցնում են: Պուլանն ուզում է նրան խփել,  
բայց Կարագինը չի թողնում:

Իջնում են:

Խոտերի մեջ նշմարվում են հետքեր:

Մակիչն անցել է ջրով:

11

Մակիչը քնել է, ավելի շուտ նվազել է:

Հանկարծ լսում է, որ կանչում են.

— Առո՛ւ՛...

Մակիչն արձագանքում է...

30 Մակիչի կապերը կտրել են: Մեկը հավաքում է պարանի  
կտորները թաքցնում քարի տակ:

Մակիչը հետզհետե բացում է ընդարմացած թևերը՝ նախ  
ձեռքերը, ապա բազումները, ապա ամբողջ թևերը և այդ մար-  
զանքի հետ զարթնում է խինդը և կորովը:

Անտառը, խշխշան հովը, նրանց արտաքինը,— այդ ամենն ասում են, որ նրանք շեն պարտվել և նորից կգան, կգան վերջին անգամ:

Մակիչը ձեռքը տանում է երեսին: Արյունը շորացել է: Ապա առնում է Կարագինի հրացանը և նրան ասում է.

— Կգնաս քաղաք, կգտնես կոմիտեից մեկին... կասես այս անգամ դուրս չեկավ, բայց եկող անգամ լավ կանենք: Պատասխանը կբերես կարմիր քարի ձորը:

Նրանք հեռանում են անտառի խորքը...

10

## ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

### 1

Լույսը նոր բացվում է:

Զիլֆին գառները քշում է գյուղի ամալի փողոցով:

Նկատելով մարագի կիսաբաց դուռը, տղան ներս է մըտնում: Ներսը՝ Սոնան հագիվ նշմարվում է:

Զիլֆին հանում է շուխան: Սոնան նրա մեջքին է փաթաթում հացի պաշարը, որ գառնարածը պիտի տանի թաքնվածների համար:

Զիլֆին շուխան հագնում և դուրս է գալիս:

20

Ամալի փողոցով տղան քշում է գառները:

### 2

Լուսաբաց է:

Նոր ձորում դեռ գիշերվա ստվերն է: Ձորի անդնդում խշշում է գետը:

Ձորս ձիավոր դանդաղ գնում են, շորս կողմը նայելով: Նրանք այն ձիավորներից են, որոնց դեռ գիշերով պարուշիկ Ամիրջանովն ուղարկել է խուզարկելու թաքնվածների վայրը:

Նրանք դիտելով են գնում, ցրվում են, դուրս են գալիս բարակ արահետից: Նրկուսը հասնում են քարափին, որտեղ վերջանում է արահետը:

30

Լուսաբացի լուսթյունն է:

536

Լուսթյան մեջ երեք անգամ լսվում է այսպիսի կանչ՝  
— Դի՛-տա, դի՛-տա...,— ինչպես հոպոպը կկանչի:  
Հենց ձիավորների գլխավերև, ժայռի լանջին, թփերի մի-  
ջից Պուղանը գլուխը հանել է: Այդ նա էր կանչում հոպոպի նը-  
ման:

Դեռ արձագանքում է կանչը, երբ երկու կոմունար ձորի  
մյուս ափից ներս մտան քարանձավը. երկրորդը, որ վճացվում  
էր, առավ հրացանը և թաքնվեց քարի ետև:

Մի տեղ քար գլորվեց: Ձիավորներն իրար նայեցին: Երևի  
քարայծ անցավ:

10

Ձիավորները նայում են:

Այլևս գնալու տեղ չկա: Ձորն այնքան ահավոր է և վայրի,  
որ անհավատալի է թվում, որ այդտեղ մարդիկ լինեն:

Ձիավորները դանդաղ վերադառնում են:

Պուղանը սողում է, ապա թռնում է քարով, ուր որ գնում է՝  
ցածր «թառ» է, բերանը թփերով պատած: Թփերի արանքից  
երևում է մի գլուխ, որ կռացել է ջրի վրա:

Պուղանի ոտնաձայնից գլուխը պահվում է:

Պուղանը թփերը ետ տալով, ներս է մտնում:

Բնական քարայր է: Կիսամթնում՝ Մակիրը: Թիկն տված և  
պառկած կոմունարների գլուխներ, ոտքեր: Պուղանը կամաց  
շշնջում է.

20

— Շները հոտ են առել... Նրանք իրար երեսի են նայում:

— Երկու հոգու պահակ դիր,— ասում է Մակիրը:

Երկու հոգի քնից վեր են թռնում, բնագդաբար ձեռքը տա-  
նում են հրացաններին: «Արջը» խոր քնել է. Պուղանը նրան  
ցույց տալով՝

— Օխտը գիշեր սա պիտի քնի:

«Արջը» շուռ է գալիս մյուս կողքին, ասելով՝

— Սրանից լավ տեղ չկա...

Ձիավորները գնում են:

Քարատակից ոչ հեռու երկու կոմունար խոսում են:

Մեկը՝

— Մինչև ե՞րբ մնանք էս ձորում...

Մյուսը՝ Բադին, լուռ է, ապա տխուր ասում է՝

30

— Հիմա մորս շարշարում են...

Բադին նայում է հեռացող ձիավորների ետևից:

3

Գյուղի փողոցը:

Ձիավորները կտրել են նախիրի առաջը: Նրանց ավազը հրամայում է.

— Բուլշևիկի տավարը ջոկիր...

Երկու ձիավոր նետվում են առաջ: Գզիրը ցույց է տալիս, թե որ կովն է «բուլշևիկի»: Զոկում են:

10 Գնդակի նման մեջ է ընկնում Բադու մայրը, որ որդուն ուզեց դուրս քաշել ապստամբների շարքից: Կախվում է իր կովի վզից, կանչելով՝

— Ամա՛ն, տունս քանդվեց...

Նրա ձեռքից կովը խլում են:

Կինը վազում է:

4

Պարուչիկ Ամիրջանովը նայում է մի կետի: Կողքին նստած է մի սպա:

20 Խավարի միջից դուրս է գալիս Աթա ապերը: Նրան կալանա-տեղից են բերել: Մի քիչ հեռու կանգնում է ուղեկցող պահակը: Աթա ապերը գալիս է դանդաղ, նայում է Ամիրջանովին: Նայեց և ճանաչեց նրան:

Ամիրջանովն ևս ճանաչեց նրան:

— Դու Մակիշի հայրն ե՞ս...

Աթա ապերը գլխով պատասխանում է «այո»:

— Ո՞ւր է Մակիշը...

Աթա ապերը լուռ է: Ապա հանդարտ ասում է.

— Քո զինվորները բռնեցին նրան...

Ամիրջանովը շղայնանում, բայց զսպում է:

30 — Ուրեմն դու չե՞ս լսել, որ նա փախել է...

Աթա ապերը իրոք որ չի լսել փախուստի լուրը: Նա և՛ ներքին ուրախություն է ապրում, լսելով որդու փախուստը, և՛ միաժամանակ աշխատում է շմատնել իր ուրախությունը:

— Հո՞նց լսեի,— և ցույց է տալիս ուղեկցող զինվորներին, հասկացնելով, որ իրեն ահա բերել են կալանատեղից:

— Դու գիտե՞ս նրա տեղը,— հարցնում է Ամիրջանովը, բայց Աթա ապերը դեռ չպատասխանած, աղմուկ-աղաղակով ներս է մտնում այն կիներ, որի կովը խլեցին:

Կիներ ճշում է.

— Ամա՛ն, կովս,— և հանկարծ հարձակվում է Աթա ապոր վրա:

— Դու ո՞նց ես... Մակիշին ես իմ ձեռքով պիտի խեղդեմ, որ ջանս դինջանա... Տղայիս խաբեց, սար ու քոլ քցեց. հիմա էլ տունս քանդում են... 10

— Մայրիկ, դու գիտե՞ս, նրանք որտեղ են...,— հարցնում է Ամիրջանովը: Աթա ապերը զգաստանում է:

— ...Ինչի՞, սա չի՞ իմանում,— կիներ ցույց է տալիս Աթա ապորը,— գիտես սա ոնցն է՛... էս սազ երկիրը սրա տղեն քանդեց...

Ամիրջանովը նայում է Աթա ապորը: Աթա ապերը հանգարտ նայում է բառաչող կնոջը:

— Կարո՞ղ ես գնաս տղայիդ բերես...,— հարցնում է Ամիրջանովը: 20

— Ծս հենց գնում էի... կովս որ խլեցին...

— Կով, կովդ ետ կտան,— և Ամիրջանովը նշան է անում ուղեկցող զինվորին:

Կիներ զինվորի հետ գուրս է գնում:

Ամիրջանովը նայում է Աթա ապորը:

— Հիմա ի՞նչ կասես...

Աթա ապերը ձեռքերը տարածում է, հասկացնելով, որ ոչինչ չի կարող ասել:

Ամիրջանովը կատաղությամբ և դանդաղաքայլ մոտենում է ծերունուն. խեղդող ձայնով շշնջում է. 30

— Տունդ կվառեմ, մեկ-մեկ կփրթեմ, եթե շասես...

Աթա ապերն ինչ-որ բան է մտածում:

— Քեզ երեք ժամ ժամանակ,— ասում է Ամիրջանովը:

Հետզհետե խավարում է:

Գառնեբը ձորումն են:

Լսվում է սրինգի ձայն: Զիլֆին նստել է քարի գլխին, նվագում է: Ապա սրինգը բերնից հանում և զարմացած նկատում է, որ նվագը դեռևս շարունակվում է:

Պուղանը գլուխը հանել և սուլում է նույն եղանակը, ինչ որ սրինգի վրա նվագում է տղան:

Զիլֆին դեռ զարմացած շորս կողմն է նայում, երբ դուրս է գալիս Պուղանը:

10 Քարից իջնում է Զիլֆին, հանում է Սոնայի ուղարկած պաշարը:

— Բա, ուրիշ ի՞նչ կա...

— Բռնոտում են, տավարը տարան...— ասում է Զիլֆին:

— Հո մարդ չեն սպանել:

— Հալա չէ...

Պուղանը մի կտոր հաց կտրելով.

— Զիլֆի, բուլշևիկի զորքը որ եկավ, քեզ մի ձի եմ բաշխելու:

Զիլֆին ժպտում է:

20 Խավարում:

Հասարակ սենյակ արհեստավորի տանը:

Գետնի վրա ճախարակ... Մի կին նստել է ճախարակի առաջ, բայց չի մանում:

Աթոռի վրա նստել է Կարագինը:

Նա գլուխը կոացրել է ներքև, լսում է:

Սենյակում նրանցից բացի, ուրիշ ոչ ոք չկա, բայց պարզ լսվում է մի երրորդի ձայնը:

Կինը գրում է, իսկ երրորդ ձայնը թելադրում է:

30 — Խուսափել ընդհարումներից, ծայրահեղ դեպքում կազմակերպված անցկացնել սահմանը: Ժամ առ ժամ սպասվում է 11-րդ բանակի զորամասերի մուտքը:

Դրսում լսվում է ոտնաձայն:

Կինը գորգի ծալած մասը փռում է, ձայնը լռում է, ինքը նստում է ճախարակի առաջ:

Կարագինը հանում է սապոզը, իբր թե պատրաստվում է քնելու:

Ուտնաձայնը մոտենում է, դուռը բացվում է, և թաշկինակը երեսին փաթաթած մեկը տնքալով հարցնում է.

— Ներողություն, էստեղ ո՞րտեղ է ատամնաբույժը:

Կինը ձեռքով վերին հարկն է ցույց տալիս, իսկ Կարագինը քիչ է մնում դեպի դուռը շարտի սապոզը:

Կինը գորզը հետ է քաշում:

Հատակի տախտակը բարձրանում, և երևում է Քրիստի գլուխը: Նա ստորագրում է թուղթը: Կարագինը թուղթը կոխում է սապոզի մեջ:

Խավարում:

## 7

Ուղեկցող զինվորը ետևից, իր բակը մտավ Աթա ապերը: Մինա զիզին զարմացած բացականչեց.

— Վըրիա՛... — և մեղմ ծեծում է կուրծքը:

Աթա ապերն իբրև թե չի նկատում տնային ջարդված իրերը, որի մի մասը դուրսն է: Նա անտարբեր նայում է ձիավորներին, որոնց ավագին ուղեկցողը ինչ-որ հասկացնում է:

Աթա ապերը առաջինը գրկում է թոռանը և ցույց տալով 20 բակի զինվորներին, կնոջն ասում է.

— էս դարիբ ղոնախներին հաց բան տվել ե՞ս...

Պառավը դժգոհ փնթփնթում է, ձեռքը մեկնելով դեպի հացի տաշտը, որ այնպես էլ բակում ընկած է:

— Այ պառավ, ուզողին հաց տուր, է՛, հացից վնաս չկա...

Զինվորներից մեկը գլուխը խոնարհում է, զգալով ամոթի խայթ, իսկ Աթա ապերը խաղում է թոռան հետ, կարծես ոչինչ չի պատահել, և ամենը մի բարի օր է:

## 8

Գյուղի եզրին ձիավորները ճանապարհը կտրել են:

30

Աթա ապոր ուղեկցողը նշանով հասկացնում է պահակներին, որ թողնեն ծերունին անցնի:

Աթա ապերը գնում է:

Ամայի ձորեր:

Մի բարձր քարածայռ, գագաթին թփեր:

Սրկու կոմունարներ, որոնք երկրորդ պատկերում իրար հետ խոսում էին, թե «մինչև ե՞րբ պիտի մնանք էս ձորում»: Բաղին նայում է դժգոհ:

Նա ասում է.

— Մակիշին ինչ... որ բռնեն պիտի սպանեն: Էհ, էլ ինչո՞ւ է վախենում սահմանն անց կենա... Շատ-շատ էնտեղ էլ կրսպանեն: Իսկ մե՞նք... Մենք ոչինչ չենք արել: Կասեմ, հենց իմացա թե գնում ենք դիրքերը...

10

— Բա ո՞նց կլինի,— անտարբեր հարցնում է ընկերը և քունը գլխին պոկոտում է ինչ-որ կանաչ, ծամում է:

Բաղին լուռ է:

Աթա ապերը միայնակ գնում է խուլ ճանապարհով:

Կանաչ ուտողը ննջում է և քնի մեջ ասում է.

— Ո՛խ, մի տաք շորվա լիներ...— և քնում է:

Բաղին նկատելով, որ նա քնեց, գրպանից հաց է հանում, ուտում է՝ նայելով ընկերոջը և միևնույն ժամանակ ինչ-որ բան է որոշում:

20

Հետո կամաց վեր է կենում, առնելով հրացանը:

— Կասեմ խաբել էին... կասեմ շուգեցի իմ հայրենիքն ուրանալ,— և իջնում է, որքան իջնում, այնքան արագացնում է փախուստը դեպի տուն: Աթա ապերը կանգնել է: Նրա կողքին գառնարած տղան է՝ Զիլֆին: Մերունին միայնակ շարունակեց ճանապարհը:

Գառնարած տղան իջավ ձորը:

## 9

Պարուշիկ Ամիրջանովը և երկու սպա:

Ամիրջանովի ևայնր:

30

— Գիշերով կըրջապատենք...— և Ամիրջանովը ցույց է տալիս, թե ինչպես գիշերով կըրջապատեն և ապա սրի կբաշին կոմունարներին:

Աթա ապերը աղբյուրից շուր խմեց, նստեց: Նրա աչքն ընկավ մի քանդակի՝ հին գերեզմանաքար է, թե՛ այն քարերից է,

որով զարդարել են աղբյուրի պատը: Քարի վրա քանդակած է մի աղվես, որ գետին է տապալել առյուծին:

Աթա ապերը նայում է, կոահելով իմաստը: Եվ երբ ցուպն առնում է, որ վեր կենա, նկատում է Բաղուն: Նա ևս եկել է աղբյուրից ջուր խմի:

Աթա ապերը նայում է շեշտակի: Բաղին ուզեց հետ դառնա, բայց Աթա ապերը նրան ձեռքով կանչեց: Բաղին մոտենում է և ահով, և շփոթված: Աթա ապերը ցուպի ծայրով ցույց է տալիս քանդակը.

— Սա ի՞նչ է...

10

— Աղվես է,— անգիտակից պատասխանում է Բաղին:

— Սա ի՞նչ է...

— Առյուծ է...

— Աղվեսը մի լինի, այ որդի...

Եվ Աթա ապերը դանդաղ հեռանում է: Բաղին և ամոթահար, և ահ կա սրտի մեջ: Տատանվում է և առանց ջուր խմելու փախչում է դեպի տուն:

## 10

Տձև ժայռեր են, մեկը մյուսից ահարկու:

Ապարատը սահում է և որքան մոտենում, այնքան պարզ լսելի է պարի եղանակ: Ապա հանկարծ ժայռերը ճեղքվում և նրանց խորքում հետևյալ տեսարանն է:

Պուղանը քարափի գլխին պարում է: Մեկը սուլում է պարի եղանակ: Մյուսը մատներով ծափ է տալիս, երրորդը թմբկահարում է սապոգի ճիտքի վրա: Սուլոցը, ծափը, պարը և մեղմ է, և վայրագ: Չորս բոլոր նստել են կոմունարները: Նրանք հիացած նայում են Պուղանին: Մեկը կանչում է՝

— Պուղան, տերտերի...— Պուղանը պարելով նմանեցնում է տերտերի քայլվածքին, շարժուձևերին...

— Պուղան, խմբապետի,— և Պուղանը գոռոզ խմբապետ է, ահարկու և վայրենի խմբապետ:

30

Պարը հեռանում է, և միայն խաղում է Պուղանի ստվերը:

Մակիչը նստել, սրբում է հրացանը: Նրա կողքին երկու հոգի նույնն են անում:

— Լավ,— ասում է ապստամբներից մեկը,— որ ասում ես հավասարութուն, ուրեմն ջրաղացներն էլ ենք խլելու...  
— Հա, ջրաղացները, հողերը,— ասում է Մակիչը:

Երկրորդ ապստամբը, որ ջրաղացի մի մասի տեր է, գլուխը բարձրացնում է: Ջրաղացի մասին հարցնողը դառնում է նրան.

— Հը, ոնց ես, ասում էիր ջրաղացը մեր ծրագրում չկա...

«Ջրաղացատերը» դժգոհ փնթփնթում է: Էլ գենքը չի մաքրում:

- 10 Ժայռի գլխին քնած կոմունարը զարթնում, նայում է շորս կողմը: Ընկերը չկա: Թվում է, թե չի ճանաչում ոչ դիրքը, ոչ օրվա ժամը և դեռ քնի մեջ է:

Պուղանը դիմում է սուլողին:

— Ի՞մ եղանակը փչի,— և փչում է, Պուղանը պարում է ոչ թե ծաղրածուի նման, այլ լեռնցու վայրագ և խրոխտ պար: Հանկարծ աչքերին բան է երևում, այլևս չի պարում և թևերը պարզած կանչում է.

— Աթա ապերը,— և Պուղանը թռնում է քարից:

Մյուսները վեր են կենում: Մակիչը լսում է Պուղանի կանչը,

- 20 չը, վեր է կենում:

Աթա ապերը կանգնել և բարի ժպիտով նայում է Պուղանին, որը վազում է դեպի ծերունին:

— Վաշշ...— և ձեռքը օրորելով Աթա ապերը անշար հանդիմանում է նրանց, թե իբր ինչ ժամանակ է պարելու, բայց և գոհ է, որ նրանց հանդիպել է ուրախության ժամին:

— Ապեր...— և Մակիչը գրկում է հորը:

Աթա ապերը հիացած նայում է որդուն, նայում է բուռին:

— Բա ոնց եկար,— հարցնում է Մակիչը:

— Քո դիրքապահը որ փախնի...

- 30 — Ո՞նց թե փախնի,— կանչում է Մակիչը, բայց հենց նրա խոսքին քարով ներքև է թռնում երկրորդ դիրքապահը:

— Բադին փախավ...

Ահաբեկված իրար են նայում:

Այն վայրը, որտեղ պահակ են ձիավորները: Դեռ «կովատեր» կինը չի հեռացել պահակներից, երբ նա նկատում է որդուն: Բադին նայում է: Մայրը գրկաբաց վազում է դեպի որդուն:

Ապարատը հեռացել է:

Կոմունարները խմբվել են. առանձին կանգնել է «ջաղացատերը»:  
— Ի՞նչ եք մտել էս ձորերը... Գնացեք զորք բերեք, ժողովըրդին ազատեք էս դժոխքից,— ասում է Աթա ապերը:  
Հետզհետե խավարում է:

## 11

Մակիչը հրաժեշտ է տալիս հորը:

— Զահել լինեի, ես էլ կգայի, Մակիչ...

— Արի, ապեր...

— Բա տունը,— և Աթա ապերը բարի ծպտում է:— է, տես- 10

նեմ ոնց տղա ես...

Հայրը համբուրում է որդու ճակատը և իջնում է: Մակիչը մի ականթարթ նայում է հեռացող հորը, ապա արագ վերադառնում է:

Կոմունարները հավաքում են հրացանները: Մեկը կոշիկն է հանում: Պատրաստվում են:

Մակիչն ասում է Պուղանին:

— Դու կսպասես մինչև Կարագինը լուր բերի... իսկ մեզ կգտնեք ջուխտ քարի ձորում:

Կոմունարները հեռանում են: Մակիչը Պուղանին՝

— Արթուն կմնաս... կրակ շանես...

20

Պուղանը և լուրջ, և հանաքով պատվի է առնում:  
Խավարում:

## 12

Պարուշիկ Ամիրջանովը և կապիտան Տեր-Պետրոսովը: Բազին գլուխը կախ կանգնել է:

— Այժմ պարզ է,— Ամիրջանովը նայում է կապիտանին:

Վերջինս ոտքի է կանգնում և պատվի առնելով, հասկացնում է, որ «պարզ է»:

## 13

Աթա ապերը դանդաղ վերադառնում է:

30

Ստվերները կախվել են, արևը թեքվե՞ է:

545

Խաղաղ օր է: Մերունին գնում է՝ մահակը թիկունքին, ինչպես քայլում են երկար ճանապարհ գնացող գյուղացիք:

Հանկարծ նրա առաջն է դուրս գալիս կապիտանը, ետևից ձիավորների խումբը: Բաղին նրանց առաջն է:

Կապիտանը կանգնում է: Կանգնում է Աթա ապերը: Բաղին չի դիմանում ծերունու հայացքին: Կապիտանը հարցնում է.

— Տեսա՞ր որդուդ:

— Տեսա...— Բաղին ցնցվում է:

— Ի՞նչ ասացիր...

10 — Ասացի՛՛ գնացեք զորք բերեք, ժողովրդին ազատեք էս դժոխքից,— Աթա ապերն աներկյուղ կրկնում է իր բառերը.

Բաղին ահից քարացել է: Կապիտանը գոռում է.

— Ի՞նչ...— իջնում է ձիուց.— կանգնի՛ր,— և ցույց է տալիս ճանապարհի եզրը:

Աթա ապերը հանդարտ հեռանում է, կանգնում է նրա ցույց տված տեղը:

— Չե՞ս բերի որդուդ,— և բարձրացնում է ատրճանակը:

— Էն որ հայրը իր որդուն կտա ձեր ձեռքը...— Աթա ապերը նայում է Բաղուն:

20 Սպան նայում է: Աթա ապերը խուլ ասում է դեպի Բաղին.

— Առյուծ եղիր, այ որդի...

Կապիտանը կրակում է:

Մերունին ընկնում է, շշնջալով վերջին խոսքը՝

— Մակիչ...

## 14

Պուղանը մտել է այն քարանձավը, որտեղ առավոտյան կոմունարները թաքնվել էին:

Ինչ-որ ձայներ, վշշոց:

30 Պուղանը թիկնել է քարին, ննջում է... Երբեմն աչքերը բացում է: Չորում՝ նույն ձայներն են: Պուղանը վախ է զգում: Մենակ է, դեռ մինչև լույս պիտի մնա այդ խավար քարանձավում:

Ձիավորները ձիերից իջան: Ձիերը քաշում են սարը՝ քարոտ կածանով: Բաղին գնում է՝ հարբածի նման: Կապիտանը նրան հարցնում է.

— Էս է՞ Կարմիր քարի ձորը...

Բաղին իբրև թե չի հասկանում. նայում է բութ հայացքով:  
Բաղին առաջ է անցնում: Նա տանում է սխալ ճանապարհով:  
Զիավորները գնում են:

15

Պուղանը երազ է տեսնում:

Ինչ-որ մարդիկ հետապնդում են իրեն, մտնում են քարան-  
ձավը՝ ճիշտ նույն քարանձավը, որտեղ քնել է: Իբրև թե ահա գո-  
ղեգող մոտենում են քարանձավին, ահա ներս են մտնում:

Պուղանը կոթնած քնել է՝ անհանգիստ շնչառությամբ: Ներ-  
սը կիսախաւվար է, և ներսից միայն երևում է քարանձավի 10  
մուտքը՝ լուսնի լույսով:

Հետապնդողները հասել են մի այլ ձորի: Երեկո է:

Սպան հարցնում է Բաղուն:

— Է՞ս է Կարմիր քարի ձորը...

Բաղին դեռ չպատասխանած, ձորում դղրդում է մի կրակոց:  
Արձագանքը որոտում է:

Պուղանն էր կրակողը և այդ եղավ այսպես:

Երբ երազից սարսափած Պուղանը վեր թռավ, քարանձավի  
լուսավոր մուտքի առաջ նկատեց մի սիլուետ: Քուն էր, թե ար-  
թուն, երազ էր, թե իրականութուն, — բայց Պուղանին թվաց, 20  
թե և երազն է, և երազի շարունակութունը, և նա ահից խելահեղ  
կրակեց դեպի ստվերը:

Մեկը կանչեց՝

— Վայ Մակիչ... Ես եմ:

Կարագինն է, որ մտել էր քարանձավը:

Կրակոցի արձագանքին սպան գլխի ընկավ, որ մուրովել են:

Բաղու սարսափած դեմքը:

Կապիտանը ետ է դառնում դեպի Կարմիր քարի ձորը, որ-  
տեղից լսվեց կրակոցը:

Քարանձավում Պուղանը կրակ է վառել: Կարագինի արյու- 30  
նոտ դեմքը:

Պուղանի գնդակը նրան չի դիպել, այլ դիպել է քարանձավի  
առաստաղին, քարի փշրանքները քերծել են նրա դեմքը և արյու-  
նոտել:

— Պուղան... դո՛ւ ես...

— Սա՞ղ ես...

— Բա որ սպանեիր,— և Պուղանը նրան դուրս է տանում դեպի շուրը, որ խոխոջալով գնում է քարանձավի առաջով:

Վիրավորը լվանում է երեսը:

— Մակիչն ո՞ւր է...

Մի քար է գլորվում, աղմկում է ձորը:

— Չորում մարդ կա, շուտ...

Լսվում է ոտնաձայներ...

Պուղանը և Կարագինը քարանձավից հեռանում են:

10

Հետապնդողները նկատում են նրանց, կրակում են:

Պուղանը և Կարագինը փախան խոր ձորով:

## 16

Լուսնյակ գիշեր է:

Կոմունարները ամրացել են մի բլրի վրա:

Գեպի արևելք, բլուրից հարյուր քայլի վրա տափարակ է, ապա Հաքարու գետն է: Վարար, որկուն տված գալիս է պղտոր գետը, ջրերը լայն փռած: Երբեմն քամին հեռացնում է գետի վշտոցը:

20

Մակիչը բլրի գագաթից նայում է դեպի այն կողմը: Ինչ-որ սպասում է, բայց ոչինչ չի երևում, այլ միայն ընդարձակ տափարակ է:

Կոմունարների մեծ մասը հրացանները դարձրել են դեպի արևմուտք: Նրանք այդ կողմից են սպասում հետապնդողներին: Հեռվում լսվում է համազարկ:

Կոմունարներից մեկը, որ այն կողմը դիրքապահ էր, վազում է դեպի բլուրը:

Երկու կոմունար, որոնցից մեկը «ջաղացատերն» է, նայում է գետին:

30

— Էն կողմը մահ, էս կողմը սուր,— ասում է կոմունարներից մեկը: «Ջաղացատերը» յուրովի է հասկանում:

— Գետը մեզ կխեղդի...

— Գալիս են,— բղավում է վազող կոմունարը:

Մակիչը կանգնում է, նշան է անում, որ թաքնվեն: Թաքնվում են, պատրաստվելով կրակել, երբ մոտենան:

Հետապնդողների առաջին ձիավորները երևում են, ապա կորչում են: Կոմունարները դեռ արևմուտք են նայում, երբ հյուսիսից գետափի տափարակով արշավում է ձիավորների խումբ:

Մակիչը նկատեց, կրակեց: Ձիավորները կանգ առան:

Մուժ ձորում միայնակ գնում է Բադին: Քվում է, թե խելագարվել է... Երբեմն կրակոցի ձայների հետ փախչում է: Ահը, խղճի խայթը և հոգնութունը նրան հետապնդում են:

Հետապնդողները որոշել են երկու կողմից շրջապատել բլուրը: Միակ ելքը պղտոր գետն է:

Ձիավորները ցնցվում են, որպեսզի արշավեն:

10

Արշավում են արևմուտքից նրանք, որոնք թաքնվել էին: Կոմունարները կրակեցին:

Բադին ձեռքերով ականջները փակած վազում է: Գլորվում է և այլևս չի երևում:

Հյուսիսից ձիավորները արշավում են:

Հանկարծ գնդացիրային կրակ է բացվում: Մակիչը նկատում է, որ հյուսիսից արշավողները կանգ առան և նայում են գետի մյուս ափին, որտեղից բացվեց գնդացիրային կրակ:

Կարմիր բանակայինների մի զորախումբ, որ գիշերով դուրս է եկել հետախուզության, գետի մյուս ափից կրակ բաց արեց, նկատելով արշավող ձիավորներին:

20

Ձիավորները փախչում են: Մակիչը նկատեց գետի մյուս ափի բանակայիններին:

— Պուղան,— և Մակիչը ծոցից հանում է ապստամբության դրոշը՝ Սոնայի քողը, հագցնում է հրացանին, բարձրացնում է:

— Ուռա՛,— բղավում է Մակիչը:

Գետի մյուս ափին նկատեցին կարմիր դրոշը:

Կոմունարները նայում են, թե ինչպես են արշավում կարմիր բանակայինները:

Մակիչը գնում է դեպի գետը: Պուղանը նրանից առաջ է վազում: Գետը վարար աղմկում է՝ պղտոր ալիքներով: Երբեմն ջուրը տանում է մի արմատախիլ ծառ:

30

Կարմիր բանակայինների մեջ է Լեոնը, որին Մակիչը ապստամբության գիշերը սուրհանդակ ուղարկեց: Մակիչն ինչ-որ բղավում է: Այն կողմից զորախմբի պետը կանչում է:

—Что надо...

— Мне ти надо,— գոռում է Պուլանը և փափախով նը-  
շան է անում, թե գետն անցեք և միասին հետապնդենք թշնա-  
մունի:

— Не приказано,— բղավում է կարմիր հրամանատարը:  
Լեոնն առաջ է վազում, քիչ է մնում գետը քշի նրան:  
Լեոնն այն կողմից շարտում է երկար պարանը:  
«Ջաղացատերն» ու նրա ընկերը խոսում են: Ընկեր՝  
— Ա՞նց ես կենում...

10

«Ջաղացատերը»՝  
— Բա հիմա էլ անց չկենամ...

Պուլանն ուրախությունից գլխարկը գետնովն է տալիս: Մա-  
կիչը մտնում է ջուրը, պարանի ծայրն առնում է: Մի քանիսը  
հետևում են նրան: Պուլանն ինչ-որ անհանգիստ է: Դիմում է ըն-  
կերնեիրին.

— Խոխեք, ռուսերեն ազատողին հունց կա՞սեն...

— Սլաբոննի,— ասում է մեկը:

— Բլեստյաշչի,— առարկում է երկրորդը:

Պուլանին ավելի է դուր գալիս երկրորդը, և նա բարձր կան-  
չում է:

20

— Դա զգրաստվույետ բլեստյաշչի կրասնի արմի...

Պուլանը ևս մտնում է ջուրը: Այն ափից պարանը քաշում են:  
Լողում են կոմունարները, պղտոր ջրերի վրա ծածանվում է  
կարմիր դրոշը:

Մազում է արևը:

## Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Գ Մ Ա Ս

### 1

Գիշեր է:

Նստել են «սպարապետը», գնդապետ Կուռոն, Գեդեոն վար-  
ժապետը: Մտազբաղ դեմքեր են: Սկսվում է քաղաքացիական  
30 կռիվը: Ո՞ւմ հետևից կգնա Ջանգեզուրի գյուղը... Այլևս չի ար-  
շավում մուսավաթի բանակը, այլ գալիս է կարմիր բանակը:  
Դեռևս որբան կհաջողի նրանց դեմագոգիան... Իսկ հետո՞...

Ցուրտ է: Նրանց վաղը մոռյլ է:

«Սպարապետը» դիմում է Գեդեոն վարժապետին:

— Պետք է ժողովուրդին ասել, որ մենք դաշնակիցներին  
շուտով օգնութիւն կստանանք...

— Որին ահա սպասում ենք մի տարի,— հեզնում է վարժա-  
պետը:

Գնդապետ Կուռն գլուխը կախել է քարտեզի վրա և ան-  
տարբեր է նրանց խոսակցութեանը: Կուռն ասում է՝

— Ուրեմն, քաղաքի էվակուացիան հանձնում ենք պարու-  
շիկ Ամիրջանովին... Երկրորդ ճակատի հրամանատարը կապի-  
տան Տեր-Պետրոսովն է...

— Տեր-Պետրոսյանը,— ուղղում է Գեղեցուն:

10

— Այդ միևնույն է... իսկ շտաբը՝ Տաթև... Հիանալի է...  
Այնտեղ ձեզ համար ևս ապահով վայր է... պատմական վայր  
է,— ասում է գնդապետը Գեղեցուն վարժապետին:

Հետզհետե խավարում է:

## 2

Նույն հրապարակն է, որտեղ մի անգամ նստել և խոսում  
էին Աթա ապերը, Չետանց Վանեսը, և որտեղ աշուղը երգեց:  
Այժմ Աթա ապերը չկա, Պուղանը չկա, և Բախշին, որ նեղը լծեց  
Պաշտոնավորին:

Ուրիշ գյուղացիներ են նստել այդ ապահով անկյունում:

20

Տեսարանը բացվում է նույն աշուղի նույն նվագով: Հրապա-  
րակի կողքով անցնում է Մինա զիզին՝ թոռանը գրկած:

Մինասը՝ գյուղացիներից մեկը, նրան նայելով ասում է.

— էս չէինք տեսել, էս էլ տեսանք...

Մինա զիզին կանգնել է քարատակի առաջ: Պահակը դուռը  
բաց է անում, երևում է Սոնան, նրա ետևից Գիլա բիրբին: Եր-  
կուան էլ կալանավոր են: Պահակը երեխային հանձնում է Սոնա-  
յին. մայրը կրծքով կերակրում է: Մինա զիզին լուռ կանգնել է:  
Ներսից Գիլա բիրբին կանչում է.

— Մինա, հրեն կյամ են, հա...

30

Պահակ զինվորը դուռը փակում է և պառավին ասում.

— Նանի, մի քիչ հեռու կանգնի...

Տխուր է նույնիսկ պահակը: Այդ տխրութեան մեջ հեռվից  
հնչում է աշուղի նվագը:

Պարուչիկ Ամիրջանովը մեկնելու պատրաստ է: Նրա կողքին հենց ինքը կապիտան Տեր-Պետրոսովն է, Տեր-Պետրոսյանը, որին նշանակել են հրամանատար երկրորդ ճակատի:

Խավարի միջից գալիս է քյոխվան: Վիճակը լավ չէ: Գյուղում վատ լուրեր են պտտվում, և ահա հեռանում է ինքը՝ պարուչիկ Ամիրջանովը, Պաշտոնավորի գոված «վլաստը»:

Քյոխվան անհանգստությունից ոտքերը փոխնիփոխ կանգնել է:

**10** Պարուչիկը կապում է թուրը և սեղմում է կապիտանի ձեռքը:

— Հաջողություն ձեզ...

— Բա... — հազիվ է ասում քյոխվան, երբ Ամիրջանովն անցնում է նրա կողքով:

— Հրամանատարը կապիտանն է, — ընդհատում է նրան Ամիրջանովը:

Քյոխվան շշմած նայում է նրանց:

## 4

Համրիչի վրա քյոխվան գցում է իր շահն ու վնասը: Տեսնելով, որ վնասը մեծ է, դեն է հրում համրիչը, վզից հանում է

**20** տանուտերության նշանը, և ինքն իրեն ասում է.

— Ա՛խ, պրիստավի ուժիմ, ո՛ւր ես...

Խավարում:

## 5

Ամիրջանովը դարպասից դուրս եկավ, ետևից թիկնախումբը՝ հինգ ձիավոր:

Հրապարակում նստած գյուղացիները նայում են:

Նրա դիմաց դուրս եկավ Պաշտոնավորը:

— Վրի՛ա՛,— Պաշտոնավորը լացակուժած կանչում է,— գնացի՛ր, — ապա նայելով հրապարակում նստածներին, ձեռքերը մեկնում է նրանց, — գնաց, է՛...  
**30**

Ժողովուրդը լուռ է: Մինասը մեջքը դարձնում է:

Մինա զիզին թոռանը գրկած վերադառնում է:  
Պառավը ձիավորներից վախեցած, հեռու է կենում, ապա  
լսելով Պաշտոնավորի խոսքը, թե՛ «գնաց, է՛», — նայում է եր-  
կրնքին:

— Աստված, վերջի գնալը լինի...  
Խավարում:

6

Ամայի լեռներ:

Մաղում է բարակ անձրև: Տխուր մշուշ:

Երբեմն մշուշը ծածկում է ամեն ինչ, և միայն երևում է լե- 10  
ռան գագաթը, կամ մշուշի մեջ ցցվում է մի ժայռ, երբեմն քամին  
ծվեն-ծվեն քրքրում է մշուշը, և այն ժամանակ երևում է ջարդ-  
ված հեռագրասյունը, դաշտային մի բու նստել է սյունի կատա-  
րին: Երևում է քարուքանդ խճուղին, մի ձորակ, որտեղ կամուրջ  
է եղել, և այժմ միայն ցցված են կամուրջի գերանները:

Լսվում են ձայներ՝ մտրակի և մարդկանց աղմուկ: Մշուշի  
մեջ ցեխոտ լեռնալանջով բարձրացնում են թնդանոթը: Մշուշը  
ծածկում է այդ պատկերը, և բացվում են դիրքերը՝ Լեռնահա-  
յաստանի առաջին, երկրորդ և երրորդ ճակատը:

Ցուրտ անձրև է: Զորքը՝ մահակով, մտրակով հավաքած 20  
գյուղացի տղաներ, ով «մեղար»-ը գլխին, ով հնամաշ շինելը, և  
նույնիսկ զինվոր կա, որ գլուխը և կուրծքը պահել է քարի խո-  
ռոչում, իսկ ոտքերն անձրևի տակ են:

Մի մոռացված ռազմական երկանիվ սայլակ: Դաշտային  
հեռախոսի լարերը աղիողորմ զրնգում են, կարծես նրանք ևս  
ասում են այն, ինչ մշուշը, զոռով քշած զորքը և ջարդված հե-  
ռագրասյունը՝ «հերիք է գնդակ ցանել և հնձել դիակ»...

Մխում է աթարի կրակը:

Մուխը խառնվում է մշուշին, պատում է էկրանը, հնչում է 30  
ծանոթ մարշը, և ապա երևում են ձիավոր խմբերը՝ Կոռույի,  
Ներսեսի, սիսիանցիների, ղափանցիների ձիավոր հարյուրյակ-  
ները:

Մշուշը ծածկում է ամեն ինչ:

Անձրև չկա:

Արտերի վրա լուսաբացի մշուշը:

Արտերի միջով արահետ, եզերքին մասսերնու թփեր: Արև է: Արահետի վրա երևում են երկու ստվերներ և իսկույն թաքնվում են արտի մեջ:

Արտի միջից բարձրանում է մի գլուխ, Պուղանի գլուխը: Նա ձեռքով է անում ընկերոջը և երկուսով կուզեկուզ գնում են:

Պուղանը և նրա ընկերը՝ մի ոռու կարմիր բանակային, ճեղքել են թշնամու գիծը և դիրքերում, նաև թիկունքում հրաման ունեն տարածելու 11-րդ բանակի կոչը՝ ուղղված Զանգեզուրի աշխատավորության:

Բլուրի գագաթին պարզ երևում են թշնամու դիրքապահները: Նրանցից երկուսը կրակ են արել: Խոսում են:

— Տեսնես մեր արտը ո՞վ կհնձի...

— Երանի քեզ, արտ էլ ունես:

Պուղանը լսում է նրանց խոսքերը, մոտենում է երկանիվ սայլակին, թռուցիկ է կայցնում: Մի ձի նայում է անասնական զարմանքով:

Երկու ստվերները կորան:

Նրանք չեն երևում, միայն արտերի մեջ մի երիզ օձաձև տարուբեր է լինում:

Նրանք ձորակով կտրեցին ճանապարհը:

Բլուրի գագաթից դիրքապահների ավագը խշշոց լսեց, նայում է հեռագիտակով:

Հետախուզները թռան պատի վրայով, պատից քարերը գոռալով գլորվեցին: Բլուրից մի անգամ կրակեցին:

Այգի է. հնձան, տակառներ: Շուն է հաշում. մի թռուցիկ կայցրին հնձանի լռնակից: Շան հաշոցի վրա և կրակոցի ձայնին զարթնում է շարզախի տակ քնած այգեպանը:

— Հե՛յ... էլի եկար լորին գողանաս..., — կանչում է այգեպանը, ձեռքը մեկնելով հրացանին:

Պուղանն ընկերոջն օգնում է թռնել քարից քար:

Թաքնվում են խոր ձորում, որտեղ խիտ ծառեր են, և խազողի որթերը մագլցել են ժայռի լանջով:

Զանգեզուրի «մերձարևադարձային» ձորը:

Ամառվա արև օր:

Զամբուղի ձորում մի թթենի ծառ:

151-րդ գնդի շտաբը: Քարտեզը փռել են գետնին: Կռացել են քարտեզի վրա գնդի հրամանատարը՝ Բունչուժնին, կոմիսարը՝ Ֆեդոսեևը, մի գումարտակի հրամանատար, շտաբի պետը և Մակիչը:

Հեռվից լսվում է հարմոնի նվագ:

Նվագի հնչյուններով շտաբը քննում է առաջիկա արշավանքի ծրագիրը:

10

Գնդի հրամանատար Բունչուժնին՝

— Այստեղ նրանք կովի շն բռնվի... Թիկունքը հեռու է: Մակիչը՝

— Կռիվ կլինի Յայչիի մոտ...

— Իսկ որտեղ է այդ...

— Որտեղ Տաթևն է, նրանց բերդը...— Մակիչը կռանում է քարտեզի վրա.— Ահա Յայչիի ձորը... Զանգեզուրի Դարդանեղը...

Գլուխները խոնարհում են քարտեզի վրա:

Հարմոնի նվագը հզորանում է:

20

Երեք կարմիր բանակային ոտքերը հանել և նստել են գետի ափին: Նրանք երգում են, շորորդը՝ նվագում հարմոնի վրա:

Քեռի Միտրիչը՝ մորուքով մի կարմիր բանակային, նայում է դիմացը: Նրա կողքին կենն է: Միտրիչը ցույց է տալիս դիմացի լեռը:

— Կենն, այն կողմն ի՞նչ է...

— Դարձյալ լեռներ են...

— Իսկ նրանց այն կո՞ղմը...

— Ձորեր են,— կենը ծիծաղում է, իսկ Միտրիչը՝

30

— Դա՛-ս... այ քեզ երկիր...

Խշշում է գետը:

Հարմոնը նվագում է ստեպի ուրախ երգ:

Քեռի Միտրիչը շրջվում է ետ. փոքրիկ փոսթ մեջ «Զաղա-ցատերը» և «Արջը» կրակ են արել, սաջի վրա թիում են յուփա,

երգն արձագանքում է լեռներում: Հաստ սևահողը շրջվում է, և բարձրանում է խոնավությունը:

Հետզհետե հորովելը հեռանում է և ձայներն ավելի մեղմ են լսվում: Ապա երգն ընդհատվում է գնդացրի կտկտոցով:

Պայթում է առաջին արկը:

Գուժանը կանգնեց:

13

Լեռնալանջին Սյունիքի «պատրուգավոր» թնդանոթը:

10 Մի գյուղացի էշին խոտ բեռնած, կուշ է եկել թնդանոթից ոչ հեռու: Նա և վախենում է շարունակել ճանապարհը, և հետաքրքիր է տեսնել թնդանոթի կրակը:

Զինվորները վառում են պատրույգը: Թաքնվում են: Գյուղացին իր մարմնով ծածկում է էշի գլուխը, իսկ իրենը կոխում է խոտի մեջ:

Թնդանոթը որոտաց:

Գյուղացին ահից առաջ է վազում, արկի ուղղությամբ և խելահեղ կանչում է.

— Պա՛հ... Բռլլեկը փախավ...

20 Արկը պայթում է գուժանավորի մոտ: Գուժանն արձակում են: Լծափայտի վրա նստած երիտասարդի մի ոտքը շկա, փայտ է:

Ապա երկու անգամ իրար ետևից լսվում է ահուկի որոտ: Խոսում է Կարմիր բանակի հրետանին: Արկերը շառաշով թռնում են, մեկը դիպչում է մոտակա մի սրածայր ժայռի, փոշին ծածկում է ամեն ինչ, ապա փոշու մեջ ճոճվում է ժայռի գագաթը և ահագին աղմուկով փշրվում է:

Դեռ գվվում է արձագանքը:

Գյուղացին գլուխը հանում է խուրձի միջից և ավելի խելահեղ բղավում է.

30 — Պա՛հ... Բռլլեկը հաղթեց...

Թնդանոթածիզ սպան, լսելով այդ խոսքը, ատրճանակը հանած, զրում է նրա վրա, բղավելով՝

— Խ՛նչ...

Գյուղացու՝ վախից շճած դեմքը:

Բայց նույն վայրկյանին մի գինվոր, որ նրանց «կայան» է, կանչելով գալիս է:

— Պարուն պառուշնի, բուշեփի զորքը սարը բռնեց...

Հրետանու մոտ իրարանցում: Փախչում են:

Գյուղացին դեռ շշմած է և չի հավատում, որ այդքան անակրեկալ էր և մահը, և փրկութիւնը:

14

Լեռան լանջից, խոտերի մեջ թաքնվելով, իջնում են կարմիր բանակայինները: Նրանք համազարկ են տալիս, լռում են, ապա համառությամբ իջնում են:

10

Նրանք կրակում են դեպի բլուրը, որտեղ թշնամին աշխատում է պահել բանակայինների առաջխաղացումը:

Բայց այդ միայն մանյովր է:

Թշնամու գլխավոր ուժերը թաքնվել են գերեզմանատան քարերի ետև:

Նրանք սպասում են, որ բանակայինների շարքերը ավելի մոտենան: Նրանք դեպի շարքերն են ուղղում ձեռքի գնդացիները:

Գերեզմանատան ետև քսան-երեսուն ձի ձորակում կանգնել են: Այդ գերեզմանաքարերի ետև թաքնված դաշնակցականների ձիերն են:

20

Բլուրից լռում են: Այլևս չեն կրակում:

Գումարտակի հրամանատարը թուրը հանելով, բղավում է.

— Ուռո՛ւ...

Արշավում են:

Գերեզմանաքարերի ետևից համազարկ՝ հրացաններից: Թմբկահարում է գնդացիները:

Առաջին կարմիր բանակայիններն ընկան: Թուրերը գողացին:

Մակիչը հանկարծ հայտնվեց հարևան բլուրի ետևից: Նրա հետ, մոտ տասը ձիավոր՝ Պուղանը, Լեոնը, Բախշին, «Արջը», «Ջաղացատերը» և մյուսները: Դեպի այդ բլուրն են վազում հետևակ կոմունարները:

30

Մակիչը հետևակը թողեց բլուրի վրա և սլանում է դեպի ձորակը:

Գերեզմանաքարերի ետևից նկատեցին, որ ահա՛ Մակիչը կտրում է նրանց նահանջի ճանապարհը:

Դուրս թռան քարերի ետևից:

Կարմիր բանակայինները գրոհում են:

Նահանջողները վազում են դեպի ձորակը, դեպի ձիերը, ոմանք ուղղակի փախչում են:

Մակիչը ձորակումն է:

10 Ով ձի էր հեծել, փախչում է ձորով: Ձիերի մի մասը գերի մնացին:

Բլուրից կոմունարները իջնում են դեպի ձորակը, դեպի իրար խառնված ձիերը:

## 15

— Գալիս են... Կացնով գալիս են... Կոտորելու են, հե՛յ... — և լեղապատառ փախչում է գզիրը:

— Երեխաներին կթափես փողոցը... որ մորթեն, թող ժողովուրդի առաջ մորթեն...

Մի մայր գրկել է երկու տղաներին, իսկ այդպես ասողը 20 տեղացի խմբապետն է: Նա փախչում է:

Պաշտոնավորը քահանային համոզում է.

— Տեր-հայր, բա ի՞նչ ես ասում... Վերջին օրն է... Աղ ու հաց հանենք առաջները:

Մինասը երկու գյուղացու հետ վազում է դեպի կալանատունը:

Պահակը շկա, բայց դուռը կողպ է: Կալանատան դուռը շարդում են: Քլոխվան թաքցնում է իրերը: Շոր է փոխում:

Գիլա բիրին վազում է:

Փողոցով փախչում են երեք ձիավոր: Գիլա բիրին պա- 30 տից քար է առնում, որ գցի նրանց վրա:

— Փախչում եք, հա՞...

Մարագի դարմանի միջից դուրս են գալիս երեք թաքնված կոմունարներ:

Երկու հոգի հրացաններն առած, տնից դուրս են փախչում:

Մինա զիգին՝ գրկին թողր: Սոնան վազում է:

— Նանի, մերոնք գալիս են,— պառավը դեռ չի հասկանում, թե ի՞նչ է կատարվում: Սոնան գրկում է երեխային: Երեխայի ուրախ ճիչը:

16

Համազարկ խավարման մեջ:

Կրակում են առանձին կոմունարներ: Կրակում են կարմիր բանակայիններ:

Երկրորդ ճակատի հրամանատար կապիտան Տեր-Պետրոսովը համառությամբ դիմադրում է:

10

— Վաշտ, կրակ:

Հենց այդ վայրկյանին կապիտանը ձեռնառումբի ծուխի մեջ կորչում է և ճոճվելով ընկնում: Կոմունարները սլանում են: Մակիչը թռավ ձորակի վրայով:

17

Վերջին ձիավորները փախչում են գյուղի փողոցներով:

Գնդի հրամանատարը՝ Բունչուժնին լեռան գագաթից նայում է առաջ: Զանգեզուրի պանորամը: Հեռադիտակը պահում է և ասում է Ֆեդոսեևին.

— Գեղեցիկ երկիր է:

20

Գյուղի փողոցներում կրակում են Մինասը և թաքստոցից գուրս եկած կոմունարները:

Մակիչը մտեցավ գյուղին, նրա ետևից՝ Պուլանը, Լևոնը և մյուսները:

Քահանան, Պաշտոնավորը, քյոխվան և մի խումբ գյուղացիներ դուրս են եկել աղ ու հացով:

Մակիչի ձին խրտնում է աղ ու հաց բերողներից: Բազմությունը ճեղքվում է, և նրանք անցնում են:

Քահանան, Պաշտոնավորը, քյոխվան ահաբեկվել են:

Մակիչը դառնում է Պուլանին.

30

— Մնա, գյուղը կարգի բեր...

Մոտ են վազում Մինասը, մյուս կոմունարները:

561

— Ո՞ւր փախան ձիավորները, — հարցնում է Մակիչը:  
Արշավում են:

— Մակիչ, — կանչում է Մինա զիզին: Մակիչը ետ է նայում: Իրենց տան դարպասի մոտ կանգնել են մայրը, Սոնան՝ երեխան գրկին: Մակիչն ուզում է ձին պահել: Ժպտում է, ձեռքով է անում, թե կգամ: Եվ արշավում է:

Երբ նա ձիու զուխը պահել և հետ է նայում, նկատում է փախած խմբապետի կնոջը, որը երեխաներին փողոց է հանել, ինչպես պատվիրել էր ամուսինը: Մակիչը բարկացած ասում է նրան:

— Երեխաներին տուն տար... ձիու ոտքի տակ կընկնեն:  
Արշավում են:  
Խավարում:

## Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ Մ Ա Ա

### 1

Պուղանը և մեղմ երգում է, և հագնվում է: Նա քնել է «կանցելարում»: Գետնի վրա պառկած են մի քանի ուս կարմիր բանակայիններ և ջոկի հրամանատարը: Վերջինիս գլխավերևը ատրճանակն է, թուրը:

Դուռը բացվում է, և ներս են մտնում երկու հոգի՝ մեկը մեզ ծանոթ «կիսախնտելիգենտն» է, մյուսը՝ նրան նման մի տիպ: Դուան պահակը նրանց չի ուզում ներս թողնել, բայց նրանք արդեն ներս են մտել, և պահակը նրանց ետևից ասում է.

— Վաշշ... Հաբա ուսումով էլ են...

— Կարելի՞ է, — և մոտենում են:

Պուղանը ձեռքը տանում է շապիկի կոճակներին: Նա ամաչում է, որ այդ վիճակումն են իրեն տեսնում: Նաև զարմացած նայում է, թե առավոտ կանուխ սրանք ի՞նչ գործ ունեն:

— Կարելի՞ է նստել, — հարցնում է «կիսախնտելիգենտը»:

Պուղանը նախ ինքն է նստում, որից հետո նստում են նաև նրանք, առանց հրավեր ստանալու:

— Մենք եկել ենք ողջունելու Կարմիր բանակի մուտքը  
և... — այդ ժամանակ «Կիսախնտելիզենտի» ընկերը գրպանից  
հանում է մի վառոց մաուզերի ձեռի: Վառում է ծխախոտը: Պու-  
ղանի աչքն ընկնում է այդ իրին և առնում է, «կրակում» է,  
զբաղվում է, ինչպես երեխա: «Կիսախնտելիզենտը» կոխում է ըն-  
կերոջ ոտքը, այսինքն թե՛ վառոցը իզուր հանեցիր:

Պուղանը կարծես զգում է այդ և հեզնանքով հետ է տալիս  
իրը, իբրև երեխա, որին ձանձրացրեց խաղալիքը:

«Կիսախնտելիզենտը» շարունակում է.

— Նաև մեզ զբաղեցնում է Ադրբեջանի հետ վիճելի... 10

— Հալալ ախպոր նման, — ընդհատում է Պուղանը:

«Կիսախնտելիզենտի» ընկերը նկատում է սենյակում քնած  
կարմիր բանակայիններին, որոնցից մեկը գլուխը բարձրացնում,  
քունը գլխին նայում է նրա օտարոտի արտաքինին և շուտ է զա-  
լիս մյուս կողքին: Նա սեղմում է ընկերոջ ոտքը և ցույց է տա-  
լիս կարմիր բանակայինների կողմը:

— Այո՛, բայց փոխհարաբերությունների ստրուկտուրան, —  
հատկապես վերջին բառն ընդգծում է «Կիսախնտելիզենտը»:

— Սաղ աշխարհը պիտի սովետական լինի...

— Մենք չենք առարկում... բայց օրինակ... հետաքրքիր 20  
է... Ի՞նչ է Ֆեդերացիայի...

Պուղանը շփում է ճակատը: Ծգնում է պատասխանել, բայց,  
զգալով, որ «տիպը» նրան «կապ քցեց», հանկարծ ոտքի է  
կանգնում:

— Խաչի, — ներս է մտնում դռան պահակը:

— Էս կոնտրներին տար լցրու գոմը...

Խաչին առանց այդ էլ դժգոհ էր այդ «ուսումով» մարդկան-  
ցից: Տանում է: Պուղանը նրանց ետևից ասում է.

— Ես գլուխ չունեմ ձեզ հետ դնեմ...

Ապա կոճկում է շապիկը, մոմոտ է նույն երգը: Բայց 30  
ինչ-որ մտազբաղ է, անգոհ է: Հանկարծ զարթեցնում է ջոկի  
հրամանատարին: Վերջինս վեր է թռնում:

— Սլուշ, Վասյա, — ասում է Պուղանը, — շտո տակոյ ֆե-  
զերացիա...

— Федерация... Значит Союз... և նորից պահում,— братский Союз... Советских...

Պուղանը նայում է դեպի դուռը.

— Ծն ջո վարժապետ հերն... բա շասացի հալալ ախպոր նման...

Խավարում:

2

Ամառ երեկո:

10 Սարահարթի վրա տեղավորվել են Կարմիր բանակի 151 և 153-րդ գնդերը և Ջանգեզուրի կոմունարների զորամասը:

Ձախ՝ Որոտանի ձորն է:

Ձիավորների առանձին խմբեր սարահարթի եզրին են, ձորի գլխին:

Ամրոզը օրը բանակն այդտեղ է:

Ձիերը ջրում են աղբյուրից: Մի ուս կարմիր բանակային կռանում է աղբյուրի վրա, նրան դժվար է այդպես խմելը: Ձին մոռթոկ հրում է նրան ետևից, զինվորը գլխի վրա է դառնում:

Ձինվորները ծիծաղում են:

20 «Ջաղացատերը» պոկում է աղբյուրի մոտ բուսած քեղի ցողունը և ջուր է խմում:

— Ишь как,— և նույն ուս կարմիր բանակայինն ընդօրինակում է նրան և ջուր է խմում: Այդ նրան և ընկերներին դուր է գալիս:

Մի այլ տեղ երկու կարմիր բանակային կրակի շուրջը նստել են: Մեկը խառնում է փամփուշտների ցինկե ամառը, որի մեջ ուտելիք են եփում, մյուսը քարով խփում է կոշիկի մեխին: Վերջինս՝

— Ну и страна... окромя камней ни черту... И за что кровь проливать то?...

30 — Как за что,— ընկերը գդալով համտես է անում և բերանն այրելով, շարունակում է.— А нашим братьям армянам помочь надо...

Անցնում է միրուք Միտրիչը՝ ետևից երեք ձի քաշելով.

— А это кто сказал, что не надо...— *Միտրիչը կանգնում է: Ձիերը նայում են կրակին: Առաջին կարմիր բանակայինը բարկացած շարունակում է կոշիկին քարով խփել: Միտրիչը հասկանում է, որ նա էր այդպես ասողը.*

—Что горы, что степь... Всюду наш брат маялся. А теперь, конец. Понял? Своих то добили, ну вот у них остался последний енерал. Покончим и с ним, тогда можна до дому... А трепать языком не надо.

— Ты комиссар, что ли...?— *և հեռախոսի կոճից մի կտոր թել է կտրում, փաթաթում կոշիկին:*

10

—Ну и комиссар... Раз правда, значит комиссар... А что ты малохольный, так сразу видать...

—Ну, ну...: С чего видать?

—Так вот видать, как ты портишь народное добро...

*Միտրիչը ձիերը քաշում է: Նրա ետևից երկրորդ կարմիր բանակայինն ասում է առաջիններին, կրակի վրայից առնելով ամանը.*

—Перцу то дал?

— Видали мы не таких,— *և գդալը բարկացած կոխում է պղնձի մեջ:*

20

*Միտրիչը ձիերը կապում է ցցերից: Այդտեղ գեղանկար փովել են կարմիր բանակայինների և տեղացի կոմունարների մի խումբ: Նրանք զրուցում են:*

— *Միտրիչ,*— *կանչում են նրան,*— а скажи, что станет с золотом, когда сквозь будет коммуна...— *հարցնողն առաջ է թռնում, գետնի վրա պպզելով: Նրանց կողքին ընկած է հարմոնը:*

*Միտրիչը չի պատասխանում, մոռալ է: Ապա ծոցի գրպանից հանում է ծխախոտի տուփը. ընկնում է նաև մի բրոշյուր: Հարմոնի տերը ձեռքը մեկնում է բրոշյուրին, կարծելով որ ծղխելու թուղթ է: Միտրիչը խփում է նրա ձեռքին:*

30

— Не лапай,— *և գրպանից հանում է ծխախոտի թուղթ՝ գազեթի կտորներ:*

Դանդաղ ծխում է: Մի քանիսը փաթաթում են նրա ծխախոտից: Միտրիչը ծխի մեջ թերթում է այն բրոշյուրը, որ ընկավ ծոցի գրպանից: Կարդում է հատված Լենինից.

—Понял?.. Вот что станет с золотом.

— Так значит,— և հարմոնի տերը շարժումով հասկացնում է իր «անառակ» միտքը և ծիծաղից թուլացած գլուխկոնժի է տալիս: Միծաղում են մյուսները:

—А ты переведи им...

10 — Понял, совсем понял,— ասում է «Զաղացատերը»:  
— У нашего брата один язык,— և Միտրիչը բրոշյուրը դնում է գրպանը: Նրա աչքն ընկնում է «Արջ»-ին, որ խոտը շալակած անցնում է նրանց կողքով, բայց հետաքրքրությունից կանգնում է:

Միտրիչը դառնում է նրան:

—А по вашему коммуна как?

— Կոմունա...

—А большевик?

— Յա բալշևիկ,— «Արջը» փափախով սրբում է ճակատը:

—А пролетариат?

20 — էտո նե զնայիթ:

—Как не знаешь?

— Բախշի, էս հինչ ա ասում էս միրուքը,— դառնում է նա մի կոմունարի:

— Արա, ասում ա՝ արաբոշին հինչ պյեն ա...

— Պահ, սարսաղ քնժահեր... Օխտը տարի Բալխանի մասլոնչի եմ եղել, արաբոշին էլ չեմ իմանո՞ւմ...

—Вот, вот... Рабочий и есть пролетариат... А что Советская власть, знаешь?

30 — Սավետսկի վլաստ—մոյ վլաստ.— «Արջը» ոգևորված խփում է կրծքին:

Հարմոնի տերը ուրախությունից Ֆրոում է գետնի վրա և արագ ութմով ինչ-որ նվազում է: Ապա հանում է իր կոմունարկան, դնում «Արջի» գլխին և իր գլխին է դնում նրա փափախը:

Հարմոնը հետզհետե անցնում է ժանոթ երգին:

— Смело мы в бой пойдем, — և խավարի մեջ դեռևս  
հնչում է այդ երգը հեռու, ավելի հեռու:

3

էկրանի ետևից լսվում է հրամանատար Բունչուժնու  
ձայնը՝

— К рассвету всегда надо усилить разведку...

Բացվում է էկրանը:

Բունչուժնին, Ֆեդոսեևը և Մակիչը նայում են Որոտանի  
ձորին: Խորքում ահավոր ձորը, գետը, հեռադիտակի մեջ՝ փայ-  
տե բարակ կամուրջը գետի վրա...

10

Ձորի մյուս ափին անառիկ ժայռեր են:

— Да... ничего... — և Բունչուժնին ժպտում է: Նա ակ-  
նարկում է, որ այնքան էլ հեշտ չի լինելու կռիվը:

— Если 84-я подоспеет... у них орудия... ВО... և հաս-  
կացնում է, որ 84-րդ բրիգադի հրետանին հզոր է և կշարդի  
թշնամու անառիկ դիրքերը:

4

Լազերն է:

Մի հայ և մի թուրք կոմունար նստել են: Հայը հաց է հա-  
նում, կիսում է: Կողքով անցնում է մի ուրիշ հայ կոմունար.  
նա հանաքով՝

20

— Ա, թուրքը հայի հաց կուտի՞...

Երեքով ծիծաղում են: Երկրորդը հեռանում է: Երկու կո-  
մունարները մի շինելի տակ պառկում են՝ մեջքը մեջքի:

Մոտենում է Մակիչը: Նրանք քնել են: Հետզհետե լսվում է  
Ջանգեզուրի պարտիզանների երգը:

Մակիչը նայում է քնածներին և լեռնին ասում է.

— Վաղուց էսպես կողք կողքի չէին քնել հայը և թուրքը...

5

Խուլ հնչում է Ջանգեզուրի պարտիզանների երգը:

30

Գնում էին ուղմանակառ Մթնածորի գյուղերից...

567

Մակերի ձորը. բարակ կամուրջ: Յոթ մարդ՝ և ծերունի, և երիտասարդ զինված՝ ինչպես պարտիզաններ, անցնում են բարակ կամուրջով և բարձրանում են կեռման արահետով...

### Լեռնային լճերի ափերից...

Կապույտ լիճը: Եզերքին ալպյան խոտը և չքնաղ ծաղիկներ... Լճի խորքում արտացոլել է երկինքը, և նույն խորքում երևում է յոթ ստվեր՝ զինված կոմունարների յոթ ստվեր... Նրանք գնում են խոտերի միջով, լճի ափերով, և միայն նրանց պատկերն է երևում լճի հայելու մեջ:

10

### Անտառի բնակիչները...

Արևի մայրամուտն է Ձանգեզուրի Երկար անտառում... Անտառի խավար խորքից դեպի արևը գալիս են յոթ պարտիզան: Նրանց ստվերները երկարում են: Ստվերները հեռանում են, և հզոր աղմուկով խշշում է անտառը:

### Ղափանի հանքափորները...

Հանքի ավերակ մուտքը: Հեղեղը սրբել է հողը, և դեռևս կախված են նեղզծանի ուղիները՝ ծուռ, ժանգոտ և ջարդված: Մի վագոնետ խրվել է հողի մեջ, և արդեն չորս կողմը բուսել է վայրի կանեփ: Հանքի ավերակ մուտքի առաջ կանգնել են յոթ հանքափոր՝ և ծերունի, և երիտասարդ՝ նիհար, մռայլ և համր:

— Ձանգեզուրցիներ, փշրեցեք բռնության շղթաները, — էկրանի ետևից որոտում է մի ձայն:

Հրապարակում բացվում է միտինգը, նույն պարտիզանները՝ յոթն անգամ յոթ, որոնք եկել են Մթնածորի գյուղերից և լեռնային լճի ափերից, եկել են անտառի բնակիչները և մռայլ հանքափորները:

Խոսում է Քրիստը՝

— Թշնամին ամրացել է Յայջիի դիրքերում...

Թնդում է նվագախումբը:

30

588

Լեռներով բարձրանում են պարտիզանները և որքան հե-  
ռանում, այնքան խլանում է հաղթական մարշը: Ահա նրանց  
միացած երկու երիտասարդ, երեք ձիավոր, միայն մի ալեհեր  
ծերունի:

Հետզհետե խավարում է:

6

Փոքր ձորակ:

Զիլֆին, Պուղանը և երկու ուս կարմիր բանակային: Նրանք  
բոլորը կանգնել են մի լանջի առաջ, որտեղ միայն խրված է մի  
կոտրած «պենձիկ» և ուրիշ ոչինչ՝ ոչ դուռ, ոչ լուսամուտ, ոչ 10  
պատ, այլ լեռնալանջ է, հողի մեջ, գետնից կես մետր բարձր  
կոտրած «պենձիկը» Զիլֆին դեն է շարտում, ապա հողը ձեռ-  
քով հետ է տալիս, շոր խոտ է հանում, մի ամբողջ խուրձ, ապա  
երկրորդ խուրձը, երրորդը և հետզհետե խորանում է մուտքը:

Ռուս կարմիր բանակայինները զարմացած նայում են:  
Երեք քայլի վրա արձանացել է Պաշտոնավորը: Նրան դեռ չեն  
նկատել, որովհետեւ մյուսներն զբաղված են գործով: Զիլֆին  
կարծես գետնի խորքն է մտնում. այնտեղ մի դռնակ է բացվում,  
ապա երևում է Զիլֆին, նրա ետևից ոչխարները՝ մեկ, երկու, 20  
երեք, տաս, քսան, հիսուն, կարծես գետնի ընդերքը ժայթքում  
է ոչխարներ, որոնք փակ քարանձավից վազում են դեպի արևը,  
դեպի թարմ օդը:

Պուղանը նկատեց Պաշտոնավորին: Ոչխարը նրանն էր.  
այդ նա էր նրանց թաքցրել գոմում բռնագրավման ահից:

Զիլֆին ոչխարների առաջը պահում է:

— Զիլֆի, երեքից մեկը ջոկի...

Տղան ջոկում է: Նրան օգնում են ուս կարմիր բանակային-  
ները:

Պուղանը մոտենում է Պաշտոնավորին.

— Դու դիկատտորի կողմից գաղափար ունե՞ս...

Պաշտոնավորի վախեցած դեմքը:

Պուղանը շարունակում է.

— Քո հոժար կամքով զորքի համար երեքից մեկը տալի՞ս  
ես, թե՞ չէ...

30

Պաշտոնավորը ահից խեղճացել է:

— Ինչ եմ ասում...

Կարմիր բանակայիները քշում են Զիլֆու շոկած ոչխարները: Նրանց հետևից գնում են՝ Պուղանը և Զիլֆին: Տղան հարցնում է.

— Քեռի, էդ դիկտատուրը հի՞նչ ա...

— Դիկտատուրը նա է, որ դրա նմանների կաշին մաշկես... Նրանց հետևից դեռ արձանացած, բայց դժգոհ նայում է Պաշտոնավորը: Մոտենում է քահանան: Վերջինս հարցնում է.

10 — Բա ասում էիր, ուսը գա լա՞վ կլինի...

— էս իմ տեսած ուսը չի,— ամոսսանքով և կարոտով ասում է Պաշտոնավորը:

Խավարում:

## 7

Տաթևի վանահոր կամարակապ խուցը:

Նստել են Գեղեոն վարժապետը և «սպարապետը»: Սենյակում կիսաստվեր է, ցուրտ է և մռայլ: Գեղեոն վարժապետը, կարծես, ինքն իրեն խոսում է.

— Կար ժամանակ, երբ մենք մահից չէինք վախենում...

20 Այժմ նրանք... Դուք չե՞ք մրսում,— և փակում է պատուհանը, ապա նայում է «սպարապետին», որը ինչ-որ թղթեր է քրքրում, այրում է մոմի վրա և մի մասը դարսում է առանձին: «Սպարապետը» չի լսում նրա հարցը և քթի մեջ դնում է մի երգ: Նա երկար նայում է մի թղթի:

— Մայր նիբբոնի վերջին նամակը... Գուցե պատմության համար,— և դառն ժպիտով նայում է Գեղեոն վարժապետին:

— Իսկ ինչ կլինի պատմության դատաստանը...

— Պատմությունը գրում են արյունով...

30 Գեղեոն վարժապետը նայում է մի կետի: Հետզհետե փոխվում է նրա դեմքի արտահայտությունը:

Միջանցքում՝ ոտնաձայներ: Մտնում են գնդապետ Կուռոն, նրա հետևից պարուչիկ Ամիրջանովը:

— Ամեն ինչ պատրաստ է,— ասում է գնդապետը և «սպարապետին» է մեկնում մի թուղթ:

Գեղեոն վարժապետը ցնցվում է:  
«Սպարապետը» թաթախում է գրիչը և մեկնելով Գեղեոն  
վարժապետին՝

— Նախ ստորագրում է ազգային խորհրդի նախագահը...

Գեղեոն վարժապետը ստորագրում է բանտարկված կոմու-  
նարներին մահալճիւրը:

Սրբում է սառը քրտինքը:

— Պատմությունը գրում են արյունով...— և «սպարապե-  
տը» ստորագրում է:

— Եվ ինչպե՞ս նրանք շեն վախենում մահից,— դեռ ինքն 10  
իրեն խոսում է Գեղեոնը:

Գնդապետը թուղթը պահում է մոմի վրա,— ապա թուղ-  
թը հանձնում է պարուշիկին, վերջինս գնում է:

8

Երեկո է:

Մի կոմունար լսում է խշշոց: Նա կանչում է.

— Ո՞վ ես...— մի ձայն՝

— Ես եմ...

Դուրս է գալիս Մակիչը, նրա հետ Լեոնը:

— Ոչի՞նչ չկա,— հարցնում է Մակիչը:

— Ոչինչ չկա,— Մակիչը նայում է պահակի հրացանի փա-  
կաղակը, դիտողություն է անում, որ գնդակը փողի մեջ չէ:  
Շարունակում են ճանապարհը:

Լսվում է մի մեղմ բայաթի: Հետզհետե երևում է ուրիշ դիր-  
քապահ: Նա հրացանը մի կողմի է դրել և նորոգում է տրեխը:

Մակիչը ետևից ուզում է վերցնի նրա հրացանը: Դիրքա-  
պահը վեր թռավ:

— Անունդ ի՞նչ է,— հարցնում է Մակիչը:

Դիրքապահը ցույց է տալիս պատռած տրեխը, բորիկ ոտ-  
քը: Եվ ասում է.

— Որ մեր գյուղը մտնենք, կասեն կոմունարը բորիկ է...  
Դրա համար էլ...

Մակիչը ժպտում է: Հարցնում է՝

— Բան-ման շերեա՞ց...

20

30

— Մենակ մի քարայծ երևաց...

Հեռանում են:

Մակիչը նայում է ձորին, երկնքին: Լեռնը հարցնում է՝

— Շա՞տ պիտի սպասենք...

— Թնդանոթները հասնեն...

Խավարում:

9

Քարափի գլխին շարվել են կոմունարները. նստած են, պառկած են, թիկնել են քարին, ընկերոջ թիկունքին:

10

Երգում են Զանգեզուրի պարտիզանների երգը:

Մակիչը մոտենում է:

Նրանք լուռ են: Նրանց մեջ նստած է Պուղանը:

— Ինչո՞ւ լռեցիք, — հարցնում է Մակիչը, — Պուղան...

Գրկվում են:

— Ի՞նչ կա, չկա...

— Էնպես մի դիկտատուր եմ քցել, որ...

Կոմունարները ծիծաղում են:

— Կոիվը վերջանա... — ասում է Մակիչը, — գնալու եմ սովորեմ...

20

— Հի՞նչ ես սովորելու, — հարցնում է «Զաղացատերը»:

— Ինչիններություն:

— Ես էլ կգնամ իմ ջաղացը...

Ծիծաղում են: Մակիչը կոմունարներին՝

— Մի լավ երգենք մեր ձորերում...

Երգում են պարտիզանների երգը: Երգը հետզհետե զորանում է, երբեմն միայն երգի արձագանքն է լսվում, երբեմն ձորերում որոտում է:

Մակիչը նայում է ձորի մյուս ափին, հեռու, որտեղ արևմուտքի ամպերը դեռ կարմիր են:

30

— Լսո՞ւմ են մերոնք... — և ցույց է տալիս ձորի այն ափը, Տաթևի քարափները:

Հետզհետե երգը խլանում է, և նրա հետ իջնում է խավարը:

Նույն սենյակը Տաթևում: Գիշեր է: Վառվում է մոմը:  
Գեղե՞ծն վարժապետը կուշ է եկել, կարծես մրսում է: Պա-  
տուհանից դուրս է նայում գնդապետ Կոտոն:

Լուսնյակ գիշեր, ժայռերի ստվերները: Ձորում շառաշում  
է ջրվեժը:

Բակի սալահատակի վրա երևաց լույսի շերտը, ինչպես  
նիզակ: Մեկը լապտերով կանգնել է ինչ-որ տան առաջ:

Քարափի գլխին ստվերներ: Մի տեղ ձի է դոփում:

Խավար միջանցքով գնում է պարուշիկ Ամիրջանովը: Նա 10  
չի երևում, և չեն երևում նրան ուղեկցող մաուզերիստները, այլ  
միայն լավում է ոտքի դոփյուն, ապա ձեռքի լապտերի նիզակա-  
ձև լույսը:

Լավում է մի ձայն.

— Ալլահ, աման...

Տաթևի խոր ղնդանը: Ճրագի աղոտ ցուր: Պառկել են, նըս-  
տել են, ոմանք քայլում են:

Մի ծերունի թուրք և մի հայ գյուղացի, ապա երկու երիտա-  
սարդ, նաև Գարեգինը: Վերջինիս է դիմում թուրքը.

— Լավ, ասենք, ես թուրք եմ, բա հայերը ձեզ ինչո՞ւ են 20  
սպանում...

Գարեգինը՝

— Մենք ուրիշ ազգ ենք, հայր... Մենք բուլշևիկ ենք:

— Դա ի՞նչ ազգ է...

— Դա մի նոր ազգ է... դա, — և գրկում է թուրքին... —  
դա... ազգերի կռիվ չի ուզում, այլ կռիվ հարուստների դեմ,  
խաների դեմ, խեղճ ֆուղարա մարդկանց ազատության հա-  
մար...

Ամիրջանովը ներս է մտնում: Քար լուռթյուն: Պարու- 30  
շիկը Գարեգինին մատով նշան է անում՝ որ դուրս գա: Գարե-  
գինը նայում է շուրջը, հանում է պինջակը, տալիս է ծերու-  
նուն.

— Առ, հայր... թե ողջ մնացիր, պետք կգա:

Թուրքը լալահառաչ իրեն նետում է նրան պաշտպանելու:

— Ո՞ւր եք տանում իմ որդուն...

Թուրքին մի կողմ են հրում: Գարեգինը բղավում է՝

— Ով ողջ մնա, թող շնչի սրանց... Կեցցե, — բայց հարձակվում են, փակում են բերանը, դուրս են քաշում:

Բարձրանում է աղմուկ, լաց, գոռոց... Երբեմն հանդարտվում է, լսվում է կանացի ողբի ձայն: Պարուչիկ Ամիրջանովը երևում է այլ զնդանում. այնտեղից հանում է ուրիշին:

Հանել են երեք հոգու:

Գնդապետ Կուռոն նայում է պատուհանից.

— Սկսվում է...

10 Գեղեցուն վարժապետը գլուխը պահում է վերարկուի մեջ: Օգտվելով առիթից, գնդապետը բաց է անում պատուհանը:

Լուսնյակ գիշեր է, սև, ծանր ստվերներ...

Քարափի գլխին կանգնել են շորս հոգի: Մեկը պարուչիկ Ամիրջանովն է: Նրանց մեռելագույն դեմքերը... Պարուչիկը ներքև է նայում, ապա մի քիչ հեռանում է քարափի բերանից:

Բերում են մի կոմունարի՝ աչքերը կապած: Երկու հոգի բռնել են նրա ձեռքերից: Նա փորձում է հետ կանգնել, բայց այդ կատարվում է հենց քարափի գլխին և դեռ չէր բղավել՝

20 — Ընկերներ, — երբ ծոծրակից կրակում է պարուչիկը, և կոմունարն ընկնում է:

Լուսթյուն: Խուլ աղմուկ:

Գնդապետ Կուռոն նայում է:

Բերում են երկրորդին: Նա զինվորի զգեստով է: Երեք քայլի վրա նա հանկարծ դուրս է պրծնում բռնողների ձեռքերից և ահագին ուստյուն անելով, թռչում է քարափից:

Ահից մի կողմ են քաշվում պարուչիկը և մի մաուզերիստ, որը ուզում է մաուզերը կրակել, բայց պարուչիկը նրան նշան է անում՝ թե ավելորդ է, նա այլևս կենդանի չէ:

30 Գնդապետը ցնցում է դեմքը, երբ կոմունարը ուստյուն է անում դեպի անդունդը:

Նրանց համր շարժումների ընթացքում լսվում է ավելի զորեղ խշշոց, որովհետև երկրորդն ընկավ անդունդը՝ թփերի վրա:

Գլուխը բարձր պահած գալիս է Գարեգինը:

— Կեցցե կոմունիզմը, — որոտում է նրա կանչը, որոտին արձագանքում են զնդանից, նրան բռնողները փորձում են փա-

կել բերանը: Այդ ակնթարթում Գարեգինը ուստյուն է անում. դուրս է պրծնում նրանց ձեռքերից և գրկելով պարուշիկ Ամիրջանովին, ընկնում է անդունդը:

Իրարանցում:

Գնդապետը փակեց պատուհանը:

— Պարուշիկը, — և դուրս գնաց:

Գեղեոն վարժապետը կիսով շափ բարձրացել և այդպես սառել է:

Քարափի զլխից ներքև են նայում գնդապետը և մաուզերիստները: Լուսթյուն, մեռելային լուսթյուն: Զրվեծի նույն շառաչը: Գնդապետը դաժան ձայնով՝

— Մնացածներին կապած բերեք, — և ինքն է կանգնում պարուշիկ Ամիրջանովի տեղը:

Խավարում:

### Յ Ո Ք Ե Ր Ո Ր Գ Մ Ա Ս

#### 1

Մաղում է բարակ անձրև:

84-րդ բրիգադի հրետանին դանդաղ և դժվարությամբ շարժվում է սարահարթի փափուկ հողերի վրայով: Մի վիթխարի թնդանոթ կանգ է առել, անիվները խրվել են ցեխի մեջ: Հրում են կարմիր բանակայինները, հրում են տեղացի պարտիզանները:

Թնդանոթը հանեցին:

Ուղեկցող զինվորները գնում են: Կոմունարներից մեկը, որ նույնպես օգնում էր, երբ թնդանոթը շարժվում է, նրան չի ուղեկցում, այլ նստում է քարերի վրա:

Նա տխուր է: Նայում է թնդանոթի ետևից:

Նրա ընկերը մոտենում է:

— Հը՞, — և նայում է հարցական:

— Էն անդերն էլ էնպես գոռում է որ... — և ցույց է տալիս հեռացող թնդանոթը:

— Է, ի՞նչ...

— Ախր, երեխեքը սրտաճաք կլինեն...

— Վեր կաց, վեր կաց,— հանդիմանող ձայնով ասում է  
երկրորդ կոմունարը:

Նրանք գնում են թնդանոթի հտեից:

## 2

Սեղանի վրա վառվում է մոմը:

«Սպարապետը» Կուռոյին՝

— Ամեն ինչ բարենպաստ է, մանավանդ եղանակը... Այժմ  
կամ երբեք: Քանի որ նրանք դեռ նոր ուժ չեն ստացել...

Դուրս են գնում:

10 Հնչում է հավաքի փողը:

## 3

Աստղալույս գիշեր է:

Վանքի բակը:

Զիավոր խմբերը, ձիեր, սպառազինման աղմուկ և իրար-  
անցում:

Գնդապետ Կուռոն հրամայում է՝

— Մմբակները փաթաթեք թաղիքով... որպեսզի ոչինչ չը-  
զրնգա, ոչ զենք, ոչ սանձ... Յուրաքանչյուր զինվոր իր վրա  
կրում է սպիտակ պատանքը...

20 Գնդապետը ցույց է տալիս սպիտակ քաթանը:

Ներքև՝ ձիերը, մաուզերիստները,— դաշնակցական զորքի  
ծաղիկը,— խմբապետներ, վաշտապետներ, Կուռոյի, Ներսեսի,  
սիսիանցիների այն ձիավորները, որոնք կազմում էին նրանց  
գալլավաշտերը:

Մեկը ամրացնում է թուրը, երկրորդը հանում է սապոգ-  
ների խթանները, երրորդը ձիու ամբակին թաղիք է փաթաթում:

Երկու մաուզերիստներ. մեկը հանում է վրայի զգեստը  
մինչև սպիտակ շապիկը և ապա հագնում է թարս, այսինքն  
սպիտակ շապիկը դուրս: Մյուսը, որ ամբողջովին սպիտակ է,  
30 գլխին փաթաթում է սպիտակ քաթանը, նմանվելով պատանած  
մեռելի:

Ապարատը սահում է ձիավորների վրայով: Կիսամուժ,  
կիսալույս է:

Սրկու մաուզերիստներ թաղիք շունեն ձիերի սմբակները  
փաթաթելու: Նրանք ուղղակի պոկում են ձիու պայտերը, որ-  
պեսզի սմբակները չզրնգան...

Մի այլ անկյունում ուրիշ երկուսը նույնպես թաղիք շու-  
նեն: Նրանցից մեկը վայր է դնում ձիու սմբակը և մյուսին աշ-  
քով առաջարկում է ինչ-որ տեղ գնալ:

Գնում են՝ երկուսն էլ ոտքից գլուխ սպիտակ, ինչպես ուր-  
վականներ:

Խավարը թանձրանում է, որովհետև նրանք մտան վանքի  
գավիթը: Խավարի մեջ ինչ-որ դուռ զրնգում է:

10

Վանքի ներսը: Գիշերային երկու մոմ և գմբեթից ներս ընկ-  
նող աքտղալույսը:

Դրնգում են երկու ոտնաձայն, ապա խավարի միջից երե-  
վում են երկու սպիտակ ուրվական՝ երկու մաուզերիստները,  
որոնք ներս են մտել վանքը, որպեսզի...

Բայց ահա մեկը գետնից բարձրացրեց գորգը, մյուսը թու-  
րը հանեց և գորգը ճեղքեց զուլ-զուլ:

#### 4

Կիսամթնում Կարմիր բանակի և կոմունարների դիրքերը:  
Մի տեղ խարույկը հանգել է... խարույկի մոտ, հենց գետ- 20  
նի վրա փոված քնել են կոմունարները: Բախշին, որ նստած  
ննջում է, չի կարողանում հաղթել քունը և կուշ է գալիս քարի  
տակ:

Մեկը քնի մեջ ավելի է սեղմվում ընկերոջ մեջքին, որով-  
հետև փչում է լուսադեմի զովը:

Նույնիսկ ձիերը գլուխ գլխի ննջում են...

Մակիչը փաթաթվել է յափնջու մեջ, գլուխը հենել է Պու-  
ղանի մեջքին և քնել է:

Գնդի հրամանատարի վրանը:

Արթուն է միայն դրսի պահակը: Վրանի ներսում քնել են: 30

Մի այլ տեղ ջոկի հրամանատարը դեպի առաջին դիր-  
քերն է ուղարկում շորս կարմիր բանակայինի:

Այդ տեսարանը ևս հեռանում է, հետզհետե հեռանում է  
ամբողջ բանակատեղին, և թվում է, թե լեռներում մարդ չկա,

577

այլ խաղաղ լուսաբացն է, այն ժամը, երբ մութի մեջ աղոտ ուրվագծվում են լեռները, լսվում է միայն ջրի խուլ ձայնը, խոտերը խշշում են, և ինչ-որ անհայտ հեռվից մի թռչուն անհանգիստ կանչում է բնի մեջ:

## 5

Վանքի դարպասները բացվում են:

10 Լուռ, առանց աղմուկի դուրս են գալիս ձիավորները: Ձիերը չեն դոփում, թրերը չեն աղմկում, երբեմն միայն մի ձի փռոռացնում է ռունգերով, և տերը զայրացած քաշում է նրա սանձը:

Դարպասներից դուրս են գալիս ձիավորները և իսկույն կորչում: Նրանք սպիտակ զգեստով են, ումանք ձեռքի գնդացիք ունեն, և այդ ամենը կիսաիրական տեսիլք է, կարծես արշավում են ուրվականներ:

Այդ «պատանեկրաց» արշավանքն է:

Գնդապետ Կուռոն նայում է քարափի գլխից:

Չորը լիքը «չանգ» է... Սպիտակ շանգը սողում է ձորով, լեռներով, և չի երևում ոչ գետը, ոչ դիմացի լեռները:

20 Ձիավորները դարպասից դուրս են գալիս և կորչում սպիտակ շանգի մեջ:

## 6

Կոմունարների բանակատեղին մի բլուր է, որից ձախ Ուրոտանի ձորն է, աջ՝ լեռնաշղթայի և բլուրի արանքում, — կանաչ ձորակ: Ծանապարհը կիսամթնում սպիտակին է անում՝ բարձրանալով այդ ձորակից:

Բլուրից հեռու այն քարափը, որտեղ Մակիչը հանդիպեց դիրքապահին:

Նույն տեղը երկու դիրքապահներ են: Յուրտ է, հենվել են քարին, պաշտպանվելով լուսադեմի ցրտից:

30 Կամուրջը շանգի մեջ: Սպիտակ ձիավորներն անցնում են կամուրջով: Կուռոն անցել է կամուրջը և ձին պահած դիտում է ձիավորների անցնելը: Ձեռքով նշան է անում, որ արագացնեն

երթը: Երեք ձիավոր մտնում են գետը, բայց և իսկույն ետ են դառնում, որովհետև վտանգավոր է գետով անցնելը:

Գիրքապահ կոմունարներին մեկը նկատում է շանգը, որի առաջին քուլաները երևացին գետի վրա՝ ձորում, լանջի վրա և նույնիսկ լեռան գագաթին:

Չանգը գալիս է՝ սև, սպիտակ շերտերով, ինչպես ծանր ծուխ, ինչպես շարժվող պարիսպ:

— Արա, շանգը... պահ...

— Ձյուն պիտի գա,— ասում է երկրորդ կոմունարը՝ տեղն ավելի տաքացնելով:

10

Չանգի մեջ ձիավորները դադար առան:

Մի մասը դեռևս անցնում է կամրջով:

Գնդապետը մի խմբապետի նշանով հասկացնում է, որ առաջ անցնի:

Խմբապետն առանձնանում է՝ նրա հետ 8—10 ձիավոր: Գնդապետը ձիավորներից մեկին, որի ձին սև է և նշմարվում է ամպի մեջ, հետ է կանչում, և նրան փոխարինում է սպիտակ ձիավորով:

Ձիավորների հետախույզ տասնյակն առաջ անցավ...

Նրանք դուրս եկան շանգից:

20

Արդեն պարզ նշմարելի են: Բայց իրենք ևս զգացին այդ և հետ դարձան:

Չանգը սողում է, երբեմն ձորի քամու հետ ամպն ավելի արագ է շարժվում, և ամպի առաջին ալիքների հետ անաղմուկ գալիս են սպիտակ ձիավորները:

## 7

Չորս կարմիր բանակայիններ նայում են շանգին:

— Вот черт...— ասում է մեկը:

— А красиво,— հիանում է երկրորդը, և նրանք շարունակում են առաջ քայլել:

30

## 8

Չանգի մեջ արշավող ձիերի հետքից քար է գլորվում ձորը:

Գիրքապահ կոմունարները զգաստանում են:

579

Զիավորները կանգնել՝ լսում են քարի աղմուկը:  
Կոմունար դիրքապահը ձայն է տալիս.

— Ո՞վ ես...

Չանգի միջից պատասխանում են՝

— Մենք ենք...

— Դուք ո՞վ եք...

— Հայ ենք:

— Ստի հե՞րը, թե դուք հայ եք... — և կրակում է:

Կրակում է նրա ընկերը:

10

Զիավորները շեն պատասխանում, այլ առաջանում են:  
Խմբապետը ձիուց իջնում է, ձիուց իջնում են ուրիշ երեք  
հոգի: Նրանք սողում են և անակնկալ՝ թիկունքից դաշույններով  
թրատում են նրանց:

Չանգի մեջ լսվում է հուսահատ ձի:

Ամպը ծածկում է ամեն ինչ: Զիավորները ամպի մեջ ձի են  
նստում:

9

— Մակիչ, շանգը, — բղավում է Պուլանը:

Մակիչը վեր է թռնում:

20

Ամպը մոտ է: Ամպի միջից լսվում է նոր կրակոց:

Մի դիրքապահ դուրս է վազում ամպի միջից, բղավելով՝

— Գալիս են...

Մակիչն արձագանքում է:

— Չորը պահեք...

Բարձրանում են բլուրները:

Կոմունարներից մեկը վազում է դեպի գնդի շտաբը:

10

Սպիտակ խմբապետի և Կուռոյի դեմքերը:

30 Սպիտակ ձիավորները փորձում են անցնել ձորակով: Բլու-  
րի գագաթից Կարազինը բաց է անում գնդացիքը: Զիավորների  
առաջապահը հետ է նահանջում:

Բլուրի գագաթին մի խումբ կոմունարներ: Մակիչը դիրք է  
մտել քարի ետև: Նշան է անում՝ գնդացիքը լռում է:

Սպասում են:

Քամին հանկարծ ճեղքում է ամպը...

Լեռնալանջով արշավում են սպիտակ ձիավորները:

Ամպը նորից է ծածկում ամեն ինչ:

Դեպի բլուրն է տեղում գնդակների տարափը:

Սպիտակները սողում են: Երևում են դեմքեր, մեկը արդեն դեն է նետել սպիտակ փաթեթոցը և դաշույնը բերանով բռնած, շորեքթաթ սողում է:

Մի կոմունար դարան է մտել. կրակեց նրա ճակատին, դաշույնով թշնամին գլորվեց:

10

— Պինդ կացեք...

## 11

Չանգը հետզհետե անցնում է:

Այն ձիավորները, որոնք լեռնալանջով անցան, ճեղքել են կոմունարների և 151-րդ գնդի ճակատը: Նրանց մի մասը կրավում է գրավելու բլուրը, որտեղ կոմունարներն են, իսկ մյուս մասը հետ է սեղմել 151-րդ գնդին:

Մակիչը դիմադրում է:

Սպիտակներից մեկը հանդգնությամբ մոտեցավ և այն քարափի վրա, որտեղ թաքնված էր Կարագինը, ձեռնառումք նետեց:

20

Գնդացիքը լռեց: Փոշի է, ամպ է: Մակիչը իրեն նետում է դեպի այն կողմը:

Փոշու միջից գնդացիքը նորից է բացվում: Կարագինի ճակատը արյունել է, բայց շարունակում է կրակել դեպի ձորը, դեպի ձորով համառությամբ եկող ձիավորները:

Ահա նրանք բարձրանում են բլուրով:

Լեռնն իրեն նետեց առաջ՝ կրակում է:

Լեռնն է, Մակիչը, Պուղանը...

Կրակելով բարձրանում են դեպի բլուրի գագաթը:

30

Նրանց նկատեցին: Նրանց վրա տեղում է գնդակների տարափ:

Լեռնն ընկավ: Մակիչը շալակում է Լեռնին, մինչև անգամ երկու քայլ հետ է դառնում, վերցնում է Լեռնի հրացանը:

Մոտենում են նոր կոմունարներ...

581

Չանգը հետզհետե բացվում է:

— Կրակ,— որոտում է գնդի հրամանատար Բունչուժնու  
ձայնը:

Պայթում է առաջին արկը:

Լսվում է մի ահարկու շառաշ:

Կոմունարները գրոհում են:

Խմբապետներից մեկը դարան է մտել: Մակիչն իջնում է  
բլուրից, իջնում են կոմունարները, ինչպես պղտոր հեղեղ:

Դարան մտած խմբապետը կրակեց:

10 Մակիչն ընկավ, և ընկնելով ձեռքով նշան է անսամ հար-  
ձակման:

Գրոհում են.

— Մակիչ,— կանչում է Պուղանը:

Մակիչն ուզում է վեր կենալ, թևերը շարժում է այնպես,  
կարծես թևերը կապկպած են պարանոզի, և ճիգ է անում կտրա-  
տի մահվան կապերը:

Մակիչը մեռնում է:

Երկրորդ անգամ որոտում է 84-րդ բրիգադի հրետանին:

20 Փշրվում է կամուրջը՝ այն ժամանակ, երբ սպիտակ ձիա-  
վորների մի խումբ փախչում էր կամրջով:

Այլևս շանգ չկա:

Գետի այս ափին են մնացել գնդապետ Կուռոն, նրա օգ-  
նականները: Կուռոն հետ է նայում:

Լեռներից դեպի ձորն են իջնում կոմունարները: Իջնում են  
կարմիր բանակայինները:

Մի խմբապետ մտավ գետը: Ձին և ձիավորը սուզվեցին  
ջրի մեջ:

## 12

Լուսաբաց է:

30 Տաթևում պատրաստվում են փախչելու: Փախչում են:

Ձիեր, ձիավորներ, մինչև անգամ մինիստրներ:

Իսկ վանքի ներսը կատարվում է ահավոր ավերածություն:  
Վանքը կողոպտում են: Մի մաուզերիստ փշրում է ոսկե ջահը,  
մեկը շուրջառնները լցնում է խուրջինի մեջ, երրորդը թրի  
հարվածով ճեղքում է վարագույրը, ապա վազում է դեպի ձին:

Դուան մոտ, ձեռքերը սյունին հենած, սարսափահար կանգնել է ժերուների վանահայրը: Կարծես «բարբարոս անօրեններ» են, որոնք կողոպտում են վանքի հարստությունը:

— Իմ ձին, իմ ձին,— Գեղեոն վարժապետն իրեն կորցրել է: Նստում է մի նիհար ձի, նստում է վարժապետի նման, և նստելու ժամանակ վայր են ընկնում ակնոցները, մի ձիու սմբակ փշրում է նրա ակնոցները, և ժամանակ չկա ոչինչ ասելու, որովհետև ահա նորից ահռելի աղմուկով որոտաց թնդանոթը՝ մոտիկ, բոլորովին մոտիկ, այնպես որ սրտից դողողացին վանքի շահերը: 10

### 13

Կուռոն դիմադրում է:

Այլևս անմիտ է դիմադրելը, բայց և անհնար է գետով անցնելը: Մեկն իջնում է ձիուց՝ իրեն գցում գետը, ջրապտույտը կլանում է նրան:

Կուռոն տատանվում է:

Այդ վայրկյանին Պուղանը գնդակի նման առաջ է վազում առանց ահի, առանց երկյուղի, հանում է ատրճանակը: Կրակում է:

Գնդապետ Կուռոն կախվեց ձիուց: Ձին ընկավ գետը: Ձին 20 ու ձիավորը կուլ գնացին գետին:

Տաթևի դարպասներից դուրս եկավ «սպարապետը»: Փախչում է:

Դեպի կամուրջն են վազում կոմունարները:

Նրանցից մի քանիսը գերանների վրայով անցնում են մյուս ափը:

151-րդ գնդի հրամանատար Բունչուժին հեռադիտակով նայում է Տաթևի վանքին և քարափներին:

Վերջին արկը պայթում է քարափների վրա, հենց պարսպի ներքևը: 30

Խավարում:

Արևոտ Զանգեզուրը:

Ինչ-որ շատ հեռվից լսվում է մեղմ հորովելը:

Որտանի ձորը, գետի սպիտակ փրփուրները:

Եվ գրոհում էին անեղ էսկադրոնները...

Լեռան ետևից երևում է կարմիր հեծելազորի շղթան...

Նժույգները ծառս են լինում:

Ձոր է՝ երկու կողմը ուղղաձիգ ժայռեր: Կարմիր հեծելազորը գնում է ձորով: Ձուր չկա. ծարավ են հեծվորները, ծարավ են

10 ձիերը:

Ձորում երևաց մի տղա: Ժայռի գագաթից դեպի ձորն են նայում այժմերը:

Հեծվորներից մեկը հարցնում է.

— Мальчик, где здесь вода?...

Տղան ուուսերեն չգիտե և նույնիսկ վախենում է՝ չհասկանալով նրա հարցը: Բայց և հետաքրքրությունով նայում է: Հարցնողը ձեռքով նշան է անում, թե ծարավ է: Նրանցից մեկը հայերեն ասում է.

— Ձուր չկա...

20

Տղան ցույց է տալիս «նովը», որ ժայռից ժայռ է անցնում:

Հեծվորը տղային հասկացնում է, թե իրենք չեն կարող բարձրանալ ժայռի գլուխը, և բացի այդ ծարավ են ձիերը: Տղան գլխի է ընկնում: Նովի տակ ինչ-որ փորում է: Հեծվորները զարմացած նայում են, ենթադրելով, որ տղան գետնից ջուր պիտի հանի: Ապա տղան մազլցում է ժայռով, սողում է նովի վրայով և քարը կոխում է նովի մեջ, վարար ջուրը շառաչով թափվում է այն փոսի մեջ, որ նախօրոք պատրաստել է տղան:

Ձիերը մոտենում են ջրի վրա: Հեծվորները զարմացած հիացած են, իսկ տղան նովի գլխից նայում է ներքև:

30

Քայլում էր 4-րդ հայկական հրացանաձիգը...

Բիշանագի լեռները...

Խճուղին: Մի գյուղացի սայլը բարձած, կանգնել է: Նահանջող թշնամին հենց նոր արձակեց նրա եզները և տարավ:

Գյուղացին շվարած կանգնել է:

Լեռնային կիրճով Զանգեզուր է մտնում հայկական 4-րդ հրացանաձիգ գունդը: Գալիս են փողերի նվագով, ծնծղաներով:

Գյուղացու ահը դառնում է զարմանք, զարմանքը ուրախություն, և նա ձեռքերը լայն պարզած, կանգնել է ճանապարհի եզրին: Գունդն անցնում է: Անցնում է սալլաշարքը: Բանակայիններից մեկը հարցնում է գյուղացուն:

— Եղներդ ո՞ր են...

— Տարան...

Բանակայինը նրա սալը կապում է զինվորական սալա- 10  
կից:

Լսվում է նույն երգը: Զանգեզուրի պարտիզանների երգը: Բացվում է այն դաշտը, որտեղ Չետանց Վանեսը վար էր անում: Գուժանը, որ խափան մնացել էր, ահա լծում են:

Նույն մարդիկն են, նույն եղները:

Գուժանը խրված մնացել է հողի մեջ:

Հնչում է նույն երգը: Զանգեզուրի պարտիզանների երգը:

Արշավում էին Զանգեզուրի պարտիզանները...

Քարահունջի թունելը. թունելի միջից դուրս են գալիս պարտիզանները՝ երգով, նվագով... Քայլում են հնչեցնելով հաղթու- 20  
թյան երգը:

Չետանց Վանես ապերը ձեռքը դրել է ճակատին: Գուժանն արդեն լծել են, բայց գուժանավարը նայում է կոմունարների զորամասին: Այնտեղից նկատեցին: Պուղանը կանչում է՝

— Եհե՛հե՛յ... — և ձեռքով է անում:

Չորերը զրնգում են նրա կանչից: Վանես ապերը ժպտում է գոհ և ուրախ, ապա բռնում է մաճը:

Պարտիզանները հեռանում են, հեռանում է նրանց երգը և հանկարծ թնդում է հորովելը, և ձորերը, լեռները ուրախ արձագանքում են աշխատանքի երգին... 30

Վերջ

## ԶԱՆԳԵԶՈՒՐ

(Մակիչ)

Համառոտ լիբրետտո եռխերզանբով  
և յոթ մասով:

ՆԱԽԵՐԳԱՆՔ

1919 թվի ձմեռը: Բուք է, Զանգեզուրում ձյունամրրիկ է:

10 Խնջույք է Գորիսում: «Սպարապետը», կապիտան Կուռոն, սպաներ, դաշնակ գործիչներ՝ խմում, զվարճանում են, ինչպես նրանք էին զվարճանում՝ վայրագ աղմուկով: Այդտեղ է ասում սպարապետը իր հայտնի խոսքը բուլլեիկների մասին՝ «Քող գան, թող շուտ գան, շատ գան...»: Բրիտանական միսիայի մայրը Նիրբոնը հավաստիացնում է, որ Զանգեզուրը պատկանում է Հայաստանին (նույն միսիայի մի այլ մայրը նույն բառերով հավաստիացրել էր, որ Զանգեզուրը պատկանում է Ադրբեյջանին):

20 Խնջույքին ներկա է Սմբատ Խոջաբաղունցը, քաղաքի պարետը և բանտի պետը կամ, ինչպես ինքն էր ասում՝ Սմբատ կոմենդանտ Զանգեզուրսկի: Մայրի խոսքի ազդեցության տակ (իսկ մայրը «սպարապետին» առանձնապես ակնարկել էր, որ բուլլեիկները իրական վտանգ են Հայաստանի անկախության համար),— նաև «սպարապետի» բաժակաճառից ոգեվորված (նաև խայթված ինքնասիրությունից, որ Սուսաննան՝ խնջույքի ժամանակ լինում է պարուշիկ Ամիրջանովի հետ),— Սմբատը հարբած, կատաղած իրեն դուրս է քշում փողոց:

Գնում է ձյունամրրիկի միջով: Նրա ետևից մի մարդ, նը-  
րանից թաքնվելով Սմբատին ասում է «դահիճ»: Զանգեզուրի  
պարետը, որ և բանտի պետն է, ցուրտ սառնամանիքին մտնում  
է բանտը: Նա որոշել է դատաստան անել բանտարկված բու-  
շեիկների գլխին՝ վայրենի ակտ, որ հատուկ էր խմբապետին:

Եվ սկսվում է ակտը, զարհուրելի տեսարանը:  
Բուշեիկները կամերայում դիմադրում են (նրանց դռանը  
պահակ կանգնած զինվորն իմաց է տալիս Սմբատի մտադրու-  
թյան մասին): Սմբատը հարձակվում է: Սմբատի կատաղու-  
թյունը հետզհետե հասնում է ահռելի շափերի, մինչ այն առ-  
տիճան, որ թվում է, թե խելագարվել է:

10

Դռան արանքից Սմբատը կրակում է և սպանում մի երի-  
տասարդ բուշեիկի:

Նույն ձյունամրրիկն է: Լուսացել է: «Ազատ Սյունիքի»  
գիվանն է: Կուռոն է, պարուշիկ Ամիրջանովը: Սմբատը և ուրիշ-  
ները: Ներս է մտնում մի ծերունի՝ Աթա ապերը, բարձրահա-  
սակ մի զանգեզուրցի: Նա եկել է գիշերը բանտում սպանված  
որդու դիակը տանի, նա և միամիտ է, և անհողողող, և բաց  
խոսող, — միևնույն ժամանակ դաշնակները նրա համար «օ-  
րենք» են, այսինքն կառավարութուն են, որի հանդեպ նա ունի  
ակամա հարգանք: Ի զարմանս ծերունու, «օրենքը» որդու դիակը  
չի տալիս: Ծերունին համառում է և վերջն ասում է.

20

— Էդ ինչ օրենք է, որ մի դիակից վախենում է...

Այդ հանդուգն խոսքի համար Սմբատը նրան «պատաս-  
խանում է» ասպտակով: Ծերունին դարձյալ անհողողող վեր-  
ջացնում է խոսքը:

— Նա իմ փոքր որդին էր... Ես ուրիշ որդիներ էլ ունեմ:  
Ինձ այսպես պատասխանեցիք, հապա նրանց ի՞նչ պիտի պա-  
տասխանեք: Նրանց էլ սպանեցիք, բա ժողովրդին ի՞նչ պիտի  
պատասխանեք...

30

## Ա. Մ Ա Ս

Բացվում է գարունը, 1920 թ. դարունը:

Զանգեզուրն է՝ իր չքնաղ ձորերով, բարձր լեռներով: Զան-  
գեզուրի պեյզաժը՝ խորունկ ձորից մինչև լեռան կատարը, որ-  
տեղ դեռևս ձյուն կա:

587

Աթա ապերը վար է անում: Նրա հետ վար է անում որդին՝ Մակիշը: Զվարթ են, թվում է, ոչ կոխվ կա, ոչ դաշնակներ կան: Բայց «Հորովելի» ձայների միջից հետզհետե լսվում է ուրիշ կանչ՝ գզիրի ձայնը— զորահավաք է, մեկը այն անվերջ զորահավաքներից, երբ իբր թե «օխտը» օրով, իրենց «հացով և ջրով» զանգեզուրցին պիտի գնար դիրքերը՝ թուրքերի դեմ,— բայց «օխտը» օրը դառնում էր ամիս և ավելի:

Գյուղում Կուռոյի ձիավորներն են, նաև պարուչիկ Ամիրջանովը: Զորահավաքի հետ միասին հրաման կա կալանավորել 10 մի քանի բոլշևիկների, առհասարակ «հակահառավարական» տարրը: Մարգարը՝ մի երիտասարդ, գյուղի բոլշևիկյան ընդհատակյա քարտուղարը, դիմադրում է, երբ նրան ուզում են բանտարկել, և կարողանում է մի հնարով փախչել դաշնակների ձեռքից:

Հավաքվում են գյուղի հրապարակում նրանք, որոնք գնալու են դիրքերը: Լուռ են, մռայլ են, բայց թվում է, թե գնում են սովորական պարտականության: Նրանց վրա գալիս է մուսավաթի բանակը, և նրանք գնում են պաշտպանեն իրենց: Հրասպարակում՝ դժուր զուռնա կա... Պուղանը՝ սրախոս ու սրամիտ մի 20 զինվոր, Աթա ապոր մյուս որդին, ծաղրածություններ է անում, դառնությունից զվարճացնում է ընկերների, միևնույն ժամանակ խոսքով, պարով ծաղրում է այն խավը, որից դժգոհ են զինվորները՝ վաշտապետին, կուլակին, վարժապետին... Պարում է ինքը՝ Պուղանը: Նա այլևս միմոս չէ, այլ դժգոհ է, շատ բան հասկացող երիտասարդ, որը այնուամենայնիվ ելք չի տեսնում ստեղծված դրությունից դուրս գալու:

Հենց այն ժամանակ, երբ նա պարում էր, հրապարակ են մտնում Կուռոյի ձիավորները, որոնք կալանավորել են Մակիշին վար անելիս: Զվարճությունը կորչում է. հետզհետե սաստկանում է դժգոհությունը, մանավանդ, երբ լսում են, որ Մակիշին ուզում են տանել Տաթև: Զինվորները բորբոքվում են. «Տվեք Մակիշին»: Նրանցից մեկն ասում է. «Թե պիտի տանենք սպանեք, լավն էն է գա մեզ հետ դիրքերը սպանվի, մի բան, որ էնտեղ էլ են սպանում...»: Պարուչիկ Ամիրջանովը զգալով, որ ավելորդ է դիմադրել այդքան բազմության, զիջում է նրանց,

կեղծ հայտարարելով, թե ուզում էր փորձել նրանց ընկերասիրությունը:

Զինվորները գնում են գիրքերը: Նրանք իրենց հետ տանում են Մակիչին:

Գնում են՝ բայց Ամիրջանովը մտքում որոշել է դիրքերում Մակիչի գլուխն ուտել. այնտեղ ո՞ւր նա պիտի փախչի,— առաջները մուսավաթն է, թուրքերը,— ետևն իրենք դաշնակները: Ո՞ւր պիտի փախչի Մակիչը, միայն հարկավոր է նրան գյուղից հանել...

Մակիչն էլ գիտի այդ, բայց նա հանկարծակիի եկավ: Բանն այն է, որ վարատեղից նա ևս կփախչեր, ինչպես դաշնակների ձեռքից փախավ Մարգարը,— բայց նախ զորահավաքի և բանտարկության լուրը նա ստացավ հենց այն ժամանակ, երբ Կուռոյի ձիավորները նրան արդեն նկատել էին (Մակիչի քույրը՝ Սոնան չէր կարողացել ավելի արագ հասնել վար անողներին), և ապա Մակիչը գյուղական այն երիտասարդներից է, որոնք փախուստն առհասարակ համարում էին իրենց «նամուսին անընդունակ»:

Եվ շատ տխուր զինվորները բարձրանում էին լեռն ի վեր, ապա կորչում են սպիտակ մշուշի մեջ...

## Բ. Մ Ա Ս

Զինվորները գյուղից հանելուց հետո, չէր վերջանում Զանգեզուրի գյուղի տուրքը դաշնակ-մուսավաթի պատերազմին:

Հավաքում են հաց և մսացու՝ զորքի համար:

Եվ ինչպես զորահավաքի ժամանակ էր՝ Ֆրոնտ քշում էին չարքաշ ընտանիքների զավակներին, իսկ «ուժ ունեցողների» որդիները մնում էին շտաբում, գյուղի հիմնարկներում և վերջապես պահակային ծառայության մեջ,— այնպես էլ հաց և մսացու հավաքելիս հավասար «թավջի» էին անում՝ տունը երկու փութ հաց և մի մսացու: Տուն կար, որ տալիս էր վերջին ոչխարը, տուն էլ կար, որ հոտից տալիս էր մի ոչխար: Մեկը վերջին բուռ սերմացուն էր տալիս, մյուսը բաց էր անում հորի բերանը և չափում էր երկու փութ ցորենը:

Բայց դեռևս այդ վերջին պատուհասը չէր: Գյուղում մնացողները իրենց ձիերով, ումանք նույնիսկ մեջքով պարտավոր էին դիրքերը հասցնել մասցուն, հացը, ուղմամթիւքը:

Սվ ահա դիրքերն են բերել այն, ինչ որ գյուղացիները հավաքել են: Դիրքերն են եկել Աթա ապերը՝ Մակիչի հայրը, և ուրիշ գյուղացիներ՝ ծերունի, շարքաշ մարդիկ, որոնց կտրել են վարից, ցանքից: Դիրքերում Աթա ապերը իր որդուն՝ Մակիչին է հանձնում մի գաղտնի թուղթ, որ տվել է Մարգարը:

10 Բանն այն է, որ փախչելուց հետո Մարգարը մասնակցել է բոլշևիկների Զանգեզուրի կոմիտեի գաղտնի նիստին, որտեղ քննել են այն հարցը, թե հարկավո՞ր է ապստամբել և երբ, քանի որ լուրեր կան թե իբր կարմիր բանակը մտել է Բաքու: Զանգեզուրը կտրված էր աշխարհից, և նրանք որոշում են Մարգարին մի կերպ սուրհանդակ ուղարկել, որ անցնի սահմանը և ստույգ լուր բերի: Նաև որոշում են ընդունել, որ հարկավոր է Ֆրոնտը լքել և կազմակերպվել՝ հնարավոր ապստամբության համար:

Սակայն կարևորն այդ թուղթը չէ, որը Մակիչը չի էլ կարողանում կարդալ, որովհետև դեպքերն ավելի արագ են զարգանում, քան նա կարող էր ընթերցել նամակը:

20 Երբ զինվորները լսում են, որ իրենց գյուղացիները եկել են գյուղից՝ գնում են դեպի շտաբը նրանց տեսնելու: Իսկ շտաբի առաջ կատարվում է հետևյալը.

Պարուչիկ Ամիրջանովը օգտվելով այն հանգամանքից, որ գյուղացիների մի մասը բեռները ձիերով է բերել, հրամայում է հանձնել նաև ձիերը՝ զինվորական պետքերի համար: Գյուղացիներն ընդդիմանում են՝ աղերսելով և անկազմակերպ, ինչպես «մեծավորին» կարող էին ընդդիմանալ հին գյուղացիները: Ամիրջանովը բարկանում է և նրանցից երկուսի ձեռքը քլունգ տալով, կարգադրում է փորել «գերեզման»: Գյուղացիները սկսում են փորել, և նրանցից մեկը նոր է գլխի ընկնում, թե ինչ է փորում: Բայց հենց այդ ժամանակ գալիս են Մակիչը, նրա եղբայր Պուղանը, մի քանի ուրիշ զինվորներ: Գալիս են, և երբ գլխի են ընկնում, թե բանն ինչումն է, Պուղանը հանաքի տալով փորձում է մեղմել և՛ Ամիրջանովի զայրույթը, և՛ լարված վիճակը: Ամիրջանովին խայթում է Պուղանի միամիտ

խոսքը, ինչպես և նրանց ներկայութիւնը: Հրամայում է ետ վերադառնալ: Պուղանը դեռ բերանը բաց շարած՝ Ամիրջանովը կրակում է, սպանում է Պուղանին:

Այդպես պայթում է առաջին ընդհարումը հենց դիրքերում, Մարքիզի լեռան վրա: Մակիչը հարձակվում է Ամիրջանովի վրա, հարձակվում են շտաբի վրա: Ամիրջանովը վիրավոր փախուստ է տալիս դեպի ճակատի հրամանատարը, նրա հետ փախչում են նաև երկու սպա:

Վիճակն այլևս հանել են: Կամ պիտի մնան, որ ահա ուր որ է երևան Կուռոյի ձիավորները, կամ պիտի փախչեն: Մակիչը վերջին ճանապարհն է ընտրում, նրա հետ 3—4 զինվորների: «Կամ էս փոսում նրանք մեզ կթաղեն, կամ մենք նրանց»:

Գյուղացիները վերադառնում են գյուղ:

#### Գ. Մ Ա Ս

Կուռոյի ձիավորները մտել են գյուղը:

Դաշնակների հրամանատարութիւնը գիտե, որ մուսավաթի բանակն այլևս չկա, որ ուր որ է Զանգեզուրի սահմաններին շուտով կմոտենա Կարմիր բանակը: Նաև գիտե, որ զորքի մեջ, մանավանդ թիկունքում, անխուսափելի են խլրտումները, գուցե և ապստամբութիւնը: Ուստի որոշել են պատժել ամենայն խստութեամբ, ապահով թիկունք ստեղծելու և բանակը պահելու համար:

Նույն ագիտացիան է «դարավոր» թշնամու մասին: Բայց դիրքերում զինվորները ինչ-որ գլխի են, խոսում են, և համարյա բոլորն այն են ասում, թե ուստի դեմ չենք կովի: Գյուղում էլ նույնն են ասում, մինչև անգամ ունեւորները, թե ուսուները գան, ճանապարհները բացվեն, գնանք առուտուրի, մեկն ասում է՝ ճանապարհը բացվի, գնամ Բաքու հաց աշխատեմ:

Այս տրամադրութիւնը փշրելու համար վերևից լուր են տարածել, որ Զանգեզուրի վրա հարձակվողը դարձյալ թուրքերն են, միայն բոլշևիկի անվան տակ, որ գալիս են Ղաղանի թափարները, որոնք եթե Զանգեզուրը գրավեն, պիտի գլխատեն ժողովրդին:

Այդպես են ասում, բայց ավելի կատաղած հետապնդում են բուլշևիկներին:

Ահա ինքը ճակատի հրամանատարը՝ կապիտան Կուռն, կանչել է Աթա ապորը և նրան ստիպում է ասել, թե ուր է Մակիչը, ստիպում է Մակիչին գտնել և բերել: Գյուղը ահի մեջ է: Մերունին ճարահատյալ համաձայնվում է, որ գնա բերի, որովհետև սպառնում են տունը վառել, ինչպես արդեն վառել են մի քանիսի տները և գյուղում սկսել են հալածանքը:

10 Իր աղջկա՝ Սոնայի հետ հայրը գնում է խուլ ձորերով, գրնում է Մակիչին գտնի: Գնում է նրան ասի, որ փոխի թաքստի տեղը, որովհետև նրա ականջն է ընկել, թե գյուղում Մակիչի տեղն իմացել են:

Մակիչն ընկերների հետ թաքնվել է խոր ձորում: Նրանք տատանվում են. ինչ անել: Այրում են նրանց տները, լուր են առել, թե հարազատներին բանտարկել են և իբր թե պիտի տանեն Տաթև: Մեկն ուզում է ետ վերադառնալ և անձնատուր լինել: Մակիչը խրախուսում է: Վերջապես Մակիչը վճռում է ինքը օրը ցերեկով մտնել գյուղը, որ շրջապատված է Կուռոյի ձիավորներիով և իմանալ, թե ի՞նչ կա գյուղում: Նա այդպես է վարվում, որովհետև վախենում է, որ ընկերներից կգնան և ոչ միայն այլևս չեն վերադառնա, այլև շղիմանալով դաշնակների տանջանքներին, գուցե մատնեն իրենց տեղը:

20 Ծանապարհին հանդիպում են հայրը, որդին և Սոնան: Աթա ապերը Մակիչին չի թողնում գյուղը մտնեն, նա պահանջում է, որ թաքնվածներն իրենց տեղը փոխեն: Նա մինչև անգամ որդուց թաքցնում է, որ իրենից Կուռոն պահանջել է Մակիչի տեղը: Մակիչը կասկածում է հոր խոսքին, ավելի ճիշտ, սիրտն ինչ-որ նախազգում է, բայց լսում է հորը: Նրանք հրածեշտ են տալիս: Աթա ապերը զգում է, որ վերջին անգամ է 30 տեսնում որդուն:

Կուռոն ուրախանում է, երբ զալիս է Աթա ապերը: «Գտա՞ր»,— հարցնում է: «Գտա»,— ասում է: «Ինչ ասացի՞ր»: «Ասացի, որ դու իմ տղան չես լինի, եթե էս շների վերջը չտաս...»: Կուռոն նրան պատշգամբից ցած է գլորում:

Սոնան տեղյակ չէ: Նա աղբյուրն էր գնացել, և հանկարծ աղբյուրի ճանապարհին նրա առաջն է դուրս գալիս Մարգարը: Նա վերադարձել է: «Ո՞ր է Մակիչը»,—հարցնում է Մարգարը:

Մարգարը գնում է Մակիչին տեսնելու: Մակիչը հորից լսած լինելով, որ գյուղում իմացել են իրենց տեղը և կարող է որ գտնեն, ընկերներին ուրիշ տեղ է ուղարկել, իսկ ինքը մենակ մնացել է քարանձավում, որովհետև ինքը կարող է փախչել: Լուսնյակ է, ներսը կիսամութ է: Մակիչը հոգնած ննջում է, և հանկարծ աչքին երևում է մի զինված ստվեր: Վախից և կատազությունից ենթադրելով, որ արդեն եկել են իրեն բռնեն, Մակիչը կրակում է: Ստվերը վայր է ընկնում, կանչելով «Մակիչ... Մարգարն է»: Բարեբախտաբար գնդակը նրան չի կպել, այլ դիպել է քարանձավի առաստաղին, քարերի փշրանքները քերծել են Մարգարի երեսը:

Մարգարը նրան պատմում է, որ մոտ է Կարմիր բանակը, և հարկավոր է միանալ նրան:

#### Գ. Մ Ա Ս

Տաթևի վանքը դաշնակիների բերդն է: Այնտեղ դիմադրության պատրաստություն են տեսնում: Նրանց շտաբն է: Թե ի՞նչ պիտի անեն, այդ դեռ չի երևում,— բայց նրանք արդեն սկսել են բանտարկված բոլշևիկների շարդը:

Գիշեր է: Տաթևի մոայլ ժայռերը: Զնդանում նստած են ոչ միայն բոլշևիկներ, այլև սոսկական գյուղացիներ: Մի թուրք գյուղացի հարցնում է՝ թե, ասինք լավ, ինքը թուրք է, իբրև այդպիսին, իրեն սպանում են, հապա հայերը հայերին ինչո՞ւ են սպանում: Գարեգինը, որ դեռևս նախերգանքում կազմակերպել էր կամերի դիմադրությունը Սմբատ Խոջաբաղունցին, թուրքին բացատրում է, թե ովքեր են «նոր հայերը»՝ բոլշևիկները: Հետըզհետ թուրքը հասկանում է, և նրան մահն այլևս սարսափելի չէ:

Հանում են բանտից: Նրանց պիտի գլորեն ժայռից: Այդ գործի կառավարողը հենց նույն Սմբատ Խոջաբաղունցն է, բայց իհարկե, «սպարապետի» հրամանով: Բերում են առաջին բոլշե-

վիկին, մտտեցնում են ժայռին և գնդակահարում, զլորում են: Երբ երկրորդին են բերում,—նա դուրս է պրծնում և իրեն գցում է ժայռից ցած, շթողնելով որ խփեն: Երրորդը՝ Գարեգինը հանկարծ իրեն գցում է ցած, բայց հետը տանում է Սմբատին:

Աղմուկ, իրարանցում, թմբուկների ձայն: Հեռացնում են զինվորներին, որովհետև նրանք ակնհայտ դժգոհ են: Մեկը բարձրաձայն ասում է. «Հայը հա՞յ կսպանի...»:

Գիշեր է, լիալուսին:

Մակիչը, Մարգարը, 7—8 թաքնվածներ գնում են: Նրանց տեղն իմացել են: Նրանց հետապնդում են: Լուսադեմին նրանք անցնում են դաշտով: Ինչ-որ հովիվ ոչխարը դուրս է բերել արոտ: Հովիվը նրանց ասում է. «Մ՛ւր եք գնում... Գնում եք թուրքսնաք, հա՞... Բա մարդը կփախչի՞՝ իր հայրենի հողից...»: Հովիվը տխուր նվագում է:

Նրանք հասել են Հաքարու գետին: Ոչ կամուրջ կա, ոչ անցնելու հնար: Վարար, ահարկու գալիս է գետը պղտոր հեղեղի նման, բերանն առած ահագին ծառեր, որ ո՞վ գիտե որ անտառից արմատով հանել է:

Շվարել են, թվում է, թե չեն անցնի, և ահա ուր որ է նրանց հեռքերով կգտնեն: Բայց Մակիչը այժեմազ պարանը կապում է մեջքից, երկար ծայրը տալիս է նրանց: 7—8 հոգին բռնում են պարանը և մտնում են գետը: Մակիչը լողում է և նրանց քաշում:

Ահա նրանք Կարմիր բանակում են: Զարմացել են, ուրախացել են: Երևում է, որ Մարգարին այնտեղ ճանաչում են: Հայեր կան, ոռուներ են: Մակիչը փորձում է նրանց հետ ոռուներին խոսել:

11-րդ բանակի 151-րդ գունդը Մակիչին ուղարկում է հետախուզության: Նրանք գալիս են, անցնում են զիրքերը, հրաշքի նման հայտնվում են իրենց գյուղի մոտերքը, տեսնում են ծանոթ գյուղացիներին, նրանցից մեկին նույնիսկ թուուցիկների կապը տալիս են, ասելով, որ «Բաքվից նամակներ են», հարկավոր է գյուղացիներին բաժանել:

Կարմիր բանակը պատրաստվում է հարձակման:

Մակիչն ունի իր «զորամասը»: Նրանք նույնիսկ ձիեր են ստանում:

151-րդ գունդը հարձակվում է:

Դաշնակների ձիավորները (վաշտապետ ներսեսի հարյուր-  
յակը) մերոնց հանկարծակիի բերելով հետ է շարտում: Մեր աչ  
թևը նահանջում է: Հասնում է հրետանին: Մակիչը նկատում է,  
որ թշնամու բանակում երևում են կանայք, երեխաներ՝ նրանց  
հավաքել են հենց այն դաշտի վրա, դեպի ուր պիտի կրակեն  
151-րդ գնդի թնդանոթները: Մակիչը հայտնվում է՝ իր կյանքը  
վտանգի ենթարկելով և ստուգելով նախապես, որ դաշնակները  
իրենց տեղը թաքցնելու համար են այդ արել:

10

Քայց մի ինչ-որ տեղից նրանք կրակում են: Մերոնք դժ-  
վար են կարողանում որոշել, թե որտե՞ղ են նրանք թաքնված՝  
արտերի մե՞ջ, թիների հտե՞, թե՞ մի այլ տեղ:

Մակիչը հրաման է ստանում անցնել նրանց թիկունքը:

Կարմիր բանակի մի վաշտ գրոհի դիմելով հանդիպում է  
ուժեղ դիմադրություն: Դաշնակները դիրք են մտել գերեզմա-  
նատանը, քարերի հտև և այնտեղից կրակում են հրացաննե-  
րից և գնդացիներին:

Վճռական ընդհանրություն, երբ 151-րդ գնդի մի վաշտը ահա պետք  
է նահանջի, Մակիչը ձիավորների գլուխն անցած թիկունքից  
քշում է գերեզմանատան վրա: Իրարանցում: Դաշնակներն ա-  
հարեկված փախչում են:

20

Կրնկակոխ հետևում են նրանց: Մանոթ վայրեր են: Ահա  
այստեղ նրանք վար էին անում, ահա և իրենց գյուղը: Մակիչը  
մտնում է իրենց գյուղը:

Նա նոր է իմանում հոր մահը:

Մակիչը կոմունարների զորամասի պետն է: Մարգարը  
կուսակցական կրթված կերպուցիական ղեկավարը: Քայց ղեռես  
սկզբից նրանց միջև ինչ-որ հակամարտություն կա, ավելի  
ճիշտ, Մակիչը կողմնակից է նախահարձակ լինելու, իսկ Մար-  
գարը նրան զսպում է:

30

Դեռևս գերեզմանատան գրավումի ժամանակ, Մակիչը  
կատարում է ավելին, քան հրամայված էր, ուշք չդարձնելով որ  
կարող է կտրվել հիմնական զորամասից, նա ինքնագլուխ ար-  
շավում է, խանգարելով ստրատեգիական պլանը: Նրան նույ-

նիսկ ուզում են պատժել, բայց Մարգարը պաշտպանում է: Երբեմն երկուսի միջև եղած տարաձայնությունը թվում է, թե Սոնայի պատճառով է՝ Մակիչի քրոջ, որին սիրում է Մարգարը:

10 Բայց այդ վեճը արդեն վտանգավոր չափ է ընդունում, երբ Մակիչը դառնում է կոմունարների զորամասի պետ, Մարգարը՝ քարտուղար: Մակիչն է գյուղում գործ կատարում՝ բռնագրավում, պատժում՝ երբեմն նաև անարդար, իսկ Մարգարը «խառնվում է» նրա գործերին: Մակիչի կարծիքով Մարգարը «քարտուղար» է, ուրեմն միայն թղթի հետ գործ ունի: Մի առիթով նրանք նույնիսկ գնում են կոմիսարի մոտ, որը նրանց բացատրում է, թե ամենից բարձրը կուսակցությունն է:

Մակիչը հասկանում է և դժվարությամբ է հաշտվում: Նա աշխատում է իրեն շտկել, բայց և բնազդով շատ բան է զգում: Նա գիտի, որ հարկավոր է անդադար ինչ-որ բան անել, որ հաղթանակը վերջնական լինի: Եվ հոտ է առնում, որ դաշնակներն ինչ-որ նախապատրաստություն են տեսնում իրենց ծուզակը գցելու:

20 Այդ է հաստատում նաև նրա հանդիպումը դաշնակ վարժապետի հետ և «վեճը» ֆեդերացիայի մասին և Մակիչի ճըշգրրիտ պատասխանը, թե բոլշևիկներն ինչպես են լուծելու ազգային հարցը:

## 2. Մ Ա Ս

Իսկ Տաթևում իրոք որ գաղտնի պատրաստություններ են տեսնում: «Սպարապետն» է, Կուռուն: Նրանք կազմակերպում են վերջին արշավանքը, «պատանեկրաց» վերջին արշավանքը:

30 Կոմունարները բանակի հետ միասին են: Մակիչը գյուղում բռնագրավել է հաց, միս, — բռնագրավել է ունևորներից, և նրանցից մեկը, նա, որ ուզում էր ուսանների գալը, — հիմա փոշմանած ասում է, որ «այս ուսաններն իր առաջվա տեսած ուսաներից չեն»: Մակիչը հոգում է բանակի պետքերը:

Իսկ բանակը լեռներում է: Հայ պարտիզաններ, հայ և ռուս կարմիր բանակայիններ վրան են զարկել, լեռներ: Խաղաղ հրեկո է: Կարմիր բանակային մեկը դժգոհում է, թե իրենց ինչ գործն էր գալ Զանգեզուր, և ինչ կա Զանգեզուրում՝ լեռներ, ձո-

րեք և ոչ մի հարթ դաշտ: Մի ուրիշ բանակային՝ ավելի տարի-  
քով, հանդիմանում է նրան և բացատրում է, թե ինչու պիտի  
Ջանգեզուրն ազատելու համար օգնել հայերին:

Մակիչը տեղեկանում է, որ դաշնակների հետախույզը եղել  
է կոմունարների դիրքերում, նա համոզում է գնդի հրամանա-  
տարին, որ դաշնակները կարող են անակնկալ հարձակվել, և  
հարկավոր է նախապատրաստվել:

Եվ իրոք, այդպես էլ լինում է: Կապիտան Կուռոյի ձիա-  
վորները գիշերային հարձակմամբ շրջապատում են մեր դիր-  
քերը: Նրանք հեռախոսային կապը կտրում են հենց այն ժամա- 10  
նակ, երբ դիրքերից 84-րդ բրիգադի հրամանատարին հայտ-  
նում են, որ դաշնակները հարձակվեցին: Եվ այլևս ոչ մի կերպ  
չեն կարողանում կապվել:

Սկսվում է վերջին կռիվը:

#### Է. Մ Ա Ս

Մակիչը գրավել է Ալշադաշի բարձունքը: Այդ մի բարձրու-  
թյուն է, որ պահում է միակ անցքը դեպի 151-րդ գնդի դիր-  
քերը:

Կուռոյի ձիավորները փորձում են անցնել, Մակիչը կանգ-  
նեցնում է նրանց: 20

Կուռոն որոշում է Ալշադաշը գրավել, Մակիչին հանել այդ  
դիրքերից, ապա նոր հարձակվել Կարմիր բանակի վրա:

Մակիչն ինքը նախահարձակման է անցնում: Կուռոն կը-  
տըրվում է իր զորքից: Նա դեմ է առել քարափին: Վճռական  
րոպեին, երբ մի կողմից Մարգարը և մյուս կողմից կոմունար-  
ները, ինչպես և մի վաշտ 151-րդ գնդից դիմադրում են Կու-  
ռոյի ձիավորներին, որոնք աշխատում են օգնության հասնել  
իրենց հրամանատարին, այդ ռոպեին Մակիչը սեղմում է օղա-  
կը, և Կուռոն չկամենալով գերի ընկնել, քարափից ձիով իրեն  
զցում է ձորը: 30

Բայց նրա ձիավորները ճեղքում են շղթան: Մարգարը վի-  
րավորվում է, մի քանիսը սպանվում են: Մակիչը հասնում է  
օգնության: Նա շալակում է վիրավոր Մարգարին և դիմադրում

է: Գիմադրում են նրա ընկերները: Հետզհետե պակասում են նրանց շարքերը:

151-րդ գունդը թնդանոթները շրջում է դեպի Կուռոյի զորամասը: Խուլ որոտում են թնդանոթները: Հարձակման են անցել: Բայց ռազմաճակատի այս անկյունում արդեն շրջապատել են Մակիչին:

10 Թվում է, թե պիտի կենդանի բռնեն նրան: Մակիչը քարի ետև մտած պաշտպանվում է: Նա օգնություն է խնդրել: Մոտենում է օգնությունը: Բայց դաշնակները համառ գալիս են: Նրանք սողում են ժայռերի արանքով, նրանք ինչ գնով լինի ուզում են Ալլադաշի բարձունքը գրավել:

Մի թույն, և ահա խփեցին Մակիչին, բայց Մակիչը ձեռնառումբը նետում է, դեռևս փոշու մեջ ոչինչ չի երևում: Դաշնակները խուճապի մեջ են, բայց հավաքում են իրենց, գրոհում են:

Մակիչը թուրը հանած առաջ է ընկնում...

Հենց այդտեղ նրան խփում են: Ալլադաշի բարձունքից դեպի դաշնակներն է գրոհում 151-րդ գունդը:

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



**Ա. ԲԱԿՈՒՆՑԻ ԵՐԿԵՐԻ ԱՅՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԱՌԱՋԻՆ ԳՐՔԵՐՈՎ),  
ՈՐՈՆՔ ՀԻՇԱՏԱԿՎԱԾ ԵՆ ԵՐՐՈՐԻ ՀԱՏՈՐՈՒՄ**

*Հովնաթան Մարչ [վիպակ]: Երևան, Պետհրատ, 1927, 87 էջ:*

*Եղբայրության ընկուզենիները [Համանուն պատմվածքը և «Կյտրես»]: Երևան, Պետհրատ, 1936, 155 էջ:*

*Երկեր: Երևան, 1955, 687 էջ:*

*Ամբողջական գործը երեք հատորով: Բեյրութ, տպ. Սևան, հտ. Բ, 1956, 196 էջ:*

*Երկեր երկու հատորով: Երևան, Հայպետհրատ, հտ. 2, 1964, 628 էջ:*

*Երկեր: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հտ. 1, 1976, 671 էջ:*

*Երկեր: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հտ. 2, 1979, 715 էջ:*

**ՀԱՏՈՐՈՒՄ ԳՈՐԾԱՆՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ**

*ԳԳ—«Գրական գիրքերում», հանդես (Երևան)*

*ԳՔ—«Գրական թերթ», լրագիր (Երևան)*

*ԵԸ—Ա. ԲԱԿՈՒՆՑ Եղբայրության ընկուզենիները (գրքույկ), Երևան, 1936:*

*ԽԳ—«Ետորհրդային գրականություն», հանդես (Երևան)*

*ՀՄ—Ա. ԲԱԿՈՒՆՑ Հովնաթան Մարչ (գրքույկ), Երևան, 1927:*

*ՄՕ—Մեքենագիր օրինակ:*

*ՆՈՒ—«Նոր ուղի», հանդես (Երևան):*

## Բ Ն Ա Գ Ր Ե Ր Ը

Ակսել Բակունցի երկերի ակադեմիական հրատարակության այս՝ 3-րդ հատորում ընդգրկված են գրողի առավել ծավալուն ստեղծագործությունները, ինչպես և այնպիսիք, որ ամբողջական վիճակում եղել են ծավալուն: Ներկայումս եղած ծավալի տեսակետից էլ հատորում ընդգրկված երկերը, բացի մեկից, ամենաընդարձակն են Բակունցի գեղարվեստական բոլոր ստեղծագործությունների մեջ: Իսկ այդ բացառությունը «Որդի որոտման» երկից պահպանված հատվածն է, որ համեմատաբար փոքր է, բայց այս հատորում է զբրվել, քանի որ ծավալուն գործի (վիպակի կամ վեպի) հատված է:

Ա. Բակունցի ամենից ավելի ընդարձակ երկերը եղել են «Կարմրաբար» և «Խաչատուր Աբովյան» վեպերը, որոնցից նույնպես պահպանված են հատվածներ (տե՛ս Մանոթագրությունների համապատասխան բաժիններում):

Հատորի մեջ տեղ գտած մյուս երեք գործերն ամբողջական են:

Այսպես. ներկա հատորում ներկայացված է վեց երկ, ինչպես և մեկ տարբերակ: Նրանցից Բակունցի ամբողջ ստեղծագործության մեջ լավագույնների շարքում են «Կարմրաբարը», «Խաչատուր Աբովյանը», «Որդի որոտմանը» և «Կյուրեւը»:

Բնագրերը ներկայացված են երեք բաժիններով՝ վեպեր և վիպակներ, Կիճորեմագիր, Այլ խմբագրում: Առաջին բաժնում գործերը դասավորված են ժամանակագրական կարգով: Պայմանական է այդ բաժնի անվան երկրորդ մասը՝ վիպակներ, քանի որ եթե «Կարմրաբարն» ու «Խաչատուր Աբովյանը» հեղինակը ստուգապես վեպ է համարել, ապա «Հովնաթան Մարչը», «Որդի որոտմանը» և «Կյուրեւը» հեղինակի որևէ նշումի մեջ վիպակ կամ վեպ չեն անվանված, և դրանք մենք ենք վիպակ համարել:

Ի տարբերություն Բակունցի երկերի այս հրատարակության նախորդ երկու հատորների, ներկա հատորում Բնագրային տարբերակներ բաժին շառանձնացրինք, քանի որ այդպիսի տարբերակներ հատորում տեղ գտած երկերից միայն երկուսը ունեն, այն էլ առանձին հատվածների տարբերակներ են: Հեղինակի կենդանության օրոք վիպակներից «Կյուրեւը» և «Հովնաթան Մարչը» տպագրվել են մեկական անգամ, «Կարմրաբար» վեպի հատվածները նույնպես մեկ անգամ են հրատարակվել՝ միայն հրատարակված մասից մի փոքր կտոր 1929 թվականին զետեղվել է մի դասագրքի մեջ, «Խաչատուր Աբովյանի» հատվածները, բացի մեկից («Իրավան Զարսու բազար») զարձալ՝ մեկ հրատարակում են ունեցել, «Ջանգեզուր» բեմագիրը բոլորովին չի հրատարակվել: Այսպիսով, հեղինակի կենդանության օրոք երկու հրատարակում ունեցել են երկու վիպերից մեկական փոքր հատվածներ: Իրանցից «Խաչատուր Աբովյան»-ի հատվածը բնագրային աղբյուրի արժեք

ունի, քանի որ հրապարակվել է հեղինակի կողմից. «Գրական թերթ», 1934, № 14, Այդ նույն հատվածի հրապարակումը «Խորհրդային գրականության» մեջ (1935, № 1) համեմատել ենք և եղած փոքր տարբերությունները նշել վեպի ծանոթագրությունների մեջ: Այդպես, հատորում բնագրային տարբերակների համար բաժին առանձնացնելու անհրաժեշտություն չզգացվեց:

«Կարմրաքար» վեպի հրապարակված մասից վերհիշյալ դասագրքի մեջ զետեղված հատվածը բնագրային աղբյուրի արժեք չունի. դասագրքի կազմողները, ըստ երևույթին, «Նոր ուղի» հանդեսում հատվածաբար հրապարակվող վեպից մի հատված ընտրել են (հանդեսի 4-րդ համարից) և իրենք կրճատումներ անելով, զետեղել դասագրքի մեջ: Այնուամենայնիվ, հանդեսում տպված հեղինակային բնագրի և դասագրքային հրապարակման միջև եղած մասնակի տարբերությունները նշված են «Կարմրաքար»-ի ծանոթագրություններում:

\* \* \*

Այս հատորում տեղ գտած երկերից որեէ մեկի հեղինակային ձեռագիրը չի պահպանվել. համեմայն ղեպս, առայժմ գտնված չէ: Պահպանված են «Ջանգղուր» բեմագրի երկու խմբագրումների մեքենագիր օրինակները, որոնք այսօր այդ երկի բնագրային աղբյուրի արժեքն ունեն: Մյուս ստեղծագործությունների բնագրային աղբյուրներն են նրանց առաջին հրապարակումները՝ կատարված հեղինակի օրոք և երբմե, հավանաբար, հեղինակի մասնակցությամբ: Ամեն ղեպքում այդ հրապարակումներն են հեղինակային կտրած ձեռագրերին կամ, եթե կարելի է ասել, հեղինակի բնագրային միտումներին առավել մոտ գտնվող նմուշները: Ըվ գիտական մի հրատարակության համար, վստահելի բնագրեր կազմելու ժամանակ, այդ հրապարակումներն են կողմնորոշող գլխավոր նշանաձողերը:

Այս հատորը կազմելիս մեր գլխավոր նպատակը դարձյալ եղել է հեղինակային նախնական բնագրերի վիճակը հնարավորին չափ ճշգրիտ ներկայացնելը: Տպագիր գրեթե բոլոր բնագրերը վրիպակաշատ են, կան լուրջ աղավաղումներ: Տպագրական և այլ կարգի անճշտություններն ու աղավաղումներն ուղղելիս՝ ջանացել ենք այնքան զգույշ լինել, որ այն, ինչ հեղինակային է, այդ թվում լեզվական, այսպես կոչված, շեղումները, պահպանվեն:

Ուղղագրական նորացումներ կատարելիս՝ նույնպես ջանացել ենք զգույշ լինել: Անշուշտ, 1922 թ. ուղղագրությունը, որով հրապարակված են Բակունցի՝ այս հատորում տեղ գտած երկերը, 1940 թ. ուղղագրության է վերածված լրիվ չափով: Սակայն ուղղագրական բազմաթիվ ձևեր, որոնք այսօր հնացած են, անկախ 1922 կամ 1940 թթ. ուղղագրական կանոններից, աշխատել ենք հնարավորին չափ պահպանել՝ որպես հեղինակային, և դրանցից ժամանակակից գրության տեսք ենք տվել այնպիսիներին, որոնք Բակունցի ժամանակ էլ ունեցել են՝ այժմ ընդունված ձևին համապատասխանող տարբերակ և կամ ինքը՝ հեղինակը մերթ այդ հնացած, մերթ այժմ ընդունված ձևերն է գործածել:

Օրինակ, այնպիսի բերականական ձևեր, ինչպիսիք են բացառական, գործիական, ներգոյական հոլովների հետ որոշիչ հոդ (ը, և) գործածելը, լրիվ չափով պահպանված են, թեև այժմ և արդեն Բակունցի ժամանակ նրանք հնացած էին. ինչպես, օրինակ՝ գյալիցն, տակվն, Գորխումն, պարտեզումն, գյուղումն, խոհանոցումն և այլն:

Ուղղագրական մի շարք ձևեր ևս, որոնք նույնպես այժմ հնացած են, պահպանել ենք, ինչպես՝ կես գիշեր, հարց ու փորձ, ես ու գեռ, վար ու ցանձ, ես իմ (այժմ՝ եսիմ), հաա ու կենտ և այլն:

Բայց շատ դեպքերում էլ ուղղակի անհնար է հեղինակային ուղղագրությունը պահպանել: Օրինակ, Բակունցը հին ձևով հաճախ գրում է՝ ձմրան, ամրան, կամ՝ դյուրեկան, դյուր եկավ: Ծիշտ կլինե՞ր այդ ձևերը պահպանել, քանի որ ժամանակին նրանք ընդունված են եղել և Բակունցի երկերում էլ հետաքրքրական կլինեին ուղղագրության պատմության տեսակետից: Բայց ինչ անենք, երբ նույն բառերը գրողը օգտագործում է նաև՝ ձմռան կամ դուրեկան ձևերով: Որոշեցինք միակերպել՝ բոլորը դարձնելով այժմ ընդունված ձևեր՝ ամռան, ձմռան, դուր եկավ և այլն:

Կամ՝ մի շարք կրկնավորների Բակունցը գործածում է մե՛րք գծիկով, մե՛րք առանց գծիկի, ինչպես՝ շուտ շուտ և շուտ-շուտ, Բան Բան և Բան-Բան և այլն: Ծիշտ շհամարեցինք այս զուգահեռությունները թողնել, իսկ միակերպել, կարծում ենք, կարելի էր միայն այժմ ընդունված ձևերին (շուտ-շուտ, պես-պես) համապատասխանեցնելով մյուսները:

Կամ ճիշտ կլինե՞ր արդյոք պահպանել այնպիսի ձևեր, ինչպիսիք են այլ և (այլև-ի իմաստով), մի և ճայն և այլն, երբ այդպիսիք ոչ միայն երբեմն զուգահեռ կցական ձևվեր ունեն հեղինակի երկերում, այլև իմաստի տեսակետից էլ կարող են շփոթության տեղիք տալ:

Առհասարակ, այս հատորի բնագրերը կազմելիս, թերև, ամենաբարդ աշխատանքը ուղղումների, իսկ էլ ավելի բարդը՝ «չուղղումների» հետ է եղել կապված:

Զգիտենք ինչու, բայց փաստ է, որ այս հատորի բնագրերը ժամանակին հատկապես վրիպակաշատ են տպագրվել: Փոքր-ինչ բավարար է «Հովնաթան Մարշ»-ի և «Գրական թերթում» տպված ոչ մեծ բնագրերի վիճակը, իսկ «Կարմրաբար» և «Նաշատուր Արթուրյան» վեպերի՝ հանգեաներում տպագրված հատվածները դարմանալիտրեն լի են սխալներով, վրիպակներով և աղավաղումներով: Նրանցից հետ չի մնում «Կյուրեսի» տպագրությունը գրքույկի մեջ: Բազմաթիվ բառեր, հատուկ անուններ, արտահայտություններ գործածված են երկու, երեք, ավելի ձևերով, և դժվար է որոշել որը ում նախասիրությունն է՝ հեղինակի՞, խմբագրի՞, թե արբագրիչի: Ամեն դեպքում, իհարկե, շանացել ենք հայտնաբերել հեղինակայինը, բայց արդյո՞ք մեզ դա միշտ կամ գոնե հաճախ է հաջողվել: Դժվար է ասել: Եվ կամ առհասարակ, արդյո՞ք մեր կատարած ուղղումները կամ թեկուզ նրանց մի մասը հիմնավոր են:

Մի գիտական հրատարակություն հարկ եղած արժեքը չի կարող ունենալ, եթե կազմողը ծանոթագրություններում չի նշում բնագրերի մեջ իր կատարած ուղղումները: Թե՛ նախորդ երկու հատորներում և թե այստեղ հանգամանորեն նշել ենք մեր կատարած ուղղումները:

Չենք նշել միայն չափազանց ակնհայտ տպագրական վրիպակների ուղղումները, ինչպես, օրինակ, եկեղևու ուղղված է եկեղեցու կամ «աղջկա սիրտ ավելի արագ բռնեց» — ուղղել ենք «աղջկա սիրտն ավելի արագ բռնեց», անձև-ը, որ ակնհայտորեն անձևի-ի իմաստով է գործածված, դարձրել ենք անձև և այլն: Այս կարգի էլ շատ վրիպակներ են ուղղված (գեռ շենք խոսում կետադրական ակնհայտ սխալներն ուղղելու

մասին): Բայց դրանք բոլորը նշելու հարկ չկար, քանի որ որևէ տարակառույց կամ տարակարծութիւն այդպիսիների վրիպակ լինելու վերաբերյալ լինել չի կարող:

Եթե ուղղումը թեկուզ ամենաշնչին չափով կարող է տարակարծութիւն հարուցել, նշել ենք: Այս պատճառով ներկա հատորում ամեն մի երկի ծանոթագրութիւնների մեջ ուղղումների ցուցակները բավական ընդարձակ են: Եվ դրանով ինչ-որ չափով մեղմվում են կազմողի հնարավոր անճիշտ մտտեցումները՝ թույլ տրված բնագրերը կազմելու ծամանակ: Այս կերպ նաև հնարավորութիւն է տրվում ամեն մի ուսումնասիրողի, ընթերցողի իմանալու, թե ուղղված այս կամ այն, մեր կարծիքով, սխալը, վրիպումը ինչ տեսք է ունեցել բնագրային աղբյուրում:

Ավելին. նշել ենք նաև բնագրերում մեր պահպանած այն ձևերը, որոնք հնարավոր է, որ մի ուրիշի կարծիքով պետք է ուղղվեին:

Այս հատորում տեղ գտած երկերի մեծ մասը Բակունցի մահից հետո տպագրվել է մի քանի անգամ (տես համապատասխան ծանոթագրութիւնները). միայն «Հովնաթան Մարչ»-ն է, որ մեկ անգամ է վերահրատարակվել:

Վերահրատարակելիս այդ երկերում կատարել են խմբագրական մեծ կամ փոքր կրճատումներ:

Որոշ կրճատումներով է տպագրվել նաև «Ջանգեզուր» բնագիրը: Ներկա հատորում բոլոր բնագրերը տպագրվում են ըստ եղած բնագրային աղբյուրների լրիվ, առանց ամենափոքր կրճատման:

## ՎԻՊԱԿՆԵՐ ԵՎ ՎԵՊԵՐ

### ՆՈՎՆԱԹԱՆ ՄԱՐՉ

(էջ 7)

Առաջին անգամ հրատարակվել է 1927 թ. առանձին գրքույկով: Պետք է գրված լինի 1926 թ. երկրորդ կեսին: 1929-ին առաերին տպագրվել է «На рубеже Востока» հանդեսում (№ 1, 2, 3): Այնուհետև, տեղ է գտել Բելյուժում 1956 թ. հրատարակված «Ամբողջական գործը» երկերի ժողովածուի 2-րդ հատորում: Այժմ տպագրվում է երրորդ անգամ ըստ առաջին հրատարակութան բնագրի, որի մեջ կատարել ենք մի քանի անհրաժեշտ ուղղում:

Այստեղ ևս մի շարք անվիճելի սխալներ ենք ուղղել (որոնք նշված չեն ուղղումների ցանկում). դրանցից են, օրինակ՝ դիտապատ (ուղղել ենք՝ դիտապատ), բավազար (բավալզոբ), Նոյան (Նոյյան), Բեճայշ (Բեճաշ), ցեձղա (ձեձղա) և այլն, ինչպես նաև ընկած տառերի լրացումները, այդ թվում՝ ք, և որոշիչ հոդերի, ավելորդ տառերի շնչումը:

ՀՄ-ի բնագրում սխալ է թույլ տրված (հարկանարար, հեղինակի կողմից). վիպակի 4-րդ և 5-րդ մասերը միևնույն 4 թվահամարն են ստացել, որի հետևանքով վերջին մասն ունի 8 թվահամարը, թեև 9 մասից է բաղկացած: Սկսած 5-րդ մասից թվահամարն ուղղել ենք:

Դրանցից գատ կատարել ենք նաև հետևյալ ուղղումները.

էջ 26, տող 31. ՉՄ-ի բնագրում՝ շարունակում էին— ուղղել ենք ըստ բովանդակության՝ շարունակվում էին:

էջ 34, տող 5. ՉՄ-ի բնագրում՝ շենք հարգել— ուղղված է շենք հարգել:

էջ 35, տողեր 1—2 և հետո. ՉՄ-ի բնագրում՝ կաթուղիկոս— ուղղել ենք՝ կաթուղիկոս:

էջ 36, տող 24. ՉՄ-ի բնագրում՝ առտնի— ուղղել ենք՝ առտնին:

էջ 56, տողեր 32—33. ՉՄ-ի բնագրում՝ նկատելով Նովեաբան Մարչի հանկարծակի գալը— ուղղել ենք՝ նկատելով Նովեաբան Մարչի հանկարծակի գալը:

էջ 57, տողեր 10—13. ՉՄ-ի բնագրում՝ Նախագան Շանազարյալը... կարծես ուզում էր, որ առանց նրա խոսելու— ուղղված է ըստ բովանդակության՝ Նախագան Շանազարյալը... կարծես ուզում էր ասել, որ առանց իր խոսելու:

էջ 63, տողեր 12—13. ՉՄ-ի բնագրում՝ շեն մտածիր— արևմտահայ խոսքի մեջ է, ուղղել ենք՝ շեն մտածել:

էջ 75, տող 23. ՉՄ-ի բնագրում՝ բանին հենած մշակին— ուղղել ենք ըստ շարահարդի բովանդակության՝ բանին հենված մշակին:

Նոր Եթովպիա անունը ՉՄ-ի բնագրում գծիկ ունի. հանել ենք:

Բնագրում եղած մյուս անմիօրինակությունները, բարբառայնությունները և այլն թողել ենք նույնությամբ: Օրինակ, ևս և հետ զուգահեռները չենք միօրինականացրել: Չենք ուղղել նաև այսպիսի ձևեր՝ Կալումբոս, մերթընդմերթ, հարթուկած (հավանաբար հեղինակային է՝ ոչ թե արդ(ուկ), այլ հարթ(ուկ) բառից կազմված), երկիրներից, բծֆակ և այլն:

ՉՄ-ի բնագրում մեծատառերի գործածությունը երբեմն չի համապատասխանում այժմ ընդունված կանոններին. համապատասխանացրել ենք, բացի մի քանի դեպքից (ինչպես, օրինակ, Առժողովմատ):

«Նովնաթան Մարչում» կան գրաբար հատվածներ՝ տպված 1922 թ. ուղղագրությամբ, որոնք ընդհանուր բնագրի կազմում վեր են ածված 1940 թ. ուղղագրության: Ճիշտ կլինի ըստ գործող կանոնի գրաբարյան հատվածները արտահայտել գասական (գրաբարյան) ուղղագրությամբ, բայց թողնել ենք եղածը նույնությամբ, քանի որ, հավանաբար, հեղինակային է, և նոր ուղղագրությամբ գրաբար հատվածներ կան նաև այս հատորի այլ բնագրերում:

«Նովնաթան Մարչում» հերոսները հաճախ խոսում են արևմտահայերեն, և նրանց խոսքում կան անճշտություններ: Բացի երկու դեպքից (վերը նշված է), որևէ ճշտում չենք արել. օրինակ, էջ 55, տող 5. կիսափազին բնակիլ նոր Եթովպիայում արտահայտության մեջ սխալ է նոր Եթովպիայում ձևը, քանի որ արևմտահայերենում ենթադրյալ կան հուղվիկ (սխալ է լինի նոր Եթովպիո մեջ):

Զգալի քանակ են կազմում նաև Բակունցի հեղինակային խոսքում հանդիպող՝ Զանգեղուրի խոսվածքներին հատուկ անորոշ դերբայի բացառականի ձևերը՝ գրականի մակբայական (-ալիս, -ելիս) դերբայի դիմաց. օրինակ՝ էջ 54, տող 34. հայրենասիրությունը փարոհում է՝ նամակի այդ մասն ընթերցելուց (ճիշտ գրական կլինի՝ ընթերցելիս), էջ 55, տող 26. Նովեաբան Մարչը դոնից ներս մտնելուց (ներս մտնելիս), էջ 74, տող 13. ինչպես ճանհը՝ սեղանին ընկած շաբարի կտորը լիզելուց (լիզելիս) և այլն: Իր դե-

բանվան ձևի փոխարեն կա գործածված իրեն ձևը (տվյալ շարակարգում ճիշտ է)։ Ինչպես՝ էջ 44, տող 27—28. Իրեն՝ լուսավորչի գանգը։ Հեղինակային լեզվում հանդիպում են ժողովրդաբարբառային խոսքի նաև այլ ձևեր, ինչպես՝ էջ 78, տող 34. ուզում էր ցույց տա (գրականը՝ ցույց տալ), էջ 69, տող 28. նրազի լուսով (լույսով) և այլն։ Բոլոր նույնությամբ պահպանված է։

Լու բառի հոգնակի լուեր ձևն է գործածված (էջ 76, տող 22). նոր ուղղագրությամբ պիտի լիներ լվեր, բայց չենք ուղղել, քանի որ անպայման հեղինակային է, ինչպես որ «Կարմրաբարում» ջուալներ ձևը)։

38-րդ էջում որպես ծղրիդներ ձայն տրված է՝ —Մդի՛—տակ, ծղի՛—տակ, իսկ 41-ում՝ —Մվի՛—տակ, ծղի՛—տակ. երկուսն էլ պահպանել ենք։

ՂԲ-ի բնագրում կան որոշ անկանոնություններ, որոնք նույնպես չենք ուղղել։ Օրինակ, էջ 23, տողեր 14—17. ձիշա է, տարբերություն կար, ինչպես օրինակ, այն, որ ասեղան արհամ Երևաբալիզ կոչիլենեով էր, իսկ Մարչը դեղին բամբուկ կամ այն, որ Մարչը եկիրոզ անգամ էր պատմությունը կրկնում.— այստեղ երկօրոզ անգամ-ը ավելորդ է, ճիշտ կլիներ այսպես՝ ...որ Մարչը պատմությունը կրկնում էր, սակայն չենք ուղղել։ Կան այսպիսի նաև այլ դեպքեր։

\*\*\*

«Հովնաթան Մարչը» տպագրվել է նույն տարին, ինչ «Մթնածոր» ժողովածուն, բայց գրանք բովանդակությամբ միմյանցից հեռու են։ Ըստ երևույթին, գործ ունենք Բակունցի հեղինակային երկու տարբեր գծերի կամ ուղիների հետ։ Եթե «Մթնածորը» գլխավորապես նվիրված է հայ նահապետականության պատմական գերի, հին գյուղի բարոյական արժեքների, նրանց մահացման մասին գրողի ունեցած պատկերացումների, նաև մարդասիրության, հոգեկան մաքրության գեղարվեստական մարմնավորմանը, ապա «Հովնաթան Մարչում» առկա է բակունցյան մի այլ նախասիրություն՝ մի կողմից իրական հայոց աշխարհի, մանկանդ գյուղաշխարհի, մյուս կողմից այդ աշխարհը շիմացողի, բայց նրան սատար լինելու հավանությունն ունեցողի հակադրությունը։

«Հովնաթան Մարչում» եղած հակադրության բնույթը առավել շարժված մտտ է ռեդի որոտման» երկին բնորոշ հակադրությանը, և ինքը գլխավոր հերոս Մարչն էլ շատ կողմերով հիշեցնում է ռեդի որոտմանի» հերոս Պեղեյանին։

Մարչը չի ճանաչում Հայաստանը, Պեղեյանը չգիտի հայ գյուղը, Մարչը արտասահմանից գալիս է Հայաստան մեծ բարեփոխումների ծրագրով, Պեղեյանն այդպիսի ծրագրով մեկնում է Բովեր գյուղակի։ Նրանք էլ ձախողվում են. սակայն, եթե Մարչը ձախողված ու պարտված վախչում է Հայաստանից, ապա Պեղեյանի ձախողումը հանգցնում է հայկական մի գյուղակի ոչնչացման։

Հետաքրքրական է, որ Պեղեյանին պատկերելուց և նրան որոտման որդի անվանելուց շուրջ հինգ տարի առաջ Բակունցը այդ նույն անունը տվել է Հովնաթան Մարչին (տե՛ս էջ 32, տող 24)։

Իհարկե, այս երկու կերպարների միջև նաև լուրջ տարբերություններ կան. Մարչը գալալային ոտմանտիկ անձ է, նույնիսկ երագող, իսկ Պեղեյանը ուղեղի փոխարեն «շարի» ու լծակներ ունեցող ու գրանցով առաջնորդող մարդ-մեքենա է, Մարչը պար-

դպպես անհող ու անպտուղ հայրենասեր է, Պեղեյանը ոչինչ էլ չի սիրում, նա պարզապես «գիրեկտիվ» կատարող է, Մարչի բնույթի մարդիկ իրենք են ձախողվում, Պեղեյանի նմանները ուրիշներին են վնասում՝ հաճախ անդառնալի կորուստներ պատճառելով։

«Հովնաթան Մարչ» երկի նախափորձը եղել է «Երբ որ բացվին դռներն հուսա» պատմվածքը (տե՛ս Երկերի այս հրատ. 2-րդ հատորը), որը գրվել է հավանաբար 1923-ի ամառը կամ ամենաուշը հաջորդ երկու թվականներից մեկում։

Թե՛ «Հովնաթան Մարչում», թե՛ հիշյալ պատմվածքում սփյուռքահայ գործիչը գալիս է Հայաստան և պատկերացումների փլուզում ապրում։ Մասամբ այս երկուսի նման է «Տրանզիտ Վիա Բայանդուր» պատմվածքը, այն տարբերությամբ, որ այստեղ Հայաստան եկողը ոչ թե սփյուռքահայ գործիչ է, այլ նրա ներկայացուցիչը՝ արտասահման ընկած տեղացի. թեև սփյուռքահայ պատկերացումների և իրական երկրի որոշ հակադրություն առկա է նաև այս պատմվածքում։

Ժամանակին Ջ. Ծուպյանը ընդհանուր առմամբ ճիշտ է բնութագրել «Հովնաթան Մարչ» երկը, ասելով, որ նրա գլխավոր հերոսը ընդհանրացված կերպարն է, «որևէ միսինով Հայաստան եկող գաղութաձայի, և որուն մեջ որոշ շահով ամեն մեկս կարող ենք ինքզինքնիս գտնել» (Ջ. Ծուպյան, Պրոմեթեոս ազատագրված, էջ 154)։

«Երբ որ բացվեն...» պատմվածքը և «Հովնաթան Մարչը» նաև ինչ-որ շահով Բակունցի այն գործունեության մի արտահայտությունն են, որի մեջ 1923 թ. նրան ներթափանց Երեմիա Բակունցը՝ գրողի ազդեցության, այն ժամանակ Հայաստանի Կ(ր)Կ-ի Կենտրոնի քարտուղար։ Հիշյալ թվականին Երևանում կաղամակերպվեց նախկին դաշնակցականների ինքնացրման համագումար, և Երեմիա Բակունցը հորդորել է Ակսելին այդ համագումարում, ինչպես և մամուլում համապատասխան ելույթներ ունենալ։ Գրողը կատարել է Ե. Բակունցի պահանջը, և նրա մասնակցությունը այդ գործին 1936—37 թթ. դարձավ Բակունցի դեմ հարուցված դիվանդոր մեղադրանքներից մեկը (տե՛ս, օրինակ, «Գրական թերթ», 1936, № 19, 22)։ Գրողի կինը՝ Վարվառա Զիվիլյանը, մեղ պատմել է, թե՛ ինչպիսի ծանր օրեր է ապրել Բակունցը 1923-ին. «նա հենց նոր էր եկել Խարկովից, մտքում մեծ ծրագրեր ուներ Հայաստանի գյուղերում որպես գյուղատնտես աշխատելու, նորություններ մտցնելու, և հանկարծ իրեն խորթ այդպիսի միջոցառման մասնակցելու գրեթե հրամայական հորդոր։ Չէր կարողանում մերժել, ուժ չուներ և չէր ուզում զրազվել դրանով. ու տառապում էր»։

Մամուլում հրապարակվեցին գրողի համապատասխան հողվածները (տե՛ս «Ենթադրողային Հայաստան», 1923, № 206, 215, 261, 262), բայց «Երբ որ բացվեն...»-ը ինչ-ինչ պատճառներով չտպագրվեց։

Իհարկե, ճիշտ չի լինի «Հովնաթան Մարչի» բովանդակությունն ամբողջովին պայմանավորել 1923 թ. դեպքերով։ Այդ դեպքերը պարզապես շարժառիթներից մեկն են եղել։ «Հովնաթան Մարչում» զգացվում է նաև 1918 թ. Կարին—Կարս—Ալեքսանդրապոլ նահանջի ժամանակ գրողի ու՛հեցած ապրումների արձագանքը և մանավանդ նաղաղ տարիների Սփյուռքում գանազան ճոռոմախոսությունների առթիվ գրողի ապրած վրդովմունքի արտահայտությունը։

Ո՛վ է Հովնաթան Մարչը։ Երբեմն ենթադրում են, որ նա հայ ռամկավարի կերպարն է։ Ավելի հավանական է, որ Մարչը ներկայացուցիչն է առհասարակ Հայաստանը շիմոսող, գրեթե անիրական ազգասիրությամբ վարակված այն գործիչների, որոնց այդ ազգասիրությունը վեղգեղում է մինչև Հայոց լիոնաշխարհում բնակություն հաստատելը և

իրբն օճառի պղպղակ պայթում է իրական Հայաստանի լեռներին հասնելով: Ամերիկա-քնակ Մարլը տարված է «ցեղի անցյալ փառքով», հայոց «ազնիվ արյան» գաղափարով, «Արմենիա, երկիր դրախտավայր»-ով ու հանկարծ երկրում տեսնում է, թե ինչպես «Կոտորած սայլի ճաղի զլխից աքլորը կանչեց՝ քունը փախցնելու համար... Մի պառազ... հարդախառն թրիքը գունդ էր արել և պատերին էր փակցնում», «ցեխում նստած մի գեմեշ...» և այլն: Իրական երկիրը խորթ է հատուկ «միսիոնոզ» հայրենիք եկած գործիչի: Հասկանալի վրդովմունք կա «Հովնաթան Մարլում» տեղ գտած բակունցյան անողջ ծագքի մեջ, վրդովմունք Սփյուռքի այն գործիչների նկատմամբ, որոնց համար հայրենիք կոչվածը հեռվից հեռու սիրահետելու առարկա է կամ բարձրակոչ ու զարդարանուն ճառ՝ տաված թե Սփյուռքում, թե հայրենիք այցելած աստեղին: Մարլը հավաքական կերպար է: Եվ այնուամենայնիվ, գրողը ծայրահեղությունների մեջ էլ է ընկել. նա իր խալթածաղրի սահմանները աստիճանաբար լայնացնելով նրա ոլորտի մեջ է առել նաև շատ քան այն ամենից, ինչ հենց իր համար նվիրական էր գեռես մի ութ-տասը տարի գիրք գրելուց առաջ:

Լիովին սխալ պատկերացում է այն, թե իբր Բակունցը երգիծելով Հովնաթան Մարլին, Անդրեսա Բալիբյանին, սփյուռքի նրանց շրջապատը, «Բարեսիրաց մարմինը», մտմուլը, արևմտահայ գյուղացի Ավո բիձուն, ինչպես և՛ «փղտացիներին, եթովպացիներին, կեսարացիներին, ուհայցիներին», ինչ-որ նախապաշարում է ունեցել արևմտահայոց նկատմամբ: Բակունցը այն, թերևս, եզակի գրողներից ու մտածողներից է, որնց լիովին զերծ են եղել արևելահայ—արևմտահայ անբովանդակ շոկոլոթյուններից: Դրա ապացույցն են գրողի ամբողջ կյանքը՝ Արևմտյան Հայաստանի ողբերգության առթիվ նրա հոգեկան տառապանքը, արևմտահայ սովյալներին ու որբերին օգնելու նրա պտորաստակամությունն ու գործնական օգնությունը, նրա երկերում բացառիկ շերտովյա՛մբ պատկերված արևմտահայերը՝ Լառ-Մարգարը, Հաղրոն, ուստա Նազարը, Դավոն, Մեջիտա մայրիկը և ուրիշներ:

«Հովնաթան Մարլը» հեղինակի բարդ ապրումների արտահայտությունն է, պետք է խորապես հասկանալ այն և սթափ գնահատել. ծաղրի ետևում նկատել անկեղծ հայրենասերի վրդովմունքը, ցավը, արցունքները:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ԷՋԵՐԻ ԵՎ ՏՈՂԵՐԻ

Էջ 10, տող. 2 և հետո. Փղառացիք ու եթովպացիք— Փղտացիները Մերձավոր Արևելքի սեմական հին ժողովուրդներից են, Պաղեստինի հարավ-արևմտյան մասի հնագույն բնակիչները: Ըստ Հին կտակարանի, հրեաները Պաղեստինի մի մասը նվաճել են փղտացիներին, որոնց հետ գրիթն միշտ թշնամական հարաբերության մեջ են եղել: Փղտացի բառը գործածվում է նաև արհամարհական իմաստով, իբրև՝ սահմանափակ, մակերեսային մտածողություն ունեցող մարդ կամ ոչ յուրային, զրսի: Եթովպացիները կամ հարեշները Նիովպիայի (Հարեշտանի) սևամորթ բնիկներն են: Եթովպացի բառը նույնպես (հատկապես ռուսերենում՝ էֆիոպ) գործածվել է արհամարհական իմաստով՝ անհասկացող, անկիրթ մարդ նշանակությամբ: 1920-ական թվականներին փղտացի, եթովպացի անուններով Ե. Զարենցը և նրա մտերիմները կոչում էին ազգային որոշ կազմակերպություններ և սփյուռքահայ այն գործիչներին, որոնք չիմանալով հայրենիքը, նրա

իրական արժանիքներն ու թերութիւնները՝ հեռվից օգային պալատներ էին կառուցում։ Բակունցը ծայրահեղութիւն մեջ ընկնելով «Հովնաթան Մարշում» երբեմն հիշյալ անուններով կոչում է ընդհանրապես սփյուռքահայութիւնի որոշ մասին։ Այդտեղից է նաև Նոր Երզնկայի քաղաքանունը (տե՛ս նաև ստորև)։

էջ 16, տող 21. Յուրս եկն և յուրն զնա ոչ ընկալան— նշանակում է՝ Եկավ յուրա-  
յիննեբի մտ, և յուրայիննեբի ճրան շրնդունեցին (դասական ուղղագրութիւնը՝ «Յիւրսն  
եկն. և իւրն զնա ոչ ընկալան»)։ Ավետարանի խոսքն է Հիսուսի մասին (տե՛ս Ավետա-  
րան ըստ Հովհաննէսի, Ա, 11)։

էջ 18, տողեր 28—29. Արաքս կայարանի մտ, Ղամբըլուփ շրջան և Արագգայան—  
Արաքս երկաթուղային կայարանը գտնվում է Հոկտեմբերյան և Արագած կայարանների  
միջև, Երևան—Լենինական գծի վրա։ Ղամբըլուն երկաթուղային կայարան էր Հոկտեմբեր-  
յանի (նախկին Սարգարապատի) շրջանում։ Արագգայանն այժմ կոչվում է Երասխ, այն  
Երևանից դեպի Նախիչևան զնացող երկաթգծի ՀՍՍՀ վերջին երկաթուղային կայարանն է։

էջ 19, տողեր 3—4. Բայլամալօր զնում եմ և ապա՝ հին հին դարեր— նկատի ունի  
Բ. Պատկանյանի «Արաքսի արտասուքը» բանաստեղծութիւն (ու երգի) առաջին տան տո-  
ղերը։

Մայր Արաքսի ափերով  
Քայլամալոր զնում եմ,  
Հին-հին դարուց հիշատակ  
Ալլայց մեզը պտրում եմ։

էջ 20, տողեր 29—30. Եղիա մարգարեի քառածի կառքի առասպելը— նկատի ունի  
Աստվածաշնչի Հին կտակարանում Եղիա մարգարեի մասին ասվածը. «Երբ նրանք զը-  
նում էին և ճանապարհին խոսում, հանկարծ հայտնվեցին հրեղեն կառք և հրեղեն ձիեր,  
ու բաժանեցին նրանց երկուսին, և Եղիան մորիկով վեր ելավ երկինք» (Քազազորների  
1-ին գիրք, Բ, 11)։

էջ 22, տող 15. Քորզովյան ցեղ— Քորզովը Նոյ նահապետի թոռն է (4-րդ սերուն-  
դը), ըստ Մովսէս Խորենացու «Հայոց պատմութիւն», նա եղել է հայերի նախահայրը,  
Հայկ նահապետի հայրը։ Հայերը հաճախ են իրենց անվանել Քորզովյաններ, Քորզովյան  
աուն և այլն։

էջ 23, տող 10. Պետրոս Մեծը ճաննուտների մեջ կանգնած— նկատի ունի Ռուսաս-  
տանի կայսր Պետրոս Առաջինին, երբ նա ճաննուտների մեջ ծրագրում էր հիմնադրել Ս.  
Պետերբուրգը։

էջ 24, տող 18. Բամբ որոտան— հավանաբար, նկատի ունի Ղ. Ալիշանի «Երգ և  
Արշակ 11 հայոց թագաւորին (350—368 թթ.) և Վասպուրականի Գագիկ զարավարին  
(IX դ.)»։

էջ 24, տող 18. Բամբ որոտան— հավանաբար, նկատի ունի Ղ. Ալիշանի «Երգ և  
զնացք զօրացն Հայոց ընդ Վահանայ» («Ծն անդր առաջ») բանաստեղծութիւնը (և եր-  
գը), որի սկիզբն է՝ «Բամ, փորոտան»։

էջ 24, տող 26. որպես մի կիւ արեա— նկատի ունի Վ. Շեքսպիրի համանուն ողբեր-  
գութիւն հերոսին մենախոսելիս։

էջ 25, տողեր 21—22. Հաջի Խարաբ գյուղն է կամ ճին ճայոց Բագնաբունը— Հաջի Խարաբ անունով գյուղ, ըստ երևույթի, չի եղել գրողի նշած տարածքում: Հոկտեմբերյանի շրջանում եղել է Հաջի Բայրամ (բնակչությունը՝ հայեր, ազգբնչանցիներ): հավանաբար, այդ գյուղն է նկատի առել Բակունցը՝ անունը թիչ փոխելով: Գյուղի հայ բնակչությունը ծագումով պատմական Բագարանից է, որ գտնվել է Ախուրյան գետի ափին (Բագարան կամ Բագնարան անունով եղել են նաև այլ բնակավայրեր): Հաջի Բայրամ գյուղը 1968-ից կոչվում է Բագարան (գտնվում է Հոկտեմբերյան քաղաքից 27 կմ. դեպի արևմուտք):

էջ 27, տող 2, 8. Տախթի—կղզի է Խաղաղ օվկիանոսում:

էջ 27, տող 2. Ֆորմոզա—այժմ՝ Տայվան. մեծ կղզի է Չինական ծովում, Չինաստանի հարավ-արևելյան ափից դեպի արևելք ընկած:

էջ 27, տողեր 19—20. Հարդագողի ճանապարհից մտնով գիծ անցկացնում մինչև Բաստղաշարը— Հարդագողի ճանապարհը Միր կաթինն է, որ երկնակամարն հատող թույլ լուսավորությամբ ձգվող ժապավեն է: Այն շուրջ 100 միլիարդ հեռավոր աստղերից բաղկացած տիեզերական պալատիկա է: Բ (բետա) աստղաշարը աստղաբույլ է:

էջ 28, տող 25 և հետո. Արիստակես եպիսկոպոս— հավանաբար, նկատի ունի Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանին, որ հեղինակ է մի շարք աշխատությունների, եղել է Թեմի առաջնորդ:

էջ 28, տող 27. —Առե՛՛ք, կերե՛՛ք, այս է մարմին իմ— Հիսուսի խոսքն է խորհրդավոր ընթրիքի ժամանակ (տե՛ս Ավետարան ըստ Մատթեոսի ԻԶ, 26—28, ըստ Մարկոսի ԺԳ, 22—25, ըստ Դուկասի ԻԲ, 19—20): Բակունցը խոսքը բերում է ըստ Մատթեոսի, բայց կես զրարար-կես աշխարհաբար: Գրարար ճիշտն այսպես է՝ Առե՛՛ք, կերա՛՛յք, այս է մարմին իմ:

էջ 31, տողեր 30—31. Ես եմ հոգով ազատ, որի համար է կանավորված երկե՛ք առփայտությունը— տե՛ս Ավետարան ըստ Մատթեոսի (Ծ, 3)՝ «Երանի հոգով ազատենե՛րին. քանի որ նրանցն է երկե՛քի բազալորությունը»:

էջ 32, տողեր 5—6. Եվ երկիր և երկին անցցեն, բայց բան իմ մի անցանիցեն—Հիսուսի խոսքն է ըստ Մարկոսի Ավետարանի. ստույգը՝ երկինք և երկիր անցցեն, և բան իմ ոչ անցանիցեն. աշխարհաբար՝ Երկիրը և երկիրը կանցնեն, բայց իմ խոսքերը չեն անցնի (Ավետարան ըստ Մարկոսի 13, 31):

էջ 32, տողեր 21—22. հոռոմ ու տանիկ տղաների ճես կովի էր բռնվում—այսինքն՝ հույն ու թուրք տղաների հետ:

էջ 33, տողեր 18—19. Մշո Սուրբան Սուրբ Կարապետ— մշեցիների, սասունցիների և այլ հայերի մեջ ընդունված խոսք է (օգնության կանչ). խոսքը վերաբերում է Հայաստանի Մուշ քաղաքից 30—35 կմ. դեպի հյուսիս-արևմուտք գտնվող Ս. Կարապետ վանք-մենաստանին, որ ուխտատեղի է եղել (կոչվել է նաև Թնակնյա վանք, Գլակա վանք):

էջ 34, տող 3. զնաց Գայանեի վանքը— խոսքը էլմիածնում գտնվող Ս. Գայանե կեղեցու մասին է (VII դար): Ըստ ավանդության եկեղեցին կառուցվել է այն տեղում, որտեղ Տրդատ Թագավորի մարդիկ նահատակել են Գայանե կույսին:

էջ 35, տողեր 28—29. Անթուռոսյանը ոգևորված պատմում էր այն օրերից, երբ հենց այդ վանքի պատերի տակ կամավորների վեցերորդ գունդը բաճակ էր զարկել: Ոչխարները մայում էին վառվող խարույկի մտ, եռանդով ու ավյանով լցված կամավորները բրի հարվածով վանքի թրեխներն էին կտրատում— համեմատել «Մանոթ բակը» ակնարկի

Համանման նկարագրությունների հետ. «Այստեղ խմբեր կային, «զենք ու զրահից թընդում էին լերինք»... «վեհափառը օրհնում է հայ կամավորներին» և այլն (Երկերի այս հրատ. 2-րդ հատոր, էջ 406—407): «Հովնաթան Մարշում» Ս. Գայանե եկեղեցու բակն է նկարագրված, «Մանոթ բակը» ակնարկում՝ Մայր տաճարի. երկու զեպքում էլ 1914 թվականի ամառն է (կամ աշունը): Բակունցն այդ ժամանակ էլ միաձմեռի Գևորգյան ճեմարանի սան էր և ականատես զեպքերին: Կամավորական 6-րդ զունդը (իրականում՝ ջոկատը) կոչվել է նաև հնչակյան ջոկատ. հրամանատարն է եղել Գր. Ավշարյանը, որի զոհվելուց հետո՝ Հայկ Բժշկյանը (Գայը):

«Հովնաթան Մարշը» և «Մանոթ բակը» ունեն այլ նմանություններ ևս (տե՛ս նաև ստորև), որոնք, ըստ երևույթին, մասամբ պետք է բացատրել նրանով, որ նույն թվականին են գրվել՝ 1926-ին («Մանոթ բակը» հրատարակվել է 1926-ի դեկտեմբերի 19-ին): Ուշադրություն է գրավում նաև այն, որ երկու երկի մեջ էլ առկա է նոր օրերը շհասկացող արևմտահայ հերոս:

էջ 36, տող 3. Ոսկի ճոճք— նկատի ունի Հին կտակարանի Ելից գրքի մի հատվածը. Մովսեսը բարձրանում է Սինա լեռը օրենքի տախտակներն ստանալու, մինչ այդ նրա առաջնորդած ժողովուրդը սկսում է երկրպագել քահանա Ահարոնի պատրաստած ոսկե հորթին: Մարից իշնելով Մովսեսը ոչնչացնում է հորթը:

էջ 37, տող 3. —Այստեղ քաղված է Խենթի սիրած աղջիկ Լալան— նկատի ունի Բաֆթու «Եսենթ» վեպի հերոսներին՝ Խենթին ու Լալային, որոնք իրական անձինք են եղել և երկուսն էլ, իրոք, թաղված են Ս. Գայանե եկեղեցու բակում:

էջ 37, տող 28. —Անա մարգարեն: Ու ծովը պիտի ճեղքի— նկատի ունի Մովսես մարգարեին. ըստ Հին կտակարանի Եզրպտոսից փախչելու ժամանակ հրեաները հասնում են Կարմիր ծովին, իսկ նրանց ետևից մոտենում էր եգիպտական վրեժխնդիր զորքը. «Եվ Մովսեսը մեկնեց իր ձեռքը ծովի վրա, և Եհովան արևելյան սաստիկ հողմով ամբողջ գիշեր քշեց ծովը, ցամաքեցրեց, և ջրերը ճեղքվեցին: Եվ Իսրայելի զավակները ծովի միջի ցամաքով գնացին, և ջրերը նրանց աջ ու ձախ կողմից պարիսպ եղան» (Սլից, ԺԿ, 21—22):

էջ 37, տողեր 28—29. պիտի գան փղշտացիք, եթովպացիք, կեսարացիք, ուտնայցիք, բալթը— Բակունցը այս խոսքը գրել է իր հերոսի՝ Մարշի անունից. վերջինս նկատի ունի սփյուռքահայության մի ներգաղթ՝ կառուցվելիք քաղաքը բնակեցնելու համար: Կեսարացիները և ուտնայցիները արևմտահայեր են. առաջինները Փոքր Հայքի Կեսարիա քաղաքի ու շրջակա գյուղերի բնակիչներն են, ուտնայցիները նախկին Ասորիքի Եղեսիա կամ Ուրֆա (Ուտհա) քաղաքի և շրջակայքի հայ բնակիչները՝ բոլորը իրենց երկրից բռնուծությամբ արտաքսված կամ կոտորածի զոհ դարձած առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ու հետո: Վերապրած թե՛ կեսարացիներ, թե՛ ուտնայցիներ, իրոք, 1920-ական թթ. և հետո ներգաղթեցին ՀՍՍՀ: Վերոհիշյալ թվարկման մեջ, բնականաբար, փղշտացիք և եթովպացիք նույնպես խորհրդանշում են սփյուռքում բնակվող արևմտահայերին, թե՛երևս, նրանց կուսակցական խավը (տե՛ս նաև այս վիպակի ծանոթագրությունների ընդհանուր մասը):

էջ 39, տողեր 1—2. ամենից գերագնիվ և վեհ պատրիարք..., նաև՝ ծերունի. էջ 40, տողեր 1—2. ամենից վեհ ծերունի— նկատի ունի ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V Սուրենյանցին (գահակալել է 1911—1930 թթ.):

էջ 39, տող 28. տաօճարանյա տախտակների առաջ— նկատի ունի ըստ Հին կտակարանի՝ պատվիրանների այն տախտակները, որոնք Մովսեսը բերեց Իսրայելի ժողովրդին (Ելից, Ա, ԼԴ):

էջ 40, տողեր 3—5. Հանկարձ՝ փողերի ձայն, շեփոհները կանչեցին, բմբուկներն այնպես ամուր բեղացին...— համեմատել «Օսոնթ բակը» ակնարկի հետ. «Պղնձն փողերը հնչում էին հաղթական մարշով...» «Պղնձն փողերի հաղթական մարշը արձագանքի պես էր հնչում» (Երկերի այս հրատ. 2-րդ հատոր, էջ 406): Երկու դեպքում էլ էջմիածինն է, տոնահանդես:

էջ 42, տող 34. Լեոն Վեցերոզ՝ քազավոր Կիլիկիո... Անա նրա բուրբ— Լեոն Վեցերոզը Լուսինյանը Կիլիկիայի հայոց պետութիւնի վերջին թագավորն է եղել, զահակալի է 1374—1375 թթ., թագված է Փարիզում: Էջմիածնում մեզ տեղեկացրին, որ Լեոն VI-ի թուրք վանքի թանգարանում երբևէ չի եղել: Հայաստանի պետ. պատմական թանգարանում պահվում է Լեոն VI-ի պողպատյա՝ դաշույնը՝ փղոսկրյա կոթով, վրան այդ թագավորի բարձրաքանդակը (ազգագրական բաժին, № 3062). այն ստացվել է փարիզարնակ Պաղոս Սամիրյանից, 1936 թ. փետրվարի 27-ին: Արդյո՞ք 1926—27 թթ. Բակունցն իմացել է այդ իրի մասին, գուցե այլ թուր է նկատի ունեցել: Թե՞ պարզապես իր երգիծական խոսքի մեջ առանց վավերականութիւնի հիշատակել է Կիլիկիայի այդ թագավորին ու նրա թուրը:

էջ 43, տող 11. Եղե՞լ է հնում Գարեգին անուով հայոց սպարապետ, տող 16. Հայոց վերջին սպարապետ Գարեգինի դրոշը— Որքան կարողացանք պարզել, այդպիսի որևէ դրոշ էջմիածնի վանքի թանգարանում երբևէ չի եղել: Հավանաբար, հեղինակը, հայոց վերջին սպարապետ Գարեգին ասելով, նկատի է ունեցել Գարեգին Նժդեհին:

էջ 44. տող 28. Տրդատ քազավոր— նկատի ունի հայոց Տրդատ III թագավորին, որի օրոք Հայաստանում քրիստոնեությունը դարձավ պաշտոնապես ընդունված կրոն (301 թ.):

էջ 44, տողեր 29—30. ուրարտական Ռուզաս քազավորի ֆառ գրույթներ, էջ 45, տողեր 21—27. Քանյոք դառ առաջ ուրարտական Ռուզաս քազավորը կապույտ ֆռի վրա փորագրել է տվել իր կամքը և ասել գալիք սերունդներին հետևյալը.

— Ես եկա. Կոյիտի երկրին տիրեցի, ֆաղաֆ շինեցի, այգի տնկեցի. ջրանցքներ անցկացրի և իմ աստվածներին զոն մատուցի— խոսքը վերաբերում է Արարատի (Ուրարտուի) հայոց հին տիրութիւն (մ. թ. ա. IX—IV դարեր) թագավոր Ռուշա (Հոռշա) II-ի (մ. թ. ա. 684—645 թթ.) սեպագիր մի արձանագրութիւնը, որի այժմյանից տարբեր ինչ-որ ընթերցում կարող է եղած լինել Բակունցի ձեռքին կամ, որ աճելի հովանական է, Բակունցը փոփոխել է բնագիրը: Տվյալ արձանագրութիւնը գտնվել է Զվարթնոցում, մի քանի վերժանութիւն ունի (վերջին հրատարակումը տե՛ս Գ. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960, էջ 344—346):

էջ 44, տողեր 31—33. Երբ կառքը կանգ առավ այն մտտիք առաջ, որով ֆուրսեր էին ներս ու դուրս արել և հերթապահ կանգնել կրակն անշը պահելու...— Հավանաբար նկատի ունի Զվարթնոցը, որտեղ պահպանված են ատրուշանի բարեր:

էջ 47, տող 10 և հետո. Որգան կառմիր— ոսկեկարմիր ներկ, որ պատրաստում էին Արարատյան դաշտում և այլ վայրերում եղած կարմրավուն որդերից ու օգտագործում միջնադարյան գրչագրերը զարդանկարելիս:

էջ 50, տող 3. Մատրեոս Ուոնայեցիին կվկայեմ— Մատթեոս Ուոնայեցիին XII դարի հայ պատմիչ է:

էջ 52, տող 17 և հետո. Եթովպական մամուլ— նկատի ունի սփյուռքահայ կուսակցական թերթերից մեկը կամ, ընդհանրապես, սփյուռքահայ թերթ:

էջ 56, տողեր 5—6. Պետրոս Գետադարձ կաթողիկոսի հրաշագործությանց պատմությունը— Պետրոս Գետադարձը հայոց կաթողիկոս է եղել 1019—1058 թթ., ունեւր բյուզանդական կողմնորոշում և կարևոր մասնակցություն է ունեցել Անին հույներին հանձնելու գործում (տե՛ս նաև Երկերի այս հրատ. հ. 2, էջ 708—709): Պետրոս Գետադարձի մասին պատմում են, որ նա 1023 թ. հունվարին, ընդառաջ զնալով Բարսեղ II բյուզանդական կայսրին, Ճորոխ գետում կատարել է չրօրհնեցի տոնը, որի ժամանակ, ասում են, թե «Գետի ընթացքը դադարել է» ու զրա համար կոչվել է Գետադարձ: Բալկոնցր հրաշագործությանց պատմությունը ասելով նկատի ունի գետի ընթացքի դադարման այդ պատմությունը:

էջ 59, տողեր 19—20. կառք բարև չէր առնում, բարև չէր տալիս անցնող ու դարձող ֆարավաններին— նկատի ունի Ա. Իսահակյանի «Աբու լալա Մահարի» վիպերգի հետևյալ խոսքերը.

Ողջոյն՝ չէր վերցնում, ողջոյն չէր տալիս անցնող ու դարձող  
ֆարավաններին (2-րդ սուրահ):

էջ 62, տողեր 4—8. այս հատվածը նման է Բակունցի որոշ ակնարկներում եղած գյուղխորհուրդների հաշվետվություններին. օրինակ, «Մեր գյուղերում» (Ա) ակնարկում նկարագրված ժողովին (տե՛ս Երկերի այս հրատ., հ. 2, էջ 337—342):

էջ 67, տողեր 21—22.—Երկնէր երկին և երկիր...  
—Երկնէր և ծով ծիրանի:

Մովսէս Խորենացու «Հայոց պատմության» մեջ (1, Ա) ավանդված Վահագնի ծրնունդի առաջին տողերն են քիչ աղավաղված (երևի գրված են հիշողությամբ): Ընթան այսպես է.

Երկնէր երկին, Երկնէր երկիր,  
Երկնէր և ծովն ծիրանի:

էջ 68, տող 26. Արաբսը անագին հորձանք չի հանում— ասված է որպես «պատասխան» Բ. Պատկանյանի «Արաբսի արտասուքը» բանաստեղծության հետևյալ տողերի (վերջին քառատող).

էլ չի խոսեց Արաբսը.  
Հորձանք տվեց ահագին,  
Օղակ-օղակ, օձի պես  
Առաջ սողաց մտնգին:

էջ 81, տողեր 16—17.—Տեղ ոսկի տեղայր ի փհասություն Արաաշխի  
—Տեղայր մարդրիտ ի հարսնություն Սաթրնական...

Արտաշեսի և Սաթենիկի մասին եղած հայկական հին առասպելի տողերն են, որ ավանդված են Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ (2, Մ). Թակունցը գրել է հիշողությունը, այն էլ 1922 թ. ուղղագրությամբ, որ շենք փոխել ըստ այս երկի համար մեր ընդունած սկզբունքի: Գրաբար բնագիրն այսպիսին է.

Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի,  
Տեղայր մարգարիտ ի հարսնութեանն Սաթենիկանն:

Աշխարհաբար՝

Ոսկի անձրե էր թափվում Արտաշեսի փեսայանալու ժամանակ,  
Մարգարիտ էր թափվում Սաթենիկի հարսնանալու ժամանակ:

Սա հայոց մեջ եղած, մասամբ այժմ էլ պահպանվող սովորությունն է, որի օգտագործմամբ Բակունցը կառուցել է իր երգիծանքը:

Էջ 87, տողեր 18—19 Cor Cordis Causa. Vitium cordis — լատիներեն է, շշտնակուժ է՝ Սիբու: Սիբուն է պատճառը: Սբաի արտա:

#### Կ Ա Ր Մ Ր Ա Ք Ա Ր

(էջ 89)

Վեպի պահպանված հատվածներն առաջին անգամ հրատարակվել են «Նոր ուղի» հանդեսի 1929 թ. առաջին համարներում, հետևյալ հաջորդականությամբ. № 1 (հունվար, էջ 20—42)՝ սկզբից մինչև 2-րդ մասի կեսերը (վերջը՝ «Խոշա Հիբանը իր վերջին ցանկությունն անգամ չկարողացավ որդուն հայտնել...»), № 2—3 (փետրվար—մարտ, էջ 33—55)՝ մինչև 3-րդ մասի վերջը, № 4 (ապրիլ, էջ 3—30)՝ 4-րդ մասը և 5-ի մի հատվածը (վերջը՝ «Ծրարը դեռ փակ էր»), № 5 (մայիս, էջ 42—59)՝ 5-րդ մասի մնացած հատվածը (վերջը՝ «Ու շունը վերադարձավ»):

Բոլոր շոր հատվածների վերջում տպված է՝ Ծարունակելի:

Վեպի մի այլ հատված (ն՛շ «Նոր ուղի»-ում հրատարակվածի շարունակությունը)՝ «Ջեյթայի ավերումը» վերնագրով, տպագրվել է «Գրական դիրքերում» հանդեսի № 2—3-ում (փետրվար—մարտ, էջ 1—9): Սկզբում, վերնագրի տակ փակագծում տրված է՝ Մի գլուփ «Կարմրաբար» վեպից: Հատվածը բաղկացած է երեք մասից, ընդ որում, մասերի համարակալումը նախորդ հրատարակումների («Նոր ուղի») շարունակությունը չէ, այլ դարձյալ սկսվում է 1-ից: Վերջում Ծարունակելի չկա:

Նշողնակի կենդանության օրոք «Նոր ուղիից» (1929 № 4-ից) մի հատված՝ Սզոցաբունը վերնագրով զետեղվել է 2. Հարությունյանի, Խ. Սարգսյանի, Տ. Վանյանի կազմած «Կարմիր ուղի»: Հայերենի աշխատանքի քրեատմատիա» դասագրքի մեջ (Պրակ Բ, 1929, էջ 131—143):

Այնուհետև, «Կարմրաքարը» տպագրվել է 1955 թ. գրողի Երկերի երևանյան հրատարակության մեջ, 1956-ին՝ «Ամբողջական գործը» բյուրոյի հրատարակության 2-րդ հատորում, 1964-ին՝ Երկերի երևանյան երկհատորյակի երկրորդ հատորում:

## Ուղղումներ

Ներկա հատորում դեռևով «Նոր ուղի» և «Գրական դիրքերում» ամսագրերի մեջ հրատարակված բնագրերը՝ նրանցում վերացրել ենք տպագրական վրիպակներն ու այլ կարգի աղնհայտ վրիպումներ, ուղղել ենք տարբեր պատճառներով սպրդած աղավաղումները:

Վերացրել ենք մի շարք ուղղագրական անմիօրինակություններ. օրինակ, «Նոր ուղի» բնագրում ունենք այսպիսի զուգահեռ ուղղագրական ձևեր՝ Տեր Նորբեժա և Տեր-Նորբեժա, Խոջա Հիբան և Խոջա-Հիբան, Բույր Բար և Բույր-Քար, Բեկտաբեզով, Բեգտաբեզով և Բիկտաբեզով, վերին կապ, Վերին Կապ և Վերին կապ: Ամենուրեք պահպանել ենք հետևյալ ձևերը՝ Տեր Նորբեժա, Խոջա Հիբան, Բույր Բար, Բեկտաբեզով (այս ձևք ամենից շատն է գործածված), Վերին կապ:

«Նոր ուղի» բնագրում գցել բայն ամենուրեք (չնչին բացառությամբ) ունի ֆցել (ֆցեցի, ֆցեց, ֆցեցինք) ձևը: Սա հեղինակային է. Ա. Բակունցը 20-ական թվականների երկրորդ կեսին գործածում էր մի քանի բառի, այդ թվում գցել բայի արտասանական-ուղղագրական ձևը (ֆցել), թեև ոչ հետևողականորեն (տե՛ս, օրինակ, «Ձմռան մի գիշեր», «Եղբայրության ընկուզենիները» և այլ երկեր սույն հրատ. 2-րդ հատորում): Նախորդ հատորներում այդ բառի ուղղագրությունը մեծ մասամբ թողել ենք այնպես, ինչպես բնագրերում է, որն է՝ և՛ ֆցել, և՛ գցել: Որոշ դեպքերում էլ հեղինակային խոսքի մեջ ֆցել-ը ուղղել ենք ըստ դասական ձևի, իսկ հերոսների խոսքում պահպանել ենք բնագրայինը: Հավանաբար, ճիշտ չէր լինի խոսքը ժողովրդային դարձնելու միտումով հեղինակի գործածած ֆցեց, ֆցեցինք և մյուս համանման ձևերը բոլոր դեպքերում դարձնել գցեց, գցեցինք և այլն: Որոշեցինք «Կարմրաքարի» և ընդհանրապես այս հատորի մյուս բնագրերը կազմելիս հետևողական լինել և միայն հեղինակային խոսքում այդ ձևերը ուղղել ըստ դասական ուղղագրության (գցել), հերոսների խոսքում թողնել հեղինակայինը (ֆցել): «Կարմրաքարի» բնագրում, որպես բացառություն, երկու տեղ (էջ 182, տող 12, էջ 203, տող 32) հերոսի խոսքում կան գցեք և գցեցին, դրանք էլ միակերպության համար դարձրել ենք ֆցեք, ֆցեցին:

Բնագրերում արտասանական ուղղագրությամբ է գործածված նաև մտառգ գոյականը՝ մտառգ (օրինակ, էջ 97, տող 21, էջ 98, տող 25, էջ 104, տողեր 14, 15 և այլն), որ փոխել ենք դասական ձևի՝ մտառգ:

Չուղահեռաբար գործածված են միթիլ և միթիլ ձևերը. առաջինը դարձրել ենք միթել:

Բակունցն ընդհանրապես, նաև այս գործում գործածել է բյուրք, բյուրքերեն ձևվերը. ամենուրեք նորացրել ենք՝ բուրք, բուրքերեն:

էջ 90, տող 34. Նմու-ի բնագրում՝ Եվ որտեղ էր լինեք— ուղղված է՝ Եվ որտեղ էլ լինեք:

էջ 91, տող 1. Նմու-ի բնագրում է համարվում— ուղղել ենք ըստ բովանդակության՝ էր համարվում:

էջ 95, տող 11. ՆՈւ-ի բնագրում՝ նստածներին սև ու դեղնավուն շոխաների մեջ— ուղղել ենք ըստ բովանդակության՝ նստածների սև ու դեղնավուն շոխաների մեջ:

էջ 100, տողեր 7—8. ՆՈւ-ի բնագրում՝ էն անտեր խոզերն էլ հենց իմանում էին, թե գայլի վրա է վազում. նորում, իրար տալիս— նորում-ից հետո ավելացրել ենք՝ էին, այսպես՝ էն անտեր խոզերն էլ հենց իմանում էին, թե գայլի վրա է վազում, նորում էին, իրար տալիս:

էջ 105, տող 30. ՆՈւ-ի բնագրում՝ հնչյուն արձար— ուղղել ենք՝ հնչուն արձար:

էջ 106, տողեր 31—32. ՆՈւ-ի բնագրում՝ գանել մի ձող, որի վրա կարելի լինե՞ր դեպքերը ֆաղել— ուղղել ենք բովանդակությունից ելնելով՝ ...որի վրա հեռաբաժնի լինե՞ր դեպքերը ֆաղել:

էջ 114, տող 22. ՆՈւ-ի բնագրում՝ մնացել է— ուղղել ենք ըստ հատվածի բովանդակության՝ մնացել էր:

էջ 114, տող 24. ՆՈւ-ի բնագրում՝ զարկեցնում էր— նույն բառը վեպում գործածված է ն անցնելով, ըստ այդմ միակերպեցինք, այս էլ դարձնելով զարկեցնում էր:

էջ 121, տողեր 9—10. ՆՈւ-ի բնագրում՝ Սուլեյմանի փրվայի արդուն երկու հարյուր ոտրլու մուրհակը ձոցի հաստ «կնիշկայի» մեջ պանելուց հետո— ուղղել ենք ըստ բովանդակության՝ որդուն ձեռք դարձրել ենք որդու, այն է՝ Սուլեյմանի փրվայի արդու երկու հարյուր ոտրլու մուրհակը...:

էջ 122, տող 32. ՆՈւ-ի բնագրում՝ Սանամ մարհուրն էլ— ուղղված է ըստ բովանդակության (Սանամը Եփրեմի հորաքույրն է)՝ Սանամ նարհուրն էլ:

էջ 124, տողեր 21—22. ՆՈւ-ի բնագրում՝ Քասասունաջրի— ուղղել ենք ըստ միևնույն անվան այլ գործածությունների՝ Քասասունաջրի:

էջ 125, տող 26. ՆՈւ-ի բնագրում՝ մանդեղները— ուղղված է՝ մանգաղները:

էջ 126, տող 20. ՆՈւ-ի բնագրում՝ կոխ տայիք— ուղղել ենք ըստ հատվածի բովանդակության՝ կոխ կտայիք:

էջ 126, տողեր 30—31. ՆՈւ-ի բնագրում՝ կայծեր էին հասնում— ուղղված է ըստ բովանդակության՝ կայծեր էին հանում:

էջ 139, տող 24. ՆՈւ-ի բնագրում՝ ֆաղի էին գնացել— ուղղել ենք ըստ բովանդակության՝ ֆաղհանի էին գնացել:

էջ 140, տողեր 22—23. ՆՈւ-ի բնագրում՝ նայնոյում էր ֆարին լինելն, և հենց այնպես, ըստ սովորության— ուղղել ենք՝ հայնոյում էր ֆարին, լինելն՝ հենց այնպես, ըստ սովորության:

էջ 141, տող 35. ՆՈւ-ի բնագրում՝ դաստիանա— բառը (տվյալ ձևով) մեզ անհասկանալի է, ենթադրաբար ուղղված է դուսադխանա (իբր՝ դուստադխանա):

էջ 142, տող 6. ՆՈւ-ի բնագրում՝ ստորոքստ— ուսերեն стpо́йца բառն է վեպի հերոս Արզումանի բերանում: Ենթադրեցինք, որ վրիպակ և ուղղեցինք՝ ստորոքստ:

էջ 143, տող 17. ՆՈւ-ի բնագրում՝ եֆեա— դա 1922 թ. ուղղագրությանը է, որ 1940 թ. ուղղագրության տառադարձելիս լինում է էֆեա, որը հիշտ չէ (հավանաբար շարելիս յեֆեա-ի յ-ն չի դրվել), ուղղել ենք՝ եֆեա:

էջ 146, տող 10. ՆՈւ-ի բնագրում՝ դուշմանն է, էլի— ուղղել ենք ըստ բովանդակության՝ դուշմանն եմ, էլի:

էջ 147, տող 3. ՆՈւ-ի բնագրում՝ զակոնը քույլատրել չի— շարակարգում ունի չի քույլատրի (պայմանական եղանակի ապանի ժխտական) իմաստը. հերոսի խոսքում հազիվ թե Բակունցը դնէր քույլատրել չի ձևը: Ընթացիկով, որ վրիպակ է, ուղղեցինք՝ քույլատրիլ չի:

էջ 150, տող 28. ՆՈւ-ի բնագրում՝ մաների— այլ դեպքերում (էջ 152, տող 7, էջ 176, տող 28)՝ մանյովը. այստեղ էլ միակերպության համար դարձրինք՝ մանյովը:

էջ 152, տող 19. ՆՈւ-ի բնագրում՝ մի անգամ էլ նտի ձուրակի կողմը— պետք է վրիպակ լինի, ուղղված է ըստ բովանդակության՝ մի անգամ էլ նայի ձուրակի կողմը:

էջ 155, տող 17. ՆՈւ-ի բնագրում՝ բանճրանում էր— ըստ բովանդակության ուղղել ենք՝ բանճրանում էր խավարը:

էջ 155, տողեր 28—30. ՆՈւ-ի բնագրում՝ ծանր ժամին, երբ մեղսուհին էլ էին փերակում հանգիստ բզզում, մի մտղ ապանով անկյունում ետ ու առաջ էր ֆայլում և դիտում— ըստ հասկանալի բովանդակության պետք է ասվի, որ այդ ժամին նայնիսկ մեղսուհին էլ էին անհանգիստ բզզում. հավանաբար, ան ժխտական ընկել է: Ուղղել ենք՝ ծանր ժամին. երբ մեղսուհին էլ էին փերակում անհանգիստ բզզում, մի մտղ՝ ապանով անկյունում ետ ու առաջ էր ֆայլում և դիտում:

էջ 157, տողեր 7—11. ՆՈւ-ի բնագրում՝ Շառերից էր լսել, որ նա, չաղացական Ավան ամին, անբաժան ու սրտակից ընկերներ են եղել, շատ անգամ միասին որս արել և սպանած կխառը անտառում մաշկել. կազնու նյութից կախել և միասին մի օրում կբխառի մեքս խորովել ու կերել— աղավաղում է տեղի ունեցել, բանի որ՝ ա) վերջում Ավան ամին չաղացական չէ, չաղացականը ուրիշ է՝ Անգրին, բ) զնայի այլ համաձայններից հայտնի է, որ Ավան ամին և Չաղացական Անգրին սրտակից ընկերներ են եղել, գ) նախադասության մեջ նաև նորի հանգուցյալ հորն է վերաբերում, որը անբաժան ու սրտակից ընկեր է եղել հիշյալ երկուսի հետ, և երեկով միասին են արել նախադասության մեջ թվարկվածը: Այստեղ նաև միմյանց հաջորդում են վաղակատար ժամանակի ձևեր՝ առանց օժանդակ բայի (որս արել, մաշկել, կախել, խորովել, կերել). ընկերներ են եղել-ի են-ը շատ թույլ է զղացվում վաղակատարի հաջորդ ձևերի համար, ուստի օժանդակ ենք մեկ են ետ: Համաձայն ուղղված է այսպես՝ Շառերից էր լսել, որ նա, չաղացականը և Ավան ամին անբաժան ու սրտակից ընկերներ են եղել, շատ անգամ են միասին որս արել և սպանած կխառը անտառում մաշկել, կազնու նյութից կախել և երեկով միասին մի օրում կխառը մեքս խորովել ու կերել:

էջ 157, տողեր 12—13. ՆՈւ-ի բնագրում՝ իբր թե իր մայրը նախ Չիբանի մեծ որդան. Մկրտումին կառել է ծառից...— բովանդակությանից պարզ է, որ ծառից կառուցը ոչ թե մայրը, այլ հայրն է եղել, վրայակի այլ համաձայնների հանձնատ միակերպել ենք նաև կհասարակությունը: Համաձայն ուղղված է այսպես՝ իբր թե իր նաջը նախ Չիբանի մեծ որդան՝ Մկրտումին. կառել է ծառից...:

էջ 157, տող 31. ՆՈւ-ի բնագրում՝ Երեկվից— համաձայն սրտագրում է, խոսքը երեկվից կնայ ժամին է. կարող էր լինել իրեցվին. բայց ոչ երեկվին (որ երեկվի հետ է առնվում): Ուղղված է երեկվից:

էջ 168, տողեր 26—29. ՆՈւ-ի բնագրում՝ Այդ օրվա հեղին էլ արդեն նշանակել...— չի օժանդակ բայը. ուղղել ենք՝ Այդ օրվա հեղին էլ արդեն նշանակել էր...:

էջ 160, տող 30. ՆՈւ-ի բնագրում Բտալքն վնասվեն— այս բառաձևը (բտալք— պտալքներ իմաստով) գործածված է Կարմրաբարի քահանայի խոսքում: Խուլ բազմայն արտահայտող տառի (պ) փոխարեն ձայնեղի գործածումը հերոսի արևմտահայ լինելը պետք է ցույց տա, և Բակունցը այլ երկերում այդպիսի հնարանքի դիմած կա: Սակայն այս քահանայի՝ վեպի այլ մասերում հաճախ հանդիպող բանավոր և գրավոր խոսքերի մեջ այսպիսի ձայնեղացում չկա, և առհասարակ նրա արևմտահայ լինելու մասին չի նշվում, ուստի ուղղեցի՞ք՝ Պտալքն վնասվեն:

էջ 162, տողեր 8—9. ՆՈւ-ի բնագրում՝ Խա տեսնում էր շարյաց արմատը՝ գտնելու և միշտ գալիս էր, նույն տեղը հասնում— բովանդակությունից կարելի է ենթադրել, որ տեսնում-ը վրիպում է. ուղղել ենք՝ Խա փորձում էր շարյաց արմատը՝ գտնելու...:

էջ 163, տող 6. ՆՈւ-ի բնագրում՝ ներքին տանն էր ապրում— վեպում և գրողի այլ երկերում ամենուրեք ունենք ներքի տանն ձևը, ուստի այստեղ և-ն պետք է իրրև վրիպակ սպրդած լինի. ուղղել ենք՝ ներքի տանն էր ապրում:

էջ 164, տող 26. ՆՈւ-ի բնագրում՝ Գերանների ծայրը կոացել էին—պետք է վրիպակ լինի. Բակունցի լեզվում հանդիպում են թվի անհամաձայնության դեպքեր, բայց նրանք ժողովրդային լեզվից են գալիս, և հոգնակի ենթակայի հետ բայն է եզակի դերովում (օրինակ, «փայլփիեց նրա նշածն աչքերը»): Վերոհիշյալ անհամաձայնությունը այլ բնույթի է, թվում է ոչ հեղինակային: Ուղղված է՝ Գերանների ծայրերը կոացել էին:

էջ 165, տող 1. ՆՈւ-ի բնագրում՝ —Նանի, նա չկա՞— ուղղել ենք ըստ հատվածի բովանդակության՝ —Նանի, նավը չկա՞:

էջ 165, տողեր 35—36. ՆՈւ-ի բնագրում՝ քրջած մարմնի հոտը—ուղղված է ըստ բովանդակության՝ քրջված մարմնի հոտը:

էջ 168, տող 28. ՆՈւ-ի բնագրում՝ Մի անգամ անձրևից վարար ժամանակ— ուղղված է՝ Մի անգամ, անձրևի վարար ժամանակ:

էջ 170, տողեր 4—5. ՆՈւ-ի բնագրում՝ Փայլում էր ամեն ինչ. եկեղեցու պղնձյա խաչից նայել չի լինում— ուղղել ենք՝ Փայլում էր ամեն ինչ. եկեղեցու պղնձյա խաչից նայել չէր լինում:

էջ 170, տող 35. ՆՈւ-ի բնագրում՝ արևին տակ— ուղղված է՝ արևի տակ:

էջ 173, տող 1. ՆՈւ-ի բնագրում՝ կամ բուզեռո—ուղղված է կակ բուզեռո:

էջ 176, տող 15. ՆՈւ-ի բնագրում՝ —էլ շնմ հավասում— ուղղված է ըստ բովանդակության՝ էլ չհավասում:

էջ 180, տող 32. ՆՈւ-ի բնագրում՝ Ալվան— ուղղել ենք՝ Ալվան:

էջ 184, տող 23. ՆՈւ-ի բնագրում՝ բազելով— ուղղված է ըստ շարակարգի բովանդակության՝ բազնելով:

էջ 185, տողեր 7—8. ՆՈւ-ի բնագրում՝ զարմանք էր պատճառում— ուղղված է ըստ շարակարգի բովանդակության՝ զարմանք էր պատճառում:

էջ 188, տող 20. ՆՈւ-ի բնագրում՝ հարցրեց— վրիպակ պետք է լինի, ուղղել ենք ըստ բովանդակության՝ հարց:

էջ 189, տող 6. ՆՈւ-ի բնագրում՝ —Ի՞նչ ասում է՝— ուղղված է՝ Ի՞նչ ասեմ, է՝:

էջ 190, տող 4. ՆՈւ-ի բնագրում՝ իրար բռնվեցին— ուղղված է՝ իրար բռնեցին:

էջ 190, տող 11. ՆՈւ-ի բնագրում՝ բուպացավ— ուղղել ենք՝ նա բուպացավ:

էջ 192, տողեր 24—25. ՆՈւ-ի բնագրում՝ ոնց են խելիք տալիս— ուղղված է՝ ոնց են խելիք գալիս:

էջ 193, տողեր 24—25. ՆՈւ-ի բնագրում՝ կամուրջը տանելու— ուղղել ենք՝ կամուրջը տանելու է:

էջ 202, տող 36. ՆՈւ-ի բնագրում՝ նրան ասելով — ուղղված է՝ ըստ հատվածի բովանդակության՝ նրա ասելով:

էջ 206, տող 1. ՆՈւ-ի բնագրում՝ կուշ գա— ուղղել ենք ըստ շարակարգի բովանդակության՝ կուշ գալու:

էջ 210, տող 30. ՆՈւ-ի բնագրում՝ Մեր հեծկլտացի ձայնից— ուղղված է ըստ բովանդակության՝ Մտր հեծկլտացի ձայնից:

էջ 213, տող 32. ՆՈւ-ի բնագրում՝ Շուպանց Սեայի տղան— այս Սեա ձևը միակն է վեպում, այլ դեպքերում նույն անձը կոչվում է Խս. ըստ այդմ ուղղված է՝ Շուպանց Խոսյի տղան:

էջ 215, տող 10. ՆՈւ-ի բնագրում՝ օտով գետին դոփում—գետին ձևը այստեղ կարող է իմաստային շփոթության տեղիք տալ, ուստի փոխված է՝ օտով գետնին դոփում: «Կարմրաքար» վեպի 4-րդ մասի «Հուսարացին գյուղն արդեն ոտքի էր» նախադասությամբ սկսվող ընդարձակ հատվածի սկզբներից (166-րդ էջ) նոր հերոս է ասպարեզ մտնում: Ահա նրա առաջին հիշատակությունը. «Եզնարածի առուն քանդվել է ու քշել Չանեն ծուռ Օհանի դորուղը» (էջ 167, տողեր 11—12): Նույն նախադասության շարունակությունն է «...այնտեղից թափվել Ունանի խամը»: Պարզ է, որ Չանեն ծուռ Օհանը և Ունանը տարբեր հերոսներ են: Օհանը նոր հերոս է, Ունանի մասին վեպի նախորդ մասերում արդեն բավական խոսվել է. օրինակ, վեպի սկզբում (էջ 92) ասված է. «...Ունանը, որը ոչ միայն Կարմրաքարում, այլև շրջակա գյուղերում հայտնի էր որպես լավ մաճկալ»: Ապա նկարագրված է նրա, որպես լավ մաճկալի, հմտությունը վար անելիս: Խոսք կա Ունանի աշխատասիրության մասին, ինչպես և այն մասին, որ «Այդքան աշխատելուց հետո նրա մեկը երկու չէր դառնում» (նույն տեղում):

Նետո՝ Ունանի, որպես հմուտ մաճկալի, մասին այլ բնութագրումներ կան (էջ 93 և այլն): Իսկ վեպի 3-րդ մասի սկզբներում շատ կենդանի, պատկերավոր նկարագրված է Ունանի զարնանային վարը (էջ 138):

Չանեն ծուռ Օհանը, վեպում առաջին անգամ հեղինակային խոսքում հիշատակվելուց հետո, հաջորդ պարբերության մեջ (նույն 167-րդ էջում) հիշվում է մի այլ հերոսի խոսքում այսպես. «Ա՛խ խալխը, իսկի կլիխի, որ Եզնարածի առուն արաքի, Չանեն ծուռ Ուհանի դորուղը քանդի, էնտեղից էլ տա Ունանի խամին...»:

Պարզ է, որ այստեղ Ունանը-Օհան-ի բարբառային (զտեզեզուրյան) ձևն է, և դարձյալ հստակ է, որ Ուհանը (կամ Օհանը) և Ունանը տարբեր անձեր են: Բայց ահա վեպի շարունակության մեջ, մանավանդ պահպանված վերջին՝ 5-րդ մասում այս երկու հերոսները անընդհատ շփոթվում են՝ նրանցից յուրաքանչյուրը և՛ Ունան, և՛ Օհան է անվանված: Դա ամենից ավելի խմբագրությունում կամ տպարանում սպրդած վրիպակների արդյունք պետք է լինի, բայց նշաններ կան, որ հեղինակն ինքն էլ մեկ կամ երկու տեղ խառնել է հերոսներին:

198-րդ էջում ըստ ՆՈւ-ի բնագրի Ունանը անվանված է Չեպանց՝ «առաջ Չեպանց Ունանը»: Հաջորդ էջում Չեպանց է կոչվում Ուհանը (էջ 199, տող 20):

197—198 էջերում Բուրք քաթի մոտ նստած գյուղացիները զրուցում են պատերազմի մասին. ահա մի քանի խոսք այնտեղից ըստ ՆՈւ-ի բնագրի (ընդգծել ենք Ունան և Ու-

Տան անունները)։ «—Իստ ամի, հարուստի տունը ղոնազ եկավ, աղքատի ուր մորթեցին։ Տրաքոցը որ ընկավ, մենք հո էս գլխից ենք ոտան տակի կորչելու,— տիրությամբ հարեց Ունանը։

Նա նստել էր անկյունում ու մտածում էր իր կրտսեր եղբոր մասին...»։

Պարզվում է, որ այս հերոսը բանակից վերադարձած եղբայր ունի ետառն անունով (մանկալ Ունանի մասին մինչ այս նման բան չէր ասվել)։ Ապա նույն հերոսը հիշում է եղբոր վերադարձը բանակից. «Այս հիշելուց Ունանը ժպտաց»,— ասված է հեղինակային խոսքում։ Ստացվում է, որ ոչ թե Ունանը, այլ Ունանը ունի ետառն անունով եղբայր։ Ապա նույն տեղում միևնույն անձի մասին ասված է. «Ունանը միտք ուներ մանկալու՜թյունը թողնելու»։ Սա արդեն վեպի սկզբից հայտնի մանկալ Ունանին պետք է վերաբերի։

Ահա շփոթմունքի մի այլ նմուշ (էջ 199)՝ ըստ ՆՈւ-ի բնագրի.

«— Եվ սով մեծ...— կրկինց Շուղանց Իսն։ Ամենից շատ Ունանը սարսափեց այդ խոսքից։ Ու դարձյալ հիշեց եղբորը, իրենց մեծ տունը, երեխաներին, որոնք ճտերի նըման թխսամոր հետևից վազում են, հացն ուտում այնքան ագահ, ինչքան շերամի որդը թթենու տերևները... Շարաթը մի տաշտ հերիք չէր անում։ Եվ ի՛նչ ցորեններ կան այս տարի,— մտածեց Ունանը։— Զաղացպանն իզուր չէր ասում, թե տարին զլխակեր է... Ինաստուն մարդ է շաղացպանը... Միայն նա կարող է ասել, թե ինչ պիտի անել, որ ետառնին զինվոր շտանեն։

— Ցարաք տեսնես եզինքը ջրե՛լ են,— ասաց նա բարձրաձայն, և փեշերը թափ առավ վեր կացավ տեղից, իշավ ներքև։ Նրա ականջին ընկավ Չետանց Ունանի հարցը...

— Տիրտեր, գերմանացին խաշապաշտ չի՞... — Ունանը քայլում էր ու մտածում. գերմանացին խաշապաշտ չի՞... Հա՛, ետառն էլ է ավազանում մկրտված... Ունանն անցավ եկեղեցու մոտով... Ու մի բան Ունանի ներսում պոկվեց...» և այլն։

Շփոթվող հերոսներից մեկը գնում է (եզինքը ջրելու), մյուսը մնում Բուր քարի մոտ. նա հեռանում է ավելի ուշ (էջ 204)՝ մաղյանի առաջ խոտ զցելու պատրվակով։ Նա ևս մի բանի տեղ Ունան է կոչվում։ Ունան հանդիպում է նաև երիտասարդների՝ Բուհակ մեկնելու տեսարանում, որ «Նոր Ուղիում» տպագրված հատվածի վերջն է։

«Կարմրաքարի» հետագա վերատպույթումներում այս շփոթը լրիվ կամ մասամբ մեացել է։

Մանրամասն զննելով Ունան և Ունան շփոթումների բուրդը դեպքերը, եղբակացրիք, օր, այնուամենայնիվ, ետառն անունով եղբայր և «թխսամոր հետևից վազող ճտերի նման» երեխաներով լի տուն ունեցողը մանկալ Ունանն է, իսկ Ունանը, իրոք, մեկ անգամ Օհան ձևով հիշատակված անձն է, նույն Չանեն ծուռ-ը և Չետանց-ը։ Ըստ այս եղբակացրության հետևյալ դեպքերում ճշտել ենք Ունան և Ունան բուրդ շփոթումները.

էջ 181, տող 22. ՆՈւ-ի բնագրում՝ Չետանց Ունանը— ուղղել ենք՝ Չետանց Ունանը։

էջ 197, տող 33. ՆՈւ-ի բնագրում՝ Ունանը— ուղղել ենք՝ Ունանը։

էջ 198, տող 14. ՆՈւ-ի բնագրում՝ Չետանց Ունանը— ուղղել ենք՝ Չետանց Ունանը։

էջ 199, տող 14. ՆՈւ-ի բնագրում՝ մտածեց Ունանը— ուղղել ենք՝ մտածեց Ունանը։

էջ 199, տողեր 21—22. ՆՈւ-ի բնագրում՝ Ունանը քայլում էր— ուղղել ենք՝ Ունանը քայլում էր։

էջ 199, տող 25. ՆՈւ-ի բնագրում՝ Ունանն անցավ— ուղղել ենք՝ Ունանն անցավ։

Այս ուղղումներից հետո էլ, թերևս մնում է մասնակի հակասություն, որ երևի զուտ հեղինակային է:

Էջ 226, տողեր 23—24. ԳԴ-ի բնագրում՝ Այդ «ասկե կամպոնիայից» մի ֆաճի հոգի միացել էին «ինտերեսի» համար— ուղղել ենք ըստ բովանդակության՝ Այդ «ասկե կամպոնիային» մի ֆաճի հոգի միացել էին «ինտերեսի» համար:

Էջ 227, տող 28. ԳԴ-ի բնագրում՝ բազում— ուղղված է բաղնում:

## Ձ Ի ու ղ ղ վ ա ծ

Բնագրի հեղինակային վրիպումները, անմիօրինակությունները ընդհանրապես շանացել ենք պահպանել, արտառոց դեպքերում ենք ուղղել. դրանք վերը նշվեցին:

Չենք ուղղել մի շարք ուղղագրական ձևեր, որոնք այսօր հնացած են և որոնց մասին սույն ծանոթագրությունների ընդհանուր մասում ասվել է:

Բացի ֆցել, մաբաֆ խոսակցական-ուղղագրական ձևերի մասնակի ուղղումներից ժողովրդային այլ բնույթի լեզվատարրերը այստեղ ևս բոլոր դեպքերում պահպանված են (ինչպես՝ նսաի, զալի. ման գալի, ասի, ֆու և այլն): Թողնված են նաև հեղինակային այնպիսի անմիօրինակություններ, ինչպես մերթ հալևար, մերթ ալևար գործածելը կամ՝ պիճըակ, կանֆեա, Մաբոզով ձևերը:

Ստորև նշված են բնագրային աղբյուրներում եղած մի քանի այլ ուղղագրական ու քերականական ձևեր, որոնք այսօր դուրս են գրական լեզվի մակարդակից, բայց պահպանված են:

Էջ 126, տողեր 24—25. ՆՈւ-ի բնագրում՝ Բշում կին և արածացեում Բառասեալի մտերին ընկած այն բացուտները—այսօր գրական կլինեն՝ արածացեում... բացուտներում, բայց գերադասեցինք թողնել ժողովրդային ձևը՝ արածացեում... բացուտները, որ, հավանաբար, հեղինակային է:

Էջ 127, տողեր 18—19. ՆՈւ-ի բնագրում՝ իբր երա գեաուրյամբ են գիշերով Կամբաբարի խոտհարքն արածացեում— նույնն է, ինչ և նախորդը. այժմյան գրական ձևը կլինի խոտհարքում արածացեում, բայց թողել ենք հեղինակայինը:

Էջ 127, տող 23. ՆՈւ-ի բնագրում՝ ճինգ շարը սառել կին— ժողովրդային խոսքից եկող թվի անհամաձայնություն է, որ հաճախ է հանդիպում բակունցյան խոսքում: Ինչպես այլ դեպքերում, այստեղ էլ պահպանված է:

Էջ 140, տող 12, էջ 207, տող 11. ՆՈւ-ի բնագրում՝ ֆոզով շափել, ֆոզով կապել— օգտ էր— ֆոզ-ը ֆուզ բառի իմաստով է գործածված. հնացած ձև է, պահպանել ենք:

Էջ 149, տողեր 17—18. ՆՈւ-ի բնագրում՝ «Ռուսաստանու կողմերից, էժանից ու Բանգից, ժողովրդի ավճալաբից»— բերված է իբրև գյուղացի հերոսի խոսք, ուստի բանգից խոսակցական-ուղղագրական ձևը պահպանեցինք:

Էջ 184, տողեր 26—34. ՆՈւ-ի բնագրում նախադասությունն անհաշող է, թողել ենք նույնությամբ:

Էջ 203, տող 24. ՆՈւ-ի բնագրում՝ բանգից, էժանից— բանգից ձևը հերոսի խոսքում է գործածված, այստեղ ևս պահպանել ենք՝ ենթադրելով, որ հեղինակային է:

Էջ 221, տող 34. ԳԴ-ի բնագրում՝ ջուպներ— թեև այս ձևը տպված է դասական ուղղագրությամբ և նորով պետք է լինի ջվալներ. բայց գերադասեցինք լուզգել՝ ենթադրելով, որ հեղինակային է:

էջ 224, տող 16. ԳԳ-ի բնագրում՝ շուր աւ փալտաւ— պահպանեցինք ժողովրդային շուր ձևը, շփոխելով ջուլ-ի:

Պահպանել ենք նաև գրաբար հատվածների կամ արտահայտությունների ոչ գրաբարյան ուղղագրությունը. օրինակ՝ էջ 89, տողեր 20—22. ՆՈւ-ի բնագրում՝ «եռրածոր անդունդ և դաշտածև հովիտ, զարդարյալ ծաղկոք և առատ բուսոր: Գարունն աստանոր բերե զնմանությունն եղեմի...»— տպագրված է 1922 թ. ուղղագրությամբ, որը մեր բնագրում փոխարինված է 1940 թ. ուղղագրությամբ, ինչպես բոլոր դեպքերում: Թեև ճիշտ կլինեիր դասական ուղղագրությունը:

\*\*\*

2. Հարությունյանի, Խ. Սարգսյանի, Տ. Վանյանի կազմած և 1929 թ. հրատարակած «Կարմիր ուղի: Հայերենի աշխատանքի քրեստոմատիս» դասագրքի Բ պրակի մեջ (էջ 131—143) դրված են «Կարմրաքար» վեպի 4-րդ մասի վերջերից մի քանի հատվածներ «Սողոմարանը» վերնագրի տակ: Այն տեղ է գտել դասագրքի 3-րդ մասում, որի խորագիրն է՝ «Արդյունաբերական կապիտալի շրջան»: Այստեղ «Սողոմարանը» առաջին հոդվածն է: Կազմողներն այն բաժանել են երեք մասի: Վերջում կա բառերի բացատրություն և հարցեր նյութի վերաբերյալ:

«Կարմրաքարից» բերված են հետևյալ հատվածները. «Փողոցի ծայրին երևաց մի ձիավոր» նախադասությամբ սկսվող պարբերության սկզբից (էջ 173, տող 25) մինչև «...որ խուլ խշուռն էին ծեր կաղնիները» բառերը (էջ 187, տող 19): Այս հատվածի տարբեր մասերից դասագրքում կրճատված է շուրջ երկուսուկես էջ:

Որոշ տեղեր ավելացված են բառեր. օրինակ, հենց սկզբից ավելացված են «Կարմրաքար գյուղի» բառերը, որոնց հաջորդում է բնագրի պարբերության սկիզբը՝ փողոցի ծայրին:

Մի քանի տեղ բնագրի մեջ նոր պարբերություններ են թողնված: Փոփոխությունները միայն բնագիրը դասագրքային դարձնելու նպատակ ունեն: Օրինակ, Բակունցի այն ժամանակվա ոճին բնորոշ անելուց, պատմելուց, բացվելուց և նման գանգեզուրյան ձևվերը («Գերանը երկու կտոր անելուց», «Նրա մասին պատմելուց»— էջ 183—184, «Խոսք բացվելուց», էջ 185) դասագրքում փոխարինված են անելիս, պատմելիս, բացվելիս և համանման գրական ձևերով («Գերանը երկու կտոր անելիս», «Նրա մասին պատմելիս», «խոսք բացվելիս»): Կամ արու բառը փոխարինված է արձ-ով և այլն:

### ՎԵՊԻ ՍՏԵՂԵՄԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

«Նոր ուղի» ամսագիրը «Կարմրաքար» վեպը սկսել է հրատարակել 1929-ի հունվարից: Ամսագրի այդ անդրանիկ համարում նախ դրվել են Քումանյանի շորս բանաստեղծությունները (այն ժամանակ անտիպ), Ծ. Զարենցի «Խմբապետ Շավարշը», Կրորդը՝ Ա. Բակունցի «Կարմրաքարի» առաջին հատվածն է: Այս, ինչպես և «Նոր ուղիում» հրատարակված մյուս հատվածները երկի ժանրը (վեպ) նշող ենթավերնագրի շունեն: 1931 թ. «Գրական դիրքերում» ամսագրի 2—3-րդ համարում հրատարակված հատվածի վերահիշյալ ենթավերնագրից (Մի գլուխ «Կարմրաքար» վեպից) իմանում ենք, որ հե-

դիմակը «Կարմրաքարը» վեպ է համարել: Բացի դրանից, 1932 թ. հունիսի 5-ին գրած ինքնակենսագրության մեջ ևս հեղինակը «Կարմրաքարը» վեպ է անվանում (տե՛ս ստորև): Այս հաշվի առնելով է, որ ներկա հատորում երկը դրել ենք Վեպեր-ի մեջ և Կարմրաքարը վերնագրից հետո ավելացրել վեպ ենթավերնագիրը:

Քանի որ «Կարմրաքարը» սկսել է տպագրվել «Նոր ուղի» 1929 թ. հունվարի համարից, բնականաբար, հեղինակը պետք է սկսած լիներ այն գրել ամենաուշը 1928 թը վականին:

Ուշադրություն է գրավում այն, որ «Նոր ուղի» հանդեսի մայիսյան համարում հրատարակված շորրորդ և վերջին հատվածի տակ նույնպես տպված է՝ Ծառունակելի: «Նոր ուղին» լույս է տեսել մինչև 1932 թ. (այսինքն 1929 թ. մայիսյան համարով չէ, որ դադարել է): Կնշանակի «Կարմրաքարի» շարունակության հրատարակումն այդ ամսագրում ծրագրված է եղել, և ինչ-որ բան խանգարել է այդ հրատարակմանը:

Վեպի «Նոր ուղիում» հրատարակված մասի վերջին հատվածներում, ինչպես վերը նշվեց, կան վրիպումներ (Ունան—Ունան և այլն), որոնցից մի քանիսը, կարելի է մտածել, թե հեղինակն է թույլ տվել շտապելու պատճառով: Կարող է տպավորություն ստեղծվել, որ «Նոր ուղիում» հրատարակված վերջին հատվածը հեղինակը շտապով է գրել 1929-ի առաջին ամիսներին՝ ամսագրի հերթական համարին հասցնելու նպատակով, իսկ հինգերորդ հատվածը չի կարողացել «Նոր ուղի» հունիսյան համարին հասցնել, որի հետևանքով էլ մայիսյան համարում նշված Ծառունակելի-ն մնացել է «անշարունակելի»:

Բայց սա թիչ հավանական է. չէ՞ որ գրողը վեպի հերթական 5-րդ հատվածը կարող էր ներկայացնել ամսագրի հուլիսյան, օգոստոսյան կամ հերթական մի այլ համարի: «Կարմրաքար» վեպի՝ «Նոր ուղիում» տպված մասի շարունակությունը բնավ չտպագրվելու պատճառը, ըստ երևույթին, այլ է:

Ուշադրություն է գրավում նաև այն, որ երկու տարի անց, այս անգամ «Գրական դիրքերում» ամսագրի 2—3-րդ համարում տպվել է ոչ թե վեպի՝ «Նոր ուղիում» հրատարակված մասի շարունակությունը, այլ բոլորովին ուրիշ մի հատված՝ Զանգեզուրի ազգամիջյան կռիվներից մի դրվագի պատկերմամբ: Ավելի հավանական է, որ «Նոր ուղիում» «Կարմրաքարի» հրատարակումը դադարեցվել է բովանդակության մեջ խըմբագրության կողմից հրատարակման ոչ հարմար տեղեր հայտնաբերվելու պատճառով:

Հիշենք, որ «Նոր ուղիում» «Կարմրաքարի» հրատարակումն սկսվելուց մի ամիս առաջ՝ 1928-ի վերջին՝ «Գրական դիրքերում» ամսագրի մեջ (№ 11—12) լույս էր տեսել ընդարձակ մի հոդված՝ «Ակսել Բակունցի ստեղծագործությունների սոցիալական արժեքը» վերնագրով: Այստեղ գրողը խստագույնս քննադատվում էր իր «գլուղասիրական հակումների» համար: Նույն մեղադրանքով Բակունցը երգիծվել էր նաև «Գրական դիրքերի» մոտակա մի այլ համարում (1929, № 1): Արդյոք սա չի՞ պատճառ դարձել, որ «Նոր ուղի» խմբագրությունը (խմբագիրներ՝ Ե. Զուբար, Ի. Սիմոնյան) չտպագրեր վեպի, այսպես ասած, «գլուղասիրական» մասի շարունակությունը: Իսկ երկու տարի անց «Գրական դիրքերում» ամսագիրը կարող էր տեղ տալ վեպի մի այնպիսի հատվածի, որը նման առարկություն չէր հարուցել:

Այսպիսով, «Նոր ուղի» ամսագրի 1929 թ. 5-րդ համարում «Կարմրաքարից» հրատարակված վերջին հատվածի տակ գրված Ծառունակելի-ն և վերը նշված հանգամանք-

ներք առնվազն ցույց են տալիս, որ Բակունցի վեպը այդ թվականին արդեն ավելի է եղել, քան այն, ինչ մեզ հասել է: Բայց կան նաև տեղեկություններ, որ վեպը ավարտված է եղել:

Վեպի հիմնական մասն, ըստ երևույթին, գրվել է 1928 թվականին: Դա երևում է նաև այն բանից, որ այդ թվականին համեմատած հարևան նախորդ ու հաջորդ տարիների հետ Բակունցը ամենից ավելի թիչ նոր գրված պատմվածք կամ ակնարկ է հրատարակել: Այսպես. ըստ գրողի մատենագիտության տվյալների («Ակսել Բակունց. կենսագրություն և մատենագիտություն», 1960, էջ 98—110) Բակունցը մամուլում նոր գեղարվեստական երկեր հրատարակել է 1924-ին՝ 4, 1925-ին՝ 14, 1926-ին՝ 20 և մեկն առանձին գրքով («Գալուստի վիկը») = 21, 1927-ին՝ 11-ը մամուլում, 3-ը «Մթնածոր» ժողովածուի մեջ («Այու սարի լանջին», «Մթնածորի» շարքը», «Առ-Մարգար») և 1-ը առանձին գրքով («Հովնաթան Մարշ») = 15, 1928-ին ընդամենը 2 նոր գեղարվեստական երկ, 1929-ին 4-ը մամուլում, 3-ը «Սպիտակ ձին» ժողովածուի մեջ («Սպիտակ ձին», «Ձմռան մի գիշեր», «Նամակ ուսաց թաղավորին») = 17: Համառոտված. 1924՝ 4, 1925՝ 14, 1926՝ 21, 1927՝ 15, 1928՝ 2, 1929՝ 7:

Այս տվյալների մեջ կլինեն որոշ պակասներ, բայց ընդհանուր առմամբ նրանք ձիշտ են արտացոլում գրողի գեղարվեստական նոր հրատարակումների պատկերը 1924—1929 թթ.: Անշուշտ, որևէ մեկ տարվա մեջ հրատարակված երկերի քանակը չի կարող լինելիս ձիշտ ցույց տալ նույն տարում հեղինակի զբաղ երկերի քանակը: Բայց այս դեպքում պետք է նկատի ունենանք, որ բերված տվյալները վերաբերում են փոքրածավալ երկերի՝ պատմվածքների և ակնարկների (բացառությունը «Հովնաթան Մարշ» է), և ապա մեծ մասամբ այդ երկերը հրատարակվել են գրվելուց թիչ ժամանակ անց: Այնպես որ, բերված թվական տվյալները զգալի շափով ցույց են տալիս նաև յուրաքանչյուր թվականին Բակունցի զբաղ գեղարվեստական երկերի մոտավոր քանակը: Նկատի ենք առնել նաև Բակունցի գյուղատնտեսական գործունեության ծավալը նշված տարիներից յուրաքանչյուրում:

Այսպիսով, հիշյալ տարիներից պատմվածքներով ու ակնարկներով ամենից թիչ «ծանրաբեռնվածք» 1928 թվականն է, այդ տարի Բակունցը հրատարակել է մի պատմվածք՝ «Տրանգիտ ՆՆՁ Բայանդուր» («Խորհրդային Հայաստան», հուլիսի 8) և մի ակնարկ «Օձի բերանից» («Խորհրդային Հայաստան», հուլիսի 22), երկուսն էլ ստույգ է, որ գրել է նույն 1928-ին: Թե ուրիշ ինչ գեղարվեստական երկեր է գրել այդ թվականին, ճիշտ ասել դժվար է, բայց 1929-ի սկզբից «Կարմրաքար» վեպի հատվածների հրատարակումն ինքնըստինքյան ասում է, որ 1928-ին նա աշխատել է այդ վեպի վրա: Վերջ հիշված հանդամանքները մտածել են տալիս, որ այդ տարի գրողը հիմնականում զբաղված է եղել հենց «Կարմրաքարը» գրելով:

«Կարմրաքարի» մասին կան պահպանված որոշ այլ տեղեկություններ: Օրինակ, 1932 թ. հունիսի 5-ին Բակունցի ձեռքով գրված ինքնակենսագրության մեջ (գրվել է «Հոկտեմբեր-նոյեմբեր» տարեգրքի համար) կա այսպիսի նախադասություն. «Գրել եմ երեք գիրք՝ «Հովնաթան Մարշ», «Մթնածոր» և «Սպիտակ ձին» և անավարտ տպած «Կարմրաքար» վեպը» (ինքնագիրը պահվում է Ծ. Զարենցի անվ. գրակ. և արվեստի թանգարանում): Ինչպես տեսնում ենք, Բակունցը չի գրել անավարտ մնացած «Կարմրաքար» վեպը, այլ նշել է անավարտ տպած վեպի մասին: Ընթ նախադասության մեջ

թողնենք միայն «Կարմրաքարի» մասին ասվածը, կունենանք «Գրել եմ... անավարտ-  
տպած «Կարմրաքար» վեպը», այսինքն՝ վեպը գրել եմ, բայց տպելը մնացել է անա-  
վարտ: Սա, կարծում ենք, լուրջ վկայություն է այն մասին, որ ինքնակենսագրությունը  
գրելու ժամանակ՝ 1932 թ. ամռանը, հեղինակը «Կարմրաքարը» ավարտած է եղել:

Փոքր-ինչ առաջ՝ նույն 1932-ի մարտի 10-ին «Գրական թերթում» (№ 2) Բակունցի  
մասին գրված է. «Նա որոշ ակնոցներով ճանաչում էր Զանգեզուրի հին գյուղը և վերաբ-  
րաբար էր այն յուրահատուկ ուժգնությամբ: Ո՛ր է վերակառուցման շրջանի Ակսելը՝  
Նրա առաջը դեռ չի երևում: «Կարմրաքարն» առայժմ միայն մի բան է վկայում, որ  
Ակսելը որոշ իմաստով վարպետ է հին գյուղը նկարագրելիս: Բայց նա «Կարմրաքարի»  
հաջորդ մասերի վրա թույլս է նստել: Մենք շենք պահանջում, որ նա շտապի «Կարմրա-  
քարը» լույս աշխարհ հանել առանց իր ուզածի պես մշակման ենթարկելու: Այդ կլինեք  
անհրժեք և վնասակար պահանջ: Սակայն իրավունք ունենք Ակսելից նույնպես պահան-  
ջելու, որ նա մոտենա սոցիալիզմի կառուցման գիզանտներին, որ նա նույնպես «վերա-  
կառուցվի»: Մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ այստեղ կա որոշ վկայություն-  
այն, որ եղել են «Կարմրաքարի» շնորհապարակված մասեր, որոնց վրա գրողն աշխատել  
է, որ նրան ինչ-ինչ մեղադրանքներ ու պահանջներ են ներկայացրել այդ առթիվ: Այս-  
տեղ չի ասված, որ Ակսելը պետք է ավարտի վեպը, այլ միայն խոսք կա վեպի հաջորդ  
մասերի մշակման մասին, որ նշանակում է. թե այդ մասերը եղել են (և դա հայտնի է  
եղել ժամանակակիցներին):

Այժմ մի բանի խոսք վկայություններից ամենակարևորի մասին:

1959 թ. մի շարք անգամ այցելել ենք Ա. Բակունցի այրի Վարվառա Զիվիչյանին,  
նրա բնակարանում: Զրուցել ենք գրողի կյանքին վերաբերող շատ հարցերի մասին, և  
այդ զրույցները մեզ օգնել են Բակունցի կենսագրությունը գրելիս: Մասնավորապես  
«Կարմրաքար» վեպի մասին տիկին Զիվիչյանը հաղորդեց հետևյալը: 1931 թ. «Կարմ-  
րաքարը» գրված է եղել, բացի վերջին գլխից, որտեղ պետք է պատկերվեր համասար-  
ած կուրկտիվացումը և Կարմրաքար գյուղում կուրտստեություն ստեղծելը:

Վ. Զիվիչյանը պատմում էր, որ 1930—31 թթ. «Կարմրաքարի» ավարտով հետա-  
քրքրվել է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի այն ժամանակվա առաջին քարտուղար  
Ա. Խանչյանը: Դա գրադեցրել է նաև Ե. Զարենցին, որը նույնպես շտապեցրել է Բա-  
կունցին:

1931 թ. Պետերհոֆում (այժմ Պետրոգրադ) սկսում է գործել Գիտնականի տուն  
կոչվող ստեղծագործական հանգստյան տունը: Ա. Խանչյանի միջնորդությամբ, նույն  
թվականի վերջերին, Բակունցը մեկնում է Պետերհոֆ՝ «Կարմրաքարը» ավարտելու հա-  
տուկ նպատակով: Պետերհոֆում գրողը մնում է շուրջ երեք ու կես ամիս: Վերադառնում  
է նախատեսված ժամանակից շուտ (ըստ կնոջ պատմածի գրողը փախել է հյուրանոսի  
սառնամանիքից, — ընդհանրապես ցրտից խուսափում էր):

Նույն վկայության համաձայն Պետերհոֆում Բակունցը «Կարմրաքարը» ավարտել  
էր, մնացած են եղել խմբագրման ու մշակման որոշ աշխատանքներ: Ի դեպ Վ. Զի-  
վիչյանը վկայում է նաև, որ գրողը Պետերհոֆից բերած է եղել նոր գրած մի քանի  
պատմվածքներ ևս:

Վ. Զիվիչյանի պատմածների ստույգ լինելը հաստատվում է նաև հետևյալ իրողու-  
թյամբ: Նրա պատմածի համաձայն, Պետերհոֆում եղած ժամանակ Բակունցը մտերմա-  
ցած է եղել այնտեղ հանգստացող հայտնի մանկագիր, թարգմանիչ Ս. Մարշակի հետ:

Այդ իմանալով՝ մենք անմիջապես նամակ գրեցինք Մարշակին՝ խնդրելով համառոտակի ներկայացնել իր տպավորությունը՝ ստացած Ա. Բակունցից: Եկավ պատասխանը, որտեղ ի թիվս այլոց՝ ասված էր. «Ակսել Բակունցի մասին իմ մեջ պահպանվել են ամենապայծառ հիշողությունները: Նա մի աշխույժ, բարի, ուրախ մարդ էր, հրաշալի պատմող: Այն ժամանակ, երբ ես նրան հանդիպեցի, նա լի էր մտահղացումներով, որոնք կրավականացնեին շատ գրքեր ստեղծելու համար: Նա հիանալի գիտեր իր երկրի, իր ժողովրդի կյանքը» (ընագիրը պահվում է Ե. Չարբիցի անվ. գրակ. և արվեստի թանգարանում, հրապարակվել է «Գրական թերթում»։ 1964, № 52): Պարզվեց նաև, որ Մարշակը խորհրդային գրողների 1-ին համագումարում իր ունեցած կյուլթի մեջ նույնպես խոսել է Ա. Բակունցի մասին (տե՛ս Первый всесоюзный съезд советских писателей, М., 1934, էջ 21):

Եվ այսպես, գրողի կնոջ վկայությամբ, «Կարմրաքարը» ավարտված է եղել, բայց վեպի ամրոջական ձևագրի ճակատագիրը առայժմ մնում է անհայտ:

\*\*\*

«Կարմրաքար» վեպից պահպանված ընդարձակ հատվածում նկարագրված է առաջին համաշխարհային պատերազմին նախորդած ժամանակաշրջանի հայ գյուղը (հավանաբար՝ 1907—1914 թթ.): Հատվածն ավարտվում է 1914-ի օգոստոսով. պատերազմն սկսվում է, գյուղից երիտասարդների առաջին խումբը մեկնում է բանակ:

Ինչպիսի՞ն է եղել շարունակությունը: Կարելի է որոշ կուհուհուր տեսել: Նախ ակնհայտ է, որ գրողը շարունակել է նկարագրել Կարմրաքար գյուղը պատերազմի օրերին (և ոչ թե բանակ գնացողների հետագա ճակատագիրն է պատկերել բանակում ու ռազմաճակատում): Այնուհետև պետք է պատկերված լինի ազգամիջյան ընդհարումների շրջանը: Դրա մի դրվագը, ինչպես ասվեց, հրապարակված է «Ջեյթայի ավերումը» վերնագրով:

Վեպի պահպանված մասում սկիզբ էր առել Արզումանի և Սալբիի սերը, և այնպես, որ պետք է զարգացվեր հեղինակի կողմից, մանավանդ Արզումանի վերադարձից հետո: Վեպի տպագրված մասում (էջ 153—154) Մկրտումը նկատում է Սալբիի կանացի հրապույրները, և երևում է, որ նա գիտի Սալբիի ու Արզումանի սիրո մասին: Չի բացառվում, որ Արզումանի բանակ մեկնելուց հետո Մկրտումը ոտնձգություններ աներ Սալբիի նկատմամբ, մանավանդ, որ Սալբինեց տունը հեղեղից վնասվել էր, ընտանիքի նյութական վիճակը ծանր էր: Մկրտումը կարող էր դա շարաշահել: Հավանաբար Արզուման—Մկրտում արդեն սկսված ընդհարումը վեպի շարունակության մեջ սաստկացել է Մկրտում—Սալբի խնդրի պատճառով:

«Նոր ուղիում» հրապարակված հատվածի վերջին մասում Ունանը իր եղբորը՝ Խաչանին խորհուրդ է տալիս ծխախոտի ջուր խմել՝ բանակից ազատվելու համար (էջ 212—213): Խաչանը տատանումների մեջ էր: Սա ևս ինչ-որ լուծում պետք է ստանար վեպի շարունակության մեջ (հավանաբար ողբերգական):

---

Վ. Զիվիջյանի փոքրածավալ հուշերը պահվում են Մաշտոցի անվան մատենադարանում. Ա. Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244, 19, վավ. 4:

Առհասարակ, Արզումանը վեպի շարունակութեան մեջ պետք է, որ կարևոր դեր ունեցած լինի: Հավանաբար, նման դեր է ունեցել նաև Սգորը, որը պահպանված հաս- վածում թուցիկ է պատկերված: Վեպի հետագա մասերում պետք է դեր ունեցած լի- նեն նաև Տեր Նորընծան, Ավան ամին: Ունանը, հավանաբար, հրաժարվում է մաճ- կալութիւնից:

Հնարավոր է, որ հանդես եկած լինեն նոր հերոսներ: Օրինակ, «Ջեյթայի ավերու- մը» կտորում կարմրաքարցի նոր հերոս է հանդես գալիս՝ կազ Պուղանը (սա, ան- շուշտ, վեպի սկզբի մասում եղած Գրդըլ Պուղին չէ, ինչպես պարզորոշ կարող է նը- կատել ընթերցողը): Պուղանը Ավան ամու հանձնարարականն է կատարում, ուրեմն «նրա կողմի մարդ է»: Իսկ թե ինչպես է Բակունցն ավարտել վեպը, իրոք, հանելուք է մնում:

Հարց է առաջանում. եթե վեպը 1932-ին կամ թեկուզ հաջորդ տարին ավարտ- ված է եղել, ապա ինչու՞ գրողն այն հրատարակութեան չի հանձնել: Արդո՞ք դրա պատճառն այն է եղել, որ վերջին գլուխը չի բավարարել և՛ իրեն՝ հեղինակին, և՛ հրա- տարակչութեանը, իհարկե, հակադիր պատճառներով:

\*\*\*

Ա. Բակունցի ստեղծագործական կյանքը բաժանվում է 3 շրջանի. ա) 1913-ից սկսած՝ 1910-ական թվականներ, բ) 1924-ից սկսած՝ 20-ական թվականներ և գ) 30- ական թվականներ՝ մինչև 1936 թ. կեսերը: Իհարկե, այս շրջանաբաժանման սահ- մանները ինչ-որ տեղ պայմանական են, բայց և գրողի երկերին ծանոթ ընթերցողը կհաստատի, որ նման երեք շրջաններ, իրոք, եղել են Բակունցի՝ 23 տարի տևած ստեղ- ծագործական կյանքի ընթացքում, և որ այդ շրջաններից յուրաքանչյուրն իր որակա- կան առանձնահատկութիւններն ունի:

«Նոր ուղիում» 1929-ին «Կարմրաքարի» հրատարակված մասերը, անպայման, վերաբերում են գրողի ստեղծագործական կյանքի 2-րդ շրջանին՝ թե՛ գրված լինելու ժամանակով (1928 թ.), թե՛ բովանդակությամբ (նախախորհրդային գյուղ, հայ գեղ- ջուկների կերպարներ, մտածողութիւն և այլն): Հավանաբար, նույնը չի կարելի ա- սել «Ջեյթայի ավերումը» հատվածի մասին: Ամբողջութեան մեջ «Կարմրաքարը», թե- րևս, միաժամանակ երկրորդ ու երրորդ շրջաններին վերաբերող երկ է եղել: Գուցե վեպում տեղ գտած որոշ «անմիասնականութիւնն» է, որ գրողը ջանացել է մշակման աշխատանքով հաղթահարել ու, գուցե, նման հաղթահարումն է, որ ավարտին չի հասցրել:

\*\*\*

Բակունցի մյուս երկերի համեմատ «Կարմրաքարի» նախակերպարները, նախա- պատմութիւններն ու նախավայրերը որոշելը բավական դժվար է, շատ գեպքերում՝ անհնար:

Առանձին գրվագներում գրողը կարծես նկատի է առել իր մոր ծննդավայրը՝ Երի- շեն (Վերին շեն) գյուղը, որը մեզ ներկայանում է բակունցյան մի շարք երկերում («Նամակ ուսաց թագավորին», «Ձմռան մի գիշեր», «Ապրտակ ձին», «Եղբայրու- թեան ընկուղեհները» և այլն.— տե՛ս Երկերի այս հրատարակութեան 1-ին և 2-րդ հա-

տորներում, նաև համապատասխան երկերի ծանոթագրությունները): Օրինակ, «Կարմ-  
րաքարում» կա լուս խաչեւ կոչվող վայրը, որ մոտ է վեպում նկարագրված Կարմրա-  
քար գյուղին («Նրան ճանապարհ գցեց մինչև լուս խաչերը»,— էջ 189, տող 15), նույն  
վայրը կա «Զմուռն մի գիշեր» պատմվածքում, որպես Երիշենին մոտ գտնվող մի տեղ  
(տե՛ս այս հրատարակության 2-րդ հատորում):

Այնուհետև. առանձին դեպքերում վեպի գլխավոր հերոսներից մեկի՝ Ավան ամու-  
նկարագրությունը հիշեցնում է գրողի երիշենցի պապին (մոր կողմից)՝ Հարություն  
Նուրշուգյանին: Օրինակ, «Կարմրաքարում» Ավան ամին ունի «բարի դիմագծեր», «կա-  
պույտ աչքեր»՝ «կապույտ աչքերը փոքրանում էին», այնպիսի ժպիտ, «որը լուսավո-  
րում էր նրա երծալը, լուսապսակ կազմում սպիտակ գլխի շուրջը», նրա մասին ասված  
է նաև «նստում էր տան առաջ, երբ մուֆն ընկնում էր: Նայում էր խավարին, լսում  
էր ինչ-որ ձայներ՝ մարդու, կովի...»: Նույն հատկանիշներն ունի Արթին (Հարու-  
թյուն) պապը «նամակ ուսաց թագավորին» պատմվածքում, ինչպես՝ «...աչքիս ա-  
ռաջ երևում է իմ Արթին պապի աչեհեր գլուխը, նրա կապույտ աչքերը», «Երբ նա  
ժպտում էր, նրա կապույտ աչքերը փոքրանում էին», «Երիկնամուտին՝ Արթին պա-  
պիս նստելու տեղը կամարակապ դարպասի նիշն էր...» և այլն (մանրամասն տեսնել  
վերոհիշյալ պատմվածքում):

Այս նմանոթյամբ հանդերձ, Արթին պապը և Ավան ամին բավական տարբեր  
կերպարներ են. ըստ երևույթին, Ավան ամու նկարագրության մեջ Բակունցն ուղղակի  
նկատի է առել իր պապի մի երկու առանձին հատկանիշը, իսկ հիմնական «բնորոշը»  
մնում է անհայտ:

«Եղբայրության ընկուզենիները» պատմվածքում առկա է քահանա՝ Տեր Նորըն-  
ծա անունով (թեև թուցիկ է ներկայացված), որի նախակերպարը Երիշենի քահանա  
տեր Հակոբը պետք է եղած լինի: Տեր Նորընծա անունով քահանան «Կարմրաքարի»  
գլխավոր հերոսներից է: «Եղբայրության ընկուզենիների» և «Կարմրաքարի» տեր Նո-  
րընծաները ըստ էության միմյանց նման են (օրինակ, առաջինում նրա «աշխար-  
հավեր պատերազմ» արտահայտությունը հիշեցնում է «Կարմրաքարի» քահանային  
բժորոշ գրքային խոսքը):

«Կարմրաքարի» ջաղացպան. Անդրիի համար նախակերպար է ծառայել Երիշենի  
ջաղացպան Անդրին: Զաղացպան Անդրի անունով հերոսներ առկա են նաև «Հերոս Նո-  
քարը», «Զմուռն մի գիշեր» պատմվածքներում, «Եղբայրության ընկուզենիներում» և  
«Կյորեսում» կա նիազանց Անդրի:

Բոլորի մեջ առավել ամբողջական կերպար է «Կարմրաքարի» ջաղացպան Անդրին:  
1961 թ. Երիշենում մենք եղել ենք ջաղացպան Անդրու տանը և երկար զրուցել  
նրա հետ, կնոջ՝ Հենազ բիրու (Հերիքնազի) ներկայությամբ (տե՛ս նաև Երկերի աչս  
հրատ. 1-ին և 2-րդ հատորների ծանոթագրությունները): Անդրին, նույն ինքը Օրդյան  
Անդրեսաբ (այժմ մահացած), Բակունցի մորաքրոջ որդին է, ծնված 1886 թ. Երիշե-  
նում, ամուսնացել է 1904-ին, 1906 թվականից մինչև 1949-ը եղել է Երիշենի ջաղաց-  
պանը (ոչ մեծ ընդմիջումներով): Ունեցել է վեց աղջիկ, երկու տղա: Անդրի ամին մի-  
շահասակ էր, նիհարավուն, աչքերը կապույտ: Նա գիտեր շատ պատմություններ և քի-  
րում էր պատմել: Նաև երգասաց էր, շատ երգեր ինքն էր հորինել: Հակում ուներ խո-  
սելու կյանքի առեղծվածների մասին:

Դժվար չէ նկատել, որ «Կարմրաքարի» շաղացական Անդրու և իրական Անդրու միջև կան շատ ընդհանրություններ և որոշ տարբերություններ: Վերջիններից է, օրինակ, այն, որ հակառակ իրական շաղացականի «Կարմրաքարի» հերոսը բարձրահասակ է, երկու անգամ է ամուսնացել, ունի մեկ որդի: Բակունցը, իրական շաղացականին կերպար դարձնելիս, ըստ վեպի փոփոխություններ է կատարել: Նի բացատվում, որ միաժամանակ նկատի առած լինի նաև մի այլ նախակերպար, մանավանդ, եթե հաշվի առնենք, որ իրական շաղացականի և վեպի հերոսի որոշակի պատկերացումները կյանքի վերաբերմամբ հաճախ տարբեր են:

Ամեն դեպքում «Կարմրաքար» վեպի նախակերպարների ու նախապատմությունների մասին մտածելիս նկատում ենք, որ Երիշենից բացի, գրողն ունեցել է նաև մի այլ «ակզրնաղբյուր», որ, թերևս, ավելի կարևոր դեր է կատարել: Այսինքն, վեպում կա, եթե կարելի է ասել, քնդալիս մի այլ, անծանոթ շերտ:

Գյուղի անունը գրողը պետք է վերցրած լինի Ղափանի շրջանի Կարմրաքար գյուղից: Այդ գյուղին հարևան է Ջեյվա գյուղը. վեպում էլ Կարմրաքարին հարևան է Ջեյթան:

Ղափանի շրջանում Բակունցը հաճախ է եղել Չանգեղոսի գլխավոր գյուղատնտես աշխատած տարիներին, հատկապես՝ 1925-ին: Բակունցի երկերից մի քանիսի, այդ թվում «Մթնածորի» և «Միրհավի» նախակերպարներն ու նախապատմությունները առընչվում են Ղափանի շրջանի գյուղերի հետ: 1925-ի գարնանը Բակունցը եղել է Ղափանի շրջանի Ջեյվա (տե՛ս երրորդ «Շավառական նամականին»,— Երկերի այս հրատ. 2-րդ հատորում) և, հավանաբար, Կարմրաքար գյուղերում: Հնարավոր է, որ նա այլ անգամներ էլ այցելություններ արած լինի այդ գյուղերը: Արդյո՞ք որոշ պատկերներ գրողն այդ գյուղերում եղած ժամանակ է «ճեպանկարել» իր սպազա վեպի համար: Գա ևս հնարավոր է, թեև «Կարմրաքարի» մեջ տեղ գտած պատկերումներն այնպիսի մանրամասներ ունեն, այնքան կենդանի են, շոշափելի, որ մտածել են տալիս. թե պատկերվածը գրողին շատ հարազատ է եղել, որ ամենի հետ նա շփվել է ավելի երկար, քան կարող էր լինել մեկ-երկու այցելության ժամանակ:

Մենք կարծում ենք, որ «Կարմրաքարը» գրելիս Բակունցը նկատի է ունեցել նաև 1915—16 թթ. Սիսիանի լոր գյուղում յոթ ամիս որպես ուսուցիչ աշխատած օրերից ստացած տպավորությունները: Լորում անցկացրած ամիսների մասին Բակունցը ինքնակենսագրության մեջ գրել է. «Հետո շատ անգամ այդ թվի հիշողությունները օգնել են ինձ»: Հայտնի է, որ այդ հիշողություններն օգտագործված են «Խոնարհ աղչիկը», «Միրանի տափ» պատմվածքներում, բայց դա «շատ անգամ» չէ, հավանաբար, այդ հիշողությունները գրողին օգնել են նաև «Կարմրաքարը» գրելիս:

Թերևս, դրա նշաններից է նաև որոշ տեղանունների նույնությունը՝ օրինակ, Կարմրաքարում ևս կա Միրանի տափ (էջ 197, տող 28), որ համանուն պատմվածքի գլխավոր տեղանունն է: «Կարմրաքարում» կա նաև Մարցա ջուր (էջ 90, տող 30, էջ 142, տող 2) անունով գետակ. այդպիսին եղել է նաև լոր գյուղի մտակայքում:

Բայց և Բակունցի ամեն մի երկի, պատումի համար անպայման նախակերպարներ, նախավարեր որոնելը, որքան էլ հիմնավորված լինի գրողի ստեղծագործելու եղանակի կապակցությամբ, այնուամենայնիվ ավելորդ գալթակողություն վտանգ ունի. կան օրոշ փաստեր այն բանի, որ Բակունցը առանց որոշակի նախակերպարների ու նախա-

վայրերի անձնական ծանոթություն ունենալու էլ կարողացել է կերտել առաջնակարգ գեղարվեստական կերպարներ, վարպետորեն պատկերել վայրերը, որոնք ինքը երբեք չի տեսել: Դրա լավագույն օրինակները գտնում ենք «Ետաշատուր Աբովյան» պատմավեպում: Բացառված չէ, որ «Կարմրաքարի» որոշ հատվածներն էլ այդպիսիք լինեն:

\*\*\*

«Կարմրաքար» վեպի պահպանված հատվածները հայ գրականության մեջ բացահայտիկ են գյուղի կենցաղի, սովորությունների գեղարվեստական պատկերման և մանավանդ գեղչկական տարաբնույթ կերպարների կերտման տեսակետից: Ավան ամին, ջաղացպան Անդրին, Ունանը, Տեր Նորենձան, Արզումանը, ռուտա Նազարը, Իսոն, Խոջա Հիրանը, Մկրտումը, Եփրեմը, Գողին և մյուսները իրենց կերպարային շոշափելի անհատականացմամբ, որպես գեղարվեստական բարձրարժեք քանդակներ, հազվագյուտ են ամբողջ հայ գրականության մեջ: Այժմ այդ կարգի հայ գյուղացիները վերացել են ասպարեզից, և նրանք այսօրվա ընթերցողին հանդիպում են և ապրում, խոսում, գործում «Կարմրաքարում»: Հերոսի խոսքի միջոցով կերպար ստեղծելու տեսակետից էլ «Կարմրաքարը», թերևս, անմրցելի է հայ գրականության մեջ. հիշենք Արզումանի բնորոշ, գունեղ արտահայտությունները, որոնցով կենդանի, ընդգծված անհատականություն է մեր առջև գծագրվում:

Հայոց ժողովրդային խոսքի հարստությունները նույնպես վարպետորեն են դրսևավորված «Կարմրաքարում». ժողովրդային խոսքի նուրբ մշակում, նրա արտահայտչական գունագեղությունը տեղային բարբառայնությունից հմտորեն զտելու առաջնակարգ նրբազգացություն,— ահա թե ինչով է բնորոշվում «Կարմրաքարի» խոսքային արվեստը: Այս տեսակետից Հ. Քումանյանը, երևի, ավելի խոշոր հետևորդ շունեցավ, քան Բակունցն է:

Իսկ գյուղական կյանքը՝ պատկերված տարվա տարբեր եղանակներին. գարնան վարը, ամառվա քաղհանը, աշնան հունձը, ահավոր անձրևն ու հեղեղը, գյուղամիջի Բոլոր քարի շուրջ տեղի ունեցող զրույցները,— ամենը անկրկնելի են. և եթե երբևէ մեկը որոշի անցյալի հայ գյուղական կյանքը քննության առնել, ավելի վարպետությամբ նկարված, կենդանի, դիպուկ ու մանրամասն պատկերներ, քան ունենք «Կարմրաքարում», հազիվ թե գտնի:

Ընդ է, երբեմն զգացվում է «սոցիալական» մոտեցման 1920-ական թթ. պահանջը, բայց համեմատած նույն ժամանակի ուրիշ հայ գրողների երկերի հետ «Կարմրաքարում» դա նվազագույնի է հասնում,— մեծ գեղագետ-վարպետի, իրապաշտ-արվեստագետի վրձինը գույներն ընտրել է հիմնականում իր «սեներքին» արվեստագետի մշտնով, արտաքին ազդեցությունները «Կարմրաքարի» գոնե «Նոր ուղիում» տպագրված մասում երրորդական են:

«Կարմրաքարի» կերպարների պատկերասրահում մասնավորապես Ավան ամին ուշագրավ է նաև նրանով, որ այդ կերպարի հետագա զարգացումը գտնում ենք Բակունցի երկու այլ ստեղծագործություններում: «Կարմրաքարում» Ավան ամին հայ նահապետականության և՛ գաղափարախոսն է, և՛ ներկայացուցիչը, նա վեպում հեղինակի կերտած զլխավոր գրական հերոսն է, նաև հեղինակային կատարելատիպին առավել

շափով մտնեցած մի կերպար, «Կարմրաքարում» հայ նահապետականութունը դեռևս պահպանվում է, բայց արդեն բավական խարխիված է, վեպի տողերում պարզ զգացվում է Ավան ամին և Տեր Նորընծայի տազնապարհ նահապետականության անխուսափելի ու վերջնական խարխիվման համար: Գրա նշանները «Կարմրաքարում» շատ են՝ հորջա Լիրանի որդիների կամայականութուններից ու սղոցարանի կառուցումից սկսած մինչև Արզումանի արձամարհանքը գյուղի նկատմամբ և գյուղից հեռանալու որոշումը: Ավան ամին եռանդով պայքարում է այդ երևույթների դեմ: Նա պայքարելու ավյուն ու եռանդ էլ ունի: Թեև դա զոնքիշոտյան պայքար է:

Այս կերպարի զարգացումը տեսնում ենք «Մինա բիրին» պատմվածքում (տե՛ս Ծրկերի այս հրատ. 1-ին հատորը): Այստեղ Ավանը պայքարելու ասպարեզ լուծի, քանի որ հայ նահապետականության հարցը լուծվել է անդարձ կերպով: Հին հայկական գյուղը իր նահապետականությամբ արագ մահանում է, և ծերացած Ավան ամին, որ գյուղում մնացել է իր «պառավիչ»՝ Մինա բիրու հետ համակերպվել է իր վիճակին:

«Հին տունը» պատկեր-պատմվածքում (տե՛ս Ծրկերի այս հրատ. 2-րդ հատոր, նաև՝ ծանոթագրությունը) Ավան ամին բուրոսովին մենակ է և կյանքի վերջին օրերն է ապրում: Նա շարունակում է մնալ նահապետականության գաղափարախոս, բայց բուրոսովին անհույս ու ժամանակավրեպ:

## Փ ա ն ք ա գ ռ ու ր յ ա լ ը ն Ե ր և տ ա զ ա ճ ա մ ա ր ը ն Ե ի

էջ 90, տողեր 18—22. «Հազարացոց աշխարհից»— հայերը հազարացի կոչել են արաբներին (ըստ Հին կտակարանի արաբները ծագել են Աբրահամի մտերմուհի Լազարի որդուց՝ Իոմայելից), սակայն Տեր Նորընծայի պատմածն այնպես է ընթանում, որ ստացվում է, թե իբր Հազարացոց աշխարհը լեզգիների իշխանության տակ է եղել: Լեզգիները Կովկասի լեռնաբնակ ժողովուրդներից են:

էջ 91, տող 10. Զաքարայի բնումը— Զաքարայան ու շրջակայքը եղել են հայկական հին բնակավայր: Գտնվում է Կովկասյան լեռնաշղթայի հարավային լանջերին: Այժմ մտնում է Ադրբեջանական ՍՍՀ կազմի մեջ:

էջ 92, տող 4. արանի բարեբեր. էջ 92, տողեր 21—22. Գեում էր ամառակի բարձր գյուղերը— նկատի ունի Բարկուշատ գետի հովիտը, որ հենում հայկական բնակավայր է եղել՝ հայտնի իր բերքառատությամբ: Գտնվում է Զանգեզուրից արևելք՝ Բարկուշատ և Հազարու գետերի հովտում (այժմ Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմում է): Գորիսի շրջանի լեռնային գյուղերից հայերը հաճախ էին գնում այդտեղ աշխատանքի կամ ագրիբեջանիներից ցորեն ու բրինձ գնելու: Բակունցի երկերում հաճախ է հիշատակվում այդ վայրը, նաև՝ Գեաբեր, Գեաամեջեր, Բարկուշատի ամառակ, Բարկուշատ անուններով (տե՛ս նաև այս հրատ. 2-րդ հատորում «Հերոս նոքարը», «Կաղնու գերանը», «Եղբայրության ընկուզենիները» և այլ պատմվածքների ծանոթագրությունները):

էջ 104, տող 2, էջ 105, տող 12. «Հող էիր և անդրեն հող դարձաք»— արտահայտությունը ըստ Աստվածաշնչի է. «հող էիր և ի հող դարձցիս» (Մենդ. 9, 19), «Ելջէ հողի նոցանէ և դարձցին անդրէն ի հող» (Սաղմ. Ճեճ):

էջ 104, տող 10. «հայաստանցի» — այս անունով (նաև՝ հայաստանցի) զանգեզուրցիները կոչում էին Արևմտյան Հայաստանից եկած հայ վերաբնակիչներին:

էջ 121, տողեր 5—6. Յինդլի սատին, Մարզովի «ամենապերվի» հալավացուն — Մորոզովը և Յինդլը հայտնի արդյունաբերողներ էին, մանածագործական ձեռնարկու-թյունների տերեր: Հատկապես Մորոզով եղբայրները Ռուսաստանի մի շարք վայրերում ունեին մանածագործական ձեռնարկություններ, որոնք բարձրորակ արտադրանք էին տալիս (տե՛ս նաև Երկերի այս հրատ. 1-ին հատորում «Հյումբաթի ձոր» ակնարկը և ծանոթագրությունները):

էջ 139, տողեր 34—36. Շարֆի ձախ ծայրին, ձորակի մոտ սպիտակ շոռով մի կիթավիլի հաճախ էր բարձրանում... — սպիտակ շորերով կիթը Սալբին է, որը կոացած աշխատող բաղձանավորների մեջ ավելի հաճախ էր բարձրանում մոտակա ձորակում աշխատող Արզումանին նայելու համար: Միրո արտահայտության այս եղանակը ավելա է նաև «եսուարճ աղջիկը» պատմվածքում. «...մեկը, գորշ շորերով մի աղջիկ, ավելի հաճախ էր բարձրանում...» և այլն (տե՛ս Երկերի այս հրատ., հ. 1, էջ 160):

էջ 160, տողեր 17—18. Մի ճին ձեռագիր էր այդ, որի մի մասը կոչվում էր «Թանգարան խրատուց», «մյուսը՝ «Երազագիր» — Միջնադարյան հայ ձեռագրերի մեջ շատ են այն ժողովածուները, որոնցում տարբեր նյութերի հետ նաև խրատներ կան (եղբրտաօղ ոգելահիֆ, ևրտաօղ հարանց, Բանֆ խրատականֆ և այլն), ժողովածուներում հանդիպում են նաև երազացույցներ, բժշկարաններ: Այստեղ հիշատակված ժողովածուն պետք է իրապես եղած լինի: Բակունցի նախասիրած գրական հնարանքներից մեկն է որևէ հին գրքի լուսանցքներում կամ վերջի ազատ էջերում իր գրական հերոսի արած նշումների ընթերցմամբ ու մեջբերումներով քննաթղթիկ այդ հերոսին: Կարմրաբարում Տեր Նորընծան քննաթղթված է թե՛ իր քանակոր խոսքով, թե՛ ձեռագրի լուսանցքներում ու «հիշատակարանի» համար թողնված էջերին արած նշումներով, ինչպես և, իհարկե՛ իր գործելակերպով, մտքերով և այլն: Այս առիթով հիշենք, որ միայն գրքի լուսանցքներում արված նշումների շնորհիվ վարպետորեն է քննաթղթված Վասիլը «Տիգրանուհի» պատմվածքում (Երկերի այս հրատ. 1-ին հատոր):

էջ 162, տող 19. Ինչպես են սինեմաֆի եփում — սինեմաֆի կամ սինեմաֆի բույս է Թիֆլիսում ձեռագրից (նաև՝ Մեֆֆայի սեննա), որ գործածվում է իրրև դեղ ստամոքսաաղիքային ուղու կապերը թուլացնելու և քրոնարտադրման համար:

էջ 170, տողեր 33—34. Պարտ-Արտուրի կրեպոստիցն... — Պորտ-Արտուրը կամ ավելի ճիշտ անունով կյուշունը քաղաք է Զինաստանում, Դեղին ծովի ափին: 1898 թ. եղել է Ռուսաստանի վարձակալական իշխանության տակ, վեր է ածվել ռազմածովային ամրոցի, որի պաշտպանությունը ռուսական զորքերի կողմից 1904—05 թթ. հայտնի դարձավ:

էջ 180, տող 17. Ես մի այդպիսի սղացաբան էլ սարքել եմ Լոռի — գերժանացի վարպետի այս խոսքը, ինչպես և ուրիշ արտահայտություններ, տեղանուններ, նաև Ունանի գնալը արանի (Բարկուշատի) թուրքերի մոտ և այլն ակնհայտ են դարձնում, որ ճիշտ չէ այն պատկերացումը, ըստ որի «Կարմրաքարում» հեղինակը թեկուզ ինչ-որ շահով նկատի է ունեցել Լոռին: Վեպում նկարագրությունների սկզբնաղբյուրը Զանգեզուրն է:

էջ 185, տողեր 23—24. Սալյանից, Մուղանից և Արաբի տափարակներէց— Սալյանը քաղաք է Քուռ (Կուր) գետի ափին (Աղբրեջանական ՍՍՀ): Սալյան անունով կոչվում էր նաև այդ քաղաքի մերձքուռյան շրջանը: Մուղանը տափաստան է Քուռարաբսյան հարթավայրի մի մասում, Արաբս ու Քուռ գետերի հատման վայրից հարավ. այժմ մեծ մասը գտնվում է Աղբրեջանական ՍՍՀ-ում, փոքրը՝ Իրանի կազմում: Զրովի մասերում ցանում են բամբակ, օգտագործվում է որպես արոտավայր: Արաբի տափարակը Արարատյան դաշտավայրի մի մասն է, որ տեղ-տեղ տափաստանային բնույթ ունի, այժմ մեծ մասամբ ջրվում է և բերրատու է:

էջ 186, տող 28. պրիստավ— ոստիկանապետ ցարական Ռուսաստանում:

էջ 186, տողեր 27—29. Արտի ծայրին մնում էր այն կաղնին. որին հարբած պրիստավը քրով զարկել էր: Հաստ շքրունքի նման հարվածի տեղում կեղևը սպի էր կապել— Համեմատել «Իվան բեյը» պատմվածքում հետևյալ հատվածի հետ. «Իվան բեյի այգում մի տանձենի կա, բունը ճեղքված: Տարիների ընթացքում այդ ճեղքվածքի շուրջը լորն ուռել է, հաստացել նեգրի պողոտի պես ու սպի կաղմել:

Երմուով պրիստավն էր, թրով ծառը ճեղքեց» (տե՛ս Երկերի այս հրատ., հ. 2, էջ 43), նաև «Իվան բեյը սալորենուն մոտեցավ, ցածիկ էլ ճյուղից մի քանի հատ սալոր պոկեց: Հանկարծ աչքին ընկավ ծառը, բունը ճեղքված, որ Երմուով պրիստովը թրով խփել էր» (ն. տ., էջ 54): Անշուշտ, նկարագրված է ինչ-որ իրողություն, միայն ծառը ներկայացված է մե՛րթ կաղնի, մե՛րթ տանձենի, մե՛րթ սալորենի. հավանաբար, հեղինակը ստույգ չի հիշել, թե ինչ ծառ է եղել հարբած պրիստավի թրով ճեղքվածը:

էջ 197, տող 28. Միբանի տափն էր վարում— Միբանի տափ անունով հոգամաս կա նաև Բակունցի համանուն պատմվածքում (տե՛ս Երկերի սույն հրատ., 1-ին հատորում):

էջ 202, տողեր 31—33. Երա սիրած գիրքը «Կայծերն» էր, բայց ամենալավը «Քուլդար ավազակապետի պատմությունը»:— Նկատի ունի Բաֆթու «Կայծեր» վեպը և թուղարացի հեղինակ Լյուբան Կարավելովի «Քուլդար ավազակապետ» Լրկը (հայերեն թարգմանությունը լույս է տեսել Պետերբուրգում, 1887 թվականին, 48 էջ):

էջ 210, տող 5. Ժամնար Բարսեղ— այս անունով հերոս կա նաև Բակունցի «Կյուրես» երկում:

էջ 226, տող 22. Թազունին Իվան բեյի աղջիկն էր— համեմատել «Իվան բեյ» պատմվածքի հետ (Երկերի այս հրատ., 2-րդ հատոր, նաև ծանոթագրությունները):

## Ո Ր Գ Ի Ո Ր Ա Տ Մ Ա Ն

(էջ 234)

Այս երկից պահպանվել է մի ոչ մեծ հատված, որ բաղկացած է երեք գլխից: Հաստվածի միակ աղբյուրը «Գրական թերթի» 1932 թ. մայիսի 30-ի (№ 10) և հունիսի 10-ի (№ 11) համարներն են, որոնցում հրատարակվել են երկի երեք գլուխները: Երկու համարներում էլ վերնագրի վերևում կա՝ Ակսել Բակունց: Մայիսի 30-ի համարում երկի

բնագրի մեջ Ա. Բակունցի լուսանկարն է (այն, որը հրապարակվում է ներկա հատորում): 1964 թ. տեղ է գտել Երկերի 2-րդ հատորում (որոշ կրճատումով):

Այժմ երրորդ անգամ «Որդի որոտման» երկի պահպանված հատվածը տպագրվում է ամբողջությամբ, ըստ առաջին հրապարակման բնագրի:

## Ուղղումներ

«Որդի որոտմանի» բնագրում ևս ֆցել խոսակցական-ուղղագրական ձևը հեղինակային խոսքում դասականի փոխեցինք (զցի, զցում):

էջ 237, տողեր 16—17 ԳԹ-ի բնագրում՝ լսվում էր անեղագոչ աղաղակներ— ինչպես ասվել է, Բակունցի խոսքին, մանավանդ հերոսների լեզվին խորթ չէ այսպիսի անհամաձայնությունը (հոգնակի ենթակա—եզակի բայ), և մենք բակունցյան բնագրում սովորաբար չենք ուղղում դրանք: Սակայն «Որդի որոտման» երկում շորս տեղ ևս (տե՛ս նաև ստորև) որոշեցինք ուղղել: Պատճառն այն է, որ հիշյալ անհամաձայնությունը սովորաբար ժողովրդաբարբառային խոսքից է գալիս, իսկ տվյալ շորս դեպքերում հեղինակային խոսքի բնույթը խստորեն գրական է: Այստեղ ուղղված է՝ լսվում էին անեղագոչ աղաղակներ:

էջ 239, տող 10. ԳԹ-ի բնագրում՝ հոռոմցին— ուղղված է ըստ նույն բառի այլ գործածության (էջ 239, տող 12)՝ հոռոմցի:

էջ 239, տող 15. ԳԹ-ի բնագրում՝ ֆյալարացու— ուղղված է ըստ միևնույն բառի մի շարք այլ գործածությունների՝ ֆյալարեցու:

էջ 242, տող 15. ԳԹ-ի բնագրում՝ դանաղուացի— ուղղել ենք ըստ նույն բառի այլ գործածության (էջ 239, տող 12)՝ դանաղանցի:

էջ 243, տողեր 4—5. ԳԹ-ի բնագրում՝ լսվում էր միայն առանձին բառեր— Այստեղ ևս (տե՛ս 2-րդ ուղղումը) անհրաժեշտ համարեցինք այս անհամաձայնությունը ուղղել՝ լսվում էին միայն առանձին բառեր:

էջ 244, տող 2. ԳԹ-ի բնագրում (1922 թ. ուղղագրությամբ)՝ Սլուծքի պոավիլե— ուղղված է (1940 թ. ուղղագրությամբ)՝ Սլուծքի պոավիլ է:

էջ 244, տող 32. ԳԹ-ի բնագրում՝ անձրև և մաղում— ուղղված է՝ անձրև է մաղում:

էջ 244, տողեր 33—34. ԳԹ-ի բնագրում՝ ջուրը նովդաններից բափվում է, ինչպես գյուղի աղբյուրի ձուրակը— ուղղել ենք՝ ջուրը նովդաններից բափվում է, ինչպես գյուղի աղբյուրի ձուրակից:

էջ 245, տող 32. ԳԹ-ի բնագրում՝ ֆառնառով— ուղղված է՝ ֆանառով:

էջ 246, տողեր 2—4. ԳԹ-ի բնագրում՝ նայում է ստեղծվ ծակծկված բվերին և տոմսի տիրոջը, կարծես ստուգում է, բն աբոյոֆ նա՞ չի ծակծկվել— ուղղել ենք՝ ...աբոյոֆ նա՞ չի ծակծկել:

էջ 246, տող 15. ԳԹ-ի բնագրում՝ բարովում է ձեռքը— ուղղել ենք՝ բարվում է ձեռքը:

էջ 248, տող 16. ԳԹ-ի բնագրում՝ պլուզի— ուղղված է՝ բլուզի:

էջ 249, տող 5. ԳԹ-ի բնագրում՝ բիւբը քամամ— սա ուղեկցորդ (կոնզուկտոր) Արտաշի խոսքի մեջ է: Այլ դեպքերում նրա խոսքի մեջ առկա է բլեք ձևը, ուստի ուղեցիներ՝ բլեք:

էջ 249, տող 10. ԳԹ-ի բնագրում՝ «իննհանս Մաբուք», ինչպես կոչում էին նրան գասրեկները— ուղղված է՝ ...ինչպես կոչում էին նրան գասրեկները:

էջ 249, տող 26—28. ԳԹ-ի բնագրում՝ նրա առաջին հպատակը եղել է պառավ շունը, որ ծերության նրա հրամանով անցնում էր հատուկ ձողի վրայով— ուղղված է՝ ...որ օր ծերության նրա հրամանով անցնում էր...:

էջ 250, տողեր 28—29. ԳԹ-ի բնագրում՝ երբ կարբի հանդիպում էր «կազմակերպչական բերության»— ուղղված է՝ երբ կարբը հանդիպում էր «կազմակերպչական բերության»:

էջ 250, տողեր 33—34. ԳԹ-ի բնագրում՝ անօգուտ էին այդ սրվակների պարունակությունը— ուղղել ենք՝ անօգուտ էր այդ սրվակների պարունակությունը:

էջ 251, տող 19. ԳԹ-ի բնագրում՝ Ձկոտ— ուղղել ենք՝ Ձկոտ:

էջ 251, տողեր 21—22. ԳԹ-ի բնագրում՝ զրդապատնաը եղել է տեղացիներից մի զինվորի անվախեան կրկնվող պատմությունները— ուղղել ենք՝ զրդապատնաը եղել են տեղացիներից մի զինվորի անվախեան կրկնվող պատմությունները:

էջ 253, տող 25. ԳԹ-ի բնագրում՝ անձանձուրյք մրենցիում— ուղղել ենք՝ անձանձուրյք մրենցիում էին:

էջ 255, տող 5. ԳԹ-ի բնագրում՝ ասաց և փայտի նենվելով վեր կացավ— ուղղված է՝ ասաց և փայտին նենվելով վեր կացավ:

էջ 256, տողեր 13—15. ԳԹ-ի բնագրում՝ տեսան արագ և անվարձ ֆշելուց մինչև ծնկները վեր ֆաշած շավարը, վարտիֆի տուտը և բրդոտ ազդերը— ինչ-որ պատճառով ազավաղում է տեղի ունեցել. եթե մինչև ծնկները վեր է քաշված տարատը և երևում է վարտիֆի տուտը, ապա կերևան ոչ թե ազդերը, այլ սրունքները: Ուստի ուղղել ենք՝ տեսան արագ և անվարձ ֆշելուց մինչև ծնկները վեր ֆաշած շավարը, վարտիֆի տուտը և բրդոտ սրունքները:

էջ 256, տողեր 33—34. ԳԹ-ի բնագրում՝ բազմաթիվ տպավորություններ այնպես էին խառնվել նրա գլխում, խոսելն անգամ դժվարացավ— ուղղված է՝ բազմաթիվ տպավորություններ այնպես էին խառնվել նրա գլխում, որ խոսել անվարձ դժվարացավ:

էջ 257, տող 23. ԳԹ-ի բնագրում՝ մուք հարված— ուղղված է ըստ բովանդակության՝ բուք հարված:

Բնականաբար, այստեղ ևս անխաթար պահպանված են ժողովրդաբարբառային ձևերը, նաև ուղղագրական որոշ հնացած ձևեր, ինչպես օրինակ էջ 237-ում կա՝ ջուալ, — այս ձևն առկա է նաև «Կարմրաբար» վեպում. կնշանակի հեղինակային է:

Բացի վերը նշված դեպքերից, հոգնակի ենթակայի և եզակի բայի անհամաձայնության մյուս դեպքերը չենք ուղղել. ակնհայտ է նրանց գործածության ժողովրդախոսակցական բնույթը. օրինակ, էջ 242, տող 21. նամերները խառնվել էր:

Այս երկում շատ են անհարկի օտար բառերը (որոնց մի մասը միջավայրի երանգավորում ստեղծելու նպատակ ունի)՝ պերուն, կասա, պասածիք, պլացկարտ, վակ-

զալ, նամեր, ույն, տամբուր, կուպե, ֆանատ և այլն. բոլորի ուղղագրութիւնը պահպանել ենք ըստ «Գրական թերթի» բնագրի (ֆանատ բառի ու-ն պահպանեցինք, քանի որ գլոմբեցիների արտասանութիւնը համապատասխան է): Պահպանել ենք նաև Ստավրապոլ տեղանվան բնագրային ուղղագրութիւնը:

\*\*\*

«Գրական թերթի» 1932 թ. մայիսի 30-ի համարում, որտեղ տպված է «Որդի որոտման» երկի առաջին մասը՝ «Մեր ծանոթը», սկզբից տրված է խմբագրութիւն հետևյալ ծանոթութիւնը. «Որդի որոտման գրքում հեղինակը նկարագրում է «ձախ» քայլազուգուցիւն, վարչարարութիւն և կուսակցութիւն» գլուխում տարվող քաղաքական-տնտեսական աշխատանքների աղավաղման պատկերը: Գլխի մեջ ունենալով պատրաստի «սեմա» բոլոր խնդիրների նկատմամբ, հերոսը՝ ՈՐՈՏՄԱՆ ՈՐԴԻՆ ստեղծում է ծաղրական վիճակ իրեն համար, շտեննելով իսկական դասակարգային պայքարը: Մեր թերթի մյուս համարում կտպվի ևս երկու գլուխ»:

Այստեղից եզրակացնում ենք, նախ՝ որ «Որդի որոտմանը» ամբողջ գիրք է, որ այդ գրքից «Գրական թերթը» երկու համարում տպագրելու է 3 գլուխ: Ուրեմն, «Գրական թերթի» խմբագրութիւնը գրողը այդքան է հանձնել:

Ա. Բակունցի կինը՝ Վ. Զիվիշյանը պնդում էր, որ «Որդի որոտման» երկը նույնպես ավարտված է եղել: Թե ինչ ծավալ է ունեցել այդ երկը, դժվար է ասել. արդյոք, իրո՞ք, վեպ է եղել, թե՞ վիպակ: 1964 թ. «Որդի որոտման»-ի հատվածը դնելով գրողի երկերի 2-րդ հատորի մեջ, շեն հիշատակել վերոհիշյալ խմբագրական ծանոթագրութիւնը, փոխարենը դրել են ենթավերնագիր՝ Հատված երգծական վիպակից: Ինչի՞ հիման վրա են ենթադրել, թե վիպակ է: Հավանաբար, հետևյալ խոսքից. «Մենք հեղինակի մոտ տեսել ենք «Որդի որոտման» վիպակի ամբողջական ձևագիրը» (Հ. Մըկրտչյան. Ակսնի Բակունց, Երևան, 1958, էջ 106): Թեև ժամանակակցի վկայութիւն է, բայց վիպակ-ը որևէ կերպ չի հիմնավորված, վստահութիւն չի ներշնչում, մինչդեռ երկի ավարտված լինելու մասին ասվածը հաստատում է Վ. Զիվիշյանի վկայութիւնը:

«Որդի որոտման» երկի պահպանված մասերից խմանում ենք, որ գլուխ առաքված Պեգյանը պետք է գործունեութիւն ծավալեր Բովեր գլուխակում, մինչև այն աստիճան, որ այդ փոքր գլուխը քայքայվեր ու վերանար երկրի երեսից: Իս հնարավոր էր ներկայացնել և՛ վեպի ծավալով, և՛ վիպակի: Այդպիսով ստույգ գիտենք, որ «Որդի որոտման»-ը գիրք է եղել և ավարտված, անհայտ է, ոսկայն ծավալը:

\*\*\*

«Որդի որոտմանը» գրելու շարժառիթը փոքր-ինչ պատկերացնելու համար բերենք Վ. Անանյանի մի հիշողութիւնը՝ 1930 թվականին իր և Բակունցի երևանյան մի հանդիպման մասին: Վ. Անանյանը գրում է (տե՛ս նրա «Ընդհանր հայրենի»-ն, Երևան, 1963, էջ 581), որ Բակունցը խորապես ազդված է եղել «համատարածի» առիթով հայ աշխատավոր գլուխացիների զանգվածային տեղահանութիւններից, վտարվող գեղուկների անվերջանալի սայլաքարավաններից: Երբ Վ. Անանյանը ոգեորվել է գրանցով, Բա-

կունցը նրան հանդիմանել է: Անանյանը հիշում է իր և Բակունցի միջև տեղի ունեցած այս խոսակցությունը.

«— Կա՛վ է, լա՛վ է,— ձեռքներս շփում էի ես:

Նայեց ինձ հանդիմանանքով ու թախիծով.

— Իսկ գիտե՞ս, որ շորի հետ թացն էլ են վառում... անմեղներ էլ կան. երեխաներ... կանայք...»:

Ահա հանձին որոտման որդու՝ Պեղեյանի, գրողը փորձել է ներկայացնել այն անհատին, որի նմանների «չանքերով» էր տեղի ունենում այդ ամենը:

Բակունցը իրեն նյութ ընտրելով որոշակի իրադարձություններ և, հավանաբար, որոշակի: անձ, գեղարվեստական ընդհանրացում է կատարել՝ պատկերելով ամեն մի հրահանգի տառին մեքենայորեն հլու, ստեղծագործական ոգի, շրջապատի մարդկանց նկատմամբ սեր շունչեղ անձնավորություն:

Գրողն այդ արել է երգիծանքի, ավելի ճիշտ խայթածաղրի միջոցով, և այսօր տեսնում ենք, որ Բակունցի երգիծական տաղանքը «Հովնաթան Մարչից» հետո «Որդի որոտման» վեպում ավելի բարձր մակարդակի է հասել: Լենինականի կայարանի և շարժվող վագոնի ներսի պատկերումները, երկախոսությունները իրենց վառ, կենդանի գույներով հայ երգիծական գրականության լավագույն էջերից են:

Մենք չկարողացանք պարզել, թե ով է եղել Ի. Պեղեյանի նախակերպարը, բայց որ այդպիսին եղել է, կարելի է ենթադրել երկի գլխավոր հերոսի պատկերման մի քանի մանրամասնությունից: Բովեր գյուղի նախավայրը կարող է թվալ զանգեզուրյան. այդպիսի փոքր, լեռնային, «մոռացված» գյուղեր նկարագրելու նախասիրություն Բակունցն ունեցել է (տե՛ս «Մրոց», «Աքարում», «Գյուղերհարի համար», «Սարու» և այլ պատմվածքներ ու ակնարկներ): Սակայն երկում կա մի հատված, ըստ որի Բովերի բարձունքից երևում են Արաքսն ու Արարատը (էջ 252, տողեր 16—22), որով բացառվում է Բովերի նախավայրի զանգեզուրյան լինելը: Բովեր անունը դրոշն, ըստ երևույթի, առել է Լոռուց. այնտեղ այս անունով գյուղի ավերակ կա Նոյեմբերյանի շրջանի Կողբ գյուղի մոտ: Բովեր անունով ձմեռանոց կա Ալավերդու շրջանի Շևոզ գյուղից մոտ 4 կմ. դեպի հարավ: Ենթադրում են, որ հնում այդտեղ եղել է մետաղաձուլարան (բով բառից):

Ժամանակին «Որդի որոտմանը» ազմուկ հանեց ինչպես «Միրանի փողը» (տե՛ս ծանոթագրությունները Երկերի այս հրատ. 1-ին հատորում): «Որդի որոտմանը» նաև օգտագործվեց գրողի դեմ նոր ամբաստանությունների համար (տե՛ս, օրինակ, «Գրական թերթ», 1936, օգոստոսի 25):

## Մանրագրություններ ըստ էջերի և տողահամարների

էջ 234, տող 1 և այնուհետև. Որդի որոտման— այսինքն՝ որոտի սրգի: Այս անունով Հիսուսն անվանել է իր երկու աշակերտներին՝ Հովհաննես և Հակոբոս կղբայրների (Մարկ. Գ, 17): Փոխաբերական իմաստով սրգի որոտման առում են անհեռզանգ, հոխորտացող, ստամբակ մարդկանց:

էջ 239, տող 7. Բյալարեցի— Քյալարա անունով գյուղ կար Ախտայի (այժմ Հրազդանի) շրջանում, Զանգիբասարում (այժմ Մասիսի շրջան). Բակունցը հավանաբար վերջինն է նկատի առել (այժմ՝ Ղուկասավան):

էջ 242, տող 15. Գանաղանցի— Գանաղան գյուղ կար Իշկանի շրջանում (Վերին և Ներքին):

էջ 242, տող 18. Ինչպես ճիմար կույսերը— նկատի ունի Ավետարանի այն հասկածը, որտեղ Հիսուսը որպես օրինակ բերում է տասը կույսերին, որոնք գիշերով զբնում են փեսային դիմավորելու: Նրանցից հինգը հիմար էին, քանի որ լապտերների մեջ ձեթ չէին լցրել, իսկ մյուս հինգը իմաստուն, որովհետև լապտերների մեջ ձեթ էին լցրել: Երբ կեսգիշերին փեսան գալիս է հիմար կույսերը իմաստուններից ձեթ են խնդրում, շտանալով գնում են գնելու, բայց այդ ժամանակ փեսան գալիս է, և պատասխան հինգ կույսերը նրա հետ հարսանիք են մտնում, դուրս փակվում է, և մյուս հինգ կույսերը մնում են դուրսը (Մատթ. ԻՍ, 1—13):

էջ 242, տող 35—էջ 243, տողեր 2—3. Բյուկնաթ եղավ կարմիր փալաս, և ծառս եղան գազագուրջան ցուլերը— նկատի ունի իսպանական ցլամարտը, երբ տորերոն կամ մատադորը (ցլամարտիկը) կարմիր լաթը պահում է ցուլի առջևում, որից ցուլը զբրգրում է, և սկսվում է մարտը:

էջ 244, տողեր 12—14. գնացքը, որ ձեզ տանում է չորհրդ ուսյունի սանամենեւում դեպի Երևան, դեպի Չուֆա...— «Չուփա» վերնագրով Գ. Գեմիլիյանը երգծական հոդված ունի՝ հրատարակված 1926 թ.: Նրանում երգծված է հայերեն գրագրություններում տեղ գտնող կիսագրագիտությունը: Այն ժամանակ Հայաստանի երկաթուղային վագոնների ցուցանակները գրվում էին հայերեն, և Երևան—Ջուլֆա գնացքի վագոններից մեկի վրա Ջուլֆա անունը գրված է եղել աղավաղված՝ Չուփա, որի աղթով էլ Գեմիլիյանը գրել է իր հոդվածը (տե՛ս Գ. Գեմիլիյան, Երկերի ժողովածու, հ. 7, Երեվան, 1960, էջ 522—525): Բակունցի երկում այդ Չուփա-ն դարձել է Չուփա:

էջ 247, տողեր 34—35. կանցնի աշուտյան ետրիքայի և անտաղանդարյան Սցիլլայի արանքով: Սցիլլան ու ետրիքան (կամ Քարիքան) հին հունական առասպելաբանության մեջ երկու հրեշներ են՝ կանգնած նեղ ծովախորշի երկու կողմում՝ Իտալիայի ու Սիցիլիայի միջև և ոչնչացնում էին իրենց միջով անցնող ծովագնացներին: Անցնել կամ լինել Սցիլլայի և ետրիքայի միջև արտահայտությունը նշանակում է լինել երկու վտանգների միջև:

էջ 248, տող 29. «Յար վերի» գորտյունը— ըստ ժողովրդական ավանդույթի Հիսուսի մայրը՝ Մարիամը, սրտում յոթ վերք է ունեցել Քրիստոսի յոթ շարշարանքների համար:

էջ 251, տող 6—7. Բնաբան՝ Տեսն՝ ևս գլուզը հովտի մեջ մենակ

Ու շուրջը փոված հին աղբակույտեր...—

2. Քումանյանի Parodia բանաստեղծության (1910 թ.) շորորդ քառատողի առաջին երկու տողերն են:

էջ 251, տող 10. Շպեհի ժամանակվա ֆառեզի վրա— Ի. Շոպենը ցարական պաշտոնյա էր (ծագումով Ֆրանսիացի), 1830 թ. պետության կողմից նրան հանձնարարվել է կազմել Հայկական մարզի պատմատեսական նկարագրությունը և քար-

տեղները, որը և Շոպենը կատարել է. տե՛ս նրա «Исторический памятник состояння Армянской области в эпоху ея присоединения к Российской империи (СПб 1852) ժափալուն երկը: «Շոպենի ժամանակվա քարտեզ» տեղով նկատի է առնվում անցյալ դարի 30-ական թթ. քարտեզ:

Ի. Շոպենի անունը մասամբ կապված է նաև Խ. Արովյանի հետ. Շոպենը շանացի է ամեն կերպ համոզել կառավարությանը և հասարակայնությանը, որ իբր Յ. Պարրոտը ուղեկիցների հետ Արարատի գագաթը շի բարձրացել (տե՛ս նաև «ժաշատուր Արովյան» վեպի ծանոթագրությունները):

էջ 251, տողեր 11, 19—22. Քյառա—Հեյդաբ—Ուլադի, Զկոստ, Բովեր, Սաավ-բապով— իբր այս անուններով կոչվել է միևնույն գյուղը. սա ակնհայտորեն հեղինակի երգծական հնարանքն է (Բովեր անունով բնակավայրերի մասին տե՛ս «Ռդդի որսա-մանի» ծանոթագրությունների ընդհանուր մասում):

## Խ Ա Չ Ա Տ Ո Ի Ր Ա Բ Ո Վ Յ Ա Ն

(էջ 260)

Վեպից պահպանված հատվածները մամուլում առաջին անգամ հրատարակվել են ժամանակագրական հետևյալ հաջորդականությամբ. ա) 1934 թ. մայիսի 20-ին «Գրական թերթում» (№ 14)՝ «Իրավան Զարսու բազար», բ) 1935 թ. հունվարին, «Նորհրդային գրականություն» ամսագրում (№ 1, էջ 3—21)՝ «Գործ Մայրանա, դստեր Մղկրտումի», գ) 1935 թ. փետրվարի 7-ին «Դրական թերթում» (№ 3)՝ «Գեպի լյառն Մասիա», դ) 1935 թ. փետրվար և մարտ ամիսներին «Նորհրդային գրականություն» ամսագրում (№ 2, էջ 3—30, № 3, էջ 1—33)՝ «Ալիբեր Արմենիեր»:

Առաջին հրատարակումը՝ «Իրավան Զարսու բազար», կրկնվել է «Նորհրդային գրականության» 1935 թ. № 1-ում «Գործ Մայրանա դստեր Մղկրտումի» գլխի կազմում (առանց վերնագրի), քանի որ այդ գլխի 3-րդ մասի մի հատվածն է (3-րդ մասի ամենակզբից մինչև «որի մարմինը հրդեհվում էր գորգի գույների հետ» նախադասությունը ներառյալ):

Հաջորդ երեք հրատարակումները, բոլորը 1935 թ., որևէ շփով չեն կրկնվում և ներկայացնում են վեպից պահպանված երեք հատվածները՝ ամբողջությամբ: Այդ երեք հրատարակումներն էլ որպես բնագրային հիմնական աղբյուրներ տպագրվում են ներկա հատորում՝ անհրաժեշտ ուղղումներով, որոնք նշված են ստորև: Միաժամանակ տրվում են 1934 թ. «Իրավան Զարսու բազար» հատվածի և 1935 թ. «Գործ Մայրանայի» կազմում նրա երկրորդ հրատարակման միջև եղած բնագրային ոչ մեծ տարբերությունները:

Վերահիշյալ վերնագրերից բացի, հեղինակային հրատարակված շորս հատվածներում չկա այլ վերնագիր, չկա նաև վեպի ընդհանուր վերնագիրը: Ժամանակակիցները այն հիշատակում են «Արովյան» կամ «ժաշատուր Արովյան» անունով: Ամեն դեպքում վեպի՝ ներկա հատորում օգտագործված խաշատուր Արովյան անունը պայմանական է, ոչ հեղինակային:

Վեպի հատվածների հրապարակումները հետևյալ տեսքն ունեն:

«Իրավան Չարսու բազար» կտորը տպագրված է «Գրական թերթի» վերոհիշյալ համարի ներսի երկու էջերում (էջ 1—2, ներքևի թերթն): Վերնագրից վերև՝ Ակսել Բակունց, ենթավերնագրերը փակագծում՝ Հատված անտիպ աշխատությունից: Թերթի 2-րդ էջում բնագրի մեջ գրողի դիմանկարն է, գրությունը՝ Ակսել Բակունց, ն.վ. վաստ. նկարիչ՝ Փ. Թեոփիմեզյանի: Այս դիմանկարը հետագայում մի քանի անգամ հրապարակվել է (նաև Երկերի այս հրատ. 1-ին հատորում): Դիմանկարի հեղինակայինը կորած է: Թերթի 3-րդ էջում երկի բնագրի մեջ Հակոբ Կոռոյանի նկարն է՝ «Թավրիզի շուկան»:

«Երոհրդային գրականություն» ամսագրի 1935 թ. առաջին երեք համարներում տպագրվածք վեպի պահպանված ամենածավալուն հատվածներն են. 1-ին համարում՝ «Գործ Մայրանա, դստեր Մկրտումի» հատվածի վերևում՝ Ա. Բակունց, 2-րդ համարում՝ «Լիբեր Արմենիեր» վերնագրի վերևում՝ Ակսել Բակունց, 3-րդում՝ Ա. Բակունց: Հատվածներից ոչ մեկի վերջում նշված չէ Շարունակելի:

«Վեպի լյառն Մասիս» հատվածը տպված է «Գրական թերթի» վերոհիշյալ համարի 3-րդ և 4-րդ էջերում (ներքևի թերթն), վերնագրից վերև՝ Ակսել Բակունց: Հրապարակումն ունի տողատակի աստղանիշերով բերված երեք ծանոթագրություն, որոնք պետք է հեղինակային լինեն կամ համաձայնեցված են հեղինակի հետ: Գրանք են.

1. Հղված է վերնագրից՝ \*Հատված պատմական վեպից: Այս ծանոթագրությունը կարևոր է նրանով, որ իմանում ենք, թե հեղինակը ինչ է համարել իր երկը՝ պատմական վեպ, որը և դրել ենք ներկա հրատարակության մեջ որպես ենթավերնագիր:

2. Հղում կա Դիակոնուս բառից՝ \*Դիակոնուս—ղպիր, սարկավազ:

3. Արմենիեր բառից՝ \*Արմենիեր—հայ:

Պարզ է, որ այս ծանոթագրությունները միայն տվյալ հրապարակման համար են կազմված և ներկա հատորում նրանք տեղ չէին կարող գտնել. քանի որ թե Դիակոնուս-ը, թե Արմենիեր-ը նախքան այս հատվածը վեպում (պահպանված մասերում) արդեն հիշատակված են, իսկ տվյալ հատվածն էլ այս հատորում ինքնուրուիքյան հասկանալի է, որ հատված է հրապարակվող պատմական վեպից:

«Խաչատուր Աբովյան» վեպի պահպանված հատվածները առաջին հրապարակմաններից հետո տպագրվել են 1955 թ. Երկերի միահատորյակում, ուստի ինչ միայն «Լիբեր Արմենիերը»՝ 1956-ին Երևանում «Որակ» ժողովածուի մեջ, 1964 թ. բոլոր հատվածները՝ Երկերի երևանյան երկհատորյակի 2-րդ հատորում:

Հայերեն հիշյալ հրատարակությունների մեջ վեպի պահպանված հատվածները դասավորվել են հետևյալ կերպ՝ 1. Դեպի լյառն Մասիս, 2. «Լիբեր Արմենիեր», 3. Գործ Մայրանա, դստեր Մկրտումի:

Հատվածների ընթերցումը ցույց է տալիս, որ այս դասավորությունը ճիշտ չէ. «Լիբեր Արմենիեր» հատվածում կատարվող դորպատյան դեպքերը նախորդում են «Դեպի լյառն Մասիս» հատվածում նկարագրված դորպատյան դեպքերին: «Լիբեր Արմենիեր» ընդարձակ հատվածում Պարրոտը և Աբովյանը դեռևս չգիտեն, որ նրանց՝ Արարատ բարձրանալու մասին վկայություն տվող գյուղացիները հրաժարվել են այդ վկայությունից և հայտարարել, որ նրանք իբր չեն բարձրացել լեռան գագաթը. այդ հայտարարությունը այս գլխում դեռևս չեն էլ արել: Իսկ «Վեպի լյառն Մասիս» հատվածում Պարրոտը Աբովյանին հայտնում է նրա հայրենակիցների այդ հայտարարու-

թյան մասին: Արժույթը ապրումներ է ունենում և վերհիշում իրենց վերելքը: «Գործ Մայրանա» գլուխը Արժույթի ետդարպասության շրջանին է վերաբերում: Ուստի հաս-վածները դասավորեցինք հետևյալ կերպ՝ 1. «Լիբեր Արմենիեր», 2. Դեպի լյան Մա-սիս, 3. Գործ Մայրանա, դուռը Մկրտումի:

Չբացատրված է մնում հետևյալը. ինչու 1935 թ. «Ետդարպասի գրականություն» ամսագրում պահպանված հատվածներից վերջինը տպագրվել է 1-ին համարում, առա-ջինը՝ 2-րդ և 3-րդ համարներում: Գուցե գրողը նախապես մտադիր է եղել ամսագրում տպագրել միայն «Գործ Մայրանան», և այն խմբագրություն հանձնելուց հետո ինչ-որ պատճառով որոշել է հրատարակել նաև նրան նախորդող մասը: Ամեն դեպքում այս իրողությունը մի լրացուցիչ ապացույց է այն բանի, որ Բակունցը տպագրության է հանձնել վեպի տարբեր մասերից առանձին հատվածներ և ոչ բնավ մի ամբողջություն:

## Ուղղումներ

Որպես բնագրային հիմնական աղբյուրներ ընդունված վերահիշյալ հրատարակում-ների բնագրերում կատարել ենք մի շարք անհրաժեշտ ուղղումներ: Կետագրական ճշ-տումներից բացի (շատ են բացված ու չփակված շակերտները, ավելորդ գծիկները և այլն, որոնք ուղղել ենք, միակերպ ենք դարձրել մի շարք բառերի ու անունների գրու-թյուններ, ինչպես, օրինակ, միրգա ամի և Միրգա ամի, միրգամ և Միրգամ զուգահեռ-ներից պահպանել ենք մեծատառով սկսվողները՝ Միրգա ամի, Միրգամ: Կամ՝ Սեյիթ էհսան և սեյիթ էհսան զուգահեռներից գերապատվությունը տվել ենք սեյիթ էհսան-ին, սարլար և Սարլար ձևերից ճիշտ ենք համարել փոքրատառով գրված տարբերակը, մյուսներն ուղղել ըստ այդմ:

Քարտվան բառաձևը մի քանի անգամ է գործածված և միայն մի անգամ քարվան ձևով. դարձրել ենք քարավան:

«Լիբեր Արմենիերի» բնագրում զուգահեռաբար գործածված են պոստ-մեյստեր և պոստմեյստեր ձևերը. գերմաներեն Postmeister-ն է, ուստի ամենուրեք պահպանել ենք պոստմեյստեր ձևը: Նույնի հիման վրա բուրգ-մեյստեր-ը դարձրինք բուրգմեյստեր (գերմ. Bürgermeister): Նույն բնագրում առկա են՝ քարե-տախտակ և քարե տախ-տակ, եղսան-ճոփի և եղսան ճոփի ձևերը, պահպանել ենք քարե տախտակ-ն ու եղ-սան ճոփի-ը, մյուսներն ուղղել ըստ դրանց: Զուգահեռաբար գործածված Վիրաք և Վիրապ ձևերից պահպանել ենք Վիրապ-ը:

«Գործ Մայրանա»-ի բնագրի հեղինակային խոսքում ամենուրեք բանգ ձև է գոր-ծածված (թանգուրջուն և այլն). դարձրել ենք բանկ (թանկուրջուն):

Վեպի պահպանված բնագրերում անգծիկ տպված մի շարք կրկնավորներ գծիկով ենք դարձրել, ինչպես՝ շատ-շատ, կողք-կողքի, դիմաց-դիմաց, կտուց-կտցի, ծալ-ծալ-նկատի ենք առել, որ Բակունցի երկերի բնագրերում կրկնավորները նաև գծիկով են գրված լինում. օրինակ, «Գործ Մայրանա»-ի՝ Խ Գ-ի բնագրում միևնույն պարբերության մեջ (էջ 387) անգծիկ դիմաց դիմաց-ի մոտ առկա է գծիկով՝ հազար-ճազար:

Այստեղ ևս հեղինակային խոսքում եղած ֆցել խոսակցական-ուղղագրական ձևը դարձրել ենք դասական՝ գցել, հերոսի խոսքում՝ պահպանել: Մուգ բառը իր լրացյալի

հետ տպված է մերթ գծիկով, մերթ առանց գծիկ. պահպանել ենք առանց գծիկի (մուգ դեղին) ձևերը (ըստ տերմինաբանական կոմիտեի նոր հրահանգի) և մյուսներն այդ կերպ ուղղել: Զգուշ ձևը դարձրել ենք զգույշ, վեղարը փրփում էր-ը ուղղել ենք՝ վեղարը փոփում էր, այլ զեպքերում դեռ ևս-ը դարձրել ենք դեռևս, այլ ևս-ը՝ այլևս, բաղխեց-ը՝ բախեց, կալլեգիա-ն՝ կոլեգիա, Օյլգա-ն՝ Օլգա, մի անգամից-ը՝ միանգամից, խավյաւ-ը՝ խավիաւ, կիբաւ-ը՝ կիբառ, Ամալիա-ն՝ Ամալյա և այլն:

Ամեն մի միակերպում, ուղղում արված է կշռադատումներից հետո. օրինակ, այն ինչ առանձին գրվածը այնինչ միասին գրվածից տարբեր իմաստ ունի. առաջին դեպքում նշանակում է, օրինակ՝ այն, ինչ ասացի, հրկրորդ դեպքում՝ այնինչ նա չեկավ, ուրեմն եթե այն ինչ-ը այնինչ-ի իմաստով է գործածված, քաղադրիչները պետք է միացնել: Կամ ինչ որ և ինչ-որ (դերանուն) տարբեր իմաստներ ունեն (այն, ինչ որ ասացի և ինչ-որ բան ասացի), ուստի չի կարելի քննարկում եղած ինչ որ-ը նույնությամբ փոշնել, եթե ինչ-որ-ի իմաստ օւնի: Ու այսպես ուրիշ շատ դեպքեր:

Քացի այս կարգի ճշտումներից, վեպի պահպանված հատվածների քննարկում արված են նաև հետևյալ ուղղումները.

### «ԻՔԵՐ ԱՐՄԵՆԻԵՐ»

էջ 260, տող 19. ԽԳ-ի բնագրում՝ Ալեխանդր I կայսրության օրոք — ուղղված է՝ Ալեխանդր I-ի կայսրության օրոք:

էջ 262, տող 25. ԽԳ-ի բնագրում՝ նա ոչ քե ուսանող էր — ուղղված է ըստ բովանդակության՝ նա ոչ քե ուսանող է:

էջ 263, տող 13. ԽԳ-ի բնագրում՝ Verschiess — հավանաբար վրեպակ է, ուղղել ենք՝ Verschiss:

էջ 264, տողեր 24—25. ԽԳ-ի բնագրում՝ Իսկ քե նրանք ինչեւ են հասարակաց զվարճության վայրերում... — ուղղել ենք՝ Իսկ քե նրանք ինչեւ են անում հասարակաց զվարճության վայրերում...:

էջ 265, տող 2. ԽԳ-ի բնագրում՝ լանդ-գերիճոփ — ուղղել ենք՝ լանդգերիճոփ (տե՛ս նաև ստորև ծանոթագրություններում):

էջ 267, տող 25. ԽԳ-ի բնագրում՝ հազիվ էին տեղավորել — ուղղված է ըստ բովանդակության՝ հազիվ էին տեղավորում:

էջ 269, տողեր 23—24. ԽԳ-ի բնագրում՝ երիտասարդն արդեն վճարել իր բոլոր պարտքերը — ուղղված է՝ երիտասարդն արդեն վճարել էր իր բոլոր պարտքերը:

էջ 272, տող 18. ԽԳ-ի բնագրում՝ Վարբուրգում — ուղղել ենք՝ Վարթարգում:

էջ 274, տող 33. ԽԳ-ի բնագրում՝ տանտեւերը — ուղղել ենք ըստ միևնույն էջում (տող 31) նույն բառի այլ գործածության՝ տնտեսները:

էջ 278, տող 13. ԽԳ-ի բնագրում՝ ևս նայեց — ուղղել ենք ըստ հատվածի բովանդակության՝ ետ նայեց:

էջ 279, տողեր 8—9. ԽԳ-ի բնագրում՝ Candeamus — ուղղել ենք՝ Gaudeamus (բացատրությունը տե՛ս ստորև՝ ծանոթագրություններում):

էջ 291, տող 16. ԽԳ-ի բնագրում՝ Բայց ոչ մի Մարյա Աֆանասենա չի կարող— ուղղված է ըստ բովանդակության՝ Բայց ոչ մի Մարյա Աֆանասենա չէր կարող:

էջ 293, տողեր 25—26. ԽԳ-ի բնագրում՝ մեծաուրախությամբ — ուղղված է՝ մեծավ ուրախությամբ:

էջ 293., տող 32. ԽԳ-ի բնագրում՝ une minute — աղավաղում է. ուղղված է eine Minute:

էջ 293, տող 34. ԽԳ-ի բնագրում՝ hibling — այսպիսի բառ գերմաներենում և երևի որևէ այլ լեզվում չկա. ուղղված է՝ Liebling (սիրելի):

էջ 297, տող 12. ԽԳ-ի բնագրում՝ հանկարծակի եկավ— ուղղված է ըստ բովանդակության՝ հանկարծակիի եկավ:

էջ 297, տող 20. ԽԳ-ի բնագրում՝ Fuawiederschēhen — աղավաղում է, ուղղված է՝ auf Wiedersehen (զերմ.՝ ցտեսություն):

էջ 298, տող 23. ԽԳ-ի բնագրում՝ խնդնի Բուր զլիսն քոավ— ուղղված է՝ խնդնը Բուր զլիսն քոավ:

էջ 299, տողեր 26—32. ԽԳ-ի բնագրում՝ Ապա հետ եկան բառերով սկսվող եսխաղասություն մեջ ութ և կա, որ անմշակ լինելու արդյունք է— և-երից երկուսը դարձրել ենք ու:

էջ 300, տող 10, էջ 305, տող 1. ԽԳ-ի բնագրում՝ ինչո՞ւ համար— ուղղել ենք՝ ինչի՞ համար:

էջ 300, տող 34. ԽԳ-ի բնագրում՝ նրան խրատում են զգուշանալ— ուղղել ենք ըստ հատվածի բովանդակության՝ նրան խրատում էր զգուշանալ:

էջ 305, տող 10. ԽԳ-ի բնագրում՝ Բրմնջում— ուղղված է՝ Բրմնջում:

էջ 306, տող 31. ԽԳ-ի բնագրում՝ non licet in bellis bis peccare — ուղղել ենք, Non licet in bellis bis peccare (տե՛ս նաև ծանոթագրություններում):

էջ 307, տողեր 24—25. ԽԳ-ի բնագրում՝ ցոլանում է... բոլոր սֆանչելիֆները— Բակունցի լեզվում ոչ սակավ հանդիպող այսպիսի անհամաձայնության այլ դեպքեր ևս կան այս վեպում, որոնք չենք ուղղել. քանի որ այս մեկի անճշտությունը շեղում է բովանդակությունը, ուղղել ենք՝ ցոլանում են... բոլոր սֆանչելիֆները:

էջ 312, տող 34—35. ԽԳ-ի բնագրում՝ այդ կտրիներեից և Օտտոկարը— ուղղված է՝ այդ կտրիներեից է Օտտոկարը:

էջ 313, տող 25. ԽԳ-ի բնագրում՝ Harr Gott Sacramentum — ուղղել ենք Herr Gott, sacramentum:

էջ 314, տող 16. ԽԳ-ի բնագրում՝ և երչիկ, որ հորքի միս ունի— վրիպակ է. նույն նախադասության շարունակությունից պարզ է դառնում, թե ինչն է աղավաղված, ուղղված է՝ և երչիկ, որ հորքի մսի համ ունի:

էջ 316, տող 27. ԽԳ-ի բնագրում՝ Mensch, bezahle deine Schulden — ուղղել ենք՝ Mensch, bezahle deine Schulden:

էջ 316, տող 31. ԽԳ-ի բնագրում՝ — Pro partia — ուղղված է՝ — Pro patria:

էջ 316, տող 33. ԽԳ-ի բնագրում՝ «Ով մարդ, կատարի՛ր քո պարտականությունը— ուղղված է ըստ գերմաներենի բովանդակության՝ «Ով մարդ, կատարի՛ր քո պարտականությունները»:

էջ 317, տող 1. ԽԳ-ի բնագրում՝ — pro partia semper — ուղղված է — Pro patria semper:

էջ 322, տող 14. ԽԳ-ի բնագրում՝ դարձել էին — ուղղել ենք ըստ հատվածի բովանդակության՝ դարձրել էին:

էջ 325, տողեր 2—3. ԽԳ-ի բնագրում՝ փայփում էր — ուղղված է՝ փայփվում էր:

էջ 337, տող 10. ԽԳ-ի բնագրում՝ եթե Արմենիների գլուխը շրջեր և նայեր — սղջրված է՝ եթե Արմենիերը գլուխը շրջեր և նայեր:

էջ 342, տողեր 28—29. ԽԳ-ի բնագրում՝ օրոշվում էր թեի վրա — ուղղված է ըստ բովանդակության՝ օրոշվում էր թելի վրա:

էջ 348, տող 7. ԽԳ-ի բնագրում՝ Ալեքսանդր I հողին էր հանձնել — ուղղված է՝ Ալեքսանդր I-ը հողին էր հանձնել:

էջ 348, տող 17. ԽԳ-ի բնագրում՝ նմանեցնում էր — ուղղել ենք ըստ հատվածի բովանդակության՝ նմանեցնում է:

էջ 352, տող 15. ԽԳ-ի բնագրում՝ փառեստախտակը — ուղղել ենք ըստ նույնի այլ գործածության (էջ 354)՝ փառե տախտակը:

էջ 358, տողեր 21—22. ԽԳ-ի բնագրում՝ Ձեր սուսօցիչը՝ հայր Ալեմդար — Քիֆլիսում... — ուղղել ենք՝ Ձեր սուսօցիչը՝ հայր Ալեմդարը, Քիֆլիսում...:

էջ 364, տող 25. ԽԳ-ի բնագրում՝ ինչպես է աունը, երեխաները — ուղղված է՝ ինչպես են աունը, երեխաները:

էջ 365, տողեր 3—4. ԽԳ-ի բնագրում՝ Նրա պարզ բաների մեջ ինքը՝ իմաստուն նշմարտություն էր — ուղղված է՝ Նրա պարզ բաների մեջ ինքը՝ իմաստուն նշմարտությունն էր:

էջ 365, տողեր 22—23. ԽԳ-ի բնագրում՝ ժողովուրդն, ասում է. ամեն ինչ կերել է, ծառերի կեղևն է կերել և կալ է կրել — ուղղված է ըստ բովանդակության՝ ժողովուրդն, ասում է, ամեն ինչ կերել է, ծառերի կեղևն է կերել և կալ է կերել:

### ԴԵՊԻ ԼՅԱՌՆ ՄԱՍԻՍ

էջ 368, տող 16. ԳԹ-ի բնագրում՝ Libling — ուղղել ենք՝ Liebling:

էջ 370, տող 30. ԳԹ-ի բնագրում՝ դպիրը մտառցել այդ — ուղղված է՝ դպիրը մտառցել էր այդ:

էջ 375, տող 27. ԳԹ-ի բնագրում՝ սառուցի — ուղղված է սառուցի:

էջ 376, տող 13. ԳԹ-ի բնագրում՝ լերինն — ուղղված է ըստ Խ. Արովյանի բանաստեղծության բնագրի (տե՛ս ստորև)՝ լերին:

էջ 377, տող 31. ԳԹ-ի բնագրում՝ արոռոյ — այս բառակերպը դասական ուղղագրությանը դրված է գրաբար (ավելի ճիշտ՝ կիսագրաբար) մի հատվածում (էջ 377, տողեր 29—36, էջ 378, տող 25), որ տպված է 1922 թ. ուղղագրությանը: Հատվածն ամբողջի հետ ներկա հատորում վերածված է 1940 թ. ուղղագրության. Դասական ուղղագրությանը տպված վերոհիշյալ միակ բառն էլ դարձրինք հատվածի ընդհանուր ուղղագրությանը համապատասխան՝ արոռո:

էջ 379, տողեր 27—29. ԽԳ-ի բնագրում՝ ոչ հեծաբելոյ... յուրեանց— գրաբա րեք-ված ամբողջ նախադասութեան մեջ հիշյալ երկու բառը՝ կիսով չափ դասական գրութեամբ են արտահայտված (լրիվ դասականը՝ ոչ յօծաբելոյ, իւրեանց), մյուս առեքը՝ նոր ուղղագրութեամբ են տպված (հաղագս, Երեանա և այլն), ուստի այդ երկու բառի ուղղագրութիւնն էլ ամբողջութեամբ նոր դարձրինք՝ ոչ հեծաբելո, յուրեանց:

էջ 380, տող 29—30. ԽԳ-ի բնագրում՝ Նիկողոս Սուփասովի— այնուհետև այս անձի անունը ամենուրեք Նիկողայոս ձևն ունի, ուստի այստեղ էլ դարձրինք՝ Նիկողայոս Սուփասովի:

էջ 380, տող 34. ԽԳ-ի բնագրում՝ զանեաց զճա փայտիվ— նախադասութիւնը մտասմբ հին, մասամբ՝ նոր ուղղագրութեամբ է արտահայտված. նկատի առնելով, որ այս վեպում գրաբար նախադասութիւնները գրողը հիմնականում նոր ուղղագրութեամբ է արտահայտել, այս դեպքում էլ միակերպեցինք՝ զանյաց զճա փայտիվ:

էջ 381, տող 19. ԽԳ-ի բնագրում՝ առողջանալոյն— դարձյալ ամբողջ նախադասութեան մեջ միայն այս բառն ունի դասական ուղղագրութիւն. միակերպութեան համար ըստ նոր ուղղագրութեան դարձրել ենք՝ առողջանալոյն:

էջ 383, տող 6. ԽԳ-ի բնագրում՝ Սիւննոդոսին— նույն բառը քիչ վերև (տողեր 3—4) նոր ուղղագրութեամբ է տպված՝ Սյուննոդոսին: Բոլոր դեպքերում բառը աշխարհաբար հեղինակային խոսքի մեջ է. միակերպման համար հինը փոխեցինք նորի՝ Սյուննոդոսին:

էջ 385, տող 11. ԽԳ-ի բնագրում՝ փրմայի շալի շովսան— քրմայի բառը մեզ անծանոթ է, ենթադրեցինք, որ Քրման քաղաքանունը պիտի լինի (Պարսկաստանի այդ քաղաքը, իրոք, հայտնի էր իր շալի գործվածքներով) և ուղղեցինք՝ Քրմանի շալի շովսան:

էջ 391, տող 2. ԽԳ-ի բնագրում՝ միքիլ— ուղղել ենք ըստ բառի այլ գործածութեան (տե՛ս «Կարմրաբար» վեպի մեջ կատարված ուղղումների ցանկը)՝ միքել:

էջ 397, տող 20. ԽԳ-ի բնագրում՝ շֆեղ շէին այդ և կրպակների ներսը— ուղղված է՝ շֆեղ շէր և այդ կրպակների ներսը:

էջ 400, տող 35. ԽԳ-ի բնագրում՝ հատուկենտ— Այս վեպի, ինչպես և Բակուեցի այլ երկերի բնագրերին քննորոշ է հատ ու կենտ ձևը. և ներկա բնագրում այս հատուկենտը միակն է ու թեև այժմ ընդունված ձևն է, միակերպելու նպատակով դարձրինք՝ հատ ու կենտ:

էջ 407, տողեր 31—34. ԽԳ-ի բնագրում գրաշարական աղավաղում է տեղի ունեցել՝ ...ավլում է բակը և անիծում հավերին, հորթերին, շանը, որ հետևում է պառավին, ինչպես սովի և սպասում է, որ պառավը— այս հատվածից հետո դրված է մի տող՝ Բակի են բողնում: Ինչպե՛տորից, որ ավելորդ է, ապա հաջորդ տողում հետևում է լցնի լոռաչուրը: Սպրդած տողը բնագրում նույն կերպ առկա է նաև հինգ տող հետո. անկասկած է, որ Բակի-ն կիրակի բառի տողադարձված մասն է: Ավելորդ տողը հանելուց հետո ստացվում է՝ ...և սպասում է, որ պառավը լցնի լոռաչուրը: Բայց հետաքննելով է, որ լցնի լոռաչուրը կապակցութիւնից առաջ ինչ-որ խոսք եղած լինի, որի տեղը բռնած է եղել վերոհիշյալ սպրդած տողը:

էջ 10, տող 32. ԽԳ-ի բնագրում՝ Մայրամի— ուղղված է ըստ նույն անվան այլ գործաւթյունների՝ Մայրանի:

411, տող 3. ԽԳ-ի բնագրում՝ սույն օրինակ— ուղղված է ըստ միևնույն բառի այլ գործածութեան՝ սույնօրինակ:

\*\*\*

«Գործ Մայրանա»-ի բնագրի այն մասը, որը նախապես տպագրվել է «Գրական թերթում» «Երազման Զարսու բազար» վերնագրով, «Յետհրդային գրականութեան» մեջ տպագրվածի համեմատ որոշ տարբերութիւններ ունի: Տարբերութիւնների մի մասն այնպիսին է, որ հնարավորութիւն է տալիս հիմնական բնագրում ճշտումներ կատարել: Ուստի այդ հատվածի համար ևս որպես բնագրային հիմնական աղբյուր ընդունելով «Յետհրդային գրականութեան» մեջ տպագրվածը՝ նրանում մի շարք ուղղումներ ենք կատարել ըստ «Գրական թերթի» բնագրի: Մյուս տարբերութիւնները տվել ենք «Բնագրային տարբերակ» բաժնում:

Երբեմն տարբեր են երկու բնագրերի պարբերութիւնները: Պահպանել ենք «Յետհրդային գրականութեան» բնագրում եղած բաժանումը: «Յետհրդային գրականութեան» բնագրում մի շարք անգամ օգտագործված է միտոս ձևը, «Գրական թերթի» բնագրում՝ մտոս: Ամենուրեք դարձրել ենք մտոս:

Բազմիցս կրկնվող Զարսու բազար անունը «Յետհրդային գրականութեան» ամսագրի բնագրում մեծ մասամբ փոքրատառով է սկսվում, «Գրական թերթի» բնագրում՝ մեծատառով: Ըստ վերջինի հրատարակվող բնագրում բոլոր դեպքերում դարձրել ենք մեծատառ՝ Զարսու բազար:

Մի շարք անգամ գործածված միևնույն անձնանունը ԳԹ-ի բնագրում ունի Զիովանելի, իսկ ԽԳ-ի բնագրում՝ Զեովանելի ձևը. ուղղել ենք ըստ ԳԹ-ի՝ Զիովանելի: Էջ 389, տող 13. ԽԳ-ի բնագրում՝ Դեպի կոնգր— ուղղել ենք ըստ ԳԹ-ի բնագրի՝ Դեպի կոնգր:

էջ 389, տող 29. ԽԳ-ի բնագրում՝ «գյուլագ» — ուղղել ենք ըստ ԳԹ-ի՝ «գյուլ-գյագ»:

էջ 391, տող 3. ԽԳ-ի բնագրում՝ տարբերությունը միայն այն չէ— ուղղել ենք ըստ ԳԹ-ի, նկատի առնելով հատվածի բովանդակութիւնը՝ տարբերությունը միայն այն չէ:

էջ 391, տող 7. ԽԳ-ի բնագրում՝ ոսկեկար ֆինջաներից— ուղղել ենք ըստ ԳԹ-ի քեարի՝ ոսկեկար ֆինջաներից:

էջ 391, տող 14. ԽԳ-ի բնագրում՝ յութունի— ուղղել ենք ըստ ԳԹ-ի՝ բութունի:

էջ 391, տողեր 14—15. ԽԳ-ի բնագրում՝ առնաք լոհումի— ուղղել ենք ըստ ԳԹ-ի, որ առավել ճիշտ ձև է՝ առնաք լոխումի:

էջ 392, տող 16. ԽԳ-ի բնագրում՝ առս հագար— ուղղել ենք ըստ ԳԹ-ի՝ առար հագար:

էջ 392, տող 24. ԽԳ-ի բնագրում՝ հոսում է ջուրը— ուղղել ենք ըստ ԳԹ-ի, նկատի առնելով հատվածի բովանդակութիւնը՝ հոսում էր ջուրը:

էջ 393, տող 9. ԽԳ-ի բնագրում՝ որին կրծում են արգերը և բգեզ— ուղղել ենք ըստ ԳԹ-ի՝ որին կրծում են արգերը և բգեզները:

Էջ 393, տողեր 26—27. ԽԳ-ի բնագրում՝ ցույց է տալիս— ուղղել ենք ըստ ԳԹ-ի, նկատի առնելով հատվածի բովանդակությունը՝ ցույց էր տալիս:

Էջ 394, տող 10. ԽԳ-ի բնագրում՝ լուսի մեջ— ուղղել ենք ըստ ԳԹ-ի՝ լուսի մեջ:

Էջ 394, տող 21. ԽԳ-ի բնագրում՝ եսհասույ մատուցեմք— ԳԹ-ի բնագրում առկա է Էսհույ, որի սկիզբը հավանաբար նախկին սովորույթով հեղինակը գրել է դասական ուղղագրությամբ. նոր ուղղագրությամբ կլինի յահույ, որ, հավանաբար, պարսկերեն յաղուք-ի (հակինթ) տարբերակն է. ըստ այսմ ենթադրաբար ուղղեցինք՝ յահույ մատուցեմք:

Էջ 409, տող 27. ԽԳ-ի բնագրում՝ առաջինն էլ— ուղղել ենք ըստ հատվածի բովանդակության՝ առաջինն էր:

## Զ Ի ու Ղ Վ Կ Թ

Հնդհանրապետ հեղինակային բոլոր ձևերը ջանացել ենք այս վեպի բնագրում ևս պահպանել, նույնիսկ այն դեպքերում, եթե այսօր դրանք ինչ-որ շահով անճիշտ են ընկալվում: Օրինակ, առկա են նույն բառի՝ գետնին և գետին ձևերը՝ երկուսն էլ տրականի իմաստով. յուրաքանչյուր գեպրում թողել ենք եղածը: Գրտե և գրտի գուգահեռները նույնպես թողել ենք անփոփոխ: Նույնը վերաբերում է գուգահեռաբար գործածված հեռե և եռե ձևերին: Հերոսների խոսքում այստեղ ևս թողել ենք ցցել խոսակցական-ուղղագրական ձևը:

Պահպանել ենք հեղինակային բուն (աղավնու բուն) ձևը, թեև այժմ բույն-ն է ընդունված: Թողել ենք ժողովուրդի, աներևույթացավ, բառնցֆակոփվ այժմ ընդունված ձևերը: Հասուկ անուններից պահպանել ենք, օրինակ, Գանել խոսակցական ձևը: Այս բնագրում կա Հուսեյն ձևը, Եկորեսուս Հասեյին է, այստեղ թողել ենք Հասեյն: Առանց գծիկի է սպված՝ քել ասեղ. պահպանել ենք:

Անճիշտ են գործածված հայերեն առողարձված գերմաներեն բառերը (գերմաներեն ei-ի դիմաց պետք է այ դենի, մինչդեռ առկա են՝ Վեյմար (ճիշտ՝ Վայմար), պոստմեյստեր (պոստմայստեր), անյվեյն (առյնվայն), Բոգենվոլյո (Բոգենվոլյո) և այլն (գերմաներեն ei-ի դիմաց էյ գենը գալիս է ուստներենց). բոլոր էյ-ով ձևերը պահպանել ենք նույնությամբ:

Պահպանել ենք բազադրուլ Մայր ձենտրան— հասուկ անվան ձևը, թեև ըստ արդի ուղղագրական օրենքի Երկրորդ բազադրիլ պետք է փոքրատառ գրվի:

Պահպանել ենք նաև Մարյա հասուկ անվան ձևը, որ գալիս է խոսակցական ուստներենց:

Պահպանել ենք հարակատար գեբրայի գործածության Բակուցի լեզվին հասուկ ձևերը. օրինակ՝ «...պահարանը՝ կարծիր փայտից և սազաֆներով զարդարած» (էջ 338, տողեր 18—19). այսօր ճիշտ կ'ենչեր զարդարված:

Հիմնականում պահպանված են նաև անհամաձայնությունները, ինչպես՝ «...արեք և գետի գոլք նրան օգտակար է» (էջ 361, տողեր 9—10):

Պետև ուսարան նախադասություններ, բոլորը նույնությամբ պահպանված են. ինչպես, օրինակ, «...մի կհեռի այնպես է կախված, որ խզահարված ևս, թե ինչու է

«ա այդպես կախվի» (էջ 342). հայերեն կոճակին ոչ թե նա կասեն, այլ այն, բայց պակասեցնել ենք նա-ն:

202-րդ էջում կա այսպիսի հատված. «Այստեղի ստուգենտս իրենից բարձր նա-նաչում է Աստծուն, ապա թագավոր կայսեր և ապա իրեն և այլևս ուրիշ ոչ ոքի  
„Der Herr Gott, dann der Kaiser von Russland, dann der dÖrptsche Bursch...»  
Քեկ հայերեն և գերմաներեն տարբերակները նույնական չեն, բայց քանի որ հայե-րենում գործածված է նաճաչել բայը, գերմաներենում համապատասխանաբար կա-րելի է ենթադրել können բայը. այլ դեպքում խնդիրները պետք է դրվեն ոչ թե ուղղական (ինչպես գրված են), այլ հայցական հոլովով (Akkusativ): Մտեայն պատ-պանեցինք բնագրի ուղղականի ձևը:

294 էջում (տողեր 22—23) փակագծում բերված է ոստիկանապետ Կրուչինսկոյ խոսքը՝ «учинили противузаконный бунт»: ենթադրելով, որ противузаконный ձևը ոստիկանապետի խոսքը ոճավորելու համար է գրված՝ բոլոր շուղղեցինք (յ-ն շգորձրինք օ):

Չակերտների գործաթելու հեղինակային եղանակը այժմ ընդունված կանոնների հրրեմն չի համապատասխանում. այս երկում թողել ենք անփոփոխ:

Այս վեպում հատկապես շատ են գրաբար և կիսագրաբար մեջբերումները: Բնա-գրում նրանք մերթ դասական, մերթ խառը, մերթ նոր ուղղագրության բն տրված. ավելի հաճախ՝ խառը կամ նոր: Ճիշտ չհամարեցինք նոր ուղղագրությանը տպված գրաբար հատվածները վերածել դասական ուղղագրության, քանի որ ակնհայտ է հե-ղինակի միտումը՝ գրաբար գրել նոր ուղղագրությանը (հավանաբար, ընթերցողներին մատչելի դարձնելու նպատակով): Որ գրաբարը նոր ուղղագրությանը գրելու հակումը հեղինակային է, երևում է թեկուզ զուտ գրաբար վերնագրերից, որ գրված են նոր ուղ-ղագրությանը՝ Գեպի լյառն Մասիս (և ոչ թե՛ Դեպի լեառն Մասիս), Գործ Մայրանա (է ոչ թե Գործ Մայրանայ) և այլն: Քեկ ընդհանրապես գրաբար հատվածները ճիշտ է դասական ուղղագրությանը արտահայտելը, բայց պահպանեցինք հեղինակային գր-բության ձևերը, միայն առանձին դեպքերում որոշ միակերպումներ կատարելով:

## ԲՆԱԳՐԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

«Խաչատուր Աբովյան» վեպի «Գործ Մայրանա, դստե՛ր Մկրտումի» գլխի մի հատ-վածի. որպես հիմնական բնագիր համարելով ԽԳ-ում տպվածը՝ ԳԹ-ինը տրվում է իբրև տարբերակ (պարբերականների համարները տե՛ս վերը):

Քեք գծի ձախ կողմում տրված է «Ենորհրդային գրականության» բնագրում եղած և այս հատրում պահպանված տարբերակը, գծի աջ կողմում՝ «Գրական թերթի»:

էջ 390, տող 4. Գերադասում էին բորբոսնած կաշվի դեզերին /Գերադասում էին բորբոսնած կաշվի դեզերից:

էջ 390, տողեր 15—16. ներկած կերպասներ /ներկված կերպասներ:

էջ 391, տողեր 5—6. Տարբերությունն ավելի խորն էր /տարբերությունն ավելի էր:

- էջ 391, տող 10. էր պտտացնում /պտտեցնում էր
- էջ 391, տող 14. քեահրաքահրի /քահրաքահրի
- էջ 391, տող 15. քաղզի բաղամի /քյաղզի բաղամի
- էջ 392, տողեր 17—18. Բացի այդ, կան անասունների ջրի ամբարներ /բացի այդ անասունների ջրի ամբարներ
- էջ 392, տող 19. պատմել բոլոր հրաշալիքները /պատմել հրաշալիքները
- էջ 392, տող 34. մատանիի /մատանու
- էջ 393, տողեր 2—3. Բնությունը միաժամանակ նրանց այնքան թերութուններ է ընծայել /բնությունը միաժամանակ վերջիններիս այնքան թերութուններ է ընծայել
- էջ 393, տող 8. զայրությամբ խփում է /զայրությով խփում է
- էջ 394, տող 19. ոսկերիչներ էին /ոսկերիչներն էին
- էջ 394, տող 32. մեռաքսն թելերով հյուսած մանր գորգեր /մեռաքսն թելերից հյուսված մանր գորգեր
- էջ 395, տող 8. հինայած /հնայած
- էջ 395, տողեր 11—12. ջեննաթի մշտադալար պարտեզներում /ջեննաթի կանաչ պարտեզներում
- էջ 395, տողեր 13—14. հյուսել էին մերկ տղայի վարդագույն մարմինը /հյուսել էին մի տղայի վարդագույն մարմինը
- էջ 395, տողեր 17—18. գլխի սև ապարոշներով /գլխի սև ապարոշով
- էջ 395, տող 20. շուբբաններով /շուբբաններով
- էջ 395, տող 25. հասակավոր մարդիկ էին /տարիքն առած մարդիկ էին
- էջ 395, տող 32. շրջում էին միջանցքների լարիտինթոսում, իսկ ավելի շատ այն կրպակների առաջ /շրջում էին միջանցքներում, ավելի հաճախ կանգ էին առնում այն կրպակների առաջ
- էջ 395, տողեր 35—36. Հաղթողի գերագույն իրավունքով նրանք մտնում էին շախմատն /Հաղթողի գերագույն իրավունքով այդ նախկին զինվորները մտնում էին շախմատն
- էջ 395, տող 36. տերը ինքն էր մատուցում մի բաժակ /տերը ինքն էր մատուցում մի բաժակ քաղցր թեյ
- էջ 396, տող 3. Եվ վերջապես պարսպ ձանձրութից /Եվ վերջապես ձանձրութից
- էջ 396, տողեր 3—4. իջնում էր մի համշարու վզակով /իջնում էր մի համշարու ծոծրակի
- էջ 396, տող 10. ով գիտի /ով գիտե
- էջ 396, տող 17. այդ իբր /այն իբր
- էջ 397, տողեր 7—8. տեսնում էին շարժվող մարմնի ձևերը /տեսնում էին կանաչ-շարժվող մարմնի ձևերը
- էջ 397, տող 9. կանայք, որոնք բարձր ծիծաղում էին առողջ կրծքով /կանայք, որոնք առողջ կրծքով բարձր ծիծաղում էին
- էջ 397, տող 11. Եվ այդ ժամանակ /Այդ ժամանակ

«Խաշատուր Աբովյանը» սովորաբար անվանում են անավարտ վեպ և գրողի երկերում դնում են «Անավարտ էջեր» խորագրի տակ (օրինակ, 1955, 1964 թթ. հրատարակությունների մեջ): Սա թյուրիմացության արդյունք է: Այժմ էլ թույլ են տալիս այլ սխալ. ասում են, վեպն ավարտված է եղել, և որ իբր ամբողջ վեպը բազկացած է եղել հենց տպագրված հատվածներից:

Այժմ կարող ենք դրեթի վստահորեն ասել, որ 1936 թ. մայիսի 15-ին (երբ Բակունցը մեկնեց Մոսկվա) վեպը ավարտված էր: Դրա համար կան վկայություններ:

Գրականության և արվեստի պետական կենտրոնական արխիվում (Մոսկվա) պահվող՝ Գոսլիտիզդատի ձեռագիր նյութերի մեջ կան գրություններ, որոնք վերաբերում են գրողի այս երկին: Դրանց մի մասը հրապարակվել է «Գրական թերթում»՝ 1963, № 30: Այս հրապարակման մեջ նախ ուշադրություն է գրավում Գոսլիտիզդատի խմբագիր Վ. Գուլյեկի մի նամակը և բաժնի վարիչ Ռյաբինինայի գրությունը, երկուսն էլ զբաղված 1935 թ. ապրիլին: Սրանցից պարզվում է, որ Բակունցը նամակ է գրել Գոսլիտիզդատին (հավանաբար, մարտի 31-ին հեռագիր էլ է տվել)՝ խնդրելով, որ իր վեպը 1935 թ. հրատարակչական պլանից տեղափոխեն 1936 թ. պլանը: Այս առթիվ ապրիլի 2-ին Ռյաբինինան գրել է իր եզրակացությունը, որի մեջ մասնավորապես ասված է. «Բակունցի վեպի վերաբերյալ պայմանագիրը պետք է տեղափոխել 1936 թ., [այժմ] պայմանագիր կնքել պատմվածքների գրքի համար»:

Գուլյեկի նամակում (Բակունցին հղած) նույն հարցի կապակցությամբ կա ասված հետևյալը.

«Եստ հարգելի ընկեր Բակունց.

ՍՍՀՄ ժողովուրդների սանդղագործությունների խմբագրության վարիչ ընկ. Ռյաբինինան ինձ ծանոթացրել է Ձեր նամակի բովանդակությանը: Մեր ընդհանուր կարծիքն այն է, որ ավելի հետաքրքիր է Ձեր նոր վեպի հրատարակումը Գոսլիտիզդատի կողմից: Բայց քանի որ այն դեռ սլատրաստ չէ, ապա կարծում ենք պետք է ընդունել Ձեր նովելները հրատարակելու մասին Ձեր առաջարկը»:

Կնշանակի՝ Բակունցը խնդրել է իր վեպը 1935-ի պլանից տեղափոխել 1936-ի պլանը՝ պատճառաբանելով, որ այն դեռևս ավարտված չէ և խնդրել է նաև 1935-ի պլանի մեջ մտցնել իր պատմվածքների ժողովածուն (այն լույս տեսավ նույն 1935-ին՝ «Девушка Хонар» վերնագրով): Սա նշանակում է նաև, որ գրողը ավելի վաղ դիմել է Գոսլիտիզդատին՝ իր վեպը 1935 թ. պլանի մեջ մտցնելու խնդրանքով, այսինքն՝ հուլիս է ունեցել այդ թվականին ավարտել այն, բայց չի հասցրել: Ուրեմն, 1935-ի օգոստոսի վեպը ավարտից շատ էլ հեռու չի եղել: Որոշ նյութերից երևում է, որ վեպը մտած է եղել Հայպետհրատի և Գոսլիտիզդատի 1936 թ. պլանների մեջ: Հայպետհրատը, որքան մեղ հայտնի է, մինչև 1936 թ. իր ամբողջական թեմատիկ պլանները չի ապագրել, այս թվականից է սկսել դրանց հրատարակությունը, և կա 1936 թ. թեմատիկ պլանը (կազմող Մ. Սեմերյան): Յավոք, այդ գրքույկը լույս է տեսել 1936-ի օգոստոսի 9-ից հետո (թողարկման ավալաներում կա՝ «Ստորագրված է տպագրության 20 օգոստոսին»), երբ Բակունցի որևէ երկ, այլևս որևէ պլանում արտացոլված լինել չէր կարող:

Ե. Չարենցի անվ. գրականութան և արվեստի թանգարանում կա Հայաստանի գրողների միության այն ժամանակվա նախագահ Դ. Սիմոնյանին ուղղված մի պաշտոնական նամակ (Ջակոբիցի), որ կրում է 1935, հոկտեմբերի 9-ր թվականը. նրանում ասված է, որ Ա. Բակունցի «Նալայատուր Արովյան» վեպը մտած է Կոստանտինոպոլի (ՄԱՍՏ-ի) 1936 թ. պլանի մեջ: Հիմք կա ենթադրելու, որ 1936 թ. սկզբներին վեպը թարգմանվելիս է եղել ռուսերեն: Նույն թանգարանում պահվող 1935 թ. նոյեմբերի 28 թվականը կրող՝ Հայպետհրատի մի պաշտոնական գրության համաձայն «Նալայատուր Արովյան» վեպը մտած է եղել Հայպետհրատի 1936 թ. պլանի մեջ:

Այս կապակցությամբ ես, կարծում եմ, վստահելի պետք է համարել նաև գրողի կեղծ՝ Վարվառա Զիվիչյանի վկայությունն այն մասին, որ «Նալայատուր Արովյան» վեպը 1936 թ. լիովին ավարտված է եղել, որ ինքը բանիցս տեսել է ամբողջական և հասագիրը: Կարելի է ենթադրել, որ վեպի մեթոդները մի սրինակը հանձնված է եղել թարգմանչին:

Այժմ այն պատկերացման մասին, ըստ սրբ «Նալայատուր Արովյան» ավարտված էր, բայց ամբողջ երկը իբր այժմ եղած հասցածներից է բաղկացած եղել: Ես, եթե 1935 թ. մարտին Բակունցը գիմել է Կոստանտինոպոլից, որ վեպը տեղափոխեն 1936 թ. պլանի մեջ՝ ավարտված չլինելու պատճառով, կնշանակի այն 1936-ի մարտին իբր ավարտված չի եղել, իսկ վեպի հրատարակված հասցածներից համառոտագրական կարգով վերջինը լույս է տեսել «Նոր Երասխի» գրականության 25 թ. հինգ մարտի համարում: Սա արդեն հարցը սպառում է՝ ջուլջուլով, որ վեպի հրատարակված հասցածները սոսկ հասցածներ են:

Այդպիսով այժմ եղած երեք հատվածները, կարծում եմ, ամեն մի անաչառ ընթերցող կարգալույժ, կատանա, իբր, առանձին հասցածների ապավորություն: Առաջին դեպքը՝ «Վերին Արևիկիներ» ներկայացնում է գորգատան գրվածներ, ընդ որում, առաջին 6 մասերում, որ 27 աղագիր էլ է, գլխավոր հերոսը չկա, չկան և մյուս, ըստ թե սի, կարևոր գիր անկողի հերոսները (Պարթա, Առաքելներ, Երանց կանայք, Արջավառ և այլն), փաստարեն չի սկզբել վեպի գիտաչառը, այդ էջերը վեպի լուրջի մասին են, որտեղ որպես ընդհանուր համայնապատկեր ներկայացվում են Կոստանտինոպոլիսը, Բուրճուքը: Երկր մնացած մասը, որտեղ կա գիտաչառ, անկա են կարգալույժը և մյուս կարևոր հերոսները, բաղկացած է 125 էջից արդ, արդյոք էրջու չի՞ 1936-ի մտածել, որ վեպի բուն գիտաչառային մասը 125 էջից ավելի պետք է լիներ:

Մեծահասակ պետք է նկատել անենի հետևյալը՝ Վեպի շրջանի Պարթա հատվածը Կոստանտինոպոլի վերաբերյալ հերոսի գորգատան կրանցի է ներկայացվում (Պարթա ըստ Կոստանտինոպոլի վերաբերյալ է գորգատան Կոստանտինոպոլի): Այդ հատվածը, անկապակց, «Վերին Արևիկիներ» գլխից է, աստի և, ըստ հավանության, վեպից պահպանված է, անկա հատվածի մեջը գորգատան պատկերավորման, մյուս Պարթանի գորգի նաև անկապակց և հետևյալն է մի քանի ընկառնում: Կոստանտինոպոլի, Կոստանտինոպոլի հերոսի գորգատան կրանցի նկարագրող հատվածները անավարտ լինելու ապավորություն են Թագում էլ չլինելով պահպանված մասերի ընդհանուր տվածի մեջ գորգատան այդ հատվածը մաս երեք շարունակ է կապվում (գորգատան հատվածը ամբողջությամբ 194, երեսները 32 աղագիր էլ են):

Արդյո՞ք Արքովյանին նվիրված՝ Բակունցի այս վեպը պետք է հիմնականում իր հերոսի ուսանողական շրջանի նկարագրությամբ սահմանափակվեր: Ո՛չ, անշուշտ, և գաղտնի է ապացուցել: Նախքան վեպի գրելուն ձեռնարկելը և ապա վեպը գրելուն զուգահեռ գրողը մանրամասն ուսումնասիրել է Արքովյանի կյանքը, և 1932 թ. հրատարակել գիտական ուսումնասիրություն՝ «Եռաշատուր Արքովյանի «Երեւան» բացակայումը»: Այս աշխատությունը ոչ միայն արքովյանագիտության մեջ մինչև այդ եղած ուսումնասիրություններից ամենափաստալիցն է, այլև այսօր այն ուշագրավ է նաև նրանով, որ մոտավոր պատկերացում է տալիս Բակունցի վեպի կորած մասերի բովանդակության վերաբերյալ, ցույց է տալիս, թե մոտավորապես ինչ գլխավոր մասեր պետք է ունենար վեպը, ինչպիսի զարգացում ու վախճան:

Նախ. աշխատության գլխավոր նպատակներից մեկը, եթե ոչ ամենագլխավորը, եղել է Արքովյանի «Երեւան» բացակայումը՝ ինչ-որ շարժով հայտնի դարձնելը, և այդ նպատակը արտահայտված է նաև աշխատության վերնագրում: Բնականաբար վեպում ևս պետք է գեղարվեստականորեն պատճառարանվեր և հիմնավորվեր այդ բացակայումը և մանավանդ ցույց տրվեր այն: Վեպի պահպանված հատվածներում սկզբած է այդ հիմնավորումն ու պատճառարանումը, բայց դրանք վտակներ են, որոնք դեռևս լիակատար հիմք ու պատճառ չէին կարող լինել Արքովյանի «Երեւան» բացակայումը: Այդ վտակները պետք է դառնային հորդահոս գետ, որը Բակունցի հերոսին պետք է մղեր «Վեպի բացակայում», դեպի անվերադարձ փախուստ: Երկի պահպանված հատվածներում չկա ոչ այդ «գետը», ոչ էլ բուն փախուստը: Վեպի բովանդակության և դիպաշարի մոտավոր վերականգնումը ցույց է տալիս, որ պահպանված հատվածները կարող են լինել ամբողջ ծավալի՝ ամենաշատը մեկ երրորդը:

\*\*\*

Փորձենք մոտավորապես պատկերացնել, թե պահպանվածից բացի ինչ մասեր կարող էր ունենալ «Եռաշատուր Արքովյան» վեպը: Դրա համար նախ դիմենք գրողի վերահիշյալ ուսումնասիրությանը:

Ըստ այդ ուսումնասիրության Արքովյանը Ռուսական կայսրությունից փախել է, որի պատճառները եղել են փախուստին նախորդող ժամանակաշրջանում նրա ապրած խոր հիասթափություններն ու հուսահատությունը, հոգեկան ծանր ողբերգությունը: Այդ պատճառները կարելի է շորս խմբի բաժանել. ա) ցարիզմի երկդիմի քաղաքականությունը Հայաստանի վերաբերմամբ՝ 1828 թվականից հետո, բ) ցարական պաշտոնյաների անբարյացակամ վերաբերմունքը Արքովյանի անձի և գործունեության նկատմամբ, գ) հայ մտավորականության, հոգևորականների և ընդհանրապես հայ հասարակայնության մի մասի բացասական վերաբերմունքը Արքովյանի գործունեության նկատմամբ, դ) զուտ անձնական անհաշողություններն ու դժբախտությունները:

Իր ենթադրությունները Բակունցը փաստում է դիվանական վավերագրերով, ժամանակակիցների վկայություններով և այլն: Նա շատ ապացույցներ է բերում ցույց տալու համար, որ Արքովյանի անհայտացման մասին եղած մյուս ենթադրությունները՝ ինքնասպանություն, սպանվելը Շաֆի բեկի կամ նրա որդու ձեռքով, աքտորվելը Սիբիր և այլն, հիմնավոր չեն Արքովյանի փախուստի մասին իր արած ենթադրության համեմատ:

Բակունցը ցույց է տալիս, որ դեռ պատանեկութունից Արովյանը ունեցել է հասարակական գործունեության հակումներ, բնավորությամբ եղել է հասուն, հաճախ անզուսպ:

Երևանի գրավումից հետո, այդ գրավման վառ տպավորության տակ Արովյանը էջմիածնից մեկնել է Գորպատ (1830 թ.), այնտեղից վերադարձել 1836 թ. «կես գերմանացի», ինչպես գրում է Բակունցը, եվրոպական մշակույթով, վարք ու բարքով տղորդած, աշխատանքի է տեղավորվել Քիֆլիսում: Երևան տեղափոխվել է 1843 թվականին: «Վերք Հայաստանին» գրել է Քիֆլիսում, 1841-ին՝ 1828-ի ու դրան նախորդած տարիների պահպանվող երազանքների, նաև խանդավառության կրակով և հետո ոչ մի առդ չի փոխել: Այնուհետև, Բակունցը գրում է, որ Քիֆլիսում ապրած ժամանակ ՄԻ քանի անգամ Երևան գալը նրան հնարավորություն չէր տվել ճանաչելու հենց թեկուզ Քանաքեռը, այնպես, ինչպես նա կար գիրքը գրելու տարին: Իսկ հետո, երբ տեղափոխվեց Երևան, երբ բազմաթիվ ու երկարատև ճանապարհորդությունների ընթացքում նա ճանաչեց երկիրը, մարդկանց, ցարական ազմիխիստացիան, նա միայն դառնացավ, հուսահատվեց, սակայն ոչ մի բան չչնչեց այն էջերից, որտեղ նա գովարանել էր «Տյուսիսի արծվին»: Ներսես Աշտարակեցու հանդեպ տածած խոր հարգանքը, որ զուգորդվում էր Ներսեսի պաշտպանած քաղաքականության շատագովմամբ, փշրվեց նույն «Հայկական մարզում», որտեղ և ծնվել էր: Այդ այն ժամանակ էր, երբ արդեն շկար որակապես «Հայկական մարզը», և նրա հետ միասին չքացել էին ազգային անկախ կյանքի ակնկալությունները» (տե՛ս «Քաշատուր Արովյանի անհայտ բացակայումը», էջ 37). «...անձնական շփումների և բազմաթիվ ճանապարհորդությունների հետևանքով նա գալիս է այն համոզման, որ ցարական ռեժիմը «հայոց ազգի», այսինքն՝ նախկին «Հայկական մարզի» գյուղացիության համար անկալած բարիքների փոխարեն բերեց կնուտ և աղքատություն» (ն. տ., էջ 57), «Քաբավել է գյուղացին և պարսկական առյուծի ճանկերից ընկել «Տյուսիսի արծվի» մագիլների մեջ, քեղխուղաների և թարխանների գյուղը շկար, սովորաբարի արշինի էր տիրապետում և սարքիարի ծեծին փոխարինել էր յասաուլի մտրակը» (ն. տ., էջ 47):

Գրողը փաստերով ցույց է տալիս նաև Արովյանի և ցարական պաշտոնյաների բախումները՝ նախ Քիֆլիսում և ապա մանավանդ՝ Երևանում, որտեղ հենց սկզբից անտանելի հարաբերություններ են ստեղծվում մի կողմից «կոլեժսկի անասոր» Արովյանի, մյուս կողմից զավառապետ Ն. Բլավացու, ոստիկանապետ Մորոխովիցի և պետական ալ պաշտոնյաների միջև:

Այնուհետև, գրողը ցույց է տալիս Արովյանի և հայ հասարակության միջև տեղի ունեցած սուր բախումը: Արովյանը նախապես լինելով Ներսես Աշտարակեցու կողմնակիցներից՝ բոլորովին հիասթափվում է Աշտարակեցու ցարամետ քաղաքականությունից, մտանվանգ, որ նա մերժում է իր խնդրանքները (վանք մտնելու, աշակերտներին Ռուսաստան ու Եվրոպա բարձր ուսման ուղարկելու և այլն) և վտարում: Դրան զուգակցվում է էջմիածինը լուսավորության կենտրոն դարձնելու՝ Արովյանի երազանքի վերջնական փլուզումը: Հայ հոգևորականությունը, մտավորականությունը Արովյանի նկատմամբ ակնհայտ անհարազատության զգացում են ունենում:

Փլուզվում են նաև Արովյանի հույսերը՝ հայ վաճառականության ազգօգուտ գործունեության հետ կապված: Բակունցը նշում է, որ տեսնելով հայ վաճառականների ծայր շահամոլությունը, անսիրտ նյութապաշտությունը (ն. տ., էջ 39), Արովյանը փոխում է

իր վերաբերմունքը այդ խավի նկատմամբ: «Եվ Գորպատից վերադառնալուց հետո... մինչև վերջ Արովյանը ներհակ է մնում այս խավին և նրա քաղաքական ձգտումներին» (ն. տ., էջ 57): Գրողն այսպես է ընդհանրացնում մի կողմից Արովյանի, մյուս կողմից հայուխյան երկու գլխավոր խավերի միջև ստեղծված հարաբերությունը. «Դորպատի ստուգենտը ատենյի լուսբերական էր հայ կղերից շատերի համար, իսկ Երևանի սով-գաթյարները նրան համարում էին «ժանգոտ» մարդ, համարյա կիսախելագար» (ն. տ., էջ 50):

Առհասարակ, ակնհայտ է, որ Արովյանի վրա առավել շատ է ազդել իր ու իր ազգակիցների միջև ստեղծված սուր հակադրությունը, անհասկացողությունները, որոնք նրա պատանեկան ձգտումների և ծրագրերի վերջնական փուլուման և առհասարակ ներքին ողբերգության գլխավոր պատճառն են եղել:

Արովյանի դասընկերոջ՝ Ս. Նազարյանի, նամակներից քաղվածքներ բերելով՝ Բակունցը առավել ցցուն է դարձնում Արովյանի ծայր աստիճան տազնապալի հոգեկան վիճակը. Նազարյանը ընկերոջը խորհուրդ է տալիս հայ միջավայրում «բերանը փոկ պահել» (էջ 50). Նազարյանի նամակներից երևում է նաև, որ Արովյանը նրան գրել է հայկական միջավայրից հեռանալու, հայությունից հրաժարվելու իր մտադրության մասին. «Քո՛ Տփղիսից հաղորդածը մեր հայրենակիցների վերաբերմամբ ինձ շփազանց տխրեցրեց և հաստատեց իմ՝ առաջները այդ մասին արտահայտած խոսքերը. բնական է՝ դա մի տխուր իրողություն է: Որո՞մն իշխում է ոսկե գահի վրա, և հօգուտ ժողովրդի ասած բուժիչ առաջարկներին ոչ ոք ականջ չի դնում: Լսում եմ այն հոգի ու սիրտ մաշող մեղքերի մասին, որ դու քո նամակում նկարագրել ես... Դու ասում ես՝ «Սոս պիտի տուն ու հայրենիք թողնեմ և ուրիշը փնտրեմ»: Սրանից ես կարող եմ հետևեցնել, թե որքան անտանելի է թեզ քո շրջապատը» (էջ 38):

Բակունցը ցույց է տալիս նաև, որ ամենին գումարվում են Արովյանի զուտ անձնական լուրջ անհաջողությունները. նրան մերժում են Կազանի համալսարանում ամբիոն տրամադրել, իսկ իր ռոճիկը շնչին էր կարիքները հոգալու համար, ոչնչացնում են նրա՝ այնքան փայփայված «Նախաշավիղը», ընդհարվում է պրոֆ. Աբիխի հետ, որը հրապարակորեն կասկածի տակ է դնում Արովյանի և Պարրոտի վերելքը Արարատի գագաթը, խոլերայից մահանում են մայրն ու եղբայրը և այլն: Իսկ անձնականի ոլորտում ամենակարևորը ընտանեկան բախումն էր, այն սառնությունը, օտարացումը, որ առաջացել էր Արովյանի և գերմանուհի կնոջ միջև. «Ընտանեկան կյանքը անմխիթար, որովհետև էմիլիա Լոպեն շատ հեռու էր ամուսնուն հուզող խնդիրներից» (էջ 50): «...Անանձնական հուսախաբությունն ավելացավ անձնական, ընտանեկան կյանքի խորթությունն ու սառնությունը: Նրա վրա ծանրացավ մի զարհուրելի հուսահատություն» (էջ 61),— գրում է Բակունցը:

Գրողը ուրիշ շատ վկայություններ է բերում (այդ թվում Մ. Վազնի, Ֆ. Բոդենշտեդի, Ա. Ֆոն Հաքստհաուզենի)՝ Արովյանի հուսահատության, հոգեկան ծանր վիճակի մասին վկայող, մեջբերումներ է անում իր՝ Արովյանի այդ կարգի խոսքերից: Ահա դերանցից մեկը, որ հանրահայտ է. «Որ լսում էի, թե մեկ մարդի պատիժ տվին, յա բանտը քցեցին, որ ասում էին, թե Ռուսաստանիցը մեծ մարդ ա եկել, որ մեր երկրի ահ-վալն քննի, իմանա, որ կուսակալիցը, յա նախարարիցը (մինիստրիցը) մեկ թուղթ էր գալիս, որ կտառվարությունիցը (գիրենկցիցը) ստորո՞ճը գիրքը կոնստակին աչքիս չէր

ճրևե՞մ, էնպէս էի սարսափում, կարծում, թէ էս ա, իմ վերջի օրը հասել, մտեցել ա, իմ արած շարութիւնը լիս ընկել, Պետերբուրգ, Մոսկվա, Քիֆլիս ինձանից գանգատով լըվել են, իմ բարեկամքը ինձանից ձուր վերցրել, իմ թշնամիքը ինձ մատնել, ինձ պետք է տանեն սաղ-սաղ թաղեն, յա կախ տան... Ինձ պահողը հենց էս էր, որ ասում էի, թէ մտքումդ դրել ես ազգին պետքը գաս, մեկ անուն թողաս, կեմենես, մեկ վրեղ կանգնող, սղորմի տվող էլ չի ըլիլ: Ապրիր, որ ասածդ անես, մտրագդ անես: Էս, էս էր ինձ անեն դժոգրից, պատուհասից ազատում, հոգիս եղ բերում, թէ չէ Քուտը վազուց կըլեր իմ գերեզմանը» (էջ 61):

Այս քաղվածքը բերեցինք նաև հօգուտ Բակունցի տեսակետի՝ ցույց տալու համար Արովյանի հիվանդագին կասկածամտութիւնը. մշտական վախի զգացումը, որ հոգեկան անհավասարակշռութիւն է հասած եղել: Եվ նկարագրված այդ վիճակը նա ունեցել է զեռևս Քիֆլիսում ապրած ժամանակ, երբ Երևան տեղափոխվելու հետ մեծ հույսեր էր կապում: Իսկ Երևանում հուսահատութիւնը ավելի է սաստկանում, «ազգին պետք գալու» «մտրագն» էլ լիովին ի դերն է ելնում, ու այլևս հուսադրող ոչինչ չի մնում, ուստի և ավելի են սրվում հոգեկան ողբերգութիւնն ու հիվանդագին վիճակը:

Արովյանը 1843-ին Քիֆլիսից փոխադրվել էր Երևան ազատվելու համար հալածանքից, շարակաժութիւններից («Աստի և նախանձ՝ շարակաժութիւն իմոցս պաշտոնակցաց զրկեալ զիս բռնի՝ յորդեգրաց իմոց պատճառ եղեն ինձ թողուլ զՏփլիս և հեռանալ» — էջ 59)՝ հույս ունենալով Երևանում այդ ամենից ազատ ծառայել լուսավորութիւն գործին: Բայց Երևանում այդ բոլոր շարիքները քառակի ուժով են թափվում Արովյանի գլխին: Ի՞նչ անել: Կազան տեղափոխվելը խափանվում է: Վերադառնալ Քիֆլիս. բայց չէ՞ որ հինգ տարի առաջ էր այնտեղից սարսափահար փախել: Բակունցն, ահա, գրում է, որ կար մի ելք՝ փախուստ, բայց ոչ թէ ետ՝ Քիֆլիս, այլ ավելի անմատչելի վայրեր:

Արովյանը հրաժարվում է Երևանի գաղափարական ուսումնարանի տեսչի պարտականութիւնից, 1848 թ. մարտի 30-ին սկսում է հանձնել գործերը նոր տեսուչ Տուրկեստանովին և հանձնումը շավարտած ապրիլի 2-ի առաջօրեայն վաղ տնից դուրս է գալիս ու անհայտանում:

Բակունցը հատուկ ուշադրութիւն է դարձնում այն բանի վրա, որ անհայտացումից առաջ Արովյանը մոտ երեք օր սենյակից դուրս չի եկել, շորերը չի հանել, մտածել է, գրել և ծխել իր երկար շիրուխը, — այսպես են նկարագրում նրա վերջին օրերը թէ՛ տընեցիները և թէ պաշտոնական հաղորդագրութիւնը... Գորպատի ստուգենտը երեք օր ու գիշեր հազար անգամ քննել է իր անցած ճանապարհը, այն, ինչ սպասում էր իրեն և միշտ էլ հանգիլ մի հուսահատ եզրակացութիւն, որ հարկավոր է բոլորը թողնել և անակնկալ առիթից օգտվելով գտնել «նոր տուն և նոր հայրենիք», որի համար պետք է թողնել Քիֆլիսը, տունը, դպրոցի կիսատ գործերը, որովհետև միևնույն է, այնտեղից բորքը նա հետ չպիտի դառնար, և իր թշնամիներից ոչ մեկի ձեռքերը այնքան երկար չէին՝ մինչև այնտեղ նրան հասնելու» (ն. տ., էջ 55):

Բակունցը բերում է նաև վկայութիւններ այն մասին, որ Արովյանը տարրեր առիթներով ցանկութիւն է հայտնել Հայաստանից հեռանալու: Դեռևս նախքան Գորպատ մեկնելը նա որոշած է եղել բոլորովին տեղափոխվել Վենետիկ (ի դեպ, Քուրբիայի միջով): Գորպատից հետո նրա փախչելու մտադրութիւն մասին ասվածը հիշատակեցինք: Բա-

կանցը հիշեցնում է նաև Բողոնշտեղին գրած Արովյանի մի նամակում ասվածն այն մասին, որ «վճել է թողնել ռուս պետական ծառայութունը, Հայաստանի ներսի մասը գնալ և այնտեղ իր պապերի հետ երկրագործությամբ պարապել»։ «Հայաստանի ներսի մասը» միայն նշանակում էր Օսմանյուի Հայաստան, որովհետև ռուսական սահմաններում այդ անունը արդեն չէր հոլովվում» (էջ 49)։

Եվ այդպես, բազում փաստերի ուսումնասիրությունից Բակունցը հանգում է այն եզրակացության, որ Արովյանը որոշում է ընդունել փախչել և իրականացրել է այդ որոշումը։

«Մի անակնկալ առիթից նա վճռել է օգտվել ազատվելու համար ծանր միջավայրից, փնտրելու «նոր տուն, նոր հայրենիք», որի համար կիսատ է թողել բոլոր գործերը, դըպրոցի հանձնումը, որ սկսել էր, ընտանիքը, որից դառնաղի գանգատներ նա առաջ էլ գրել է և բռնել է մի ուղի, որ կարող էր տանել նրան կամ դեպի ազատագրումն այդ հոգսերից, միջավայրից, որից այնքան դառնացած և հուսահատված էր, որտեղ շունեք ամուր կովան,— և կամ դեպի խորխորատ, դեպի մահ։ Վերջին հուսահատ փորձն էր անում նա, մի փորձ, որ լողաբար գագաթնակետն էր նրա մինչ այդ արած բազմաթիվ ապարդյուն ճիգերի» (էջ 32)։

Բայց ո՞ւր է փախչում։ Բակունցի մտորումներին ուշադիր հետևելիս՝ դժվար չէ նըկատել, որ այդ ուր-ը շատ էլ էական չէ նրա տեսակետի համակարգում։ Թեև նա այդ հարցն էլ է ուսումնասիրման առարկա դարձրել։ Նա ցույց է տալիս, որ դեպի հյուսիս փախչելը անիմաստ էր, քանի որ նախ՝ դա թաքուն պահել գրեթե անհնար էր, և ասպ՝ այդ օրերին Ռուսաստանում մոլեգնում էր խողերան։

Բակունցը բերում է մի շարք դիվանական ստույգ վավերագրեր, որոնք վկայում են, թե ինչպես 1840-ական թվականներին և մասնավորապես 1848-ին Ռուսական կայսրության իշխանության տակ դոնվոդ Հայաստանի մասից շատ հայեր՝ անհատներ, ընտանիքներ, գյուղեր անցնում էին Քուրքիա (էջ 54), և դա այն ժամանակ հայտնի բան էր Այդ փաստերը Բակունցին, ինքնաբերաբար, բերում են այն եզրակացության, որ Արովյանը կարող էր հանգել մի որոշման, թե փախուստի ամենադուրին ուղին Քուրքիայի միջով է անցնում։ «Ո՛ւր էր գնում,— հարց է տալիս գրողը,— Գերմանիա՞ թե «Հայաստանի ներսը», դժվար է գուշակել» (էջ 55)։

Բակունցի տեսակետը հետագայում սխալ են ներկայացրել. ճիշտն, ահա, այն է, որ գրողը ենթադրել է, թե Արովյանը Երևանից, Ռուսական կայսրությունից փախչելու նպատակով անցել է կայսրության հարավային սահմանը (Քուրքիայի հետ ունեցած), իսկ թե ուր է որոշած եղել գնալու և հաստատվելու, Բակունցը բողել է առկալիս։

Գրողի կարծիքով Արովյանի փախուստին ազդակել է նաև 1848 թ. այդ նույն ժամանակաշրջանում Եվրոպայում բռնկված հեղափոխության լուրը։ Այս առթիվ էլ նա գրում է այդ լուրի հնարավոր ազդեցության մասին. «...մենք հարկ ենք համարում հայտնել, որ այդ անհրաժեշտաբար ոչ մի կապ չունի հեղափոխությանը մասնակցած արևել կազմակերպության աշխարհահայացքի համոզված հետևորդ լինելու հետ,— այսինքն հեղափոխության լուրը միայն առիթ էր, արտաքին հարված, որ նրան տեղից շարժեց այնպիսի նպատակով, որ անմիջական ոչ մի կապ չունի 1848 թվի հեղափոխության հետ» (էջ 52)։

Գրողի այս առածը ևս հետագայում անճիշտ է ներկայացվել։

Բակունցը բերում է նաև Արովյանի անհայտացմանը անմիջապես հաջորդած ժամանակաշրջանում եղած կարծիքները, որոնց մի մասը հանգում է այն բանին, որ Արովյանը կենդանի է, գտնվում է Տաճկաստանում կամ մի այլ տեղ, փոքր մասը՝ որ Արովյանը ինքնասպան է եղել: Գրողը ցույց է տալիս նաև, որ մի աղբյուրից կողմից սպանվելու կամ Սիրիոյ քարտրվելու մասին խոսակցությունները ոչ շրջանի են վերաբերում և անհիմն են:

Գրողը նաև այլ վկայակոչումներ է անում, այդ թվում և այն, որ Արաքսի ափին, Խորվիրապի մոտ գտնված երկարաճիտ կոշիկը, ըստ Արովյանի կնոջ հավաստման, իր ամուսնունն է եղել: Բակունցի կարծիքով Արովյանը կոշիկները հանել ու թողել է ափին հետքերը կորցնելու համար:

Մենք հակիրճ ներկայացրինք Բակունցի ուսումնասիրության բովանդակությունը, որը ինչ-որ չափով գեղարվեստական մարմնավորում պետք է ստանար նրա վեպի մեջ, և մեզ թվում է, որ ստացած է եղել վեպի ամբողջական քննարկում:

Վեպի պահպանված, փաստորեն, երկու հատվածներում այս բովանդակության մեծ մասը չկա: Առաջին մասում դորպատյան միջավայրում ուսումը գեռու շարունակող Արովյանը երկրորդ մասում միանգամից ընտանիքի հետ Երևանում է գտնվում որպես գավառական ուսումնարանի տեսուչ: Շուրջ 10 տարվա ընդմիջում կա: Ամենից առաջ, չկա Արովյանի Քիֆլիսում գործավարած տարիների որևէ նկարագիր, մինչդեռ այդտեղ են սկսվել նրա մանկավարժական աշխատանքը, ընդհարումները շրջապատի հետ, այդտեղ է նա մտերմացել տեղի գերմանական համայնքի հետ և ամուսնացել: Այս ամենը ինչ-որ կերպ պետք է որ արտացոլված լինի Բակունցի վեպում, այլպես նրա հերոսի երեվանյան կյանքը մնում է բոլորովին օդից կախված: Եվ ապա, արդեն երևանյան այդ կյանքում կարևոր են օտարացումը կնոջից, ընդհարումները տեղի աստիճանավորների հետ, ճանապարհորդությունները Երևանի նահանգում, հայ գյուղացիության ծանր վիճակը, հիասթափությունը ցարական տիրապետությունից, հայրենակիցների սառը, նաև թշնամական վերաբերմունքը իր նկատմամբ, հոգեկան անտանելի պահերը, փախուստը (որը եզրագծանկատան էր նրա մինչ այդ արած բազմաթիվ ճիգերի):

Վեպն, ըստ երևույթի, ավարտվել է 1848 թ. ապրիլի 2-ի դեպքերի պատկերմամբ:

Կարևոր է այն, որ վեպի պահպանված հատվածները արդեն իսկ ենթադրում են այդ ամենի նկարագրումը: Դորպատում Բակունցի Արովյանը մի շարք առիթներով (կոիվը կամուրջի մոտ, շերքեզ զինվորի ծանր վիճակը, ռուս ձկնորս Վասիլիի հետ հանդիպումը, ուսանողների տրամադրությունները) հակացարական լիցք է ստանում, ըստ գրողի ուսումնասիրության, դա պետք է ավելի մեծ շփոթի հասնեի Հայաստանում:

«Գործ Մայրանա» գլխում Արովյանի և կնոջ օտարացման մասին կանակները, որոնք պետք է զարգացում ապրեին:

Մի խոսքով ամեն ինչ ցույց է տալիս, որ Բակունցի պատկերացմամբ իրական Արովյանի և իր հերոս Արովյանի անհայտացումը եղել է փախուստ, որը աստիճանաբար նախապատրաստվել է Արովյանի շուրջ քսան տարվա կյանքի զրվազներով:

Այսպես, հնարավորին չափ փորձեցինք ներկայանել, թե ինչպիսին պետք է լինեի և ինչպիսին է, հավանաբար, եղել Բակունցի «Խաչատուր Արովյան» պատմավեպը և նրա զլխավոր հերոսը:

Այս ամենից տարբեր հարց է այն, թե որքանով էր իրականությունում մոտ, որքանով էր հիմնավոր Բակունցի տեսակետը Արովյանի անհայտացման վերաբերյալ:

Արովյանի «անհայտ բացակայման» մասին մի շարք կարծիքներ են հայտնվել. բո-  
լորն ըստ «բացակայման» պատճառաբանությունների կարելի է երկու խմբի բաժանել.  
ա) ներքին պատճառների խումբ. «բացակայումը» պայմանավորել են իր՝ Արովյանի  
կայացրած վճիռով, որն արդյունք է եղել նրա հոգեկան-մտավոր ներքին զարգացման ու  
վիճակի: Ըստ այսմ, Արովյանի մի շարք անգամ վկայված հոգեկան ծանր կացությունը՝  
Գորպատից Կովկաս գալուց հետո, Քիֆլիսում ու մանավանդ Երևանում պատճառ է զար-  
ձեցել, որ գրողը փախուստի կամ ինքնասպանության վճիռ կայացնի և իրագործի: բ) Ար-  
տաքին պատճառների խումբ. ըստ այսմ, Արովյանի հոգեկան ծանր կացությունը մի  
կողմ է դրվում, և նրա «բացակայումը» բացատրվում է Արովյանի ներքինից անկախ,  
ուրիշների կայացրած վճիռով: Ասում են, որ ինչ-որ մեկը խանդի հողի վրա կամ ունե-  
ցած պարտքը վճարած չլինելու պատճառով որոշել է սպանել Արովյանին և ի կատար է  
ածել իր վճիռը: Կամ, որ ինչ-որ պաշտոնյա մարդիկ որոշել են Արովյանին քստորել Սի-  
բիր և կատարել են իրենց այդ որոշումը: Կարծիքների այս երկրորդ խումբը բացառում  
է Արովյանի որևէ մասնակցությունը իր «անհայտ բացակայման» վճռի կայացմանը: Մի  
կողմ են դրվում Արովյանի ներքին զարգացումը, նրա խանվածքի, բնավորության  
հայտնի գծերը, ապրած ողբերգությունը որպես ներքին վճիռ կայացնելու ազդակներ, և  
հարցը լուծում են այդ ամենից անկախ կայացված արտաքին մի որոշումով: Այդ կերպ,  
մի պարտքատեր, խանդով այրված մի ամուսին կամ թշնամանքով բորբոքված մեկը կա-  
րող էր սպանել ոչ միայն Արովյանի պես հոգեկան հուզումներով փոթորկվող մեկին,  
այլև որևէ մարդու. որն իր կառնիքով պետք է սպանվի:

Նույնը և Սիբիր քստորելը. այս տեսակետը պաշտպանողները շնն կարող ասել և  
չեն ասում, թե Արովյանին քստորել են այն պատճառով, որ նա ներքին հուզումներ ու  
ողբերգություն է ունեցել: Քաղաքական նկատառումներով քստորում էին տարբեր խառ-  
նրովածքի անձանց, և եթե համապատասխան մարմինները քստորելու լինեին Արովյանին,  
բնականաբար, հաշվի չէին առնի նրա ներքին ծանր վիճակ ունենալու կամ շունենալու  
խնդիրը:

Բակունցի տեսակետը, ինչպես դժվար չէ նկատել, ներքին պատճառների խմբին է  
դասակարգում. ըստ այդմ, Արովյանի հեռացումը միակ հնարավոր ավարտն էր նրա կյան-  
քի ու գործունեության ամբողջ զարգացման: Եվ գրողը վեպում պատկերել է իր հերոսի  
հենց այն զարգացումը, ներքին մի շարք պատճառների առաջացումը, որոնք նրան պետք  
է հանգեցնեին հեռացման վճիռ կայացնելուն: Այդ համոզմանը Բակունցը հանգել է բազ-  
մաթիվ փաստաթղթերի ուսումնասիրությունից, Արովյանի մասին տարիներ խորհելուց  
հետո և ոչ միայն խորամուկո ուսումնասիրողի իր տրամաբանությամբ, այլև գրող-հո-  
գեբանի զգացողությամբ: Գրողն իր եղրակացությունները հանելիս այնքան զգույշ է ե-  
ղել, այնպիսի մեծ պատասխանատվություն է զգացել իր ամեն մի ասածի նկատմամբ,  
որ անհրաժեշտ փաստերի բացակայության դեպքում խուսափել է անգամ ենթադրություն  
անելուց: Օրինակ, նա գրում է. «Երբ մենք առայժմ չենք պնդում, թե նա հաշտություն  
անցել է սահմանը: Այդ մասին առայժմ չկան ստուգված փաստեր, որոնք հաստատեին  
նրա հաշտությունը սահմանն անցնելը: Հեռագա ուսումնասիրության խնդիրն է՝ եղած  
ազոտ հետքերով պարզել Արովյանի վախճանը սահմանից այն կողմը» (էջ 55):

Այսպիսով, Բակունցն առկա է թողնում Արովյանի հեռացումից հետո նրա ճա-  
կատագրի հարցը. գուցե ճանապարհին սպանել են կամ ինքն ինչ-որ տեղ որոշել է ինք-

նասպան լինել և կամ զուցե հասել է որևէ կրկիր և այլն,— սրանք այլ հարցեր են, որոնց լուծմանը Բաղուցը չի անդրադարձել: Ցավոք, նրա ընդդիմախոսները գրողի իրական տեսակետը մի կողմ են թողել, այլևայլ կարծիքներ նրան վերագրել ու քանավիճել: Յրինակ, վեճ են մղել (Ա. Հովհաննիսյան և ուրիշ.) այն կապակցությամբ, որ իբր Բաղուցը Աբովյանին առնչել է 1848-ի հեղափոխական շարժման ու համապատասխան աշխարհայացքի հետ. բայց տեսանք, որ գրողը Աբովյանին սահմանադատել է այդ շարժումից, իսկ ըստ աշխարհայացքի նրան համարել է սոսկ գյուղացիության ներկայացուցիչ (որ չի նշանակում անպայման հեղափոխական), տալով նաև այսպիսի սպառիչ բնութագրում. «Իր ճանապարհորդության գրքի առաջաբանում Վազները հեղափոխության պարտության պատճառներն է վերլուծում, մեղադրելով երկու «ծայրահեղ» կուսակցություններին: Աբովյանի ընդհանուր աշխարհայացքին շփազանց համապատասխան է այդ դեհաստականը: Տեղին է հիշատակել, որ Աբովյանին մեղանում «Նուրախյան մատերիալիստ» համարեցին: Այդ պարզ անտեղյակություն է, որ կարող է առաջանալ կամ Հուրախին և կամ Աբովյանին շճանաշելուց, ավելի շուտ՝ երկուսին միասին» (էջ 52):

Ինչպես տեսնում ենք «անհայտ բացակայման» բաղունցյան տեսակետի կովանները լուրջ են, միայն պետք է այն ճշգրիտ ներկայացնել:

### ՓԱՍՏԱԿԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Այժմ դժվար է որոշել, թե Բաղուցին երբ է սկսել հրապուրել Աբովյանը: Հաստատ գիտենք միայն, որ 1930-ական թվականների սկզբից նա արդեն ոգևորված է եղել Աբովյանով, եռանդազին հետաքրքրվել է նրա կյանքի ու գործի գրվազաներով, խանդավառ խոսել նրա մասին ընկերների շրջանում: Վ. Ալազանն այսպիսի նախադասություններ իր հուշերում. «Հմայիչ, կախարհիչ գրուցընկեր էր Բաղուցը: Նրա հետ կարելի էր ժամերով խոսել և երբեք չհոգնել... Այդպիսի գրուցների ընթացքում նրա ձայնը կարծես թե լսվում էր հաշատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» առաջաբանից» (Երգական թերթ, 1959, № 25):

Աբովյանի նկատմամբ Բաղուցի այդ հարազատության զգացումն է հավանաբար նկատել Ա. Խանջյանը գրողի մի ինչ-որ ոգևորված խոսակցության ժամանակ և նրան խորհուրդ տվել Աբովյանի կյանքը պատկերող վեպ գրել:

Ալազանն է վկայում (նույն տեղում), որ Խանջյանն է Բաղուցին այդ խորհուրդը տվել: Կարելի է վստահել այդ հուշին. դարձյալ դժվար է ասել: Բայց, անշուշտ, դա բնավ բացառված չէ, մանավանդ, եթե այդ հուշը պատկանում է այն օրերին Հայաստանի գրողների միութունը ղեկավարող մի անձնավորության: Բացառված չէ նաև, որ Աբովյանի մասին գիրք գրելու միտքը անկախ որևէ մեկի խորհրդից է ծագել Բաղուցի մեջ, որից հետո բարեկամները տեսնելով նրա խանդավառությունը Աբովյանով, նույնպես խորհուրդ են տվել, խրախուսել զբաղվելու Աբովյանի գեղարվեստական կերպարը կերտելու գործով:

Հիշենք, նաև, որ 1930-ական թվականների սկզբներին Աբովյանը պաշտոնապես այնքան էլ հարգված հեղինակ չէր, նրա գործունեությանը անբարենպաստ պիտակներ էին փակցնում. և ահա Բաղուցը փաստորեն այդ պաշտոնական տեսակետին էլ էր հա-

կազմում իր զրույցներում՝ Արովյանին որպես ընդգծված կերպով դրական գործիչ ա գրող ներկայացնելով և նրա մասին վեպ գրելուն ձեռնարկելով:

1934 թ. Խորհրդային գրողների համամիութենական առաջին համագումարում ար-  
տասանած իր ճառի մեջ Բակունցը դարձյալ հիշատակում է Արովյանի անունը: Նա նը-  
շում է, որ ժողովուրդների բանտում, ինչպիսին էր ցարական Ռուսաստանը, փոքր ժո-  
ղովուրդները գրական հսկաներ տալ չէին կարող. բերում է Արովյանի օրինակը՝ համա-  
ռոտակի ներկայացնելով նրա կյանքի ուղին. «Վերադարձավ Հայաստան Նիկոլայ I-ի  
գաղափարի ուժովի օրոք, նա անհայտացավ»,— նշում է Բակունցը և ավելացնում՝  
«Վարդայիվ նրա՝ մեր գրականության նշանավոր մարդու ժառանգությունը, հետևելով  
նրա աճին,— իսկ նա անհայտացավ բոլորովին երիտասարդ,— ես կարող եմ այստեղ  
ամբողջ ձայնով հայտարարել, որ հայ ժողովրդի զարգացման բնականոն պայմաննե-  
րում Արովյանը կդառնար շատ մեծ դեմք» («Правда», 1934, № 234):

Նույն ճառում Բակունցը ուշադրություն է հրավիրում փոքր ժողովուրդների, հատ-  
կապես հայության պատմական անցյալի վրա և ասում, որ այդ ամենը «գրողները լի-  
ովին պետք է օգտագործեն»: Ապա խոսքը մասնավորում է գեղարվեստական պատմական  
ժամանակագրության ժանրի վրա: «Մեր գրողների պարտականությունն է ընենլ գրանք  
(ժամանակագրությունները), ուսումնասիրել, վերցնել նրանց էպիկականությունը, խըս-  
տությունը, լեզվի գունեղությունը, արտահայտությունների հարստությունը և բառերի  
ուժեղ տնտեսումը, որ չափազանց բնորոշ է գեղարվեստական ժամանակագրությունների  
համար» (ն. տ.):

Համագումարը տեղի է ունեցել 1934-ի օգոստոսին. այդ թվականին Բակունցը աշ-  
խատում էր «Նաշատուր Արովյան» վեպի վրա, և համագումարի ամբիոնից այդ շրջա-  
նում իրեն զբաղեցնող երկու հարցերի մասին է նա խոսել՝ Արովյանի և պատմական եր-  
կի ժանրի:

100 տարվա վաղեմություն ունեցող դորպատյան նկարահանումներն իրենց տպա-  
վորիչ գույներով ոչնչով չեն գիշում Բակունցի գլուզական կտավներին: Գրողը ոչ  
միայն մեկ դար առաջ, այլ հենց վեպը գրելու տարիներին և առհասարակ երբևէ չի  
եղել Դորպատում, նրա մոտակայքում, մերձքաղաքային որևէ երկրում: Նա չի եղել նաև  
100 տարի առաջվա Երևանի թաղերում, Չարսու բազարում, որոնց պատկերումներն էլ  
այսօր դասական են ու անգերազանց հայ գրականության մեջ:

Ինչպես իր գրեթե բոլոր երկերում, «Նաշատուր Արովյանի» պահպանված հատված-  
ներում նույնպես Բակունցը բազմաթիվ պատկերումներ է կատարել իրականից: Միայն  
այն տարբերությամբ, որ եթե Բակունցյան պատմվածքների, մյուս երկերի մեջ գործող  
չառ հերոսների նախակերպարներին գրողը անձամբ ծանոթ է եղել կամ տեսել է, ապա  
«Նաշատուր Արովյան» պատմական վեպի շուրջ 100 տարի առաջ ապրած նախակեր-  
պարներին որևէ մեկին Բակունցը, բնականաբար, անձամբ ծանոթ չի եղել կամ տեսել  
չէր կարող: Գրողը նրանց ծանոթացել է պահպանված վավերագրերի, հուշերի, նամակ-  
ների շնորհիվ:

Ինչպես Բակունցի այլ երկերում, այստեղ ևս նախակերպարներ ունեցող հերոսների  
կողքին կան նաև այնպիսիք, որոնց նախակերպարները չեն հայտնաբերվել կամ որոնք  
գոյցն և չեն ունեցել նախակերպար, այլ գրողը նրանց մեջ կենտրոնացրել է տարբեր  
անձանց գծեր:

Վեպի մեջ եղած պատմաների, պատկերումների մեծ մասը նույնպես ունեցել է իր նախապատմությունները: Այլ խոսքով, Բակունցը իր գեղարվեստական երկի հենքը այս անգամ էլ շերտ առ շերտ կառուցել է իրական փաստերի աղյուսներից, իհարկե, այդ աղյուսները պատրաստելով անցյալից պահպանված «կավից», դրանք թրծել է իր ստեղծագործական վառարանում:

Վեպը և դրան նախորդող աշխատությունը գրելու համար Բակունցը 1930—32 թվականներին եռանդագին ուսումնասիրել է այն ժամանակ Արովյանից և Արովյանի մասին տպագրված բոլոր նյութերը, նաև ժամանակաշրջանին վերաբերող շատ գրքեր ու այլ նյութեր, ապա երկար ժամանակ քննության է առել բազում անտիպներ՝ Արովյանի ձեռագրերը, ձեռագիր նյութեր Արովյանի մասին, զննել է Հայաստանի պետական դիվանատան, Մատենադարանի (այն ժամանակ Վաղարշապատում էր) բազմաթիվ վավերագրեր:

Պահպանված է Հայաստանի պետական դիվանատան «Արխիվային նյութերի ուսումնասիրությանը զբաղվողների մասին» վերնագիրը կրող Բակունցի քարտը՝ գրված 1931 թ. սեպտեմբերի 6-ին գրողի ձեռքով: Այնտեղ ուշագրավ են հետևյալ երեք հարցերի պատասխանները. «Աշխատանքի թեման—Խաչ. Արովյանի կյանքը: Ի՞նչ նպատակով է կատարվում աշխատանքը—Պարզելու նրա կյանքը, գրական գործունեությունը: Ի՞նչ արխիվային նյութերի ուսումնասիրությանը է ծրագրում զբաղվել—1840—1848 թ. Երևանի ֆաղ. վարչյան, դպրոցների և այլն» («Գրական թերթ», 1979, № 24):

Բակունցն իր աշխատության և վեպի պահպանված մասերի համար օգտագործել է հավաքած նյութի մի մասը, բայց նույնիսկ դրա մեջ կան այնպիսի փաստաթղթեր, որոնք այսօր անհետացած են և առկա են միայն գրողի «եռաշատուր Արովյանի «անհայտ բացակայումը» աշխատության մեջ կամ օգտագործված են վեպի պահպանված հատվածներում:

Այդ հատվածներում եղած հերոսների ու դրվագների որոշ նախակերպարներ ու նախապատմություններ այժմ շատ դժվար է հայտնաբերել, հաճախ անհնար: Բայց ներքանց մի մասի վերականգնումը հնարավոր է, և այդ ուղղությամբ որոշ աշխատանք կատարվել է (տե՛ս էդ. Զրբաշյանի, Լ. Միրիջանյանի, Պ. Հակոբյանի մեկական հոդվածները՝ «Ականել Բակունցի ստեղծագործությունը» [Ժողովածու], 1959, էջ 119—171, «Գրական թերթ», 1959, № 42, «Բանբեր Երևանի համալսարանի», 1980, № 2), այժմ արվածի վրա ավելացնում ենք մեր ջանքերը:

«Էլբեր Արմենիեր» և «Ռեպի լյանո Մասիս» հատվածներում Բակունցը հաճախ է օգտագործել Խ. Արովյանի Դորպատյան օրագրերը, ինչպես և ուղեգրությունները Արարատ բարձրանալու վերաբերյալ: Նույն մասերում օգտագործված են նաև այլ նյութեր գերմանական միջավայրի, ուսանողական բարձրի, Դորպատի վերաբերյալ, որոնք առայժմ չեն հայտնաբերված:

Քանի որ Բակունցի վեպի գլխավոր հերոսը Արովյանն է, կնշանակի ամենից օժառջ պատմական այդ անձնավորության է գրողը գեղարվեստական կերպարի վերափոխել: Սաորև կնշենք Արովյանի կյանքից մի շարք իրական փաստեր, որոնք Բակունցի գրչի ուժով գեղարվեստական նկարագրության են փոխվել: Իսկ այժմ վեպում փաստականի գեղարվեստական մարմնավորումը ավելի դյուրընկալելի ներկայացնելու համար տալիս ենք Խ. Արովյանի կյանքի այն շրջանի համառոտ ժամանակագրությունը, որն առնչվում է Բակունցի «եռաշատուր Արովյան» վեպի հետ:

1819 թ. տարվել է էջմիածնի վանքը և սկսել սովորել տեղի հոգևոր դպրոցում մինչև 1822 թ.

1822 թ. տարվել է Հաղբատի վանքը և սովորել տեղի դպրոցում:

1822 (կամ 23) թվականից մինչև 1826-ը սովորել է Քիֆլիսի ներսիսյան դպրոցում և ավարտել այն:

1826—28 թթ. բնակվել է Հաղբատի և Սանահինի վանքերում, Օձունում, Թելավում:

1828-ին հաստատվել է էջմիածնում:

1829-ին եղել է էջմիածնի կաթողիկոսի և սինոդի թարգման ու քարտուղար:

1829 թ. սեպտեմբերի 27-ին Դորպատից եկած պրոֆ. Յ. Պարրոտի հետ, որպես նրա խմբի թարգման, բարձրացել է Արարատի գագաթը:

1830-ի ամռանը մեկնել է Քիֆլիս, ապա Նոր Նախիջևանով, Մոսկվայով և Պետերբուրգով ուղևորվել Դորպատ:

1830—35 թթ. պետական թոշակով սովորել է Դորպատում, տեղի համալսարանում և առանձին դասատուների մոտ՝ լեզուներ, գրականություն, փիլիսոփայություն, մաթեմատիկա, երաժշտություն, արհեստներ և այլն: Արովյանի ուսումնառության ծրագիրը կազմել է նրա հովանավոր Յ. Պարրոտը:

1836 թ. վերադարձել է Անդրկովկաս:

1837—43 թթ. եղել է Քիֆլիսի գավառական ուսումնարանի տեսուչ և ունեցել է մասնավոր դպրոց:

1837—40 թթ. գրել է «Նախաշափիղ կրթության» դասագիրքը:

1838—41 թթ. գրել է «Պարապ վախտի խաղալիքը»:

1841 թ. գրել է «Վերք Հայաստանին»:

1843-ից եղել է Երևանի գավառական ուսումնարանի տեսուչ:

1848 թ. ապրիլի 2-ին վաղ առավոտյան տնից դուրս է եկել և չի վերադարձել:

Թե՛ Արովյանի Դորպատյան օրագրերում, թե՛ նրա ուղեգրություններում ամենից ավելի հիշատակվող անձը Յ. Պարրոտն է (օրագրերում՝ ավելի շատ նա կոչվում է բարեբար իմ): Բակունցի վեպի «Կիրքեր Արմենիեր» գլխում և մանավանդ «Դեպի լյառն Մասիս» հատվածում Պարրոտը կենտրոնական դեմք է:

Մի բանի խոսք այդ հերոսի նախակերպարի մասին: Յրիգրիխ Պարրոտը պատմական նշանավոր անձ է: Նա Դորպատի համալսարանի հիմնադիրներից մեկի և համալսարանի առաջին ռեկտոր Գեորգ Պարրոտի որդին է: Պարրոտները Ֆրանսիական ծագում են ունեցել և մասամբ գերմանացած էին: Յրիգրիխ Պարրոտը (1791—1841) ավարտել է Դորպատի համալսարանի բժշկական բաժինը, ապա շրջել է Եվրոպայում, եղել է բժշկության դոկտոր, Դորպատի համալսարանի բնախոսության, ախտաբանության պրոֆեսոր, դասախոս է եղել նաև համալսարանի ֆիզիկայի ամբիոնում: 1831—1834 թթ. եղել է Դորպատի համալսարանի ռեկտոր: 1829 թ. դորպատյան հինգ ուրիշ համալսարանցիների հետ մեկնել է Հայաստան գիտական դործուղման: Սանթթացի է Խ. Արովյանի հետ և վերցրել նրան որպես իր խմբի թարգման: 1829 թ. սեպտեմբերի 27-ին մի քանի ուղեկիցների, այդ թվում Արովյանի հետ բարձրացել է Արարատի գագաթը: Այդ առթիվ գրել է «Ճանապարհորդություն դեպի Արարատ» գերմաներեն գիրքը (Քերտին, 1834): Պարրոտի հովանավորությամբ է Արովյանը տեղնել Դորպատ, այնտեղ ապրել ու սովորել: Պարրոտը Արովյանին պատրաստում էր ուսուցիչ-հանրագիտակ՝ հայրենիքում որպես դպրոցական դասատու աշխատելու համար:

Մի քանի օրինակով ցույց տանք, թե ինչպես է Բակունցը վավերական տեղեկությունները օգտագործել վեպում:

Ազանք «Ախրեր Արմենիեր» գլխից: Բնորոշ վերնագիրն արդեն իսկ առնված է Աբովյանի Դորպատյան օրագրերից, որոնցում հեղինակը մի քանի նշում ունի, որից իմանում ենք, որ Դորպատում նրան հաճախ են այդպես կոչել. ահա մի օրինակ 1831 թ. սեպտեմբերյան գրառումներից. «Առ բազում խնդութիւն սրտիս եկն այսօր ի քաղաքս բարեկամն իմ պարոն Հագենն: Ի 6-երորդում ժամու զնացի առ նա՛ր նա փարեալ զինե՛՛ն՝ էհարց զողջութենէ իմմէ: Նոյնպէս որդիք նորա մի առ մի փարեալ զինե՛՛ն՝ «արմէնիէր, լիբեր արմէնիէր» ելանէր ի բերանոյ ի բերան» (Ն. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, 1955, էջ 18): Կամ՝ «Միցա զանգատէ «արմէնիէր նէթղ միխ» (Ն. տ., էջ 66), ապա՝ «սիրելի երեսայք նորա խոռվին և քարշեն զհանդերձից իմոց. «Միրելի արմէնիէր, կաց առ մեզ, մի գնար քի բաց» (Ն. տ., էջ 110) և այլն:

Վեպում Աբովյանի համար Բակունցի կողմից գործածվող մյուս անվանումը՝ Դիակունտ-ը նույնպես քաղված է նույն օրագրերից: Օրինակ. «Բարերարն իմ կոչէ «Դիակունտ» (Ն. տ., էջ 65): Եվ սա նույնպես դորպատյան միջավայրի երանգավորմանն է նպաստում:

«Ախրեր Արմենիեր» գլխի առաջին հինգ մասերում և հետո էլ տեղ-տեղ ներկայացված են ուսանողական ազատամիտ կամ ընդդիմադիր խոսակցություններ, ցարիզմի նկատմամբ հակոտնյա տրամադրություններ: Դորպատում 1830-ական թվականների սկզբներին, երբ Աբովյանը այդ քաղաքում ուսանում էր, իրոք, եղել են նման իրադրություններ: Աբովյանի կենսագիր Ծ. Շահազիզը մի այսպիսի տեղեկություն է քաղել. «...1834 թվին «Բուրշենշաֆտ» կոչված հակապետական կազմակերպության հայտնաբերվելու հանգամանքը Դորպատի համալսարանի ուսանողների մեջ, որի հետևանքով ձեռնարկված է եղել զաղտնի խիստ քննություն, 18 ուսանող արտաքսված են եղել համալսարանից և ենթարկված խստագույն հսկողության» (Ծ. Շահազիզ, Խաշատուր Աբովյանի կենսագրությունը, Երևան, 1945, էջ 58): Այդ հայտնաբերումը տեղի է ունեցել 1834-ի փետրվարի 12-ին, կնշանակի այդ օրվանը նախորդող շրջանում է եղել ու գործել Բուրշենշաֆտը:

Այժմ դժվար է ասել այդ Բուրշենշաֆտը (Ուսանողական ընկերությունը) իրոք հակապետական է եղել, թե իշխանություններն են այդ պիտակը փակցրել: Ավելի հավանական է թվում, որ դա եղել է պարզապես ազատամիտ, ընդդիմադիր ընկերություն, որպիսիներից իշխանությունները միշտ վախեցել են:

Բակունցը հենց այդպիսին է ներկայացնում Դորպատի ուսանողական տրամադրությունները՝ ազատամիտ-հակացարական: Եվ, իհարկե, նա իրավացի է, որ իր գրված խավոր հերոսին մասնակիորեն է դնում այդ շրջապատի մեջ, և ավելի շատ այդ շրջապատը նկարագրում է իբրև այն օրերի Դորպատին, առհասարակ, բնորոշ ուսանողական շրջան:

Որն է փաստ չկա այն մասին, որ Աբովյանը թեկուզ ինչ-որ շահով մասնակցած լինի այդ շարժումներին, և Բակունցը դա լիովին հաշվի է առել, երբ «Ախրեր Արմենիերի» 7-րդ մասում իր գլխավոր հերոսի դիմանկարի առաջին բնորոշ գծերն է դրել կտավին՝ Պարրոտի և ոստիկանապետի խոսակցությամբ այսպես ներկայացնելով նրան.

«— Թույլ տվեք ներկայացնել Ձեզ իմ Lieblinig-ին... Հերր դիակունտ Աբովյան, որք մասին, անշուշտ, լսել եք:

— Յ՛, և այն էլ ինչպիսի պատմութիւններ... Ուրախ եմ սեղմելու Ձեր ձեռքը: Շատ ուրախ եմ,— Արքովյանը մի քանի քայլ արեց և թեթևակի խոնարհելով գլուխը, սեղմեց ծերունու ձեռքը:

— Կարծեմ, որ նա չի մասնակցել այսօրվա անկարգութիւններին...— Ծվ ծերունին դժմը կեղծ զայրութիւնով խստացրեց, ուռցրեց այտերը և բեղերը ցցվեցին՝ մեկը գեպի վեր, մյուսը՝ ներքև:

— Յ, ոչ, էվստարիս իվանիշ... Նա զբաղված է միայն իր գասերով...:

Միաժամանակ Բակունցը տարբեր առիթներով ցույց է տալիս, որ Արքովյանը թեև չի մասնակցում ուսանողական ընդդիմութիւններին, բայց ինչ-որ շահով համակրում է դրանց մասնակիցներին: Այդ էլ Բակունցին պետք էր իր գրական կերպարի աստիճանական զարգացումը՝ մինչև «բացակայում» ցույց տալու համար:

Դորպատի ուսանողութեան բարձրի մասին պատմող առայժմ չգանկած ինչ-որ աղբյուր էլ է ունեցել Բակունցը. Արքովյանի Դորպատյան օրագրերում այդ կարգի քիչ բան կա: Ահա մի նմուշ ուսանողական խրախճանքի նկարագրութեան, որից Բակունցը օգտվել է վեպում ուսանողական խնջույքային հավաքութիւնները, ուրախ գինարուքները նկարագրելիս. «այսպէս յետ քանի մի րոպէի շուին ի քաղաքամէջն՝ երգելով և ձեռնարնուկ արտաբոյ քան զքաղաքն. և տարեալ ընդ իւրեանց զգինի, զտաբաթ, կատարեն զուարճութիւնս. նոքա ի ձեռին ունէին զլիբուք իւրեանց և զվթղայս գինւոյ. ի Յ—հրորդում ժամու դառնան նոյնպէս երգելով և աստ և անդ ի փողոցս, մանաւանդ ի մեծ հրապարակի քաղաքին կանգնեալ երգեն և ըմպեն զգինի. մինչև ի 10-երորդում ժամն Գնչէր տակաւին ձայն երգոց նոցա աստ և անդ» (1832 թ. գրանցումներից, Խ. Արքովյան, Երկերի լիակատար ժողովածու, Կ. Յ, էջ 191—192): Կամ՝ «Շտուտենտք անուսանեն զմիմիանս դաւ ի սակա մէկ թաս գինւոյ (ն. տ., էջ 116):

«Իբեր Արմենիեր» գլխում կարևոր է շեքեզ գինվորի և Արքովյանի ծանոթութեան ու բարեկամանալու պատմութիւնը: Դա նույնպես իրական հիմք ունի. Արքովյանի Դորպատյան օրագրերում մի շարք անգամ խոսվում է մի շեքեզի մասին: Ըստ օրագրերի, շեքեզը հետ Արքովյանի ծանոթանալը բոլորովին այլ կերպ է տեղի ունեցել, քան վեպում: Օրագրի 1831 թ. դեկտեմբերյան մի գրանցման համաձայն Դորպատի հիվանդանոցի բժիշկը, պարոն Ֆոգելզանզը, Արքովյանին հրավիրում է հիվանդանոց այնտեղ պառկած մի շեքեզի և իր միջև թարգմանչի դեր կատարելու համար, քանի որ շեքեզը բացի իր մայրնիկից այլ լեզու չգիտեր: Արքովյանը գնում է, և պարզվում է, որ իբրև թարգման պիտանի չէ, քանի որ ինքն էլ չգիտեր շեքեզերեն: Ըստ վեպի Արքովյանը քաղաքում շրջելիս՝ հիվանդանոցի դարպասի մոտ հավաքված հիվանդ գինվորներին հարցնում է արդյոք հիվանդանոցում հայ կա՞, և հետո ծանոթանում է շեքեզի հետ, որը վեպում էլ բացի իր լեզվից ուրիշը չգիտի: Ահա մի հատված օրագրից. «այլ ո՛հ յանկողնի տեսի զաշխարհակիցն իմ, հանեալ զհանդերձս և քուրձս հիւանդաց. ես փորէի զեռովաւ, եթե ոչ լինէին անդ բազում հանդիսականք. ես սկսայ խօսիլ ընդ նմա տաճկերէն, վրացերէն, այլ նա ի վիշտ արտիս և ոչ զմի ի լեզուացս հասկացաւ, ես հարցրի ծննդատեղի նորա, զհիւանդութիւն նորա. պատասխանի և ոչ մի ինչ... Կացեալ մերձ անկողնի նորա, հայեցեալ ի դէմս նորա, միտք իմ սլացան ի քաղցր հայրենիս իմ, զամենայն ցաւս սրտիս միմիայն հոգոց հանութեամբ մեղմացուցանէի. և քաղցր դժբ նորա շերմացուցանէին զվաղուց պաղուցեալ սիրտ իմ... Հերք նորա էին սեաւ, փոքր

ժորուք, երկայն հասակ: Ի վախճանի թողի ցաւօք զհայրենակիցն իմ և գնացի ի տունս (ն. տ., էջ 66—67):

Դժվար չէ նկատել, որ շերքեզի հետ կապված պատմութիւնը Բակունցը հիմնական-նում օգտագործել է իր հերոսի մեջ եղած հայրենասիրական կրակը ցուցադրելու համար, և օրագրից վերը բերված քաղվածքում շատ բան կա, որ տեղ է գտել Բակունցի վեպում: Չերքեզի մասին առաջին անգամ լսելն իսկ Արովյանին խիստ հուզում է. «սիրտ իմ լցաւ խնդուքեամբ, ամենայն երակք իմ խաղալին չերմ արիւնք ի լսել իմ գնանուն աշխարհակցիս. ա՛խ, զիա՞րդ քաղցր է հայրենակիցն զիա՞րդ աշխարհակցին. յայսմ չգտանէ զանազանութիւն պանդուխտն ի հայրենեաց, եթէ մասնազական իցէ, եթէ քրիստոնեայ, միմիայն զի իցէ աշխարհակց» (ն. տ., էջ 68): Այստեղ ինքն Արովյանն է, և այս գրաւման էութիւնն է, որ Բակունցը հմտորեն օգտագործել է «Վերքեր Արմենիեր» գլխի 12-րդ մասում:

Ըստ օրագրերի՝ Արովյանը մի շարք անգամ այցելել է հիվանդ շերքեզին (անունը օրագրերում չկա, — Համգլայ-ը Բակունցի տված անունն է). «Մէջ ուրիշ դտեալ զհանգիստ, կամեցայ գոնէ առ ի սուղ ինչ հեշտացուցանել զիս, զնալ առ երկեան հիւանդ աշխարհակիցն, շերքեզ: Ես գնեցի 20 կոպեկի քաղցրաւենիս և զնացեալ առ նա յուրախութիւն ինձ գտի փոքր-ինչ առողջ... ես ետու նմա զնուէր իմ. «ա՛ո, եղբայր, քաղցր երկրակից իմ». և ի տեսանելն նորա զայս, ուրախութեամբ էառ ի ձեռանէ իմմէ և զուխ առեալ ինձ շնորհակալիլ, սկսաւ յիւր բարբառ, այլ աւաղ, զի ես ոչ հասկացայ: Սիրտ իմ փլաւ ի դառնութենէ. օտարութիւնս և ի հայեցմանէ յաշխարհակիցն, աչք իմ լցան արտասուօք. ես համբուրեալ զսիրելի երկրակիցն իմ, դարձայ լալազիկ ի տունս» (ն. տ., էջ 69):

Նման նկարագրութիւններ կան նաև օրագրերի այլ էջերում (88, 92, 145, 148): Վեպի միևնույն մասում Բակունցը այլ հերոս էլ է պատկերել՝ մայր Տերօխիներն: Սա ևս Դորպատյան օրագրերից է անուված: Նրանցում հիշվում է Դորպատի կայազորի պետ մայր Տրօխիւր, որին Արովյանը այցելում է՝ խնդրելով բարեխաղել շերքեզի վիճակը. «ՅԼԼանելն իմ անդի, գնացի առ գրեկիներոյ մայիօր Տրօխին» (ն. տ., էջ 95), «այլ տեղում՝ «Լևոսի գնացի նոյեպէս ի ցուրտ եղանակի առ մայիօր Տրօխին. նա ընկալավ զիս սիրով և խոստանայ ի վաղիւն պատասխանել խնդրանաց իմոց» (էջ 96): Սակայն Արովյանը դրական արդյունքի չի հասնում: Ավելին. վերջին այցելութիւնը մայրը նրան անանդի սպասեցնում է, և դուրս գալով ներքին սենյակից շոք պատասխան տալիս. «շերքեզն ձեր է խոովարար ոք՝ յորոց երկու հարիւր ընկերք են, և առաքին ի քաղաք ին: վտան լինելոյ սուղատ, այլ նա յաղագս հիւանդութեանն մնացեալ է առա» (էջ 99):

Պարբառը և նրա կիներ արտացավ վերաբերմունք են ցույց տվել շերքեզի նկատմամբ և խորախուսել են Արովյանին օգնել նրան: Ի վերջոյ շերքեզին առաւում են. «Այլ թէ զի՛ն: Լին յանցանք այր օղորմելոյն, ո՛չ որ կարաց իմանալ. և նա առաջեցաւ թրեհարուրդ, ուր առէին, թն գոն և այլ 200 ընկերք նորա» (էջ 149):

Բակունցը օրագրերում սպրդած Տրօխիների ոչ բարյացակամ գծերը վեպում խոսքերն է մայր Տերօխիների դատան կերպարում, իսկ Պարբատի և նրա կնոջ վերահիշյալ բարեհազի վերաբերմունքն էլ շերքեզի նկատմամբ, արտասուլան է նրանով, որ վեպում Արովյանի միջնորդութեան կապակցութեամբ մայրի մասին Պարբատն ասում է.

«Ավելորդ էր դիմել մայրը Տերյոխինին: Նա զազան է, և հետեանքը կարող է լինել այն, որ ձեր երկրացու վիճակն աճելի կօանրանա...»:

«Լիբեր Արմենիեր» գլխի 6-րդ մասի վերջում խոսք կա ուս սարկավազի կին Մարյա (ըստ Բակունցի գրութան) Աֆանասևնայի մասին, «որի տանը մի քանի ժամանակ Արմենիերն ապրել էր»: Վեպում այդ կինը բակից բակ գնալով պատմում է Արմենիերի սովորութունների մասին: Դորպատյան օրագրերի 1830 թ. սեպտեմբերի 5-ի գրառման մեջ կարդում ենք. «յատուր միում անկեալ գոլով իմ տրամալից յանկողնի, դալն առ իս առա սարկավազին և տանիլն առ իւր: Կին նորա Մարիայ Աֆանասովնայ, խոսիլն նոցա զի առից ի կնութիւն զփօքր օրիորդ Օլգայ, 10 ամաց» (ն. տ., էջ 12): Վեպում այդ Օլգան էլ չի անտեսված: Աֆանասևնան նույն 6-րդ մասի վերջում ասում է, որ ինքը սիրով իր աղջկան կնության կտար Արմենիերին («թեև փոքր է, բայց ես իմ աղջիկը նրան կին կտայի... Նրանց մոտ սովորութիւն է փոքր աղջիկ առնել... Բայց իմ Օլգան շատ փոքր է...» և այլն):

«Լիբեր Արմենիեր» գլխում կարևոր հերոս է էլլիզ Առաւելնդերը. նրա և Արմենիերի միջև փոխադարձ զգացմունքներ են ակնարկված, միաժամանակ էլլիզի ամուսինը՝ Գերման Առաւելնդերը, Արմենիերի դասատուներից է: Այդ ամուսինները Դորպատյան օրագրերում շատ հաճախ հանդիպող անձերից են, միայն նրանց իսկական ազգանունը ոչ թե Առաւելնդեր է, այլ Յրիդլենդեր, անունները՝ էբերհարդ և Աննա: Բակունցը փոխել է և՛ անունները, և՛ ազգանունը: Պրոֆեսոր Յրիդլենդեր-Առաւելնդերի տուն գնալու, դասեր առնելու, նրա տանը թիչելու տեսարանները, որոնք վեպի գեղեցիկ մասերից են, առնված են օրագրերից: Օրագրերում կան նաև այսպիսի զրվագներ. Արովյանը գնում է Յրիդլենդերի տուն դասի, պրոֆեսորը տանը չի լինում, և ուսուցչին սպասելով նա զրուցում է տիկնոջ հետ: Ահա մի երկու օրինակ Յրիդլենդերների բազմաթիվ հիշատակութուններից. 1830 թ. ա՛ 1 հոկտեմբերի: Յերեկոյին գնացի առ պարոն պրոֆեսոր Յրիդլենդեր առնուլ զդաս իմ. նա չէր ի տան. ամուսին նորա միայն պարապիր ի տան. նա ընկալաւ զիս սիրով» (էջ 26), այլ տեղում՝ «աստի գնացի առ պրոֆեսոր Յրիդլենդեր յետ դասառութեան իմոյ, գնացար ի տուն յրմպել զթէյ» (էջ 67), մի այլ գրանցում՝ «Ըս ո՛չ գտի զնա ի 5-րորդում ժամու, այն ինչ գնացի անդ առնուլ զդասս իմ: Ամուսին նորա, որ նստեալ առ սեղանովն ընթեռնոյր, ընկալնու զիս քաղցրութեամբ, հարցանէ վասն բարերարութեան իմոյ, զառողջութենէ իմմէ: Ըվ օրիորդ մի նստեալ առ նա կարէ վասն նորա... Աստ զայ և թէյն. պրոֆեսորութեան տունաւ մեզ զթէյ» (էջ 120—121), «Առ պարոն պրոֆեսոր Յրիդլենդեր: Պատմէ կին Նորա վասն գոգնոցին իւրոյ» (էջ 127) և այլն:

Կարգալով օրագրերի այս և Յրիդլենդերների ներկայացնող մյուս հատվածները, չի կարելի պարզորոշ չնկատել, որ դրանք որոշ փոփոխություններով, երբեմն էլ անփոփոխ օգտագործված են «Լիբեր Արմենիեր» գլխի 8-րդ և մասնավառ 13-րդ մասի նրբազույն բանաստեղծական նկարագրությունների համար:

Օրագրերում շատ զրվագներ կան, երբ կանայք դաշնոն (կլավիր, կլավետին) են նվագում (ն. տ., էջ 68, 101, 129): Դա ևս հմտորեն օգտագործված է «Լիբեր Արմենիերի» 13-րդ մասում:

Օրագրերում կա նաև տիկին Տոգելվանգ, որը Դորպատում եղել է Արովյանի տանտիրուհին (վարձով սենյակ է տվել). այս դեպքում էլ վեպի մեջ Բակունցը նրան դարձ-

րել է պանդոկապանուհի Ֆրաու Ֆոգելզանգ, նոր հատկանիշներ դնելով նրա մեջ և այդպես ստեղծելով վեպի ամենից ավելի հիշվող կերպարներից մեկը:

Յ. Պարրոտը և նրա կինը, ինչպես վերև ասվեց, բազմիցս հիշատակված են Արովյանի Դորպատյան օրագրերում ու այլ գրություններում: Բակունցը հմտորեն օգտվելով այդ ամենից, իր վեպում հատկապես Պարրոտի կերպարի մեջ կենտրոնացրել է գերմանական գործնականությունը՝ մի փոքր սառնությամբ, գերմանացի ուսուցչապետին իր կարծիքով բնորոշ կիրթ ու բարենոգի էութուն:

Օրագրերի 1831 թ. դեկտեմբերի 15-ի գրանցման մեջ կարդում ենք. «Յերազմ տեսանէի: Բարոզել ինձ յեկեղեցուց միտմի շայաստան, և յանկարծ երևի ինձ բարերարն իմ, ես պատկանում ի տեսանելն զնա և լոճմ, այլ նա իսկոյն խրախուսէ զիս, «ուսուցէ՛ք զմանկունս շայոց, ուսուցէ՛ք, ընդէ՛ր լուէք». քաղցր դէմք նորա բաշայերէ զիս առ այն» (էջ 65): Այս երազը գտնում ենք նաև վեպում նույն «Լիրեր Արմենիեր» գլխում, 15-րդ մասի վերջում, միայն գեղարվեստական վառ պատկերի ձևով: Հեղինակը պատմում է իր հերոսի երազը. «Կանգնել է ոչ թե քարի վրա, այլ մի ավերակ եկեղեցու բեմի վրա» բառերով սկսվող հատվածում:

Առհասարակ, «Լիրեր Արմենիերը» և Դորպատյան օրագրերը հաջորդաբար կարգացող ամեն մի ընթերցող դյուրությամբ կնկատի թե՛ փաստերի ու նկարագրությունների և թե տրամադրությունների, հասարակական հակումների բազմաթիվ ընդհանրություններ՝ վեպի այդ գլխի զրվագներում և օրագրերի միջև:

«Ինչպիսի լյառն Մասիս» հատվածն սկսվում է այսպես. «Ընթերթից հետո պրոֆեսորը երիտասարդին դիմելով, ասաց.

— Այժմ անցնենք մեք գործին, սիրելի դիակոնուս...»:

Անցնում են առանձնասենյակ, և Պարրոտը Արովյանին հայտնում է, որ նրա հայրենակից գյուղացիները ետ են վերցրել իրենց երդումն այն մասին, որ ինքը Պարրոտը՝ Արովյանի և մյուս ուղեկիցների հետ բարձրացել է Արարատի գագաթը: Արովյանը ցնցվում է, ամաշում հայրենակիցների արածի համար, ապա քիչ անց սկսում է վերհիշել վերելքը:

Այդ սկիզբը Բակունցը վերցրել է օրագրերից, շարունակությունը՝ ուղեգրություններից:

Օրագրերում 1832 թ. հունվարի 5-ի գրանցման մեջ կարդում ենք. «Ի մտաննն իմ ի ներքս բարերարուհին իմ և մայր նորա նստին առ սեղանով պատրաստել զկայֆայ. Բուդոլֆ նկարէ զկարոս բյուրապատիկ լավ քան զիս: Բարերարն իմ կողէ զիս ի ներքս առ իւր: «Ահա սիրելի իմ, ես ստացեալ եմ, ասէ, զերզմագրութիւն վասն ճանապարհորդութեան մերոյ ի Պետերբուրգոյ, յորում երկու սալգաւթն հաստատեալ են երդամբ զյիննն մեր ի գլուխ լերին և երկու հայթն ստեալ»: Իրեւ ձայն որոտոյ անկաւ ի լսելիս, լսել զայպիսի անհաւատարմութիւն ազգայնոց իմոց: Նամանաւանդ, այն ինչ եկն և բարերարուհին իմ, Յիւլիէ և Բուդոլֆ, որք կամէին լսել զվկայութիւն նոցա: Յամոթոյ ո՛չ կարէի բարձրացուցանել զաչաւ: Ա՛խ, հայրենակիցք իմ, մինչև ե՛րբ այպիսի անարգութիւն: Որպիսի խռովութիւն եմուտ ի սիրտ իմ այն ինչ նորա հարցանէին զբարերարն իմ. «Շայթն ստեալ են, հակառակ երդմանս: Բուդոլֆ. «այսպէս վատթա՛ր են հայթ»: Սւ զի՛նչ, եթէ այլ ազգ իցեր ի տեղի բարերարին իմոյ, զի՛նչ ա՛ռէր նա ինձ յայտ բան, ո՞չ ի դէմս հարկանէր ինձ զայս տմարդութիւն: Այլ ո՛չ նա, ե՛մ՜ բարերարուհին իմ խօսեցան ինչ վատ, այլ մանաւանդ յուսադրին զիս մի՛ ցաւել»:

վասն այսպիսի անգիտութեան նոցա: Եւ յայն հարցումն Բուզուճի տե՛ս զի՛նչ պատասխանէ բարերարն իմ: «Սիրելի իմ Բուզուճ, շնն նոքա արք վատթարք, այլ ընդհակառակն բարի, ողորմելի, անմեղութիւն նոցա և անգիտութիւն տայ նոցա առնել զայս նոքա շնն կրթեալ ի մանկութենէ որպէս մեք, ո՛չ ուսեալ զերօսս, վասն որոյ և ներելի է նոցա: Ես ոչ տամ նոցա այս ի մեղս, այլ շար անձանց ոմանց՝ որք այսպէս խտեգարեն զողորմելի ազգս այս: Եւ յիս դարձեալ՝ «մի՛ վշտանայք, սիրելի իմ, յայտ Աստուած հոգասցէ և վասն ազգի ձերոյ և տացէ նոցա երբեմն ուղղիլ և կարգաւորիլ: Յանկիրթ անձանց չէ պարտ վշտանալ, այլ մանաւանդ ներել նոցա», և այլն: Յիւլիէ տա ինձ կայֆայ, այլ ինձ լաւ էր յայսմ պահու մահադեղ ընդունիլ ի տեղի կայֆայի» (Ն. տ., էջ 118—119):

«Ինչպի լյառն Մասիս» հատվածի առաջին մասի և այս դրանցման համեմատությունից տեսնում ենք, որ Արքովյանը Բակունցին գրեթէ պատրաստի նյութ է մատուցել իր վիպական կերպարի ամբողջացման և վեպի այդ տպավորիչ հատվածը սահղծելու համար:

Ասեմք նաև, որ երկու հայ գյուղացիների (Ակոռի գյուղից)՝ Պարրոտի խմբի ուղեկիցների, երգմնազանցությունը նույնպես իրողություն է: Թուսական պետական պաշտոնյա Ի. Շոպենը (ծագումով ֆրանսիացի), որը 1829 թվականից ուսումնասիրում էր Հայկական մարզը նրա տնտեսաաշխարհագրական նկարագրությունը հրատարակելու նպատակով, ջանքեր է թափել կառավարությանը և հասարակայնությանը համոզելու, որ Ֆ. Պարրոտը Արարատի գագաթ չի հասել: Այդ ջանքերից էին գյուղացիներին երգումնազանցության մղելը:

Վեպի նույն հատվածի վերհուշային այն մասը, որտեղ նկարագրված է վերելքը դեպի Արարատի գագաթը և Արքովյանի ապրումները, Բակունցը գրել է աչքի առաջ ունենալով Արքովյանի երեք ուղեգրությունները: Նրանցից երկուսից ստորև փոքրիկ քաղվածքներ կրեք ենք համեմատության համար, բայց նախքան այդ ասեմք, որ «Ինչպի լյառն Մասիս» ամբողջ հատվածն է իրականից, այսինքն՝ Արքովյանի տարրեր երկերի հիման վրա սյուտկերված: Օրինակ, այդպիսին է Ս. Հակոբի վանքի պատկերումը: Արքովյանի ուղեգրություններից է առնված նաև այն, որ երրորդ վերելքի ժամանակ է Պարրոտի խումբը հասնում գագաթին («Երրորդ վերջին էր») և այլն: Վեպի այդ հատվածում կարդում ենք (էջ 374). «Սեպտ. 27— Հայելի լիռան շողա ի թևս մարմանդաբեր Զեփյուռոսի...»: 1829 թ. Արքովյանի գրած «Ճանապարհորդութիւն սլարօն պրօֆեսսօր Պարրօտի և Խաչատուր դպրի Ապովհան» ուղեգրության մեջ կա այսպիսի տեղահամարձակել ի թևս մարմանդաբեր Զեփյուռօսի...» (Խ. Արքովյան, Երկերի լիակատար ժող., հ. 7, 1956, էջ 17), որ և օգտագործել է Բակունցը:

«Ինչպի լյառն Մասիս» հատվածում որոշ արտահայտություններ էլ Բակունցն առնել է Արքովյանի շփածոյից: Օրինակ, Արքովյանն ունի «Երեւակայութիւն ի վերա ճահապարհորդութեան ի լեռն Արարատ» բանաստեղծությունը 1829, սեպտեմբերի 28 թվականը կրող: Նրա առաջին տողերն են.

Ի հանդարտասիւզ մարմանդս՝ հողմաբեր մեղմիկ զեփյուռի  
Դիմեցի երբեմն զքօսնու ի ծոց Մասսեաց սուրբ լեռին:

(Խ. Արքովյան, Երկերի լիակատար ժող., հ. 1, 1948, էջ 47):

Իսկ յոթերորդ քառասունդի առաջին առդն է.

Ո՛ւր ես՝ առաւօտ, ո՛ւր քաղցր արշալոյս՝ արե՛ վերարգիին:

Այս երեք տողերը միացնելով՝ Բակունցը կազմել է եռատող և զարծյալ նոր ուղ-  
գագրութեամբ գրել «Բիւպի լյառն Մասիս» հասմածում (էջ 376). միայն վերջին տողից  
հաննել է երկրորդ ու՛՛ր:

Հաճախ էլ հարմայնական վավերագրի ոգու հիման վրա Բակունցը վերականգնում  
է այն, ինչ ուղեգրութիւններում բառացի գրված չէ, բայց պետք է որ եղած լինի այդ-  
պես: Օրինակ, Աբովյանի նույն «Ճանապարհորդութիւն» հոդվածում Արարատի գագա-  
թին գտնվելու առաջին պահերի վերաբերյալ կա այսպիսի նկարագրութիւն. «Անդա-  
նօր զուարճանայր սիրտ իմ յերկիրդալից ցնծութիւն, և ամենայն ոսկերք իմ ի խնդու-  
թիւն պարարէին, համբուրեալ զտեղի Հայրենի գաւառին: Անդ սաստկանայր ի միտս  
իմ խորին մտահոգութիւն և աչք իմ ի ներքին յուզմանց խորհրդոց յարտասուտ համա-  
կեալ զբարձրնալն Աստուած օրհնէի... Մինչ ձեռն էարկ պարօս պրօֆեսսօրն ի ձեռն  
օղաշափական գործեաց իւրոց շափեր ի բարձրութիւն լերին, ես ամենայն ջանադրու-  
թեամբ այսր անդր յածէի ի ձեռս բերել գիր ինչ ի նշան ապահանաց, բաց յահողին  
կուտակութենէ ձինաշեղջ սառուցոց» ոչինչ կարացի գտանել: Հուսկ ուրեմն ի վերա-  
դառնալն՝ առեալ զգործիկ խաշն՝ զոր բերեալ էաք ընդ մեզ ի վանացն սրբոյն Յակոբայ,  
կառուցի ձեռամբ իմով ի գագաթան լերին ի հիւսիսային կողմանէ: Առի ընդ իս և  
զկտոր մի ձեան, որ թէ և հալեցաւ, բայց զչուրն յետ քանի մի աւուրց հասուցի ի  
սուրբ Աթոռն մեր» (տ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածում, 5. 7, 1956, էջ 18):

Աբովյանի գրածը գագաթին ոտք դնելու կապակցութեամբ իր ապրած զգացմունք-  
ների մասին Բակունցին հիմք է տվել գրելու այն կտորը, որն սկսվում է այսպես. «Նա  
փակել է աչքերը և դեռ չի նայում, չի ուզում նայել. դեռ դողում է սիրտը հուզմուն-  
քից...» և այլն: Իսկ ուղեգրութեան մեջ Պարրոտի ծանրաշափի հիշատակութիւնը ա-  
ռիթ է տվել, որ Բակունցը գրի. «Վերհիշեց այն վայրկյանը, երբ ինքնամտոտցութեան  
մեջ գրկեց ակուռեցուն, ապա փաթաթվեց Պարրոտի վզով:

Գերմանացին ասաց.

— Ջգուշ, ծանրաշափը կչարդեք:

Աբովյանի «Նոր վկայութիւն Դորպատի պրոֆեսոր պարոն Ֆոն Պարրոտի՝ Արա-  
րատի գագաթը իսկապես բարձրանալու մասին» գերմաներեն գրած հոդվածում  
(1835 թ.) կա այսպիսի հատված. «Նմանապես դրանից հետո, երբ լեռան գագաթից  
մի սառուցի կտոր վերցրի, որովհետև այնտեղ ուրիշ ոչինչ չգտա, և հալած վիճակում  
շշով էշմիսանի վանքը տաշա, հասկացող և բարեպաշտ եպիսկոպոսներից ու վարդա-  
պետներից ոմանք վերցրին այն և ցողեցին իրենց դեմքերը, ոմանք էլ պահեցին այն  
որպէս սրբութիւն» (ն. տ., էջ 33):

«Բիւպի լյառն Մասիս» հասմածում Բակունցն այս կտորը օգտագործել է խոտցնե-  
լու համար վանականների հատկապես բացասական գծերը. «Ո՛վ կազմակերպէ: Հով-  
հանես վառգապե՛տք, լուսարար Սիմեո՛նք, թե այն կիտախելագար եպիսկոպոսը, որ  
կատաղի հայտնանքով արձակվեց նրա վրա, երբ ներս մտան վանքի բակը: Հայհոյեց,  
բայց երբ վանքի դպիրը ծոցից հանեց այն սրվակը, որի մեջ արդեն հալվել էր Արա-  
րատի գագաթից վերցրած սառույցը, այդ կիտախելագար վանականն առաջինը հար-

Ճակվեց նրա վրա և սրվակը խլխլով, սկսեց ճակատին ու ձեռքերին քսել այն շուրք, որ քերել էին Նոյյան տապանի սառցադաշտից» (էջ 370):

Վեպի այս հատվածի վերջում Բակունցի գլխավոր հերոսը վրդովված հայրենակիցներին սուտ վկայությունից նամակ է գրում իր ինչ-որ բարեկամի: Այդ նամակի մեջ եղած արտահայտությունները, բառերը հաճախ առնված են Արովյանի օրագրություններից, բանաստեղծություններից, ինչպես նաև Գաբրիել ու Պետրոս Պատկանյանների և կաթողիկոս Հովհաննես Կարբեցուն Արովյանի գրած նամակներից: Օրինակ, Արովյանի անունից Բակունցի հյուսած նամակում այդպիսի արտահայտություն կա՝ «Անհաց, անշոր և անպաշար տարագրեցին ինձ...»: Արովյանի «Սէր առ Հայրենիս» բանաստեղծության մեջ կարդում ենք.

Հայաստան իմ, քաղցրիկ Հայաստան,  
Ճամբեցիր զիս անհաց, անպաշար, անդարման,  
Աներկեր, աննպաստ... (ն. տ., հ. 1, 1948, էջ 120):

Պատկանյաններին Արովյանի 1831 թ. գրած նամակում կա. «Հայրենին իմ, որ անհաց և անշոր և անպաշար տարագրեց զիս» (ն. տ., հ. 10, 1961, էջ 134): Հովհաննես Կարբեցուն գրած 1832 թ. նամակում. «Եթէ ես, որ այսպես սիրէի զՀայրենին, արտասուե՞ք, անհաց, անպաշար ելի ի նմանէ» (ն. տ., հ. 10, էջ 141): Ինչպես տեսնում ենք, բերվածք դորպատյան շրջանի Արովյանի համար շատ բնորոշ արտահայտություն է, և այն օգտագործել է Բակունցը (Արովյանի այդ խոսքերը վերաբերում են 1829 թ. դեկտեմբերի 5-ին էջմիածնից մեկնելու նախօրեին Հովսեփ վարդապետ Տեր-Մարտիրոսյանի (Վեհապետյանի) արարքին, երբ էջմիածնի այդ փաստական տնօրենը Արովյանից խլում է նրա իրերը):

«Դեպի լյառն Մասիս» հատվածում գրված հիշյալ նամակի մեջ բնորոշ արովյանական բառեր ու արտահայտություններ են նաև խստապարանոց, օհ, մեղանշիմ, մեղանշիմ շաբաշաբ. եռալիկ անհայտեանցյալ և այլն: Օրինակ, վերջինը առկա է Պատկանյաններին Արովյանի գրած վերոհիշյալ նամակում. «Ա՛խ, անոյշ բարեկամք իմ, մի՛, մի՛ այսպիսի շամանդաղ ամպոտեսցէ զմաքուր միտս ձեր, ուր յաւիտեան կա և մնայ եռալիկ անհայրենացեալ» (ն. տ., հ. 10, էջ 133):

«Էրբեր Արմենիերի» և «Դեպի լյառն Մասիս» հատվածի դորպատյան պատկերումներում շատ բան էլ պարզելու ենթակա է. օրինակ, հայտնի չէ, թե առաջնակարգ արվեստագետի վարպետությանը պատկերված ոստիկանապետ Կրուչինսկին, այրի Աշինգերը կամ Մատիլդան, ուս ձկնորս Վասիլին, ուսանողներ Օտտոկար Գրիշը, Քոմաս Բյուլը, Տիգելներ և մյուսները արդյո՞ք ինչ-որ աղբյուրներում հիշված անձնավորություններ են, թե՞ Բակունցի երևակայության պտուղները: Նույնը և՛ Կրուչինսկու զեկուցադիրը, մանավանդ գերմանական ու էստոնական ժամանակի բարձրի, կենցաղի՝ իրենց մանրուքներով, տպավորչական բազմազունությամբ ու իրապատում ընկալումով՝ այսօր զարմացնող բազմոցյան պատկերումները արդյոք որևէ աղբյուր ունեցե՞լ են, թե ոչ: Կարծում ենք ինչ-որ շահով պետք է ունեցած լինեն:

Շատ բան էլ, անկասկած, Բակունցի գեղարվեստական երևակայությամբ ստեղծված նմանապատումներ են: Բակունցը մեծապես օժտված էր գրական նմանեցման

շնորհքով. օրինակ, պատմում են, որ նա ընկերների մոտ կարգացել է իր միջնագար-  
յան ձեռագրերից բաղված մանրապատումներ, և ունկնդիրները հավատացել են, որ  
դրանք իրօք միջնագարյան են, հետո պարզվել է, որ դրել է Բակունցը:

Իհարկե, մանրամասն հետախուզման դեպքում Բակունցի դորպատյան պատկեր-  
ներում կարելի է գտնել անճշտություններ: Մեկ օրինակ: «Լիբեր Արմենիերի» 14-րդ  
մասում կա այսպիսի հատված. «Մատիլդան նայում էր այնպիսի սնահավատ երկյու-  
ղով, կարծես այդ նկարն էլ սուր էր, և նա տատանվում էր՝ խաշակներ»<sup>1</sup> թե համբու-  
րել» (էջ 346): Հատուկապես գրեթե բոլոր գերմանացիներն ու էստոնացիները Արովյա-  
նի ժամանակ բողոքականներ էին, և Արովյանի Դորպատյան օրագրերից էլ իմանում  
ենք, որ նրա շրշապատի գերմանացի ու գերմանուհի ծանոթները հիմնականում բո-  
ղոքական էին: Ուստի վեպում Մատիլդան էլ գերմանացի մյուս հերոսուհիների պե-  
պետք է բողոքական լինի, իսկ բողոքականները, ինչպես հայտնի է, շուենն պատկերա-  
պաշտություն, նրանք չեն խաշակներում, պատկեր չեն համբուրում: Բակունցը՝ վերը  
բերված հատվածում երևի նկատի չի առել այս հանգամանքը, և Մատիլդան նկարա-  
գրված պահին, թերևս, ավելի հայ գեղղկուհու հոգեբանությամբ է ներկայացված, քան  
բաղաքարենակ լուսերական գերմանուհու:

«Գործ Մայրանա դստեր Մկրտումի» գլուխը նույնպես փաստական նյութերի վրա  
բազմաթիվ հենակետեր ունի: Նախ իրական անձնավորություն է Մայրանը կամ Մա-  
րիամ Մկրտումյանը, որ Արովյանի թեռու ղուստրն է, իրողություն է նրա ողբերգական  
պատմությունը: Մայրանի պաշտոնական ամուսինը իրօք եղել է Նիկողայոս Սուքիաս-  
յանց անուն-ազգանունով մեկը, հանձին մի այլ կարևոր հերոսի՝ Հարությունի կամ  
Միրզամի Բակունցը նկատի է ունեցել Արովյանի իրական հորեղբայր Հարությունին,  
իրականից են առնված նաև վեպի այնպիսի հերոսներ, ինչպես՝ Արովյանի մայրը՝ Քա-  
նաքեռում, կիրք, Չանիրեկովը, Բարսեղ Եպիսկոպոսը (Կեսարացի) և այլն: Այս գըլ-  
խում շատ դրվագներ կան, որոնք նույնպես առնված են այս կամ այն կարգի փառ-  
տական նյութի, վավերագրի հետ: Օրինակ, Հին Երևանի, նրա Չարսու Բազարի, շըր-  
շակաթի նկարագրությունները, որոնք իրենց իրապատում, վառ գույներով բացառիկ  
են այս գրականության մեջ, դրողի կողմից նաև ինչ-որ աղբյուրներ թերթիում հետ են  
կապված, թեև, հավանաբար, գլխավորը գրողի տաղանդի շողարձակման արդյունքն է  
եղել: Այդ առթիվ բերում ենք Վ. Ալազանի մի հիշողությունը. «Գրական թերթում»  
տպագրելու համար Բակունցն ինձ ներկայացրեց Արովյանի կյանքից գրած իր վեպի  
մի հատվածը՝ «Երավան Չարսու Բազար» վերնագրով:

Երբ ես զարմացած հարցնում էի, թե նա ինչպե՞ս այդքան հմտորեն նկարագրել է  
Արովյանի ժամանակակից շուկան, Բակունցը ժպտալով պատասխանեց, որ այդ առ-  
թիվ նա քրքրել է 19-րդ դարի առաջին կեսի բազմաթիվ վաճառականների և առևտրա-  
կանների «ղավթարները» («Գրական թերթ», 1959, № 25):

Սա հասկանալի է, գրողը շատ բան պետք է թերթած լինի: Բայց և Բակունցի պա-  
տասխանը նրա վեպի այդ հատվածում եղած գունեղ պատկերների ստեղծման ամ-  
բողջական բացատրությունը չէ, այլ փաստորեն հեղինակի մասնակի խուսանավումն  
այլ բացատրությունից: Տարբեր ընույթի «ղավթարներում», գրքերում շուկաների և այլ  
վայրերի նկարագրությունները շատ կան, բայց ոչ մեկը բակունցյան Չարսուի գույներն  
ու գրավորությունը չունի: Ստորև բերում ենք այդպիսի մի նկարագրություն, որ բավա-  
կան վստահելի է՝ ճշգրտությամբ. «Եր արտաքին տեսքով Երևանի շուկան նման է բնգ-

հանրապետ ասիական շուկաներին: Քառանկյունի քարվանստներ, որոնց շուրջը դաստ-վորված են դեպի վեր ու վար շարժական դռներ ունեցող փոքրիկ սենյակներ, շարժի կողմող ծածկված ու մուժ սրահներ՝ ոչ մեծ խանութներով կամ արհեստավորների արհեստանոցներով, շարժական կրպակներ կամ, ափելի ճիշտ, արկղներ, որոնցում մրգավաճառները ցեբրկով նստում են հրապարակում, իսկ երեկոյան փակում են իրենց ապրանքը, ախոռներ, իջևաններ. ահա և Երևանի ամբողջ շուկան: Առևտրականները շուկան ոչ ելից ու մտից մատչաններ, ոչ կարգ ու կանոն. դեղապրանքներ վաճառողի մոտ կարելի է գտնել ճննապակի ամաններ, և նույնիսկ յուղով կճուճ, իսկ կալի ամաններ վաճառողի մոտ կարելի է գտնել և՛ գորգեր, և՛ կարպետներ, և՛ պարան, և՛ տարբեր սերմեր և այլն», «Այստեղ առևտրի բոլոր տեսակների մեջ ամենից զարգացածը գործվածքներով ու զարդարանքներով կամ, ինչպես այստեղ են ասում, վաճառականական ապրանքով կատարվող առևտուրն է» (Ս. Զելինսկի, Город Эривань.— Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. 1, отд. 1, էջ 34—35. Ըստ Ք. Հակոբյանի «Երևանի պատմութունը (1801—1879 թթ.)» գրքի, էջ 467—468),

Այս նկարագրությունը կատարված է Արտվյանի անհայտացումից շուրջ 25 տարի անց. կարծում ենք, այդ ընթացքում շատ բան չէ, որ փոփոխված է եղել Երևանի շուկայում: Դժվար չէ նկատել, որ Զելինսկու նկարագրությունը որքան ճշգրիտ, նույնքան էլ անգույն է Բակունցի նկարագրության համեմատ: Այլ կերպ էլ լինել չէր կարող, քանի որ Զելինսկունը լուսանկար է, Բակունցինը՝ գեղանկար:

Հիշենք, որ Բակունցը Երևանի շուկայից բացի, նկարագրել է նաև Գորիսի շուկան («Կյորես») և նույնպես՝ վառ գույներով: Եվ առհասարակ, «դավթարներ քրքրելու» խնդիրը թեև կարևոր է, բայց, երևի, ամենագլխավորը Բակունց-գեղանկարիչի ունեցած երևակայությունն է, նրա դրոշմն ու շունչը սեռաշատուր Արտվյան» վեպի այս մասում:

Ուշագրավ մի հանգամանք ևս. «Գործ Մայրանա դստեր Մկրտումի» գլխում Բակունցը ընդարձակ հատվածներ է բերել իր իտալացի մի հեղինակից, որին անվանում է «Անհայտ ճանապարհորդ Անտոնիո Զիովանելիի, կապուցին վանական, որ ճանապարհորդել է Տրապիզոնից մինչև Պարսից ծոցը»: Այնքան հավաստի են թվում Զիովանելիի անունով արված նկարագրությունները, ծանոթագրությունը, նրա հետ կապված գեպքերը (օրինակ, Տրապիզոնում տեղի ունեցածը), որ ընթերցողը կասկած անգամ չի ունենում այդ աղբյուրի վավերականութան մասին, և գրականագետները դա հավաստի աղբյուր էլ համարել են:

Մենք փորձեցինք գտնել այդ աղբյուրը. երկար շարժարանները արդյունք չափեցին: Ղ. Ալիշանը իր «Այբարատ» ուսումնասիրության մեջ (Վենետիկ, 1890, էջ 38, 311) հիշատակում է Զեմելլի (Ճեմելլի) անունով XVII դարի իտալացի ճանապարհորդի, որն իրոք եղել է Երևանում և որոշ տեղեկություններ հաղորդել այս քաղաքի մասին: Բայց դա ոչ Բակունցի հիշատակած անձն է, ոչ էլ նրա նկարագրությունները նման են Բակունցի բերածներին:

Արդյո՞ք մտացածին անձ է այդ Անտոնիո Զիովանելիի հոգևորականը: Առայժմ դա հաստատ ասել չենք կարող, բայց նման ենթադրության համար հիմքեր կան. օրինակ, այն, որ այդ հեղինակը, նրա գրառումները որպես աղբյուր չեն հիշված հին Երևանի

մասին գրված երկերում: Եթե անգամ Բակունցը ձեռքին ունեցել է այդպիսի մի «անհայտ ճանապարհորդի» գրառումներ, միևնույն է, վստահ կարելի է ասել, որ «Գործ Մայրանա» գլխում բերված քաղվածքները ամենից ավելի իրենց վրա կրում են Բակունց ստեղծագործողի վրձնի հետքերը և նրա իսկ ընտրած գույները: Իսկ եթե այդ անձը մտացածին է և եթե Բակունցն է կազմել նրան վերագրած ուղեգրությունների քաղվածքները, ապա միայն դրանց համար գրողը պետք է ահռելի աշխատանք կատարե՞ր՝ այդքան փաստեր հավաքելու համար, ըայց այստեղ ևս հրապուրիչն այնքան հավաքված փաստերը չեն (եթե դրանք էլ շատ հետաքրքրական են), այլ այդ փաստերի բակունցյան գեղարվեստականացումը:

Ընդհանրապես, ամբողջ վեպից պահպանված հատվածների փաստական-վավերագրական արմատները շատ ու շատ ավելի են, քան վերը նշվեց: Վեպում Բակունցի երեվակալութիամբ նկարագրված անցուղարձեղը, հերոսները, Արովյանի մտածումները, խոսքերը և այլն մեծ մասամբ նույնպես վավերագրական որևէ հիմք ունեն: Եվ բոլոր այդ հիմքերը գտնելը լրացուցիչ մեծ աշխատանք է պահանջում:

Նսկայական աշխատանք կատարել է ինքը հեղինակը այդ հիմքերը բազում աղբյուրների մեջ հայտնաբերելու համար: Բայց, իհարկե, դարձյալ՝ բնավ այդ չէ ամենակարևորը: Այդպիսի աշխատանք շատերն են կատարում, սակայն «Լիբեր Արմենիեր» կամ «Ձարթու բազար» չեն ստեղծում: Մեղուն էլ է բազում ծաղիկներից իր «հումքը» հավաքում, և բնավ այդ չէ ամենաէականը, այլ այն, որ այդ հումքը հրաշքով մեղվի շնորհիվ մեղրի է վերածվում: Այդպես էլ Բակունցի՝ մեղվաշանորեն հավաքած «հումքը» նրան արված հանճարի շնորհիվ է, որ վեր է ածվել հայ գեղարվեստական արձակի առաջնակարգ էջերի, իսկական արվեստի:

Ստորև, ըստ վեպի պահպանված հատվածների բերվող էջառողային նշումներ անցող ծանոթագրությունների մեջ ևս տեղ-տեղ խոսք կա Բակունցի վեպի փաստական հենակետերի մասին:

**Յ ա ն ք ա զ ր ա թ յ ու ն ք ն Ե Ս Ե Ղ Ե Ր Ի և Խ Ո Ղ Ա Ն Ա Մ Ա Ր Ե Ն Ե Ր**

### «Լիբեր Արմենիեր»

էջ 260, տող 4 և հետո. Լիբեր Արմենիեր— գերմաներեն է, նշանակում է սիրելի այս Արովյանը Գորպատում գերմանախոս շրջապատում էր, և նրան շատերը lieber Armenier էին կոչում (տե՛ս այս ծանոթագրությունների «Փաստականի գեղարվեստական մարմնավորումը» բաժնում):

էջ 260, տող 6. Սաւր Խոնաճնի տաճարը— Գորպատի (Տարտուի) տաճարներից է, որ այժմ էլ կանգուն է:

էջ 260, տողեր 7—8 և հետո. շվեդների Փուտով Ազովի թագավորը— խոսքը Շվեդիայի Փուտով II Ազովի թագավորի մասին է (1594—1632), որ նաև նշանավոր զորավար էր: Զգտում էր Բալթյան երկրներն իր իշխանության տակ պահել: Մեծ նվաճումներ է արել Գերմանիայում, Ռուսաստանում, Լեհաստանում: Հստոնիայում նրա անվան հետ շատ վայրեր են կապված:

էջ 260, տողեր 8—9. Ստեֆան Բատորիի ժամանակ— Ստեֆան Բատորին լեհաստանի թագավորներից էր (1576—1586): Պատերազմի է Մոսկովյան պետության դեմ, իշխել է Մերձբալթյան շրջանում:

էջ 260, տողեր 9—10 և հետո. Դորպաա — էստոնիայի այժմյան երկրորդ քաղաքն է՝ մեծությամբ ու նշանակությամբ: Դորպաա անունով քաղաքը կոչել են գերմանացիները: էստոներեն այն կոչվել և կոչվում է Տարուու, որը և քաղաքի այժմյան պաշտոնական անունն է: Ռուսներն անվանել են Յուրև, հետո՝ Դերպաո: Դորպաաը էստոնիայի մայրաքաղաք Տալլինից (նախկինում Իեել) գտնվում է 186 կմ. դեպի հարավ-արևելք: Արովյանը Դորպատում եղել է շուրջ հինգ ու կես տարի (1830—1836 թթ.): Այդ ժամանակ և դրանից էլ շատ առաջ Դորպատում, ինչպես և էստոնիայի մյուս քաղաքներում տիրապետող դիրքում էր գերմանական քաղաքակրթությունը: Դորպատի համալսարանում ուսուցումը հիմնականում գերմաներեն էր, դասախոսների մեծ մասը գերմանացի էր:

էջ 260, տող 10 և հետո. Օստգեեի երկրներում—Օստգեե գերմաներեն է, նշանակում է Արևելյան ծով, այս դեպքում՝ Բալթիկ ծով. Օստգեեի երկրները Մերձբալթյան երկրներն են: Ծղել է այդ անունով նահանգ:

էջ 260, տող 17. Էմբախ— գետ է (էմբախ գերմանական անունն է), անցնում է Դորպատի (Տարուուի) միջով, հատելով քաղաքը հյուսիս-արևելքից, էստոներեն կոչվում է Էմայիգի:

էջ 260, տողեր 18—19. աբխալական համալսարանը— Դորպատի արքայական համալսարանը բացվել է 1802 թ.: Այժմ՝ Տարուուի պետական համալսարան:

էջ 260, տող 19. Ալեխանդր I— Ռուսաստանի կայսր 1801—1825 թթ.: Դորպատի համալսարանը կառուցվել է նրա կայսրության երկրորդ տարում:

էջ 260, տող 21 և հետո. Դոմբեբգ— Գեղատեսիլ բլուր Դորպատում, Դոմբեբգ գերմանական անունն է, էստոներեն կոչվում է Տոմբ:

էջ 260, տող 23. համալսարանի մատենադարանը— հնաճ գեղեցիկ շենք է, որ այժմ էլ կանգուն է: Կառուցվել է անցյալ դարի 20-ական թթ. գոթական հին ավերակ տաճարի մի մասի վերականգնմամբ:

էջ 261, տող 1. Academia Gustaviana — լատիներեն է, նշանակում է Գուստավյան ձեմարան: Այդպես կոչվել է շվեդական Գուստավ Ադոլֆ թագավորի կողմից 1632 թ. հիմնված ձեմարան-կաճառը, որը դարձել է Դորպատի համալսարանի հիմքը:

էջ 261, տող 2. Մայր ձեմարանի սյունազարդ շենքը— Մայր ձեմարանը Դորպատի նույն համալսարանն է, որի շենքը, իրոք, սյունազարդ է: Մայր ձեմարան անվանումը, հավանաբար, թարգմանությունն է Alma mater լատինական անվան: Այդպես Դորպատի համալսարանի սաներն ու շրջանավարտները կոչում էին իրենց համալսարանը (բառացի նշանակում է սնուցող մայր— անցյալում Եվրոպայի բուհերի շրջանավարտներն, առհասարակ, իրենց սնած համալսարանները կոչում էին Alma mater): լատինական այս անվանումն Արովյանի կապակցությամբ Բակունցը գործածել է իր աեաշատուր Արովյանի առհասարակալումը ուսումնասիրության մեջ (էջ 34):

էջ 261, տողեր 24—25. Anno domini MDCCC VI — լատիներեն է, նշանակում է (գրաբար)՝ Յամի տեառն 1806 (նոր հայերեն՝ Տիրոջ մենդյան 1806 թ.):

էջ 261, տող 26. Burschenburg — գերմաներեն է, նշանակում է ուսանողների ջաղաք. der Bursch գերմաներեն նշանակում է տղա, պատանի, աշակերտ, ուսանող: Իսկույնցի վնկում այդ բառը գործածված է ուսանող իմաստով:

էջ 262, տող 24 և հետո. պեղել— գերմաներեն բառ է (der Pedell), նշանակում է համալսարանի ստորին աշխատակից, նաև բուհի, դպրոցի պահակ:

էջ 242, տող 35—36. Der Herr Gott, dann der Kaiser von Russland, dann der dörrptsche Bursch — գերմաներեն է, նշանակում է Տեր Աստված, ապա Ռուսաստանի կայսրը, հետո դորպատոյան ուսանողը:

էջ 263, տող 13. Verschiss — գերմաներեն է, նշանակում է խայտառակում, բոյկոտ: Բակունցի նախադասության մեջ այդ բառը դրված է վրեժխնդրությանից հայերեն բառից հետո, սակայն հայերեն վրեժխնդրություն բառի գերմաներեն թարգմանչուՅյունը կլինի der Vergeltung:

էջ 263, տող 35. Լիֆլանդիա— այս անունով նախկինում կոչվել է մերձբալթյան երկրամասը՝ Ռիգայի ծովախորշի, Պսկովի լճի և Արևմտյան Դվինայի միջև ընկած տարածքը:

էջ 265, տող 2. Լանդգերիհտ — գերմաներեն das Langericht (երկրամասային դատարան) բառի հայերեն անհաշու տառադարձումն է, ավելի ճիշտ կլիներ՝ Լանդգեբիխտ (բնագրում տպված է գծիկով՝ Լանդ-գերիհտ, որ ուղղել ենք): Այս բառը նույնպես առնված է Աբովյանի Դորպատոյան օրագրություններից. Աբովյանը Դորպատի Լանդգերիխտում երդումով հաստատել է Ֆ. Պարրոտի և իր Արարատի գազաթ բարձրանալը:

էջ 265, տող 3. կապուցին վանականների զգեստով— կապուցիները կաթոլիկ արեղաներ են՝ աղքատության ուխտով. նրանց զգեստն էր՝ հասարակ թիկնոցը՝ գլխանոցով (կնգուղով):

էջ 265, տող 29. dummer Junge — գերմաներեն է, նշանակում է հիմար տղա (պատանի):

էջ 265, տող 30. էսպաղոն— սուսերի մի տեսակն է:

էջ 265, տող 31. Hundsfott — խոսակցական գերմաներեն է, նշանակում է ստոր:

էջ 267, տող 11 և հետո. Ֆուխ— գերմաներեն der Fuchs բառի հայերեն տառադարձումն է. նշանակում է աղվես, նաև՝ նորելուկ, նոր ուսանող: Այդպես գերմանական համալսարաններում անվանում էին նոր ընդունված ուսանողներին: Աբովյանի Դորպատոյան օրագրում խոսվում է այդ մասին. օրինակ, 1831 թ. սեպտ. 4-ի գրանցման մեջ կարդում ենք. «Այսօր բազում աղուէսք եկեալ են ի համալսարանս մեր ուսանիլ»: Աղուէսք կոչին զամենայն նորեկ աշակերտս» (Ն. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, էջ 17):

էջ 267, տող 18. կոմերշ — գերմաներեն է (der Kommers), նշանակում է ուսանողական խնջույք, նաև ուսանողական գինետուն (հայերեն ճիշտ տառադարձումը կլինի քոմերս): Բակունցն օգտագործել է առաջին իմաստով:

էջ 267, տող 26. դոմբեզ— խոսակցական գերմաներենում գործածված բառակն է, որ գրական լեզվում գրվում է Dormeuse (գերմաներենին անցել է Ֆրանսերենից), նշանակում է գիշերային կառնի:

էջ 267, տող 28. bemooste Իմպեր — գերմաներեն է, բնագրում ճիշտ է հայերեն թարգմանված՝ մամուսպատ գոյութեք:

էջ 269, տող 20. m-lle Annette — ֆրանսերեն է m-lle-ն (կա նաև mille ձևը) mademoiselle (մադեմուսելի)-ի կրճատված ձևն է: Բնագրում նշանակում է օրիորդ Անետ:

էջ 271, տող 5. մի բուր, Դամասկոսի հազվագյուտ զարծ— Միրիայի այժմյան մայրաքաղաք Դամասկոսում միջնադարում շատ զարգացած էր պողպատաձուլությունը, և այդ քաղաքի պողպատը, նրանից պատրաստված թրերը հայտնի էին աշխարհում իրենց բարձր որակով:

էջ 271, տողեր 6—7. կովի էր սառակինոսների դեմ—սառակինոս կամ սառացիե բառը ծագել է արաբերեն սարիլին (նշ.՝ արևելյան) բառից, այդ անունով հնում վաշկատուն ցեղ է եղել Արաբիայում: Ապա այդպես անվանում էին արաբներին: Միջնադարում սարացիներ (սարակինոսներ) անունով եվրոպացիները, առհասարակ, քրիստոնյա ազգերն անվանում էին մահմեդականներին, երբեմն արևելցիներին: Օրինակ, խաչակրաց արշավանքների ժամանակ խաչակիրների արևելցի բոլոր հակառակորդները սարակինոսներ էին համարվում:

էջ 271, տողեր 16—17. նկարել էին երջանիկ Արկադիա, և Պանը սրինգ էր նվագում— Արկադիան Հունաստանում է՝ Պելոպոնեսի կենտրոնական մասում: Հին Հունաստանում Արկադիայի ժողովուրդը հռչակված էր որպես հյուրասեր ու բարեփրոս, և գրականության, գեղանկարչության մեջ Արկադիան ներկայացվում էր որպես նահապետական պարզ բարձր ունեցող, անմեղություն մարմնավորող երկիր: Արկադիայի բնության պատկերները նկարիչներն օգտագործում էին հովվերգական խաղաղ գեղանկարներ ստեղծելիս: Նկարվում էին նաև արկադական հովիվներ, երբեմն էլ Պանը՝ անասունների և հովիտների ուրախ աստվածը՝ իր սրինգը նվագելիս:

էջ 272, տողեր 18—19. Վարտուրգում խառնուկի բացի մեջ վառացին խավաբամիտ զրհեր— խոսքը վերաբերում է գերմանիայում XIX դարի 10-ական թվականներին տեղի ունեցած ուսանողական շարժումների հետևյալ դրվագին. 1817 թ. Գերմանիայի Ալզենսխայ քաղաքի մոտ դստվոլդ Վարտուրգ դղյակում 13 գերմանական համալսարանների ավելի քան 470 ուսանողներ և մի քանի դասախոս նշում են լուսնային ռեֆորմացիայի 300-ամյակը՝ ազատամիտ ճառեր ասելով: Այդ ժամանակ նրանք հրապարակորեն այրում են իրենց հայտարարությամբ խավաբամիտ մի շարք գրքեր ու ալլ Նյութթեր:

էջ 272, տողեր 22—23. Մաննյում ուսանող Զանդը սպանեց Ավգուստ Կոցեբուին— ակնարկ է Գերմանիայում XIX դարի 10-ական թվականների ուսանողական ընդվզումների մասին: 1817 թ. Ննայի (Գերմանիա) համալսարանի ուսանող և ուսանողական զաղտնի խմբակի անդամ Կարլ Զանդը սպանել է ուսական ցարիզմի գործակալ Ավգուստ Ֆոն Կոցեբուին: Ինքը՝ Զանդը Մանհայմ քաղաքում դատապարտվել է մահապատժի, որն ի կատար է ածվել 1820 թ.:

էջ 272, տող 24. Humanitas — Լատիներեն է, նշանակում է մարդասիրություն, մարդկայնություն, մարդկային արժանապատվություն:

էջ 272, տող 29. կրագեն— հռչակական բառ է, նշանակում է կոշիկի կոճկովի ճեթ: Զի բացատված, որ այստեղ դեռովի օձիթի իմաստով է գործածված (der Kragen գերմաներեն նշանակում է օձիթ):

էջ 272, տողեր 33—34. Հաւալագախա— գերմաներենից է (die Hauptwache), նշանակում է բանտախոց, արգելաւենյակ, դիւժորական բանտ:

էջ 273, տող 28. Ֆրաու Յոգելզանգի պանդոկը— ֆրաու գերմաներեն է (die Frau), այստեղ նշանակում է տիկին: Ֆրաու Յոգելզանգի մասին տե՛ս այս վեպի ծանոթագրութիւնների «Փաստականի գեղարվեստական մարմնավորումը» բաժնում:

էջ 273, տող 29. Ռեւըրաւս— փողոցի անուն է, գերմաներեն նշանակում է Ռեւելի փողոց, այսինքն Ռեւել (այժմ Տալլին) տանող փողոց:

էջ 274, տող 18. Dum vivimus, vivamus— լատիներեն է, նշանակում է՝ քանի որք ենք, պիտի ապրենք: Հատիներեն այս ասացվածքը Ռակունցը այլ տեղ բերել է հայերեն (տե՛ս էջ 277, տող 26):

էջ 275, տող 6 և հետո. կուրատոր— լատիներեն է (curator), նշանակում է հոգարարձու, սատարող, հովանավոր: Բուհերում կուրատորը ուսանողների որևէ խմբի կամ ամբողջ լսարանի կարգապահական ղեկավարն էր, դաստիարակը:

էջ 275, տողեր 11—12. Էկզեկտիկա— հունարեն է. այսպես կոչվում էր բանասիրութեան այն ճյուղը, որը զբաղվում էր հին քննարկի վերծանութեամբ: Էկզեկտիկա է հռչակել նաև կրօնական գրքերի մեկնաբանությունը:

էջ 275, տող 12. հոմեկտիկա— հունարեն բառ է, նշանակում է ուսմանը ցարդի մասին, որ նախկինում դասավանդվում էր Եվրոպայի համալսարաններում:

էջ 277, տող 5. հերր— գերմաներեն է (der Herr), նշանակում է պարոն, տեր, տիայր:

էջ 277, տող 12. Մյունխենի զարեչրով— Բավարիայի (Գերմանիա) մայրաքաղաք Մյունխենի զարեչրը հենց ի վեր հայտնի է եղել իր բարեր որակով:

էջ 277, տող 20 և հետո. գրաու— հատուկ գործվածք է, հյուսվածք և նրանից պատրաստված շոր, շալ:

էջ 277, տողեր 28—29. Ին ուսնեթին կեարզգի՞ր՝ զրավել վիպայի կամուշը...— այս և հետագա խոսքը վերաբերում է 1520—1531 թթ. լեհական ապստամբութեանը ընդդէմ ցարական Ռուսաստանի: Այդ մասին Արոմյանը մի շարք անգամ գրել է իր Գորգոսյան օրագրերում (տե՛ս, օրինակ, Խ. Արոմյան, Երկերի լեզակ. ծագ. 1, 6, էջ 25, 140, 153):

էջ 277, տող 30. Ֆելզմարշալ Դիքիլ— խոսքը Դիքիլ-Ջարայկանսկու մասին է (1765—1831), որ գերմանացի էր, ցարական բարձրաստիճան գինգոբական, շատ ետկատամբարների մասնակից: Դեկտրիտների ապստամբությունը Անյոզն է. 1820 թ. ղեկավարներից ղեկավարել է լեհական ապստամբությունը Անյոզ ուսական զորքեր:

էջ 279, տող 8—9. Gaudemus igitur— լատիներեն է, նշանակում է՝ Բարձն ուրախանանք. այս բաներով է սկսվում նախկինում գերմանական համալսարանների աստուգութեմ շատ սիրելի լատիներեն երգը:

էջ 279, տող 10. Nos habebit humus— վերք ինչված լատիներեն երգի առաջին տան վեպին առկ է. նշանակում է՝ հողը մեզ կպարտուի:

Այդ երգը շատ տարածված է եղել գերմանական բոլոր համալսարաններում, աքս խնույթների. հավաքույթների ժամանակ երգել են Գորգոսյան ուսանողները. այդ թվում Արոմյանը:

Տարեկ ասլիա ենք երգի ամբողջ բնագիրը:

## GAUDEAMUS IGITUR

Gaudeamus igitur, iuvenes dum sumus.  
 Post iucundam iuventutem,  
 Post molestam senectutem  
 Nos habebit humus.

Vita nostra brevis est, brevi finietur.  
 Venit mors velociter,  
 Rapit nos atrociter,  
 Nemini parcetur.

Vivat Academia, vivant professores!  
 Vivat membrum quodlibet,  
 Vivant membra quaelibet,  
 Semper sint in flore!

Vivat et res publica et qui illam regunt!  
 Vivat nostra civitas,  
 Maecenatum caritas,  
 Qui nos hic protegunt!

Pereat tristitia, pereat dolores!  
 Pereat diabolus,  
 Quivis antiburschius  
 Atque irrisores!

էջ 279, տող 16. — Burschen — ուսանողներ (գերմ.):

էջ 280, տող 35. Օրդոնան-հաուզ—հավանարար պետք է լինի Օրդոնանց-հաուզ.  
 գերմաներեն Ordonnanz Haus-ից. die Ordonnanz նշանակում է հրաման, հրա-  
 հանգ, das Haus՝ տուն: Երկուսը միասին՝ Երեստուն, ղեկավար գրասենյակ:

էջ 282, տողեր 2—4. Ինչպես ջրաղացպանը, որ վախեցած վեր է բռնում, երբ այ-  
 լես չի լսվում ո՛չ ջրի շատաշը, ո՛չ ֆարի աղմուկը— հիշեցնում է Ղ. Աղայանի «Ջրաղաց-  
 պանի ննջարանը» բանաստեղծությունը. ահա երկու քառատողերը.

Չախչախների շրխշրխկոցից  
 Մարդի ականջ խլանում է,  
 Իսկ ջրաղացպանն ալրաթաթախ  
 Խոր բուն ընկած խորամտում է:

Բայց ջրաղացը եթե հանկարծ  
 Կտրե ձայնը, լռե, սառչի,  
 Ինչպես մի թունդ թնդանոթից՝  
 Ջրաղացպանը վեր կըթռչի...

էջ 282, տող 17. Burschen, heraus — գերմաներեն է, նշ.՝ ուսանողներ, դու՛րս

էջ 285, տող 21. Pereat — լատիներեն է, նշ.՝ թող կործանվի, կորչի:

էջ 287, տող 7 և հետո. պրոֆեսոր Պարրոտի կնոջը— պրոֆեսոր Յրիգրիս Պարրոտը Արովյանի բարերարն էր, Դորպատի համալսարանի տնօրենը (տե՛ս այս ծանոթագրութիւնների «Փաստականի գեղարվեստական մարմնավորումը» բաժնում):

էջ 289, տող 35. Եվ ինչպէս վարժ է խոսում գերմաներեն— Արովյանը Դորպատում, իրոք, շատ արագ է սովորել գերմաներեն և խոսել է վարժ: Այդ մասին հիշատակութիւններ կան Արովյանի Դորպատյան օրագրերում (տե՛ս Խ. Արովյան, Երկերի լիակ. ժող., հ. 6, էջ 90, 94 և այլն):

էջ 290, տող 1. Edelmann — գերմաներեն է (der), նշանակում է՝ ազնվական:

էջ 290, տող 10. քյուրգերները— քյուրգեր (der Bürger), գերմաներեն է, նշանակում է քաղաքացի, նաև քաղթենի. Բակունցի բնագրում ունի այդ երկու իմաստները միասին:

էջ 290, տող 29 և հետո. Մարյա Աֆանասևնան— իրական անձնավորութիւն է. տե՛ս այս ծանոթագրութիւնների «Փաստականի գեղարվեստական մարմնավորումը» բաժնում:

էջ 291, տող 2. Նռանց լեզվով է խօսել Նոյր— ըստ Աստվածաշնչի Հին կտակարանի, Նոյի տապանը չրհնդդի ժամանակ հանդրվանել է Հայաստանում, Արարատի գագաթին: Հայկական ավանդութեան և պատմագրութեան համաձայն չրհնդդից հետո Նոյն իր բնտանիքով իջել է Արարատից և նախապես տնավորվել Հայաստանում: Ըստ Մովսէս Խորենացու հայերը Նոյի 4-րդ թոռան՝ Քորդոմի սերունդն են: Իրոք, որ իշխել է այդպիսի համոզում, որ հայերենը եղել է Նոյ նահապետի լեզուն:

էջ 291, տողեր 16—27. Այս հատվածում պատումն այնպես է ընթանում, որ կարող է թվալ, թէ Պարրոտը նոր պիտի բարձրանա Արարատի գագաթը. «...կրարձրանա՞ «հերը» պրոֆեսորն այդ լեռան կատարը, թե՞ չի բարձրանա...»: Իրականում այդ խոսակցութեան ժամանակ Պարրոտն իր խմբի և Արովյանի հետ արդեն բարձրացել էր Արարատի գագաթը և վաղուց վերադարձել Դորպատ:

էջ 292, տողեր 11—12. հայտնվեց հայր՝ իսկական բնակիչը Աբաբաբայան աշխարհի— Մ. թ. ա. IX—VI դդ. սեմական ժողովուրդները Հայաստանը կոչել են Աբաբաբա, Աբաբաբայան աշխարհ, Ուրարտու: Աբաբաբայան աշխարհ անվանումը գործածել են նաև հայ պատմիչները: Բակունցը գործածում է այդ հինավուրց անվանումը:

էջ 293, տող 28. ռեյնվայն— գերմաներեն է՝ Rheinwein (հիշտ տառադարձումը՝ ռայնվայն), նշանակում է Հռենոսի գինի, այսինքն՝ Գերմանիայի Հռենոս գետի մոտակայքի գինի: Այն միշտ հարգի է եղել (տե՛ս նաև «Կյորես» վիպակի ծանոթագրութիւնները):

էջ 293, տող 31. eine Minute — գերմաներեն է, նշ.՝ մեկ րոպե:

էջ 293, տող 34. Liebling — գերմաներեն է, նշանակում է սիրելի:

էջ 293, տող 35. դիակոնոս— գերմաներեն է (der Diakonus), նշանակում է սարկավագ, դպիր (տե՛ս նաև այս ծանոթագրութիւնների «Փաստականի գեղարվեստական մարմնավորումը» բաժնում):

էջ 297, տող 20. auf Wiedersehen — գերմաներեն է, նշ.՝ ցտեսութեան:

էջ 306, տող 30. տանձ կեսարինը կեսարին— նկատի ունի Ավետարանի հետևյալ հատվածը. «Այն ժամանակ փարիսեցիները զնացին և խորհրդակցեցին, թե ինչպես խոս-

քով որոգայթ գցեն նրան: Եվ նրա մոտ ուղարկեցին իրենց աշակերտներին՝ հերովդե-  
յանների հետ ու ասացին. «Աւուցիշ, մենք գիտենք, որ Դու արդար ես և ճշմարտա-  
պես Աստուծո ճանապարհն ես սովորեցնում ու հոգ չես անում որևէ մեկին հաճոյանա-  
լու, որովհետև հաշիվ չես անում, թե դիմացիդ ով է. և այդպես, ասա մեզ, թե ինչ-  
պե՞ս է թվում, կայսրին պե՞տք է հարկ տալ. թե՞ ոչ»: Եվ Հիսուսը նրանց խորաման-  
կով թուեց հասկանալով, ասաց. «Ինչո՞ւ եք ինձ փորձում, կեղծավորներ: Յույց տվեք  
ինձ այն դրամը, որն իբրև հարկ է վճարվում»: Նրանք մի դահեկան բերին նրան: Եվ  
նրանց ասաց. «Սա ո՞ւմ պատկերն է և գիրքը: Նրան ասացին. «Կեսարինը»: Այնժամ  
ասաց նրանք. «Որքան կեսարինը տվեք կեսարին և Աստուծուը Աստուծուն» (Ավետարան  
բար Մատթեոսի, ԻԲ, 15—21):

էջ 306, տող 25. էջ 310, տող 15. criminal carcer — լատիներեն է, նշանակում է քրեական հանցագործի խուզ:

էջ 306, տողեր 30—31. Ահա հենց դառն մտ մի քաջ լատինագետ գրել է կամ-  
բոս զորավարի խոսքը Non licet in bellis bis peccare.— կամարոսը հին հուեա-  
կան զորավար է (մ. թ. ա. մոտ 470—414 թթ.): Նրանք համարվող վերոհիշյալ խոսքը  
լատիներեն է, նշանակում է՝ «Անթուլլատրեի է պատերազմի ժամանակ երկու անգամ  
սխալվել (մեղանշել)»:

էջ 308, տող 16. Փոյուզիական քասակ— Փոյուզիան հին երկիր է, գտնվում էր Փոքր  
Ասիայի հյուսիս-արևմտյան մասում: Փոյուզիական թասակը գլխարկի մի տե-  
սակ է՝ երկարավուն, որ վերևում նեղանում է ու թեքվում առաջ (սլատկերված է հնա-  
գարյան իրերի վրա): Հետագայում փոյուզիական թասակը հեղափոխականների, հայ-  
րենասերների խորհրդանիշ էր (յակոբիյաններն այդպիսի թասակ էին դնում):

էջ 308, տողեր 28—29. Per aspera ad astra — լատիներեն ասույթ է, բառացի  
նշանակում է՝ տատասկի միջով դեպի աստղեր: Բակունցի տված տողատակի թարգմա-  
նությունն ըստ բովանդակության ճիշտ է:

էջ 309, տողեր 28—29. Բոհեմիայի անտառներում— Բոհեմիան Չեխիան է, այժմ-  
յան Չեխոսլովակիայի արևմտյան մասը: Բոհեմիայի (կամ Չեխիայի) անտառ են կոչ-  
վում Չեխիայի հյուսիսում (Գերմանիայից հարավ) ձգվող լեռները: Այստեղ խոսքը  
Շիլլերի «Ավաղակներ» առիթով է:

էջ 309, տող 30, Կարլ Մոռ— Ֆ. Շիլլերի «Ավաղակներ» թատերգության գլխավոր  
հերոսն է:

էջ 312, տողեր 27—34. Եթո՞ւմ ես Կարլ Մոռն ի՞նչ է ասում Շպեյերեզգե. «Ս-  
րենեք կրիայի քայլեր է անել տալիս այն մարդուն, որ կարող էր քոչվլ արժի պես...»  
և այլն— Շպեյերերգը Կարլ Մոռրի ընկերներից է, ավաղակներից մեկը: Բակունցի  
բերած խոսքերը «Ավաղակների» 2-րդ տեսարանից են: Ծշտորեն բերված է Փիլիպոս  
Վարդանյանի թարգմանությունը լույս տեսած գրքից (ՔիՖիս, 1850): Շիլլերի անունը  
հանախ է տրվում Արովյանի Դորպատյան օրագրերում (Խ. Արովյան, Երկերի լիակա-  
տար ժող., Կ. 6, էջ 58, 59, 176, 190, 191 և այլն): Բակունցն, անշուշտ, այս հանգա-  
մանքը, ինչպես և առհասարակ Ֆ. Շիլլերի ժողովրդականությունը գերմանական շրջա-  
պատում նկատի անելով է իր վեպի հերոսների խոսքում գրել Շիլլերի անունը և հիշա-  
տակումներ նրա երկերից:

էջ 313, տող 25. Herr Gott, sacramentum — գերմաներեն է, նշանակում է  
Տեր Աստված, գրողը տանի:

էջ 314, տողեր 1, 32. Բիսա Եոյն փիլիսոփան— Բիսաը հույն յոթ իմաստասեր-  
ներից է, որոնք ապրել են մ. թ. ա. VII—VI դարերում և եղել են մտածողներ ու պի-  
տական գործիչներ: Բիսաը Պրիենն քաղաքից էր: Նրանից հայտնի է մի առաջին՝  
«Մարդկանց մեծ մասը վատն է»:

էջ 314, տող 4. magister bibbendi — լատիներեն է. հիշտ է Բակունցի տողատա-  
կին տված ծանոթագրությունը:

էջ 314, տող 15. Լիվոնոյի երշիկ— Լիվոնոն Իտալիայի քաղաքներից է, արդ-  
յո՞ք այդ քաղաքի անունով երշիկի ինչ-որ տեսակ եղել է, դժվար է պարզել: Չի բա-  
ցառվում նաև, որ վրիպակ լինի. կա անգլերեն liver բառը, որ նշանակում է՝ մսա-  
ցու կենդանիների մարմնի ներքին այն մասերը, որոնք ուտվում են (սիրտը, թոքերը,  
լյարդը, փայծաղը և այլն): Այդտեղից կա լիվերյան երշիկ (ռուսերեն՝ ливерная  
калбаса): Արդյո՞ք այդ լիվերյան-ը չէ, որ աղավաղվել ու դարձել է Լիվոնոյի (բնա-  
գրում՝ Լիվորնոյի):

էջ 314, տողեր 17—18. Ֆլամանեում մեր քաղույր—Ֆլամանդիան այժմյան Բելգիայի  
մի մասն է, Ֆլամանդացիները (կամ Ֆլամանները) այն բելգիացիներն են, որոնց մալ-  
րենի լեզուն ֆլամանդերենն է (Բելգիայի բնակչության մյուս հատվածի՝ վալոնների  
մայրենի լեզուն ֆրանսերենն է): Հայտնի է XVI—XVIII դարերի Ֆլամանդական զե-  
ղանկարչությունը (Պ. Ռուբենս, Ա. Վան Դելդ, Ա. Բրաուեր և ուրիշներ), շատ են ֆլա-  
մանդական նկարներում մերկ կամ կիսամերկ կանայք ու տղամարդիկ, նաև հույանի  
բազուկներ, ազդրեր և այլն: Բակունցը նկատի ունի այդպիսի ինչ-որ, հավանաբար,  
կենցաղային նկար, ֆլամանդուհու մերկ քաղուկով:

էջ 315, տողեր 3—4. բաժանի մե խորհրդավոր ընքրիք— Թոմաս Բրյուլը իր  
այս խոսքով ակնարկում է Հիսուսի և նրա աշակերտների խորհրդավոր ընթրիքը ըստ  
Ավետարանի (Մատթ. 26. 20—29, Մարկ. 14. 17—25, Ղուկ. 22. 14—28, Հովհ. 13):

էջ 315, տող 5. Նայի երկրից—նոյի երկիր նշանակում է Հայաստան:

էջ 316, տող 12. misera contribuens plebs — լատիներեն է, իմաստը տե՛ս Բա-  
կունցի տված տողատակի ծանոթագրությունում:

էջ 316, տող 22. Պոլոնիայում հոսում է ապստամբների աբյուսը— նկատի ունի Ան-  
հաստանը, այնտեղ 1830 թ. ծագած ապստամբությունը:

էջ 316, տող 27. Mensch, bezahle deine Schulden — գերմաներեն է. նշանա-  
կում է Մա՛րգ, կատարի՛ր քո պարտականությունները: Ծանոթագրության մեջ Բակունցը  
նշում է՝ «Գյոթեի խոսքը»: Մեզ ծանոթ չէ Գյոթեի այդպիսի խոսք և չգտնվեց. արդյո՞ք  
ինչ-որ շփոթություն է տեղի ունեցել: Այդպիսի խոսքեր ունի Հ. Հայնեն: Դա «Երգերի  
գիրք» բանաստեղծությունների ժողովածուից «Կերպարն զհոյի տուն» շարքի մի բա-  
նաստեղծության երկրորդ տան առաջին տողն է: Ահա ամբողջ տառը.

Mensch, bezahle deine Schulden,  
Lang ist ja die Lebensbaahn,  
Und du mußt noch manchmal borgen,  
Wie du es so oft getan.

(H. Heine, Werke und Briefe,  
Berlin, 1972, էջ 123)

Բակունցի ծանոթագրութեան մեջ սխալը շինք ուղղել:

էջ 316, տող 31. Pro patria — լատիներեն է. տե՛ս բնագրի տողատակը:

էջ 317, տող 1. Pro Patria cemper — լատիներեն է. տե՛ս բնագրի տողատակը:

էջ 318, տող 4. Դավթի սաղմսները — խոսքը վերաբերում է Աստվածաշնչի Հին փակարանի գրքերից մեկին՝ Դավթի Սաղմոսների գրքի (Սաղմոսարանի) մեջ ամփոփված հոգևոր երգերին՝ սաղմոսներին:

էջ 318, տողեր 13—14. Երիվայն փող — Աստվածաշնչի Հին կտակարանում բազմիցս հիշվում է Երիթով քաղաքը, որը հրեաները Եսուի գլխավորութեամբ գրավում են. քաղաքի շուրջը պտտվելուց, փողաճառույցուն անելուց հետո՝ քաղաքի պարիսպները փլշվում են: Երիթովը հիշվում է նաև Նոր կտակարանում. Հիսուսը եղել է այնտեղ (տե՛ս Եսու Բ, Դ, Ե, Չ, է, Ք, Ժ, ԺԲ, ԺԶ, Ի, 3 Թագ. ԺԶ, 4 Թագ. Բ, Ի, Ե, Մատթ. Ի 29, Մարկ. Ժ 46, Ղուկ. 30, ԺԸ 35, ԺԺ 1, Եբր. ԺԱ 30):

էջ 319, տող 29. Կարթագենը պետք է կործանվի — Հռոմի ականավոր քաղաքական գործիչ, գրող, հոստոր Կատոն Ավագի (մ. թ. ա. 234—149 թթ.) խոսքն է, որ նա ասել է Հռոմի սենատում արտասանած ամեն մի ճառի վերջում. լատիներեն Ceterum censeo Carthaginem esse delendam — ճիշտ թարգմանությունն է. Եվ այնուամենայնիվ, կարծում եմ, որ Կարթագենը պետք է կործանվի:

էջ 320, տող 15, էջ 324, տողեր 2—3. Գոչգոչուն (Գոչգոչունի ջրվեժը), Նավավոր աղբյուր — Մենք հետաքրքրվել ենք՝ արդյոք կա՞ն այսպիսի անուններով ջրվեժ ե աղբյուր Քանաքեռի մերձակայքում. քանաքեռցիների մեջ հիշողներ չեղան: Քանաքեռի մոտ կա Մարավ աղբյուրը, որի ջուրն այժմ խողովակով գալիս է քաղաք (Երևան):

էջ 321, տող 10. Երևանի Չարուս բազարում — տե՛ս «Գործ Մայրանա դստեր Մըկըրտումի» գլխի ծանոթագրություններում:

էջ 321, տող 14. արժագրում էր օրինակներ երից կանոնի — Թվարանական այն օրենքը, ըստ որի տրված երեք միավորների միջոցով որոշվում է շորորդը (անհայտ) կոչվում էր երից կանոն:

էջ 321, տողեր 16—17. Շորորա, Շուշան, Շորորա,

Շորորա, Ժաղիկ, շորորա—շորորա բառով հայ ժողովրդական շատ երգեր ու խաղիկներ կան, դրանցից մի քանիսը տեղ են գտել Մ. Արեղյանի «Ժողովրդական խաղիկներում» (Երևան, 1940, էջ 171, 218):

էջ 323, տողեր 1—3. Անա ձեռք և բերել Ռոքեռա Քեր Պոքեռի ուղեգրությունը և շտապում է իր բարեկամին ցույց տալու զիրիք և զբքի նկարներ՝ Երևանի բերդը և Արարատը — Ռոքեռա Քեր Պոքեռը անգլիացի նկարիչ է (ծն. 1775 թ.), որ որոշ տարիներ աշխատել է Պետերբուրգում: 1817—20 թթ. ճանապարհորդել է Մերձավոր Արևելքում (Վլադիկավկազ, Տիգրիս, Երևան, Թավրիզ, Նոր Զուղա, Միջագետք, Անատոլիա): 1882 թ. լոնդոնում հրատարակել է իր ուղեգրությունների երկու հատորը, որը և հիշատակված է Բակունցի այս երկում: Կոչվում է Travels in Georgia, Persia, Armenia, Ancient Babelonia: Հայաստանին նվիրված մասը տե՛ս Լ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. 2, 1934, էջ 677—838:

Ռ. Քեր Պոքեռի ուղեգրության վերաբերյալ Բակունցի գրած ամբողջ հատվածի (նույն էջում, տողեր 1—11) համար հիմք է դարձել Աբովյանի օրագրում եղած հետևյալ նշումը. «Յերեկոյին ստացայ զխնդութիւն, տեսանելով զմայր Բեհաղելին՝ յո-

րում էի յամառան: Բեհաղելն ինքնին տանի առ նա, և երկու դստերք նորա, որոց տեսութիւնն խնդացոյց զիս: Եւ տարի զճանապարհորդութիւն Քեր Պորտերին առ ի ցուցանել նոցա զպատկեր շահին մերոյ: Նա չէր ի տան. ի գալն եւ համբուրեմ զձեռս նորա և նա զերեսս իմ. «խնդամ, ասէ, զի տեսանեմ զքեզ»: Եւ ես զնոյն, «Յամարան ասէ, որքան սպասեցաք, զի եկեսչիք առ մեզ, այլ դուք ոչ եկիք»: Եւ խնդրեմ ներումն: Նա հաւանի ընդ պատկեր շահին, նոյնպէս և դստերք նորա, այլ հանդերձ կանանց պարուկաց և ծածկելն նոցա զերեսս ամենեկին անհաճոյ երկին նոցա: Եւ յիրաւի անհաճոյս (Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, 1955, էջ 135—136):

Վեպի այս նույն մասերում շակիրտներում գրաբար բերված հատվածները ևս մեծ մասամբ քաղվածքներ են Արովյանի օրագրերից (տե՛ս նեւ նաև այս ծանոթագրութիւնների «Փաստականի գեղարվեստական մարմնավորումը» բաժնում):

էջ 323, տող 8. հավանում են Յաթալի շանի եկարը— Յաթալին Իրանի շահերից է, թագավորել է 1797—1832 թթ., այսինքն՝ և. Արովյանի օրոք և Կովկասը, ներառյալ Երևանի խանութիւնը Ռուսաստանի կողմից նվաճվելու տարիներին:

էջ 324, տող 17. ժմուղների գյուղն էր— ժմուղները կամ ժեմայտները (ինքնանվանումը ժյամայլլայլ) լիտվացիներ են, որ մեծ մասամբ բնակվում են Լիտվայի արեւմտյան մասում, մասամբ էլ Բալթյան երկրամասի այլ վայրերում: Ունեն յուրահատուկ մշակույթ ու սովորութիւններ:

էջ 338, տող 31. amor vincit omnia — լատիներեն է (բացատրութիւնը բնագրում):

էջ 339, տող 12, էջ 345, տողեր 2—3. Գունըտրասսն— փողոցի անուն է, գերմաներեն նշանակում է Կանաչ փողոց (ափելի ճիշտ է տառադարձել Գրյունշտրասսն):

էջ 340, տող 23. պոստմեյստեր— գերմաներեն է (der Postmeister), նշանակում է փոստի բաժանմունքի պետ (ճիշտ տառադարձումն է՝ պոստմայստեր):

էջ 348, տող 18. maxilla superi — լատիներեն է, նշանակում է վերին ծնոս:

էջ 348, տող 18. vertebrae Collus — լատիներեն է, նշանակում է վզի հոդեր կամ վզի ողեր:

էջ 348, տող 19. costae — լատիներեն է, նշանակում է կողոսկր:

էջ 348, տող 22. homo sapiens — լատիներեն է, նշանակում է բանական մարդ, մարդն իբրև բանական էակ:

էջ 348, տող 26. pelvis — լատիներեն է, նշանակում է կոնք, կոնքոսկր:

էջ 351, տողեր 6, 12—13. Եղևխայի մատուղը—բանաբոցիներն այսպիսի մատուղ շեն հիշում, գրավոր աղբյուրներում էլ չգտանք:

էջ 352, տող 19. Եվկիդես— հին հունական նշանավոր մաթեմատիկոս (ապրել է Ալեքսանդրիայում, մ. թ. ա. III դարում): Նրա «Սկզբունքներ» աշխատութիւնը երկրաչափության գլխավոր սկզբունքների շարադրանքին է նվիրված:

էջ 352, տողեր 22—23. Պյութագորոս—(նաև Պյութագորաս ձևով) հին հունական մաթեմատիկոս-փիլիսոփա (մ. թ. ա. մոտ 580—500 թթ.): Երկրաչափության մեջ հայտնի է Պյութագորասի տեսույթը (թեորեմը):

էջ 354, տող 20. քնքրեցել էր «Լերքերը»— խոսքը վերաբերում է Վ. Գրիբեի «Երիտասարդ Վերթերի տառապանքները» վեպին, որ Արովյանի ժամանակներում շատ էր ընթերցվում հատկապես գերմանացիների մեջ:

էջ 354, տող 23. այդ գրքի կինը՝ Շարլատան— Շարլոտան Գյոթեի «Երիտասարդ Վերթերի տառապանքները» երկի գլխավոր հերոսուհին է:

էջ 358, տող 5. կոնդեցի Սանակ եպիսկոպոսը—հավանաբար, Եկատի ունի էջ-միածնի միտքան Սահակ եպիսկոպոս Գարեյանցին (մահ. 1832 թ.):

էջ 358, տող 16. նիզալայ—ռուսերեն не знаю (կամ не знает) բառի յուրովի արտասանական ձևն է (ռուսերեն վատ իմացող կովկասցիներն այդպես էին արտասանում):

էջ 358, տողեր 21—22. «Ձեռ ուսացիչը՝ հայր Ալեմդարը, Քիֆլիսում մեզ ա-սաց...»— խոսքը Հարություն Ալամդարյանի մասին է:

էջ 359, տող 5. Ղազարապատ— Գտնվում է էջմիածնի վանքի կազմում. շինու-թյուն է, որ կառուցել է կաթողիկոս Ղազար Զահկեցին (կաթող. 1737—1751): Այժմ օգտագործվում է իրևև ճաշարան և ճեմարանի սաների հանրակացարան:

էջ 362, տողեր 15—17. Մոսկվայի հրդեհն եմ տեսել, եղել եմ Ռեբեգինայի կրո-վում և Նոյնիսկ մինչև Պրուսիա էլել եմ ֆրանսիացիներին— 1812 թ. պատերազմի, Նա-պոլեոնի արշավանքի և Կահանչի հետ առնչված դեպքերն են:

էջ 363, տողեր 26—34. Խոսքը վերաբերում է 1825 թ. դեկտեմբերի 14-ի պետեր-բուրգյան ապստամբությանը (դեկաբրիստների) և 1830—31 թթ. լեհական ապստամ-բությանը:

## Գեպի լյան Մասիս

էջ 368, տող 1. Գեպի լյան Մասիս— այս վերնագրով Ծ. Զարենցը վիպերգ է գրել Արովյանի մասին («Գիրք ճանապարհի» կազմում է):

էջ 368, տողեր 2—5. բնարանը՝ Գեմը դաշտն էր անծայր... և այլն— Ծ. Զարեն-ցի «Գեպի լյան Մասիս» վիպերգի վերջին մասից մի հատված է (տե՛ս Ծ. Զարենց, Ծրկերի ժողովածու, հ. 4, 1968, էջ 221):

էջ 370, տող 15. Հովհաննես վարդապետ— Խ. Արովյանի՝ էջմիածնում գտնվելու ժամանակ Հովհաննես անունով վարդապետը վանքի դիվանապետն էր: Լավ հարաբե-րությունների մեջ է եղել Արովյանի հետ:

էջ 370, տող 34. Բարդոզյան լեռները— Կան Բարդոզի լեռներ. Հայկական պար լեռնաշղթայի այն մասն է, որ սկսվում է Սինակ գագաթից և ավարտվում Կոզբ բնա-կավարի մոտակայքում: Գտնվում է Արևելյան Հայաստանի այն մասում, որ այժմ Քուրդիստանի տիրապետության տակ է: Այդ լեռները լավ երևում են էջմիածնից:

էջ 373, տողեր 4—5. առաջին ընդօրինակումը Մաշտոցից—խոսքը հայոց եկեղեցու ծիսական գրքից՝ Մաշտոցից, կատարված ընդօրինակման մասին է:

էջ 373, տողեր 8—9. Այդ տետրի մեջ էին նրա ճանապարհորդական ապավորու-թյունները, գրված բարձր հետևեալ— խոսքը վերաբերում է Արովյանի «Ճանապարհոր-դութիան պարոն պրոֆեսսոր Պարրոտի...» ուղեգրությանը (տե՛ս Խ. Արովյան, Ծրկերի լիակ. ժող., հ. 7, էջ 11—24):

էջ 373, տողեր 13—14. «Միայն, խազայր հաբձանում Արաբ... Որքն կարմիր, բառ տանկաց հեշմանն՝ զբրբը»— Արովյանի «Ճանապարհորդութիան պարոն Պարրո-տի...» ուղեգրության մեջ կա այսպիսի հատված Սև ջուր գետի ափերի մասին. «Եզերք սորա և ամենայն մերձակայ շրջակայքն լի են յուղովքեամբ կարմրագոյն սրդանց (որ

է դրձգին» (Խ. Արովյան, Երկերի լիակ. ժող., հ. 7, էջ 14): Բակունցը Սև ջրի ափերը փոխարինել է Արաքսի ափերով և, անշուշտ, ավելի բովանդակալից է դարձրել խոսքը (մանավանդ, որ այդ կարմիր որդերը նույն քանակով եղել են նաև Արաքսի ափերին):

էջ 373, տող 24. Բեհագիլ ֆոն Ադլեբուքուր— Յ. Պարրոտի արշավախմբի վեց անդամներից մեկն է:

էջ 373, տողեր 27—28. Ես վանեմ ցուց կտա մի ձերուս, որն այդ որդերից պատ-  
րաստում էր ոսկեզույն կարմիր— Արարատյան դաշտի կարմիր որդերից ոսկեզույն կար-  
միր ներկ (որդան կարմիր) պատրաստում էին միջնադարում: Արդյո՞ք Արովյանի ժամա-  
նակ դեռ կային այդ ներկը պատրաստելու գաղտնիքն իմացող մարդիկ, դժվար է ասել:  
Այստեղ հանձին ձերուս՝ Բակունցը հավանաբար նկատի է ունեցել Արովյանի մտերիմ  
Սահակ ծաղկարարին:

էջ 373, տողեր 31—32. «Տե՛ծե՛մանե՛մ և ան. սիրա իմ անէ մաշէր...»— Արովյանի  
«Ճանապարհորդութիւն պարոն Պարրոտի...» ուղեգրութեան մեջ այսպիսի մի քանի հառ-  
վածներ կան, օրինակ. «յաճախէին ի մեզ հծծմունք և հոգք վշտամբերք», «սիրաք  
և միտք ի տագնապի մաշէին» (Խ. Արովյան, Երկերի լիակ. ժող., հ. 7, էջ 17): Բակունցը  
օգտագործել է այդ արտահայտությունները:

էջ 373, տողեր 33—34. մտեցան Սուրբ Հազոբի վանքին— այս վանքը գտնվում է  
Ակոռի հայկական գյուղի մոտ (3 վերստ հեռավորությամբ), Արովյանը իր ուղեգրութեան  
մեջ գրել է այդ վանքի մասին (Խ. Արովյան, Երկերի լիակ. ժող., հ. 7, էջ 15):

էջ 374, տողեր 18—19. Հայելի լեռան շողա ի քնս մարմանդաբեր Զեփյառառի—տե՛ս  
այս ծանոթագրությունների «Փաստականի գեղարվեստական մարմնավորումը» բաժնում:

էջ 374, տող 20. Նրանք ծվարել էին Քիփգյոյից բարձր— Արովյանի ուղեգրութեան  
մեջ կարդում ենք. «Ի 13 սեպտեմբերի ճանապարհ կայեալ մեր յարևմտեան կողմանէ ընդ  
անսովոր առապարս լեռին և հասեալ ի ներքոյ փոքր բլրովին, որ անկանի ի վերայ  
Քիր Գեօլ ասացեալ տեղոջ» (Խ. Արովյան, Երկերի լիակ. ժող., հ. 7, էջ 15):

էջ 374, տող 24 և հետո. Ակուտի— ավելի ընդունված է Ակոռի անվանաձևը: Հայ-  
կական գյուղ էր Մեծ Մասիսի լանջին, Արարատի վիհի մոտ: Բակունցը գործածում է  
Ակուտի ձևը, որ ավելի մոտ է անվան ժողովրդական ոտուզաբանությանը. այն է՝ աբկ  
ուտի, ըստ այդմ նոյն հասակետը Արարատի գագաթից իջնելով, այգտեղ խաղողի որթ  
(ուտի) է տնկել:

էջ 376, տողեր 12—14. «Ի Եանդարտասյուզ...» և այլն— տողեր են Արովյանի մի  
բանաստեղծությունից. տե՛ս այս ծանոթագրությունների «Փաստականի գեղարվեստական  
մարմնավորումը» բաժնում:

էջ 376, տողեր 30—31. սպիտակ լուսյուն— այսպես է կոչվում Ջ. Լեոգոնի պատ-  
մըվածքներից մեկը:

էջ 377, տող 12. Տապալը չի՛ եղել...— Այս պատկերացումը հնացած է. հնախոյզ-  
ների արշավանքները նոր ժամանակներում Արարատի դագաթին սառույցների միջից  
հայտնաբերել են տախտակի կտորներ. ենթադրում են, որ դրանք տապանի մնացորդ-  
ներն են:

էջ 378, տող 3. Սահակ վարդապետի նարդիվանի մոտ— Արովյանի՝ վանքում գտ-  
նըվելու ժամանակ այնտեղ եղել է միարանության անդամ Սահակ վարդապետ ծագի-  
րար:

էջ 378, տող 36, էջ 379 տողեր 1—3. Այս նկարի մասին ասված է նաև «Լիբեր Ար-մենիբեր» գլխում. հավանաբար տարբեր ժամանակ և տարբեր պարբերականներում հրապարակելով այդ երկու հատվածները, Բակունցը անհրաժեշտ է համարել Արովյանի դորպետոյան սենյակի համար բնորոշ պատկերի մասին երկու հատվածում էլ խոսել:

### Գործ Մայրանա դստեր Մկրտումի

էջ 379, տող 17 և հետո. Մայրանա— Մարիամ անվան երևանյան խոսվածքի փոփոխակն է. նախակերպարը եղել է Արովյանի քեռու՝ նույն անունը կրող դուստրը (տե՛ս «Փաստականի գեղարվեստական մարմնավորումը» բաժնում):

էջ 384, տողեր 12—13 և հետո. Հարություն Արով— նույն ինքը Միրզամն է, Արովյանի հորեղբայրը (տե՛ս նաև այս ծանոթագրությունների «Փաստականի գեղարվեստական մարմնավորումը» բաժնում):

էջ 384, տողեր 13—14. Ձորգյուղի կողմից իջնում էր Չարսուի վրա— Ձորագյուղը գտնվել է Ձանգվի ձորում, Ս. Սարգսի եկեղեցուց ներքև: «Ձորագյուղի կողմից»-ը, ըստ երևույթին, պետք է հասկանալ հիշյալ եկեղեցու մոտակայքից:

էջ 384, տող 21, էջ 388, տող 23. սարգարի Ջավահիր ամառափից— խոսքը վերաբերում է Երևանի բերդում, Ձանգվի ձորի ձախ բարձրադիր ափին Երևանի սարգարների (խաների) ապարանքին, որ շատ շքեղ է եղել, մանավանդ վերջին Հուսեյն սարգարի ժամանակ:

էջ 385, տողեր 6—7. լեզգիների աշխարհից եկած առատովական Արով պապի ժառանգը — ըստ Արովյան գերդաստանի ավանդության, նրանց ապուպապ Արովը Քանաքեռ է եկել ու տնավորվել լեզգիների աշխարհից, ավելի ճիշտ Քուս գետի ձախափնյա շրջաններից, Նիժ գյուղի մոտերքից: Ըստ այլ ավանդության, Արովը Քանաքեռ է եկել լազստանից: Որոշ տվյալների համաձայն՝ Արովը եղել է Խ. Արովյանի պապի պապը, ըստ այլ կարծիքի՝ հոր պապը:

էջ 388, տող 25. Լազստանից գերի առած աղջիկներ— Լազստանը լեռնային երկիր է Սև ծովի հարավ-արևելյան եզրերին, Ճորոխի գետաբերանի շրջանների ընդգրկմամբ: Բնակչությունը՝ հայեր (համընդհանր), լազեր և այլն: Այժմ Թուրքիայի տարածքում է:

էջ 388, տողեր 26—27. Փռն Հուսեյն սարգար— նկատի ունի Երևանի վերջին պարտից կուսակալ Հուսեյն Ղուլի խանին (եղել է սարգար 1807—1828 թթ.), թեև իրականում նա կուլյր չի եղել (կուլյր եղել է Քյուլբալա խանը):

էջ 388, տող 33. Բշում են Ղազվիք— Ղազվիք գտնվում է Իրանում, Թեհրանից 160 կմ. հեռու, էլբուրզ լեռան հարավային լանջին:

էջ 389, տող 13. Դեպի Կոնըր Գյուրջի ֆարվանգաբան էր— Գյուրջի քարվանսաբան Երևանի մեծ իշխանատներից մեկն էր, որ ուներ ընդարձակ բակ՝ որպես ուղտերի քաղաքանների և գրաստների հանգրվան: Մոտակայքում բազում կրպակներ էին: Գտնվում էր այժմյան Սեան հյուրանոցի հետևի ընդարձակ մասում: Չարսու բազարից իրոք կարելի էր Գյուրջի քարվանսաբանի մոտով Կոնըր գնալ և հակառակը: Մինչև 1930-ական թվականների կեսերը Գյուրջի քարվանսաբան կար. 20-ական թվականների վերջերին այդտեղ իշխանում էին տարբեր ազգության պատկանող անձինք՝ իրենց ուղտերով և գրաստներով: Կային նաև շրջակայքի շատ կրպակներ, որոնք ձգվում էին մինչև կենտրոնական շուկա՝ Ղանթաբը:

էջ 389, տող 15. բերդի կողմը— նկատի ունի Երևանի բերդը՝ կառուցված պարսից տիրապետութեան շրջանում (այժմ քանդված):

էջ 389, տող 18 և հետո. Չարսու, Չարսու բազար. Երևանի Չարսու բազար— պարսկերեն չարսու նշանակում է շորս կողմ, քառակուսի: Չարսու բազար կոչվում էին մեծ շուկաները, երբեմն՝ ծածկած վաճառանոցները (տե՛ս նաև այս ծանոթագրութիւնների «Փաստականի գեղարվեստական մարմնավորումը» բաժինը):

էջ 391, տողեր 23—24. Անճայտ ճանապարհորդ Անտոնիո Զիպլանելլին, կապուցին վանական— Մենք շկարողացանք հայտնաբերել այսպիսի անձնավորություն (տե՛ս այս ծանոթագրութիւնների «Փաստականի գեղարվեստական մարմնավորումը» բաժինը):

էջ 391, տողեր 34—35. Ֆլորենցիայի Santa Maria Novella տաճարը— Սանտա Մարիա Նովելլան Ֆլորենցիայի (Իտալիա) ճարտարապետական սրանչելի կոթողներից է: Տաճարը կառուցվել է XIII—XIV դարերում: Հայտնի են Մաղաչչոյի, Դ. Գիրլանդայոյի, Ֆ. Լիպիի որմնանկարները, որոնք ղարդարում են տաճարը:

էջ 394, տող 29. Բայբուրք («Ջանգեզուր» կինոթեմագրում հեղինակը գործածել է Բայբուրտ ձևը)։ հայերեն կոչվել է Բաբերդ. քաղաք է Արևմտյան Հայաստանի Սպիք գավառում, Կարինից 121 կմ դեպի հյուսիս-արևմուտք (այժմ Թուրքիայի մեջ է):

էջ 397, տող 33. Տրապիզոնից մինչև Բուշիր— Տրապիզոնը քաղաք է Աև ծովի հարավային ափին, նախկին Հայկական Պոնտոսում (այժմ Թուրքիայում է): Բուշիրը Իրանի քաղաքներից է, նավահանգիստ է Պարսից ծոցի ափին:

էջ 398, տող 28. պոլումպերյալ— (պոլիմպերիալ) ուուսական դրամ է (կես իմպերիալ):

էջ 399, տողեր 21—22. Եիլաչի մաճլան— Արովյանի ժամանակ Երևանի ծայրամասային թաղամասերից էր, որտեղ ներկարարների (շիլաչիների) խանութներն էին. գրանցվում էր այժմյան Հոկտեմբերյան պողոտայի շրջանում, Ալբաղաջի մոտերքում:

էջ 399, տող 24. Պողոս Պետրոս Եկեղեցին— Բազիլիկ ոճի տաճար էր, Երևանի հին Եկեղեցիներից մեկը (կառուցված է եղել, հավանաբար, VII դարում): Հեթանոսական շրջանում նույն տեղում եղել է մեհյան: Տաճարն սկսել են քանդել 1929 թվականին: Այժմ նույն տեղում կառուցված է Մոսկվա կինոթատրոնը:

էջ 400, տող 1, նաև էջ 402, տող 23. Երևանի աբուների դպրոց («Նահանգային վարժարան») — խոսքը Երևանի գավառական ուսումնարանի մասին է, որի տեսուչը 1843—1848 թթ. եղել է Խ. Արովյանը: Ուսումնարանը բացվել է 1832 թ. հունվարին, Արովյանի օրոք այն տեղավորված էր նորակառույց շենքում (այժմյան Սպայի տան մոտ), անկող 100-ից ավելի աշակերտ:

էջ 400, տող 11. unheimlich — գերմաներեն է, նշանակում է սարսափելի, չարազետ:

էջ 400, տող 12 և հետո. էմիլիա Լոզե— այսպես է կոչվել Արովյանի կինը (գերմանուհի), որը նույնպես այս դեպքում եղել է Բակունցի նախակերպարը:

էջ 401, տող 4. Զարավորի քաղից— նկատի ունի Երևանի Զորավոր (ստույգ անուկ նով Անանիա անապատ) Եկեղեցին (XVII դարից) և նրա թաղը: Եկեղեցին այժմ էլ կանգուն է, գտնվում է Թումանյանի տուն-թանգարանի մոտակայքում:

էջ 403, տողեր 13—14. Edelman Mirsaam — գերմաներեն է, նշանակում է՝ ազնվական Միրզամ:

էջ 404, տողեր 31—32. Բարոն Ավգուստ ֆոն Հաբստհաուզենը Միլզամի ճեմքարենքը ճիշտ էր նույնիսկ Պետերենֆում— Ա. Հաբստհաուզենը (1792—1861) գերմանացի

(պրուսացի) աստիճանավոր է եղել 1843 թ. ճանապարհորդել է Ռուսաստանում, նաև Պովկասում, եղել է Հայաստանում, ժանոթ է եղել Արովյանի հետ: Այստեղ խոսքը վերաբերում է Հարստհաուզենի գրանցած հայ ժողովրդական բանահյուսության նմուշներին: Արովյանի հորեղբայր Հարովյունի ասքերը Արովյանի բանավոր թարգմանությամբ Հարստհաուզենը գրի է տռել Հայաստանում եղած ժամանակի Պետերսֆը (այժմ Պետրովորոց) գտնվում է Պետերբուրգի (կենիզարազ) մոտակայքում:

էջ 406, տող 16—17. Աշտարակեցի՝ Հայոց կարողիկոսը— խոսքը ներսես Աշտարակեցու մասին է, որ կաթողիկոս է եղել 1843—1857 թթ.

էջ 406, տող 18—19. «ազա սմառիտել» — խոսքը Խ. Արովյանի մասին է. Երևանի գաղափարական ուսումնարանի տնօրենը կոչվում էր СМОТРИТЕЛЬ (տեսուչ):

էջ 407, տող 4. Արովյանն առց ինձ,— գրում է գեղմանացի բանաստեղծը— Եկատի ունի բանաստեղծ Յ. Բողենշտեդին, և Բակունցի բերած խոսքերը էջմիածնի վանական կյանքի մասին, իրոք, Արովյանն ասել է Բողենշտեդին՝ ըստ վերջինիս վկայության (տե՛ս F. Bodenstedt, Tausend und ein Tag in Orient, հ. 2. Berlin, 1850, էջ 162):

էջ 407, տողեր 11—12. Արիխը, որ գնում էր Ամարաթ, զեռ է՞ն ժամանակ խնդրեցի— Հերման Արիխը (1806—1886) գերմանացի երկրաբան է, եղել է Հայաստանում, ուսումնասիրել տեղի երկրաբանությունը, բարձրացել Արարատի գագաթը: Որոշ ժամանակ ներսես ուղեկցել է Արովյանը: Ամարաթը փոքր գյուղ է Արաքսի աջ կողմում. Արիխը եկել է էջմիածին, այստեղից գնացել Ամարաթ (հավանաբար Արարատ բարձրանալու համար): Այս առիթով Արովյանը էջմիածին (Բարսեղ եպիսկոպոսին) գրույթուն է ուղարկում՝ հայտնելով, որ պետք չէ Արիխին ընդունելու համար «ըստ ամենայնի աշխատ լինել», քանի որ նա էջմիածնում չի մնալու, այլ աճապարելու է Ամարաթ: Նույն գրույթան մեջ Արովյանը նորից խնդրում է Մայրանի ապահարզանի մասին (տե՛ս Խ. Արովյան, Երկերի լրագրատար ժող., հ. 10, էջ 265, նաև՝ «Բաների Երևանի համալսարանի», 1980, № 2, Պ. Հակոբյանի հոդվածը):

էջ 410, տողեր 6—8. «Օ՛, նպատակ, բարձր նպատակ... Առ իմ բոլոր ուժերը և ցանկությունները: Ես մոլորված ջրջում եմ աշխարհում, ինչ փույթ, երևես չպիտի անմտանում» — գերմանական գրող, փիլիսոփա, ժողովրդական երգերի հավաքող-հրատարակիչ, հուգոյական գործիչ Յոհան Հերդերի (1744—1803) այս խոսքերը նրա «Նոթեր 1769 թրվականի իմ ճանապարհորդությունների» արձակ երկից են: Բնագիրն է. „O Zweck! gro ßer Zweck, nimm alle meine Kräfte, Eifer, Begierden! Ich gehe durch die Welt, was hab in ihr, wen ich mich nicht unsterblich mache! (Herders Werke in fünf Banden, I B., Berlin, 1978, էջ 327):

Բակունցի հիշատակած ժողովածուի վերնագիրը թարգմանվում է՝ կյանքի պատեր:

Կ Յ Ո Ր Ե Ս

(էջ 412)

Առաջին անգամ ապագրվել է 1936 թ. «Եղբայրության ընկուզենիները» գրքույկի մեջ: Այդտեղ երկու երկ են ամփոփված. առաջինը՝ «Կյորեսը», երկրորդը՝ «Եղբայրության ընկուզենիները»:

Գրքույկի թողարկման տվյալներում նշված է. «Հանձնված է արտագրության 1 հունվարի 1936 թ.: Ստորագրված է տպվելու 25 փետրվարի 1936 թ.: Պետհրատի տպարան Երևան, 11 Գնունի 4»: Պետք է որ լույս տեսած լինի նույն թվականի մարտին կամ ամենաուշը՝ ապրիլին: «Կյորենը» և «Եղբայրության ընկուզենիները» գրողի կենդանության օրոք նրա հրատարակած վերջին երկերն են: Գրքույկում՝ «Կյորենի» քնագրի վերջում գրված է 35. VIII, իսկ «Եղբայրության ընկուզենիներ» վերջում՝ 35. VII: Իրոք, «Կյորեն» ու «Եղբայրության ընկուզենիները» Բակունցը գրել է միաժամանակ, հիմնականում 1935 թ. ամռանը, Գորիսում: «Կյորենը» նախապես կոչվել է «Գորիս և Կյորեն», ապա հեղինակը գերադասելի է համարել «Կյորեն» վերնագիրը, հավանաբար, շեշտելու համար երկի բովանդակության մեջ էականը և հայտնելու իր համակրանքը գյուղական Կյորենի նկատմամբ:

1955 թ. «Կյորենը» տեղ գտավ (փոքր կրճատումներով) գրողի Երկերի միհատորույկի մեջ, 1964 թ. 55-ի քնագիրը տպվեց Երկերի երկհատորյակի 2-րդ հատորում:

Այժմ տպագրված է 1936 թ. առաջին հրատարակության լրիվ քնագիրը, որտեղ արված են անհրաժեշտ ուղղումներ:

## Ուղղումներ

Հեղինակային ժողովրդաբարբառային ձևերը պահպանել ենք բացի զցել բայի խոսակցական ֆցել ուղղագրական ձևի մի շարք գործածություններից հեղինակային խոսքում (էջ 427՝ ֆցոզ, էջեր 465, 469, 474՝ ֆցում, բուրբը դարձրել ենք զցոզ, զցում): Հերոսների խոսքում (ինչպես և ներկա հատորի այլ քնագրերում) պահպանել ենք՝ էջ 459՝ ֆցելու ձևը, հեղինակային ոճավորված խոսքում էջ 480՝ զազեթ ֆցելու-ն:

Քնագրում միակերպ ենք դարձրել ուղղագրական մի շարք անմիօրինակություններ. օրինակ, առկա է Քյալլա-ծառուր և Քյալլա Մառուր, Խաջա-Մակիչ և Խաջա Մակիչ, Խաջա-Բաղիր և Խաջա Բաղիր, հաստ Ներսես քեյ և Հաստ Ներսես քեյ, Հայ կանանց Միություն և Հայ կանանց Միություն: Այս անունները «Կյորենի» քնագրում միակերպել ենք. թողնելով հետևյալ ձևերը՝ Քյալլա Մառուր, Խաջա Մակիչ, Խաջա Բաղիր («Կարմրաքարում» Խաջա Հիրան անվան մեջ Խաջա-ն ամենուրեք մեծատառ է, այդպես էլ պահպանված է, մինչդեռ «Կյորենում» Բաղիր-ի Խաջա-ն ամենուրեք փոքրատառ է. այդպես էլ պահպանել ենք), Հաստ Ներսես քեյ, Հայ կանանց միություն:

Այլ դեպքերում անմիօրինակությունները նույնությամբ թողել ենք. օրինակ, առկա է պարոն Արշակ և բարբառակերպ՝ պարոն Արշակ. երկու ձևն էլ պահպանված է: Կամ՝ ունենք Մեյիֆ Հյուսիսիցանց և նույն անձի կրճատ անունը հաջի Հուսեյին ձևով («Եռաշատուր Արովյան» վեպի քնագրում կա Հուսեյն ձևը). «Կյորենում» երկու ձևերն էլ թողեցինք, քանի որ հաջի Հուսեյին-ը կարող է հեղինակային ոճավորման արդյունք լինել:

«Կյորենի» սկզբում առկա է Մատրեոս անվան Մարեոս ձևը, ապա վերջերում սկսում է գերակշռել Մատրեոս-ը, որն անընտել ձև է (Հ. Անասյանի «Հայոց անձնանունների բառարանում» Մատրեոս-ի տարբերակների մեջ չի հիշված), ուստի որոշեցինք երկու տարբերակներից պահպանել Մարեոս-ը, որ և ընդունված է եղել արևելահայոց մեջ:

էջ 412, տող 15. ԵՆ-ի քնագրում՝ ընկուզի— ուղղված է ըստ հեղինակի կողմից եռյեթ բառի այլ գործածության (այլ երկերում)՝ ընկուզի:

էջ 416, տող 8. ԵԸ-ի բնագրում՝ ուրիշ ազգից էր— ուղղել ենք ըստ հատվածի բովանդակության՝ ուրիշ ազգից է:

էջ 416, տողեր 24—25. ԵԸ-ի բնագրում՝ մի ծերունիին նայում էր— ուղղված է՝ մի ծերունի նայում էր:

էջ 420, տող 32. ԵԸ-ի բնագրում՝ գտնում գաշյունով— ուղղված է՝ գտնում-գաշյունով:

էջ 423, տող 30. ԵԸ-ի բնագրում՝ դյուխանդարները— համապատասխանացրել ենք նույն բառի նախորդ գործածությանը (էջ 420, տող 8)՝ դյուխանդարները:

էջ 427, տող 15. ԵԸ-ի բնագրում՝ բեյի միջև— ուղղել ենք ըստ հատվածի բովանդակության՝ բեյերի միջև:

էջ 427, տող 17. ԵԸ-ի բնագրում՝ մի հատն էր տիկին Օլինկան— ուղղված է՝ մի հատ էր տիկին Օլինկան:

էջ 439, տող 7. ԵԸ-ի բնագրում՝ ձեռքի մարդկանց— 1922 թ. ուղղագրությանը՝ ձեռքի մարդկանց է, որ կարդացվում է գրվածի պես, 1940-ի ուղղագրությանը՝ ձեռքի մարդկանց է՝ ձեռքի, ուստի ուղղեցինք՝ ձեռքի մարդկանց:

էջ 439, տողեր 9—10. ԵԸ-ի բնագրում՝ սխալի դավարում— ուղղված է՝ նիսխալի դավարում:

էջ 446, տողեր 25—26. ԵԸ-ի բնագրում՝ Արդեն միս, հաց և կանաչի է առել Մառուսյան, ս տ ր ա ժ ն ի Վ ս ս ի ի կ ի ն ր, Պ ա շ ի ս տ ի Ա վ ա ն Ե ս ր...— ուղղված է՝ Արդեն միս, հաց և կանաչի են առել Մառուսյան՝ ս տ ր ա ժ ն ի Վ ս ս ի ի կ ի ն ր, Պ ա շ ի ս տ ի Ա վ ա ն Ե ս ր...:

էջ 451, տող 32. ԵԸ-ի բնագրում՝ հազիվ էր երևում— ուղղել ենք ըստ բովանդակության՝ հազիվ է երևում:

էջ 453, տող 1. ԵԸ-ի բնագրում՝ նրանցից— ուղղված է ըստ ամբողջ նախադասության կառուցվածքի՝ նրանցից:

էջ 453, տողեր 17—18. ԵԸ-ի բնագրում՝ գիշերը աչքերս եմ փակելի— ուղղված է ըստ բովանդակության՝ գիշերը աչքերս չեմ փակելի:

էջ 462, տող 8. ԵԸ-ի բնագրում՝ քար է կրում— ուղղված է ըստ բովանդակության՝ քար էր կրում:

էջ 463, տողեր 22—23. ԵԸ-ի բնագրում՝ մակարները հրոսախումբ էին, որ տիրում էր...— ուղղված է՝ մակարները հրոսախումբ էին, որ տիրում էին:

էջ 466, տողեր 7—15. ԵԸ-ի բնագրում այս հատվածը երեք նախադասությունից է բաղկացած՝ անշատված վերջակետերով, հետևյալ բառերից՝ հետո՝ ...մտաւ շունեին: ...փաստը: ...դումայի շենքը: Հատվածի բովանդակությունը ցույց է տալիս, որ ամբողջը մեկ բազմաբարդ նախադասություն է, որտեղ զլխավոր նախադասություն է հետևյալը (ընդգծել ենք)՝ «Կյուրեցիք, եթե ցույց էին տալիս մեկի տան տեղը, ասում էին»: Այնուհետև թվարկվում է, թե ինչ էին ասում (անվանում)՝ Սիմոն բեյի տան գլուխը, Միքաիլի բումբը և Գամելի փաստը: Հավանաբար նախադասությունը շատ ծավալուն է թվացել, և խմբագիրը կամ սրբագրիչը վերջակետերով երեք մասի են բաժանել: Վերոհիշյալ երեք վերջակետերից երկուսը դարձրինք ստորակետ՝ վերականգնելով ամբողջական նախադասությունը:

էջ 470, տող 31. ԵԸ-ի բնագրում՝ կալերը ջրաղացների մոտ էր— ուղղված է՝ կալերը ջրաղացների մոտ էին:

Գրական լիզվի կանոնին ներհակ բոլոր հեղինակային ձևերը, այնպիսիք, որոնք ստեղծված են ընդհանուր կարելի է, որ հեղինակային են (և ոչ խմբագրի, սրբագրիչի արածը կամ գրաշարի վրիպակը), թողնված են նույնությամբ: Ինչպես, օրինակ. էջեր 448, 455 ունի, էջ 457 զեպցել էր իմանա (փոխանակ՝ իմանալու), էջ 458՝ հարկավոր չի ներս մտնել (փոխանակ՝ հարկավոր չէ), էջ 478՝ շտապում էր իմանա (փոխանակ՝ իմանալու) և այլն: Սահակ Սեբգեիչ անվանածը (էջ 454) նույնպես պահպանել ենք (թեև ճիշտ կլինե՞ր՝ Սեբգեիչը):

Պահպանված ենք նաև Լյուսմիլլա կոչված և Սարգս Կառպարովեա անունների այժմ հնացած ուղղագրությունը՝ զույգ 1 և Ե: Չուղղեցինք, բանի որ չի կարելի լիովին բացանել այդ անուններում հիշյալ զույգ տառերի անկայության ոճական որոշ արժեքը:

Բնագրում մեկ-երկու նախադասություն, թերևս, ինչ-ինչ թերիներ ունեն, բայց պահպանել ենք անխախտ: Օրինակ. էջ 464, տողեր 20—24. Լեչպես շատա ներսս քիչը բառերով սկսվող նախադասությունը որոշ անկանոնություն ունի. թողել ենք նույնությամբ:

Պահպանված է նաև հետևյալը.

էջ 418, տող 15. Ե՛լ-ի բնագրում՝ նավթ ծախող Գեորգը— նախքան այդ (էջ 417) և դրանից հետո (էջ 432 ու հետո) նույն անձը կոչված է նավթավաճառ Գեորգի, Գեորգի Մինայիչ. ճիշտ համարեցինք թողնել այս անմիօրինակությունը, միայն մի տեղ (էջ 437, տող 18) բնագրի Գյուրգին դարձրել ենք մյուսների նման՝ Գեորգի:

էջ 424, տող 30, էջ 442, տող 34. Ե՛լ-ի բնագրում՝ մեծամեծերը— ճիշտ կլինե՞ր՝ մեծամեծները, բայց պահպանել ենք բնագրինը:

էջ 432, տող 21. Ե՛լ-ի բնագրում՝ բեզոն— ավելի ճիշտն է բեզոն, բայց պահպանեցինք բնագրինը:

էջ 474, տողեր 30—31. Ե՛լ-ի բնագրում՝ նրան պահում էր շներ, որ ամենից մտափկն էր— այսօր ճիշտ կլինե՞ր՝ որ ամենից մտափկն էր ձկը, բայց գերադասեցինք շուղղել:

էջ 485, տող 6. Ե՛լ-ի բնագրում՝ Այզման էր զանազան նրանց լեզուները— մոզավորային խոսքից եկող այսպիսի անհամաձայնությունը (բայը եզակի— ենթական հոգնակի), որը սակավ զեպցերում չէ, որ հանդիպում է Բակունցի երկերում, այսպեղ և շուղղեցինք (տե՛ս նաև մյուս երկերի Մանոթագրություններում ուղղումների բաժինները):

**ՄՍԵՆՍԱԴՐՈՐԾՄԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ**

«Կյորեռը» գրելու միտքը Ա. Բակունցին, հավանաբար, տվել է Ծ. Չարենցը, որը փրագրել էր Հայաստանի տարբեր մասերի վերաբերյալ բնութագրական երկեր ունենալ: Այդ նպատակով նա առավել շնորհալի հեղինակներին խրախուսել է իրենց ծննդավայրի մասին գրելու: Ինքը տվել էր առաջին օրինակը՝ գրելով «Երկիր նախին»: Այդպես ապարեզ եկան՝ Վ. Թոթովենցի «Կյանքը հին Հոռովմեական ճանապարհի վրա», Գ. Մահարու «Մանկություն և պատանեկություն», «Երիտասարդության սեմին» երկերը, նաև «Այրվող այգեստաններ» վեպը, Մ. Արմենի «Հեղեար աղբյուրը»: Այդ շարքի երկերից է Ա. Բակունցի «Կյորեռը»:

Ինչպես Բակունցի գրեթե բոլոր երկերը, «Կյորեռը» նույնպես հեղինակը ստեղծագործել է, այսպես առած, իրականից: Գործը իր տարբեր թաղերով մեկ բնակավայր է

եղել, Բակունցն իր երկում այն բաժանել է իրար հակադիր երկու մասերի՝ Կյորես և Գորիս:

Գրողը Կյորես է անվանում Գորիսի Շենը, այսինքն՝ փոքր բլուրների վրա, երեք ձառակներում, մեծ մասամբ այրերի մէջ կառուցված հինավուրց գյուղը, որը այս երկը գրելու ժամանակ դեռ կար, իր վերջին ժամանակներն էր ապրում: Գորիս անունը գրողը տալիս է հարթավայրի վրայի նորակառույց գյուղաքաղաքին:

«Կյորեսը» գրելիս՝ Բակունցն անընդհատ հարցուփորձ անելիս է եղել Գորիսի Շենի՝ Կյորեսի, առավել տարեց բնակիչներին. նրանցից են առնված փոքրիկ պատմութունների, Շենի նշանավոր մարդկանց մականունների, բնութագրումների մի մասը, մյուս մասը Բակունցն ինքն է հիշել. մանկության և պատանեկության տարիներին ու հետո տարբեր առիթներով նա լսել է այդ անձանց մասին:

Մենք մի շարք անգամ եղել ենք Զանգեզուրում և հատկապէս Գորիսում՝ Բակունցի նախակերպարների հետ կապված հարցեր պարզելու նպատակով: 1961 թ. «Կյորեսի» կապակցութեամբ զրուցել ենք շատ գորիսեցիների հետ: Երիտասարդներն ու միջին տարիքի գորիսեցիները շփոթեին «Կյորես» երկում հիշատակված անուններով մարդկանց: Իսկ որոշ տարեց բնիկ գորիսեցիներ շատերին էին հիշում:

Պարզվեց, որ «Կյորեսում» հիշված գրեթե բոլոր անձինք իրական մարդիկ են եղել՝ մեծ մասամբ միեւնույն կամ փոքր-ինչ այլ անուններով: Իրական են, օրինակ, Գյուրջի Օրոն, Ցուլ Օհանը, Ղաթրինի Աղալոն, ժամհար Պարսեղը, Դարզի Վաները, Մալակրովիկ Նիկոլայը, բեյբը (Մաթևոս, Խորշուդ և այլն), Կիզակով Իսակը և ուրիշներ:

Բնիկ կյորեսեցի, ութսունչորսամյա (1961-ին) Դանիել ամին (Դանիել Ղուկասյան) հիշում էր «բյասիբ», բայց բաշ կյորեսեցի Գյուրջի Օրու և հաղթանդամ Քյալա (ցուլ) Օհանի մասին Շենում պատմվող մի քանի ավանդութուններ: Դրանք նա լսել էր մեծերից իր մանկության օրերին: Մի ուրիշ բնիկ կյորեսեցի՝ Աթանաս Սարգսյանը, պարզվեց, որ Քյալա Օհանի ծոռն է իր մոր կողմից: «Կյորեսում» Գյուրջի Օրու և Ցուլ Օհանի մասին պատմվածքները հիշյալ ավանդութուններից են:

Այս երկու կյորեսեցիների հետ, նաև Վարդյա Մինասյանի ուղեկցութեամբ, մենք մի ամբողջ ցերեկ շրջել ենք ավերված Շենում. երկու տարեցները ցույց տվեցին «Կյորես» վիպակում հիշվող նշանավոր կյորեսեցիների, այդ թվում Ցուլ Օհանի և Գյուրջի Օրու նվերակ տները: Ցույց տվեցին նաև Շենի թաղամասերը, շրջապատի բնութունը՝ Արեգունին կամ Գյունեյ թաղը, Ղաթրինի ձորը, Միջին Մահալը, Շոր աղբյուրը, (այլին բերձը (որի բարձունքից, ըստ «Կյորեսի», իրեն ցած է նետել Սմակի Խաչին, բղավելով՝ քանդվեա դու, Գորիս): Նույնությամբ մնում են նաև (աստի խուֆ կոչվող ժայռը, Շենը Գորիսից բաժանող ձորն ու գետը (Վարարակն): Իրոք կա Մատուփի ձոր, եղել է թագավորական ռուսաց դպրոցը (շկոլ)՝ երկդասյան, որոնք նույնպես հիշվում են «Կյորեսում»: Երկում հիշվող Շեարփ ախաղը այն հարթավայրն է, որտեղ կառուցվել է նոր Գորիսը:

Պահպանված է «Կյորեսում» նկարագրված երեք ճանապարհը, որն սկսվում է Շենից, գետի աջ ափով՝ շրաղացների մոտով ձորից բարձրանում է ու հասնում այն տափարակը, որտեղ առաջ Գորիսի շուկան է եղել: Շուկան չկա (տեղափոխված է այլ վայր), բայց պահպանված են (Կարապետյան փողոցի սկզբում) հին շուկայի որոշ խանութներ: Մնում է Դավթարխանայի շենքը (այժմ հյուրանոց), Սասուն գրատան զբաղեցրած շինությունը

(նախկին գրատան սենյակների մի մասը տրված է դեղատանը), կա հայոց եկեղեցին և այլն: Մի խոսքով, «Կյորեսում» կատարված տեղապատկերումների զգալի մասի «բը-նորդները» դեռևս պահպանվում են:

Սրբանմ «Կյորեսում» որոշ նկարագրութուններ կարող են կասկած առաջացնել իրենց իսկութիան նկատմամբ. օրինակ, ըստ Բակունցի պատկերման «ժորի գետը քանդում էր Կյորեսի կողմը», մինչդեռ այժմ գետը հոսում է ոչ թե Շենի մոտով, այլ քաղաքի բարձրութիան տակով: «Կյորես» վիպակում գետի հոսքի բնույթը (Շենի կողմով) և հին, նահապետական, գյուղական Կյորեսի տակը ջրի քանդելը էական նշանակություն ունի. գրողն ուզում է ասել, որ ոչ միայն ժամանակը, պատմության անողոր ընթացքն են ոչընչացնում հին գյուղական Կյորեսը՝ հօգուտ քաղցրենիական Գորիսի, այլ որ դրան մասնակցում է անգամ բնությունը՝ «հանձին» գետի: Պարզվում է, որ այս դեպքում ևս Բակունցը իրողութունն է նկարագրել. նախկինում, գետը իրոք հոսելիս է եղել Շենի կողմով՝ աստիճանաբար քանդելով նրա տակը, վնասելով ափամերձ տներին: Ձախակողմյան (Շենի) ափի քայքայման հետևանքով է, որ Շենից քիչ ներքև գտնվող ձախափնյա ժայռերը փլվել են գետի մեջ, մասամբ փակել ջրի ընթացքը: Դրանից սկսել է ավազ կուտակվել գետի ձախ ափին՝ Շենի կողմում, և մասամբ փոխվել է ջրի հունը, գետը տեղաշարժվել է դեպի աջ՝ քաղաքի կողմը:

«Կյորեսում» տեղ գտած տեղանուններից միայն մի քանիսն էին անհայտ տարեց կյորեսեցիներին. օրինակ, նրանցից որևէ մեկը չհիշեց Հյուսիսարի ձորը, որը ոչ միայն հիշվում է «Կյորեսում», այլև այդ վերնագրով ամբողջ ակնարկ ունի գրողը (տե՛ս այս հրատ. 1-ին հատորում): Ցույց տվեցին Քյումբաթի ձոր և բոլորովին ոչ այն տեղում, որտեղ Բակունցն է «տեղագրել» հին Շենի տվյալ թաղամասը: Այն թաղը, որը գրողը անվանում է Հյուսիսարի ձոր, տարեց կյորեսեցիները կոչում էին Շախաբաթի ձոր, նաև՝ Փյալա Օնանի ձոր. որին կից է Տոռոզի ձորը՝ Շենի վերջին թաղամասը: Մեզ թրվում է, որ Հյուսիսարի ձոր անունը Բակունցը չի հնարել, հավանաբար ինչ-որ պատճառով մոռացվել է այն (այս մասին տե՛ս նաև Ա. Բակունցի Երկերի սույն հրատ. 1-ին հատորը, էջ 661—662):

Չի բացառվում նաև, որ որոշ տեղանուններ ու անձնանուններ Բակունցը փոխել կամ «մշակել» է: Օրինակ, «Կյորեսում» խոսք կա Դրնգանի ձորի մասին. այն ևս այնպես է պատկերված, կարծես Շենին է մոտ գտնվում: Մեզ ասացին, որ այն վայրը, որ նկարագրել է Բակունցը իբրև Դրնգանի ձոր, իրականում կոչվել է Դինգանի ձոր, իսկ Շենից բավական հեռու ցույց տվեցին Դրնգորնգանի ձոր: Հավանաբար, գրողը որոշ «շտկում» է մտքով Շենին մոտ ձորի անվան մեջ: Կամ Փյալա այլալեզու մականունը գրողը թարգմանել է հայերեն, և Կյորեսի նշանավոր Փյալա Օհանը Բակունցի «Կյորեսում» հանդես է գալիս Ցուլ Օհան անունով:

Ընդհանրապես, «Կյորեսը» մի բացառիկ երկ է իր իրապատում պատկերներով և այն քանի դասական օրինակը, թե ինչպես կարելի է իրական մարդկանց, վայրերի հաճախ գրեթե արձանագրական թվարկումների մեջ արվեստի ոգի դնել:

«Կյորեսում», անշուշտ, գրողը նաև մի քանի դեպքում «միացյալ» կամ հավաքական կերպարներ է ստեղծել. այսինքն՝ իր գրական հերոսի մեջ նկատի է ունեցել երկու և ավելի իրական մարդկանց հատկանիշներ և որևէ անունով է կնքել նրան: Օրինակ, այդպիսի կերպար է Արա ապերը: Այս անունով և նույն բնույթի է նաև «Եզրայրութիան» ընկուզե-

ներհերի» գլխավոր կերպարը (տե՛ս Երկերի այս հրատ. 2-րդ հատորում)։ Այս կերպարի մեջ որոշ գծեր կան Բակունցի՝ մոր կողմից պապ Հարություն Խուրշուդյանից, բայց և կան գծեր, որոնք հատուկ չեն եղել պապին։ Աթա ապեր կա նաև «Ջանգեզուր» բեմագրում, որ բոլորովին այլ բնույթ է ստացել՝ հարմարեցված բեմագրի բովանդակությանը։ «Կյորեսում» ներկայացված երգ հնարող Անդրիին բնութագրելիս՝ գրողն, ըստ երեվույթին, զգալապես նկատի է առել Երիշենի ջրաղացպան Օրդյան Անդրիին (տե՛ս «Կարմրաբար» վեպի ծանոթագրությունները)։

Որպես փաստականի գեղարվեստական մշակման նմուշ կարելի է բերել երեխաների «մահակովի» պատկերումը «Կյորեսում»։ Կյորես գյուղի ցնցոտիավոր, ոտաբորիկ երեխաները գետի մոտ կռիվներ են անում Գորիս քաղաքի «պալատնավորների» զավակների՝ «ռուսաց շվու» գնացողների կամ դիմնազիստների հետ։ Պարզվում է, որ այդպիսի կռիվներ, իրոք, եղել են, նրանց մասնակիցներից մինչև 1960-ական թվականները կարելի էր հանդիպել Գորիսում։ Սակայն տարեց ականատեսները պատմում էին, որ կռիվներ տեղի են ունեցել նաև բուն Շենի (Կյորեսի) առանձին թաղերի երեխաների միջև։ Այս վերջինի մասին Բակունցը լուրջյուն է պահպանում, քանի որ «Կյորեսի» գլխավոր մտահղացումն արտահայտելու գործին այդպիսի՝ միջկյորեսյան կռիվների նկարագրությունը կխանգարեր։ Հեղինակին պետք էր ամեն կերպ սրել հին գյուղական Կյորեսի և նոր քաղաքենիական Գորիսի հակադրությունը, համակրանք առաջացնել Կյորեսի նկատմամբ և ցավ՝ նրա մահացման համար։ Պատկերելով Կյորեսի և Գորիսի երեխաների կռիվները, որոնք տեղի են ունեցել Բակունցի մանկության օրերին, և լռելով Կյորեսի միջթաղային կռիվների մասին, գրողը վարպետորեն խորացրել է վերոհիշյալ հակադրությունը։

«Կյորեսում» թեև կան պատմական հետադարձ հայացքներ, բայց ամբողջական նըկարագրությունը վերաբերում է 1900—1910-ական թվականներին, երբ հինավուրց Շենը դեռևս պահպանվում էր որպես գյուղական հատված, բայց շատ կողմերով կախման մեջ էր նորակառույց «շհարից»՝ քաղաքից, որը Արցախ-Սյունիք ընդարձակ շրջանում վաճառաշատ երկրորդ քաղաքն էր դառնում Շուշիից հետո։

Շենի գյուղացիները քաղաքից կախման մեջ էին ոչ միայն վարչական տեսակետից (վարչական բոլոր հիմնարկները քաղաքում էին), այլև տնտեսական, քանի որ անհրաժեշտ ապրանքները գնում էին քաղաքի «մաղազաններից» (խանութներից), նրանցից սմանք աշխատում էին քաղաքի բեյերի և վաճառականների մոտ, պարտք էին անում քաղաքի վաշխառուներից ու վաճառականներից և այլն։

Շենը քայքայվում էր։ Գյուղական ծանր աշխատանքից շատերն էին փախչում հեռավոր քաղաքներ՝ Բաբու, Սամարղանդ և Միշին Ասիայի այլ բնակավայրեր, շատերն էլ փոխադրվում էին Գորիսի «շհարը», փորձում զբաղվել առևտրով։ Այս վերջիններից էր Բակունցի հոր՝ Ստեփան Քևոսյանի ընտանիքը, որը 1895 թ. Շենից փոխադրվել է քաղաք, և ծագումով ու արմատներով գյուղացի Ստեփանը բախտը փորձել է առևտրի ու նավթարդյունահանման (Բաքվում) բնագավառում ու ձախողվել։ Ա. Բակունցը ծնվել է քաղաքում, ընտանիքի՝ այդտեղ հաստատվելուց չորս տարի անց, բայց ինչպես վկայում են գրողի զանգեզուրյան բոլոր երկերը, այդ թվում «Կյորեսը», նրան հարազատ էր մընտավ գյուղը, ավյալ դեպքում իր պապերի բնակավայր Շենը, պատկերավոր ասած՝ Ա. Բակունցի սիրտը մնացել էր Շենում, թեև ինքը քաղաքում էր ծնվել ու բնակվել։

Ըստ էության, Գորիսի իրական Շենը և քաղաքը գրողի համար մի տեսակ նախակերպարներ են եղել, որոնք նրա գրչի տակ գրական կերպարներ են դարձել՝ Կյորես և

Գորիս անուններով. գյուղական Շենը կոչվել է գյուղական արտասանությանը, ինչպես Բակունցն է ասում՝ կյորեսերեն կամ կյորեսի լեզվով (սԱլթան գեղեցիկ և հնչել էր կյորեսի լեզուն), իսկ քաղաքը նույն անվան գրական տարբերակով Այստեղից Բակունցը սկսել է գործածել նաև կյորեսեցի, որ նշանակում է Շենի գյուղացի և զօրիսեցի. որ նշանակում է քաղաքի բնակիչ:

Եվ այդպես, իրականում լինելով Գորիսի բնակիչ, Բակունցը շերմ ձոն է գրել կյորեսին ու կյորեսցիներին ուղղված, մինչդեռ Գորիսը երգիծված է հաճախ խայթածաղրով ու արհամարհանքով:

«Կյորես» երկը կառուցված է Բակունցի գրելակերպի դրսևորումներից մեկը հանդիսացող հակադրության եղանակով: Միմյանց, որպես ընդհանրացած կերպարներ հակադրված են, ինչպես ասվեց, նահապետական կյորեսը և նոր քաղքենիական Գորիսը, այսինքն՝ դարավոր ավանդական հայոց գյուղը (հայոց Մթնաձորը) և նոր առևտրաշատ, զարգացող քաղաքը:

Ամենից առաջ դա բարոյական հակադրություն է. կյորեսը ներկայացված է որպես աշխատավորական միջնաբերդ, երբեմն դուրսազնական գծերով ու դուրսազուններով, որպես արդարության ու արդարների խորհրդանիշ, որպես ոչ նյութապաշտ, հաճախ անշահ, ռոմանտիկ մարդկանց բնակավայր, նաև որպես ազգային ավանդների, հատկապես ազգային լեզվի պահպան: Գորիսը բնութագրվում է որպես նյութապաշտության, շահամոլության կենտրոն, «հոգևոր շահ շունեցող» բեյբերի, դատարկախոս «պրոգրեսիստների», խաբեբա ու դրամաշորթ վաճառականների, մինչև ուղն ու ծուծը քաղքենի Օլիվկաների ու կյուլմիլա կլովնաների բնակավայր, այնպիսի մարդկանց քաղաք, որոնց բարոյական դիմագիծը կորել է ու դրա հետ նաև՝ ազգային դիմագիծը. այդ նրանք են, որոնք հայերենը համարում են գյուղացու լեզու և աշխատում են շխտսել նրանով ու իրար հայերեն չկոչել, այլ՝ Տիկրան Պետոյիչ կամ Սաբրա Կաթաբառովնա, նրանց երեխաներն էին, որ չէին հաճախում հայկական «խեղճ» ուսումնարան, այլ՝ գնում էին թագավորական ուսուցչ շիու կամ գիմնազիս:

Ընդհանրապես, Բակունցը ազգային արժեքները գնահատելիս միշտ ելնում էր բարոյական հիմունքից. իր ստեղծագործության մեջ նա մերժում է անբարոյականը, որի մի արտահայտությունն է համարում հայերի ինքնապազգայնացումը ու առհասարակ ամեն ժողովրդի ինքնապազգայնացում: «Կյորեսում» որպես խարդախանալու, քաղքենիանալու, նյութապաշտ դառնալու մի դրսևորում է ներկայացված ապազգայնացումը:

Ուշագրավ է, որ 1910-ական թվականների իրական Գորիսում այն աստիճանի քաղքենիություն և ապազգայնացում չի եղել, ինչպես նկարագրված է «Կյորեսում»: Պարզ է, հեղինակը իր մտահոլացումը մարմնավորելու համար առհասարակ հայոց որոշ մասի մեջ եղած քաղքենիանալու և ինքնապազգայնացման հակումը կենտրոնացրել է իր երկրի «բացասական կերպարի»՝ Գորիս քաղաքի մեջ, նրան հակադրելով դրական կերպարը՝ զուտ հայկական կյորեսը:

Ի դեպ, 1960-ական թվականներին, երբ մենք հանդիպումներ ունեցանք մի շարք տարից գորիսեցիների հետ, նրանք երբեմն գանգատվում էին, որ Բակունցը տեղ-տեղ սխալ բաներ է գրել իրենց քաղաքի և նրա բնակիչների մասին: Անշուշտ, հաշվի չէին առնում, որ «Կյորեսը» թեև իրականից նկարված շրջապատկեր է, բայց և իսկական գեղարվեստական ստեղծագործություն է, և որ գրող-արվեստագետը Գորիս և կյորես գրա-

կան կերպարներ է ստեղծել՝ պարզապես օգտագործելով իրական շատ անձանց հատկանիշներ ու փաստեր:

«Կյորենը» Բակունցի մյուս երկերի նման հալկական ազգայինի, յուրահատուկի խըտացում է, այդ տեսակետից գրողի լավագույն երկերից մեկը: Ինչպես այլ դեպքերում, այստեղ ևս գրողը խիստ բնորոշ զանգեզուրյանը գեղարվեստական ընդհանրացմամբ հասցնում է իսկական համազգային արվեստի բարձրության: Ապա նաև՝ այս երկի մեջ Բակունցի արած հակադրությունը վեր է բարձրանում նաև նահապետական հայ գյուղի և քաղաքներիական վաճառաշատ քաղաքի հակադրության զուտ ազգային մակարդակից և հասնում ընդհանրապես բարոյականի ու հակաբարոյականի հակադրության համամարդկային մակարդակի: Միայն «Կյորենը» լավ թարգմանություն է կարոտ, քանի որ նրա լեզվի ու ոճի ազգային բնույթը ևս ուժեղ է. պետք է այն նույնարժեք արտահայտություն գտնի այլ լեզուներով կատարվելիք թարգմանությունների մեջ: Առայժմ այդպիսի թարգմանություն չկա:

### Մ ա ճ ո թ ա գ Ր Ո Ւ Ր Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ա Ս Ա Է Ղ Ե Ի Ի Կ Ա Ո Ղ Ա Ն Ա Մ Ա Ր Ե Ն Ե Ի

Էջ 412, տողեր 2—3 O tempora, o mores — լատիներեն է, նշանակում է՝ օ՝ ժամանակներ, օ՝ բարբեր: Հին Հռոմի նշանավոր հոնտոր Մարկոս Տուլիոս Ցիցերոնի խոսքն է, որ նա ասել է Հռոմի սենատում ապստամբ Կատիլինայի դեմ արտասանած իր առաջին ճառի մեջ (սկսվում է այսպես՝ «Վերջապես, մինչև ե՞րբ դու պետք է շարաշահես մեր համբերությունը, Կատիլինա»: Հետագայում և այժմ «Մ, ժամանակներ, օ՝, բարբեր» ասել ու ասում են այն դեպքում, երբ շատ անհատու անարդարություն են նկատում (ուզում են ասել, իբր՝ ժամանակներն ու բարբերը որթան են փոխվել դեպի վատը) կամ՝ ընդհանրապես երբ ուզում են շեշտել ժամանակի բարբերի որևէ բնույթը: Բակունցը իբրև բնաբան բերելով Ցիցերոնի արտահայտությունը՝ ուզում է ընդգծել, որ «Կյորենը» գիրք է բարբերի մասին, որ իր երկում տարբեր ժամանակների ու տարբեր բարբերի բախում է նկարագրված: Ցիցերոնի խոսքին կցելով իր Օ՝ Չանգեզուր, օ՝ Կյորեն տողը՝ լսփածոյի բնույթ է տվել խոսքին (և դա գրողից պահպանված միակ լսփածո կտորն է, թեև նա լսփածո երկեր գրել է):

Էջ 412, տող 22. Ե ն ե — Գորիսի Ե ն եր Հայաստանի հնագույն գյուղերից է եղել, զանգեզուրյան բնորոշ քարանձավային բնակավայր՝ տեղաբաշխված երեք ձորում, բարձուքին՝ անդակաճ իշխանի (մելիթի) բերդը, թաղերից՝ Գյունեյը, Միչին մահլը և այլն (տե՛ս վերը): 1926 թ. վերջերին որոշում է կայացվում գյուղը տեղափոխել գետի մյուս ափը՝ տափարակ (Շհարի տախտ), ուր կառուցվում էր նոր Գորիսը: Եվ աստիճանաբար հնագույն այդ բնակավայրը լքվեց, գարձավ ավերակ: 1950-ական թթ. Ե ն եի լքված քարայրներում բնակություն էին հաստատել Ղարադաղից ներգաղթած հայերը: Այժմ հին Ե ն եի տեղում բնակելի նոր շենքեր են կառուցում (Ե ն եի մասին տե՛ս նաև Իրկերի այս հրատ. 1-ին հատորում՝ «Բրուսի տղան» և «Հյումբաթի ձոր» երկերի ծանոթագրություններում):

Էջ 412, տող 25—էջ 413, տողեր 1—2. որի լեզվից վախենում էր մինչև՝ անզամ Գաֆագուլոյ Մարկոս բեյը— այստեղ և այսուհետև խոսքը վերաբերում է 1910-ական թթ. Գորիսի քաղաքագլուխ Մատթեոս Տեր-Գրիգորյանին, որի դեմ 1915 թ. հուլիսի 26-ին Բակունցը ֆելիետոն է հրատարակել Շուշիի «Փայլակ» թերթում (№ 26)՝ «Մաթվեյ

Մաթիկներ... (Մի անհայտ մարդու անհրաժեշտ կենսագրութեան փորձ)՝ վերնագրով (տե՛ս այս հրատ. 4-րդ հատորում): Այս առթիվ Բակունցը 34 օր բանտ է նստել: Նըշնք նաև, որ 1910 թ. նույն Մատթեոս Տեր-Գրիգորյանը խրախուսել է գորիսեցիներին նամակ գրել ամենայն հայոց կաթողիկոս Մատթեոս Բ-ին խնդրելու Գորիսի ծխական դպրոցի շրջանավարտ Ալեքսանդր Բակունցին ընդունելու էլձմաձնի Գևորգյան ճեմարանը: Ինքը քաղաքագլուխն էլ ստորագրել է այդ խնդրագիրը ուրիշ 151 գորիսեցիների հետ: Այդ խնդրագիրը օգնել է, որ Ա. Բակունցն ընդունվի ճեմարան: Երբ 1915 թ. բանտարկված Բակունցի մայրը՝ Բոխչայուլու, գնում է քաղաքագլուխ Մատթեոս բեյի մոտ խնդրելու ազատել որդուն, զայրացած քաղաքագլուխը հիշեցնում է իր օգնությունը Ալեքսանդրին ճեմարան ընդունելու գործում և հանդիմանում, որ ժայռ լավութեան դիմաց և Բակունցը Ֆելիստոն է գրել, ինչպես և Քուուցիկներ տարածել իր դեմ:

էջ 421, տող 21. Անդրկասպյան երկիր. մինչև Քերի, մինչև Բախար— խոսքը Միշին Ասիային է վերաբերում և նրա քաղաքներին, դեպի ուր արտագաղթում էին զանգեզուրցիները: Քերթին այժմ գտնվում է Քուրթմենական ՍՍՀ-ի կազմում, Բախարը (Բուխարան)՝ Ուզբեկական ՍՍՀ-ի կազմում:

էջ 424, տողեր 12—15. ...առնառարնակ էր... Երանճ առանձին ազգ են՝ այրում են և երկբազում են բարձր ծառերի...— Նման բնութագրեր կան նաև Եվրոսիա՝ 10-րդ մասի վերջում. էջ 480, տողեր 14—16 և «Սարու» պատմվածքում (տե՛ս Երկերի այս հրատ. հ. 1-ում):

էջ 424, տող 34. Փյունդիստան— խոսքը Լալինի և նրա շրջակայքի քրդաբնակ վայրերի մասին է:

էջ 424, տող 35. Բայանդուրից մինչև Շարանան— Եկատի ունի Գորիսի շրջանի Բայանդուր գյուղը (1969-ից՝ Վաղատուր), մյուսը, հավանաբար, Գորիսից հարավ-արևելք ընկած Շոթուլանի գյուղն է, Հազարու գետի ափին (այժմ՝ Ադրբեջանական ՍՍՀ-ում):

էջ 425, տողեր 1—2. Միսիանի մի մասը՝ Ուրտան գետից ձախ— Ուրտանը անցնում է Միսիանի շրջանով՝ սկիզբ առնելով նրա հյուսիսում, հոսում է դեպի հարավ-արևելք, կտրում Գորիսի շրջանը արևմուտքից դեպի արևելք և մտնում Ադրբեջանական ՍՍՀ: Ուրտանից ձախ այստեղ նշանակում է Միսիանի շրջանի հյուսիսարևելյան մասը:

էջ 425, տող 15. Պռոխուրով, Կրամենիկով, Վիտով, Ցինգել— Ուսուստանի հայտնի գործարանատերեր էին Ցինգելը Եվրոսիայում և հիշվում է նաև այլ առիթով (էջ 438), հիշատակվում է նաև Եվարմարաբարում (տե՛ս ծանոթագրությունը):

էջ 425, տող 19. Տրապիզոն— քաղաք Պոնտոսում, Սև ծովի հարավային ափին, աներ հայկական բնակչություն, այժմ Քուրթիայի մեջ է (տե՛ս նաև ԵԳոր՝ Մայրանաս-ի ծանոթագրությունները):

էջ 425, տողեր 27—28. Քավրիզ, Խորասան և Եզգան շահար— Քավրիզը գտնվում է Իրանի հյուսիս-արևմուտքում, Խորասանը Իրանի հյուսիս-արևելյան նահանգն է, Եզգանը կամ Եզգը քաղաք է Կենտրոնական Իրանում:

էջ 430, տողեր 5—6. Օրդուբադի շիրի և բուլի բեռները— Օրդուբադը քաղաք է Նախիջևանի գավառի հարավ-արևելքում (այժմ Նախիջևանի ինքնավ. հանրապ.), որն իր շրջակայքով հայտնի է իրրև մրգառատ վայր:

էջ 430, տող 14. ցախուտցիքի, մեզարցիները, նորուցիք, ձորկիցիները. էջ 474, տող 22. Ցախուտ, Խորու, Մեզար և Ձորիկ գյուղերում— Ցախուտ անունով վայր կա Ցախիկ

վանքից արևելք, մյուս անուններով զանգեզուրյան բնակավայրեր շին հիշատակված. եղև են կամ կան՝ Մեզրա (Մեղրուց 50 կմ հարավ-արևմուտք, Պարսկաստանում), Ջոքե Սյունիքի Բաղք գավառում (Ղափանի շրջան)։

Էջ 430, տողեր 26—33, նաև էջ 473, տողեր 14—17. Գորիսի չրաղացպանի մասին այս երկու դեպքում ասվածը, ինչպես և չրաղացպանի տեսակետները շատ բանով նման են «Կարմրաքարի» չրաղացպանի մասին ասվածին ու նրա տեսակետներին (տե՛ս «Կարմրաքար» վեպն ու ծանոթագրությունները)։

Էջ 431, տող 3. Յուլաբար, նաև էջ 432-ի տողատակի հեղինակային ծանոթագրության մեջ՝ Ցից քառ («Մի ժամանակ շքերթ կանայք ուխտ էին գնում»)։ Գտնվում է Գորիսից հնձորեսկ տանող խճուղու մոտ, Գորիսից 2—3 կմ հեռավորությամբ՝ Շոր ձորում։ Զպետք է շփոթել Գորիսից Սիսիան տանող ճանապարհի մոտ, Գորիսից ոչ հեռու գտնվող մի այլ քարի հետ, որ կոչվում է պորտաքար։

Էջ 431, տողեր 12—13. «Քիւ ՌժԳ... Ես Մելիք էգան կառուցի)...— ՌժԳ Հայոց թվականը համապատասխանում է 1565 փրկչական թվականին։

Էջ 433, տող 6, էջ 450, տողեր 18—19. Գալլաբ Բոզի— այս անունով հերոս կա նաև «Նկեր Գալուստը» պատմվածքում (տե՛ս Երկերի այս հրատ. 2-րդ հատորը)։

Էջ 436, տողեր 8—10. Իրար ետևից ձգվում էին հարյուրավոր խանութներ միայն ռուսական մանուֆակտուրայի— սա շափազանցություն է։ Գորիսի շուկայում միայն գործվածքեղենի հարյուրավոր խանութներ պարզապես չէին կարող տեղավորվել. դեռ խոսվում է նաև այլ ապրանքների բազմաթիվ խանութների մասին։

Էջ 436, տողեր 26—27. այլուրև իսկական Կուրան է— այսպես կոչվել է Կուրանի ալյուրը։ Կուրանը (Հյուսիսային Կովկաս) միշտ հայտնի է եղել իր առաջնակարգ ցորենով։

Էջ 442, տող 12. Բարկուշատ— գետ և բերքառատ հովիտ Զանգեզուրից արևելք ընկած տարածքում. նույնը կոչվում է նաև Գետեր, Գետամեջեր, Արան և այլն (տե՛ս նաև «Կարմրաքարի» ծանոթագրությունները)։

Էջ 442, տող 32. Հավանայի սիգար— Կուրայում և նրա մայրաքաղաք Հավանայում արտադրվող սիգարները հարյի է եղել։

Էջ 442, տող 32. Հոնեոսի գինի— խոսքը վերաբերում է Գերմանիայի Հոնեոս գետի շրջակայքի գինիների (տե՛ս նաև «Լիդեր Արմենիեր»-ի ծանոթագրությունները)։

Էջ 443, տող 22. վենեսի արձո— վիեննայի կոչվող աթոռների տեսակը ճկված փայտերից էին պատրաստում։

Էջ 443, տող 27. Ժորժ Բորմանի շվուլաղները— Ժորժ Բորմանը հրուշակեղենի շվեյցարացի արտադրող էր. ցարական Ռուսաստանում հայտնի էին նրա թխվածքները, անուշեղենը։

Էջ 443, տող 28. Դեզի կանֆետ— անուշեղենի տեսակ, որ հարզի էր Ռուսաստանում։

Էջ 443, տող 30. Դվարձողլու հավա— խոսքը Դվորժակի հավայի մասին է, որ համարվում էր բարձրորակ։

Էջ 444, տողեր 3—4. Սա էլ կասի, որ ջուն է և ջան ազգից է— 12 էջ հետո (էջ 456, տողեր 31—32), կրկնվում է նույնությամբ։

Էջ 451, տողեր 3—4. Բեհական դատավարության Կոնդ օրինացի մեջ գանել — կոնդ օրինաց նշանակում է օրենքների ժողովածու (կոդեքս)։

Էջ 458, տող 6. կանաչ սեղանի շուրջը— այսինքն դրամով թուղթ խաղալիս։

էջ 461, տողեր 13, 16—17, 25, 28, 32—33 և այլուր. Հայաստանցի, Հայաստան, Հայրստանի կողմերից, Հայրստան— Արեւելյան Հայաստանի՝ ցարական Ռուսաստանի իշխանութեան տակ գտնվող շատ վայրերում, այդ թվում Ջանգեզուրում, Հայաստան ասելով հաճախ հասկանում էին Արեւմտահայաստան, հայաստանցի՝ արեւմտահայաստանցի, Հայրստան և հայրստանցի գործիքների գործածած բարբառային ձևերն են (տե՛ս նաև «Կարճրաբարի» ծանոթագրութիւնները):

էջ 461, տող 35. Մշո Սուլբան սուր Կարապետ— այսպես ժողովուրդը անվանում էր Մուշ քաղաքից դեպի հյուսիս-արեւմուտք 30—35 կմ հեռավորութեան վրա գտնվող նշանավոր Ս. Կարապետի կամ Գլակա վանքը, որ մենաստան էր և ուխտատեղի. կոչվում էր նաև Հնգակնյա վանք (տե՛ս նաև «Հովնաթան Մարշի» ծանոթագրութիւնները):

էջ 462, տող 2. Խոյնցի կլլան. զանգեզուրցիները, մասնավորապես Սիսիանի բնիկները XIX դարում իրենց մոտ վերաբնակված խոյնցիներին մինչև այժմ էլ կլլան են անվանում՝ իրենց համար անսովոր եռոյի բարբառի պատճառով:

էջ 463, տող 34. 1897 թվից...— 1895—96 թվականներին Արեւմտյան Հայաստանում տեղի ունեցած հայկական կոտորածների հետևանքով շատ արեւմտահայեր ապաստան գտան Արեւելահայաստանում:

էջ 464, տող 16. «Մշակի» անխափան ընթերցողն էր, նաև էջ 479, տողեր 7—8. «Մշակ» էր ընթերցում— Եկատի ունի Գ. Արծրունու հիմնադրած «Մշակ» լրագիրը (հրատարակվել է 1872—1921 թթ.):

էջ 470, տող 30. Սանդ աղբյուրի ձորը— Սանդ աղբյուր հիշվում է նաև Երիշեն գյուղը պատկերող բակուցեցյան երկերում, օրինակ, «Զմառն մի գիշեր» պատմվածքում: Երիշենը շատ մոտ էր Գորիսին (այժմ գրեթե միացած են) և բնական է, որ այդ աղբյուրը և նրա շրջակայքը մոտ լինեին թե՛ Գորիսին, թե՛ Երիշենին:

էջ 476, տողեր 10—11. Աշխատեցինք ճշմարիտ նկարագրել Ավագիմովների ավագ եզրայր Սաղմունին, նաև էջ 476, տողեր 30—31. Նույն աղբյուրայմը նկարագրեցինք Եփրատ Երեմի առեւտրական կշիռը Գորիս քաղաքում— հեղինակի այս և նման մյուս «հավաստումները» զուտ ոճական (երգիծանքը սաստկացնելու) արժեք ունեն, և Բակուցը իր հերոսներին հաճախ ծաղրանկարային բնույթով է պատկերել՝ անհրաժեշտ շարժազանցումներով:

էջ 479, տող 1 և հետո. Պավլի Քյ Օրբելյան— Օրբելյան հայոց իշխանական տունը հետոց ի վեր հայտնի էր Սյունիքում: Մագումով երբեմն համարում են Տաթև գյուղից:

էջ 479, տող 8. «Նիլզավետգլոյի նաճանգային տեղեկատու»— Նիլզավետպուր Ուտիքի Գանձակ հիւնավորք քաղաքի անունն է՝ դրված երկրամասը Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո. այժմ Ադրբեջանական ՍՍՀ-ում՝ Կիրովաբադ:

էջ 480, տողեր 14—16. Ջանգեզուրի հարավում ապրող այրուների մասին, երանց համարելով վաղմի արեւողիներն մնացողներ— մասնակի կրկնություն է էջ 424, տողեր 12—15-ում ասվածի (տե՛ս նաև համապատասխան ծանոթագրութիւնը):

էջ 480, տողեր 21—22. տիւն Գողթան երկիրն, Երեւակին, Վայոց ձորին, Կապանին և Հարաւեղին մինչև Փայտակարան— Գողթան երկիրը Ազուլիսն է իր շրջակայքով (այժմ Նախիչևանի ԻՍՍՀ-ում), Երեւակը ընդարձակ գավառ էր Մեծ Հայքի Սյունյաց աշխարհում, Արաքսի ձախափնյա տարածքում (այժմ Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմում), Վայոց ձորի տարածքն ընկած է այժմյան Ողեգնաձորի և Աղվաքեկովի շրջաններում, Կապան կոչ-

վում էր Մեծ Հայքի Սյունյաց աշխարհի Ձորք գավառի բերդաքաղաքը՝ Ողջի գետի ափին։ Կապան անվան փոփոխված ձևն է Ղափանը։ Հարանդը գավառ է Ջանգեղուրում, մոտավորապես այժմյան Գորիսի շրջանն է (կոչվել է նաև Ջագեձոր)։ Հարանդ գավառ եղել է նաև Արցախում, այժմյան Լեռնային Ղարաբաղի Ամարասի շրջակայքում։ Փայտափառանը Մեծ Հայքի ամենաարևելյան ընդարձակ աշխարհն է, որ տարածվում էր մինչև Կասպից ծով։

## Կ Ի Ն Ո Ր Ե Մ Ա Գ Ի Ր

### Ձ Ա Ն Գ Ե Ձ Ո Ի Ր

(էջ 489)

Բնագրային աղբյուրն է «ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվում» պահվող մեքենագիրը՝ ֆոնդ 704, ցուցակ 1, գործ 6։ Սա Բակունցի «Ջանգեղուր» բեմագրի (սցենարի) մեծ տարբերակի մեզ ծանոթ միակ պահպանված հեղինակային բնագիրն է։ Դա մեքենագրվածի 3-րդ օրինակն է, 117 էջ, 116-ը բեմագիրն է, 117-րդ էջում՝ փոթր հիշատակարանը։ Ամբողջ մեքենագիրը պատճեննված է կապույտ պատճենիչով։ Վերջում հիշատակարանը մեքենագրված է սևով։

Տևութանը մասի բնագրից առաջ կեն էջից ավելի մաքուր տեղ է պահպանված՝ հավանաբար, ուժիտրական նշումների համար։ Որևէ էջում ուղղումներ ու ճշտումներ չկան, ձեռագրի հետ համեմատված չէ, հեղինակը վրան որևէ աշխատանք չի կատարել։ Շատ են մեքենագրական վրիպակները և առհասարակ վրիպումները, մասնավանդ կենտրոնական բացթողումները, անմիօրինակությունները, ակնհայտ սխալները։

Հեղինակն, ըստ երևույթի, աշխատել է մեքենագիր առաջին օրինակի վրա, թերևս, ուղղումներն անց կացրել նաև երկրորդի մեջ, իսկ երրորդը մնացել է առանց ճշտումների։

«Ջանգեղուրի» այս մեծ բեմագիրը հրատարակվել է երկու անգամ (մասնակի կրճատումներով)։ «Սովետական գրականություն» ամսագրում՝ 1962, № 1 և գրողի նրկերի 1964 թ. հրատարակության 2-րդ հատորում։ Այժմ հրատարակվում է պահպանված մեքենագիր օրինակն ամբողջությամբ։ Ուղղել ենք վրիպումներն ու վրիպակները։ Ստորե բերում ենք ուղղումներից միայն մի քանիսը, որոնք, թերևս, հնարավոր է, վիճելի լինեն։

### Պ Լ Ղ Ղ Ո Վ Ն Ե Ր

էջ 500, տող 3. ՄՕ-ի բնագրում՝ Դառն անցքից ( ) կանչում է— փակագծում հավանաբար պետք է ավելացվեր բանտային դռան անցքի ոտներին անունը, որ այս 3-րդ մեքենագիր օրինակում չի լրացված։ Ավելացրել ենք՝ ГЛАЗОК։

էջ 513, տողեր 4—5. ՄՕ-ի բնագրում՝ երգի լսվում է— ուղղել ենք ըստ բովանդակության՝ երգի հետ լսվում է։

էջ 513, տող 32. ՄՕ-ի բնագրում՝ դուռն ազմուկով բացվում և ներս են մտնում— ուղղել ենք՝ դուռն ազմուկով բացվում է և ներս են մտնում:

էջ 517, տող 7. ՄՕ-ի բնագրում սխալմամբ նշված է 7, իբր 7-րդ բաժին, բայց 10-րդ բաժինն է (առաջին մասի). ուղղել ենք՝ 10:

էջ 524, տող 10. ՄՕ-ի բնագրում՝ մեկը բալարվեց— ուղղել ենք ըստ բովանդակութեան՝ մեկը բզակեց:

էջ 531, տող 22. ՄՕ-ի բնագրում՝ Տղան հանկարծակի եկավ— ուղղել ենք ըստ բովանդակութեան՝ Տղան հանկարծակիի եկավ:

էջ 540, տող 8. ՄՕ-ի բնագրում՝ Մարին— ուղղել ենք՝ Զիֆին:

էջ 543, տող 18. ՄՕ-ի բնագրում չի նշված երրորդ մասի, 10-րդ բաժնի համարը, նշել ենք՝ 10:

էջ 546, տող 32. ՄՕ-ի բնագրում՝ Զիերը փաշում են դառը և փառտ կածանով— ուղղված է՝ Զիերը փաշում են սարը՝ փառտ կածանով:

էջ 553, տող 11. ՄՕ-ի բնագրում՝ ցրվում է մի ժայռ— ուղղել ենք ըստ բովանդակութեան՝ ցցվում է մի ժայռ:

էջ 573, տող 16. ՄՕ-ի բնագրում՝ Փրագի— ուղղել ենք՝ ճրագի:

էջ 581, տող 26. ՄՕ-ի բնագրում՝ ձիավորներին— ուղղել ենք ըստ բովանդակութեան՝ ձիավորները:

էջ 584, տող 21. ՄՕ-ի բնագրում՝ իրենց— ուղղել ենք ըստ բովանդակութեան՝ իրենք:

Այստեղ ևս զցել բայը գրված է ք-ով, երբեմն՝ գ-ով. դարձյալ՝ հեղինակային խոսքում դարձրել ենք զցել, հերոսների լեզվում պահպանել ենք ք-ով ձևերը: Կա և՛ շաղաքատեր, և՛ ջրաղաքատեր, ավելի շատ առաջինը. ջրաղաքատեր ձևերը դարձրինք ջրաղաքատեր: Գործածված են և՛ տանուտերություն, և՛ տանուտիրություն ձևերը, ավելի շատ առաջինը. տանուտիրություն-ը դարձրինք տանուտերություն:

Նույնութեամբ թողել ենք այն ամենը, ինչ վրիպակ կամ վրիպում չէ, այլ հեղինակային գրելակերպ կամ թեկուզ անճշտություն, բայց հեղինակի այլ երկերի մեջ ևս հանդիպող: Օրինակ, քերականական թվի անհամաձայնությունները, ինչպես՝ լսվում է ոտնաձայներ (էջ 499), փեշերը ոտներին փաթարվեց (էջ 531), ձիերի մի մասը գերի մեացին (էջ 560), իրերը, որի... (էջ 541) և այլն:

Ամենուրեք գործածված են պարույրիկ, կամենդաճտ ձևերը, որոնք պահպանված են: Մի տեղ կա՝ կոմենդաճտ ձևը, որ դարձրել ենք մյուսների նման: Ամենուրեք սուկա է կարծիր բանակային գրութեան ձևը (առանձին). պահպանել ենք:

Մի տեղ սուկա է ձիերը նստում են. ավելի ճիշտ կլիներ՝ ձիերին նստում են, բայց պահպանել ենք բնագրից: 553-րդ էջում (տող 21) կարդում ենք՝ ...ով «մեզաք»-ը զըլ-խին. ով ճնամաջ շինելը...— պետք է լիներ՝ ...ով ճնամաջ շինելը հագին. պահպանել ենք բնագրից: Կա ռուս և ռուսա. երկու ձևն էլ թողել ենք (առաջինը, սովորաբար, հեղինակային խոսքում է, երկրորդը՝ հերոսների): Թողնված են նաև նախադասությունների մեջ հանդիպող որոշ անկանոնություններ:

Մեքենագիր այս 3-րդ օրինակում շատ զեպքերում անհնար է պարզել, թե այս կամ այն բառաձևը մեքենագրողինն է, թե հեղինակային, ուստի և հնարավոր են մեր կողմից կատարված անտեղի ուղղումներ կամ շճշտված մեքենագրական ռիալներ:

«Ջանգեղուր» այս մեծ բեմագրից բացի պահպանվել է նաև փոքրը (15 էջ), որի ենթավերնագրում կարդում ենք՝ Համառոտ լիբրետտո (ներկա հատորում այն գրված է Այլ խմբագրում բաժնում)։

Մեծ բեմագրի վերջում, առանձին էջի վրա գրողը կցել է անհրաժեշտ հիշատակարանը, որը տեղեկացնում է բեմագրի ստեղծման ժամանակի մասին։

## Հիշատակարան

Հազար ինը հարյուր երեսունհինգ րվի սեպտեմբեր երեսունին սկիզբն եղավ Երևան քաղաքում և ավարտվեցավ հազար ինը հարյուր երեսունվեց րվի հունվար քառասունհինգ, օգնականությամբ զանգեղուրցի մի խումբ կոմունարների, որոնց հեղինակը երախտապարտ է։

\*\*\*

«Ջանգեղուրից» առաջ Հայկինոյի պատվերով Բակունցը գրել է այլ բեմագրեր՝ «Սև թևի տակ» (կոչվել է նաև՝ «Ազդանշան ջրվեժի մոտ»)՝ 1930, «Արևի զավակը»՝ 1933, «Ալազգյազ» (կոչվել է նաև՝ «Էլեռնային իրողություն», «Տրագեդիա Ալազյազի վրա»)՝ 1935, Առաջին երկուսը նկարահանվել են նշված թվականներին, երրորդը ստույգ չգիտենք՝ նրկարահանված եղե՞լ է, թե ոչ (տեղեկությունն առել ենք Գ. Դզունուն «Հայկինոն տաքը տարում» գրքից (Երևան, 1935, էջ 65) և «Խորհրդային Հայաստան» թերթից՝ 1935, № 188)։ Մի փաստաթուղթ ցույց է տալիս, որ Բակունցին առաջարկվել է գրել նաև մի այլ բեմագիր։ Պահպանված է 1936 թ. հունիսի 27-ին ՀեՍՀ ժողկոմխորհին առընթեր կինոարդյունաբերության վարչության (Պետֆոտոկինոյի) պետ Գ. Դզունուն հեռագիրը՝ ուղղված Մոսկվա, ուժիսոր Պ. Բարխուդարյանին։ Այնտեղ ասված է. «Յոստեցեք Բակունցի հետ. Ձեզ համար գրվելիք բեմագրի վերաբերյալ՝ հայ ժողովրդի ուրախ, ստեղծագործ կյանքի մասին» («ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ 704, ցուց. 1, գործ 6, թերթ 18)։ Այդ ժամանակ «Ջանգեղուրի» բեմագրի կապակցությամբ Բակունցը նույնպես գտնվում էր Մոսկվայում։ Արդյոք խոսե՞լ է Պ. Բարխուդարյանը գրողի հետ կամ եթե խոսել է, ինչ հետևանք է ունեցել այդ խոսակցությունը, անհայտ է։

\*\*\*

«Ջանգեղուրը» գրվում էր այն ժամանակ, երբ Բակունցի դեմ ուղղված քննադատությունը սաստկանում էր, և գրողի բարեկամները, այդ թվում Ա. Խանջյանը, հորդորում էին նրան գրել այնպիսի երկեր, որոնք պետք է լուցանեին քննադատներին։ «Ջանգեղուրը» սկսել է գրվել հենց Ա. Խանջյանի՝ 1935 թ. գարնանն արած առաջարկով։ 1936 թ. առաջին ամիսներին «Ջանգեղուրի» բեմագիրը երկու անգամ քննարկվել է ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խանջյանի մոտ հրավիրված խորհրդակցությունում։ Ընդհանուր առմամբ բեմագիրը դրական է գնահատվել (հմտ. Գ. Դզունի, Ուրվագիծ Հայաստանի կինեմատոգրաֆիայի պատմության, Երևան, 1961, էջ 69—70)։ Միաժամանակ, ինչպես

ցույց են տալիս փաստաթղթերը (բերված են ստորև), արվել են շատ դիտողութուններ: Գրողին հանձնարարել են փոփոխել բեմագիրը արված դիտողութուններին համապատասխան: Հարկ է եղել նաև շարժանկարային արվեստի պահանջների համեմատ բեմագիրը մշակել Մոսկվայի մասնագետ բեմադրողների օգնությամբ: Ըվ 1936 թ. մայիսին Ա. Բակունցը մեկնել է Մոսկվա:

Ստորև բերվող փաստաթղթերում խոսք կա նաև բեմագրի երկրորդ տարբերակի մասին, որը Բակունցը, գուցե և, գրել է Մոսկվայում մասնագետների օգնությամբ:

Պետական զինվանատանը «Ջանգեզուր» բեմագրի մեքենագիր օրինակին կից ցուցակով (Ֆոնդ 704, ցուցակ 2, գործ 13) պահվում է «Ջանգեզուր» գործը՝ ուսերին.

„Арм. ССР, киностудия. Общий отдел. Дело „Зангезур“ վերնագրով: Այստեղ հավաքված են բեմագրի ստեղծմանը վերաբերող մի շարք փաստաթղթեր (մեծ մասամբ հեռագրեր), որոնք ցույց են տալիս «Ջանգեզուրի» հետ առնչված որոշ զարգացումներ: Ստորև ներկայացնում ենք այդ փաստաթղթերի մի մասը մեր թարգմանությամբ կամ համառոտ վերաշարադրմամբ (նշում ենք վերոհիշյալ գործի թղթապահակում հավաքված յուրաքանչյուր փաստաթղթի թերթահամարը):

\*\*\*

1936 թ. մարտի 20. Դզնունին\* Մոսկվա Հ. Բեկնազարովին.\*\* «Ղեկավար մարմինը երկրորդ անգամ քննարկեց «Ջանգեզուր» բեմագիրը: Անհրաժեշտ է, որ Դուք գաթ՝ որից հետո Բակունցի հետ կվերադառնաք Մոսկվա» (թերթ 10):

Մարտի 29. Երևանից Դզնունին՝ Մոսկվա Բեկնազարովին. «Բակունցը գրաղված է բեմագրի վերափոխմամբ, կավարտի մինչև տասնհինգը: Քեզ անհրաժեշտ է այդտեղից գալ տասին: Երևանում գտնվելուց հինգ օրը կօգտագործենք արտադրական հարցերը համաձայնեցնելու համար և կազմելու ղեկավար մարմնի հանձնաժողով՝ իր գլխավորով: Ամսի քսանին Բակունցի հետ կմեկնեք Մոսկվա հետագա աշխատանքի համար: Ես և Բակունցը համաձայն ենք քո առաջարկությանը: Ենթադրում ենք, որ հունիսի մեկին կկարողանաս մեկնել Ջանգեզուր ծանոթացման համար» (թերթ 7):

Հեռագրերից մեկի ամիսը նշված չէ, ամսաթիվը 9-ն է: Բովանդակությունից կարելի է ենթադրել, որ հեռագիրը տրվել է ապրիլին: Այդտեղ Հ. Բեկնազարովն ի պատասխան Դ. Դզնունու՝ վերը բերված երկու հեռագրերի գրում է. «Ամսիցապես մեկնել շեմ կարող: Ենթադրում եմ, որ «Ջանգեզուրում» պակասում է զիպաշարային զիծք: Ի շահ նկարի՝ խնդրում եմ ինձ ազատեք [Երևան գալու պարտականությունից]: Փոփոխումների համար հանձնարարեք Բակունցին աշխատելու Մոսկվայի որակյալ մասնագետ բեմադրողների հետ՝ իմ հակողությամբ: [Գործն] արագացնելու նպատակով առաջարկում եմ Բակունցին ուղարկել [այստեղ]՝ ղեկավար մարմինների բոլոր ցուցումներով: Իմ գալը կլիի մեկ ամսից ավելի ժամանակ. այդ ընթացքում բեմագիրը հիմնականում կարող է

\* Դանիել Դզնունին Հայկինոյի հիմնադիրներից է, 1936 թ. նա ՀՍԽՀ ժողովուրդների առընթեր կինոարդյունաբերության վարչության պետն էր:

\*\* Համա Բեկնազարովը (Բեկնազարյան) կինոռեժիսոր էր, նշանակված էր «Ջանգեզուր» կինոնկարի բեմադրող:

ազարտվել: Առաջարկում եմ [գործի մեջ] ընդգրկել Շկլովսկուն, [հոնիդովին, Վիշնե-  
սկուն» (Քերթ 9):

Երեք փաստաթղթեր (պատճեններն են), որոնք անթվակիր են, պետք է կազմված  
լինեն ապրիլի վերջին կամ մայիսի սկզբներին: Ահա դրանք.

## ՀեՍՀ Ժողկոմխորհին

Հայկիեռն խնդրում է քույրտրեհ Բակունց Ակսելին գործուղել Բ. Մոսկվա՝ Հայկի-  
եռյի հանձնարարությամբ, երեհ ամիս ժամանակով՝ 1936 թ. մայիսի 9-ից մինչև օգոս-  
տոսի 9-ը՝ «Զանգեզուր» բեմադրի վրա աշխատելու կազմակցությամբ:

ՀՍԽՀ ԺԿԵ-ին առընթեր կիևոար-  
դյանաբերության վաշուրյան պետ

Դ. Դզնունի

Ընդն. բաժնի վարիչ

Ս. Ակապովա

(քերթ 37)

## Վկայական

Մույր տրված է Բակունց Ակսելին, որ նա Հայկիեռնյի կողմից գործուղվում է Բաղ.  
Մոսկվա երեք ամիս ժամանակով՝ 1936 թ. մայիսի 9-ից մինչև օգոստոսի 9-ը «Զանգե-  
զուր» բեմադրի վրա աշխատելու կազմակցությամբ:

ՀեՍՀ ԺԿԵ-ին առընթեր

ԿԱՎ-ի պետ

Դ. Դզնունի

Ընդհանուր բաժնի վարիչ

Ս. Ակապովա

(քերթ 30)

Մյուս անթվակիր փաստաթուղթը Դ. Դզնունու հեռագիրն է Լ. Բեկնազարովին, որի  
մեջ ասված է, որ Ա. Բակունցը գործուղվում է Մոսկվա մեկ ամսով՝ «Զանգեզուր» բե-  
մադրի վերաբերյալ խորհրդակցելու համար: Որից հետո երկուսով՝ Բեկնազարովը և Բա-  
կունցը պետք է գան Երևան ու աշխատեն այստեղ և ապա նորից մեկնեն Մոսկվա: Ղե-  
կավար մարմինների որոշմամբ «Զանգեզուրը» պիտի սկսի նկարահանվել 1936-ի օգոս-  
տոսին, պատրաստ պետք է լինի Հոկտեմբերյան հեղափոխության 20-ամյակին (այ-  
սինքն՝ 1937-ի նոյեմբերին) (Քերթ 34):

Մայիսի 6. Բեկնազարովը Մոսկվայից հեռագրում է Երևան, Դզնունուն՝ տեղեկացնե-  
լով, որ Բակունցի ուշանալը հետաձգում է նկարահանման սկիզբը (Քերթ 36):

Մայիսի 14. Մոսկվայից Բեկնազարովը՝ Դզնունուն. «Բակունցի մեկնման հետագա  
ուշացումը կարող է տասպալել այս տարի նկարահանման սկսելը» (Քերթ 5):

**Մայիսի 14.** Երևանից Դզնունին՝ Բեկնազարովին. «Փալանթարը համաձայն է՝ Բակունցն ուշացավ կուստոման ստանալու պատճառով: Մեկնում է 15-ին: Դրամի մի մասը ուղարկեցինք այսօր» (թերթ 8):

Իրականում, Ա. Բակունցի ուշանալու պատճառը որդու ծանր, երկարատև հիվանդությունն էր (անգրիսայից արյան վարակում)\*: Հավանաբար Մոսկվա է մեկնել մայիսի 15-ին կամ գուցե մի քանի օր հետո:

**Հունիսի 4.** Մոսկվայից Բարլոյանը\*\* հեռագրում է Երևան Դզնունուն, դրամ խընդրելով՝ Բակունցի, իր և Գարոշի (Նկարահանող-օպերատոր Գ. Բեկնազարյան), ինչպես և Բուրսուկայի հյուրանոցային ծախսերի համար (թերթ 31):

**Հունիսի 19.** Երևանից Բարլոյանը՝ Մոսկվա Բեկնազարովին. «Տասնյոթին հեռագրով ուղարկված է՝ Ձեզ երկու հազար, Բակունցին՝ հազար, Հայկազյանին՝ յոթ հարյուր:

**Հունիսի 26.** Մոսկվայից Բուրսուկան և Բակունցը՝ Դզնունուն. «Մեր հասցեով ե՞րբ եք դրամ ուղարկել»:

**Հունիսի 27.** Մոսկվայից Բեկնազարովը՝ Երևան Դզնունուն. «Բեմագրի երկրորդ տարբերակը Բակունցը չի ներկայացրել: Նույնիսկ եթե ներկայացված նյութը պետք էլ լինի, խորհրդատուների հետ աշխատելու անհրաժեշտություն կզգացվի՝ առնվազն երկու ամիս: Նկարահանումը կսկսենք ուշացումով: Բնականից նկարահանելը շենք հասցընի: Նկարը հորելյանին շենք հանձնի: Այս մասին տեղեկացրեք ղեկավար մարմիններին» (թերթ 21):

**Հունիսի 28.** Երևանից Դզնունին՝ Մոսկվա Բեկնազարովին. «Ամեն պարագայի նկարը պետք է հանձնեք հորելյանին: Բակունցը Ձեզ հետ միասին խորհրդատուություններից հետո պետք է կարողանա բեմագիրը հաստատել տալ այն հաշվով, որպեսզի նախապատրաստական շրջանն սկսեք ոչ ուշ, քան օգոստոսի 15-ին» (թերթ 23):

**Հուլիսի 4.** Մոսկվա Բեկնազարովին. «Յոթին հեռագրով կուղարկենք 4000, Բակունցին՝ 3000:

**Հուլիսի 17.** Երևանից Դզնունին՝ Մոսկվա Բեկնազարովին. «Անմիջապես ուղարկեցեք «Ջանգեղուրի» վերջին տարբերակը» (թերթ 20):

Այս, ինչպես և հունիսի 27-ի հեռագրերից, ըստ երևույթին, պետք է եղրակացնել, որ Մոսկվայում խորհրդակցելով կինոմասնագետների հետ և աշխատելով բեմագրի վրա՝ Բակունցը ստեղծել է «Ջանգեղուրի» մի նոր տարբերակ: Ո՞րն է այդ: Արդյոք վերը մեր հիշած «Համառոտ լիրիկ»-տունն, թե մի ուրիշը, որ մեզ չի հասել: Բայց և հաջորդ հեռագրից պարզվում է, որ Բակունցը ղեռնա բեմագրի վրա աշխատելը չի ավարտել:

**Հուլիսի 19.** Մոսկվայից Բեկնազարովը՝ Երևան. «Եկվովսկին, Վեռնիգովը հրաժարվեցին խորհրդական լինելուց՝ դրամ չստանալու պատճառով... Բակունցը մնացել է առանց դրամի, աշխատանքը չավարտած ուզում է վերադառնալ: Դրամական անընդհատ

\* Տե՛ս Ա. Բակունցի կնոջ՝ Վարվառա Զիվիլյանի անտիպ հուշերը (գրված 1954 թ., Մաշտոցի անվ. Մատենադարանի արխիվային րածին, Ա. Հովհաննիսյանի արխիվ. Թղթ. 244, 19, վավ. 4):

\*\* Մանուկ Բարլոյանն այն ժամանակ Հայկինոյի գիրկետորի տեղակալն էր:

վիժեցումների այս պայմաններում կտրականապես հրաժարվում եմ նկարահանումից» (թերթ 3):

Հուլիսի 20. Երևանից Բաբելոնյանը՝ Մոսկվա Բեկնազարովին. «Արդյո՞ք Ջաղեթյանի բերած «Ջանգեզուրի» օրինակը վերջին տարբերակն է» (թերթ 24):

Այս հեռագրից պարզվում է, որ Մոսկվայից Երևան ուղարկվել է «Ջանգեզուրի» մի ինչ-որ տարբերակ. դարձյալ՝ դժվար է ասել, թե որն է այդ՝ «Համառոտ լիբրե՛տոտն», թե՞ մի ուրիշը:

Օգոստոսի 1. (ամսաթիվը լավ չի ընթերցվում). Մոսկվայից Ուիկիլը՝ Երևան Բաբելոնյանին. «Ջանգեզուր» բեմադրի հեղինակը Մոսկվայից անսպասելի մեկնեց: Խնդրում եմ տեղեկանաք [ինչ է եղել]: Հեռագրել ԿՖԳՎ (ГУКФ)» (թերթ 27):

Կան 2. Բեկնազարովի հուշերը՝ «Записки актера и кинорежиссера», М., 1965 (հայերեն թարգմանված և Երևանում հրատարակված 1968-ին՝ «Հուշեր դերասանի և կինոռեժիսորի»), որտեղ տասներկուերորդ գլխում խոսք կա «Ջանգեզուրի» և Ա. Բակունցի մասին: Երևում է, որ գրված է զուտ հիշողությամբ, և առկա են փաստական սխալներ: Օրինակ, գրված է. «Ինչ վերաբերում է ինձ, ապա «Պեպո» նկարից հետո ես պայմանավորվեցի հայ տաղանդավոր գրող Ակսել Բակունցի հետ «Ջանգեզուր» խորագրով սցենար գրելու մասին, որը պետք է պատմեր Ջանգեզուրի լեռներում ծվարած դաշնակների վերջին օրերի մասին (Բակունցը լինելով զանգեզուրցի, ականատես էր եղել այն իրադարձություններին, որոնց մասին նա ուզում էր պատմել իր սցենարում» (հայերեն թարգմ., էջ 240): Իրականում Բակունցը քաղաքացիական պատերազմի զանգեզուրյան հիշյալ իրադարձություններին ականատես չի եղել, քանի որ 1917 թ. աշնանից մինչև 1923 թ. հուլիսը նա Ջանգեզուրում բռնորովին չի եղել: Բեկնազարովը գրում է նաև, որ իր Բակունցը շատ արագ է ավարտել բեմադիրը և ավիացնում է՝ «նա այն ուղարկեց կոնսուլտացիայի և հաստատման» (նույն տեղում): Իրականում աշխատանքը տևել է 4 ամիս, և այն Բակունցը ոչ թե ուղարկել է, այլ իր հետ է տարել Մոսկվա: Հուշերում կարդում ենք նաև. «Հոկտեմբերին ես դրժով շտապ մեկնեցի Մոսկվա: Մենք Բակունցի հետ պայմանավորվեցինք, որ հենց որ լիբրետոն հաստատվի, նա նույնպես անմիջապես կթռչի Մոսկվա:

Մի երկու շաբաթ անց առավոտյան ինձ արթնացրեց հեռախոսի զանգը: Բակունցն էր խոսում: Ծն շատ ուրախացա» (ն. տ., էջ 241): Ապա պատմվում է իր և Բակունցի ժամադրության մասին՝ բեմադրի հաստատման կապակցությամբ գրուցելու համար: Եարադրանքից երևում է, որ հուլազիրը նկատի ունի 1936 թ. հոկտեմբերը: Լուրջ շփոթություն է. նախ ինչպես վերը բերված մի հեռագրից ենք իմանում (Դզնունի, մայիսի 14), Բակունցը «Ջանգեզուրի» վերաբերյալ խորհրդատվության և այն հաստատելու նպատակով Մոսկվա է մեկնել 1936 թ. մայիսի 15-ին, իսկ Մոսկվայից դուրս է եկել ամենաուշը օգոստոսի 1-ին: 1935 թ. հոկտեմբեր կամ նոյեմբեր ամիսներին Բակունցը Մոսկվայում նույնպես չի եղել, «Ջանգեզուրն» էլ պատրաստ չէր, գրողը Երևանում աշխատում էր այդ բեմադրի վրա:

Հետագայում «Ջանգեզուրի» բեմադիրը պատվիրվել է Հ. Բեկնազարովին, որը պետք է օգտագործեր Բակունցի գրածը («արդեն հավաքված նյութերի օգտագործմամբ »): Բեկնազարովը համաձայնել է և անցել գործի:

«Զանգեզուրի» այդ տարբերակը նկարահանվել է հիմնականում 1937 թ. ընթացքում և չի ավարտվել ըստ նախատեսվածի՝ Հոկտեմբերյան հեղափոխության 20-ամյակի հոբելյանին, ավարտվել է 1938-ին և նույն թվականին էլ սկսել է ցուցադրվել:

\*\*\*

Բակունցի գրած բեմագիրը (մեծ և փոքր տարբերակները), անշուշտ, գրողի ստեղծագործությունների մեջ շատ թե քիչ աչքի ընկնող տեղ չի զբաղեցնում: Թե՛ գեղարվեստական տեսակետից ընդհանրապես և թե՛ մասնագիտական-բեմագրային տեսակետից հազիվ թե այն որևէ բնություն բռնի: Նկատելիորեն անմշակ է. կան փաստական, ժամանակագրական անճշտություններ, արհեստականություն: Գրողն օգտագործել է իր երկերից առանձին տեսարաններ: Բայց բեմագրում բացակայում է Բակունցի ստեղծագործություններին հատուկ արվեստի շունչը: Կան լեզվական օտարաբան արտահայտություններ. օրինակ, «նրան դժվար է այդպես խմելը», «ինչ-որ նվագում է», «մայրը վազում է դեպի որդուն» և այլն:

Այս բեմագրում կան բակունցյան երկերից հայտնի անուններ՝ Աթա ապեր, Բազի, Չետանց Վանես, Պուզան, Սոնա, Մինա, Ծակայն սրանք սոսկ նույնանունություններ են, այսինքն՝ սոսկ համընկնում են անունները, և բնավ նույն կամ նման կերպարների մասին չէ խոսքը: Օրինակ, այս բեմագրի Աթա ապերը միայն անունով է հիշեցնում «Ճղրայրության ընկուզենիներին» հմայիչ հերոսին: «Զանգեզուրում» այդ գործող անձը զուրկ է բակունցյան գեղուկ կերպարների կենդանությունից, իրապատում մարդկային հատկանիշներից, և ձևված է ըստ «մարգարեախոս» ծերունիների այն կաղապարի, որպեսին օգտագործում էին նույն շրջանի այլ գրողներ:

Բեմագրում կան նաև նախակերպարներ ունեցող հերոսներ. զրանցից է գլխավոր հերոս Մակիչը, նրա համար նախակերպար է եղել Զանգեզուրի քաղաքացիական պատերազմների մասնակից Մակիչ Մաշուրյանը, որը սպանվել է 1920 թ. նոյեմբերին, Գորիսի մոտ: Սպարապետի համար նախակերպար է եղել Նժդեհը և այլն:

## Մ Ա Ն Ե Ր Ա զ Ե Ռ Ի Յ Ո Ւ Ն Ե Ն Ի Ր Ս ՈՒ Է Զ Ե Ի Ի Ե Ա Պ Ա Ն Ա Մ Ա Բ Ե Ի Ի

էջ 490, տող 25. Լեռնահայաստան— գործածված է որպես Զանգեզուրի հայոց իշխանության անվանում:

էջ 491, տող 35. Վերդեն— քաղաք և ամրոց Յրանսիայի հյուսիս-արևելքում: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Վերդենի շրջակայքում արյունահեղ ճակատամարտեր են տեղի ունեցել գերմանական և ֆրանսիական զորքերի միջև (շուրջ 1 միլ. մարդ է զոհվել), Յրանսիացիները կարողացան պաշտպանել քաղաքը, և գերմանացիներն այն գրավել չկարողացան:

էջ 503, տող 19. Մերունու բերանից արյունը կաթիքում է արխալուղի վրա— համեմատել «նմանակ ուսաց թագավորին» պատմվածքի վերջին մասի հետ՝ «Արյունը բքի հետ խառնված կաթում էր երա արխալուղի վրա» (տե՛ս Երկերի այս հրատ., հ. 1, էջ 219):

էջ 518, տողեր 6—13. —Յենտրալնի, ցենտրալնի... Բաբու, դա Բաբու... Բաբիշևաջան... և այլն— համեմատել միևնույն կարգի գրեթե նույն բառերով ձևավորված հեռա-

խոսային կատակ-սխոսակցութիւնն հետ սեղաբարութեան ընկուզնիներումս. — Զք, ցնեւորալնի, ա՛յ ցնեւորալնի, դավայ Բաբու... Բարիշնա շան. Բաբու, դա՛, Բաբու... և այլն (տե՛ս Երկերի այս հրատ., հ. 2, էջ 282—283):

էջ 530, տողեր 15—16. տեսնել «եռաշատուր Արովյան» վեպի 306-րդ էջին (տող 20) վերաբերող ծանոթագրութիւնը:

էջ 548, տող 16. Զաւարա գետն է— կամ Զագարու, գետ է, Բարկուշատ գետի վըտակը. Որոտանը դուրս գալով Միսիանի շրջանից, մտնելով Գորիսի շրջանը՝ հոսում է դեպի արեւելք և անցնելով Ադրբեջանական ՍՍՀ, կոչվում է Բարկուշատ, այստեղ ձախից ընդունում է Զագարու վտակը:

էջ 554, տող 35. Չանգեզուրի «մերձարեւադարձային» ձորը— նկատի ունի Որոտանի ձորը, հատկապես Տաթև գյուղի մոտ:

էջ 555, տող 4 և հետո. 151-րդ գեղի շտաբը— 151-րդ գունդը բնագրում հիշատակվում է մի շարք անգամ, հիշվում է նաև 153-րդ գումդը. դրանք 11-րդ բանակի զորամասերից են եղել:

էջ 555, տող 14. Կոփ վիինի Յայչիի մատ— Յայչի գյուղը գտնվում է Գորիսի մոտ (դեպի հարավ-արևմուտք), այժմ կոչվում է Զածրիս: Սակայն բեմագրում Յայչին Չանգեզուրի այլ մասում է տեղադրված:

էջ 567, տող 14. 84-я подоспест, նաև՝ էջ 582, տող 18. արտում է 84-րդ բրիգադի հրետանին— խոսքը վերաբերում է 11-րդ Կարմիր բանակի 28-րդ հրաձգային միավորման 84-րդ բրիգադին:

էջ 573, տողեր 20—24 և հետո. —լավ, ասեմք, ես բուրք եմ, բա հայերք ձեզ ինչո՞ւ են սպանում... —Մենք ուրիշ ազգ ենք...— համեմատել «Սեղաբարութեան ընկուզնիները» պատմվածքի վերջին մասի հետ. «Ասեմք բուրք եմ, բա ձեզ նման հայերին ինչո՞ւ են սպանում», «...Մենք էն քո ասած հայերից չենք...» (տե՛ս Երկերի այս հրատ. հ. 2, էջ 307):

## Ա Յ Լ Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ւ Մ

### Ձ Ա Ն Գ Ե Ջ Ո Ւ Ր

#### (Մակիշ)

Համառոտ լիբրետտո նախերգանքով և յոթ մասով

(էջ 586)

Բնագրային աղբյուրն է «ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվում» պահվող մերենագիրը՝ Ֆոնդ 704, ցուցակ 1, գործ 208, թերթեր 1—15: Սա «Չանգեզուրի» համառոտ բեմագիրն է, նրա՝ մեզ ծանոթ միակ՝ պահպանված հեղինակային բնագիրը: Դա մերենագրվածի 3-րդ (գուցե 2-րդ) օրինակն է՝ 15 էջ համարակալված, սկզբից 2 էջ չհամարակալված: Գծվար-

ընթանելի է: Վերնագրից վերև հեղինակի ձեռքով (Յանարով) գրված է Ալ. Քախուճ, ապա դարձյալ հեղինակի ձեռքով է գրված վերնագիրը՝ Զանգեզուր, տակը մեքենագրված՝ (Մակիր): Այնուհետև, հեղինակային որևէ նշում կամ ուղղում չկա. պարզ է, որ մեքենագրվածի այս օրինակը չի համեմատվել ձեռագրի հետ, և հեղինակն առճառարակ նրա վրա չի աշխատել: Վանդեզուրը բնագրային այս ատորհրակը հրատարակվում է առաջին անգամ: Տպագրված է պահպանված մեքենագիր օրինակն ամբողջությամբ: Նրանում ուղղել ենք մեքենագրական վրիպակներն ու մեկ-երկու այլ վրիպումներ, այդ թվում հետեյալները.

էջ 589, տող 10. ՄՕ-ի բնագրում՝ հանկարծակի եկավ— ուղղված է ըստ բովանդակության՝ հանկարծակիի եկավ:

էջ 590, տողեր 1—2. ՄՕ-ի բնագրում՝ մնացողներին— ուղղված է ըստ բովանդակության՝ մնացողները:

էջ 590, տող 16. ՄՕ-ի բնագրում՝ կազմակերպել— ըստ բովանդակության ուղղել ենք՝ կազմակերպվել:

էջ 594, տող 20. ՄՕ-ի բնագրում՝ աղծեմազ— ուղղել ենք ըստ բովանդակության՝ այծեմազ:

էջ 595, տող 8. ՄՕ-ի բնագրում՝ Մակիրը հայտնում է— ուղղել ենք՝ Մակիրը հայտնեցվում է:

էջ 596, տող 26. ՄՕ-ի բնագրում՝ Կոմունիստները— ճշտել ենք ըստ բովանդակության՝ Կոմունիստները:

էջ 597, տող 24. ՄՕ-ի բնագրում՝ Նա դեմ տռել— ուղղել ենք՝ Նա դեմ է տռել:

էջ 598, տողեր 3—4. ՄՕ-ի բնագրում՝ բնդանոթները շրջում է Կոտայի գորտմառը— ուղղված է՝ բնդանոթները շրջում է դեպի Կոտայի գորտմառը:

Հայտնի չէ, թե «Զանգեզուրի» այս համառոտ բնագիրը որ ամսին է գրվել: Գուցե այն գրվել է մեծ բնագրից հետո, քայց կան նաև նշաններ, որոնք ենթադրել են առիտ, թե այս փոքրը մեծից առաջ է գրվել:

Վանդեզուրը բնագրի ստեղծման հետ առնչված մանրամասնությունները բերված են Վանդեզուրը մեծ բնագրի ծանոթագրություններում:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

	Նրկեր	Մանրագրու- թյուններ
<b>Վեպեր և վիպակներ</b>		
Հովնաթան Մարշ . . . . .	7	604
Կարմրաքար . . . . .	89	614
Որդի որոտման . . . . .	234	633
Խաչատուր Աբովյան . . . . .	260	639
Կյորես . . . . .	412	688
<b>Կինոբեմագիր</b>		
Ջանգեզուր . . . . .	489	700
<b>Այլ խմբագրում</b>		
Ջանգեզուր (Մակիչ) . . . . .	586	708
<b>Մանրագրություններ</b>	599	
Ա. Բակունցի երկերի այն հրատարակությունները, որոնք հիշատակված են հրրորդ հատորում . . . . .	600	
Հատորում գործածված պայմանական հապավումներ	600	
Բնագրերը . . . . .	601	
Վիպակներ և վեպեր . . . . .	604	
Կինոբեմագիր . . . . .	700	
Այլ խմբագրում . . . . .	708	

**ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ**

**Ե Ր Կ Ե Ր**

**Հատար 3**

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ  
**Մ. Արեղյանի** անվան գրականության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

**Հրատ. խմբագիր Ս. Ա. ԱՆԱՍՏԱՍՅԱՆ**

**Գեղ. խմբագիր Հ. Ն. ԳՈՐՄԱԿԱԼՅԱՆ**

**Տեխ. խմբագիր Հ. Մ. ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ**

**Սրբագրիչ Է. Ա. ՍՈՆԻԿՅԱՆ**

**ИБ № 491**

Հանձնված է շարվածքի 17. 03. 1982 թ.: Ստորագրված է տպագրության 7. 12. 1982 թ.:  
Զափը 60X84<sup>1</sup>/<sub>16</sub>: Բուլժ № 1: Տառատեսակ «Գրքի սովորական», բարձր տպագրու-  
թյուն: Պայմ. 42,2 մամ., տպագր. 44,5+3 ներդ.: Հրատ-հաշվարկ. 44,33 մամուլ:  
Տպարանակ 20,000: Պտտվեր № 361: Հրատ. № 5663: Գինը 4 ս. 45 կ.:  
ՀՅՍՀ ԳԱ Հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության փ. 24 գ:  
Издательство АН Арм. ССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24 г.  
ՀՅՍՀ ԳԱ Հրատարակչության տպարան, 375019, Երևան, Բարեկամության փ., 24:  
Типография Издательства АН Арм. ССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24.